

ԴԻՎԱՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԳԻՐԻ ԱՌԱՋԻՆ



ԵՐԵՎԱՆ

**Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume**

**Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՉԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար**



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**ARCHIVES OF
HISTORY OF ARMENIA**

**NEW SERIES
BOOK I**

GHUKAS KARNETSI

**VOLUME III
1793-1799**

With the elaboration of
VARDAN GRIGORYAN, ARSEN HARUTYUNYAN

Editor
GEVORG TER-VARDANYAN

YEREVAN – 2023

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**АРХИВ
ИСТОРИИ АРМЕНИИ**

**НОВАЯ СЕРИЯ
КНИГА ПЕРВАЯ**

ГУКАС КАРНЕЦИ

**ТОМ III
1793-1799**

Составители
ВАРДАН ГРИГОРЯН, АРСЕН АРУТЮНЯН

Под редакцией
ГЕВОРГА ТЕР-ВАРДАНЯНА

ЕРЕВАН – 2023

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՆԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԻՎԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՆՈՐ ՇԱՐՔ
ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ

ՀԱՏՈՐ Գ
1793-1799

Աշխատասիրությամբ՝
ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Խմբագրությամբ՝
ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ՀՏԴ 94(479.25):27-9
ՊՄԴ 63.3(53)+86.37
Ղ 951

**Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ**

**Աշխատասիրությամբ՝
Վարդան Գրիգորյանի, Արսեն Հարությունյանի**

**Խմբագրությամբ՝
Գևորգ Տեր-Վարդանյանի**

Ղուկաս Կարնեցի

Ղ 951 [Բնագրեր] / Աշխատասիրությամբ՝ Վ. Գրիգորյանի, Ա. Հարությունյանի, Խմբագրությամբ՝ Գ. Տեր-Վարդանյանի – Ղիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, հատոր Գ (1793-1799 թթ.), Երևան, Մատենադարան, 2023, 736 էջ:

Ղուկաս Ա. Կարնեցի Ամենայն Հայոց կաթողիկոսի (1780-1799 թթ.) գահակալման վերջին յոթ տարիների՝ 1793-1799 թթ. գրագրությունների՝ նամակների, կոնդակների և տարաբնույթ այլ վավերագրերի հավաքածուն (1610 միավոր) ամբողջացնում է Հայ եկեղեցու շինարար գահակալի գործունեության ընդհանուր նկարագիրը:

18-րդ դարի վերջին երկու տասնամյակներին Մայր Աթոռ Ս. Էջմիածինն իր գործուն դերակատարումն է ունեցել երկրի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում, որի մասին են վկայում Հայ եկեղեցու առաջնորդի բազմաթիվ նամակներն ու կոնդակները Հայաստանի և գաղթավայրերի հոգևոր առաջնորդներին, բարձրաստիճան այրերին, նվիրակներին և տարբեր պաշտոնյաներին:

Նախատեսված է պատմաբանների, աղբյուրագետների, Հայ եկեղեցու պատմության հարցերով զբաղվողների և ընթերցող լայն հասարակության համար:

ՀՏԴ 94(479.25):27-9
ՊՄԴ 63.3(53)+86.37

ISBN 978-9939-897-19-6
DOI 10.57155/LGRD2561
© Մատենադարան, 2023

ԱՌԱՋԱԲԱՆ

«Գիվան հայոց պատմության» նոր մատենաշարի ներկա հատորում ամբողջանում է Ղուկաս Ա. Կարնեցի Ամենայն շայոց կաթողիկոսի (1780-1799 թթ.) գահակալման վերջին յոթ տարիների՝ 1793-1799 թթ. ժամանակաշրջանն ընդգրկող գրագրությունների՝ նամակների, կոնդակների, դրանց համառոտագրությունների և տարաբնույթ այլ վավերագրերի հավաքածուն՝ ընդհանուր հաշվով 1610 միավոր: Նման մատենաշար ունենալու գաղափարը դեռևս 19-20-րդ դդ. նշանավոր հոգևոր-մշակութային գործիչ Գյուտ ավագ քահանա Աղանյանցին էր (1856-1920 թթ.), որը կյանքի է կոչել շաբթի 13 մեծադիր հատոր (հրատարակված Թիֆլիսում, 1893-1917 թթ.), որոնցում ամփոփվել են 18-19-րդ դդ. շայոց պատմությանն ու Ամենայն շայոց գահակալների գործունեությանը վերաբերող արժեքավոր նյութեր՝ հրովարտակներ, կոնդակներ, նամակներ, շրջաբերականներ, ստացականներ և աղբյուրագիտական մեծարժեք այլ փաստաթղթեր¹:

Նշված մատենաշարի Ղ. գիրքը, որը լույս է տեսել 1899 թ., նվիրված է Ղուկաս Կարնեցի կաթողիկոսին: Նատորում հրատարակվել է 170 նամակ և տարաբնույթ գրագրությունների 450 համառոտագրություն: Գրքի սկզբում Մկրտիչ Ա. Խրիմյան Ամենայն շայոց կաթողիկոսի (1892-1907 թթ.)՝ 1895 թ. փետրվարի 25-ի շնորհակալագիրն է, որտեղ մեծանուն հայրապետը դրվատանքով է բնութագրում Գյուտ Աղանյանցի կատարած վիթխարի աշխատանքը. «զցայգ և զցերեկ տքնիս ի լոյս ածել զթագուցեալ նշխարս պատմութեան մերոյ, որք ցիր և ցան ծածկեալ կան ընդ գրուանօք և ընդ փոշուվք: Երանի՛ էր թէ ամենայն հովիւք և պաշտօնեայք այժմուս, իւրաբանչիւրն ըստ իւրում կարեաց վաստակաւորք լինէին ի գիրս և ի դպրութիւնս շայկականս...»²:

Արդարև, Գյուտ ավ. քնն. Աղանյանցի գործի արժանի շարունակողը եղավ Մաշտոցի անվան Մատենադարանի վաստակավոր գիտաշխատող, արխիվային գործի գիտակ, պատմական գիտությունների դոկտոր Վարդան Գրիգորյանը (1929-2019 թթ.), որի նախաձեռնությամբ Մատենադարանի ձեռագրապահոցից ու արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանից դուրս է գրվել ու ժամանակագրորեն դասակարգվել Ղուկաս հայրապետի գահակալման ողջ շրջանը լուսաբանող ավելի քան 4000 վավերագիր:

Վ. Գրիգորյանի հավաստմամբ՝ Մատենադարանի արխիվային վավերագրերի զգալի մասը «...գրված է XVII-XVIII դդ.: Կան նաև ավելի ուշ շարադրված բազմաթիվ ուշագրավ նյութեր»³: Եթե Սովսես Տաթևացուց (1629-1633 թթ.) մինչև Նակոբ Շամախեցու (1759-1763 թթ.) գահակալումը գործած կաթողիկոսներից մեզ են հասել միայն սակավաթիվ վավերագրեր, ապա Սիմեոն Երևանցուց, Ղուկաս Կարնեցուց և հետագա կաթողիկոսներից ունենք անհամեմատ ավելին (ինչ-

¹ «Գիվան հայոց պատմության» (այսուհետ՝ ԴՀՊ) մատենաշարով՝ Թիֆլիսում հրատարակված գրքաշարի անվանական թվարկումը տե՛ս ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա., աշխատասիրությամբ՝ Վարդան Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 8-9, ծնթ. 1:

² ԴՀՊ, գիրք Դ., Ղուկաս կաթողիկոս (1780-1800 թթ.), յառաջաբանով, յալեղուածներով և ծանօթութիւններով հրատարակեց՝ Գիտ ավագ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1899, էջ Է.:

³ ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա., էջ 6:

պես ամբողջական, այնպես էլ՝ համառոտագրված), այդ թվում նաև՝ նմանատիպ նյութերի սևագրություններ, որոնք ընդհանուր պատկերացում են տալիս Նայ եկեղեցու գահակալների գործունեության, մասնավորապես՝ ժամանակի հոգևորական ու աշխարհական անձանց հետ ունեցած փոխհարաբերությունների, կատարած և ստացած նվիրատվությունների, գանձանակի և հոգեբաժնի եկամուտների և այլ առիթներով կազմված օրինության ու շնորհակալության, երբեմն էլ՝ մխիթարության գրերի մասին:

Ընդհանուր առմամբ, դիվանական վավերագրերի՝ նման սկզբունքով ուսումնասիրությունն ու հրատարակումն Էական նշանակություն ունի նաև մեր գրավոր մշակույթի զարգացման հետագա ընթացքն ուսումնասիրելու տեսանկյունից: Միջնադարից ժառանգած կրոնական, քաղաքական ու տնտեսական բնույթի վավերագրերը (շինարարական, նվիրատվական արձանագրություններ, արտոնագրեր, իրավական փաստաթղթեր և այլն) մեզ են հասել առավելապես եկեղեցիների որմերին և կոթողային հուշարձաններին պահպանված վիմագրերի, ինչպես նաև ձեռագիր մատյանների (այդ թվում՝ բոթուկ-ընծայամատյանների) հիշատակարանների միջոցով: Նակառակ այս իրողության, վանքերի ելից-մտից ու միաբանական մատյանները (դավթարները) հիմնականում 18-19-րդ դարերից են: Դրանց մեծադիր Էջերին պահպանված նամակներն ու մյուս տարաբնույթ վավերագրերը բովանդակում են Նայ եկեղեցու և նրա թեմերի ու վիճակների նվիրակական, գանձանակի, հոգեբաժնի եկամուտների, եկեղեցական գույքի, ձեռագիր ժառանգության, հոգևորականների ձեռնադրությունների ընդհանուր նկարագիրը, ինչպես նաև Մայր Աթոռի և Նայաստանում ու գաղթավայրերում գտնվող հոգևոր կենտրոնների միջև առկա փոխառնչությունները:

Նայագետների սեղանին են Վ. Գրիգորյանի կազմած «Դիվան հայոց պատմության» նոր շարքի առաջին գրքի զույգ սովորածավալ հատորները՝ հրատարակված Երևանում՝ 1984 և 2003 թթ.⁴: Առաջին հատորում աշխատասիրողն ամփոփել է 1178 վավերագիր. այն ընդգրկում է 1780-1785 թթ. գրված Դուկաս Կարնեցու նամակների, կոնդակների, նաև՝ նմանօրինակ վավերագրերի համառոտագրությունների հավաքածուն՝ քաղված Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) ՀՊՊ 2803, 4481, 4501 ձեռագրերից և արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանի որոշ գործերից: Նատորի առաջաբանում Վ. Գրիգորյանը նշում է, որ նամակները պահպանված են բնագրերով և սևագրություններով: Գրագիրները սևագրությունը սովորաբար կազմել են՝ հիմք ընդունելով տվյալ նամակի բովանդակությունը, այսինքն՝ սևագիրը կարելի է համարել տվյալ վավերագրի լավագույն համառոտագրությունը: Այս հանգամանքը նկատի առնելով՝ Վ. Գրիգորյանը հետևել է իր նախորդի՝ Գյուտ ավ. քին. Աղանյանցի սկզբունքին, այն է՝ հարկ եղած դեպքում բաց թողնել բուն, ծավալուն նամակը և նյութը չձանրաբեռնելու համար հրատարակել միայն համառոտագրությունը: Բացառություն չէ նաև ներկա հատորը, որի կազմում ընդգրկված վավերագրերի շարքում ներառված են ինչպես

⁴ ԴՆՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա. (1780-1785), աշխատասիրությամբ՝ Վարդան Գրիգորյանի, խմբագրությամբ՝ Օ. Եգանյանի և Վ. Մարտիրոսյանի, Երևան, 1984, 596 էջ: Նույնի՝ հ. Բ. (1786-1792), աշխատասիրությամբ՝ Վարդան Գրիգորյանի, խմբագրությամբ՝ Պ. Չոբանյանի, Երևան, 2003, 804 էջ:

ամբողջական նամակներ, այնպես էլ մեծաթիվ համառոտագրություններ: Այս առումով նշելի է ՄՄ չ^մ 4481 ձեռագրի՝ խնդրո առարկա նամականու համար իբրև հիմնական՝ մայր ձեռագիր օգտագործված լինելու հանգամանքը, որը, ըստ էության, նամակների համառոտագրությունների մի ամբողջ ժողովածու է, որին դեռ կանդրադառնանք:

Նշենք մի կարևոր հանգամանք ևս. ինչպես նախորդ երկհատորյակում, այնպես էլ ներկա հատորում, կան նամակների համառոտագրություններ, որոնց ամբողջական բնագիրը հրատարակել է Գյուտ ավ. քին. Աղանյանցը, կա նաև հակառակը, երբ ամբողջական նամակի միայն համառոտագրությունն է նախկինում հրատարակվել: Այս իրողությունը չանտեսելով՝ մենք հարկ ենք համարել ծանոթագրություններում արձանագրել նմանօրինակ հրատարակությունները՝ սրանով իսկ առավել հասանելի դարձնելով Գյուտ ավ. քին. Աղանյանցի անդրանիկ աշխատության բովանդակությունը:

Ինչ վերաբերում է Վ. Գրիգորյանի կազմած երկրորդ հատորին, ապա այստեղ ամփոփված են Ղուկաս հայրապետի գահակալման միջանկյալ տարիների՝ 1786-1792 թթ. անհամեմատ ավելի՝ 1823 նամակներ, կոնդակներ ու առաքված գրությունների համառոտագրություններ՝ քաղված ՄՄ չ^մ 4449, 4481, 4482, 4483, 4501 ձեռագրերից և արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանի մի շարք գործերից: Կազմողի հավաստմամբ՝ որոշ նամակներ ու համառոտագրություններ վերցված են Գյուտ ավ. քին. Աղանյանցի և Սմբատ Տեր-Ավետիսյանի հրապարակումներից, իսկ համառոտագրությունները՝ ՄՄ չ^մ 4481 ձեռագրից: Չարկ է նշել, որ այդ վավերագրերն ընդհանուր պատկերացում են տալիս ոչ միայն բազմաշխատ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի՝ տարբեր թեմերի (Կարին, Կարս, Վան, Տաթև, Ջուղա, Թիֆլիս, Չաշտարխան, Կ. Պոլիս, Սուրբաթ, Բասրա, Բաղդադ և այլն) և այնտեղ գտնվող հոգևորական ու աշխարհական գործիչների հետ ունեցած կապերի ու փոխհարաբերությունների մասին, այլև հող են նախապատրաստում Արևելյան Չայաստանի 18-19-րդ դդ. քաղաքական պատմության, հոգևոր ու մշակութային կյանքի համընդհանուր ուսումնասիրության համար:

Վ. Գրիգորյանի կազմած երկհատորյակին կից են բավական ծավալուն ու համակողմանի վերլուծություններով հագեցած ներածական-առաջաբաններ, ուստի հարկ ենք համարում փոքր-ինչ ծավալվել նաև այս հարցի շուրջ, քանի որ սրանց տրամաբանական շարունակությունն է նաև ներկա՝ Գ. հատորը:

Ա. հատորի «Ներածություն» խորագրով առաջաբանը պայմանականորեն բաժանված է երկու մեծ մասի՝ «Ղուկաս Կարնեցի» և «Ղուկաս Կարնեցու 1780-1785 թթ. նամականին»: Առաջին մասի յոթ ենթագլուխներում Վ. Գրիգորյանը մանրամասն ներկայացրել է Ղուկաս Կարնեցու գահակալման ժամանակաշրջանը, նրա գործունեությունը ուսումնասիրողների գնահատմամբ (Գարեգին կաթողիկոս Չովսեփյան, Չովհանես Եպս. Շախաթունյանց, Գևորգ Խուբով, Գաբրիել Պատկանյան, Մսեր Մսերյանց, Մաղաթիա արք. Օրմանյան և այլք), կյանքի ու գործունեության նկարագիրը, կատարած շինարարական աշխատանքները, նամակագրությունն ու նմանատիպ հրատարակությունները, անտիպ նյութերը, մասնավորապես՝ այն ձեռագրերն ու արխիվային վավերագրերը, որոնցից օգտվել է հատորը կազմելիս: Առաջաբանի երկրորդ մասը նվիրված է Ղուկաս Կարնեցու

1780-1785 թթ. նամականու բովանդակությանը, մասնավորապես՝ Արարատյան երկրի քաղաքական կացությանը վերաբերող նյութերին, ռուսական հրամանատարության հետ կաթողիկոսի ունեցած նամակագրությանը, հարևան երկրների ու հայաբնակ վայրերի հետ առկա կապերին, հարկապահանջությանը, փոխարմաների (կաթոլիկ) դեմ մղվող պայքարին, ինչպես նաև վանքապատկան ճորտերին և, առհասարակ, երկրի տնտեսական կյանքին⁵:

Բովանդակալից է նաև երկրորդ գրքի առաջաբանը: Կազմողն այստեղ ևս նյութը խմբավորել է ըստ ոլորտների, միայն թե բուն շեշտը տրամաբանորեն 1786-1792 թթ. նամականու բովանդակության վրա է: Ութ ենթազյուզիներում հեղինակն առանձնացրել է նշված տարիների նամակագրության բովանդակային հենքի վրա ձևավորված այնպիսի բաժիններ, ինչպիսիք են՝ Արևելյան Նայաստանի և շրջակա վայրերի քաղաքական կացությունը, տնտեսական ու մշակութային կյանքը, Վրաց Ներակլ Բ. թագավորի ու Նրա ընտանիքի ամդամների, Շահամիր Շահամիրյանի, Արցախի մելիքների և Լազարյանների միջև եղած նամակագրությունը, Ս. Էջմիածնի տպարանի գործունեությանն առնչվող նյութերը, Նովոռոսիայի երեցի և համբարությունների (Էսնաֆություններ) մասին հիշատակությունները, ասորիների՝ Մատթեոս կաթողիկոսի հետ ունեցած կապերն ու զանազան այլ հարցեր:

Երկհատորյակը ժամանակին գրախոսել է բանասեր, արաբագետ Միհրան Մինասյանը, որն ըստ արժանվույն գնահատել է նյութի աղբյուրագիտական մեծ արժեքն ու կազմող-հեղինակի կատարած հսկայական աշխատանքը⁶: Կարևորելով արխիվային վավերագրերի նման շարքով հրատարակումը՝ Ս. Մինասյանն իրավացիորեն կոչ է անում օր առաջ թղթապանակներից դուրս բերել ու կյանքի կոչել մեր ուշմիջնադարյան պատմության համար այնքան կարևոր վավերագրերը, որոնք պետք է Նոր լույս սփռեն մեր պատմության՝ տակավին չուսումնասիրված էջերի վրա և նյութ մատակարարեն ապագա բանասերներին ու պատմաբաններին: Նամակների բովանդակության՝ զուտ շնորհակալական բնույթն անգամ Մինասյանն ուշագրավ է համարում, քանի որ «...առաջին ակնարկով այսքան անկարևոր թուացող այս գրութիւնները երբեմն անուղղակիորեն կը մատնեն որոշ բարեկամութիւններ, կապեր, կը բացայայտեն մտայնութիւններ, կը յայտնաբերեն անուններ եւ լոյս կը սփռեն մութին մնացած ինչ-որ դէպքի մը կամ դեմքի մը վրայ»⁷:

Այդուհանդերձ, հավաքված վիթխարի և աղբյուրագիտական մեծարժեք նյութը թերի էր, քանի դեռ չէր հրատարակվել Ղուկաս կաթողիկոսի գահակալման վերջին շրջանը ներկայացնող վավերագրերի շարքը: Վ. Գրիգորյանն այն վաղուց կազմել ու վավերագրերին կից երբեմն որոշ նշումներ էր արել⁸, պարզապես

⁵ Վ. Գրիգորյան, Ներածություն, տե՛ս ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա., էջ 10-84:

⁶ Մ. Մինասյան, «Դիւան հայոց պատմութեան» նոր շարք (գրախօսութիւն), «Հասկ» հայագիտական տարեգիրք, Նոր շրջան, Ժ. տարի. 2002-2006, Անթիլիաս-Լիբանան, 2006, էջ 395-401:

⁷ Նույն տեղում, էջ 400:

⁸ Վարդան Գրիգորյանի այդ նշումները մենք ներկայացրել ենք տողատակում՝ հերթական համարակալմամբ՝ վերջում նշելով հեղինակի անվան ու ազգանվան սկզբնատառերը՝ «Վ. Գ.»: Այդ գրառումներն առավելապես առնչվում են տվյալ վավերագրի վիճակ-պահպանվածությանը, նրանում առկա այլևայլ նշումներին, գրչությանը, անկարևոր հատվածներին և նման այլ հարցերի:

առողջական և ինչ-ինչ խնդիրների պատճառով գործն անավարտ էր մնացել: Ըստ այդմ, Մատենադարանի տնօրենության և գլխավոր ավանդապահ Պետրոս Տեր-Վարդանյանի առաջարկով, 2018 թ. ստանձնեցինք հատորում ընդգրկված վավերագրերի՝ բնագրերի հետ վերստին համեմատության, դասակարգման, ծանոթագրման⁹, անվանացանկերի կազմման պատասխանատու գործը, որի արդյունքը ներկա աշխատությունն է:

Ի սկզբանե, շարքի Գ. հատորում ամփոփված էր Ղուկաս Կարնեցու 1793-1799 թթ. գործունեությունը լուսաբանող 1178 վավերագիր, այնքան, որքան Ա. հատորում է: Պետք է նշել, որ ներկայացված վավերագրերի համարակալման կարգը խախտված, ավելին՝ մի շարք ծանոթագրություններ անտեղի համարակալված էին որպես վավերագիր (կար նաև հակառակ պատկերը, երբ վավերագիրը չէր համարակալվել), ուստի սրանք մեկ առ մեկ ստուգել, վերահամարակալել ենք: Բացի այդ, վավերագրերի՝ բնագրերի հետ վերստուգելու ընթացքում պարզեցինք, որ բազմաթիվ ուշագրավ նամակներ ու համառոտագրություններ չեն ընդգրկվել հատորում, իսկ այն վավերագրերը, որոնք ներկայացված էին նյութին կից՝ ծանոթագրման եղանակով, խիստ համառոտ ու անընկալելի էին: Նկատի առնելով այդ և ձգտելով նամականիս ներկայացնել հնարավորինս ամբողջական՝ ՄՄ չ^դ 4481 ձեռագրի վերստուգման արդյունքում հատորում ընդգրկեցինք ևս 432 նամակ ու համառոտագրություն՝ վավերագրերի ընդհանուրը թիվը հասցնելով 1610-ի¹⁰: Ինչ վերաբերում է միավորների շարքում մեջընդմեջ՝ ծանոթագրման եղանակով ներկայացված հատվածներին, ապա ՄՄ չ^դ 4481 ձեռագրի հիմամբ նման բոլոր վավերագրերը լրացվել են, մեջբերվել նվիրատվության հատվածները, կատարված գործարքների բովանդակությունը և այլն, իսկ վերջում՝ կոր փակագծերի մեջ, նշել ենք տվյալ վավերագրի էջահամարը և կարգային համարը, այսպես՝ «Էտրենէի առաջնորդ Միքայել վարդապետին շնորհակալութիւն է ասուում «վասն Գ. (4) ոսկի ժամուցին... եւ վասն շինման եկեղեցւոյն իւրեանց» եւ այդ առիթով օրհնութեան գիր է յղում մահտեսի Ստեփանոս ամիրային» (477բ, Գ.) կամ «Օրհնութեան նամակներ նուիրատուներ սառաֆ Աւետիքին «յաղագս Գ. (3) դուռուշ տարեկան խոստմանցն» (486ա, Ա./20)» և այլն¹¹:

Այսպիսով, եռահատորյակում ամբողջացվում և գիտական շրջանառության մեջ է դրվում Ղուկաս Ա. Կարնեցի Ամենայն չայոց կաթողիկոսի գործունեության և, առհասարակ, 18-րդ դարի վերջին երկու տասնամյակների պատմության լուսաբանման համար սկզբնաղբյուրային արժեք ունեցող ընդհանուր հաշվով 4611 միավոր վավերագիր:

⁹ Նախորդ երկու գրքերում ծանօթագրութիւնները դրուած են գրքի վերջում՝ բնագրերից յետոյ, իսկ այստեղ նպատակայարմար համարեցինք դրանք ներկայացնել տողատակերում՝ այդպիսով դիւրացնելով գրքի սահուն ընթերցումը (հմբ.):

¹⁰ Մեր ընդգրկած վավերագրերի համարներին աստղանիշ է դրված (*):

¹¹ Բնագրերին զուգահեռ՝ ծանոթագրման եղանակով տրված միավորների դեպքում հետևել ենք հայերենի դասական ուղղագրությանը, իսկ տողատակերի ծանոթագրություններն արդի արևելահայերենով են (Ա. Հ.):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՁԵՆԱԳՐԵՐԸ

Նամականու՝ սույն հատորում ընդգրկված վավերագրերը բաղված են ՄՄ Յ՞՞ 2922, 4449, 4481, 4482, 4483, 4501, 4538, 6298 ձեռագրերից, ինչպես նաև արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանի որոշ գործերից (ՄՄ ԿԳ թղթ. 6, վավ. 150, թղթ. 243, վավ. 77-80, 84, 86, 87):

Նշված ձեռագրերից Մաշտոցի անվ. Մատենադարանի ընդարձակ ձեռագրացուցակում հրատարակվել է միայն ՄՄ Յ՞՞ 2922՝ երկու տարբեր ձեռագրից բաղկացած մատյանի նկարագրությունը¹², իսկ մյուսների մասին կարելի է ընդհանուր պատկերացում կազմել համառոտ ձեռագրացուցակի հատորների միջոցով: Այսպես, ՄՄ Յ՞՞ 2922 ձեռագիրը բովանդակում է Ղուկաս Կարնեցի, Դանիել Սուրմառեցի և Եփրեմ Չորագեղցի կաթողիկոսների, ինչպես նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր բարձրագույն խորհրդի անդամ-արքեպիսկոպոսների ու միաբանների տարաբնույթ նամակների ու գրագրությունների պատճենները: Մեզ հետաքրքրող վավերագրերը ձեռագրի Բ. մասում են՝ գրված 1797-1801 թթ. Ս. Էջմիածնում: 53 թերթից բաղկացած մատյանը գրչի կողմից էջակալված է՝ 2479-2573, որ է՝ 32ա-79ա, գրությունը միասյուն է, գիրը՝ նոտրգիր, 49-51 տող: Ձեռագրի այս հատվածում, ինչպես նշեցինք, ամփոփված են Ղուկաս Կարնեցու և Մայր Աթոռի միաբանության անդամների գրագրությունների պատճենները, առավել հայտնի «Օրինակք գրութեանց» անվամբ: Մատենադարանի ընդարձակ՝ Մայր ցուցակի համապատասխան հատորի առաջաբանում Գևորգ Տեր-Վարդանյանն արձանագրում է, որ այսպես կոչված «Օրինակ գրութեանց» նամակների և տարբեր գրագրությունների ժողովածուները «ուշ միջնադարի մեր պատմության շատ կարեւոր սկզբնաղբիւրներ են»¹³, իսկ նկատի առնելով նման ձեռագրերի նկարագրության՝ «Դիվան հայոց պատմության» մատենաշարի կազմելիք հատորների համար խիստ օգտակար լինելու հանգամանքը՝ «փաստաթղթերի այս ժողովածուների պարունակութիւնը նկարագրուել է իւրահատուկ ձեւով. բոլոր միաւորներն ընթերցուել են, եւ համառօտ արձանագրուել են նրանց բովանդակութեան հիմնական տուեալները»¹⁴: Այսպիսով, ՄՄ Յ՞՞ 2922 ձեռագրի Բ. մասի սկզբում ամփոփված է Ղուկաս Կարնեցու «Օրինակք գրութեանց» պատճենների և (40) միավոր նյութ, որից 28-ն ամբողջական կամ համառոտ շարադրանքով տեղ են գտել հատորի էջերում, իսկ մյուսները բերված են ՄՄ Յ՞՞ 4481 ձեռագրի համառոտագրությունների շարքից՝ միավորների վերջում «Տէ՛ս ի մե՛ծ տետ[եր] յերեսն 2507» և նմանօրինակ այլ նշումներով:

Հատորում օգտագործված մյուս ձեռագրերի ընդարձակ նկարագրությունները, ինչպես վերը նշեցինք, դեռևս անտիպ են: Դրանցից ՄՄ Յ՞՞ 4449 ձեռագիրը, որը դարձյալ Ղուկաս Կարնեցու «Օրինակք գրութեանց» նամակների ու համառոտագրությունների պատճենների ժողովածու է, ըստ համառոտ ձեռագրացուցակի, պարունակում է 1790-1791 թթ. վերագրվող նամակագրությունների պատճեն-

¹² Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Թ., խմբագրութեամբ Գ. Տեր-Վարդանեանի, Երեւան, 2017, սյուն 1491-1512:

¹³ Գ. Տեր-Վարդանեան, Մաշտոցեան Մատենադարանի Մայր ցուցակի իններորդ հատորը - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Թ., սյուն 6:

¹⁴ Նույն տեղում:

ներ¹⁵, մինչդեռ վավերագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ընդլայնել դրանց ժամանակագրությունը և նշել, որ ներկա հատորում հիշյալ ձեռագրից ընդգրկվել է 1793 թ. 5 վավերագիր, մի քանիսն էլ՝ ծանոթագրված (ձեռագրում՝ էջ 39ա-42բ, սույն հատորում՝ վավ. 55-57, 268, 269):

Հատորի հիմնական՝ մայր ձեռագիրը, որտեղից հարյուրավոր վավերագրերի համառոտագրություններ են հրապարակվում, ՄՄ չ^մ 4481 «Օրինակք գրութեանց Ղուկասու կաթողիկոսի կարնեցոյ» խորագրով նամակագրությունների, կոնդակների և նրանց համառոտագրությունների ժողովածուն է՝ գրված 1780-1799 թթ. Ս. Էջմիածնում: Ձեռագրի ստեղծման ժամանակագրությունն արդեն հուշում է, որ այն ամփոփում է Ղուկաս հայրապետի գահակալման ողջ տարեգրությունը՝ կաթողիկոս ընտրվել-օծվելուց մինչև վախճանը: Անշուշտ, մենք կանգ կառնենք միայն մեր խնդրո առարկա ժամանակահատվածի՝ 1793-1799 թթ. նամականու լուսաբանման հարցերի վրա: Նախ ասենք, որ ձեռագիրը կազմվել-ամբողջացվել է տարբեր մատյանների միացումից, ինչով պայմանավորված՝ 533 թերթերի չափերը երբեմն տարբեր են՝ 30,5-34 × 20-23 սմ, գրադաշտը միայուն է, գիրը՝ շղագրանման նոտրգիր, 33-43 տող:

Տարեգրության սկզբունքով ներկայացված նամակների ու համառոտագրությունների շարքերի սկզբում, երբեմն նաև վերջում, պահպանվել են Ղուկաս հայրապետի գրագիր-քարտուղարների թողած համառոտ, բայց բովանդակային առումով ուշագրավ հիշատակարանները: Դրանց շնորհիվ պարզվում է, որ կաթողիկոսի նամականու արձանագրումն առանձին մատյանի մեջ շարունակվել է նաև հետագա տարիներին՝ ի դեմս քարտուղարներ Չաքարիա արեղայի, Գալուստ և Նակոբ սարկավազների ջանադիր ու հետևողական աշխատանքի: Այսպես, 1793 թ. շարքի առաջին միավորը գրիչ Չաքարիա արեղայի հիշատակարանն է, որն արձանագրում է Աստծու կամոք Վեհափառ հայրապետի նամականու կանոնավոր մուտքագրման շարունակումն առանձին ժողովածուում՝ «յաղագս արանց խնդրողաց իրաց ոմանց աստի»¹⁶: Ծանոթագրություններում նշել ենք, որ Չաքարիան այդ գործն սկսել է դեռևս 1785-ից մինչև մահը՝ 1794 թ. դեկտեմբեր (տե՛ս ծնթ. 1): Վերջինիս հաջորդել է Գալուստ սարկավազը, որը կյանքից հեռացել է վաղաժամ, ինչի մասին հիշատակել է հաջորդ գրագիր Նակոբ սարկավազը. «Զիշատակագրութիւն թղթոցն հասուցեալ շնորհալի և հոգեկից եղբօրն իմոյ՝ տիրացու Գալուստին, մինչև ցայս վայր, ինքն ի տիս երիտասարդական և ծաղկեալ հասակի, ի կենաց աստի փոխեցաւ, վախճանեալ ամաց իբրև քսան և երկուց յամի Տեառն 1795 դեկտեմբերի 11»¹⁷: Թերևս հենց միևնույն Նակոբ սարկավազն էլ 1799 թ. ամփոփել է Ղուկաս կաթողիկոսի նամականու գրչագրումը՝ վերջում արձանագրելով նաև բազմաշխատ գահակալի մահը. «Յայս վայր հասեալ գրութեանցս ի դիմաց տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին, այժմ ի վերոյ նշանակեալ թուոյ դեկտեմբերի 11. (28), փոխեցաւ յաստեացս նա ինքն մեծավաստակ հայրապետն, որոյ զհոգին Տեր լուսաւորեսցէ: Ապա յայսուհետև ի հետևեալ թուղթօս, որ ինչ և

¹⁵ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան, Երևան, 1965, սյուն 1216: Ունի 42 թերթ, գրությունը՝ միասյուն, գիրը՝ նոտրգիր, 48-52 տող:

¹⁶ ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 445ա:

¹⁷ Նույն տեղում, էջ 360ա:

դեպ լիցին գրիլ, ի միաբանից Սրբոյ Աթոռոյս գրեսցին»¹⁸: Ղուկաս կաթողիկոսին հուղարկվորել են Ս. Գայանե վանքի գավիթ-տապանատան ներսում՝ իր նախորդի՝ Սիմեոն Երևանցու կողքին: Ավելորդ չէ հիշատակել մարմարե վայելուչ տապանաբարի չափածո արձանագրությունը.



Նկ. 1. Ղուկաս Ա. Կարնեցու տապանաքարը Ս. Գայանե վանքում (սնկ.՝ Ա. Հարությունյանի, 2016 թ.)

ՅԱՐԿ ՂԱՄՔԱՐԱՆԻՍ Է ՎԵՅԻՆ ՍԵԾԻ,
ՏԵԱՌՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ,
ԲԸՆԻԿ ՊԱԻՆԱՄ ԷՐ ՍԱ ԿԱՐՆԵՅԻ,
ՀԱՆՂԱՐՏԱԿԵՆՑԱԳ ԵՒ ՋԱՆԻԲ ԲԱՐԻ,
ԹԷՊԵՏ ԴԻՊԵՅԱՒ ՂԱՌՆ ԺԱՄԱՆԱԿԻ,
ՊԱՏԵՅԵԱԼ ՎՇՏՈՔ ԸՍՏ ՓՈՂՈՅՆ ԲԱՆԻ,
ԱՅԼ ՅՈՐԵ ԿՈՉԱՆՆ ԵՂ ԻՍԿ Ի ՍԸՏԻ,
ՇԸՔԵՂԱԶՍՐԴԵԼ ԶՊԿՅԸՆ ՀՐԱՇԱԼԻ,
ՈՐ ԵՒ ԵՏ ՍԱՂԿԵԼ ԿԱՐԻ ՍԽՐԱԼԻ,
ԸԶՄԷՋ ՏԱՃԱՐԻՆ ՄԻԱՍՆԱԻՋԻ,
ՆԱԵՒ ՆՈՐՈԳԵԼ ԵՏ ՇՈՒՐՋԱՆԱԿԻ,
ՇԻՆԵԱԼ ԵՒ ԶԱՅԼ ՇԵՍՍ, ՈՐՔ ԵՆ ԻՍԿ ՅԱՅՏԻ,
ԱՊԱ ԸՆԿԱԼԵԱԼ ԸԶՎԱՆՃԱՆ ԲԱՐԻ,
ԴԻՄԵԱՅ ԱՌ ՅՈՅՍԱ ՄՄԵՆԱՅՆԻ,
ՅՈՐՍԷ ԸՆԿԱԼՅԻ ԸԶՎԱՐՉԱՍ ԲԱՐԻ,
ԵՒ ՅԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՐՃՈՒԵՅԻ,
ԱՄՓՈՓԵՅԱՒ ՅԱՄԻ ՈՉՂԹ. (1799),
Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԻԹ. (29),
Ի ՏՕՆԻ ՈՐԴԻՈՅ ՈՐՈՏԱՄԱՆ¹⁹:

Բավականին ուշագրավ տապանագրում Ղուկաս հայրապետը բնութագրվում է իբրև խառնվածքով հանդարտ և գործով բարի, որի գահակալման տարիներին թեև ժամանակը դառն ու խրթին էր, բայց և չխանգարեց հայրապետին նախաձեռնելու Սիաձնաէջ տաճարը շքեղազարդելու ու ծաղկելու (այսինքն՝ որմնակարագարդելու), ինչպես նաև տաճարի շրջակայքը նորոգելու, նոր

շենք-շինություններ կառուցելու աստվածահաճո գործը: Մահվան օրվա՝ մի դեպքում դեկտեմբերի ԻԸ. (28), մյուսում՝ ԻԹ. (29) տարբերությունները կարող են տուժարական տարբեր հաշվարկների հետևանք լինել:

¹⁸ ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 126բ:

¹⁹ Տապանագիրն ավելի վաղ հրատարակվել է Հովհաննես Եպս. Շահխաթունյանցի և Հ. Ղևոնդ Ալիշանի տեղագրական աշխատություններում, նաև՝ «Գիան հայոց պատմության» մատենաշարի Գ. հատորում (էջ Կ.), իսկ վերջին հրատարակությունը տե՛ս Ա. Հարությունյան, Վաղարշապատ. վանքեր և վիմական արձանագրությունները, Ս. էջմիածին, 2016, էջ 307, արձ. 593:

Նամականու բնավող բնագրում օգտագործված մյուս երկու ձեռագրերը համարակալմամբ հաջորդում են միմյանց՝ ՄՄ չ^մ 4482 և 4483: Երկուսն էլ զանազան նամակների ու կոնդակների «Օրինակք գրութեանց» ժողովածուներ են, առաջինը գրված է 1791-1803 թթ., երկրորդը՝ 1791-1811 թթ. Ս. Էջմիածնում: Բովանդակային առումով ՄՄ չ^մ 4482 ձեռագիրն ամփոփում է Ղուկաս Կարնեցի և Դավիթ Էնեգեթցի կաթողիկոսների նամակագրությունը. դրանցից սույն հատորում ընդգրկվել է ամբողջական 20 վավերագիր, ևս 25 անգամ ձեռագիրը հղված է ծանոթագրմամբ ներկայացված վավերագրերի վերջում²⁰:

Ինչ վերաբերում է ՄՄ չ^մ 4483 ձեռագրին, ապա սրա բովանդակային հենքն ավելի ընդգրկուն է. այստեղ տեղ է գտել ոչ միայն Ղուկաս, Դանիել և Եփրեմ կաթողիկոսների, այլև Կ. Պոլսի չովհաննես ԺԱ. Չամաշոճյան Բաբերոցի պատրիարքի և Ս. Էջմիածնի միաբան Գրիգոր վրդ. Սևակրի նամակների և տարաբնույթ թղթերի մի ստվար մասը²¹: Մեր խնդրին առնչվող վավերագրերն այս ձեռագրից 22-ն են, կան նաև միավորներին կից՝ ծանոթագրման եղանակով ներկայացված նամակների բովանդակային համառոտագրություններ (ձեռագրում՝ Էջ 1770-1798, սույն հատորում՝ վավ. 58, 86, 88, 92, 143, 160 և այլն):

Անհամեմատ ավելի շատ վավերագրեր են հրատարակվել ՄՄ չ^մ 4501 և 4538 ձեռագրերից (համապատասխանաբար՝ 97 և 114 միավոր), որոնք դարձյալ Ղուկաս կաթողիկոսի գրագրությանն առնչվող «Օրինակք գրութեանց» ժողովածուներ են: Սրանցից առաջինը, որը գրվել է 1785-1801 թթ. Ս. Էջմիածնում, բուն բովանդակությունից բացի, ամփոփում է նաև Ս. Էջմիածնի միաբանության անդամների նամակների օրինակ-պատճեններ²²: Ռուսաց կայսեր առաջին նախարար (մինիստր), իշխան Ալեքսանդր Անդրեևիչ Բեզբորոդկոյին 1797 թ. հղած նամակի վերջում կարդում ենք Ղուկաս հայրապետի ինքնագիր հիշատակարանը՝ գրագրի հետևյալ ստորագրությամբ. «Ձեռագիր սրբազանին ի ներքոյ գրեալ: Քրիստոսի Փրկչին ծառայ և վասն գերապայծառութեան ձերոյ զբարիս հայցող խոնարհ Ղուկաս կաթողիկոս Ամենայն չայոց, ձեռամբ իմով գրեցի զայս չափս առ ի ստուգութիւն ամենայն վերոյ գրեցելոցն»²³:

Երկրորդ՝ ՄՄ չ^մ 4538 ձեռագիրը ևս, բացի Ղուկաս կաթողիկոսի «Օրինակք գրութեանց» բուն նամականուց, բովանդակում է Ս. Էջմիածնի միաբանության 1840 թ. նամակագրության պատճեններ, ինչպես նաև քարոզ և Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն սաղմոսաց»-ը²⁴: Ձեռագրից բաղված հարյուրից ավելի վավերագրեր ներկայացված են բնագրով, իսկ շուրջ տասը՝ խմբագրված և ծանոթագրման եղանակով:

Ինչ վերաբերում է ՄՄ չ^մ 6298 ձեռագրին, որը համառոտ ձեռագրացուցակում ունի «Պատճէնք կոնդակաց Ղուկասու Կարնեցոյ» խորագիրը, ապա պիտի

²⁰ Զբրկնելու համար մինևնոյն նամակի՝ այլ ձեռագրերում առկա բովանդակությունը՝ Վարդան Գրիգորյանը դրանք ներկայացրել է խմբագրված և համառոտ:

²¹ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., սյուն 1222: ՄՄ չ^մ 4482 ձեռագիրն ունի 405 թերթ, գրությունը՝ միասյուն, գիրը՝ նոտագիր, 30-43 տող, իսկ ՄՄ չ^մ 4483-ը՝ 107 թերթ, միասյուն, նոտագիր, 44 տող:

²² Նույն տեղում, սյուն 1225: Ունի 501 թերթ, գրությունը՝ միասյուն, գիրը՝ նոտագիր, 45-51 տող:

²³ ՄՄ ձեռ. չ^մ 4501, էջ 456բ:

²⁴ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., սյուն 1232: Ունի 207 թերթ, գրությունը՝ միասյուն, գիրը՝ նոտագիր, 43-50 տող:

ասենք, որ սրա մեծ մասը ևս Ղուկաս Կարնեցու «Օրինակք գրութեանց» նյութերի ժողովածու է՝ գրված 1796-1800 թթ.²⁵: Այս ձեռագրից հատորում ընդգրկվել է 39 վավերագիր՝ հիմնականում նամակների և կոնդակների համառոտագրություններ, ևս մեկ միավոր ներկայացվել է համառոտման սկզբունքով (ձեռագրում՝ 1ա-37ա, սույն հատորում՝ վավ. 1071, 1075, 1076, 1081, 1082, 1088, 1109 և այլն): Ստորև կտեսնենք, որ այս ձեռագրի մասն է անանուն հեղինակի «Պատմութիւն ինչ գլխաւոր բանից, հարկաւորաց ի ժամանակս տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին...» աշխատությունը, որը մեծանուն հայագետ Գարեգին Նովսեփյանը հրատարակել է նախ «Արարատ»-ի էջերում²⁶, այնուհետև՝ Անթիլիասում²⁷:

Ինչպես տեսնում ենք, հատորի բուն նյութն ամբողջացել է Մատենադարանի ձեռագրական հավաքածուում պահվող «Օրինակք գրութեանց» ժողովածուներից: Հայտնի է, որ նամակների և տարաբնույթ գրագրությունների նմուշները կանոնավոր ձևով առանձին տետրերում են ամփոփվել սկսած Սիմեոն Երևանցի կաթողիկոսի գահակալման ժամանակաշրջանից (1763-1780 թթ.) և վերջինիս հորդորով, որին էլ սրբորեն հետևել է նաև Ղուկաս կաթողիկոսը: Այսպիսով, ամբարված նամակագրական հսկայածավալ նյութը հնարավորություն է ընձեռում թեկուզ համառոտ անդրադառնալու նաև դրանց բովանդակության ընդհանուր նկարագրին:

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔ

Նախքան հատորում ամփոփված մեծ ու փոքր վավերագրերի բովանդակային հենքին անդրադառնալը՝ մի քանի խոսքով բնութագրենք արխիվային նյութերի ուսումնասիրության անհրաժեշտությունը մեր պատմության՝ հատկապես ուշ միջնադարի շրջանը խորությամբ հետազոտելու համար: Միջնադարյան Հայաստանի պատմությունը, նրա քաղաքական, ընկերային-տնտեսական, հոգևոր ու մշակութային կյանքն ուսումնասիրողն ակամայից հաշվի է նստում մեր գրավոր ժառանգության՝ վիմական արձանագրությունների և ձեռագիր մատյանների հաղորդած տեղեկությունների հետ, որոնք, իբրև կանոն, հավաստի ու փաստական վավերագրեր են վերոնշյալ բնագավառներն ըստ հարկի լուսաբանելու համար: Եթե վիմագրերն ու ձեռագիր մատյանները (նաև՝ պատառիկները) մեզ են հասել դեռևս վաղ ու զարգացած միջնադարից, ապա արխիվային վավերագրերը, մաս-

²⁵ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ., կազմեցին՝ **Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան**, Երևան, 1970, սյուն 290: Ունի 44 թերթ, գրությունը՝ միասյուն, գիրը՝ նոտրգիր, 43-46 տող:

²⁶ «Մայր Աթոռի դիանից», «Արարատ», 1901, Գ., էջ 183-190, Ե-Ձ., էջ 326-330, նույնը՝ ստորագրված «Գարեգին վարդապետ [Յովսեփեան]», «Արարատ», 1914, Ժ., էջ 919-926, հմմտ. Պատմութիւն ինչ գլխաւոր բանից, հարկաւորաց ի ժամանակս տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին եղելոց շինարարութեանց եւ մեծագործութեանց նորին, ի Գաւազանագիրքս եւ ի շարս կաթողիկոսացն գրելի եւ նախագիծ օրինակ, հրատ., [Գարեգին վրդ. Յովսեփեան], «Արարատ»-ի ժառանգութիւնը. Թ., «Արարատ»-ի բնագիրները, հ. Ա., հրատ. պատրաստեց՝ **Ս. Նահապետեան**, դասակարգումը, խմբագրումը եւ առաջաբանը՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, Ս. էջմիածին, 2017, էջ 172-185, Հ^{մբ} 17/129:

²⁷ **Գարեգին Ա. կաթողիկոս**, Պատմութիւն Ղուկաս կաթողիկոսի (Մայր Աթոռի Դիանից), «Նիսիւր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան», պրակ Ե., Անթիլիաս-Լիբանան, 1951, էջ 48-63:

նավորապես՝ կոնդակներ, հրովարտակներ, ընծայագրեր, գույքացուցակներ, նամակներ, շրջաբերական թղթեր և այլն, միայն 15-16-րդ դդ. հետո, այն էլ՝ վաղ շրջանից և խիստ սակավաթիվ:

Պատահական չէ ակադեմիկոս Դովսեփ Օրբելու՝ վիմագրերի սկզբնաղբյուրային ու գիտական արժեքի գնահատմանը զուգահեռ հայտնած այն միտքը, թե մեզ հասած արխիվային փաստաթղթերը փոքրաթիվ են, եղածն էլ՝ ուշ շրջանի՝ 17-18-րդ դդ.²⁸: Բնականաբար, սա չի նշանակում, թե մեծանուն հայագետը ստորադասում է արխիվային վավերագրերի արժեքը, այլ պարզապես արձանագրում է ձեռագիր նյութի ավելի խոցելի, պահպանության տեսակետից վտանգված լինելու հանգամանքը, դրանով հանդերձ՝ ուսումնասիրման անհրաժեշտությունը: Ավելի ուշ, Յ. Օրբելու աշակերտ, անվանի վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը հետաքրքիր զուգահեռ է անցկացնում վիմական բնագրերի և, օրինակ, վանքերի ունեցած մատյան-քոթուկների (ընծայամատյանների) միջև, որպիսիք հայտնի են Սանահինից, Տաթևից, Վանի Ս. Վարդան եկեղեցուց: Քոթուկներ են ունեցել նաև Սաղմոսավանքը, Վանա լճի Լիմ և Կտուց անապատները և այլ հոգևոր կենտրոնները: Ս. Բարխուդարյանի բնորոշմամբ՝ նման մատյաններում ընդօրինակվում և պահվում էին վանքերի ու եկեղեցիների տարաբնույթ գործարքներին վերաբերող փաստաթղթերի պատճեններ, ինչի արդյունքում բազմաթիվ վիմագրեր կորստից փրկվել են²⁹:

Կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե ասենք, որ 17-րդ դարից ի վեր մասսայական դարձած, այսպես կոչված «նոտարական» գրագրությունը՝ կապված հոգևոր կենտրոնների ելից-մտից մատյանների կազմման, շինարարությունների, նորոգումների, նվիրատվությունների, արտոնությունների արձանագրման, ինչպես նաև նվիրակական, գանձանակի ու հոգեբաժնի եկամուտների գրանցման հետ, նախկին քոթուկ-ընծայամատյանների ուղղակի շարունակողն ու ավանդույթի կրողն է: Այլ խոսքով, եթե բուն միջնադարում քոթուկի բովանդակությունը կամ դրա առնվազն մեծ մասը նվիրատվական վիմագրերին բնորոշ վավերագրեր են (երբեմն էլ քոթուկում արձանագրված նյութն է վիմագիր կազմվելու հիմք դարձել), ապա 17-19-րդ դդ. դիվանական հազարավոր վավերագրերը զուտ նամակներ լինելուց բացի, նաև յուրօրինակ հիշատակարաններ են՝ իրենց բնորոշ կաղապարներով, որոնցում նշվում են նամակագրի, հասցեատիրոջ անունները, վայրը, նպատակը, բովանդակությունը, ժամանակը և այլն:

Առավել հետաքրքիր է այն, որ նամակներում հիշատակված անձինք հաճախ մանրամասն բնութագրված են. օրինակ՝ Ռուսաց նորընտիր կայսր Պավել Պետրովիչին Ս. Էջմիածնից 1797 թ. հունիսի 20-ին հղված շնորհավորագրում Ղուկաս Կարնեցին ներկայանում է իբրև կաթողիկոս քրիստոսական և առաքելահաստատ սուրբ եկեղեցու, «փոխանորդ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, ժառանգորդին վիճակի սրբազան առաքելոցն Թաղեոսի և Բարդուղիմեոսի և պատրիարգ լուսանկար մեծի Գահիս Սրբոյ Էջմիածնի հրաշակերտեցելոյ ի Վաղարշապատ քաղաքի

²⁸ **Հ. Օրբելի**, Հայկական վիմական արձանագրությունների գիտական նշանակությունը. - տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ Ա., Անի քաղաք, կազմեց՝ **Հ. Օրբելի**, Երևան, 1966, էջ V-VI:

²⁹ **Ս. Բարխուդարյան**, Հայկական վիմագրություն. - տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ Ա., էջ XVII:

յկյրարատեանս դաշտի: Յորմէ ճշմարիտ սիրով և հոգետենչ բաղձանօք մատուցի ողջոյն բրիստոսաձիր և օրհնութիւն աստուածային, հանդերձ գօրութեամբ կենսառիթ խաչին բրիստոսեան, և նորին կողամուխ սրբոյ Գեղարդեանն և շնորհօք Սրբոյ Իջման տեղոյս նորա, և սքանչելարար աշոյ Սուրբ Լուսաւորչին մերոյ, և նշանագործ դամբարանաց սրբուհեաց կուսանացն շնիփսիմեանց և Գայիանեանց» (վավ. 1177): Նամակի ճշմարտացիութիւնը վավերացնող Ղուկաս կաթողիկոսի ինքնագիր հիշատակագրութիւնը շարադրանքի վերջում է, այսպէս. «Ինքնին զայսքան ինչ ձեռագրեմ աստանօր ի հաւաստութիւն ճշմարտութեան ամենից վերոյ գրեալ բանից թղթոյս, Քրիստոսի նուաստ ծառայ և յաղագս մեծագօրի կայսերութեան ձերոյ միշտ բարեխնդիր աղօթաւոր, խոնարհ Ղուկաս կաթողիկոս Ամենայն Նայոց» (վավ. 1177):

Ակներև է, որ մեզանում, ինչպէս վիմագրերն ու ձեռագիր մատյանները, այնպէս էլ արխիվային վավերագրերն առավելապէս առնչվում են երկրի հոգևոր կյանքին՝ վանքերի ու եկեղեցիների ներքին փոխհարաբերություններին, վանականներին ու եկեղեցական կալվածատիրութեանը, միաբանություններին, ձեռնադրությունների ժամանակագրութեանը և այլ հարցերին: Նայտի իրողություն է, որ հայոց պետականության բացակայության պայմաններում երկրի կառավարման առաքելությունը վերջին հաշվով ստանձնել էր հոգևոր առաջնորդը՝ կաթողիկոսը, որին ընդունում էին այլ երկրների ղեկավարները, և որը հաշվետու էր իր երկրի քաղաքական, տնտեսական, ի վերջո՝ հոգևոր-մշակութային կյանքի զարգացման համար: Այս տեսակետից կաթողիկոսական, դիվանային փաստաթղթերն էլ ավելի են արժևորվում, քանի որ դրանք են, որ հավաստի նյութ են հաղորդում պատմաբանին՝ ժամանակաշրջանի ընդհանուր նկարագիրը պարզելու և քննութեան առարկա դարձնելու համար:

18-րդ դարի երկրորդ կեսից Մայր Աթոռ Ս. Էջմիածնից առաքված նամակների սևագրությունները պահելը, դրանց պատճեն-համառոտագրություններն առանձին մատյաններում մուտքագրելն ավանդույթ է դառնում: Վերն արդէն ակնարկեցինք, որ այս սովորույթի «հիմնադիրը» Սիմեոն Երևանցի կաթողիկոսն էր, որի գահակալման հենց սկզբից շովհաննես անունով դպիրը³⁰, հայրապետի հրամանով, հանձն է առնում ի մի բերել և ժամանակագրորէն արձանագրել Վեհափառ հայրապետի նամականին. «...սկսայ արձանացուցանել և ի գիր արկանել զամենայն թուղթս, թէ որք ի սրբոյ Աթոռոյս գրեցան յայլ տեղիս ի սրբազան Վեհէն, և թէ որք յարտաբուստ գրեցան առ սա, հանդերձ որպիսութեամբք նոցին, ի յիշատակ և յօգտութիւն ապագայից»³¹: ձեռնց այդօրինակ գրություններն էլ հետագայում դարձան «Դիվան հայոց պատմութեան» մատենաշարի կազմման հիմնական աղբյուրը:

³⁰ Հովհաննէս դպիրը Սիմեոն կաթողիկոսից սակավագ է ձեռնադրվել և անվանակոչվել Իսահակ (1765 թ.): Սա միևնույն Իսահակ Գեղամացի կամ Գեղարճունցի եպիսկոպոսն է, որի անմիջական հսկողությամբ և հնդկահայ մեծահարուստ վաճառական Գրիգոր աղա Խոջաջանյանի (Միխայելյան-Չաֆիկյան) միջոցներով 1776 թ. Մայր Աթոռում կառուցվեց նաև թղթի գործարանը, որը, ցավոք, գործեց մինչև Սիմեոն Երևանցու մահը (1780 թ.), (Թեղդիկ, Տիպ ու տառ: Նմանահանութիւն, հրատարակութեան պատրաստեց՝ Գ. Գասպարեան, Երեւան, 2012, էջ 176-177):

³¹ ԴՆՊ, գիրք Գ., Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, կենսագրութեամբ եւ յաւելութեամբներով ու ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ Բնյ Աղանեանց, Թիֆլիս, 1894, սյուն 5:

ՂՈՒԿԱՍ Ա. ԿԱՐՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
1793-1799 թթ. ՆԱՄԱԿԱՆԻՆ

Եթե մեկ նախադասությամբ բնութագրելու լինեք Ղուկաս Կարնեցի հայրապետի գրագրությունների բովանդակային ընդհանուր նկարագիրը, ապա պիտի ասենք, որ այն իր նախորդի՝ Սիմեոն Երևանցու նամականու տրամաբանական շարունակությունն է, որտեղ առանցքային է Ս. Էջմիածնի գահակալի և Նայաստանի վանական կենտրոններում ու գաղթավայրերում գործած հոգևոր առաջնորդների, ինչպես նաև նվիրակների միջև եղած կապը: Նամակների միջոցով հայրապետը տեղեկություններ է հաղորդում և ստանում տարբեր հոգևոր կենտրոններում տիրող իրավիճակի, շենք-շինությունների կառուցման ու նորոգման ծախսերի, կատարված նվիրատվությունների, Մայր Աթոռ ուղարկված նյութական միջոցների և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ: Նատկանշելի են Վանի Ախիշան ու Կարսի Գևորգ աղաներին, Մշո Ս. Կարապետ վանքի վեբիլ (լիազոր, հավատարմատար) Կարապետ վարդապետին, Գանձակի (Գյանջա) գանձապետ պարոն վարդազարին, Սուրաթի Օհանջան աղա նակոբյան-Գերաբյանցին, Թիֆլիսի Մարտիրոս ու Դանիել վարդապետներին, Վրաց Դարեջան թագուհուն, Ղոչավանքի (Ղոռմոսի) առաջնորդ Ղովհաննես վարդապետին, Կ. Պոլսի Էսնաֆներին (համբարություններին) և ուրիշներին հասցեագրված բազմաթիվ նամակները, որոնց բովանդակությունն ինքնին պատմագիտական արժեք ունի: Սրանք հիմնականում տարատեսակ նվիրատվությունների դիմաց շարադրված օրհնության թղթեր ու շնորհակալագրեր են, նաև՝ կարգազանց հոգևորականներին ուղղված բանադրանքի թղթեր, երբեմն Էլ՝ մխիթարական-ցավակցական նամակներ՝ գրված հարազատների մահվան և աղետալի իրադարձությունների առիթով:

Նկատի առնելով նախորդ երկու հատորների ներածական խոսքում ներկայացված՝ բովանդակության թեմատիկ մանրամասն ուսումնասիրությունը, մենք այստեղ չենք կրկնի արդեն իսկ քննված նյութը, հատկապես, որ հատորի ընդգրկված ժամանակաշրջանի նամակները մեծ մասամբ առնչվում են միևնույն առաջնորդների և հոգևոր սպասավորների հետ, որոնց անունները հիշված են նաև նախորդ գրքերում: Սրանով հանդերձ՝ նպատակահարմար գտանք խնդրո առարկա վավերագրերի ընդհանուր նկարագիրը ներկայացնել ավելի համառոտ, ըստ դրանց բնույթի, նախ՝ օրհնության թղթեր ու շնորհակալագրեր, այնուհետ՝ բանադրանքին առնչվող վավերագրեր, մխիթարության թղթեր ու ցավակցագրեր:

Ա. Օրհնության թղթեր և շնորհակալագրեր

Բանագետ Սարգիս Նարությունյանի բնորոշմամբ՝ օրհնության թղթերը հոգևոր առաջնորդի կողմից այս կամ այն եկեղեցական կամ աշխարհական անձին ու տեղական հասարակությանը հղած խրախուսանքի և, առհասարակ, կատարած բարի գործը դրվատող գրություններ են, որոնք, իբրև կանոն, ունեն կառուցվածքային կայուն բանաձևեր:

ա. օրհնողի մաղթական դիմում

բ. օրհնաբանության բուն նպատակ և բովանդակություն

գ. օրհնաբանության ավարտ³²:

Մեր խնդրո առարկա վավերագրերի շարքում առկա օրհնության թղթերը ներկայացված են հիմնականում կրճատ, առանց մաղթական «Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն Աստուծոյ...» շարադրանքի, որից հատորում միայն տեղորոշող [Շնորհք] բառն է նշվել: Սրանք, սովորաբար, բավականին ծավալուն միավորներ են՝ նման ձեռագրերի հիշատակարանների՝ Ս. Երրորդությանը ձևաված փառատրական հատվածներին³³, որոնք ժամանակին ևս, համապատասխան ժողովածուների կազմողների կողմից, կյուրը չձանրաբեռնելու նպատակով, համառոտ են ներկայացվել, հիմնականում մեկ բառով՝ «Փառք...»:

Տեղին է նկատում Ս. Նարությունյանը, երբ նշում է, որ «կաթողիկոսական օրհնության թղթերը մեծապես շահագրգռել են հավատացյալների ջերմեռանդ զգացմունքները, և նրանք՝ խրախուսվելով ու ոգեշնչվելով դրանցից, նորանոր նվիրատվություններ են կատարել եկեղեցուն»³⁴: Այսպես, 1793 թ. Թոխաթ բաղաբի ժողովրդին Վեհափառ հայրապետն օրհնության և շնորհակալության գիր է հղել «վասն նորոգման այրեցեալ երից եկեղեցեացն» (վավ. 187): Նույն թվականի հունիսին Սորսորի Ս. Գևորգ վանքի առաջնորդ Նարություն վարդապետին շնորհակալագիր է հղվում «վասն աջահամբուրին յղեցելոց» (վավ. 191), կամ Շուլավերի ժողովրդին՝ 1795 թ. ապրիլի 5-ին հղած օրհնության թղթում Ղուկաս հայրապետը շնորհակալություն է հայտնում «վասն ընդ առաջնորդին իւրեանց՝ Թաղեոս պետին յղեալ Լ. (30) բահին, և պատուէր հնազանդ և հպատակ լինիլ նմա» (վավ. 721), իսկ Կ. Պոլսի Սկյուտար թաղամասի Ս. Կարապետ եկեղեցու համայնքին հղած 1796 թ. օրհնության կոնդակը կազմվել է «վասն հասուցեալ գանձանակին՝ ձեռամբ պարոն Բարսեղին, որ է հարիւր վացսուն և հինգ դուռուշ» (վավ. 1011): Օրհնակներն իրականում բազմաթիվ են, սակայն նշվածներն էլ բավական են երևոյթի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար:

Օրհնության թղթերի և շնորհակալագրերի բովանդակությունը որոշակիորեն պարզում է նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանական տնտեսության ընդհանուր վիճակը: Պատմաբան Նամլետ Թորոսյանի գնահատմամբ՝ Էջմիածնի վանքին նվիրաբերված հողերը մեծ ծավալների են հասել հատկապես 17-18-րդ դդ.: Մայր Աթոռի տնտեսությունն ընդլայնելու և զարգացնելու նպատակով Ամենայն Նայոց գահակալները մշտապես ձգտել են վանքն ապահովել արոտավայրերով, մշակովի հողերով, ոռոգման ջրով: Ն. Թորոսյանը մեջբերում է Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող՝ Ս. Էջմիածնի 1741 թ. հաշվեմատյանի բովանդակությունը, ըստ որի՝ կատարած աշխատանքի դիմաց վճարվել են նախրչին, հոտաղը (հովիվ), չոբանը, գառնարածը, հորթարածը. «ԴՌ. (4000) դիան նախրչի Ստեփանին հին վարձէն, ԲՌ. (2000) դիան հոտաղ Մելիքին հին վարձէն, Դ. (4) ապասի չօպան Յարուբիւնին հին վարձէն..., ԱՌ. (1000) դիան գառնարած Սարգսին հին վարձէն, Զ. (6) ապասի հորդարած Արշամին հին վարձէն»³⁵, իսկ սա ինքնին վկա-

³² Ս. Նարությունյան, Անեծփի և օրհնանքի ժամը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975, էջ 105-106:

³³ Խ. Նարությունյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 2019, էջ 86-90:

³⁴ Ս. Նարությունյան, նշվ. աշխ., էջ 109:

³⁵ ՄՄ ԿԳ, թղթ. 1, վավ. 13, էջ 32-33:

յում է, որ Էջմիածնի «վանական տնտեսության մեջ զգալի էր նաև խոշոր եղջերավոր անասնապահության զարգացումը»³⁶:

Ասվածի օգտին է նաև Ս. Հռիփսիմե վանքի բառամույթ զանգակատան 1730 թ. վիմագիրը, որի համաձայն՝ Աղեքսանդր վրդ. Ըստամբուլցին (հետագայում կաթողիկոս Աղեքսանդր Բ. Բյուզանդացի, 1753-1755 թթ.), վանքին է նվիրաբերել հիսուն ոչխար՝ իբրև տամազլուխ, այսինքն՝ պահելու և բազմացնելու նպատակով. «...ետու սբ. յուխտիս Ս. (50) ողչար տամազլուխ, յիշատակ յուրն եւ իւր ծնօղացն, թփին ՌՃԻԹ.-ին (1730)»³⁷: Այս առումով ուշագրավ վկայություններ կան նաև նամակներում, որոնք գալիս են վերահաստատելու Մայր Աթոռի տնտեսական կյանքի զարգացած լինելը: Այսպես, 1795 թ. Բայազետի նվիրակ Մարտիրոս վարդապետին հղած պատասխան նամակում Գուկաս հայրապետը շնորհակալություն է հայտնում «վասն Իե. (25) գլուխ սևատաւարին, զոր յղեալ էր, իսկ վասն տուեալ Ս. (50) գլուխ ոչխարին, եթէ ի գալոյ բերելոց ես իհարկե» (վավ. 666): Նույն թվականին Կարսի Գևորգ աղային հղած թղթում հայրապետը նշում է Մայր Աթոռից Գոշավանք առաքած կենդանիների մասին (ուղտ, գոմեշ, ոչխար, սևատավար), որոնց հանձնում է տեղի առաջնորդ Նովհաննես վարդապետի ենթակայությանը՝ խնդրելով «պահել ի վերին կողմունսն վանից ի խոտաւետ տեղոջ» (վավ. 788):

Մայր Աթոռի միաբան Աբել արք. Մխիթարյանցի հաղորդմամբ՝ 17-18-րդ դդ. Էջմիածնի տնտեսությունը զարգացել է հիմնականում նվիրատվությունների միջոցով, քանզի այդ նույն ժամանակաշրջանում Էջմիածնի վանքերին տրվում էին վարելահողեր, իսկ Մայր Աթոռից՝ լծկան և կթու անասուններ³⁸: Հարակից վանքերը նույնպես «ունեին առատութեամբ վար ու ցանք և անասունք ո՛չ պակաս, որով միաբանից ուտելիքը կպատրաստուէր»³⁹:

Մայր Աթոռի վանական տնտեսության ուրույն ճյուղերից մեկն էլ երկրագործությունն էր, մասնավորապես՝ այգեգործությունը, ինչպես նաև՝ հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաների մշակումը: Այն, որ դեռևս 13-րդ դարում Վաղարշապատում որոշակիորեն զարգացած է եղել բամբակագործությունը, վկայում է Ս. Հռիփսիմե տաճարի 1296 թ. վիմագիրը, ըստ որի՝ Զաքարյանների իշխանապետության օրոք, թերևս տեղի իշխանավորների կողմից վերացվում են վանքից գանձվող բամբակի շարիաթը (բերքի մեկ տասներորդ մասը), ինչպես նաև՝ շահնայի (հարկահավաք) օգտին հավաքվող բամբակի լրացուցիչ հարկը. «թողաք զՀռիփսիմուցս զբամբակին շարիատն եւ զշահնային բամբակի հակն...»⁴⁰: Ուսումնասիրողներից խաչատուր Ավետիսյանը, նկատի ունենալով

³⁶ Հ. Քորոսյան, Էջմիածնի վանական տնտեսությունը XV-XVIII դարերում, Երևան, 2007, էջ 200:

³⁷ Ա. Հարությունյան, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 265, արձ. 527:

³⁸ Աբել արք. Մխիթարեանց, Եկեղեցիի Վաղարշապատ ֆաղափի, «Երկերի ժողովածու», հրատարակութեան պատրաստեց՝ Եզնիկ արք. Պետրոսեան, Ս. Էջմիածին, 2009, էջ 135:

³⁹ Նույն տեղում, էջ 138:

⁴⁰ Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 267, արձ. 528:

հենց այս արձանագրությունը, նշում է, որ Արարատյան դաշտում բամբակագործությամբ զբաղվել են դեռևս դարեր առաջ, որից հարկ է գանձվել⁴¹:

Նույնը կարելի է ասել նաև խաղողագործության ու գինեգործության մասին, որոնց ակունքները ևս վաղեմի պատմություն ունեն: Դեռևս Ք. ա. III հազարամյակում Նայաստանի տնտեսական ու հասարակական կյանքում իր առանձնահատուկ տեղն ուներ սրբազան գինին⁴², որի վերաբերյալ գրավոր տեղեկություններ են պահպանվել ինչպես ասորական սեպագրերում, այնպես էլ Վանի թագավորության բիայնական-ուրարտերեն արձանագրություններում՝ կապված հիմնականում այգեգործության հետ⁴³: Ակնհայտ է, որ խաղողագործության և գինեգործության ձևավորման ու զարգացման համար նպաստավոր են եղել Նայակական լեռնաշխարհի բնակչության պայմաններն ու վայրի խաղողի առկայությունը⁴⁴: Միջնադարյան սկզբնաղբյուրները պարզում են, որ խաղողագործության հիմնական կենտրոններն էին Արարատյան դաշտը, Վայոց ձորը, Լոռին, Արցախը, Սյունիքը, Նախիջևանը, Տավուշը և այլն⁴⁵:

Քրիստոնեության մեջ խաղողը կամ նույն ու գինին ընկալվել են որպես Քրիստոսի արյան միասնական խորհրդանիշ: Քանդակային արվեստում խաչը ներկայացվել է որպես խաղողի որթ կամ հնձան, իսկ ողկույզների հաճախակի զուգադրումը նշան պտուղների հետ, մեկնաբանվում է երկուսից էլ գինի ստանալու ավանդությամբ⁴⁶:

Եթե հայ միջնադարյան արվեստում և գրավոր հուշարձաններում խաղողի ու գինու վերաբերյալ վկայությունները բազմաթիվ են, ապա 18-19-րդ դդ. սկզբնաղբյուրները ներկայանալի են հիմնականում արխիվային վավերագրերի, մասնավորապես՝ նամակագրության մեջ ավանդված տեղեկություններով: Այս առումով բացառիկ են դարձյալ Ս. Նոնիսիմե վանքի 18-րդ դարի մի շարք վիմագրերում վկայված ձեթի, բրնձի, խունկի, աղի, մոմի, բաժակ (անապակ) գինու նվիրաբերման մասին հիշատակությունները, որոնց դիմաց նվիրատուները պատարագներում հիշման են արժանացել⁴⁷:

Երևույթն արտացոլված է նաև Ղուկաս կաթողիկոսի նամականու Էջերում՝ Ս. Էջմիածին ուղարկված կամ վանքից նվիրաբերվող սննդամթերքի և առօրյա կիրառելի այլ առարկաների միջոցով: Այն, որ Մայր Աթոռն ունեցել է վանքապատկան՝ մլբատու (հարկատու) գյուղեր, վարելահողեր ու այգիներ, վկայում է Սիմեոն

⁴¹ Խ. Ավետիսյան, Բամբակագործության զարգացումը Հայաստանում XIX դարում և XX դարի սկզբներին, «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», հ. I, Երևան, 1964, էջ 194-195:

⁴² Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան, Հ. Պետրոսյան, Գ. Սարգսյան, Հ. Մելիքյան, Ս. Հոբոսյան, Պ. Ավետիսյան, Գինին հայոց ավանդական մշակույթում, Երևան, 2005, էջ 19:

⁴³ Ա. Арутюнян, Очерки истории виноградарства и виноделия древней и средневековой Армении, Ереван, 2005, с. 27-43.

⁴⁴ Ս. Հոբոսյան, Բ. Գասպարյան, Հ. Հարությունյան, Ա. Սարգսիկյան, Ա. Ամիրխանյան, Խաղողի և գինու հայոց մշակույթը, Երևան, 2021, էջ 35:

⁴⁵ Նույն տեղում, էջ 37, 44:

⁴⁶ Հ. Պետրոսյան, Խաչաբ. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 347-349:

⁴⁷ Ա. Հարությունյան, «Բաժակ» գինու նվիրաբերման վկայություններ հայկական վիմագրերում, «Էջմիածին», 2012, Բ., էջ 121-129, տե՛ս նաև նույնի՝ Վաղարշապատ. վանքեր և վիմական արձանագրություններ, էջ 260-265, արձ. 521-526:

Երևանցի կաթողիկոսը⁴⁸: Յետաքրքիրն այն է, որ ստացված բերքը հաճախ հենց հոգևորականներն են տնօրինել: Այս փաստը դեռևս 17-րդ դարում ցավով է արձանագրում ժամանակագիր Գրիգոր Դարանաղցին. «Եւ արեղայքն, որ ամենքն առհասարակ սուտ եպիսկոպոսք էին եղեալ վասն միմեանց նախանձու... թողեալ էին զլուսագարդ վանորայսն, սփռեալ էին ի գեղորայսն եւ անդեայք եւ այգիք եւ բուրաստանք եւ հօտք խաշանց... եղեալ էին իբրեւ զմի ի մեծատանց աշխարհականացն...»⁴⁹, ապա՝ Առաքել Դավրիժեցին, որի հաղորդմամբ՝ մի շարք հոգևորականներ թողել են վանքն ու իրենց խուցը և հարակից գյուղերում հող են ձեռք բերել ու այգիներ տնկել՝ ունենալով «զինչս առանձին, այգի և բուրաստան, փէթակ և տուն, և մարան, և համբարանոցս, և զմուտս ստացուածոց, նաև զմուտս հասարակուց վանիցն մասունս արարեալ՝ յինքեանս բաժանելին»⁵⁰:

Հատորի վավերագրերից մեկն անուղղակիորեն վկայում է վաղարշապատում խաղողագործության մասին, համաձայն որի՝ Դուկաս հայրապետը դիմում է Թավրիզի տեր Նովսեփ քահանային՝ տեղեկացնելով պարոն Աղալոյի՝ Էջմիածնից Թավրիզ ուղևորվելու մասին, որի հետ առաքած խաղողից կարգադրում է 30 լիտր (այսինքն՝ 300 կգ, 1 երևանյան լիտրը կշռում է 5 կգ) չամիչ պատրաստել և առաքել Մայր Աթոռ. «բայց մեր յայգւոյ խաղողէն Լ. (30) լիտր չամիչ հոգացեալ յղեսցես ի ժամանակին հաւատարմաւ» (վավ. 452): Առհասարակ, չամիչի գնման և նվիրաբերման մասին բազմաթիվ հիշատակություններ են պահպանվել ժամանակագրություններում և ձեռագրերի հիշատակարաններում: Օրինակ՝ 1758 թ. Ամիդում սաստիկ սով է եղել. «Չընքշոյ քիլայ ցորեան ԻԷ. (27) դուրուշ եղաւ, կորեկին չարեքն՝ Ի. (20) դուրուշ, լիտր մի չամիչ՝ Բ. (2) դուրուշ...»⁵¹, կամ 1778 թ. չաբուրկա (մորեխ) ու կարկուտ եղավ, սով եղավ դարձյալ. «վանքին ուլթն լիտր չամիչ եկաւ, ուլթն լիտր գինու շիրայ»⁵²:

Հատկանշական են նաև գինու առաքման վերաբերյալ վկայությունները: Ուշքիլիսայի (Ս. Նովհաննես Սկրտչի վանք), Ղոշավանքի, Կարինի, Բայազետի առաջնորդներին հասցեագրված նամակներում Դուկաս հայրապետը քանիցս մասնավորեցնում է ի շարս Ս. Էջմիածնից առաքված մթերքի և տարատեսակ իրերի՝ նաև բաժակ գինի ուղարկելը, իբրև սրբազան «մասունք»՝ պատարագների ընթացքում օգտագործելու համար: Այսպես, Ուշքիլիսայի առաջնորդ Սկրտչի վարդապետին հասցեագրած 1797 թ. նամակում կաթողիկոսը տեղեկացնում է պանրի և յուղի նվիրակության համար գործուղված Մարտիրոս և Նարություն վարդա-

⁴⁸ «Ջամբո»-ում Սիմեոն Երևանցի կաթողիկոսն առանձին գլուխներով անդրադարձել է Ս. Էջմիածնի արքուպատկան գյուղերին, դրանց այգիներից ու վարելահողերից գանձվող հարկերին (տասանորդ), դաշտերի ու արոտավայրերի ստույգ տեղագրությամբ, խաղողի այգիներին ու դրանց ձեռքբերման մանրամասներին և այլն (Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբո գիրք, որ կոչի յիշատակարան արձանագուցիչ, հայելի եւ պարունակող բնափյց որպիսութեանց Սբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, Վաղարշապատ, 1873, էջ 99-129, 152-186, գլ. ԺԳ., ԺԵ., ԺԶ.):

⁴⁹ Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, հրատարակեց՝ Մեսրոպ վրդ. Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 296:

⁵⁰ Առաջել Դարիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ՝ Լ. Խանլարեանի, Երևան, 1990, էջ 241:

⁵¹ Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. II, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 528:

⁵² Նույն տեղում:

պետների մասին, ապա հավելում. «Այլև իբր բաժակ օրհնության զԳ. (3) լիտր գինի յղեցաք, զոր ընկալեալ վայելեսցես» (վավ. 1167), կամ Բայազետի Պետրոս աղային՝ նվիրակ չովհաննեսի միջոցով, ի թիվս մի շարք այլ նվերների, ուղարկել է «բաժակ օրհնության, Ե. (5) լիտր գինի յղեցաք, զոր ընկալեալ վայելեսցիք» (վավ. 1245):

Իհարկե, չոր բնակլիմայական պայմանների պատճառով, Արարատյան դաշտում բերքը երբեմն սուղ էր լինում, ինչով էլ թերևս պիտի պայմանավորել նամակագրություններում քանիցս վկայված հացահատիկային բույսերի նվիրաբերումը Ս. Էջմիածնի միաբանությանը, որոնց դիմաց դարձյալ օրհնության և շնորհակալության նամակներ են հղվել: Դուկաս Կարնեցի հայրապետի նամականին այս առումով ևս բացառություն չէ. Դոշավանքի վերոհիշյալ առաջնորդ չովհաննես վարդապետին կաթողիկոսը շնորհակալագիր է հղում. «ժ. (10) սոմար գարւոյն, որ մնացեալ էր իր գիւղականաց նորին և ժ. (10) սոմար ևս յինքենէ տալոյն ի տեղի տէր խաչատուրին» (ՍՄ ձեռ. 3^{րդ} 4481, 334բ, Ա./2): Չայրապետը նվիրատվություններ է արել նաև Մայր Աթոռի նվիրյալ հայորդիներին, մասնավորապես՝ շաթիր Մելքիսեդեկի միջոցով մաքսապետ պարոն Ավետիքին (Բայազետ) ուղարկել է «զժ. (10) լիտր գինի և Լ. (30) լիտր բրինձ, զորս վայելելով յիշեսցես զՍուրբ Աթոռս և զմեզ՝ հանդերձ շնորհակալութեամբ» (վավ. 47):

Շնորհակալագրերի հիմամբ կարելի է արձանագրել, որ Ս. Էջմիածնի վանական տնտեսությունը 18-րդ դարում լիովին արտացոլվել է դիվանական փաստաթղթերում: Այս շարքում բազմաթիվ են նաև մոմի գնման, նվիրաբերման, ժողովարարության միջոցով ձեռքբերման և նվիրակների հետ Մայր Աթոռ առաքելու մասին տեղեկությունները: Թիֆլիսի գործակալ տեր Ղազար ավագ քահանային հասցեագրված թղթում Դուկաս կաթողիկոսը հայտնում է Մայր Աթոռի Դանիել վարդապետի հետ օրհնության ջուր և մոմի կոնդակ (հանդերձ 3 լիտր մոմով) ուղարկելու մասին. «ուրեմն զմոմս ժողովեալ յանձնեսցիք նմա, որ փութով վերադարձցի առ մեզ» (վավ. 82): 1795 թ. փետրվարի 27-ին օրհնության և շնորհակալության թուղթ է հղվել Թելավիում գտնվող տեր Սարգիս ավագ քահանային «վասն երեք լիտր և կէս յղեալ մոմին» (վավ. 686), իսկ Գորիի տեր Ղազար ավագ քահանային. «վասն միոյ լիտր մոմոյն, զոր յղեալ էր ընդ որդւոյն իւրոյ Տիրացու» (վավ. 726): Ինչպես բերված օրինակների, այնպես էլ նամականու ընդհանուր քննությունը պարզում է, որ մոմի՝ Ս. Էջմիածնին նվիրաբերելու դեպքերը հիմնականում վիրահայոց հետ են կապված, իսկ այն, որ Թիֆլիսի արհեստավորները, որոնք համախմբված էին համաքարություններում, պարտավորված են եղել Ս. Էջմիածնին տարեկան մեկ չարեք (քառորդ) մոմ տալ, վկայված է դեռևս Մայր տաճարի զանգակատան ներքնահարկի 1682 թ. վիճագրում. «մեք՝ Թիֆլիզու ամենայն ասնաֆ եւ դուքանդար, խոստացանք տարենն ամեն դուքան մեկ-մեկ չարեք մոմ տալ Սբ. Էջմիածնայ...»⁵³, որին հետագայում անդրադարձել է նաև ազգագրագետ Վալենտինա Աբրահամյանը⁵⁴:

⁵³ Ա. Հարությունյան, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 62, արձ. 32:

⁵⁴ Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IV-XVIII դդ., Երևան, 1956, էջ 239:

Մոմի նվիրաբերումը վիրահայերի կողմից հետաքրքիր ձևով է մեկնաբանում պատմաբան Վալտեր Դիլոյանը. ըստ նրա՝ Վրաստանում ապրող Էջմիածնապատկան բնակչության մեծ մասը (145 տուն) ճորտեր էին, որոնց պարտավորությունն է եղել տարեկան մեկ շարեք մոմ նվիրաբերել Մայր տաճարին⁵⁵: Ստացվում է, որ նամակներում վկայված ժողովարարության միջոցով ձեռքբերված մոմը նվիրակները հավաքել են բնակիչներից, որոնք, այսպես կոչված, «հարկատու» են եղել Մայր Աթոռին:

* * *

Ինքնին հետաքրքիր են նաև համաճարակների և բնական աղետների հիշատակմամբ վավերագրերը: 1798 թ. գարնանից Վրաստանում մոլեգնած ժանտախտի կապակցությամբ պահպանվել են Ղուկաս հայրապետի բազմաթիվ գրագրություններն առ Վրաց Գեորգի արքան, մելիք Ռարչինը, որոնց համաձայն՝ բժշկության համար Վրաց արքան հայրապետից խնդրում է մի որոշ ժամանակով Վրաստան ուղարկել սուրբ Գեղարդը: Նկատի առնելով սրբության՝ Մայր Աթոռից դուրս տանելու հետ կապված անվտանգության խնդիրները, հայրապետի հանձնարարականով Թիֆլիս է առաքվում Ս. Հակոբ հայրապետի աջը, որն ուղեկցում է Մայր Աթոռի միաբան Ալեքսիանոս վարդապետը (վավ. 1356, 1359, 1360): Վրաց արքայի թախանձանքին ի պատասխան՝ հայրապետն ի վերջո թույլատրում է 1798 թ. նոյեմբերին Թիֆլիս տանել նաև սուրբ Գեղարդը՝ ձեռամբ Նովհանես Եպիսկոպոսի, ինչի առթիվ խնդրում է ուշադիր և զգուշավոր լինել. «խնդրեմք, զի ընդ սբանչելի սրբութանդ և զբերօղն դորա՝ յիշեալ Յովհաննես շնորհառատ Եպիսկոպոսն, ի սեր և ի խնամս ձեր ունիջիք, և ի շրջագայիլն ի տեղիս տեղիս, հրամայեսցես բազմութեան զինուորաց կարգել ընդ նոսա վասն զգուշանալոյ ի ճանապարհական պատահմանց, զի մի գուցէ թշնամեաց հանդիպեալ, մշտնջենաւոր աղետ լիցի սրտից մերոց» (վավ. 1487):

Նույն այդ ժամանակաշրջանում ժանտախտը հասնում է նաև Կարնո գավառ, որի մասին նշված է Կարնո նվիրակ Գրիգոր վարդապետին հասցեագրված 1798 թ. դեկտեմբերի 17-ի թղթում. «Իմացաք յաւարտ հասուցանելդ զգործդ և զգնալդ ի Սուրբ Կարապետի վանսն յերկիւղէ ժանտախտին» (վավ. 1501): Կարնո իշխաններին ուղղված մի գրությունից էլ պարզվում է, որ նույն ժանտախտից դեկտեմբերի 29-ին վախճանվել է Մայր Աթոռի նվիրակ Գրիգոր վարդապետ Օշականցին (վավ. 1530), իսկ 1799 թ. օգոստոսյան նամակներից մեկում էլ կարդում ենք Ամիրում (Դիարբեքիր) տարածված ժանտախտի մասին, որի առթիվ տեղի Եփրեմ վարդապետին Վեհափառ հայրապետը հանձնարարականներ է տալիս (վավ. 1585): Ղոշավանքի առաջնորդ Նովհանես վարդապետի պատասխան նամակներից մեկում նշված է, որ ժանտախտի ալիքը համեմատաբար նվազել է, բայց կարկտահարություն է եղել, հայրապետն էլ իր հերթին տրտմություն է հայտնում՝ ասելով, որ պարոն Նովսեփի և պարոն Կարապետի հետ մեկ լիտր բաժկացու, այսինքն՝ պատարագի ժամանակ կիրառելի անապակ, անխառն գինի է ուղարկել (վավ. 1436):

⁵⁵ Վ. Դիլոյան, Էջմիածնի վանական տնտեսությունը 19-րդ դարի սկզբին, «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության» (հոդվածների ժողովածու), Երևան, 1971, էջ 162:

Բ. Բանադրանքի հաստատման և արձակման թղթեր

Միշտ չէ, որ նամակները շնորհակալական կամ օրինաբանական բնույթի են: Պահպանվել են կաթողիկոսների կողմից՝ տարբեր վայրեր ծառայության կոչված առաջնորդներին և հոգևոր սպասավորներին ուղղված բանադրանքի⁵⁶ թղթեր, որոնց բովանդակությունն ինքնին պարզում է ստախոս, կեղծ ու անբարո «հոգևորականների» վարքն ու հայրապետի կողմից պատժի, տվյալ դեպքում՝ բանադրանքի արժանանալը:

Անեծք-օրինանքների ավանդական ընթանումների ու կիրառությունների շարքում Ս. Նարոությունյանը նշում է նաև բանադրանքի թղթերն իբրև հոգևոր առաջնորդների կողմից իրենց հպատակներին ուղղված դատապարտման գրավոր վավերագրեր, որոնք ուղեկցվում են անեծքներով ու չարաբանությամբ: Այս տեսակ գրությունները ևս, ըստ կառուցվածքի, Ս. Նարոությունյանը պայմանակաևորեն բաժանում է երեք ենթախմբի.

ա. բանադրվողի դիմում, որն ուղեկցվում է անեծքով,

բ. բանադրվողի կատարած անօրեն արարքների հիշատակում,

գ. անեծքների ու սպառնալիքների շարք՝ ուղղված բանադրվողին և նրա համակիրներին⁵⁷:

Բերենք մի բանի օրինակ. Բաղեշի Գոմոց վանքի ինքնակոչ առաջնորդ, «սևագլուխ» հորջորջվող շովհաննեսին ուղղված բանադրանքի թղթում մասնավորեցվում են ոչ միայն այսպես կոչված «չառաջնորդի»՝ հոգևորականին անվայել վարքն ու անբարո կեցվածքը, այլև եկեղեցու դռները համայնքի ժողովրդի և նվիրակի դիմաց փակելու հանդգնությունը: Անպարկեշտ ու խաբեբա շովհաննեսին Վեհափառ հայրապետը բանադրանքի ու անեծքի գիր է հղում, ըստ որի՝ «բարձու իշխանութեամբ մերով հայրապետականաւ բանադրեցաք զարժանիդ անիծից և նզովեալ արտաքսեցաք յեկեղեցւոյ սրբոյ, որպէս զախտացեալ, հոտեալ և ապականարար գարշելի, և լուծեալ յամենայն աստիճանաց եկեղեցականեան, կապեցաք զքեզ հոգևոր կապանօք ի յերկինս և ի յերկրի» (վավ. 1152): Իսկ թե որևէ մեկը հանդգնի սատարել չարագործին, ուրմեն նա ևս մեղսակից է նրա հանցանքներին. «գի ով ոք հաղորդեսցի քեզ բանիւ և գործով, նա կցորդ է և բանադրանաց քոց» (վավ. 1152):

Նույն բնույթի է նաև Բուն Աղվանքի և Նայոց Արևելից կողմանցի՝ Շուշիի, Շամախու, Նուխիի (Շաքի), Բաքվի, Դորբանդի և շրջակայքի ժողովրդին հղված 1795 թ. կոնդակը, ըստ որի՝ Ղուկաս հայրապետը հորդորում է չտրվել Գանձակի առաջնորդ Սարգիս վարդապետի սուտ հայտարարություններին, թե իբր Գանձասարի Իսրայել կաթողիկոսը վախճանվել է և ինքն է փոխարինելու նրան. «վասն որոյ և սրբազանն գրէ սոցա շընդունել զՍարգիսն, այլ գիսրայել կաթողիկոսն ընդունել և նմա հասուցանել զհասս և զիրաւունս հայրապետական» (վավ. 672): Օանդազրույթություններում նշել ենք, որ ինքնակոչ Սարգիս կաթողիկոսը Գանձա-

⁵⁶ Բանադրանքը եկեղեցական իշխանության կամ իշխանավորի դրած պատիժն է հավատացյալի վրա, որով վերջինս գրկվում է ինչպես մյուս հավատացյալների հետ հաղորդակցվելուց, այնպես էլ եկեղեցական արարողություններին մասնակցելուց (տե՛ս Հայերէն բացատրական բառարան, հ. Ա., կազմեց՝ Մա. Մալխասեանց, Երևան, 1944, էջ 325):

⁵⁷ Ս. Հարությունյան, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, էջ 110:

կից հետագայում փախչում է Վրաստան, այստեղից էլ՝ Նաղբատ, ուր թեպետ հայրապետի բացասական վերաբերմունքին, այդուհանդերձ հաջողում է տեղի առաջնորդ կարգվել 1797-1808 թթ. (ծնթ. 178):

Իր նախորդ Սիմեոն Երևանցու պես, Ղուկաս Կարնեցին ևս հայ եկեղեցու միասնականության շատագուվներից էր: Տեղին է նկատում Վարդան Գրիգորյանը, երբ նշում է, որ նա ավելի վաղ հալածանքի է ենթարկել ոչ միայն Փանծասարի ինքնակոչ ու դավաճան Իսրայել կաթողիկոսին, այլև՝ Սարգսին, «որն իր եղբոր՝ Նովհաննես կաթողիկոսի (Նովհաննես Է. Փանծասարեցի, 1763-1786 թթ. – Ա. Յ.) եղերական մահվանից հետո, Փանծակի Ջավադ խանի հրամանով, առանց Էջմիածնի կաթողիկոսի համաձայնության, օծվել էր կաթողիկոս»⁵⁸: Նետագա վավերագրերից դատելով՝ Ղուկաս հայրապետը Փանծասարի կաթողիկոսական գահին հանդուրժել է Իսրայելին, բայց ոչ երբեք Սարգսին: Նաջողվեց պարզել, որ Աղվանից կաթողիկոս Իսրայելը վախճանվել է 1808 թ. և թաղվել Մարտունու շրջանի Ներհեր գյուղի Ս. Գրիգորիս եկեղեցու հարավային ավանդատան ներսում: Երբեմնի գոյություն ունեցած շիրմաքարի չափածո տապանագրի հաղորդմամբ՝ այս տապանն է «հայրապետի, սրբազան մեծ վեհապետի, տեառն Իսրայել դիտապետի, տանս Աղուանից հովուապետի, աջորդ (առաջնորդ – Ա. Յ.) Սրբոյն Եղիշէի (Ս. Եղիշա կույսի – Ա. Յ.), աթոռակալ Գրիգորիսի...»⁵⁹:

Ղուկաս հայրապետի նամակների բովանդակությունը վկայում է ոչ միայն բանադրանքի հաստատման, այլև արձակման մասին: Ս. Նարոկունյանն այս երևույթը բացատրում է հոգևոր առաջնորդների հմայագործության գործությամբ, երբ «բանադրվող անձը կամ հասարակությունը, երբ բանադրանքի ազդեցությամբ զղջում է իր արարքներից, արժանանում է բանադրող հոգևորականի թողությամբ կամ անեծքի արձակմանը»⁶⁰: Այսպես, Բաղեշի Գոմոց վանքի վերոհիշյալ «չառաջնորդ» Նովհաննեսին հղած բանադրանքի թուղթը կաթողիկոսն այսպես է եզրափակում. «Այս բանադրանք և կապանք մնասցեն ի վերայ քո, մինչև ծանիցես զչափ չնչին անձինդ, և զղջացեալ դիմեսցես առ այսր՝ ինդրել զարձակումն» (վավ. 1152): Նակառակ դեպքում խոստանում է նաև մարմնավոր պատժի արժանացնել. «Իսկ թէ յամառեսցիս ընդ երկար, զմարմնաւոր պատիժն ևս յայնժամ տեսանելոց ես» (վավ. 1152):

Մեկ այլ, Կորեկածակ մականվամբ մահտեսի Գրիգորին (Թոխաթ) հղած օրհնության գրում վեհափառ հայրապետը հիշատակում է վախճանված Ներսես վարդապետին բանադրանքից ազատելու մասին՝ զուգահեռ շնորհակալություն հայտնելով «վասն Խ. (40) դուռուշ հոգեբաժնին ի կողմանէ կողակցին, զոր ձեռամբ Բարսեղ վարդապետին էհաս» (վավ. 1321):

Գ. Մխիթարության թղթեր և ցավակցագրեր

Ամենայն ձայնոց գահակալների կոնդակներում և նամակներում ոչ պակաս ուշադրության են արժանի նաև մխիթարության թղթերն ու ցավակցագրերը,

⁵⁸ ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա., էջ 44:

⁵⁹ «Գիվան հայ վիմագրության», պրակ V, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 168, արձ. 581:

⁶⁰ Ս. Հարությունյան, Անեծքի և օրհնանքի ժամը հայ բանահյուսության մեջ, էջ 113:

որոնք հիմնականում ամբողջական գրություններ են, երբեմն էլ՝ բոլորովին այլ բովանդակության շարադրանքի մի մասը: Բացի այն, որ այսպիսի նամակներն ինքնին պարզում են Ամենայն շայոց կաթողիկոսի մարդկային, որակական հատկանիշները, սրանք կարևորվում են նաև ննջեցյալների վերաբերյալ տեղեկությունների հաղորդմամբ, երբ նամակագիրն անուղղակիորեն նշում է ննջեցյալի՝ հիշատակման արժանի գործերն ու դրվատիքի խոսք հղում նրա մերձավորներին: Անշուշտ, այս առումով հետաքրքիր են հատկապես բարձրաստիճան այրերի ու հոգևորականների, նաև՝ Սայր Աթոռի շերմեռանդ բարերարների հիվանդության, նեղության, մահվան և նման այլ առիթներով հղած մխիթարության ու ցավակցական նամակները: Որպես կանոն, սրանց համար ևս կարելի է սահմանել կառուցվածքային որոշակի բաժանում.

ա. նամակագրի դիմում,

բ. մխիթարանքի (կամ՝ ցավակցության) խոսք հասցեատերին (ննջեցյալի հարազատ(ներ)ին),

գ. բուն բովանդակություն (խնդիրը՝ հիվանդություն, նեղություն, զրպարտանք, մահ և այլն),

դ. վշտակցության ավարտ (զորակցության խոսք և այլն):

Ասելիքն ավելի ընկալելի դարձնելու համար բերենք որոշ օրինակներ.

Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի նամականու ընդհանուր ուսումնասիրությունը պարզում է, որ Ամենայն շայոց հայրապետը նամակագրական սերտ կապեր է ունեցել ոչ միայն տարբեր վայրերում գործած իշխանների, այլև, օրինակ, Վրաց թագավորի և նրա ընտանիքի անդամների հետ: Դեռևս Վարդան Գրիգորյանն է նշել, որ Վեհափառ հայրապետը կապեր ուներ Վրաց շերակլ Բ.-ի, նրա որդիներ Լևանի և Գեորգիի, թագուհի Դարեջանի հետ, որոնք «նվերներ էին փոխանակում և հարկ եղած դեպքում դիմում նրա օգնությանը»⁶¹: Այդ տեսակ նամակները ոչ միայն օրինագրեր ու շնորհակալագրեր են, այլև տարբեր առիթներով գրված մխիթարության թղթեր ու ցավակցագրեր: Այսպես, Վրաց նորընտիր արքա Գեորգիին ուղղված 1798 թ. ապրիլի 21-ի թղթում Ղուկաս հայրապետը նախ շնորհավորում է արքային՝ նոր պաշտոնի կապակցությամբ և իր մխիթարությունն ու ցավակցությունը հայտնում հոր՝ շերակլ արքայի մահվան առիթով, «քանզի Էհաս յանցելումն յականջս մեր գոյժ մահուան գերաբաղձելի սիրելոյն մերոյ և ինամածուին Սրբոյ Աթոռոյս՝ ամենապատիւ ծերունագարդ հօր բոյ՝ մեծի արքային շերակլայ, որ անտանելի տրտմութիւն եղև սրտից մերոց և արար զմեզ ցաւալիս և սգաւորս» (վավ. 1357):

Գաղտնիք չէ, որ շերակլ արքայի և Ղուկաս կաթողիկոսի փոխհարաբերությունները վաղեմի պատմություն են ունեցել: Նախքան կաթողիկոսական գահը ստանձնելը՝ 1779 թ. շերակլ Բ.-ի և Երևանի շուսեին-Ալի խանի միջև ծագած լարվածությունն ավարտվել է Վրաց արքայի՝ Արարատյան երկիր, մասնավորապես՝ դեպի Երևան կատարած արշավանքով՝ իբրև պատիժ հարկային պարտավորու-

⁶¹ ԴՉՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա., էջ 26: Նոր շարքի Բ. հատորում Վ. Գրիգորյանն ավելի մանրամասն է անդրադարձել Վրաց արքայի և ընդամենի անդամների հետ ունեցած կաթողիկոսի նամակագրությանը, «Նամակագրություն Քարթլ և Կախեթի թագավորի, նրա ընտանիքի անդամների ու շրջակա վայրերի տիրակալների հետ», տե՛ս ԴՉՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ., էջ XLIII-LIV:

թյուններից խուսափող խանին⁶²: Այստեղ է, որ Սիմեոն Երևանցու հետ արքային ընդառաջ գնացող հոգևորականների կազմում հիշատակվում է նաև Ղուկաս Եպիսկոպոսը. «Սրբազանն (Սիմեոն Երևանցին – Ա. Յ.) գլխաւոր Եպիսկոպոսօք, այսինքն է՝ ցաւակից և խորհրդակից սրբազան հարբն մերով Տեառն Ղուկասու և այլովք, հանդերձ ուտելի ընծայիւք գնացաք ընդ առաջ...»⁶³, իսկ Օշականում, ապա Փարաբարում բանակած Վրաց արքային Սիմեոն կաթողիկոսը «հանդերձ իւր չարչարակից և վշտակից Ղուկաս սրբազանիւ» գնում և փորձում է «ի խաղաղութիւն համոզելոյ զարքայն և զխանն մեր ընդ միմեանս»⁶⁴: Յետաքրքիր է, որ արքայի գնալուց հետո կաթողիկոսն անմիջապէս մխիթարութեան թուղթ է հղում Յուսէին-Ալի խանին. «և յետ երկուց աւուրց Սրբազանն հանդերձ Եպիսկոպոսօք, խաչիւ և զաւազանաւ և ամենայն հայրապետական բանակօք գնացաք ի տեսութիւն խանին»⁶⁵: Այդուհանդերձ, Յերակլի և Յուսէին-Ալի խանի միջև հաշտությունը կնքվել է արդէն Ղուկաս Կարնեցու կաթողիկոսութեան օրոք՝ 1781 թ. նոյեմբերին⁶⁶:

Ղուկաս Կարնեցու նամականին հարուստ տեղեկություններ է հաղորդում նաև 18-րդ դարի հայ ազգային ազատագրական պայքարի երևելիներից մեկի՝ մադրասաբնակ Շահամիր Շահամիրյանի մասին⁶⁷: Այստեղ պիտի մեջբերենք մեծանուն գործչի որդուն՝ Յովհաննես աղային և թոռանը՝ Նազար Յակոբյանին ուղղված Ղուկաս կաթողիկոսի 1799 թ. ցավակցագրից մի հատված՝ գրված Շահամիրյանի մահվան առիթով: Յայրապետը նախ հիշում է 1796 թ. վախճանված նրանց քույր Թամարին, ինչի առթիվ ևս ցավակցագիր է հղել, իսկ հիմա էլ նույն սրտի ցավով լսել է Շահամիր աղայի մահվան բոթը, որի համար իր զորակցությունն է հայտնում՝ մաղթելով ուժ ու տոկունություն մաղթելով, քանզի «այսպիսի բարեշուք և երևելի անձն պակասեցաւ ի մէնջ» (վավ. 1550): Բայց մխիթարությունն այն է, գրում է հայրապետը, որ Շահամիր աղան իր բազում բարեգործություններով արժանացել է Տիրոջ բարեխնամութեանն ու մշտնջենական հանգստին, «յորմէ և հայցել արժան է զողորմութիւն առ հանգուցեալն և առ յետամնացսդ» (վավ. 1550):

Մխիթարութեան թուղթ է առաքվել նաև նշանավոր բարերար, Սայր Աթոռի ջերմեռանդ բարեկամ Օհանջան աղա Յակոբյան-Գերաքյանցի (Սուրաթ) մահվան առիթով (1798 թ.): Ցավակցագիրն առաքվել է Յնդկաց նվիրակ Յակոբ վարդապետի միջոցով՝ հասցեագրված ննջեցյալի դուստրերին՝ Վալիտային և Թուրվանդա-

⁶² ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա., էջ 21:

⁶³ **Գարեգին Ա. կաթողիկոս**, Պատմութիւն Ղուկաս կաթողիկոսի (Մայր Աթոռի Դիանից), «Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ առուեստի եւ մշակոյթի պատմութեան», պրակ Ե., էջ 51-52: Վերը նշել ենք, որ Ղուկաս Կարնեցու կաթողիկոսութեան նախընթաց տարիներին և զահակալման բուն շրջանին վերաբերող մատենագրական այս երկի բնագիրը պահպանվել է ՄՄ Հ^{մր} 6298 ձեռագրում:

⁶⁴ Նույն տեղում, էջ 52:

⁶⁵ Նույն տեղում, էջ 55:

⁶⁶ ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա., էջ 56:

⁶⁷ Նախորդ հատորի առաջաբանում Վ. Գրիգորյանն առանձնակի անդրադարձել է Շահամիր Շահամիրյանի՝ կաթողիկոսի հետ ունեցած նամակագրությանը, «Նամակագրություն Շահամիր Շահամիրյանի, Ղարաբաղի մելիքների և Լազարյանների հետ», տե՛ս ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ., էջ LIV-LXV:

յին. «Զթուղթ մի մխիթարական ևս գրեցաք ի Սուրաթ առ հանգուցեալ Յօհանջան աղայի դստերսն՝ Վալիտայ և Թիրվանտա, վասն վախճանման հօրն իւրեանց» (վավ. 1389):

Անշուշտ, բազմաշխատ հայրապետի նամականու մի ստվար մասն էլ նրա կոնդակները, հրամանագրերը (փուսուկայ), անդորրագրերը (ղաւզ, դապզ), ստացականներն (փօլիցայ) ու դրանց համառոտագրություններն են: Բազմաթիվ ու բազմաբովանդակ են գանձանակի, ժողովարարության, առաջնորդական, շնորհակալական, հանձնարարական, նաև՝ շրջաբերական կոնդակները, որոնց բովանդակությունն էապես լրացնում է նամակագրությունում արձարձված խնդիրներն ու հարցադրումները՝ կապված նվիրակական, գանձանակի եկամտային հարցերի, ձեռնադրությունների, նոր նշանակումների և այլ իրադարձությունների հետ:

Ոչ այնքան կարևոր թվացող նվիրատվություններն ու առաքումներն անգամ վավերացվել են համապատասխան փաստաթղթերով, օրինակ՝ Թեքիրտաղի նվիրակ Մինաս վարդապետի կողմից 2803 ղուռուշի և 30 փարայի դիմաց անդորրագիր է ուղարկվել Ս. Էջմիածին, որտեղ նշված է, որ 2000 ղուռուշը հայրապետի ցանկությամբ փոխանցվել էր ոմն Ռաֆայելի որդի մահտեսի Պողոսին, իսկ մնացած 803 ղուռուշն ու 30 փարան Մայր Աթոռ ուղարկված իրերի արժեքն է, «որք էին սահաթք, կեօզլուկք և բաղայ սանտերք» (վավ. 40), այսինքն՝ ժամացույցներ, ակնոցներ և խոտը հնձելու ատամնավոր գործիքներ (փոցիս):

* * *

Ամփոփելով հատորում ընդգրկված վավերագրերի ընդհանուր պատկերի ամբողջացմանը միտված մեր ասելիքը՝ կարևոր ենք համարում որոշ մանրամասներ ներկայացնել նաև նամականու հրատարակման սկզբունքների վերաբերյալ: Ինչպես վերն արդեն նշել ենք, Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի նամականին ամբողջացնող ներկա՝ Գ. հատորը նախորդ երկուսի տրամաբանական շարունակությունն է ոչ միայն բովանդակային, այլև կառուցվածքային տեսանկյունից: Այստեղ ևս փաստաթղթերը հրատարակվում են ամբողջական կամ համառոտագրված: Իբրև կանոն, վավերագրերի վերջում նշված են այն ձեռագրի կամ կաթողիկոսական դիվանում ընդգրկված վավերագրի համարն ու Էջը, որտեղից քաղված է տվյալ բնագիրը: Այդ սկզբունքից դուրս են ՄՄ ՅժՊ 4481 ձեռագրից մուծված միավորները, որոնք հատորի գերակշիռ մասն են կազմում և մեծ մասամբ համառոտագրություններ են. սրանց հղումները միավորների սկզբում կամ արտաքին լուսանցքներում են: Ինչ վերաբերում է միևնույն ՄՄ ՅժՊ 4481 ձեռագրից մեջբերված կամ ծանոթագրման եղանակով ներկայացված միավորներին, ապա սրանց կից նշել ենք ձեռագրի Էջը և տվյալ միավորի կարգային ցուցիչը, այսպես՝ 517բ, Ա./7, այսինքն՝ նշված էջի 7-րդ Ա. միավորը:

Նյութը ներկայացված է ժամանակագրական կարգով, հնարավորության դեպքում յուրաքանչյուր միավորի դիմաց նշված են վավերագրի տարին, ամիսամսաթիվը: Նախորդ հատորների պես, այստեղ ևս բաց են թողնված վավերագրերի սկզբում հաճախ վկայված հացեատերերին ուղղված մաղթական ու քաղաքավարական տողերը:

Կարևոր ենք համարում նշել, որ այս հատորում են ընդգրկվել Նախորդ՝ Բ. գրքի անվանացանկերը (անձնանուններ, տեղանուններ, առարկայական)⁶⁸, որի ցուցիչները տարբերակելու համար Էջի համարներին կից են Նախորդ՝ Բ. և Ներկա՝ Գ. հատորների համարները: Նպատակահարմար գտանք այս և Նախորդ հատորները համալրել նաև անչափ կարևոր առարկայական ցանկով, քանզի վավերագրերում վկայված են ոչ միայն բազմաթիվ տիտղոսներ, պաշտոններ ու կոչումներ, այլև տարատեսակ նվիրատվություններ, կշռի ու դրամական միավորներ, տոնանուններ և այլն:

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

⁶⁸ Նշենք, որ մատենաշարի առաջին գրքի Բ. հատորն ունի միայն «Օտար բառերի բառարան» (ԴՉՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ., էջ 795-802), իսկ վերջում գրված «Անհրաժեշտ ծանոթագրություն» խորագրի ներքո կարդում ենք հետևյալը. «Հարկ է նշել, որ ներկա հատորի անձնանունների և տեղանունների ցանկը կապագրվի «Գիվան հայոց պատմության» նոր շարքի երրորդ հատորում» (նույն տեղում, էջ 803), ինչն էլ իրագործում ենք ներկա հրատարակությամբ:

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ

ՆԱՄԱԿՆԵՐ, ԿՈՆԴԱԿՆԵՐ,
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(1793 - 1799)

Հնորհին Աստուծոյ ևս ձեռն արկի ի գրել զյիշատակարանս թղթոցն սրբազան Վեհին, ի զանազան քաղաքս գրեցելոց, յաղագս արանց խնդրողաց իրաց ոմանց աստի, ես՝ նոյնոյ սրբազան Վեհի անպիտան սպասաւոր Չաքարիա արեղայս, զոր Տէր խաղաղութեամբ Հասուցէ ի կատար տարւոյս, որում գոհութիւն և պատիւ, յաւիտեանս. ամէն⁶⁹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 445ա

1793 Թ., յունուար

445ա

1 **յԱրթուին** - Կոնդակ մի գանձանակի ի սոյն գետօղն, վասն իԵ. (25) ղուռուշ գանձանակադրամին, ձեռամբ տէր Մարտիրոսին՝ առ Սուրբ Աթոռս Հասելոյն, որ էր քանի ամաց արդիւնք:

2 **Թուղթ** մի օրհնութեան առ Եղիսաբեթն, վասն Ե. (5) ղուռուշ տրոցն, ձե[ռամբ] նոյն յիշեցեալ տէր Մարտիրոսին: **Գրեցան** յամնոյս [յունուարի] ի Է. (7):

3 **յԻւջբիլիսէ** - Թուղթ մի առ տեղւոյն առաջնորդ Մկրտիչ պեան, ի պատասխանի թղթոյն ընդ Դանի[էլ] պետին գրեցելոյ. յիշումն առաջին թղթոյն՝ ի Բայազիտոյ գրեցելոյն, եթէ ըստ ժամանակին Հասեալ է մեզ: Մխիթարութիւն վասն նեղսակրութեանց երկրականացն և անասնոց մաշոն: Եւ շնորհակալութիւն վասն յղելոցն, որք էին Չ. (6) եզն, Դ. (4) կով, Չ. (6) ոչխար և Ա. (1) փոքր տիկ տօմաստ: Եւ թէ վասն քոյ կէս կարաս գինի և Ժ. (10) լիտր բրինձ յղեցաք ընդ Դանիէլ պետին, զի վայելեացես ընդ միաբանիցդ:

Գր[եցաւ] յամ[սոյս] ի Ը. (8)⁷⁰:

4 **Ի Կարս** - Թուղթ մի առ Գէորգ աղայն. յիշումն առաջին թղթոցն մերոց եւ ծանուցումն զչինուածոցն Ղազարապատի: Եթէ Հարկաւորի վասն նոցա ԲՃ. (200) թաւքանի տախտակ, ուրեմն առեալ յղեսցես: Իսկ վասն զէյթունին, եթէ Ի. (20) կամ Լ. (30)

⁶⁹ Դուկաս Կարնեցու գրագրութիւնների, մասնավորապես՝ նամակների և կոնդակների կազմողներից մեկը Բարսեղ Զաքարիա արեղան է, որն այդ գործը նախաձեռնել է դեռևս 1785 թ. և իրագործել մինչև իր մահը՝ 1794 թ.:

⁷⁰ Բայազետի առաջնորդին ուղղված դեռևս 1791 թ. ժողովարարության կոնդակներում հատկանշվում է Բայազետը և հարակից բնակավայրերը մթերով և մատաղացու անասուններով ապահովելը: Նույն բովանդակությամբ թղթերից մեկն էլ ուղղված է Ուլիխսայի առաջնորդ Մկրտիչ պետին (ԴՉՊ, նոր շարք, գիրք Ա., հ. Բ., էջ 628, վավ. 1350-1352):

Թիլանսի լիտր առեալ յղեսցես ընդ ուղտուցն վասն միաբանիցն մերոց, թէպէտ փոքր-ինչ աստէն առաք: Չդաւթարդ յղեսցես՝ առ ի Համեմատել ընդ մերոյն: Այլև գիտ՝ գլուտով տաճիկն և Հարց զգերանացն մերոց, եթէ զիտ՝ ըդ ոչ յղեսցէ: Ողջոյն որդւոյն իւրոյ Պաղտասարին:

Գրեցաւ յամսոյս ի ԺՉ. (16):¹:

5 **Ի Մուշ** - Թուղթ մի առ Սրբոյ Կարապետի վանից վէքիլ Կարապետ պետն ի դարձ երկուց թղթոցն վասն արանց, գնացելոց ի Մեծն Պօլիս, ի կողմանէ սրբոյ վանիցն, եթէ մինչ Համբաւ լուրցես զնոցանէ, գրեսցես մեզ ըստ խոստմանդ ի միամտութիւն: Իսկ վասն տեղւոյդ ժողովարար Մկրտիչ պետին յանձնարարական կոնդակ մի գրեցաք առ բայագետցիան, նոյնպէս և թուղթ մի յիւշքիլիսայու առաջ[նորդ] Մկրտիչ պետին: ԱնՀոգ լեր:

6 **Ի Բայազիտ** - Կոնդակ մի առ մերայինսն վասն Սրբոյ Կարապետի ժողովարար Մկրտիչ պետին և գանձանակացն նոյն վանից, զի վերահաստատիցեն արդիւնաւորս առնելով:

7 **Թուղթ մի ևս առ յիւշքիլիսայու առաջ[նորդ] Մկրտիչ պետն**, վասն Սրբոյ Կարապետի ժողովարարին յանձնարարութիւն:

Գր[եցաւ] ընդ թղթաբերին յամ[սոյս] ի ԻԲ. (22):

8 **Ի Կարին** - Թուղթ մի առ վէքիլ պարոն Հայրապետն, եթէ ծ5 թիլանսի լիտր և կէս սիսեռն մեզ էՀաս ընդ ուղտապան Ղաբբէկին, գինն և խարճն եղեալ էր 90 ղուռուշ, վասն որոյ գրեցաք ի դաւթարդ ի ԻԲ. (22):²:

⁷¹ Կարսի մեծահարուստներից պարոն Գևորգ աղայի մասին բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել Ղուկաս Կարնեցու նամակներում: Նա մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահել Մայր Աթոռը և նյութապես օժանդակել: Այդ է վկայում նաև խնդրո առարկա վավերագիրը, որտեղ վկայություն կա նաև դեռևս Ղազար Ջահիկեցի կաթողիկոսի (1737-1751 թթ.) օրոք կառուցված Ղազարապատի «շինվածքների», այսինքն՝ օժանդակ շենքերի, կցակառույցների մասին: Ս. Էջմիածնի վիմագրերից մի ֆանիսը հավաստի տեղեկություններ են հաղորդում Ղուկաս Կարնեցու օրոք կատարված շինարարական ու բարենորոգչական աշխատանքների, այդ թվում նաև՝ Ղազարապատի հարևանությամբ գտնվող շենք-շինությունների մասին (Ս. Հարությունյան, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 81-83, արձ. 61-65): Գևորգ աղայի գործունեությանը Վարդան Գրիգորյանը համատոտ անդրադարձել է ներկա շարքի Ա. հատորի ծանոթագրություններում (ԳՀՊ, նոր շարք, գիրք Ա., հ. Ա., էջ 543, ծնթ. 3):

⁷² Պարոն Հայրապետը Կարինում Ս. Էջմիածնի վեֆիլն էր (լիազոր, հավատարմատար). նրա անունը Ղուկաս Կարնեցու նամակներում բազմիցս հիշատակված է: Կաթողիկոս ընտրվելուց հետո առաջին նամակներն ուղղված են հենց Կարինի Իբրահիմ փաշային, որին տեղեկացնում էր մասնապետի կողմից Կարինում Ս. Էջմիածնի ներկայացուցիչներ վեֆիլ Հայրապետին և նվիրակ Ներսես վարդապետին ձերբակալելու և նրանց գույքը բռնագրավելու մասին: 1780 թ. թղթերից մեկն ուղղված է անձամբ վեֆիլ Հայրապետին, որտեղ կաթողիկոսը ներկայացնում է Ս. Էջմիածնի ներկայացուցիչներին ազատելու համար գործարած ջանքերը (ԳՀՊ, նոր շարք, գիրք Ա., հ. Ա., էջ 93, վավ. 35): Ս. Էջմիածնի միաբանների ձերբակալության

Թուղթք յարտաքին վիճակն Պօլտյ

9 **Ի Պօլիս** - Կոնդակ մի գանձանակի ի Կուտինա, այսինքն՝ ի Քեօթաշիայ, ընդ Հովանեալ Սրբոյ Աստուածաճնի եկեղեցոյն, յաղագս քանի ամաց գանձակադրամին իւրեանց (որ է ԱՃԽ. և Գ. (144) ղուռուշ), զոր յանձնեալ էին նուիրակ Մինասս պետին ի ՌՄԽԱ. (1792) թուոյ, յապ[րիլի] մոսն, ձե[ռամբ] գանձապետ մահտեսի Խաչատուր աղային, որոյ և վասն գրեցաւ ի սմա յատկապէս պատուեր:

10 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կուտինա, այսինքն՝ ի Քեօթաշիայ, ընդ Հովանեալ Սուրբ Սարգսի եկեղեցոյն, որք յանձնեալ էին ի ՌՄԽԱ. (1792), յապ[րիլի] Ա. (1) զգանձանակադրամն քանի ամաց նուիրակ Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ պարոն Փանոսին (որ է Ծ. և ինն (59) ղուռուշ և ԼԲ. (32) փարայ):

11 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կուտինա, այսինքն՝ ի Քեօթաշիայ, ընդ Հովանեալ Սուրբ Թէոդորոսի եկեղեցոյն, վասն Հ. և Ե. (75) ղուռուշին, զոր յանձնեալ էին նուիրակ Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ մահտեսի Կարապետ աղային, որ էր քանեաց ամաց արդիւնք, զորս Հասուցեալ էր վերոյ յիշեալ 1445թ/ գանձապետն ի ՌՄԽԱ. (1792), յապ[րիլի] մոսն:

445թ

12 Կոնդակ մի ևս գանձանակի ի Մուշալիճ, ընդ Հովանեալ Սրբոյն Սարգսի եկեղեցոյն եղելոցն վասն գանձանակադրամին իւրեանց՝ ԲՃԾ. և Գ. (253) ղուռուշին (որ էր քանի ամաց արդիւնք), զորս ի ՌՄԽԱ. (1792) և ի մայի[սի] Բ. (2) յանձնեալ էին նուիրակ Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ տիրացու Յարութիւնին: Ի սմայ պատուեր տայ յատկապէս նորոգ գանձապետին մերոյ՝ մահտեսի Աբրահամին:

13 Կոնդակ մի ևս գանձանակի ի յԱտապազար, ընդ Հովանեալ Տէր Շահինի եկեղեցոյն, որք զարդիւնն գանձանակին իւրեանց քանի ամաց (որ էր ԲՃԿ. (260) ղուռուշ) յանձնեալ էին նուիրակ Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ մահտեսի Ոսկեհան աղային, ի ՌՄԽԱ. (1792) թուոյ յունվարի Թ. (9):

14 Թուղթ մի օրհնութեան և շնորհակալութեան առ սոյն եկեղեցոյ գանձապետ մահտեսի Ոսկեհան աղայն վասն Հարազատութեանն: Եւ յիշումն ԲՃԿ. (260) ղուռուշին, արդեանց գանձանակին, զորս տուեալ էր Մի[նաս] պետին:

15 Կոնդակ մի ևս գանձանակի ի յԱտապազար, ընդ Հովանեալ Տէր Միքայէլի սրբոյ եկեղեցոյն վասն Հ. և Գ. (73) ղուռուշ

լուր բերող անձնավորոյցյան վերաբերյալ Մայր Աթոռի դրամական ծախսերի մատյանի 1780 թ. օգոստոսի 13-ի գրառումը տե՛ս նոյն տեղում, էջ 543, ծմբ. 9:

եւ Լ. և Ե. (35) փարային տուեցելոյն Մի[նաս] պետին, ի ՌՄԽԱ. (1792), յունվա[րի] Թ. (9), ձե[ռամբ] գանձապետ պարոն Պետրոսին, որ էր քանի ամաց արդիւնք:

16 Կոնդակ մի ևս գանձանակի ի յԱտապազար, ի Թախտ Սախարիա, ընդ Հովանեաւ տէր Կարապետի սրբոյ եկեղեցւոյն, վասն ԻԶ. (26) զուռուշ և Լ. (30) փարային, զորս Հասուցեալ էին նուիրակ Մի[նաս] պետին ձե[ռամբ] գանձապետ պարոն Գէորգին, ի ՌՄԽԱ. (1792), յունվա[րի] Թ. (9), որ էր քանի ամաց արդիւնք:

17 Կոնդակ մի և գանձանակի ի յԱտապազար, ընդ Հովանեաւ Տէր Յակոբի սուրբ եկեղեցւոյն վասն ԿԸ. (68) զուռուշին, որոյ զԿ. (60) զուռուշն առեալ էր ի կնոջէն գանձապետին մերոյ առաջնոյ, և զուրթ զուռուշն ի ներկայ գանձապետ պարոն Վարդերեսէն, ի ՌՄԽԱ. (1792), յունվա[րի] Թ. (9), որ էր քանի ամաց արդիւնք:

18 Կոնդակ մի ևս գանձանակի ի յԱտապազար, ընդ Հովա[նեաւ] Տէր Սարգսի սրբոյ եկեղեցւոյն, որք զարդիւնս գանձանակին ձե[ռամբ] գանձապետ պարոն Կարապետին տուեալ էին նուիրակ Մի[նաս] պետին, ի ՌՄԽԱ. (1792), յունվա[րի] Թ. (9) (որ էր ԱՃԾԸ. (158) զուռուշ և Լ. (30) փարայ քանի ամաց արդիւնք): Այլ վերահաստատութիւն նորոգ գանձապետ պարոն Մնացականին:

19 Կոնդակ մի ևս գանձանակի ի յԱտապազար, ընդ Հովա[նեաւ] Տիմիճի սրբոյ եկեղեցւոյն սակս ԱՃԹԵ. (115) զուռուշ և Լ. (30) փարայ գանձանակադրամին, որոց Է. (7) զուռուշ և Ժ. (10) փարայն կանանց գանձանակադրամն էր, զոր տէր Սահակն էր յանձնեալ Մի[նաս] պետին, և ԱՃԸ. (108) զուռուշ և Ի. (20) փարայն արանց, զոր գանձապետ մահտեսի Պօղոսն էր յանձնեալ ի ՌՄԽԱ. (1792) Թուոյ յունվա[րի] Թ. (9), որք էին քանի ամաց արդիւնք:

20 Կոնդակ մի ևս գանձանակի ի յԱտապազար, ընդ Հովանեաւ Տէր Պօղոսի սրբոյ եկեղեցւոյն յաղագս ԾԵ. (55) զուռուշ գանձանակադրամին (որ էր քանի ամաց արդիւնք), զոր ձե[ռամբ] գանձապետ պարոն Ալէքսանին տուեալ էին նուիրակ Մինաս պետին, ի ՌՄԽԱ. (1792) յունվա[րի] Թ. (9):

21 Կոնդակ մի ևս գանձանակի ի յԱտապազար, ընդ Հովանեաւ Տէր Ազարիայի սուրբ եկեղեցւոյն վասն Ծ. և Ե. (55) զուռուշ գանձանակադրամին (որ էր քանի ամաց արդիւնք), զոր ձե[ռամբ] գանձապետ տիրացու Խաչատուրին յանձնեալ էին Մինաս պետին, ի ՌՄԽԱ. (1792) յունվա[րի] Թ. (9):

22 Թուղթ մի ի յԱտապազար, ընդ Հովանեալ Տէր Ռափայէլի սրբոյ եկեղեցւոյն, որոց երևելի անձանց անուանքն բացառապէս գրին աստ՝ այս է. տէր Ռափայէլ, մահտեսի Կարապետ Ծաղկեան, մահտեսի Սարգիս Ղազարոսեան, մահտեսի Մնացական Ջուլայեան, մահտեսի Մկրտիչ Պալեան, պարոն Մնացական Փանոսեան, մահտեսի Պետրոս Տէյիրմանճեան, պարոն Սեղբոս Խաչմանեան, ընդ որս յիշի և միսկճի պարոն Ստեփանն, վանն գանձանակի արդեանց վատնիւրոյն, եթէ ձեռամբ ձեր է վատնեցեալ ընդէ՛ր այդպէս առնէք, ուրեմն ձեր Հոգւոց պարտքն է Հասուցէք բոլորովին, որ է ԱՃԼԵ. (136) զուռուշ:

23 Կոնդակ մի ևս գանձանակի ի Պանդրմայ, ընդ Հովանեալ Սրբոյ Աստուածածնի եկեղեցւոյն, որք զքանի ամաց ժողովեցեալ արդիւնն գանձանակին իւրեանց (որ էր վեց Հարիւր քառասուն և երեք զուռուշ), ձե[ռամբ] գանձապետ մահտեսի պարոն Յարութիւնին յանձնեալ էին նուիրակ Մինաս պետին, ի ՌՄԽԱ. (1792), յուլիսի Դ. (4): Ի սմա գրի պատուէր վերոյ յիշեալ գանձապետին:

446ա

24 Թուղթ մի օրհնութեան առ սոյն եկեղեցւոյ գանձապետ մահտեսի պարոն Յարութիւնն, եթէ վեց Հարիւր Ի. և Գ. (23) զուռուշ արդիւնքն գանձանակի, զորս տուեալ էիր Մինաս պետին, ի ՌՄԽԱ. (1792), յուլիսի Դ. (4), էհաս մեզ ամբողջապէս:

25 Կոնդակ մի ևս գանձանակի ի Պօղազհիսար, ընդ Հովանեալ Սրբոյն Գեորգեայ եկեղեցւոյն սակս ԲՃԻԵ. (225) զուռուշին արդեանց գանձանակին Սրբոյ Աթոռոյս (որ էր քանի ամաց արդիւնք), զորս յանձնեալ էին նուիրակ Մինաս պետին, ի ՌՄԽԱ. (1792) Թուղթ յօգոս[տոսի] ԺԳ. (13), ձեռամբ գանձապետ պարոն Գրիգորին:

26 Թուղթ մի օրհնութեան առ սոյն եկեղեցւոյ գանձապետ պարոն Գրիգորն, որ յանձնեալ էր նուիրակ Մինաս պետին զարդիւնն գանձանակին (որ էր ԲՃԻԵ. (225) զուռուշ), ի ՌՄԽԱ. (1792) և ի յօգոս[տոսի] ԺԳ. (13), որ էր քանի ամաց արդիւնք:

27 Կոնդակ մի ևս գանձանակի ի Թաւշանլու, յաղագս գանձանակադրամին իւրեանց Հասեղոյն Մինաս պետին (որ էր ԱՃ. (100) զուռուշ քանի ամաց արդիւնք), զոր գանձապետ մահտեսի Յարութիւնն էր Հասուցեալ նմա, ի ՌՄԽԱ. (1792) Թուղթ յապրի[լի] Ժ. (10):

28 Թուղթ մի օրհնութեան առ սոյն տեղւոյ գանձապետ մահտեսի պարոն Յարութիւնն. ծանուցումն զԱՃ. (100) զուռուշէն գանձանակի արդեանց, զորս տուեալ էր Մի[նաս] պետին, ի ՌՄԽԱ. (1792) յապ[րիլի] Ժ. (10): Յանձնեալ էր ընդ նմին և զԽ.

(40) զուռուշ կտակն մահտեսի Մարգարտի, զԵ. (5) զուռուշ Հոգեբաժինն մահտեսի Միքայելի և զարծաթեայ փոքր խաչն քեռն իւրոյ, էթէ Հասին մեզ:

29 Կոնդակ մի ևս գանձանակի ի Պալիքէսեր, ընդ Հովանեաւ Սրբոյ Աստուածածնի եկեղեցւոյն վասն ԱՃ. և Խ. (140) զուռուշ արդեանցն Սրբոյ Աթոռոյս գանձանակի, որ էր քանի ամաց, զորս ձէ[ռամբ] գանձապետ մահտեսի Յովհաննիսին յանձնեալ էին Մի[նաս] պետին, ի ՌՄԽԱ. (1792) յունի[սի] Չ. (6):

30 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կելիպօլի, ընդ Հովանեաւ Սուրբ Թէոդորոսի եկեղեցւոյն սակս ԱՃԻԹ. (129) զուռուշին (որ էր քանի ամաց արդիւնք), զորս յանձնեալ էին Մինաս պետին, ի ՌՄԽԱ. (1792) սեպ[տեմբերի] ԺԱ. (11), ձէ[ռամբ] գանձապետ պարոն Կարապետին:

31 Կոնդակ մի ևս գանձանակի ի Քիրմաստ, ընդ Հովանեաւ Սրբոյ Լուսաւորչի եկեղեցւոյն վասն Ծ. (50) զուռուշին, զոր տուեալ էին նուիրակ Մի[նաս] պետին, և ՌՄԽԱ. (1792) մայի[սի] ԺԷ. (17), ձէ[ռամբ] Հանգուցեալ գանձապետ Ստեփանի կենակից Իսկուհւոյն, որ էր քանի ամաց արդիւնք: Ի սմա յատկապէս պատուէր և վերահաստատութիւն նորոգ գանձապետ պարոն Կարապետին:

32 Կոնդակ մի ևս գանձանակի առ մերայինսն, որք կան զետեղեալք ի թուրքմէն, վասն գանձանակադրամիցն Սրբոյ Աթոռոյս (որ է (20) զուռուշ), զոր յանձնեալ էին Մի[նաս] պետին ի ՌՄԽԱ. (1792) թուոջն, որ էր քանի ամաց արդիւնք:

33 Կոնդակ մի ևս գանձանակի առ մերայինսն, որք են ի Պօղոս վա ընդ Հովանեաւ Սուրբ Գէորգ եկեղեցւոյն վասն ԼԵ. (37) զուռուշ և Լ. (30) փարայ գանձանակադրամին, զոր ի ՌՄԽԱ. (1792) յօգոս[տոսի] Ը. (8) տուեալ էին Մի[նաս] պետին, ձէ[ռամբ] գանձապետ պարոն Ստեփաննոսին, որ էր քանի ամաց արդիւնք:

34 Կոնդակ մի ևս գանձանակի ի յէտինճիկ՝ առ մերայինսն, վասն գանձանակադրամին առ նուիրակ Մի[նաս] պետին Հասելոյն ի ՌՄԽԱ. (1792) և ի յուլի[սի] ԺԸ. (18), ձէ[ռամբ] գանձապետ մահտեսի պարոն Գրիգորին (որ էր ԱՃԼԱ. (131) զուռուշ և Է. (7) փարայ, քանեաց ամաց արդիւնք): Այլ և վերահաստատութիւն ի գործ գանձապետութեան նորոգ գանձապետ մահտեսի Կարապետին:

35 Կոնդակ մի ևս գանձանակի ի գեօղաքաղաքն Պիլճիկ, վասն ԿԵ. (65) զուռուշին Հասելոցն Մի[նաս] պետին, ի ՌՄԽԱ. (1792) փե[տրուարի] ԺԲ. (12), ձէ[ռամբ] գանձապետ մահտեսի Յարութիւնին, որ էր քանեաց ամաց արդիւնք:

36 Կոնդակ մի ևս գանձանակի առ մերայինսն, որք էն ի Նոր Գեօղն, վասն գանձանակի արդեանց առ Մի[նաս] պետն Հասելոց ԽԴ. (44) ղուռուշին, ի ՌՄԽԱ. (1792) յուլի[սի] ԺԱ. (11), ձե[ռամբ] գանձապետ պարոն Յարութիւնին, որ էր քանի ամաց արդիւնք:

37 Կոնդակ մի ևս գանձանակի առ մերայինսն, որք կան զետեղեալք ի յԵյնա, վասն ԼԹ. (39) ղուռուշ |446բ| ԻԶ. (16) փարային, տուեցելոյն Մի[նաս] պետին, ի ՌՄԽԱ. (1792) յօգոս[տոսի] ԺԶ. (16), ձե[ռամբ] գանձապետ պարոն Մեքրոնին, որ էր քանի ամաց արդիւնք:

446բ

38 Թուղթ մի առ Սարգիս և Պետրոս աղայսն, ի դարձ թղթոյն նոցա յանցեալ ամին գրեցելոյ. շնորհակալութիւն և օրհնութիւն վասն գերի անկեալ Գաբրիէլ տղային Շիրակուանցոյ, զոր ըստ ինդորոյ սրբազան Վեհին արձակեալ էին զնա գալ ի տունն իւր, որ և եկն և այն: Իսկ վասն Թէոդորոս սարկաւազին, եթէ կայ ի ինամս մեր, բայց ի վաղուց Հետէ տկարութիւն ունի անբուժելի և ի բժշկաց ոչինչ օգուտ Հասանի, իհարկէ շահիլոց է ի մէջ լաւապէս, մինչ առողջասցի: Ողջոյն Հօրն իւրեանց՝ մահտեսի Մարտիրոս աղային և շնորհաշատ տիրացու Կարապետին:

39 Թուղթ մի ևս առ տէր Պօղոս քահանայն, ի դարձ թղթոյն ընդ տէր Մովսէսին գրեցելոյ, վասն աներձագին իւրոյ, եթէ ընկալաք սիրով և ահա կայ ի ինամս մեր ի վարժարանն: Շնորհակալեցաք զքէն վասն ճաշակելի իրացն յղեցելոցն առ մեզ: Իսկ վասն տէր Մովսէսին, եթէ Հանգեալ ի Քրիստոս, բայց ի ճանապարհին շատ ծախս է արարեալ ի վերայ տղայոցն աւելի, քան զձեր տուեալն և ունի գերկու որքս և բազում պարտս: Վասն որոյ խօսելով ընդ մահտեսի Նիկողայոսին, զճախսն նորին յղեսջիք տալ պարտատեսարցն և որբոց նորին, զի ազատք լինիցիք ի խղճահալութենէ:

Նոյնաբովանդակ նամակ է ուղարկուել մահտեսի Նիկողայոս աղային, ուր ողջոյն է Հղումնրա եղբայր մահտեսի Ստեփաննոս Չէլեպիին (446բ, ԼԱ): Շնորհակալական նամակ Թէքիրդաղի առաջնորդ Յակոբ «ծերունազարդ» վարդապետին, որը Մինաս վարդապետի միջոցով վեհափառին էր ուղարկել 10 Հատ «գարմահալուպ» ոսկի, որպէս աջահամբոյր (ԼԳ): Օրհնութեան նամակ մահտեսի պարոն Գրիգորին՝ իր Հոգեբաժինը (40 ղուռուշ) Մինաս վարդապետի միջոցով Մայր Աթոռ ուղարկելու մասին (ԼԴ): Թէքիրդաղ Հղումձ թղթի պատասխան գրութիւնն ուղղրուած նուիրակ Մինաս վարդապետին, որը գրանցուած է մեծ մատենանի 1976-րդ էջում (ԼԵ):

40 Ղաւղ մի առ սա (Մինաս վարդապետն - Վ. Գ.) վասն ԲՌԸՃ. (2800) երեք ղուռուշ և Լ. (30) փարային, որոց ԲՌ-ն

(2000) ըստ գրեցելոյ Հայրապետին փօլիցայ էր տուեալ անդ ղոնտաղճի օղլի Ռափայէլի որդի մահտեսի Պօղոսին և ԸՃ. (800) երէք ղուռուշ և Լ. (30) փարայն՝ առ Սուրբ Աթոռս յղեալ իրաց գինն է, որք էին սահաթք, կեօղուկք և բաղայ սանտերք: Եւ այս ղաւզս յղեցաւ առ Հայրապետն՝ Հասուցանել առ նուիրակ Մի[նաս] պետն ի միամտութիւն ինքեան:

41 Ղաւզ մի ևս առ սա վասն ԳՌԵՃ. (3500) ղուռուշին, որ ըստ գրեցելոյ վէքիլ Հայրապետին երկու Հազար ղուռուշն տուեալ էր անդ բօրակչի օղլի Աբրահամի օրթախ մահտեսի Յովհաննիսին և ԱՌԵՃ. (1500) ղուռուշն նոյն ղոնտաղճի օղլի Ռափայէլի որդի մահտեսի Պօղոսին:

Եւ այս ղաւզս յղեցաւ առ Հայրապետն՝ Հասուցանել առ վերոյ յիշեալ Մի[նաս] պետն (թէպէտ նա դեռևս զայսցանէ ոչ էր գրեալ, եթէ ետու):

42 Թուղթ մի առ պատրիարք Չաքարիա պետն ի դարձ թղթոյն, զոր վասն նուիրակութեան աղագաւ գրեալ էր: Տէս զ1770 Համարն մեծ տետերց⁷³:

447ա 43 Ի Զմիւտին - Թուղթ մի առ տեղւոյն նուիրակ և առաջնորդ Իսահակ պետն, վասն փօլիցային նուիրակ Յովհաննէս պետին, եթէ ահա գրեալ յղեցաք զղաւզն դոյն փօլիցայի առ Հայրապետն՝ Հասուցանել քեզ: Տէս զ1867 Համարն մեծ տետերց⁷⁴:

⁷³ Հիշատակված է Ս. Էջմիածնի միաբան, Կ. Պոլսի նվիրակ Զաֆարիա վարդապետ Փոֆուլյան Կաղզվանցին (1719-1799 թթ.), որը գրադեցրել է նաև Կ. Պոլսի պատրիարքի պաշտոնը 1782-1799 թթ.: Լինելով կաթողիկոսական գանի հավակնորդ՝ նա երկու տարի շարունակ չի ցանկացել ճանաչել Դուկաս Կարնեցու կաթողիկոսությունը և մինչև անգամ արգելել է իր իրավասության տակ գտնվող եկեղեցիներում հիշատակել նրա անունը: Զաֆարիա պատրիարքի մասին ընդարձակ տեղեկություններ է հաղորդել Գյուտ Աղանյանցն իր «Իվան հայոց պատմության» մատենաշարի Ժ. գրքում, որը կրում է «Գիրք պատմութեանց վարուց եւ դիպուածոց, իրաց եւ իրականութեանց Տեառն Զաֆարիայ արհի եպիսկոպոսի եւ ազգասէր կարդացեալ պատրիարքի Մեծի Պոլսոյ» խորագիրը (ԳՃՊ, գիրք Ժ., Թիֆլիս, 1912, սյուն 207-352): Զաֆարիա պատրիարքի մայրը՝ ծագումով կաղզվանցի նազեն, վախճանվել է 1783 թ. և ավելի ուշ հուղարկավորվել Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում: Վերջինիս չափածո տապանագրում համառոտ ներկայացված է նաև որդու՝ Զաֆարիայի գործունեությունը (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 188, արձ. 351): Ինչ վերաբերում է Զաֆարիա պատրիարքին, ապա նա թաղված է Գուրուշեշմեի Ս. Խաչ եկեղեցու պարտեզի հարավային կողմում, որի շէղ տապանաքարին փորագրված է ընդարձակ ու չափածո արձանագրություն (տապանագրի վերձանությունը տես Տօֆր. Վահրամ Յ. Թորգոմեան, Կ. Պոլսոյ հայ պատրիարքներու տապանագիրները, «Յագմավէպ», 1918, յունուար-դեկտեմբեր, էջ 176, ԺԱ.):

⁷⁴ Կ. Պոլսի նվիրակ և առաջնորդ Իսահակ վարդապետի անունը ֆանիցս հիշատակված է Ս. Էջմիածնի սյունների նորոգման առթիվ երբեմնի գոյություն ունեցած ներկագիր արձանագրություններում: Կ. Պոլսում գտնվող մահտեսի Խոր (բնագրերում՝ Խրտոր) Կեսարացու մեկենասությանը վերաբերող նամակների բովանդակությունից կարելի է ենթադրել, որ Իսահակ վարդապետն իբրև միջնորդ է եղել և, համագործակցելով Խրտոր Կեսարացու հետ, նրանից վերցրել է 500 ղուռուշ և ուղարկել Ս. Էջմիածին, որի դիմաց պետք է Մայր տաճարի սյուններից մեկին՝ նրա հիշատակին նվիրված արձանագրություն կազմվեր (ԳՃՊ, նոր շարք, գիրք Ա., հ. Ա., էջ 389, 416, 461, արձանագրությունը տես Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 80, արձ. 58): Խոր Կեսարացուն հղված թղթերից մեկում հայրապետը շնորհակալություն է հայտնում երկու ոսկի իբրև աջահամբույր ուղարկելու համար (տես վավ. 1135):

44 **Ի Գաղատիայ** - Ղաւզ մի առ տեղւոյն նուիրակ Յով-
Հաննէս պետն վասն ԷՃ. (700) ղուռուշ դրամոյն առ ՍաՀակ պետն
Հասելոց, զորս եւ նա Հասուցեալ էր ի Կարին առ վէքիլ պարոն
Հայրապետն: Վասն որոյ եւ զայս ղաւզս գրեալ յղեցաք առ Հայ-
րապատն՝ Հասուցանել առ Սա[Հակ] պետն և նա՝ առ Յով-
Հան[նէս] պետն ի միամտութիւն Հասելոցն:

Յղեցան ի Բայազիտ առ տիրացու Գէորգն ընդ շաթիր Մել-
քիսեթին և գրեցան յամ[սոյս] ի ԻԴ. (24):

45 **Ի Կարին** - Թուղթ մի առ վէքիլ պարոն Հայրապետն ի
դարձ թղթոցն, եթէ ամանաթքն մեզ Հասին ի Բայազիտոյ, զոր
յղեալ էիր ընդ Մարկոս պետին: Վասն Չ. (6) կտոր ամանաթիցն
(որք են ի Բայազիտ առ տիրացու Գէորգն), եթէ այժմ մարդ յղե-
ցաք և ինդրեցաք յղել ընդ ԲՌԵՃ. (2500) ղուռուշին (որ է առ
ինքն) անՀոգ լէ ր: Եւ յայդր, որ ԱՌ. (1000) ղուռուշ էիր տուեալ
Պալիպէկէնց Յարութիւնի փեսայ Ստեփանին ՉՃ. - ըն (600) էՀաս
ի ձեռն Յարութիւնին, մնաց ԴՃ. - ըն (400) մինչ տայցէ, գրելոց
եմք քեզ առ ի գիտել:

Իմացաք զթուղթն և զղաւզն Մինաս, Ներսէս և Դաւիթ
նուիրակաց, զորս յղեալ ես յառաջ, քան զայս: Այժմ ևս զերկոսին
ղաւզն Մինաս պետին յղեցաք ընդ թղթոյս յղել քոյ առ նա ի
միամտութիւն իւրեանն վասն Հասելոցն առ մեզ: Իսկ զգրաման
գրեցաք ի դաւթարդ, լէ ր անՀոգ:

Եւ վասն ՅովՀանն[նէս] պետի եօթն Հարիւր ղուռուշի ղաւզին,
եթէ յղեցաք աՀա ընդ թղթոյդ, Հասուցես առ Սա[Հակ] պետն:
Իսկ վասն 250 ղուռուշին (որ է Պալիպէկէնց պարոն Յարու-
թիւնն), եթէ ինդրեցաք, ասաց թէ այն առաժ զատերն ի Պալա-
սանէս, տակաւին չեմ ծախսած, մինչ ծախեցից, Հատուցից:

Այլ վասն նորապէս (որ առ Մինաս պետն), եթէ զոր ինչ
գրեսցէ, ծանուցես մեզ: Եւ վասն Մինաս պետի պաՀարանեալ
թղթոցն, եթէ Հասուցես ի Պօլիս առ մահտեսի Նիկողայոս ամի-
րայն, որ նա ևս Հասուցէ առ նա: Իսկ զՍա[Հակ] պետի թուղթն
առ ինքն Հասուցես՝ Հանդերձ ղաւզին Յով[Հաննէս] պետի:

Վասն տաճկացն Հաճ գնացողաց, եթէ ըստ գրեցելոյդ եմք
առնելոց, այնպէս չեմք առնելոց, որ դու նեղասցիս: ԱնՀոգ լէ ր:

Գրեցաւ յամ[սոյս] ի ԻԴ. (24):

46 **Ի Բայազիտ** - Թուղթ մի առ ՍաՀակ և Մանուկ աղայնս,
եթէ աՀա շաթիր Մեքիսեդեկն յղեցաք առ փաշայն Հանդերձ
թղթով և ընծայիք, զորս տարեալ ընդ նմա, մատուցիք փաշային,
իսկ վասն ձեր յղեցաք Ա.Ա. (1-ական) լիտր արաղ և Ժ.Ժ. (10-
ական) լիտր բրինձ, զորս վայելեալ յիշեսջիք զՍուրբ Աթոռս:

47 **Թուղթ մի օրհնութեան առ մաքսապետ պարոն Աւետիքն, եթէ Հարազատ ես Սրբոյ Աթոռոյս, վասն որոյ ընդ շաթիր Մեքիսեդեկին մերոյ յղեցաք վասն քոյ զԺ. (10) լիտր գինի և Լ. (30) լիտր բրինձ, զորս վայելելով յիշեսցես զՍուրբ Աթոռս և զմեզ՝ Հանդերձ շնորհակալութեամբ:**

48 **Թուղթ մի տաճկերէն առ տեղւոյն փաշայն՝ Հանդերձ ընծայիւք ընդ շաթիր Մեքիսեդեկին:**

49 **Թուղթ մի ևս տաճկերէն առ Ինուզբեկի որդի Նուհբեկն Հանդերձ ընծայիւք: Յղեցան ընդ շաթիր Մեքիսեդեկին և գրեցան յամնոյս ի ԻԴ. (24):**

50 **Ի Կարին - Թուղթ մի առ վէքիլ Հայրապետն, եթէ Հէքիմ Կերապետին տացես յայդր յարդեանց Սրբոյ Աթոռոյս 150 թուման դրամ, վասն զի աստ ետ մեզ: Արդ, զկնի տալոյդ ի միւս երեսն թղթոյս, զահիրայ առնել տացես և վերադարձուցես առ մեզ:**

Գրեցաւ յամնոյս ի էն:

51 **Ի Թիֆլիզ - Թուղթ մի առ առաջնորդ Մարտիրոս պետն և գործակալ տէր Ղազարն վասն երկուց թղթոցն առ սրբազան Վեհրն գրեցելոց, եթէ Հասին մեզ: Յղեցաք զօրհնութեան թուղթս պարոն Ստեփաննոսի, վասն որոյ տաջիք նմա: Ծ. (50) Հատ թուշի շալն և այլ մանրամաննայ իրքն մեզ Հասին, որոց զգինսն և զքիրայսն (որ էր լեալ Ը. (8) [թուման], ԶՌ. և ԸՃ. (6800) դեան, գրեցաք ի դավթարդ):**

Չանգակն յղեցաք ի Սուրբ Հռիփսիմէն՝ առ ի կախիլ |447թ| տակաւին մնայ վասն ցրտութեան եղանակին⁷⁵:

⁷⁵ Ղուկաս Կարնեցու օրոք կատարված շինարարական աշխատանքների շարքում հատկանշելի է նաև Ս. Հռիփսիմե տանաթի արևմտյան մուտքին կից քառամույթ նախասրահը պակաս զանգակատան կառուցումը, որը 1790 թ. իրագործվել է կալկաթաբնակ մեկենաս Խաչիկ աղա Ջնթրումյանի միջոցներով: Վավերագրում զանգակի հիշատակությունն ուղղակիորեն վերաբերում է նշված իրադարձությանը, ըստ այդմ՝ Թիֆլիսում պատրաստված զանգն ուղարկել են Ս. էջմիածին՝ Ս. Հռիփսիմե վանքի նորակառույց զանգակատան ներսում կախելու համար, բայց ինչպես տեսնում ենք՝ այն հետաձգվում է «վասն ցրտութեան եղանակին»: Այս նույն իրադարձության հետ է կապված նաև 1792 թ. նամակներից մեկը (վավ. 339), որը տեղեկություն է հաղորդում Խաչիկ աղայի մահվան, նրա մեկենասությամբ զանգակատունը կառուցելու և այդ առնչությամբ վիճաբար կազմելու մասին: Ի դեպ, վիճաբանական աշխատանքները ևս հետաձգվել են եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով. «բայց ի ցրտային ժամանակիս ոչ լինէր գրիլն, վասն որոյ պահեմք Աստուծով յառաջիկայ տարւոյ ապրիլ ամսեանն փորագրել տալ ի ներքուստ կողմանէ կաթողիկէին»: Այդուհանդերձ, չափածո արձանագրությունը, որն ամբողջովին նվիրված է մեկենաս Խաչիկ աղայի անձի և գործունեության լուսաբանմանը, փորագրվել է նախասրահի հյուսիսարևելյան մույթի հարավային նիստին (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 254, արձ. 513): Զանգակատան կառուցման վերաբերյալ տեղեկություններ են հաղորդվել նաև այս շարքի նախորդ հատորում (ԳՁՊ, նոր շարք, գիրք Ա., հ. Բ., էջ XXVIII, ծնթ. 10):

Վասն նուիրակական գործոցն, եթէ միամիտ եղաք ի գրածէդ, Տէր յաջողեսցէ: Իսկ յաղագս տէր Դաւթին, եթէ զոր ինչ գրեալ էիք, իմացաք, սակայն երևեցաւ այժմի ձեզ նոր իմն պտուղ Հաւատարմական Հանճարոյ:

Եւ վասն վախմտեղեացն Սրբոյ Աթոռոյս, եթէ գրեսցիք մեզ, եթէ իւրաքանչիւր ամի ի դոցանէ զի՞նչ առնուք և որքա՞ն օգտութիւն Հասցի Սրբոյ Աթոռոյս:

Իսկ վասն Իմէրէթու Սօլօմօն արքայի թղթոյն, եթէ կամեսցիս Մինաս պետին գնալ անդ, գրեա՛, զի յիշեսցուք զանուն նորա ի թուղթն նորին, որ ընդ տէր ՍաՀակին գնասցէ:

Եւ վասն Նունի խառատին, եթէ անցեալ տարին եկն աստ, բայց ոչ եղև ձեռնարկումն իրաց. այժմ խօսեսցիք իւրեանն ԴՃ. (400) դեան և աշակերտին՝ ԱՃ. (100) դեան, եթէ կամեսցի գալ, իսկ եթէ ոչ, առջիք զանցեալ ամի Բ. (2) թումանն և զայլ որ առաքեսցիք նոյն վարձուքն:

Այլև վասն վրացի ճորտ պարոն Պապային, եթէ ԻՍ. (40) թուոջն ի մէնջ Ա. (1) բեռն բամբակ ինդրեաց և մէք ետուք, որոյ գինն էր Է. (7) [թումանն] ԵՌ. և ՉՃ. (5600) դեան, մնաց ի վերայ իւրն: Թամասուկ ետ, որ ի լրանալ վատային, տացէ: ԱՀա Ը. (8) ամիս անցեալ է ի վատայէն, վասն որոյ ինդրեսցիք զդրամն և մեզ ծանուցիք, որ զթամասուկն նորին յղեսցուք: Ընդ ամա փոռուպայ մի վասն տէր ՍաՀա[կին] Գօրեցոյ, եթէ առ նա թուղթ գրեցաք, զիա՛րդ ոչ գրեաց զպատասխանին: Եթէ տակաւին չէք յղեալ առ նա, դարձուցիք առ մեզ:

447բ

52 Թուղթ մի ևս առ Մարտիրոս պետն և գործակալ տէր Ղազարն վասն պարոն Հմալօնի ապօրինաւոր Հարսնածութեանն, որ զդուստր Գուրկին Բէկէնց Ստեփանի կամէր ածել ի կնութիւն վասն որդւոյն, եթէ յորդորմամբ զգուշացուցէք զդա Հեռի լինիլ այդպիսի անկարգ ընթացից և թէ ոչ, ընդունիլոց է ի մէնջ զՀարաչարն:

53 Թուղթ մի օրհնութեան առ պարոն Ստեփան ոմն վասն տարեկան Ա. (1) լիտր մոմոյն, զոր ամ յամէ տայ տեղոյն առաջնորդ Մարտիրոս պետին:

54 Թուղթ մի եւս առ տէր Հմալոնեանն պարոն Ստեփաննոսին ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էր ընդ Թաղկայ բէկին...

Ողջոյն տայ տէր Գրիգոր աւագ քաՀանային, պարոն Հմալօնին՝ Արղուլթեանց պարոն Սօլօմօնին եւ որդւոյն իւրոյ՝ պարոն Սողոմօնին:

Գրեցան յամնոյս ի ելն:

55 **1793 թ., յունուար** - Կոնդակի վերայ Արդուինու վանն քանի ամաց:

ՄՄ ձեռ. Հմր 4449, էջ 39ա

56 **1793 թ., յունուար** - Կոնդակի վերոյ ՔեօթաՀիաի վերայ փոքր եկեղեցւոյն, որ յանուն Սրբոյ Սարգսին (որոյ իշխանքն և ի Հասարակացն ևս ոմանք, նաև գանձապետն Փանոս, ախտարմայ էն, վանն որոյ զգուշաբար գրի): ՀսորՀակալութիւն վանն արդեանց գանձանակին:

ՄՄ ձեռ. Հմր 4449, էջ 39աբ

57 **1793 թ., յունուար** - Կոնդակի վերայ Քիրմաստու ներսային Ժողովրդեանն վանն արդեանց գանձանակին:

ՄՄ ձեռ. Հմր 4449, էջ 40ա

58 **1793 թ., յունուար** - Թուղթ առ Պօլսոյ պատրիարք Չաքարիա վարդապետն, ի պատասխանի թղթոյն, զոր վանն բանի նուիրակութեանն գրեալ էր:

ՄՄ ձեռ. Հմր 4483, էջ 1770-72

59 **1793 թ., 24 յունուարի** - Թուղթ առ Իզմիրու նուիրակ և առաջնորդ Իսահակ վարդապետն վանն Էնկիւրիոյ Յովհաննէս վարդապետի ի ձեռն նորա արարեալ փօլիցային, և այլ ոմանց բանից, և որպիսութեանց ինչ կողմանցս:

60 **1793 թ., փետրուար** - Թուղթ առ Ամրտօլայ վանաց առաջնորդ զառամեալ Չաքարիա վարդապետն. ծանուցումն վանն գալոյ նուիրակին մերոյ անտի, և մեր կոնդակս գրելոյն անդ ի Բաղէշ, և արգելումն նմա ի ձեռնադրութիւն առնելոյ:

ՄՄ ձեռ. Հմր 4482, էջ 461-63

1793 թ., փետրուար

447բ

61 **Ի Կարս** - Թուղթ մի առ Գէորգ աղայն ի դարձ թղթոյն, եթէ տախտակքն և զէյթոնն մեզ Հասին: Վանն օրհնութեան թղթոցն, եթէ աՀա գրեալ յղեցաք: Ի կողմանէ Գրի[գոր] պետի նուիրակական արդեանցն, որ յանցեալ ամին ԿԵ. (65) ղուռուշ էր առեալ և յայսմ ամի Կ. (60) ղուռուշ, եթէ իմացաք և միամիտ եղաք: Նոյնպէս և Բարսէղ պետի թողեալ երեք գեօղի նուիրակական զարդիւնն, որ էր ԽՄԻ. (44) ղուռուշ, բայց Քակաճ գեօղի մնացեալ է. (7) ղուռուշն, ի Հարկէ, ևս առնլոց ես և գրելոց ի դաւթարդ: Ի գիտելլ ի փայտավաճառ Հիւսէին բէկէն զորպիսութիւն փայտիցն ծանուցես մեզ: Եւ թէ ընկալաք զերեսն դաւթարիդ և գտաք Համեմատ ընդ մերում, բայց Բ. (2) ինչ մնացեալ

եր արտաքոյ դավթարիդ՝ Մարիամ՝ կնոջ տան քիրայն և Ռսկեհատ կնոջ դասեր՝ Կատարինէի ժԱ. (11) ղուռուշ Հոգեբաժինն, գրեսցես ուրեմն զսոցանէ, զի գտասցուք:

Այլև մեր գործակալ Յակոբ պետն, զոր ինչ գրեսցէ քեզ, Հոգացօղ լիցիս, զի մեր գիտութեամբն է:

Օրհնութեան նամակներ նուիրատուներ տիկին Աննային եւ արդահանցի տէր Յովսէփ քահանային (447բ-ճա, Բ-Գ):

448ա

62 Կոնդակ մի գանձանակի ի վերայ Հասարակութեանն տեղոյ, որ դարձաւ առ մեզ և վերստին գրեալ լղեցաւ ըստ ինդրոյ Գէորգ աղային: Տէ ս ի ներքոյ ի տեղոջն:

Օրհնութեան նամակ գանձապետ մահտեսի Եղիային, որին կարգադրուով է վերադառնալ Էջմիածին՝ «ըստ գանձանակի կոնդակին» (448ա, Ե): Նամակ Մարգար աղային (Բաղդադ), ուր տեղեկութիւններ են Հաղորդուով ոմն Սարգիս տղայի վերաբերյալ մանաստրապէս. «վասն նորին յանձնարարութիւն, եթէ ի գալն ոչ մնաց աստ՝ ասելով թէ ԲՃ. (200) ղուռուշ գրեալ է աղայն ձեզ, տալ ինձ, որով առեւտուր արարից: Մէք ոչ ետուք, եթէ ոչ է գրեալ գնաց յԵրեւան և մնացեալ անդ աւուրս ինչ դարձաւ ի Սուրբ Աթոռս, արարեալ էր անդ ժԵ. (15) ղուռուշ պարտս...»: Յանձնարարուով է նաեւ ըստ պատկանելոյն յանձնել ջուղայեցիներին Հասցեագրուած միսիթարական նամակը (Ա): Գործակալ պրն. Փանտսին ուղղուած միսիթարական նամակ. «վասն աշացաւին» (Բ): Թուղթ ուղղուած պրն. Բաբաջանին՝ նախկինում Հղրած թղթի վերաբերեալ (Գ): Միսիթարական նամակ տեղի Հասարակութեանը, որը գանգատուել էր առաջնորդ Յակոբ պետից (Գ): Նամակները գրուել են փետրուարի 9-ին:

63 Կոնդակ մի ժողովարարութեան ի վերայ Բայազտոյ և շրջակայիցն, զոր գրեալ ետուք մահտեսի Նիկողայոս առն միոյ յԱմթեցոյ վասն պարտուց իւրոց:

Գր[եցաւ] յամ[սոյս] ի ժԱ. (11):

Նամակ՝ ուղղուած պարոն Բաբաջանին, որով յիշեցուով է նրան Հասցեագրուած նախորդ գրութեան բովանդակութիւնը եւ յանձնարարուով տէր Յովսէփին (Թարիզ) Հասցնել ուղարկուած նամակը (448ա, Ա./3): Վերջինիս ուղղուած նամակում յիշեցուած է տուխտորդանեցիների կապակցութեամբ ուղարկուած նախորդ գրութիւնը, կարգադրուով է Նոր Ջուղայ ուղարկել նամակը եւ սիրով ընդունել նուիրակին (Բ./2): Եւս մի միսիթարական թուղթ «առ անդ բնակեալ մերայինսն» (Գ./2): Նամակները գրուել են փետրուարի 15-ին:

64 Կոնդակ մի շնորհակալութեան ի վերայ չորից եկեղեցեաց ժողովրդեանն վասն նուիրակական և այլ արդեանցն Հասելոց ի Սուրբ Աթոռս, ձե[ռամբ] Գրիգոր և Յովհաննէս պետացն, յորում և ծանուցումն, եթէ զԱմրտօլու վանից առաջնորդ Չաքարիս պետն լռեցուցաք ի պատարագելոյ և ի ձեռնադրութիւնս առնելոյ վասն յոյժ ծերութեանն: Ըստ որում ոչ պատկանին ինքեանն: Տէ ս զ1979 Հա[մար] մեծ [տետերց]:

65 **Կոնդակ մի գանձանակի առ Սուրբ Գեորգ եկեղեցին վասն ԿԶ.** (66) զուռուչին (որ էր երկու ամաց արդիւնք գանձանակի), զորս յանձնեալ էին նուիրակ Գրի[գոր] պետին, ի ՌՄԽԱ. (1792) թուոչս, ի տօնի Վե|448թ|րացման Սրբոյ Խաչին, ձե[ռամբ] գանձապետ պարոն Յովհաննիսին:

66 **Կոնդակ մի ևս գանձանակի առ Հինգխորան անուանեալ սուրբ եկեղեցւոյ ժողովուրդան.** ծանուցումն զԳրի[գոր] և զՅովհաննէս պետացն, եթէ Հասին ի Սուրբ Աթոռս բազում արդեամբք, վասն որոյ և զչնորՀակալութեան կոնդակ մի գրեցաք ի վերայ Համայնիցդ: Այլ վասն գանձանակի արդեանց աղագաւ սաստ և պատուէր՝ եթէ ի կողմանէ Ը. (8) տարւոյ գանձանակադրամին ձերոյ Գրի[գոր] պետին Ի. (20) զուռուչ էիք տուեալ, որով երևի թէ վատնեցեալ է այգքան տարւոյ գանձակադրամն ձեր: Ուրեմն յիւրաքանչիւր ամի Հասուցիք ի Սուրբ Աթոռս, որ ինչ և լինիցի, որպէս մինչև ցարդ Սուրբ Գեորգ եկեղեցւոյ գանձապետ պարոն Յով[հաննէսն] առնէ, քանզի աՀա Զ. (6) տարի եղև յիւրաքանչիւր ամի Հասուցանելով, Հասեալ է մեզ ԲՃ. (200) զուռուչից աւելի դրամ: Նաև վերահաստատութիւն նորոգ գանձապետ Մրջոյենց մահտեսի Կարապետին, զոր կարգեալ է նուիրակ Գրի[գոր] պետն⁷⁶:

Գանձանակի կոնդակներ՝ ուղղուած Կամրկապ եւ Սուրբ Սարգիս եկեղեցիների ժողովրդին «ըստ նոյն մտաց վերոյ յիշեալ թղթոյդ», այսինքն՝ նուիրակ Գրիգոր պետին տրուած գանձանակադրամի առնչութեամբ (448թ, Դ, Ե.): Նոյն Հարցերի մասին նամակ Էջմիածնի գանձապետ պրն. Յովհաննէսին. «ի դարձ թղթոյն ընդ Գրիգոր եւ Յովհաննէս պետացն գրեցելոյ...» (Զ.):

67* **Թուղթ մի ևս առ Ամրտօլու վանից առաջնորդ Չաքարիա ձերունազարդ պետն,** յորում ծանուցումն՝ եթէ ժամանեցին ի Սուրբ Աթոռս Գրիգոր և Յովհաննէս պետքն լի որայիւք, վասն որոյ և մեք շնորՀակալութեան կոնդակ մի գրեցաք ի վերայ չորից եկեղեցեացն: Քեզ ևս զայս գրեմ, զի լսեմք ի բազմաց, թէ անկա-

⁷⁶ Մատենագրական աղբյուրների հաղորդմամբ՝ Բաղեշ ֆաղափի եկեղեցիներից է Հինգ կամ Ե. խորան անունով հայտնի կառույցը, որի գտնվելու ստույգ տեղը ցայսօր անհայտ է: Մխիթարյան միաբան Հ. Ներսես վրդ. Սարգիսյանի բնորոշմամբ՝ Բաղեշի երկրորդ եկեղեցին Ս. Սարգիսն է, իսկ «հանդէպ նորա է երրորդ եկեղեցին՝ Հինգխորան կոչեցեալ, զի վերոյ կողմնական խորանացն երկու այլ խորանն են» (Հ. Ներսես վրդ. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 241): Հետագայում եկեղեցին համառոտ նկարագրել է նաև Հ. Սուփաս Էփրիկյանը, ըստ որի՝ եկեղեցին «այսպէս կոչուած է հինգ խորաններ ունենալուն համար» (Հ. Սուփաս Էփրիկեան, Պատկերագրոյ բնաշխարհիկ բառարան, հ. Ա., Վենետիկ, 1902, էջ 363): Վերջին տարիներին, Բաղեշի եկեղեցիներին նվիրված հոդվածում, հարտարապետ Դավիթ Քերթմենցյանը նշում է, որ ինչպես Ս. Սարգիս, այնպես էլ Հինգխորան եկեղեցիների գտնվելու ստույգ տեղը հայտնի չէ, միայն պարզ է, որ սրանք հանդիպակաց կառույցներ են եղել, իսկ Հինգխորանը, ըստ իր հարտարապետական լուծումների, հինգ խորանով առանձին կանգնած շինություն էր (Գ. Կերթմենցյան, Բաղեշ ֆաղափը և նրա եկեղեցիները, «Պատմա-բանասիրական հանդէս», 1990, Հ^տ 1, էջ 118):

րացեալ գոլով վասն ծերութեանդ տակաւին պատարագ և ձեռ-
նադրութիւնս առնես, որք ոչ պատկանին քեզ, այնուհետև չունիս
Հրաման առնելոյ, այլ զորն կամիք ի միաբանիցդ յղեսջի՛ք առ մեզ,
զի կարգեսցուք առաջնորդ՝ ձեռնադրելով զնա եպիսկոպոս, ի Հա-
սարակաց կոնդակոջն ևս գրեցաք զայս բանս: **Գրեցան յամ[սոյս]**
ի ԻԱ. (21):

Վերոյիշեալ կոնդակների մասին Բայազետի Գէորգ տիրացուի միջոցով ծա-
նուցում է ուղարկում բաղիշեցի մահուտեի Թօմասին (448թ, Ը.): Գանձակի առաջ-
նորդ Սարգիս պետին Հաղորդում է, որ նրա դեմ գանգատներ չեն եղել եւ վեհա-
փառ Հայրապետը նրա Համար ուղարկում է երեք վեղար եւ մէկ Ֆարաջայ. «զորս
վայելելով յիշեսցես զմեզ» (Ա./2): Նամակները գրուել են փետրուարի 22-ին եւ
23-ին:

449ա 68* **Երեւան** - Թուղթ մի մխիթարութեան առ իւզբաշի Գաբ-
րիէլն, վասն մահուան կնոջն եղբօր որդւոյ Յարութիւնին՝ Հան-
դերձ Բ. (2) կուժ գինեաւ:

Գրեցաւ յամսոյս ի ԻԵ. (25)⁷⁷:

69* **Ի Զմիւռին** - Թուղթ մի առ Աստուածատուր աղայն, վասն
մեղրեցի Պապղովենց Մուրատի բաժնին, ի կայից անդ Հանգու-
ցեալ Յովհաննիսին: Տէ՛ս զ1980 Համարն մեծ տեսերց՝⁷⁸:

70* **Վէրիլլամայ մի ևս ի վերայ սոյն Աստուածատուր աղայիս,**
ի կողմանէ անդ Հանգուցեալ Յովհաննիսի ժառանգ Մուրատին,
որ եկն աստ և զայս վէրիլլամայս կնքեցուցեալ եպիսկոպոսաց

⁷⁷ Մխիթարության նամակ ստացած Գաբրիել յուզբաշին՝ Գեղամյան տոհմից, ծագումով Գե-
ղարհունցի Ալահվերդի յուզբաշու (հարյուրապետի) որդին է՝ Երևանը խանական լծից ազա-
տագրելու գործում իր ակտիվ մասնակցությունն ունեցած այրերից մեկը (Առ, Երկերի ժողո-
վածու, հ. Դ., Երևան, 1984, էջ 204, 225-7, 280-1): Նրա անունը, որպես մեկենաս, հիշատակ-
ված է Երևանի Զորավար Ա. Աստվածածին եկեղեցու նորոգման 1793 թ. չափածո վիմագրում
(Կ. Ղաֆադարյան, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրություն-
ները, Երևան, 1975, էջ 166, արձ. 82), իսկ նույն եկեղեցու հարավային մուտքի դիմաց պահ-
պանված ուղղանկյունաձև տապանաքարին կարդում ենք Գեղամյան տոհմից Գաբրիել
հազարապետի անունը, որը վախճանվել է 1811 թ. մայիսի 22-ին: Տապանագրի վերձանու-
թյունը վերջերս ենք հրատարակել, այն հետևյալն է. «Գաբրիել հազարապետ, Ալահվերդու
որդի գոշի, բազում տոհմի Գեղամեանի, էր սա իշխան Գեղագունի, ի Հայոց ասկին էր ցա-
պի, իր ընթերցօք այս տապանի, լի բերանօք տուք զողորմի, Աստուած եւ ձեզ ողորմեսցի,
անկարծ մահու պատահեցի, խորուս տապան բնակեցի, այսմ թվին վախճանեցի, 1811-ի եւ
մայիսի 22-ի» (Ա. Հարությունյան, Երևանի Ա. Անանիա առաքյալի անապատը կամ Զորա-
վար Ա. Աստվածածին եկեղեցին, Երևան, 2020, էջ 185, արձ. 12):

⁷⁸ Միևնույն ժանոթագրության մեջ հիշատակված է նաև մեղրեցի Պապղովյանց Մուրադին՝
հանգուցյալ Հովհաննեսի ժառանգությունից բաժին տալու մասին Զմյուռնիայի Աստվածա-
տուր աղային ուղղված գրությունը, որն ամբողջությամբ հրատարակել է դեռևս Գյուտ ալ-
ֆհն. Աղանյանը (ԴձՊ, գիրք Դ., սյուն 603-604): Հաջորդիվ հրատարակված է գրեթե նույ-
նաբովանդակ մեկ այլ գրություն՝ ուղղված Զմյուռնիայի առաջնորդ Խահակ վարդապետին՝
հետևյալ խորագրով. «Թողթ առ Իզմիրու առաջնորդ Խահակ վարդապետն ծանուցումն
հասանելոյ Բ. թղթոց նորին եւ վասն մեղրեցի Պապղովենց Մուրատի գալոյն աստ եւ յա-
ղագս ժառանգութեան իւր պապի եղբօր թոռն հանգուցեալ Յովհաննեսին՝ վէրիլլամայ գրե-
լոյն. զԱստուածատուր աղայն՝ վէրիլ կարգելով յիւր կողմանէ եւ այլն» (ԴձՊ, գիրք Դ., սյուն
604-606). մեր շարժում այն չի ընդգրկվել (հմմտ. նաև վավ. 70):

յղեաց առ նա ի կողմանէ իւրն, ըստ որում՝ ինքն ծերացեալ էր և երկնչէր ի գնահն:

Թուղթ ուղղուած տեղի առաջնորդ եւ նուիրակ Իսահակ պետին՝ մեղրեցի Պապղուէնց Յովհաննէսի ժառանգութեան վերաբերեալ (449ա, Գ): Մխիթարական նամակ կարնեցի Հանգուցեալ Գոգորեան կարապետի որդիներին՝ մահտեսիներ Աւետիքն եւ Յակոբն (Դ):

71* Թուղթ մի ևս առ Սրբոյ Աթոռոյս բազմաշխատ վէրիլ պարոն Հայրապետն, եթէ երեքին թուղթքդ մեզ Հասին Հանդերձ այլ տեղեաց թղթովք: Իմացաք զյղիլն պահարանին ի Չմիւռնոյ, ի Պօլիս առ Մասեհեան պարոն Եսային, վասն որոյ միամտեցաք: Յիշումն թղթոցն ի յունվարի ԻԴ. (24) գրեցելոց, վասն Չ. (6) կտոր ամանաթիցն, եթէ Հասին մեզ ամբողջապէս՝ անհոգ լեր, իսկ վասն Պաղուբէկէնց պարոն Յարութինի փեսայ Ստեփանի ԴՃ. (400) ղուռուշին, եթէ զայն ևս առաք, որով լրացաւ Հազարն: Նորապէս տուեալ ԱՃ. (100) ղուռուշն ևս առնլոց եմք ի մերձակայ աւուրքս և գրելոց ի դաւթարդ: Լուաք զփոխիլն առ տէր մահտեսի կարապետին, վասն որոյ և ահա առ որդիսն նորին թուղթ մխիթարութեան գրեցաք, տացես նոցա: Չբամպակէն ծանուցումն, եթէ մահտեսի Խաչատուրի եկեան Աւետիքն ընդ Պալիբէկէան Յարութինին առին զբոլորն, կէսն յղեցին յայդր և կէսն դեռ ևս մնայ աստ, թամասուկն ևս ոչ են տուեալ տակաւին, թուղթն մահտեսի Խաչատուրի, որ առ Դանիէլ պետն⁷⁹, ոչ է Հասեալ ցարդ: ԼԵ. (35) ղուռուշ տուեալ էիր Խաչատուր պետին ի գալն, բայց Սահակ պետն մեզ բան չէ գրած զերեսուն ղուռուշէն: Գրելոց եմք նմա, տեսցուք զի՛նչ գրեսցէ, այժմ՝ ձեռնՀաս չեղաք: Վասն պահարանեալ թղթոցն Սահակ պետի պատուէր՝ եթէ Հասուցեն ի Պօլիս առ Մասեհեան պարոն Եսային Հասուցանել նորա առ նա:

Գրեցան յամսոյս ի ելն:

Նամակ Մէհրապ աղային (Խոյ)՝ Թիֆլիսեցի տէր Գաբրիէլին ուղղուած յանձնարարութեան առթիւ (Ա./3): Նամակ Գեորգ աղային (Կարս), ոմն տաճիկի ձեռամբ նրանից ստացուած գանձանակի վերաբերեալ (Ա./4): Մխիթարական նամակներ մահտեսի Մասեհեան պարոն Եսայուն՝ եղբորորդի Մասեհի մահուան առթիւ (Ա./5): Նմանաւորինակ նամակ մահտեսի կարապետ Պապույեանին՝ որդու մահուան:

⁷⁹ Դանիէլ պետը Բանիցս հիշատակված է նաև Դուկաս Կարնեցու 1780-ականների նամակներում: Այս և հաջորդ մի Բանի վավերագրերից դատելով՝ նա Մայր Աթոռի ներկայացուցիչն է Թիֆլիսում, և նրան է հանձնարարվում Ս. Էջմիածին ուղարկվող մումի շրջանառման-սպառման վերահսկողությունը: Նրա միջոցով է նաև Վրաց Հերակլ արքային և տեղի ժողովրդին Մայր Աթոռից օրհնված ջուր ուղարկվում: Ենթադրելի է, որ Թիֆլիսի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու մուսֆի բարավորին երբեմնի գոյություն ունեցած 1782 թ. շինարարական վիճագրում հիշատակված է միևնույն Դանիէլը՝ իբրև գանձապետ (Պ. Մուրադյան, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009, էջ 31): Դանիէլ պետն անուղղակիորեն հիշատակված է նաև Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում թաղված իր եղբորորդու՝ Ստեփանոսի 1782 թ. տապանագրում (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 187, արձ. 348):

Հուան առթիւ (Բ./2): Պատասխան նամակ վէքիլ պրն. Հայրապետին (Կարին)՝ 2250 ղուռուշը բժիշկ պարոն Հայրապետին տալու, ստացականը վերցնելու, ինչպէս նաեւ տնտեսական բնոյթի մի շարք Հարցերի մասին, ինչպիսիք են՝ տիրացու Գէորգի 1700 փօլիցայն Մանուկին տալու, Բայազետից ղոլմնքն ու զէնճիրքը Հասնելու, նուիրակ Նիկողայոս պետի 1000 ղուռուշի ղապը գրելու, ՍաՀակ պետի բողայի արգելման պատճառի, Պալուբէկէնց պարոն Յարուլթինի փեսայ Ստեփանի 100 ղուռուշը Երեւան ուղարկելու, պաՀարանեալ թղթերը ՄասեՀեան պարոն Եսայոն Հասնելու, Նիկողայոս պետի 185 ղուռուշ տուգանքի, վէքիլ մաՀտեսի ՅովՀաննէսի եւ ղապղիմալ տիրացու Կարապետին Հղած օրՀնութեան թղթերը (449թ, Գ./2): Նուիրակ Նիկողայոս պետին տեղեկացում է Կարինից ստացուած պատասխան նամակի, 2000 ղուռուշի ստացականի ձեռքբերման եւ պրն. Հայրապետին տալու Համար 1000 ղուռուշի ստացականի ուղարկման մասին: Վերջում օրՀնութիւն է Հղում նորընծայ Փիլիպոս պետին (Չ-Է.): Գրուել է մարտի 28-ին:

72 **Ի Բայազետ** - Կոնդակ մի գանձանակի ի վերայ Սրբոյ Աստուածածնի եկեղեցւոյն, վասն Լ. (30) զօլաթայ գանձանակադրամին, ՌՄԽԱ. (1792) յունվարէն ցնեակայ թուոյս մարտ ամիսս ժողովեցելոյն, զոր ձե[ռամբ] գանձապետ պարոն ՅովՀաննիսին յանձնեալ էին տիրացու Գէորգին Հասուցանել մեզ, զոր և Հասոյց ձե[ռամբ] Մաղաքիային:

73 Կոնդակ մի սև գանձանակի ի վերայ Սրբոյ Կարապետի եկեղեցւոյն, որք զարդիւնան գանձանակին գժողովեալսն ի ՌՄԽԱ. (1792) յունվարէն ցՌՄԽԲ. (1793) մարտ ամիսս (որ է 5 զօլաթայ), յանձնեալ էին Սրբոյ Աթոռոյս գանձապետ տիրացու Գէորգին՝ Հասուցանել մեզ, զոր և Հասոյց ձե[ռամբ] Մաղաքիային:

Գրե[ցաւ] յամ[սոյս] ի էլն:

74 **Ի Կարս** - Կոնդակ մի գանձանակի առ անդ եղեալ մերայինսն, վասն ԱՃԻԵ. (125) ղուռուշ գանձանակադրամին ի ՌՄԽԱ. (1792) փե[տրվար] յամսոյն ցՌՄԽԲ. (1793) փե[տրվարի] վերջն ժողովեցելոյն, զոր և յանձնեալ էին Գէորգ աղային, ձե[ռամբ] գանձապետ մաՀտեսի Եղիային: Այլև յիշի աստ և Ծ. (50) ղուռուշ գանձանակադրամն երկուց ամաց Սրբոյն Գէորգեայ, եթէ Հասուցաք տեղւոյն նորոգ առաջնորդ Կարապետ պետին: Եւ աՀա նա ևս օրՀնութեան թուղթ գրեաց առ Սրբոյն Գէորգեայ գանձապետ պարոն Իգնատիոսն ի միամտութիւն:

ՕրՀնութեան նամակ գանձապետ մաՀտեսի Եղիային՝ 125 ղուռուշ գանձանակադրամը Գէորգ աղային Հասնելու առթիւ (449թ, Բ./2): ՕրՀնութեան նամակ ոմն Մարտիրոսին, որն ի յիշատակ Հանգուցեալ ծնողների՝ Իգիտիսանի եւ Մարգարտի, Գէորգ աղայի միջոցով նուիրել էր 20 ղուռուշ «քառասնիցն» (Գ.): ՕրՀնութեան նամակ «մեծաՀաւատ» Հանգուցեալ ՀաՀիբերուն՝ իր կտակած 30 «գրոտան» տիրացու Բարսեղ գրաբերի միջոցով Մայր Աթոռ ուղարկելու մասին (Գ.):

75 **Թուղթ մի ևս օրհնութեան առ էննաֆն դարբնաց, վանն ինն Հատ բաշիցն ճրիապէս շինեցելոցն՝ ըստ բանի Գէորգ աղային: Գրեցան յամնոյս ի ԻԵ. (25):**

Գէորգ աղային (Կարս) Հասցեագրուած նամակում շրջափռուած են մահտեսի Եղիային յղած գանձանակի կոնդակի, քոյր Մարիամի տունը «խարճելու», Ոսկե-Հատի Կատար անուն աղջկան Ժ. (10) ղուուու փոխանցելու, Մարտիրոսին Ի. (20) ղուուու «քառամնիցն» յանձնելու, այլեւ՝ շնորհակալական խոսք տեղի ամբողջականութեան, փայտավաճառ Իւսուֆ տաճկին, որը խոստացել է գարնանը ԲՃ. (200) փայտ բերել: Օրհնութեան նամակ դարբիններին՝ առանց վճարի ինը բաժնի պատրաստելու, Ծ. (50) ղուուու գանձանակագրամ Ս. Գէորգ վանքի առաջնորդ Կարապետին յանձնելու, թուղթ գանձապետ պարոն Իգնատիոսին, ուստայ Միքայէլի անունից մէկ Հատ բաժնի Ս. Գէորգ վանքի յիշեալ առաջնորդին, միաբաններից ԵՃ. (500) թանկ տախտակ ինդրելու և նման այլ Հարցերի մասին (449բ-50ա, Զ.):

ՄՄ ձեռ. Հ^փ 4481, էջ 450ա

76 **Ի Թիֆլիզ - Կոնդակ մի ի վերայ քաղանայից, իշխանաց և, առ Հասարակ, ժողովրդոցն տեղոյ, յորում ծանուցումն զդարձմանէ նշանացն վանն չհասութեան թէֆլիտար Յովհաննիսի որդի Զօրհապի և Մունթօյենց պարոն Յովսէփի դատեր, եթէ այլ իմն չիմանայք զայս դարձումն, ըստ որում մեղօք էր վանն այն դարձուցին յետս զնշանն: Եւ ապա սաստ և զգուշութիւն վանն օրինագանցից:**

77 **Կոնդակ մի ևս ի վերայ Թիֆլիզու և շրջակայիցն վանն ժողովարարութեան մոմին ընդ Դանի[էլ] պետին:**

78 **Թուղթ մի յանձնարարութեան վանն Դանի[էլ] պետին ի կողմանէ մոմոյն առ աւագ քաղանայն տեղոյ:**

79 **Թուղթ մի Հայերէն առ Հերակլ արքայն, եթէ տաճկերէն գրեալ թուղթդ մեզ էհաս ընդ միրզայ Աբրահամին: Իմացաք զգրեալսդ. ահա ընդ Դանի[էլ] պետին յղեցաք վերստին զճուրն օրհնութեան ի բժշկութիւն երկրացդ՝ աւելի քան զԺ. (10) լիտր: Առ սա փոստուլայ մի ևս վանն ձիթապտղոյն և ժամացուցին, յղեցելոցն ընդ Դանի[էլ] պետին:**

80* **Թուղթ մի ևս առ մահտեսի Յակոբջան աղայն՝ մխիթարութիւն վանն մօրն Հանգուցելոյ և ծանուցումն զԴանի[էլ] պետէն, եթէ եկն յայդր ունելով զճուրն օրհնութեան:**

81 **Թուղթ մի ևս առ մելիք պարոն Ալեքիքն. ծանուցումն զԴանի[էլ] պետէն, որ գնաց անդ ի պատճառս օրհնութեան ջրոյն Սրբոյն Յակոբայ և ի ժողովարարութեան մոմոյն:**

82 **Թուղթ մի ևս առ տէր Ղազար աւագ քաղանայն. յիշումն թղթոյն մերոյ առաջնոյ և ծանուցումն զկոնդակէն օրհնութեան**

վան դարձման նշանացն թէՖիլտար Յովհաննիսի որդւոյ և Մունթօյենց պարոն Յովսէփի դստեր, եթէ աւա գրեալ յղեցաք ըստ ինդրոյն ձերոյ յընթեռնու տալ լեկեղեցին: Իսկ թէ դարձեալ են ի նոյնն, զկոնդակն մեր յետս դարձուցիք:

Դանի[էլ] պետն մինչ բերէր զՅուրն օրհնութեան, յղեցաք ընդ նմա և զկոնդակն մոմի, Հանդերձ Գ. (3) լիտր մումով: Ուրեմն զմումն ժողովեալ յանձնեսցիք նմա, որ փութով վերադարձցի առ մեզ:

ՍիաՀի մի ետուք Դանի[էլ] պետին, վանն որոյ զի նմա գրեցեալնն Հոգասցիք: Մեր ճորտ Բաբայի թամասուկն յղեցաք, ուրեմն առցիք զդրամն:

Ողջոյն պարոն Ստեփաննոսին Տեր-Շմաւոնեան:

Գրեցան յամսոյս ի ԻԲ. (22):

83 1793 թ. 9 փետրուար - Թուղթ մխիթարութեան ի Ջուղայ, ի պատասխանի բազմակնիք թղթոյ Համայն բնակչացն, որք գանգատ էին գրեալ զառաջնորդ Յակոբ վարդապետէն վանն չարաչար անկարգութեանց նորա և վանն փախչելոյն ի Բասրայ⁸⁰:
ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1869-72

1793 թ., մարտ

84 1793 թ., 4 մարտի - Թուղթ ի Մեծն Պօլիս առ մահտեսի Կարապետն Պապայեան. մխիթարութիւն վանն մահտեսն որդւոյն և պատասխանի թղթոյն⁸¹:

85 1793 թ., մարտ - Թուղթ ի վերայ Թփֆլիզու վանն աղջկան միոյ նշանեցելոյ և դարձեալ վանն չհասութեանն բաժանեցե-

80 նման ևս երկու նամակ է գրվել, որոնցից մեկն ուղարկվել է Բաղդադ, մյուսը՝ Թավրիզ (ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1872):

81 Ծնունդով Ագուլիսից մահտեսի Կարապետ Պապայանը Ղուկաս Կարնեցու օրոք աչքի է ընկել իր բարեգործությամբ, որի մասին է վկայում Ս. Էջմիածնի ներկագիր արձանագրություններից մեկը, որը մեզ չի հասել: Արձանագրության համաձայն՝ 1786 թ. Մայր տանարի գմբեթակիր մույթերից մեկի նորոգումն իրականացվել է մահտեսի Կարապետ Պապայանի միջոցներով՝ իր, կնոջ՝ մահտեսի Եղիսաբեթի, որդու՝ մահտեսի Հայրապետի հիշատակին: Վկայություններից մեկն էլ վերաբերում է Մայր Աթոռի ջրային պաշարների ապահովման նպատակով՝ դեռևս Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի (1655-1680 թթ.) օրոք կառուցված ֆանֆանի նորոգմանը (1784 թ.), որը դարձյալ իրագործվել է ագուլիսցի մահտեսի Կարապետի մեկենասությամբ՝ իր, կնոջ ու Հայրապետ որդու հիշատակին (արձանագրությունների վերջին հրատարակությունը տե՛ս Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 79-80, արձ. 57, էջ 81, արձ. 59):

Առավել ուշագրավ է մահտեսի Կարապետի անվան հիշատակությունը մի հնատիպ Ավետարանի՝ 1798 թ. 4. Պոլսում պատրաստված արձաթե կրկնակազմի Ա. փեղկի արձանագրության մեջ, համաձայն որի՝ Ավետարանի կրկնակազմը պատրաստվել է մահտեսի Կարապետ Պապայանի նախաձեռնությամբ և հոգաժողովում Անթառամ անունով հարսի և արդեն հանգուցյալ որդու՝ մահտեսի Հայրապետի հիշատակին՝ ձեռամբ նվիրակ Գալուստ և Աբրահամ վարդապետների (Ա. Մալխասյան, Սուրբ Էջմիածնի մետաղե կրկնակազմերը, Ս. Էջմիածին, 2011, էջ 13):

լոյ, որպէս զի այլ ոք օրինաւորաբար առնուցու ի կնութիւն, առանց խտրելոյ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1874

86 1793 թ., 4 մարտի - Թուղթ ի Պօլիս առ Մասեհեանս պարոն Եսային. յիշումն վաղագոյն գրեալ թղթոյն մերոյ յաղագս Նարեկացն ի նմանէ յղեցելոց, և մխիթարութիւն վասն մահուան եղբօր որդւոյն իւրոյ Մասեհին, և այլ ինչ բան:

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1773-74

87 1793 թ., մարտ - Թուղթ ի Թիֆլիզ առ մելիք Աւետիքն ընդ Դանիէլ վարդապետին, որ տանէր զԾուրն աղբեր Սրբոյն Յակոբայ Հայրապետին:

Յորմէ ժամանեցէ թուղթ...

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ՝ գիտասաջիք ստոյգ սիրելիդ մեր և հաւատարիմ որդի Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Չի երկարեցաւ միջոցն յետանալոյ երթևեկութեան թղթոց մերոց, որոյ պատճառ ոչ այլ ինչ է հնարելի, եթէ ոչ առաւելութիւնք Հոգոց, մանաւանդ խարդախութեանց մրրկեալ ժամանակիս, ոյր սակս յերկաքանչիւր կողմանց ևս անձեռնհաս գտանիլ դէպ եղև: Այլ այսուիկ ոչ է մարթ սիրոյն պակասիլ, մինչ ճշմարտութեամբ իցէ հիմնեալ, ուստի թէև ի անյաջողութեանց և կամ յորպիսի առիթից և իցէ, նահանջիցին երևելի հանգամանք նորին, սակայն աներևոյթ էութիւն նորա ոչ խանգարի ըստ Հաստահիմն և դժուարաշարժս գոլոյ:

Ապաքէն այժմ մինչ քրիստոսասէր մեծագոր արքայն վասն վնասակար պատահարաց երկրիդ գրեալ էր մեզ ի բժշկարար ջրոյ հրաշաքօղիս աղբեր Սրբոյն Յակոբայ Հայրապետին յղել ձեռամբ պատուաւորի առն: Եւ մեք պատկան վարկաք ի ձեռն Հոգեծին և սիրելի որդւոյն մերոյ՝ Դանիէլ շնորհապերճ եպիսկոպոսին առաքել, ի նմին զայս սի|465|րանիշ և օրհնածիր թուղթ ևս յատկապէս առ ազնիւ սիրելիդ մեր գրեցաք՝ առ ի յարծարծումն սիրոյ և բարեկամութեան, որով և բարեպաշտութեան քում փոյթ լիցի զսէրդ և զհաւատարմութիւնդ և զորպիսայայտ գիրդ անպակաս առնել ի Սրբոյ Աթոռոյս և ի մէնջ:

Եւ զայլ որպիսութիւն մեր և սրբոյ Գահիս ոչ երկարելով աստէն, թողում ի գրաբերէն իմանալ: Ողջ լեր ի Տերամբ, հանդերձ քոյայնովքն ամենեքումբք. ամէն:

Գրեցաւ ի ՌՄԽԲ. (1793) թուոջս մերում և ի մարտի ամսոյ..., ի լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 464-65

88 1793 թ., 28 մարտի - Թուղթ ի Կարին առ շէշեր վե-
քիլի մաշտեսի Յովաննէան. ՀնորՀակալութիւն վասն Հաւատար-
մութեանն առ Սուրբ Աթոռս և բարերարութեանն առ Նուիրակ
Նիկողայոս վարդապետն⁸²:

ՄՄ ձեռ. Հ^ր 4483, էջ 465-66

1793 թ., ապրիլ

89 1793 թ., 5 ապրիլի - Թուղթ առ արքայն Ափխազաց
Սօլօմօն Երկրորդ. ՀնորՀաւորութիւն թագաւորութեանն և յանձ-
նարարութիւն վասն Մինաս վարդապետին (որ էր սպասաւոր
առաջնորդ Մարտիրոս վարդապետին), մինչ ընդ գործակալ տէր
ՍաՀակին գնայր ի նուիրակութիւն անդանօր եղելոց մերազնէիցն:
Յորմէ ժամանեսցէ Թուղթ...

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան ողջունամատոյց նամակիս ծա-
նուցումն լիցի աստուածասիրութեան քում: Չի ըստ որում բարե-
կարգ օրհնեալ տէրութեանդ ձերոյ ի նախնեաց Հետէ անտի գոն
սէր և խնամք առ խղճալի ազգ մեր, որ ընդ թեւօք պաՀպանու-
թեան ձերոյ են, և առ Սուրբ Աթոռս, և առ գաՀակալս սորին:
Վասն որոյ և մեք՝ ոճնելով առ ձեզ զճշմարիտ բարեկամութիւնս,
ըստ օրինի նորին և Հետեւման, ի լսել մեր զաւետաւոր և ախորժա-
լուր Համբաւ քոյին նորապերճ պսակաւորութեան, ի ժառանգու-
թիւն Աթոռոյ և գաւազանի իշխանութեան նախնեաց քոց առա-
քինեաց, ուրախացաք և ցնծացաք ի սիրտ և ի Հոգի՝ առաքելով ի
վեր զգոՀաբանութիւնս և զարժանաՀայց մաղթանս առ բարձրեալ
Թագաւորն թագաւորաց, տնօրինօղն և կարգադրիչն ամենայն
իշխանութեանց և պետութեանց վասն խաղաղութեան և Հաստա-
տութեան քոյինդ փառազուարճ տէրութեան:

Որք և փութայաք անյապաղ գրել առ յարգութիւն ձեր
զբանս ՀնորՀաւորութեան և ուրախակցութեան, սակայն յաղագս
վրդովմանցն և այլ պատճառաց ընդդիմակայելոյ յարմարական
եկաւ ևս չլինելոյ, նաՀանջեալ գտաք փութոյն մերմէ:

82 Ս. Էջմիածնի միաբան, ծագումով Մուղնիից Նիկողայոս վարդապետը վախճանվել է 1796 թ. և թաղվել Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում: Բավական խոսուն տապանագրի համաձայն՝ Կարինում նվիրակի պաշտոնը զբաղեցնելուց առաջ Նիկողայոս «արհի պան-ժալին» դէտ, այսինքն՝ վերահսկիչ, տեսուչ է եղել հայրենի Մուղնի գյուղում, վարժապետ՝ Ս. Էջմիածնում: ՄՄ Հ^ր 2882 ձեռագրում տեղ գտած Դուկաս Կարնեցու ձեռնադրությունների ցուցակում վկայված է նաև Նիկողայոս վարժապետի անունը, որը 1786 թ. հոկտեմբերի 10-ին ստացել է ծայրագույն վարդապետի գավազան (Գ. Տեր-Վարդանյան (ստորագրված՝ Գևորգ Հունանյան), Ժամանակագրութիւն ձեռնադրութեանց (1759-1798 թթ.), «Էջմիածին», 1980, Ժ., էջ 49): Կարնո նվիրակ Նիկողայոսին և նրա շափածո տապանագիրը նշանավոր մուղնեցիների շարքում հիշատակվում է նաև Սուրեն Սաղումյանը. «Տեր Նիկողայոս արհին պանձալի, ի գեղջէն Մօղնոյ, յորում դէտ լինի, եղեալ վարժապետ Սբ. Էջմիածնի եւ մերք նուիրակ Կարնոյ քաղաքի, կնեցաւ մարմնով յայսմ տապանի, յուսացեալ հոգով առ Տէրն ամենի, յամի Տեառն 1796 եւ մարտի 22» (Ս. Մաղումյան, Աշտարակ, Երևան, 1998, էջ 252, արձ. 9, Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 196, արձ. 382):

Իսկ այժմ մինչ լուսաք զանդորրութենէ կողմանցդ և դէպ եղև առաքել ի տիրախնամ երկիրդ զսիրելի և զհոգևոր որդին մեր՝ Մինաս խոհեմամիտ վարդապետն ընդ Հաւատարիմ գործակալին մերոյ՝ տէր Սահակ Հանճարոննակ աւագ քահանային, ի նուիրակութիւն և յայցելութիւն մերազնեայ ժողովրդեանն, կատարեցաք զդիտեալն մեր, գրելով զայս սիրանիչ և օրհնածիր թուղթ առ բարեպաշտութիւն ձեր, որով շնորհաւորեմք զաստուածապարգև թագաւորութիւնդ, և օրհնեմք զվայելչապատիւ թագաւորեալդ նովաւ, Հանդերձ Համայն քոյայնովք ազնուականօք, և բարեճոխ երկրաւդ և ամենայն բնակչօքն Հնազանդեցելովք ձեզ: Չորս օրհնեսցէ Տէր և ամենայն բարութեամբք ուռճացուցէ, պահեսցէ Հաստատուն զթագաւորութիւնդ, և ի պարագայծ ամն տացէ վայելել պատուականութեան քում: Արասցէ զսուր քո Հատու ի թիկունս թշնամեաց խաչին սրբոյ, և յաջողեսցէ քեզ յամենայն ժամ խաղաղութեամբ և առաքինութեամբ ունիլ զաթոռ և զիշխանութիւն բարեյիշատակ |1876| նախնեացն քոց ի փառս ամենազօր անուան իւրոյ, ի պարծանս խաչին սրբոյ, ի պայծառութիւն եկեղեցոյ, և ի յուրախութիւն մեզ:

Արդ, խնդիր է մեր ի բարեպաշտութենէ քրիստոսապակեալ արքայիդ Սօլամօնի: Նախ զի առաւելութեամբ ծաւալեսցես միշտ զտիրական գութ և զխնամդ ի վերայ մերազնեայ խղճալի ժողովրդեանն, որք յաստուածապաշ երկրի ձերում բնակեալ, ի պաշտպանութիւն զօրաւոր ձեռին ձերոյ են ապաստան:

Երկրորդ՝ զի ըստ շաւղի երջանիկ նախնեացն քոց, ունիցիս զսէր և զբարեկամութիւն առ միաճնաէջ սուրբ Գահն և առ մեզ, սիրանիչ գրովդ մսիթարել զմեզ կամիցիս:

Երրորդ՝ զի զառաքեցեալսդ ի մէնջ զՄինաս վարդապետդ և զտէր Սահակ աւագ քահանայդ քաղցրութեամբ և մարդասիրութեամբ ընկալցիս ի պատիւ Սրբոյ Աթոռոյս և ի սէր մեր:

Չայսոսիկ բարեպաշտօրէն առնելդ ըստ խնդրոյ մերում, արդարև մեծի շնորհակալութեան առիթ է մեզ, որք Հանդերձ մերայնովք կամք և կացցուք աղօթաւորք վանս աստուածաճաստատ տէրութեանդ և յաղագս երկարութեան կենաց և բարեյաջողութեան ձերոյ:

Ողջ լեր Տէրամբ և կարողութեամբ ի Հրճուանս մեր. ամէն:

Գրեցաւ յամի Փրկչին 1793 և յապրիլի ամսոյ Ե. (5), ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին:

Իբր երևելի նշանակ սիրոյ և օրհնութեան մերոյ և շնորհաց Սրբոյ Աթոռոյս ի ձեռն գրաբերացդ առաքեցաք ի սպաս մեծութեանդ զերկու լիտր սպիտակ մում, զմի սանտր սրմայակար ամանով, զմի երեսրբի և զմի ծականց մահրամայ, եղերքն բանաձու

ծաղկեալ: Որք թեև չիցեն վայելուչք, սակայն սիրով Հաճեալ ընկա-
լիցիս ի բարութք յիշատակութեան ունելով զՍուրբ Գաճա:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1875-76

90 1793 թ., ապրիլ - Կոնդակ ժողովարարութեան ի վե-
րայ Հաշտարխանու և կողմանցն վասն Լմայ անապատին, մինչ Բ.
(2) ամօք յառաջ նորին վանաՀայր Յակոբ վարդապետն զՆերսէս
վարդապետ ոմն յղեալ էր անդ, և առաջնորդ Յովսէփ վարդա-
պետն արգելեալ զնա, կոնդակ էր ինդրեալ ի սրբազանէն վասն
նորա, զի ապա կարիցէ ժողովք առնուլ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1876-77

91 1793 թ., 10 ապրիլի - Թուղթ առ Կեսարիոյ առաջ-
նորդ Մատթէոս վարդապետն, ի պատասխանի կրկին թղթոցն
գրեցելոց ընդ ոմանց ուխտաւորաց, և շնորհակալութիւն վասն
յղեալ աջաՀամբուրին:

Յորմէ ճշմարիտ սիրով և Հոգևոր օրհնութեամբ, քրիստոսա-
ձիր ողջունիւ և առատաձաւալ շնորհիւ սրբոյ Իջման տեղոյս նո-
րին, գիտաաջիր իսկապէս սիրելիդ մեր, Հարազատ և օգտաշան
զաւակ Սրբոյ Աթոռոյս՝ Մատթէոս աստուածիմաստ և Հանճարա-
պերճ վարդապետ: Ձի կրկին թուղթք քո, գրեցեալք յայսմ ամի
յոննվարի ի Ժ. (10) և ԺԲ. (12) ժամանեցին առ մեզ ընդ մահտեսի
Աւագ և մահտեսի Թօրոս մեծաՀաւատ ուխտաւորացն ի մարտի
էն և ծանեաք զՀարազատօրէն գրուածսր:

Յառաջնում թղթոջդ գրեալ էիր զտակաւին անՀանգիստ
գոն ձեր ի գաղտամեստ վնասուց և ի նեղութեանց ամբարիշտ
պետաց և անարդար դատաւորաց և այլոց: Ընդ որս ցաւեցաք,
անձամբ անձին առեալ զփորձ՝ մերովքս աստի կրիւք: Ըստ այնմ
զի յիրաւի երբեմն յարտաքուստ Հինից թշնամեաց յայտնի վնասա-
տուութեամբն տառապիմք, և մինչ զերժ գտանիմք յայցանէ, որ-
պէս և այժմ, յառ մեօք եղելոց Հանապազաստու և ագաՀամիտ կե-
ղեքչացն տաժանիմք, ընկալեալ զկատարումն աւաՀական բանի
մարգարէին, թէ խաբեբայք տիրեսցեն ձեզ: Այլ անստերիւր յոյսով
աստուածայնոյ արքայութեանն է մեզ միսիթարութիւն սրտի և
Հոգւոյ, յորոց Հաղորդութենէն մի անմասն արասցէ Քրիստոս
Փրկիչն մեր զձեզ և զմեզ, և զամենայն ազգ մեր տաժանակիր, և
այն բաւ է մեզ, թող մեռեալքն թաղեսցեն զմեռեալս իւրեանց:

Ապա ծանուցեալ էիր զնուիրակ Ներսէս խոհեմամիտ վար-
դապետի գալն յայդր, և զտեղեկանալդ ի նմանէ զբարեկարգու-
թեանց և զնորոգ շինապայծառութեանց |368թ| Սրբոյ ԳաՀիս և
զուրախանալդ առ այն: Գիտեմք, թէ արդարև ուրախանաս ըստ
Հարազատ որդիութեանդ և բարեջանութեամբդ, յորս ի բնէ անտի
Հաստարմատ կաս, և ի ցոյց դոյն բարեշնորհութեանց, զառաքե-
ցեալն ի Սրբոյ Աթոռոյս մեծաւ սիրով և յարգանօք ընդունիս, որ-

պէս և նարդենիս զիշեալ Ներսէս վարդապետ նուիրակն շնորհու-
նակ, որ զիսալիբ գոհաբանութիւնս գրեալ էր վասն յոգնատեսակ
բարելաութեանցդ, որոց աղագաւ և մէք եղաք շնորհակալ:

Եւ քանզի ասորժես գիտել զպայծառազարդութեանց Սրբոյ
Գահիս, ահա զնորագոյնսն ևս ազդ արասցուք յառաւելապատիկ
ուրախութիւն սիրեցելոյդ: Վասն զի մինչ զքանզի կամարս կցոր-
դեցաք ի ձմռան սեղանատունն ի բարի յիշատակ ազնիւ սիրելոյն
մերոյ՝ մահտեսի Յովաննէս ամիրային, դէպ եղև և ի վերայ նորա
ևս զամբարանոց շինել, և յետ կատարման նորա, մեծ ամբարա-
նոցն, որ կայր ի վերայ Հնոյ մեծ մասին սեղանատանն, որովհետև
խախտեալ և կասկածելի էր, քակել ետուք զայն և նախ զնոյն Հին
մասն սեղանատանն, որ մթին էր և անշուք, յարտաքուստ և ի ներ-
քուստ վայելչացուցաք նորոգութեամբ որմոցն և ընդարձակու-
թեամբ լուսամտիցն: Եւ ապա ի վերայ շինեցուցաք զվեց վերնա-
յարկս՝ դէմքն դէպ ի մէջ Ղազարապատին, որով առաւել ևս վա-
յելչացաւ Ղազարապատն, նմանակցութեամբ չորից կողմանցն: Եւ
յաւելան տեղիք Հանգստեան եկաւոր Հիւրոցն:

Եւ ի վերայ այսր ամենայնի, Հիւսիսային կողման սենեակքն
միաբանից Սրբոց (369ա) Աթոռոյս յոյժ փոքրուք էին և վերնաՀարկ
ևս չունէին: Վասն որոյ ինդորոյ բարեպաշտից ոմանց զլետին որմն
քակեալ և տեղի յաւելեալ խուցսն, նոր որմն դնել տամք: Եւ ակն
ունիմք թէ կատարեցի, զվերնաՀարկս ևս շինել տացուք յապահո-
վութիւն միաբանացն յամառան տապոյն: Իսկ յաղագս օրհնեալ
ուխտաւորացն յիշեցելոց, որ գրեալ էիր, սիրով ընկալաք և ըստ
արժանեացն շահել կամեցաք, սակայն եթէ մարմնաւորին լաւ ևս
չշահեցան, յինքեանց իմասցին, որք յաղուհացից աւուրքս Հանդի-
պեցան (մինչ մէք ևս փոքր մի Հիւանդ էաք) և փութով դառնալ
ջանացին: Բայց ըստ Հոգևորին յուսամ, թէ շահեալք իցեն օրհնու-
թեամբ և շնորհօք սրբոյ Իջման տեղոյն և Հրաշալի սրբութեանցն,
որովք և յարաժամ լիցին զօրացեալք և պահպանեցեալք:

Եւ զոր յերևելի նշանակ արդեանց ճշմարիտ սիրոյդ յղեալ էիր
զվեցեակ մարի ոսկիս, ընկալաք շնորհակալութեամբ և օրհնեցաք
զարժանիդ օրհնութեանց: Ընկալցի Տէր ի գանձարան բարեհա-
ճութեան իւրոյ, և զփոխարենն բազմապատկապէս Հատուցէ սի-
րելոյդ ըստ Հոգւոյ և ըստ մարմնոյ:

Իսկ երկրորդ թղթովդ ծանուցեալ էիր զառ քեզ ժամանելն ի
սեպտեմբերի ելն գրեցեալ թղթոյն մերոյ վասն փառակեցի պատ-
ժապատեալ Սահակին, և զքո իմանալն այնու զորպիսութիւն նո-
րին, և գրելն առ նա զբանս զգաստանալոյ: Ոյր աղագաւ ևս շնոր-
հակալ եմք զբարեմտութենէ քումմէ: Բայց նա, որ կրկնակրկին յա-
մառ յանդգնութեամբ իւրովք զբաղցրութիւն մեր ի դառնութիւն
փոխարկեաց առ ինքն, թերևս ի միտս եկեալ ծանիցէ զթէութիւն

Թշուառութեան իւրոյ և փոյթ կալցի ազատութեան Հոգևոյն, որով և մեզ դիւրութիւն լիցի: Բաւ է խոհական մտաց սիրելոյդ:

Ողջ լեր ի Տէր, Հանդերձ Համայն առ քեւ եղելովքն: Գրեցաւ ի ՌՄԽԲ. (1793) Թուոջս և ի յապրիլի ԺԱ. (11), ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

Սիրով և օրհնութեամբ ողջոյն տամք սիրելի և Հոգևոր որդևոց մերոց և քոյոց և Հարազատ զաւակաց Սրբոյ Աթոռոյս՝ Ստեփաննոս և Կարապետ շնորհապերճ վարդապետացն և այլ սիրախումբ միաբանից ՀիաՀրաշ սրբոյ վանացդ, որք ամենեքեան լիցին յանձնեցեալք ի պահպանութիւն Տեառն ամենակալի. ամէն⁸³:

ՄՄ ձեռ. Հ^Պ 4481, էջ 467-69 (368ա-9ա)

Հնորակալութեան նամակներ նուիրատուներ թամանցի մահտեսի Յարութիւնին, Դումրափուի երեք գանձապետներին, Դալաթիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու գանձապետներին, բայբերդցի մահտեսի Անանիային (Կ. Պօլիս), ոմն Մարտիրոսի (Կ. Պօլիս), մեստճի վարպետներին (Կ. Պօլիս), Մաղարայու Ս. Թէոդորոս եկեղեցու գանձապետ, մահտեսի Թօրոսին:

Նամակները գրուել են 1793 թ. ապրիլ ամսին:

ՄՄ ձեռ. Հ^Պ 4449, էջ 40բ-1բ

92 **1793 թ. ապրիլ - Կոնդակ ի վերայ երկրին Վրաց վանս Ալիսցիսայ եղելոց խղճալի մերայնոցն պարտուց, զի օգնեացեն:**

Յորմէ ժամանեցէ թուրթ...

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ ծանուցումն լիցի սիրելի և Հոգևոր որդևոցդ մերոց և Հարազատ զաւակացդ Սրբոյ Աթոռոյս Էջմիածին: Չի որովհետև ըստ սրբազան Առաքելոյն Պօղոսի Հաւատացեալքս և ճշմարիտ երկրպագուքս Քրիստոսի Աստուծոյ, եմք մարմինք նորա և անդամք յանդամոց նորա, և եմք մի մարմին՝ Հաստատեալք Հաւատով ի միմիայն կենդանարար գլուխն մեր Քրիստոս, վանս որոյ ըստ նորին վեհմաստ Առաքելոյ Հոգեշունչ խրատուց, պարտիմք անդամքս Հոգևոր զիրերաց Հանապազ, զմիմիանց բեռն բառնալ, ընդ վշտանալ միոյն, վշտանալ և ընդ փառաւորիլն ինդալ, և այսպէս կարեկցութեամբ օժանդակել միմիանց: Չի որպէս անդամք մարմնոց մերոց զմիմիանս ինամելով մանն ի յողջութեան, նոյնպէս պարտիմք անդամքս Հոգևորք օգնելով և ինամարկելով իրերաց մնալ յամբողջութեան և ի զուար-

83 Կեսարիայի առաջնորդ Մատթեոս վարդապետին ուղղված 1793 թ. պատասխան նամակում Դուկաս կաթողիկոսը մանրամասն ներկայացնում է 1790-1791 թթ. ձմեռային սեղանատան կցակառույցների և վերնահարկում ամբարանոցի կառուցման աշխատանքները, որոնց նյութապես օժանդակել է նաև մահտեսի Հովհաննես ամիրա Կեսարացին: Նամակում հիշատակված աշխատանքների ուղղակի վկայությունն են նաև համապատասխան վիմագրերը, որոնցից մեկը ներկայիս «Ռուբեն Սևակ» թանգարանի երրորդ սրահի հյուսիսային սրահում է, մյուսը՝ Դազարապատի երկրորդ հարկում, ներփոստ: Այս վերջինը վերաբերում է ամբարանոցի կառուցմանը, որն իրագործվել է մահտեսի Նիկողայոս Թոխաթցու մեկենասությամբ (Ս. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 82-83, արձ. 63-64):

ճուլթեան: Որով և կատարել զաստուածայինն պատուիրանն, թէ սիրեսցես զընկերքո իբրև զանձնքո:

Արդ, սիրելի և Հոգևոր որդիք մեր, ցուցից ձեզ այժմ, թէ ոչք են ի մէնջ այժմ վշտաւորք և ողորմելիք, կարօտեալք օգնութեան ձերում, զի և դուք օժանդակելով նոցա և զբեռն ծանրութեան բառնալով, արժանաւորիցիք վարձուց բարեաց Վաստուծոյ: Վշտաւորք են այժմ և խղճալիք ի յԱխցիսայ եղեալ մերազնեայ միաբնադաւան ուղղափառ քանի տուն ժողովուրդն, որք |1775| բազմիցս նեղին և վնասին ի բազմութենէ Հերձուացօղ երկաբնակացն: Եւ յանցեալ տարին ևս ՍաՀակ չէրէցն թելադրութեամբ սատանայի Հեստեալ ի ճշմարտութենէ, ուրացեալ էր զուղղափառ դաւանութիւն սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց և ջանայր յափշտակել զեկեղեցին ի ձեռաց նոցա, և զնոսին ևս դարձուցանել:

Բայց իմացեալ մեր զաղէտ խղճալի ժողովրդեանն զչիք էրէցն զայն կապանօք ածել ետուք ի Սուրբ Աթոռս և խայտառակեալ ըստ արժանոյն ի մետասան ամիսս ի բանտի պաՀեցաք և զեկեղեցին թողուլ ետուք ի ձեռս մերայնոցն:

Ապա մինչ մովպետութեանն Ախցիսայու փոփոխութիւն եղև, չարայոյզ երկրաբնակքն անկեալ էին ի դուռն նոր մովպետին վասն տանիլ տալոյ աստի զչէրէցն, և նա մարդ էր յղեալ առ մեզ և թուղթ գրեալ, և մէք առ Հարկին պաՀանջելոյ ետուք զչէրէցն, այլ չև ևս գնացեալ զերկուց աւուրց ճանապարհ ի Ժամանելոյ դատաստանի Տեառն, փչեալ էր զդառնացեալ Հոգին, և այն՝ մերձակայութեամբ այլազգեաց: Որոյ չքացելոյ պատճառան թէև յոչ սակաւ դրամոց ելաք, սակայն բարձաւ չար գայթակղեցուցիչն ի միջոյ, գոհութիւն Վաստուծոյ:

Այլ յայնժամ ի ըել Ախցիսայու չարափառացն զսատակումն չէրիցուն ՍաՀակայ, Հալաճանս էին յարուցեալ ի վերայ մերայնոցն ուղղափառաց և տուգանս առնուլ տուեալ: Եւ խղճալիքն այնոքիկ աղքատ և պակասաւոր գորով ի տալն զտուգանս, անկեալ են ի ներքոյ մէկ Հազար և Հարիւր զուռուշ պարտուց, և ոչ ոնելով Հատուցանել զպարտսն, և օր ըստ օրէ ծանրանալով տոկոսեացն, այժմ աղերսանս էին գրեալ առ մեզ և յղեալ ձեռամբ տէր Յովաննէս քաՀանային և երէցփոխ պարոն ՅօՀաննին, խնդրելով զՀնար իմն առնել ազատութեան իւրեանց պարտուցն: Եւ մէք ի գուլթ շարժեալ առ ողորմելութիւն նոցա, փոյթ կալաք օգնութիւն առնել իսկ զի մեր դրամ խարճելն վասն նոցա անցեալ էր ըստ չափ, և կրկնակրկին ծախս առնելն Սրբոյ Աթոռոյս չունէր պատշաճողութիւն, այլ բանն կարօտի օգնութեան օրհնեալ ազգիդ մերոյ:

Վասն որոյ զայս օրհնութեան նամակ գրեալ ի վերայ բարեպաշտութեան ձերոյ, ետուք ի ձեռն տէր Յովաննէս քաՀանային և երէցփոխ պարոն ՅօՀաննին, գալ այսու առ ձեզ, և գտանել զտուրս ողորմութեան:

Ուրեմն սիրելի և հոգևոր որդիք մեր ի փառս Քրիստոսի և ի սէր ուղղափառ Հաւատոյ սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց և ի պատիւ երախտեաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, մի Հարեանցի առ դոսա իբրև զՀասարակ ժողովարարս Համարելով, այլ առաջնորդքդ և քահանայքդ և ժողովուրդքդ ծանուցեալ որպէսն իրին, բարւոք իմն ակնարկեսջիք ի դոսա, և լիաձեռն ողորմութիւնս շնորհեսջիք առանց ինայելոյ, զի տարեալ զպարտս սակաւաւոր խղճալի ժողովրդեանն այնմիկ Հատուցին, և զերծցին ի ծանրութենէ տոկոսեացն և ի վշտաւորութենէ: Եւ որպէս դուք ձեռնտու և օգնական լինիցիք առ Համազգիս ձեր ի նեղութեան իւրեանց, Քրիստոս Փրկիչն մեր ևս ձեզ օգնական և պաշտպան և ինամարկու լինիցի աստ և ի Հանդերձելումն, և շնորհք Սրբոյ Աթոռոյս և օրհնութիւն Սրբոյ Լուսաւորչին և մեր եղիցի ընդ ձեզ յարաժամ ամէն:

Գրեցաւ ի ՌՄԽԲ. (1793) թուոյս և ի յապրիլի..., ի լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1774-75

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 450ա

93 **Ի ԹԻՓԻԿ** - Թուղթ մի առ արքայն Ափխազաց Սօլումօն. շնորհաւորութիւն թագաւորութեանն և յանձնարարութիւն վանն Մի[նաս] պետին՝ սպասաւորին Մարտիրոս պետին, որ գնայր անդ ընդ տէր Սահակին ի նուիրակութիւն: Տէս զ1875 Համարն մեծ տետրոց:

94 Թուղթ մի առ տէր Ղազարն, եթէ թուղթդ ընդ թղթոյն Մարտիրոս պետի մեզ Հասին: Ահա զպատասխանին գրեալ յղեցաք առ քեզ ընդ Դա[նիէլ] պետին, Հանդերձ Ափխազաց արքայի թղթովն և ընծայիւքն: Արդ, եթէ ցարդ եկեալ իցէ, տացես իւրն, և թէ ոչ, յղեսցես առ նա, բայց արքայի թուղթն թարգմանել տացես յայդր տէր Դաւթին և ապա յղեսցես առ նա ի Գօրի: Չոր ինչ գրեալ էիք զհիւսանոցն տեղոյդ, իմացաք, թող մնասցեն յայդր, բերել տալոց եմք ի Խօյու, բայց զայն Բ. (2) թումանն առցես Հարկիւ, որպէս յառաջ ևս եմք գրեալ:

95 Թուղթ մի ևս առ տեղոյն առաջնորդ Մարտիրոս պետն, եթէ թուղթդ մեզ էՀաս, իմացաք զգրեալդ. ահա վասն Մէփէ Սօլումօնին, Բ. (2) լիտր սպիտակ մոմ և ծնկան և երեսի փէշկիրք և Ա. (1) սանտր: Իսկ վանն Դաւթին Ա. (1) լիտր սպիտակ մոմ, զորս յղեցաք ընդ Դանի[էլ] պետին՝ Հասուցանել ձեզ: Բայց գրեցաք տէր Ղազարին, որ զթուղթն արքային Սօլումօնի թարգմանեալ տացէ տէր Դաւթին և ապա յղեսցէ քեզ՝ ի դնել ի թուղթն արքային և փակել զգմուռն, որ է ի վերայ նորին: Ծանուցումն

զԴանհիէլ պետէն, եթէ եկն յայդր վանն Սուրբ Յակոբայ օրհնութեան գրոյն, զոր ինդրեալ էր արքայն:

1450թ՝ Չտանց քիրայցն եթէ յղեսջիբ առ մեզ դրամն ընդ Դանհի[էլ] պետին, բայց մնասցէ այն կից տեղին, զոր կամիք առնուլ: Ըստ որում այժմ ժամանակն չէ: Մինչ եկեսցէ ի Հաշտարխանու մեր ճորտ վրացի Բաբայն, առջիբ զդրամն զտալացուն մեր, որպէս յառաջ ևս գրեալ եմք ձեզ:

Գրեցան յամնոյս [ապրիլի] ի Ե. (5):

96 Թուղթ մի ի դղեակն Շուշոյ առ տեղոյ քաւանայսն և իշխանսն վանն գերի անկեալ որդւոցն Բաղտասար անուն առն Աստապատցոյ:

Գր[եցաւ] յամնոյս ի Ը. (8):

97 Ի Զմիւռին - Թուղթ մի առ տեղոյն առաջնորդ և նուիրակ Իսահակ պետն վանն Մարտիրոսի աներձագ Յակոբին, եթէ տեղոյս գեղանակն չընկալաւ, վանն որոյ դարձաւ յետս: Եւ թէ ԲՃ. (200) ղուռուշ տացես մեր Մարտիրոսին ի գործածումն պակասութեանցն, բայց թէ ևս ինդրիցէ, մի՛ տացես և ի նմանէ թուղթ առեալ վանն տուեցելոցդ, յղեսցես մեզ:

Ողջոյն Աստուածատուր աղային և որդւոցն⁸⁴:

98 Ի Թօխաթ - Թուղթ մի առ տեղոյն նուիրակ Ներսէս պետն ի դարձ թղթոյն ի Կարմիր գեղջէն գրեցելոյ: Յիշումն առաջին թղթոցն մերոց և ղաւզին, եթէ յուսամք ցարդ Հասեալ իցեն: Ծանուցումն զուխտաւորացն եկելոց՝ զմահտեսի Աւագէն և զընկերացն, եթէ սիրով ընկալաք զնոսա ըստ գրեցելոյդ: Բայց տէր Բաբօղլի մահտեսի Պօղոսն և ընկերքն տակաւին չեկին, մինչ եկեսցեն, ի Հարկէ զնոսա ևս ընդունիլոց եմք սիրով:

Վանն սրբալոյս մեռոնին, եթէ յառաջ քան զայս յղեալ եմք Գ. (3) Հօխայ և կէս՝ ձե[ռամբ] թօխաթցի ուխտաւոր մահտեսի Յով[հաննիսի] առ վէքիլ մահտեսի Յարովիւնին Հասուցանել քեզ: Այժմ ևս յղեցաք ըստ ինդրոյդ Բ. (2) Հօխայ և կէս և Ծ. (50) դրամ ընդ ուխտաւոր մահտեսի Աւագին Հասուցանել քեզ: Այժմ ևս յղեցաք ըստ ինդրոյդ Բ. (2) Հօխայ և կէս և Ծ. (50) դրամ ընդ ուխտաւորացն մահտեսի Աւագին Հասուցանել քեզ: Իսկ դու տա-

⁸⁴ Զմյոտնիայի առաջնորդների գավազանագրում Ա. Ալպոյանյանը Իսահակ (նաև՝ Սահակ) Բ. Ահագին պետի առաջնորդության տարիները սահմանում է 1790-1793 թթ. միջակայքում (Ա. Ալպոյանյան, Իզմիրի հայոց առաջնորդները, «Դափնի», 1922, Հ^տ 9, էջ 282): Պատմաբան Ա. Խառատյանը, հատկանշելով Զմյոտնիայի տերունի թեմի առաջնորդներին և, հետևելով Դուկաս Կարնեցու՝ Հովսեփ Արղոյանին հղած նամակներից մեկին, վերահաստատում է, որ Իսահակը Զմյոտնիա է գնացել 1791-ին, վախճանվել՝ 1793 թ., երբ Զմյոտնիայի առաջնորդն ու նվիրակն էր (Ա. Խառատյան, Զմյոտնիայի տերունի թեմի առաջնորդները, ՊԲՀ, 2016, Հ^տ 2, էջ 24-25): Իսահակ վարդապետին հղված 1793 թ. նամակների մասին տես ս. Վավ. 59, 290, մահվան մասին՝ վավ. 295, 297-299, 439, 483:

րեալ էս ընդ քեզ Ը. (8) Լօխայ ԱՃԾ. (150) դրամ, որ եղև բոլորից գումարն ԺԳ. (14) Լօխայ և կէս:

Արդ, գրես թէ առաջինքն իբր թէ ոչ իցեն տուեալ ըստ բաւականին, բայց մէք նախքան զբաշն Հնոյն առ մեզ, զնորն Հանեմք ի Սրբոյ Աթոռոյս ի նուիրակութիւն, որպէս լաւ գիտես, ընդէ՛ր պակասութիւն կրեն ժողովուրդքն և այլն:

Ծանուցումն զշնուածոցն Սրբոյ Աթոռոյս զՂազարապատէն և ձեռնարկեալ Հիւսիսային օտայիցն միաբանից: Եւ թէ մահտեսի Աւագն ոչ եբեր ընդ իւրն զսրբալոյս մեռնն վասն ծանրութեանն (թէպէտ յառաջ խոստացաւ բերել), բայց զկնի աւուրց յղեց եմք առ Հայրապետն Հասուցանել ի Թօխաթ առ մահտեսի Յարութիւնն:

Ողջոյն քահանայից, իշխանաց և առ Հասարակ ժողովրդոցն:

99 **Ի Կեսարիա** - Թուղթ մի առ տեղւոյն առաջնորդ Մատթէոս պետն, ի պատասխանի երկուց թղթոցն ընդ ուխտաւորաց ոմանց գրեցելոց: Եւ շնորհակալութիւն վասն յղեալ աջաւամբուրին (որ է Չ. (6) մարի ոսկի): Տէ՛ս զ467 Համարն փոքր տետերց:

Հնորհակալութեան նամակներ նուիրատուներ Բաշբաղիրկեան մահտեսի Յովհան ամիրային և մահտեսի Խըտրին (երկուսն էլ Կեսարիայից), որոնք ուղարկել էին երբ ֆնդուղ ոսկի «աջաւամբուրին» եւ Ժ. (10) զուռուշ քառանցին Վարդէնի կնոջ (450բ, Դ-Ե):

Նամակները գրուել են ապրիլի 11-ին:

100 **Ի Թիֆլիզ** - Կոնդակ մի ժողովրդարարութեան ի վերայ Թիֆլիզու և շրջակայից նորին վասն մերազնեիցն (որք ի յԱխլցիայ), յորում՝ և ծանուցումն զչիք Սահակէն սատակեցելոյ ընդ տէր Յովհաննէս քահանային և երիցփոխան պարոն Յօհաննիս ձերունւոյ:

101 Թուղթ մի առ տեղւոյն առաջ[նորդ] Մարտիրոս պետն և գոր[ծակալ] տէր Ղազարն. յանձնարարութիւն վասն վերոյ յիշեալ արանցն ժողովարարաց, որպէսզի օգնեսցեն նոցա ծանուցմամբ ժողովրդեանն զխեղճութիւնս նոցին:

Գրեցան յամնոյս ի ԺԳ. (13):

102 **Ի Հուշի** - Թուղթ մի առ սրբոյն Սաղիմայ նուիրակ Պօղոս պետն, եթէ տակաւին չէՀաս մեզ ամանաթն քոյ (զոր տուեալ էս Թօմաս պետին ի Հասուցանել մեզ), նոյնպէս և ոչ Հասին մեզ թուղթքն քոյ (որք են առ նախկին նուիրակ Յարութիւն պետն): Վեղար և այլ ինչ էիր ինդրեալ, աստ Հազուագիւտք են, բայց Բ. (2) վեղար յղեցաք ի ձեռն սպասաւորին քոյ՝ Մովսէսին, զորս վայելելով յիշեսցես զմեզ:

Գր[եցաւ] յամ[նոյս] ի ԺԹ. (19):

Թուղթքի Գանձակ - Թուղթ մի առ մէլիք Մէճլումն. ծանուցումն զպաշարանեալ թղթոցն Հաւամիր աղայի (որք առ ինքն և առ մէլիք Ապովն), եթէ ահա յղեցաք առ մեր գանձապետ պարոն Վարդազարն՝ Հասուցանել քեզ:

104* **Թուղթ մի** ևս առ մեր գանձապետ պարոն Վարդազարն, եթէ թուղթդ մեզ ժամանեց, իմացաք զգրեալսդ վասն Բ. (2) լիտր և Խ. (40) ստիլ մոմատուղացն, եթէ մինչ յղեսցես մեզ ընդ գանձանակի արդեանց մոմին, յորժամ ընդ կոնդակին Հասարակութեան զթուղթս օրհնութեան գրեցուցուք առ դոսա ի միամտութիւն: Այժմ պատշաճ չտեսաք զմի օրհնութեան թուղթս գրեալ առ դոսա: Այլև՝ զանուն Խ. (40) ստիլի տուողին ևս ծանուցես, իսկ վասն պաշարանեալ թղթոցն եղելոցն ի թուղթս իւր Հրամայէ տալ մէլիք Մէճլումին: Ողջոյն տանուաւոր պարոն Աւետին:

Գրեցան յամլտոյս] ի ԻԵ. (25):

105 **Ի Կարս** - Թուղթ մի առ Գէորք աղայն ի դարձ թղթոյն յամնոյս Ժ. (10) գրեցելոյ վասն ԵՃԵ. (505) Հատ թաւանի տախտակացն օրհնութիւն և շորհակալութիւն, եթէ Հասին մեզ: Եւ որովհետև ուրախացեալ էր ի շինումն օտայիցն միաբանից և գրեալ էր այլևս յղել, եթէ պիտանասցի, վասն որոյ ինդդէ յղել վերստին ԳՃ. (300) Հատ թաւանի տախտակք և Ծ. (50) Հատ դռնացու:

Գր[եցաւ] յամնոյս ԻԶ. (26):

Նամակ պարոն Ստեփաննոս Տեր-Հմաննեանին (Թիֆլիս)՝ Յովսէփ վարդապետի սպասաւոր Գրիգոր պետի առնչութեամբ, քանի որ իմանալով նրանից նամակ չտանալու պատճառը, նախաձեռնել է գրուածին ուղարկել պարոն Տեր-Հմաննեանի միջոցով: Այնուհետ տեղեկացում է պարոն Աղալոյի ձեռամբ ստացուած գրութիւնների, Աւետիք վարդապետի՝ Բաքուից դուրս գալու մասին, ինչպէս նաեւ ողջոյնի խոսք է յղում տէր Գրիգորին, պարոն Հմաննին և եղբօրն՝ Աբելին, Արղութեանց Սօլօմօնին և իր որդի Սօլօմօնին (451ա, Ա./3): Թիֆլիսի առաջնորդ Մարտիրոս վարդապետին և գործակալ տէր Ղազարին Հասցեագրուած նամակում յանձնարարում է վերահասու լինել Ախալցխայից Հաւաքուող դրամական միջոցներին և ծանուցել իրեն այդ մասին: Տեղեկութիւն Հաղբատի Դաւիթ պետի⁸⁵ և Գօրիի տէր Սաշակի՝ վեհափառ Հայրապետին յղուած թղթերի մասին: Գրուած է նաեւ, որ վախճանուած յունաց նոսրակի 100 թումանը, եթէ կամենայ թագաւորը (Հերակլ Բ.-ն) ուղարկել Մայր Աթոռ, ինքը կօժանդակի (Բ./2): Միսիթարական նամակ խաղախորդ Հանգուցեալ Յարութիւնի կենակից Խամիբերուանին, ուր շոշափում են բացառապէս դրամական Հարցեր, մասնաւոր

⁸⁵ Հաղբատականի առաջնորդ Դավիթ վարդապետը նույն Թաւրղարով-Խեղողինեանցն է, որն առաջնորդել է 1784-1796 թթ.՝ հաջորդելով Իսրայել Ջալալյանցին (Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ. հարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, 1963, էջ 276):

րապէս՝ գործակալ Յակոբ պետի կողմից վերիլ պարոն Ալանին յանձնած Լ. (30) թումանի թամասուկի, եւս՝ Ժ. (10) թուման եւ ԳԻ. (3000) դիան դրամի, Մայր Աթոռի ճորտից Ժ. (10) թուման իբրեւ Հոգեբաժին վերցնելու, զանազան «վեճեղէն» եւ «փնչքն» նոյն Ալանին յանձնելու մասին (Գ.): Նամակ Հաղբատի առաջնորդ Դաւիթ պետին՝ Նիկողայոս պետին ուղղուած պատասխան գրութեան առթիւ, ի մասնաւորի՝ «վան ԱՃ. (100) Հատ եղանացն» (Դ.):

106 **Թուղթ մի** ևս առ գօրեցի տէր Սահակն ի դարձ թղթոցն. յիշումն թղթոցն և ընծայիցն իմէրէթու արքային Սօլամօնի (որք յղեցան յապ[րիլ] ամնոյս Ե. (5)): **Շնորհակալութիւն վանս Ժ. (10)** զոյգ սպիտակ ջորապիցն, յղեցելոցն ձեռամբ Դեմետրէ անուն անն Գօրեցոյ: Իսկ վանս յիմէրէթու [451բ] եկեալ արդեանցն առաջնոյ, եթէ Հասուցես Մարտիրոս պետին և զորքանութիւնն մեզ ծանուցես:

Գրեցան յամ[ոյս] ի ԻԷ. (27):

107 **Ի Հաշտարիանս** - Կոնդակ մի ժողովարարութեան ի վերայ Հաշտարիանու և կողմանցն վանս Լմայ անապատին, զոր գրեալ յղեցաւ առ Յովսէփ պետն ըստ ինդրոյն տալ նոյն անապատի ժողովարար Ներսէս պետին: Ըստ որում թարց կոնդակի էր գնացեալ և Յով[սէփ] պետն ոչ թողոյր առնել զժողովս: **Տէ՛ս** զ1876 Հա[մարն] մեծ տե[տերց]՝⁸⁶:

108 **Թուղթ մի** ևս ի Ռուսէթ առ նուիրակ և առաջնորդ Յովսէփ պետն ի դարձ թղթոցն: **Տէ՛ս** զ1984 Համարն մեծ տե[տերց]:

109 **Թուղթ մի** ևս առ Գրիգոր պետն՝ սպասաւորն Յովսէփ պետի, վանս Հասուցելոցն և Հասանելեացն և շնորհակալութիւն վանս Բ. (2) Հատ քրքուացուացն: **Տէ՛ս** զ471 Համարն փոքր տե[տերց]:

Գրեցան յամնոյս ի ԻԷ. (27):

110 **Ի Խօյ** - **Թուղթ մի** առ Սրբոյ Աթոռոյս նուիրակ Սողոմօն պետն, վանս թղթոյն ճոթեղինացն և արդեանցն ընդ պարոն Ջօրհապին յղեցելոց, եթէ Հասին մեզ ամբողջապէս և բոլոր Հասուցեալքդ եղէն ԱՃ. (100) թուման, քանզի ԽԷ. (47) [թուման] ԴԻ. (4000) և Ժ. (10) շահին ընդ Ջօրհապին էիր յղեալ, որ ընդ իրաց գնոցն եղև ուցսուն թուման և Ի. (20) թուման ևս ի Բայազտոյ ընկալաք, որ ընդ ութսունին եղև ԱՃ. (100) թումանն: Վանս որոյ և ահա զԱՃ. (100) թումանի դաւն գրեալ յղեցաք ընդ թղթոյս: Նոյնպէս և թուղթ ի յանձնարարական առ Հաղբակու

⁸⁶ Ռուսահայոց առաջնորդ և նվիրակ Հովսէփ վրդ. Արղուբյանին հասցեագրված նամակի ամբողջական պատճենը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 608-614:

Սլաւազ բեկն գրեցաք ըստ ինդրոյդ, զոր ի գնալն քոյ տարցես ընդ քեզ:

Հտորհակալութիւն վասն իրացն յղեցելոց, որք էին Դ (4) Թարվիզի նուշ և Դ (4) Թարվիզի չամիչ:

Իսկ վասն սրբալոյս մեռոնին, եթէ աւազ գերկու Հօխայ Հոգացեալ և մոշամպայիւ ամրափակեալ յղեցաք յԵրևան առ Քեալ Յովհաննէան՝ Հասուցանել քեզ Հաւատարմաւ: Մինչ Հասցի, ծանուցես:

Իսկ վասն իրաց ոմանց, եթէ աւազ զսիաւհին գրեալ եղաք ի թուղթս, զորս ըստ առաջնոյն Հոգացեալ յղեսցես առ մեզ Հաւատարմաւ: Եւ վասն Հիւսանց, եթէ Մէհրապ աղային ողջոյն տացես, որ զմի լաւ վարպետ, Հանդերձ աշակերտին յղեսցէ ի Սուրբ Աթոռս՝ Հատանելով յայդր զօրական վարձսն նոցա: Դորին գրեալ թուղթս առ մեզ էւսա յանցելումս, բայց որովհետեւ ոչ գոյր ի նմա բան ինչ պատասխանի առնելոյ, վասն այսորիկ ոչ արարաք: Իսկ վասն այգւոյն մերոյ (որ ի Տուխուրղան), եթէ որպէս գրեալ եմք, այնպէս արասցես ի գնալդ ի Թաւրէզ:

Ողջոյն պարոն Բաբային և տիրացու Յակոբին:

Թուղթ պարոն Զօհրապի ձեռամբ ԱՃ. (100) թումանի ստացականը Բա-
յաղետ ուղարկելու (451թ, Բ.), պարոն Բաբային մի փոստուլայ՝ սրբալոյս միւռոնը
բերող նուիրակի աւթիւ (Գ.), նաեւ՝ տաճկերէն մի թուղթ ուղղուած Հաղբակի
Սլաւազ բեկին՝ նուիրակ Սողոմօն պետին տրուած յայնձնարարութեան մասին (Դ.):
Գրուել էն ապրիլի 28-ին:

111 **Ի Պօլիս** - Կոնդակ մի գանձանակի ի Կոստանդնու-
պօլիս առ Սուրբ Լուսաւորչի եկեղեցին (որ ի Ղալաթիա), վասն
ԳՃ. (300) և Կ. (60) ղուռուշին, ժողովեցելոյն ի ՌՄԽ. (1791)
դեկտեմբերի սկզբէն զՌՄԽԱ. (1792) դեկտեմբերի] Է. (7), զոր
և յանձնեալ էին նուիրակ Մինաս պետին, ձեռամբք երկուց եղ-
բարց գանձապետացն մերոց՝ մաշտեսի Խաչատուր և մաշտեսի
Յոհաննէս աղայիցն:

Այլև սոյն գանձապետացն մերոց պատուէր օրհնութեամբ:

112 Թուղթ մի օրհնութեան առ սոյն յիշեալ եկեղեցոյ
գանձապետսն՝ մաշտեսի Խաչատուր և մաշտեսի Յովհաննէս
աղայն, որք յանձեալ էին զԺողովեալսն ի ՌՄԽ. (1791)
դեկտեմբերի] Ա.-էն (1) ցՌՄԽԱ. (1792) դեկտեմբերի] Է. (7),
որ էր երեք հարիւր և վացսոն ղուռուշ:

113 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս՝
առ Սուրբ Գէորգ եկեղեցին (որ ի Սամաթիա), որք յանձնեալ էին
Մի[նաս] պետին զարդինսն գանձանակին իւրեանց՝ զԺողովե-
ցեալսն ի ՌՄԽ. (1791) նոյեմբերի] Լ.-էն (30) ցՌՄԽԱ. (1792)
դեկտեմբերի] ինն, ձե[ռամբ] գանձապետ մաշտեսի Պարոնին (որ

է ԱՃԺԹ. (119) զուռուշ): Սոյն գանձապետին պատուէր օրհնութեամբ:

452ա

114 Թուղթ մի ևս օրհնութեան առ սոյն եկեղեցոյ գանձապետն պարոն Մարտիրոս, մահտեսի Աստուածատուրն և պարոն Միքայէն, որք յանձնեալ էին Մի[նաս] պետին զժողովեցեալն ի ՌՄԽ. (1791) նոյ[եմբերի] ԻԳ.-էն (23) ցՌՄԽԱ. (1792) նոյ[եմբերի] ԻԳ. (23) (որ էր ԴՃ. և Ծ. (450) զուռուշ):

115 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս՝ առ Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին (որ ի Պալատ), վասն գանձանակադրամիցն ժողովեցելոցն ի ՌՄԽ. (1791) դեկ[տեմբերի] սկզբէն ցՌՄԽԱ. (1792) դեկ[տեմբերի] ինն, զորս և յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ Սահակ ամիրային (որ է ԳՃ. և Ե. (305) զուռուշ եւ ԺԷ. (17) փարայ): Այլև՝ պատուէր օրհնութեամբ սոյն յիշեալ գանձապետին մերոյ:

116 Կոնդակ մի ևս գանձանակի ի յՕրթագեղ՝ առ Սուրբ Աստուածածնի եկեղեցին, վասն ԱՃ. (100) զուռուշ և ԺԷ. (17) փարային ժողովեցելոցն ի ՌՄԽ. (1791) նոյ[եմբերի] ԻԳ.-էն (23) ցՌՄԽԱ. (1792) նոյ[եմբերի] ԻԳ. (23), զոր և յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ մահտեսի Յարութիւն աղային: Այլև՝ ի սմա սոյն գանձապետին պատուէր օրհնութեամբ և շնորհակալութեամբ:

117 Կոնդակ մի ևս գանձանակի յԻսկիւտար՝ առ Սուրբ Խաչ եկեղեցին, վասն գանձանակադրամին իրեանց Հասուցելոցն Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ պարոն Չաքարիային (որ է վաթսուն և Ե. (5) զուռուշ), զոր ժողովեալ էր ի ՌՄԽ. (1791) նոյ[եմբերի] ԻԳ.-էն (23) ցՌՄԽԱ. (1792) նոյ[եմբերի] ԻԳ. (23): Ի սմա պատուէր օրհնութեամբ սոյն գանձապետին մերոյ:

118 Կոնդակ մի ևս գանձանակի յԻսկիւտար՝ առ եկեղեցին Սրբոյ Կարապետի, որք զարդինս գանձանակին իրեանց զժողովեցեալն ի ՌՄԽ. (1791) նոյ[եմբերի] ԻԳ.-էն (23) ցՌՄԽԱ. (1792) նոյ[եմբերի] ԻԳ. (23) (որ է ԱՃ. (100) զուռուշ), յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետին մերոյ պարոն Բարսղին:

119 Կոնդակ մի ևս գանձանակի ի Խասգիւղ՝ առ Սուրբ Ստեփաննոս եկեղեցին, վասն ԱՃԽ. (140) զուռուշ գանձանակադրամին ժողովեցելոցն ի ՌՄԽ. (1791) յապ[րիլի] Ա.-էն (1) ցՌՄԽԱ. (1792) յապ[րիլի] մէկն, զոր և յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ պարոն Յովհաննէս ամիրային:

120 Կոնդակ մի ևս գանձանակի ի Թրակիա (որ է Թաքիրտաղ)՝ առ Սուրբ Յովհաննէս աւետարանչի եկեղեցին, վասն

ԵՃՁԵ. (585) ղուռուշ և Դ. (4) փարայ գանձանակադրամին ի ՌՄԼՁ. (1787) Թուոյ յուլի[սի] ԺԹ. -էն (19) ցՌՄԽԲ. (1793) յունվ[արի] Ձ. (6) Ժողովեցելոյն, զոր և յանձնեալ էին նուիրակ Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ Թագորճի կոչեցեալ Աւետիք աղային: Այլև՝ վերահաստատութիւն ի գործ գանձապետութեան նորոգ կարգեցեալ գանձապետ Երեմիա ամիրային:

452բ

121 Ի Մաղարա – Կոնդակ մի ևս գանձանակի ի Մաղարա՝ առ Սուրբ Թէոդորոս եկեղեցին, վասն ԱՃ. և Ի. (120) ղուռուշին ժողովեցելոյն ի ՌՄԼՁ. (1787) մայի[սի] ԺԷ. -էն (17) ցՌՄԽԲ. (1793) փե[տրուարի] ԻԱ. (21), զոր և յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ մահտեսի Թօրոս աղային, որոյ և պատուէր օրհնութեամբ և շնորհակալութեամբ:

122 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս՝ առ Էննաֆն ալաճաճոց, վասն Ծ. և Է. (57) ղուռուշին Հասուցելոյն Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ մահտեսի Յարութիւն աղային, զոր ժողովեալ էր ի ՌՄԽ. (1791) նոյ[եմբերի] ԻԳ. -էն (23) ցՌՄԽԱ. (1792) ն[ոյեմբերի] ԻԳ. (23):

123 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս՝ առ դարապիսանաճիսն, վասն գանձանակական արդեանցն իւրեանց ժողովեցելոցն ի ՌՄԽ. (1791) դեկ[տեմբերի] Ձ. -էն (6) ցՌՄԽԱ. (1792) դեկ[տեմբերի] ԺԱ. (11) (որ էր Կ. և Գ. (63) ղուռուշ), զորս յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ Կարապետ աղային, որոյ և պատուէր օրհնութեամբ:

124 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս՝ առ սափրիչն (որք ի Թաւուղպազար և ի Մէրճանչարսուն), վասն Ժ. (10) ղուռուշ արդեանցն ժողովեցելոցն ի ՌՄԽԱ. (1792) Թուոյն, զորս յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձեռամբ գանձապետացն մերոց՝ պարոն Գալ[ու]ստին և պարոն Յարութիւնին:

125 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս՝ առ Էննաֆն քիւրքճուց, որք տուեալ էին Մի[նաս] պետին Լ. (30) ղուռուշ, ձեռամբքեաչիա ուստայ Պօղոսին, ղապղիմալ մահտեսի Սարգսին, եազճի ուստայ Յակոբին և գանձապետ ուստայ Յովհաննիսին, որ ժողովեցեալ էր ի ՌՄԽԱ. (1792) Թուոյն:

126 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս՝ առ իփեկճիսն (որք են ի Պալաթ, ի Սամաթիա և ի Տազըր փաշայ), որք տուեալ են Մի[նաս] պետին, ձե[ռամբ] ղապղիմալ մահտեսի Աստուածատուրին և գանձապետ պարոն Յարութիւնին ԺԵ. (15) ղուռուշ, որ ժողովեցեալ էր ի ՌՄԽ. (1791) Ձատիկ կիրակէն ցՌՄԽԱ. (1792) Ձատիկ կիրակէն:

127 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս՝ առ սափրիչն (որք էն ի Պալաթ), վասն Ը. (8) ղուռուշին ի ՌՄԽԱ. (1792) Թուոյ ժողովեցելոյն, զոր և յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ ուստայ Գէորգին և ղապգիմալ Գրիգորին: Այլև՝ պատուէր սոցա օրհնութեամբ:

128 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս՝ առ քեսէճիսն, վասն Ժ. (10) ղուռուշին ժողովեցելոյն ի ՌՄԽ. (1791) Սուրբ Աստուածաճնի Վերափոխման տօնէն ցՌՄԽԱ. (1792) Վերափոխման տօնն, զոր և յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ Ղազարին և իկիտպաշի Պօղոսին:

129 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս, ի յԷլիպ եղեալ բրուտ վարպետն, որք զարդիւնն գանձանակին իւրեանց զժողովեալն ի ՌՄԼԹ. (1790) Նոր կիւրակէէն ցՌՄԽԱ. (1792) Նոր կիւրակէն յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ մաշտեսի Գէորգին և ղապգիմալ պարոն Մեսրոպին (որ էր քառասուն ղուռուշ):

130 Կոնդակ մի ևս գանձանակի յԻւսկիւտար՝ առ երիս էնաֆնսն, այսինքն՝ առ սափրիչն, խաշվէճիսն և մէլիանաճիսն, վասն ԻԳ. (23) ղուռուշին ժողովեցելոյ ի ՌՄԽ. (1791) Սուրբ Աստուածաճնի Վերափոխման տօնէն ցՌՄԽԱ. (1792) Վերափոխման տօնն, զոր և յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ պարոն Յովհաննիսին:

131 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս, ի Շէհրէմէնի կողմն եղեալ դերձակ վարպետն, վասն Ժ. (10) ղուռուշին ժողովեցելոյն ի ՌՄԽԱ. (1792) Թուոյն, զոր և յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ ուստայ Գէորգին և իկիտպաշի ուստայ Յակոբին:

132 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս, ի Ղումդափու և Յէնիղափու եղեալ սափրիչն, վասն Ի. (20) ղուռուշին ժողովեցելոյն ի ՌՄԽԱ. (1792) Թուոյն, զոր և յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ ուստայ Սեթրակին և ղապգիմալ մաշտեսի Սարգսին:

133 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս, ի Չուխուրչէշմէի խաշվէճիպաշի խանն եղեալ առ ունջպէր վարդապետն, վասն Լ. (30) ղուռուշին ժողովեցելոյն ի ՌՄԽ. (1791) /453ա/ Սուրբ Խաշի կիւրակէէն ցՌՄԽԱ. (1792) Սուրբ Խաշի կիւրակէն, զոր և յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ պարոն Աբրահամին, պարոն Տօնիկին և օտապաշի պարոն Գասպարին:

134 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս, ի Կէտիք-Փաշայն՝ առ սանդալճի խանն եղեալ բապուճճիսն, վասն ժ. (10) ղուռուշին ժողովեցելոյն ի ՌՄԽԱ. (1792) Թուռջն, զոր և ձե[ռամբ] գանձապետ ուստայ Մէլքոնին և ղապզիմալ իկիտպաշի ուստայ միւս Մէլքոնին յանձնեցեալ էին Մի[նաս] պետին:

135 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս եղեալ մէստճիսն, վասն Ի. (20) ղուռուշին Հասուցելոյն Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ պարոն Յակոբին և մահտեսի Գաբրիէին, որ ժողովեցեալ էր ի ՌՄԽԱ. (1792) Թուռջն:

136 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս, ի Հասան-Փաշի կողմն եղեալ դերձակսն, վասն ժ. (10) ղուռուշ գանձանակադրամին ժողովեցելոյն ի ՌՄԽԱ. (1792) Թուռջն, զոր և ձե[ռամբ] գանձապետ պարոն Մարկոսին, իկիտպաշի մահտեսի Աստուածատուրին յանձնեալ էին Մի[նաս] պետին:

137 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս՝ առ օթուրախճիսն, վասն ժԵ. (15) ղուռուշին ժողովեցելոյն ի ՌՄԽԱ. (1792) Թուռջն, զոր և յանձնեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ տիրացու Գրիգորին և իկիտպաշի պարոն Պետրոսին: Այլև՝ յիշումն ՌՄԽ. (1791) Թուռյ գանձանակադրամին, որ պահեալ էր փորձութեան և մսիթարութիւն վասն հրկիթութեանն խանութիցն իւրեանց:

138 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս, ի Չուխուրչէշմէի նոր խանն եղեալ ուէնջպէր վարպետսն, որք զարդինս գանձապետին իւրեանց Հասուցեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ Մալխասին և ղապզիմալ օտապաշի մահտեսի Վարդանին (որ է Լ. (30) ղուռուշ), որ ժողովեցեալ էր ի ՌՄԽ. (1791) Սուրբ կիրակէն ց[ՌՄ]ԽԱ. (1792) Սուրբ Խաշի կիրակէն:

139 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս, ի շահապետպաշին քեօռ վէզիր Խանումն եղեալ դերձակ պաշխալը վարպետսն, վասն Ե. (5) ղուռուշին Հասուցելոյն Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ ուստայ Մարկոսին և իկիտպաշի Հաճի Աստուածատուրին, որ ժողովեցեալ էր ի ՌՄԽ. (1791) Սուրբ Աստուածածի Վերափոխման տօնէն ց[ՌՄ]ԽԱ. (1792) Վերափոխման տօնն:

140 Կոնդակ մի ևս գանձանակի ի Կոստանդնուպօլիս, ի տիւլպէնտճի Ճամիսի եղեալ բապուճճիսն, վասն Չ. (6) ղուռուշ գանձանակադրամին ժողովեցելոյն ի ՌՄԽԱ. (1792) Թուռջն, զոր և Հասուցեալ էին Մի[նաս] պետին, ձե[ռամբ] գանձապետ ուստայ Խաչատուրին և ղապզիմալ մահտեսի պարոն Աւետիքին:

141 **Թուղթ մի օրհնութեան ի Կոստանդնուպօլիս՝ առ սանտալ Պէզէզտէնն եղեալ վարպետան, վասն Ե. (5) ղուռուշքառասունցին տուեցելոյն Մի[նաս] պետին, ձե[ռամբ] վէքիլ Պետրոս պետին:**

Օրհնութեան նամակ վերոյիշեալ պարոն Պետրոսին՝ Լանգուցեալ Հոր՝ մաշտեի Յովհաննէսի կտակած 50 ղուռուշք Մինաս պետի միջոցով Մայր Աթոռ ուղարկելու մասին (453ա, ԽԲ.): Օրհնութեան նամակ տիրացու Բաղդասարին եւ պարոն Պետրոսին, որոնք Լանգուցեալ պարոն Պօղոսի մերձաւորները լինելով նրա կտակած 50 ղուռուշք յանձնել էին Մինաս պետին (ԽԳ.): Օրհնութեան նամակ տարեկան 9 ղուռուշ մատաղագին տուած տիրացու Պօղոսին (ԽԴ.): Օրհնութեան նամակներ նուիրատուներ՝ «ձերոնազարդ» մաշտեի Մարտիրոս աղային, Յարութին ամիրայի որդի մաշտեի Յովհաննէս Չէլէպիին, մաշտեի Ասանիային, պարոն Մարտիրոսին, մաշտեի պարոն Յարութինին, պարոն Աւետիքին, մաշտեի պարոն Սարգսին՝ դրամական նուիրատուութիւնների Լամար (ԽԵ-ԾԱ.):

Նամակները գրուել են ապրիլի վերջին:

142 **1793 թ., 27 ապրիլի - Թուղթ ի Հաշտարիսան առ Գրիգոր վարդապետն՝ սպասաւորն Յովսէփ վարդապետին, վասն Լասուցելոցն և Լասուցելեացն, Լանդերձ շորհակալութեամբ վասն Բ. (2) թուլում սնջաֆ քրքացուն:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 47¹⁻⁷³

1793 թ., մայիս

143 **1793 թ. 11 մայիսի - Թուղթ Արաբկեր վասն Ղազարէնց Շաքար աղայի աղջկանն ընդ մաշտեի Աստուածատուրի տղային նշանեցելոյ, զի թէ ոչ իցէ չԼաս ըստ կանոնաց, պսակեցեն:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1776

Նամակ վէքիլ տիրացու Սարգսին (Կ. Պօլիս), որն ուղարկել է 4000 ղուռուշի ստացականը (ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 453բ, ԾԲ.): Պատասխան նամակ նուիրակ Մինաս պետին. «ընդ սմա փուսուլայ մի ևս վասն իրաց ոմանց» (ԾԳ.): ԲՌ. (2000) ղուռուշ փոլիցայի մասին ստացական, որը տուել է մաշտեի Նիկողայոս ամիրան մաշտեի Ռափայէլի որդի մաշտեի Պօղոսին. «ի նուիրակական արդեանց Մինաս պետին», ինչպէս նաեւ Բ. (2) օգմայ թղթի գին ԺԵ. (15) ղուռուշք, որը յղուել է Կարինի վէքիլ Հայրապետին մաշտեի Նիկողայոսին Լասցնելու Լամար (ԾԴ.): Նամակները գրուել են մայիսի 10-ին:

Պատասխան նամակ վէքիլ Հայրապետին (Կարին), որով նրան տրոււմ են տնտեսական բնոյթի բազմաթիւ յանձնարարութիւններ՝ կապուած Մինաս եւ Յովհաննէս պետերի զոյգ ստացականների, Ակնայ առաջնորդի յղած թղթի, Հասանղալայի վանքի առաջնորդ Ալէքսան պետի որպիսութեան, ԽՅօյ տիրացու Մեքնի, Բայազետի տիրացու Գէորգի գրագրութիւնների եւ այլոց Հետ (ԾԵ.): Ստացական՝ տրուած Գաղատիայի նուիրակ Յովհաննէս վարդապետին՝ վերը յիշուած 2000 ղուռուշի գինաց (ԾԶ.): Պատասխան շորհակալական նամակ Ակնայ առաջ-

նորդ Միքայել վարդապետին՝ սառաֆ Սարգսի տուած 30 զրուռչ աջանամբոյրը պարոն Հայրապետին յանձնելու առթիւ (ԾԷ.):

144 **Ի Բայաղիտ** - Թուղթ մի առ Սահակ աղայն՝ յաղագս ներքոյ գրեալ կոնդակին, թէ ահա ըստ ինդրոյդ յղեցաք յղէլ նոցա:

145 **յԱրապիեր** - Կոնդակ մի յԱրապիեր վասն Հասի և չ-Հասի: **Տէ** ս զ1776 Համարն մեծ տետերց: Գրեցան յամնոյս [մայիսի] **ի ԺԱ.** (11):

146 **[Ի] Գիւան** - Թուղթ մի ևս առ Աւետիք պետն՝ սիրահառն յանդիմանութիւն, եթէ ո՛ր մնացէր ցարդ, ընդէ՛ր ոչ գաս և այլն: Գրեցան յամնոյս [մայիսի] **ի ԺԶ.** (16):

Տէր-Շմառնեան պրն. Ստեփանին (Թփֆլիս) կարգադրում է վերը յիշուած նամակն ուղարկել Գիւանի նուիրակ Աւետիք վարդապետին (Ա.): Նամակները գրուել են մայիսի 16-ին: Երկու օր անց Գէորդ աղային (Կարս) յղած նամակում յանձնարարում է պատրաստուած 300 Հատ թաւանի եւ 50 Հատ դռնացու տախտակները մինչ աշուն ուղարկել Էջմիածին (Ա./2): Դաւիթ Միրզային (Թփֆլիս) պատասխան նամակ է գրուել Սահակաշինու Հէքիմ Յովհաննիսի որդի Գրիգորի կապակցութեամբ (Ա./3): Վերջնս յայտնել էր քահանայ ձեռնադրուելու եւ Հայրենի եկեղեցում աւագերեց դառնալու իր մտադրութեան մասին: Սրան եւս ուղարկուել է պատասխան նամակ: Գրուել են մայիսի 12-ին եւ ուղարկուել յատուկ փայեկաւ (454ա, Բ.): Վերոյիշեալ Հարցը շոշափուած է նաեւ Թփֆլիսի առաջնորդ Մարտիրոս վարդապետին եւ Ղազար քահանային Հասցեագրուած նամակում (Ա.): Պատասխան նամակ Դանիել վարդապետին (Բ.):

454ա

147 Կոնդակ մի ի վերայ Սահակաշէն եկեղեցւոյն, ի Հաստատութիւն աւագերիցութեան տէր Դաւթին, մինչ բազմակնիք թղթով եկեալ էր ի Սուրբ Աթոռս: **Տէ** ս զ1877 Համարն մեծ տետերց:

148 Թուղթ մի ևս առ մելիք Աւետիքն, ի դարձ թղթոյն ընդ տէր Դաւթին:

149 Թուղթ մի ևս առ պարոն Յովսէփն Ղօրղանեան, ի դարձ թղթոյն ընդ տէր Դաւթին գրեցելոյ: **Տէ** ս զ475 Համարն փոքր տետերց:

150 Թուղթ մի ևս տաճկերէն առ Հերակլ արքայն ի դարձ թղթոյն ընդ տէր Դաւթին:

Գրեցան յամնոյս **ի ԺԸ.** (18):

151 Թուղթ մի առ Անշինէնց պարոն Եսային վասն որդւոյն պարոն Յարովթիւնին: **Տէ** ս [ի մայիսի] **ի Գ.** (23):

Պատասխան նամակ Սուլիան Դիանին (Թփֆլիս) (454ա, Ա./2): Դանիել վարդապետին յանձնարարում է մինչեւ Համբարձման տոնն ուղարկել Հաւաքուած 28 լիտր մումը, որը «տակաւին չէՀաս, իցէ, թէ երևեսցի ի քանի աւուրս զմնացեալն»

եւս յղեսցես փութանակի, զի ժամանեսցին սպիտակեցուցման» (Բ./2) Արուսէ Էն նաեւ այլ յանձնարարութիւններ. Մէլիք Մինասին (Գ.), գործակալ տէր Ղազարին (Դ.), Հաղբատի առաջնորդ Դաւիթ վարդապետին (Ե.), իսկ Վանական վարդապետին (Շուպուեր) ուղղրած նամակում խոստում է տէր Առաքելին սիրով ընդունելու եւ այլ Հարցերի մասին (Չ.): Նամակները գրուել են յունիսի 1-ին:

454բ

152 **Ի Վան** - Կոնդակ մի ի վերայ Կտուցու սրբոյ անապատին, ի պատասխանի մահասարական թղթոյն նոցա, վասն Գրիգոր պետի Հայրութեան և եպիսկոպոսութեանն: Տէ՛ս զ1879 Համարն մեծ տետերց:

153 Կոնդակ մի ընդհանրական վասն երկուց անապատացն՝ Լմայ և Կտուցու: Տէ՛ս զ1776 Համարն մեծ [տետերց]:

154 Կոնդակ մի ևս ժողովարարութեան ի վերայ Թիֆլիզու և շրջակայիցն, նաև ի վերայ Համախու, Գեանջայու և այլ տեղեացն այն կողմունս եղելոց, վասն Կտուցու սրբոյ անապատին ըստ իննդոյ տեղոյն առաջնորդ նորընծայ Գրիգոր եպիսկոպոսին:

155* Թուղթ մի առ Պարիկեան մահտեսի Սահակ աղայն, ի պատասխանի թղթոյն ընդ Մարտիրոս պետին գրեցելոյ, վասն Հարազատութեանն առ Սուրբ Աթոռս և առ նուիրակ Մարտիրոս պետն շնորհակալութիւն: Իսկ վասն Կտուցու առաջնորդ Գրիգոր պետին ծանուցումն, եթէ ձեռնադրեցաք եպիսկոպոս ընդ Մարտիրոս պետին և օրհնութեամբ վերադարձուցաք, ի սմա ողջոյն եղբարցն իւրոց:

156* Թուղթ մի առ Վարագայ սրբոյ վանից առաջնորդ Յարութիւն պետն, ի դարձ թղթոցն, վասն Լ. (30) ղուռուշ աջահամբոյրին, եթէ ընկալաք սիրով: Իսկ վասն ոմանց ժողովարարաց սիրախառն յանդիմանի, եթէ ընդէ՛ր անխտիր կնքես զթուղթս նոցին՝ չգիտելով զի՛նչ գրեալն ի նոսա: Ուրեմն՝ այսուհետև չառնիցես, քանզի վրէժիմնդիր վինելոց եմք, առ սա իբր ընծայ Ա. (1) վեղար:

157* Թուղթ մի ևս առ Լմայ անապատի Հայր Միքայէլ պետն, ի դարձ թղթոյն ընդ Պետրոս պետին գրեցելոյ, վասն իննդրեալ ընդհանրական կոնդակին, եթէ ի դառնալն քոյ աստի Բ. (2) մասնաւոր ժողովարարութեան կոնդակս ետուք քեզ այժմ, թէ վասն այդմ սրբոյ անապատին տայաք միւս անապատին ևս Հարկաւոր իւր տալ վասն որոյ ըստ նախնեացն սովորութեան՝ զմի ընդհանրական կոնդակ ժողովարարութեան ետուք անուամբք քոյ և Գրիգոր նորընծայ եպիսկոպոսին, վասն երկուց սրբոց անապատաց: Իսկ վասն իսաբեբայ ժողովարարաց ոմանց զգուշութիւն և ծանուցումն զՆերսէս պետէն (որ ի Հաշտարխան), եթէ գրեցաք

**Յովսէփի պետին, որ զղեակ կրնդակն մեր առցէ ի նմանէ և յերկրէն
Հանցէ, ըստ որում ապստամբէ ի ձէնջ և խաբէբայ: Գրեցան յամ-
սոյս ի Ա. (1):**

Պատասխանն նամակ Չմիւռնիայի նուիրակ եւ առաջնորդ Իսահակ վար-
դապետին (454բ, Ա./2): Մխիթարովեան եւ ՀնորՀակալական նամակ պրն. Սաւա-
լանեան Առաքելի եւ փալանճի օղլի մահտեսի Գրիգորին՝ Հանգուցեալ Աէթի 200
ղուռուշ Հոգեբաժինը կնոջն ու դստերը տալու Համար (Բ.): Նամակները գրուել են
մայիսի 25-ին:

Կարինի վէքիլ պրն. Հայրապետին տեղեակ է պահում Չմիւռնիայից ապ-
րանքների՝ «ամանաթքի» ստացման մասին եւ յանձնարարովիներն արում նա-
մակները տեղ Հասցնելու վերաբերեալ (Գ.): Գէորգ աղային (Կարս) յանձնարար-
ում է Սահակ վարդապետին Հասցեագրուած նամակները Հասցնել վէքիլ պարոն
Հայրապետին (Դ.): Նամակները գրուել են յունիսի 3-ին:

158 **1793 թ. մայիս - Թուրղթ ի Մեծն Պօլիս առ սրբոյ
Երուսաղէմի վէքիլ տիրացու Սարգիսն, ի պատասխանի Բ. (2)
Թղթոցն, ընդ որում և դարձուցաւ ԴՌ (4000) զուռուշի դաւզն:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 371ա-72ա

159 **1793 թ. 19 մայիսի - Թուրղթ ի Թիֆլիզ առ միլախօր-
բաշի պարոն Յովսէփն Ղօրղանեան, ի պատասխանի Թղթոյն տէր
Դավթին գրեցելոյ:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 372ա-73ա

1793 թ., յունիս

160 **1793 թ., յունիս - Կրնդակ ընդՀանրական ժողովա-
րարովեան վասն երկուց կրծնաստանացն Լմայ և Կտուցու, ըստ
խնդրոյ նոցին վանահարց Միքայէլ և Գրիգոր վարդապետացն:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1776-77

161 **[1793 թ., յունիս] - Թուրղթ առ Ախիջան աղայն ի
Վան, ի պատասխանի երից Թղթոց նորա ընդ խօջայ Չաբօյին և
ընդ նուիրակ Մարտիրոս և Կտուցու անապատի Հայր Գրիգոր
վարդապետացն գրեցելոց⁸⁷:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1777-78

⁸⁷ Ախիջան աղան վանեցի նշանավոր մեծահարուստներից էր, որի հետ մշտական նամակագ-
րական կապեր է ունեցել Դուկաս հայրապետը: Ուշագրավ են Աղթամարի կաթողիկոսների
ընտրության կապակցությամբ Դուկաս Կարնեցու նամակներն ուղղված Աղիջան աղային՝
աղթամարցիների հետ խորհրդակցելու, ներքին խնդիրները բնարկելու և այլ հարցերի շուրջ:
1791 թ. վախճանվում է Աղթամարի Մարկոս Շատախցի կաթողիկոսը, իսկ նոր հայրապետի
ընտրության հարցում աղթամարցիները շարունակ խորհրդակցել են Ախիջան աղայի հետ,
սակայն նա մերժել է առաջարկությունները՝ պատասխանելով, որ նման հարցերը վերա-

162 **1793 թ., 10 յունիսի - Կոնդակ ժողովարարութեան առ ընդհանուր ազգ մեր վասն Տաթևու վանացն, ըստ ինդրոյ առաջնորդ Յովակիմ վարդապետին**⁸⁸:

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1779

163 **1793 թ., յունիս - Կոնդակ ի վերայ Կտուցու անապատին, ի պատասխանի թղթոյն նոցա մահարականի վասն Հայրութեան և եպիսկոպոսութեան Գրիգոր վարդապետին:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1879

454բ

164 **Ի վասն - Թուղթ մի առ Ախիջան աղայն ի դարձ թղթոյն, վասն եզտացն գրեցելոյ, եթէ յառաջքան զայս ծանուցաք քեզ, եթէ արքայն ոչ արար զդարձն թղթոյն մերոյ վասն եզտացն գրեցելոյ, այլ բերանով Մարտիրոս պետին, թէ այլևս մի՛ գրեսցէ սրբազան Վեհրն վասն սոցա, վասն զի ոչ կամիմք դարձուցանել յետս և այլն:**

165 **Թուղթ մի տաճկերէն առ Խոջապու բէկն ի դարձ թղթոյն վասն եզտացն գրեցելոյ ընդ Շխսրմանին:**

166 **Թուղթ մի ևս տաճկերէն առ կինն Չօպան աղայի, ի դարձ թղթոյն ընդ Շխսրմանին:**

պահված են Դուկաս կաթողիկոսին: Սակայն գաղտնիք չէ՝ Վասպուրականի հոգևոր հայրերը կաթողիկոս ընտրել են առանց էջմիածնի Աթոռի միջնորդության: Տեղին է նկատում պատմաբան Վրեժ Վարդանյանը, երբ նշում է, որ այս ամենը, անշուշտ, վկայում է Աղթամարի հոգևոր հայրերի վրա էջմիածնի հայրապետի ազդեցության թուլության մասին (մանրամասն տե՛ս Վ. Վարդանյան, Աղթամարի կաթողիկոսության պատմություն, Ս. էջմիածին, 2017, էջ 210-212): Ախիջան աղային ուղղված և պատասխան նամակներ տե՛ս նաև վավ. 164, 303, 357, 391, 508, 606, 645, 938, 1162, 1377, 1415, 1440:

⁸⁸ Հովակիմ վարդապետը (հետագայում՝ եպիսկոպոս) Տաթևի վանքի առաջնորդի, այսինքն՝ վանահոր պաշտոնը զբաղեցրել է շուրջ երկու տասնամյակ (1780-90-ական թթ.), որից հետո տեղափոխվել է Մայր Աթոռ Ս. էջմիածին, ստանձնել ժամօրհնողի՝ պատարագչի պաշտոնը, վախճանվել Հայոց ՌՄԿ. (1811) թվականին ու թաղվել Ս. էջմիածնի միաբանական գերեզմանոցում: Նրա գործունեությանն առնչվող հիշյալ տեղեկություններն ամփոփված են 7 տողից կազմված չափածո տապանագրում, որն ինչ-որ տեղ նաև կենսագրական բնույթի է. «Ընդ վիմուս այսու մարմին ամփոփի, Յովակիմ անուն եպիսկոպոսի, լեալ սա առաջնորդ յերկեակ Ժ. (10) ամի, մեծափառ վանից Սբ. Ըստաթէի, ապա յայս արո՞ ժամօրհնօղ լինի, է անուն վախճան ի տյն այս թուի, ՌՄԿ. (1811) եւ հոկտեմբերի Ժ.-ին (10)» (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 210, արձ. 422):

Տեղին է նշել, որ մինևույն Հովակիմ եպիսկոպոսի նախաձեռնությամբ է 1787 թ. կառուցվել Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս տանարի հարավային մուտքին կից Ս. Գրիգոր Տաթևացու տապանի վրա վեր խոյացած մատուռ-դամբարանը: Երկուսից արևմտյան և հարավային որմերի խաչաճանդակներին ստորին հատվածում՝ արտաբնուստ պահպանված ծավալուն արձանագրության համաձայն՝ Տաթևի վանքի վանահայր Հովակիմ Սյունեցին (Անգեղակոթցի) նախաձեռնել և իրականացրել է դամբարանի կառուցումը Բոնակոթ գյուղի մի խումբ ֆահանաների և հավատավոր ժողովրդի միջոցներով. «...ձեռամբ բազմաշխատ եւ օգտաշան Սինեաց պետի՝ տեսուն Յովակիմա Սինեցոյ, արդեամբ եւ ծախիմ բոնակոթեցոց...» (ԳՆՎ, պրակ II, Գորիսի, Սիսիանի և Դափանի շրջաններ, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 23-24, արձ. 38):

167 **Ի Բայազիտ** - Թուրքի մի ևս տաճկերէն առ իսաղ փաշայն, ի դարձ թղթոյն վասն եզտացն գրեցելոյ:
Գրեցան յամնոյս ի Է. (7):

168 **Ի Թիֆլիզ** - Թուրքի մի առ Դանիել պետն. յիշումն թղթոյն մերոյ առաջնոյ ընդ տէր Առաքելին գրեցելոյ: Եւ ծանուցումն զմոմոցն, եթէ Հասին մեզ և կռեցաք ըմբռնեալ կռուվդ, եղէն ըստ գրեցմանդ Կ. (60) լիտր: Եւ վասն մնացելոցն, եթէ ջանասցես օր մի յառաջ ժողովել և բերել ընդ քեզ: Իսկ վասն եզտացն անդէն եղելոց, եթէ ծանուցես առաջնորդ Մարտիրոս պետին, որ մինչ աստի գայցեն առ ինքն ի նոցանէ, ասասցէ, թէ քանիցս խալիֆայն գրեաց և մէք արզ արարաք արքային և ոչ եղև, այսուհետև դուք գիտասցիք, քանզի մէք աստ նոցա այսպէս ասացաք:

Գր[եցաւ] յամ[նոյս] ի Է. (7):

169 **Ի Տաթև** - Կոնդակ մի ընդհանրական ժողովարարութեան վասն Սրբոյն Ստաթէի առաքելոյ վանիցն, զոր գրեալ էտուք տեղոյն միաբան Միքայէլ պետին ըստ խնդրոյ նորին առաջ[նորդ] Յովակիմ պետին՝ առ ի առնել ժողովս:

170 **Ի Կարին** - Թուրքի մի առ վէքիլ Հայրապետն, եթէ Տաթևու վանից առաջ[նորդ] Յովա[կիմ] պետն խնդրեալ էր ի մէջ ժողովարարութեան կոնդակ և մէք ևս էտուք, ըստ աղբրասանացն տեղոյն միաբան Միքայէլ պետին, որ ահա եկն յայդր: Բայց պարտին նորք Սրբոյ Աթոռոյս ԳՃ. (300) ղուռուշ, վասն որոյ առցես ի դամանէ և մեզ ծանուցես:

Գրեցան յամնոյս ի Է. (7):

171* **Թուրքի մի առ ղապզիմալ տիրացու Կարապետն ի դարձ թղթոյն, օրհնութիւն վասն Հարազատութեանն, որ առ նուիրակն մեր վասն ԱՃՁԵ. (185) ղուռուշ տուգանացն, զորս առեալ էին յօրհնեալ ժողովրդէնէն մերմէ և տուեալ նմա: Եւ շնորհակալութիւն վասն աջաՀամբուրին (որ է Չ. (6) կիսնոց զարմահպուսակոյ):**

172* **Թուրքի մի առ շէհեր վէքիլ մահտեսի Յովհաննէսն ի դարձ թղթոյն, օրհնութիւն վասն ԱՃՁԵ. (185) ղուռուշ տուգանացն նուիրակի, զորս առեալ էին յօրհնեալ ժողովրդէնէն և տուեալ նմա: Եւ շնորհակալութիւն վասն աջաՀամբուրին (որ էր Չ. (6) կիսնոց Ստամպուլ ոսկոց): Այլև ծանուցումն զԱլէքսան պետէն, եթէ մէք զնա ի վերայ Հասանղալայու վանիցն եմք ձեռնադրեալ և ոչ այլ տեղոյ, տեսցո՛ւք որպէս եմք առնելոց:**

173* **Թուրքի մի ևս առ վէքիլ պարոն Հայրապետն ի դարձ Բ. (2) թղթոցն փայեկաւ յղեցելոց, վասն ԲՌ. (2000) ղուռուշին**

Յովհաննէս պետի, եթէ գրեալ մահտեսի Նիկողայոսին Հասուցանել քեզ փօլիցային, որպէս և ինքն գրեալ է քեզ յառաջմէ, թէ դաւճն բերել տուր և ես դրամն Հասուցանեմ, ուրեմն մի թողուր մինչև զգալն Յովհաննէս պետին: Այլև, որ ինչ Համբաւ գայցէ ի Պօլսոյ, վասն Ալէքսան պետին ծանուցես մեզ, իսկ վասն բաղանեաց դազանին և մահթուլին, եթէ որպէս գրեալ եմք, այնպէս Հոգացեալ յղեսջիք ժամ մի յառաջ: Եւ վասն մահտեսի Յովհաննէս և դապ[գիմալ] տիրացու Կարապետի թղթոց դարձիցն, եթէ ահա գրեալ յղեցաք, տացես նոցա: Բայց նուիրակաց թղթոց դարձնս յետոյ գրելոց էսք: Էտրէնէցի ուխտաւորաց գրեանքն, որք էին առ Թօմաս պետն, յղեցաք փայեկաւ: ԶԴանիէլ պետէն, եթէ յղեալ եմք ի Թիֆլիզ վասն մոմի, իսկ վասն Զմիւռնոյ նուիրակի Գ. (3) Հակիրացն, եթէ մինչ գայցէ, փութով յղեսցես: Վասն ԱՌ. (1000) ղուռուշ փօլիցային Բայագիտցի Նաւասարդի որդի Հայրապետին, եթէ տիրացու Գէորգն մեզ բան չէ գրած յայսմ կողմանէ, մինչ գրեսցէ ծանուցելոց եմք: Եւ վասն սառաֆ Սարգսին, եթէ թուղթն նորին ընկալաք և ընդ ինդորոյն գրելոց եմք ի Թիֆլիզ վասն գերեացն այնոցիկ և ծանուցանելոց ինքեան անհոգ լիցի, իսկ վասն Հաճի Պապային, եթէ գրեսցես զնմանէ, քանզի լուաք, թէ դուստրն մեռեալ է, ոչ գիտելով զՀաւաստին ինդորէ վասն Հարկաւորութեան Սրբոյ Աթոռոյս վեց ղանթար երկաթ: Գրեցան յամսոյս ի ԺԱ. (11):

174* **Ի յԱդուլիս** – Թուղթ մի առ Սրբոյն Թովմայի առաքելոյ վանից առաջնորդ Թօմաս պետն, վասն ռամիսեցի Ատրանայ բնակեալ մահտեսի Գէորգի և ի Պօլիս բնակեալ մահտեսի Կարապետի ինդորոցն յղի յատուկ փայեկաւ: Տէ ս զ1880 Համարն մեծ տետերց: Գր[եցաւ] յամսոյս ի ԺԳ. (13):

175* **Ի Խոյ** – Թուղթ մի օրհնութեան առ Փիլոմի որդի պարոն Առաքելն ի դարձ թղթոյն ընդ տէր Յովսէփին, վասն ցաւակրութեանն և դիպուածոցն միսիթարութիւն: Իսկ վասն Բ. (2) պաճախլու ոսկի աջահամբուրին շտրհակալութիւն: Եւ վասն Եփրեմ պետին, եթէ և ևս գրեսցես, զոր ինչ և լուիցես⁸⁹:

455Բ 176 **Ի Թաւրէզ** – Թուղթ մի օրհնութեան և միսիթարութեան ի վերայ Թաւրիզու մերազնեայ ժողովրդեանն ընդ տէր Յովսէփ քահանային իւրեանց: Տէ ս զ1881 Համարն մեծ տետերց:

177 **Թուղթ մի ևս օրհնութեան առ գանձապետ պարոն Թաւրէոնն**, շտրհակալութիւն վասն երեք պայուսակօք յղեալ զի-

⁸⁹ Նամակի հասցեատէր խոյցի Փիլոմի որդի Առաքելը վախճանվել է 1829 թ. և քաղվել Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում: Տապանագիրը պարզում է վերջինիս մասնագիտությունը՝ սնաքսագ, այսինքն՝ ժամագործ (Արցախի բարբառով): Հարձակումնաձև տապանաբարին հետևյալ արձանագրությունն է. «Այս է տապան խօյցի սնաքսագ Առաքելին, որ է Փիլոմեան, 1829» (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 216, արձ. 444):

րային՝ զիրիշկին և քեաղզ պատամին: Եւ թէ դու և պարոն Աստուածատուրն այսքան տարի է, որ Տուխուրղանու զայգին մեր վայելէք և ոչինչ օգտի Սուրբ Աթոռս ի ձէնջ, ահա ի կողմանէ մեր վէքիլ կարգեցաք զտէր Յովսէփն, որ վերահասու լիցի այսուհետև եկելոցն և դուք ևս լսողք լինիցիք նմա և տաջիք յայս ամի Չ. (6) թուման և ի գալ միւս տարւոյն, նկատեսցէ ի բերսն և գին կտրեսցէ: Եթէ ձեր օգուտն է և կամիք, ձեզ տացէ, և թէ ոչ, այն գնովն այլում տացէ:

Օրհնութեան եւ շնորհակալութեան նամակ նուիրատու պարոն Բաբաջանին՝ Ա. (1) Թաւրիզի ոսկի սրբազան վեհին իբրև աջահամբոյր յղելու մասին (455Բ, Դ.): Տաճկերէն նամակ՝ յղուած Թաւրիզի Միրզայ Ռազին (Ե.): Մխիթարութեան նամակ պարոն Թաղիանտսին եւ պարոն Բաբային՝ Հանգուցեալ կենակցի կապակցութեամբ (Չ.):

178 Թուղթ մի տաճկերէն առ Մարաղայու խանն, վասն նուիրակին յանձնարարութիւն: Իսկ վասն այգւոյն մերոյ, որ ի Տուխուրղան, եթէ ի նմանէ Հարկ մի պահանջեսցես, ըստ որում ամենայն այգիք մեր ոչ են ընդ Հարկօք: Յոյ առ սա ընծայ ևս:

179 Թուղթ մի ևս տաճկերէն առ նաւուզ Ալիբէկն ընդ Յովսէփին՝ Հանդերձ ընծայիք:

180 Թուղթ մի ևս տաճկերէն ի Տուխուրղան առ Հաճի Քեազիմբէկն ընդ տէր Յովսէփին:

Նամակ Ս. Բարդուղիմէոս առաքեալի վանքի (Աղբակ) առաջնորդ Ստեփաննոս պետին, որը գլխաւորապէս վերաբերում է նամակագրութեան Հարցերին եւ, մասնատրապէս, նուիրակ Սողոմոն պետի միջոցով որոշյանձնարարականների կատարմանը (455Բ, Ժ.): Նամակ Տուխուրղանի ժողովրդին՝ տեղի այգու վերաբերեալ (ԺԱ.):

181* Թուղթ մի առ նուիրակ Սողոմոն պետն, ի դարձ թղթոյն ընդ տէր Յովսէփին գրեցելոյ, եթէ լուսք զաւարտումն նուիրակութեան Խոյու, Որմու և Սալմաստու և օրհնեցաք զքեզ և զժողովուրդան մեր, իսկ կողմանցն Հաղբակու և Մարաղայու, եթէ ընտրելի է ի Հարկէ զժամանակն ի յաջողութիւն գործոյդ: Եւ վասն Բաղդաստու մորթոցն և ղատաքացն, եթէ ժամ մի յառաջ Հասուցես առ մեզ Հաւատարմաւ: Վասն խառատիցն, եթէ իմացաք, զոր ինչ գրեալ էիր, տէր Յովսէփն ևս պատմեաց: Եթէ նոքա եկեսցեն բարի է և թէ ոչ՝ ձեռամբ սիրելոյն մերոյ Մերհապ աղային զմի լաւ վարպետ գտեալ այտի յղեսցիք առ մեզ: Եւ վասն այգւոյն մերոյ (որ ի Տուխուրղան), եթէ զտէր Յովսէփն ի կողմանէ մերմէ վէքիլ կարգեցաք, որ է գալն վերահասու լիցի և յայս ամի արդեանց աղագաւ Չ. (6 թուման առցէ ի նոցանէ և ի միւս ամին նկատեսցէ ի բերսն և ըստ այնմ գին կտրեսցէ (թէպէտ գրեցաք քեզ յառաջամէ առնել): Ծանուցումն զթղթոցն վասն այգւոյն առ ոմանս գրեցելոյ

ընդ տեր Յովսէփին: Եւ թէ ինդիր արարաք զՄարաղայու խանէն, վասն այգւոյն մերոյ, որ զմալու ճրհաթն շորհեացէ մեզ Հաստատուն թալաղայիւս նա փոքր-ինչ ընծայ ևս յղեցաք, որ ի գնալն ձեր անդ տարեալ մատուցիք նմա: Թուղթ մի ևս ի Թաւրեզ՝ առ Միրզայ Սաֆին գրեցաք, վասն անդ եղեալ Հողոյն, որ այսուհետև վարուցանք չառնէ, այլ զամենայն առեալն դարձուցէ տեր Յովսէփին, ըստ որում կարգեցաք վէքիլ ի կողմանէ մեր: Իսկ վասն տեղոյն (որ ի մեր յայգին), եթէ ինչ մանի տէրն տուեալ է Գէորգ պետին առ այն մեզ ոչինչ գոյ ասելիք: Եւ վասն Խ. (40) թումանին ընդ տեր Յովսէփին, եթէ մեզ էՀաս, որոյ վասն պաՀեսցես /456ա/ առ քեզ զայս թուղթն պիտոյանալ ի ժամ Հաշուատուութեանդ: Վասն միսիթարական թղթոյն պարոն Բաբայի ի կողմանէ Հանգուցեալ մօրն, եթէ աՀա գրեալ յղեցաք տացես իւրն: Եւ վասն օրՀնութեան սրբալոյս մեռնին, եթէ տակալին գոյ՝ Վստուծոյ է գիտելի ժամանակն: Վասն Դ. (4) Հատ նուիրակացն (որք առ Ստեփան պետն առաջնորդ Սրբոյն Բարդուղիմէոս առաքելոյ վանից), եթէ աՀա յղեցաք քեզ ընդ թղթոյն իւրոյ, որ ի գնալն քոյ տարցես ընդ քեզ կամ թէ թուղթն շուտով յղեսցես, որ զպարոն Եսայու թուղթն կնքեալ դարձուցէ առ մեզ ի յղել մեր աստի առ նա ի միամտութիւն: Այլ տեղոյն բէկին վասն քոյ ևս գրեցաք յանձնարարութիւն) Ողջունէ աստ զՄէՀրապ աղայն և զպարոն Բաբաջանն:

Նոյն անձնատուութեանն ուղղուած մէկ այլ նամակով յանձնարարում է Խցյ վերադառնալուց յետոյ պարզել ուղարկուած կոնդակի տեղ չհաննելու ինդիրը եւ, ընդհանրապէս, Հսկողութիւն ունենալ գանձանակադրամն ուղարկելու գործի նկատմամբ (456ա, ԺԳ): ՕրՀնութեան նամակ նուիրատու տիրացու Սիմէօնին (Գիլան). «վասն կտակին Հոգւոյ Հօրն իւրոյ Հանգուցեալ պարոն Յովհաննիսի, զորս յանձնեալ էր անդէն Աւետիք պետին (որ էր Ժ. (10) թուման)» (ԺԴ): Ուչքիլիսայի առաջնորդ Մկրտիչ վարդապետին յանձնարարում է օժանդակել ժողովարարներ՝ Սիմէօն եւ Սահակ վարդապետներին: Որպէս նուէր ուղարկում է 4 փոր գինի (Ա/1):

456ա 182 **Կոնդակք վասն ժողովարարութեան իւրի, պանրի և մատաղացու ընդ Սիմէօն և Սա[Հակ] պետացն:**

Գր[եցան] յամ[սոյս] ի Ի. (20):

183 **Աստապատայ - Թուղթ մի օրՀնութեան ի վերայ Աստապատու ժողովրդեանն, ի պատասխանի թղթոյն նոցա, որով ծանուցեալ էին զՊօղոս պետէն՝ սրբոյն Սաղիմայ նուիրակէն, եթէ բանադրեաց զմեզ թարց պատճառի և այլն:**

184 **Ի Հուշի - Թուղթ մի առ սրբոյ Սաղիմայ նուիրակ Պօղոս պետն, յորում սիրախառն մեղադրութիւն վասն բանադրանաց թղթոյն, գրեցելոյն ի վերայ աստապատցւոց, եթէ ծանուցեալ էին մեզ և մէք գրեցաք նոցա թուղթ օրՀնութեան և յուսադրութեան: Ուրեմն ի Հասանիլ թղթոյս առ քեզ, դու ևս գրեսցես**

զլծուղթ օրհնութեան և զթամասուկով տալի զարդիւնան ինդրես-
ցես սիրով, զորս ժողովեալ են կրկին անգամ, մինչ առաջին ժողո-
վեցեալն յափշտակեցեալ էր ի ճանապարհին:

**Յղեցան ընդ յատուկ փայեկաւ եկելովն անտի և գրեցան յու-
նիս ամսոյս ի ԻԵ. (25):**

1793 Թ., յունիս - Թուղթք յայլ և այլ տեղիս

Ղուպ Ս. Գեորգ վանքի առաջնորդ Փիլիպպոս վարդապետին ուղղուած նամակում դիտողութիւն է արուստնամակ չգրելու Համար եւ տեղեկացում տեղի Դաւիթ վարդապետի ինչ-որ դժգոհութեան մասին, որի ստոյգ լինելու մասին պա-
Հանջում է բացատրագիր ուղարկել (456ա, Ա./3): Սօսրոյ Ս. Գեորգ վանքի
առաջնորդ Յարութիւն վարդապետին Հասցեագրուած ծերունի Դաւիթ վարդա-
պետի պատասխան նամակում շնորհակալութիւն է յայտնուում Յօղուած աջաՀամ-
բոյրի Համար եւ յանձնարարուում անՀրաժեշտութեան դէպքում «զԱրդարիճոյ և ի
Դատմայ թէմիցն» Հոգեւորականների Համար կատարել եպիսկոպոսների ձեռնադ-
րութիւն: Նոյնը կարող է անել նաեւ Փիլիպպոս վարդապետը (Բ./3):

Նամակները գրուել են յունիսի 29-ին:

Գեորգ աղային (Կարս) տեղեկացում է նամակի ստացման մասին (456բ,
Ա.): Վէբիլ մահտեսի Յարութիւնին (Թօխաթ) տեղեկ է պահում իր յղած նամակը
ստանալու մասին, որտեղ նշուած է նաեւ Իզմիրի Խաչատուր պետին Կ. (60) ղու-
ուած փոխանցելը: Միաժամանակ նշուած է նաեւ Ներսէս պետի ինդրած սրբալոյս
միւռնոր ուղարկելու մասին, որը «Ա. (1) ամանաւ առ Հայրապետն յղեցաք Հասու-
ցանել քեզ» (Ա./2): Նոյն վէբիլ Հայրապետին ուղղուած մէկ այլ թղթում նշուած է
երեք ուխտաւորների՝ մահտեսի Մովսէսի եւ միանների միջոցով սրբալոյս միւռն
ուղարկելու մասին: Այն պիտի փոխանցուի Թօխաթի մահտեսի Յարութիւնին եւ
նուիրակ Ներսէս պետին: Տեղեկութիւն կայ նաեւ Իզմիրից եկած «բողայի» մասին,
որը Հասցեագրուած է Սահակ պետին եւ ինդրում է փոխանցել Հասցեատիրոջը,
«իսկ շուրջառն եւ չուխայն վերստին կնքեալ յղեսցես մեզ»: Նոյնօրինակ ինդրով
դիմում է նաեւ Բայազետի տիրացու Գեորգին: Այնուհետ վկայուած է Խաչատուր
պետին ԼԵ. (35) ղուուած, ապա մի փոստուկայ տալը. «վասն Համամի ղազանին, որ
լիցի Լ. (30) կամ Խ. (40) Հօխայ եւ վասն մալթային, որ լիցի Լ. (30) Հօխայ» (Բ.):

185* **յԱղուլիս – Թուղթ մի առ Սրբոյն Թովմայի առաքելոյ**
վանից առաջնորդ Թօմաս վարդապետն ի դարձ թղթոցն ընդ
տէր Կարապետին, յաղագս վէբիլամային ծերունի Թօմայի, վասն
կայիցն Հանգուցեալ քեռն իւրոյ (որ ի յԱռուղճուղ), եթէ էՀաս մեզ
և յղելոց եմք առ մահտեսի Գեորգն և այլն, իսկ վասն Հարսին մահ-
տեսի Կարապետի, եթէ Քեալ ՅովՀաննէս յղելոց եմք յայդր և
ինդրելոց:

Գրեցաւ ամսոյս [յուլիս] ի Դ. (4):

Պատասխան նամակներ մահտեսի Նիկողայոս ամիրային (Կ. Պօլիս). «վասն
յղեալ նուիրացն ընդ եղբօր որդւոցն Երեմիա Չէլէպոյն» (Ա./4): Օրհնութեան նա-
մակներ նուիրատուներ՝ մահտեսի Ստեփաննոս Չէլէպի կին Հուսիսիմէին. «վասն

յղեալ ժամուցին» (Բ./2), մահտեսի վարդերես ամիրային. «վանն ժամուցին յղեցելոյ» (Գ.), Հանգուցեալ մահտեսի Եղիզարեան Ստեփաննոսին. «վանն ընծայիցն յղեցելոց ընդ որդւոյն իւրոյ» (Դ.): Պատասխան նամակներ պատրիարք Չաքարիա վարդապետին. «վանն տղայի ումեմն» (Ե-Չ.), իլիմննճիզատե մահտեսի Յովհաննես ամիրային. «վանն մանական ուրումն գրեցելոյ» (Է.), տեմիրճիպաշի պրն. Պետրոսին. «վանն որդւոյն իւրոյ Աստուածատուրին», որը Մայր Աթոռ ուխտի էր եկել (Ը.), նուիրակ Մինաս վարդապետին (457ա, Թ.):

186 Կոնդակ մի ընդհանրական ժողովարարութեան վանն այրեցեալ երից եկեղեցեացն Թօխաթու ըստ խնդրոյ տեղւոյն առաջնորդ Յակոբոս պետին և իշխանացն: Տէ ս զ1780 Համարն մեծ տե[տերց]:

187 Թուղթ մի օրհնութեան և շորհակալութեան ի վերայ Թօխաթու քաղաքին վանն նորոգման այրեցեալ երից եկեղեցեացն: Եւ ծանուցումն զըրջաբերական կոնդակէն: Եւ յանձնարարութիւն վանն նուիրակ Ներսէս պետին: Տէ ս զ1781 Համարն մեծ տետերց:

Նոյն Հարցի մասին նամակ առաջնորդ Յակոբոս վարդապետին. «վանն նորոգման երից եկեղեցեացն այրեցելոց» (ԺԲ.): Միսիթարական նամակներ մազրեցի մահտեսի Յովհաննեսին (Պրոտայ). «վանն եղբօրն և շորհակալութիւն վանն յղեալ ի. (20) ղուռուշ ժամուցին» (ԺԳ-ԺԴ.): Պատասխան նամակ Պրոտայի առաջնորդ Պօղոս վարդապետին. «վանն տկարութեան և շորհակալութիւն վանն Ա. (1) Թօի կեղոյն յղեցելոյն առ սրբազան վեհրն» (ԺԵ.): Պատասխան նամակ ռամեցի մահտեսի Գեորգին (Ադրիանապօլիս) որդիներ մահտեսի Ալէքսանի եւ Գալուտի նամակների առթիւ (ԺԶ.): Միսիթարութեան նամակ մահտեսի Հանգուցեալ Յովհաննես ամիրայի որդիներ Գրիգոր եւ Մկրտիչ աղաներին (Ադրիանապօլիս) եւ շորհակալութիւն «յաղագս ԻԵ. (25) ղուռուշ լուսագնին» (ԺԷ.): Հորհակալութեան նամակ նուիրատուներ ոսկերիչ պրն. Պետրոսին եւ նրա կողակից Մարիամին, որոնք Սուրբ Աթոռ էին ուղարկել մէկ արծաթեայ ոսկեզօծ խաչ. «ի յիշատակ ինքեանց» (ԺԸ.): Ռամեցի Հանգուցեալ Շէրիբարի գոյքի կապակցութեամբ նամակ մահտեսի Նազարին (Ուռուսճուղ) (ԺԹ.): Նամակ Մայր Աթոռի գանձապետ պարոն Անուշին, ուր նախ շորհակալութեան խոսք է ասուում եղբոր Հոգեբաժնի առթիւ, ապա յանձնարարում է գանձանակագրամբ յանձնել նոր նուիրակին (Ի.): Հորհակալութեան նամակ մահտեսի Յակոբ եւ պրն. Ստեփաննոս եղբայրներին, որոնք Մայր Աթոռ նվեր էին ուղարկել արծաթեայ ոսկեզօծ խաչ եւ մէկ «զարմաւապուպ» ոսկի (ԻԱ.): Տէր Մէլքոն քաւանային (Ուռուսճուղ) Հաղորդում է, թէ խոտվութիւնների աւարտին, երբ պատերազմը վերջանայ, վշտացեալ ժողովրդին միսիթարական կոնդակ է յղուելու, այլեւ՝ առաջիկայ օրերին նոր նուիրակ է ուղարկելու Ուռուսճուղ եւ այլ վայրեր (ԻԲ.): Ուխտաւորների գրութեան առթիւ պատասխան նամակ վեբիլ պրն. Հայրապետին (Կարին). «վանն Կ. (60) ղուռուշին», ինչպէս նաեւ «սակս մաֆթուլին՝ երկաթոյն և շաքարին, եթէ յղեսցես ըստ Հաւատարմութիւն, որպէս խոստացեալ ես» (457աբ, ԻԳ.): Մշոյ Ա. Յովհաննեսի առաջնորդ Աստուածատուր վարդապետին տեղեակ է պահում ԿԷ. (67) ղուռուշը Բայազետի գործակալին Հաննելու մասին, իսկ «վանն վրդովայարոյց չիք կարգաւորացն» իր

Հետ բերել Մայր Աթոռ (Ա.): Մշոյ փաշային յայտնուամէ, որ ձեռնադրուելու Համար Աստուածատուր վարդապետը գալու է Ս. Էջմիածին (Բ.): Պատասխան՝ Մարգար քաւանայի կապակցութեամբ խոյեցիների գրած բազմակնիք նամակին (Ա./2): Նոյն Հարցի մասին գրուել է նաև Ս. Թադէոս առաքեալի վանքի առաջնորդ Գէորգ վարդապետին եւ «ըստ խաթեր ձերոյ պատուիրեցաք Սրբոյն Հռիփսիմէի առաջնորդին, զի ապահովութեամբ ունիցի զնա ըստ որում անդ է այժմ և յետոյ պատուիրան կոնդակաւ յղելոց եմք» (Բ):

Նամակները գրուել են մայիսի ԺԲ-ԺԿ. (12-15)-ին:

188 **1793 թ., յունիս** - Կոնդակ ի վերայ Կտուցու անապատին, ի պատասխանի թղթոյն նոցա մաշարականի վասն Հայրութեան և եպիսկոպոսութեան Գրիգոր վարդապետին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1879

189 **1793 թ., յունիս** - Թուղթ ի Թավրեզ առ Սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Թադէոսն. շորհակալութիւն վասն յղեալ մրգեղինացն, և բան վասն ի Դուխուրդան եղեալ այգւոյն Սրբոյ Աթոռոյս:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 374աբ

190 **1793 թ., յունիս** - Թուղթ առ Դուխուրդանու ժողովուրդան վասն անդ եղեալ այգւոյն մերոյ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 374բ

191 **1793 թ., յունիս** - Թուղթ առ Սօրսոյ Սուրբ Գէորգայ վանից առաջնորդ Յարութիւն վարդապետն, ի պատասխանի թղթոյն և ի շորհակալութիւն վասն աջաւամբուրին յղեցելոց:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 1ա

192 **1793 թ., 13 յունիսի** - Թուղթ առ Սրբոյն Թովմայի Առաքելոյ վանից առաջնորդ Թովմաս վարդապետն վասն ռամիսեցի յԱդրանու բնակեալ մաշտեսի Գէորգի և ի Պօլիս եղեալ Բաբայեան մաշտեսի Կարապետի խնդրոցն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1880

193 **1793 թ., յունիս** - Թուղթ մխիթարութեան և օրհնութեան ի վերայ Թավրիզու մերազնեայ ժողովրդեանն, ընդ տէր Յովսէփ աւագ քաւանային իւրեանց և այլոց ոմանց ընդ նմա եկելոց:

Յորմէ Ժամանեցէ Թուղթ...

Եւ ընդ շորհակարգե օրհնութեան և ողջունատրութեան սիրառաք նամակիս, ծանուցումն լիցի սիրելի և Հոգևոր որդւոցդ մերոց և Հարազատ զաւակացդ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Չի

եթէ Համբաւ բարի պարուրէ զոսկերս, որպէս ասէ իմաստնացեալն յԱստուծոյ Սողոմօն, ապաքէն և գոյժն դառնաղէտ նուազեցուցանէ զոսկերս և ճմլեցուցանէ զսիրտս:

Արդ, յայս քանի տարիս բազում անգամ լսելով մեր զնեղութիւնս և զձախորդութիւնս և զվնասակրութիւնս ձեր ի փոփոխմանէ իշխողաց տեղւոյդ և յայլոց զանազան փոթորկաց չարաշատ ժամանակիս, յիրաւի ցաւէաք և կսկծէաք վասն սիրելի որդւոցդ մերոց: Թէպէտ և յաղագս մեր եւ անազատ գոլոյ յայնպիսի նեղութեանց և մանաւանդ ի բազմատեսակ Հոգոց և զբազմանց պաշարեցեալ լինելով, չկարէաք ձեռնՀաս գտանիլ առ ի մխիթարել զձեզ բանիւք օրհնութեան և մխիթարութեան:

Իսկ ի ներկայումս մինչ Հոգևոր որդին մեր՝ տէր Յովսէփ Հեզաբարոյ աւագ քահանայն ձեր, ընդ քանի մեծաՀարուստ անձանց դոյն երկրականաց, եկին ի Սուրբ Աթոռս յուխտ և յերկրպագութիւն քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս, ի նոցունց ևս Հարցեալ և ստուգեալ զվշտակցութեանց և զանյաջողութեանց ձերոց, առաւել ևս տրտմեցաք և մորմոքեցաք սրտիւ: Բայց, սիրելիք մէք, ի մրկեալ ժամանակի յայսմիկ ոչ միայն դուք էք ի նեղութիւնս, այլ յամենայն տեղեաց իսկ խաղաղութիւնն պակասեալ է և խռովութիւնն յաճախեալ, վասն որոյ գրեթէ ամենայն գլուխք ի ցաւս և ամենայն սիրտք ի տրտմութիւնս կան, մանաւանդ անտերունջ խղճալի ազգ մեր ի բազում ուրեք կան Հարեալ պէս-պէս վշտիւք և անյաջողութեամբքն:

Այլ ոչ զայլ ինչ ունիմք առնել, եթէ ոչ զաղօթն և զպաղատանս վերառաքել առ բարեգութն Աստուած, և Հայցել ի նմանէ զայցելութիւն և զխաղաղութիւն վասն ամենայն աշխարհի և առաւելապէս վասն բազմավշտակիր ազգի մերոյ: Որ և ըստ մեծի ողորմութեանն իւրում ողորմեալ և գթացեալ բարձցէ զՀանրատարած խռովութիւնն և զվրդովմունսն, և շնորհեսցէ զխաղաղութիւնն իւր ըղձալի ամենայն աշխարհի, մանաւանդ տառապակիր ազգի մերում, և առաւելապէս ևս ձեզ՝ սակաւաւոր ժողովրդեանդ բնակչաց յայդմ քաղաքի և երկրի: Չամենայն զնեղութիւնս և զվնասս ձեր, զորս կրեալ էք, յապաշխարանս Համարեսցէ, և փոխանակ այնոցիկ անդորրութիւն և ապահովութիւն և յաջողութիւն պարգևեսցէ, օրհնեսցէ զձեզ և զօրացուցէ, փրկեսցէ ի վտանգից Հոգւոյ և մարմնոյ և |1882| մխիթարեսցէ երկնաձիր մխիթարութեամբ իւրով և Համայն բարեգործութեամբք զարդարեսցէ՝ առ ի արժանաւորիլ Հանդերձեալ փառացն:

Բայց լուաք նաև զուրախական Համբաւ կատարման նորոգ շինուածոյ սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ և բարեպաշտօրէն պայծառազարդելն ձեր զդա գեր քան զառաջին, և զբերկրուն լինիլն օրհնեցելոցդ Հոգատարի բաղձանօք և ջերմեռանդ սիրով ի վերայ Տանդ աստուծայնոյ: Վասն որոյ և մէք ուրախացեալ Հոգեպէս

ասեմք՝ բարեսէրն Աստուած շնորհաւոր արասցէ զնորապերճ սուրբ եկեղեցիդ և զաշխատաւորս և զմասնակցեալնս ի ծախս դորին վարձատրեսցէ: Մանաւանդ տէր Յովսէփ արիաջան աւագ քահանային վարձաւատոյց լիցի, որ յամենայն կարողութենէ աշխատութեամբ արդեամբ ի կատարումն Հասոյց:

Եւ զամենայն աղօթս և զՀայցուածս, զոր մատուցանիցէք ի դմա, ի Հաճոյս իւր ընկալցի և քաղցրացեալ գթութեամբ ծաւալեսցէ առ ձեզ զառատ շնորհս ողորմութեան և մարդասիրութեան իւրոյ, և զՀոգիս ննջեցելոց ձերոց լուսաւորեսցէ:

Արդ, պատուիրեմք սիրելի և Հոգևոր որդւոցդ մերոց Հաստատուն կալ ի բարեպաշտութեան ձերում առ Աստուած, ոնելով զհիղթ գործոց բարեաց և սիրոյ առ միմեանս, և զորդիական սէր և զՀարազատութիւն ձեր, որ առ լուսածին մայրս ձեր Սուրբ Աթոռս և առ Հոգևոր Հայրութիւնս մեր աննուազ ոնիլ, որովք միշտ արժանասցիք օրհնութեանց յԱստուծոյ և ի մէնջ, և վայելեսցիք զշնորհս սրբոյ Իջման տեղոյս նորին: Եւ զամենայն որպիսութիւնն սրբոյ Գահիս և մեր ի տէր Յովսէփ խոհեմամիտ աւագ քահանայէդ և յայլոց ընդ դմա եկելոց և դարձելոցդ ոնիլք իմանալ: Որք և լիջիք յանձնեցեալք ի ինսամն Տեառն ամենակալի. ամէն:

Գրեցաւ ի ՌՄԽԲ. (1793) Թուոջս և ի յունիսիս... ի բարձրագաւ Աթոռս Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1881-82

1793 Թ., յուլիս:

194 1793 Թ., 13 յուլիսի - Թուղթ ի Մեծն Պօլիս առ Հանգուցեալ մահտեսի Ստեփաննոսն, ի պատասխանի թղթոյն և ի շնորհակալութիւն վասն ընծայիցն ընդ որդւոյն իւրոյ՝ Երեմիա Չէլչալոյն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1882

195 1793 Թ., յուլիս - Թուղթ ի յԱդրիանուպօլիս առ ռամեցի մահտեսի Գէորգն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ընդ որդւոյն իւրոյ՝ մահտեսի Ալէքսանին և Գալստին: Եւ յաղագս Հանգուցեալ Շէրիբար կնոջ կայիցն ի նորին վարիսաց գրեալ վէրիլլամային բան:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1884-85

196 1793 Թ., 15 յուլիսի - Թուղթ առ խօյեցիսն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն նոցա վասն Մարգար պատժեցեալ երիցուն իւրեանց:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1885-86

197 1793 Թ., յուլիս - Թուղթ ի վերայ Ջկրաշինու եկեղեցւոյն ի Թիֆլիզ յաղագս Սրբոյ Աթոռոյս ճորտ տէր Սիմէօնին (որ

ի կրկին կառուցման նոյն եկեղեցւոյն աշխատանս էր կրեալ, որ-
պէսզի Համապատիւ լիցի միւս բնակ քաւանայիցն անդանօր եղե-
լոց, և մի իբրև զեկամուտ Համարիցի:

Յորմէ ժամանեսցէ թուղթ...

Եւ ընդ աստուածային օրհնութեան սիրառաք նամակիս ծա-
նուցումն լիցի սիրելի և Հոգևոր որդւոցդ մերոց և Հարազատ զա-
ւակացդ և տերունի ժողովրդոցդ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Չի
տէր Սիմէօն խոհեմամիտ քաւանայն, որ Հանդերձ եղբարքքն ի
վաղնջոց ճորտ են Սրբոյ Գաւհիս և ինքն ի բազում ամաց Հետէ
միաբանէ այդմ սրբոյ եկեղեցւոյ, և Հաւանութեամբ օրհնեալ ժո-
ղովրդեանդ լուսարար ևս է կարգեցեալ դմա, մանաւանդ ի սկսա-
նիլն աստուածասէր և բարեպաշտ Յովաննէս աղային, ի Քրիս-
տոս Հանգուցելոյ, զնորոգ շինումն սրբոյ եկե|1887|ղեցւոյդ և ի կա-
տարումն Հասուցանելն բարեշաւիղ որդւոյ նորին՝ Տերամբ զօրա-
ցեալ ազնուական Յակոբջան աղային, դա ևս բանիւ նոցին բազ-
մաջան Հոգսակրութեամբ և աշխատութեամբ վաստակեալ է ի վե-
րայ շինման սրբոյ եկեղեցւոյդ մինչև ցաւարսն: Վասն որոյ ոչ է
պարտ դմա իբրև զեկամուտ Համարիլ յայդր և ստոր երևիլ միւս
բնակ քաւանայիցն յայդմիկ սուրբ եկեղեցւոջ եղելոց:

Ուստի և մեր այսու օրհնածիր նամակաւ գրեմք սիրելեացդ,
զի ըստ իրաւանց և ըստ քաղաքավարութեան կարգի պաւանջ-
մանն զՀոգևոր որդիդ մեր և զՀարազատ ճորտդ Սրբոյ Աթոռոյս՝
զտէր Սիմէօն խոհեմամիտ քաւանայդ, որ ի բազում ամաց Հետէ
միաբան է սրբոյ եկեղեցւոյդ այդորիկ և ի պաշտօն լուսարարու-
թեան կարգեցեալ, և ի շինումն դորին ևս կամակար մտօք աշխա-
տեալ, մի ոք իշխեսցէ ստոր արկանել, իբրև զեկամուտ վարկանե-
լով և կամ խրոխտալ ի վերայ դորա: Այլ Համարեսջիք զդա ըստ
կարգի բնիկ քաւանայութեան, և Համաստիճան ի պատիւս իբրև
զմի ի նոցունց ի բնակ քաւանայից տեղւոյդ:

Եւ կատարելով ձեր ըստ գրեցելոյս, եղիսջիք օրհնեալք և զօ-
րացեալք ի Տէր և յանձնեցեալք ի ինամն բարեգթութեան նորին,
և Հնորճք Սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարածամ: ամէն:

Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽԲ. (1793) և ի յուլիսի...,
ի բարձրագաւ Աթոռ Սուրբ Էջմիածին⁹⁰:

ՄՄ ձեռ. Հ^ր 4501, էջ 1886-87

⁹⁰ Նամակը Թիֆլիսի երբեմնի Ջիգրաշեն կոչվող եկեղեցու պատմության ուսումնասիրման համար յուրօրինակ վավերագիր է: Հիշատակված տեղ Սիմեոնը եկեղեցու ազդեցիկ հոգևորականներից է եղել, որն ավարտին է հասցրել նաև եկեղեցու կառուցումը: Պ. Մուրադյանը եկեղեցու շինարարության թվական է ընդունում 1659-ը, երբ եկեղեցու որմերը բարձրացվել են «մինչ ցերկոս մարդաշափս»: Տեական ժամանակ այս վիճակում մնալուց հետո միայն, տեղ Սիմեոնի նախաձեռնությամբ և Հովհաննես աղայի ու նրա որդու միջոցներով, 1785 թ. ավարտվել է շինարարությունը, ինչի առթիվ արձանագրություն է կազմվել (Պ. Մուրադյան, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, էջ 96-97): Ինչ վերաբերում է տեղ Սիմեոնի «նորոտությանը» (Հ^ր 215 վավերագրում ևս նշված է, որ նա վաղուց Մայր Աթոռի նոտան է «հանդերձ

198 **1793 թ., 18 յուլիսի - Թուրղթի Թիֆլիզ առ Աստուծի որդիան.** յօրհնութիւն ըստ ինդրոյ Հօրն իւրեանց, որ եկեալի Սուրբ Աթոռս գնայր յԵրուսաղէմ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 4բ

199 **1793 թ., յուլիս - Թուրղթի Թիֆլիզ առ մահտեսի Սարգիսն աղայն,** ի պատասխանի թղթոյն ընդ Դանիէլ վարդապետին գրեցելոյ վասն ոմանց բանից և առեալ դրամոցն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 5աբ

200 **1793 թ., յուլիս - Թուրղթի Թիֆլիզ առ Սուլխանն Դիւանն,** ի պատասխանի ընդ տեր Առաքել աւագ քահանային գրեցեալ թղթոյն: Ընդ որում և յղեցաւ Չաքարիայ պատմագրքի երկրորդ Հատորի ԽԸ. (48)-երորդ գլուխ պատմութիւնն ըստ ինդրոյ նորա իբր թէ Թումանեանց Բայնտուր այրն Հզօր նախնի է իւրեանց, և ինքեանք Թումանեցի կոչելով ի զարմէ նորա իցեն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1878

201 **1793 թ., յուլիս - Կոնդակ ժողովարարութեան ի վերայ ընդհանուր ազգին մերոյ վասն Թօխաթու Գ. (3) այրեցեալ եկեղեցեաց նորոգման ծախուցն,** որով ժողովուրդք նոցա ընդ պարտոք էին անկեալ և զօգնութիւն ինդրէին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1780-81

եղբարբն»), ապա Մատենադարանում պահվող Կաթողիկոսական դիվանում և Դուկաս Կարնեցու գրագրություններում էջմիածնի հարկատու ծառաները հաճախ «նորս» են կոչվում: Նրանք կենտրոնացված էին հատկապես Վրաստանում՝ պայմանավորված վրացական երկրի՝ այն ժամանակվա ընկերային-տնտեսական պայմաններով (ԳՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա., էջ 74): Պատմաբան Բենիամին Հարությունյանի հավաստմամբ՝ արքայապետական նորտերն ուղղակի հողին կցված նորտեր չէին, այլ ծառա-սպասավորներ, որոնք որոշակի չափով հարկ էին տալիս Մայր Աթոռին (Б. Арутюнян, Крупное монастырское хозяйство в Армении в XVII-XVIII вв., Ереван, 1940, с. 93-94): Նրանք ոչ միայն առևտրականներ ու արհեստավորներ էին, այլև հոգևորականներ, ինչպես օրինակ՝ տեր Սիմեոնը, որը, ըստ էության, մշտապես հարկ է վճարել Մայր Աթոռին: Ի դեպ, նորս լինելով, նրանք ազատված են եղել այլևայլ հարկերից և հարկատու են եղել միայն Ս. էջմիածնին, (Հ. Թորոսյան, էջմիածնի վանական տնտեսությունը XV-XVIII դդ., էջ 127-128): Դուկաս Կարնեցու նամակներում նրանք հաճախ հիշատակվում են նաև «պարոն» տիտղոսով, ինչից կարելի է ենթադրել, որ ուշ միջնադարում լայնորեն տարածված «պարոնտեր» կոչումը աղերսներ ունի հենց նշված երևույթի հետ, ըստ այդմ՝ «պարոնտեր» են կոչվել Մայր Աթոռին հարկատու այն հոգևորականները, որոնք, հմուտ լինելով որևէ արհեստում, մեծարվել են «պարոն» տիտղոսով և «տեր»՝ հոգևորական լինելու համար: Մայր Աթոռ Ս. էջմիածնի և Ս. Հռիփսիմե վանքերի միաբանական գերեզմանոցների XVII-XVIII դդ. տապանագրերում ևս վկայված են այս կոչումը կրող հոգևորականներ (Ս. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 144, 152, 155, 161, 168, 199, 285, արձ. 192, 219, 233, 262, 283, 387, 553):

Այս երևույթի առնչությամբ ուշագրավ է նաև Դուկաս Կարնեցու 1795 թ. ապրիլի 26-ի նորտության կոնդակը՝ ուղղված Մայր Աթոռ ժամանած «նորտացու» Երեմիային (տե՛ս վավ. 619, 729):

202 **1793 թ., յուլիս - Թուղթ** *ի վերայ Թօխաթ քաղաքին. շնորհաւորութիւն նորոգման երից այրեցեալ եկեղեցեացն, և թէ շրջաբերական կոնդակ յղեցաք ըստ խնդրոյ առաջնորդին ձերոյ ի յօգնութիւն պարտուցն վասն եկեղեցեացն արարեցելոց: Եւ յանձնարարութիւն վասն նուիրակին մերոյ՝ Ներսէս վարդապետին:*

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1781-82

203 **1793 թ., 12 յուլիսի - Թուղթ** *ի յԱդրիանուպօլիս առ նոր Հանգուցեալ մահտեսի Յովաննէս ամիրայի որդիան՝ միսիթարութիւն վասն մահուան Հօրն իւրեանց, և շնորհակալութիւն վասն լուսագնին, զոր յղեալ էին:*

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1782

204 **1793 թ., յուլիս - Թուղթ** *առ Սանահնու վանից թեմի ժողովուրդն, ի պատասխանի բազմակնքոյն ազնուորդեաց նոցա յաղագս արդեանցն չվատնելոյ մինչ տէր Առաքելն, որ ի Յովսէփ վարդապետէն վեղար էր առեալ, գայցէ և շինութիւն արասցէ վանացն⁹¹:*

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1783

205 **1793 թ., յուլիս - Թուղթ** *ի յՈւլուշջուղ առ գանձապետն Սրբոյ Աթոռոյս՝ պարոն Անոյշն, ի պատասխանի թղթոյն և ի շնորհակալութիւն վասն Հոգեբաժնի եղբօրն, զոր յղեալ էր, և վասն գանձանակի արդեանց, թէ յետ սուղ միջոցի նուիրակ եմք յղելոց, նմա Հասուցես և յայնժամ օրհնութեան կոնդակ գրեսցուք:*

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 1բ-2ա

206 **1793 թ., յուլիս - Թուղթ** *ի Մէծն Պօլիս առ մահտեսի Վարդերես ամիրայն, ի պատասխանի թղթոյն և ի շնորհակալութիւն վասն ժամուցն յղեցելոյ:*

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 2աբ

⁹¹ Սանահինի վանքի առաջնորդների ցանկում Առաքել վարդապետը հիշատակված է 1794 թ. դիմաց (Սարգիս Զալալյանըը նշում է Հայոց ՌՄԽԶ.-1797 թ. ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատասիրութեամբ՝ Սարգիս վրդ. Զալալեանցի, մասն Ա., Տիփլիս, 1842, էջ 40, տե՛ս նաև Կ. Ասֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 195), մինչդեռ, ըստ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի՝ Սանահինի վանքի թեմի ժողովրդին հղած 1793 թ. հուլիսի նամակում արդեն վկայված է տե՛ր Առաքելի անունը, որը վեղար է ստացել ուսանալոց առաջնորդ Հովսէփ վրդ. Արդուրյանից: Լոռի-Փամբակի մեծավորներին, ինչպես նաև նույն թեմին և նրա ժողովրդին հղած Վրաց Գեորգի արքայազնի 1795 թ. հրովարտակի պատենն-օրինակում ևս կարդում ենք արդեն վանահայր Առաքել վարդապետի անունը, որին էլ գործակատար Աբրահամ Բահանայի վիճակի ժողովուրդը պարտավոր է հատուցել սահմանված կարգով հաստատված ամեն ինչ (Յիշատակարան Սանահինոյ վանից (Սանահինի Քէօթուկը), աշխատասիրութեամբ՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 191):

207 **1793 թ., յուլիս - Թուղթ** **ի Մեծին Պօլսոյ պատրիարգ Ջաքարիա վարդապետն, ի պատասխանի թղթոյն յանձնարարականի ընդ Երեմիա Չէլէպոյն և տիրացու Գէորգին գրեցելոյ:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 3ա

208 **1793 թ., 12 յուլիսի - Թուղթ** **ի Պօլիս առ տեմիրճիպաշի պարոն Պետրոսն վասն որդւոյն իւրոյ Աստուածատուրին:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 3բ

209 **1793 թ., յուլիս - Թուղթ** **առ Ագուլեաց Վերիգետ գիւղի քահանայն և քեթիսուգայն վասն Մկրտչի կնոջ գալոյն անտի արգելս չտալոյ:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 4ա

457բ

210 **1793 թ., յուլիս, յԱգուլիս - Թուղթ** **մի առ Ագուլեաց Վերիգետու Համայն ժողովուրդան՝ վասն կնոջն Մկրտչի (որ ի Պօլիս), եթէ ինդրեցաք զնա Հրամանաւ խանին գնալ առ այրն իւր, ուստի մի ոք գտցի ի ձէնջ արգելիչ կնոջն այնմիկ, այլ Համակամութեամբ ջանասջիք ընդ առաջնորդին ի զին առնուլ ի խանէն և յղէլ ի Սուրբ Աթոռս՝ գնալ աստի առ այրն Հաւատարմաւ:**

Նոյն Հարցի մասին գրուած է նաեւ առաջնորդ Թօմաս վարդապետին եւ յիշեալ կնոջ ամուսին Մկրտչին (Կ. Պօլիս) վերստին Հասցեագրուած նամակներում, ինչի առթիւ. «նշանակեցաք ի նմա ի. (20) թուման ևս՝ մինչ բանն ի գլուխ եկեացէ»։ Յովհաննէս պետին յղած թղթումն շուրջաւ է Մկրտիչ պետի «զկայան» իրեն ուղարկելու մասին։ Յիշատակութիւն կայ նաեւ Մովսէս աբեղայի վերաբերեալ ինչ-որ գրովեան մասին, որը պետք է ուղարկուի Հասցեատիրոջը (457բ, Բ./3)։ Յուսուողական թուղթ ուղղուած Մկրտչի կնոջը (Գ.)։

211 **Թուղթ** **մի տաճկերէն առ Նախիջևանու խանն՝ վասն կնոջն Մկրտչի, զի Հրամայեցէ գալ ի Սուրբ Աթոռս՝ Հանդերձ ընծայիւք ընդ Քեալ Յովհաննիսին:**

212 **Ի Տաթև - Թուղթ** **մի առ տեղւոյն առաջնորդ Յովակիմ պետն՝ վասն Մկրտիչ պետին, զի թողցէ մնալ ի վանան Ագուլեաց և զկայն յղէլ առ նա ըստ աղերսանաց Թօմաս պետին։ Այլև յիշումն զընդհանրական կոնդակէն, զոր ըստ ինդրոյն ետուք իւր ժողովարար Միքայէլ պետին:**

Գրեցան յամսոյս ի ԺԸ. (18):

213 **Ի Սևան - Կոնդակ** **մի առաջնորդական, զոր գրեալ ետուք նորոգ առաջնորդին Սևանու Գրի[գոր] պետին:**

Գր[եցաւ] ի ԻԱ. (21):

Հնորհակալութեան նամակ նուիրատու մահտեսի ՅակոբՅանին (ԹԻՖԼԻՍ), որը Մայր Աթոռ էր ուղարկել իր Հանգուցեալ մօր Հոգեբաժինը՝ Ժ. (10) եալտդ ոսկի (Ա./5): Պատասխան նամակ մահտեսի Սարգիս աղային (ԹԻՖԼԻՍ) (458ա, Բ.):

458ա

214 Թուղթ մի ևս ի վերայ Սանահնոյ Սուրբ Աստուածածնի վանից թեմականացն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն ազնուորդաց: Յորում պատուէր վասն արդեանցն նոյն վանից՝ առ ի պահել մինչև ցգալն տէր Առաքել վարդապետին ի Հաշտարիասնու ի նորոգումն նոյն վանից:

215 Թուղթ մի ևս ի վերայ Զկրաշէն կոչեցեալ նորակերտ եկեղեցւոյն վասն տէր Սիմէօն քահանային, եթէ ընկալջիք զդա իբրև զձեզ բնիկ միաբան սրբոյ եկեղեցւոյն ձերոյ: Ըստ որում աշխատութեամբ վաստակեալ է ի վերայ շինմանն և է վաղուց հետէ ճորտ Սրբոյ Աթոռոյս Հանդերձ եղբարքն:

216 Թուղթ մի ևս առ Սրբոյ Աթոռոյս ճորտ վերոյ յիշեալ տէր Սիմէօնն՝ ի դարձ թղթոյն ընդ Դանի[էլ] պետին՝ վասն Ե. (5) մնրի ոսկի աջահամբիւրին շնորհակալութիւն: Իսկ վասն կոնդակին Հասարակութեան, եթէ ահա գրեալ յղեցաք ըստ ինդրոյդ:

Նամակ դապաղ Յարութիւնի կողակից Խամիկերուանին այն մասին, որ Մարտիրոս վարդապետին յանձնարարուած է տալ նրան Ե. (5) թուման՝ «վասն պակասաւորութեանդ» (458ա, Զ.): Օրհնութեան եւ շնորհակալական նամակ նուիրատու Թամամ կնոջը, Դանիէլ պետի ձեռամբ Ժ. (10) Հատ մնրի ոսկի Հոգեբաժինը նուիրաբերելու առթիւ (Է.):

217* Թուղթ մի ևս առ մէլիք Մինասն ի դարձ թղթոյն ընդ Դանի[էլ] պետին, եթէ այժմ ձեռնհաս չեղաք Հոգս առնել վասն չիք քահանայիցն այնց, բայց մինչ փոքր-ինչ ապահովասցուք, վրէժինդի լինելոց եմք վասն քոյ, անհոգ լեր: Եւ վասն որդւոյն քոյ տիրացու Թադէոսին, զոր ինչ գրեալ էիր իմացաք, մեք յայնժամ յորդորեցաք ի գալ մինչ թուղթն քոյ առաջին մեզ էհաս, այժմ է ի Բլուր: Մինչ եկեսցէ ևս յորդորելոց եմք ի գալ առ քեզ: Իսկ այն սիահիքն, զոր յղեալ էիր մեզ ի Հաւատարմութիւն գրուեցդ՝ տեսեալ դարձուցաք առ քեզ:

218* Թուղթ մի ևս առ Սրբոյ Աթոռոյս ճորտք պարոն Եսովք և պարոն Յովհաննէսն ի դարձ թղթոյն նոցա ընդ Դանի[էլ] պետին, վասն ճորտիցն Սրբոյ Աթոռոյս, եթէ այժմ ի գհաղանս գոլով ձեռնհաս չեղաք գրել ինչ վասն նոցա, բայց յետոյ գրելոց եմք, անհոգ լերուք: Իսկ վասն պարոն Յովհաննիսի ԺԲ. (12) լիտր մոմոյն, եթէ էհաս մեզ և շնորհակալ եղաք՝ շէն մնասցես: Եւ վասն տիրացու Ստեփաննոսին, եթէ յայնժամ խոստացաք յղել շարական մի, մինչ ինդրեալ էր ի մէնջ, բայց մոռացմամբ մնացեալ է ցարդ, իսկ մինչ Հաւատարիմ եկօղ լիցի ի քանի աւուրս, յղելոց եմք ընդ նմա:

219* **Հուլիս** – Թուղթ մի առ Վանական պետն ի դարձ թղթոյն ընդ Դանի[էլ] պետին, եթէ իմացաք զգրեալսդ վասն չիք Գրիգոր իբր սեւաւորին, վասն որոյ գրելոյց եմք ի Գեանջայ Սարգիս պետին, տեսցուք, եթէ նա զինչ գրեսցէ, որ մէք ևս ըստ այնմ արասցուք: Ողջոյն Հարազատին իւրոյ մէլիք Սարգսին և Համայն իւրայնոցն:

Առաջնորդ Մարտիրոս վարդապետին ուղղուած նամակում շոշափուած են մի քանի Հարցեր, մասնավորապէս՝ Աղալոյենց Հանգուցեալ Աբելի կնոջ յիշատակների՝ Աւետարանի եւ խաչի, մահտեսի Յակոբջան աղայի մօր Հոգեբաժնի, Վանական պետի նամակների՝ կապուած Գրիգոր սեւաւորի անպատշաճ արարմունքների, տէր Ղազարի յղած դեղին մոմը սպիտակով փոխարինելու, դապաղ Յարովթիւնի կնոջը. «զոր ընթերցեալ տացես իւրն Հանդերձ Ծ. (50) ալթմըշլիւ» եւ «վասն էձ. (700) վատսունանոցին»: Վերջինիս վերաբերեալ գրուել է ստացական, ըստ որի՝ նուիրակական միջոցները յղուել էր Ս. Էջմիածին (ԺԱ-ԺԲ.): Նամակները գրուել են յուլիսի Լ. (30)-ին:

1793 թ., օգոստոս:

220 **1793 թ. օգոստոս** - Թուղթ ի Սպարթայ առ մերային ժողովուրդան. չորհաւորութիւն նորոգ կառուցեալ եկեղեցւոյն իւրեանց և Հաստատութիւն նորոգ գանձանակին և գանձապետին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1784

221 **1793 թ. օգոստոս** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ ագուլեցի Բաբայեան մահտեսի Կարապետն, ի պատասխանի ինդորոյն, որ վասն Մկրտչի կնոջն յղելոյ առ այրն, որ ի Պօլիս մօտ առ ինքն կայր ի բազում ամաց Հետէ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1784-86

222 **1793 թ. օգոստոս** - Թուղթ ի Գեանջա առ Սարգիս վարդապետն՝ եղբայրն Հանգուցեալ Յովաննէս կաթողիկոսին, որ իբր առաջնորդ էր անդ ի պանդխտութեանն. յանդիմանութիւն վասն անարժան չիք կարգաւորի ուրումն, զոր ծայրագոյն վարդապետ ձեռնադրեալ և կարգեալ էր առաջնորդ Համշատինու մնացեալ ժողովրդեանն⁹²:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 5Բ-6Բ

223 **1793 թ. 17 օգոստոսի** - Դարձեալ թուղթ առ նոյն Սարգիս վարդապետն, ի պատասխանի յուլիսի ի Իթ. (19) գրեալ թղթոյն. միսիթարութիւն վասն եղբարցն և միամտութիւն վասն ի Հնդիկա առաքելի թղթոցն նոցա, թէ յղելոյց եմք:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 6Բ-7ա

⁹² Գանձակի (Գյանջա) առաջնորդ Սարգիս վարդապետին հղված նամակի ամբողջական հրատարակությունը տես ԳՉՊ, գիրք Գ., սյուն 599-600:

224 1793 թ. օգոստոս - Թուղթ օրհնութեան ի Նոր Նախիջևան առ տէր Առաքելի Հանգուցելոյ որդի ՆաՀապետն ի շնորհակալութիւն վասն յղեալ տրոցն ընդ ուխտաւորացն անտի եկելոց⁹³:

ՄՄ ձեռ. Հ^թ 4538, էջ 7աբ

458բ

225* **Ի Գեանջայ** – Թուղթ մի առ Հանգուցեալ Յովհաննէս կաթողիկոսի եղբայր Սարգիս պետն՝ յանդիմանութիւն վասն չիք կարգաւորի ուրումն, զոր ծայրագոյն վարդապետ էր ձեռնադրեալ և կարգեալ իբր առաջնորդ Համշատինու մնացեալ ժողովրդեանն) Տէ՛ս զմիջակ տե[տերց] 10 Համարն: Գր[եցաւ] յամնոյս [օգոստոս] ի Ա. (1):

226 **Ի Գօրի** – Թուղթ առ տէր Ղազարն՝ Հարկ, զի զկոնդակն, զոր գրեալ եւք ի ՌՄԼԳ. (1784) Թուոջն վասն Սուրբ Ստեփաննոս եկեղեցոյն, առեալ եկեսցէ ի Սուրբ Աթոռ ընդ Հաղբատայ առաջնորդին: Տէ՛ս զմիջակ տե[տերց] ԱՃԴ. (104) Համարն: Գր[եցաւ] յամնոյս ի Թ. (9):

Պատասխան նամակ նուիրակ Մինաս վարդապետին (Կ. Պօլիս) եւ ստացական՝ փոխանցուած ԸՌ. (8000) ղուռուշի Համար. «զորս փօլիցայ էր տուեալ պարոն Մանուկի չրաղ պարոն Փիլիպպոսին Հասուցանել ի Կարին առ վէթիլ պարոն Հայրապետն» (458բ, Ա./2-Բ): ՀնորՀակալութեան նամակ գանձապետ մահտեսի Յակոբին (Ամիդ) եւ օրհնութիւն նուիրակ Դաւիթ վարդապետին՝ բարերարութեան Համար: Նաեւ ծանուցում՝ նոր թագաւորին յղուած ֆերմանները նրան Հասցնելու մասին (Գ.): Օրհնութեան նամակ նուիրատու Սոփիա կնոջը, որը նուիրակ Դաւիթ վարդապետի միջոցով Ս. Էջմիածնին նուիրել էր արծաթեայ խաչ (Դ.): Օրհնութեան եւ շնորհակալութեան նամակ Փիլիպպոս ամիրային (Կապնեմատան), նուիրակներ Ներսէս եւ Դաւիթ վարդապետներին յանձնած բարերարութեան առթիւ, նաեւ՝ ծերունի վարդապետի ԱՃ. (100) ղուռուշ կտակի վերաբերեալ շնորհակալութիւն, որը գանձուել էր բռնատրոսերից եւ յղուել Կարինի վէթիլ Հայրապետին, վերջինս էլ փոխանցել էր Մայր Աթոռ (Ե.):

227* **Թուղթ մի առ նուիրակ Դաւիթ վարդապետն ի դարձ Բ. (2) Թղթոցն ի յԱմիթ, ի Սուրբ Կիրակոս եկեղեցին գրեցելոց, վասն օրհնութեան Թղթոյն կնոջն Սոփիա, եթէ աՀա գրեալ լըրեցաք ըստ ինդրոյդ՝ յիշելով ի նմա և զանունն տէր Մարտիրոս քաՀանային: Իսկ վասն սղութեանն կողմանց միսիթարութիւն: Եւ վասն Մշու Սուրբ Յովհաննիսի վանից վիճակայնոց վնասուցն (որ առ ինքն), եթէ գրեցաք նորին առաջնորդ Աստուածատուր պետին, զի Հերքեսցէ յեկեղեցոյն մերմէ զՄիքայէլ եւ Չաքարիա չիք քաՀանայն և զնոցին գործակից Սարգիս ոչ վարդապետն: Նաեւ ի գողն ի Սուրբ Աթոռս բերցէ և զնոսա ընդ ինքեան, զի վերաՀասու լիցուք**

⁹³ Նոր Նախիջևանի առաջնորդ հանգուցյալ տեր Առաքելի որդի Նահապետին հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 600:

ամբարշտական արարմանցն նոցա: Այլ վասն Փերինու տէր Ստեփանի ձեռագրին (զոր յղեալ է ի Խարբերդ), եթէ Հասու լիցիս առ ի առնուլ զդրամս և մեզ ծանուցանել: Եւ թէ զքէն ծանուցես՝ արդեօ՞ք գնացեր ի Քիւրտիստան: Իսկ զՖարմանէն նոր թագաւորի, եթէ աճա յղեցաք առ գանձապետ մահտեսի Յակոբն ըստ ինդրոյդ, երբ կամեսցիս յղեսցէ քեզ: Եւ վասն որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և կողմանցս, եթէ մերայինքն գրեալ են քեզ, ի Հարկէ իմանալոց ես անտի:

228* **Ի Կարին** – Թուղթ մի առ վէքիլ պարոն Հայրապետն ի դարձ Բ. (2) թղթոցն վասն Յովհաննէս պետի ԲՌ. (2000) ղուռուշ փօլիցային, եթէ երբ Հասցի քեզ ի մահտեսի Նիկողայոս ամիրայէն, ծանուցես մեզ: Հասին մեզ Ա. (1) բեռ շաքարն և Բ. (2) կտոր երկաթէ մաֆթուլն, որոց զգինսն և զքիրայն գրեցաք ի դաւթարդ, անձոգ լեր: Իսկ սակս ԳՌ. (3000) ղուռուշ փօլիցային (որ առ Նաւասարդի որդի Հայրապետն), եթէ Հասուցեալ է ի Բայազիտ տիրացու Գէորգին, միամիտ լեր: Այլ վասն տիրացու Մէլքոնի՝ ի Խօյայ Հասուցեալ դրամոցն, եթէ Հասուցեալ է ի Բայազիտ, տիրացու Գէորգին 1350 ղուռուշ ևս 1500 ղուռուշ: Իսկ Պալիպէկեան Յարութիւնի փեսայ Ստեփանինն 450 ղուռուշ, որոց ամենից գումարն եղև 3300 ղուռուշ, զորս առ մեզ Հասեալ գիտելով, անձոգ լեր:

/459ա/ ՉԲաղանեաց ղազանէն, եթէ երբ աւարտիցի, յղեսցես ընդ նմին և Չ. (6) ղանթար երկաթն, եթէ աժան իցէ և եթէ ոչ՝ Բ. (2) ղանթար: ՉՀաճի Պապայէն, եթէ գրեալդ իմացաք, վերստին գրեսցես ծածկաբար, զի գիտասցուք: Մատենու Փիլիպպոս ամիրայի թղթոյ պատասխանին՝ աճա գրեալ առաքեցաք տացես Հաճի Յովհաննէս փեսայ պարոն Սիմոնին կամ պարոն Մինասին և ԱՃ. (100) ղուռուշն առնուցուս, որոց սիրով և օրհնութեամբ ողջոյն տամք: Վասն Մինաս պետի թղթոյն և ԸՌ. (8000) ղուռուշի դաւզին, եթէ աճա յղեցաք Հասուցես առ նա, բայց թէ ի ճանապարհի է մնացէ առ քեզ, որ ի գայն յայդր տացես իւրն: Իսկ վասն Ամթայ նուիրակ Դաւիթ պետի թղթոցն պատուէր, զի Հասուցէյ Ամիթ առ գանձապետ մահտեսի Յակոբն Հասուցանել նորա առ նա: Եւ զՍրբոյ Սաղիմայ պատրիարգի թղթոյն, եթէ էճաս ընծայքն ևս Հասանիլոց են ի Հարկէ ընդ Յովհաննէս վարդապետին:

Գրեցան յամսոյս ի Ժ. (10):

Օրհնութեան եւ շնորհակալութեան պատասխան նամակ խոջայ մարաֆ Յակոբին (Կարին) Մայր Աթոռի Հանդէպ ցուցաբերած Հոգատարութեան Համար (459ա, Ա.):

459ա

229 **Թուղթ մի առ սառաֆ խօջայ Սարգիսն**, ի դարձ թղթոյն ընդ Յովհաննէս պետին՝ վասն գերի անկեալ կանանցն երկուց, եթէ միոյն զայրն սպանեալ են անդանօր, այսինքն՝ ի

Մուխրան գետին և միւսոյն ոչ գիտեմք ուր է և այն: Եւ եղբայր կնոջն ևս չքաւոր: Դու գիտես ի կամս քոյ է, եթէ դարձուցես ի Բայազտոյ կամ թէ ազատ առնիցես:

230 **Ի Բայազիտ** - Թուղթ մի առ Սահակ աղայն, ի դարձ թղթոյն ի կողմանէ գերի անկեալ կանանցն գրեցելոյ, եթէ միոյն զայրն սպանեալ էն ի գերեզն և միւսոյն գնացեալ է ի Գեանջայ՝ ի կինածութիւն. զհաւաստին ևս ոչ գիտեմք և այդ Խաչատուր տղայն ևս չքաւոր գողով, ոչ կարողանայ տալ: Ուրեմն ի կամս խօջայ Սարգսին է, որպէս կամեսցի, արասցէ կամ դարձուցէ առ ինքն և կամ ազատս արասցէ: Չայտոսիկ խօջայ Սարգսին ևս գրեցաք և ահա յղեցաք քեզ Հասուցանել նմա, ուրեմն Հասուցես:

Գրեցան յամնոյս ի ԺԵ. (15):

231 **Ի Գեանջայ** - Թուղթ մի ի Գեանջայ առ մէլիք Մեծլումն, ի դարձ թղթոցն՝ մխիթարութիւն վասն ձախորդակի դիպուածոցն և ապա՝ օրհնութիւն և շնորհակալութիւն վասն Հարազատութեանցն և ծանուցումն զթղթոյն (որ առ Հահամիր աղայն), եթէ յառաջիկայ աւուրքս յղելոց եմք, անհոգ լէ ր:

232 Թուղթ մի ևս առ Սարգիս պետն ի դարձ թղթոյն. յիշումն թղթոյն մերոյ առաջնոյ: Եւ մխիթարութիւն վասն եղբօրն, որ սպանեցեալ էր ի պատերազմին: Իսկ զթղթոյն (որ առ Հահամիր աղայն), եթէ ի քանի աւուրս յղելոց եմք, միամիտ լէ ր:

233 Թուղթ մի տաճկերէն առ Ճաւատ իսանն, ի դարձ Հալերէն գրեալ թղթոյն, զոր յղեալ էր ընդ մէլիք Մեծլումի թղթոյն:

Գրեցան յամնոյս ի ԺԶ. (17):

234 **Ի Ղօնիա** - Թուղթ մի ի Ղօնիա առ մերային ժողովուրդան. օրհնութիւն վասն մարդասիրութեանցն իւրեանց (որք առ նուիրակն) և շնորհակալութիւն վասն նուիրակական տրոցն ընդ Յովհաննէս պետին:

235* Թուղթ մի օրհնութեան առ մահտեսի Սնայն՝ վասն կէս ոսկի աջահամբուրին, զոր ձեռամբ առն յղեալ էր ի Սուրբ Աթոռս առ սրբազան Վեհրն:

236 **Ի Սպարթայ** - Թուղթ մի ի Սպարթայ առ մերային ժողովուրդան. շնորհաւորութիւն նորոգ կառուցեալ եկեղեցւոյն իւրեանց և Հաստատութիւն նորոգ գանձանակին և գանձապետին: Տէս զմեծ տե[տերց] 1784:

237 Թուղթ մի ևս ի Սպարթայ առ Յովհաննէս աղայն և առ նորին որդի Պետրոս աղայն (որ գանձապետ էր կարգեցեալ

Սրբոյ Աթոռոյս). ՀնորՀակալուծիւն վանն նուիրակին և Հաստա-տուծիւն վանն գանձապետութեանն:

238* **Ի Կարին** - Թուղթ մի օրհնութեան և ՀնորՀակալու-ծեանն ի Կարին առ պարոն Յովհաննէսն՝ վանն խորանաւոր խա-լիչային, գորյանձեալ էր ձեռամբ պարոն Հայրապետին, նուիրակ Յովհաննէս պետին Հասուցանել առ սրբազան Վեհրն:

ՀնորՀակալուծեան նամակ Աւետիք եւ Յակոբ մահտեսի եղբայրներին (Կա-րին) պարոն Հայրապետի միջոցով ԱՃ. (100) ղուռուշ կտակը Մայր Աթոռ ուղար-կելու առթիւ, ինչպէս նաեւ մխիթարական խոսք իրենց Հօր՝ մահտեսի Կարապետի մահուն կապակցութեամբ (459բ, Զ): Այլ նամակ՝ ուղղուած տէր Մկրտչին եւ պարոն Կարապետին՝ միեւնոյն Հանգուցեալ Կարապետի՝ ԲՃ. (200) ղուռուշ կտա-կը պարոն Հայրապետի միջոցով Մայր Աթոռ ուղարկելու մասին (Է):

459բ

239* **Թուղթ մի ևս առ վէքիլ պարոն Հայրապետն**, ի դարձ թղթոցն ընդ նուիրակ Յովհաննէս վարդապետին. յիշումն առա-ջին թղթոցն յառաջքան զայս յղեցելոց, վանն ընչիցն ի սրբոյ Սա-ղիմայ եկելոց (որք ի Թիֆլիզ), եթէ յղեցաք ընդ Հաւատարմի՝ ան-Հոգ լէր: Այլեւ՝ յիշումն առաջին փօլիցայիցն, եթէ գրեալ եմք յա-մենայն Ժ-ին և ծանուցումն երկրորդ փօլիցայիցն, գորս տուեալ էր առ ԵՃ. (500) ղուռուշ Բալուբէկի փեսայ Հայրապետին և ԵՃ. (500) ղուռուշ՝ ղազանչի մահտեսի Խաչատուրին, և թէ որոց թա-մասուքն Հասին՝ առնելոց եմք և քեզ գրելոց: Չերից օրհնութեան թղթոցն, եթէ աւա գրեալ յղեցաք՝ եղև Բ. (2) ղալամից ջամն ԳՃ. (300) ղուռուշ, Ե. (5) ղուռուշն խարճէ գնացեալ ըստ գրեցելոյդ, մնացած ԲՃՂԵ. (295) ղուռուշն անցուցանես նուիրակի դաւ-թարն: Իմացաք զմոտն Մինաս պետի ի Պօլիս: Իզմիրու Գ. (3) դէսկ զատերն երբ Հասանիցի՝ յղեսցես: Մինչ գրեալ էաք զայս թուղթն՝ Երեւանու Բ. (2) ղրդտայ փօլիցայն մեզ էՀաս ի Պալու-բէկի Յարութենէն և ի մահտեսի Խաչատուրէն և գրեցաք ի դաւ-թարդ, միամիտ լէր: Եւ թէ ողջոյն տացես Փողենց Յովսէփին, որոյ թուղթն մեզ էՀաս, աւա պարոն Յովհաննէսն՝ մերով Հրամա-նաւ Բ. (2) ամիս վատայ ետ քեզ և նմա ևս թուղթ գրեաց, բայց մինչև ցերկու ամիսն վճարեսցէ, որ ամօթ չկրեսցէ:

Գրեցան յամնոյս ի ԺԼ. (18):

240 **Ի Բայազիտ** - Թուղթ մի առ Սահակ աղայն, ի պա-տասխանի թղթոյն ընդ փայեկի ուրումն, որով Հարցեալ էր զոր-պիսութենէն կողմանցս: Առ, որ գրի երկարապէս: Եւ թէ փաշայն ևս էր Հարցեալ, վանն որոյ նմա ևս գրեցաք երկարապէս ըստ լրոցն ներկայի:

241 **Թուղթ մի տաճկերէն առ Իսաղ փաշայն** ի դարձ թղթոյն, որով խնդրեալ էր ի սրբազան Վեհէն գրել զորպիսու-

Թեանց կողմանցս, ուստի գրեցաւ երկարապէս ըստ ներկայի լրոյն՝
զաղայ Մաւմատ խանէն և զԳարսէվան էշիկաղասուն Հերակլայ:

Գրեցան յամ[սոյս] ԻԹ. (29):

242 **ԻՆախիջևան** - Թուղթք օրհնութեան վանն տրոց առ
ոմանս ընդ նախիջևանցի ուխտաւորացն:

Գր[եցաւ] յամ[սոյս] ԻԹ. (29):

Բալուի առաջնորդ Գրիգոր վարդապետին ուղղուած նամակում վկայուած է մաւտեսի Պօղոսին բանադրանքից ազատելու հարցը, որը կարուի միայն վերջի-
նիս զղջման դեպքում: Նոյնը հրահանգում է նաեւ Բալուի առաջնորդին, իսկ ոմն
Տեփոյի դեպքում կաթողիկոսը ինդրում է իրեն չդիմել: Այնուհետ յղած աջաւամ-
բոյրի համար շնորհակալութիւն է յայտնում միեւնոյն Գրիգոր եւ Փիլիպոս վարդա-
պետներին: Յիշատակում է նաեւ նոսրակ Դաւիթ պետին եւ ինդրում ողջոյն փո-
խանցել Նորիջևան պարոն Գեորգին եւ Իսպիրեան պարոն Պետրոսին: Գրուել է
օգոստոսի ԻԹ. (19)-ին (459թ, Ա./2): Յաջորդ նամակում, որը գրուել է սեպտեմ-
բերի Ա. (1)-ին, յատակ նշուած է Մեծկերտցի մաւտեսի Պօղոսի՝ զղջման դիմաց
բանադրանքից ազատելու իրողութիւնը (Բ./2):

243 **Կոնդակ մի ժողովարարութեան** ի վերայ Համախու, Հրվանու, Դարբանդու և Բաքուայ և նոցին շրջակայիցն, զոր ըստ
ինդրոյ Գեօրկին խանին էտուք Սիմէօն անուն առն Իմերէթցոյ:

Գրեցաւ յամսոյս ի Ե. (5):

244 **Կոնդակ մի ևս ժողովարարութեան** ի վերայ Թօխա-
թու, Սեբաստիոյ, Ակնայ և Արապկիրու և նոցին շրջակայիցն՝
վանն Աբրահամ անուն առն Կարնեցոյ, զոր գրեալ էտուք ինքեան,
ըստ ինդրոյ ոմանց իշխանացն տեղոյ:

Գրեցաւ յամսոյս ի Թ. (9):

460ա

245 **Ի Պօլիս** - Թուղթ մի առ Ագուլեցի մաւտեսի Կարա-
պետ աղայն՝ վանն Մկրտչի կնոջն (որ ի յԱգուլիս): Տէ ս զմեծ
տե[տերց] 1784 Համարն:

246 **Ի Պրուսա** - Թուղթ մի առ Հանգուցեալ մաւտեսի
Աղամջանի որդիան վանն մաւտեսի Հօրն իւրեանց միսիթարութիւն:
Տէ ս զմիջակ տե[տերց] 202 Համարն:

247 **Ի Կարին** - Թուղթ մի առ վերիլ պարոն Հայրապետն.
յիշումն թղթոցն մերոց առաջնոց առ ինքն և առ ոմանս գրեցելոց:
Եւ ծանուցումն զթղթոյն Ագուլեցի մաւտեսի Կարապետի և Հան-
գուցեալ մաւտեսի Աղամջանի որդւոց, եթէ Հաւատարմաւ Հասու-
ցես նոցա: Իսկ վանն Բալուայ առաջնորդ Գրիգոր և Ղուկայու
առաջ[նորդ] Փիլիպպոս վարդապետաց թղթոցն և ԱՃԼ. (130)

զուուուզ դրամոցն Հարցումն, եթէ Հասեալ են առ ինքն զդրամնն, գրեցցէ ի դաւթարն իւր և զթուղթնն նոցին յղեցցէ ի Սուրբ Աթոռս, և թէ ոչ, գրեցցէ նոցա առ ի գիտել զայնոսիկ և ծանուցանել սրբազան Վեհին:

Այլ և զիւր Մեքոնէն, եթէ որ ինչ Հասուցեալ էր յառաջամէ, գրեցաք քեզ յանցելումն: Այժմ ի գալն Բայազիտ Հասուցեալ է վերստին ԱՌԵՃ. (1500) զուուուզ: ԵՃԺԱ. (511) զուուուզ ևս Հաւալայ է արարեալ ի վերայ Թարձիմանեան պարոն Պետրոսին, որ նա տացէ: Մինչ այս ևս Հասցի, ծանուցանելոց եմք քեզ:

248 **Ի Կարս** - Թուղթ մի առ Գէորգ աղայն վասն պա-
Հարանեալ թղթոցն առ Հայրապետն Հասանելեաց, եթէ ժամ մի
յառաջ յղեցցես ընդ Հաւատարմի: Եւ թէ մերձեցաւ ժամանակ
գալստեան ձերոյ, ուրեմն խաղաղութեամբ լիցի:

Գրեցան յամսոյս ի Ե. (5):

249 **Կոնդակ** մի ժողովարարութեան ի վերայ Բայազետոյ,
Վանայ, Տիգրանակերտոս, Խարբերդու և Բալուայ և նոցին շրջա-
կայիցն՝ վասն Գասպար անուն առն Արապկերցւոյ, զոր ետուք ին-
քեան ըստ ինդրոյ տեղեկանաց ոմանց:

Գր[եցաւ] յամսոյս ի Ժ. (10):

250 **Ի Բաղէշ** - Թուղթ մի առ Ամրտօլու վանաց առաջ-
նորդ Չաքարիա վարդապետն ի դարձ թղթոյն, որ վասն Բաղիշու
խանի վաճառականի ի Թալին կողոպտեցեալ ընչիցն: Տէս զմի-
ջակ տեսերց 108 Համարն:

251 **Թուղթ** մի տաճկերէն առ Բաղիշու խանն, ի դարձ
թղթոցն, որ վասն կողոպտեցեալ ընչիցն՝ ընդ Պօղոս անուն առն
միոյ:

Գրեցան յամսոյս ի ԺԷ. (17):

252 **Արտասան** - Թուղթ մի օրհնութեան ի գեօղն Արտա-
Հան, առ ընտանիսն Հանգուցեալ տէր Յովսէփի, որք զկտակն
Հանգուցելոյն կատարելով յղեալ էին ի Սուրբ Աթոռս զմի մատակ
ձի՝ Հանդերձ քուռակաւն, ձե[ռամբ] Գէորգ աղային:

253 **Թուղթ** մի ևս օրհնութեան առ Մարիամ կին ոմն՝
վասն Ա. (1) լիտր պղնձին, զոր ձե[ռամբ] Գէորգ աղային Հասու-
ցեալ էր ի Սուրբ Աթոռս:

Գրեցան յամսոյս ի ԺԳ. (13):

254 **Ի Կարս** - Թուղթ մի առ Գեորգ աղայն, ի պատաս-
խանի թղթոյն ընդ Սարվան Աճմատին՝ վասն Բ. (2) օրհնութեան
թղթոցն, եթէ աճա գրեալ յղեցաք՝ Հասուցես տեարցն:

Հարցումն զպաշարանեալ թղթոցն ի Կարին գնացելոց առ
վէքիլ պարոն Հայրապետն, եթէ Հղեցէ՞ր ցարդ, թէ ոչ:

Ծանուցումն զՄիրզայ Ռազի տաճկէն, զեկելոյն ցայս կող-
մունս յաղայ Մաճմատ խանէն, եթէ այս ինչ մտօք է եկեալ, ոճնելով
զՖարմանս ի վերայ իշխողացն Խօյու, Երևանու և Գեանջայու, զի
Հնազանդեացին Սուլէճման խանին, եկելոյն ի Թաւրէզ:

Այլ մինչ գրեալ էաք զայս թուղթս, էՀաս մեզ և յամոյս ԺԳ.
(13) գրեալը, որով իմացաք զյղիին պաշարանեալ թղթոցն մերոց
առ վէքիլ պարոն Հայրապետն, շնորհակալեցաք զքէն:

Հարցեալ էիր զթղթոցդ զառ մեզ գրեցելոցն, անՀոգ լէ՛ր, իւ-
րաքանչիւրքն ըստ Ժամանակին իւրեանց Հասին:

Գրեցաւ յամոյս ի ԺԹ. (19):

Մայր Աթոռի գանձապետ պարոն Յովհաննէսին (Բաղէշ) յղած պատաս-
խան նամակում վկայուած է ուխտաւոր պարոն Գրիգոր Ամթեցու Լ. (30) ղուռուշ
նուիրաբերումը, որից վերցուել է Ի. (20) ղուռուշը, իսկ մնացածը յետ վերադար-
ձուել՝ ուխտը Համարելով կատարուած: Զուգահեռ կարգադրում է տիրացու Յա-
կոբի միջոցով ուղարկել վերոյիշեալ Լ. (30) ղուռուշը, շոշափում են նաեւ Հարցեր
նուիրակ Գրիգոր պետի Ե. (5) քարսալան տէր Ներսէսի միջոցով նամակատիրոջը
Հասցնելու, ինչպէս նաեւ Սարգիս Ժամշարեանցի օրհնութեան թղթերի մասին
(460աբ, Ա./5): Դարձեալ օրհնութեան թուղթ Բաղէշի տէր Ներսէս քաճանայի մի-
ջոցով նուիրակ Գրիգոր պետի Ե. (5) քարսալան Մայր Աթոռի գանձապետ պարոն
Յովհաննէսին յանձնելու մասին (460բ, Բ.):

255* **Ի Նոր Նախիջևան** - Թուղթք օրհնութեան՝ վասն
տրոց առ անձինս ոմանս, ընդ նախիջևանցի ուխտաւորացս: Գր-
[եցաւ] յամ[սոյս] ի ԺԹ. (19):

256* **Ի Բալու** - Թուղթ մի առ Բալուայ առաջնորդ Գրի-
գոր պետն. յիշումն թղթոյն մերոյ առաջնոյ ընդ Մեծկերտցի մաճ-
տեսի Պօղոսին եւ ծանուցումն զԱՃԼ. (130) ղուռուշէն, եթէ էՀաս
մեզ եւ շնորհակալ եղաք զձէնջ: Եւ աճա առ Փիլիպպոս պետն եւս
շնորհակալութեան թուղթ գրեցաք վասն Լ. (30) ղուռուշին եւ յղե-
ցաք քեզ Հասուցանել նմա, ուրեմն Հասուցես Հաւատարմաւ:

Իսկ վասն Սօրսրու վանից առաջնորդ Յարութիւն պետին,
եթէ թուղթ մեղադրանաց գրեալ վասն քոյ չպճիլ ի ձեռնադրու-
թիւն արտաքոյ իւր վիճակին, յղեցաք առ վէքիլ պարոն Հայրա-
պետն Հասուցանել առ նա, անՀոգ լէ՛ր առ այս: Եւ վասն գալս-
տեանն իւրոյ ի Սուրբ Աթոռս, եթէ Տէր յաջողեցէ:

257* **Ի Ղուպյ** - Թուղթ մի առ Ղուպյու վանաց առաջնորդ Փիլիպպոս պետն՝ վասն Լ. (30) ղուռուշ աջաՀամբուրին շնորհակալութիւն (զոր ընկալաք ձե[ռամբ] վէքիլ պարոն Հայրապետին) եւ ապա վասն նուիրակ Դաւիթ վարդապետին՝ օրհնութիւն եւ շնորհակալութիւն, զոր ընկալեալ էր ի սէր:

258* **Ի Սօրսուր** - Թուղթ մի առ Սօրսրոյ վանաց առաջնորդ Յարութիւն պետն. յիշումն թղթոյն մերոյ առաջնոյ ընդ Դաւիթ պետին ծերունոյ: Եւ պատուէր զգուշութեամբ կեալ եւ մի փութալ ի ձեռնադրութիւն, որ ոչ իցէ յւր վիճակէն, այլ ընտրելով արասցէ զարժանաւորսն վիճակին իւրոյ եւ մի՛ լիցի վաղվաղակ եւ այլն:

259* **Ի յԱմիթ** - Թուղթ մի առ նուիրակ Դաւիթ պետն ի դարձ թղթոյն գրեցելոյն ի լուլի՛՛ Ա. (1), ի յՈւրՀա՛՛ վասն առաջին թղթոցն, եթէ ընկալեալ մեր գրեցաք զպատասխանսն յառաջքան զայս, յուսամք Հասեալ իցեն ցարդ: Իսկ վասն այն կողմանց վրդովմանցն՝ մխիթարութիւն: Եւ վասն գանձապետաց, եթէ Հանումն Հսոյն՝ մեր Հրամանան է, իսկ նորն, եթէ պատշաճաւոր չէ, զայլ ոմն ընտրեա քահանայիւք եւ իշխանօք եւ մեզ գրեալ ծանո: Եւ վասն ՈւռՀայու նուիրակութեանն եւ գանձանակի արդեանցն, եթէ սիրով եւ խաղաղութեամբ առցես զնուիրակութիւնն եւ զգանձանակի արդիւնսն ըստ դաւթարին, զոր տեսեալ են: Եւ ապա պահանջեցես զԴՃ. (400) ղուռուշն Վարդան պետի, եթէ տան սիրով բարի է եւ եթէ ոչ՝ Տիւրկցի փաշայի սառաֆ Պետրոս աղայի թուղթն, զոր աՀա ըստ ինդրոյդ յղեցաք, տացես ինքեան, իցէ թէ նա ի գլուխ բերցէ խաղաղութեամբ ըստ գրեցելոյ մերոյ, եւ թէ ևս չլինիցի, դու առանց գժդութեան, չափաւորապէս բաշխեալ զսրբալոյս մեռոնն՝ ելցես այտի ի յՈւրՀայու յայլ վիճակ քոյ եւ զորպիսութիւնն գրեալ մեզ ծանուցես:

260* **յՈւրՀա** - Թուղթ մի առ Տիւրկցի Պետրոս աղայն՝ շնորհակալութիւն վասն լաւութեանցն առ նուիրակ Դաւիթ պետն ցուցելոց եւ յանձնարարութիւն վերստին վասն նորին: Եւ ապա պատուէր վասն ԴՃ. (400) ղուռուշին Վարդան պետի (որ է մնացեալ ի վերայ ժողովրդոցն քաղաքի), զի յորդորեսցէ զիշխանսն առ ի տալ եւ ազատիլ ի Հոգեւոր պարտոց: Ողջոյն տայ եղբօրն իւրոյ՝ Կարապետ աղային:

261* **յԱմիդ** - Թուղթ մի առ գանձապետ մնաՀտեսի Յակոբն. յիշումն թղթոցն մերոց առաջնոց եւ ապա վասն նուիրակի թղթոյն այժմուս գրեցելոյն, եթէ Հասուցես առ նա Հաւատարմաւ, իսկ վասն արարմանացն նորընծայ աբեղային ընդ վարդապետին իւրոյ, եթէ իմացաք եւ /461ա/ շնորհակալ եղաք զքէն, որ Հաշտեցուցեալ էս զնոսա սիրով, իցէ թէ այսուՀետեւ մնասցեն ի զգօնութեան:

Ի Կարին – Թուղթ մի առ վերջի պարոն Հայրապետն, ի դարձ երից թղթոցն՝ յօգոստոս **ԺԵ.** (15) և **ԻԲ.** (22), և ի սոյն ամսոյս **Ա.** (1) գրեցելոց. յիշումն թղթոցն մերոց առաջնոց առ յինքն յղեցելոց: Վասն **ԺԵ.** (15) ղուռուշին Եալովացի Թօրոսի, եթէ իմացաք, զոր տուեալ էս ինքեան և մեր գիրն առ մեզ դարձուցեալ: Համամի ղազանն և **Չ.** (6) ղանթար և **Ե.** (5) Լօխայ երկաթն Հասին մեզ և սոցա գինն և խարճն գրեցաք ի դաւթարդ, լէ՛ր միամիտ: Ի Հալապու եկեալ պաշարանաւ Թուղթքն Հասին մեզ ի ձեռն ղարսեցի տղայի ումեմն, անհոգ լէ՛ր: Հասին մեզ և Թուղթքն ՍաՀակ պետի, նաև Ամթայ նուիրակ Դաւիթ եւ Բալուայ առաջնորդ Գրիգոր պետաց և նորա ԱճԼ. (130) ղուռուշն, որ քեզ է Հասեալ, գրեցաք ի դաւթարդ: Վասն յղեալ թղթոցն պատուէր, զի Հասուցէ առ տեարն, Յարութին պետինն առ ինքն և Դաւիթ պետինն առ մահտեսի Յակոբն և առաջնորդ Գրիգոր պետինն ևս առ ինքն: Իզմիրու **Գ.** (3) Հակն յղեսցես ի Բայազիտ, առ տիրացու Գէորգն՝ Հասուցանել մեզ: Չոր ինչ գրեալ էիր զտեղոյդ նուիրակէն՝ իմացաք: **ԳՃԿ.** և **Գ.** (363) ղուռուշի թամասուկն Պարուպէկէնց փեսայ Ստեփանի, զոր տուեալ էր ի Խօյ տիրացու Մեքրոնն, եթէ մեզ էՀաս մինչ **Չ.** (6) դրամն առցուք, ծանուցանելոց եմք քեզ: **ԹԷ** քոյ և **ԹԷ՛** Մեքրոնի փօլիցացից աղագաւ, որ թասկիրայ էիր յղեալ իմացաք, մեք զայդցանէյառաջամէ գրեալ եմք, ի Հարկէ իմանալոց էս զինչ Հասեալն առ մեզ: Այժմ, որ գրեալ էիր, թէ ի վերայ Չաւարակէնց պարոն Գրիգորին առ **ՉՃԼ.** (608) ղուռուշ փօլիցայ արարաք, տակաւին տիրացու Գէորգն մեզ բան չէ գրած, մինչ գրեսցէ, ծանուցանելոց եմք:

Իսկ վասն **ՉՃ.** (600) ղուռուշին Նախիջեւանցի պարոն Գրիգորի, եթէ տեղս տուաք և քոյ ղաւղն առաք ի նմանէ: Եւ վասն **Կ.** (60) ղուռուշին Ակնցի տէր Ստեփանի և խօջայ Ղազարի, եթէ աստ ետուք և թամասուկն աՀա առ քեզ յղեցաք յառնումյայդր ի նոցանէ, ուրեմն առեալ ծանուցես:

Գրեցան յամսոյս ի **ԺԹ.** (19):

Ի Շիրակուան – Կոնդակ մի ի վերայ Շիրակուանու և շրջակայիցն՝ ընդ Մարտիրոս պետին, վասն առաջնորդական Հասից և իրաւանց:

Գրեցաւ յամսոյս ի **ԻԲ.** (22):

Ի Խօյ – Թուղթ մի ի վերայ խօյեցուցն՝ ընդ Մարգարէ երիցուն, մինչ արձակեցեալ ի կապանաց վերադառնայր անդ: **Տէ** ս զմեծ տե[տերց] 1888 Համարն:

Թուղթ մի առ Խանբաբեան պարոն Բաբաջանն, ի դարձ **Բ.** (2) թղթոցն՝ վասն Մովսէս պետի թղթոյն և ղալամքեար սուֆրային, եթէ մեզ Հասին: Եւ էՀաս և փակեթ մի ի նոյն Մովսէս

պետէն: Գրեալ էիր, թէ քանի մի քաւանայք և ժողովուրդք երկրիս կամին զեկեղեցի մի շինեցուցանել, բայց պարզապէս չիմացաք, ի Խոյ կամին, թէ՛ ի Բաղդատ, ուրեմն գրեսցես, զի գիտեսցուք: Ջտեր Մարգարն աւա դարձուցաք յետս, բայց իմանալոց ես զպատուէրն մեր, որ առ նա ի Հասարակաց կոնդակէն: Եւ վասն նուիրակ Սողոմոն պետին, եթէ ի գալն յայդր ողջոյն տալով ի մէնջ ձեռնստու լիցիս գործոյն: Այլև՝ ողջոյն պարոն Յովհաննէսին Աւանեան:

266* **Ի Թարեզ** - Թուղթ մի առ տէր Յովսէփ քաւանայն, ի դարձ թղթոյն՝ վասն Ջուղայու թղթոյն, եթէ մեզ էհաս, որ էր պատասխանին կոնդակին մերոյ առաջոյ: Եւ վասն առողջութեան որդւոյն ի Հիւանդութեանն, եթէ ուրախացաք մինչ լուաք: Իսկ վասն Տոխուրդանու Հաճի Քեազիմ աղայի և մեր ժողովրդեանն թղթոցն, եթէ իմացաք, զոր ինչ գրեալ էիր, բայց խոհեմութեամբ, որպէս օգուտն է Սրբոյ Աթոռոյս, այնպէս արասցես: Եւ վասն Մարաղայու խանին, եթէ մինչ գնասցես ի տեսութիւն, ծանուցես մեզ և զորպէս առնելն քոյ, զի գիտասցուք: Եւ թէ Դաւթի լրբութիւն իմացաք, ըստ խոստմանդ /461բ/ այն մարդոյնն ևս գրեսցես, զի իմասցուք: յԵրից խառատաց մինն վախճանեցաւ և Բ.քն (երկուքն) վերադարձան յայդր, բայց վարպետ Մըսն խոստացաւ Սարգիսն բերել և դառնալ, եթէ դարձցի, բարուք է և եթէ ոչ, ինքն գիտասցէ: Նոցին տուեալն մեր իմանալոց ես ի փուսուլայէն, զոր և եղաք ի թուղթս այս: Ողջոյն եղբարցն՝ պարոն Աւետիքին և պարոն Բաբաջանին, նաև՝ գանձապետ Թադէոսին և իւր որդոցն՝ Յովհաննէսին և Ստեփանոսին:

Գրեցան յամնոյս ի ԻԲ. (22):

Օրհնութեան նամակ նուիրատու Ունիֆէր կնոջը (Թիֆլիս)՝ մէկ արծաթէ խաչ եւ արծաթէ կազմով Աւետարան առաջնորդ Մարտիրոս վարդապետի ձեռամբ Մայր Աթոռին նուիրելու Համար (461բ, Ա.): Պատասխան նամակ Թիֆլիսի Հայոց առաջնորդ Մարտիրոս վարդապետին եւ գործակալ տէր Ղազարին (Բ.): Վէբիլ պրն. Հայրապետին (Կարին), յանձնարարուով ԵՆախիջեանցի Փանոսի որդի պարոն Խաչատուրին տալ ԲՃ. (200) ղուռուշ, քանի որ վերջինս այդքան գումար էջմիաճնում յանձնել էր կաթողիկոսին (Ա./2): Այնուհետ մխիթարութեան եւ օրհնութեան խոսք է յղում միեւնոյն պարոն Հայրապետին. «վասն աչացաւին, որ սակաւացեալ էր եւ փոքր-ինչ լուսաւորեցեալ» (Ա./3):

461բ

267 **Ի Կողբ** - Կոնդակ մի ի վերայ Կողբայ վասն աղի ընդ Ալէքսան պետին: Գր[եցաւ] յամնոյս ի ԻԶ. (26):

1793 թ., սեպտեմբեր:

268 **1793 թ. սեպտեմբեր** - Կոնդակ ժողովարարութեան վասն ձեռնատ և ոսոնատ Սիմէօն առն ափխազի՝ ի ազատել զգե-

րեալ ազգայինն իւր: Որդւոցդ մերոց և լուսաճնունդ զաւակացդ Սրբոյ Աթոռոյս, որք կայք յաստուածախնամ քաղաքսդ՝ ի Համախի, ի Նուխի, ի Բաքու և ի Դարբանդ, և ի շրջակայ գիւղորայս դոցին: Առաջնորդաց, քահանայից, իշխանաց և Համայն օրհնեալ ժողովրդոցդ առհասարակ՝ ի Տէր խնդալ:

[Շտորհք]

Չի սոյն գրաբեր Սիմէօն անուն այրդ, որ է ազգաւ իմերէթ, և ի բնակչացն երկրին Վրաց, ինքն ի ձեռաց և ոտիցն պակասաւոր գողով, եղբօր որդին ևս մինչ ուղևորեցեալ է գալ առ ինքն, ի ճանապարհին գերեցեալ է ի լեզկեաց և ի Դարբանդ վաճառեցեալ: Ապա խղճալիդ այդ յայլ ուստեք է ճար չունելով, միջնորդական թղթով պատուամեծար անձանց դիմեալ էր առ մեզ, խնդրելով զթուղթ ժողովարարութեան՝ զօգնութիւն ինչ գտանել յօրհնեալ ազգէ մերմէ, առ ի ազատել զգերին: Եւ մեք չկարելով անստես առնել, զայս նամակ շնորհեցաք դմա:

Ուրեմն, սիրելի և Հոգևոր որդիք մեր, ի գալ խղճալոյդ այդմիկ առ աստուածասիրութիւն ձեր, ի փառս Աստուծոյ և վասն Հոգւոց կենդանացդ և ննջեցելոց ձերոց, շնորհեսջիք դմա զկամաւոր ողորմութիւնս՝ ի յօգնութիւն ազատեցման գերոյն: Եւ ամենաողորմած Տէրն մեր Քրիստոս Հաճեցեալ ընդ տուրս ողորմութեան ձերոյ, փոխանակ միոյն բազմապատիկ Հատուցէ ձեզ յայսմ աշխարհի և ի Հանդերձելումն:

Գրեցաւ ի ՌՄԽԲ. (1793) թուոյն մերում և ի սեպտեմբերի... ի Սուրբ [Էջմիածին]:

ՄՄ ձեռ. Հ^մ 4449, էջ 41բ

269 **1793 թ. սեպտեմբեր** - Թուղթ օրհնութեան ի յԱրտաՀան առ Հանգուցեալ տէր Յովսէփի ընտանիսն վասն մատակ ձիոյն և քուռակին, զորս յղեալ էին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4449, էջ 42աբ

270 **1793 թ.** - Թուղթ ի Սիչով առ ազնիւ աղաչայ Նիկօն և եղբարսն, ընդ նոր նուիրակ Գրիգոր վարդապետին խամսեցոյ:

Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ...

Եւ ընդ առատաձիր օրհնութեանս աստուածայնոյ, ծանուցումն լիցի ազնիւ սիրելեացդ |1787| մերոց և Հարազատ որդւոցդ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Չի ի թուոյն Փրկչին 1791 գրեցաք զթուղթ մի առ բարեպաշտ Հայրն ձեր՝ ձերունափայլ ազնիւ աղաչայ Յովաննէսն և առ ձեզ Հասարակապէս, և թուղթ մի ևս առ անդրանկապատիւ աղաչայ Նիկօր յատկապէս, զորս և յղեցաք ի ձեռն Յովսէփ աստուածիմաստ վարդապետին՝ Հասուցանել առ ձեզ:

Չլինի այնորիկ ի 1792 թուոջն ևս մինչ լուսք զտրտմալի լուր վախճանմանն Հօրն ձերոյ և վաղածանօթ սիրելոյն մերոյ, ի յապրիլ ամսոյ 17 գրեցաք զթուղթ մխիթարութեանն առ բարեծնունդ որդիսն նորին: Բայց մինչև ցայժմ զպատասխանսի ոչ ընկալաք ի ձէնջ և կարօտ մնացաք գիտելոյ զորպիսութեանց ձերոց և զբարեկեցութենէ, որոց ցանկամք յաւետ: Արդեօք մոռացեա՞լ իցէք զՍուրբ Աթոռ մայրս ձեր և զՀոգևոր Հայրութիւն մեր, կամ՝ թէ՛ նուազեա՞լ իցէ որդիական սէր և գութ ձեր, որք յայսքան ժամանակ միով թղթով ևս յիշել զմեզ անփոյթ գտանիք: Եթէ մէք ի մէջ օձից և կարճաց գոյով և զոգնատեսակ նեղութիւնս և զՀոգս ունելով, ոչ մոռանամք և ոչ զանց առնեմք զձեօք, ապա որչա՞ փ, ևս առաւել պարտ է ձեզ ջանալ մխիթարել զմեզ և սրտադիւր առնել մինչ ընդ ձեռամբ քրիստոնեայ տերանց յապաՀովի կայք, որոց ամենախնամ Տէրն առաւել ևս խաղաղութիւն շնորհեսցէ ի բարեզուարճ կեանս պահելով միշտ:

Իսկ արդ, որովհետև ի վերադարձմանէ Ներսէս վարդապետին ի նուիրակութենէ կողմանցդ մինչև ցայժմ Հինգ ամ եղև, յորում ոչ յաջողեցաւ նորոգ նուիրակ առաքել ի պատճառս վրդովմանց մեծի պատերազմին և այժմ ի դադարիլ մարտին և ի Հանդիրտիլ ժողովրդոցն, ստիպաւ նուիրակ ինդրէին, վասն որոյ և մէք Հարկաւոր գիտելով աՀա զսիրելի և Հոգևոր որդին մեր՝ զԳրիգոր շնորհունակ վարդապետն և զարհիւպիսկոպոսն, Հանդերձ սրբալոյս մեռնաւ և օրՀնաձիր կոնդակաւ առաքեցաք, առ ի զՀոգևոր պետս օրՀնեցելոցդ լցուցանել բաշխմամբ աստուածագործ սրբոյ մեռնին և զվասն Հոգւոյ մարմնաւոր նուէրնն ձեր ժողովել ի յօգնութիւն պիտոյից Սրբոյ Աթոռոյս: Որոյ աղագաւ զայս գրեմ սիրելեացդ մերոց ազնուաց, զի թէպէտ գիտեմ, որ ի Հեռուատ ևս զսէր զընդունելութիւն ցուցանելոց էք առ նուիրակն մեր, և ի տուրս ևս չէք ինսայելոց: Սակայն բարեգոյն լինիցի, եթէ կարիցէք տանիլ զնա ի մէջ ձեր: Քանզի ի ժամանակի նուիրակութեանն Հանգուցեալ Ստեփաննոս վարդապետին, մինչ առաջնորդ ինդրէիք, թէպէտ և մէք առաջնորդ ևս կարգեցաք զնա ձեզ, սակայն ըստ որում արգելական Հրաման էր ելեալ յարքունուստ, վասն որոյ ոչ եղև գալ նմա ի մէջ ձեր:

Ապա, սակա գալոյ եպիսկոպոսի ի Սրբոյ Աթոռոյս առ ձեզ յայցելութիւն, թուղթ գրեցաք առ բարեՀոչակ կայսրն Յովսէփ, և առ նորին դեսպանն, որ ի Պետրպօք, ի թուոջ Փրկչին 1785 ի փետրվարի 15: Եւ յղեցաք ի ձեռս Յովսէփ յօգնաՀանճար վարդապետին, զի թարգմանեցուցեալ Հասուցէ առ կայսրն, որոց աղագաւ և առ ազնիւ աղայ Յովաննէսն մեր ևս գրեցաք՝ խօսիլ ընդ դեսպանին և Հոգ տանիլ իրին: Եւ Յովսէփ վարդապետն գրեալ էր մեզ, թէ թարգմանել ետու և յղեցի: Սակայն յետոյ յիշեալ կայսրն վախճանեցաւ, և զկնի եղբայրն նորա՝ Լէուպօլյաջորդեալ

զաթոռ նորա, նա ևս վախճանեցաւ, և ինդիրն մեր մնաց անա-
կատար, և ոչ ևս գիտեմք, թէ զհարդ է լինելոց:

Այլ ազնիւ սիրելիքդ մեր, որք ըստ լսելոյն մերոյ զինամ և շ-
նորճ էք գտեալ ի մեծանուն կայսերէն Յովսէփայ, և ոնիք զյառա-
ջադիմութիւն առ իշխօղս երկրիդ, եթէ կարելի իցէ, Հրաման առ-
ջիք և զնուիրակն մեր տարջիք ի յօրհնեալ քաղաքդ, որ | 1788 | միսի-
թարեացէ և շահեացէ զձեզ աստուածային բանիւք, և թէ ոնիցիք
զձեռնադրելի դպիրս ի պատրաստի, ձեռնադրեացէ ի սարկաւա-
գունս և ի քահանայս և զամենայն որպիսութիւնս սրբոյ Գահիս
ծանուցէ ձեզ: Եւ զձեր որպիսութիւնսն ևս գիտացեալ գրեացէ
մեզ և կամ ի գալն պատմեացէ:

Եւ դուք ևս զթուղթն սիրոյ և Հարազատութեան ձերոյ չպա-
կասեցուցանիցէք առ ի մէնջ: Եւ մէք ևս զօրհնութեան գիրն մեր
անպակաս արասցուք առ ի ձէնջ: Որովք որդիական սէրն և Հնա-
զանդութիւնն ձեր միշտ արծարծեսցի և այնու զշնորհս Սրբոյ Գա-
հիս և զօրհնութիւնս նորա անպակաս վայելիցէք: Ողջ լերուք ի Տէր
և զօրացեալք ի Հնորհս նորին՝ Հանդերձ ձերայնովք ամենեքումք.
ամէն:

Գրեցաւ յամի Փրկչին 1793 և ի մերս թուոջ ՌՄԽԲ, ի Հոկ-
տեմբերի էլն, յերկնաՀանգէտ Աթոռս Սուրբ Էջմիածին:

Գիտասջիք և զայս, ազնիւ սիրելիք մեր, զի բաղիշեցի կամ
վանցի Շահնազարի որդի Ստեփաննոս ոմն, թողեալ զկինն իւր և
զորդին ի Վան, ի ԺԴ. (14) տարիս և կամ յայլ աւելի ժամանակս
տարագրեցեալ է յայդ կողմնսդ, զորմէ ասեն, թէ ի Տանձկայ կո-
չեցեալ քաղաքն է: Վասն որոյ ընտանիքն և ազգային բարեկամք
երէք կտոր թուղթս ետուն մեզ՝ յղել առ նա, զորս և մէք եղաք ընդ
թղթոջս: Ի փառս Աստուծոյ, Հասուսջիք առ նա, և թէ ճանաչէք
զնա, դուք օրհնեալքդ ևս գրեսջիք, իցէ թէ իսղճաՀարիցի գայցէ
իւր տանն Հոգոցօղ լիցի, կամ թէ զստոյգ պատասխանի ինչ գրիցէ:
Չայն պատասխանագիրն Հասուսջիք մեր նուիրակին՝ յուղարկել
առ մեզ, և մէք Հասուսցուք առ բարեկամն նորա: Ողջ լերուք:

ՄՄ ձեռ. Հ^Պ 4483, էջ 1786-88

271 **1793 թ. սեպտեմբեր** - Թուղթ ի յՈւրուսջուղ առ
գանձապետ պարոն Անոյն ընդ նուիրակին, վասն նորին յանձնա-
րարութիւն և վասն պատրաստի եղեալ գանձանակադրամին պա-
տուէր՝ տալ նմա, մինչ ըստ ինդրոյն զկոնդակն Հնորհակալութեան
գրեցաք⁹⁴:

ՄՄ ձեռ. Հ^Պ 4538, էջ 7բ-8ա

⁹⁴ Ուրուսջուղի գանձապետ պարոն Անույն հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 600-601:

272 **1793 թ. սեպտեմբեր** - Թուղթի Չմիւռնիա քաղաք առ Վիրապեանց պարոն Սարգիսն վասն տաւրոյն զնուէրս յանուն սրբոյ Գեղարդեանն⁹⁵:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 8աբ

273 **1793 թ. սեպտեմբեր** - Թուղթի Բալու վասն արձակման մեծկերտցի մահտեսի Պօղոսին, որ յանցեալ ամիսն ընդ վատթար Տեփօյին բանադրեցեալ էր, իսկ այժմ մեծաւ զղջմամբ դիմեալ է ի Սուրբ Աթոռս, որ և օրհնեցաւ և արձակեցաւ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1887

274 **1793 թ. սեպտեմբեր** - Թուղթի Խոյ ընդ տեր Մարգարին, որ յետ պատժեցմանն և առ միջոց մի ապաշխարելոյն արձակեալ վերադառնայր:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1888

1793 թ., հոկտեմբեր

275 **1793 թ. հոկտեմբեր** - Թուղթ մխիթարութեան իյիզմիր առ Հանգուցեալ Աստուածատուր աղայի որդիան, ի պատասխանի թղթոյն իւրեանց, որ վասն մահուան Հօրն իւրեանց և մխիթարութիւն առ այն, ևս և վասն Հօրաքեռն իւրեանց և առ նորին Հանգուցելոց⁹⁶:

Չայս բան անցից Սահակ վարդապետին որոշեալ ի թղթոջ աստի՛ յատուկ փուսուկայիւ գրեցաք նոր սկզբնաւորութիւն առնելով այսպէս: Այսու թղթով գիտել լիցի պատուական եղբօրդ վասն Սահակայ վարդապետին: Չի նա ի սեպտեմբերի քանիսն էհաս ի Սուրբ Աթոռս և ի գալն մինչ վաստակեալ էր և տկար, յուղարկեցաք ի վասն Սրբոյն Հռիփսիմեայ, որում առաջնորդ էմք կարգեալ զիւր Չրաղ Յովաննէս վարդապետն և Հարկ արարուք նմա բարտք պաշտպանել ծերութեանն, զի Հանգիստ առցէ և զօրասցի մինչ ի քանիս ատուրս:

Չկնի ատուրց ինդրեցաք զսիրելի եղբօրդ առ նա գրեալ թուղթման, զոր ի ձեռին ունէր և ընթերցաք զամենայն բարեմտօրէն գրեալսդ, ապա և զինքն կոչեցաք առ մեզ ի յատեան բազմութեան եպիսկոպոսաց, որ իբրև եկն, կատարեալ զղջումն եցոյց մեղայիւ և արտասուօք: Եւ մեք թէ վասն ծերութեանն և ցաւագրութեանն և թէ մանաւանդ վասն գրութեանց յարգելի եղբօրդ ոչ բնաւ յիշեցաք զյանցանսն և ոչինչ յանդիմանեցաք, այլ իսկոյն ողորմեսցի ասացաք և սիրով ընկալաք, դնելով զվեղար ի գլուխն և զիմ փիլոնն

⁹⁵ Չմյուռնիայի պարոն Վիրապեանց Սարգիսն հղված նամակի համառոտագրութիւնը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 601:

⁹⁶ Վավերագրի սկիզբը 1890 էջից է, լուսանցում խաչածն նշանով:

արկանելով ի վերայ |1891| և զազնիւ մատանի ագուցանելով ի մատն, և նատեցուցանելով ի կարգին եկեղեցականաց՝ յիւրումն տեղւոջ: Եւ զայս միայն ասացաք ի զգուշութիւն, թէ ահա ծերացեալ ես և պատժոյ տանելութիւն չունիս և զի ցանկալի եղբայրն մեր գրեալ է: Ահա զանց արարաք զանցելովքն, սակայն զգաստացիր այսուհետև՝ ոչ ևս գործել զյանդիմանելի գործս, ոչ զմեզ վիրաւորել և ոչ դու վիրաւորիլ:

Ելեալ ապա խաղաղութեամբ դարձաւ ի վանս Սրբոյն Հռիփսիմեայ: Եւ յետ երկու աւուրց եկեալ ի ժամ սուրբ պատարագին, որովհետև անկարացեալ է ի պատարագ մատուցանել, Հաղորդեցաւ ի կենարար մարմնոյ և յարենէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ յարձակման ժամոն Հրաւիրեցաք ի սեղան մեր: Եւ մինչ աւարտեցաւ մեղանն, մատոյց մեզ զաջաւամբոյր ինչ: Իսկ մեք չկամելով առնուլ՝ ասացաք թէ ըստ գրութեան քում պակասաւորեալ ես ի կայից և կարօտութիւն ես ցուցեալ վասն որոյ ըստ յանձնարարութեան պատրիարգ եղբօրն մերոյ, մեք պարտիմք քեզ խարճի տալ և զհարկաւոր պետոդ հոգալ, ապա զի՛նչ է այս որն չքաւորութեանդ աշխատ լինիս:

Պատասխանեաց, թէ զայն ուրիշ իմն դիտմամբ գրեցի, այլ ոճնիմ ևս զբաւական խարճի և ապրուստի կարոտութիւն չունիմ, անհոգ լեր յայնմ կողմանէ, և զսակաւ նուերս ընկալ և այլն:

Ապա և մեք ի թախանձանացն Հարկեցեալ՝ ընկալաք զմատուցեալն և շնորհակալութեամբ օրհնեցաք:

Քանի աւուրքս ևս անցեալ ի վերայ՝ կրկին եկն ի Սուրբ Աթոռս և ԲՃ. (200) զուռուշ տուեալ ինդիր արար պաշտամանց բաժանել միաբանից և Հացկերոյթ առնել: Առ այն ևս ասացաք, թէ եթէ կարողութիւն չունիս, Հարկ չէ զայսպիսիս առնել, այլ նախապէս զքեզ հոգալ պարտիս:

Նա պատասխանեաց, թէ այս ինձ հոգ չէ, այլ մինչ զայսբան տարագրութիւն և ցաւ կրեցի և կրկին դարձայ ի սուրբ Աթոռս իմ ազատ մտօք կամիմ առնել զայս իբրև պատարագ գոհութեան:

Եւ մեք Հաճեալ արարուք ըստ ինդրոյն: Չկնի աւուրց ինչ ևս խօսեցաք, թէ պատրիարգ եղբայրն մեր ի պատասխանի քոյդ գրուածոց՝ գրեալ է քեզ, զի եթէ աստ չլօժարիցես մնալ երթիցես առ ինքն և նա յուրեք առաջնորդ կարգեսցէ զքեզ: Արդ, ահա եկեալ զօրհնութիւն ընկալար, այսուհետ և սիրելի մեր ես և Հնազանդ որդի սրբոյ Աթոռոյս: Եթէ Հաճիս աստանօր մնալ կամ յԱթոռոջս, և կամ թէ ի Սուրբ Հռիփսիմեայ վանան, ի սէր եմք ոճնելոց զքեզ, և թէ գնալ կամիցիս, խաղաղութեամբ և օրհնութեամբ ուղևորեսցուք:

Պատասխանի արար, թէ այսու ծերութեամբ և ցաւագարութեամբս Հագիւ ժամանեսցի ի Սուրբ Աթոռս, այլ երբ կարեմ՝ յերկարաձիգ ճանապարհ գնալ և մանաւանդ մինդ կարօտիմ այլոց,

Թէ պաշտպանիցեն ինձ, ես զիս՝ ըրդ ևս զգործ և պաշտօն յանձն առից, այլ ամենայօժար սրտիւ կարցից մնացից աստ մինչև ի վճարումն կենացս մնացածոց:

Մէք ևս մինչ տեսաք, թէ դիտաւորութիւն ի մնալն է, յուսադրեցաք շահել և մսիթարել զծերութիւնն: Եւ զի յօժարեցաւ առաւել ի Սուրբ Հռիփսիմեայ վանսն կալ ապահովութեամբ, պատիրեցաք առաջնորդ Յովհաննէս վարդապետին լաւապէս մոռայէթ լինիլ և սպասաւորել իբրև Հօր իւրոյ և երախտաւորի: Եւ մինչև ցայսօր զգաստութեամբ և Հնազանդութեամբ կայ, տացէ, Աստուած, զի միշտ բարւոք կացցէ և չդարձցի յառաջին յանդդնութիւնսն:

ՄՄ ձեռ. Հ^ր 4501, էջ 1889

276 1793 թ. Հոկտեմբեր - Թուղթ առ Մեծին Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն, ի պատասխանի թղթոյ նորա ի յապրիլի 8 գրեցելոյ ի սոյն թուոյն:

Յորմէ ճշմարիտ սիրով և կարօտիւ եղբայրականաւ, քրիստոսածիր սուրբ ողջունիւ և Հոգեգուարձ շնորհիւ սրբոյ Իշման տեղոյս նորին ծանուցումն լիցի գերարգոյ եղբօրդ իմոյ Հոգւոյս ցանկալոյ, Հաւատարիմ և օգտաջան որդւոյդ Սրբոյ Աթոռոյս՝ տեսնող Զաքարիա աստուածաբան վարդապետի և արհիամեծար եպիսկոպոսի, և ճոխապատիւ պատրիարքի ՀանրաՀոռչակ մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ:

Չի սիրածիր թուղթնազելի եղբայրութեանդ ժամանեաց առ մեզ յամենան մայիսի, որ գրեցեալն էր յապրիլի Ը. (8), և ծանեաք զբանսդ, որք ի նմա: Ուրախ եղաք ընդ ողջութիւն անձիդ պատուականի և շնորհակալ եղաք ընդ առաւելումն անխարդախ սիրոյդ: Իսկ զի յամեցաւ պատասխանագրութիւնս մեր, պատճառ էր նախապէս յոգնատեսակ Հոգք և զբաղմունքն մեր, որք ի ցաւալի ժամանակիս օրըստօրէ ևս քան զևս յաւելանին և երկրորդապէս, ըստ որում գրեալ էիր, թէ Մինաս վարդապետն յԱնդրիանուպօլիս զգործն աւարտելոց և դառնալոց է ի մայրաքաղաքս, գալ ի Սուրբ Գազդ, և մէք զասելիսն մեր խօսելոց եմք ընդ նմա, ի գալն ծանուցանել: Եւ նա ինքն ևս յետոյ գրեալ էր զգալն յայդր և առ ձեզ վասն որոյ դիտեաք գալտեսան նորին, թէ իմանայցեաք ինչ, և ապա զլիագոյն պատասխանիս գրիցեաք:

Բայց զի երկարեցաւ միջոցն և նարդէնիս դէպ եղև մեզ նուիրակ առաքել առ Ուռումէլու երկրի մնացորդ ժողովուրդան, որք զԵ. (5) ամն նուիրակ չտեսեալ ի Սրբոյ Աթոռոյս և կարօտ գոլով թախանձէին: Վասն որոյ փոյթ կալաք գրել զայս թուղթ ընդ նմա առ յարգութիւն քո ի պատասխանի գրուածոցդ:

Եւ նախ, զի գրեալ էիր զԹօխաթու այրեցեալ եկեղեցեաց նորոգութիւնն: Կարի յոյժ բերկրեցաք, գոհութիւն և փառք ամե-

նաբարերարին Աստուծոյ, կատարողին զկաման երկիւղածաց իւրոց: Որ և վարձաւատոյց լիցի սիրելի եղբօրդ և ամենայն աշխատակցաց ի նոյն, և մեծագոր արքային և բարեխորհուրդ Հրամանատարացն ևս կեանս պարգևեսցէ, առաւել ևս շարժելով ի գովթ առ ձեզ և առ ամենայն Հաւատացեալս, որք ընդ ձեռամբ իւրեանց:

Իսկ յետ գրելոյն քո զայս զուարճալի Համբաւ, Թոխաթու առաջնորդ սիրելի որդին քո և մեր՝ Յակոբ Հանճարապետը վարդապետն ևս էր գրեալ, ի դիմաց ժողովրդեանն ինդրելով զորդորական կոնդակ ի վերայ քաղաքաց և ղասապայից՝ առ ի օգնել նոցա ի ծախս նորոգութեան սրբոյ եկեղեցեացն, զոր և մեր անյապաղ գրեալ յղեցաք առ նա յամենանն յուլիսի:

Արդ, որպէս ձեր յամենայն սրտէ Հոգացողութիւնն և ջանն է, և մեր ևս ինդիր և մաղթմանք առ Աստուած. յաջողեսցէ նա ինքն Տէր, զի ըստ բարեսէնչ բաղձանացդ յաւուրս ձեր իսկ, թէ օրհնեցելոյ մայրաքաղաքիդ և թէ այլ տեղեաց ևս նորոգելի եկեղեցիքն նորոգեսցին ի բարեյիշատակութիւն ձեզ: Եւ ի Հոգևորապէս միութարութիւն խղճալի ազգի մերոյ, և ի զուարճութիւն մեզ:

Երկրորդ, գրեալ էիր վասն Փառակեցի ՍաՀակ վարդապետին, եթէ խրատական և յուսադրական թուղթ ես գրեալ նմա վասն դիմելոյ ի Սուրբ Գահն: Չայս բանս անցից ՍաՀակ վարդապետին որոշեալ ի թղթոյ, ուստի յատուկ փոստուպայիւ գրեցաք և յղեցաք նոր սկզբնաւորութիւն առնելով այսպէս և ի վերայ այնց յորդորեալ էիր զմեզ սիրով ընդունիլ զնա ի գալն:

Առ որ աստանօր Համառօտապէս գիտասաջիր, թէ եկն նա ի Սուրբ Աթոռս և վասն քաղցրագոյն խաթեր յարգելի եղբօրդ, սիրով ընկալեալ եղև ի մէնջ: Եւ կայ ի սեր մեր: Այլ զլիագոյն պատմութիւնն տեսցես ի միւս թուղթն, զոր յատկապէս զնամանէ գրեցաք:

Երրորդ, ծանուցեալ էիր զուրախակցութիւնդ յաղագս բարձման ի միջոյ Հերձուածող ՍաՀակ չերիցուն և զԱխցիսայու մերային ուղղափառ ժողովուրդսն մեզ ապաստան առնելդ: Չի աստի առաջնորդ յղիցեմք նոցա և իննամիցեմք: Եւ խոստացեալ էիր, որ եթէ արքունի Ֆերման Հարկաւորիցի, յոգացեալ յղիցես: Ընդ այսոցիկ ևս շնորհակալեմք յոյժ: Եւ զի պակասումն այնմ Հերձուածողի ուրախութիւն է լեալ ձեզ, ուրեմն ծանուցից և զԽնուսու չարաշար աղանդաւանար չերիցու զկորուստն, որ փախուցեալ աստի, թէպէտ և զղջացեալ Համբաւեցաւ, սակայն ոչ եկն դարձեալ, և գայթակղութիւն էր աշխարհի կեալն նորա: Ապա բեկն տեղոյն վասն շարագործութեանց նորին խեղդամաճ է արարեալ: Այն չարն ևս այնպէս բարձաւ ի միջոյ: Մնաց այժմ թէքիրտաղցի չիք Սարգիս աբեղայն, որ ի Սեւան է: Բայց մինչև ցայժմ տակաւին ոչ առաքեցաք զվարդապետ ի յԱխցիսայ: Քանզի խղճալիքն այնոքիկ ընդ ծանր պարտուց անկեալ գոլով, զբաճանայ մի և զերեցփոխան

յղեալ էին առ մեզ |1892| և զաղաչանս գրեալ, օգնութիւն խնդրելով ազատութեան իւրեանց ի պարտուցն:

Եւ մեք կոնդակ ետուք ի վերայ բոլոր երկրին Վրաց, զոր առեալ գնացին, և որպէս տեղեկացաք, լաւ օգնութիւն են գտեալ: Բայց դեռ ոչ դարձան, յառաջիկայ ժամանակիս մինչ վերադառնայցեն, և պարտուցն վճարումն լիցի, յայնժամ զվարդապետ մի առաքելեաց եմք յայցելութիւն նոցա:

Ուրեմն, ըստ խոստմանդ զարքունի Ֆէրմանն Հոգացեալ յղեսցես շուտով, զի զոր առաքելոց իցեմք, այնու անկասկած առաքեսցուք:

Չորրորդ, գրեալ էիր վասն Սուրբ Կարապետի վանից պարտուցն, թէ զիս՝ որ էիք պայմանագրեալ վճարիլ, և որպէս կառավարիլ սրբոյ Տանն այնմիկ, և այլն: Այլ յանցեալսն յոմանց ուխտատորաց անտի եկելոց լուաք, թէ Կլկլ կոչեցեալ Յովաննէս վարդապետն ըստ գրութեան ձերոյ եկեալ է յայդր առ ձեզ: Եւ յետ միջոցի ևս լուաք, թէ գժտութիւն ինչ անցանելով ի վաննս, վէքիլ Կարապետ վարդապետն Հրաժարեալ է ի Հոգեբարձութենէ, և փաշայն զայլ Յովաննէս վարդապետ ոմն է կարգեալ կառավարիչ: Իսկ պատճառ իրացն յայտնի չեղև և զվախճանն ևս չիմացաք:

Այլ իհարկէ, բանն առ ձեզ լինի Հասեալ: Որպէս և կարգադրիցէք, մեզ ևս ծանուցանելդ պիտոյ է ըստ խոստմանդ:

Իսկ զորպիսութեանց մերոց և կողմանցս եթէ գիտել կամիցիս, ցաւակից եղբայրդ մեր, գոհութիւն Աստուծոյ, որոյ ողորմութեամբն ցարդ Սուրբ Աթոռս ի պայծառութեան կայ և մերս տկարութիւն որքան զօրէ, ջանադիր եմք ի շինարարութիւնս, թէև ոչ թարց նեղութեան և վշտաց, երկիրս մեր ևս կերպիւ ինչ յարտաքին թշնամեաց ապահով է, սակայն յերկիւղալի Համբաւոց ապառնի փոթորկաց յոյժ տարակուսիմք:

Քանզի ներքինի Աղայ Մաւմատ խանն, զորմէ յառաջագոյն գրեալ եմք, թէ եկն ի Թարուէզ և դարձաւ ի Թէհրան և այլն, յանցելումն գնացեալ վերստին տիրեաց Շիրազու և Ասպահանու և այլոց բազմաց, և դարձեալ ի Թէհրան շահ կոչմամբ, անտի զՍուլէյման խան ոմն սարտար կարգեալ քանի Հազարաւ յուղարկեալ է ի Թարուէզ, և իւրաքանչիւր իշխողաց կողմանցս Ֆէրմանն է գրեալ՝ Հնազանդիլ Հրամանաց նորա:

Չի որովհետև Արցախու տիրօղն դեռ չէ Հպատակեալ, եթէ յապատամբութեան մնացէ, սարտարն սորօք նուաճեսցէ: Արդ, եթէ նա ևս Հնազանդութիւն լինիցի, իսկ եթէ ոչ, բազում վրդովմանց և վնասուց լինի նկատի, զորս բարերարն Աստուած ի խաղաղութիւն փոխեսցէ, որոյ խնամոցն միայն կամք ապաստանեալ:

Եւ, վերջապէս, խնդրեմք ի սիրելի եղբայրութենէդ, զի զսոյն գրաբեր Գրիգոր Համեստաբարոյ վարդապետդ, որ է նուիրակ Ռուսմէլու, սիրով ընկալեալ իննամաձու լիցիս յայդր, մինչև ուղևո-

րեսցի ի վիճակն իւր, և անդանօր գոլն ևս զիննամարկովթինդ մի պակասուցես:

Ողջ լեր ի Տէր բարեգուարճ կենօք ի Հրճուանս մեր:
Գրեցաւ ի ՌՄԽԲ. (1793) թուոջս և ի Հոկտեմբերի..., ի
Սուրբ Էջմիածին:

Գիտասցէ և զայս յարգելի եղբայրութիւն քո, զի մինչ զթուղթս աւարտեալ յուղարկելոց էաք, գուժաբեր թուղթք Հասին մեզ փայեկաւ ի Չմիւռնիոյ վասն խղճալի Իսահակ վարդապետն, թէ վախճանեալ է: Ուստի մեծագոյն տրտմութիւն և Հոգք տիրեցին սրտից մերոց՝ յեղակարծ իմանալով մեր զպակասիւն այնպիսոյ առն պիտանոյ ի մէջ: Այլ զի այնպէս Հաճոյ թուեցաւ կամաց Արարչին, զի՞նչ ունիմասել միայն թէ փառս տալ մեծութեան նորին, որ տէր է կենդանեաց և մեռելոց, յորմէ և խնդրել զի լուսաւորեսցէ զՀոգի Հանգուցելոյն և դասեսցէ երջանիկ վարդապետն, և զսիրելի եղբայրդ մեր ողջ պահեսցէ և մխիթարութիւն պարգևեսցէ ձեզ և մեզ:

Եւ զի քահանայք և իշխանք քաղաքին խնդրեալ էին անյապաղ յուղարկել զնորոգ առաջնորդ, վասն որոյ զԴանիէլ վարդապետն այժմ առաքեցաք: Եւ նորին սակս խնդիր է ի պատուականութենէդ, զի առ նա ևս սէր և իննամ կայցիս և մինչ զհարկաւոր խնդիրս ինչ գրիցէ վասն օգտի ժողովրդեանն՝ քաղցրութեամբ անսացեալ զկատարելն կամիցիս, որոյ աղագաւ յոյժ շնորհակալ լինելոց եմք:

Դարձեալ և զայս ծանուցանելս մի աւելորդ Համարիցի, քան զի յաղագս Հեստեալ Սարգսին (զորմէ գրեցաք, թէ Սևան է), այժմ Կարնոյ մովպետի գործակալ Մասրաֆ Յակօբ կոչեցեալն, որ քացախ է, ի տեղոյ քացախոցն յորդորեցեալ թուղթ մի ինքն էր գրեալ մեզ և թուղթ մի և Հաճի Բաբային գրեցուցեալ խնդրելով զնա յղել առ ինքեանս: Առ որս թէպէտ բացասական պատասխանի գրեցաք, սակայն կասկածիմք, թէ զբղէշին Հաճեցուցեալ նամ ևս գիր գրել և մարդ յղել տացեն, տեսցուք թէ որպէ՛ս լինի: Չայսքանս այժմ գրեցաք, զի գիտակ լիցիս:

Եւ ի վերայ այսց ևս կրկին ասեմք ողջ լեր երկայն աւուրբք. ամէն:

ՄՄ ձեռ. Հ^{որ} 4501, էջ 1890-92

461բ

^{277*} **Ի Կարին** – թուղթ մի առ վէքիլ պարոն Հայրապետն՝ վասն Նոր նախիջեանցի Խաչատուրի որդի պարոն Պօղոսին, եթէ աստ ետ մեզ ԱՃԲ. (102) զուռուշ, որ ի գալն յայդր առցէ ի քէն, ուրեմն տուեալ առցես զթուղթս մեր ի նմանէ: Այլեւ վասն

Հարկաւորութեան ինդրէ զԺԲ. (12) ջուխտ ջըմայս այր մարդոյ, Չ. (6) կարմիր եւ Չ. (6) դեղին: Գր[եցաւ] յամնոյս [սեպտեմբերի] ի ԻԷ. (27):

278 **Ի Թիֆլիզ** - Թուղթ մի առ Գեօրկին խանն, եթէ թուղթդ մեզ էՀաս, իմացաք զգրեալդ, որ վասն նորոգութեան եկեղեցոյ իմիք կոնդակ էիր ինդրեալ ի վերայ երկրացն Օսմանցոյ: Արդ, յայն կողմունան ոչ լինի, եթէ կամիս ի վերայ Ղարատաղու, Համախու և յայլ միւսոցն գրել, գրեսցուք: Իսկ վասն Ռըստամ անուն առն միոյ, եթէ մէք զնա ոչ եմք տեսեալ, զի ընդունէաք ըստ գրեցելոյդ:

Գրե[ցաւ] յամնոյս [Հոկտեմբերի] ի Ե. (5):

Պատասխան նամակ նուիրակ Ներսէս վարդապետին (Թօխաթ), որին վէ-
յափառ Հայրապետը նախ առողջութիւն է մաղթում, քանի որ նախորդ նամակում
յայտնել էր իր Հիւանդ լինելու մասին: Այնուհետ յաջողութիւն է մաղթում Նիկիտարի
կողմերը նուիրակի պաշտօնը զբաղեցրած Յովհաննէս պետին, ապա նշում է
սրբալոյս միւռնը Թօխաթի մահտեսի Յարութիւնին ուղարկելու մասին: Յիշա-
տակում է Ներսէս վարդապետի կողմից մահտեսի Յարութիւնին յղած դրամական
միջոցների մասին (ընդՀանսր ԲՌԷՃ. [2700]), որից ԲՃ. (200) զուռուչը Արաբի-
րի առաջնորդ Մարտիրոս պետինն է, եւ ԲՃ. (200) զուռուչ՝ Նահապետինն է:
Գոմարի՝ Մայր Աթոռ Հասնէրուն պէս գրուելու է Համապատասխան ստացական:
Հնորձակալութեան կոնդակ է յղուելու նաեւ եկեղեցու նորոգման առթիւ (461բ,
Ա./7):

Թօխաթում վէբիլ մահտեսի Յարութիւնին ուղղուած նամակն ի պատաս-
խան Ներսէս պետի գրութեան, բովանդակում է դրամական բնոյթի Հարցեր, ինչի
դիմաց պիտի ստացական տրուի: Ներսէս պետն իր ինդրած սրբալոյս միւռնը
ստանալու է վէբիլ Յարութիւնից, որի Համար պիտի Մայր Աթոռին տեղեկացնեն:
Այնուհետ յիշատակուած են Յարութիւնի՝ Չմիւռնիայից եկած Խաչատուր պետին
յանձնած Կ. (60) զուռուչի, իր մօտ եղած մէկ սահաթի եւ մէկ մամնատուփի, տար-
բեր կողմերից եկած ամանաթի մասին: Այս վերջինի առումով մանրամասնում է,
օրինակ. «վասն Յովհաննէս պետի Բ. (2) կտոր ամանաթին, եթէ աՀա թուղթ
գրեաց քեզ, խարճս ի Մինաս պետէն առցես և ամանաթն ընդ նմա յղեսցես»:
Հարցում Սահակ պետի երեք Հարիւր զուռուչի որպիսութեան մասին (462ա, Բ.):
Պատասխան նամակ վէբիլ պարոն Հայրապետին (Կարին), որ մի քանի պար-
զաբանումներ են արւում. «վասն Փողէնց Յովսէփին...», «վասն Պօլսոյ նուիրակի
թղթոյն եւ զազին», «Սահակ և Յովհաննէս պետաց ամանաթքն Հասեալ են ի
Բայազիտ առ տիրացու Գէորգն», «վասն թղթոցն Ներսէս պետի եւ մահտեսի Յա-
րութիւնի», «զսրբալոյս մեռնէն», «վասն պահարանեալ թղթոցն Սահակ պետի»,
«վասն Քեալ Յովհաննէսին թղթոյն» (Գ):

279* **Թուղթ մի ի Կարին** առ սրբոյն Սաղիմայ նուիրակ
Կարապետ պետն, ի դարձ թղթոյն, որով ծանուցեալ էր և զգա-
լուատն իւր ի նուիրակութեան: Եւ վասն պատրիարգի թղթոյն և

ամանաթին, եթէ Հասին մեզ և ըստ ժամանակին գրելոց եմք գդարձն և յղելոց, անհոգ լէ ր:

280* **Ի Գաղատիա** – Թուղթ մի առ Գաղատիոյ առաջնորդ Անդրէաս պետն ի պատասխանի թղթոյն՝ շորհակալութիւն վասն Ա. (1) թօփ զօֆ վեղարացուին և Ա. (1) թօփ մըսր մօռի շալին ընդ նուիրակ Յովհաննէս պետին: Ողջոյն իմիրզատէ խօջայ Մաղաքիա Չէլէպոյն և այլ իշխանացն տեղոյ: /462բ/ Եւ թէ ընկալաք օրհնութեամբ զնոցին թուղթն՝ զԱ. (1) թօփ զօֆ վեղարացուն և զԱՃ. (100) ղուռուշ աջաՀամբոյրն ի ձեռն գործաւճար Յովհաննէս պետին և շորհակալեցաք զինքեանց:

462բ

281 **Ի Մուշ** - Կոնդակ մի առաջնորդութեան և վկայական եպիսկոպոսութեան Մշու Սուրբ Յովաննիսի վանացն առաջնորդ Աստուածատուր պետին: Տէ ս զմեծ տե[տերց] 1791 Համարն:

282 Թուղթ մի տաճկերէն առ Մշու փաշայն ի դարձ թղթոյն ընդ Մշու Սուրբ Յովհաննէս վանիցն առաջնորդ Աստուածատուր վարդապետին:

283 Թուղթ մի ևս Սարգիս և Եղիա վարդապետն և առ տէր Զաքարիա և տէր Միքայէլ քահանայն՝ վասն յանցանացն իւրեանց, եթէ որովհետև ոչ եկիք ի Սուրբ Աթոռս վանն ծերութեան ձերոյ և Յովհաննէս պետն ևս աղերսեաց վասն ձեր՝ տալով մեզ ԱՃ. (100) ղուռուշ ի կողմանէ ձեր իբր աջաՀամբոյր: Վասն որոյ մեք ևս ներեցաք, բայց այսուհետև մնասջիք Հարազատք առ Սուրբ Աթոռս:

Մի թարգմանական հանգուցեալ Աստուածատուր աղայի որդիներին եւ եղբորը՝ Ապրօյեան Առաքել աղային (Զմիւռնիա) (462բ, Թ-Ժ): Հորհակալական նամակ նուիրատու Կարբեցի Միրաքին (ի Նազիլու, որ է թեմ Զմիւռնոյ). «վան տալոյն Սրբոյ Աթոռոյս և այլ վանորէից զկտակն մնշտեսի Յակոբին Կարբեցոյ» (ԺԱ):

284* Թուղթ մի ևս առ Կետրտէզցի գանձապետ պարոն Գէորգն՝ շորհակալութիւն և միամտութիւն վասն արդեանց գանձանակին սուրբ Գեղարդայ և Խոր Վիրապայ, զոր յանձնեալ էր Իսահակ պետին: Տէ ս զմիջակ տե[տերց] 112 Համարն:

285* Թուղթ մի ևս ի Ղրխաղաճ առ պարոն Պետրոսն՝ միամտութիւն վասն Սուրբ Խոր Վիրապի գանձանակի արդեանցն, զորս Հասուցեալ էր նուիրակ և առաջնորդ Իսահակ պետին: Տէ ս զմիջակ տե[տերց] 113 Համարն:

Օրհնութեան նամակ պարոն Սարգսին, որը գանձապետ պարոն Գէորգի միջոցով Մայր Աթոռի Իսահակ պետին էր ուղարկել Ծ. (50) ղուռուշ դրամ՝ «յանուն սրբոյ Գեղարդեանն» (ԺԳ): Օրհնութեան նամակ նուիրատու Հանգուցեալ մնշտեսի Առաքելի կին Հեղինէին. «վասն ոմանց իրաց, զորս քանի ամօք յառաջ յղեալ

եր» (ԺԵ.): Նուիրակ ՍաՀակ պետին ուղղուած նամակի մասին նշում (ԺԶ.) եւ ստացական նոյն անձին՝ 2784 զուռուշ եւ ԺԲ. (12) փարա դրամի մասին (ԺԷ.): Նամակները գրվել են Հոկտեմբերի 10-ին:

Պատասխան նամակներ Մասրաֆ խօջայ Յակոբին, Հաջի Բաբային, պարոն Հայրապետին (Կարին). «վանն Սարգիս պետին Հետեցելոյ» (Ա.): Կարինի առաջնորդ վէրիլ պարոն Հայրապետին ուղղուած նամակում նշում է Սերոբ ամիրայի միջոցով Մասրաֆ Յակոբին յանձնելիք նուէրների մասին, որ են «Ա. (1) ամանով կիւլապ, Ա. (1) սպիտակ մոմապատ և Դ. (4) լիտր գինի» (Բ.): Նամակ նուիրատու շէհեր վէրիլ մահտեսի Յովհաննէսին՝ դապղիմալ տիրացու Կարապետին Բ. (2) ոսկի աջանամբոյր ուղարկելու առթիւ: Նոյն նամակում յիշատակում է տիրացու Կարապետի՝ Երոտաղէմ կատարած ուխտագնացութեան փաստը: Նամակները գրուել են Հոկտեմբերի 30-ին:

286 **1793 թ. Հոկտեմբեր - Թուղթ** ի յիզմիր առ մահտեսի Առաքելի Հանգուցելոյ Հեղինէ պառան վանն ոմանց ինչ իրացն, զորս քանի ամօք յառաջ յղեալ էր⁹⁷:

ՄՄ ձեռ. Հ^ր 4538, էջ 8բ-9ա

287 **1793 թ. Հոկտեմբեր - Թուղթ** առ աւագ քահանայան և իշխանան Թիֆլիզու, ի պատասխանի թղթոյն նոցա, որ յաղագս Հանգուցեալ տէր Աւետիքի եղբօր դատեր ինդրելոյն զծուխս Լօրեղբօրն, որք ի վաղուց տերունիք էին եղեալ Սրբոյ Աթոռոյս:

Յորմէ սիրով և օրհնութեամբ և քրիստոսականաւ սուրբ ողջունիւ ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց ի Տէր և Հարազատ որդւոցդ Սրբոյ Աթոռոյս աստուածախնամ քաղաքիդ Թիֆլիզու՝ Հանճարապերճ աւագ քահանայիցդ և իշխանազնեայ ճոխապատիւ մէլիք Աւետիք աղայիդ և միւսոց ազնուամեծար խոհական իշխանացդ: Չի թուղթն ձեր էհաս առ մեզ և իմացաք, զոր ինչ գրեալ էիք սակս Հանգուցեալ տէր Աւետիքի եղբօր դատեր ինդրելոյն զԼօրեղբօրն իւրոյ զծուխնս, որք ի բազում ամաց Հետէ տերունիք են եղեալ Սրբոյ Աթոռոյս: Արդ, նարդէսիս զբազում ի կողմանց կողմանց եկաւորս ոնելով զոմանս ուղևորեալ և զոմանս ուղևորելոց, և ևս զդառնաղէտ գոյժ ընկալեալ ի Հեռուստ և Հանդերձեալ գոլով զՀարկաւորագոյն Հոգս նորին Հոգալ (որպէս և գրաբերքս պատմելոց են), անձեռնհաս էաք զերկարօրէն ինչ գրել ձեզ առ այդ: Բայց զայս և եթ գրեմք Համառօտ, թէ այն տերունիացեալ ծուխքն որպէս կան, նոյնպէս մնացեն, մինչև յետ աւուրց ի թէթևանալն մեր ի ծանրութեանց գրելոց եմք ձեզ, որ ինչ ի դէպն իցէ և զպատասխանին միով քահանայիւ ինդրեաց:

Ողջ լերուք ի Տէր և պաՀպանեցեալք շնորհիւ ամենաբաւական ողորմութեան նորին:

⁹⁷ Իզմիրում բնակվող հանգուցյալ մահտեսի Առաքելի կին զառամյալ Հեղինէ կնոջը հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 601:

Գրեցաւ ի թուականսի մերում ՌՄՄԲ. (1793) և ի Հոկտեմբերի..., ի լուսակառոյց Աթոռս Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1894

288 1793 թ. Հոկտեմբեր - թուղթ առ թագուհին Վրաց Դարեջան, ի պատասխանսի թղթոյն, որ վասն Եսաւ Դիւանի եղբորն՝ տիրացու Ռատակեսին:

Յորմէ ժամանեսցէ թուղթ...

Եւ առ առատածաւալ օրհնութեանս աստուածայնոյ, ծանուցումն լիցի բարեպաշտութեան ձերում: Ձի ժամանեաց առ մեզ թուղթն, զոր ընդ Բէկթաբէկեան Հանգուցեալ Սուլխան Դիւանի որդի Ռօստումին գրեալ էիք: Որով նախապէս գիտացեալ մեր զխաղաղակեցութենէ ձերմէ և զՀաստատութենէ ճշմարիտ բարեկամութեանդ, որ առ մեզ, ուրախ եղաք և գոհացաք զԱստուծոյ, ինդրելով ի նմանէ միշտ խաղաղ և բարեգուարճ պաշէլ զձեզ, Հանդերձ ամենայն ձերայնովքն ի Հրճուանս մեր:

Եւ ապա զի գրեալ էիք վասն յիշեցեալ տիրացու Ռօստումին Հրաժարեցելոյ յաշխարհէ և բաղձացելոյ կրօնից վանականութեան, ընդունիլ ի Սուրբ Աթոռս և ինսամարկել, աշա ըստ գրեցման յարգելոյդ և ըստ Հոգետէնչ փափագանաց նորին ընկալաք Հայրական սիրով և յանձնեցաք միումյեպիսկոպոսաց մերոց՝ ունիլ առ իւր և մեղմով շարժել յուսումն գրոց և դաստիարակել, և մեր ինսամածութիւնն ևս լինելոց է ի վերայ: Իցէ թէ Աստուծով ընտելացի ծանրութեան օդոյ տեղոյս և անվտանգ կեցցէ, և Հմտացեալ ի կրօնս եկեղեցականութեան, զգաստութեամբ և արիութեամբ յառաջացէ ի գիտութիւնս և ի շնորհս: Եւ քանզի պատկան էր պատասխանսի առնել գրուածոցդ, զայս օրհնածիր թուղթ գրեցաք առ բարեպաշտութիւն ձեր, առաքելով առ ձեզ զօրհնութիւնս Հոգևորս, և ծանուցանելով զայս առ ի միամտութիւն:

Որ և ի ստոյգ բարեկամութենէ և ի սիրոյ անպակաս մնալով ողջ լեր ի Տէր և յանձնեցեալ ի պաշտանութիւն ամենազօր ձեռին նորա. ամէն:

Գրեցաւ ի թուականսի Փրկչին 1793 և ի Հոկտեմբերի ամսոյ ..., ի լուսակառոյց Աթոռս ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին⁹⁸:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 9աբ

289 1793 թ. Հոկտեմբեր - թուղթ առ Գօրու ժողովուրդան վասն վիճոյ տէր Ղազարին և տէր Գրիգորին, որոյ աղագաւ և եպիսկոպոսք Սրբոյ Աթոռոյս, Հանդերձ Հաղբատայ առաջ-

⁹⁸ Վրաց Դարեջան քագունուն հղված նամակի ամբողջական հրատարակությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 601-602:

նորդ Դաւիթ վարդապետին ղթուղթ մի գրեցին կարգադրու-
թեան նոցա և այլ քաճանայից տեղւոյն:

ՄՄ ձեռ. Հ^մ 453ձ, էջ 10աբ

²⁹⁰ **1793 թ. Հոկտեմբեր** - Թուղթ առ Չմիւռնիայու
առաջնորդ և նուիրակ ԻսաՀակ վարդապետն, ի պատասխանի
Թղթոցն չորից՝ յապրիլի ԻԱ. (21), ի մայիսի Չ. (6), ի յուլիսի ԻԲ.
(21) և յօգոստոսի Չ. (6) գրեցելոց:

... Իսկ որպիսութիւնք և Համբաւք երկրիս և կողմանցս այս-
պէս են, զի ներքինին տիրեալ Շիրազու և աւերեալ զբերդն և զեր-
ւելի տունն քոչեցուցեալ և դարձեալ ի ԹէՀրան, անտի զՍուլէյ-
ման խան ոմն սարտար է կարգեալ և քանի Հազարաւ յղեալ ի
Թարվէզ, իբր Հրամանատար կողմանցս իշխողացն, զի իւրաքան-
չիւրքն գնասցեն առ նա, և չհնազանդողացն վրէժխնդիր լիցի, և
այս բան մանաւանդապէս առ Արցախու իշխօւն երևի:

Եւ Երևանու տիրօղն զընծայս ինչ յղեաց առ Եկեալն ի Թար-
վէզ իբր ի շնորհաւորումն գալստեանն: Բայց ի Բագրատունւոյն
յետս կալ ցուցանեն, արգելլով զՀարկն, վասն որոյ միջոցն խար-
դախեալ է: Նա ևս իբր Բ. (2) ամսօք յառաջ Խօյու իշխողի ձեռօքն
Թուղթ և մարդ է յղեալ առ ներքինին: Տեսցուք թէ զիմ՝ որ կա-
տարած լինիցի իրացն, զոր Աստուած ի բարին եզերեսցէ այց արա-
րեալ խղճալի երկրացս և մեզ և ամենայն ողորմելեաց:

Այլև՝ ի պետս տալոյ այլազգեաց տանն դաստայ սատաֆա-
կոթ չախուք, առցես և յղեսցես, որք ոչ փոքր իցեն և ոչ յոյժ մեծ,
այլ միջակք և անարատք: Եւ որպիսածանոյց Թուղթդ անպակաս
առնելով, ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԽԲ. (1793) Թուոջս և ի Հոկտեմբերի ..., ի
Սուրբ Աթոռս Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1791

²⁹¹ **1793 թ. Հոկտեմբեր** - Կոնդակ առաջնորդութեան և
վկայական եպիսկոպոսութեան Մշու Սուրբ Յովաննէսի վանիցն
առաջնորդ Աստուածատուր վարդապետին (յօրինակէն, որ է ի
վերոյ յերեան 1430):

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1791-92

²⁹² **1793 թ. Հոկտեմբեր** - Կոնդակ ի վերայ Ղարսայ քա-
ղաքին և գիւղորէիցն ընդ Ղօշավանից և նոցա առաջնորդ Յով-
Հաննէս վարդապետին, որ Հանդերձ իշխանօք եկն ի Սուրբ Աթոռս
ի տեսութիւն սրբազանին և վերադարձաւ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1792-93

293 1793 թ. հոկտեմբեր - Կոնդակի վերայ Հաղթատայ թեմիցն ընդ նոցին առաջնորդ Դաւիթ վարդապետին, որ եկեալի Սուրբ Աթոռս և դառնայր:

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1794-95

294 1793 թ. հոկտեմբեր - Թուղթ առ ի Շուլաւեր բնակեալ և Վանական վարդապետին վիճակեալ ժողովուրդան, ի պատասխանի թղթոյն իրեանց ընդ նմա գրեցելոյ:

Յորմէ ժամանեացէ թուղթ սիրոյ ...

Եւ ընդ սիրաձիր ողջունատրութեան օրհնառաք նամակիս՝ ծանուցումս լիցի սիրելեացդ մերոց ի Տէր և Հարազատ որդուոցդ Սրբոյ Էջմիածնի: Չի արժանավայել առաջնորդն ձեր և Հոգևոր որդին մեր՝ Վանական Հանճարափայլ վարդապետն, եկն ի Սուրբ Աթոռս և մատոյց մեզ զթուղթս ձեր, որով գրեալ էիք վասն իւր, թէ ի վաղուց ըղձայր գալ բայց ի պատճառս ցաւոց և Հիւանդութեանն ոչ յաջողիւր և ապա խնդրեալ էիք սիրով ընդունիլ զնա և առ ձեզ զօրհնութիւն առաքել: Իսկ մեք յառաջամէ գիտելով զսրտական Հաւատարմութիւն Վանական վարդապետին առ Սուրբ Աթոռս և առ մեզ, ըստ գրեցելոյն ձերոյ, այժմ՝ ևս ի գալն մեծաւ սիրով ընկալաք զնա, և Հարցեալ զորպիսութեանց ձերոց, թէպէտ և յառաջ վասն ձախորդութեանցն ի վերայ ձեր Հասելոց, տրտմեաք, սակայն ի ներկայումս մինչ կերպիւ մի յանդորրութեան կայք, ուրախ եղաք, և խնդրեմք ի Հանրախնամ բարեգութ Արարչէն, առաւել ևս խաղաղութիւն և Հանգատութիւն շնորհել ձեզ, զի բարեկեցութենէ ձերմէ լսելով, անտարակոյս լիցուք:

Եւ զի ջերմեռանդ սիրով փափագմամք զօրհնութեան թուղթ էիք խնդրեալ, ահա մինչ զսիրելի որդին մեր և զհարազատ զաւակն Սրբոյ Գաւհիս զառաջնորդն ձեր՝ զՎանական խոհեմամիտ վարդապետն և զարհի եպիսկոպոսն շահեալ և խիլայեալ փառաւորապէս վերադարձուցանեաք խաղաղութեամբ: Չայս սիրոյ և օրհնութեան նամակ ընդ նմին արժանի Համարեցաք գրել առ Հոգևոր որդիսդ մեր, զորս Տէր օրհնեացէ և զօրացուցէ, տարածեացէ զթեւս ինամոց իւրոց ի վերայ ձեր, և փրկեացէ ի վաստուց Հոգւոյ և մարմնոյ, յաջողեացէ ձեզ ըստ Հաճոյից կամաց իւրոց, և զարդարեացէ առաքինութեամբք և շահեկան արասցէ զամենայն բանս և զգործս ձեր:

Արդ, պատուիրեմք սիրելեացդ, զի ըստ որում յայսքան ամս եկեալ կայ առիք ի տէրունի վիճակդ Սրբոյ Աթոռոյս, և Համարեցեալք էք տէրունի ժողովուրդ սմին, և մեք ոչ բնաւ օտարս գիտեմք զձեզ, վասն որոյ պարտիք առաւել ևս աճեցուցանել զորդիական սէր և զհաւատարմութիւն ձեր առ լուսածին մայրս ձեր Սուրբ Աթոռս, և զօգուան սորին կամիլ և առնել: Եւ այս լինիցի նշան օգտաջանութեան ձերոյ, որ որպէս կամիք զՀոգևոր շնորհս սորին

վայելել նոյնպէս և ի մարմնաւոր գոյից ձերոց ըստ կարողութեան ձերումնուիրիցէք սմա, որք քանի ամօք յառաջ ևս տայիք, այլ յայս քանի տարիքս ոչ ատելով մեր ի ձախորդութիւնս ձեր, և ինայելով զոչ ինչ պաշանջէսք ի ձէսջ և սակայն այժմ ինդրէն արժան տեսանեմք:

Ուրեմն որպէս և աստանօր խօսեցաք ընդ առաջնորդին ձեր՝ Վանական բարեմիտ վարդապետին յիւրաքանչիւր ամի ըստ չափու կարեաց ձերոց զարդիւնս ինչ յերկաթեղինաց ի փայտեղինաց, ի բրդեղինաց և այլոց որ ինչ և յաջողիցի ի բղխեցմանէ սրտից ձերոց ի ձեռն առաջնորդին ձերոյ ժողովեալ յղեսջիք ի Սուրբ Աթոռս, զորս և մեր շնորհակալութեամբ առնկալեալ ի Հարկաւոր պէտս սրբոյ Տանս աստուածակերպի գրեցուք առ ձեզ կոնդակ օրհնութեան: Որք և եղիջիք օրհնեցեալք յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէսջ ամէն:

Գրեցաւ ի ՌՄԽԲ. (1793) Թուոջս և ի Հոկտեմբերի ..., ի յերկաքաւտակ Աթոռս Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1893

295 **1793 թ. Հոկտեմբեր** - Թուղթ տրտմակցութեան և մխիթարութեան և յուսադրութեան առ Չմիւռնիոյ քաշանայնս և իշխանան, ի պատասխանի սգաբեր թղթոյն նոցա, որով ծանուցեալ էին զվախճանմանէ նուիրակ և առաջնորդ Իսահակ վարդապետին և ինդրեալ էին ի տեղի նորա զայլ ոք առաքել:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 1894-95

1793 թ., նոյեմբեր

296 **1793 թ. նոյեմբեր** - Թուղթ ի Մատրաս առ Հաւամիր աղայն, ի պատասխանի թղթոյն նորա յամի Տեառն 1791, յապրիլի 15 գրեցելոյ:

Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան, Հանդերձ Հոգեպարար շնորհիւ քրիստոսաէջ սրբոյ տեղոյս ի վերայ յատկեղ սիրելոյդ մերոյ և Հարազատ որդւոյդ Սրբոյ Աթոռոյս, Տերամբ օրհնեցեալ բարեպաշտ և շնորհառատ, պերճապատիւ և շքեղաշուք Հաւամիր ազնիւ աղայիդ: Եւ աստուածապաշտ տանքում և ամենայն քոյայնոցն ի Տէր ինդալ: [Հնորհք]:

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ ծանուցումն լիցի ազնուամիտ սիրելոյդ, զի ունիմք գրեալ առ բարեպաշտութիւն քո զթուղթ յամի Փրկչին 1792 յօգոստոսի 16, որ Աստուծով վաղ ուրեմն Հասեալ լինի առ քեզ: Ապա յետ այնորիկ ընկալեաք զթուղթս քո գրեցեալ յապրիլի 15 ի թուոջ Փրկչին 1791 զերկրորդ և զերրորդ օրինակն, զոր և սիրով ընթերցեալ ծանեաք զգիտմունս ամենից գրեցելոյդ և մտադիւր եղեալ Հաճեցաք ընդ ջանա-

սիրութիւնդ, որ բարի ոք մտօք Հոգաս և ինդրես զայցելութիւն անդորրութեան ընտանեացդ Հաւատոց մեծաւ գթարգութեամբ ըստ սրբազան առաքելոյն Հրամանի: Բայց ոչ գիտեմք, թէ առ ինչ նշանակ նշմարեալ և կամ ուստի՞ զկարծիս ինչ յուսոյ առեալ փափագիս փոյթ ընդ լինիլ դիտեցելոցն: Թէպէտ և մէք տենչամք այնպիսոյ աւուր, սակայն տակաւին ոչ յուստեքէ յերկրաւորացս տեսանելով զձեռնտուութիւն և զօգնականութիւն ինչ, առ բարձրեալ բարերարն մատուցանեմք ստէպ զաղօթս և զպաղատանս, զի նա ինքն Հնարեսցէ յաղագս մեր բանալ զդուռն փրկութեան, առ որ անՀնարիքն ի մէնջ Հնարաւորք էն:

Իսկ սիրելիդ մեր, յոմանց պատերազմաց և յոմանց եղելութեանց Համբաւովք Համարեալ թէ աՀա անկան և մաշեցան թշնամիքն, վասն որոյ յորդորես, թէ աՀա յարիցուք: Բայց նոքա առաջի աչաց մերոց էն, և մէք մերձ գոլով տեսանեմք և լսեմք, ուր է անկումն նոցա և պարտութիւն մինչև ի սպառ, որով լինիցի մերոցն Համարձակութիւն յարուցման: Արդարև, որպէս գրեսդ, նոքա ևս չէն ի յառաջին իւրեանց զօրութեան, այլ Հակեալ էն ի կողմն տկարութեան, սակայն ոչ էն այնքան նկուն, զի այդ լինիցի: Վասն զի կայսերքն զորս յիշատակես, գերմանացին սկսեալ զմարտն, կենսավճար եղև, եղբայրն Լէուպօլ ևս յաջորդեալ ի սուղ միջոցի տևեաց, յետոյ նա ևս փոխեալ այժմ՝ զայլմէ լինիլ ասէն, որք ձախորդութեամբք իւրեանց շփոթեալ, ոչ ինչ վճարեցաւ առ պարտութիւն Հակառակացն:

Իսկ կայսերուՀին Հիւսիսոյ յիրաւի ի Հզօր զօրութեան կայ և զընդ թեւոք եղեալսն ի մերոցն բարւոք իննամարկէ: Բայց առ Հետաւորքս յայնժամ՝ զօրէր բարերարել յորժամ ըստ ասացելոյդ զբազմաժողովն գայ Հագարացոց առ իւր գրաւիցէր: Որպէս բանն տէրունեանն յԱւետարանին ցուցանէ, թէ զիա՞րդ կարէ ոք մտանել ի տուն Հզօրի և զգործիս նորա յափշտակել, եթէ ոչ նախ զՀզօրն կապիցէ Հանեալ ի նմանէ զսպառազինութիւն նորա և այլն:

Այլ աՀա թէպէտ և նեղեալք և տարակուսեալք, սակայն ի կարողութեան իւրեանց կան: Վասն որոյ և կողմունքս որպէս յառաջն, նոյնպէս և այժմ: Այս թագչելի ինչ չէ, զի այլ ընդ այլոյ ասել լինիցի, այլ յայտնի իմն: Եւ թէ այտի յայս կողմունքս գալ պատահիցի, այսպէս տեսցես, և ոչ այլպէս: Եւ տունն Պարսից և Ատրպատական երկիրս ևս ըստ առաջնոյն: Թէպէտ և իշխօղքն առ միմեանս անՀամաձայնք, և փոյթք ի վասսել զիրեարս, սակայն և անդուստ մերոցն առաւել վտանգք Հասանին, քան թէ դիւրութիւն: Եւ զնոր եղելութեանց ևս զինի պատասխանագրութեանցս նշանակիցուք: Ապա ամենիւ յամի առ ամ իրս Աստուծոյ ամենակարողին ընկենումք զՀոգս մեր, թէպէտ և զոր ինչ պատշաճն է մեզ առնել յայնցանէ ևս ոչ վերջանամք:

Գրեալ էիր ևս զնուիրակ Եփրեմ Հանճարունակ վարդապետի կրկին գալը ի քաղաքդ և առ ձեզ. և զքո յատուկ սիրով ընդունիլն, և զայլ Հանգամանսն որոյ սակս մեծապէս շնորհակալ եմք զազնուամեծար սիրելոյդ:

Ան ըստ կերպի գրեցելոցդ՝ նա զընթացսն կատարեալ յայդկոյս և ի զարհուրելի ծովէն ովկեանու անվտանգ ելեալ ի Բասրա ի սեպտեմբերի 1, անտի թուղթ էր գրեալ առ մեզ: Ընդ որ ուրախացեալ գոհացաք զԱստուծոյ: Եւ յուսամք թէ մինչև ի քանիս ամիսս ողորմութեամբ Տեառն Հասցէ ի Սուրբ Գազս, և մէք զնոր նուիրակն պատրաստեալ առաքիցեմք և զոր ինչ դիպաւո՞ր ծանուցանելիքն իցեն, յայնժամ գրիցեմք ազնուոյդ:

Չսորատիպ Խորհրդատետրի ժամանելն յայդր և զքո յանձնելն ի սուրբ եկեղեցին ի գործածութիւն քաշանայից, իմացեալ միամիտ եղաք: Այլ Յովսէպոսի պատմագիրքն, որ չէ Հասեալ տարակուսեցաք ընդ այն. և այժմ ևս գրեցաք ի Բասրայ գործակալին մերում, թէ ո՞ր իցէ մնացեալ այն գիրք, որ թէ Հասեալ չլինիցի: Ընդ նոր նուիրակին ևս առաքելոց եմք:

Յաղագս սիրելի որդւոյն մերոյ Յովսէփ արքեպիսկոպոսին գրեալքդ ևս բարեհաճոյք թուեցան մեզ: Չի Համեմատ քոյդ դիտմանց և մեր դիտումն է, աննուազ գոլով սիրոյն մեր առ նա, և նորին մտերմութեանն առ մեզ: Վասն ազնուականաց մէլիքագնէիցն ևս որ գրեալ էիր, ծանիցես Համառօտակի զնոցունց, որ նոքա յորմէ Հետէ տարագրեալ եղէն յԱրցախու ի Գանձակ, երբեմն-երբեմն յԱրցախու զաւարս տանէին: Յետոյ մէլիք Ապովն ի Գանձակայ գնաց ի Թիֆլիզ առ արքայն Վրաց: Ապա յանցեալսն Արցախու կատաղի տիրոջն զքանի Հազար զօրս է յղեալ դէպ ի Գանձակ, յորոց բազմութիւնն և սակաւ արք երևեալք, առ որս ի դիմել մերայնոցն Հանդերձ այլազգեօք, ոմամքք ի Գանձակայ, թշնամեաց թագաստեայքն ելեալք յանկարծակի վնասս էին Հասուցեալ մերոցն զմէլիք Ապովի եղբօր որդին կալեալ Հանդերձ այլովք և տարեալ ի Շուշի: Որոց դառնաղետ լուրն զծանր տրտմութիւն և զսաստիկ կակիժ մատոյց սրտից մերոց: Եւ յաղագս սգալի անցիցն միսիթարական թուղթս գրեցաք առ նոսա: Այժմ մէլիք Ապովն դեռ ի Թիֆլիզ բնակի և մէլիք Մէժլումն կայ ի Գանձակ, որ և միով պաշարանա թուղթս էր յղեալ մեզ, Հասուցանել առ սիրելիդ: Եւ մէք յայսմ միջոցի զՀաւատարիմ եկաւորս ոչ գտանելով, այժմ ընդ սոյն թղթոյս մերոյ եղեալ զայն թուղթսն յղեցաք, յորոց թերևս զլիովինն իմանայցես որպիսութեանց նոցա, որոց ամենազօր ձեռն Տեառն ժամանեսցէ յայցելութիւն և ի պաշտպանութիւն:

Ծանուցեալ էիր և զկողմանցդ մերագնեայց կացութիւնն և զվաճառաց շահեկանութեան նուազիլն և այլն: Ընդ որ ևս ոչ սակաւ տրտմեցաք: Տես այդու ապա զՅունաստանի և զՊարսկաստանի և զայսր կողմանց բարեսպառութիւնսն, մինչ խառնակու-

թիւնն և յարուցմունքն, և այլք չարիք ոչ պակասին: Բայց զի՞նչ է պիտոյ, եթէ ոչ դարձեալ գոհութիւն և փառք բարեխնամ մատակարարին Հանրից՝ Աստուծոյ և Հայցուածք ստեպ առ նա, զի նա ինքն ողորմեացի ըստ մեծի ողորմութեան իւրում, շնորհելով զխաղաղութիւն և զառատութիւն բարեաց ամենեցուն, մանաւանդ բազմավշտակիր ազգի մերոյ:

Եւ դարձեալ գոհութիւն բարերարութեան նորա, որոյ շնորհին յայսպիսում ժամանակի կերպիւ կենցաղավարելով ի մէջ օձից և կարճաց զՍուրբ Աթոռս Մայրս Հայաստանեայց ի պայծառութեան և ի բարեկարգութեան պաշտօնք ի պարծանա օրհնեցելոցոյ:

Իսկ զոր ի վերոյ խոստացաք զնոր եղելութեանց նշանակել անեցեցելոցոյ: Իսկ զոր ի վերոյ խոստացաք զնոր եղելութեանց նշանակել, ահա այս է, զի ներքինի Աղայ Մահմատ խանն, զորմէ յառաջ գրեալ եմք, թէ եկն ի Թարուեզ և դարձաւ և այլն: Նա գնացեալ ի վերայ Շիրազու, էառ զայն և զիշխօղն վանեաց անտի, և զբերդն աւերել Հարթեաց և զբազումն ի բնակչացն վարեաց ի կողմն Աստարապատու, և ինքն դարձ արարեալ ի Թէհրան և անդ զետեղեալ շահ անուամբ, տիրելով ամենայն կողմանցն, ի յիւրայնոց զումն Սուլէյման խան սարգար կարգեալ յղեաց ի Թավրէզ՝ Հրամանատար կողմանցս իշխողացն, որոյ ի գալն անդ բազումք յիշխողացն գնացին առ նա ընծայիւք և ոմանք ևս զընծայս յղեցին, այլ Արցախու բռնաւորին զընծայ յղելն և չղելն ոչ ստուգեցաք:

Եւ արքայն Վրաց ևս մարդ և թուղթ յղեաց, բայց ոչ զընծայս և Համբաւեցաւ ևս, թէ ընդ Արցախու իշխողին միաբանին՝ առ ի ընդդիմանալ շահ անուանելոյ և սարդարին և այլն: Այլ այժմ լուաք, թէ սարդարն այն ի Թարվիզու չուեալ է առ շահն՝ իբր այսու պատճառաւ, թէ շահի եղբայրն ի կողմն Գիլանու ապստամբեալ է, կամին յառնել ի վերայ նորա առ ի Հաազանդեցուցանել: Կատարած իրացն թէ զհարդ լինիցի, Աստուծոյ է գիտելի:

Չայսքան ինչ իմացեալ քո այժմ, ողջ լեր Տերամբ՝ մնալով անպակաս ի սերդ և ի բարեկամութիւնդ:

Գրեցաւ յամի Կենարարին 1793 ի նոյեմբերի էլն, ի լուսակառոյց Աթոռս Սուրբ Էջմիածին:

Ողջոյն և օրհնութիւն տամ աստուածապարգև որդւոյն քո՝ ազնուական շքեղազարդ աղայ Յովհաննէսին և այլ ամենեցուն քոյայնոց՝ յանձնելով ի ինամն և ի գթութիւնս Տեառն ամենակալին. ամէն⁹⁹:

ՄՄ ձեռ. Հ⁶ 4501, էջ 1896-98

⁹⁹ Վարդան Գրիգորյանը ԴՀՊ նոր շարքի Բ. հատորի առաջաբանում հատուկ անդրադարձել է XVIII դարավերջի հայ ազգային-ազատագրական շարժման կարկառուն ներկայացուցիչ, մարտասարձակ Շահամիր Շահամիրյանի (1723-1797 թթ.) գործունեությանն ու Ղուկաս Կարնեցու հետ ունեցած նամակագրական կապերին: Ինչպես կազմողն է նշում Շ. Շահամիրյանին ուղարկված նամակները հիմնականում ֆաղափական իրավիճակը լուսաբանող հակիրճ շարադրանքի կամ պատմական տեղեկագրի տեսք ունեն և ներկայացնում են իրա-

297 **1793 թ. նոյեմբեր** - Կոնդակ ի վերայ Չմիւռնիոյ և բոլոր թեմիցն, որ յետ վախճանման Իսահակ վարդապետին, առաքիւր անդ ի տեղի նորին նուիրակ և առաջնորդ (սկիզբն տեսանելի է ի փոքրագիրք մասին տետերս՝ յերեսն 614):

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1795-96

298 **1793 թ. նոյեմբեր** - Թուղթ առ պարոն Երեմիայն Վիրապեան յԻզմիր վասն Հանգուցեալ Իսահակ վարդապետին և վասն նորոգ առաջնորդ Դանիէլ վարդապետին¹⁰⁰:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 10բ-1ա

299 **1793 թ. նոյեմբեր** - Թուղթ առ տեր Գալուստն յԻզմիր վասն Հաշուագրելոյ զիրոն Հանգուցեալ Իսահակ վարդապետին և զդաւթարն օրինակելոյ¹⁰¹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, 11բ-2ա

Մխիթարովթեան նամակ մահտեսի Կարապետ Բաբայեանին (Կ. Պօլիս): Պատասխան նամակ պարոն Եսայի Մասեհեանին (Կ. Պօլիս): Պատասխան նամակ Հնդկաստանի նուիրակ Եփրեմ վարդապետին: Բասրայ եւ Հնդկաստան ուղարկուող նամակների Հետ միասին գրովթին է ուղարկուել պարոն Միքայէլ Տէր-Մինասեանին (Բասրայ): Պատասխան նամակ պոլսեցի ջաւահիրճի Սերոբ ամիրային: Մխիթարական նամակ Հաճի Բաբային (Կարին): Նամակները գրուել են 1793 թ. նոյեմբեր ամսին եւ 1794 թ. փետրուարին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 12ա-5բ

463ա

300 **Ի Գեանջա** - Թուղթ մի ի Գեանջա առ մէլիք Մէճըլումն ի դարձ թղթոյն՝ վասն անդ վախճանեցեալ Էրեւանցի Մարգարի կայիցն: Տէս զմիջակ տէ[տերց] 207 Համարն:

301 Թուղթ մի ևս Սարգիս պետն ի դարձ թղթոյն՝ ըստ մտաց թղթոյն մէլիք Մէճըլումի:

Գրեցաւ յամնոյս ի ԺԵ. (15):

կանոնական ծանր ու մոյլ դրոյնունը, որից երբեմն նյարդայնացել ու իր դժգոհոյնունն է հայտնել Շահամիրյանը (ԴՂ, նոր շարք, գիրք Ա., հ. Բ., էջ LIV-LXIX):

Շահամիր Շահամիրյանին հղված նամակների համառոտագրոյնունները տե՛ս վավ. 344, 711, 1391, մահվան մասին՝ վավ. 1550, Շահամիրի թոռ աղա նազարին ուղղված նամակը՝ վավ. 1551:

¹⁰⁰ Իզմիրի առաջնորդ Իսահակ վարդապետի մահվան և նոր առաջնորդ Դանիէլ վարդապետի մասին պարոն Երեմիա Վիրապայանին հղված նամակի համառոտագրոյնունը տե՛ս ԴՂ, գիրք Դ., սյուն 602:

¹⁰¹ Իզմիրի հանգուցյալ առաջնորդ Իսահակ վարդապետի իրերը ցուցակագրելու առթիվ տեր Գալուստին հղված նամակի համառոտագրոյնունը տե՛ս ԴՂ, գիրք Դ., սյուն 602:

302 **Ի Կարս** - Կոնդակ մի ի վերայ Կարսայ քաղաքին և շրջակայիցն ընդ Ղօշավանից առաջ[նորդ] Յովհանն[նէս] պետին: Տէ՛ս զմեծ տե[տերց] 1792 Համարն:

Գր[եցաւ] յամ[սոյս] ի ԺԹ. (19):

303 **Ի Վան** - Թուղթ մի առ Ախիջան աղայն ի դարձ թղթոյն ընդ Սիմէօն պետին: Տէ՛ս զմիջակ տե[տերց] 114 Համարն:

Գրեցաւ յամսոյս ի ԺԷ. (17):

304 **Ի Տաթև** - Թուղթ մի ի Տաթև առ տեղւոյն առաջ[նորդ] Յովա[ննէս] պետն, եթէ ի յԵփրեմ պետէն թուղթ ընկալաք, որ եկեալ է ի Բասրա, յորում գրեալ էր, թէ տաթևացի ոմն ի Մուշիբանտար վախճանեցեալ է և ունի կտակս ի վերայ վանորէից ոմանց և վանն դոյն վանից աղագաւ կարգեալ է կտակակատար ինքեան զԱստուածատուր ոմն Ջուղայեցի և աւա զթուղթման նոցին, այսինքն՝ բանակատարին և նուիրակին յղեցաք առ քեզ, յորոց և լիապէս իմանալոց ես: Եւ թէ զկնի ծննդեանն եթէ եկեսցես ի Սուրբ Աթոռս վանն վէքիլամային, յոյժ բարուք առնիցես, որպէս զի մի՛ գիտասցեն Հեթանոսք և յափշտակեսցեն զեղեալնս:

305 **յԱզուլիս** - Թուղթ մի յԱզուլիս ի վանն Սրբոյն Թօմայի Առաքելոյ, առ նորին առաջ[նորդ] Թօմաս պետն, եթէ թուղթդ մեզ ժամանեաց, իմացաք զբանն կնոջն Մկրտչի: Եւ թէ ի Հնդկաց թուղթ էր եկեալ ի վերայ քոյ՝ աւա յղեցաք քեզ: Իսկ վանն Յովակիմ պետի թղթոցն, եթէ Հասուցես նմա:

Գրեցան յամսոյս ի ԻԱ. (21):

306 **Ի Կարին** - Թուղթ մի առ վէքիլ պարոն Հայրապետն, եթէ երևանցի պարոն Առաքելն ետ մեզ աստ 150 զուռուշ, որ ի գալն յայդր ի քէն առցէ, ուրեմն տուեալ առցես ի նմանէ զթուղթս մեր և մեզ յղեսցես:

Գր[եցաւ] յամսոյս ի ԻԱ. (21):

307 **Ի Խոյ** - Թուղթ մի առ նուիրակ Սողոմօն պետն ի դարձ թղթոյն՝ վանն վրդովմանցն կողմանց միսիթարութին, եթէ լուեալ՝ ցաւեցաք, Աստուած խաղաղութին տացէ: Իսկ վանն Ծ. (50) Հատ վատսունանոցին, որ առ պարոն Աղալօն, եթէ մինչ եկեսցէ, առնլոց եմք և քեզ գրելոց: Եւ վանն թղթոյն, որ ընդ մեր խանի մարդկանցն, եթէ մեզ էհաս: Այլ վանն խառատից, եթէ գրեալ էիր, թէ Դ. (4) թուման ու կէս ևս ետու, բայց վարդապետն ոչ էր ծանուցեալ մեզ, միայն ղատաքից գին Չ. (6) թումանն էր գրեալ: Աւա գրեմ սիրելոյդ, զի միամիտ լիցիս: Ի կողմանէ քոյ մեզ

Հասեալ Համարեցաք, որ և եղև Ը. (8) զատաքի գնոցն Ժ. (10) թու-
ման և կէս:

Վասն մորթոց, եթէ բարուք ես արարեալ, որ գրեալ էս Բա-
բայեան տիրացու Յակոբին՝ բերել ընդ ինքեան մինչ բերցէ, յղե-
ցես մեզ շուտով: ՉԵփրեմ պետէն ծանուցումն, եթէ ելեալ է ի
Մասկաթ նաւահանգիստն, տացէ Տէր անխնաս Հասանիլ ի Սուրբ
Աթոռն: Իսկ վասն գործոյն եթէ ջանա օր մի յառաջ աւարտումն
տալ և դիմել ի շնորհատու ծնօղս քոյ:

Ողջոյն պարոն Թաղիանոսին և որդւոյն՝ տիրացու Բաբային:
Գր[եցաւ] յամ[սոյս] ի ԻԱ. (21):

308 **Ի Թիֆլիզ** - Թուղթ մի Հայերէն առ Դարեջան թա-
գուհին ի դարձ թղթոյն, որ ընդ Բէկթաբէկեան Հանգուցեալ Սու-
խան Դիւանի որդի տիրացու Ռօստոմին, եթէ ըստ խաթեր քոյ
ընկալաք զնա ի սէր մեր և ետուք յուսումն:

309 Թուղթ մի ևս առ պարոն Սուլխան Դիւանն ի դարձ
թղթոյն ընդ ծերունի տէր Ղազարին, եթէ ըստ գրեցելոյդ ընկալաք
զնա սիրով և բարձաք զվէճնն (որք ընդ փեսային իւրոյ՝ տէր Գրի-
գորին)՝ վասն եկեղեցւոյն իւրեանց և ծխիցն՝ Հաւանութեամբ եր-
կուցն, զորս լաւապէս իմանալոց ես ի պայմանագրէն, զոր գրեցու-
ցեալ կնքեցաք և կնքել ետուք քանի մի եպիսկոպոսաց ի Հաւաս-
տութիւն բանին:

Ողջոյն Հարազատին իւրոյ՝ Մանուշար Դիւանին:

463բ

310 Թուղթ մի առ Սրբոյ Աթոռոյս ճորտք՝ պարոն Ենուք
և պարոն Յովհաննէսն ի դարձ թղթոյն նոցա՝ վասն խոստացեալ
կոնդակին (որ ի վերայ տէր Դաւթին և Համայն ճորտիցն Սրբոյ
Աթոռոյս), եթէ այժմ ձեռնՀաս չեղաք, բայց գրելոց եմք յառաջի-
կայ աւուրքս, անհոգ լերուք առ այն:

311 Թուղթ մի ևս առ պարոն Յովսէփն ի դարձ թղթոյն
ընդ տիրացու Ռատակէսին, եթէ ընկալաք զնա սիրով և ետուք Հա-
ւատարիմ եպիսկոպոսի ուրումն՝ առ ի դաստիարակել ուսուցմամբ
աստուածայնոց գրոց:

312 Թուղթ մի ևս առ պարոն Եսաւ Դիւանն ի դարձ
թղթոյն ընդ կրտսեր եղբօրն իւրոյ՝ տիրացու Ռատակէսին, եթէ
ընկալեալ զնա ի սէր մեր, ետուք Ղունկիանոս պետին՝ առ ի ուսու-
ցանել զգիտութիւն¹⁰²:

¹⁰² Առաջին նամակում հիշատակված «հավատարիմ» եպիսկոպոսը (վավ. 311) և հաջորդ՝ չ⁴⁶
312 վավերագրի Դունկիանոս պետն անկասկած միևնույն անձն է, որը պետք է ուսուցաներ
տիրացու Ռատակէսին: Կարծում ենք՝ Դունկիանոս եպիսկոպոսը Սիմեոն Երևանցի և Դուկաս
Կարնեցի կաթողիկոսների շնորհաշատ նոտար, գրագիր Դունկիանոս Աշտարակեցին է, որը

Միսիթարովթեան նամակ տեր Նիկողայոս քաճանային՝ եղբորորդի տեր Դաւիթ եւ տեր Նիկողայոս քաճանանների մահուան առթիւ: Նաեւ շնորհակալագիր. «վանն Ա. (1) արծաթեայ սուրաւոյն (որ էր ՏԲ. մսխալ) և մին չիշակլի խառայ փիլոնին» (463բ, Չ.): Նամակ պարոն Մուշրուպ Դավթին, աներորդուն՝ Տէր-Ստաքեսեան տեր Գրիգորին (Է.): Նամակ՝ ուղղուած Գօրիի քաճանաններին ու ժողովրդին՝ տեր Ղազար քաճանայի առնչութեամբ (Ը.)¹⁰³: Պատասխան զոյգ նամակ՝ Շուպաւերի Թադէոս պետին (մէկը՝ Վանական վարդապետին). «առ Վանական վարդապետին միճակեցեալ ժողովուրդան» (Թ-Ժ): Կոնդակ՝ ուղղուած Հաղբատավանքի թեմականներին, որն առաքուել է տեղի Դաւիթ վարդապետի միջոցով (ԺԱ): Պատասխան նամակ՝ ուղղուած Թիֆլիսի աագ քաճանաններին եւ իշխաններին. «վանն Հանգուցեալ տեր Աւետիքի եղբօր դատերն» (Ա.): Մէկ այլ նամակ՝ ուղղուած տեղի գործակալ տեր Ղազարին, որում յիշատակուած են նախորդ նամակներում վկայուած անձինք ու նուիրատուութիւնները, ինչպէս աւրինակ՝ Հաղբատի Դաւիթ վարդապետը՝ կոնդակի առնչութեամբ, տեր Նիկողայոսի նուիրաբերած մէկ արծաթեայ սուրան եւ փիլոնը եւ այլն: Վերջում շնորհակալութիւն է ասուում բոլոր ընծանների Համար, նշում է, որ սպիտակ մոմ է ուղարկուել Երեւան Քեալ մականուամբ Յովհաննէսի միջոցով (Բ.):

313 Թուղթ մի Հայերէն առ արքայն Հերակլէս. շնորհակալութիւն վանն յղեալ գինւոյն՝ միջնորդութեամբ մէլիք Աւետիքին: Տէ՛ս գմիջակ տե[տերց] 115 Համարն:

314 Թուղթ մի ևս առ մէլիք Աւետիքն, ի պատասխանի թղթոյն: Տէ՛ս գմիջակ տե[տերց] 209 Համարն:

Գրեցան յամնոյս ի ԻՉ. (26):

464ա

315 Ի Կարին - Թուղթ մի առ վէրիլ պարոն Հայրապետն վանն շուպաւերցի գերի անկեալ կնոջն (որ է անդ ի ձեռն մուֆթոնն), որպէս զի գիտացեալ զնամանէ, ծանուսցէ սրբազան Վեհին:

316 Թուղթ մի ևս առ Գօրոյեան մահտեսի Խաչատուրն և իւր եղբայր մահտեսի Սերովբն ըստ նոյն մտաց, որ առ Հայրապետն գրեցաւ:

Գրեցան յամնոյս ի ԻԷ. (27):

317 Ի Կարին - Թուղթ մի առ վէրիլ պարոն Հայրապետն ի դարձ երից թղթոցն՝ վանն Բաբայեան մահտեսի Կարապետի

նաև էջմիածնում ընդօրինակված և մեզ հասած շուրջ մեկ տասնյակ ձեռագրերի ընդօրինակողն է (Ա. Հարությունյան, Գրիչ Դունկիանոս Աշտարակեցու տապանագիրը և մատենագրական վաստակը, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2016, Հիւր 2 (54), էջ 105-119): Դունկիանոսը, և նրա մայրը՝ հանգչում են Ս. էջմիածնի միաբանական գերեզմանոցում: Չափաժողով տապանագրերը ևս վկայում են բազմավաստակ Դունկիանոսի կյանքի ու գործունեության հարուստ բովանդակության մասին (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 188, արձ. 350, էջ 197-198, արձ. 383):

¹⁰³ Տեր Ղազարի և տեր Գրիգորի վիճարկության կապակցությամբ Գորիի ժողովրդին հասցեագրված նամակի համառոտագրությունը տե՛ս ԳՀՊ, գիրք Դ., սյուն 602:

Թղթոյն, եթէ լուեալ զյղիւն, միամտեցաք: Հանգուցեալ մահտեսի Աղամճանի տղայոց թուղթն ևս յղեալ էս, ի Հարկէ, ցարդ: Վասն Պօլսոյ նուիրակին, եթէ ո՛ր մնաց: Յիզմիրու եկեալ Գ. (3) Հակն և Յովհաննէս) պետի Ա. (1) Հակն Հասին մեզ: Իմացաք զՀասանիւն առ քեզ թղթոցն մերոց ի սեպտեմբերի 19 գրեցելոյ: Տիրացու Գէորգն գրեալ էր վասն փօլիցայիցդ, եթէ առնլոց էմ, անհոգ լեր: Բայց նորա Չրաղ Մանուկին Հետ, որ Գ. (3) կտոր ամանաթ դրամ էս յղեալ Հասանիլ ի Սուրբ Աթոռս, դեռ ևս Գէորգ մեզ բան չէ գրած յայսմ կողմանէ:

Այլ և իմացաք զվախ[ճանն] Սա[Հակ] պետին, բայց նորին թղթոց պաշարանն (որ է առ քեզ) բացեալ Հանցես զթուղթն Աստուածատուր աղայի որդի պարոն Մարգարի և Ապրօյեան Առաքել աղայի, զորս և ի միասին պաշարանեալ յղեսցես առ Մարգար աղայն՝ ընդ փայեկին անտի եկելոյ: Դու ևս ընդ նոյն թղթոյն թուղթ գրեսցես նոցա: Եւ զՍա[Հակ] պետի թուղթն պաշարանեալ առ մեզ դարձուցես:

Իսկ զայլ օրհնութեան թուղթն առ քեզ պաշեսցես՝ առ ի յանձնել նորոգ նուիրակին, որ աշա գնայ ի տեղի Հանգուցելոյն: Եւ վասն Սերովբ ամիրային, եթէ սիրով ընկալեալ շահեցաք ըստ արժանւոյն:

318 **Ի Զմիւռին** - Թուղթ մի ի Զմիւռին առ քահանայսն և իշխանսն ի դարձ թղթոյն նոցա ընդ յատուկ փայեկի ումեմն: Վասն Սահակ պետին մսիթարութիւն: Իսկ վասն կայից նորին (զորս ամիտփեալ արկեղբ եղեալ էին յաւանդատունն սրբոյ եկեղեցոյ) շնորհակալութիւն: Եւ վասն նորոգ նուիրակին, եթէ ի քանի աւուրս Հոգացեալ յղելոց էմք:

Յղեցան ընդ փայեկին և գրեցան յամսոյս) ի են:

319 **յՈւռումէլի** - Կոնդակ մի գանձանակի ի վերայ Ուռուշճուղու՝ վասն ԴՃ. (400) ղուռուշին արդեանց գանձանակին, զոր ժողովեալ էր գանձապետ պարոն Անոյշն ի ՌՄԱԷ. (1788) թուին: Տէ ս զմիջակ տե[տերց] 204 Համարն):

320 **Թուղթ մի ևս ի յՈւռուշճուղ առ գանձապետ պարոն Անոյշն** ընդ նորոգ նուիրակին՝ վասն նորին յանձնարարութիւն: Եւ վասն ի պատրաստի եղեալ գանձանակադրամին պատուէր՝ տալ նմա ի Հասուցանել մեզ: Տէ ս զմիջակ տե[տերց] 14 Համարն:

321 **Կոնդակ մի նուիրակական ի վերայ յՈւռումէլու և նորին շրջակայիցն** ընդ նորոգ նուիրակ Գրի[գոր] պետին:

322 **Գրիգորուպօլ** - Թուղթ մի ի Գրիգորուպօլ, առ տեր Մեքրոն ծերունի քահանայն. յիշումն թղթոյն մերոյ առաջնոյ՝ առ ինքն գրեցելոյ: Եւ ծանուցումն զնորոգ նուիրակէն Ուռումէլու, եթէ

աՀա յղեցաք և պատուիրեցաք վանն քոյ տալ ԱՃ. (100) զուռուշ ի կողմանէ մերմէ ում'և կամիցիս անդանօր: Ուրեմն գրեա՛ նուիրակին՝ ում'և կամեսցիս, տացէ ի Հասուցանել քեզ:

Ողջոյն տեղոյ քահանայից, իշխանաց և առ Հասարակ ժողովրդոցն:

323 **Ի Սիշով** - Թուղթ մի ի Սիշով առ ազնիւ աղաչայ Նիկոլն և եղբարն, ընդ նորոգ նուիրակ Գրիգոր պետին: Տէ՛ս մեծ տե[տերց] 1786 Համարն:

Գրեցան յամնոյս ի էլն:

324 **Ի Պօլիս** - Թուղթ մի առ պատրիարք Չաքարիա պետն, ի պատասխանի թղթոյն: Տէ՛ս զմեծ տետերց 1890 Համարն:

Գրեցաւ Բ. (2) Թուով Հոկ[տեմբերի] ԺԸ. (18) և նոյ[եմբերի] Ը. (8):

Նամակ պրն. պրն. Յովհաննէս եւ Թադէոս Ղարտաշեան եղբայրներին՝ Ուռուելու նոր նուիրակ Գրիգոր պետի առնչութեամբ: Պատասխան նամակ իլիմին՝ ճիզատ մաշտէի Յովհաննէս ամիրային Գաղատիոյ նուիրակ Յովհաննէս պետի միջոցով «վանն Ե. (5) գազ չուխային» (464ա, Գ): Մխիթարական նամակ մաշտէի Կարապետ Բաբայեանին՝ կնոջ մաշտան առթիւ եւ ծանուցում թօմաս պետի թղթի մասին:

Նամակների Համառոտագրութիւններ Յովհաննէս վարդապետին եւ Մասեհեան պրն. Եսայուն:

464բ

325 **Թուղթ մի առ տպագիր տիրացու Պօղոսն՝ վանն Չ. (6)** նոր գազանի մորթոցն, եթէ առնելով զգինսն ի նուիրակ Գրի[գոր] պետէն, յղեսցես ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն՝ Հասանիլ մեզ¹⁰⁴:

326 **Ի Չմիւռին** - Թուղթ մի առ Չմիւռնոյ քահանայսն և իշխանսն ի դարձ թղթոյն նոցա՝ վանն Հան[գուցեալ] Սա[Հակ] պետին մխիթարութիւն և վանն նորոգ նուիրակին ծանուցումն, եթէ աՀա յղեցաք: Տէ՛ս զմեծ տե[տերց] 1894 Համարն:

327 **Կոնդակ մի ի վերայ Չմիւռնոյ և բոլոր թեմիցն ընդ նորոգ առաջ[նորդ] Դանիէլ պետին**, որ յետ վախճանման Սահակ պետին գնայր անդ: Տէ՛ս զմեծ տե[տերց] 1795 Համարն¹⁰⁵:

¹⁰⁴ Տիրացու Պողոսը, որը «տպագիր» է հիշվում տպագրական գործում մեծ վաստակ ունենալու համար, հայտնի տպագրիչ Պողոս Արապյանն է (1742-1835 թթ.), որի կյանքին ու գործունեությանը Վ. Գրիգորյանն անդրադարձել է ԴՀՊ նոր շարքի Ա. և Բ. գրքերում: Ավելորդ չէ նշել, որ Վրաց Հերակլ Բ.-ի հետ կնքած պայմանագրի համաձայն, Պողոսը տեղափոխվել է Թիֆլիս և զբաղվել վրացերեն տառեր ձուլելու և տպարան հիմնելու գործունեությամբ (ԴՀՊ, նոր շարք, գիրք Ա., հ. Ա., էջ 552, ծնթ. 111, հ. Բ., էջ 769, ծնթ. 147):

¹⁰⁵ Զմյուռնիայի առաջնորդ Դանիէլ արքեպիսկոպոսը պաշտոնավարել է 1793-1797 թթ.: Ա. Խառատյանը ՄՄ կաթողիկոսական դիվանի նյութերի հիմամբ ցույց է տալիս, որ նա Զմյուռ-

Մխիթարական թուղթ Վիրապեան պարոն Երեմիային՝ ՍաՀակ վարդապետի մահունան առթիւ, նաեւ ծանուցում Դանիէլ պետի մասին (464բ, Ժ.): Դարձեալ մխիթարական թուղթ Մարգար աղայ Ապրօյեանին, մահտեսի Կարապետ Չէլիկեանին, պարոն Երեմիային, մահտեսի Յովհաննէսին, Առաքել աղայ Ապրօյեանին, տէր Ալեաթք, տէր Գրիգոր, տէր Գալուստ, տէր Յովհաննէս քահանայներին (վերջինիս տոկոնունութիւն է մաղթում նաեւ կոտջ՝ Հաճի Նանայի մահունան առթիւ, որջոյն է Հըլում եղբորը՝ մահտեսի Հայրապետին, որդիները՝ տիրացու Գեորգին, Կարապետին եւ Ստեփաննոսին, նաեւ՝ Մարիամին, Սիմային եւ Եփրոսինէին եւ այլոց) (ԺԱ-ԺԶ.): Մխիթարական թուղթ՝ եղբայրներ պարոն Գեորգին եւ Յարութիւնին. «Վասն Աստուածատուր աղային եւ ՍաՀակ պետին Հանգուցելոցն»: Նոյնանման նամակներ՝ մահտեսի Կարապետ Չէլիկեանին, պարոն Առաքելին եւ պարոն Յովհաննէսին, տէր Մկրտչին, Թօխաթի Յովհաննէս աղային (ԺԷ-ԻԲ.):

Կարինի վէրիլ պարոն Հայրապետին տրուում են նամակագրութեան Հետ կապուած եւ տնտեսական բնոյթի յանձնարարութիւններ, մանաւորապէս՝ Մինաս պետի ստացականի, տիրացու Գեորգի Չրաղ Մանուկի միջոցով Գ. (3) կտոր ամանաթ Մայր Աթոռ ուղարկելու, Զմիւռնիայի եւ Ուռումէլու նուիրակների մասին: Ուռումէլու նուիրակին յանձնարարում է ԳՃ. (300) ղուտուշ տալ եւ գրանցել դաւթարում (ԻԳ.):

Պատասխան նամակ պարոն Բաբաջանին (ԽՍԵ), որից տեղեկացել էին Եփրեմ վարդապետի՝ Բարսայ Հաննէլու մասին, ինչպէս նաեւ որջոյն է յղում պարոն Յովհաննէս Ալանեսանին (Ա./1): Գեորգ աղային (Կարս) պատուիրում է Մայր Աթոռ ուղարկել Լ. (30) թիլանի լիտր մաքուր գէլթոնի իւղ եւ գէլթոն (Ա./2): Ղուշավանքի առաջնորդ Յովհաննէս վարդապետին շնորհակալութիւն է յայտնում ուղարկած Բ. (2) բղուղ պանրի եւ ԳՃԾ. (350) ղուտուշի Համար (Բ.): Նամակները գրուել են նոյեմբերի 4-ին:

465ա

328

Ի ԽՍԵ - Թուղթ առ Սրբոյն Թադէոսի առաքելոյ վանից առաջնորդ Գեորգ պետն և իւր թեմի ԽՍԵյայ քահանայան և իշխանան՝ ի դարձ բազմակնիք թղթոյն նոցա ընդ աղայ Ղամբարին, եթէ իմացաք զմիտս գրեցելոցն ձերոց, բայց մինչ լուաք, թէ խանն թալաղայ է գրեալ և վերստին զսուրբ վանքն յանձնեալ է քեռն իւրոյ՝ Բէկում-Խանումին: Վասն որոյ ոչինչ խօսեցաք ընդ խանին մերոյ, այլ ըստ ինդրոյն ձերոյ զյանձնարարական թուղթս գրեցաք առ Բէկում-Խանումն և առ Նաւրուզալի բէկին, զորս և աՀա յղեցաք ձեզ: Արդ, եթէ խանն թալաղայ չէ գրեցեալ և վերս-

նիա է հասել 1794 թ. օգոստոսին և, որ Դանիէլի և զմյուռնահայ վերնախալի որոշ անձանց միջև շարունակ գծտոյթուններ են եղել: Բանը հասել է նրան, որ անհաշտութիւններին փորձել են միջամտել կաթողիկոս Դուկաս Կարնեցին և Կ. Պոլսի պատրիարք Զաֆարիա Կաղզվանեցին: Ի վերջո, Դանիէլը 1797 թ. նոյն պաշտոնով մեկնել է Ռումելիա, իսկ 1801 թ. ստանձնել Ամենայն Հայոց կաթողիկոսութեան գահը (Ա. Խառատայան, Զմյուռնիայի տեւրոնի թեմի առաջնորդները, էջ 25): Հայտնի է, որ այստեղ էլ ծագեց «Իավիք-Դանիէլյան» հայտնի գավազանակրիվը:

տին սուլթանն կամիցի ձեռնամուխ լինիլ ծանուսջիք մեզ ձեր մարդուն, որ ըստ այնմ՝ Հոգ տարցուք այնմ սրբոյ վանացն¹⁰⁶:

329 **Թուղթ մի տաճկերէն առ Բէկում-Խյանումն.** յանձնարարութիւն վանն սրբոյ վանացն Սրբոյն Թաղէտի:

330 **Թուղթ մի ևս տաճկերէն առ Նաւրուզալի բէկն, ևս Հանձնարարութիւն վանն նոյն վանացն:**

Գրեցան յամոյս ի Է. (7):

331 **Ի Բաղդատ - Թուղթ առ Մարգար աղայն, մխիթարութիւն վանն տկարութեանն:** Եւ ծանուցումն զուժսուն թումանէն կտակէն գօրեցի Դաւիթ բէկի, եթէ յանձնեսջիք նուիրակին՝ բերել առ մեզ: Իսկ վանն նորոգ շինուածոյ ծախուց մնացորդին, եթէ որպէս կամիս, այնպէս արասցես: **Տէ՛ս զմիջակ տետերց 122 Համարն:**

Գործակալ պարոն Փանոսին յանձնարարում է սիրով ընդունել Եփրեմ վարդապետին եւ նրա միջոցով ուղարկել գօրեցի Հանգուցեալ Դաւիթ բէկի կտակած Չ. (80) թումանը (465ա, Բ./3): Պարոն Միքայէ Տէր-Մինասեանին յղած պատասխանն նամակում յանձնարարում է վերոյիշեալ նամակները Հասցնել տերերին (Գ./2): Պատասխանն նամակ գործաւար նուիրակ Եփրեմ վարդապետին. «ի պատասխանի թղթոյն, ի Բասրայու գրեցելոյն» (Դ.): Պարոն Բաբաջանին (Խօյ) յանձնարարում է Եփրեմ վարդապետին Հասցնել ծրարով նրան ուղարկուած նամակները (Ե.):

332* **Ի Թապեզ - Թուղթ առ տէր Յովսէփ քահանայն, ի դարձ թղթոյն յօգուստոս յէլն գրեցելոյն.** յիշումն թղթոյն մերոյ առաջնոյ եւ զխառատացն, եթէ մարն խոստացաւ գալ ինքն գիտացէ՛ կա՛ մ՛մնացէ, կա՛ մ՛եկեսցէ: Միամտութիւն վանն Մարաղայու խանին, եթէ իմացաք, զոր ինչ գրեալ էիր, բայց մահտեսի Յովաննիսի վայրաբանութիւնն ևս ծանեաք: Խոստացեալ ես

¹⁰⁶ Արտագի թեմի առաջնորդների և Ս. Քաղեոս առաքյալի վանքի վանահայրերի գավազանագրում նարտարապետության դոկտոր Արմեն Հախնազարյանը հիշատակում է Դուկաս Կարնեցի կաթողիկոսի կողմից Ս. Քաղեոս առաքյալի վանքի առաջնորդ նշանակված Գևորգ վարդապետի անունը, որն առաջնորդել է 1787-1806 թթ.: Իր պաշտոնավարման ընթացքում Գևորգ վարդապետը վանքում իրականացրել է շինարարական աշխատանքներ, մասնավորապես՝ 1793 թ. նորոգել է վանքի աղբյուրը, 1794 թ. եկեղեցու ավագ խորանի փայտե խաչկալը փոխարինել ֆարակերտ խաչկալով, 1796 թ. վերաշինել ջրաղացը և այլն (Ա. Հախնազարյան, Արտագի երեմ վանքերը, ՀձՈՒ գիտ. ուսումնասիրություններ, հ. ԺԵ., Երևան, 2012, էջ 94): Դավիթ-Դանիելյան պալլարի ընթացքում նախկին վարդապետ Գևորգ եպիսկոպոսը հիշվում է Բագրևանդի Ս. Հովհաննես վանքի եկեղեցական ժողովի մասնակիցների կազմում, որտեղ կաթողիկոս էր ընտրվել Դանիել Սուրմատեցին: Հակառակ սրան՝ 1801 թ. ապրիլին Ս. Էջմիածնում կաթողիկոս է օծվում Դավիթ Էնեգեթցին՝ Դանիելին պաշտպանելու համար կարգալուծ անելով և Արտագի թեմից հեռացնելով Ս. Քաղեոս առաքյալի վանքի առաջնորդ Գևորգ եպիսկոպոսին: Սակայն, ժամանակ անց, վերջինս զոչում է Դավիթին հակադրվելու համար և վերահաստատվում իր նախկին պաշտոնում (Մաղափա աբբ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ., Ս. Էջմիածին, 2001, սյուն 349-351):

զնմանէ պարագայիւք գրել, գրեա՛, զի գիտասցուք: Այլև իմացաք զվէճնն տուխորդանցուց՝ վասն այգւոյն մերոյ, որպէսզի ինքեանք պահեսցեն: Նաև զպատուականութիւն այգւոյն և զքոյդ որպիսաբար Հոգ տանիին՝ ՀնորՀակալեցաք զքէն: ԱյսուՀետև որպէս խոՀեմութիւնդ տնօրինեսցէ, արասցես, որպէս յառաջ եւ եմք պատուիրելքեզ:

Գրեցան յամսոյս Ի ԺԵ. (15):

465բ

333* **Ի Թօխաթ** - Թուղթ առ վէքիլ մահտեսի Յարութիւնն, ի դարձ թղթոյն ընդ Մինաս պետին՝ վասն իրացն Յովաննէս պետին, եթէ Հասին ինքեան, վասն որոյ առաք ի նմանէ զհարձն (որ էր ԻԲ. (22) ղուռուշ և Ժ. (10) փարայ): Իսկ վասն ԵՃ. (500) ղուռուշին Մինաս պետի, եթէ եկեսցէ ի Պօստյ և ի ձեռս քոյ Հասանիցի, յոյժ բարուք, և եթէ չգայցէ, ծանուսցես մեզ, որ անուամբ Ներսէս պետին մեզ Հասեալ գիտասցուք և զմի ղաւզ գրեալ առաքեսցուք և զայն ԵՃ. (500) ղուռուշն աստ ի Մինաս պետէն առցուք: Եւ վասն յիւրմէ խարճեցեալ ԱԹ. (39) ղուռուշ և Լ. (30) փարային, վասն իրաց ոմանց, եթէ վեր առցես ի Սահակ պետի դրամոցն (որք են առ քեզ), քանզի նա յղեալ է քեզ ըստ ինդրոյդ ԳՃԵ. (305) ղուռուշի զատ և դու ԺԵ. (15) ղուռուշի կտաւ եւ յղեալ առ ինքն և մնացեալ է քեզ մօտ ԲՃՂ. (290) ղուռուշ, յորմէ զվերոյ յիշեալ խարձն քո Հանեալ յղեսցես զմնացեալսն ընդ ԲԹՉՃ. (2600) ղուռուշին Ներսէս պետի, ի Սուրբ Աթոռս: Բայց յայսմՀետէ, որում և տայցես ի նմանէ, ինդրեսցես զդրամն որպէս և գրեալ եմք քեզ յառաջմէ:

334* **Ի Կարին** - Թուղթ առ վէքիլ պարոն Հայրապետն ի դարձ թղթոյն ընդ Մինաս պետին, եթէ իմացաք զԱԹ. (1000) ղուռուշն, որ թողեալ է առ քեզ ի գալն, վասն որոյ և ըստ գրեցելոյդ նշանեցաք ի դաւթարդ: Տեղս բնաւ ոչ անցանի նոր սիքայն գրեցի, զի գիտասցես: Վասն Յարութիւնի թղթոյն, եթէ Հասուսցես առ ինքն: ՉՀաճի Բաբայէն եթէ լուեալ ցաւեցաք, վերստին գրեսցես զնմանէ, զի գիտասցուք: Իսկ վասն Բայբուրտու կարպետից, եթէ ողջոյն տացես ի մէնջ Գօրօյեան մահտեսի Խաչատուրին, առնուլ ի նոցանէ Ժ. (10) Հատ, և թէ չլինիցի, Բ. (2) Հատ, զի տեսցուք զօրինակն և ինդրեսցուք ի բայբուրտացոյ Հոգալ և յղել: Եւ վասն Դերձանու առաջտորդին, եթէ աստ ի մէնջ էառ ԱՃԼ. (130) ղուռուշ և ձեռագիր ետ, որ ի գալն յայդր տայցէ քեզ, ուրեմն առեալ զդրամն վերադարձուսցես առ ինքն զձեռագիրն, զոր ահա յղեցի քեզ ընդ թղթոյս այս:

335 **Ի Դերջան** - Կոնդակի վերայ Դերջանու ընդ նորին առաջնորդ Աբրահամ պետին: Տէ՛ս զմեծ տետերց 1997 Համարն¹⁰⁷:

336 **Ի Բայազիտ** - Թուղթ առ Իւչքիլիսայու առաջնորդ Մկրտիչ պետն ի դարձ թղթոյն ընդ ումեան գրեցելոյ վասն տուգանացն: Տէ՛ս զմիջակ տե[տերց] 214 Համարն:

Գրեցան յամնոյս ի ԻԸ. (28):

337 **Ի Թաւրեզ** - Թուղթ առ տէր Յովսէփն. յիշումն թղթոյն մերոյ առաջնոյ: Եւ ծանուցումն զԳրիգոր պետէն, եթէ ահա առաքեցաք զդա ընծայիւք առ սարդարն շահի, ուրեմն մուխայէթ լիցիս և Ժ. (10) թուման, եթէ ինդրեացէ, տացես և թուղթ առեալ ի նմանէ, պահեսցես առ քեզ:

Գրեցաւ յամնոյս ի ԻԶ. (26):

1793 Թ., դեկտեմբեր

338 **Ի Խոյ** - Թուղթ առ տեղւոյն առաջնորդն և ժողովուրդն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն նոցա, զոր գրեալ էին վասն սրբոյ վանացն Սրբոյն Թադէոսի առաքելոյ: Տէ՛ս միջակ տե[տերց] 123 Համարն:

Գրեցաւ յամնոյս [դեկտեմբերի] ի Ժ. (10):

339 Թուղթ ի Կալկաթա առ Առաքելեան Գրիգոր և Խաչիկեան Մովսէս աղայն, ի պատասխանի թղթոյն նոցա գրեցելոյ ի ՌՄԽԱ. (1792) թուոյ յունվարի Թ. (9):

Յորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան...

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս աստուածայնոյ ծանուցումն լիցի ընտիր սիրելեացդ մերոց և բարեխոհ որդւոցդ Սրբոյ Աթոռոյս Էջմիածին: Չի յանցելում տարւոջն, որ էր ըստ թուակահի Փրկչին 1792, և ըստ մերումն թուաբերութեան ՌՄԽԱ., ի վերջս յուլիսի ամնոյ գրեցաք առ ձեզ զՀամառօտ թուղթ մխիթարութեան և օրհնութեան, զոր Համարիմք թէ մինչև ցարդ Աստուծով ընկալեալ իցէք: Ապա զթուղթն ձեր, որ ևս ի նոյն ՌՄԽԱ. (1792) թուոջն մերում ի յունվարի Թ. (9) էր գրեցեալ, էհաս առ մեզ ի ՌՄԽԲ. (1793) թուոյս նոյեմբերի ԺԷ. (17), զոր և սիրով ընկալեալ մեր և գիտացեալ զողջունէ ձերմէ և զբարւոք կելոյ, ուրախ եղաք և գոհացաք զԱստուծոյ:

Եւ զառաջնոյն թղթոյն մերոյ առ ձեզ Հասանիլն իմացեալ միամիտ եղաք: Յիշեալ էիք վասն Հոգեբաժնին ի Քրիստոս Հանգուցեալ լուսաՀոգի Խաչիկ աղային: Յիրաւի զայնմանէ յառաջ

¹⁰⁷ Դերջանի առաջնորդ Աբրահամ վարդապետի՝ Աղթամարում եպիսկոպոս ձեռնադրվելու, ապօրինաբար Մուրբ Աթոռ ներքաշվելու, ապա հպատակվելու վերաբերյալ կոնդակի համառոտագրությունը տե՛ս ԴՅՊ, գիրք Գ., սյուն 625:

գրեալ էաք, թէ՛ նուիրակն դեռ մեզ չէ գրեալ, սակայն յետ այնորիկ թուղթ ընկալաք ի նմանէ, յորում ծանուցեալ էր, և մեք ի յերկրորդ թղթոջն մերում, որ առ ձեզ, ազդ արարաք՝ առ ի միամտութիւն: Եւ վասն արձանագրութեան ի վերայ նորակերտ զանգակատան Սրբոյ Հռիփսիմեայ, որ գլխատակարան էիք յղեալ յանուն Հոգեւոյս Խաչիկ աղային, ընկալաք, բայց ի ցրտային ժամանակիս ոչ լինէր գրիլն, վասն որոյ պաճեմք Աստուծով յառաջիկայ տարւոյ ապրիլ ամսեանն փորագրել տալ ի ներքուստ կողմանէ կաթուղիկէին, և որպէս գրիցի ըստ տանելութեան տեղւոյն, զօրինակն յղեւոց էմք առ ձեզ ի միամտութիւն:

Իսկ ի կողմանէ ծախուց շինութեան զանգակատանն, որ գրեալ էիք, այսպէս ծաներուք, զի ի Բասրայու ձեր վէքիլ պարոն Պետրոս Ղուկասն, ձեռամբ պարոն Յովաննէսին Բէթղէճէմեան մէկ Հազար Հինգ Հարիւր զուռուշի բարաթ էր գրեալ ի Ստամբուլ Նիփօլա անուն Ֆռանկի միոյ, և զայն բարաթս յղեալ էր ի ձեռս Ստամբուլու նուիրակ Մինաս վարդապետին, և իւրն ևս գրեալ էր, թէ այս բարաթովս ԱՌԵՃ. (1500) զուռուշ առնուս, նոյնպէս և պարոն Յովաննէսն էր գրեալ նմա, և նուիրակն այն բարաթովս առեալ էր ի Ֆռանկէս ԱՌԵՃ. (1500) զուռուշ Հօռումի, որ է ԱՃ. (100) թուման, զոր և մեզ Հասոյց:

Այլ սիրելիքդ մեր գրեալ էիք լուսարար Գրիգոր վարդապետին, թէ Պարսուց մեր վաքիլ Պետրոս Ղուկասն մին ֆարտ բարաթով ԱՃԺ. (110) թուման է ուղարկել Ստամբուլ, որ Ճ. (100) թումանն զանգակատան խարջին կողմանէ և Ժ. (10) թումանն քեզ Հասանի և այլն: Իսկ պարոն Յովաննէսն Բէթղէճէմեան գրեալ է մեզ, թէ ԱՌԵՃ. (1500) զուռուշ փօլից արարաք ի Ստամբուլ, որ մէկ զուռուշն եօթն Հարիւր յիսուն դիանով լինի ԱՃԺԲ. (1112) թուման և կէս, որ ԱՃ. (100) թումանն փոխանակ Սուրբ Հռիփսիմեայ զանգակատան ծախուցն, և ԺԲ. (12) թուման և կէսն Հասանիլ պարտի լուսարար Գրիգոր վարդապետին: Տարակուսեցաք ի վերայ այսմ բանի: Չի նոցա բարաթ արարեալն ի Ստամբուլ ԱՌԵՃ. (1500) զուռուշ է եղեալ, որ լինի Ճ. (100) թուման, և այս է նուիրակի առեալ և մեզ Հասուցեալն: Եւ թէ ի Բասրայ ոռւփին սրայ է կամ արկաթի, այնու Հաշին աւել պակաս գայ, զայնմանէ չունիմք տեղեկութիւն: Թէպէտ այս այնքան ինչ բան չէ, սակայն ստուգութիւն իրին պարտի յայտնի լինիլ:

Վասն որոյ այժմ գրեցաք պարոն Յովաննէսին Բէթղէճէմեան և ձեզ սիրելեացդ ևս գրեմք, որ եթէ լուսարար Գրիգոր վարդապետի Ժ. (10) թումանն յայս ԱՃ. (100) թումանիցն պարտի ելանել գրիցէք, որ տամք, իսկ թէ որիչ է, որ մեզ չէ Հասեալ զայն ևս ծանուցանիցէք:

Այլ գլխեցեալ ԱՃ. (100) թումանն շորհակալութեամբ և օրհնութեամբ ընկալաք, զոր Տէր Աստուած ի Հաճոյս իւր ընկացի սի-

րով և անդառնալի մաղթանօք Սր|1798|բուհւոյն Հոփսիմեայ, ծաւալեցէ զառատաձիր շնորհս ողորմութեան իւրոյ ի Հոգի Հանգուցեալ ազնիւ Խաչիկ աղային, քաւեցէ զմարդկօրէն յանցանս նորա, և ժառանգեցուցէ նմա զբնակութիւն յաւիտենական և երկնային խորանացն ընդ դասս սրբոց և կամարարացն իւրոց:

Եւ զձեզ Հանդերձ ամենայն Հետամնացիւք նորին օրհնելով օրհնեցէ և զօրացուցէ, փրկեցէ ի վտանգից և ի փորձութեանց, և պահեցէ ի ինամն իւր, պարագայծամօք և խաղաղ կենօք, տալով և զյաջողումն բարի բանից և գործոց ձերոց:

Այլև՝ գրեալ էիք զսիրելոյն մերոյ Յօհաննան աղային Յակոբեան վասն Սրբոյ Աթոռոյս տուեալ ԻԵՌ (25000) ռուբի արկաթոյն որպէսն, զոր Հոգելոյս Խաչիկ աղայն իւր և ձեր և Յովաննէսի և Աստուածատուրի անուամբքն եղեալ է ի կումբանումն ինկիլզաց մինչև ի Ծ. (50) տարի, որ ամ ըստ ամէ մոլտաթն առնուք և տայք նուիրակին մերոյ՝ Հասուցանել ի Սուրբ Աթոռս և այլն, և նշանակեալ էիք, թէ զթուղթն ձեր իբրև վկայական այդմ բանի առ մեզ պահիցեմք:

Իմացաք զգրեալն ձեր և ընկալաք, և շնորհակալ եմք, և ի նուիրակ Եփրեմ խոհեմամիտ վարդապետէն ևս ի Սուրաթու գրեալ թուղթ առաք, որ նա ևս երկրապէս ծանուցեալ էր զայդմանէ: Եւ զլիագոյնն ի գալն իմանալոց եմք ըստ գրեցելոյն ձերոյ: Քանզի ի սոյն տարւոյս սեպտեմբերի Ա. (1) ելեալ է առանց վաստու ի Բասրա, ուստի ի նոյն ամսոյ Ե. (5)երորդ աւուրն դարձեալ թուղթ էր գրեալ մեզ, որով միամտեալ գոյացաք զԱստուծոյ: Յուսամք թէ մինչև ի քանի ամիսս խաղաղութեամբ ժամանեցէ ի Սուրբ Աթոռս և զորպիսութիւնս ձեր և կողմանցդ լիապէս ծանուցէ մեզ:

Այնուհետև մեք ևս զնոր նուիրակն պատրաստեալ առաքիցեմք, գրելով ընդ նմա, զոր ինչ յայնժամ Հարկաւոր իցէ: Այլ այժմ պատշաճ Համարեցաք օրհնաձիր թղթովս զայսքան ինչ բանս ծանուցանել:

Եւ զորպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և կողմանցս այսպէս գիտասաջիք, զի շնորհին Տեառն Սուրբ Աթոռ մայրս ձեր ի պայծառութեան կայ, և երկիրս ի միջակ խաղաղութեան, և մեք կերպիւ մի կենցաղավարելով ջանասիրեմք ի բարեկարգութիւնս և ի շինարարութիւնս Սրբոյ Գահիս: Բայց ներքինի Աղայ Մահմատ խանն յանցելովմ տարւոյն կրկին տիրեալ Շիրազու և զբերդն աւերեալ, և դարձեալ ի Թէհրան շահ անուամբ, անտի յիւրայնոց զոմն սարտար էր կարգեալ և յղեալ ի Թարուէզ, որում բազումք իշխողացն Հնազանդեցան և սակաւք ևս դեռ ոչ Հնազանդին, ուստի նշան վրդովման երևի, զոր Տէր խափանեցէ, շնորհելով ըզձալի խաղաղութիւնն իւր ամենայն աշխարհի և մանաւանդ խղճալի ազգի մերում:

Իսկ և օրհնեալ աղայ Մովսէսդ, որ ի թղթոջ ձերում՝ մի թուղթ էիր եղեալ ի Թիֆլիզ Հասանէլի, յայնժամ Հաղբատայ առաջնորդ Դաւիթ վարդապետն աստ գտանեցաւ, ի դառնալն յանձնեցաք նմա Հասուցանել առ տէրն, որոյ սակս միամիտ լիցիս: Եւ ի ճշմարիտ սէր ի Հաւատարմութիւն ձեր, որ առ Սուրբ Աթոռս և առ մեզ, Հաստատուն մնալով, ողջ լերուք ի Տէր:

Գրեցաւ յամի Փրկչին 1793 և ի թուականիս մերում ՌՄԽԲ., ի դեկտեմբերի ԺԲ. (12), ի բարձրագաւ Աթոռս Սուրբ Էջմիածին¹⁰⁸:

Բազմաւ սիրով և Հոգեպարար շնորհիւ սրբոյ Իջման տեղոյս Քրիստոսի, ողջոյն և օրհնութիւն տամք Հոգևոր դատեր մերոյ, Տերամք օրհնեցեալ բարեպաշտուհի և երկիւղազարդ Բէկում խաթունին և սիրելի որդւոց մերոց՝ Քրիստոսիւ զօրացեալ պարոն Յովաննէսին և պարոն Աստուածատուրին, և Համեստուհի Հռիփսիմէին, Գիւլանուամին, Խաթունին, Կատարինէին, Գիւլնապաթին, Ուլաննէին և Սառային, և բնաւից իսկ ձերայնոցն:

Դարձեալ ողջոյն և օրհնութիւն տամք սրբանուէր քահանայից և խոհական իշխանաց, և Համայն մերայնոց օրհնեալ Ժողովրդեանն բարեճոխ քաղաքիդ, որք և Հանդերձ ձեօք լիցին յանձնեցեալք ի ինսամս և յողորմութիւնս Տեառն Աստուծոյ. ամէն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 1797-98

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 465բ

Թուղթք ի Հողիկս

340 **Ի Բասրա** - Թուղթ ի Բասրա՝ առ Բէթղէշէմեան պարոն Յովհաննէսն, ի պատասխանի չորից թղթոցն: Տէ՛ս զմեծ տե[տերց] 2095 Համարն:

341 **Ի Բաղդատ** - Թուղթ ի Բաղդատ՝ առ պարոն Միքայէլն Տէր-Մինասեան: Տէ՛ս զմիջակ տե[տերց] 27 Համարն¹⁰⁹:

342 **Ի Սուրաթ** - Թուղթ ի Սուրաթ առ պարոն Յօհաննէան աղայն, յիշումն թղթոց մերոց առ ինքն յղերոց: Տէ՛ս զմեծ տե[տերց] 1999 Համարն¹¹⁰:

¹⁰⁸ Կալկաթաբնակ Գրիգոր աղա Առաքելյանին և Մովսէս աղա Խաչիկյանին հասցեագրված պատասխան թղթում մանրամասն տեղեկություններ են պահպանվել Ս. Հռիփսիմէ վանքի գանկագատան կառուցման ծախսերի վերաբերյալ, որոնց վերն աղբն անդրադարձել ենք՝ խոսելով նաև գլխավոր մեկենաս Խաչիկ աղա Ջնթումյանի և նրա անունից կազմված վիմագրի մասին (տե՛ս վավ. 51): Նամակում վկայված է նաև Մայր Աթոռի հնդկաստանաբնակ մեկ այլ բարերար՝ Սեանջան աղա Հակոբյան-Գերաբյանցի անունը, որը 25.000 ռուբլի է նվիրաբերել Ս. Էջմիածնին:

¹⁰⁹ Բաղդադի պարոն Միքայել Տեր-Մինասյանին հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 626:

¹¹⁰ Ծագումով Ջուղայից, Հնդկաստանի Սուրաթ քաղաքում բնակվող Սեանջան աղա Հակոբյան-Գերաբյանցի (Գերաբենց) անունը Դուկաս Կարնեցու նամակագրություններում բազմիցս է հիշատակվում (տե՛ս նաև վավ. 381, 699, 830, մահվան առթիվ՝ վավ. 1389, դաստ-

343 **Ի Կալկաթա** - Թուղթի Կալկաթա առ Առաքելեան Գրիգոր և Խաչիկեան Մովսէս աղայն: Տէս զմեծ տե[տերց] 1797 Համարն:

344 **Ի Մատրաս** - Թուղթի Մատրաս առ ՀաՀամիր աղայն: Տէս զմեծ տե[տերց] 1896 Համարն: Սոյն ՀաՀա[միր] աղա[յին] Թուղթն նոյ[եմբերի] էլն գր[ցաւ]³²:

466ա

345 **Ի Խոյ** - Թուղթ առ պարոն Բաբաջանն. յիշումն թղթոյն մերոյ առաջնոյ (որ առ ինքն): Եւ ծանուցումն զթղթոցն Հսդկաց, եթէ օր մի յառաջլղեսցես ի Բաղդատ առ պարոն Միքայէլն՝ Հասուցանել ի Բասրայ առ պարոն Յովհաննէսն:

Գրեցան յամնոյս ի ԺԲ. (12):

346 **Ի Նախիջևան** - Թուղթ առ Անանիա պետն, եթէ թուղթդ մեզ էՀաս, իմացաք զգրեալսդ, աՀա գրեմքեզ մնալ յայդդ ի Սուրբ Կարապետի վանքն ըստ ինդրոյդ:

Գրե[ցաւ] յամնոյս ի ԺԲ. (12):

347 **Ի Բատնոց** - Թուղթ առ մահտեսի Չաքարիայն՝ վասն որդւոյն և ամուսնոյն, եթէ եկին յուխտ և վերադարձան: Աստուած զքեզ ևս արժանացուցէ:

Գր[եցաւ] յամնոյս ի ԺԲ. (12):

348 **Կոնդակ Ժողովարարութեան** ի վերայ Թիֆլիզու և շրջակայիցն, նաև ի վերայ Նուխու և Համախու՝ վասն ղափանցի տէր Վարդան քահանային, զոր գրեալ տրեցաւ ինքեան:

Գր[եցաւ] յամ[նոյս] ի ԺԲ. (12):

րերին՝ վալ. 1392, թոռանը՝ Հակոբին՝ վալ. 1546) իբրև Ս. Էջմիածնի գործակալ, մեկենաս: Նրա միջոցներով 1787 թ. Ս. Էջմիածնում հրատարակվել է «Սաղմոս Դավթի, որ կոչի Սաղմոսարան» գիրքը: Ուշագրավ է, որ նա իբրև մեկենաս է հիշվում Մայր տանարի վիմագրերից մեկում, որը փորագրված է զանգակատան ներքնահարկի հյուսիսարևելյան մույթի հարավային նիստին: Վիմագիրը վերաբերում է Դուկաս Կարնեցու հոգաձուլյալը՝ 1785 թ. իրականացված տանարի շրջակայքի սալարկմանը, որը կյանքի է կոչվել բարեպաշտ Օհանջան աղայի միջոցներով՝ իր և հարազատների հիշատակին: Վիմագրում վկայված են պապի, տատի, ծնողների, եղբայրների և քույրերի, կնոջ և զավակների անունները, այսինքն՝ այս արձանագրությունը լավագույնս ամբողջացնում է Օհանջան աղայի ընտանիքի անդամների կազմը (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 77-78, արձ. 55):

Նշենք, որ միևնույն Օհանջան աղա Հակոբյան-Գեորգյանցի միջոցներով 1795 թ. կառուցվել է նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գրատունը, որի մասին է վկայում երբեմնի շինության մուտքի նակատակալ ուղղանկյունաձև ֆարի եռատող արձանագրությունը. «Շինեցաւ գրատունս հրամանա տեսան Դուկասու սրբազան կաթողիկոսին, արդեամբք բարեպաշտ աղայ Յօհանջանին Յակոբեան-Գեորգեանց, ի յիշատակ իւր եւ իւրայնոցն, ի թվին ՌՄԽԳ. (1795)» (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 83-84, արձ. 65):

349 **Ի Նախիջևան** - Թուղթ առ մէլիք Անանիայն, եթէ տէր Մկրտիչ եղբայրդ եկն աստ յուխտ և ահա ըստ ինդրոյն ձերոյ ձեռնադրեցաք զԿարապետ պետն եպիսկոպոս ի յառաջնորդութիւն ձեզ: Այլև մխիթարութիւն վասն եղբօրն իւրոյ՝ Հանգուցեալ մէլիք Յովսէփին:

350 Կոնդակ մի առաջնորդական միանգամայն և վկայական ընդ Նախիջևանու առաջնորդ Կարապետ պետին ձերուն-տոյ: Տէ՛ս զմեծ տե[տերց] 1998 Համարն:

Գրեցան յամ[սոյս] Ի ԺԲ. (12):

351 **Ի Հուլաւեր** - Թուղթ ի Հուլաւեր առ տեղւոյն իբր առաջնորդ Թադէոս պետն՝ վասն գերի անկեալ կնոջն (որ ի Կարին): Տէ՛ս զմիջակ տե[տերց] 124 Համարն:

Գր[եցաւ] յամ[սոյս] ի ԺԳ. (13):

352 **Ի Թիֆլիզ** - Թուղթ առ մեր գործակալ տէր Ղազարն ի դարձ Բ. (2) թղթոցն՝ վասն երևանցի Յովսէփ տղային, եթէ այժմ ձեռնհաս չեղաք գրել թուղթ Վախթանկ որդւոյն Հերակլեայ, զի լիցի նոյն յիշեալ տղայն ճորտ Սրբոյ Աթոռոյս, յետոյ տեսցուք: Հասին մեզ Բ. (2) ձեռագրադիրն ի կողմանէ Կ. (60) թումանին արքայի և Ե. (5) թումանին դապաղ Յարութիւնի կնոջ: Իսկ վասն առաջնորդին տեղւոյ, եթէ ի գալն յայդր, ծանուցես մեզ:

Գր[եցաւ] յամ[սոյս] ի ԺԳ. (13):

353 **Ի Կարս** - Թուղթ առ Գէորգ աղայն ի դարձ թղթոյն ընդ Սարվան Ահմատին, եթէ լուեալ զառողջութիւնդ, ուրախացաք: Թաւանի և դռնացու տախտակքն մեզ Հասին (որք էին ԴՃՁԷ. (487) Հատ թաւանի և ԿԲ. (62) Հատ դռնացու), որոց վասն շնորհակալեցաք զքէն օրհնութեամբ: Բայց գրեալ էիր, թէ բերողին քիրայն ետու, զատ չտաս, սակայն Բ. (2) զուռուշ ետուք: Իսկ վասն զէյթունեաղուն, եթէ ըստ խոստմանդ Հոգացեալ յլեսցես ժամ մի յառաջ:

Գր[եցաւ] յամ[սոյս] ի ԺԵ. (15):

354 **Ի Բաղէշ** - Կոնդակ ի վերայ Բաղշու ժողովրդեանն ի դարձ բազմակնիք թղթոյն նոցա, որ ընդ ձերունի Չաքարիա պետի սպասաւոր Գրիգոր պետին առ ի ձեռնադրիլ եպիսկոպոս: Տէ՛ս զմեծ տե[տերց] 2191 Համարն:

355 Թուղթ առ Սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Յովհաննէսն ի դարձ թղթոյն ընդ Գրիգոր պետին, եթէ ձեռնադրեցաք եպիսկոպոս ըստ ինդրոյն ձերոյ ի տեղի ձերունի ծնողին իւրոյ՝

Չաքարիա պետին, զոր և աՀա վերադարձուցաք օրՀնովԹեան կոնդակալ՝ յանձնելով իւրեան և զմատակարարութիւնն երից եկեղեցեացն: Վասն տկարութեանն եղբօր, եթէ լուեալ ցաւեցաք, Աստուած առողջութիւն տացէ: Յիշումն զամթեցի ուխտաւոր] մաՀտեսի Գրիգորէն և զնորին զերեսուն զուռուշէն և զթղթոյն մերոյ ընդ նմա (որ առ ինքն): Ողջոյն եղբօրն իւրոյ՝ տիրացու Յակոբին:

356 Թուղթ առ Ամրտօլու Սուրբ Յովանիսի վանից առաջ[նորդ] ձերունափայլ Չաքարիա պետին ի դարձ թղթոյն ընդ սպասաւորին իւրոյ Գրիգոր պետին, եթէ ըստ խնդրոյդ ձեռնադրեցաք եպիսկոպոս և կացուցաք առաջնորդ ի վերայ դոյն վանից թեմիցն՝ յանձնելով նմա և զերից եկեղեցեաց մատակարարութիւնն: Այլև պատուիրեցաք Հնազանդ լինիլ քեզ ըստ ամենայնի, որքան և կենդանի իցես:

Պատասխան նամակ Մայր Աթոռի գանձապետ մաՀտեսի Յակոբին՝ Ամրդի նուիրակին Հասցնելու յանձնարարութեամբ (466ա, Դ.): Նուիրակ Դաւիթ վարդապետին ուղղուած ընդարձակ նամակում տեղեկութիւններ կան ուռՀայեցիներից ստացուած դրամների, սառաՖ Պետրոս աղայի մարդասիրութեան Համար յղուած օրՀնովԹեան թղթի, նախկին գանձապետ Գէորգի գործունեութեան Հետ կապուած որոշ մանրամասների, նուիրակական գործերի մասին: Յիշատակուած է նաեւ Աստուածատուր վարդապետի՝ եպիսկոպոս ձեռնադրուելու Հանգամանքը եւ այն, որ արարողութեանը ներկայ չէն եղել որոշ քաՀանաններ՝ պատճառաբանելով տարբեր փաստեր (466աբ, Ե.): ՕրՀնովԹեան նամակ նուիրատու տիրիկցի Պետրոս աղային (ՈւրՀայ). «վասն լաւութեանցն և ՀնորՀակալութիւն վասն ԺԳ. (13) զուռուշէն, որ էր ընդ նուիրակութիւն և Ե. (5) Հոգեբաժին քեռն իւրոյ Հանգուցեալ Յովաննէս պետին» (Չ.): Յանձնարարութիւն է տրուում Թօխաթի իշխաններին Հանգուցեալ մաՀտեսի Յարութիւն Ուռուշճուղցու մօտ մնացած Էջմիածնի դրամների մասին (Է.): Թօխաթի առաջնորդ Յակոբոս վարդապետին ուղղուած պատասխան նամակում նախ Հարցում է արւում տկարութիւնից բուժուելու մասին, ապա շնորՀատրում է նոր սկսուելիք գործի առթիւ, նաեւ՝ «վասն Սրբոյ Կարապետի սեւագլխոցն սիրկին եղելոց և նոյն վանից որպիսութեանցն...» (Ը.): Միխիթարութեան նամակ Հանգուցեալ ուռուշճուղցի մաՀտեսի Յարութիւնի որդիներին, նաեւ յորդորում է Մայր Աթոռի մնացեալ դրամը Հատուցել (Թ.): ԲէթղէՀէմեան պարոն ՅովՀաննէսի փոլիցայի կապակցութեամբ նամակ է յղուել մաՀտեսի Եղիազարեան Նիկողայոս աղային (Կ. Պօլիս) (Ժ.): Վէքիլ պարոն Հայրապետին (Կարին) ուղղուած պատասխան նամակում արժարժուում էն գերի ընկած կնոջը վերաբերող Հարցեր, որի մասին իմացել էն ոմն Ուլուփանից, յիշատակուած էն ՍաՀակ վարդապետին Հասցեագրուած գրութիւնների, ստացուած ապրանքների ու տնտեսական բնոյթի մի շարք այլ Հարցեր՝ կապուած երեւանցի Առաքելի փոլիցայի, տիրացու Գէորգի, Յակոբոս պետի եւ Ամթայ նուիրակի, մաՀտեսի Նիկողայոս աղայի, մասրաՖ Յակոբ եւ Մեսրոփ ամիրաների Հետ ոնեցած թղթակցութիւնների Հետ: Նամակները գրուել էն դեկտեմբերի 19-ին:

Նամակ Կարմրակ կոչուող եկեղեցու Ժողովրդին Ծ. (50) «զօլաթայ» գանձանակագրամ տիրացու Գէորգի միջոցով Մայր Աթոռ ուղարկելու առթիւ: Նոյն

Հարցի կապակցութեամբ նամակ Կարմրակի եկեղեցու գանձապետ պարոն Ալե-տիքին: Նամակները գրուել են դեկտեմբերի 24-ին (467ա, Ա-Բ.):

357 **Ի վան** - Թուղթ առ Ախիջան աղայն ի պատասխանի թղթոյն ընդ նուիրակ Մարտիրոս պետին՝ վանն ՄաՀմուտանու առաջնորդին. եթէ աՀա ըստ ինդրոյդ բանադրեցաք գալ ի Սուրբ Աթոռս և արձակել: Իսկ վանն քանքանչի վարպետաց, եթէ ի բա-ցուիլ գարնանն զմի լաւ վարպետ գտեալ յղեսցես ընդ քարՀատ Պօղոսին՝ բանիլ աստ ընդ մեր աշճի Թօմային:

358 **Թուղթ** բանադրանաց առ ՄաՀմուտանու առաջ-նորդ Դանիէլ պետն վանն անկարգ արարմանցն, զի եկել աստ, արձակեսցի ի կապանացն:

Փառք Տեառն իմոյ Աստուծոյ, որ Հասոյց զիս ի վերջ տարուոյս գրութեամբ տետրակիս յիշատակարանի:

ՕրՀնութեան նամակներ նուիրատու պարոն ՍաՀակին. «վանն Ժ (10) ղու-ռուշին, զոր տուեալ էր Մարտիրոս պետին ի մանակցութիւն խաչին» (Գ), Հին գանձապետ մահտեսի Յակոբին և ողջոյն նորոգ գանձապետ մահտեսի Ալետիքին (Դ), գանձապետ պարոն Խաչատուրին (Ե.), նուիրատու ՉարիՖ կնոջը. «վանն ոսկեղէն գամաղային, զոր տուեալ էր նուիրակ Մարտիրոս պետին ի մանակցու-թիւն մեծ խաչին» (Զ.), նամակ Ուչքիլիսայի առաջնորդ Մկրտիչ վարդապետին՝ Դանիէլ և ՍաՀակ վարդապետների պատասխան գրութեան առթիւ (Է.): Նամակ-ները գրուել են դեկտեմբերի 25-ին:

ՀնորՀակալութեան նամակ նուիրատու քանաքեռցի մահտեսի պարոն Գրի-գորին (ՊողազՀիսար): ՀնորՀակալութեան նամակ Ատապազարի Սախարիայ թաղի Ժողովրդին՝ գանձանակի արդիւնքն ուղարկելու Համար: Նման նամակ է ուղարկուել նաեւ Պալիքեսերի Ժողովրդին: Նամակները գրուել են 1793 թ. յու-նուարին: Բայազետի քաՀանաներին և իշխաններին յանձնարարուած է վերահաս-տատել Ս. ՅոՀան Կարապետի վանքի գանձանակը և ընդունել նրա միաբան Մկրտիչ վարդապետին: ՕրՀնութեան նամակ մաքսապետ պարոն Ալետիքին (Բա-յազետ): ՀնորՀակալութեան նամակ նուիրատու ոմն Ստեփաննոսին (ԹԻՖլիս): ՕրՀնութեան նամակ Ս. Գէորգ եկեղեցու Ժողովրդին (Եւրոկիայ) գանձանակա-կան արդիւնքը յանձնելու Համար: Նոյն բովանդակութեամբ կոնդակ է ուղարկուել Ղարսի Ժողովրդին: Միսիթարութեան նամակ Յակոբջան աղային (ԹԻՖլիս): ՀնորՀակալութեան նամակ նուիրատու քեռջաբորբոքցի ոմն Մարտիրոսին (Ղարս): 1792 թ. գանձանակի արդիւնքը յանձնելու Համար ՀնորՀակալութեան նա-մակ Ս. Աստուածածին եկեղեցու Ժողովրդին (Բայազետ): ՀնորՀակալութեան նա-մակ նուիրատուներ Մէլիքին և նրա կին Մարինոսին (Կեսարիայ): Տպագիր Պօ-ղոսը (Կ. Պօլիս) խոստացել էր տարեկան մատաղի փող տալ՝ 9 ղուռուշ. ՀնորՀա-կալութեամբ յայտնուած է նրան նուիրակ Մինաս վարդապետի միջոցով այդ գու-մարի ստացման մասին: ՀնորՀակալութեան կոնդակ գանձանակի արդիւնքը տուած Մալլարայի Ժողովրդին: Պատասխան նամակ Պարիկեան ՍաՀակին (Վան): ՀնորՀակալութեան նամակներ նուիրատուներ՝ տէր Գալուստին (Ուռուս-

ճուղ), տեր Կարապետին եւ տեր Գրիգոր քահանային (Ամասիայ): ՀնորՀակալութեան նամակ նուիրատու ոսկերիչ պարոն Պետրոսին (Կ. Պօլիս):

ՕրՀնութեան նամակ Ղընճիլար գիւղի բնակիչներին, որոնք մահտեսի Մատթէոսի ձեռքով ուղարկել էին նուէր (2 ղուտուշ): ՀնորՀակալութեան նամակ Թամամ կնոջը (Թփֆլիս), որն ուղարկել էր իր խոստացած Հոգեբաժինը (10 ոսկի): Չմիւռնիպոլս նուիրակ եւ առաջնորդ նշանակուած Դանիէլ վարդապետի Համար յանձնարարական նամակ պարոն Առաքել եւ պարոն Յովհաննէս եղբայրներին: Պատասխան նամակ նուիրատու իլիմնճիզատէ կոչեցեալ մահտեսի Յովհաննէս վարդապետին (Կ. Պօլիս): ՀնորՀակալութեան նամակ նուիրատուներ՝ Կարապետ եւ Մկրտիչ եղբայրներին (Թփսաթ): ՀնորՀակալութեան նամակ նուիրատու Չարիֆ կնոջը (Մահմուտան): ՕրՀնութեան նամակ Վանի Ս. Յակոբ եկեղեցու գանձապետ պարոն Խաչատուրին: Նախկին գանձապետ մահտեսի Յակոբին «որ բազում ամօք աշխատեալ ի գանձապետութեանն»: Նամակները գրուել են 1793 թ. յունուար-դեկտեմբեր ամիսներին:

ՄՄ ձեռ. 4482, էջ 185-220 (23ա-40բ)

1794 Թ., յունուար

472ա

359 **Ի Թիֆլիս** - Թուղթ առ առաջնորդ Մարտիրոս պետն և գործակալ տէր Ղազարն, ի դարձ թղթոյն նոցա և վանն բանադրանաց թղթոյն և այլոց, եթէ ահա գրեալ յղեցաք: Իսկ զԱխլցիսայու ժողովարար տէր Յովաննիսէն, եթէ եկն առ մեզ և օրհնութեան թղթով վերադարձաւ ի տեղի իւր: **ՋՀ** Խապատու առաջնորդէն եթէ բանադրանաց թուղթ էր ինդրեալ ի վերայ ոմանց, զոր և գրեալ յղեցաք: Եւ զմեր ճորտ վրացի Պապայէն, եթէ լուաք, որ եկեալ է իր Հաշտարիսանու: Վասն որոյ զթամասուկն նորին յղեցաք ընդ թղթոյս՝ առնուլ զգրամն, ուրեմն առեալ յղես- ջիք մեզ:

360 Թուղթ առ մելիք պարոն Մինասն, ի դարձ երից թղթոցն և սիրախառն յանդիմանութիւն վանն անվայելուչ գրու- թեանցն: Եւ ծանուցումն զորդւոյն, եթէ մեք զնա ոչ եմք բանիւ արարեալ, որ գայցէ առ մեզ և զաջ առցէ: Այլ արարմունքն իւր ոչ թողուն զինքն գալ ի ծանօթութիւն մեզ և այլն:

361 **Հախապատ** - Թուղթ առ Հախապատու առաջնորդ Դաւիթ պետն՝ վանն ԺԱ. (11) ղուռուչին, եթէ մեք աստ ետուք տէր Մարտիրոսին ի կողմանէ գերետէր Մամաջանին և զհեռա- գիրն նորին առաք, և ահա ընդ թղթոյս յղեցաք քեզ՝ առնուլ ի Մա- մաջանէն և յղել մեզ: Ուրեմն առեալ զԺԱ. (11) ղուռուչն, յղեսցես մեզ Հաւատարմի:

Գր(եցաւ) յունվարի յեկն:

362 Թուղթ ևս առ սա ի դարձ թղթոյն՝ վանն չհաս ամուսնացելոցն գրեցելոյ, եթէ ահա գրեալ զբանադրանաց նոցին, յղեցաք քեզ տալ նոցա, իցէ թէ հրաժարեսցին:

363 Թուղթ բանադրանաց ի Ղազախու Կողբ գիւղն ի Վէրան քովխային և որդւոյն Եարալոյն և Բօզինի եղբայր Յո- վաննիսին՝ վանն չհաս ամուսնութեանցն: Տէ՛ս զմիջակ տե[տերց] 30 Համարն:

364 Թուղթ առ տէր Շմաւօնեան պարոն Ստեփաննօսն, եթէ գրեցաք պարոն Եսայոն ի Հաշտարիսան վանն բակուաստի և ահա զթուղթն նորին յղեցաք քեզ՝ Հասուցանել նմա: Ուրեմն ուր և իցէ Հասուցես: **ՋԱ** Լետիս պետէն, եթէ զոր ինչ գրեալ էիր, իմա- ցաք, Աստուած զգաստութիւն տացէ: Ողջոյն որդւոյն իւրոյ Սողո- մօնին:

365 **Ի Հաշտարխան** - Թուղթ ի Հաշտարխան առ Իւզ-պաշէան պարոն Եսային՝ ինդիր վանն կարմիր բակուաստաց, էթէ Ա. (1) փաստայ առեալ յղեսցես ընդ Հաւատարմի Հասանիլ մեզ: Եւ զգինանն կամ'ի վերայ տալեացդ Հաշուեա և կամ գրեա մեզ՝ ում և կամեսցիս տացուք, և ի նմանէ գիր առեալ յղեսցուք քեզ ի միամտութիւն:

Գրեցան յամնոյս ի էջն:

Պատասխան նամակ Բաղրի առաջնորդին եւ իշխաններին, որոնք յատուկ սուրճանդակով նամակ էին ուղարկել եւ ինդրել բանագրանքից ազատել Տեփոյին (472ա, Ա.): Վէրիլ պարոն Հայրապետին (Կարին) տեղեկացում է, արաբկիրցի մահտեսի Գրիգորի՝ Տեփոյին յանձնած Ծ. (50) զուռուշը յարկ է վերադարձնել Հէնց իրեն, քանի որ արձակումից յետոյ պիտի պարտադիր գայ Մայր Աթոռ «Եւ էթէ աղքատ է, թող զայն Ծ. (50) զուռուշն ի ճանապարհին խարճի»: Նաեւ ծանուցում տիրացու Գէորգի, կարպետների՝ Մայր Աթոռ յղելու եւ այլ Հարցերի մասին (Բ.):

366 **Ի Կարս** - Թուղթ առ Սրբոյ Աթոռոյս բազմաշխատ գործակալ պարոն Գէորգ աղայն ի դարձ թղթոյն և վանն թաւանի և դռնացու տախտակաց, |472բ| էթէ յայսմ ամի պիտոյ չէն: Բայց ԳՃ. (300) Հատ գրքի կողացու տախտակք առեալ յղեսցես ընդ նոսին և զերեք Հատ երկաթեայ սաճ:

Գր[եցան] յամ[սոյս] ի Չ. (6):

367 **Ի Բայազիտ** - Թուղթ առ Բայազտոյ և Խոյոյ քա-Հանայսն և իշխաննն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն իւրեանց, զոր գրեալ էին վանն սրբոյ վանացն Թադէոսի առաքելոյ, ընդ նորին առաջ[նորդ] Գէորգ պետին, էթէ խօսեցաք ընդ Սուլթանին վանն ջրոյն և զառաջնորդն յանձնեցաք նմա, բայց տեսցուք զապագայն զի՞նչ է վինելոց:

368 **Ի Խոյ** - Թուղթ առ Իսաջան աղայն ըստ նոյն մտաց, որ առ բայազետցիսն և խօյեցիսն, ընդ առաջնորդ Գէորդ պետին:

Գրեցան յամնոյս ի ԺԹ. (19):

369 **Ի Պօլիս** - Թուղթ առ մահտեսի Նիկողայոս ամիրայն՝ վանն թղթոցն [տ]պելոց և վանն թղթոյն տիրացու Առաքելի, տալ նմա փութով զի իմասցի զորպէսն բանին: Ողջոյն եղբօրն իւրոյ մահտեսի Ստեփաննոս Չէլէպոյն: Տէ ս զմեծ տե[տերց] 2005 Հա-մարն:

370 **Ի Կարին** - Թուղթ առ Գօրոյեան մահտեսի Խաչատուրն և առ եղբայրն իւր՝ մահտեսի Սերովբէն, ի պատասխանի թղթոյն նոցա, և պատուէր վանն տպելոյ բարակ թուղթ առնուլ և

յղել (որոյ և օրինակն յղեցաւ): Տէս զմիջակ տե(տերց) 32 Համարն¹¹¹:

371 **Թուղթ առ վէքիլ պարոն Հայրապետն՝ վասն տպելի թղթոց, եթէ ահա զօրինակն նոցին յղեցաք առնուլ անտի ընդ մահտեսի Խաչատուրին՝ մինչև զքսան օգմայ, և յղել փութով ընդ Հաւատարմի: Իսկ զթղթոյն մահտեսի Նիկողայոսին (որ ի Պօլիս), եթէ Հասուցես առ նա ժամ մի յառաջ:**

Գրեցան յամնոյս ի Ի. (20):

372 **[Ի] Հուլաւեր - Թուղթ առ Հուլաւերու առաջնորդ Թադէոս պետն ի դարձ թղթոյն ընդ տիրացու Յակոբին և ի շնորհակալութիւն վասն Ա. (1) Թուման աջաՀամբուրին և Ժ. (10) ՀատբաՀիցն, յղեցելոցն առ Սուրբ Աթոռա:**

Գրեցաւ յամնոյս ի ԻԴ. (24):

373 **1794 թ. փետրվար - Թուղթ բանադրանաց ի Ղազարու Կողբ գիւղն առ Վերան քովսէն և որդին իւր Եարալին, և առ Բօզինի եղբայր Յովհաննէսն, որոց միջի չարաչար չՀաս ամուսնութիւն էր եղեալ:**

Յորմէ ժամանեցէ թուղթ անիծից և բանադրանաց, դառնութեան և Հոգևոր կապանաց ի վերայ յանդուգն յանցաւոր չիք ՎէՀան քովսիդ և անառակ պոռնկեալ որդւոյն քո Եարալի կոչեցելոյ, և չարասէր Յովհաննէս զինամուոյն ձերոյ, և չիք երիցուն, որ թագնաբար չսևապսակութիւն չՀասիցդ արարեալ է:

Գիտասցիք, ով որդիք կորստեան, զի դուք մինչ Հայք էք և Հաւատացեալք Քրիստոսի, պարտիք Հայաստանեայցս սրբոյ եկեղեցոյ աւանդութեանց և օրինաց, և սրբազան Հայրապետացն կանոնաց Հաս|16ա|զանդիլ և յօրինազանցութենէ և յանկարգութեանց զգուշանալ: Ապա զի՞նչ անառակութիւն և կանոնաքակու-

¹¹¹ Վավերագիրը հրատարակված է Գյուտ ավ. ֆֆն. Աղանյանցի կազմած «Դիվան»-ում՝ նախորդից հետո: Վերջում ծանոթագրում է, որ այն գրվել է 1794 թ. մարտին, Երևանի անապատում. «գրեցաւ ի ՌՄԽԳ. (1794) թուոջս եւ ի մարտի, ի յանապատս մեր, որ յերևան քաղաքի» (ԳՀՊ, գիրք Գ., սյուն 629-630):

Չնայած նրան, որ Երևանի արվարձաններում էր նաև Ջորազյուղի անապատը (ներկայիս Ս. Սարգիս եկեղեցու տեղում), այդուհանդերձ, կարծում ենք, որ Երևան քաղաքի անապատը ներկայիս Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին ու նրա շրջակայքն է, որտեղ նախքան 1679 թ. մեծ երկրաշարժը, Ս. Անանիա առաքյալի վանք-անապատն էր: Ս. Աստվածածինն նվիրված այս եկեղեցին կառուցվել է Նահապետ Ա. եղեսացի Ամենայն Հայոց կաթողիկոսի օրոք՝ 1693 թ., խոջա Փանոսի մեկենասությամբ: Տեսական ժամանակ եկեղեցին կոչվել է նաև Ս. Անանիայի անունով, բայց հանրության մեջ առավել ընդհանրացվել է Ջորավոր Ս. Աստվածածին անունը, քանի որ երկար տարիներ այստեղ է պահվել հրաշագործ համարվող «Ջորավոր» Ավետարանը, որը Մատենադարանի Հ^մ 4060 ձեռագիրն է (Ա. Հարությունյան, Ա. Միսնոյան, Ջորավոր Ավետարանը, պատկերագիր-ուսումնասիրություն, Երևան, 2016, էջ 16) (հմմտ. վավ. 316):

Թինն է, զոր լսեմք զգարչելեացդ, որ չիք Վերան քովսիդ քեռ որդին առեալ գողով ի կնուծինն զդուստրն Ջաղինէնց Բօզուն, զնորին միւս դուստր ևս ածեալ էս ի կնուծինն որդւոյն քո՝ վատշուէր Եարալի անզգամին և Բօզու եղբայր չիք Յովաննիսն ևս կամակցեալ է ձեզ:

Ով դատապարտելիք, մի՛ թէ չիմացայք, որ այդ չարաչար չհաս է, ոչ՝ ապաքէն ձեր առաջնորդ Դաւիթ վարդապետն զգուշացուցեալ է զձեզ սաստիւ, թէ ապօրինաւոր է, մի առնէք: Ընդէ՛ր ոչ ոննկնդիր լինէիք նմա և զգուշանայիք, քան թէ յամառեալ ի չար կամս ձեր արհամարհեցիք զօրէնս և զկանոնս, և գիտելով իսկ, թէ անառակութիւնն է, գաղտագողի սևապսակ առնել ետուք, որ չիք քաշանայն ևս ոչ ի յայտ գայ:

Արդ, որովհետև դուք անհնազանդ գտանեցայք սաՀմանաց սրբոյ եկեղեցոյ և կանոնաց սրբազանից Հայրապետացն, և գայթակղութեան պատճառ երևեցայք բազմաց, վասն որոյ և մեզ Հարկ է պահանջման իրաւանց և արդարութեան դատապարտել զձեզ և Հերքել ի շնորհաց սրբոյ եկեղեցոյ:

Արդ, բարձու իշխանութեամբ մերով Հայրապետականաւ ի ձեռն այսր թղթոյ բանադրեցաք զչիք Վերանդ և զպոռնկեալ որդին քո լկտի Եարալին և զգործունեայ չարութեանց զչիք Յովաննէսն և զսևապսակ առնօղ կարգագերծ չէրէցն: Եւ մերժեցաք ի սուրբ եկեղեցոյ և կապեցաք Հոգևոր կապանօք ի յերկինս և ի յերկրի: Նզովեալ և անիծեալ էք դուք և չունիք արժանաւորութիւնն ի սուրբ եկեղեցի մտանել և խառնիլ ի Հօտս Քրիստոսի, և որք կցորդին ընդ չարագործ պատժապարտիցդ, նոքա ևս մասնակից են լինելոց ձերումդ պատժոց:

Այս բանք անիծից և կապանաց մնացեն ի վերայ անզգամ օրինազանցիցդ, մինչև զղջացեալ ձեռն քարշիցէք ի յանառակ գործոյդ, և երեսի քարշ գայրեցէք ի Սուրբ Աթոռս: Բայց եթէ յամառեալ մնայցէք, ոչ էք զերծանելոց ի պատուհասից բարկութեան:

Գրեցաւ ի ՌՄԽԳ. (1794) թուոյս և ի փետրվարի ..., ի սարսափելի Աթոռս Էջմիածին¹¹²:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 15բ-6ա

374 **Ի Կարս** - Թուղթ մի առ Գէորգ աղայն ի դարձ թղթոյն ընդ Դաւիթ պետին և ոմանց ուխտաւորաց Սեբաստիոյ: Եւ միամտութիւն վասն Գ. (3) Հատ սաճացն, եթէ Հասին մեզ: Եւ վասն կողացու տախտակացն, եթէ մինչ զերծցին ի քարշիլոյ, յղես-

¹¹² Ղազարի Կողբ գյուղի Վերան ֆոխվային, որդի Յարալին և Բոզի եղբայր Հովհաննէսին ուղղված «բանադրանաց» թղթի ամբողջական պատճենը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 627-629 (հմմտ. վավ. 363):

ցես ընդ Հաւատարմի: Իսկ վասն Նաւրուզին ծանուցումն, եթէ շնորհին Աստուծոյ գերծաք ի նոցանէ:

375 **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովհաննէս պետն ի դարձ թղթոյն ընդ մաշտեսի Ստեփաննին, և վասն ցաւոյն ձեռաց մխիթարութիւն: Եւ վասն Նաւրուզին, եթէ անվնաս եմք ի նոցանէ յայսմ ամի ևս:

376 **Ի Մաղղբերդ** - Թուղթ տաճկերէն առ Մաշմատ բէկն ի դարձ թղթոյն ընդ Նաշապետ առն, զոր գրեալ էր վասն Սեբաստիոյ ուխտաւորացն յանձնարարութիւն:

Գրեցան յամ[սոյս] ի ԻԷ. (27):

Օրհնութեան նամակներ ևս գրուել գօրեցի տէր Ղազարին (Թիֆլիս). «վասն Հարազատութեանցն» (472բ, Ա./5), տէր Միքայէլ քաշանային (Ալլւցիսայ) (Ա/6), Էստատի որդի պարոն Յարութիւնին. «վասն Ժ. (10) զուռուշ մատաղագին» (Բ./4), պարոն Ալթոնին. «վասն Ը. (8) զուռուշ և Ի. (20) փարայ Հոգեբաժնին Հօրն իւրոյ Հանգուցելոյ» (Գ./3) եւ Նալպանդի դուստր Անային. «վասն Ա. (1) եալտղ ոսկի մատաղագին» (Դ.): Նամակները գրուել ևս ապրիլի 6-ին:

377 **1794 թ. մարտ** - Թուղթ ի Կարին առ Գօրոյեան մաշտեսի Խաչատուրն և մաշտեսի Սերօբն, ի պատասխանի թղթոյն նոցա և պատուէր թուղթ առնուլ անտի և յղել վասն տպագրութեան:

ՄՄ ձեռ. Հ^ր 4538, էջ 16բ-7ա

473ա

1793 թ. ապրիլ - Թուղթք ի Հնդիկս

378 **Ի Կալկաթայ** - Թուղթ ի Կալկաթայ առ Մովսէս աղայն. յիշումն թղթոյն մերոյ առաջնոյ Բ. (2) օրինակօք գրեցելոյ: Եւ վասն յիշատակարանին Հանգուցեալ Հօրն իւրոյ՝ Խաչիկ աղային, եթէ յառաջիկայ աւուրքս գրեցուցանելոց եմք ի ներքուստ կողմանէ կաթուղիկէին և զօրինակն առ ձեզ յղելոց՝ անհոգ կացջիբ: Եւ զԵփրեմ պետէն, եթէ ցարդ ոչ ժամանեաց ի Սուրբ Աթոռս, իցէ թէ ի մօտակայ աւուրքս ժամանեսցի և զորպիսութիւնն ձեր ծանուցէ մեզ և մեք ընդ նորոգ նուիրակին գրեսցուք, որ ինչ գրելիքն իցեն: Վասն փեսային Տէր-Շմաւօնեան պարոն Ստեփաննոսի յանձնարարութիւն, որ գնայր բազմակնիք թղթով առնուլ զտալացու դրամն աներն իւրոյ, որ ի վերայ Յօշան անուն առն Թիֆլիզեցոյ:

Ողջոյն օրհնութեամբ Հօրեղբօրն իւրոյ՝ Գրիգոր աղային և մօրն՝ Բէկում-Խաթունին և պարոն Յովաննէս և Աստուածատուր աղազատէիցն:

379 Թուղթ առ աղայ Սարգիսն Տէր-Յովաննիսեան. յանձնարարութիւն վասն Տէր-Շմաւօնեան պարոն Ստեփաննոսի

փեսայ պարոն Ստեփաննոսին, որ գնաց յայն կողմնուն անուղ զտալացու դրամն աներն իւրոյ, որ ի վերայ պարոն Յօհանն անուն ան թիֆլիզեցոյ: Տէ՛ս զվեժ տե[տերց] 2005 Համարն:

380 **Ի Բասրա** - Թուղթ առ Բէթղէճէմեան պարոն Յովհաննէան. յանձնարարութիւն վասն թիֆլիզեցի Ստեփաննին, ըստ խնդրոյ Տէր-Շմաւօնեան պարոն Ստեփաննոսին: Տէ՛ս զվեժ տե[տերց] 2104 Համարն:

381 **Ի Սուրաթ** - Թուղթ ի Սուրաթ քաղաքն առ Յօհանն-ջան աղայն՝ վասն տպման Մաշտոց գրքոյն (որոյ և առաջին տետեր օրինակն յղեցաւ): Տէ՛ս զվեժ տե[տերց] 2006 Համարն:

382* **Ի Բաղդատ** - Թուղթ առ պարոն Միքայէլն Տէր-Մինասեան. յիշումն թղթոցն մերոց առաջոց: Եւ ծանուցումն զնորապէս գրեալ թղթոյն մերոյ (որ առ Եփրեմ պետն), եթէ Հասուցես առ նա ի Բասրա: Եւ եթէ եկեալ իցէ յայդր, տացես իւրն: Իսկ զՄարգար աղայէն և զպարոն Փանոսէն, եթէ երկար միջոց է, յորում ոչ ընկալնումք ի նոցանէ թուղթն, այժմ մեք ևս ձեռնահաս չեղաք գրել ի մէնջ ողջոյն և օրհնութիւն տացես, նմանապէս և պարոն Ալէքսաննին:

383* **Թուղթ առ նուիրակ Եփրեմ պետն:** Տէ՛ս զմիջակ տետերց 33 Համարն:

Գրեցան յամ[սոյս] ի Ժ. (10):

384 **1794 թ. 10 ապրիլի** - Թուղթ առ Հնդաստանու նուիրակ Եփրեմ վարդապետն, որ ելեալ ի Բասրա և այժմ ուր լինիլն անյայտ մեզ:

Յորմէ սիրով և օրհնութեամբ և քրիստոսական սուրբ ողջունիւ ծանիր սիրելի Հոգևոր որդի մեր և աշխատակիր զաւակ Սրբոյ Աթոռոյս՝ Եփրեմ գերզգօն վարդապետ:

Ձի յանցեալ տարւոյ նոյեմբերի ԺԲ. (12) թուղթ գրեցաք առ քեզ, ի պատասխանի Համառօտ թղթոյն քո ի Բասրայու, որ իհարկէ մինչև ցարդ Հասեալ լինի առ քեզ: Բայց զի յայնմիկ կարճառօտ թղթոջն քում միայն զեղանելի ի ծովէն նշանակելով, խոստացեալ էիր զայլ որպիսութիւնս յետ աւուրց գրել, ակնդէտ մնացաք յայս քանի ամիսս թուղթ առնուլ ի քէն և ոչ առաք, ուստի չգիտելով թէ ո՞ւր մնացեր կամ ո՞ւր Հասեր և կամ զի՞նչ պատահեցաւ քեզ, ի տարակուսի լինիմք:

Այժմ դէպ եղև մեզ ընդ թիֆլիզեցի Ստեփանն անուն անն միում թուղթն գրել առ ոմանս ի Հնդիկս և առ պարոն Յովաննէան Բէթղէճէմեան ի Բասրայ, ընդ որս և առ բարեպաշտ օրհնեալ Յօհաննջան աղայն ևս թուղթ գրեցաք և ըստ նախնի խոստման մերում զՄաշտոցին (զոր սկսեալ եմք տպագրել) զառաջին տետրն

յղեցաք: Ուստի զայս թուղթ ևս առ քեզ գրեալ յղեցաք ի Բաղդատ ի ձեռս պարոն Միքայելին Տէր-Մինասեան, զի ո՛ր և լինիցիս, առ քեզ Հասուցե, որով գիտաս յ՛ղցես զկացութիւն մեր, որ այն-պէս է, որպէս յառաջ ծանուցեալ եմք, և զքոյդ ո՛ր մնալն կամ ո՛ր Հասանիլն և զայլ թէրութիւնսն գրեսցես մեզ՝ առ ի անտարակոյս լինիլ:

Ապա և զայս իմա, զի վասն գթակաւոր միաբանից Սրբոյ Աթոռոյս և ոմանց գործաւորաց Բաղդատու մերթի է պիտոյ Հարկաւորապէս, վասն որոյ գրեցաք յիշեալ պարոն Միքայելին Տէր-Մինասեան, զի եթէ դու անցեալ իցես յայս կողմս, ինքն առցէ և յղեսցէ: Բայց քեզ սիրելի որդւոյդ գրեմք, զի եթէ ի ժամանել թղթոյս առ քեզ ի Բաղդատ գտանիցիս, կամ նոր իցես գալոց անդր, դու ինքդ նոյն պարոն Միքայելի ձեռամբն երեքՀարիւր Հատ Բաղդատու լաւ մերթի առցես և բերցես ընդ քեզ՝ ի պէտս Հարկաւորութեան սրբոյ տանս: Իսկ եթէ դու յայսկոյս իցես ուղևորեցեալ, պարոն Միքայելն Հոգալոց է, որպէս և նմա գրեալ եմք: Բաւ լիցի այս առ սղութիւն ժամնա:

Ողջ լեր, ի տէր և պաշտպանեալ շնորհիւ ողորմութեան նորին:

Գրեցաւ ի ՌՄՆԳ. (1794) թուոյս և յապրիլի Ժ. (10) ի Սուրբ Աթոռս Էջմիածին¹¹³:

Ողջոյն և օրհնութիւն տամք սիրելի և Հոգևոր որդւոյն մերոյ, մտերիմ սպասաւորին քո՝ Մովսէս Համեստաբարոյ վարդապետին և այլոց առ քեզ եղելոց, որք և լիցին յանձնեցեալք ի խնամս Տեառն Հանապագ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 17աբ

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 473ա

385 **Ի Թաւրեզ** - Թուղթ ի վերայ Թարվիզու ժողովրդեանն. օրհնութիւն և յորդորումն ի սէր Սրբոյ Աթոռոյս: Ընդ նոյն երկրացի ուխտաւոր պարոն Ղազարին:

Գր[եցաւ] յամ[սոյս] ի ԺԵ. (15):

386 **Ի Նախիջևան** - Թուղթ առ Երնջակու Սուրբ Կարապետի վանից առաջնորդ Կարապետ եպիսկոպոսն և միաբան Մարկոս պետն. յանձնարարութիւն վասն նորոգ նուիրակ Յովաննէս պետին: Եւ ծանուցումն զԱ. (1) զոյդ ջրաղացի քարանցն Հին ջուղայեցոց, եթէ որպէս գրեալ եմք ձեզ յառաջամբ բերել ի Սուրբ Աթոռս: Այժմ ևս գրեմ Հարկիւ Հասուցանել առ մեզ:

¹¹³ Հնդկաստանի նվիրակ եփրեմ վարդապետին հղված նամակի համառոտագրոյցունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 630 (հմմտ. վավ. 383):

387 **Թուղթ առ աւագերէց տէր Մկրտիչն. յանձնարարութիւն վասն նորոգ նուիրակ Յովաննէս պետին և ողջոյն եղբօրն իւրոյ՝ մէլիք պարոն Անանիային:**

388 **Կոնդակ սրբալոյս մեռնի ի վերայ երկրին Նախիջ-Լանու ընդ նորոգ նուիրակին Սրբոյ Աթոռոյս Յովաննէս պետին:**

389 **Ի Տաթև - Թուղթ առ Ստաթէի սուրբ առաքելոյ վասնից առաջնորդ Յովակիմ պետն. յանձնարարութիւն վասն նորոգ նուիրակ Յովաննէս պետին:**

390 **Ի Ագուլիս - Թուղթ առ Սրբոյն Թօմայի առաքելոյ վասնից առաջնորդ Թօմաս պետն ի դարձ թղթոյն ընդ Մկրտիչ պետին: Եւ վասն տկարութեանն մսիթարութիւն: Եւ վասն մրգեղինացն՝ շորհակալութիւն: Իսկ վասն նորոգ նուիրակին մերոյ յանձնարարութիւն: Եւ վասն ռա՛կ73բ|մեցի մահտեսի Գեորգին ծանուցումն, եթէ թուղթ էր գրեալ մեզ և ի նոցանէ վկայական գիր խնդրեալ (ըստ որում դրամն Հասուցեալ էր Հրամանաւ մերով յՍտամպօլ մահտեսի Նիկողայոս ամիրային), ուրեմն կոչեսցես առ քեզ զռամիսեցի Թումանն և զորդի նորին՝ զՄարգարն, գրեցուցանել զվկայական մի ձերով կնքով և յղել մեզ Հանդերձ նօքօք, որ աստէն զդրամն Հատուցուք նոցա: Իսկ թէ ոչ արասցեն այսպէս և ոչ եկեսցեն, զդրամն ինչ չեն ընկալնելոց ի մէնջ, ինքեանք գիտասցեն: Եւ թէ ըստ խնդրոյդ յղեցաք ընդ Մկրտիչ պետին Ա. (1) սաղաւարդ, Ա. (1) Հատոր ձեռնադրութեան գիրք և Բ. (2) Հատ Հարական, իբր օրհնութիւն և յիշատակ ի Սրբոյ Աթոռոյս:**

Գրեցան յամնոյս ի ԺԵ. (15):

391 **Ի Վան - Թուղթ առ Ախիջան աղայն ի դարձ թղթոյն, որով և ծանուցեալ էր զմահ Յովաննէս կաթողիկոսին Ախթամարու: Տէ՛ս զմեծ տէ[տերց] 2198 Համարն: Փոսուկայ մի ևս առ սա՝ վասն քարտեցելոցն:**

Գրեցաւ յամ[սոյս] ի ԺԶ. (16)¹⁴:

¹¹⁴ Պատմաբան Վրեժ Վարդանյանն Աղթամարի կաթողիկոսական արքով XVIII դարավերջի գահակալների անուններն ու արքոսկալման տարիներն անորոշ է համարում: Նրա հաղորդմամբ՝ Աղթամարի Մարկոս Շատախեցի կաթողիկոսը վախճանվել է 1791 թ., որի հաջորդների մասին եղած տեղեկություններն աղբյուրներում իրարամերժ են: Խնդրո առարկա վավերագրում հիշատակված Հովհաննէս կաթողիկոսը Աղթամարի գահակալ Հովհաննէս Սպարկերտցին է, որը մեկ համարվում է Կարապետ Ա-ի հաջորդը (անտեսելով Մարկոս Շատախեցուն), մեկ՝ Մարկոս Շատախեցու: Պոլսի Ընդարձակ օրացույցում Հովհաննէսի հաջորդ է հիշվում Թեոդորոսը, որը գահակալել է 1792-1794 թթ. (Վ. Վարդանյան, Աղթամարի կաթողիկոսության պատմություն, էջ 212-213): Կարծում ենք՝ այստեղ որոշակի աննշտություն կա. հիմք ընդունելով Ղուկաս Կարնեցու՝ Վանի Ախիջան աղային ուղղված թղթի բովանդակությունն ու ժամանակը, Հովհաննէս Սպարկերտցու արքոսկալման տարիները սահմանում ենք 1791-1794 թթ. միջև:

392 **Ի Մուշ** - Թուղթ առ Մշու Սրբոյ Կարապետի վանից նաւիբակ, նորոգ առաջնորդ Յակոբ պետն, ի պատասխանի թղթոցն առ սրբազան Վեհապետն գրեցելոց: Եւ վանն բարեյաջողութեանն ուրախութիւն և օրհնութիւն: Իսկ վանն փաշային, եթէ իմացաք զգրեալսդ, ահա առ նա շնորհակալութեան և յանձնարարութեան թուղթ գրեցաք և յղեցաք քեզ, ըստ ինդրոյդ՝ տալ նմա: Իցէ թէ մշտապէս մնասցէ առ ձեզ քաղցրութեամբ ի յօգտութիւն սրբոյ վանիցդ: Եւ որովհետև մեր որդի տիրացու Յակոբն կատարեալ զովստն իւր վերադառնայր, վանն որոյ գրեցաք ընդ նմա զայս թուղթ առ սիրելիդ մեր:

393 **Թուղթ առ Գլգլ Յովաննէս** պետն, ի դարձ թղթոյն գրեցելոյն ի Կարնոյ և պատուէր՝ մնալ Հաւատարմութեամբ առ սուրբ վանքն և առ նորին առաջնորդութեամբ Յակոբ պետն: Եւ վանն տեղւոյ փաշային, եթէ իմացաք զսէրն, որ առ նորոգ առաջնորդ Յակոբ պետն, և ահա շնորհակալութեան և յանձնարարութեան թուղթ գրեալ յղեցաք առ առաջնորդն՝ Հասուցեալ նմա:

394 **Թուղթ տաճկերէն առ Մշոյ փաշայն.** շնորհակալութիւն վանն լաւութեանցն, որ առ նորոգ առաջնորդն Սրբոյ Կարապետի:

Գրեցան յամսոյս ի ԺԷ. (17):

395 **Ի Գաղատիա** - Թուղթ առ տեղւոյ իշխանն ընդ նորոգ նուիրակ Գէորգ պետին յանձնարարութիւն վանն նորա: Տէ՛ս զմիջակ տե[տերց] 34 Համարն¹¹⁵:

Նամակներ՝ պարոն Գրիգորին. «վանն նորոգ նուիրակ Գէորգ պետին» (473բ, Բ./2), առաջնորդ Անդրեաս վարդապետին՝ դարձեալ նուիրակ Գէորգ վարդապետի վերաբերեալ (Գ./2): Վերջինիս տրուել է սրբալոյս միւռոնի կոնդակ (Դ.): Նամակները գրուել են ապրիլի 17-ին: Պատասխան նամակ Տէր-Բաբեան մահտեսի Յարութիւնին (Սեբաստիա) (Ա./4):

396 **1794 թ. 17 ապրիլի** - Թուղթ ի Գաղատիա առ իշխանն նուիրակ Գէորգ վարդապետին, վանն նորա յանձնարարութիւն, և ի պատասխանի վաղապէս գրեալ թղթոյն նոցա:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 17բ-8ա

397 **Թուղթ ծանուցական միանգամայն և վկայական առ սեբաստացիսն՝** վանն նորոգ եպիսկոպոսին Դաւթայ: Տէ՛ս զմեծ տե[տերց] 2008 Համարն:

398 **Կոնդակ ի Սեբաստիա, ի գեօղն Կովդոն.** շնորհակալութիւն և օրհնութիւն վանն նորապէս Հաստատելոյն իւրեանց

¹¹⁵ Գաղատիայի նվիրակ Գեորգ վարդապետին հղված նամակի համառոտագրութունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 630:

զգանձանակ յանուն Սրբոյ Աթոռոյս: Եւ վերահաստատովթին ի գործ գանձապետութեան պարոն Գէորգին:

399 **Ի Կարին** - Թուղթ առ վէքիլ պարոն Հայրապետն, ի դարձ Բ. (2) թղթոցն և վասն Է. (7) Հատ կարպետիցն և ի մէջ նոցին եղեալ ամանաթիցն, եթէ Հասեալ են առ տիրացու Գէորգն, բայց մինչ Հասցին մեզ, ծանուցանելոց եմք քեզ: Հասին մեզ Կ. (60) դաստայ թուրայն և ԺԲ. (12) բոյ շարիսն: Մանածէ ղայթանն, ի Հարկէ ևս յղելոց ես: Եւ սոցին |474ա| գինս և խարճն ըստ ցուցման սիահնոյն գրեցաք ի դաւթարդ: Բ. (2) ղտտայ փօլիցայն քոյ, (որ ի Բայազիտ), առեալ է տիրացու Գէորգն և մեզ գրեալ, որոց մինն է ԷՃՀ. (770) ղուռուշ և միսն՝ ԴՃԿԵ. (465) ղուռուշ: Իմացաք զտալացու դրամն նախիջևանցի ուխտաւորաց, զորս առեալ ես և գրեալ ի դաւթարդ, որոց միոյն է ԱՃԾ. (150) ղուռուշ և միսոյն՝ ԽՁ. (46) ղուռուշ:

Այլ և իմացաք ԲՃ. (200) ղուռուշն Տաթևու վանից, որ Հասեալ է քեզ ի Թօխաթու և գրեալ ես ի դաւթարդ: Իսկ վասն Հին և նոր վատսունանոցին, եթէ գիտես, որ Հինն սառֆայ ունի, է՛ր վասն փօլիցայ տաս Հին վատսունանոցն, թող առ քեզ մնասցէ, մինչ ինդրիցեմք, սակաւ-սակաւ ամանաթ շինեալ յղեսցես: Իսկ եթէ նոր վատսունանոց առնուն և տեղն Հինն տան, յայնժամ փօլիցայ արասցես, և թէ ոչ, մի տացես:

Այլ և յիշումն թղթոցն մերոց ի մար[տի] Ի. (20) գրեցելոց ի յերևանու՝ վասն տպման բարակ թղթոց: Եւ վասն փօլիցային, որ առ մահտեսի Նիկողայոսն ի Պօլիս, ըստ ինդրոյդ, եթէ մի արասցես, ըստ որում անգանօր մեզ դրամ շատ է պիտոյ: Իսկ վասն Մասրաֆ Յակոբին, եթէ զոր ինչ գրեալ էիր, իմացաք, բայց այժմ՝ ձեռնՀաս չեղաք գրել զթուղթ, յետոյ գրելոց եմք ընդ Ամթայ թղթոց պատասխանիցն: Իմացաք և զՀասանին առ քեզ Ա. (1) կարպետին, Ա. (1) Հին խալիչային և Լ. (30) ղուռուշին Դերձանու առաջնորդի և Ա. (1) ղուռուշն բերողին ես տուեալ մնացեալ է ԻԹ. (29) առ քեզ, և մինչ Ա. (1) Հարիւր ղուռուշն ևս Հասուցէ, ծանուցես մեզ:

Վասն թասուայ չալիկին և սամախօռու երկաթին, եթէ թասուայ չալիկն երբ որ գայցէ, յայն ժամանակն առնուցուս: Եւ որովհետև սամախօռու երկաթն ըստ գրեցելոյդ Հազեազիտ է, Բ. (2) ղանթար Հայի երկաթ առեալ յղեսցես: Իսկ մինչ բեռն գայցէ ի Բայազտոյ, Գալուստ պետի շաքարն և Ա. (1) թօփ ապայն իւրեան եմք Հասուցանելոց, միամիտ լեր: Իսկ վասն Հարկաւորութեան Սրբոյ Աթոռոյս պատուէր՝ առնուլ ԱՃԾ. (150) թօփ սև ապայ, որ լիցի լան, և իւր բողեայ ղայթանին յղէ Հաւատարմաւ:

Վասն Գաղատիոյ նուիրակին յանձնարարութիւնս, իսկ վասն պաշարանեալ թղթոյն, եթէ Մինաս պետինն է, յղեսցես ի Պօլիս առ մահտեսի Նիկողայոս ամիրայն և մեզ գրեսցես:

Գրեցան յամնոյս ի ԺԷ. (17):

400 **Ի Սեբաստիա** - Թուղթ առ Սեբաստիոյ առաջնորդ Յակոբ ծերունափայլ պետն ի դարձ թղթոյն ընդ Հոգևոր որդւոյն իւրոյ՝ Դաւիթ պետին, եթէ ըստ ինդրոյն ձերոյ ձեռնադրեցաք եպիսկոպոս, և օրհնութեան կոնդակաւ վերադարձուցաք, և պատուիրեցաք Հնազանդ լինելքեզ ըստ ամենայնի, որքան և կենդանի էս:

Գրեցաւ յամ[սոյս] ի ԺԷ. (17):

401 **Ի Թիֆլիզ** - Թուղթ առ պարոն Եսաւ Դիւանն. ծանուցումն զԱրիստակէս զեղբօրէն, եթէ յանցելումն մինչ եկն ի Սուրբ Աթոռս՝ ուսանիլ աստէն զգիտութիւնս, մեր ևս ընկալաք սիրով, բայց այժմ դիմաց առ ձեզ քանզի աղաչեալ էր զմէլիք պարոն Շաքարօն Հրաման առնուլ ի մէնջ, գալլայդր վասն բազմաժամանակեաց Հիւանդութեանն, որ և ետուք Հրաման գալ ընդ Շաքարօյին, իցէ թէ տեղդ առողջութիւն գտցէ, և եթէ կամեսձիք, վերստին դարձցի առ մեզ և այլն:

402 Թուղթ տաճկերէն առ Գեօրկին խանն ի դարձ թղթոյն ընդ մէլիք Շաքարօյին՝ վասն ոմանց ինդրոց, զորոց և բացասումն:

Գրեցան յամ[սոյս] ի ԻԴ. (24):

403 **Ի Կարին** - Թուղթ առ վէրիլ պարոն Հայրապետն. յիշումն թղթոյն մերոյ, որ ընդ սեբաստացի ուխտաւորացն և ծանուցումն զդավթարէն Գեորգ պետի, եթէ մնացեալ էր աստ մոռացմամբ և ահա յղեցաք քեզ, Հասուցեալ նմա: Եւ վասն Կ. (60) դուռուշի թամասուկին ակնցի տէր Ստեփանի և խօջայ Ղազարի, եթէ յանցեալ թուոջն ի սեպ[տեմբերի] |474թ| ԺԹ. (19) յղեցաք քեզ՝ ընդ նոսա առնուլ ի նոցանէ զդրամն, բայց ցարդ ոչ ինչ գրեցեր, ուրեմն՝ գրեա՛ զամանէ, զի գիտացեալ, միամիտ լիցուք:

Գրեցաւ յամնոյս ի ԻԴ. (24):

404 **Ի Նախիջևան** - Թուղթ առ Երնջակու Սրբոյ Կարապետի վանից առաջնորդ Կարապետ պետն, ի պատասխանի թղթոյն ընդ Անանիա և Մարկոս պետացն և վասն ժողովարարութեան կոնդակին, եթէ ահա ըստ աղերսանաց ձերոց շնորհեցաք Անանիա պետին, իցէ թէ խաղաղութեամբ դարձցի առ ձեզ: Իսկ վասն Մարկոս պետին, եթէ ինդրեալ էիր ի վերայ Թիֆլիզու կոն-

դակ մի շնորհէլ նմա, բայց պատշաճ չտեսաք, և ահա վերադարձաւ առ ձեզ:

Գր[եցաւ] յամ[սոյս] ի ԻԶ. (26):

405 **Կոնդակ ժողովարարութեան ի վերայ Բայազտոյ, Վանայ, Տիգրանակերտու, Բալուայ, Խարբերդու, յԱլինայ, Արապկերու և ի Չւէկածակու՝ վասն սեբաստացի մահտեսի Պօղոսի ումեմն, ըստ ինդրոյ տեղականացն:**

Գրեցաւ յամ[սոյս] ի ԻԷ. (27):

406 **Վասն Երնջակու վանից - Կոնդակ մի ընդհանրական ժողովարարութեան՝ վասն Երնջակու Սրբոյ Կարապետի վանիցն ընդ Անանիա պետին, ըստ ինդրոյ նորին առաջնորդ Կարապետ ծերունազարդ պետին: Տէ՛ս զմեծ տե[տերց] 2009:**

407 **Ի Կարին - Թուղթ առ վէքիլ պարոն Հայրապետն. յիշումն թղթոցն մերոց առաջնոց (որ առ ինքն) և ծանուցումն զժողովարարութեան Երնջակու Սրբոյ Կարապետի վանից, եթէ եկն ի տեղի առաջնոյ ժողովարարին Հանգուցելոյ մերովս կոնդակաւ: Ուրեմն քեզապատշաճ հոգալեացն հոգացօղ լիցիս: Բայց նորին առաջնորդ Կարապետ պետն ԳՃԻ. (320) զուռուշ մեզ տալիք ունէր յառաջամէ, Լ. (30) զուռուշ ևս դոյն ժողովարար Անանիա պետն էառ ի մէջ ի գալն և խոստացաւ ամէնն Հասուցանել քեզ՝ մինչ Հասուցէ, ծանուցես մեզ յղէլ զթամասուկն նոցա: Եւ թէ մինչ գրեալ էաք զայս թուղթս՝ էհաս և ընդ պարոն Գասպարին գրեալ թուղթդ, բայց զպատասխանին յետոյ եմք գրելոց: Միայն թէ Ի. (20) օզմայ թուղթք մեզ Հասուցես Հաւատարիմ զաթրէաւ:**

Գրեցան յամ[սոյս] ի ԻԹ. (29):

408 **Ի Թօխաթ - Թուղթ առ մահտեսի Նիկողայոսն՝ վասն ձմռան սեղանատանն նորոգ շինեցելոյն, եթէ Հաճեսցի ստանալ իւր յիշատակ, ծանուցէ սրբազան Վէհին: Տէ՛ս զմիջակ տե[տերց] 36 Համարն¹¹⁶:**

¹¹⁶ Վավերագրի ամբողջական հրատարակությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 630-632:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձմեռային սեղանատունը, որը գտնվում էր տաճարի հարավային կողմում՝ ներկայիս «Ռուբեն Սևակ» թանգարանի տեղում, համաձայն պահպանված վիճակագրի՝ կառուցվել է Աղեասնյուր Ա. Ջուղայեցի կաթողիկոսի (1706-1714 թթ.) օրոք՝ Հայոց ՌՃԿԲ. (1713) թվականին. «ի վայելումն Սր. Էջմիածնի միաբանից, վասն ձմրան» (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 63, արձ. 33): Դուկաս Կարենցու նամակներից պարզվում է, որ 1790-ականներին, բացի Մայր Աթոռի միաբանության կենցաղային կարիքների համար նախատեսված շենք-շինությունների կառուցման ու նորոգման, աշխատանքներ են իրականացվել նաև ձմեռային սեղանատունը բարեկարգելու ուղղությամբ, իսկ մեկենասությունը ստանձնել է ծագումով թոխաթեցի մահտեսի Նիկողայոսը, որի անունը, ինչպես վերը նշե-

409 **Կոնդակի թօխաթ վանն վէքիլութեան ուռուշճուղ-
ցի Հանգուցեալ մահտեսի Յարութիւնի որդի պարոն Գասպարին,
որ եկեալ էր Սուրբ Աթոռս և վերադառնայր: Տէ ս զմեծ տե[տերց]**
2104:

Օրհնութեան նամակ նուիրատու տիկին Մարիամին. «վանն Գ. (3) ոսկի
աջաՀամբուրին՝ ձեռամբ ուխտաւոր պարոն Գասպարին» (474բ, Գ.): Նամակ պա-
րոն թումնաջանին եւ Անտօնին. «վանն Եսայեա պետի քոյր Եթարին և Հանգուցեալ
մահտեսի Յարութիւնի որդի պարոն Գասպարին» (Դ.): Օրհնութեան նամակ
Հանգուցեալ ուռուշճուղցի մահտեսի Յարութիւնի կին Անային եւ որդուն՝ պարոն
Գասպարին՝ 100 ղուռուշ կտակը յանձնելու Համար: Նաեւ օրհնութեան կոնդակ
վերջինս՝ վէքիլ կարգուելու առթիւ (Ե.): Նամակ՝ վերը յիշուած Եսայի պետի քոյր
Եթարին՝ պարոն թումնաջանին եւ Անտօնին յղուած թղթի առնչութեամբ, ըստ որի՝
պետք է սաստեֆն ստառ ձեւացող ազգայիններին, որպէսզի չխաստեֆն նրան (Զ.):
Նուիրակ Ներսէս վարդապետին ուղղուած նամակում խոսուում է պարոն Գասպա-
րին վէքիլ նշանակելու մասին (Է.): Նոյնի մասին տեղեակ է պահուում նաեւ վէքիլ
պարոն Հայրապետին (Կարին), նշուած է նաեւ Չմիւռնիայից եւ Պօլսից յղած
թղթերը տեղ Հաննելու մասին, որոնց պատասխանը դեռեւս չի գրուեալ (Ը.): Նա-
մակները գրուել են մայիսի 8-ին: Գէորգ աղային (Կարս) կարգադրուում է շուտա-
փոյթ տեղ Հասցնել սայլի անիւները (475ա, Ա.), իսկ Ղօշալանքի առաջնորդ Յով-
Հաննէս վարդապետին տեղեկացուում է, որ Կարնոյ թղթերը տեղ են Հասել, ուստի
կարգադրում է տեղ Հասցնել նաեւ Գէորգ աղային Հասցեագրուած նամակը (Բ.):

410 **Ի Սուրբ Աղբերկայ վանքն - Թուղթի վերայ Սուրբ
Աղբերկայ վանից առաջնորդ Մարգարէ պետին և Մանածկերտու
քաՀանայից, ռէսաց և Համայն ժողովրդոցն՝ վանն Անտօն արեղա-
յին, եթէ նա ըստ Հրամանի մերոյ գայր ի Սուրբ Աթոռս, ընդէր
արգելեցիք. ուրեմն ի Հասանիլ թղթոյս առ ձեզ, դու՝ Մարգարէ
վարդապետդ, Հանդերձ քաՀանայիւք և իշխանօք ելեալ եկեսձիք ի
Սուրբ Աթոռս ընդ Անտօն արեղային առ ի գիտել մեր զվէճան ձեր
և զիրաւունս առնել: Նմա ևս գրեցաք գալ ընդ ձեզ ի Սուրբ
Աթոռս¹¹⁷:**

ցինք, հիշատակվում է Մայր Աթոռի ամբարանոցի կառուցման 1791 թվակիր վիմագրում
(նույնի մասին ավելի մանրամասն տես՝ վավ. 418):
¹¹⁷ Պատմական Հայաստանի Տուրուքերան նահանգի հուրք գավառում գտնվող Աղբերկավան-
քյան ընդունման սկզբնական շրջանում հիմնադրված հոգևոր կենտրոններից է, որը դեռևս
վաղ միջնադարում եպիսկոպոսանիստ է եղել: Վանական համալիրը բաղկացած է եղել մի
քանի եկեղեցիներից (Ս. Աստվածածին, Ս. Փրկիչ, Ս. Կարապետ), միաբանական սենյակնե-
րից: Պարսպապատ է եղել և ուսման գործողությունների ժամանակ հաճախ իբրև
ապաստարան ծառայել: Ավելի ուշ դարձել է կրթամշակութային կենտրոն, սակայն 1741 թ.
Մշո Ալայդին բեյը այրել է վանքի ձեռագրական հավաքածուն, գրքերն ու գողացել արժեքա-
վոր առարկաներ: Նախման հայոց Մեծ եղեռնը, գործող վանք է եղել, իսկ այժմ լքվել ու միայն
ավերակներն են մնացել (Ստ. Մելիք-Քախչյան, Հայոց պաշտամունքային վայրեր, Երևան,
2009, էջ 10-11):

Վերոյիշեալի մասին գրուած է նաեւ Անտոն վարդապետին ուղղուած նամակում (475ա, Բ./2):

411* **Ի Գանձակ** - Թուղթ ի Գանձակ առ Սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Վարդազարն ի դարձ թղթոյն և վասն Չ. (6) թիւանի լիտր և Ի. (20) ստիլ մոմոցն առեցելոցն՝ արդեամբք գանձանակին: Օրհնութիւն և շնորհակալութիւն, եթէ Հասին մեզ ընդ այլ մոմոց տուեցելոց ոմանց, զորոց և զթուղթսն օրհնութեան ահա գրեցուցեալ յղեցաք քեզ ընդ օրհնութեան կոնդակին Հասարակութեան տալ նոցա ողջունիւ: Հարցումն զԽ. (40) ստիլ մոմոցն, եթէ նոյն պարոն Մկրտիչն է տուեալ, թէ այլոք և թէ Մկրտիչն է տուեալ: Ահա օրհնութեան թուղթս գրեալ յղեցաք և թէ այլ ոք է տուեալ՝ ծանուցես մեզ յանտանէ, գրել զօրհնութեան թուղթս և յղէքքեզ տալ նմա: Իսկ վասն Նորաշինու գանձանակի մոմին պատուէր, զի ողջունեսցէ զմահտեսի Ալթունն և զորդին՝ զգանձապետ պարոն Ջալալն, շուտով Հասուցանել մեզ զմոմն, որ ըստ ժամանակին սպիտակացուցանելոյ պիտոյասցի: Եւ վասն վախուպ արարեալ Ա. (1) խանութին Հանգուցեալ պարոն Աղաբաբի՝ Սրբոյ Աթոռոյս և Սրբոյ Երուսաղէմի, եթէ որդւոյն՝ պարոն Յօհաննիս օրհնութեան թուղթ գրեցաք ըստ ծանուցման նորին աներ պարոն Գրիգորին և ահա յղեցաք քեզ տալ նմա: Բայց գրեցաք ի նմա և զայս, թէ Հին դապալայն և նոր դապալայ մի ևս գրեալ և կնքեցուցեալ յանձնեսցես մեր գանձապետ պարոն Վարդազարին Հասուցանել մեզ, ուրեմն առեալ Հասուցես Հաւատարմաւ: Այլ գրեցաք, թէ մինչ տարին լրանայ, Սրբոյ Աթոռոյս բաժին քիրայն տացես մեր գանձապետ պարոն Վարդազարին և մինչ տայցէ, գնեսցես այնու մոմ և յղեսցես մեզ՝ ծանուցանելով և զորքանութիւն քիրային այնմ վախուճ խանութին: Ողջոյն պարոն Աւետ քեօվիսային նոյն քաղաքի:

Գանձանակի կոնդակ՝ տրուած վերոյիշեալ գանձապետ պարոն Վարդազարին՝ Վեհափառ Հայրապետի Հրամանով Չ. (6) թիւանի լիտր եւ Ի. (20) ստիլ մոմ գնելու եւ Մայր Աթոռ ուղարկելու առթիւ (475ա, Բ./3):

412 **Թուղթ օրհնութեան առ պարոն Յոհանն, եթէ իմացաք զմէկ խանութն, որ Հանգուցեալ Հայրն քոյ՝ պարոն Աղաբաբն վախուճ էր արարեալ Սրբոյ Աթոռոյս և Սրբոյ Երուսաղէմի, ընկալցի Տէր ի Հաճոյս իւր:** Բայց դապալայ մի ևս նորապէս գրեալ և կնքէ (475բ) ցուցեալ ընդ Հին դապալային, յանձնեսցես մեր գանձապետ պարոն Վարդազարին՝ Հասուցանել մեզ, որպէս իւրեան ևս եմք գրեալ: Նոյնպէս և զմեր բաժին քիրայն ի լրանալ տարւոյն յանձնեսցես նոյն պարոն Վարդազարին գնել այնու մոմ և յղել մեզ:

Օրհնութեան նամակներ մոմի նուիրատուներ՝ պարոն Մկրտչին. «վասն ԽԲ. (42) ստիլ մոմին» (475բ, Դ.), պարոն Յարութիւնին. «վասն Ի. (20) ստիլ մոմին» (Ե.), բօյաղչի պարոն Սարգսին. «վասն Ի. (20) ստիլ մոմոցն», որոնք յանձնել

են Մայր Աթոռի գանձապետ պարոն Վարդազարին (Զ.): Նամակները գրուել են մայիսի ԺԵ. -ին (15):

413 **Ի Հուշի** - Թուղթ առ տեր Յովհաննէս քաւանայն և առ բարեպաշտ իշխաննն, այսինքն՝ առ պարոն Հայրումն, պարոն Կարապետն եւ պարոն Առաքելն, նաև՝ մեր գանձապետ պարոն Բարաքիանն, եթէ թուղթ ձեր էլաւ մեզ ընդ Տաթևու առաջնորդ Յովա[ննէս] պետին, ընդ նմին և զԱՃ. տանն և Ե. (115) այլթմշրուղ գանձանակադրամն ձեր: Եւ աւա տեղւոյդ խանին թուղթ գրեցաք վանն նուիրակին մերոյ և յղեցաք առ նա՝ բերել ընդ իւրն և Հատուցանել: Ուրեմն օժանդակ լիցիք նմա, և որ ինչ արդիւնք գտանիցին առ գանձապետն մեր՝ թէ՛ խոստմունք, թէ՛ կտակ, թէ՛ քառանսից և թէ՛ այլ արդիւնք, զամենայն յանձնեսջիք նմա ի Հաստցանել մեզ:

414 Թուղթ առ տեր Յովհաննէս և տեր Միքայել քաւանայն, ի պատասխանի թղթոց նոցին ընդ Տաթևու առաջ[նորդ] Յովա[ննէս] պետին, եթէ իմացաք զգրեցեալնն աւա տեղւոյդ իշխողին թուղթ գրեցաք վանն նուիրակին մերոյ՝ Յով[հաննէս] պետին և յղեցաք առ նա բերել ընդ ինքեան: Եւ գրեցաք նուիրակին ի գալն առ ձեզ՝ առցէ ի ձէնջ զգանձանակադրամն և զայլ արդիւնս Սրբոյ Աթոռոյս ի Հաստցանել մեզ: Ուրեմն դու ևս օժանդակ լիցիք նմա, մինչ Հանդիպեսցի ձեզ: Այլ յորդորումն սիրով վանն գալստեան ի Սուրբ Աթոռս տեր Յովհաննէս քաւանային:

415 Թուղթ տաճկերէն առ Իբրահիմ խանն. յանձնարարութիւն վանն նորոգ նուիրակ Յով[հաննէս] պետին:

416 **Ի Նախիջևան** - Թուղթ օրհնութեան առ նորոգ գանձապետ պարոն Աղամալն, եթէ իմացաք, որ նուիրակն տեղւոյդ կարգեալ է զբեզ ընտրութեամբ գանձապետ Սրբոյ Աթոռոյս, վանն որոյ մէք ևս Հաճեալ, Հաստատեմք զբեզ ի գանձապետութիւն Սրբոյ Աթոռոյս այսու օրհնութեան նամակաւ: Ուրեմն լէր Հաւատարիմ ի գործս քոյ՝ ընդունիլ զչնորՀս Սրբոյ Աթոռոյս:

417 Թուղթ առ նորոգ նուիրակ Յովհաննէս պետն, եթէ թուղթդ (որ առ Աստուածատուր պետն) էլաւ, իմացաք զգրեալսդ, աւա պարոն Աղամալի գանձապետութեան թուղթն յղեցաք ըստ ինդրոյդ, տացես իւրն: Այլ Հուշոյ խանին և քաւանայից և իշխանաց թուղթ գրեալ յղեցաք առ քեզ՝ տանիլ ընդ քեզ ի գնալդ անդանօր, քանզի գրեցաք խանին վանն քոյ յանձնարարութիւն և գրեցաք քաւանայից փոքր-ինչ ընծայիւք տանիլ զբեզ առ խանն: Եւ իշխանաց՝ յանձնել քեզ զամենայն արդիւննս Սրբոյ Աթոռոյս: Եւ մինչ յանձնեսցեն քեզ, առցես այնու զապրշում և յղեսցես մեզ: Ըստ որում տեղւոյդ դրամն պակասաւոր է և աստ ոչ անցանի:

Գրեցան յամոյս ի ԺԵ. (15):

1794 թ. մայիս - թուղթի թօխաթ առ մահտեսի Նիկողայոն մահտեսի Սարգսեան յաղագս ձման սեղանատանն մերոյ վերին և մեծ մասին նորոգութեան, եթէ Հաճիցի ստանալ ի յիշատակ իւր:

Յորմէ ժամանեացէ թուղթ սիրոյ...

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ գիտասաշիր ստոյգ սիրելիդ մեր և բարեխոհ որդի Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Չի ի ՌՄԽԱ. (1792) թուոյն մերում յօգոստոսի ԻԴ. (24) գրեալ թուղթն քո էՀաս առ մեզ ի նոյն տարւոյ Հոկտեմբերի ԻԹ. (29) և իմացաք զփոքրիկ ամանաթին առ քեզ Հասանիլն և միամտեցաք: Բայց ոչ յաջողեցաւ մեզ շուտով առնել զգարձն թղթոյդ, որք ոնէաք և զհարկաւոր գրելիս առ քեզ:

Քանզի ըստ որում բազմիցս բանիւ և գրով ինդդեցեր շինեցուցանել զերևելի շինուած ինչ ի Սուրբ Աթոռոյս ի յիշատակ քո, մէք ևս այնպէս շինելի ինչ ոչ գտեալ, որ ի Հիմանց շինեսցի: Տեսաք, որ ձման սեղանատան վերին և մեծ մասն խախտեցեալ էր ըստ որմոյն և ըստ ոմանց թաղիցն, և ըստ պատուհանաց լուսամտիցն, և յաղագս փոքր և անյարմար գոլոյ լուսամտիցն, այնքան մութ էր մէջն, մինչ զի ի ճաշի ժամոն ճրագաւ լինէր Հաց ուտելն միաբանից:

Եւ թէպէտ ի ներքին կողմանէ Դ. (4) կամար կցորդեցաք ի յիշատակ կեսարացի մահտեսի Յովաննէս ամիրային, և զնոցին լուսամուտն յարմարապէս շինեցուցաք, սակայն այնորիկ ոչ բաւականացան տեղիք Հին վեց կամարացն ևս լուսաւորիլ: Ապա ըստ Հարկին պահանջելոյ ի ՌՄԽԱ. (1792) թուին զվերին Հին խախտեալ ամբարանոցն, որ ի վերայ նորայ կայր, իսպառ քակել ետուք և վերացուցաք, ապա և զառաստաղ սեղանատանն բացեալ ի վերուստ, նկատեցաք և նախ զի կաթուղիկոսարանի վերայի թաղն խախտեալ էր, զայն քակեցաք և ի նորոյ շինել ետուք: Նոյնպէս և զլուսամուտն քակեցաք և ընդ արձակեալ նորապէս թաղ տալ ետուք: Եւ զհարաւային որման արտաքին երեսն տաշեալ քարամբք բարձրացուցաք ծագէ ի ծագ, ընդ որս և զդուռն կամարակապ և թաղով, ընդ որ ի Ղազարապատէն մտանի ի ներքին պարիսպ եղաք զմարմարոնեայ արձան մի |19ա| փակեալ ի մէջ քանդակագործ քարանց, Հանդէպ Ղազարապատի դրանն, ընդ որ մտանօղքն ամենքեան տեսնեն զայն արձանն:

Իսկ վասն ապահով մնալոյ սեղանատանն ի կողմանէ անձրևոյ, շինել ետուք ի վերայ նորա և կողման շինուածոցն Գ. (3) մեծ օտայ և Գ. (3) փոքր օտայ, երեսք դէպ ի մէջն Ղազարապատին:

Արդ, այս ամենայն շինուածոց վերայ ԲԲ. (2000) ղուռուշէն աւելի խարճ գնաց, թող զկերլիսն: Այլ սիրելիդ մեր, Ռ. (1000) ղուռուշէն ևս խոստացեալ և մէք Հաճելոց եմք վասն քաղցր խաթեր քո: Ապա այս շինուածոց Հարկաւորութիւնն և վայելչութիւնն ի գրա-

բերս և յայլ եկողաց և դարձողաց իմացեալ, եթէ բոլորով սրտիւ յօժարիցիս տալ զխոստացեալն քո զԱՌ (1000) դուռուշն, գրեսցես մեզ, զի և մէք զօր ինչ յիշատակարանին քո և քոյայնոցն, որպէս գրեսցուցեալ եմք ի մէջ փոքր ամբարանոցին, նոյնպէս և ի սոյն յիշեալ արձանին փորագրել տացուք: Իսկ թէ զկամիցիս, բռնադատութիւն ոչ գոյ, ըստ կամաց սիրելոյդ լիցի, և մէք այլոց ինդրողաց արասցուք յիշատակ: Բայց զի նախապէս սիրելիդ ես ինդրեալ վասն որոյ յառաջ քեզ ազդ արարաք և պարտիս շուտով գրել զպատասխանի թղթոյս:

Որ և ի սիրոյ և ի Հաւատարմութենէ աննուազ մնալով, ողջ լեր ի Տէր և յանձեցեալ ի իննամս նորին, Հանդերձ ամենայն քոյայնովքդ, և շնորհք սրբոյ գահիս եղիցի ընդ ձեզ միշտ. ամէն:

Գրեցաւ ի ՌՄԽԳ. (1794) թուոյս մերում և ի մայիսի ..., ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 1Ցբ-9ա

419 **1794 թ. մայիս - Թուղթ ի Թօխաթ առ Թումաշանն և Անտօնն վասն Եսայի վարդապետի քոյր Եթարին՝ սաստել անիրաւ ոստիսի նորին, որ վնաս Հասուցանէր խղճալոյն: Իսկ նախապէս վասն ուրուշճուղցի մահտեսի Յարովթիւնի որդի պարոն Գասպարին, որ գործակալ կարգեցաւ ի տեղի Հօրն, յանձնարարութիւն¹¹⁸:**

1794 թ. մայիս և ի Թիֆլիզ

420 Կոնդակ ժողովարարութեան մոմի ի վերայ Թիֆլիզու քաւանայից, իշխանաց և առ Հասարակ ժողովրդոցն, զոր գրեալ յղեցաք ի ձեռս առաջնորդին տեղոյ՝ ընթեռնուլ տալ յեկեղեցին և ժողովել զտուրան Հոգևոր ի ձեռն քաւանայիցն տեղոյ:

421 Թուղթ առ աւագ քաւանայսն՝ վասն մոմոյ Հաւաքմանն, եթէ աւա օրհնութեան կոնդակն գրեալ յղեցաք, Հաւաքել արդիւնաւորութեամբ և ժամ մի յառաջ Հասուցանել մեզ ի ձեռն առաջնորդին տեղոյդ:

422 Թուղթ առ առաջնորդ Մարտիրոս պետն և գործակալ տէր Ղազարն ի դարձ թղթոյն նոցա և վասն կոնդակին օրինազանցից, եթէ իմացաք զընթեռնանիւն յամենայն եկեղեցիս: Բայց Ծիծօյի որդին ընդ պսակօղ քաւանային եկեալ են յԵրևան, մինչ գայցեն ի Սուրբ Աթոռս, արձակելոց եմք ի կապանացն: Եւ ըստ գրեցելոց ձերոց՝ սիրով յղելոց: Իսկ միւս օրինազանցքն մինչ ոչ դարձցին զղջմամբ առ մեզ, ոչ են ընկալնոց ի մէջ զարձակումն:

¹¹⁸ Թոխաթում բնակվող Թումաշանին և Անտոնին, Եսայի վարդապետի քույր Եթարին թղթով ներից պաշտպանելու և Ռուսաշուղցի մահտեսի Հարությունի որդի Գասպարի՝ գործակալ կարգվելու մասին թղթի համատուագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 632:

Եւ վասն ԿԵ. (65) թումանի ղաւզին, եթէ աճա գրեալ յղեցաք պաճէլ առ քեզ՝ պիտոյանալ ի ժամ Հաշուատրութեանդ: Վասն թղթոց ճորտից, եթէ ի կողմանէ Խարազէնց Յովսէփին ումէք թուղթ չեմք գրելոց: Իսկ վասն Եսայի տղային, եթէ ժամանակ չու- նիմք գրելոյ: Եւ զտէր Դաւթէն, եթէ աճա կարգեցաք կառաւարիչ ի վերայ ճորտիցն մերոց: Այլ վասն մոմի կոնդակին, եթէ աճա գրեալ յղեցաք ի ձեռս ձեր՝ ժողովել և փութով Հասուցանել մեզ: Աւագ քաճանայից ևս գրեցաք արդինաւորութեամբ առնել զմոմն: Եւ վասն գալստեան Համբաւոյն Վրաց յերկիրս այս, եթէ վերստին, որ ինչ և Հանբաւիցի, գրեսձիք:

423 Ղաւզ մի առ սա վասն զՃ. (100) և Ծ. (50) դանայ ալթմշուղին, որոց զՃ (100) տուեալ էր արքային ըստ Հրամանի սրբազան Վեճին, ձեռամբ տէր Ղազարին և Ծ. (50) դապաղ Յարութիւնի կնոջն, զոր գրեալ յղեցաւ առ ինքն՝ պիտոյանալ ի ժամ Հաշուատրութեանն:

424 Թուղթ առ տէր Դաւիթ քաճանայն ի դարձ թղթոյն, եթէ իմնցաք զգրեալսդ և աճա փոստուկայի ծանուցաք քեզ զմիտս մեր, որ ըստ այնմ առնիցես: Եւ վասն գործակալութեանն ի վերայ ճորտիցն Սրբոյ Աթոռոյս, եթէ քանիցս անգամ պարոն Ենովքն և պարոն Յովհաննէան գրեալ են և ինդրեալ կացուցանել զքեզ գործակալ այժմ ևս էին գրեալ ընդ նոսին և առաջ[նորդ] Մարտիրոս պետն: Վասն որոյ և մէք այսու թղթովս կցուցանեմք զքեզ գործակալ ի վերայ Համայն ճորտիցն Սրբոյ Աթոռոյս, որ և յետ աւուրց ինչ գրելոց եմք զկոնդակ Հասարակութեան և վերահաստատելոց զքեզ ի գործդ այդ: Ողջոյն մեր ճորտ պարոն Ենովքին և այլոց, եթէ յետոյ գրելոց եմք զպատասխանիսն թղթոց նոցին: Փոստուկայ մի առ սա վասն արքայի գալստեանն:

Գրեցան յամնոյս ի ԺԵ. (15):

425 Ի Բայազիտ - Կոնդակ ժողովարարութեան իւղի և պանրի ի վերայ Բայազտոյ և Դիադինու, ընդ Ալէքսի[անոս] պե- տին:

426 Կոնդակ ժողովարարութեան ևս իւղի և պանրի ի վե- րայ Ալաշկերտու և Նաճիայու, ընդ Գէ[որդ] վարդապետին:

427 Թուղթ առ առաջնորդ Մկրտիչ պետն, յանձնարա- րութիւն վասն իւղաժողովարար վարդապետն Ալէքսիանոսի և Գէորգեայ: Եւ թէ ընդ նոսս վասն քոյ յղեցաք Դ. (4) լիտր գինի՝ իբր օրհնութիւն ի մէնջ:

Գրեցան յամնոյս ի ԺԹ. (19):

428 **Ի ԹԻՖԼԻՊ** - Թուղթ առ առաջնորդ Մարտիրոս պեան և գործակալ տէր Ղազարն ի դարձ թղթոյն նոցա և յիշումն քան զայս յառաջ թղթոցն մերոց առ ինքեանս և առ այլս գրեցելոց: Եւ զԾիծօյի որդւոյն, եթէ եկն առ մեզ և արձակեցաւ ի կապանացն: Իսկ վասն զաւագ քաւանայիցն տեղւոյն, եթէ ընդէր թուղթն ձեր թարց կնքոյն նոցա |476թ| յղեցիք մեզ՝ արձակել զկապեալն, ի կապելն կնքեցուցանէք, յարձակելն զիս՝ որ ոչ առնէք: Ինչ և իցէ, ահա արձակեալ վերադարձաւ խիլայիւք: Եւ զբանադրեալ քաւանայէն վանցւոյ, եթէ գրէք, թէ Հրաման տուր, դարձուցուք զփիլոնն: Եւ ասեմ, մինչ ոչ եկեսցէ նա առ մեզ, ոչ է ընկալնոց ի մէնջ զարձակումն:

Ընդ թղթոյս փոստուկայ մի վասն Ջաֆարի որպիսութեանն գրել մեզ զմիտս արքային:

Գրեցաւ յամնոյս ի ԻԲ. (22):

429 **Ի Կարս** - Թուղթ առ Գէորգ աղայն ի դարձ Բ. (2) թղթոցն և վասն Չ. (6) զոյգ ականցն սայլից և նոցին պարագայիցն և պարոն (՝) Հայրապետի ԺՉ. (16) կտոր երկաթիցն, եթէ Հասին մեզ ամբողջապէս: Եւ վասն տեղւոյ անցիցն և խաղաղութեանն, եթէ լուեալ ուրախացաք: Իսկ վասն տեղւոյս որպիսութեանն՝ ծանուցումն Համառօտակի. և թէ Մահմատ բէկն երկարապէս ծանուցանելոց է ձեզ: Մէք ևս տակաւին յերևան եմք:

Գր[եցաւ] յամ[սոյս] ի ելն:

430 **Ի յԱՄԻԻԹ** - Կոնդակ մի ի վերայ Սուրբ Սարգիս եկեղեցւոյ տէր Գասպար քաւանային և այլ քաւանայից և իշխանաց՝ վասն անբարի սովորութեանն իւրեանց, որք յանուն Սրբոյ Աթոռոյս զգանձանակ շրջեցուցանեն և զդրամն վատնեն ի պէտս ինքեանց: Որոց սիրախառն յանդիմանութիւն՝ Հեռանալ յայնպիսի անկարգ արարողութեանց և Հետևիլ այլ եկեղեցեացն (որք են ի նոյն քաղաքի), և սաստ ևս ի յոչ Հեռանալն պատժիլ Հոգևորպէս:

431 Թուղթ առ խօջայ Կարապետն և վասն Հարազատութեանն օրհնութիւն և շնորհակալութիւն և վասն անբարի սովորութեանն Սուրբ Սարգիս եկեղեցւոյ քաւանայից և իշխանաց՝ ինդիր, զի խափանեսցէ, և այլ մի ևս արծարծեսցեն զայն, ըստ որում անկարգ արարողութիւն է և ընդդէմ արդարութեան: Ողջոյն Հօրն իւրոյ՝ մահտեսի Գասպար աղային և Հօրեղբօրն՝ գանձապետ մահտեսի Մարտիրոս աղային և Համայն իւրայնոցն:

Նոյն Հարցի շուրջ գրուել է նաեւ գանձապետ մահտեսի Յակոբին ուղարկուած նամակում եւ յանձնարարուել վերը բերուած նամակները յանձնել Հասցեատերերին (476թ, Գ): Միեւնոյն մահտեսի Յակոբին օրհնութեան նամակ է յղուել նաեւ քոյր Եղիսաբեթի մահուան առթիւ, ուր շնորհակալութիւն է ասուում նաեւ

ԺԵ. (15) զրուուշ Հոգեբաժինը նուիրաբերելու Համար (Դ): Ս. Սարգսի քահանայաների եւ իշխանների «չար» սովորութեան մասին գրուել է նաեւ նուիրակ Դաւիթ վարդապետին, որին տեղեկացում է մահտեսի Յակոբի՝ նշուած Հարցի վերաբերեալ ցուցաբերած պատրաստականութեան, ինչպէս նաեւ անօրէններին նախատելու մասին (Ե):

432 **Ի Մուշ** - Թուղթ առ Սրբոյ Կարապետի վանից առաջ[նորդ] Յակոբոս պետն ի դարձ թղթոյն ընդ Անտոն պետին՝ առաջնորդին սրբոյն Աղբերակաց վանից, եթէ ահա առաջնորդ կարգեալ դարձուցաք օրհնութեան կոնդակաւ մնալ ժամանակ ինչ և ապա վերադառնալ ի Սուրբ Աթոռս՝ առնուլ զէպիսկոպոսական աստիճանն: Փաշայի թղթոյ պատասխանին յղեցաք և ծանուցաք զայսոսիկ: Եւ յիշումն թղթոցն մերոց ընդ Գէորգ ուխ[տաւորին]:

Ի էլն:

477ա

433 Թուղթ առ մէջիմն, ի դարձ թղթոյն նոցա, որ վանն Աղբերկայ վանից նորոգ առաջնորդ Անտոն պետին:

Տէ՛ս զմիջակ տետե[րց] 42 Համարն:

434 Կոնդակ առաջնորդական ի վերայ սուրբ Աղբերկայ վանից թեմիցն՝ վանն նորոգ առաջ[նորդ] Անտոն պետին:

Տէ՛ս զմեծ տե[տերց] 2205 Համարն:

435 Թուղթ առ Մարգար պետն, եթէ ահա Անտոն պետն առաջնորդ կարգեցաք օգնական լինիլ քեզ և ըստ ամենայնի Հնազանդ: Ուրեմն դու ևս Հայրաբար սիրեսցես զնա:

436 Թուղթ տաճկերէն առ փաշայն Մշոյ՝ վանն սուրբ Աղբերկայ նորոգ առաջ[նորդ] Անտոն պետին:

Գրեցան յամսոյս [յունիսի] Ա. (1):

437 **Ի Կարին** - Թուղթ առ վէքիլ պարոն Հայրապետն ի դարձ չորից թղթոցն: Եւ վանն մահտեսի Աղամյանի որդի մահտեսի Ղազարի ԲՃ. (200) զրուուշին Հասելոյն ինքեան, եթէ ի Տաթևու առաջ[նորդ] Յովա[ննէս] պետէն օրհնութեան գիր առեալ յղեցաք: Վանն որոյ Հասուցես առ մահտեսի Ղազարն ի միամտութիւն: Իսկ վանն նորոգ գործակալ պարոն Գասպարի չթեայ վարագուրին՝ վանն Տաթևու վանից, եթէ ահա նորին օրհնութեան գիրն ևս յղեցաք, Հասուցես առ նա: Վանն Գաղատիոյ նուիրակին, եթէ իմացաք զհասանիլն յայդր և զյանձնելն պահարանեալ թղթոցն մերոց առ քեզ: Բայց զէ՛րբ ելանէլն նորին և զթղթոց մերոց յղիլն ի Պօլիս, ևս ծանուցես: Եւ վանն մեր ինդրեալ ապային, եթէ մինչ աժանասցի, յայնժամ առեալ յղեսցես: Այժմ՝ Հարկաւոր չէ: Վանն Եսուայ չալիկին և Ի. (20) օգմայ թղթոցն և Դերջանու խալիչային և կարպետիցն, եթէ Հասեալ են ի Բայազիտ առ տի-

րացու Գէորգն. և մինչ ջուրքն նուազեսցին, բերելոց եմք առ մեզ և փորձելոց զթուղթն: Եւ եթէ լան լիցի այն տեսակն, որ գտանի յայդր, ինդրելոց եմք ի նմանէ ևս: Բայց Ա. (1) դապաղայ թուղթ յղեցաք ընդ թղթոյս, եթէ ի սմանէ ևս գտանիցի, առցես ընտրանաւ Ծ. (50) կամ Կ. (60) օղմայ:

Եւ վասն ԳՌ. (3000) ղուռուշին Դանիէլ պետի տուեցելոյն փօլիցայիւ մահտեսի Խաչատուրի չրաղ պարոն Մկրտչին, եթէ իմացաք և մինչ առցես ի լրանալ վատային, մեզ ծանուցես: Իսկ վասն ԱՌԼՃ. (1800) ղուռուշին նոյն Դանիէլ պետի, որ տուեալ էր Ապրօյեան Մարգար աղային (որոյ ԱՌԵՃ. (1500) ղուռուշն ըստ գրեցելոյ Հայրապետին էր տուեալ և ԳՃ. (300) ղուռուշն ի կողմանէ իւր տալեացն), եթէ ահա ԴՌ. և ԵՃ. (4500) ղուռուշի Ա. (1) ղաւզ գրեալ, Հանդերձ իւր բարեաթղթովն և ԳՃ. (300) ղուռուշի թամասուկովն յղեցաք քեզ՝ Հասուցանել առ նա ի միամտութիւն:

ԺԶ. (16) կտոր երկաթն (որ էր Բ. (2) բեռն), էհաս ի Սուրբ Աթոռս ի վերայ Կարսայ ձե[ռամբ] պարոն Գէորգին, որ Կարսայ մինչև ցՍուրբ Աթոռս քիրայն պարոն Գէորգն էր տուեալ: Ըստ որում ուղտապանն թողեալ էր անդ և վերադարձեալ գրեցաք ի դաւթարդ ամենայն առեցեալ իրաց գինսն և խարճան, բաց ի քիրայէն երկաթի՝ Կարսայ ցՍուրբ Աթոռս (ըստ որում Գէորգն էր տուեալ): Լէ՛ր միամիտ: Վասն նուիրակի թղթոյ պատասխանոյն, եթէ ահա գրեալ յղեցաք, տացես իւրն:

Եւ վասն տեղոյս որպիսութեանն ծանուցումն, և թէ այժմ՝ եմք յԵրևան ի պատճառս վրդովմանցն:

438 Թուղթ առ նուիրակ Նիկողայոս պետն, ի դարձ թղթոյն, եթէ իմացաք զորպիսութիւն գործոյդ և միամիտ եղաք: Սրբալոյս մեռոն էիր ինդրեալ Ա. (1) Հօխայաչափ, այժմ՝ ձեռնհաս չեղաք, ըստ որում վրդովեցեալ է այս կողմնըս և մէք ևս կամք յԵրևան յօտարութեան: Եղելովքն բաւականացի՛ր և դիմեա՛ ի Սուրբ Աթոռս ժամ մի յառաջ:

439 Ի Չմիւռին - Թուղթ առ նուիրակ Դանիէլ պետն, եթէ Հասին մեզ թուղթքն քոյ և իշխանաց՝ Հանդերձ կայից դաւթարան Հանգուցեալ (մի քանի բառ ջնջած) Իսահակայ պետի: Բայց ձեռնհաս չեղաք գրել զպատասխանինն ի պատճառս վրդովմանցն երկրիս յերկուս կուսէ ի Վրաց և ի Սուլէհման սարտարէն Աղայ Մահմատ խանի: Եւ մինչ վերասցին խռովութիւնքն, գրելոց եմք զպատասխանինն, անհոգ լիցին:

Իսկ վասն չորս Հազար |477թ| և ԵՃ. (500) ղուռուշի ղաւզին, եթէ ահա գրեալ յղեցաք ի միամտութիւն քեզ: Այլև յղեցաք ընդ նմա և զերեք Հարիւր ղուռուշի թամասուկն քոյ, որ դրամն առ մեզ Հասեալ գիտացես: Բայց ի ղաւզն ոչ յղեցաք զայս դրամն:

440* Ղաւզ մի առ սա՝ վասն ԴՌ- և ԵՃ. (4500) ղուռուշին, արդեանց Հանգուցեալ ՍաՀակ պետի, որոց ԳՌ- (3000) փօլիցայ էր տուեալ Գօրօյեան մահտեսի Խաչատուրի չրաղ պարոն Մկրտչին Հասանիլ առ Հայրապետն, և ԱՌԵՃ. (1500) ղուռուշն Ապրօյեան պարոն Մարգար աղային ըստ գրեցելոյ պարոն Հայրապետին, որոց աղագաւ գրեալ զայս ղաւզս յղեցաւ առ պարոն Հայրապետն Հասանիլ առ նուիրակ Դանիել պետն ի միամտութիւն Հասուցելոցն:

Գրեցան յամնոյս ի Չ. (6):

Պատասխան նամակներ՝ մահտեսի Նիկողայոս աղայ Եղիազարեանին (Կ. Պօլիս) (477բ, Ա/2), ռամեցի մահտեսի պարոն Գեորգին՝ ի պատասխան ուխտաւոր տիրացու Պետրոսի գրովթեան (Էտրենէ) (Բ.): Էտրենէի առաջնորդ Միքայէլ վարդապետին շնորհակալութիւն է ասուում «վասն Դ. (4) ոսկի ժամուցին... և վասն շինման եկեղեցոյն իրեանց» և այդ առիթով օրհնութեան գիր է յղում մահտեսի Ստեփանոս ամիրային (Գ.): Պատասխան նամակներ են ուղարկուել բենկանցի մահտեսի Ստեփանոս ամիրային (Բենկան). «ի շնորհակալութիւն յղեալ ժամուցացն յանուն Սրբոյ Աթոռոյս և վանորեից» (Դ.), Կեսարիայի առաջնորդ Մատթէոս վարդապետին (Կեսարիա). «ընդ կուտինացի ուխտաւոր մահտեսի Խաչատուրին» (Ե.): Գանձապետ մահտեսի Յակոբին (Ամիդ.) յայտնում է, որ շրջաբերական կոնդակ էր ինդրել նամակաբեր տէր Մարգարի միջոցով բայց դա յետաձգում է «ի պատճառս վրդովմանցն երկրիս» (Չ.): Նոյն պատճառով չի կարողացել պատասխանել գանձապետ պարոն Յովհաննէսի նամակներին (Բաղէշ) (Է.): Վէքիլ պարոն Հայրապետին (Կարին) գրուած նամակում յանձնարարում է յայտնել Կարինից Կարս բերուած երկաթի փոխադրավարձի արժէքը, արւում են նաեւ տնտեսական բնոյթի այլ կարգադրութիւններ, այդ թւում. «վասն թօխաթու վէքիլ պարոն Գասպարի ԳՃԾ. (350) ղուռուշ տալացուին...», «վասն ԲՃ. (200) ղուռուշին տէր Բաբայեան մահտեսի Պօղոսի...», «վասն փօլիցայից, եթէ այլ ևս մի առնիցես», «վասն Աբրահամի տղային, եթէ գրեցաք Մասրաֆ Յակոբին վասն նուիրակին և քոյ յանձնարարութիւն» և այլն (Ը.): |478ա| Պատասխան նամակ խոջա Մասրաֆ Յակոբին, ուր շնորհակալութիւն է ասուում Հարազատութեան և նուիրակի Հարցով յանձնարարութեան Համար (Թ.): Նամակները գրուել են յունիսի 13-ին:

441 Կոնդակ մի շրջաբերական ի վերայ Թօխաթու, Սեբաստիոյ, յԱկնայ, յԱրապկերու, Խարբերդու, Բալուայ, Չմշկածակու և ի շրջակայից նոցին՝ վասն տէր Մարգար քահանային Ամթեցոյ:

442 Կոնդակ ևս շրջաբերական ի վերայ Թիֆլիզու, Գօրու, Կախէթու և ի շրջակայից նոցին: Նաև ի վերայ Նուխու, Շամախու, Բաքու, Դարբանդու և ի շրջակայից նոցին՝ վասն մանուկ առն Վրաստանցոյ:

Գրեցան յամ[սոյս] ի ԺԳ. (13):

443 **Ի Կարս** - Թուղթ առ Գեորգ աղայն. յիշումն թղթոյն մերոյ քան զայս յառաջ յղեցելոյ: Եւ ծանուցումն զտեղոյս որպիսու թեանցն և զՅովհաննէս պետէն (որ գնաց ի Թիֆլիզ): Եւ թէ զմուռ էիր ինդրեալ ի մէջ, մոռացաք յայնժամ յղել, այժմ ևս Հաստարիմ եկող չկայր և տաճիկ սայուն չէտուք՝ երկնչելով չհասուցանել քեզ, և մինչ պատշաճաւոր եկող պատահիցի, յղելոց եմք:

444 Թուղթ առ Ղօշաւանից առաջնորդ Յովհաննէս պետն ի դարձ թղթոյն ընդ տաճիկ փայեկին Կարնոյ. շորհակալութիւն վասն Հարազատութեանն և ծանուցումն զտեղոյս որպիսու թեանցն:

Գրեցան յամսոյս ի ԺԳ. (13):

445 **Ի Պօլիս** - Թուղթ առ պատրիարք Չաքարիա վարդապետն ի դարձ Բ. (2) թղթոյն և ծանուցումն զորպիսու թեանցն տեղոյս: Տէս զմեծ տե[տերց] 2206 Համարն:

Պատասխան նամակներ Հորհր Մկրտիչ ամիրային. «ընդ գործավճար նուիրակ Մինաս պետին» (Բ./4), ջուղայեցի մաշտեսի Գալստանին (Կ. Պօլիս) Բասրայից ստացուած փոխանցման առթիւ (Գ.), Երուսաղէմի վէրի տիրացու Սարգսին (Գ.): Երուսաղէմի նոր պատրիարք Պետրոս վարդապետին միսթարութիւն է յայտնում նախկին պատրիարքի մաշտեսն առթիւ եւ շորհաւորում իր պատրիարքութեան կապակցութեամբ (Ե.): Նամակ՝ ուղղուած պարոն Վարդան Սարգսեանին (Բասրայ), ՌՁԵ. (1085) ղուռուշը, որ վերցրել էր Եփրեմ պետից պիտի փոխանցուեր նուիրակ Մինաս պետին, սակայն յանձնել էր մաշտեսի Գալստանին (Կ. Պօլիս), քանի որ Մինաս պետը տեղում չէր եղել (Չ.): Կարինում էջմիածնի վէրի պարոն Հայրապետին յանձնարարուում է վեր յիշուած նամակները Հասցնել Հասցեատերերին (Ե.): Նամակները գրուել են յունիսի 19-ին:

478բ 446 **Ի Հաշտարիսան** - Թուղթ ի յերկիրն Ռուսաց առ Յովսէփ վարդապետն, ի դարձ երից թղթոյն: Տէս զմեծ տե[տերց] 2200 Համարն¹¹⁹:

¹¹⁹ Ծագումով Սանահնեցի Հովսէփ արք. Արղոյսանը տևական ժամանակ զբաղեցրել է Հաշտարիսանի (Աստրախան) նվիրակի, ռուսահայոց առաջնորդի պաշտոնը, որի անվան հիշատակմամբ բազմաթիվ նամակներ ու համառոտագրություններ են պահպանվել հատկապես Ղուկաս Կարնեցու արխիվային վավերագրերում (այդ թվում նաև նամակներ և համառոտագրություններ՝ ուղղված Հովսէփ Արղոյսանի սպասավոր Գրիգոր վարդապետին): Իբրև նվիրակ, նա մեծ կարևորություն է տվել նամակագրության բովանդակությանը՝ մանրամասն ներկայացնելով կատարվող կամ կատարվելիք աշխատանքները, նվիրատվությանը ստացած առարկաները, գումարի չափը, դրանց տեղափոխումը Մայր Աթոռ և այլն: Այս տեսանկյունից վստահաբար կարելի է ասել, որ Հովսէփ Արղոյսանի նամակները լայն պատկերացում են տալիս նրա գործունեության և էջմիածին ուղարկված իրերի մասին (Խ. Կանայան, էջմիածնի նվիրակությունը ԺԸ. դարում, «էջմիածին», 1977, Գ., էջ 46): Նա կաթողիկոս է ընտրվել 1800 թ., սակայն դեռ չօժիված վախճանվել է 1801 թ. մարտի 9-ին և թաղվել Ս. Գայանե վանքի գավիթ-նախասրահում (տապանագիրը տես՝ Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 307-308, արձ. 595):

Հաշտարիսանի և շրջակայքի առաջնորդ Հովսէփ Արղոյսանին հասցեագրված մեկ այլ՝ 1797 թ. հուլիսի 20 թվակիր նամակը տես՝ իր տեղում (վավ. 910):

Միաժամանակ նամակներ են ուղարկուել ներքոյիշեալ անձանց, որոնց մասին առկայ են Հակիրճ բացատրութիւն-Համառոտագրութիւններ՝ Յովսէփ վարդապետի սպասաւոր Գրիգոր վարդապետին (478բ, Բ.), Նոր Նախիջևանում Սուրբ Աթոռի գանձապետ պարոն Մկրտչին (Գ.), նուիրատուններ՝ տէր Ստեփաննոս քահանային, որի տղան գնացել էր Թիֆլիս, որտեղից էլ Աստրախան իսկ ինքը նուէր է ուղարկել «Չ. (6) Հօխայ զմռտն և Ա. (1) օզմայ թղթոյն» (Դ.), պարոն Մկրտում աղային, որին շնորհակալութիւն է յայտնում նաեւ ուղարկած ընծաների Համար (Ե.), Կարապետ վարդապետին, որին շնորհակալութիւն է յայտնում. «Ե. (5) Հատ պաճախլու ոսկի աջահամբուրին և Ա. (1) ազնիւ մահրամային» (Աստրախան) (Չ.): Նամակները գրուել են յունիսի 14-ին եւ ուղարկուել ամսուայ վերջին:

447 **1794 թ., 14 յունիսի** - Թուղթ ի Հաշտարխան առ Գրիգոր վարդապետն՝ սպասաւոր Յովսէփ արքեպիսկոպոսին, ի պատասխանի Բ. (2) թղթոց նորին գրեցելոց յանցեալ ամի մայիսի 15 և ի յուլիսի 20¹²⁰:

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 20աբ

448 **1794 թ., 14 յունիսի** - Թուղթ ի Նոր Նախիջևան առ Սրբոյ Գաւհիս գանձապետ պարոն Մկրտչին մահտեսի Պետրոսեան, ի պատասխանի թղթոյն նորա յամի Փրկչին 1791, դեկտեմբերի 20 գրեցելոյ, և շնորհակալութիւն վասն յղեալ արդեանցն¹²¹:

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 20բ-1ա

Պատասխան նամակներ՝ Մուշ քաղաքի բնակչութեանը, Աղբերկայ վանքի առաջնորդ Անտօն վարդապետի վերաբերեալ, ռամեցի մահտեսի տիրացու Պետրոսին (Էտրենէ)¹²², մահտեսի Նիկողայոս աղային (Կ. Պօլիս), ջուղայեցի մահտեսի Գալստանին (Կ. Պօլիս), մահտեսի Էսայոն (Կ. Պօլիս), Թօխաթի Ս. Մինաս եկեղեցու գանձապետ մահտեսի Յովակիմին:

Նամակները գրուել են 1794 թ. յունիս ամսին:

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 21բ-2ա

Շնորհակալութեան նամակ գանձանակական արդիւնքը յանձնած Չառլուի ժողովրդին: Օրհնութեան նամակ Էտրենէում գանձապետ դարձած մահտեսի Պետրոս ամիրային: Շնորհակալութեան կոնդակներ գանձանակական արդիւնքը յանձնած Ուակիտարի Ս. Կարապետ եւ Ս. Խաչ եկեղեցիների ժողովրդին: Շնորհակալութեան նամակ նուիրատու Մարտիրոսին (Ախալցխայ): Նոյն բնոյթի նամակ

¹²⁰ Հովսէփ արքեպիսկոպոսի սպասավոր Գրիգոր վարդապետին հղված նամակի համառոտագրւթյունը տե՛ս ԴՅՊ, գիրք Դ., սյուն 632:

¹²¹ Մայր Աթոռի գանձապետ մահտեսի Մկրտիչ Պետրոսյանի՝ նոր նախիջևան հղած թղթի համառոտագրւթյունը տե՛ս ԴՅՊ, գիրք Դ., սյուն 632:

¹²² Տիրացու Պետրոսի (Էտրենէ)՝ Ռամեցի մահտեսի պարոն Գևորգին հղված թղթի պատասխան նամակի ամբողջական բնագիրը տե՛ս ԴՅՊ, գիրք Դ., սյուն 632-634:

տպագիր տիրացու Պօղոսին, որն ուղարկել էր խոստացած մատաղագինը (9 ղու-
ռուշ): Հնորհակալութեան նամակներ նուիրատու Էստատի որդի Յարութինին
(Ախալցխայ): Կոնդակ Կովղոնի (Սեբաստիայի մօտ) ժողովրդին, որտեղ ստեղ-
ծուել էր գանձանակ յանուն Սուրբ Աթոռի: Պատասխան նամակ Եսաւ Դիւան
Սուլխանեանին (Թիֆլիս): Կոնդակ գանձանակադրամը յանձնած Գանձակի ժո-
ղովրդին: Հնորհակալութեան նամակ նուիրատու՝ ուռուղճուղցի Հանգուցեալ մաշ-
տեսի Յարութինի կողակից Աննային (Թօխաթ): Գանձապետ նշանակելու մասին
նամակ, Հասցեագրուած ագուլեցի պարոն Աղամալին (Նախշուան), պատասխան
նամակ Ս. Աղբերկայ վանքի առաջնորդ Նարգար վարդապետին: Հնորհակալու-
թեան նամակ նուիրատու գանձապետ մաշտեսի Խաչատուր աղայի կողակից մաշ-
տեսի Աննային (Կուտինայ): Նամակները գրուել են 1794 թ. յունուար-յունիս ամիս-
ներին:

ՄՄ ձեռ. Հ^ր 4482, էջ 221-37

449 **1794 թ., 21 յունիսի - Թուղթ** ի Բասրայ առ պարոն
Վարդանն Սարգսեան, որ 1085 ղուռուշ դրամ փօլիցայ առեալ ի
նուիրակ Եփրեմ վարդապետէն, գրեալ էր ի Պօլիս պարոն Պօղո-
սին Մուրատխանեան, զի նա Հատուցէ զայնքան դրամ նուիրակ
Մինաս վարդապետին՝ Հասուցանել ի Սուրբ Աթոռս, բայց յառաջ
քան ի Հասանիլ փօլիցագրին ի Պօլիս, Մինաս վարդապետն ելեալ
էր ի ճանապարհ, վանն որոյ զ1085 ղուռուշն ի յիշեալ Պօղոսէն
մաշտեսի Գալստեանն առեալ էր ցց մեզ գրեալ: Որոյ աղագաւ
միամտութիւն պարոն Վարդանին:

ՄՄ ձեռ. Հ^ր 4482, էջ 237-39

Հնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ Տիրուհի տիկնոջը (Պէկօղ-
լի), ուխտաւոր քիլեցի Պետրոսին, պարոն Յարութինին, պարոն Յակոբին (Նոր
Նախշուան): Պատասխան նամակ Բաղէշի Ս. Հինգիտրան եկեղեցու գանձապետ
Մրջօյենց մաշտեսի Կարապետին: Հնորհակալութեան նամակ նուիրակ Դաւիթ
վարդապետին օժանդակած մաշտեսի Սողոմօնին (ի Զօխ Ղասապայն, որ ի յԱ-
միդ): Օրհնութեան կոնդակներ Հուշիի դղեակի նախշուանցի, ագուլեցի եւ զա-
զանչեցի ժողովրդին գանձանակի արդինքը յանձնելու Համար: Նամակ Հուշիի
մտ եղած Ագուլեաց կոչուած գիւղի ժողովրդին՝ յանուն Էջմիածնի գանձանակը
վերականգնելու Համար: Հնորհակալութեան նամակ նուիրատու Մալխազի որդի
պարոն Յովհաննէսին (Զմիւռնիա): Պատասխան նամակ Հուշիի քահանայներին
եւ իշխաններին: Հնորհակալութեան նամակ նուիրատու Մագդաղ տիկնոջը
(Թիֆլիս): Օրհնութեան նամակ Կ. Պօլսի դիւպլեստուց ենասֆի պաշտոնավժող
գանձապետ պարոն Յարութինին:

Նամակները գրուել են 1794 թ. յունուար-սեպտեմբեր ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^ր 4482, էջ 221-56

478բ

450 **Ի Թիֆլիզ - Թուղթ** առ պարոն Ստեփաննոսն Տեր-
Հմաւոնեան. յիշումն ի Հնդկու գնացեալ Ստեփաննին և նորին

յանձնարարական թղթոցն ի վերայ ոմանց ըստ ինդրոյն: Եւ վանն Հաշտարխանու թղթոցն, եթէ տացես Սօլումնին՝ յղէ Հաւատարմաւ: Ողջոյն որդւոյն իւրոյ Սողոմօնին:

Գրեցաւ յամնոյս ի էջն:

1794 թ., յունիս - **Թուղթք ի դանազան քաղաքս**

451 **Ի Պօլիս** - Թուղթ առ մահտեսի Եսայեայն. օրհնութիւն և շնորհակալութիւն վանն Ժ. (10) զարմահարապ ոսկոցն ընդ ուխտաւոր] խօջայ Գաբրիէլին, ի տեղի Ծ. (50) ղուռուշի, որոց Խ. (40) իբր յօգնութիւն ծախուցն Սրբոյ Աթոռոյս և Ժ. (10) ժամուց սրբազան Վեհին:

Միաժամանակ օրհնութեան և շնորհակալութեան նամակներ են ուղարկուել ուխտաւորների միջոցով դրամական նուէրներ կատարած ներքոյիշեալ անձանց՝ ամիրաներ՝ Գրիգոր և Մկրտիչ մահտեսիներին, պարոնայք Ջաքարիային և Խյաշատուրին (Էտրէնէ) (Բ./2), տեղի առաջնորդ Միքայէ վարդապետին. «վանն ԺԲ. (12) մարչիլ աջահամբուրին և ղեկեղեցւոյն իւրեանց նորապէս շինեցելոյն» (Գ./2): Պրոսայի առաջնորդ Պօղոս վարդապետին մխիթարութիւն է յայտնուում «վանն դիպուածոյն» (Դ./2): Շնորհակալական նամակ նոյն քաղաքից Յովհաննէս աղային. «վանն Զ. (6) ղուռուշ տրոցն», որին նոյնպէս մխիթարութիւն ի յայտնուում «վանն այրեցման եկեղեցւոյն իւրեանց» (Ե./2): Ուռուշու նոր նուիրակ Գրիգոր վարդապետին տեղեկացում է, որ Հանգուցեալ գանձապետ Անուշի փոխարէն գործակալ է նշանակուում նրա որդի տիրացու Գրիգորին և ըստ նոր կոնդակի՝ միջոցների առկայութեան դէպքում դրանք պետք է «Հասուցանեն նամ, մինչեւ ցգնալ նուիրակին մերոյ անդամօր» (Զ.): Վերջինիս անունով ուղարկուած է կոնդակ. «վանն Հաստատելոյ ի գործ գանձապետութեան Հանգուցեալ գանձապետ Անուշի որդի տիրացու Գրիգորին» (Է.): Յաջորդիւ ծանուցման նամակ է յղում միեւնոյն անձին, միեւնոյն կոնդակի Հարցով (479ա, Ը.): Օրհնութեան և շնորհակալութեան նամակներ են ուղարկուել նաեւ Թօխաթի Սուրբ Մինաս եկեղեցու գանձապետ մահտեսի Յովակիմին և ուխտաւորների միջոցով նուէրներ ուղարկած անձանց (Թ.): Նամակները գրուել են յունիսի վերջին:

479ա

452* **Ի Թաւրեղ** - Թուղթ առ տէր Յովսէփին, եթէ ահա պարոն Աղալժօն եկն յայդր և տեղոյս զորախտութիւնն ի նմանէ իմասցիս, բայց մեր յայգւոյ խաղողէն Լ. (30) լիտր չամիչ Հոգացեալ յղեսցես ի ժամանակին Հաւատարմաւ: Գր[եցաւ] յամ[նոյս] ի Թ. (9):

1794 թ. յուլիս և **Թուղթք ի Հադիկս**

453* **Ի Բաղդատ** - Թուղթ առ պարոն Ալէքսանն՝ վանն Հանգուցեալ Մարգար աղայի տալեացն և խոստմանցն: Տէ՛ս զմիջակ տետերց 225 Համարն:

454 **Թուղթ առ պարոն Միքայէն Տէր-Մինասեան և առ պարոն Ղուկասն Ալէքսանեան.** մխիթարութիւն վանն Հանգուցեալ Մարգար աղային և պատուէր վանն նորին կտակացն կատարել

բոլորովմբ և զօրինակն կտակագրին յղել, և նորին որդւոցն ինամ տանիլ: **Տէ ս զմեծ տէ[տերց]** 2013 Համարն:

Մարգար աղայի մահուան եւ կտակարարութեան առթիւ նամակ է յղուել նրա կնոջը՝ Կատարինէին եւ զաակներին՝ Ալեւին, Ուսանային եւ Աննային (479ա, Գ.): Պատասխան նամակ «նախանցեալ» նուիրակ Եփրեմ վարդապետին (Դ.): Պարոն Միքայէլ Տէր-Մինասեանին յանձնարարուով է նախորդ նամակները Հասցնել Հասցեատերերին, ինչպէս արինակ՝ պարոն Յովհաննէս Բէթղէշէմեանին (Բասրայ) (Ե.), որին տեղեկացուով է զոյգ ստացականների՝ Պօլիս Համնելու եւ նախկին նուիրակի Բաղդատ Ժամանելու մասին (Զ.):

455 **Ի Խօյ** - Թուղթ առ նուիրակ Սողոմոն պետն ի դարձ թղթոյն և վասն որպիսութեան գործոյն, եթէ լուեալ միամտեցաք: Իսկ վասն Ա. (1) բեռն դահվայի գնոյն (որ է ԴՃ. (400) զուռուչէն Դ. (4) զուռուչ պակաս սաղ դրամ), եթէ Հասուցես պարոն Բաբաջանին և այլևս չառնուցուք: Եւ վասն Հաղբակցուցն, եթէ որովհետև սիրով ինդրեալ են զքեզ, գնասցես և սիրով լիցիս ընդ նոսա: Եւ օր մի յառաջ դիմեսցես ի Սուրբ Աթոռս:

456* Թուղթ առ պարոն Բաբաջանն ի դարձ թղթոյն և վասն դահվայի գնոյն, եթէ ահա գրեցաք նուիրակին Հասուցանել քեզ զդրամն (որ է ԴՃ. (400) զուռուչ պակաս Հին փող), այլևս պիտոյ չէ, մի՛ առնուցուս: Վասն նուիրակի թղթոյն, եթէ Հասուցես առ ինքն, իսկ վասն Բաղդատու պահարանին թղթոց, եթէ յղեսցես ի Բաղդատ առ Եփ[րեմ] պետն և կամ առ պարոն Միքայէլն Տէր-Մինասեան:

Գրեցան յամնոյս ի Ի. (20):

457* **Ի Խօյ** - Թուղթ առ պարոն Բաբայն՝ ծանուցումն վասն ծաղկանց, եթէ տեղս գոյ քանի մի Հօխայ, յայդ կողմունան որպէս ծախովի՝ մեզ գրեսցես, զի գիտասցուք: Ողջոյն Հօրն իւրոյ պարոն Թաղիանոսին և որդւոյն՝ տիրացու Յակոբին:

Գր[եցաւ յամնոյս] ի Ի. (20):

458 **Ի Պօլիս** - Թուղթ ի Պօլիս առ մահտեսի Նիկողայոս աղայն մահտեսի Եղազարեան՝ վասն շամշատեցի |479բ| Նաւասարդ անուն առն (որ գնայր յուխտ ի սուրբն Սաղիմ), եթէ ետ մեզ աստ ԱՃ. (100) զուռուչ, որ յայդր Հրամանաւ մերով ի քէն առցէ: Ուրեմն տուեալ զԱՃ. (100) զուռուչն, առցես ի նմանէ զայս թուղթս իբր զաւղ և վերադարձուցես առ մեզ ի միամտութիւն:

459 Թուղթ Ժողովարարութեան առ Ժողովուրդան Քրիստոսի, որք են ի գանազան քաղաքս և ի գեօղս՝ վասն Նաւասարդ անուն առն Շամշատիւնոյ, որ գնայր յուխտ ի սուրբ Երուսաղէմ:

Գրե[ցան] յամ[նոյս] ի Ի. (20):

460 **Ի ԹԻՖլիզ** - կոնդակի ի ԹԻՖլիզ՝ վաճակմանն ի
Հոգևոր կապանաց Հէքիմաղային և նորին որդի Դաւթին և նո-
րայնոցն ամենից: Տէ՛ս զմեծ տե[տերց] 2015 Համարն:

461 **Թուղթ առ առաջնորդան և քաճանայնն՝** վաճակմանն Հէքիմաղային և որդւոյն և վաճակման տէր Աւետիքի դատերն
եղբոր տալ Ի. (20) թումանն՝ Ժ. (10) ի կողմանէ Սրբոյ Աթոռոյս և
Ժ. (10)՝ ի կողմանէ եկեղեցեացն: Տէ՛ս զմեծ տե[տերց] 2016 Հա-
մարն:

462 **Թուղթ Հայերէն առ Դարեջան թագուհին ի դարձ**
թղթոյն, որ գրեալ էր վաճակման տէր Աւետիսի եղբոր դատերն տալ նամ
զծուխան Հօրեղբոր: Տէ՛ս զմեծ տետերց 2115 Համարն:

463 **Թուղթ տաճկերէն առ Գեօրկին խանն ի դարձ**
թղթոյն՝ վաճակմանն Հէքիմաղային և որդւոյն՝ ընդ մէլիք Հաքարոյին:

464 **Թուղթ տաճկերէն առ Վրաց կաթողիկոսն ի դարձ**
թղթոյն ընդ մէլիք Հաքարոյին՝ վաճակմանն բանադրեցեալ արանցն՝
Հէքիմաղային և որդւոյն:

Առաջնորդ Մարտիրոս վարդապետին ու գործակալ տէր Ղազարին տե-
ղեակ է պաշտօնավարող իշխանամանկների ուղարկման մասին եւ յայտնուում, որ ստա-
ցուած Ծ. (50) լիտր մոմից 2 լիտր պակաս է (կշռում է ԽԸ. [48]): Այնուհետ յիշա-
տակութիւններ կան «վաճակման պատկառի քաճանային Ծիծօյի որդւոյ», «վաճակման Հէքիմ
աղային և որդւոյն՝ ըստ խնդրոյ Գեօրկին խանին և այլոց», «վաճակման տէր Աւետիքի
եղբոր դատերն զաղաչանս», «վաճակման միաբանից, եթէ Խ. (40) թօփ թուշի շալ առեալ
յղեալիք» (Զ.): Միեւնոյն Մարտիրոս առաջնորդին եւ Յովհաննէս վարդապետին
յրուած թղթում տեղեկացուում է Յովհաննէս վարդապետի նամակը ժամանակին
ստանալու, որպիսութիւնն իմանալու եւ այլնի մասին (Է.):

Միութարութեան նամակ Հանգուցեալ Սաճակ վարդապետի եղբայր տիրա-
ցու Ստեփանին (Հաշտարիան) (Ա./2): Գանձանակի կոնդակ Բաղէշի Սուրբ
Գեորգ եկեղեցու թեմին՝ երկու տարուայ ԾԳ. (53) ղուուշ գանձանակադրամը
գանձապետ պարոն Յովհաննէսի միջոցով ուղարկելու Համար (Ա./3): Գանձանակի
կոնդակ՝ ուղղուած Ե. (5) խորան եկեղեցու Հոգևոր դասին՝ մեկ տարուայ ԻԱ. (21)
ղուուշ գանձանակադրամը գանձապետ մաշտեփ Կարապետի միջոցով գանձա-
պետ պարոն Յովհաննէսին յանձնելու եւ վերջինիս եղբոր միջոցով Մայր Աթոռ
ուղարկելու Համար (Բ./3): Այս կապակցութեամբ օրհնութեան նամակ գանձապետ
Մրջոյեց մաշտեփ Կարապետին. «վաճակման ԻԱ. ղուուշ գանձանակադրամին»
(Գ./2): Գանձապետ պարոն Յովհաննէսին տեղեկացուում է իր իսկ եղբոր միջոցով
երկու եկեղեցիների գանձանակադրամի յանձնման մասին, որի առթիւ օրհնու-
թեան կոնդակ է գրուել ուր նշուել է ԾԳ. (53) եւ ԻԱ. (21) ղուուշի նուիրատու-
թիւնների մասին: Պատասխան նամակ է գրուել նաեւ Գրիգոր վարդապետին առ
այն, որ Հարաֆ խանի եւ Իսաֆ աղայի յանձնարարականով գրութիւն կազմուեց:
Նամակ է յղուել նաեւ Մշոյ առաջնորդ Յակոբոս վարդապետին՝ որոշ յանձնարա-

րականներով չնորակալուծին էլ յայտնում «վան Ը. (8) ջիտանոց աջաՀամբու-
րին ընդ եղբորն յղեցելոյ» (Դ):

465* **Թուղթ առ Մանուէլ վարդապետ ոմն, եթէ լսեմք, թէ
ինքնագլուխ նստեալ ես առաջնորդ ի վիճակի մերում, որ չէ օրէն,
ուրեմն ի Հասանիլ թղթոյս ելեալ եկեսցես բազմակնիք թղթով ի
Սուրբ Աթոռս ընդունիլ առաջնորդութիւնդ:**

466* **Ամրաօլու – Թուղթ առ Ամրաօլու նորոգ առաջնորդ
Գրիգոր պետն ի դարձ թղթոյն ընդ տիրացու Յակոբին: Եւ վանն
անցիցն ի կողմանէ ձեռնադրութեան սիրախառն յանդիմանու-
թիւն, եթէ դաստիարակն քո Չաքարիա պետն յայսքան յամն կա-
ռաւարեաց, ընդէ՛ր ոչ յարոյց աղմուկի մէջ ժողովրդոցն և այլն:
Վանն որոյ աշա գրեմքեզ, զի դու յԱմրաօլայ սրբոյ վանիցն և նոյն
թաղի եկեղեցւոյն ես տիրաբար առաջնորդ: Բայց եթէ միւս եկե-
ղեցեաց ժողովուրդքն աղերսանօք ինդրէն ձեռնադրել զոք, առ-
նիցես և եթէ ոչ Հետեւին քոյ և խրոխտանալը՝ անօգուտ է: Վանն
յանձնարարական թղթոցն Շարաֆ խանի և Իսուֆ աղայի, եթէ
աշա գրեալ յղեցաք ըստ ինդրոցն ձերոց: Սուրբ Գեորգ եւ Ե. Խո-
րան եկեղեցեաց գանձանակի արդիւնքն մեզ Հասին: Վանն որոյ և
զօրհնութեան կոնդակնն աշա գրեալ յղեցաք ի միամտութիւն նո-
ցա: Շնորհակալութիւն վանն Գ. (3) Հատ մարի ոսկի աջաՀամբու-
րին ընդ տիրացու Յակոբին: Ողջոյն Հոգեւոր Հօրն իւրոյ Չաքա-
րիա ձերունագարդ վարդապետին:**

Ամրաօլու առաջնորդ Գրիգոր վարդապետի Համար յանձնարարական նա-
մակներ են գրուել Շարաֆ խանին եւ Իսուֆ աղային (480ա, Է-Ը.): Ս. Կարապե-
տի առաջնորդ Յակոբոս վարդապետին յայտնում է վէբիլ Պետրոս վարդապետի
եպիսկոպոս ձեռնադրուելու մասին: Յանձնարարում է սիրալիք լինել Բաղէշի
գանձապետ պարոն Յովհաննէսի Հետ եւ նոյնը ինդրել փաշայից (Թ): Նամակնե-
րը գրուել են յուլիսի 22-ին:

480բ

1794 թ. - **Թուղթք ի Մեծն Պօլիս**

467 **Թուղթ առ Չաքարիա պատրիարքն ի դարձուած
թղթոյն ընդ վէբիլ Պետրոս պետին: Տէ՛ս զմիջակ տե[տերց] 50
Համարն: Առ սա փոստուլայ մի վանն պարոն Մկրտչի կենակցին:**

468 **Թուղթ առ Մեծին Պօլսոյ Չաքարիա պատրիարքն
և իշխանն. ծանուցումն զգալստենէն սարտարի Աղայ ՄաՀմատ
խանի դէպ ի յերկիրս և զվրդովմանցն տեղեկանաց և զլնասուցն
Սրբոյ Աթոռոյս: Տէ՛ս զմեծ տե[տերց] 2116 Համարն:**

Շնորհակալութեան նամակ տիրացու Սարգսին ուղարկած իրերի Համար:
Զուգաձեռն ԱՌ. (1000) ղուտուչ է յղուել Երոսաղէմի նոսրակ Պետրոս պետին, որը
վերցրել էր Ագուլիսի առաջնորդ Թօմաս վարդապետից (480բ, Գ): Վկայական է
տրւում վէբիլ Պետրոս վարդապետին՝ մինչ ձեռնադրուած կվերադառնար (Դ):

Նամակ Բաբայեան մահտեսի Կարապետին՝ վէքիլ Պետրոս վարդապետի եւ քե-
ռորդի պարոն Մկրտչի առնչութեամբ (Ե.): Նամակ Յոհան աղային (Թօխաթ),
ուր տեղեկութիւններ եւ յանձնարարութիւններ են տրուում փոխանցուած գումար-
ների վերաբերեալ (ԳՃ. (300) ղուռուշ): Ծանուցում է սերաստացիների՝ Սուրբ
Աթոռ գալու մասին, միաժամանակ յիշատակուած են Հատկապես գումարի փո-
խանցման Հետ կապուած որոշ մանրամասներ. «մահտեսի Յարութիւն աղայն
Թուղթ էր գրեալ մեզ և ծանուցեալ զհասանիւն առ քեզ ԳՃ. (300) ղուռուշին, վասն
որոյ և մեք ահա զթամասուկն նոցա յղեցաք Հասուցանել նոցա» եւ այլն (Զ.):

469* **յԱմիթ** - Թուղթ առ Ամթայ նուիրակ Դաւիթ պետն,
ի դարձ թղթոյն գրեցելոյն ի Սուրբ Սարգիս եկեղեցին. եւ յիշումն
թղթոցն մերոց առաջնոց: Եւ վասն անցիցն (որ ի Չօխ ղասա-
պայն) միսիթարութիւն, եթէ անցեալն էանց՝ պատճառն ընկալցի
ըստ արարմանց իւրոց ի Տեառնէ: Իսկ վասն որպիսութեան գոր-
ծոյն, եթէ լուեալ միամտեցաք, Տէր յաջողեսցէ օր մի յառաջ դիմել
քոյ ի Սուրբ Աթոռոյս: Չինդրեալ զերեք Հատ զօրհնութեան
Թուղթն ահա գրեալ յղեցաք: Ի սմա ողջոյն գանձապետ մահտեսի
Յակոբին, եթէ Թուղթն ընկալաք, զոր գրեալ էր ի մար[տ] Լ. (30),
բայց պատասխանին յառաջամէ գրեալ եմք, միայն թէ քանի մի
գրեանս էր ինդրեալ, զորս յետոյ գրեալ յղելոց եմք ի Կարին Հա-
սանիւ առ ինքն, անհոգ լիցի:

Օրհնութեան եւ շնորհակալութեան նամակ՝ Մատին առաքելի վանքի
առաջնորդ Բաղդասար վարդապետին. «վասն Հարազատութեանն եւ շնորհակա-
լութիւն վասն Ժ. (10) ոսկի աջաՀամբօրին» (480բ, Լ.): Հնորհակալութիւն է
յայտնուում ուղարկած 10 ոսկի աջաՀամբօրի Համար: Օրհնութեան նամակներ
նուիրատու զօխեցի մահտեսի Պօղոսին. «սակս Լ. (30) ղուռուշ խոտամանց»
(Թ.), չբաւմանցի մահտեսի Սողոմոնին ու նրա որդի Դաւիթին. «վասն լառու-
թեանցն, որ առ նուիրակ Դաւիթ պետն» (Ժ.): Վերոյիշեալ նամակների ուղարկման
մասին տեղեակ է պահուում Կարինի վէքիլ պարոն Հայրապետին, որին տրուած են
տնտեսական բնոյթի մի շարք յանձնարարութիւններ, այդ թւում. «վասն գրեանցն
Պօլոյ պատրիարքի և Իզմիրու առաջնորդի, զորս յղեալ էր ի Պօլիս առ պարոն
Եսային», «վասն վէքիլ պարոն Գասպարի ԳՃԾ. (350) ղուռուշին», «վասն Ամթայ
նուիրակի թղթոյ պատասխանւոյն», «վասն ԾԷ. (57) օզմայ թղթոցն... եթէ Հասին
մեզ ամբողջապես (որ էր Բ. (2) բեռն) և զգինսն և զխարճն գրեցաք ի դաւթարդ»,
«վասն տալեացն Մշու Ս. Յովհաննիսի վանից առաջնորդ Աստուածատուր պետի»,
«վասն Կ. (60) Հատ Հարիւր փարանոցին զրմցի ուխտաւոր պարոն Կարապետի»,
«վասն Երնջակու միաբան Անանիա և Ժողովարար Գասպար պետացն... առցես
գտալիքն զԳՃԾ. (350) ղուռուշն ի նմանէ, բայց Հին դրամ պարտին տալ մեզ...»,
ծանուցում է Նոր Նախիջևանի ուխտավորների Մայր Աթոռ գալու մասին, որոնք
«Թողեալ են առ քեզ Ա. (1) ղովթիով մում...», «վասն ԱՌ. (1000) ղուռուշի փօլիցային
տիրացու Գեորգի, եթէ գրեալ էիր, թէ քառասուն ղուռուշ սառաֆ ոնի...»: Վեր-
ջում կարգադրում է. «ամանաթ շինել Հաատարիմ կարաւանաւ յղեսցես ի Բայա-
դիտ...» (480բ-1ա, ԺԱ.):

470 Կոնդակ ժողովարարութեան, զոր գրեալ էտուք Հապաշ Գէորգ անուն սարկաւագին, որ եկեալ էր ի Սուրբ Աթոռս և վերադառնայր: Չոր տեսցես ի միջակ տե[տերց] 140 Համարն:

Գրեցաւ յամնոյս ի Դ. (4)²³:

471 1794 թ. 3 օգոստոսի - Թուղթ առ Մեծին Պօլսոյ պատրիարգ Չաքարիա վարդապետն, ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էր ընդ վէքիլին իւրոյ՝ կեսարացի Պետրոս վարդապետին, ձեռնադրել զնա եպիսկոպոս:

Յորմէ ճշմարիտ սիրով և կարօտիւ...

Չի թուղթ յարգութեան քո մայիսի ամնոյ Իթ. (29) գրեցեալն էհաս առ մեզ ի սկիզբն յուլիսի ձեռամբ Հոգևոր որդւոյն քո և մերոյ՝ Հաւատարիմ վէքիլ Պետրոս Համեստաբարոյ վարդապետին: Որով նախապէս իմացեալ զողջունէ պատուական անձինդ և զանխարդախ սիրոյդ Հաստատութենէ ստացաք զառատ մխիթարութիւն ի վերայ նեղսակրութեանց մերոց, և ուրախ եղաք ուրախութեամբ մեծաւ ի Տէր: Եւ երկրորդ՝ ծանեաք զխնդիրն բարի, որ յաղագս Պետրոս զգաստամիտ վարդապետին ձեռնադրվել զնա յեպիսկոպոս ըստ արժանաւորութեանն: Ուստի Հայրական սիրով առ ընկալեաք զնա ի գուժ և ի խնամն իբրև զորդի սիրելի, ամենևին անզանազան գիտելով զքոյս ի մերոց:

Եւ թեպէտ ի քանիս աւուրս անձեռնհաս գտացաք յաղագս սաստիկ վրդովման և շփոթութեան երկրիս և վասն նորակերպ դառնութեանց ի վերայ մեր Հասելոց, սակայն ի փոքր մի Հանդարտիլ մրբկացն, ի յերկրորդում կիւրակէին զկնի Վարդավառին յաջողմամբ շնորհաբաշխ ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ ձեռնադրեցաք զնա եպիսկոպոս, և յաւուրս ինչ ևս պաշեալ ըստ յօժարութեանն իւրոյ, ապա այժմ սիրով և խաղաղութեամբ ուղևորեցաք Հաւատարիմ ուղեկցօք ի Բայազիտ, անտի անվտանգ ժամանել Աստուծով յայդր: Որում շնորհաւոր եղիցի սուրբ աստիճան իւր, և բարեաւ վայելեսցէ ի սուրբ և յանարատ վարս՝ ի Հաճոյս բարեսէր կամաց Տեառն:

Եւ նոյն ամենազօրն Տէր յաւելիցէ զաւուրս պատուականի եղբօրդ՝ յաւելուլ ևս զբազում որդիս ի փառս շնորհաց ի պէտս սպասաւորութեան սրբոյ եկեղեցւոյ ի բարի յիշատակս յարգութեանդ և ի Հոգևոր մխիթարութիւն ազգիս մերոյ խղճալոյ:

Իսկ ի յունիս ԺԹ. (19), որ թուղթ գրեցաք առ յարգութիւնդ իբր ի փոխադարձ առաջնոյ թղթոյդ, և կարի նեղեալ և անհանգիստ գոլով վասն սաստիկ վրդովմանցն, չկարացաք ամենայն գրուածոցն զպատասխանի առնել, խոստանալով զի յետոյ գրելոց

123 481բ էջին միայն հետևյալն է. «Թուղթն վատ է՝ գիր չէ վերառնում, ես ի՞նչ անեմ: Աստուած տուողին խեռ տայ»:

եմք: Այժմ ահա ի ժամ գտանելու մեր, փոյթ կալաք գրել և Հետ-
ևաբար ունիմք ծանուցանել նաև զաղէտից երկրիս և զվշտալի
կրից մերոց:

Եւ նախ, զի վասն Ուռումէլու նուիրակ Գրիգոր վարդապե-
տին և Իզմիրու առաջնորդ Դանիէլ վարդապետին սիրով խոս-
տացեալ էիր օգնական և օժանդակ լինիլ նոցա յամենայն Հարկա-
ւորութիւնս գործոց իւրեանց, և Գրիգոր վարդապետն գրեալ էր
մեզ, թէ որպէս մեծաւ սիրով և ինամով ընկալեալ էիր զինքն և
շահեալ ըստ ամենայնի և յուսադրութեամբ ուղևորեալ ի վիճակն:
Առ այնոսիկ լիապէս շտրհակալ եմք զբարեշտրհ եղբօրեդ, որում
ընդ ամենայն լաւութեանցդ և օգտարարութեանցդ ամենաբարե-
րարն Աստուած լիցի փոխաւհատոյց առաւելապէս:

Եւ յաղագս Ախլցխայու Ֆերմանին, զոր առաքեալ էիր, գո-
հունակ եմք, բայց տակաւին մերս ցաւօքն պաշարեալ, չունիմք
ձեռնհասութիւն, այլ խորհիմք, զի դէպ ի յաշունն պատե՛՛ վարդա-
պետի միով առաքիցեմք, որպէս և յառաջ գրեալ եմք: ՉՍուրբ
Կարապետի վանից իրացն աղագաւ Հոգացողութենէդ ևս, որ
գրեալ էիր, զՅակոբ Հանճարունակ վարդապետն առաքելդ յա-
ռաջնորդութիւն և զՅովաննէս վարդապետն վէրլի՛նմա, և զպար-
տուց Հատուցումն այնպէս տնօրինելդ, և զստահական յաքսորս
վարելդ և դարձեալ արտահանելդ, զամենըն իմացեալ յոյժ բարուք
վարկաք, և սրտադիւր եղաք: Տացէ Տէր, զի անփոփոխ կացցեն
|26բ| կարգադրութիւնքն, և սրբոյ տանն Հաստատութիւն և պայ-
ծառութիւն լիցի:

Եւ ի մէջ առ Յակոբ վարդապետն որչափ կարելի է շահելն
և մխիթարելն, ոչ եմք ինայելոց, որպէս և ի գալոյն Հետէ ի Կարին
և ի սուրբ վանքն մինչև ցայժմ երթևեկութիւն թղթոց և սէր ցու-
ցանելն մեր անպակաս է:

Այլև զդոյնոյ տէրութեան դեսպանի ի Հիւսիս գնալն և զՀիւ-
սիսայնոյն դեսպանի յայդր գալն, և խաղաղութիւն լինիլն ընդ մէջ
երկուցն տէրութեանց իմացեալ գոհացաք զԱստուծոյ և Հայցեմք
լինիլ խաղաղութեանն ի շինութիւն աշխարհաց, և յանդորրութիւն
բազմավշտակիր ազգի մերոյ:

Ծանեաք ևս ի թղթոյդ և ի նուիրակ վարդապետէն զարապ-
կերցի մահտեսի Գաբրիէլի յամառիլն ի յանիրաւ վէճն իւր, և
զպատժիլն ի դատողութենէ ձերմէ իրաւամբ, և ապա զղջալն և
զերծանիլն ի պատժոյն, և լուեալ գալն այժմ ի յանկարգ խօսիցն,
որոյ աղագաւ ևս յոյժ շտրհակալ եմք զցաւակից եղբայրութենէ
քումմէ:

Դարձեալ վասն Հիւանդանոցին շինութեան ի այցելութիւն
անտերունջ Հիւանդաց և աղքատաց, որ ծանուցեալ էիր, ուրախու-
թիւն մեծ եղև մեզ, ըստ որում կարի իմն Հաճելի է Աստուծոյ, և

մշտնջենաւոր առիթ յիշատակի յարգելոյդ, և նշան բարեկարգութեան օրհնեալ ազգի մերոյ:

Իսկ ընդ ուրախալի Համբաւոյն նորոգման եկեղեցեաց, որ զՊրուսայու եկեղեցոյ տրտմական անցան ի դժնայ սրիկայիցն ծանուցեալ էիր, յոյժ տրտմեցաք և ցաւեցաք: Այլ զի մեծամեծք տեղոյն և քաղաքիդ քաղցրութեամբ լսեն ձեզ, և որպէս Պետրոս վարդապետն պատմեաց, կամեցեալ են վրէժխնդրութիւն առնել յանդգնելոց, յուսամք, որ Աստուծով կրկին շինեսցի եկեղեցին այն ի միսիթարութիւն մերայնոցն, որք անդ, և ակն ունիմք լսել զլուր շինութեանն:

Եկեսցուք այսուհետև ի պատմութիւնս վշտալի անցից երկրիս և դառն կրից մերոց: Չոր ինչ մինչև ի յունիսի ԺԹ. (19) անցք էին, յայնժամ գրեցաք ի կարծոյ զգալն սարտարին ի Թարուէզ ևս սպառնալն առ սոսա, և վրդովիլն երկրիս, և սոցա կրկին մարդ և թուղթ առաքելն առ Վրացին և այլն: Իսկ ապա Վրացին յանդիմանեալ էր զնոսա վասն դատարկ գնալոյն, ոչ Հաւատալով խոստմանցն վասն բազմիցս ստեղոյն սոցա պայմանս իւրեանց, և ասացեալ էր՝ դուք զտալիսն ձեր տուք և ես թշնամեացն ձերոց պատասխանի տաց: Սոքա ևս զդրամն ինչ յղեցին, և խոստացան զայլն ևս յետոյ տալ և ինդրեցին առաքել զմի որ յիւրոցն քանի Հարիւրովք յԵրևան՝ ի լուր թշնամեացն:

Բայց յաւուրնս յայնոսիկ սարտարն յառաջ եկն ի Նախշուան՝ Հանդերձ Խոյայ իշխողան և յորդորմամբն նորին իսկ: Չոր լուեալ սոցա առաւել ևս վրդովեցին զերկիրս, զՇարուրայ և զԳառնուոյ բնակիչսն վարելով ի գլուխ Սեաւ ջրոյն մերձ ի ճանապարհն Ղարսայ, և զբազումս |27ա| ի բերդն տանելով և զամենայն առ պատրաստ գտանեցեալ ցորեանս և զյարդս ի ներքս ժողովելով և այլն: Յայնժամ սարտարն մարդ յղեաց առ խանն Երևանու և կրկին պատանդս խնդրեաց՝ զեղբայրն և զայլս ոմանս: Եւ սա տակաւին ոչ պատասխանեալ նմա, զքանի մարդիկ յղեաց մի զինի միոյ առ վրացիսն, թէ կամ մեզ օգնութիւն արա և զօրս յղեա, և մեք զխոստացեալսն մեր տացուք, կամ զմի պատասխանի տուր և այլն:

Իսկ նա զմի ոմն էր յղեալ թղթովք, թէ նա իմ խորհրդեամբն է եկեալ անդ, և ես ոչ ունիմ պատերազմիլ ընդ նմա, այլ դուք զՀարկն իմ լրիւ տուք, ես զնա բանիւ դարձուցիք: Եւ որչափ ևս յետոյ գրեցին սոքա և մարդ յղեցին, նա զիւր առնելիքն յառաջադրեաց: Բայց սոքա կարծելով, թէ մի գուցէ տայցեմք զամենայն և այլևս ոչ օգնիցե, Հատին զոյս իւրեանց ի Վրացոյն, և կամաւորեցան զպատանդս յղել առ սարտարն՝ Հանդերձ ընծայիւք և այլ տրովք յուղարկել առ շահն: Եւ յայնպիսի յուսաՀատ կատարութեան իւրեանց սկսան պահանջմունս առնել յոմանց, զորոց կարծէին և մանաւանդ ատ ի մէնջ զորչափ ինչ կամեցան, թող ի մարտ ամսոյն մինչև ցայն կէտ առեալսն: Եւ որչափ ջանացաք, թէ բողո-

քանօք, թէ ընդդիմական խօսիւք պակասեցուցանել ինչ ի ինդրե-
լեացն, չեղև Հնար, և մինչ տեսաք, թէ ռազիլութիւն պարտէր յա-
ռաջանալ, և քօղն ամոթօյ իւրեանց իսպառ վերանալ, ըստ մեծի
մասին ի մէնջ և ըստ փոքու մասին իբր ի չարշքէն մերմէ և յԵր-
ևանու վաճառականացն փոխ առեալ՝ լրացուցաք ցաւօք և Հեծու-
թեամբ:

Չորս ժողովեալ խելացի խանն մեր զմին յեղբարց իւրոց և
գրանիս ևս ի նշանաւոր անձանց երկրիս ընդ շեխալամին յղեաց առ
սարտարն ի Նախչուան, որ զպատանդան յղեսցէ առ շահն, և ինքն
դարձցի ի Թարվէզ: Եւ նա թէպէտ դարձեալ է, սակայն ևս զնիւթ
խռովութեան պատրաստելով ասացեալ է, թէ շահի զառաջին
հրամանն, որ ԵՃ. (500) մարդ ինդրեաց ի ձէնջ, պարտիք կատա-
րել և զնորին յանուանէ ինդրեալ անձինսն պարտիք տալ ի պա-
տանդս, և զայս ևս ըստ այսմ պահանջմունս:

Ի վերայ այսոցիկ և մեծ կասկած գոյ վասն շահին յայս կոյս
դիմելոյ, եթէ գլուխն բացցի ի շփոթից այսմ կողմանն, զոր մի յա-
ջողեսցէ Տէր:

Եւ Վրացին ևս միշտ գոտն ի գետին Հարկանէ զխուժադուժ
գումարս զօրաց ցուցանելով և զհարկսն պահանջելով: Վասն որոյ
կամք ըստ ամենայնի տարակուսեալ և նեղեալ ի ցաւս և ի Հեծու-
թինս անցելոցն և ի կասկածանս ապագայ վտանգից, և որպէս
թէ քեալ՝ սրտի և ձեռօք, չառնլով և զդադարումս ի կեղեքչաց:
Ուստի, որ երկու ամօք յառաջ Հոգացաք զնոր նուիրակ առաքել ի
յօրհնեալ մայրաքաղաքդ, այժմ տարի մի անցանի ի վերայ դարձ-
ման գործավճար նուիրակին, և դեռ |27բ| ոչ յաջողի մեզ զնորն
առաքել, նոյնպէս և յետանան և այլ վիճակացն նուիրակք: Յու-
սամք, թէ դադար ինչ առցեն փոթորիկքս և կարասցուք դէպ ի
յաշունն զնուիրակն տեղւոյդ առաքել, որ այն ևս ոչ սակաւ Հոգ է
սրտի մերում:

Բայց այժմ զայսցանէ անցից մերոց և զհանապազորդ կրիցն
իսկ և զկասիածանաց ապառնի դառնութեանց Հարկաւոր վար-
կաք Համառօտիւ իմն ծանուցանել յարգութեանդ և օրհնեալ իշ-
խողացն ի միասին Հասարակական թղթով, զի և դոցա անգամ մի
իմացեալ զայսպիսի կիրս մեր ցաւակցաբար Հոգայցէք վասն Սրբոյ
Աթոռոյս և մերս տարանախտութեան, և զբարուք խորհուրդ իմն
իբրև զդեղ վիրաց վշտացս մերոց մատուցանիցէք մեզ ի մխիթա-
րութիւն և յուսաւորութիւն:

Եւ զայլ որպիսութիւնս Սրբոյ Աթոռոյս և մեր և զհարուստն
Հակիրճ գրեցելոցս ի խոհական գրաբերէդ ոճիս իմանալ: Ողջ լեր
ի Տէր փառազուարճ կենօք և յաջողութեամբ ի Հրճուանս մեր:

Գրեցաւ ի ՌՄԽԳ. (1794) Թուոջս և յօգոստոսի Գ. (3) ի Սուրբ Աթոռս Էջմիածին¹²⁴:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 25բ-7բ

472 Փոստուկայ առ պատրիարզն, ի պատասխանի երկրորդ թղթոյն, որ ընդ պարոն Մկրտչին վասն ի յԱգուլիս թողեալ կնոջն նորա:

Դարձեալ գիտասցէ յարգելի եղբայրութիւնդ, զի զմիւս թուղթդ ևս, զոր ընդ մահտեսի Կարապետի քեռորդի պարոն Մկրտչին էիր գրեալ ընկալաք և ծանկաք զբանն, որ յաղագս ամուսնոյ նորին ի յերկրէն իւրեանց բերել տալոյ: Յիրաւի բարուք է գրեալդ և մեզ ընկալեալ և ընդունելի, թէ ջանասիրութիւնն ի դեռևս մի լիցի: Բայց բանն այնպէս կապ է առեալ որ լուծմանն Հսար կարի դժուարին թուի: Քանզի թող զյայնժամ Նախշուանու իշխողին բաց ասելն և կնոջ յամուսնութիւնն, այժմ խանն ևս անդ չէ, զի կրկին գիր և զրոյց առաքել լինիցէր առ նա, այլ գնացեալ է շահ կոչեցեալն ի ԹէՀրան վասն Հրամանի նորին: Որոյ և զկինն (որ է քոյր Երևանու խանին), այժմ սարտարն ի Նախշուանու Հանեալ տարաւ ընդ իւրն՝ յղել ի ԹէՀրան:

Եւ գործակալք խանին ևս ոչ ստուգեմք, թէ Համարձակիցին արձակել զՀարան զայն, զոր խանն ոչ էտ: Թուվմաս վարդապետն ևս ոչ կարէ ի մէջ մտանել բանին վասն վտանգի վանիցն: Վասն որոյ ընդ երկար խորհեալ և խօսեցեալ մեր, վերջապէս պարոն Մկրտիչն գրեաց ի Հուշի առ եղբայրն, և եկն Հանդերձ փեսայիւն: Ընդ որոց ևս շատ խօսեցեալ ի վեր և ի վայր, վախճանական բանն այս եղև, որ նոքա յայտնապէս երթիցեն յԱգուլիս առ Հարան իւրեանց և խօսեսցին, և թէ յօժարիցի նա ի գալ, ապա ի Նախշուան կառավարչաց երկրին ասասցեն և դրամ խոստասցին:

Եւ մէք գրեցաք Թուվմաս վարդապետին, որ մինչ նոքա խնդրեսցեն զխոստացեալ զդրամն, նա սանատ տացէ: Եւ երբ կինն աստ Հասանիցի, զդրամն յղեսցուք վճարել նոցա և զսանատն յետս առնուլ: Ահա յետ Գ. (3) առուրց Մկրտչի եղբայրն և փեսայն

¹²⁴ ՄՄ Հ^մ 2882 ձեռագիրը բովանդակում է Հակոբ Շամախեցի, Սիմեոն Երևանցի և Դուկաս Կարնեցի կաթողիկոսների 1759-1798 թթ. ձեռնագրությունների ժամանակագրությունը. այն գիտական շրջանառության մեջ է դրել Մաշտոցյան Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանը: Դուկաս Կարնեցու 1794 թ. ձեռնագրությունների ցանկում հիշատակված է նաև Պետրոս վարդապետ Կեսարացու անունը, այսպես. «Ի ՌՄԽԳ. (1794) քոռոջ. քառասուն և ութերորդ՝ ձեռնագրեաց եպիսկոպոս զձեռնաստուն աշակերտն Զաֆարիա պատրիարզին Պօլսոյ՝ զվեհի Պետրոս վարդապետն Կեսարացի, ի խնդրոյ նորին, ի յուլիսի ԻԳ. (23), յերկրորդ կիրակելին զկնի Վարդապետին» (Գ. Տեր-Վարդանեան (ստորագրված՝ Գևորգ Հունանյան), ժամանակագրություն ձեռնագրութեանց (1759-1798), «Էջմիածին», 1980, Ժ., էջ 51):

Ներկայ՝ 471-րդ վավերագիրն ամբողջությամբ հրատարակված է Գյուտ ավ. ֆհն. Աղանյանցի կազմած «Գիվան»-ում (ԳՀՊ, գիրք Գ., սյուն 634-639):

գնալոց Էն և Մկրտիչն կայ աստ: Երբ դառնայցեն նորա, զեղեալն գրելոց եմք ընդ Մկրտչին:

Այժմ այսքան, զոր Պետրոս վարդապետն ևս պատմելոց է երկարապես: Ողջ էր Տերամբ:

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 27բ

473 **1794 թ. (օգոստոս) - Թուղթի Ջմիւռնիա առ պարոն Առաքելն Սաւալանեան, ի պատասխանի թղթոյն նորա, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն խոստացեալ Հոգեբաժնին, զոր կամէր տալ¹²⁵:**

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 28աբ

474 **1794 թ. օգոստոս - Թուղթ առ Ապրոյեան Առաքել աղայն յիգմիր, ի պատասխանի թղթոյն¹²⁶:**

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 28աբ

475 **1794 թ. օգոստոս - Թուղթի Շուշի առ վախճանեալ մէլիք Շահնազարի որդի մէլիք Զումշոտն, մխիթարութիւն վասն մահուն Հօրն, և շնորհակալութիւն յաջորդելոյն իւրոյ զիշխանութիւն նորին, և յանձնարարութիւն վասն ներայնոց անդ պատահելոց:**

Յորմէ ժամանեսցէ թուղթ...

Եւ ընդ աստուածային ամենառատ օրհնութեան սիրառաք նամակիս, գիտասջիր ազնիւ սիրելիդ մեր և Հարազատ զաւակ մեծի Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի: Զի լուեալ մեր յանցելումս ամի գտրտմական լուր մահուան քաջատոհմ և իշխանափառ Հօրն քո և սիրելոյն մերոյ, խոհական Հոգնաշնանճար և մեծաշուք մէլիք Շահնազարին, տրտմեցաք և ափսոսեցաք ոչ սակաւ, ըստ այնմ զի երևելի և անուանի և նշանաւոր այր էր ի կողմանսդ յազգի մերում, իննամատար բազմաց և պիտանի Հասարակաց առ կառավարութիւնս աշխարհի, և Սրբոյ Աթոռոյս օգտակամ, որ ևս ուխտեալ էր գալ ևս յերկրպագութիւն: (Թէպէտ և չյաջողեցաւ վասն խառնակութեանց երկրացս, և զբազմանց իւրոց): Ուստի յաղագս պակասելոյն նորա ի միջոյ տրտմութիւն մեծ եղև մեզ: Այլ զի անդարձ վճիռ է յԱրարչէն ի վերայ բնութեանս մարդկայնոյ դառնալ ի Հող, ուստի առաւ և առաջի կայ երթալ զնոյն ճանապարհ: Առ որ ասէ երանելի Յօբ, թէ մահ մարդոյ Հանգիստ է, զի փակեաց զնովա

¹²⁵ Զմյուռնիայի պարոն Առաքել Սավալանյանին հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՉՊ, գիրք Դ., սյուն 639:

¹²⁶ Իգմիրի Առաքել աղա Ապրոյանին հղված պատասխան նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՉՊ, գիրք Դ., սյուն 639:

Աստուած, զի՞նչ ունեւաք ասել առ վախճան կենաց Հանգուցելոյն այնմիկ, բայց թէ փառս տալ բարեսէր կամացն Աստուծոյ, և վասն Հոգւոյ նորին զողորմութիւն և զայցելութիւն ինդրել, և վասն յետամնացիցդ զմիտարութիւն:

Իսկ ի վերայ այնմ տրտմականի լրոյ՝ Հնչեցաւ յականջս մեր և ուրախական Համբաւ յաջորդելոյ զպատիւ և զիշխանութիւն մեծանուն Հօրն քո՝ Հարազատ որդւոյդ նորին, ընդ որ յոյժ ուրախացաք և գոհացաք զԱստուծոյ: Ուստի և կամեաք յայնժամ գրել առ սիրելիդ զԹուղթ միտարութեան վասն մահուան Հօրն քո Հանգուցելոյ, և ուրախակցութեան վասն յաջորդելոյդ զտեղի նորին:

Սակայն վասն յոգնաջան զբաղմանց և պեսպէս Հոգոց ի վերայ Հասերոց ի դառնութեանց բազմավիշտ ժամանակիս, ոչ յաջողեցաւ մինչև ցարդ: Իսկ այժմ Հոգւոր որդին մեր՝ նուիրակն Նախչուանու և Ղափանու, Յովաննէս խոհեմամիտ վարդապետն, որ ըստ Հրամանի մերում եկեալ էր յաստուածախնամ դղեակդ Շուշի վասն գանձանակացն սրբոյ գաշիս, գրեալ էր մեզ զսիրոժալուր Համբաւ քո, թէ զիարդ նախանձաւոր ես բարեպաշտութեան և օրհնեալ ժողովրդոցն մերայնոց ևս զբարելաւութիւնս ցուցանես, որով և նոքա առ Հասարակ գոհունակ են զքէն:

Վասն որոյ և մէք սրտադիւր եղեալ շնորհակալեցաք զսիրելւոյդ և փոյթ յանձին կալաք գրել առ ազնուութիւն քո զայս թուղթ օրհնածիր միտարական և շնորհաւորական: Որով ասեմք ամենաբարերարն Աստուած լիցի Հանգուցիչ Հոգւոյ մեծահամբաւ Հօրն քո՝ մէլիք Հասնազարին, և արարչական գթութեամբ իւր ջրելով զմարդկօրէն յանցանս նորա, արժանաւորեսցէ զնա անանց կենացն զուարճութեանց: Եւ զքեզ միտարեսցէ և ողջ պահեսցէ՝ Հանդերձ ամենայն յետամնացիւք նորին: Մանաւանդ և զնորապերճ պատիւդ մէլիքութեան շնորհաւոր արասցէ՝ պարգևելով քեզ զառաւել ևս խոհեմութիւն և Հանճար և իմաստութիւն, առ ի բարւոք կառավարել զամենայն ընդ ձեռամբ քո եղեալն, և խաղաղութեամբ վայելել զիշխանութիւնդ, և միշտ բարեհամբաւութեամբ քո ուրախ առնել զմեզ:

Արդ, պատուիրեմք ազնուամեծար սիրելւոյդ մերոյ, զի կատարեալ բարեպաշտութեամբ և երկիւղածութեամբ կացցես առ Աստուած և զքրիստոնէական փրկաւետ կոչումնդ ջանասցես ամենատեսակ բարեգործութեամբք բարգաւաճ առնել, Հաստատն լիցիս ի կրօնս ականդութեանց սրբոյ եկեղեցւոյ ունիցիս զգուլթ և զքաղցրութիւն առ ընտանիս Հաւատոյ: Եւ ջերմեռանդ լիցիս ի սէր լուսածնի մօրս քո սրբոյ գաշիս ընդհանրականի և Հոգւոր Հայրութիւն մերոյ, և ի մէնջ յայդր Հանդիպելոց վարդապետաց ընդունելութիւն և մարդասիրութիւն ցուցցես ի պատիւ մեծի Աթոռոյս և մեր, ոչ և ոչ փոքր յարգանք լինի քեզ, և ըստ ամենայնի Հարազատ

որդիաբար վարելով առ Սուրբ Աթոռս և առ մեզ, երբեմն երբեմն սիրաշահ և որպիսայայտ թղթովքո միսիթարեսցես զմեզ:

Եւ այսպէս Աստուածաճաճոյ վարուք և բարելաուլթեամբք ստասցիս զանոն բարի, և գտցիս պատուական առաջի Աստուծոյ և մարդկան: Որովք և ընկալցիս վարձս բարիս ի Տէառնէ, զչնորՀս ի Սրբոյ Աթոռոյս և զօրՀնուլթիւնս ի մէջ:

Ողջ լեր ի Տէր: Գրեցաւ ի ՌՄԽԳ. (1794) թուոջս և ... յօ-գոստոսի, ի լուսակազմ Աթոռս Սուրբ Էջմիածին¹²⁷:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 29բ-30ա

482ա

476 **յԱզուլիս** - թուղթ առ թօմայ առաքելոյ սրբոյ վանից առաջնորդ թօմաս պետն՝ վասն պարոն Մկրտչի կնոջն ընդ Հաւատարիմ փայելե խաչատուրին (բայց թղթոյս գրուածքն փոխեցան յայլ միտ ի վերայ կտոր թղթոյ): Տէ ս զմիջակ տե[տերց] 229 Համար:

Գր[եցաւ] յամ[սոյս] ի Ժ. (10):

477* **Ի Թարեզ** - թուղթ առ տեր Յովսէփ քահանայն, ի դարձ թղթոյն վասն ջուղայեցուցն, եթէ վերատին ինդրեալ են ի մէջ նուիրակ, իցէ թէ յաշնանն յղիցեմք զմի եպիսկոպոս (Հովիւ նոցա) և ձեռնՀաս չեղաք ծանուցանել նոցա զմիտս մեր, ուրեմն՝ ծանուցես դու, զի միամիտ լիցիս: Եւ ծանուցումս զՄարտիրոս պետէն, եթէ պատրաստեցաք յայնժամ յղել առ սարտարն և անտի գնալ առ ջուղայեցիսն և ոչ եղել վասն այնր և վերիլ Գրիգոր պետն յղեցաք առ սարտարն: Եւ վասն Սողոմոն պետի արարմանցն (որ առ ինքն) միսիթարուլթիւն և յուսագրուլթիւն, եթէ մերն ես, մեք զբեզ ի վաղուց ճանաչեմք, գոլ Հարազատ որդի Սրբոյ Աթոռոյս,

¹²⁷ Շուշիի մելիք Շահնագարի որդի մելիք Ջամշուտին՝ հոր մահվան առթիվ հղված մխիթարութեան նամակի համատոագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 639-640:

Վարանդայի մելիքության նստոցը Արցախի Ավետարանոց կամ Չանախչի գյուղն էր, որտեղ էլ դեռևս XVII դարավերջին հաստատվել է Շահնագարյանների տոհմը: Տոհմի նշանավոր ներկայացուցիչներից են վավերագրում հիշատակված հայր և որդի մելիք Շահնագարն ու մելիք Ջամշուտը. նրանք թաղված են գյուղի մելիքական գերեզմանատանը: Ս. Էջմիածնի միաբան, տեղագիր Մակար եպս. Բարխուդարյանը ժամանակին տեսել և ընթրօրինակել է Մելիք-ժառանգների հանգստարանում գտնվող տապանագրերը (**Մակար եպս. Բարխուտարեանց**, Արցախ, Երևան, 1999, էջ 210-211), իսկ նախորդ դարի 60-ական թթ. վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանն արձանագրել է դրանց բացակայությունը և վիմագրության համապատասխան «Իրվան»-ում տապանագրերը ներկայացրել ըստ Մակար Բարխուդարյանցի և Երվանդ Լալայանի ընթրօրինակությունների: Քննվող վավերագիրը գրվել է 1794 թ. օգոստոսին, մինչդեռ, ըստ չափածո տապանագրի, մելիք Ջամշուտի հայր մելիք Շահնագարը կյանքից հեռացել է 1791 թ. «Այս է տապան մելիք Շահնագարին, որ է որդի մելիք Յիսակինին, Արցախ գաւառաց իշխանին, Վարանդու տիրապետողին, սա էր հայր մելիք Ջամշուտին, ըստ Ռուսաց պալովմնիկին, ազնիւ ոմն Հայոց ազգին, արի եւ քաջ գորավարին, ինդրեմ առնել զայս արժանին, միոյ բերան հայր մեղային, ՌՄԽ. (1791) թվին» (ԴՀՎ, պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 150, արձ. 510):

Հաջորդիվ մելիք Շահնագարի որդի և նամակի հասցեատեր մելիք Ջամշուտի տապանագիրն է, որը մահացել է 1812 թ. ապրիլի 25-ին (նշվ. աշխ., արձ. 511):

միամիտ լ՛ք ը, որովհետև ինքն գալոց է ի Սուրբ Աթոռս ի մօտակայ ասուրքս, վասն քոյ բան ինչ ոչ գրեցաք նմա, ի գալն ի Սուրբ Աթոռս, յանդիմանելոց եմք: Ուզումչի գեղջ ժողովուրդքն ևս էին գրեալ զնմանէ զբանս գանգատանաց, ահա նոցա ևս օրհնութեան և միսիթարութեան թուղթ գրեցաք և յղեցաք առ քեզ Հասուցանել նոցա ի միամտութիւն: Յիշումն մերոյ, որ առ ինքն ընդ պարոն Աղալոյին՝ վասն երեսուն լիտր չամչին, որ Հոգացեալ ի մեր այգ-տոյն, յղեսցէ մեզ ընդ պարոն Աղալոյին:

478* **Թուղթ** ի վերայ Ուզումչի գեղջ ժողովուրդեանն ի դարձ թղթոյն նոցա, զոր գրեալ էին զնուիրակ Սողոմօն պետէն, եթէ այսպէս և այնպէս արար ընդ մեզ և այլն, որոց օրհնութիւն և միսիթարութիւն և թէ արձակեալ էք ի Հոգևոր կապանացդ:

479* **Ի Խօյ** – Թուղթ առ պարոն Բաբաջանն. յիշումն թղթոյն մերոյ յառաջքան զայս յղեցելոյն: Եւ ծանուցումն զպահարանեալ թղթոյն, եթէ Հաւատարմաւ յղեսցես ի Թաւրէզ առ տէր Յովսէփն: Եւ նուիրակէն, եթէ ուր լինիլն գրեսցես:

Գրեցան յամսոյս ի ԺԴ. (14):

480* **Ի Հուպանք** – Թուղթ առ Վանական պետն և առ մէլիք Սարգիսն ի դարձ թղթոյն նոցա և ի շնորհակալութիւն օրհնութեամբ վասն Ե. (5) Հատ մատաղացուացն յղեցելոցն ի Սուրբ Աթոռս ըստ Հաւատարմին իւրեանց պարոն Յարութիւնին: Միսիթարութիւն վասն տկարութեանն և նեղսակրութեանն: Եւ զՀամշատինու սեւագլխէն, եթէ վերստին ծանուսջիք զդառնալն ի տեղի իւր:

Գրեցան յամսոյս ի ԺԴ. (14):

481* **Ի Տաթև** – Թուղթ ի վերայ թեմականացն Տաթևու վանից, ընդ առաջնորդ Յովակիմ պետին: Տէ՛ս զմե՛ծ տե[տերց] 2209 Համարն:

Տաթևի վանքի առաջնորդ Յովակիմ վարդապետի առնչութեամբ յանձնարարական նամակներ ևն գրուել մէլիք Պօղոսին և Իբրահիմ խանին (482ա, Բ-Գ./2):

482* **Ղալբերիկ** – Թուղթ առ սուրբ Ղալբերկայ վանից նախկին առաջնորդ Մարգարէ պետն՝ վասն Անտօն պետին, եթէ եկն ի Սուրբ Աթոռս և վերադարձաւ թարց ձեռնադրութեան, ըստ որում տկար էաք, բայց խոստացաք ձեռնադրել յաշնանն, եթէ գայցէ ի նոյեմբերին, ուրմէն լ՛ք ը անհոգ:

Գր[եցաւ] յամսոյս ի ԺԵ. (15):

483* **Ի Զմիւնիա** - Թուղթ առ Իզմիրու Դ. (4) իշխանան, ի դարձ թղթոյն նոցա, որ վասն իրաց Հանգուցեալ ԻսաՀակ պետին: Տէ ս զմեծ տե[տերց] 20 17 Համարն:

Հորհակալովմեան պատասխան նամակներ են գրուել նուիրատու պարոն Առաքել Սաւալանեանին. «վասն խոստացեալ Հոգեբաժնին» (482բ, Բ.), Ապրոյեան Առաքել աղային (Գ.), տէր Գալուստ քաւանային. «վասն աշխատելոյն ի Հաշուագրութիւնս իրաց Հանգուցեալ ԻսաՀակ պետին» (Դ.), Ապրոյեան Մարգար աղային (Ե.), նուիրատուներ՝ Թոխաթցի Փէկօղլի Հանգուցեալ մահտեսի Աստուածատուրի եղբորորդի պարոն Մարտիրոսին (Զմիւնիա). «վասն Ծ. (50) ղուռուշ Հոգեբաժնին» (Զ.), վերոյիշեալ Ապրոյեան Մարգար աղային. «վասն 200 մարչիլին Հօր կտակին» (Է.), մէլէցի մահտեսի Սիմէօնին. «վասն միով տիով Զ. (6) ոսկոցն» (Ը.), պարոն Վահանին. «վասն ԺԵ. (15) ղուռուշ Ժամուցին» (Թ.), պարոն Յովհաննէսին, որ նուիրակ Դանէլին տուել էր «Ա. եալտղ ոսկի»՝ Հանտն ս. Գեղարդի (Ժ.), նուիրակ եւ առաջնորդ Դանիէլ վարդապետին. «ի դարձուած չորից թղթոցն» (ԺԱ.): Նամակները գրուել են օգոստոսի 21-ին:

484* **Ի Կարին** - Թուղթ առ վէրիլ պարոն Հայրապետն. յիշումն թղթոցն մերոց առաջնոց և ծանուցումն Զմիւնիոյ թղթոցն, եթէ օր մի յառաջ Հասուցես ի Պօլիս առ Մասեհեան պարոն Եսային Հասուցանել առ տեարսն: Վասն ԳՃ. (300) ղուռուշին մեր գիւղացի տէր Յովհաննիսի, զոր տուեալ էր անդէն փօլիցայիւ Գօրոյեանց մահտեսի Խաչատուրի չրաղ պարոն Մկրտչին, որ աստ Հասուցեց մեզ մահտեսի Խաչատուրն, եթէ աւա յղեցաք զձեռագիրն պարոն Մկրտչի, որ դրամն ի մահտեսի Խաչատուրէն առցես: Եւ մինչ առցես, զորպիսովթիւն դրամոցն մեզ ծանուցես, որ մէք ևս աստէն զնոյնն տացուք. Հինն՝ Հին և նորն՝ նոր:

Վասն Տաթևու առաջնորդ Յովակիմ պետին, եթէ յառաջամէ տալու էր մեզ ԳՃ. (300) ղուռուշ, այժմ ևս էառ ի մէնջ ԱՃԾ. (150) ղուռուշ (և ետ մեզ թամասուկ) Հին դրամ մինչ ի Սուրբ Աթոռս էր, որ եղև ընդ առաջնոյն ԴՃԾ. (450) ղուռուշ Հին դրամ և վասն այնց ի վերայ ժողովարար պետացն թուղթ գրեաց, որ դրամն Հասուցեն քեզ: Ահա յղեցաք քեզ զթամասուկ և զթուղթն նոցա, ուրեմն՝ ուր և իցեն ժողովարարքն, յղեսցես զթուղթն և զդրամն խնդրեսցես և յառնուլդ մեզ ծանուցես և զթամասուկն առաջնորդին Հասուցես: Իսկ վասն Հանգուցեալ Սա[Հակ] պետի սպասաւորացն Հարցումն, եթէ ուր մնացին, գրեսցես, զի գիտասցուք:

485 **Ի Կարս** - Թուղթ առ Գէորգ աղայն ի դարձ թղթոյն յատուկ փայեկաւ յղեցելոյն՝ վասն Հարազատութեանն. օրհնութիւն և շնորհակալութիւն: Իսկ վասն թղթոցն իւրոց, եթէ մեզ չեն Հասեալ: Ծանուցումն զսարտարէն, եթէ եկն ի Նախիջևան ընդ Յիւսէին խա|483 ախին և խնդրեաց անտի ի տեղույս իշխօղէն զպատանդս, և սա ևս յղեաց զփոքր զեղբայրն, զախոնտն և զՂասիմն:

Եւ նորա առեալ զսոսա և զկինն Քեալպալի խանին, տարին ընդ ինքեանս:

Եւ վասն դրամոց գրէ, թէ ոչ կամիմք ծանուցանել քեզ, եթէ որքա՞ն դրամոց էլաք. ըստ որումքան զմեզ առաւել ցաւելոց ես: Եւ թէ յառաջամէ զմուռ էիր ինդրեալ, այժմ՝ ձեռնհաս եղեալ յղեցաք Յովհաննէս] պետին Հասուցանել քեզ (որ է Ե. (5) կտոր): Այլ վասն իզմիրու թղթոցն, եթէ ժամմի յառաջ Հասուցես առ պարոն Հայրապետն: Եւ վասն Սրբոյ Աթոռոյս, եթէ այժմ՝ է ի պայծառութեան և ի բարեկարգութեան:

Վասն Մաւնատ բէկին, եթէ առանձին ծանիր՝ լուաք, որ դօլ-վաթլու փաշայն քեահիայ է արարեալ ինքեան, վասն որոյ ի շնորհաւորել զնորոգ իշխանութիւնն, ահա զմի թուղթ գրեալ, Հանդերձ փոքր ընծայիւք, յղեցաք ի ձեռս առաջ[նորդ] Յովհաննէս] պետին՝ Հասուցանել առ նա ծածկաբար իւր մարդուին և ի նմանէ թուղթ առեալ, առ մեզ յղեսցէ ի միամտութիւն: Աստուծով զկնի միոյ կամ երկու ամսոց յղելոց եմք զնուիրակն, և ընդ նմա առ փաշայն և առ այլս յղելոց զընծայս:

486 Թուղթ առ Ղօշավանից առաջ[նորդ] Յովհաննէս] պետն ի դարձ թղթոյն ընդ Գէորգ աղայի թղթոյն յատուկ փայեկաւ յղեցելոյն, եթէ Գէորգ աղայի թղթոյ պատասխանին գրեալ յղեցաք, Հասուցես առ ինքն: Ծանուցումն զգալստենէն սարտարի և զտանիլոյն պատանդացն Երևանու և զելանելոյն մերոյ ի բազում դրամոց: Եւ զՄաւնատ բէկէն, եթէ լուաք, որ փաշայն կարգեալ է զնա քեահիայ ինքեան, վասն որոյ առ նա զթուղթ մի գրեալ Հանդերձ ընծայիւք յղեցաք քեզ՝ Հասուցանել առ նա ծածկաբար, քոյդ մարդուին ի շնորհաւորութիւն իշխանութեանն: Գէորգ աղային ևս ծանուցաք զայսոսիկ և պատուիրեցաք չլայտնել ումէք, այլ լինիլ ծածկաբար: Աստուծով յաշնանն նուիրակ եմք առաքելոց և ընդ նմա առ փաշայն և առ այլս յղելոց զպատշաճաւոր զընծայս: Վասն իւր Բ. (2) լիտր գինի յղէ:

Գրեցան յամսոյս ի ԻԲ. (22):

487 Ի Հուշոյ դղեակն - Կոնդակ գանձանակի ի դղեակն Հուշի առ անդ եղեալ նախիջլանցի և ագուլեցի Ժողովուրդան մեր, վասն ԻԷ. (27) թուման և ԼԲ. (8000) դիան գանձանակի արդեանցն (որ է Թարվիզու դրամ), զորս ձե[ռամբ] նախկին գանձապետ տիրացու Բարաքիասին Հասուցեալ էին ի Սուրբ Աթոռս, քանզի Բ. (2) թուման Աւետիք պետին էին տուեալ ԺԳ. (13) թուման և ԼԲ. (8000) դիան՝ Տաթևու առաջ[նորդ] Յովա[կիմ] պետին և ԺԲ. (12) թուման Ղափանու նուիրակ Յովհանն[նէս] պետին: Այլև՝ վերահաստատութիւն գանձապետութեան պարոն Առաքելին:

488 Թուղթ օրհնութեան առ նախիջևանցւոց եկեղեցւոյ նորոգ գանձապետ պարոն Առաքելն՝ վերահաստատութիւն ի գործ գանձապետութեան: Եւ շնորհակալութիւն վասն Բ. (2) պաճախլու ոսկւոցն, զորս տուեալ էր նուիրակ Յովհանն[նէս] պետին իբր քառասնից:

489 Կոնդակ ևս գանձանակի ի դղեակն Շուշի առ անդ եղեալ զազանչեցիսն՝ վասն ԺԱ. (11) թուման և ԳՌ. (3000) դիան գանձանակական արդեանցն՝ ժողովեցելոցն ի ՌՄԼԲ. (1783) թուոյն ցՌՄՄԳ. (1794) թիւս, որոց Բ. (2) թումանն Աւետիք պետին էին տուեալ ձե[ռամբ] Հին գանձապետ պարոն Աւագին և Թ. (9) թումանն և ԳՌ. (3000) դիանն՝ Ղափանու նուիրակ Յովհանն[նէս] պետին (որք էին Թարվիզու դրամք): Այլև՝ վերահաստատութիւն նորոգ գանձապետ տէր Բաղտասարին, զոր գիտութեամբ նուիրակ Յովհաննէս] պետին կարգեալ էին գանձապետ Սրբոյ Աթոռոյս:

490 Թուղթ օրհնութեան առ Ղազանչեցւոց եկեղեցւոյ նորոգ գանձապետ տէր Բաղտասարն՝ վերահաստատութիւն և պատուէր մնալ Հարազատութեամբ ի պաշտօնն իւր:

483բ

491* Թուղթ օրհնութեան առ կին ոմն՝ վասն Ա. (1) եալտոց ոսկի ժամուցին, զոր յանձնեալ էր նուիրակ Յովհանն[նէս] պետին:

492 Թուղթ առ մէլիք Հանազարի որդի մէլիք Ջումշուտն. մխիթարութիւն վասն մահուան Հօրն և շնորհաւորութիւն վասն յաջորդելոյն իւրոյ ի տեղի Հօրն, և յանձնարարութիւն վասն մերայնոցն անդ եղելոց: Տէ ս զմիջակ տե[տերոյ] 58 Համարն:

493 Թուղթ առ քաշանայն և իշխանսն դղեկին Շուշոյ ի դարձ Բ. (2) թղթոցն առ սրբազանն:

494 Թուղթ առ տէր Յովհաննէս և տէր Միքայէլ քաշանայն ի դարձ թղթոցն վերայիշուան մտաց թղթոցն գանձանակաց և այլոց, և թէ զազանչեցի Երամի որդի պարոն Յովաննէսն թուղթ էր գրեալ եղբօրն և մեզ յղեալ՝ Հասանիլ առ նա: Վասն որոյ մէք ևս յղեցաք ի ձեռս Ուռումէլու նուիրակին՝ անհոգ լիցի:

495 Թուղթ ի Շուշի առ Էսրայէլ կաթուղիկոսն ի դարձ թղթոյն. մխիթարութիւն վասն վշտակրութեանցն և յանձնարարութիւն վասն Ղափանու նուիրակին:

496 Կոնդակ ի գեօղն Ագուլեաց (որ է մերձ դղեկին Շուշոյ). շնորհակալութիւն վասն Հաստատելոյն նորապէս, զի վաղուց Հետէ խափանեցեալ գանձանակն, յորդորմամբ նուիրակ Յովհանն[նէս] պետին: Եւ վերահաստատութիւն նորոգ գանձապետ տիրացու Գրիգորին՝ և պատուէր՝ լինիլ Հարազատ ի գործն իւր Հոգևոր:

497 **Թուղթ առ սոյն եկեղեցւոյ նորոգ գանձապետ տիրացու Գրիգորն.** յօրհնութիւն վասն յանձն առնելոյն զգործ գանձապետութեան Սրբոյ Աթոռոյս, յորդորմամբ նուիրակին մերոյ և Համահաճութեամբ ժողովրդոցն:

498 **Թուղթ առ Աւետիք պետն,** եթէ գարդ անագան եղև, փութա դիմել ժամ մի յառաջ: **Ի Հանդիպիլդ Շուշի,** գժտութիւն չառնիցես վասն արդեանց գանձանակին, քանզի գրեալ էին, թէ ոչնչանայ: Վասն որոյ պատուիրեցաք Ղափանու նուիրակին գնալ և առնուլ, որ գնացեալ էր և առեալ:

499 **Թուղթ առ Նախիջևանու նուիրակ Յովհաննէս պետն** ի դարձ թղթոյն և ծանուցումն զկոնդակացն գանձանակաց և գանձապետաց և այլոց թղթոց, եթէ ահա գրեալ յղեցաք առ նոսա: Վասն դրամոցն գանձանակաց (որք եղէն բոլորն **ԼԹ. (39)** թուման և **ԱՖ. (1000)** դիան **Թարվիզու դրամ**) գրեցաք շնորհակալութիւն և պատուիրեցաք այն դրամովն առնուլ ապրշում և յղել մեզքո գիտութեամբն, ըստ որում դրամն տեղոյն չուռուկ է: **Յղեցան ընդ ագուկեցւոցն՝ պարոն Կարապետին և Յովսէփին, յաւուր շաբաթի, ի տօնի Սրբոյն Թօմայի Առաքելոյ: Եւ գրեցան յամ[սոյս] ի ԻԶ. (26):**

500 **ՂԱԿԵԽԱՅ - Կոնդակ սրբալոյս մեռոնի ընդ նուիրակ և առաջնորդ Յովհաննէս պետին:**

501 **Թուղթ առ մերային ժողովուրդան վասն նուիրակ և առաջնորդ Յով[հաննէս] պետին:** Եւ վասն Սահակ չերիցու տանն: **Տէ ս զմիջակ տե[տերց] 235 Համարն:**

502 **Թուղթ առ Գօտերձինն և կինն իւր՝ Խանփերին.** յանձնարարութիւն վասն նուիրակ և առաջ[նորդ] Յով[հաննէս] պետին: **Տէ ս զմիջակ տե[տերց] 234 Համարն:**

503* **Թուղթ առ վաչիանցի Այվազն,** ընդ նոր նուիրակ Յով[հաննէս] պետին. յանձնարարութիւն վասն նորին: **Տէ ս զմիջակ տե[տերց] 142 Համարն:**

504 **Թուղթ տաճկերէն առ տեղւոյ փաշայն՝ Հանդերձ ընծայիւք:**

505* **Ի Ղօշավանք - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յով[հաննէս] պետն** ի դարձ թղթոյն, վասն **ԲՃ. (200)** դուռուշին ընդ մեր թուանկչւոյն յղեցելոյն՝ շնորհակալութիւն և վասն Յով[հաննէս] պետին Հանձնարարութիւն՝ ցուցանել զկերպս առաջնորդութեան կողմանցն այնոցիկ:

Գրեցան յամսոյս ի ԼԱ. (31):

Օրհնութեան եւ շնորհակալութեան նամակներ են յղուել Բաբայեան մահտեսի Կարապետին (484ա, Ա.), Պօլի պատրիարքին «վասն պարոն Մկրտչի կնոջն»

(Բ.) եւ մահտեսի Նազարին (Ուռուշճուղ). «վասն Հոգեբաժնի Հօրաքեռնն և առն նորա» (Գ.):

506 **Ի Կարին** - Թուղթ առ պարոն Հայրապետն ի դարձ թղթոյն և վասն Սա[Հակ] պետի սպասաւորացն, եթէ Հասին ի Սուրբ Աթոռս, բայց առ մեզ գրեցեալ թուղթն քո և այլ թուղթք և ինչք, յափշտակեցեալք են յաւազակաց ի գալն ի ճանապարհին Բայազիտու: Ուրեմն վերստին գրեսցես մեզ ի գիտել: Ի Պօլսոյ եկեալ Չ. (6) օգմայ թուղթն մերն է, և Ժ. (10) ջուխտ Հողաթափն և Ա. (1) բինիչն Մինասս պետինն է, ուրեմն յղեսցես ի Բայազիտ՝ Հասանիլ մեզ: Վասն նախիջլեանցոց ուխտաւորաց ԺԹ. (19) դուռուշին (որ էր Է. (7) մարկան), եթէ թասկիրայն նոցա առ մեզ է: Ըստ ժամանակին գրելոց եմք զթուղթս օրհնութեան: Եւ զդրամն գրեցաք ի դաւթարդ: Վասն նոցին տուեալ Բ. (2) Հատ շէշխանայ մոմացն, եթէ ընդ նուիրակին յղեսցես: Եւ յիշումն յառաջքան զայս թղթոցն ի վերայ Կարսայ յղեսցելոց:

507 **Եւտրէնէ** - Թուղթ Եւտրէնէ առ ռամեցի մահտեսի Գէորգն՝ վասն Թովմայի գրեցուցեալ զատթիլխախայի թղթոյն: Տէ ս զմիջակ տե[տերց] 143 Համարն:

508 **Ի Վան** - Թուղթ առ Ախիջան աղայն՝ վասն քանքանչւոյն ծանուցումն, եթէ տեղդ առեալ էր Դ. (4) թումանն, բայց մեք ետուք աստ Գ. (3) թումանն, ըստ որում այնքան ոչ բանեցաւ վասն տկարութեանն: Եւ որովհետեւ աղքատ է, այն Ա. (1) թումանն ևս չնորհեցաք: Իսկ վասն նորատիպ Մաշտոցին, եթէ տեղդ որքան Հին գրուածք լինիցին, մեզ յղեսցես՝ առ ի օրինակս առնել նոր տպեցելոյն:

509 **Ի Բայազիտ** - Թուղթ առ նուիրակ Մարտիրոս պետն, եթէ ահա ըստ ինդրոյդ զերկու թուանկչի յղեցաք բերել զժողովեցեալ մատաղացունս: Յղէ վասն իւր Բ. (2) լիտր գինի: Եւ սիրախառն յանդիմանութիւն վասն թուղթ չգրելոյն:

510 **Եւտրիլիսէ** - Թուղթ առ Եւտրիլիսայու առաջ[նորդ] Մկրտիչ պետն ի դարձ թղթոյն ընդ ժողովարար Գէորգ պետին՝ վասն նեղութեանցն և ձախորդական դիպուածոցն մխիթարութիւն: Իսկ վասն Գէորգ պետի իւղին և պանրին, եթէ կէսն բերել ետուք յԱրծափու և կէսն ևս բերել տալոց եմք: Ծանուցումն զմեր զնեղսակրութեանցն, եթէ ի Նաւրուզէն մինչև ցայսօր ԾԵ. (55) և կամ Կ. (60) քսակ դրամոյ ելեալ եմք, թող զայլ վեճեղէն պահանջմունքն: Իսկ վասն նուիրակ Մարտիրոս պետին, եթէ թուղթ էր գրեալ և թուանքչի ինդրեալ վասն մատաղացուացն բերիլ ընդ Ալէքսան պետին: Վասն որոյ յղեցաք ըստ ինդրոյն: Եւ ընդ նոսա վասն քոյ իբր օրհնութիւն գինի յղեցաք առ ի վայելել:

Գրեցան յամնոյս ի Բ. (2):

5¹¹ **1794 թ. 2 սեպտեմբեր** - Թուղթ առ Մեծին Պօլսոյ պատրիարքն վասն պարոն Մկրտչի կնոջն, որ ոչ եկն յԱզու-
լեաց¹²⁸:

ՄՄ ձեռ. Հ^մ 453 ծ, էջ 30բ-1ա

5¹² **1794 թ. [սեպտեմբեր]** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ
Կիւլապօղլի Յակոբ ամիրայն. յանձնարարութիւն վասն նուիրա-
կին նորոյ: Ըստ օրինակի Մարգար ամիրայն գրեցեալ թղթոյն, որ
է ի մեծ տետրն յերեսն 2020¹²⁹:

ՄՄ ձեռ. Հ^մ 453 ծ, էջ 31ա

5¹³ **1794 թ. [սեպտեմբեր]** - Դարձեալ ի Պօլիս առ մաշ-
տեսի Վարդերես ամիրայն ըստ վերնոյդ օրինակի¹³⁰:

ՄՄ ձեռ. Հ^մ 453 ծ, էջ 31ա

Նոյնաբովանդակ նամակներ են գրուել նաև Խանսուօղլի Յակոբ ամիրա-
յին, Սախազատէ Գրիգոր ամիրային, կեսարացի Ֆախիզատէ մաշտեսի Սարգսին,
մաշտեսի Կարապետ Բաբայեանին (բոլորը՝ Կ. Պօլիս): Նամակները գրուել են
1794 թ. սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամսին:

ՄՄ ձեռ. Հ^մ 453 ծ, էջ 31ա-2բ

484ա

5¹⁴ **Ի Մուշ** - Թուղթ առ Մշու Սրբոյ Կարապետի վանից
առաջնորդ Յակոբ պետն, ի պատասխանի թղթոյն ընդ ժողովա-
րար Կարապետ պետին: Յանդիմանութիւն վասն կարմրաւ կնքե-
լոյն զկոնդակս և զթուղթս: Տէս զմեծ տե[տերց] 2019 Համարն:
Գրեցան յամ[սոյս] ի Դ. [4]:

5¹⁵ **Ի յԱլիթ** - Թուղթ առ նուիրակ Դաւիթ պետն ի
դարձ թղթոյն ընդ նորընծայ Գրիգոր պետին, եթէ իմացաք զոր-
պետն քոյ և գործոյդ և միամիտ եղաք: Սիրով ընկեղեալ զԳրիգոր
պետն, ձեռնադրեցաք եպիսկոպոս: Իմացաք զգրութիւնսդ, որ
վասն սպասաւորին քոյ: Ինչ և իցէ, աշա Հանդերձեալ էս գալ, բեր-
ցես ընդ քեզ: Վասն ընկալման կոնդակին մերոյ ի ժողովրդոցն
Սուրբ Սարգիս եկեղեցոյ, եթէ նոքա ևս էին ծանուցեալ [484բ]
գրով զհնազանդութիւնն իւրեանց:

¹²⁸ Պարոն Մկրտչի կնոջ՝ Ազուլիս չգալու կապակցությամբ Կ. Պոլսի պատրիարքին ուղղված նա-
մակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 640:

Կ. Պոլսի պատրիարք Զաֆարիա վարդապետին հղված թղթի ամբողջական հրատարակու-
թյունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 634-639:

¹²⁹ Կ. Պոլսի Կյուլապօղլի Հակոբ ամիրային՝ նոր նվիրակի հարցով հղված նամակի համառո-
տագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 640:

¹³⁰ Կ. Պոլսի մաշտեսի Վարդերես ամիրային հղված նամակի համառոտագրությունը տե՛ս
ԴՀՊ, գիրք Դ., սյուն 640:

Վասն որոյ և նորա օրհնութեան թուղթ գրեցաք ի պատասխանի թղթոյն ինքեաց տացես ողջունիւ: Եւ զայլ որպէսն մեր ի Գրիգոր պետէն իմասցիս: 73 ղուռուշ Հին փող ի տիրացու Կարապետէն առցես, ահա նորին ձեռացագիրն յղեցաք:

516 **Թուղթ ի վերայ Սուրբ Սարգիս եկեղեցւոյն, ի պատասխանի թղթոյն նոցա և շնորհակալութիւն վասն բառնալոյն ի միջոյ իւրեանց զանկարգ սովորութիւնն, որ ի Շննդեանն և ի Չատկի աւուրան յանուն Սրբոյ Աթոռոյս և այլոց ժողովէին զգանձանակս և յայլ պէտս վատնէին: Տէս զմեծ տե[տերց] 2219 Համարն:**

517 **Թուղթ առ Սուրբ Կիրակոս եկեղեցւոյ գանձապետ մաշտեսի Մարտիրոսն ի դարձ թղթոյն, որ ի կողմանէ Սուրբ Սարգիս եկեղեցւոյ բանին: Տէս զմիջակ տե[տերց] 147 Համարն:**

518 **Կասնամատէն - Թուղթ ի Կասնամատէն առ Փիլիպպոս ամիրայն. շնորհակալութիւն վասն յղեալ աջաւամբուրին ընդ մաշտեսի Միրզային: Տէս միջակ տե[տերց] 144 Համարն:**

519 **Թուղթ առ Ճապաղջուրցի Գէորգ աղայն՝ վասն Լ. (30) ղուռուշ Հոգեբաժնին Հանգուցեալ որդւոյն ընդ ուխտաւոր մաշտեսի Միրզային:**

520 **[Ի] Սօրսուր - Թուղթ առ Սօրսրոյ առաջ[նորդ] Յարութիւն պետն ի դարձ թղթոյն և յիշումն խրատական թղթոյն մերոյ քան զայս յառաջ յղեցելոյն: Եւ զԱբրահամ պետէն, եթէ լուծաք զնա ի կարգէն և կայց արդ. յապաշխարանս ի փրկութիւն Հոգւոյն ի Սուրբ Աթոռոջ: Եւ սիրախառն մեղադրութիւն վասն այնպիսեաց խաբեբայ կարգաւորաց, եթէ է՛ր վաղվաղուկ լինիս ի ձեռնադրութիւն: Եւ վասն այսր պատուէր՝ գրել զմի թուղթ առ սրբազան Վեհրն և կնքել այնու կնքովն, զոր եղեալ է ի կոնդակն իւր՝ ի գիտութիւն մեզ և ի Հաւաստութիւն կոնդակին տուեցելոյն՝ վերոյ յիշեալ Աբրահամ պետին: Եւ վասն փորձանաւոր ծերունի Դաւիթ պետին, եթէ լուսք աղերսանաց քոց, վասն որոյ ետուք Հրաման մատուցանել զպատարագն սուրբ և պաշտել զկարգն:**

521 **Արդնու Մատէն - Թուղթ առ Արդնու առաջ[նորդ] Կարապետ պետն ի դարձ թղթոյն ընդ նորընծայ Գրիգոր պետին և վասն շինութեան գմբէթին սրբոյ տաճարի, և քանի մի օդայից, եթէ լուեալ ուրախացաք: Տէր յաջողեսցէ Հասուցանել յաւարտ: Եւ թէ Գրիգոր պետն սիրով ընկալեալ ձեռնադրեցաք եպիսկոպոս: Եւ Սուրբ Աթոռս այժմ է ի խաղաղութեան և ի պայծառութեան: Եւ զայլ որպէսն տեղոյս ի Գրիգոր պ[ետի] իմասցիս:**

522 **ՄԱԿ** - Թուղթ առ մաշտեաի Եղիազարն, ընդ մեծ եղբօրն՝ խօջայ Պետրոսին, օրհնութիւն, և սէր, և յորդորումն ի Հարազատութիւն:

523 **Բալու** - Թուղթ ի Բալու առ առաջ[նորդ] Գրի[գոր] պետն և քահանայն և իշխանն ի դարձ բազմակնիք թղթոյն նոցա, որ վասն բանադրեցեալ Տէփօյին, եթէ ըստ աղերսանաց ձերոց, ահա արձակեալ վերադարձուցաք պատուիրմամբ, որ այսուհետև չխառնիցի ի գործս եկեղեցական, և եթէ յանդգնիցի ևս ծանուցիք մեզ:

524 Թուղթ յատկապէս առ Բալուայ առաջ[նորդ] Գրի[գոր] պետն ի դարձ թղթոյն ընդ Գրի[գոր] պետին, եթէ սիրով ընկալեալ, ձեռնադրեցաք եպիսկոպոս: Եւ շնորհակալութիւն վասն Ծ. (50) մարշիլ աջաՀամբուրին: Եւ վասն բանադրեցեալ Տէփօյին, եթէ արձակեալ ի կապանացն, դարձուցուք պատուիրմամբ և կոնդակաւ, զոր տեսանելոց ես և իմանալոց: Թէպէտ դու զմաննէ բան ինչ չէիր յիշեալ ի թուղթս քո և ոչ կնքեալ զիշխանաց գիրն: Ինչ և իցէ, ահա արձակեալ վերադարձուցաք: Եւ զայլ որպէս մեր ի նորընծայ Գրիգոր պետէն իմասցին: Ողջոյն Իսպիրեան խօջայ Պետրոսին:

485ա

525 Կոնդակ առաջնորդութեան և վկայական եպիսկոպոսութեան, զոր գրեալ տրեցաւ սուրբ Աղբերկայ վանից առաջ[նորդ] Անտօն պետին: Տէ՛ս զմեծ տե[տերց] 2218 Համարն:

526 Թուղթ մի վկայական եպիսկոպոսութեան, զոր գրեալ շնորհեցաւ սրբոյն Սաղիմայ նուիրակ Գրի[գոր] պետին: Տէ՛ս զմիջակ տե[տերց] 146 Համարն:

527 **Ի սուրբն Սաղիմ** - Թուղթ առ սրբոյն Սաղիմայ պատրիարք Պետրոս պետն ի դարձ թղթոյն և կրկին շնորհաւորութիւն վասն պատրիարքութեանն, և շնորհակալութիւն վասն յղեալ աջաՀամբուրին: Եւ ծանուցումն զԳրիգոր պետէն, եթէ ըստ ինդրոյդ ձեռնադրեալ, յղեցաք օրհնութեամբ: Տէ՛ս զմեծ տե[տերց] 2122 Համարն:

528 **Ի Բայազիտ** - Թուղթ առ նուիրակ Մարտիրոս պետն ի դարձ թղթոյն ընդ Ալէք[սան] պետին. միամտութիւն վասն մատաղացոցն, եթէ ամբողջապէս Հասին ի Սուրբ Աթոռս: Եւ վասն ամանաթիցն ի տեղիս [տեղիս] եղելոցն, եթէ ժամանակն երկիրազալի է, ուրեմն Անտօն սարկաւարզն յղեա՝ ժողովել զնոսս և բերել առ տիրացու Գէորգն, որ նա յղեսցէ ընդ Հաւատարմի ի Սուրբ Աթոռս և մեր ևս զղաւզն յղիցուք ի միամտութիւն քեզ: Եւ թէ մաշտեաի Ենկիպարն ի կողմանէ Անտօն պետին տալիք է մեզ ԻԵ. (25) ղուռուշ, և մինչ առցես, ծանուցես մեզ:

Գրեցան յամսոյս ի ԻԱ. (21):

529 **Ի Կարս** - Թուղթ առ Գեորգ աղայն. յիշումն Բ. (2) թղթոցն, եթէ մեզ են Հասեալ ըստ Ժամանակին՝ վասն քեաՀիայ Մահմատ բեկին, եթէ Բ. (2) տեսակ ճոթեղէն էր ինդրեալ, աՀա գտեալ յղեցաք: Բայց մին տեսակն կտորով եղև վասն պակաս գոլոյն յերկու Հալապից:

Եւ վասն փայտավաճառ Իւսուֆ տաճկին, եթէ ցարդ մեզ Հասուցեալ է ԲՃԼԹ. (239) փայտ, որոց գինն է ԳՃՇԸ. (358) ղուռուշ և կէս, և մնացեալ է տալիք մեզ ԷՃԼԸ. (738) ղուռուշ և Լ. (30) փարայ: ԱՀա զսիաՀին ևս յղեցաք, ուրեմն ծանուցես Մահմատ բեկին, զի վասն իաթեր մերոյ կամ զգրամն առցէ և կամ զփայտն: Եւ թէ Հարկաւոր է մեզ փայտ, ուրեմն զՀաւատարիմ՝ որ գտեալ ԱՌ. (1000) փայտի բէՀ տուեալ, Հարկեսցես ի յառաջիկայ գարնանն մեզ Հասուցանել:

Լուաք զգալուստն նուիրակին սրբոյ Սաղիմայ՝ Մանիչէ, մերն մնասցէ ի գարնանն:

530 **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջ[նորդ] ՅովՀաննէս պետն ի դարձ Բ. (2) թղթոյն վասն Ախլցիսայու նուիրակ ՅովՀաննէս պետին, եթէ իմացաք զընդունիլդ գնա սիրով և զկերպ գործոյն ցուցանելդ և զայն շնորՀակալեցաք զքէն:

Եւ աՀա առ նա թուղթ գոյ, զոր յղեցաք քեզ, ուրեմն Հասուցես Հաւատարմաւ: Եւ վասն յանձնարարական թղթոյն ի վերայ Շէրիֆ փաշային՝ վասն ՅովՀաննէս պետին ի տեղոյ բեկացն, եթէ բարի է, բայց պարոն Գեորգին յիշեցաք, ըստ որում խոստացեալ էս ծանուցանել և մինչ Հոգացեալ յղեսցես, մեզ ծանուցես:

Իմացաք զգալն սրբոյն Սաղիմայ նուիրակի, բայց մերն մնասցէ ի գարնանն:

Գրեցաւ յամ[սոյս] ի ԻԸ. (28):

531 **ՀնորՀին Աստուծոյ և օրՀնութեամբ մեծի Տեառն** իմոյ սրբազան ՎեՀին Հասուցին զգրութիւն յիշատակարանիս թղթոցն մինչև ցարդ. (ես՝ նոյնոյ սրբազան ՎեՀին յետին սպասաւոր Չաքարիա ապիմաստ վարդապետս), և այլ ոչ ևս ձեռնամուխ եղէ նոցա: Ըստ որում Հրամանաւ Տեառն իմոյ գնացի ի Մեծն Պօլիս, ընդ Գալուստ աստուածիմաստ վարդապետին, ի ծառայութիւն ի ՌՄԽԳ. (1794) թուոջս և ի նոյեմբերի Է. (7):

485բ

Չիշատակագրութիւն թղթոցն Հասուցեալ մինչև ցայս վայր Չաքարիայ բազմաշխատ վարդապետին, և մինչ գնալոյ եղև, յանձնեցաւ սոյն գործ ինձ՝ Գալուստ ապիմաստ սարգաւակիս, ի բարձրագոյն Հրամանէ մեծի Տեառն մերոյ սրբազան ՎեՀին, ուստի և իմ ապաւինելով ի շնորՀս օգնութեան ամենազօր Սրբոյ Հոգւոյն, սկսայ գրել այսուՀետև զմիտս թղթոցն, որք գրեալք և գրելոց են ի սրբազան ՎեՀէն:

1794 թ. սեպտեմբեր - Թուղթ ի Մեծն Պօլիս և ի յԱդրանայ

532 **Ի Պօլիս** - Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան ի վերայ Ղուսիզափոռի Սուրբ Աստուածաճնի եկեղեցւոյ ժողովրդոցն՝ յաղագս գանձանակական արդեանց, ժողովեցելոց ի ՌՄԽԱ. (1792) թուէն, նոյեմբերի ԻԳ. -էն (23), մինչև ի ՌՄԽԲ. (1793) թին և յուլիսի Ժ. (10):

533 Թուղթ մի ևս առ սորին գանձապետաց՝ պարոն Մարտիրոսին, մահտեսի Ծատուրին և պարոն Միքայելին՝ օրհնութին և շնորհակալութին:

534* Կոնդակ ի վերայ Սամաթիայու Սուրբ Գէորգ եկեղեցւոյ ժողովրդոցն, շնորհակալութին յաղագս գանձանակական արդեանց ժողովելոց ի ՌՄԽԱ. (1792) թուէն, դեկտեմբերի Թ. -էն (9) մինչև ի ՌՄԽԲ. (1793) թին, յուլիսի Ժ. (10):

535* Թուղթ մի ևս առ սորին գանձապետ մահտեսի Պարոնն՝ վասն արդեանց գանձանակին շնորհակալութին և վասն նոր նուիրակին յանձնարարութին:

536* Կոնդակ ի վերայ Պալաթու Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցւոյ ժողովրդեանն, յաղագս արդեանց գանձանակի ժողովելոց ի ՌՄԽԱ. (1792) թուէն, դեկտեմբերի] Թ. -էն (9), մինչև ի ՌՄԽԲ. (1793) թին, յուլիսի ԺԸ. (18):

537* Թուղթ մի ևս առ սորին գանձապետ Սահակ ամիրայն, շնորհակալութին սակս արդեանց գանձանակին և յանձնարարութին վասն նորոգ նուիրակ Գալուստ վարդապետին:

538* Կոնդակ ի վերայ Խասգեղու Սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ ժողովրդոցն՝ վասն արդեանց գանձանակին ժողովելոց ի ՌՄԽԱ. (1792) թուէն, յապրիլի մեկին, մինչև ի ՌՄԽԲ. (1793) թին, յապրիլի Ա. (1):

539* Թուղթ ևս առ սորին գանձապետ Յովհաննէս ամիրայն, յաղագս գանձանակադրամիցն շնորհակալութին և վասն նոր նուիրակ Գալուստ պետին յանձնարարութին:

540* Կոնդակ առ Ղալաթիայու Սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյ ժողովուրդան՝ վասն գանձանակի արդեանցն (մեկ բառ ջնջած) ժողովելոց ի ՌՄԽԱ. (1792) թուէն, դեկտեմբերի Է. -էն (7), մինչև ի ՌՄԽԲ. (1793) թին, յօգոստոսի] Է. (7):

541* Թուղթ ևս առ սորին գանձապետաց՝ մահտեսի Խաչատուրն և մահտեսի Յովհաննէս աղայն՝ վասն արդեանց գանձանակին և յաղագս նորոգ նուիրակին յանձնարարութին:

542* Կոնդակ ի վերայ Օրթագեղու Սուրբ Աստուածաճնի եկեղեցւոյ ժողովրդեանն, յաղագս արդեանց գանձանակին ժողո-

վելոց ի ՌՄԽԱ. (1792) [Թուէն նոյեմբերի] ԻԳ. -էն (23), մինչև ի ՌՄԽԲ. (1793) [Թին, յուլիսի Ժ. (10):

543* Թուղթ ևս առ սորին գանձապետ Յարութին աղայն, յաղագս գանձանակադրամիցն շնորհակալութիւն և վանն նոր նուիրակին յանձնարարութիւն:

544* Կոնդակ առ Իսկիւտարու Սուրբ Կարապետ եկեղեցւոյ ժողովուրդան, սակս արդեանց գանձանակի ժողովելոց ի ՌՄԽԱ. (1792) [Թուէն, նոյեմբերի] ԻԳ. -էն (23), մինչև ի ՌՄԽԲ. (1793) [Թին, յօգոստ[ոս] Ա. (1):

545* Թուղթ ևս առ սորին գանձապետ պարոն Բարսեղն, շնորհակալութիւն յաղագս գանձանակադրամիցն և յանձնարարութիւն վանն նորոգ նուիրակին:

546* Կոնդակ ի վերայ Իսկիւտարու Սուրբ Խաչ եկեղեցւոյ ժողովրդեանն՝ վանն գանձանակական արդեանց ժողովելոց ի ՌՄԽԱ. (1792) [Թուէն, նոյեմբերի] ԻԳ. -էն (23), մինչև ի ՌՄԽԲ. (1793) [Թին, յօգոստ[ոստի] Է. (7):

547* Թուղթ ևս առ սորին գանձապետ պարոն Չաքարիայն, սակս արդեանց գանձանակին շնորհակալութիւն և վանն նոր նուիրակին յանձնարարութիւն:

486ա

548 Կոնդակ օրհնութեան և շնորհակութեան առ Պալաթու և Սամաթիայու իփեկճոց էննավն, յաղագս գանձանակի արդեանց իւրոց, ժողովելոց ի ՌՄԽԱ. (1792) [Թուի Չատկէն մինչև ի միւս Չա[տիկ]:

549 Կոնդակ ի վերայ քէսէճոց էննավից. շնորհակալութիւն սակս միոյ տարւոյ յԱստուածաճնէ յԱստուածաճին Հասուցեալ գանձադրամից իւրոց:

550 Կոնդակ առ Էլիպու բրտաց էննավն, ըստ վերնոցն շնորհակալութիւն յաղագս գանձանակական արդեանց իւրանց ժողովելոց ի ՌՄԽԱ. (1792) [Թուէն ի նոր կիւրա[կիէն] մինչև ի միւս [Թու[ոյ] յու[նուարի] Ա. (1):

551 Կոնդակ ի վերայ Ղումղափուի և Ենիղափուի սափրչաց էննավի՝ վանն արդեանց գանձանակի իւրեանց, ժողովելոց ի ՌՄԽԲ. (1793) [Թուոջ:

552 Կողակ առ քիւրքճոց էննավն, յաղագս գանձանակի արդեանցն շնորհակալութիւն:

553 Կոնդակ առ Օթուրախճոց էննավն սակս արդեանցն գանձանակին օրհնութիւն:

554 Կոնդակ առ Չուխուրչէշմէն Խաշվէճի պաշի խանի եղեալ ռէնջպերնս. ՀնորՀակալութիւն վասն արդեանց գանձանակի իւրեանց:

555 Կոնդակ առ Չուխուրչէշմէն նոր խանի եղեալ ռէնջպերնս վասն արդեանցն գանձանակի ժողովելոց ի ՌՄԽԲ. (1793) Թուոջ:

556 Կոնդակ առ Հասան-Փաշայ խօլիի դերձակաց էսնավն վասն գանձանակի արդեանցն:

557 Կոնդակ առ Հաշգատէ պաշին քեօռ Վէղիր խանում եղեալ դերձակ պաշխալը վարպետնս, սակս գանձանակական արդեանցն:

558 Կոնդակ առ Շէճմիր Էմինի խօլիի դերձակնս, սակս արդեանց գանձանակին:

559 Կոնդակ ի վերայ մէստճոց էննավից վասն գանձանակական արդեանցն:

560 Կոնդակ ի վերայ ՍրթՀամամիի իփեկճոց, յաղագս գանձանակի արդեանց ժողովելոց ի ՌՄԼԹ. (1790) Թուէն սեպ[տեմբերի] ԻԲ. -էն (22) մինչև ի ՌՄԽԲ. (1793) Թինս յուլիսի ԻԳ. (23):

561 Կոնդակ առ ալաճաճոց էննավնս, յաղագս արդեանց գանձանակին ժողովելոց ի ՌՄԽԱ. (1792) Թուէն, նոյեմբերի ԻԳ. -էն (23) մինչև ի ՌՄԽԲ. (1793) Թինս, յուլիսի Ժ. (10):

562 Կոնդակ ի վերայ դարաղխանայի. ՀնորՀակալութիւն վասն գանձանակական արդեանց իւրեանց ժողովելոց ի ՌՄԽԱ. (1792) Թուոյ դեկ[տեմբերի] Զ. -էն (6) մինչև ի ՌՄԽԲ. (1793) Թինս, յօգոստոսի ԺԴ. (14):

563 Կոնդակ առ դիւլպէնտճոց էննավնս. ՀնորՀակալութիւն սակս գանձանակի արդեանց իւրեանց ժողովելոց ի ՌՄԽ. (1791) Թուոյ յուն[ուարի] Ժ. -էն (10) մինչև ի ՌՄԽԲ. (1793) Թինս յօգոս[տոսի] ԺԲ. (12): Եւ Հաստատութիւն նորոգ գանձապետ Սեթեանց պարոն Յակոբին ի նոյն գործ:

564 Թուղթ օրհնութեան առ սոյն գանձապետ պարոն Յակոբն, յաղագս նորոգ ընկալեալ գործոյն գանձապետութեան Հաստատութիւն և պատուէր արի և ժիր լինիլ առ այն:

565 Կոնդակ ի վերայ Պալաթու սահրճացն, յաղագս գանձանակական արդեանցն ժողովելոց ի ՌՄԽԲ. (1793) Թուոջ:

566 Կոնդակ ի վերայ Իսկիւտարու երից էննավից՝ սափրճաց, դայվէճոց և մէխանաճոց, յաղագս գանձանակական արդեանց ժողովելոց ի ՌՄԽԲ. (1793) թուոյ:

Օրհնութեան նամակներ նուիրատուներ սառաֆ Աւետիքին. «յաղագս Գ. (3) ղուռուշ տարեկան խոստմանցն» (486ա, Ա./20), քիւրքճի մաշտեսի պարոն Սարգսին. «վանն Ե. (5) ղուռուշ և Ի. (20) փարայ տարեկան տրոցն» (Ա./21), Ադամօղլի մաշտեսի պարոն Յարութինին. «յաղագս տարեկան Ե. (5) ղուռուշ և Ի. (20) փարայ խոստմանցն» (Ա./22), թիւթինճի պարոն Աւետիքին. «վանն ԺԵ. (15) ղուռուշ քառանից տալոյն» (Ա./23), սանդալ պէզէզտէնի վարպետներին. «յաղագս ԺԵ. (15) ղուռուշ դրամոյն» (486բ, Ա.), ծերունի Մարտիրոս մաշտեսի աղային. «յաղագս տարեկան խոստմանց..., որ է Ե. (5) ղուռուշ» (Ա./2), իլիմնճիզատէ միւթեվէլի Յովհաննէս ամիրային. «վանն Սրբոյ Աթոռոյս վահուտֆ տանց զարդիննն Լասուցանելոյն» (Ա./3), տպագիր տիրացու Պողոսին. «յաղագս տարեկան Թ. (9) ղուռուշ խոստմանց» (Ա./4), մարապետ Մէլէքին. «յաղագս Ի. (20) ղուռուշ խոստմանց տալոյն» (Ա./5), Բրաբինոն կնոջը. «վանն Լանգուցեալ Գէորգ անուն որդւոյն զԺԲ. (12) ղուռուշ քառանից և Ի. (20) փարայ մոմագին տալոյն» (Ա./6):

567* Թուղթ օրհնութեան առ Յարութին պատանին և առ նորին մայր Իսկուճին, զի տղայն ԺԲ. (12) ղուռուշ յիւր վաստակին մատաղագին էր տուեալ և մայրն Ծ. (50) Լատ Քեօթա՛ւէայու չինի բաժկաման, առ որս և շնորհակալութին:

568* Թուղթ օրհնութեան առ Նիկողայոս և Ստեփաննոս Լամաճայր ամիրայն՝ շնորհակալութին յաղագս զմի ասղանի սպիտակ շուրջառ յիշատակ տալոյն նոցա, ի Լոգի Լանգուցեալ Լօրն իւրեանց՝ մաշտեսի Եղիազար ամիրային, և յանձնարարութին վանն նորոգ նուիրակ Գալուստ պետին:

569* Թուղթ օրհնութեան առ Մասէւեան պարոն Հայրապետն՝ շնորհակալութին սակս Լանգուցեալ աներին իւրոյ Յովհաննէս ամիրայի Լոգեբաժին ԻԲ. (22) ղուռուշ տալոյն և յանձնարարութին նոր նուիրակ Գալուստ պետին:

570* Կոնդակ օրհնութեան ի վերայ սրմաքաշ էննավից՝ շնորհակալութին վանն զմէկ ստօֆայ շուրջառ յիշատակի շինեցուցանելոյ ի յարդեանց գանձանակի իւրեանց, նուիրելոյն Սրբոյ Աթոռոյս և զի գանձանակն ևս ի յիւրեանց ինքնակամ յօժարութեամբ Լաստատեալ էին:

Նոր նուիրակ Գալուստ վարդապետի առնչութեամբ յանձնարարական գրութիւններ են Լասցեագրուել սախազատէ մաշտեսի Մարտիրոս ամիրային (486բ, Ա./11), ծերունի Մարգար ամիրային (Ա./12), Չօպան ամիրային (Ա./13), Հոորճբ կոչեցեալ Մկրտիչ ամիրային (Ա./14), Սիմէոն ամիրայ Տեր-Մովսիսեանին (Ա./14բ), Ազնաուօղլի մաշտեսի Գասպար ամիրային (Ա./15), Չարաղցի մաշտեսի Մինաս ամիրային, նրա եղբայր մաշտեսի Գէորգին եւ միւս Գէորգ ամիրային

(Ա./16), Վարդերես ամիրային (Ա./17), Տագեսեան Յովհաննես աղային (487ա, Ա./1), Տագեսի փեսայ Գրիգոր ամիրային (Ա./2), Սախայեան Գրիգոր ամիրային (Ա./3), Ստեփաննոս ամիրային՝ վանն Բ. (2) շաքարացն (Ա./4), Պետրոս ամիրայի որդի Մկրտիչ ամիրային (Ա./5), Պալաթու Ստեփաննոս ամիրային (Ա./6), Խանուս օղլի Յակոբ ամիրային (Ա./7), լուսաՀոգի մահտեսի Յարութին ամիրայի վաճառակից մահտեսի Գեորգ ամիրային եւ նոյն մահտեսի Յարութինի որդի Հաճի Յովհաննես Չէլէպին (Ա./8), Պետրոս եւ Սարգիս ամիրայն մահտեսի Մարտիրոսեան. «յաղագս վախճանման Թէոդորոս սարկաւագին» (Ա./9), կիւլպազատէ Յակոբ ամիրային (Ա./10), Ֆախիզատէ մահտեսի Սարգիս ամիրային (Ա./11), Խալիֆայ Կարապետ աղային (Ա./12), Խալիֆայ Մինասին ու Յակոբին (Ա./13-14), Ասլան ամիրա Վանեցուն (Ա./15), մահտեսի Գալստան Ջուղայեցուն. «ծանուցումն երկրիս վրդովմանցն և յաղագս փօլիցային առ նա Հասելոյ Ի Բասրայու, Ի պարոն Վարթանէն Սարգսեան, որ է 1085 ղուռուշ» (Ա./16), Բաբայեան մահտեսի Կարապետ աղային. «յիշումն յառաջքան զայս ընդ քեռն որդւոյն իւրոյ պարոն Մկրտչի գրեպ թղթոյն մերոյ» (Ա./17), պարոն Մէյրամիղովին եւ որդիներ պարոն Թօմային եւ Յարութինին (487բ, Ա./1), մահտեսի Միքայէլ Թաւաղուէանցին (Ա./2), պարոն Յովսէփ Ալինաղեանցին (Ա./3), մահտեսի Թովմաս Ջալանեանցին (Ա./4), Ղարտաշեան պարոն Թադէոսին. «ՀնորՀակալուծին վանն Ռոմելու նուիրակ Գրիգոր վարդապետի լաւութեանցն» (Ա./5), Տիւպէնտճոց նոր գանձապետ պարոն Յակոբ մահտեսի Սէթեանին (Ա./6), Նուրեանց պարոն Կարապետին եւ եղբայրներ պարոն Մինասին, Նուրին եւ Յովակիմին (Ա./7), Տիւպէնտճոց Հին գանձապետ Նուրեանց պարոն Յարութինին (Ա./8), պարոն Աստուածապաւլին (Ա./9), պարոն Գեորգին եւ եղբայր Փանոսին Հանգուցելոյ (Ա./10):

571* **Ի Աբրահայ** – Կոնդակ յԱղբրիանուպօլիս, Ի վերայ Սուրբ Թէոդորոս եկեղեցւոյ ժողովրդեանն ՀնորՀակալուծին վանն քանի ամաց արդեանց գանձանակին նոցա, զոր Ի ՌՄԽԱ. (1792) թուոյ յուլիսի Ա. (1) առեալ էր նուիրակ Մինաս վարդապետն ՉՃԽ. (640) ղուռուշ Ի գանձապետ պարոն Տարունէն, որոյ ՃԼԴ. (134) ղուռուշ և ԼԲ. (32) փարայն ԼԴ. (34) անձանց Հոգեբաժին էր, և ԴՃՀ. (470) ղուռուշ և Ը. (8) փարայն գանձանակադրամ: Եւ ապա Ի ՌՄԽԱ. (1792) թուլթյ յուլիսի մէկէն մինչև Ի ՌՄԽԲ. (1793) թուոյ մայիսի Ա. (1), ժողովեցեալ արդինք առեալ էր Ի Վարդազար օղլի մահտեսի Յովհաննիսէն ՃՉԳ. (183) ղուռուշ և ԺԱ. (11) փարայ, որոյ ԾԴ. (54) ղուռուշ և ԻԸ. (28) փարայն Է. (7) անձանց Հոգեբաժին էր և ՃԻԸ. (128) ղուռուշ և ԻԳ. (23) փարայն գանձանակադրամ:

Ի սոյն կոնդակոյ շնորՀակալուծին ևս գրեցաւ առ նոյն ժողովուրդան՝ յաղագս յիշատակի տալոյն նոցա զմէկ զառով ստօֆայ շուրջառ և Հաստատուծինն նոր գանձապետ մահտեսի Պետրոս ամիրային Ի գործն:

Միաժամանակ շնորՀակալուծեան նամակներ են ուղարկուել նուիրատուներ՝ Հանգուցեալ մահտեսի Յովհաննես ամիրայի որդիներ մահտեսիներ Գրիգոր

և Մկրտիչ ամիրաններին. «վասն Հոգեբաժնի Հօրն իւրեանց ԵՃ. (500) զուռուչին և արծաթեայ խաչին, այլև սակա արդեանց գանձանակին» (Ա./11), վերոյիշեալ մահտեսի Յովհաննէսի կին Եւա խաթունին. «յաղագս տուեալ Ա. (1) լաւ սկզոյ ծածկոց և Ա. (1) շաբիկ ժամարի» (Ա./12):

572* **Թուղթ օրհնութեան առ նոր գանձապետ մահտեսի Պետրոս ամիրայն, շնորհակալութիւն յաղագս մեծարանաց ցուցելոց առ նուիրակ Մինաս պետն և Հաստատութիւն ի գործն:** Այլև ի նուիրակութեան Գալուստ պետին տուեալ գորով սա Հարիւր զուռուչ դրամ ի մասնակցութիւն Սրբոյ Աթոռոյս Սուրբ Ստեփաննոսի սեղանոյ վարագուրին, ի լուսանցս թղթոյն շնորհակալութիւն գրեցաւ և ս վասն նորա /488ա/ և յաղագս նոյն Գալուստ վարագապետին, որ այժմ գնայր ի Պօլիս ի գործ նուիրակութեան յանձնարարութիւն, որ մինչ գնասցէ անդ, ընդունիլ սիրով:

Օրհնութեան եւ շնորհակալութեան նամակներ Աղբու խաթունին. «վասն Հոգեբաժնի որդւոյն իւրոյ Կարապետ աղայի, Մ. (200) զուռուչին և եկեղեցական յիշատակացն» (488ա, Ա./1), Հանգուցեալ սառաֆ Մկրտիչ ամիրայի որդի Ստեփաննոս աղային. «վասն Հօր Հոգեբաժնի Մ. (200) զուռուչին» (Ա./2), մահտեսի Մարիամ կնոջը. «յաղագս Մ. (200) զուռուչին, զոր տուեալ էր յաղագս Հոգւոյ առն իւրոյ մահտեսի Յովհաննէսին և որդւոյն՝ մահտեսի Յակոբին» (Ա./3), Նազրլ կնոջը. «յաղագս Հոգւոյ առն իւրոյ դերձակ մահտեսի Կարապետին, Ա. (1) սկիւնոյ ծածկոց յիշատակի տալոյն» (Ա./4), Ալի-Փաշայում եղած վաճառական տիրացու Մեքոն Կեսարացուն. «յաղագս Ա. (1) լաւ սկու ծածկոց յիշատակի տալոյն» (Ա./5), Չոռլուի և Սիրիվոյի ժողովրդին. «վասն արդեանց գանձանակին» (Ա./6-7), մահտեսի Յարութիւն ամիրային. «բարեշնորհութեանցն առ Մինաս վարդապետն ցուցելոյ» (Ա./8):

573 **1794 թ. Հոկտեմբեր - Թուղթ առ Թիֆլիզու մելիք Աւետիքն, ի պատասխանի թղթոյն նորա, որ ընդ պարոնի թղթոյն, վասն երևանցւոց Հարկին տալոյ:**

Յորմէ սիրով և օրհնութեամբ և քրիստոսաւանդ ողջունիւ գիտութիւն լիցի գերազնիւ սիրելոյդ մերոյ և Հաւատարիմ որդւոյդ Սրբոյ Աթոռոյս՝ բարեպաշտ և ազնուական և պերճապատիւ մելիք Աւետիք աղայիդ:

Չի յօգոստոսի 20 գրեցեալ թուղթ քո էհաս առ մեզ ի սեպտեմբերի 6, և ծանեաք զգրելոյդ, որ սրտացաւորէն զեկուցեալ էիր մեզ զմիտս քրիստոսազօր մեծի արքային՝ ազդ առնել իշխողին երկրիս առ ի վճարել զՀարկան, և թէ ոչ անսայցէ, զգուշացուցանել զմերայինսն և զվանորայս և այլն:

Արդ, սիրելիդ մեր, դուք լաւապէս և իմանայք զստաՀակութիւն սորա, որ թէ իւրոցն ումանց Հաւատարմաց ոչ լսէ, մեզ որպէ՛ս անսայ, մինչ ամենեքեան այնպէս Համարին, թէ գձեզ օգուտն միայն ջանամբ և ոչ իւրեանց: Եւ կամ զի՛նչ Հնարէ մեզ ամրացուցանել զմերսն, մինչ ահա ի ձեռս նոցա է թողուլն և վարելն, պահելն

և չարչարեին: Ուրեմն յայնժամ յայնպիսի յամառութեան նոցա ոչինչ էր օգուտ խօսիլ ընդ նոսա և բան ինչ առաջադրել: Այլ մինչ Սուլեյման սարդարն ընդ Խօյու խանին կրկին դիմեցին ի վերայ երկրիս, որով անհնարին աղէտք Հասին բնակչացն, և յետոյ օրհնեալ արքայն զուսադրութեան թուղթ գրեաց առ խանն, յայնժամ խոնարհեցաւ սա ի յամառութենէն, և մէք մինչ յԵրևան էաք գնացեալ ի տեսութիւն նորա, խօսեցաք զբանս օգտաւորս՝ վերստին Հնազանդիլ մեծի արքային, և ծառայել ըստ վերացման Հօրն իւրոյ և ի շինութեան պաշէլ զերկիրս:

Եւ սա Հաւանութիւն եցոյց և խոստացաւ ծառայել և տալ զՀարկն: Վերջապէս գՔեալբալի բեկն յղեաց յայդր ի սպաս մեծութեան նորին, թղթոնք իւր և Հասարակին: Ընդ որում մէք ևս գրեցաք զթուղթ տաճկերէն: Ապա դարձեալ մեր յԵրևանու ի Սուրբ Աթոռս, մինչ միրզայ Աբրահամն ի Խօյու դարձեալ եկն աստ և էանց յԵրևան գալ յայդր, գրեցաք առ օրհնեալ արքայն զիշեալ բանքս երկարապէս, Հանդերձ մեր ևս նեղութեամբք և վնասութիւնք:

Եւ զայս թուղթ Համառօտ առ ազնիւ սիրելիդ գրել պարտ վարկաք, ի պատասխանի թղթոյն քո, որով և խնդիր ի խոհական սիրելւոյդ, զի և դու յորդորօղ լիցիս քրիստոսազօր մեծի արքային, զի ընկացի զբանս Քեալբալի բեկին, որ եկեալ կայ այժմ ի սպաս, և երկայնամիտ լինելով խաղաղութիւն առնել [33բ] կամիցի ընդ սոսա, և գերազանց Հանճարով իւրով դիւրաւ ի ձեռն բերցէ, զի ըստ յօժարամիտ խոստման իւրեանց Հնազանդեալ ծառայեսցեն և զՀարկն վճարեսցեն՝ միջոց առ միջոց յղելով, որով թերևս Հանգստութիւն լիցի բազմավնասակիր երկրիս, և մի իսպառ յաւերութիւն Հասցէ: Որոյ աղագաւ և մէք շնորհակալութեամբ օրհնօղ լինիմք տէրութեան նորին և ձեզ ամենեցուն առ նովաւ եղէրոց: Ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԽԳ. (1794) թուոյս եւ ի Հոկտեմբերի ..., ի Սուրբ Աթոռս Էջմիածին¹³¹:

ՄՄ ձեռ. Հ⁶ 453Ց, էջ 33աբ

574 **1794 թ. Հոկտեմբեր** - թուղթ ի Մեծն Պօլիս առ պատրիարքն վանն Կարնոյ գործակալին մերոյ՝ պարոն Հայրապետի բանին, մինչ աներձագն նորա՝ Թարճիմանեան Պօղոսն

¹³¹ Թիֆլիսի մելիք Ավետիքի անունը հիշատակված է դեռևս 1779 թ. մարտի 2-ի վճռագրում կապված հաղթատապատկան նորաշեն եկեղեցու և Փիլիպոս Այաթմազյանի (Այաթմազավիլի) վեճի հետ: Նամակագիրը նշում է, որ վիճաբանության առթիվ Վրաց քաղաքի և Անտոն արքայազն պատրիարքի հրամանով գործը ֆինելու նպատակով հոգևորականներից և աշխարհականներից կազմված խումբ է ձևավորվել, որի կազմում էր նաև Թիֆլիսի մելիքամասախլիս Ավետիքը (Պ. Մուրադյան, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, էջ 197): Վավերագրի ամբողջական հրատարակությունը տես՝ ԴձՊ, գիրք Դ., սյուն 640-642:

գնացեալ ի մէծն Պօլիս դաւայ առնէր ընդ նմա, իզուր պաշանջմոննս առնելով¹³²:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 33բ-4ա

488ա

1794 թ. սեպտեմբեր- հոկտեմբեր

575 Ի վերոյ նշանակեալ Համայն թուղթքն Մեծին Պօլսոյ և Ադրանայու ի սեպտեմբեր ամսոյն գրեցան, որոց և ամսաթիւքն եղան սեպտեմբերի ի Է. (27): Բայց մինչ կամեաք զայլ թուղթս ևս գրել և ընդ նոր նուիրակին յղել վրդովեցաւ երկիրս ի Համբաւոյ կրկին յարուցման սարտարի շահին, ուստի առաքումն նուիրակին արգելեալ, թուղթքն ևս մնացին մինչև ի հոկտեմբեր ամիսն: Ապա մնացեալ գրելիքն ևս ի նոյն հոկտեմբեր ամսոյն աւարտեալ և ամսաթիւն գեղն եղեալ ուղևորեցաք ի նոյեմբերի Է. (7) ընդ նորոգ նուիրակ Գալուստ վարդապետին: Ընդ որում ելին և Թօխաթու նուիրակ Բարսեղ վարդապետն և Վանայ նուիրակ Աբրահամ վարդապետն:

Արդ, կամելով մեր զԳալուստ վարդապետի տարեալ թուղթման Համաժողով կարգել զի հոկտեմբերի էջն գրեցեալն ևս աստանօր դնեմք ի կարգի թղթոցն ի սեպտեմբերի ի Է. (27) գրեցելոց:

1794 թ. հոկտեմբեր - Ի Մեծն Պօլիս և ի Քեօթազիս

576 Թուղթ առ Պօլսոյ պատրիարգ Չաքարիս վարդապետն. ծանուցումն երկարօրէն յետին անցիցն երկրիս և յանձնարարութիւն նորառաք նուիրակ Գալուստ վարդապետին և պատասխանագրութիւնք ինչ յառաջագոյն և այժմ գրեալ թղթոց նորին: Որում ի նշան սիրոյ ընծայ ևս յղեցաւ: Փուսուլայ ևս գրեցաւ առ սա յաղագս Մշու Սուրբ Կարապետի վանից նորոգ առաջնորդ Յակոբ վարդապետի կարմրադեղիւ դրոշմելոյն զկնիքն: Տէս ի մեծ տետեր յերեւն] 2123:

577 Եւս թուղթ առ պատրիարգն. յաղագս Կարնոյ գործակալին մերոյ՝ պարոն Հայրապետի բանին, մինչ աներձագն նորա՝ Թարջիմանեան Պօղոսն գնացեալ ի Պօլիս դաւայ առնէր նմա [488բ] իզուր պաշանջմոննս առնելով: Օրինակն է ի փոքրագիր տետեր յերեւն 66:

578 Թուղթ առ վէրիլ Յովհաննէս վարդապետն. յանձնարարութիւն վասն նոր նուիրակ Գալուստ վարդապետին: Տէս ի նոյն տետր յերեւն] 245:

¹³² Կարնո գործակալ Հայրապետի աներձագի հարցով Կ. Պոլսի պատրիարքին ուղղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 642:

Նոյնաբովանդակ նամակներ են ուղարկուել նաև Երուսաղեմի վեբիլ տիրացու Սարգսին (488բ, Ա./2), աղայ Նիկողայոս մաշտեի Եղիազարեանին. «վան առ ինքն եղեալ դրամոյն Սրբոյ Աթոռոյս, տալ նորոգ նուիրակ Գալուստ վարդապետին» (Ա./3), Մասեհեան պարոն Եսայոն. «շորհակալութիւն վանն Ուռումէլու նուիրակ Գրիգոր վարդապետին եւ բան վանն եղբօրն իւրոյ պարոն Ալէքսանին» (Ա./4), պատրիարքի եղբորորդի տէր Պօղոսին (Ա./5): Նամակ մաշտեի Բաղդասարին, որը վերաբերում է նրա որդի մաշտեի տիրացու Յարովթինսի վերադարձին (Ա./6):

579 **Ի Քեօթահա** - Թուղթ առ գանձապետն մեր մաշտեի Խաչատուրն. յանձնարարութիւն վանն ներառաք նուիրակ Գալուստ վարդապետին և պատուէր, զի ընդ նմա Հոգասցի ի շինեցուցանել զապակի աղիւնն յաղագս ներքին կողմանցն որմոցն սրբոյ աստուածեան տաճարիս:

580 Թուղթ առ մաշտեի Կարապետն և առ նորին եղբայր Եաղուայն. յանձնարարութիւն նոյնպէս վանն նուիրակին և բան սակս շինեաց շինմանն երկոցունց օրինակն: Եւս է ի փոքրագիր տետր յե[րեան] 153 և 4:

581 **Ի Ղվնասիա** - Թուղթ առ Ամասիոյ առաջնորդ Յովհաննէս վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի ՌՄԽԱ. (1792) թուոյ նոյեմբերի Լ. (30): Այս թուղթ ի սոյն թուոջ մայիսի ԺԸ. (18) գրեցաւ, իսկ ի պատճառս վրդովման երկրիս մնաց մինչև ցարդ և այժմ ի լուսանցն զառիթն երկարելոյն ծանուցեալ և ի նոյն տեղոջ զամնաթիւն ի էրն Հոկտեմբեր ամսոյն եդեալ, Հանդերձ ընծայիւք՝ զմի թիրմայ շալիւ և երկու հնդու մաշտամայիւ յղեցաւ ընդ Գալուստ պետին: Տէս ի տետեր Փիլի[պոսի], յե[րեան] 172:

Մինչև ցարդ գրեցեալ թղթոց ամնաթիւքն եդան ի Հոկտեմբեր ամսոյ էրն, որք և յղեցան ընդ Գալուստ պետին, որպէս ի վերդ ևս ծանուցաք, որք ի Հոկտեմբերի մէկէն մինչև ցէլն գրեալք և առաքեցեալք են:

488բ

582 **Ի Հուշի** - Թուղթ առ տէր Յովհաննէս և տէր Միքայէլ քահանայն. յիշումն թղթոց մերոց առաջնոց և ծանուցումն զտեղոյս որպիսովթեանցն՝ զգալստենէ սարտարին և զվնասուցն Երևանու երկրին և զայլոց:

Գրեցաւ և յղեցաւ Երևանու ի Հոկտեմբերի Թ. (9):

583 **Ի Կարս** - Թուղթ առ Գէորգ աղայն. ծանուցումն երկարօրէն զտեղոյս անցիցն, որ և յղեցաւ Երևանու, ընդ թաթարի փաշայի տեղոյն:

Գրեցաւ ի Հոկտեմբերի Ժ. (10):

584 **Ի Թիֆլիզ** - Թուղթ առ մէլիք Մինասն ի դարձ թղթոյն ի սեպ[տեմբերի] ԺԸ. (18) գրեցելոյս: Եւ զտեղոյս որպիսու թեանցն մի առ մի ծանուցումն: Եւ թէ սոքա սրտիւ ըմբռնեալ են զարքայն, որպէս լսելոց էս: Աստուած վերջն բարի արասցէ:

489ա

585* **Թուղթ առ տէր Ղազար քահանայն** ի դարձ թղթոյն յօգոստոսի մուտն գրեցելոյ: Եւ վասն մտածութեանցն (որպէս թէ ոմանք գրեալ իցեն զինքենէ բանս առ սրբազան Վեհրն և սրբազանն դժուարեալ իցէ) միամտութիւն, եթէ մէք զքեզ Հարազատ որդի գիտեմք Սրբոյ Աթոռոյս, անհոգ լէ՛ր: Եւ թէ վասն տէր Դաւթի գործակալութեանն ի վերայ ճորտիցն մերոց գնացեալ էս, յայլ կարծէս միամիտ լէ՛ր. մէք ըստ ինդրոյ նոցին և քանիցս գրեցելոցն կարգեալ եմք վերակացու նոցա ի թեթեւութիւն ձեզ, ըստ որում դուք ձեռնհաս չեղէք նոցա վասն բազում զբաղանաց: Խոստացեալ եմք կոնդակ ևս յղել վասն նոցա: Եւ յաղագս ասեղնագործ յիշատակին ձերոյ, ահա օրհնութեան թուղթ գրեալ յղեցաք ի միամտութիւն: Եւ վասն Ծ. (50) թումանի արքային, եթէ գրեցաք առաջնորդին փութով Հոգալ և տալ իսկ թէ յայդր չիցէ, ուրևիցէ գրեսցես, որ փութով վճարեսցէ և տայցէ:

586* **Թուղթ օրհնութեան առ սոյն տէր Ղազար աւագ քահանայն և առ Հարսն իւր Մարիամն՝** վասն սրբոյ Գեղարդեանն ասեղնագործ ազնիւ ծածկոցին¹³³:

587* **Թուղթ առ առաջնորդ Մարտիրոս պետն** ի դարձ թղթոյն՝ վասն Կ. (60) թումանին ընդ Յովաննէս վարդապետին յղեցելոյ, եթէ մեզ էՀաս. ահա զղաւզն գրեալ յղեցաք ի միամտութիւն քեզ: Իսկ սակս ծխախնդիր աղջկանն, որ զԻ. (20) թումանն ոչ էր առեալ, մնասցէ առ ձեզ՝ ինքն գիտասցէ: Վասն Ջկրաշէն եկեղեցւոյ տէր Յօհաննի կնոջն՝ Մագդաղիսէին, եթէ եկն ի Սուրբ Աթոռս և ետ Հոգեբաժին ի կողմանէ տէր Յօհաննի յիշեցելոյ Ե. (5) թուման, որ զկնի մահուան նորին ոչ ոք պահանջեսցէ զդրամ ինչ վասն Հոգեբաժնի եւ մէք զթուղթ օրհնութեան շնորհեալ գրե-

¹³³ Եկեղեցական վարագույրը ներկայումս Հայաստանի պատմության քանգարանի հավաքածուում է, որն առաջին անգամ ուսումնասիրել ու հրատարակել է Եվգենե Մուշեղյանը: Հեղինակի նկարագրությամբ՝ ծածկոցը դարչնագույն կտորից է, կլապիտոնով և ոսկերեղով գործած, կարմիր մետախտե շրջանակի մեջ: Վրան պատկերված է Քրիստոսի խաչելության տեսարանը՝ մանրամասնությամբ. աջ կողմում կանգնած են երկու զինվոր, որոնցից մեկը Գեղարդը խել է Քրիստոսի կուրծքը, ձախ կողմում Ս. Մարիամ Աստվածածինն է, խաչի վերևում՝ արևի և լուսնի խորհրդանիշները, ներևում Ադամի գրվաթ: Վերին խաչաքարին գրված է. INRI - «Յիսուս Նազովրեցի թագաւոր հրէից», իսկ ծածկոցի ներհամասում 1793 թ. հետևյալ հնգատող արձանագրությամբ. «Յիշատակ է Սբ. Գեղարդիս ծածկոցն Սբ. էջմիածնայ գործակալ եւ վանքի Սբ. Ա(ստուա)ծածնի եկ(ե)ղ(ե)ցւոյ անարժան սպասաւոր Տ(է)ր - Ղազարիս, իմ հարս Մարիամին, որք յօծար կամօք մերովք եւ մեծաւ փափագանօք ընծայեցաք տ(եառ)նամովս Ս(ր)բ(ո)յ Գեղարդին, ի ձ(ե)ռն Դանիէլ վար(դա)յ(եառ)ին, թվ(ին) ՌՄԽԲ. (1793)» (Հատկանշական ցուցակ քանգարանային ժողովածուների, սրակ 1. Հայերեն արձանագրությամբ առարկաներ, աշխատ.՝ Ե. Մուշեղյանի, Երևան, 1964, էջ 110-111, արձ. 144):

ցաք այնպէս, և թէ սրբոյ Գեղարդին ասեղնագործ սփռոց մի ևս ետ ի յիշատակ ինքեանց: ԾԵ. (55) Հատ սերկեպիլ էիր յղեալ ընդ մէլիքի փեսայ Բարսղին, ընկալաք օրհնութեամբ: Ծ. (50) Թուման տեղոյդ դրամ՝ Հոգացեալ փովմանակի, տացես արքային՝ ի դիմաց մերոց, ըստ որում գրեալ էմք նմա, եթէ գործակալն մեր Հասուցանելոց է քեզ և մինչ Հասուցես՝ ծանուցես մեզ:

588* **Ղազ** մի առ սա վասն Կ. (60) Թումանի այլմշուղին արդեանցն Սրբոյ Աթոռոյս, զորս յղեալ էր ընդ Յովաննէս վարդապետին:

589* **Թուղթ** առ տեր Դաւիթն, ի պատասխանի թղթոյն ընդ արքայի թղթոք գրեցելոյ: Տէ՛ս զմիջալ տետէր յերեսն 151:

590* **Թուղթ** առ մէլիք Աւետիքն ի պատասխանի թղթոյն, որ ընդ արքայի թղթոյն գրեալ էր: Տէ՛ս զմեծ տետէր 2025 Համարն:

Այսոքիկ թուղթք ի միասին գրեալք առաքեցան և եղան ամսաթիւքն ի ԺԴ. (14):

591 **Ի Ղօշավանք** - Թուղթ ի Ղօշավանք առ նորին առաջնորդ Յովհաննէս պետն ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի կողմանէ Ախլցիսայու առաջնորդ Յովհաննէս վարդապետին: Նախ շնորհակալութիւն վասն Քեահեայ բէկին գիր գրեցուցանելոյն ի վերայ Շէրիֆ փաշային: Երկրորդ, պատուէր, զի գրելն Յովհաննէս վարդապետին զգիր մեզ յղել, զի յայնժամ գրիցեմք նմա ևս զգիր: Եւ ապա զպարոն Գէորգի գրոյն, թէ ահա յղեցաք քեզ Հասուցանել նմա:

592 **Ի Կարս** - Թուղթ ի Կարս առ պարոն Գէորգն, յորում գրեալ էմք, թէ վասն Հարկատրութեան սրբոյ Տանս ԱՃ. (100) թիւանի լիտր ճրագուի իւղ առնուս և յղես: Եւ թէ ի Քեահեայ Մահմատ բէկին գիր առնուլդ և յղելդ ի վերայ Շարիֆ փաշային, ի ձեռն փայեկի, վասն մեր Յովհաննէս վարդապետին շնորհակալ էմք:

Նաև ԱՌ. (1000) փայտ Գ. (3) տեսակ բերել տացես մինչ ի Ղարխին և մին բան ընծայ տամք բերողացն և այլն:

593* **Ի Թօխաթ** - Թուղթ առ նուիրակ Ներսէս վարդապետն ի պատասխանի գրեցեալ երից թղթոցն ի Մարսվանու և ի Թօխաթու: Նախ, թէ ահա ըստ գրեցմանդ զնուիրակական վիճակիդ յղեցաք զմեր որդի /489թ/ Բարսեղ վարդապետն և զԳալուստ վարդապետն ի Պօլիս: Եւ ի յարդեանց Սրբոյ Աթոռոյս ԴԴ. (4000) ղուռուշ յետ և յառաջ Հասուցեալ էր փօլիցայիւ ի Կարին պարոն Հայրապետին, ի ձեռն նորին օրթախ պարոն Թումանին, որոյ զղազն յղեցաք Հայրապետին Հասուցանել ինքեան: Եւ թէ

Ալիեան Սիմօն աղայի, մահտեսի Յարութիւնի և Գ. (3) կտակաց դրամն, որ վէքիլ Գասպարն առեալ է, որոց ջամն է ԲՃԺԵ. (215) ղուռուշ, մեզ է Հասեալ, միամիտ լէր: Եւ վասն սրբալոյս մեռնի օրհնելոյն էր Հարուցեալ, գրեցութենէ չունիմք ապահովութիւն օրհնելոյ՝ Աստուծոյ է գիտելի երբ լինեն: Նաև՝ վասն սպասաւորին իւրոյ Յովհաննէս վարդապետին, թէ եթէ մինչև ցայժմ չիցես յղեալ ի Կաստաման և ի ջանիկներն, յղեսցես, և դու ևս զտեղոյդ գործն վճարել ջանասցես և օր մի յառաջ եկեսցես: Եւ ի կողմանէ այն անզգամ քահանային, զոր գրեալ էս, այժմ չունիմք ժամանակ տալոյ զպատիժն նորին արարմանց, մնասցէ յայլում ժամու:

594* Ղաւզ մի առ սա գրեցաւ վասն վերոյ ԴԴ. (4000) ղուռուշին, թէ ահա յղեցաք պարոն Հայրապետին Հասուցանել քեզ ի միամտութիւն: Եւ այն ԲՃԺԵ. (215) ղուռուշն ևս յիշեցաւ ի ղաւզի այսմիկ:

595* **Ի յԱմիթ** – Թուղթ մի Համառօտ առ Ամբայ նուիրակ Դաւիթ վարդապետն, թէ յառաջ ընդ Սաղիմայ նուիրակ Գրիգոր պետին գրեալ եմք, զոր ինչ ծանուցանելին էր, այժմ որովհետեւ ԱՌԵՃ. (1500) ղուռուշ էս Հասուցեալ փօլիցայիւ ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն՝ ձեռամբ Աղայեկին, ահա նորին ղավզն յղեցաք ինքեան Հասուցանել քեզ:

596* Ղաւզ մի առ սա վասն ԱՌԵՃ. (1500) ղուռուշին վերոյ գրեցելոյ, թէ ահա յղեցաք պարոն Հայրապետին Հասուցանել քեզ զղաւզն, զի միամիտ լիցիս:

597* **Ի Կարին** – Թուղթ առ վէքիլ պարոն Հայրապետն ի պատասխանի չորից թղթոցն, յորում նախ թէ Երնջակու Սուրբ Կարապետի ժողովարար Գասպար վարդապետի մեռանելոյ ստոյգ լինեն և Անանիա վարդապետի յայդդ դառնալն ի Բայագիտու և քոյետ և յառաջ ԴՃԾ. (450) ղուռուշ տալն նմա և այլն: ԳՃԾ. (350) ղուռուշ ևս մեր տուածս, որ լինի ԸՃ. (800) ղուռուշ և Ա. (1) թամասուկ առնուլդ վասն այս ԸՃ. (800) ղուռուշին և յղելդ ի Պօլիս պարոն Եսայուն Մասեհեան, իմացաք: Առ այս և պատասխանի արարաք, թէ մեք քեզ չեմք գրեալ, եթէ Անանիա վարդապետն յորժամ ի քէն դրամ ինդրեսցէ տացես, այլ գրեալ եմք, թէ Երնջակու Սուրբ Կարապետի վանից առաջնորդ Կարապետ վարդապետն Սրբոյ Աթոռոյս ԳՃԾ. (350) ղուռուշ տալիք է և ահա զնորին թամասուկն յղեցաք քեզ, որ նորա ժողովարար Անանիա վարդապետն, երբ գայցէ կամ ի տեղդ և կամ ի Թօխաթ վճարելոց է, ուրեմն սպասեալ նորին գալստեանն, իցէ թէ ի տեղ-տոյդ առնուցուս և թամասուկն տացես, բայց որովհետեւ դու առանց մեր գիտութեան և գրելոյ տուեալ էս, այսուհետեւ մեք այն ԴՃԾ. (450) ղուռուշի տերն չեմք, ինչպէս որ տուած էս, այնպէս վերստին առնուցուս, զի մեք մեր տուածս, եթէ առնուցումք, շատ

Է մեզ: Նաև պատուէր՝ զգուշանալ այսպիսի բանից: Յիշեցաւ աստ յԻզմիրու եկեալ Մկրտիչ վարդապետին ևս ԲՃ. (200) զուռուշն տալն թարց մեր բանի, ինչևհիցէ՝ այս մէկիս զապուլ լինելով գրեցաք ասէ ի դավթարդ, բայց վերնոյն տէրն չեմք: Նաև գիտեցաք զՏաթևու առաջնորդի գիրն ընդ քոյ թղթոյդ ի մի պաշարանեալ յղելդ ի ձեռս Մասեհեան պարոն Եսայուն Հասուցանել առ նորին ժողովարար Պօղոս և Միքայել վարդապետն և ազդարարեալ ևս նմա՝ առնուլ ի նոցունց զԴՃԾ. (450) զուռուշն և թամասուկն առ քեզ թողեալ յետոյ յղել, բարուք է մինչ զնմանն ծանուցէ պարոն Եսային, մեզ գրեսցես: Եւ թէ Գօրօյենց Մկրտիչն, որ այն յԻզմիր ինքեան տուեալ ԳՃ. (300) զուռուշ նոր դրամ քեզ էր Հասուցեալ մեք ևս աստ ետուք տէր Յովհաննէսի որդի Աստուածատուրին: Նաև /490ա/ Թօխատու նուիրակ Ներսէս վարդապետի փօլիցայիւ քեզ Հասուցեալ ԴԽ. (4000) զուռուշի զաւզն աշա յղեցաք Հասուցանել ինքեան: Եւ թէ տեղոյդ նուիրակ Նիկողայոս վարդապետն սալամաթ եկն և տեղդ, որ ԱԽ. (1000) զուռուշ էր թողեալ քեզ մօտ, զայն ի Հաշիւ արկեալ գրեցաք ի դավթարդ: Ընդ նմին և նախշուանցուց առ քեզ թողեալ զուլթով մոմն և ԵՃ. (500) Հատ շիմիր դրգալն և Բ. (2) մեռոնի ամանան ևս Հասին մեզ: Չայս ևս գրեցաք, թէ Բալուբէկեան Յարութիւնի փեսայ Հայրապետին, որ ի տեղդ ԱՌԼՃ. (1800) զուռուշ փօլիցայ էս տուեալ որ աստանօր մեզ Հասուցանէ մինչեւ ԾԱ. (51) օր դարձուցանելոց, վասն որոյ և մեք Հաճեցաք մինչ առցուք զդրամն, գրելոց եմք քեզ: Յօհան վարդապետի եղբօր որդւոյ Յովհաննէսին քոյդ տուած ՀԵ. (75) զուռուշն ևս առաք: Դանիէլ վարդապետի և Ապրօյեան Մարգար աղայի յղեալ լուպայ թուլթունան և չախուքն մեզ Հասին, միայն թէ Մարգար աղայի յղեալ զուլթին և թղթով չախուքն տարեալ են քուրտքն, Հանդերձ քո թղթովն և Գ. (3) թամասուկովն: Եւ թէ Ամդայ նուիրակն, որ ԱՌԵՃ. (1500) զուռուշ է Հասուցեալ քեզ փօլիցայիւ՝ ձեռամբ Աղայեկին, աշա զղաւզն բարևագրով յղեցաք, յղեսցես առ նա, զի միամտիցի: Թարջիմանեան Պօղոսի ընդ քեզ արարեալ դաւայի աղագաւ, աշա գիր գրեցաք Պօլսոյ պատրիարգին և յղեցաք քեզ ընդ գրոյս: Եւ զասապ Մինասի Ժ. (10) զուռուշի թամասուկն ևս յղեցաք, առցես զդրամն: Ըստ գրեցելոյ քո ետուք տէր Սրապիոն քաշանային զկոնդակ ժողովարարութեան: Եւ թէ վասն բեռնակրացն Սրբոյ Տանս ԱՃԻ. (120) երկար ղօլան, Ծ. (50) Հատ կէս ղօլան, Դ. (4) Հատ մեծ խիզար, և Դ. (4) Հատ կարճ խիզար: Նաև ԱՃ. (100) լիտր սիսեռն՝ վասն Հարակաւորութեան Սրբոյ Տանս առեալ յղեսցես ընդ ուխտապանացն քիրայով: Եւ վասն վարժատան տղայոց մերոց և մահտեսաց ապայ եմք ինդրեալ, զայն ևս յղեսցես: Եւ վերջապէս յանձնարարութիւն Պօլսոյ նուիրակ Գալուստ և Թօխաթու նուիրակ Բարսեղ վարդապետացն:

490ա

598 **Ի Մատեն** - Թուղթ առ Մատեն Աղասիին սառաֆ Փիլիպպոս ամիրայն, յորում նախ ծանուցումն, թէ յառաջ քան զայս ի վերադառնալն աստի մահտեսի Միրզային գրեցաք ընդ նմա առ քեզ 1 զթուղթ, և երկրորդ՝ զվրդովմանէ և անցիցն երկրիս, և երրորդ՝ թէ Ներսէս վարդապետն զգործն նուիրակութեան աւարտեալ գոլով, ահա զԲարսեղ վարդապետն նուիրակ արարեալ առաքեցաք, որոյ վասն և յանձնարարութիւն:

Այս թուղթ ընդ նմա յղեցաւ և եդաւ ամնաթիւն ի ելն: Նաև վերոյ գրեալ բոլոր թղթոց ամնաթիւքն ևս եդան ի վերնոյ թղթոյդ ելն:

599 **Ի Շիրակաւան** - Կոնդակ ի վերայ Շիրակունայ գաւառի գիւղորէից, որ գրեցաւ ընդ Գրիգոր վարդապետին մինչ գնայր անդ ժողովել զառաջնորդական հասս և զիրաւունս:

600 Ընդ ամին և գրեցաւ թուղթ տաճկերէն առ Ղահրիմանի տղայ Պուտաղ բէկն՝ յանձնարարութիւն վասն նորա մսիթարութիւն վասն Հօրն իւրոյ չունեցելոյ ի գոգն քաչալին, նաև իբր պաշտաղլըղի ընծայ յղեցաւ:

Գրեցան սոքա եւս յամնոյս ելն:

1794 թ., նոյեմբեր

490ա

601 **Ի Հաղբատ** - Թուղթ առ Հաղբատայ առաջնորդ Դաւիթ վարդապետն, ի պատասխանի թղթոյն, յորում թէ՛ թուղթդ առ մեզ հասեալ էր վաղապէս, բայց վասն երկրիս խառնակելոյ, չժամանեցաք առնել զպատասխանի և այժմ այսու իմն: Ձի յաղագս Գօրու գործակալաց և ոմանց հասից ժողովրդեանն գլխացաւութիւն լինի գրես, որոյ վասն և Սուլխան Դիւանն ևս էր գրեալ: Բայց մեք զքեզ առաջնորդ եմք կարգեալ, որ յաստուածակոյս կողմանէ այդպիսեաց բանից վճռահատ լիցիս և ոչ մեզ գլխաւորութիւն հասուցանես: Տէս ի փոքրդիր տետեր յե[րես] 154:

Գրեցաւ յամնոյս Բ. (2):

490բ

602* **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովհաննէս պետն, ծանուցումն թղթոյն առ մեզ հասանելոյն ընդ մահտեսի Ստեփանին և վասն ի Պօլսոյ եկեալ մահտեսի Մկրտիչ առն, եթէ եկեալ ի Սուրբ Աթոռս ի Ղազարապատն ոչ իջեանեցաւ, այլ գնաց ի տուն եղբօր որդւոցն և անդ կայ: Նաև՝ յաղագս սրբոյ Երուսաղէմի նուիրակ Կարապետ վարդապետին յանձնարարութիւն. գրէ ևս՝ Ստեփանն ասաց, թէ ի Կարնոյ Ասլան աղայէն թուղթ եկն առ նուիրակն Սաղիմայ, յորում ծանուցեալ էր, թէ Մշու Սուրբ Կարապետի առաջնորդ Յակոբ վարդապետն եկն ի քաղաքս և աստի զինչ լինին չիմացաք, առ որ հարկ, զի զայն Աս-

լան աղայի թղթոյ Յակոբ վարդապետի աղագաւ գրեալ բանի օրինակն՝ Հանդերձ ամնաթուով վերառեալ յղեցես առ մեզ ընդ եկողի: Նաև՝ Էրզրումու փաշայի մանզուլ լինիլն, եթէ է ստոյգ զայն ևս ծանուցես մեզ:

603* **Թուղթ առ սրբոյն Սաղիմայ Կարնոյ և Կարսայ նուիրակ Կարապետ վարդապետն, նախ, թէ թուղթդ վաղ ուրեմն առ մեզ Հասեալ գողով, յաղագա վրդովմանցն երկրիս չժամանեցաք գրել զպատասխանին և այժմ ըստ գրեցելոյ առաջնորդ Յովհաննէս պետին գիտացեալ զքոյդ ի Ղօշավանք գալն, ահա զդարձն թղթոյդ գրեալ յղեցաք առ նա Հասուցանել քեզ, որում և յանձնարարական բանս գրեցաք վասն քոյ և առ պարոն Գէորգն ևս գրելոց եմք:**

Գրեցան թուղթքս յամնոյս Դ. (4):

604* **Ի Թօխաթ - Թուղթ առ վէքիլ պարոն Գասպարն ի պատասխանի թղթոյն, թէ Գ. (3) կտակացն ԿԵ. (65) ղուռուշ դրամ, զոր առեալ ես և յանձնեալ զԻզմիրու եկօղ Մկրտիչ աբեղային, իմացաք և ղապուլ արարաք: Բայց կտակատեարց անուանքն պարզ չէիր գրեալ միայն ղոյումձի Պետրոսի մօր ԻԵ. (25) ղուռուշ կտակն պարզապէս էիր նշանակել, որոյ թուղթն օրհնութեան ահա յղեցաք մինչ վերստին պահիցի բացառապէս ծանուցես: Եւ թէ գրեցաք նուիրակ Ներսէս վարդապետին, թէ ի կողմանէ Աւիեան Սիմօնի կտակին և թէ Հօրդ կտակին և թէ քոյ առեալ Գ. (3) կտակացն, մեզ են Հասեալ, միամիտ և անհոգ լ՛ն ր:**

Օրհնութեան նամակներ ղոյումձի պարոն Պետրոսին. «վասն Հանգուցեալ մօրն իւրոյ ԻԵ. (25) ղուռուշ կտակին» (490բ, Ա./4), Աւիեան Սիմոն աղայի որդիներ պարոն Կարապետին եւ պարոն Մկրտչին. «յաղագա Ծ. (50) ղուռուշ կտակի Հօրն իւրեանց» (Ա./5): Շէշեր վէքիլ մահտեսի Յովհաննէսին եւ նրա մայր մահտեսի Տուտին (Կարին) շնորհակալութիւն է յայտնում 2 ոսկի աջահամբոյրի Համար (Ա./6-7):

605* **Թուղթ առ Գօրօյեան մահտեսի Խյաչատուրն և նորին եղբայր մահտեսի Սերօբն ի դարձ նոցին գրեալ թղթոյն, թէ Դանիէլ վարդապետի և Ապրօյեան Մարգար աղայի յղեալ ամանաթքն մեզ Հասին ձեռամբ Մկրտիչ աբեղային, միայն թէ Մարգար աղայի յղեալ թղթով չախու և ղութին ի Բայագիտ Հողումն քրտերն տարեալ են: Եւ ի կողմանէ բամբակի տալացուին ձերոյ, որ ԱՌ. (1000) ղուռուշ Հին դրամ էք յղեալ, Հասեալ է ի Բայագիտ մեր վէքիլ տիրացու Գէորգին ի Հարկէ մեզ Համնի և մէք սոյն Ռ. (1000) ղուռուշն գրեցաք ի վերայ Աւետիքի տուեալ թամասուկին: Իսկ զմնացեալն, երբ կամիք, յայնժամ յղեսցիք, զի դուք յատուկ մեր սիրելի էք: Ողջոյն գրեցաւ եղբօր որդւոյն իւրեանց Հաճի Յակոբին:**

Պատասխան նամակներ, շնորհակալագրեր եւ յանձնարարագրեր էն ուղարկուել ներքոյիշեալ անձանց. Հաճի Բաբային. «վանն ի Կարնոյ դարձեալ նուիրակ Նիկողայոս վարդապետին եւ բան վանն Հասանդալայու առաջնորդ Ալէքսան վարդապետին» (491ա, Ա.), Ճեվաճիրճի Սերոբ ամիրային. «վանն սիրոյն և Հարազատութեանն առ Սուրբ Աթոռ» (Ա./2), Ակնի առաջնորդ Միքայել վարդապետին. «վանն նորոգ նուիրակին մերոյ Բարսեղ վարդապետին» (Ա./3), Արապկիրի առաջնորդ Մարտիրոս վարդապետին. «յաղագս նոր նուիրակ Բարսեղ վարդապետին յանձնարարութիւն» (Ա./4), Ախիջան աղային (Վան). «վանն նորոգ նուիրակ Աբրահամ վարդապետին... Հանդերձ շնորհակալութեամբ մաշտոցացն» (Ա./5), նաև՝ «փոստույ առ սա, յորում թէ Ա. (1) թիմայ շալլէցաք» (Ա./6), Պարիկեանց մաշտեսի Սահակին եւ եղբայրներին, ինչպէս նաեւ տեղի փաշային. «վանն նոր նուիրակին մերոյ Աբրահամ վարդապետին: Ընդ նմա ընծայ եւս յղեցաւ առ նա» (Ա./7-8): Նամակները գրուել էն նոյեմբերի 7-ին:

Նամակ թփֆլիսի գործակալ Ղազար ասագ քաշանային, ուր յիշատակուով է միրզա Աբրահամի միջոցով մէլիք Աւետիքին Հասցեագրուած նամակի մասին. «յորում և գոյր առ արքայն (Վրաց – Ա. Յ.) Հասանելի թուղթ: Նամակի բովանդակութիւնից երեսում է, որ մէլիք Աւետիքը նամակը արքային չի Հասցրել (Ա./9):

606 **1794 թ. 7 նոյեմբերի - Թուղթ ի Վան առ Ախիջան աղայն.** յիշումն յառաջ գրեալ թղթոյն մերոյ և յանձնարարութիւն վանն նոր նուիրակ Աբրահամ վարդապետին¹³⁴:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 34աբ

607 **1794 թ. 7 նոյեմբերի - Թուղթ ի Կարին առ Հաճի Բաբայն ընդ Պօլսոյ և Թօխաթու նուիրակացն.** շնորհակալութիւն վանն ի Կարնոյ դարձեալ նուիրակ Նիկողայոս վարդապետին, և բան վանն Հասանդալայու առաջնորդ Ալէքսան վարդապետին, որ ի վանիցն Հրաժարեալ, անդ շրջմըլէր¹³⁵:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 35աբ

608 **Թուղթ առ Հաղբատայ առաջնորդ Դաւիթ վարդապետն.** շնորհակալութիւն վանն փայտեղինացն և բան վանն օրինազանցից ի Ղազախ եղելոց, որոց վանն բանադրանս ինդրեալ գողով մէք և գրեցաք, և այժմ մինչ ձայն ինչ ոչ Հանէին, գրեցաւ թէ, եթէ անպարտ էին, ընդէ՛ր բանագրել ետուր, իսկ թէ պարտաւոր, ընդէ՛ր լռեցաւ բանն, և թուի թէ թուղթն մեր ծածկեցեր, և Հարկ՝ ծանուցանել զորպէսն այսմ եղելութեան: Այս թուղթ ը. (8)

¹³⁴ Վանի Ախիջան աղային՝ նոր նվիրակ Աբրահամ վարդապետի հարցով հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՉՊ, գիրք Գ., սյուն 642:

¹³⁵ Կարինի հանի (մահուտեսի) Բաբային հասցեագրված Կ. Պոլսի և Թոխաթի նվիրակներին, Կարնո նվիրակ Նիկողայոս վարդապետին և Հասանդալայի առաջնորդ Ալեխան վարդապետին հղված շնորհակալագրի համառոտագրությունը տե՛ս ԴՉՊ, գիրք Գ., սյուն 642:

ի սոյն ամսոյ Բ. (2) առ սա գրեալ թղթոյն գնաց, թեպէտ յաղագս պատճառի միջոցաւ եդան ի միմեանց:

609 **Ի Նախշուան** - Թուղթ առ սուրբ Երնջակու Սուրբ Կարապետի վանից առաջնորդ ծերունի Կարապետ վարդապետն, շնորհականութիւն յաղագս գրարինսն ջրաղացի յուղարկելոյ ընդ միաբանին իւրոյ՝ Մարկոս վարդապետին: Եւ բան վասն ժողովարարին իւրեանց՝ Անանիա վարդապետին, որ գնացեալ փոխանակ օգնութիւն առնելոյ վանիցն իւրեանց, բերելով զժողովեալ դրամնն Հանգուցեալ Գասպար վարդապետին, կրկին պարտք առնէր գինոյ վաճառելով, ուստի գրեցաւ, զի Հոգս իմն եթէ կամիցին, առնիցեն փութով, առաքելով՝ 491թ՝ զայլ ոմն պատշաճաւոր անձն ևս: ԶՄարկոս պետն խիլայեցաք արկանելով ի վերայ զփիլոն խարայ:

Երեք կին թուղթքս վերոյ նշանակեալք գրեցան յամսոյս Թ. (9):

610* **Ի Խոյ** - Թուղթ առ նուիրակ Սողոմոն վարդապետն, թէ թղթոյդ պատասխանն վաղապէս գրեալ առաքեցաք ի ձեռս պարոն Բաբաջանին Հասուցանել առ քեզ և այժմ՝ նմանէ ծանեաք գրութեամբն առ քեզ Հասուցանելն թղթոյն մերոյ և քոյ Հասուցանելը նմա զգինն ղաճվայի և միամտեցաք: Այլ այնու թղթովդ գրեալ էիր, թէ գնալոց եմ ի Հաղբակ և մինչև ցայժմ զորպիսութիւն ինչ չիմացաք զքէն և զանդ գնալոյդ, միայն լսեմք յեկեղաց, թէ ի Սալմաստ ես, ինչևիցէ՝ յայսքան միջոց յայդրէն յամենալդ բաւական Համարելով ելեալ եկեսցես ի Սուրբ Աթոռս, զի ըստ գրեցելոյդ աւարտեալ իսկ ես զգործդ ի Հարկէ:

Պատասխան նամակ վերոյիշեալ պարոն Բաբաջանին, ուր ծանուցում է նրանից նամակն ստանալու եւ ղաճվայի գինը նուիրակի միջոցով ուղարկելու մասին: Տեղեկացնում է, որ Բաղդադի Եփրեմ վարդապետի եւ միւսների թղթերը, որոնք յղել է պարոն Բաբաջանը, բոլորը տեղ են Հասել եւ «վասն բեռանցն Եփրեմ պետին մնացել, մինչև ինքն գայցէ». յաւելում է՝ լսել է, թէ արդէն քարաանով ճամփայ է ընկել: Ծանուցում է նաեւ Բաբաջանի եղբայր Միքայելի՝ Շիրազից գալու եւ Էրզրում գնալու մասին (491թ, Ա./2): Նոյն անձնաւորութեանն ուղղուած երկրորդ նամակում յայտնում է, որ ստացել են Եփրեմ վարդապետի նամակը եւ ուղարկում են պատասխանը (Ա./3): Վեհափառն ուրախութեամբ է ընդունում Եփրեմ վարդապետի ժամանումը Որմի. «զի ի վերայ Բայազտու ելեալ եկեսցէ զգուշութեամբ եւ յանդ Հասանին ազդեսցէ մեզ, որ զմարդ առաքեալ սալմաթ բերցուք» (Ա./4): Նամակները գրուել եւ ուղարկուել են նոյեմբերի 21-ին:

611* **Ի Բաղէշ** - Թուղթ առ Խնդրակատար Սուրբ Աստուածածնի վանս ստոզ Մանուէլ վարդապետն, եթէ թուղթդ մեզ էՀաս, բայց մեր յառաջքան զայս մինչ յաղագս գանձանակաց արդեանց զկոնդակս գրեցաք ի վերայ տեղւոյդ ժողովորդեանն, ընդ նմին և զթուղթ առ քեզ գրեցաք, զորս և յղեցաք ի ձեռս գանձապետին մերոյ: Իսկ այժմ մինչ գրես, թէ ոչ թուղթ ընկալայ և ոչ

բան ինչ իմացայ յաղագս իմոյս յղեցեալ Խ. (40) զուռուշ աջաւամբ ուրին: Առ այս պատասխանեցաք, թէ մեք զբոյր յղեալ դրամն ընդ տիրացու Յակոբ բերողին յետս դարձուցաք և գրեցաք ևս ելեալ եկեսցես ի Սուրբ Աթոռս և ներկայս զօրհնութեան թուղթ ինդրես, այն ոչ լինի, այլ եկեսցես ի Սուրբ Աթոռս թարց մտածման և երկիւղի, զի ծանօթացեալ քոյ Սրբոյ Աթոռոյս և մեր զքեզ յայնժամ մերս կոնդակաւ օրհնութեան առաջնորդ կարգեսցուք և թէ ոչ կամեցեալ զգայցես, յայնժամ կրելոց ես ի մէնջ զպատիժ: Նաև՝ յաղագս ի նորոյ յղեալ Գ. (3) եալտուզ ոսկւոյ աջաւամբ ուրին, օրհնութիւն և շնորհակալութիւն:

612* **Թուղթ առ սոյն Մանուէլ վարդապետի եղբայր մէլիք Ամիրն, եթէ թուղթդ ժամանեաց առ մեզ և ծանեաք զինդիրդ՝ յաղագս շնորհելոյ եղբօր քո Մանուէլ պետին զկոնդակ Հաստատելոյ առաջնորդութեան, բայց մեք քցեալն ընդ գանձանակի կոնդակացն գրեցաք առ նա զթուղթ և գրէք այժմ, թէ չէ Հասեալ: Ահա այժմ գիտասցիք, զի Մանուէլ վարդապետն թարց այլևայլ պատճառի պարտի գալ մահաւարական թղթով ի Սուրբ Աթոռս և ընտանենալ սորա և սորայնոցն և ապա մերս կոնդակաւ օրհնութեան Հաստատեսցուք /492ա/ զնա առաջնորդ ի վերայ վանից Եղվարդեանն և թէ այլ իմն պատճառս յօդելով չգայցէ, կրելոց է այնուհետև զպատիժ:**

Գանձապետ պարոն Յովհաննէսին ուղղուած նամակում նշում է իր եղբայր տիրացու Յակոբի՝ Մայր Աթոռ գալու եւ գանձանակադրամը փոխանցելու մասին: Յիշատակում է նաեւ, որ Յակոբը դիմել է Խնդրակատար Ս. Աստվածածնի վանաւայր Մանուէլ վարդապետին՝ Լ. (30) զուռուշ աջաւամբ ուր բերելու առթիւ՝ պատուիրելով լինել նաեւ «նորայ առաջնորդ» (492ա, Ա.):

492ա

613 **Ի այլ եւ այլ տեղիս - Կոնդակ ժողովարարութեան, որ գրեցաւ ի վերայ Խօյու, Թարվիզու և Գիլանու սակս զլարացի Աննա անուն ապաշխարողին:**

Գրեցան թուղթք յամնոյս ԻԲ. (22):

614* **Ի Թիֆլիզ - Թուղթ առ Վրաց արքայի թոռն՝ Դաւիթ միրզայն, եթէ թուղթդ ընդ տէր Պետրոս քաւանային ձերոյ էհաս առ մեզ և գիտասցուք զինդիրդ յաղագս շնորհելոյ նմա զկոնդակ ժողովարարութեան գնալ ի սուրբ Երուսաղէմ և այլ: Բայց մեր խղճալի ժողովուրդն ի տառապանս գողովի Հագիւ ուրեմն զիւրեանց պիտոյնս կարողանան Հոգալ և մինչ ըստ գրոյ Հօրդ քանեաց զկոնդակս եմք տուեալ, զտրտունջն նոցին կրեալ եմք, և թէ այժմեան ևս սմա շնորհեցաք, փոխանակ շահի վնաս էր յառաջիլոց, ուրեմն () պատշաճ տեսեալ խիլայիւք և խարճիով յետս դարձուցաք, ուրեմն և քեզ պարտ է առ չլինելութեան ինդրոյդ անմեղադիր առնել:**

Գրեցաւ յամնոյս ԻԳ. (23):

Ադրանայի (Ադրիանապոլիս) առաջնորդ Միքայել վարդապետին ուղղրած նամակում յանձնարարում է լաւ ընդունել Պօլսի նոր նուիրակ Գալուստ վարդապետին, որը փոխարինելու է Մինաս վարդապետին: Վերջինս քաղաքի գանձանակադրամն ու այլ տուրքեր տարել է Մայր Աթոռ (492ա, Ա/4): Պօլսի նուիրակ Գալուստ վարդապետին տեղեկացում է, որ Բայազետի Աստուածատուր վարդապետի գրած թուղթը տեղ է հասել: Նաեւ նշում է, որ յանձնարարում է շամշատեցի Նաւասարդին վճարել ԱՃ. (100) ղուռուշ, որը նա Երուսաղէմ գնալու ժամանակ տուել էր վանքին փօլիցագրով այսինքն՝ ստացականով (Ա/5): |492բ| Առանձին գրութեամբ Գալուստ վարդապետին տեղեկ է պահւում Ադրանայի առաջնորդին ուղղրած նամակի մասին (492բ, Ա/1):

615* **Ի Կարին** - Թուղթ առ Սրբոյ Աթոռոյս գործակալ պարոն Հայրապետն, եթէ զպատասխանի թղթոցդ գրեալ եմք ընդ Գալուստ պետին և այժմ'ի Հոկ[տեմբեր] գրեալ թուղթդ ևս էհաս ձեռամբ ղաթրչի Չաքարիային և Աինսա ապաշխարողին ընդ այլ գրեանց և նոյն ապաշխարողին, որ քեաֆիլութեամբ ումեմն զԱՃԾ. (150) ղուռուշ էիր տուեալ և թամասուկ առեալ առ մեզ յղեալ, որ առցուք աստ, ծանիր առ այն, զի մինչ նա եկն, չունէր ամենեկին մէկ փարայ, որ գոնեայ ճանապարհի խարճի ևս լինիցի ինքեան, վասն որոյ և ինդրեաց ի մենջ զկոնդակ, որ օգնութեամբ նորին հասցի ի տեղի իւր և մէք ևս ետուք:

Բայց ընդ նմա եկեալ Չաքարիայն խոստացաւ, թէ ես պարտիմ գնալ ընդ նմա մինչ ի Թարուեզ և մինչև ցանդ ժողովել դրամնն բերից և զպարտմն վճարեցից և մէք սպասեմք ժամանակ ինչ, եթէ բերեալ տայցէ, բարուք է, ապա թէ ոչ՝ զթամասուկն առ քեզ առաքեմք, որ ի քեաֆիլէն առցես: Եւ թէ ընդ Պօլսոյ նուիրակին առաքելի մէկ թուղթ մնաց և այժմ' գրեալ ընդ թղթոյս առաքեցաք, եթէ ի տեղդ է տացես ինքեան, ապա թէ գնացեալ իցէ, մէկ թուղթ դու առ Նիկողայոս ամիրային գրեալ և ընդ նմա պահարանեալ յղեսցես, որ ի գնալ նուիրակին իւրն տայցէ: Այլև ԱՃ. (100) լիտր սիսեռին վերստին հարկ, զի առեալ յղեսցէ:

Գրեցան յամնոյս ԻԵ. (25):

616* **Ի Հաշտարիսան** - Թուղթ առ Գրիգոր վարդապետն սպասաւոր Յովսէփ եպիսկոպոսին. յիշումն յառաջագոյն գրեալ թղթոյն մերոյ առ ինքն և առ այլս և թէ մինչ պարոն Խաչատուրն եկն ի Մկրտում աղայէն ունելով զպատասխանի մերս թղթոյն և ի քէն չունելոյն՝ անկաք ի տարակուսանս և հարկ ծանուցանել զպատճառն: Նաև յղել առաջին թղթով մերով ինդրեցեալ իրնն, որ այժմ' ևս ինդրեցաք: Եւ առ Աբրահամ վարդապետն հասանելի Կ. (60) թումանն, եթէ չէ հասուցեալ պատուէր, զի հասուցէ: Եւ թէ պատրաստի եղեալ դրամն աւանդ շինեալ ըստ առաջնոյն յղեսցէ, և զորպիսովեանց կողմանցն, և Յովսէփ պետի ուր լինին մեզ

ծանուցե՛ք, և թէ՛ ի նմանէ թուղթ եկեալ լինիցի առ մեզ գրեալ յղեացէ՛:

Պատասխան նամակ աղայ Մկրտումին (Հաշտարխան)՝ կապուած պարոն Խաչատուրի եղբորորդի Գալուստ վարդապետին ուղղուած գրութեան Հետ (492թ, Ա/4):

Օրհնութեան կոնդակ՝ Հասցեագրուած Վանի, Մուշի, Բաղէշի ու շրջակայ վայրերի Հայութեանը, որով յայտնուամ է նուիրակի եւ նրա միջոցով մեռն ուղարկելու մասին: Յանձնարարուամ է պատշաճ կերպով ընդունել նուիրակ Աբրահամ արքեպիսկոպոսին եւ նրան յանձնել նուիրակական արդիւնքները: Կոնդակի մէջ յիշատակուած են երեք տարի առաջ նոյն վայրեր ուղարկուած նուիրակների՝ Մարտիրոս վարդապետի (Վան եւ մերձակայք) եւ Գրիգոր վարդապետի (Մուշ, Բաղէշ եւ մերձակայք) անտնները, որոնք ամբողջապէս տեղ էին Հասցրել «գտուրս նուիրակութեան, և յիշատակի, և գանձանակաց, խոստմանց և Հոգեբաժնից, և զայլս այսպիսիս առատ արդիւնս՝ թէ Հասարակապէս և թէ յատկապէս»: Կոնդակի սկզբի նկարագրող մասը բացակայում է (կտրած-Հանած է): Այն շարագրուած է մեռնատար նուիրակներին տրուող օրհնութեան կոնդակների օրինակով: Գրուել է 1794 թ. նոյեմբերի 7-ին (ՄՄ ԿԴ, թղթ. 243, վավ. 77):

617 **1794 թ. 23 նոյեմբերի** - Թուղթ առ Վրաց արքայի թոռն Դաւիթ միրզայն...

Յորմէ սիրով և օրհնութեամբ և քրիստոսաձիր սուրբ ողջունիւ ծանուցումն լիցի ազնիւ սիրելւոյդ մերոյ և ստոյգ բարեկամիդ Սրբոյ Աթոռոյս, Քրիստոսիւ զօրացեալ բարեճսունդ քաջամարտիկ և շքեղազարդ Դաւիթ միրզայիդ:

Ձի թուղթ քո էՀաս առ մեզ ձեռամբ տէր Պետրոս Համեստակեաց քաջանային ձերոյ: Ձոր սիրով և յարգմամբ և տեղեկացեալ զողջունէ պատուական անձինդ, ուրախ եղաք, և ինդդեմք միշտ ի բարօրութեան և յաջողութեան լինիլ ձեզ:

Գրեալ էիր զկոնդակ ժողովարարութեան տալ նմա ի վերայ մերազնեայց, իբր թէ ուխտ է գնալոց ի սուրբ Երուսաղէմ և այլն: Այլ գիտե՞ս արդեօք զորպիսութիւն ժողովրդոց մերոց, որք ի յետին դառնութեան կան: Երբեմն-երբեմն ըստ գրոյ բարձրապատիւ Հօր քո և գերազնիւ սիրելւոյդ մերոյ՝ երկուց քաջանայից թուղթ տուաք, ժողովուրդքն մեր այնքան նեղեալ և զայրացեալ էին, մինչև ի յատենին իսկ աղաղակեալ ոմանց, թէ մէք մեր կարե՛մք պաճէլ, որ այլոց ևս օգնել կարասցուք, և յետոյ, թէ ի՞նչ տրտունջս են գրեալ մեզ, ոչ է արժան աստ երկարելն: Ապա յանցեալն ևս նոյն գերագոյն սիրելին մեր կրկին ևս զքաջանայ մեր էր յղեալ աստ կոնդակ առնուլ, և մէք գիտելով զչկարելի գոլն, պատասխանի արարաք:

Այժմ սիրելիդ ես գրեան վասն սորա: Թէպէտ մէք զքաղցրիկ խաթրն քո ոչ փոխանակեմք ընդ աշխարհի, սակայն թող զգնացողի ոչ օգտիլն, մէք ևս անպատիւ եմք լինելոց ի մէջ ժողովրդեան մերոյ: Միթէ՞ ստոյգ բարեկամքդ մեր կամիք զմեր անպատուու-

Թիւնն: Քանզի մերայինքն ամենայն ի յաղքատութենէ և ի դառնութեանց ժամանակիս նեղեալ գոլով գրեթէ յերես են ելեալ որոց աւելորդ հրաման հրամայելն վասս բերէ, քան թէ օգուտ: Վասն որոյ: Վասն որոյ զտէր Պետրոս քաջանայոյ յետ սիրով և պատուով ընդունելոյն մերոյ՝ ի սէր յարգութեան ձերոյ վայելուչ խիւլայիւք և խարճիով ուղևորեցաք: Եւ զայս թուղթ գրեցաք առ ազնիւ բարեկամդ մերոյ, ինդրելով զի գիտացեալ զցաւս մեր և ժողովրդեանն մերոյ առ չկարելութեան դժուարագոյն իրին անմեղադիր լինելով թողութիւն արասցես, և զսէրդ աննուազ պաշէլով ողջ լեր Տերամբ:

Գրեցաւ յամի Փրկչին 1794 և ի նոյեմբերի 23, ի Սուրբ Աթոռս Էջմիածնի¹³⁶:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 35բ

618 **Ի Թիֆլիզ** - Թուղթ առ տէր Ղազար աւագ քաջանայն, ի պատասխանի թղթոյն. ՀնորՀակալութիւն և օրհնութիւն յաղագս ըստ գրեցելոյ մերոյ ի դիմաց մեր Ծ. (50) թուման մատուցանելոյն արքային, և վասն առաջնորդին, եթէ իմացաք ի Բամբակ լինիլն, որոյ և զէրբ գալն ի քաղաքդ և վերստին ո՛ր լինելն, պատուէր ծանուցանել: Չկնի գրելոյ թղթոյս, կրկին գրեցեալ թուղթն ևս էՀաս, յորում և գրեալ էր վերոյգրեալ Ծ. (50) թումանի արքային, և ի նմանէ զղաւզ առնուլն և առ մեզ յղելն: Ուստի գրեցաւ ի վերջ թղթոյն, եթէ մեզ էՀաս:

619 Թուղթ առ ճորտից վերակացու տէր Դաւիթ քաջանայն¹³⁷. ՀնորՀակալութիւն յաղագս Հարազատօրէն թարգմանելոյն, զի մէջ գրեալ արքայի թուղթն և բարեպատշաճ պատասխանագրելոյն սակս ինդրոյ նորին: Եւ թէ ի Համիր աղայէն եկեալ թուղթն, զորս յղեալ էիր, մեզ Հասին: Եւ տեղւոյդ առաջնորդի ի Բամբակ գնալն է գործ նուիրակութեան ևս գիտեցաք: Եւ ՀնորՀակալութիւն ևս յաղագս յուղարկելոյն ընդ պարոն Ենովքին զչուլն, զեասնջիւն և զշալն (զորս մեք էաք ինդրեալ), նաև զԺ. (10) լիտր մոմն: Իսկ վասն մոմին գրեցաւ, թէ թէպէտ անպակաս մեզ էՀաս, բայց զի՛նչ մոմ լինիլն չիմացաք: Առ որ Հարկ, զի պար-

¹³⁶ Վրաց թագաժառանգ Դավթին հղված վավերագրի ամբողջական հրատարակությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 642-644:

¹³⁷ Վրաստանում, մասնավորապես՝ Թիֆլիսում գտնվող աթոռապատկան նորտերի մասին վերև արդեն խոսել ենք, սակայն այստեղ ուշագրավն այն է, որ տեղ Դավիթ Բահանան հիշատակված է իբրև նորտերի վերակացու և կառավարիչ, այսինքն՝ վերահսկիչ, տեսուչ: Սա կարծես նոր պաշտոն է XVIII դարի աթոռապատկան ծառաների կամ հարկատու նորտերի դասը ներկայացնող «պարոնտիրոսյան» ինստիտուտում: Դուկաս Կարնեցու նախորդ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը ևս Բահանան հիշատակել է վանքապատկան նորտերին, որոնց կոչում է հարկատու ծառաներ (Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Զամբո գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի և պարունակող բնափոխ արպիստրեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն, Վաղարշապատ, 1873, էջ 209) (հմմտ. վավ. 620):

զապէս գրեցէ: Եւ յաղագս պակաս լինելոյն Բ. (2) լիտր առաջին յղեալ մոմոյն ի կշռոյն, պատուէր, զի վերահասու եղեալ ծանուցանել մեզ: Եւ նոցին երկու պլիթ, օսի, պանիր և ծափլի յղելոյն շնորհակալութիւն:

Նաև Հաստատութիւն վերակացութեանն և գործակալութեանն ի վերայ ճորտից մերոց, միանգամայն |493ա| և պատուէր՝ արի և ժիր լինիլ, բարուքապէս Հոգ ունելով, և թէ ահա զկոնդակ գրեցաք ի վերայ ճորտիցն վասն քոյդ կառավարչութեան նոցա և Ս. (1) Թուղթ ևս առ մերս ճորտք պարոն Յովհաննէսն և պարոն Եսովքն: Այլ քանիցս գրեալ էմք յառաջ, զի զորքանութիւն ճորտիցն մեզ ծանուցանել և թէպէտ ծանուցեալ էն, բայց ոչ լրապէս: Ահա այժմսմս գրեցաւ, զի ընդ պարոն Եսովքին փոյթ կալեալ Հարազատօրէն զամենայն ճորտսն Սրբոյ Աթոռոյն, թէպէտ Հարուստ և թէ աղքատ՝ Հանդերձ մականուամբ և արուեստիւ մեզ յայտնել գրելով ի վերայ նոյն դավթարին և առ մեզ առաքելով, զի և մեք առ մեզ եղեալ դավթարին Համեմատեսցուք:

Իսկ յաղագս նոր ճորտացու պարոն Երեմիային, որ զկոնդակս էին խնդրեալ գրեցաւ թէ ըստ օրինի ճորտեցելոց զմի Թուղթ գրեալ կնքեսցէ ինքն և ձեզ և այլոց ևս կնքեցուցեալ յղեսցէ, յայնժամ մեք ևս զկոնդակն գրեալ առաքեսցուք:

620 Թուղթ առ ճորտսն Սրբոյ Աթոռոյս՝ պարոն Յովհաննէսն և պարոն Եսովքն, թէ ահա ընդ խնդրոյ ձերոյ զտեր Դաւիթ քահանայն կարգեցաք ի վերայ Համայն ճորտիցդ Սրբոյ Աթոռոյս վերակացու և կառավարիչ, որ յամենայն կողմանէ մուղայէթ լինիցի ձեզ: Յատկապէս առ պարոն Եսովքն և տեր Դաւիթն ի սոյն թղթով շնորհակալութիւն գրեցաւ յաղագս յղելոյն նոցա զշալնն, զեափնչիցն և զչուլնն, նաև զմոմն: Եւ թէ ծանեաք զգինսն և խարճսն նոցին:

Գրեցան թուղթքս յամնոյս ԻԷ. (27):

621 Ի Բումբայի - Թուղթ առ պարոն Մովսէսն Բարաղամեան, սակս կայից նսնուսեցի պարոն Սարգսին Թիֆլիզեցոյ, որ գրեցաւ ի խնդրոյ նորին: Տէ ս ի մեծ տետեր յերեսն 2220:

622 Թուղթ առ պարոն Փանոսն, ըստ մտաց վերնոյ թղթոյն, ևս ի խնդրոյ նոյն Սարգիս աղային: Տէ ս ի փոքրադիր տետեր յերեսն 248: Երկոքին թղթոց այսոցիկ ամսաթիւքն եղան ի սոյն ամնոյս ԻԲ. (22), բայց մեր չտեսեալ զսոսա յայնժամ այժմ սաստէն գրեցաք:

623 Ի Կարս - Կոնդակ ի վերայ Դարսայ և Ղօշավանից թեմի բոլոր ժողովրդեանն, որ գրեցաւ ընդ նորին առաջնորդ Յովհաննէս վարդապետին, որ եկեալ էր ի Սուրբ Աթոռս:

624 **Թուղթ առ պարոն Գեորգ աղայն, եթէ ի տկարութեանէդ իմացեալ յառաջնորդէն ձերմէ, տրտմեցաք և վերստին յառողջութենէդ՝ ուրախացաք և զառաջնորդն սիրով ընկալեալ, վերադարձուցաք և թէ իմացաք ի նմանէ զերեսուն լիտր ճրագու պատրաստելդ և զմնացելոցն ևս հոգ առնելդ, և հազար փայտի բէշ տալդ, և շնորհակալեցաք: Եւ վասն Երուսաղէմի նուիրակ Կարապետ պետին յանձնարարութիւն, նմա ողջոյն ևս և պատուէր, զի փութով վերջացուցէ զգործն:**

625 **Ի Բայազիտ - Թուղթ առ Դանիէլ անուն ոմն՝ վասն Ա. (1) լիտր [մ]ոմոյն, զոր նուիրեալ էր Սրբոյ Աթոռոյս, օրհնութիւն և շնորհակալութիւն:**

Գրեցան թուղթքս յամնոյս էլն:

493ա

626 **1794 թ. դեկտեմբեր - Թուղթ առ Եփրեմ վարդապետն, եթէ յառաջ քանի աւուրբք ի յՈրմու գրեալ թղթոյդ պատասխանն առաքեցաք, և այժմի Խօյու ևս էիր գրեալ և հարցումն արարեալ վասն բեռանց, զորպէս առնելոյն: Գրեցաւ, թէ բերցես ի Բայազիտ և անդ հասանիլդ մեզ գրեցես, որ զմարդ առաքեսցուք, որ ապահովութեամբ գայցես: Նաև գրելոց եմք բան՝ վասն բեռանցն:**

Գրեցաւ [յամնոյս] Դ. (4):

627 **Ի Բամբակաձոր - Թուղթ առ Թփֆլիզու առաջնորդ Մարտիրոս վարդապետն, ի դարձ թղթոյն ընդ լօռեցի տէր Ղազարին գրեցելոյ, եթէ իմացաք ըստ հրամանի մերոյ յիսուն թուման քաղաքի դրան հասուցանելն քո արքային, ձեռամբ տէր Ղազարին՝ գործակալին մերոյ, ահա վասն նորա զղազ առաքեցաք: Եւ վասն տէր Հայրապետի հոգեբաժին տալոյն ինքեան և կենակցոյն՝ Ա. (1) թուման, Ա. (1) եզն, Ա. (1) կով և Ա. (1) արջառ, որ զօրհնութեան թուղթս էին խնդրեալ, ահա յղեցաք: Նոյնպէս և Վարդաբլրու տանուտէր Թամրազին գրեցաք զօրհնութեան թուղթ, յաղագս Ա. (1) ջուխտ ջրախացի քարանցն տալոյ:**

Նաև վասն Բամբակաձորու մատաղան լրիւ էհաս, ըստ որում և Ի. (20) լիտր երկաթն ևս էհաս, և տեղոյս ԽԲ. (42) լիտրն եղև մինչ կշռել ետուք:

493բ

628 **Ղազ առ սա՝ վասն յիսուն թումանին, զոր ըստ հրամանի սրբազանին հասուցեալ էր արքային, ձեռամբ գործակալ տէր Ղազար աւագ քահանային:**

629 **Թուղթ առ տէր Հայրապետ քահանայն՝ վասն տալոյն հոգեբաժնի իւրում և կենակցին՝ Ա. (1) թուման փող, Ա. (1) եզն, Ա. (1) կով և Ա. (1) արջառ Մարտիրոս պետին, առ որ օրհնութիւն և շնորհակալութիւն:**

630 **Թուղթ օրհնութեան առ Վարդաբլրու տանուտէր պարոն Թամրազն, յաղագս խոստման Սրբոյ Աթոռոյս Ա.** (1) ջուխտ ջրաղացի լաւ քարինք և յանձն առնելոյն բերել ի գարնանն զայնս:

Գրեցան յամնոյս Ե. (5):

631 **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն, ի պատասխանի թղթոյն, շնորհակալութիւն վասն յղեալ տալոյն զնորին քեանթխուտայից աստ խոստացեալ գարւոյ ԻԲ. (22) սօմարն, և թէ աճա ըստ խնդրոյդ զօրհնութեան թուղթ գրեցաք ի վերայ քեանթխուտայիցդ, յիշելով նաև զԺ. (10) սօմարն յղել:

Եւ ի Յովսէփ վարդապետէն զԲ. (2) ջուխտ սպիտակ մոմէիր խնդրեալ յղեցաք ընդ Վարդեվան գրաբերին: Եւ թէ Մանուէլ վարդապետն եկեալ քոյդ վասն չճասի գրեալ թուղթն եցոյց պատուէր՝ յայսմէտէ չխառնիլ ի գործ նորա և բացասել եկողաց:

632 **Թուղթ առ նոյնոյ վանից գիւղի քեար ետու քեանթխուտայան.** շնորհակալութիւն աստ խոստացեալ գարւոյ ԻԲ. (22) սօմարն յղելոյն նոցա, և Հարկ, զի զԺ. (10) սօմարն ևս յղել ընդ ուղտուց:

633 **Ի Կաղզուան** - Թուղթ առ Վարդէճէնու վանից թեմի ժողովուրդան վասն առաջնորդին իւրեանց՝ Մանուէլ վարդապետին, եթէ եկեալ ի Սուրբ Աթոռս, սիրով ընկալեալ վերադարձուցաք: Պատուէր՝ Հլու և Հնազարդ լինիլ օգտակար Հրամանաց նորին:

Գրեցան թուղթքս յամնոյս Է. (7):

634 **Ի Կարին** - Թուղթ առ Սրբոյ Աթոռոյս վէրիլ պարոն Հայրապետն. յիշումն յառաջագոյն գրեալ ի Ժամանակս [Ժամանակս] թղթոց մերոց ի պատասխանի իւրոյ թղթոցն: Եւ ծանուցումն զԳ. (3) կտօր տօպրակով ամանաթխերց Հասեալ լինելոյն ի Բայազիտ, և ի Պօլսոյ եկեալ Չ. (6) օզմայ թղթոցն և Մինաս վարդապետի ամանաթխին ի Սուրբ Աթոռս ժամանելոյն: Եւ թէ գիտացաք զԺԴ. (14) ղուռուշ խարճն նոցա և գրեցաք ի դավթարդ: Եւ թէ ի Սեպաստիոյ եկեալ զՃ. (100) ղուռուշին, զոր գրեալ էր, թէ մահտեսի Նազարն ինձ պարտի Հասուցանել առ Յօճան աղայն զթուղթ գրեա, գրեցաւ թէ մէք վաղ ուրեմն առ նա զթուղթ եմք գրեալ և զթամասուկներն առաքեալ և այժմ՝ երկրորդէն՝ անպատեճ վարկաք. և պատուէր, զի յընկալնուլն դրամին ի մահտեսի Նազարէն, զինչ փող լինիլն մեզ գրեսցէ: Եւ վասն Գէորգ վարդապետի յղեալ Դ. (4) թօփ շալիցն, եթէ Հասին առ մեզ, և Ա. (1) թօփ զօֆ ևս, որ դու էիր բերել տուեալ, գրեալ էր Գէորգ պետն, եթէ ի

պարոն Հայրապետէն պարտի Հասանիլ գինն նորա, որ է ԼԳ. (33) ղուռուշ Ժ. (10) փարայ: Ուրեմն գրեսցես ի դաւթարդ:

Եւ թէ Գէորգ վարդապետն գրէ, թէ ի մէջ մուշամապայի և քէշէյի եմ եդեալ զշալան, բայց առ մեզ միայն կտաւով եկն: Պատուէր՝ չառնել զայնպիսի բան այլևս:

Այլ վասն Հին վացաննոցին պատուէր, զի որքան կարելին է, ժողովել և գլխով չառնուլ, և յոչ գտանիլն, որքան նոր դրամ գայցէ, պաշնեսցէ զայս, որպէս և յառաջ ևս եմք գրեալ:

Գրեցաւ և յաղագս Ղարսեցի Աբրահամի տղայ չքացեալ Պետրոսին զբան: Օրինակն է Հօրս՝ Յակոբ վարդապետի շարագրանաց տետեր վերջն¹³⁸:

493բ

635 **Ի Գաղատիա** - Ղաւզ առ Գէորգ վարդապետն, յաղագս 208 ղուռուշ և 28 փարային, որոյ 175 և 18 փարայն չորս թօփ շալից գինն էր, իսկ 33 ղուռուշ և 10 փարայն՝ մէկ թօփ զօֆի գին էր, որ ըստ ինդրոյ պարոն Հայրապետին էր առեալ:

Այս ղաւզ յանձնեցաւ նորին Հայր Մինաս վարդապետին:

636 **Ի Գեանջա** - Թուղթ առ Սարգիս վարդապետն. շնորհակալութիւն սրտացաւօրէն ցաւակրութեանն երկրիս մերոյ վրդովմանցն՝ վասն և ծանուցումն զանցելոց անցից կողմանցս, ի պատճառս գալստեան սարտարին, և միամտութիւն զտաւարեղինաց Սրբոյ Աթոռոյս, եթէ գերծան յայնժամ ի կեղեքաց: Եւ թէ գիտեցաք ևս զնեղութենէ ձերմէ և ցաւեցաք:

Իսկ յաղագս ԲՃ. (200) նուանցն շնորհակալութիւն: Յիշեցաւ ի լուսանցն թղթոյս ի սոյն ամնոյ Դ. (4) գրեալ թուղթն յաղագս Հասանելոյն առ մեզ՝ Հանդերձ ի Պօլիս գնալի պաշարանեալ թղթովք, զորս և խոստացաք յղել:

Գրեցան թուղթքս յամնոյս ԺԱ. (11):

494ա

637 **Ի Մատնվանից Ժողովուրդան** - Կոնդակ օրհնութեան ի վերայ Մատնվանից վիճակեցեալ ժողովրդեանն, սակս առաջնորդին իւրեանց՝ Սուքիաս վարդապետին, որ և ընդ նմա գրեցաւ ի սոյն ամնոյ՝ դեկտեմբեր ԺԸ. (18):

638 **Ի Ղարս** - Թուղթ առ Գէորգ աղայն, ի պատասխանի երից թղթոցն յաղագս ԽԲ. (42) թիւանի և կէս լիտր ճրագուին, զոր յղեալ էր ըստ ինդրոյ մերոյ, և Գ. (3) տեսակ փայտին, զոր ի գարնանն յղելոց է, շնորհակալութիւն: Եւ միամտութիւն վասն Ախցիսայու նուիրակ Յովհաննէս վարդապետի թղթոյն, եթէ մեզ էհաս: Եւ թէ քանի մի օրհնութեան թուղթ էր ինդրեալ ահա յղեցաք, Հասուցես նմա ընդ բարեւթղթին:

¹³⁸ Այս վերջին երկառոյն ավելացված է լուսանցումով:

Նաև ըստ գրեցելոյդ ետուք Սարվան Ամնատին ԴՃ. (400) ղուռուշ Հին վացաննոց: Եւ սակս սոյն դրամոյ, զոր գրեալ էր ձգել ի փայտի Հէսապն, և կամ Պօլսոյ զարմահպուպ ոսկիս շինել և յղել: Գրեցաւ թէ վասն փայտին որչափ տուեալ էս բաւական է, և ոսկին մեզ ձեռնտու չէ, այլ Հարկաւոր պիտանացուս մեզ Հին դրամէ: Ուրեմն, եթէ Հին դրամ շինեալ իբրև ամանաթ յղես, յոյժ շնորհակալ լինիմք: Եւ տարւոյ վերջն է ահա, ուստի զերեսն դաւթարիդ առեալ յղեսցես, որ ընդ դաւթարին մերոյ Համեմատեսցուք:

Նաև պատուէր՝ զերեսուն թիւանի լիտր զեյթուն բերել տալ և ընդ մէկ ուղտոյ բեռն մարխի յղել շուտով:

639 **Ի Արտազան** - Թուղթ առ Ախլցխայու նուիրակ Յովհաննէս վարդապետն, ի պատասխանի թղթոյն. ծանուցումն տեղւոյ փաշայի և Ղարսայ Քեահէայ բէկի թղթոցն առ մեզ Հասանելոյն, և թէ գիտացաք աւարտելդ ի կողմն Ճաւախէթու և գնալդ Օգրօպակերտ, Տէր յաջղեսցէ:

Իսկ վասն Օլթու և Նարիմանու, զոր Հարցեալ էր, Հրաման, զի երթիցէ: Եւս ի Վաշխանու գրեալ թուղթդ և զանանեղէնն, զոր տէր Ստեփաննոս քահանային յանձնեալ էիր բերել ի Սուրբ Աթոռս, դեռ չեն Հասեալ մեզ: Բայց ի յԱխլցխայու գրեալդ մեզ է Հասեալ ըստ ժամանակին:

Նաև փուսուպիւղ ծանեաք զորքանութիւն նուիրակական արդեանցն Արտազանու: Եւ ահա ըստ ինդրոյդ շնորհակալութեան և օրհնութեան կոնդակ գրեցաք և զգանձապետ Սողումօնն, որ երիցփոխան էիր կարգեալ Հաստատեցաք ի գործն ի կոնդակոջն: Եւ թէ յառաջմէ խոստացար գրել զբան ինչ ի կողմանէ Հեստելոցն, և այժմ յասմիկ թղթոջդ բան չէիր յիշեալ, եթէ ընդ տէր Ստեփաննոսի թղթոյն ևս չիցես գրեալ յայնժամ մեք քեզ գրելոց եմք զորպէս առնելդ:

Այլև ծանուցումն մահուան Հօրն և եղբօր ի Սուրբ Աթոռս գալոյն և ի Ղազարապատոջն լինելոյն, և ի յընտանեաց բերեալ թղթոյն առ ինքն յղելոյն:

640 Կոնդակ ի վերայ Արտազանու՝ վասն նուիրակական և գանձանակական արդեանցն, զոր տուեալ էին նուիրակ և առաջնորդ Յովհաննէս պետին և այլ բանք: Տէս ի մեծ տետեր յերեան 2221:

Այսոքիկ թուղթք գրեցան յամսոյս Ի. (20):

641 **Ի Բայազիտ** - Թուղթ առ Հադկաց յերկրէն դարձեալ նուիրակ Եփրեմ վարդապետն, ի պատասխանի թղթոյն, թէ գիտեցաք զգալուստդ և ուրախացաք, և յեօթն բեռինս, զորս յուղարկեալ էիր, թուանկջիս յուղարկեցաք յինձիլար բերել սալամաթ: Իսկ վասն քո եղեալ բեռանցն թողումք ի քոյդ կամն, թողուն

ումանց և չթողուն, և թէ զԳրիգոր վարդապետն Մեքիսեթիւ և թուանկջօք յղեցաք բերել քեզ՝ յանձնելով ևս զընծայն փաշային Մեքիսեթին մատուցանել նմա: Նաև ահա, ըստ ինդրոյդ առ Նաւասարդն և որդիսն օրհնութեան թուղթ գրեալ յղեցաք, տացես իւրն և ողջոյն Մովսէս վարդապետին:

642 Թուղթ օրհնութեան առ պարոն Նաւասարդն. շնորհակալութիւն յաղագս պաշելոյն Եփրեմ վարդապետի ի Խօյու յղեալ բեռանցն: Եւ ողջոյն որդւոցն Հայրապետին և Յակոբին:

494բ

643 Թուղթ առ Սահակ աղայն. յանձնարարութիւն վասն տաղպաշի Մեքիսեթին, որ զընծայն փաշային տաներ և յղեցաւ Ա. (1) լիտր արաղ և Ի. (20) լիտր բրինձ վասն սորա:

644 Թուղթ առ մաքսապետ պարոն Սարգիսն ընդ Մեքիսեթին մերոյ, վասն նորա յանձնարարութիւն: Նաև յղեցաւ Ժ. (10) լիտր գինի և Լ. (30) լիտր բրինձ:

Գրեցան յամսոյս ԻԱ. (21):

Ի վերջ գրութեանս մատուցի փառք, պատիւ և երկրպագութիւն ամենազօրին Աստուծոյ, որ զօրացեալ զնուաստութիւնս մեր Հասոյց ի կատար տարւոյս գրութեամբ այսմիկ յիշատակարանիս, յորմէ և ինդրեմք զառաջիկայ ամս ևս խաղաղութեամբ և առանց վտանգի ի միք ի գլուխ Հանել:

645 Ի Վան - Ի սոյն ամսոյ ելն գրեցաւ թուղթ առ Ախիջան աղայն, յաղագս մահուան եղբօրն՝ պարոն Գէորգին, մխիթարութիւն և վասն երից մաշտոցն, եթէ Հասին, շնորհակալութիւն:

646 Թուղթ առ նուիրակ Աբրահամ վարդապետն, եթէ ըստ գրեցելոյդ զմահն Ախիջան աղայի եղբօրն իմացեալ, ահա մխիթարութեան թուղթ գրեալ յղեցաք և տարեալ, տացես իւրն և ի դիմաց մեր զՀոգւոցն ասասցես:

332ա

ՀնորՀիւ Տեառն յանցելում ամին ի սեպտեմբեր ամսոյ ձեռն արկեալ իմ Գալուստ սարկաւագիս, ի գրուծին յիշատակաց թղթոց, որ մնաց ի Չաքարիայ վարդապետէն, իբրու Հասուցի և գլուխ լրման տարւոյն: Եւ ի սկզբան նոր տարւոյս թուականիս մերոյ ՌՄՄԴ (1795), դարձեալ Հրամանաւ տեառն մերոյ սրբազան Վեհին սկսայ գրել զյիշատակ բանից թղթոցն գրեցելոց ի սրբազան Վեհէն առ ամենայն տեղիս, ապաստան առնելով շնորհաց Սրբոյ Հոգւոյն, որ յաջողէ զամենայն յամենայնի, որում փառք յաւտեանս. ամէն¹³⁹:

647 1795 թ. յունվար, **Ի Թիֆլիզ** - Ի նոր տարւոջն այսմիկ սկզբան՝ դէպ եղև տեառնս մերոյ սրբազան Վեհին գրել զթուղթ առ Վրաց արքայորդի Գեօրկին խանն, ի պատասխանի թղթոյն ընդ ծառայից իւրոյ մէլիք Հաքարոյին և Գօկիայ բէկին գրեցելոյ. մխիթարութիւն վասն մահուան աներձագին իւրոյ, նաև Հարազատ կրտսեր որդւոյն: Յղեցաւ ընդ նոցա առ սա զմէկ ժամացոյց:

Թուղթք ի Կարս, ի Կարին, ի Նախչուան և ի յԱզովիս

648* **Ի Կարս** - Թուղթ առ Գէորգ աղայն, ի պատասխանի թղթոյն, որ վասն Մարիամ ուրումն աղջկան Բամբակաձորու, էթէ մէլիք Հաքարոյն եկեալ ի Սուրբ Աթոռս՝ վերահասու լեալ ի նմանէ գրելոց եմք քեզ զորպէսն: Եւ թէ փայտավաճառ Ռուստամն եկեալ մէկ բեռն իննձոր եբեր և մէք Խ. (40) ղուռուշ ետուք և այլ դրամ ևս ինդրեաց, բայց ոչ ետուք և թէ ի քէն ինդրեացէ գրել առ մեզ տալ ինքեան զդրամ Հին, չգրեցես: Եւ վասն պահարանաւ թղթոցն, թէ Հասուցես առ պարոն Հայրապետն և շնորհաւորութիւն նոր տարւոյս և պատուէր, զի զդաւթարի երեսն յղեսցէ:

649* **Ի Կարին** - Թուղթ առ վէքիլ պարոն Հայրապետն. ծանուցումն թղթոյն առ մեզ Հասանելոյն ընդ այլ թղթոց և թէ գիտացաք զՆերսէս և զԴաւիթ վարդապետաց ղաւզերն առ ինքեանս առաքելը և զԵրնջակու Սբ. Կարապետի վանքից ժողովարար Անանիա վարդապետի ԸՃ. (800) Հարիւր ղուռուշ պարտքն վճարելն Մասեհեան պարոն Եսայոն և միամտեցաք, և որ վասն այսպիսեաց գրեալ էր առ սրբազանն, թէ ընդէ՛ր յանձնարարութիւն գրես: Գրեցաւ, թէ մէք յաղագս պանդուխտ լինելոյն գրեմք, որ Հաւատարմաւ ճանապարհէս և ոչ թէ դրամ տայցես: Եւ յա-

¹³⁹ Հիշատակագրոյցյան համաձայն՝ 1794 թ. սեպտեմբերից, այսինքն՝ գրագիր Զաֆարիա վարդապետի մահից հետո, Դուկաս Կարնեցու նամակների և կոնդակների բովանդակութիւնները կազմելու աշխատանքը շարունակել է Գալուստ սարկավագը, որն այդ գործն իրականացրել է մինչև իր մահը՝ 1795 թ. դեկտեմբեր:

ղագս Տաթևու ժողովրդոցն, որք խոստացեալ էին զպարտան իւրեանց յիզմիր վճարել՝ բարի է, եթէ զորպիսութիւն ինչ իմանայցես, ծանուցես մեզ: Յիշեցաւ աստ վասն Բալիբէկէնց Յարութիւնի փօլիցային բան:

Իսկ վասն յղեալ սիսեւին, թէ յոյժ քարոտ էր, զի մեք ևս առեալ՝ ոչ էր այնպէս, զի ի քոյդ յղելոյն ԻԲ. (22) թիւանի լիտր քար էլն, գրեցաք, զի գիտասցես: Նաև սակա Խորենացի չիրիցու դրամոյն, թէ ընդէ՛ր առեր այլոց իրիճայիւ, ոչ ապաքէն մեք քեզ գրեցաք չառնուլ, ուրեմն առ նա դարձուցես փութով լինիլ 1332բ/ինքն ընդ դրամոյն ի կորուստ: Եւ վասն Աբրահամի որդի չիք Պետրոսի անցիցն, թէ գիտացաք ի քոյ ի Գալուստ և ի Բարսեղ վարդապետաց գրութենէն, պատուէր, զի այսուհետև թարց գիտութեան սրբազանին դրամ չտալ ումէք, զի ըստ որում տուեալ էր յիշեալ չիք Պետրոսին և թէ բարաթ, և Ֆէրմանի սուրաթներն ահա յղեցաք մնալ առ քեզ:

Մկրտիչ աւագ քաւանային (Նախշուան) յանձնարարում է Ագոպիսի Ս. Թովմայի վանից առաջնորդ Թովմաս վարդապետին Հաատարմաւ-փութով ուղարկել կից յղուող նամակը եւ սրբալոյս մեռոնը (332բ, Ա./1): Թովմաս վարդապետին (Ագոպիս) կարգադրում է ուղարկուած նամակը եւ մեռոնը Հասցնել նուիրակին (ա/2): Նոյնի մասին տեղեակ է պահուում նուիրակ Յովհաննէս վարդապետին (Ագոպիս) (Ա./3):

332բ

1795 թ., յունուար - **Թուղթք ի յԱխլցիայու կողմնանս և ի Բամբակաձոր**

650 **Ի Ախլցիա** - Թուղթ առ կողմանցն նուիրակ և առաջնորդ Յովհաննէս վարդապետն, եթէ թուղթդ մեզ էհաս ընդ տէր Ստեփան քաւանային՝ Հանդերձ պաճարեղինօքն, բայց քանի մի մանր տաւարօք զմի գոմեշ էր առեալ տէր Ստեփանն և ընդ միւս գոմշին տեղդ տուեալ էր ի պահեստի, որ ի գարնան յղիցէ, առ որ և մեք Հաւանեցաք: Յիշումն աստ յառաջագոյն գրեալ թղթոյն մերոյ առ ինքն և Արտահանու կոնդակին: Եւ թէ ըստ ինդրոյդ ահա ի վերայ Ախրկեալակու և երից գիւղիցն կոնդակ գրեցաք, պահել զքոյդ եղեալ կանոնսն, և զտէր Ստեփանն վէքիլ, և զտէր Միքայէլն աւագէրէց կարգեցաք: Նաև տէր Ստեփանին փիլոնիւ խիլայեցաք աստ:

Իսկ վասն Ախլցիայու Հեստելոցն Հարցումն՝ ի գնալը բան ինչ առէ՛ր, թէ ոչ, և կամ վերստին գնալոց ես, թէ ոչ, պատուէր ծանուցանել: Նաև տեղւոյն քաւանայից, իշխանաց և ժողովրդոց՝ ողջոյն: Իսկ 1333ա\յաղագս Օլթու և Նարիմանու կոնդակ գրեալ յղեցաւ, զի թէ պատշաճ տեսի գնալն, գնասցէ և թէ ոչ, մի՛ երթիցէ:

651 **Կոնդակ ի վերայ Ախրքէլէկու և երից գիւղիցն Ջաւախէթու.** Հնորձակալութիւն վասն մատաղացուացն, զոր տուեալ

էին նուիրակ և առաջնորդ Յովհաննէս վարդապետին և այլ բանք (տէ՛ս մեծ տէ[տեր] յէ[րեան] 2222):

652 **Կոնդակ** ի վերայ **Օլիթու** և **Նարիմանու** վանն առաջնորդութեան Յովհաննէս պետին, որ գնայր անդ ի կողմանէ **Սրբոյ Աթոռոյս** (օրինակ թղթոյս է ի նոր տետեր յերեան 2028):

Աագերէց կարգուած տէր **Միքայէլ քահանային** յանձնարարում է **Միքայէլից** ստանալ երկրորդ գումշը եւ գարնանն ուղարկել Էջմիածին (333ա, Ա/3):

653* **Ի Բամբակաձոր** – **Թուղթ առ մէլիք Հաքարօն**, յաղագս **Մարիամ աղջկան** միոյ, որ երէք ամաց ճետէ նշանացեալ գողով ի պաշտօնակեալ ումեմն տղայի և մինչ եղբարքն քօչեալ են անտի ի **Բամբակաձոր**, աղջիկն ևս ընդ իւրեանց տարեալ են և ի գնալ կողմնականցն տղային ի խնդրել բացեն ասացեալ վանն որոյ նորին, այսինքն՝ աղջկան **Հօրեղբայր տէր Յակոբին** **Թուղթ** գրէ սրբազանն և պատուիրէ ամա **Թուղթն** շուտով առ նա Հասուցանել:

654* **Թուղթ առ տէր Յակոբ քահանայն** ըստ մտաց վերնոյ **Թղթոյն**, այնր աղագաւ և սրբազանն խնդրէ զսա գալ ի **Սուրբ Աթոռս** առ ի իմանալ զստոյգն եղելութեան և ի չգալն ընդունելոց է զբանադրանս: **Գրեցան** **Թուղթքս** յամնոյս **յունուար** **Ժ**. (բայց **Բ.**-ց կոնդակացն **ԺԱ**. եղաւ):

1795 **Թ. յունուար** - **Թուղթք ի Թարուէզ, ի Տուխուրխան, ի Մարաղայ, ի Խոյ և ի Հաւթուան**

655 **Ի Թարուէզ** - **Թուղթ առ տէր Յովսէփ քահանայն**, ի պատասխանի **Թղթոյն**. մխիթարութիւն վանն վշտակրութեանցն և ծանուցումն ի մեր այգւոյ չամչէն յղեալ **ԼԳ**. (33) լիտր **Թարվիզի** չամչին առ մեզ Հասանտղոյն: Եւ թէ գիտացաք առաջին գրուածովդ զորպիսութենէ այգւոյն, վանն նորա յետոյ բան ինչ գրելոց եմք:

Իսկ վանն **Հուշուայ** խանին մէկ բեռն ապրուշում քարշելոյն բռնութեամբ ցաւակցութիւն, և պատուէր, զի թէ ի մէլիք **Ջումշուտէն** օգնութիւն ինչ գտեալ է վանն նորա, և թէ ոչ, զեկուցանել մեզ, և յայնժամ եթէ **Հարկաւորի**, մեք ևս գրեսցուք նմա:

Նաև սակս ի **Ջուղայ** եպիսկոպոս առաքելոյն մերոյ, զոր ազդեալ էր նոցա, առ այն, թէ ունիմք մտադրեալ սպասելով յաջողութեանն **Աստուծոյ**: Եւ վանն **Եփրեմ** պետի բանին, եթէ նոր է եկեալ, մինչ ապաՀուասցի, ասելոց եմք:

Իսկ յաղագս **Տուխուրղանու** տէր **Յովհաննէսին**, եթէ արձակման **Թուղթ** գրեցուցեալ **Սողօմօն** վարդապետին յղեցաք, Հասուցես իւրն:

Նաև **ՀնորՀաւորութիւն** որդւոյ **Հարմնելոցն**, զոր առնելոց էր: Այլև, թէ աՀա տեղւոյդ և **Տուղուրխանու** գանձանակաց ար-

դեանցն աղագաւ զկոնդակս գրեցաք և զօրհնութեան թուղթ առ
գանձապետսն և յղեցաք, զձերն ընթերցջիք յեկեղեցին և զնոցայն
առ նոսա Հասուցես: Ողջոյն եղբարցն և որդ[ւոցն]:

Օրհնութեան եւ շնորհակալութեան կոնդակներ թարիղի ժողովրդին մի
քանի տարուայ գանձանակադրամը (5 թուման) ուղարկելու Համար (333ա, Ա./7):
Այս կապակցութեամբ շնորհակալութեան նամակ գանձապետ պարոն Թադէոսին.
«յաղագս Հարագատօրէն ծառայութեանցն և միամտութիւն Ե. (5) թուման գան-
ձանակական արդեանցն, զոր Հասուցեալ էր նուիրակին» (Ա./8): Համանման գրու-
թիւններ Տոբսուրդանի ժողովրդին. «սակս քանեաց ամաց Ա. (1) թուման, ԲԻ-
(2000) դիան գանձանակադրամիցն, զոր Հասուցեալ էին նուիրակ Սողոմօն պա-
տին» (Ա./9), գանձապետ պարոն ՍաՀակին. «յաղագս արդեանց գանձանակի եկե-
ղեցոյ իւրեանց» (Ա./10), Մարաղայի ժողովրդին. «յաղագս Բ. (2) թուման գան-
ձանակադրամիցն» (Ա./11), գանձապետ Թանդրիվէրտին. «սակս արդեանց գան-
ձանակի իւրեանց, զոր Հասուցեալ էր նուիրակին» (333բ, Ա./1), Իսաջան աղային
(ԽՅՉ). «յաղագս բարեշնորհութեանցն առ նոսա ցուցելոց և այլ բանք», կից ծանո-
թագրում է՝ «Ողջոյն գրչի սորին՝ պարոն Ղազարին» (Ա./2), մէլիք Մայիլի որդի
Մարգարին. «սակս ՂԱ. (91) Հատ վաթսունանոց տալոյն ի բաժին Հոգւոյ Հօրն
իւրոյ ր Լ. (30) Հատ վաթսունանոց ևս՝ ի ծախս շինեցման սրբոյ Խաչին յիշատակի
էր տուեալ» (Ա./3): Հնորհակալութեան նամակ Ռախտար պարոն Եղօյին, պարոն
Ազիզին, պարոն Միրզախանին, տիրացուներ Սիմէոնին եւ Մկրտչին, որոնք Սողո-
մօն վարդապետի բեռների Համար վարձատրութիւն չէին ստացել եւ նիւթապէս
օգնել էին մեծ խաչի շինմանը (Ա./4): Այս կապակցութեամբ շնորհակալութիւն է
յայտնուած նաեւ մահտեսի Առաքելի որդի տիրացու Յովհաննէսին (Ա./5):

333բ

656* Կոնդակ ի վերայ բերդի սուրբ եկեղեցւոյ ժողովր-
դեանն. շնորհակալութիւն յաղագս քանեաց ամաց Բ. (2) թուման
և ԺԴ. (14) շահի արդեանց գանձանակին, զոր Հասուցեալ էին
նուիրակ Սողոմօն վարդապետին՝ ձեռամբ գանձապետ տիրացու
Պօղոսին:

657* Կոնդակ ի վերայ մահլի սուրբ եկեղեցւոյ ժողովր-
դեանն. շնորհակալութիւն սակս արդեանց գանձանակին, զոր Հա-
սուցեալ էին նուիրակին՝ ձեռամբ գանձապետ տիրացու Մատ-
թէոսին, որ էր ութ թուման:

Օրհնութեան թուղթ գանձապետ տիրացու Պօղոսին. «վան արդեանց
գանձանակին» (Ա./7), գանձապետ տիրացու Մատթէոսին. «վան արդեանց
գանձանակին» (Ա./9), շնորհակալութեան նամակ պարոն Բաբային՝ Սողոմօն եւ
Եփրեմ վարդապետներին արուած լաւութեան Համար (Ա./10), նուիրատու մահտե-
սի Ալլահվերդուն (Հաֆթոան). «յաղագս բարելաւութեանցն առ նուիրակն ցուցե-
լոց և տալոյն գտուրս առատս նմա ի պէտս շինման խաչին...» (Ա./11), մէլիք Մէճ-
լումին (Գեանջայ) տեղեկացուով է, որ Եփրեմ վարդապետը Հնդկաստանից նրա
Համար ինչ-որ աւանդ է բերել, ուստի ինդրում է մարդ ուղարկել եւ տանել դրանք
(Ա./12): Նամակները գրուել են յունուարի ԺԶ. -ին (16):

1795 թ., 16 յունուարի

658 **Թուղթ ի յ Ամիդ առ Սուրբ Կիրակոս եկեղեցւոյ գանձապետն մեր՝ մահտեսի Մարտիրոսն, ընդ նոր նուիրակին՝ յանձնարարութիւն վասն նորին**¹⁴⁰:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 36բ-

7ա

1795 թ., 16 յունուարի

659 **Թուղթ առ Իսաջան աղայն ի Խոյ, ի պատասխանի երկուց թղթոցն ընդ Սողոմոն և Եփրեմ վարդապետացն, վասն նոցին իրաց և այլ բանից**¹⁴¹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 36աբ

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 333բ

1795 թ. յունուար - Թուղթք ի Սիւրբեալակ, ի Քեանջայ, ի Կարս, ի Նախչուան և ի Բայազիտ

660 **Ի Սիւրբեալակ - Թուղթ առ Հովհաննէ և Նարինկիւ կանայսն. օրհնութիւն յաղագս յղեցելոյն նոցա զմէկ Եփէնոս փայտեայ գաւազանին:**

Գրեցաւ յամնոյս ԻԸ. (28), սխալեցաւ տելն:

661 **Ի Քեանջայ - Թուղթ տաճկերէն առ Ճաւատ խանն տեղւոյն, ի պատասխանի թղթոյն յաղագս Սարգիս վարդապետին, զոր կաթուղիկոսացեալ էին՝ Համբաւելով զԻսրայէլ կաթողիկոսէն, եթէ մեռեալ է իբրու, ուստի ինդրեալ էին ի սրբազան Վեհէն Հաստատել զնա: Վասն որոյ և գրեաց սրբազանն զպատասխանն այսպէս, թէ պարտ էր նմա նախքան զլինին գալ և մերովս գիտութեամբ և Հրամանաւ օժանիլ: Եւ որովհետև արարեալ էք, վասն իսթեր քոյ ջանամք Հաստատութեանն, և եթէ խռովութիւն ինչ ծաննիցի այնմ, նա լիցի պարտական և մեք անպարտ: Եւ ի կողմանէ ինդրեալ կոնդակին ձերոյ, այժմ ոչ լինի գրելն, մնացե յետոյ:**

662 **Թուղթ առ քելիսայ Ալէտն. յանձնարարութիւն սակս գանձապետին մերոյ՝ մահտեսի Վարդազարին:**

334ա

663 **Թուղթ առ գեանջեցիսն և առ վտարանդի խամնեցիսն, ի պատասխանի մահտարականի թղթոյն նոցա, որք զԻսրայէլ կաթողիկոսէն Համբաւ մահուան Հանեալ, զՍարգիսն օժեալ էին, վասն որոյ և ինդրէին ի սրբազանէն Հաստատել: Իսկ սրբազանն**

¹⁴⁰ Ամիդի Ս. Կիրակոս եկեղեցու գանձապետ մահտեսի Մարտիրոսին հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՅՊ, գիրք Գ., սյուն 644:

¹⁴¹ Խոյի Իսաջան աղային հղված պատասխան նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՅՊ, գիրք Գ., սյուն 644:

որպէս խանին, նոյնպէս և սոցա գրեաց զպատասխանի: Եւ գաղափարն թղթոյ է ի մեծ տետեր շարադրանաց յերեսն 2223:

664 Թուղթ առ մէլիք Մէժլումն, ի պատասխանի թղթոյն ըստ մտաց վերնոյ թղթոյն: Օրինակն է ի փոքրադիր տետեր յերեսն 252:

Գրեցաւ առ սա և փուսուլայ ևս, զի յառաջմէ ինդրեալ գոլով ի սրբազանէն զմի ժամացոյց և չգտանելոյ մնացեալ էր, և այժմ ևս գրեցաւ, եթէ չեղաք ձեռնհաս: Իսկ մինչ քոյդ մարդն եկեսցէ յաղազս ի Հնդկաց երկրէն եկեալ աւանդիցն տանելոյ, յայնժամ և մէք յղելոց եմք զսահաթն, միամտութիւն:

Գրեցան այսոքիկ թուղթք Գեանջայու յամնոյս ԺԹ. (19):

Նամակ Գէորգ աղային (Կարս) տնտեսական բնոյթի մի շարք յանձնարարութիւններով մասնատրապէս. «յաղազս ԱՃԽ. (140) ղուռուշ արդեանցն գանձանակին...», Պիտոյէնց Պառաւի շնորհեալ Սրբոյ Աթոռոյս օտայի միոյ Գ. (3) մասի մի մասն, զոր և դու ի քանի ամն քիրայիւ տուեալ և յետոյ վաճառեալ էիր և զԻԵ. (25) ղուռուշն յղեալ... սակս նախաճոգութեանն զէթոնին շնորհակալութիւն...» և այլն (Ա./3):

Օրհնութեան եւ շնորհակալութեան կոնդակ Կարսի ժողովրդին՝ գանձանակական արդիւնքը յանձնելու համար (Ա./4): Օրհնութեան նամակ գանձապետ մահտեսի Եղիային. «վասն Հարազատօրէն ծառայելէն ի գործ գանձապետութեան և վասն արդեանց գանձանակին» (Ա./5): Հնորհակալութեան նամակ նուիրատու Մկրտիչ տղային. «վասն ԻԵ. (25) ղուռուշ դրամոյն» (Ա./6): Նամակներն ուղարկուել են յունուարի Ի. -ին (20): Մկրտիչ քահանային (Նախշուան) յանձնարարում է նամակների ծրարը հասցնել Ագուլիսի Թօվմաս վարդապետին (Ա./7): Վերջինիս էլ յանձնարարում է Յովակիմ վարդապետի նամակները շտապ ուղարկել ըստ պատկանելոյն (Ա./8):

665 Թուղթ առ սրբոյն Տաթևու վանից առաջնորդ Յովակիմ վարդապետն, վասն ի Մչիբանդար վախճանեալ Պօղոսի կայիցն, որ կտակեալ էր զմինն ի չորից հասուցանել Տաթևու վանիցն, որպէս զի առ կտակակատարն թուղթ գրեալ Գ. (3) օրինակօք յղել առ մեզ և մէք ևս յղեսցուք:

Տէ ս ի փոք[ը] տետ[եր] յերեսն] 253:

666 Ի Բայազիտ - Թուղթ առ նուիրակ Մարտիրոս վարդապետն, ի պատասխանի թղթոյն ընդ Անտօն սարկաւագին իւրոյ գրեցելոյ. շնորհակալութիւն վասն ԻԵ. (25) գլուխ սևատաւարին, զոր յղեալ էր: Իսկ վասն տուեալ Ծ. (50) գլուխ ոչխարին, եթէ ի գալը բերելոց ես իհարկէ: Եւ յաղազս 1300 և 25 ղուռուշին միամտութիւն, եթէ էհաս և պահեմք այնպէս կնքով, մինչև բարեալ գալը: Իսկ վասն ԱՌ. (1000) ղուռուշին, |334բ| զոր եղեալ էր աւանդ առ տիրացու Գէորգն հասուցանել այսր: Գրեցաւ, թէ ի հաւանիլն ևս պահելոց եմ նոյնութեամբ:

Պատուէր սաստիւ, զի չար սովորութիւնն, որ կայ ի միջի յայնմիկ կողմնունն, բառնալ և ոչ երբէք թողուլ արտաբերել, որ է դօշակ ախշասի ասացեալն:

Յղեցաւ առ նա ըստ իննդրոյն միով ամանաւ Ա. (1) Հոխայ սրբալոյս մեռոն:

Օրհնութեան եւ շնորհակալութեան նամակ նուիրակին լաւութիւններ արած պարոն Եսկիպարին (Մանածկերտ) (334բ, Ա./1): Առաջնորդ Յովհաննէս վարդապետին (Ղօշավանք) շնորհակալագիր է յղում. «յաղագս յղելոյն Ժ. (10) սօմար գարոյն, որ մնացեալ էր իր գիւղականաց նորին և Ժ. (10) սօմար ևս յինքենէ տալոյն ի տեղի տէր Խյաշատուրին» (Ա./2):

667* **Ի Բաղէշ** – Թուղթ առ գանձապետ պարոն Յովհաննէսն և նորին եղբայր տիրացու Յակոբն, ի պատասխանի թղթոյն նոցա, զոր վասն Խնդրակատար վանից Մանուէլի գրեալ էին, թէ թուղթն և աջաՀամբոյրն առ նա եմք Հասուցեալ յիրում ժամանակին: Վասն որոյ և այժմ սրբազան Վեհրն գրէ, թէ ընդ Սարգիս քաՀանային յանցելումն ընդ եղբօրն թուղթ էր գրեալ և ինդրեալ, զի զառաջնորդ կարգիցեմք և մէք պատասխանեալ սպասեմք գալստեանն, եթէ չգայցէ՝ յայժամ պ[ատ]ժելոց եմք և ընդ բանիւ՝ առնելոց:

Նաև յաղագս կտաւեղինացն, զորս իբրու ընդ նոյնոյ Սարգիս քաՀանային առ սրբազանն և առ ոմանս անձինս իցեն յղեցեալ սոքա յայնժամ գրեցաւ, թէ ոչ է Հասուցեալ: Իսկ սակս կոնդակին մերոյ միամտութիւն, եթէ մեզ էՀաս: Այլև՝ սակս Սուրբ Գէորգ եկեղեցւոյն իւրեանց, զոր ինդրեալ էին յանձնել Գրիգոր վարդապետին, պատասխանեց, թէ զի գոլով թեմ Խնդրակատարին, այժմ անպատշաճ տեսաք, ըստ որում Հայիմք ի գալուստն Մանուէլին և մինչ գայցէ, ապա զինչ առնելն մեր ծանուցանելոց եմք: Եւ թէ ըստ ինդրոյ ձերոյ աՀա թուղթ յանձնարարութեան գրեցաք ի վերայ Հէրիֆ խանին:

668* Թուղթ առ Ամրտօլու վանից առաջնորդ Գրիգոր վարդապետն, ի պատասխանի թղթոյն, որ վասն Մանուէլ պետին, յորոյ կողմանէ ըստ վերնոյն գրեցաւ պատասխանն. տէ՛ս անդ: Իսկ վասն ԳՃ. (300) ղուռուշին, զոր Հասուցեալ էր փօլիցայիւ առ տիրացու Գէորգն ի Բայազիտ, միամտութիւն, եթէ մեզ էՀաս և զձեռագիրդ, աՀա յղեցաք: Եւ յաղագս ԺԲ. (12) ղուռուշ աջաՀամբուրին օրհնութիւն և շնորհակալութիւն: Այլ յաղագս կոնդակ ինդրելոյն ի վերայ տեղոյ ժողովրդեանն ի սաստ առ ի չառնել զՀաս ամուսնութիւն, գրեցաւ, թէ ընդ քեզ գրեցեալ կոնդակն բաւական է, եթէ Հարկաւորի կրկին ընթեռնուլ տայցես:

669* Կոնդակ օրհնութեան ի վերայ Սուրբ Սարգիս եկեղեցւոյ ժողովրդեանն. շնորհակալութիւն յաղագս 60 ղուռուշ գան-

ձանակադրամին իւրեանց, զոր Հասուցեալ էին ձեռամբ գանձապետ Օխիկին ի Բայագիտ առ գործակալ տիրացու Գէորգն:

670* **Թուղթ օրհնութեան առ գանձապետ պարոն Օխիկն,** յաղագս արդեանց գանձանակին և պատուէր արի և ժիր լինիլ ի գործն:

671 **Ի Շուշի** - Թուղթ առ Իսրայել կաթողիկոսն, ի պատասխանի երկուց թղթոցն, զոր գրէ Սարգսի սուտ Համբաւ մահուան Հանելոյն զինքենէ և օձանելոյն ի Գեանջայ կաթողիկոս, և սրբազանն պատասխանի գրեալ առաքէ:

Օրինակ թղթոյն է ի մեծ տե[տեր] յե[րեան] 2126:

335ա

672 **Կոնդակ ի վերայ Խյամնայու, Շուշոյ, Համախու և Նուխույ, Բաքուայ և Դարբանդու և շրջակայիցն,** յաղագս Հաստատութեան կաթողիկոսութեան Իսրայել կաթողիկոսին և ոչ ընդունիլ զՍարգիսն, որ ի Գեանջայ Համբաւ Հանեալ էթէ Իսրայել կաթողիկոսն վախճանեալ է ի Շուշի, ինքն իսկոյն օձեալ էր անդէն: Եւ այժմ թուղթ եկեալ յԻսրայել կաթողիկոսէն առ սրբազանն, յայտնի եղև Համբաւն ստոյթեան Սարգսին: Վասն որոյ և սրբազանն գրէ սոցա չընդունել զՍարգիսն, այլ զԻսրայել կաթողիկոսն ընդունել և նմա Հասուցանել զՀասս և զիրաւունս Հայրապետական:

Տէ ս ի մեծ տե[տեր] յե[րեան] 2225:

Նոյն Հարցերն են շոշափուով նաև նուիրակ Յովհաննէս վարդապետին ուղղուած նամակում. «միով ամանաւ սրբալոյս մեռն առաքելոյն առ Թօվմաս վարդապետն Հասուցանել իւրն, նաև պատասխանի դրամոյն բանին, զորմէ գրեալ էր, թէ պաճախլուն ի տեղւոյն ԵՌԲ., (5002) ապասի չուռուկ դրամով է գնում...», ծանուցումն նաև Սարգսի զորպիսաբար օձմանն ի Գեանջայ...» (335ա, Ա./2): Նամակները գրուել են յունուարի վերջին:

335ա

1795 թ. փետրվար - Թուղթք ի Վան, ի Ղարս, ի Հաղբակ, ի Բայագիտ և ի Թիֆլիզ

673 **Ի Վան** - Թուղթ օրհնութեան առ ջուղայեցի Երեմիային վասն յիսուն ղուռուշ կտակին Հանգուցեալ Հօրն Յարութիւնին յանձնելոյն նախկին նուիրակ Մարտիրոս վարդապետին:

Գրեցաւ յամնոյս մոռնն:

674 **Ի Ղարս** - Թուղթ առ Գէորգ աղայն, վասն Բամբակաձորու աղջկանն, թէ առ տէր Յակոբն, որ գիր գրեցաք յանցեալն այժմ մէլիք Հաքարօն և քեանթիսուտայ տաճիկքն զթուղթս էին գրեալ թէ շորակեացի տղայն Հաշտեցուցաք ընդ աղջկան տեարցն և ըստ Հրամանիդ թող գան աղջիկն տանեն: Եւ սրբազան զայս գրեանս առաքէ ի ձեռն Գէորգ աղային, թէ այն-

պէս են գրեալ, ծանուցես Քեազեայ բեկին յղել զտղայն, որ ի քանի աւուրքն պսակեալ վերջացուցեն զգլխացաւութիւնն:

Եւ վասն Ե. (5).քթոց յղեալ գէյթունին, որ էր քթոցներովն ԼԵ. (35) թիւանի լիտր, օրհնութիւն և շնորհակալութիւն:

Գրեցաւ յամսոյս Բ. (2):

675 **Ի Հաղբակ** - Թուղթ տաճկերէն առ Սալազ բեկն և Թուղթ մի ևս առ երիս տաճիկս, որք գրեալ էին սակս առաջնորդին Սրբոյ Բարդուղիմեայ վանից Ստեփան վարդապետին, եթէ վանացս օգնութիւն ինչ ոչ առնէ, և թէ Ե. (5) ամ է որ բնաւ չէ ի վնաս, այլ ի Սալմաստ նստեալ զարդիւնս վանացն ժողովեալ մտնէ: Ուրեմն զայլ ոք առաջնորդ շնորհեսցես վանքին, զի այցելութիւն գտցի և այլն:

Առ այս և սրբազանն պատասխանէ, թէ Թուղթ գրեմ առ սալմաստեցիան և զառաջնորդն ինդրեմ հանդերձ Խաչատուրիւ, մինչ գայցեն և իմանայցեմ զորպէսն: Յայնժամ հրաժարեցուցեալ զնա, զայլ ոմն կարգելոց եմք կամ զմինն ի Սողոմօն և ի Խաչատուր վարդապետաց:

676 **Թուղթ** ևս ի վերայ Հաղբակու և կողմանցն նոյնոյ վանից վիճակեցեալ ժողովրդեանն, ի պատասխանի մահաւարական թղթոց նոցին, որք ևս ըստ բեկի թղթոյ մտացն ընդ նմա գանգատ էին գրեալ զառաջնորդէն:

Օրինակ թղթոյս է ի մեծ տետեր յերես 2029:

677 **Ի Բայազիտ** - Թուղթ առ Սահակ աղայն, ի պատասխանի թղթոյն ընդ Եփրեմ պետին գրեցելոյ, յաղագս թամասուկին, եթէ Հնդկաց նոր նուիրակի առաքմանն դեռ ժամանակ ունիմք, եթէ առաքելոյ լինիցիմք, քեզ իմացումն տամք և պայազն ևս յետս յղեցաւ:

Նաև բան վասն Իւչքի[ի]սայու առաջնորդ Մկրտիչ վարդապետին, |335բ| եթէ իրիջայ առնես փաշային, որ մինչև մէկ տարւոյ չսփի համբերեսցէ ի ինդրելոյն զպարտոն, և ի քէն շնորհակալ լինիմք:

Ողջո՛յն որդւոյն՝ գեղեցիկ աղազատէին:

678 **Ի Թիֆլիզ** - Թուղթ տաճկերէն առ Վրաց արքայն Հերակլ և պատասխանի թղթոյն ընդ մէլիք Մինասին գրեցելոյ: Եւ ըստ ինդրոյ նորին մէկ լաւ ժամացոյց յղեցաւ նոյնոյ ձեռամբ:

Գրեցան յամսոյս ԺԵ. (15):

1795 թ. փետրուար - **Թուղթք ի յՈրմի, ի Պօլիս, ի Թիֆլիզ և յայլ տեղիս**

679 **Ի յՈրմի և ի Սալմաստ** - Կոնդակ ի վերայ որմեցւոց և սալմաստեցւոց վասն առաջնորդին իւրեանց՝ Ստեփան վարդապետին, որ ի վաղուց ժամանակաց ելեալ ի վանացն, նստեալ կայր ի Սալմաստ, և անդէն ժողովեալ զարդինսն թեմականաց, մխեր՝ ոչինչ Հոգալով զսրբոյ վանաց շինութենէն ամենևին: Վասն որոյ և Հաղբակեցիք ինդրեցին ի սրբազան Վեհէն Հանել զառաջնորդութենէն:

Եւ սրբազանն ըստ պատշաճին զպատասխանի գրեալ նոցա յայնժամ, այժմ գրէ սոցա զառաջնորդն Հանդերձ Խաչատուրի յղել, առ ի գիտել զառիթն չգնալոյն ի վանքն և այլն:

Տէս ի մեծ տե[տեր] յերեան 2030:

680 **Թուղթ առ առաջնորդ Ստեփան վարդապետն.** յիշատակութիւն Հաղբակացւոց գանկատանաց թղթոյն և պատուէր ելանել գալ ի Սուրբ Աթոռս, և ի չգալն ընդունելոց ես զբանագրանս:

681 **Թուղթ առ Խաչատուր վարդապետն.** պատուէր Հարկիւ, զի թէ առաջնորդն գայցէ, և չգայցէ, ինքն ելեալ եկեսցէ, և մինչ պատճառելով անցցէ զպատուիրանս ընդունելոց է զբանագրանս:

682 **Ի Պօլիս** - **Թուղթ առ Չաքարիս պատրիարգի եղբօրորդի տէր Պօղոս քահանայն,** ի պատասխանի թղթոյն ընդ իւր ջրաղ տէր Գրիգորին գրեցելոյ, և ընդ նմա յղեալ ընծային շորՀակալութիւն:

683 **Ի յայլ և յայլ տեղիս** - Կոնդակ ժողովարարութեան ի վերայ Բայազտոյ, Կարնոյ, Թօխաթու, Ամասիոյ և Մարսուանու, զոր տուեալ եղև պօլսեցի վերոյ յիշեալ տէր Գրիգոր քահանային, մինչ դառնայր ի Սրբոյ Աթոռոյս:

684 **Ի Թիֆլիզ** - **Թուղթ առ առաջնորդ Մարտիրոս վարդապետն.** պատուէր, զի Խոր Վիրապայ վանից ժողովարար Կարապետ վարդապետն կոչեալ առ ինքն, զորքանութիւն ժողովեցելոյն իմացեալ, յղեսցէ ընդ արդեանցն, և մինչ չկամիցի գալ՝ զվեղարն և զփիլոնն առեալ, գիտասջիք, որ այնուհետև ընդ բանիւ է և անիծից:

Նաև սակս ճորտից վերակացու տէր Դաւիթ քահանային, եթէ յանցեալն ի կարգէն մեր զնա վերակացու, պատուիրեցաք, որ զորքանութիւն ճորտից մերոց Հանդերձ մականուամբ և արուեստիւ, դաւթարաւ ծանուցանել մեզ՝ առ ի Համեմատել մերս դաւթարին: Ուրեմն վերահասու լեալ, ծանուսջիք ընդ նմա փութով:

Գրեցան թուղթքս յամոյս **ԺԹ. (19)**¹⁴²:

¹⁴² Այս և Հ^մ 703 վավերագրի վերջում հիշատակված Կարապետի մասին տեղեկությունը, ըստ որի՝ մի դեպքում նա խոր Վիրապի վանքի ժողովարարն է, մյուսում՝ վանքի միաբան և պետ,

685 **Ի Թեղալ** - Թուղթ առ տեր Սարգիս աւագ քահանայն. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն երեք լիտր և կէս յղեալ մովին:

Գրեցաւ և յղեցաւ Թուղթս յամսոյս ԻԷ. (27):

686 **Ի Կարին** - Թուղթ օրհնութեան ի վերայ բոլոր քահանայից և իշխանացն. շնորհակալութիւն յաղագս նախանցեալ նուիրակ Նիկողայոս վարդապետին արարեալ ընդունելութեանցն, և Համառօտ ծանուցումն զերկրիս որպիսութենէն, և յանձնարարութիւն վասն նոր նուիրակ Գրիգոր վարդապետին:

687 Թուղթ օրհնութեան ի վերայ երկուց էնաֆացն՝ իաֆաֆ և Թիքիճի կոչեցելոց. շնորհակալութիւն վասն արդեանց գանձանակին իւրեանց, զոր և նուիրակ Նիկողայոս վարդապետին յանձնեալ էին երկուց ամացն, որ էր 30 ղուռուշ:

Նաև յատկապէս շնորհակալութիւն գրեցաւ զմահտեսի Թևան և զմահտեսի Գասպար գանձապետացն:

688* Թուղթ առ Հաճի Պապայ կոչեցեալ Յակոբ աղայն, տրտմակցութիւն յաղագս փորձանակրութեանն և բանտարկութեանն, և ուրախակցութիւն առ ի նմանէ զերծանին և յորդորումն մնալ ի սէր և ի Հարազատութեան, և յանձնարարութիւն նոր նուիրակ Գրիգոր վարդապետին և յիշումն ևս վաղ գրեալ թղթոյ սրբազանին, ընդ Գալուստ և Բարսեղ պարոնացն:

689* Թուղթ առ մահտեսի Ասլան աղայն, շնորհակալութիւն և օրհնութիւն յաղագս ցուցեալ բարեշնորհութեանցն առ նախանցեալ նուիրակ Նիկողայոս վարդապետն և շնորհավորութիւն նոր մահտեսութեանն և ծանուցումն երկրիս և մեր որպիսութենէն, և յանձնարարութիւն նորոգ նուիրակ Գրիգոր վարդապետին:

Օրհնութեան եւ շնորհակալութեան Թուղթ Գօրօյեանց մահտեսի Խաչատուրին եւ նրա եղբայր մահտեսի Սերոբին. «վասն բարելաւութեանցն առ գործա-

այսինքն՝ առաջնորդ, կարևոր աղբյուր է նախ և առաջ ինքն Վիրապի վանքի՝ XVIII դարավերջի պատմության և հոգևոր կյանքի մասին: Հայտնի է, որ Ս. Գրիգոր Լուսավորչի շարժարանաց սրբավայր ինքն Վիրապի վանքը, հիմնադրվելով դեռևս վաղ միջնադարում, քանիցս նորոգվել ու նոր շինություններով է համալրվել: Ներկայիս համալիրն իր ողջ ծավալով վերակառուցվել է XVII դ. երկրորդ կեսին և հնից մնացած միակ «լուռ վկան» Ս. Վիրապն է: XVII-XVIII դդ. վանքը նշանավոր գրչության կենտրոն է դարձել, սերտ կապեր ունեցել հարևան Ակոռիի գրչակենտրոնի հետ: ինքն Վիրապից հայտնի ձեռագրերի հիշատակարաններում, նաև՝ ժամանակի կաթողիկոսների գրագրություններում հաճախ ենք հանդիպում այս վանքում պաշտոնավարած վանահայրերի, առաջնորդների անունների. նրանցից են՝ Վարդանես վարդապետը (1710 թ.), Պետրոս արքեպիսկոպոսը (1740 թ.), Ավետիք եպիսկոպոսը (1765-1772 թթ.), Մարկոս վարդապետը (1772 թ.), Սիմեոն վարդապետը (մինչև 1804 թ.) (Ս. Հարությունյան, ինքն Վիրապ. պատմությունը, ձեռագրական և վիճակագրական ծանոթությունը, Երևան, 2017, էջ 138): Սրանց շարժում հարկ է ավելացնել նաև Լուկաս Կարնեցու գրագրություններում հիշվող Կարապետ պետի անունը, որն այս վանքում պետք է պաշտոնավարած լինի 1790-ականներին:

ւարտ'նուիրակն իւրեանց Նիկողայոս վարդապետն և յանձնարարութիւն նոր'նուիրակ Գրիգոր վարդապետին» (336ա, Ա./1), նուիրատու մահտեսի Մարգարին. «յաղագս շնորհելոյն զմի արծաթեայ սկիհ ոսկեղօծ աւազանիւ և մաղղմայիւ» (Ա./2), նուիրատու մահտեսի Գէորգին (Ղարաշիսար). «յաղագս ընդ'նուիրակ Նիկողայոս վարդապետին յրեալ քսան զուռուշ քառասնից դրամոյն» (Ա./3), նուիրատու մահտեսի Լուսիկին (Գիւմրիխանէ). «վասն ժե. (15) զուռուշ ժամուցին, զոր տուեալ էր Նիկողայոս պետին, մինչ անդ էր յանուն սրբազան Վեհին» (Ա./4), նուիրատու Մարիամ բարեպաշտ կնոջը (Թամկարայ). «յաղագս ժե. (15) զուռուշ ժամուցին, զոր ձեռամբ տէր Մատթէոս քաշանային յանձնեալ էր Նիկողայոս պետին» (Ա./5), գանձապետ Մարտիրոս աղային եւ խօջա Կարապետին (Ամիթ). «ճանուցումն զերկրիս որպիսութենէն և յանձնարարութիւն վասն նոր'նուիրակ Յօշան վարդապետին» (Ա./6, 7):

Նամակները գրուել են փետրուարի վերջերին եւ ուղարկուել նոր'նշանակուած նուիրակների ձեռքով:

690 **1795 թ. 5 մարտի** - Որդւոցդ մերոց և Հարազատ զաւակացդ Սրբոյ Աթոռոյս Հայկասէր, լուսաւորչակիօն, միաբնադաւանն Հաւատացելոցդ ի Քրիստոս, որք բնակեալ կայք աստուածախնամ և բարեճոխ քաղաքսդ և ի գաւառսդ՝ ի Տիգրանակերտ, կրկին անուամբ յորջորջեալ Տիարպէքիր, ի Բալու, ի Ճապաղղուր, ... (չի ընթերցվում), ի Յաղման, ի Բերթակ, ի սուրբ Մակաբայեցւոց թեմն, ի Մշու Սուրբ Յովհաննիսի վանից և սրբոց Առաքելոց վանից թեմնն, ի Սղերթ, ի Չաքան, ի Շիրվան, ի Փէրին, ի Մեծկերտ, ի Չմէկածագ, ի Խարբերդ, ի Հիւսէնյիկ, ի Արդնի, ի Մատէն, ի Զերմուկ, ի Շաքուշ, ի Մուսէպին, ի Սևերակ, ի յՈւրհայ, ի յԱկրը, ի Հայնէ, ի Ղուլէ, ի Ղիան, ի Լըճէ, ի Կասկէ, ի Հազրօյ, ի Բշէրիկ, ի Սասուն, ի Հղու, ի յԱրիփօնզար, ի Ղոյլու, ի Կարմուշ և ի Զօխ, և ի Համայն դոցին մերձակայ զասապայս և ի գիւղորայս: Յորս կառուցեալ քրիստոսաբնակ սրբոց եկեղեցեաց և եկեղեցականաց դասուց: Յոգնաշանճար առաջնորդաց, շնորհազարդ վարդապետաց, սրբանուէր քաշանայից, ուսումնասէր սարկաւագաց, և Համօրէն բարեշնորհ եկեղեցւոյ մանկանց: Պերճապատիւ իշխանաց, փառազարդ մեծատանց, Հանճարեղ վաճառականաց, Հաւատարիմ՝ երեսփոխաց և գանձապետաց, վայելչագործ արուեստաւորաց, արդարավաստակ երկրագործաց, երկիւղազարդ տանտիկնաց, և այլ ամէն(այն) ժողովրդականաց խմբից, առՀասարակ՝ մեծաց և փոքունց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդացաց և կուսից, ինդալ ի Տէր յարած(ամ)...

[Շնորհք]

Եւ ընդ շնորհապարգև օրհնութեան և ողջունատրութեան սիրառաք նամակիս՝ ճանուցումն լիցի սիրելի և Հոգևոր որդւոցդ մե[րոց] և լուսաճնունդ զաւակացդ մօրս Հաւատոյ Սրբոյ Էջմիածնի: Զի սրբազան առաքեալն Պօղոս ոչ կամելով թէ պարտակա-

նութիւն ինչ մնասցէ ի Հաւատացեալս Փր[կչին], վասն որոյ Հրամայցէ գրելով Հատուցէք ամենեցուն զպարտս և մի ումէք պարտապան գտանիցէք:

Արդ, սիրելիք մեր Տէր, աստուածահաճոյ գործ և բարի (շարունակութիւնը պատուված է) ... և ի Սրբոյ Լուսաւորչէ մերմէ անտի Հաստատեալ կայ ի միջի մերում, որ է իբր պարտականութիւն ի մեր և ի ձեր կողմանց: Այսինքն է՝ յերէք տարին մի ան[գամ]... (շարունակութիւնը պատուված է)... գետիպ իւրն օծութեան՝ զմեռոնն սուրբ մեզ առաքել ի ձեռն նուիրակաց առ օրհնեալ ժողովուրդսդ և վասն Հոգւոյ մարմնական նուէրն ձեր (պատուված է)...

Եւ այսպէս զպարտան մեր Հատուցանել միմեանց և զհրաման սրբոյ առաքելոյն կատարել: Որ և յայլ ուրէք վասն այսպիսոց Հարկաւոր փոխադարձութեանց Հարցաբան... զՀաւատացեալն, եթէ մէք ի ձեզ զՀոգւորն սերմանեցաք, մեծ ինչ իցէ, եթէ ի ձէնջ զմարմնաւորն Հսփեցմք: Չայս կարևորագոյն աւանդութիւն մէք յիւրաբանչ[իւր] ժամանակս կատարեմք: Որպէս յառաջ, քան զայս առաքեցաք առ սիրելիսդ մեր զսրբալոյս մեռոնն ի ձեռն Հոգւոր որդւոյն մերոյ՝ Դաւիթ արիաջան վարդապետին Հանդ[երձ] օրհնութեան կոնդակաւ, և Հատուցաք զպարտան մեր յայնժամ: Նոյնպէս և դուք զձեր պարտան վճարելով, զոր պարտիք Սրբոյ Աթոռոյս, տուեալ էիք նմա յօժարութեամբ և լիաձեռնութեամբ զտուրս նուիրակութեան և յիշատակի, գանձանակաց, խոստմանց և Հոգեբաժնից, և զայլս այսպիսիս առատ արդիւնս՝ թէ Հասարակապէս և թէ յատկապէս: Յորոց և նա զմեծ մասն Հասուցեալ է ի Սուրբ Աթոռս և առ մեզ, և զմնացեալն ևս ընդ ինքեան բերելով Հասուցանելոց է: Ուստի և մէք Համայն միաբանիք սրբոյ Գահիս շնորհակալութեամբ մեծաւ առաջի քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս օրհնեցաք և օրհնեմք զձեզ զամենեսին: Չորս Տէր օրհնելով օրհնեցէ և զօրացուցէ, շէն և պայծառս պահեսցէ, որդւովք և դստերօք ծաղկեցուցէ, և առաքինական գործովք զարդարեսցէ, փրկեսցէ յամենայն վտանգից Հոգւոյ և մարմնոյ, և պահեսցէ միշտ ի ինամն և յողորմութիւնս իւր ի յաջողութեան և ի բարեկեցութեան: Եւ զՀոգիս ննջեցելոց ձերոց լուսաւորեսցէ և Հանգուցէ այցելութեամբ ի լոյս երեսաց իւրոց յարքայութիւնն իւր սուրբ: Եւ ընդ միոյն տրոց ձերոց՝ Հատուցէ ձեզ զբիւրապատիկ վարձս աստ և ի Հանդերձելումս. ամէն:

Արդ, Հոգւոր և սիրելի որդիք մեր. ահա մէք նմանապէս զնոյն Հոգւոր աւանդութիւնսն վերստին և այժմ կատարեցաք և զպարտան մեր Հատուցաք, առաքելով առ ձեզ զշնորհ սրբոյ զմաքրագործ մեռոնն սուրբ: Ուրեմն ի գալ սրբոյ մեռոնին առ ձեզ, պարտիք և դուք զփառս և զգոհութիւնս Աստուծոյ մատուցանել և զՀոգւոր պարտան ձեր Հատուցանել ընծայելով զմարմնաւոր վասն Հոգւոյ պտուղն ձեր՝ առ Հոգւոր ծնօղս ձեր Սուրբ Էջմիածին, որ

է գլուխ և մայր ամենայն եկ[եղեցեաց] և տեղի պարծանաց ազգիս Հայոց, որում Հարկաւոր է ողջ և Հաստատուն մնալ, զի և ի սա յօ-դեցեալ անդամքն ամբողջ մնասցեն: Որպէս և բնական սովորու-թիւն է յամենայն կե[նդանիս], որք նախ զառողջութիւնս գլխոց իւրեանց կամին, և ապա այլոց անդամոց: Այսպէս ուրեմն և դուք պարտիք ամենեքեան՝ նախ զՀաստատութիւն և զպայծառութիւն Սրբոյ Աթոռոյս կա[միլ], և ապա այլոց եկեղեցեաց. գիտելով իսկ, զի սորին շինութիւն և Հաստատութիւն լուսաՀոգի նախնեաց ձե-րոց Հոգաբարձութեամբք և տրօքն է լեալ, և ձերովքդ լինելոյ է:

Եւ զ[ի] երկակողմեան պարտուցս այսց Հատուցմունքն պար-տին ի ձեռն նուիրակի լինիլ, վասն որոյ պատշաճ վարկեալ առա-քեցաք ի տիրապաճ քաղաքսդ և ի գաւառսդ ձեր նուիրակ սիրելի և զՀոգևոր որդին մեր և զՀարազատ զաւակն Սրբոյ Աթոռոյս՝ զտէր Մկրտիչ Հանճարոնակ վարդապետն: Չի եկեալ առ ձեզ ի դիմաց մերոց զողջոյն և զօրհնութիւն տացէ ձեզ: Եւ քարոզելով զպատուիրանս Տեառն՝ միսիթարեացէ զձեզ աստուածային Հոգե-պարար բանիւք: Եւ պատմեցէ Հարազատ որդւոցդ սրբոյ Գաւհիս զՀաստատութիւնս Հոգևոր կարգաց և պաշտամանց սորին, և ևս զվայեչութիւնս նորակերտ շինուածոցն: Քանզի ի վերայ այլ բա-զում շինուաց, զոր արարեալ էաք յառաջին տարիսն յաջողու-թեամբ Տեառն, շինեցուցաք նաև զվերնայարկս ի վերայ ձմեռան սեղանատանն՝ երեսոքն դէպ ի Հիւրանոցն ի Հիւսիսոյ կողմանէ Համակարգ միւս կողմանց վերնայարկացն, որք Հարկաւորք են առ ի պէտս բազմութեան եկաւորաց յամարային ժամանակի:

Եւ յանցելումն ամին ևս զՀիւսիսային կողման սենեակն միա-բանից, որք յոյժ փոքունք էին, ընդարձակեցաք ի յետուստ կողմա-նէ զտեղի ի մէջ առեալ և զորմն փոխեալ Հաստատուն քան զա-ռաջինն, և զմէջն և[ս] բոլորապէս նորոգելով: Ընդ որս և զայլ շինուածս և նորոգութիւնս ի ներքոյ պարսպիս և արտաքոյ, ի շքե-ղազարդ պայծառութիւն մեծի Գաւհիս՝ առ ի պարծանս օր[հնեալ] ազգիդ մերոյ ի փառս Աստուծոյ: Չորոց որպիսութիւնն երկարօ-րէն Հաւատարիմ նուիրակդ մեր ճառեցէ ձեզ:

Նաև տեղեկացուցէ սիրելի որդւոցդ մերոց զբազմազան նեղ-սակրութիւնս մեր և զնուազութիւնս մտից Սրբոյ Աթոռոյս և զբազմապատկութիւն ելիցն, և զպակասաւորութիւնս մեր ի բա-զում պիտոյից և զվարանմունս սրտամաշ Հոգօք: Վասն զի յաղագս անթագաւոր և անտերունջ գոլոյ երկրիս, թող զՀանապազօր կե-ղեքէն իշխողաց մերոց զկեանս մեր՝ բազում անգամ ևս խռովու-թիւնք և յարուցմունք եղեալ Հակառակորդաց առ միմեանս, դառ-նաղէտ վրդովմունք և սասանութիւնք ժամանէն երկրիս, որովք և մէք զանգրելի վնասս կրեմք:

Որպէս և յանցելում ամին ի յերկիցս յարուցմանէ ներքինի նոր շաճ կոչեցելոյ ոստիկանին ի Խօյու յայս կողմն առ ի գալ ի վերայ

Երևանու, ոչ սակաւ վիշտք Հասին մեզ, և վնասք ս[րբոյ] Տանս: Եւ թէպէտ յայնժամ էանց այն միրիկ, սակայն զի այժմ ևս Հոչակեալ գոյ թէ ինքն իսկ շահ կոչեցեալն յառնելոց է ի վերայ երկրացս, վասն որոյ առաւելքան զայն այժմ կրեմք զերկիւղ և զկասկածանս վտանգից, զորմէ ևս լիագոյն պարագայիւք դարձեալ նուիրակդ բացայայտեսցէ ձեզ: Եւ ժողովեսցէ ի ձէնջ զնուիրակութեան նուէրան ձեր մարմնականս, զորս Հարկ է ձեզ տալ մեզ: Եւ բաշխեսցէ ձեզ զսուրբ մեռոնն աստուածագործ, որ է պարգև Հոգեկան, զոր մեզ Հարկ է շնորհել ձեզ:

Ապա ուրեմն ի գալն առ ձեզ սիրելոյդ մերոյ և Հաւատարիմ որդւոյդ սրբոյ Գահիս՝ տէր Մկրտիչ խոհեմամիտ վարդապետիդ և ի տալն ձեզ զողջոյնն և զօրհնութիւնն մեր, պարտիք զայն մեծաւ Հաւատով ընդունիլ: Եւ ի քարոզելն դորա ձեզ զբանն կենաց, պարտիք յօժարութեամբ ունին դնել և լսել և առնել: Եւ ի պատմելն ձեզ զՀաստա[տութենէ] Հոգւոր կարգաց և պաշտամանց սրբոյ Գահիս, և զնորապերճ շինութեանց և զայլ զուրաճալի իրաց, պարտիք բոլորով սրտիւ ուրախանալ:

Իսկ ի ծանուցանելն դորա ձեզ զնեղութեանց և զվշտացն Հասելոց ի վերայ մեր, զնուագութիւնս արդեանց և զառաւելութիւնս ծախուցն սրբոյ Տանս և զպակասաւորութիւնս ի բազում պիտոյից, պարտիք ստոյգ կարեկցութեամբ Հոգալ և շարժիլ ի գութ որդիական, և յօժարիլ առ ի օգնութիւն մօրս ձերոյ լուսաճնի՝ ըստ չափու իւրաքանչիւր կարողութեան և գոյից:

Եւ ի ժողովելն ի ձէնջ և ի խնդրելն զնուիրակական և զայլ տուրս և զնուէրս, յօժար կամօք և առատութեամբ տալ՝ արք և կանայք, փարթամ և աղքատք զմիմեանս յորդորելով, բարի պատճառ լինելով միմեանց: Եւ ի բաշխելն դորա ձեզ զՀոգետիպ և զսրբալոյս մեռոնն, պարտիք Հաւատով, յուսով և սիրով ընդունիլ, զօրհնութիւնս և զփառս Հանդերձ գոհութեամբք Աստուծոյ մատուցանել, որ արժանացոյց զձեզ այդպիսի պարգևի իւրոյ:

Պարտիք ևս զՀոգւոր որդիդ մեր և զնուիրակդ ձեր, ուղիղ սրտիւք, անկեղծ մտօք և յօժար կամօք սիրել, ընդունիլ և պատուել զի արժանի իսկ է: Նաև՝ որդիական խոնարհութեամբ Հասգանդք և Հպատակք լինիլ դմա, լսողք և մանաւանդ առնօղք և կատարողք գտանիլ Հրամանաց դորա: Որում և Հրաման ետուք սաստել և յանդիմանել զստաՀական, զչարագործան, զՀերձուացօղն, և զանհնազանդան: Ուրեմն մի ոք ի ձէնջ ներհակ և Հակառակ եղիցի դմա ի յանդիմանելն իւրում ողջամիտ վարդապետութեամբ զստաՀական, ի սաստելն զչարագործան, ի յուղղելն զՀերձուածօղն և ի կշտամբելն զանհնազանդան օրինացն Աստուծոյ, և կանոնացն սրբոց Հարց: Վասն զի այնպիսին ներհակ Քրիստոսի Հրամանին է, և Հակառակ իշխանութեանս մերում Հայրապետա-

կանի: Վասն որոյ ոչ մնասցէ նա առանց պատժոց: Քանզի կապեալն ի դմանէ է կապեալ, և արձակեալն՝ արձակեալ:

Ապա մեծաւ Հնազանդութեամբ պատուեալ սիրեսցիք զդա, զի պաշտօնեայ Քրիստոսի է և առաքեալ է ի մէջ: Որում զոր ինչ առնիցէք, Քրիստոսի և Սրբոյ Աթոռոյս և մեզ է Համարեալ: Գիտասցիք ևս սիրեցեալք մեր, զի ոչ միայն զնուիրա[կուլթեան] տուրնն, այլ Հանդերձ յատկապէս օգնութեամբ և զայլս արդիւննն պարտիք նուիրել ըստ նախնաւանդ բարի սովորութեանց ձերոց, այսինքն՝ զգանձանակադրամն, զՀոգեբաժինս, զկտակս, զժամուցս, զխոստմոնսս, մանաւանդ և զէկեղեցական յիշատակիս ի զարդ պայծառափայլութեան աստուածակերտ սրբոյ տաճարիս, զխաչս, զսկիւնս, զբուրվառս, զշուրջառս, զշապիկս, և զուրարս, և զայլս այսպիսիս, որ ինչ և բղխեսցին ի բարեյօժար սրտից ձերոց: Չորս զամենայն աներկմիտ սրտիւ յանձնեսցիք ի ձեռս սիրելի որդւոյդ մերոյ և Հաւատարիմ զաւակիդ Սրբոյ Աթոռոյս՝ տէր Մկրտիչ գերզօն վարդապետիդ, և զառ դա Հասեալն ի Սուրբ Աթոռս և առ մեզ Հասեալ Համարեսցիք առանց այլևայլ կարծեաց: Որք և ըստ տրոց և ողորմութեանց ձերոց՝ ընկալիք ընդ միոյն զՀազարապատիկ և զբիւրապատիկ վարձս ի Քրիստոսէ Աստուածոյ մերմէ աստ և ի Հանդերձելումս: Եւ որքան աղօլթք, սաղմօսերգութիւնք, պաշտամոնք, պատարագք և շնորհաբաշխութիւնք կատարին ի Սուրբ Աթոռոջս, յայնցանէ մասն և բաժին առատ եղիցի ձեզ և ննջեցելոց ձերոց. ամէն:

Գրեցաւ ի ՌՄԽԳ. (1795) թուոյս և ի մարտի Ե. (5), առ դրան լուսակառոյց և տիրակերտ մեծի Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի¹⁴³:

ՄՄ ԿԴ, թղթ. 243, վավ. 78:

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 336ա

1795 թ. մարտ - Թուղթք ի Կարս, ի Ղօշաւանք, ի յԱմիթ, ի Կարին, ի Հնդիկս, ի Պօլիս և յայլ տեղիս:

691 **Ի Կարս - Թուղթ առ Գէորգ աղայն. շնորհակալութիւն վասն ԽԵ. (45) լիմօնին և յիշումն զորպիսութենէ երկրիս: Գրի (յամնոյս) Բ. (2):**

692 **Ի Ղօշաւանք - Թուղթ առ առաջնորդ Յովհաննէս վարդապետն, սակս Բ. (2) մաշտոցացն շնորհակալութիւն, որոց մինն ևս առ ինքն դարձուցար: Եւ թէ Մաշմատ բէկն, որ զմէկ սաՀաթ էր ինդրեալ, չունելով այժմ պատասխանեցար, այլ լղեցար զմէկ ամանաւ զէնձէվիլի մուրապայ վասն նօրա և Ալի բէկին:**

¹⁴³ Վավերագիրը նվիրակի պաշտոնով Տարոնի երկիր, Սասուն, Տիգրանակերտ, Ռուֆա և այլ վայրեր մեկնած Մկրտիչ վարդապետի հետ ուղարկված օրհնության կոնդակ է, որի բնագիրը փոքր-ինչ վնասված, իսկ սկզբնամասը պոկված է:

Իսկ յազագս Չախկալ բեկին, որ զմի տիրպինն էիր ինդրեալ յղեցաք, տացես իւրն:

Դարձեալ բան և Հարցումն ի կողմանէ բեռանց անդ առաքելեաց, և պատուէր փութով զՀարցման պատասխանին գրել: Ընդ որում և ծանուցումն զնաւրուզ գնալոյն մերոյ և զերկրիս որպիսութենէն:

Գրեցաւ թուղթս յամնոյս Դ. (4)¹⁴⁴:

693 **1795 թ. 5 մարտի - Թուղթ ի Ղարաչիսար առ Հիւսիսօղլի մահտեսի Գրիգոր աղայն. յանձնարարութիւն վասն նորա նուիրակ Գրիգոր վարդապետին**

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 43բ

694 **Ի Տիգրանակերտ - Թուղթ առ նուիրակ Դաւիթ վարդապետն. պատուէր՝ տալ զերեսն դաւթարին նորոգ նուիրակ Յօշան վարդապետին:**

695 **Թուղթ առ գանձապետ մահտեսի Յակոբն. յանձնարարութիւն վասն նոր նուիրակին և ծանուցումն զերկրիս որպիսութենէ:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 336ա

Նոյնաբովանդակ նամակներ են ուղարկուել նաև ՔաղցրաՀայեաց վանից առաջնորդ Կարապետ վարդապետին (336ա, Ա./12), Բալուայ առաջնորդ Գրիգոր վարդապետին (Ա./13), Սօրսորի Ս. Գեորգ վանից առաջնորդ Յարութիւն վարդապետին (Ա./14), Ղուպու վանից առաջնորդ Փիլիպպոս վարդապետին (Ա./15), Ակնայ առաջնորդ Միքայէլ վարդապետին՝ շնորհակալութիւն ուղարկած 30 զուռուշ աջաՀամբոյրի եւ «ի նորոգումն եկեղեցեացն քաղաքին և մերձակայ գիւղորէիցն» (Ա./16):

336բ

696 **Ի յԱկն - Կոնդակ ի վերայ Ակնայ և ի շրջակայ գիւղորէիցն, այսինքն՝ Բէնկանու, Կամրկապու, [336բ] Նավրէլու, Ապուշէխու և ի Մեծ Արմուտանու քաճանայից և ժողովրդեանն. շնորհաւորութիւն յազագս շինութեան և նորոգութեան եկեղեցեացն իւրեանց և պատուէր արի և ժիր լինիլ ի յաղօթակատարութիւնս:**

Ավմայ նոր նշանակուած նուիրակ Յոշան վարդապետի մեկնելու կապակցութեամբ յանձնարարականներ են ուղարկուած Փիլիպպոս ամիրային (Կասնամատէն) (336բ, Ա./1), Մշոյ Ս. Կարապետ վանից առաջնորդ Յակոբոս վարդապետին եւ թուղթ աւելի վաղ Հասած սրբազան Վեհից (Ա./2), տնտեսական բնոյթի յանձնարարութիւններ են տրուած Կարինի գործակալ պարոն Հայրապետին. «վասն Ակնայ առաջնորդ Միքայէլ վարդապետի յղեալ Լ. (30) զուռուշ աջաՀամ-

¹⁴⁴ Վավերագրի համաձայն՝ Ղոշավանքի (Հոռոմոսի վանքի) առաջնորդ Հովհաննէս վարդապետին շնորհակալագիր է հղվում երկու Մաշտոց գիրք (թերևս ձեռագիր) ուղարկելու համար:

բուրին...» (Ա./3), Հաճար վեբիլի մահտեսի Յովհաննեսին. «վասն նոր նուիրակ Գրիգոր վարդապետին» (Ա./4), մահտեսի Աւետիքին. «ևս յանձարարութիւն» (Ա./5), ագուէցի պարոն Պետրոսին եւ եղբորորդի Գրիգորին (Բայազետ) յանձարարում է նուիրակ Յօհան վարդապետի Հետ ուղարկուած ամանաթը «պաշէլ իրենց տանը (Ա./6):

697 **Ի Հնդիկս** - Թուղթ ի Կալկաթայ առ աղայ Մովսէսն Խաչիկեան. յիշումն գրեցեալ թղթոց սրբազան Վեհին, ծանուցումն զգալատենէ նուիրակ Եփրեմ պետին և խոստումն առաքել զնորն. զկնի ամնոց, և շնորհատրութիւն նորածին որդւոյն իւրոյ՝ Խաչիկ կոչեցելոյն: Նաև շնորհակալութիւն վասն ի կունպանումն եղեալ Բ. (2) ամաց մոտաթն ԴԻ. (4000) ռուպոյն Հասուցանելոյն առ Եփրեմ պետն, և յայտարարութիւն գրելոյն զիշատակարանն զանգակատան Սրբոյն Հռիփսիմեայ վանից: Ողջոյն բազմաց: Եթէ կամիս տէ ս յերեսն մեծ տետեր 2031:

698 **Փոսուկայ** առ սա վասն մահուան Մովսէս վարդապետն խղճալոյն մխիթարութիւն:

699* **Թուղթ ի Սուրաթ** առ Յօհաննէան աղայն. յիշատակութիւն յառաջքան զայս գրեալ թղթոցն և նուիրակ Եփրեմ պետի ժամանելոյն առ Սուրբ Աթոռս, նաև շնորհակալութիւն մեծապէս ընդ նմա յղեալ յիշատակաց և ընծայիցն իւրոց և խոստումն ևս զնոր նուիրակն ցետ ամնոց ինչ առաքել և ընդ նմա ևս զթուղթ գրել և բան վասն Մովսէս աղայի ԴԻ. (4000) ռուպոյն և թէ իմացաք զկամեցողութիւնդ ի քաղաքիդ Կունպանն զդրամն դնել վասն Սրբոյ Աթոռոյս, առ այն օրհնութիւն և շնորհակալութիւն և ծանուցումն ի վերջոյ զերկրիս որպիսութեան: Ողջոյն ևս յանուանէ բազմաց գրեցաւ: Տէ ս ի նոյն տետեր յերեսն 2127:

700* **Ի Բարայ** - Թուղթ առ Սրբոյ Աթոռոյս գործակալ Բեթղէհէմեան պարոն Յովհաննէան. ծանուցումն գալատեանն նուիրակ Եփրեմ պետին ի Սուրբ Աթոռս եւ թէ մինչ տեսաք, որ զքէն թուղթ չունէր, ի կարծիս անկաք, ուրեմն եթէ պատճառ գոյ ծանուցես և վասն դաւթարին իւրոյ, եթէ բերեալ նուիրակն՝ Համեմատ գտաք ընդ մերոյն, առ այն և շնորհակալութիւն օրհնութեամբ: /337ա/ Իսկ յաղագս 5000 ղուռուջ փօլիցային ի վերայ Ասլան ամիրային ի Պօլիս, եթէ բան ինչ չիմացաք, սպասեմք նոր նուիրակ Գալուատ վարդապետի թղթոյն, եթէ բան ինչ գրիցէ, քեզ ծանուցանելոց եմք: Նաև ծանուցումն և մխիթարութիւն վասն մահուան Մովսէս պետին:

Պատասխան նամակ աղայ Ղուկաս Ալեքսանեանին եւ պարոն Միքայէլ Տեր-Միսասեանին. «վասն նուիրակ Եփրեմ պետին և բան վասն Հանգուցեալ Մարգար աղայի տալեաց Սրբոյ Աթոռոյս և խոստմանց և կտակին...» (337ա, Ա./1): Պատասխան նամակ Կ. Պօլսի նուիրակ Գալուատ վարդապետին. «վասն ի

Բաղդատու առ ի Պօլիս ի վերայ Ասլան ամիրային փօլիցայ եղեալ դրամոցն և վասն Հնդկաց երկրի թղթոցն պատուէր Հասուցանել ի Բաղդատ՝ առ աղայ Ղուկան և առ պարոն Միքայէլն Տէր-Մինասեան...» (Ա./2):

701 **Ի յայլ և յայլ տեղիս** - Կոնդակ ժողովարարութեան ի վերայ Բայազտոյ, Վանայ, Խոյոու և Տիարբէքրու, որ գրեցաւ յԵրևան և տուաւ Ջանի անուն ուրումն պարտատիրի:

702 **Ի Մեծն Պօլիս** - Թուղթ առ նուիրակ Գալուստ վարդապետն, յաղագս Ազուլեցի պարոն Դաւթին, որ ի յԱզուլեցի պարոն Յովհաննէսէն վէքիլ կարգեցեալ գնայր ի Պօլիս բազմակնիք թղթով առ ի բաժին առնուլ ի պարոն Մկրտումէն Կարապետեան: Վասն որոյ գրէ սրբազանն սմա Հոգ տանիլ բանին, և թէ Հարկաւորիցի՝ պատրիարգին և ամիրայիցն և սազդէլ:

Գրեցան յԵրևան, յամսոյս ԺԲ. (12):

1795 թ. մարտ - **Թուղթք ի Թիֆլիզ ի Թարուէզ և ի Խոյ**

703 **Ի Թիֆլիզ** - Թուղթ առ առաջնորդ Մարտիրոս վարդապետն ի դարձ Բ. (2) թղթոցն. շնորհակալութիւն զ60 թիւանի և կէս լիտր արճիճ յղելոյն, որոյ գինն և քիրայն էր ԺԳ. (13) թուման ինն Հազար դիան: Եւ թէ ըստ գրեցելոյ մերոյ, որ Ժ. (10) թումանն ծխախնդիր աղջկան էիր տուեալ, իմացաք, որ և լինի ընդ վերնոյն դրամոյն ԻԳ. (23) թուման Թ. (9) Հազար դիան: Վասն որոյ և զղազ գրեալ վասն սոցա ի միամտութիւն:

ԶԲամբակաձորու և Ղազախու նուիրակական արդեանց արդիւնաւոր լինիլն, զորս ցուցեալ էր ի վերայ առաջնոցն և զմէլիք Հաքարոյն շնորհակալութիւն գրեալ, օրհնութիւն առ ինքն և առ մէլիք Հաքարոյն:

Վասն Անապատի միաբան Ներսէս պետին՝ մնասցէ մինչև զհոգալիսն Հոգալ և ապա յղես՛ջի՛ք: Եւ թէ զքանի մի գիւղորայս, որ ի նուիրակութենէդ մնացեալ էր, ի Հարկէ, զայնս և սաւարտելոց էս: Բայց զքաղաքի նուիրակութենէն, որ ծանուցեալ էիր, որ ճշտիւ տան, ինչևիցէ, ժամանակի որպիսութեանն Հետուելով, ջանասցես սիրով աւարտել և յայնժամ մեզ գրել:

Ծանուցումն զերկրիս խառնակութենէն և վասն այնորիկ յղելն սրբազան Վեհին զՀինգ բեռն եկեղեցական սպասք առ մէլիք Աւետիքն՝ առ ի պաշել ի տան իւրում: Ուստի և սրբազանն պատուիրէ սմա ի մերձեալ բեռանցն ի քաղաքն, ընդառաջ մարդ յղել և Հասուցանել սալամատ ի տուն մէլիքն և զորպիսաբար Հասանիլն ծանուցանել մեզ:

Այլև սակս տէր Խաչատուր աւագ քառանայի կտակին Հարցումն, եթէ քանի ժամանակ է ընդէ՛ր ոչ առնուք, և թէ առեալ էք, վասն է՛ր ոչ ծանուցանէք: Ուրեմն զինչ առնելն ձեր մեզ գրես՛ջի՛ք:

Ողջո՛յն տէր Դավթին և թէ թուղթն նորին և ճորտից Հա-
շուագիրն մեզ էհաս: Այժմ՝ զժամանակ չունելով յետոյ զպատաս-
խանն գրելոց եմք, ծանուցե՛ս ինքեան: Խոր Վիրապայ միաբան
Կարապետ պետին որպէս յառաջն ևս գրեալ եմք, Հետեւեալ յղես-
ջի՛ք գալ:

337Բ 704 Դաւղ առ սա վասն ի թղթոջն յիշեցեալ ԻԳ. (23) թու-
մանն և ինն Հազար դիան դրամոցն:

705 Թուղթ առ մէլիք Աւետիքն, յաղագս Ե. (5) բեռն, որ
է տանն Հակ եկեղեցական զարդուցն (զոր նորապէս առաքէսք
ձեռամբ պարոն Աղալոյին և պարոն Դավթին) ինդիր՝ պաշէլ ի
տան իւրում ապահով և բարւոքագոյն տեղոջ, առ ի նամութիւն
չառնուլ, մինչև տեսանել, թէ ո՛ւր իցէ եղբերեցոց վրդովումն երկրիս:

706 Թուղթ առ Ղորղանեան պարոն Յովսէփն վասն Ջա-
ղատենց Ստեփանի որդի Աղալոյին յանձնարարութիւն, զի Հաշին,
որ կայ ի մէջ արքային և Երևանայ իշխօղին, վերահասութեամբ
տեսանել և օգնութիւն իմն առնել՝ առ ի գտանել զերծումն ի տա-
ռապանաց:

Ի վերոյ նշանակեցեալ թուղթքն թիֆլիզու գրեցան յԵրևան,
յամնոյս ԺԹ. (19):

707 Ի Երևան - Թուղթ յԵրևանու Սրբոյն Պետրոսի և
Պօղոսի եկեղեցոյ իշխանն յաղագս վարագուրին, զոր ըստ
ինդրոյ նոցին յղեաց այժմ՝ սրբազանն սրբոյ եկեղեցոյն իւրեանց:

Գրեցաւ [յամնոյս] ԻԲ. (22)¹⁴⁵:

708 Ի Թարուէզ - Թուղթ առ տէր Յովսէփի աւագ-քահա-
նայն. յիշումն յառաջմէ գրեցեալ թղթոյ սրբազան Վէհին և բան
վասն շահ կոչեցելոյն, եթէ լսեմք զմաննէ, որ եկեալ է ի Թէհրան և
զինի պայրամին գալոց է ի կողմոնսդ: Ուրեմն եթէ զձայն գալոյ և

¹⁴⁵ Երևանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին 1690-ականների սկզբներին կառուցված երկու զույգ մույրերով եռանավ թաղածածկ դահլիճ է եղել: Համաձայն ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի հրատարակած հայտնի փորագրանկարի (հեղ. Ժոզեֆ Գրեյոն) այդ նույն տեղում գտնվելիս է եղել մատենագրությունից «Երկուերեսնի» (երկու երեցի՝ Պողոսի և Պետրոսի) անունով հայտնի երկհարկ, գմբեթավոր եկեղեցին, որը, ինչպես պարզվեց մեր ուսումնասիրությամբ, կառուցված է եղել դեռևս վաղմիջնադարյան կառույցի տեղում (ֆանի որ ավագ խորանին կից մույրերին փաստագրվել են VI-VII դարերով թվագրվող որմնակարներ): Երկհարկ գմբեթավոր եկեղեցին, որը, ըստ ամենայնի, եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցու նշանավոր վարդպետ-հարտարպետ Շահիկի ձեռակերտն է, թվագրելի է առնվազն XIV դարի առաջին կառուցողով (մանրամասն տե՛ս Ա. Հարությունյան, Հին Երևանի եպիսկոպոսանիստ եկեղեցին. Երկուերեսնի - Ս. Պողոս-Պետրոս, Ս. էջմիածին, 2021): Ներկայացվող վավերագիրը պարզում է 1795 թ. տեղի իշխանների (թերևս հոգաբարձուների) խնդրանքով հայրապետի կողմից եկեղեցու համար վարագույր ուղարկելու փաստը: Յավոֆ, Երևանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին ֆանդվել է Հայաստանում ստալինյան հակակեղեցական ֆարզություն տարիներին՝ 1931 թ., և տեղում կառուցվել «Մոսկվա» կինոթատրոնի շենքը:

չգալոյ լսիցէք զնմանէ, աՀա Բ. (2) 'նշանացի բանս գրեմք, որն և լինիցի փութով մեզ ծանուցանէք՝ ստանալ միովն զգուշութիւն և միւսովն՝ միամտութիւն:

Համանման յանձնարարութիւն է տրուել է նաեւ Իսաճան աղային (ԽԵԵ). «վան շահ կոչեցելոյն գալոյն և չգալոյն» (337բ, Ա./6), նոյնպէս եւ՝ Մէհրապ աղային եւ պարոն Բաբաճանին (ԽԵԵ) (Ա./7, 8), մէլիք Մայիլի որդի պարոն Մարգարին. «վան Սրբոյ Նախավկայի բանին և ծանուցումս զգալստենէ Դանիէլ և Անանիա վարդապետացն ի Սուրբ Աթոռս և յանդիմանէն զնոսա սրբազան Վէհին...», նաեւ իւր խոստմանը Համապատասխան՝ պարտաւոր է «մինչև Սբ. Չատիկն գալ ի Սուրբ Աթոռս ի յովստ» (Ա./9):

Նամակները գրուել են մարտի ԻԳ. -ին (23):

1795 թ. մարտ - **Թուղթք ի Թիֆլիզ, ի Հադիկս, ի Տաթև, յԱրուսիս, ի Բաղէշ և ի Վան**

709* **Ի Թիֆլիզ** - Թուղթ առ պարոն Եսային Իւզբաշեան. ծանուցումն թղթոյն առ մեզ Հասանելոյն Հանդերձ Յովսէփի վարդապետի գրեմբքմ, և թէ ըստ որում ինդրեալ ես ելանել և գալ ընդ Ներսէս պետին, Հրամանէ եկեջիք ի գալ թղթոյս: Պատուէր վանն բագրաստին չառնուլ, ըստ որում Յովսէփի պետն առեալ և յղեալ էր: Ողջոյն Տէր-Շմաւօնեան պարոն Ստեփանին և թէ թուղթն մեզ էՀաս և չեղև ժամանակ զպատասխանին գրելոյ: Եթէ ի Յովսէփի պետէն առաքեցեալ բեռն առ ինքն է Հասեալ, ընդ քեզ յղեցէ, իսկ թէ ոչ՝ ի գալն փութով առաքեսցէ:

Գրեցաւ յամնոյս ԻԴ. (24):

710* **Ի Հադիկս** - Թուղթ ի Մուշիբանդար՝ առ աղայ Ծատուրն Տէր-Յակոբեանն, վանն Եփրեմ պետին և ընդ նմա յղեալ յիշատակացն շնորհակալութիւն: Նաև բան՝ յաղագս կտակին Հանգուցեալ տաթևացի Պօղոսին Տէր-Արիստակէսեան, որոյ և ճառն երկար լինելոյն, թողում տեսանել յերեսն մեծ տե[տեր] 2037:

711 **Թուղթ առ Մատրաս՝ առ ՀաՀամիր աղայն, ի պատասխանի երից թղթոցն վանն գալոյ նուիրակ Եփրեմ պետին և խոստումն զնոյն զկնի ամաց առաքել, և այլ բազում բանք: Տէ ս յե[րես]** 2034:

712 **Թուղթ դարձեալ ի Մատրաս՝ առ աղայ Յարութիւն Յակոբեանն Թաղեանց, ի պատասխանի թղթոյն. շնորհակալութիւն վանն զոմանց կտակաց Հասուցանելոյն: Հնորհաւորութիւն որդւոյ Հարսանեացն, միսիթարութիւն վանն մահուան դատերն և դարձեալ շնորհակալութիւն վանն որդւոյն յանձն առնելոյն զգործակալութիւն Սրբոյ Աթոռոյս: Եւ պատուէր, զի մուղայեթ լիցին ի Մուշիբանդար վախճանեալ Պօղոսի կտակին:**

Տէ ս նոյն տետեր յերեսն 2232:

713 **Ի Բասրայ** - Թուղթ առ գործակալն Սրբոյ Աթոռոյս Բեթղէճեմեան պարոն Յովհաննէսն. յիշատակութիւն ի սոյն մարտի Ե. (5) գրեալ թղթոյ սրբազանին, և Տաթևու առաջնորդին առ ինքն և առ այս գրեալ թղթոցն, և պատուէր, զի զնորին և զմեր գրեալ թուղթմն առ Շահամիր աղայն և առ այլս Հասուցանել նոցա, և զբան Տաթևու առաջնորդին ի գլուխ Հանել: Տէ՛ս յերես 2039:

Գրեցան ի վերոյ նշանակեալ թուղթքն յամնոյս ԻԵ. (27) և յղեցան ի վերայ Խօյու առ պարոն Բաբաջանն, որոյ և թուղթն գրեալ [գրեալ] կայ յապրիլ ամնոյ Գ. -ին (3): Ընդ որս և երկրորդ օրինակքն Հնդկաց երկրի և այլոց ի մարտի Ե. (5) գրեալ թղթոցն՝ առաքեցան, որք են ի ներքոյ դասեալքս:

Նամակներ են գրուել աղայ Մովսէս Խաչիկեանին (Կալկաթայ) (338ա, Ա./2), Յօհաննան աղայ Գերաքեանցին (Սուրաթ) (Ա./3), պարոն Յովհաննէս Բեթղէճեմեանին (Բասրայ) (Ա./4) և աղայ Ղուկաս Ալեքսանեանին ու պարոն Միքայէ Տէր-Մինասեանին (Բաղդատ) (Ա./5):

714* **Ի Տաթև** - Թուղթ ի Տաթև՝ առ նորին առաջնորդ Յովակիմ վարդապետն. ծանուցումն թղթոյն և ի Հնդիկս առաքելի գրեանց առ մեզ Հասանելոյն և խոստումն, թէ ի սոյն աւուրքս մէք ևս թուղթ գրեալ առաքելոց եմք նախքան զնուիրակն, և ընդ նուիրակին ևս եմք գրելոց և ընդ երկրորդ օրինակին ձերոյ յղելոց: Եւ թէ ժողովարար վարդապետքն սրբոյ վանիցդ՝ զդրամն Սրբոյ Աթոռոյս ի Չմիւռնոյ առ պարոն Հայրապետն են Հասուցեալ ի Կարին և զքոյդ ձեռագիրն ի Հարկէ՛նա ևս առ նոսա է Հասուցանելոց: Չմէկ Հազար դուռչ ևս են Հասուցեալ առ վէքիլ պարոն Հայրապետն, որպէս ի թղթոց վարդապետացն և պարոն Հայրապետին իմանալոց են, զորս և ընդ գրոյս ահա առաքեցաք, ուրեմն՝ զայն դրամն կամ յատուկ մարդով կամ որպէս բարւոք իմանաս բերել տայցես, բայց վէքիլն մեր գրեալ էր, թէ առաջնորդ վարդապետն, եթէ այս նոր դրամն իւր սառֆայովն Հին փող շինել տալ կամիցի, անհնարին է, ըստ որում Հին փող ո՛չ գտանի, լինի թէ՛ քեզ ևս գրեալ լինիցի: Ողջո՛յն ձերունի Յակոբ վարդապետին, մէլիք Պօղոսին և Ճ.ապետ (Հարիւրապետ) Մովսէսին:

715* **ՄԱզուլիս** -- Թուղթ առ Սրբոյն Թօմայի առաքելոյ վանից առաջնորդ Թօվմաս վարդապետն. շնորհակալութիւն վասն զմեր թուղթմն առ Յովակիմ պետն Հասուցանելոյն և զնորին առ մեզ և պատուէր, զի ի նորոյ առաքեալ թուղթքն ևս՝ առ նա Հասուցանել փութով:

Գրեցան թուղթքս յամնոյս ԻԸ. (28):

716* **Ի Բաղէշ** - Կոնդակ օրհնութեան ի վերայ Կարմրակ եկեղեցւոյ ժողովրդեանն. շնորհակալութիւն յաղագս միոյ տարւոյ

և երեք ամսոյ **ԽԶ**. (46) զուռուշ գանձանակական արդեանցն իւրեանց: Նաև Հաստատութիւն գանձապետութեան պարոն Ղարիպանին, առ որ և պատուէր Հաւատարմաբար ծառայել:

717* **Թուղթ** առ նոր գանձապետ պարոն Ղարիպանն. մխիթարութիւն վասն մահուան գանձապետ եղբօրն և Հաստատութիւն զինքն գանձապետ ի տեղի եղբօրն Հանգուցելոյ:

718* **Ի Վան** - Թուղթ առ նուիրակ Աբրահամ վարդապետն, յորում թէ՛ յաստի գնալոյդ Հետէ ի քէն գիր ոչ ոնիմք ընկալեալ և վասն քո, որ ընդ քեզ զՀանձնարարութիւն գրեցաք Ախիջան աղային և ընծայ յղեցաք առ այժմ զայն նմանէ զբան ինչ չիշէ, մինչև զնորՀակալութիւն գրէ վասն եղբօրն մխիթարութեան թղթոյն, զոր գրեալ էաք: Իսկ դու ի ներկայս առ մերայինսն զթուղթ գրես և նոր ինդրես ի մէջ զգիր մխիթարութեան: Չայցուցանէ զքէն և զգործոյդ Հարկիւ գրեսցես ի գիտել: Նաև յանցեալն առ ջուղայեցի պարոն Երեմիայն զթուղթ գրեցաք և մեր ժամանակ չունելով պատուիրեցաք մեր Յակոբ վարդապետին գրել քեզ զթուղթ և յղել ընդ նմին, զայնմանէ ևս ծանուցես, թէ Հասեալ իցէ այն թուղթն առ քեզ: Ապա ծանուցումն վասն շահ կոչեցելոյն, թէ գալոց Համբաւէն զնմանէ և այլն: Չեկուցես սիրելոյն մերոյ՝ Ախիջան աղայ ողջունիւ, զի մեր յատուկ գիր ոչ եղաք ձեռնՀաս գրել:

Գրեցան թուղթքս՝ յամսոյս էլն:

338բ

1795 թ. ապրիլ - **Թուղթք ի Խօյ, ի Հաղբատ և ի Հուլաւեր**

719* **Ի Խօյ** - Թուղթ առ պարոն Բաբաջանն, պատուէր վասն յառաջմէ գրեալ նշանացի բանի, զորպէս լինիլն փութով մեզ ազդել և վասն Հնդկաց երկրի պահարանեալ թղթոցն, զոր առաքեցաք առ ինքն Հասուցանել ի Բաղդատ՝ առ աղայ Ղուկանս Ալէքսանեան և պարոն Միքայէլն Տէր-Մինասեան: Եւ թէ լսեմք, որ գնալոց էս ի Բաղդատ, եթէ քանի մի շաբաթ տևի գնալդ փութով մեզ ծանուցես, զի իցէ, թէ մեր ևս զնոր նուիրակն առաքելոց եմք ընդ միմեանս գնայցէք:

Գրեցաւ յամսոյս Գ. (3):

720 **Ի Հաղբատ** - Թուղթ առ նորին առաջնորդ Դաւիթ վարդապետն վասն բանադրեալ ղազախեցւոցն, եթէ եկեալ ի Սուրբ Աթոռս՝ արձակեցաք, որովհետև թագուհին և պարոն Յովսէփն ևս ինդիր արարեալ էին, թողլով զինքեանս ի պարտականութեան վասն օրինազանց արարմանց: Եւ դու ի գիւղականսն նոցին գրեսցես, որ թողցեն յեկեղեցին և զօրէնս նոցա կատարեսցեն:

721 **Ի Հուլավեր** - Թուղթ օրհնութեան առ Հուլավեր բնակեալ ժողովուրդան. շնորհակալութիւն վասն ընդ առաջնորդին իւրեանց՝ Թադէոս պետին յղեալ Լ. (30) բաճին, և պատուէր Հնազանդ և Հպատակ լինիլ նմա:

Գրեցան Ե. (5):

1795 Թ. ապրիլ - **Թուղթք Ի Կարին, Ի Մասէն, Ի Ղարս, Ի Ղօշաւանք և Ի Թիֆլիզ**

Նամակ Կարինի վերիլ պարոն Հայրապետին, ուր Հաղորդուամ են տեղեկութիւններ Մշոյ Ս. Յովհաննէս վանքի առաջնորդ Աստուածատուր պետի վախճանի, խորենացի երեցից վեց Հարիւր ղուռուշ առնելու, Տաթևի վանքի ժողովարար վարդապետներից ստացած ԴՃԾ. (450) ղուռուշի, ևս Հազար ղուռուշ իրենց առաջնորդ Յովակիմ վարդապետին Հասցնելու Համար եւ այլն (338բ, Ա./4):

722* **Ի Մասէն** - Թուղթ առ սառուֆ Փիլիպպոս ամիրայն, Ի պատասխանի թղթոյն նորա, վասն այնց տեղեաց նուիրակ Բարսեղ պետին արարեալ բարեշնորհութեանցն. շնորհակալութիւն վերստին ևս վասն նորա և Ամթայ նուիրակ Յօճան պետին յանձնարարութիւն, նոյնպէս և վասն Կարնոյ գործակալին մերոյ՝ պարոն Հայրապետին, Ի կողմանէ Թարջիմանեան չիք Պօղոսին: Եւս շնորհակալութիւն վասն Գալուստ պետի յափշտակեալ ընչիցն տիրաբար Հոգ տանելով Ի փաշայէն մարդ կամ Հրամանագիր Հանելով առ կողոպտիչսն դարձուցանել զկողոպտեալսն: Առ որ թէ յուսամք Հանեալ լինիցին և զվրդովմանէ երկրիս և զշահ կոչեցելոյ Համբաւ գալստենէն ծանուցումն:

723 **Ի Ղարս** - Թուղթ առ Գէորգ աղայն, Ի պատասխանի թղթոյն վասն Հասման Ախլցխայու նուիրակ Յովհաննէս պետի Ա. (1) քաղալակիւ փօրթուկալին միամտութիւն, և Ի նորոյ առաքեալ պահարանեալ թղթոցն պատուէր Հասուցանել Ի Կարին առ պարոն Հայրապետն: Չչուելոյ Քեարիմ բեկին, զնորին եղբայր Հասան սուլթանի յԵրևան գալոյն ծանուցումն, ընդ որս և զերկրիս որպիսութենէն և զշահ կոչեցելոյն:

339ա

724* **Ի Ղօշաւանք** - Թուղթ առ Ղօշաւանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն, վասն գրեալ բանից մերոց Հրաժարական պատասխանոյն՝ Հաւանութիւն և յաղագս տալացու դրամոյն պատուէր յղել և Հարցումն Ի սակս Սաղիմայ նուիրակի զորքա՛ն տեղիս մնալոյն: Առ այն և Հարկ՝ ծանուցանել յիշումն զերկրիս որպիսութիւնն:

725* **Ի Թիֆլիզ** - Թուղթ առ մելիք Աւետիքն, որ գրեցաւ ըստ խնդրոյ Ջատաղէնց Ստեփանի որդի Աղալօյին, յանձնարարութիւն վասն նորա, առ Ի բարեխօսել առ արքայն յաղագս Հա-

շուղյն, լինի թէ օգտուլթին ինչ գտցէ: Յիշումն և յԵրեւանու գրեալ թղթոյն մերոյ և յղեալ եկեղեցական իրացն առ ինքն:

Գրեցան թուղթքս յամսոյս ԺԲ. (12):

Թուղթ ի Գօրի, ի Թիֆլիզ, ի Բաղդաստ և ի Խոյ

726* **Ի Գօրի** - Թուղթ առ Գօրու աւագ էրեց ծերունի տէր Ղազարն. շնորհակալուլթին վասն միոյ լիտր մոմոյն, զոր յղեալ էր ընդ որդւոյն իւրոյ տիրացու:

727* **Ի Թիֆլիզ** - Կոնդակ ժողովարարութեան մոմի, որ յղեցաւ ի ձեռս առաջնորդ Մարտիրոս վարդապետին և գործակալ տէր Ղազար աւագ քաւանային, առ ի ժողովել զմոմն և յղել:

728* Թուղթ առ տեղւոյն Համայն աւագ քաւանայն, յորում թէ աւա զմոմաժողովութեան կոնդակն առաքեցաք ի ձեռս առաջնորդին՝ տէր Ղազարին և ճորտից վերակացու տէր Դաւթին, ուրեմն և դուք Հաւատարմաբար ժողովեսձի՛ք զմոմն և աւուրբ միով յառաջ յղեսձի՛ք:

729* Թուղթ առ ճորտից վերակացու տէր Դաւիթ քաւանայն, ի պատասխանի թղթոյն. յիշատակուլթին առ մեզ Հասանելոյն ընդ թղթոյն և սիւնին ճորտիցն և շնորհակալուլթին առ այն օրհնութեամբ: Ծանուցումն զՀասանել ձեռագրին նոր ճորտացուացն Երեմիային և Եսայոն և խոստումն յետոյ զկոնդակն նոցա առ քեզ: Ընդ Ղալոյեան Բաղդասարին յղեալ Ֆնտուղին ևս շնորհակալուլթին: Եւ թէ աւա զկոնդակն մոմի յղեցաք առ առաջնորդն, պատուիրեմք, զի մինչ զճորտից մոմն ժողովեսցես, յանուանէ իւրաքանչիւրոցն զինչ և կամ որքան տալն գրեսցես: Եւ Հասարակականն ևս ի Հարկէ ընդ առաջնորդին և այլոց գրելոց էք:

730* Թուղթ առ առաջնորդ Մարտիրոս վարդապետն և տէր Ղազար քաւանայն, յաղագս մոմաժողովութեան կոնդակին, եթէ աւա առաքեցաք, ժողովեալ յղեսձի՛ք: Բայց մերձ լինելոյ ժամանակին սպիտակացուցանելոյ դուք յայմէ փոխ առեալ յղեսձի՛ք փուլթով, որ Հասանիցի ժամանակին և յետոյ զժողովեալն տաձի՛ք փոխտուաց: Գրեցաք առ այս և աւագ քաւանայիցն զթուղթ և թուղթ մի ևս ճորտից վերակացու տէր Դաւթին, որ նա ևս ի ջորտիցն ժողովեսցէ, զորս և տաձի՛ք նոցա: Բան յատկապես առ Մարտիրոս պետն, թէ յանցեալն յԵրեւանու ընդ եկեղեցական իրիցն թուղթ գրեցաք և դեռ վասն նորա իր ինչ ո՛չ գրեցեր, Հարկիւ զորպիսաբար առնելն ձեր գրեսցես ի միամտութիւն: Եւ մեղադրուլթին երկոցունցն, զի մէլիք Աւետիքի որդին և նսնուսեցի Սարգիս աղայն վախճանեալ գոլով, բան ինչ վասն նոցա չէին գրեալ, որ սրբազանն զթուղթ մսիթարութեան գրեցէր առ ընտա-

նիւն Հանգուցելոց և այժ[մ] գրէ, զի զմահուանէ՛նոցա, եթէ ստոյգ է, գրեցեն: Յղեցաւ և վասն էննաֆիցն զերեք լիտր սպիտակ մում ձեռամբ պարոն Աղալոյին և Դաւթին, պատուէր զՀասանիւն ծանուցանել:

Գրեցան յամոյս ԺԸ. (18):

731* **Ի Բաղդատ** - Թուղթ առ պարոն Միքայէլն Տեր-Մինասեան, յորում յիշէ սրբազան Վեհըն, թէ ի մարտի Ե. (5) թուղթն գրեցաք առ քեզ և աղայ Ղուկասն և նորին Բ. (2) օրինակն ևս ի նոյն ամոյս ԻԵ. -ին (25) գրեալ յղեցաք ի վերայ Խօյու, ընդ այլ Հնդկաց երկրի առաջին օրինակ թղթոցն և այժմ ևս մինչ նոյն թղթոց Բ. (2) օրինակքն յղեաք, զայս թուղթ ևս միայն առ քեզ գրեցաք և պատուիրեմք, զի զնոյն թուղթն Հնդկաց Հասուցանել ի Բասրայ առ պարոն Յովհաննէսն Բեթղէ՛հէմեան և խոստումն վասն նոր նուիրակին, եթէ զկնի ամոց յղելոց եմք: Ողջոյն աղայ Ղուկասին Ալէքսանէան և Համայն իշխանացն տեղւոյն:

/339բ/ Ընդ վերոյ գրեալ թղթոյ Բաղդատուն և յղեցան Բ. (2) օրինակքն ի մարտի ԻԵ. (25) գրեալ թղթոցն Հնդկաց երկրին և Բասրայու, որք են ի ներքոյ դասեալքս, զորս և յղեցան ի վերայ Խօյու առ պարոն Բաբաջանն, որում և թուղթն տեսանի ի ստորև զկնի Հնդկաց թղթոցն:

Նամակներ՝ ուղղուած Հնդկաստանի տարբեր քաղաքներում բնակուող Հայագի նշանաւոր այրերին. աղայ Ծատուր Տեր-Յակոբեանին (Մուշիբանդար) (Ա./1), աղայ Շահամիր Սուլթանուսեանին (Մադրաս) (Ա./2), աղայ Յարութին Յակոբեան Թաղեանցին (Մադրաս) (Ա./3), գործակալ պարոն Յովհաննէս Բեթղէհէմեանին (Բասրայ) (Ա./4):

732* **Ի Խօյ** - Թուղթ առ պարոն Բաբաջանեանն, յիշումն յառաջմէ գրեալ նշանացի բանին մերոյ և բան վասն Բաղդատ գնալոյն իւրոյ որպէս և յառաջ ևս է գրեալ, առ ի միասին գնալ ընդ Հնդկաց երկրի նորոգ նուիրակին, զորմէ ևս թէ զկնի ամոց Հանելոց եմք աստի յաջողութեամբն Աստուծոյ: Նաև՝ վասն Հնդկաց երկրի պաշարանեալ թղթոցն պատուէր Հասուցանել ի Բաղդատ առ պարոն Միքայէլն Տեր-Մինասեան:

Գրեցան և յղեցան թուղթքս յամոյս ԻԱ. (21):

1795 թ. ապրիլ - Թուղթք ի Սալմաստ և ի Հաղբակ, ի Թիֆլիզ, ի Ախցխա, ի Ղարս և ի ՂօշաՎանք

733 **Ի Սալմաստ** - Թուղթ առ տեղւոյ մէլիքն և քեանթխուտայն, վասն բանի վանից իւրեանց և առաջնորդութեանն, թէ ըստ որում կրկին գրեցելովք մերովք առաջնորդն Հրաժարեալ էր և նոր առաջնորդ էք ինդրեալ, և գրեալ ևս վասն վանից իշխօղին, թէ շատ նեղացուցանէ զառաջնորդն ի կողմանէ դրամապահան-

ջուլթեան: Վասն որոյ պատշաճ տեսաք նախ յիշխօղէն խաթրջամական թուղթ իմն առնուլ և ապա զառաջնորդն կարգել: Ուստի առ իշխօղ բէկն գրեալ, առաքեցաք ընդ Խաչատուր վարդապետին, որ աւելի ինչքան զիւր դամանն և պայրամլուղն այլ ինչ չառնուցու: Եթէ այնպէս պայմանագիր տացէ, յայնժամ յղելոց եմք զառաջնորդ:

Ըստ այսմ մտաց և Հաղբակեցւոց գրեցաք, ուրեմն և դուք ևս զԲ. (2) խոռեմ քեան թիսուտայս եղեալ ընդ Խաչատուր պետին յղեսջի՛ք, որք ընդ Հաղբակեցւոցն խօսիցին ընդ բէկին և զբանն Հատցեն: Եւ ապա եկեալ յայսր Խաչատուր պետն առաջնորդ արարեալ յղեսցուք, որ ի շինութեան մնայցէ սուրբ վանքն:

734 **Ի Հաղբակ** - թուղթ առ Հաղբակեցիան, ըստ մտաց վերնոյ թղթոյն, վասն վանից առաջնորդութեան:

735 **Թուղթ տաճկերէն առ իշխօղն վանից՝ Սալահ բէկն,** եթէ յաղագս աւելորդ դրամապահանջութեանդ ոչ որ կամի լինիլ յայդր առաջնորդ: Ուրեմն եթէ պայմանագիր իմն տայցես, որ աւելի քան զհարկն քո բան ինչ չառնուցուս, զառաջնորդն յղեսցո՛ւք, ապա թէ ոչ, մեք տիրութիւն առնօղն չեմք:

Գրեցան և յղեցան յամսոյս ԻԵ. (25):

736 **Կոնդակ ճորտութեան,** որ տուաւ Երեմիայ ճորտացելոյն ի գալն ի Սուրբ Աթոռս:

Յամսոյս ԻԶ. (26)-ին գրի:

737 **Ի Թիֆլիզ** - թուղթ առ առաջնորդ Մարտիրոս պետն, թէ թուղթք Հասին մեզ, բայց յաղագս շէշտիւ դարձման գրաբերին մինչ ոչ եղև զինդորոյդ կատարումն, զայս գրեցաք ընդ նմա, և զինի աւուրց կատարելոց եմք և զգրեալսդ:

Գրեցաւ յամսոյս ԻԷ. (27):

738 **Դարձեալ ի Թիֆլիզ** - թուղթ առ արքայն Վրաց Հերակլէս, վասն վրդովմանց կողմանցս և ի պատասխանի ապսպարեալ բանից նորա ընդ Թաղկայ բէկին և Միրզայ Ղահրամանին, և բան զներքինի շահ կոչեցելոյն, և ինդիր վասն գալստեանն ներքինոյն Հոգս իմն առնել Սրբոյ Աթոռոյս:

739 **Փոսուկայ առ սա յաղագս Ա. (1)** Հարիւր թուման դրամոյն, զոր յղեցաւ ի նորոյ ի յօգնութիւն մասնաւորապէս բազմաձախ խարջարարութեանցն իւրոց:

740 **Թուղթ առ մէլիք Աւետիքն,** վասն մահուան որդւոյն մխիթարութիւն. յիշումն և յղեցեալ իրացն եկեղեցականց: Եւ թէ

լուաք արքայն զգորաց պատրաստութիւն տեսանէ, ուստի թուղթ գրեալ նմա, եդաք ի մէջ թղթոյդ մատուցես նմա:

Մարտիրոս պետին և տէր Ղազարին գրեցաք, որ Ճ. (100) թումանն ի դիմաց մերոց ընծայեսցին նմա:

340ա

741 Թուղթ առ մէլիք Մինասն, ի պատասխանի թղթոյն վասն բանին, զոր ասացեալ էր արքային ի մերս կողմանէ և նա այլ ընդ այլոց էր պատասխանել, պատուէր միւս անգամ գլխացաւութիւն չառնել նմա: Եւ թէ իմացեալ մեր արքայի գորաց զպատրաստութիւն տեսանէին: Ահա ըստ մերս կարի գրեցաք առաջնորդին և տէր Ղազարին զմասնակցութիւն ինչ ընծայել ի Հոգս բարձրութեան նորին:

Ջկնի աւարտման գրոյս մինչ երկրորդ թուղթն ևս էհաս, յիշեցաւ այն ևս, և յաղագս զորպիսութիւն ինչ ծանուցանելոյն շնորհակալութիւն: Եւ վասն համբաւոյն իբրու յայնկոյս գնալոյն սրբազան Վեհին, եթէ սուտ և դատարկ է:

742 Թուղթ առ նորոգ Հանգուցեալ նանուսեցի Սարգիս աղայի որդի Կարապետ աղայն. մխիթարութիւն վասն մահուան Հօրն իւրոյ:

743 Կոնդակ ի վերայ Զկրաշինու եկեղեցւոյ ժողովրդեանն ի Հաստատութիւն ժամօրհնութեան տէր Սիմէօնին ի տեղի Հանգուցեալ տէր Յօհանն Ժերոննի քահանային:

744 Թուղթ առ առաջնորդ Մարտիրոս վարդապետն և տէր Ղազար աւագ քահանայն. յիշումս յառաջ քան զայս գրեալ թղթոյն մերոյ և մոմի կոնդակին, Հանդերձ Գ. (3) լիտր սպիտակ մոմի առաքելոյն: Եւ թէ լսեմք, որ արքայն դէպ ի Ղազարի յառաջ խաղալոց է, վասն որոյ պատշաճ վարկեալ առ նա թուղթ գրեցաք, յիշելով ևս՝ ընդունիլ ի ձէնջ զդրամս վասն բազմածախ խարջարարութեանցն: Ուստի գրեմք ի Հասանիլ գրոյս, փութով զհազար Հատ Հին ալթմուշլուս պատրաստել, մատուցիք նմա ի դիմաց մերոց: Եւ զկնի մատուցման, զգիր միամտութեան առեալ ի նմանէ մեզ յղեսցիք:

Մէլիք Աւետիքի որդւոյ և Սարգիս աղայի վախճանմանն Հաստին մինչ գրեցաք ձեզ ծանուցանել, այժմ՝ մինչ յայլոց ստուգեցաւ, զմխիթարութեան թուղթս գրեցաք առ մէլիք և առ Կարապետ աղայն՝ որդւոյն Հանգուցեալ Սարգիս աղային, զորս և տարեալ մատուցես նոցա և ի դիմաց մերոց զհոգւոցն ասացես:

Փոքր կնքեալ ամանաթ յղեցաք վասն մէլիքին ձեռամբ նոր ճորտացեալ պարոն Երեմիային, զոր և ընդ թղթոյն տացես: Եւ Երեմիայի ճորտութեան կոնդակն ևս գրեալ ինքեան ետուք: Արքայի թուղթս ի մէջ թղթոյ մէլիքին եդաք, որ նա մատուցէ: Պա-

տուէր վասն մէլիք Մինասին թղթոյն, Հասուցանել ինքեան ողջունիւ:

Ողջոյն Տէր-Հմաւօնեան պարոն Ստեփաննոսին և պատուէր նմա՝ զԵրուսաղէմայ նուիրակ Պօղոս պետի թուղթն Հասուցանել իւրն ուր և իցէ, և ապա մեզ ծանուցանէ:

Մինչ զայս թուղթ վերճացուցեալ առաքէք, էհաս և թուղթ մի ևս ի նմանէ, բայց բերօղն ըշտապեալ զփոքրիկ թուղթ մի գրեալ յամնոյս ԻԷ. (27), որպէս տեսանի ի վերոյ յղեցաք, և ըստ խնդրոյ նոցա այժմ՝ զկոնդակ Հաստատութեան ի լուսարարութեան տէր Սիմէօն քահանային Ջկրաշինու եկեղեցւոյն գրեալ առաքեցաւ: Որպէս տեսանի ի վերոյ:

745* **Ի Գիլան** - Թուղթ առ սրբոյն Երուսաղէմի նուիրակ Պօղոս վարդապետն ի պատասխան երից, թէ խնդրեալ էիր ի սրբոյ Սաղիմայ առ քեզ եկեալ թուղթն, յղեսցուք ի Շուշի, ի ձեռն գանձապետին ձերոյ և այլն: Բայց յանցեալ տարին զմի պաշարանաւ թուղթ եկն, զոր և մէք յղեցաք ի Թիֆլիզ առ Յակոբջան աղայն քեզ Հասուցանել և այլ թուղթ չէ եկեալ: Եւ զնորոգ պատրիարգի կոնդակն, զոր խնդրեալ էիր ի մէնջ գրեալ զի փութով յղեսցեն, մէք յանցեալ թուոյ օգոստոսին առ տիրացու Սարգիսն զթուղթ գրեցաք՝ ծանուցանելով և վասն քոյ, և գործոյդ, և մեր առ քեզ զթուղթ գրելն, և առաքեցաք ևս ագուլեաց թովմաս պետի քեզ տուեալ ԱՌ. (1000) ղուռուշի ղաւզն: Յորմէ և ի պատրիարգի վարդապետէն զկնի ամնոց յուսամք ընդունիլ զթուղթ և քոյնն յղելոց եմք քեզ փութով:

Ի Բայազիտ առ տիրացու Գէորգն եղեալ ԱՌԳՃ. (1300) ղուռուշին, զոր գրեալ էիր, թէ մուրհակն առ նա գայ, Հրամայեսցես Հոգատար լինել յիշեալ գրամոյն, ընդ խնդրոյդ գրեցաք, բայց պատասխանեալ էր, թէ մահտեսի Կապուտիկն ինքնին ցրուեաց զթեղն և այժմ մինչ զգրամն խնդրեմ, ասեն, թէ դու չես տուեալ մեզ ընդէ՛ր տամք քեզ և այլն: Որոյ առ մեզ 1340թ՝ գրեալ թուղթն ահա առաքեցաք քեզ, անտի իմանալոց ես:

Ի Հաքուայ կողմանցն, որ զթել առեալ և յղեալ էիր ի Գեանջայ առ գանձապետ մահտեսի Ալետիքն ի վաճառել, նա յանցեալն յԵրևան առ ամն Բ. (2) բեռն և Ա. (1) Հակ թել էր յղեալ և մեզ ևս գրեալ մնալ ի Սուրբ Աթոռոջս մինչև զքոյդ գալն, զորս և մէք պահեմք առ մեզ: Եւ նոյն մահտեսի Ալետիքն ևս վախճանեալ է թերևս լուեալ իցես: Իսկ զոր գրես, թէ ի կողմանէ Տաթևու ընդ միոյ զանկազօռցի առն ԵՃ. (500) ղուռուշ եմ յուղարկեալ, մէք յուրմէք մի փարայ չեմք ընկալեալ: Ծանուցումն զերկրիս և զշահ կոչեցելոյ որպիսութենէն:

746* **Ի Ղարս** - Թուղթ առ պարոն Գէորգն. ծանուցումն իւրոյ և Ախլայիայու նուիրակ Յովհաննէս պետի թղթոցն առ մեզ Հասանելոյն և շնորհակալութիւն մինչ զնորին յՕլթու և Նարիմա-

նու վերադարձմանն էի Գեօլայ, զեկուցեալ էր: Եւ պատուէր, զի նորին թուղթն (որ վասն ի Սուրբ Աթոռս գալոյ էր գրեալ) առ ինքն Հասուցանել փութով: Չփայտավաճառ Ռուստամի ասութիւն ևս իմացեալ մեր, գրեցաւ, թէ որովհետև ներքինսոյ գալստեանն Համբան սաստկանայ, ասասցես նմա Համբերել մինչև ի մայիս ամիսն, լինի թէ այս ձայնքն ի բարի կողմն դարձցին և յայնժամ քեզ սիրելոյդ գրեմք, որ յղել տայցես, իսկ թէ ոչ՝ մնայ մինչև ի միւս գարունն:

747* **Ի Ղօշափանք** - Թուղթ առ առաջնորդ Յովհաննէս վարդապետն, վասն մնացեալ ԲՃ. (200) ղուռուշին, որ ընդ թամբարացի ուխտաւոր տէր Մատթէոսին յղեալ էր, շնորհակալութիւն: Եւ թէ գիտեցաք Արագի գիւղի տէր Խաչատուրի տալն գրիւայն ժ. (10) սօմար գարւոյն և վասն նորա, որ զմի փիլոն էիր յղեալ, Հաճեցաք այժմ՝ Հոգօք զբաղեալ գոլով զինի աւուրց յղելոց եմք օրհնութեան կոնդակաւ: Եւ վասն փոքրիկ պաշարանեալ թղթոցն պատուէր Հասուցանել ի Ղարս առ պարոն Գէորգն. ծանուցումն զՀաճէն: Յղեցաւ ընդ նոյնոյ տէր Մատթէոսին առ սա Դ. (4) լիտր գինի: Վերոյ գրեալ թուղթքն ծրեցան յամնոյս ԻԸ. (28):

Թուղթք ի Պօլիս, յՈւռումէլի, ի Կարին, ի Թարուէզ և ի Խօյ

748* **Ի Մեծն Պօլիս** - Թուղթ առ Մեծին Պօլսոյ Չաքարիս պատրիարգն ի պատասխանի թղթոյն, զոր ընդ Հնորք Մկրտիչ ամիրային գրեալ էր. շնորհակալութիւն վասն յուսադրական բանիցն և վասն կարնեցւոցն բան, զոր տեսանելոց ես մեծ տէր տեր յերեսն 2046: Ողջոյն Հնորէք Մկրտիչ ամիրային:

749* **յՈւռումէլի** - Թուղթ առ տեղւոյն և կողմանցն նուիրակ Գրիգոր վարդապետն ի պատասխանի յանցեալ թուոյ դեկ[տեմբերի] գրեալ թղթոյն. յաղագս զբազում տեղեաց գործոյն աւարտելոյ օրհնութիւն և վասն առ ոմանս քաղաքս զգանձապետութեան թուղթս խնդրելոյն, եթէ զքաղաքաց և գանձապետաց անուանան ի բաց թողեալ, յղիցեմք իբրու, առ այն, թէ այդ չէ եղեալ, յուսամք մինչև ցգալ գրոյս առ քեզ եկեալ իցես ի Պօլիս դիմել ի սուրբ Գաւս, յայնժամ ի գալը գրիցեմք: Իմացաք պարոն Նիկօլայի առ քեզ գալն և քաշանայս և դպիրս ձեռնդրեցուցանելն և զառատ նուէրս տալն: Եւ ի Գրիգորուպօլու քաշանայից և յիշխանաց զբացասութեան թուղթ ընկալնուլդ առ ինքեանս գնալոյ և տէր Մեքրոնի առ քեզ գալն և զառ ինքն գրեալն մեր Հասուցանելդ գիտացեալ միամտեցաք:

750 **1795 թ. 28 ապրիլի** - Թուղթ առ Սրբոյն Սաղիմայ Թիֆլիզու նուիրակ, ակնցի Պօղոս վարդապետն, ի պատասխանի

քանի Հատոր թղթոցն, յորս գրեալ բանից ոմանց աղագաւ միամտութիւն:

ՄՄ ձեռ. Հ^ր 4482, էջ 37¹-73

ՄՄ ձեռ. Հ^ր 4481, էջ 341ա

75¹ 1795 թ. մայիս, **Ի Կարին** - Կոնդակի ի վերայ Կարնոյ քաճանայից և Համայն իշխանացն և երևելի անձանցն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն իւրեանց, որով գանգատանս էին գրեալ զինքեանց և զՍրբոյ Կարապետի վանից առաջնորդ Յակոբ պետէն, էթէ ի բազում տուգանաց էճան զմեզ, և թէ նոր առաջնորդ մի առաքեսցես մեզ, և կամ պատրիարգին գրեսցես որ նա առաքիցէ: Վասն որոյ և սրբազան Վեհրն առ պատրիարգն գրէ յղել վասն սոցա զնոր առաջնորդ իմն՝ ծանուցանելով ևս զգանգատն սոցին, որ վասն Յակոբ պետէն:

Եւ առ սոսա ևս միսիթարութեան և յուսադրական բանս գրէ և պատուիրէ ինքեանք ևս առ պատրիարգն զթուղթ իմն գրել և ընդ թղթոյն առաքել¹⁴⁶:

Պատասխան նամակներ՝ Գօրոյեան մաճտեսի Խաչատուրին, նրա եղբայր Սերօբին. «ՀնորՀակալութիւն առ Ամթայ և Կարնոյ նուիրակաց արարեալ յարգանացն, տրտմակցութիւն և միսիթարութիւն վասն տուգանացն, զոր մատնութեամբ առաջնորդ Յակոբ պետին տուեալ էին» (Ա./2), Մայր Աթոռի վէքիլ պարոն Հայրապետին. «ընդ կարնեցոց մաճսարին գրեցերոյ... և առ Մատէնու սառաֆ Փիլիպոս ամիրայն», նաեւ՝ «Ամթայ նուիրակ Յօճան պետի ուղևորին դէպ ի Բալու իմացեալ՝ միամտեցաք...: Գօրոյեան մաճտեսի Խաչատուրն և Սերօբն գրեալ էին մեզ զտուգանին իւրեանց և մաճտեսի Ամիրջանին՝ ցաւ եղև մեզ յիրաւի, բայց անցեալ է...: Ի Պօլսոյ Գալուստ պետէն, էթէ թուղթ գայցէ առ մեզ, յղեսցես փութով եւ թէ յիզմիրու եկեալ բեռն Հասեալ է ի Բայազիտ առ տիրացու Գեորգն» (Ա./3):

752* **Դարձեալ ի Կարին, յայլ ժամանակ** - Թուղթ ևս առ պարոն Հայրապետն, վասն բանի զսոյն թղթատար Ղազար տղային, զի սա առևտուր ոճնելով ընդ սառաֆ խօջայ Սարգսին և պարոն Սուզինին, ի Խօյու թիրմայ շալ էր առեալ և յղեալ առ յիշեալ սառաֆն ի վաճառեալ և զորպիսութիւն ինչ չիմացեալ զնմանէն, միջնորդութեամբ խօյեցի Մարգար աղային Մայիլեանն խնդրեաց ի սրբազան Վեհէն գրել զայս թուղթ, վասն որոյ և ըստ խնդրոյ Մարգարին գրեալ պատուիրէ՝ ողջունէ խօջայ Սարգսին

¹⁴⁶ Վավերագիրն ուղագրալ աղբյուր է Կարինի բահանայից դասի, իշխանավորների և բարձրաստիճան անձանց կողմից Մշո Ս. Կարապետ վանքի առջնորդ Հակոբ վարդապետին ուղղված բողոքագրի, մասնավորապես՝ նրան փոխարինելու և այդ աննշտքյամբ կաթողիկոսի պատասխանի մասին: Դուկաս հայրապետը պատրիարքին է դիմում Կարինում նոր առաջնորդ նշանակելու առաջարկով:

և ասե՛լ զի զՀեսաան տղային կտրեսցէ: Եւ թէ Հարկն պահանջիցէ, իշխանացն ևս ծանուցանե՛լ ողջունիւ:

753 **Ի Թարուէզ** - Թուղթ առ տեր Յովսէփ քահանայն, ի պատասխանի Բ. -ց (2) թղթոցն վասն Համբաւոյն ծանուցումն շնորհակալութիւն, և Հարկ ի Պարսից երկրէն երից կարաւանաց զուր գնալն ազդել ի գիտել: Եւ վասն ի Տոխուրդան եղեալ մերս այգւոյն պատուէր, եթէ Աստուծով լինիցի յաշնանն անդորրութիւն, Հոգալ տալ անտի Լ. (30) լիտր չամիչ և ԺԵ. (15) լիտր բատամ և յղել: Ընդ որոց և Լ. (30) թարվիզի լիտր յստակ և մանրահատ ղանտ առնուլ և յղել, և զգինն ղանտին յանցեալ տարւոյ այգւոյ արդեանցն տալ, և զմնացեալ աւելի և պակասն մեզ ծանուցանել Հանդերձ որպիսութեամբ այգւոյն:

Ողջոյն եղբօրն պարոն Բաբաջանին և որդւոցն՝ տիրացու Յովհաննէսին և Ստեփաննոսին:

341բ

754 **Ի Խոյ** - Թուղթ պարոն Բաբաջանն Խանբաբեան, ի պատասխանի Բ. (2)-ց թղթոցն. շնորհակալութիւն վասն ծանուցանելոյն զՀամբաւ շահ կոչեցելոյն և պատուէր՝ վերստին զնորին որպէսն փութով զեկուցանել: Եւ վասն ի Հնդիկա առաքելի նուիրակին, եթէ թողաք մնալ այլևս ժամանակ, մինչև տեսանել զվերջն Համբաւոց ուր իցէ եզերելոց: Իսկ յաղագս պահարանեալ գրեանցն, զորմէ գրեալ էր, թէ յղելոց եմ, Հարկ՝ զի թէ չիցէ յղեալ տակաւին, յղեսցէ՝ օր մի յառաջ:

755 Թուղթ առ Իսաջան աղայն, ի պատասխանի Բ. -ց (2) թղթոցն վասն նշանացի գրուածովք զլուր ինչ ծանուցանելոյն շնորհակալութիւն, և Հարկ՝ զնմանէ վերստին, զոր ինչ և լուիցէ, ծանուցէ:

Եւ վասն Մայիլեան պարոն Մարգարին, եթէ եկն ըստ գրեցելոյդ ընկալաք սիրով, բայց նախքան զնորին գալն, Նախչուանու խանն գրեալ էր մեզ, թէ Անանիա պետն առաջնորդ արարեալ, յղեսցես, և մահսար ևս ի մերայնոցն: Եւ մեք ոչ միայն զԱնանիայն, այլև զԴանիէն ևս յղեալ, գրեցաք խանին, եթէ ահա քոյդ խաթերն զերկուան ևս յղեցաք: Եւ այսպէս լինելոյն վասն ասացաք պարոն Մարգարին Համբերել ևս, մինչև տեսցուք զորպէս լինիլն վրդովմունս, և ըստ այնմ ապա զհոգս իմն արասցուք:

Եւ թէ Նաւրուզալի բէկն, զոր գրեցուցեալ էր քեզ և զմի կեօզլուկ և զմի զըպլակեա՛հ ինդրեալ, ահա յանձնեցաք պարոն Մարգարին բերել: Բայց վասն միւս խնդրոյն թողութիւն արասցէ՛, չգտանեցաւ:

Գրեցան յամսոյս ԺԵ. (15):

1795 թ. մայիս - **Թուղթք Վգուլիս, Ի Զմիւռին, Ի Մարտամ, Ի Կարին և յԻւջբիլիսայ**

756 **Ի Վգուլիս** - Թուղթ առ Սրբոյն Թօմայի վանից առաջնորդ Թովմաս վարդապետն. ծանուցումն թղթոյն ընդ նուիրակ Յովհաննէս պետի և այլոց թղթոցն մեզ Հասանելոյն: Եւ վասն նոյնոյ Յովհաննէս պետի Վ. (1) բեռն թելին, զորմէ Հարցեալ էր, պատուէր ի Բայազիտ յղէլ որպէս և առաջինն ևս անդ յղեցաւ:

Գրեցաւ թուղթս յամսոյս ԺԷ. (17):

757* **Ի Զմիւռին** - Թուղթ առ Ապրօյեան Մարգար աղայն. շնորհակալութիւն վասն ընդ տէր Մկրտչին գրեալ թղթոյն և յղեալ ընծայիցն (Թէպէտ և ոչ Հասին), և պատասխանի միւս թղթոյն ի Պօլսոյ գրեցելոյ ցաւակցութիւն վասն խռովութեանցն յուզելոյ ի վերայ իւր ի յոմանց քաղաքակցացն և ուրախակցութիւն ընդ բարձրագոյնս վինելոյ իւր և պատուէր, զի Հաշտեսցին և այլ բանք: Երբեան մեծ տե[տեր] 2241: Ողջոյն եղբարք:

758* **Թուղթ առ Չալիկեան մահտեսի Կարապետն**, ի պատասխանի թղթոյն, վասն խռովութեանցն, որ ի քաղաքին՝ ցաւակցութիւն և պատուէր Հաշտիլ ընդ իրեարս: Տէ ս ի փոքրադիր տետեր Երբեան 165:

759* **Թուղթ առ աղմկայոյզ ոմանս իշխանս**, ի պատասխանի թղթոյն իրեանց. մեղադրութիւն վասն խռովութեանցն, զոր յարուցեալ էին ընդ առաջնորդին և կողմականաց նորին, և Մարգար աղային, և պատուէր Հաշտիլ ընդ նոսա և զխաղաղութիւն առնել: Տէ ս Երբեան մեծ տե[տեր] 2048:

760* **Թուղթ առ տեղոյն նուիրակ և առաջնորդ Դանիէլ վարդապետն**, ի պատասխանի Բ.-ց (2) թղթոյն. յիշումն առ Մարգար աղայն և մահտեսի Կարապետն և ներհակացն ևս թուղթ գրելն և պատուէր, որպէս և նոցա, Հաշտութիւն առնել տալ ընդ իրեարս և այլ բանք: Տէ ս Ե[րես] մեծ տե[տեր] 2139: Ողջոյն ոմանց գլխաւոր իշխանաց յանուանէ, որպէս տեսանի անդ:

761* **Ի Մարդամ** - Թուղթ առ պարոն Ալէքսանն. յիշումն նախագրեալ թղթոյն մերոյ, և Յովհաննէս պետի զվախճանմանէ պարոն Բարաղամին ծանուցանելոյն և միամտութիւն վասն նարեկացն և խոստումն ևս վասն նարեկացն գրել զկոնդակ յետոյ մինչ խաղաղասցի Աստուծով երկիրս:

762* **Թուղթ առ մոսկովցի Կիրակոսի որդի պարոն Յովհաննէսն**, վասն խոստանալոյն ընդ Յովհաննէս պետն Հանել զբաժին ի կայից պարոն Բարաղամին: Պատուէր փոյթ ունիլ մնալով ի Հարազատութեան առ Սուրբ Աթոռս:

763* **Թուղթ առ անդ բնակեալ Յովհաննէս պետն**, ի պատասխանի թղթոյն, վասն մահուան պարոն Բարաղամին, գոր ազդեալ էր տրտմութիւն և վասն խոստմանցն առ ի զբաժինն Սրբոյ Աթոռոյս Հանել լիալիր ի կայից նորին. շնորհակալութիւն և յորդորումն մնալ ի Հարազատութենէ Սրբոյ Աթոռոյս և զպատասխանին Դանիէլ պետին գրել: **Տէ** ս ի փոքրադիր տետեր յերեսն 166:

342ա

764* **Ի Կարին** - **Թուղթ առ վէքիլ պարոն Հայրապետն**. յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ և թէ Յովակիմ պետն գրէ մեզ, թէ զմի Հազար ղուռուչն առ ինքն Հասուսցուք, ուրեմն գրեսցես ի դաւթարդ, որ աստի առաքիցեմք: Առաջնորդի առ քեզ և առ ժողովարար վարդապետսն գրեալ թուղթսն յղեցաք ահա, զնոցինն՝ ինքեանց Հասուսցես: Եւ պաշարանեալ թղթոյն պատուէր Հաւատարիմ մինչ ի լաւ ի Պօլիս յիւր մարդոյն յղել, առ ի Հասուցանել Չումիւտին առաջնորդ Դանիէլ պետին, իսկ եթէ ինքն չունիցի մարդ, առ Մասեհեան պարոն Եսային յղել և գրել զի շուտով յղիցէ:

765* **Ի Իւչքիլիսայ** - **Թուղթ առ Իւչքիլիսայու առաջնորդ Մկրտիչ վարդապետն ընդ իւղի և պանրի ժողովարար Սահակ և Եսայի վարդապետացն**. յանձնարարութիւն վասն նոցա և ծանուցումն զվրդովմանէ երկրիս և զահի յԱրտաիւլ գալոյն:

Գրեցան յամնոյս ԻԱ. (21):

1795 թ. մայիս - **Թուղթք ի Թիֆլիզ, ի Ղօշաւանք, ի Բայազիտ, ի Թարուէզ և ի Խոյ**

766* **Ի Թիֆլիզ** - **Թուղթ առ Տէր-Շմաւօնեան պարոն Ստեփաննտն**, վասն յղելոյն առ մեզ ի Յովսէփ պետէն եկեալ և պաշարանեալ թղթոյն շնորհակալութիւն: Եւ թէ ընդ պարոն Եսայուն գրեալ թուղթ քո և Յովսէփ պետի ամանաթքն ևս ընդ նմա Հասին մեզ: Բայց ի ճանապարհին ամենալայն բեռանցն, որ մարդ յղեալ ի բերելն զխարճ էիք արարեալ, զՀաչին ընդ պարոն Եսայուն տեսնելոց եմք: Եւ բացումք սնդուկին չէ նշան բարւոք, անցեալ է: Եւ վասն սրբոյն Սաղիմայ նուիրակ Պօղոս պետի թղթոյն պատուէր, զի յընկալնուլն առաջնորդութենէն, եթէ չիցէ դեռ յղեալ յելեացէ և մեզ գրեալ ծանուցէ:

767 **Ի Թիֆլիզ** - **Կոնդակ ճորտութեան վասն ղարապաղցի Յօհաննիսեան նոր ճորտացեալ պարոն Եսայուն**, որ գրեալ այժմ առաքեցաւ ի ձեռս տէր Դավթին, տալ նմա ի միամտութիւն:

768 **Թուղթ առ ճորտից վերակացու տէր Դաւիթ քահանայն** վասն յառաջմէ գրեալ թղթոյ սրբազան Վէհին և մի մի կոնդակին յիշումն: Եւ թէ յորում մինչ խոստացաք զկոնդակսն ճորտից յղել զԵրեմիայինն ետուք ինքեան ի գալն Սուրբ Աթոռս և զղա-

րապաղցի Յօհաննիսեան պարոն Եսայոնն ևս գրեալ և եղեալ ի մէջ թղթոյս, յղեցաք աշա, տացես իւրն: Եւ գրոյն թուղթ եղաք ի մէջ թղթոյ առաջնորդին:

769* Թուղթ առ առաջնորդ Մարտիրոս վարդապետն, ի պատասխանի միայնակ կին ընդ մէլիքն գրեալ թղթոցն, յայլև այլ ժամանակս, շնորհակալութիւն վասն եղելոյն իւրեանց զյղեալ եկեղեցական իրոն ի վանս կուսանաց յանքոյթ տեղւոյ և յիշումս յապրիլ ամսոյ ԻԸ. -ին (28) գրեալ թղթոցն մերոց առ ինքն և յայլս և արքայն և թէ պատուիրեցաք քեզ յայնժամ ընծայել արքային, այն ինչ գրամ: Եւ վասն տէր Խաչատուրի Հոգեբաժնին, որ զթամասուկն Աշխարբէկի եղբօրն վերառեալ էր և ինդրեալ զի առ Աշխարբէկն զթուղթ գրեսցէ սրբազան Վեհըն Հատուցանել զպարտս եղբօրն առ այն, թէ այժմ ժամանակ չունելով էրք ապաՀովասցուք, յայնժամ գրելոց եմք: Եւ թէ նանուսեցի Սարգիս աղայի որդի Կարապետ աղայն, որ զհոգեբաժինն Հօր իւրոյ ինքնին կամի յղել յղեսցէ, ի Հարկէ յայնժամ ևս զօրհնութեան զթուղթ գրիցեմք: Եւ վասն Խոր Վիրապայ խաչին գրեցաւ, առնուլ և յղել Հարկիւ, ըստ որում սրբազանն բերել տուեալ գոլով ի Բայազիտու յանձնեալ էր առաջնորդ Մարկոս պետին և Հալուբարցիք մինչ այժմ իւրացուցանել կամին իբրև մերն ասելով, սուտ է և ողջունելով մէլիք Մինասին, ի մէնջ ասացես գոլով նա գլխաւոր Հալուբարցւոց ընդէր կամի յարուցանել զայնպիսի խռովութիւնս: Պատուէր Հեռի մնալ յայնպիսեաց և զսուրբ խաչն յանձնել Կարապետ պետին և փութով յղել: Գեանջեցի Աւետիքի որդի պարոն Գրիգորի ճորտութեան ձեռագիրն, զոր յղեալ էիք և զկոնդակ ինդրեալ, մինչ եկն նա ի Սուրբ Աթոռս գնաց ի Խոյ, ի վերադառնալն տալոց եմք ինքեան: Բայց տէր Դաւիթն վասն վանցի Երեմիային և զարապաղցի Եսայոն զճորտութեան թուղթ էր ինդրեալ և ի գալն Երեմիային ի Սուրբ Աթոռս ետուք ինքեան զիւրն և զԵսայոնն այժմ գրել և եղեալ ներ թղթոյ տէր Դաւիթն յղեցաք, տացէ՛ս իւրն Հասուցանել նմա, ըստ որում նա էր ինդրեալ: Եւ թէ ընդ Իւզբաշեան պարոն Եսայոն յղեալ ԺԲ. (12) լիտր մոմն / 342բ / մեզ էՀաս, որ ընդ առաջին յղեցելոյդ ըստ գրեցելոյդ լինի ՀԲ. (72) լիտր: Եւ վասն նոր ժողովելի մոմոյն որպէս գրեալ եմք, այնպէս արասջիք և յղեսջիք փութով Հասնիլ ի սպիտակացուցանել ժամանակին: Զկնի վերջանալոյ և ամսաթիւն գրելոյ թղթոյս՝ էՀաս ևս ի սոյն ամսոյ ԺԸ. -ին (18) գրեալ թուղթն՝ Հանդերձ Զկրաշինու քահանայից և ժողովրդեան մահաարական թղթով, որք էին վասն ժամօրհնութեան տէր Սիմէօն քահանային: Առ այս թէ դուք յանցեալն ի մէնջ վասն նորին ինդրեցիք միաբանութեամբ և մեք կոնդակաւ կարգեցաք և այժմ մինչ նորին ներհակ տէր Ստեփանն աստ և անդ անկանելով կամի զմահաար շինեցուցանել և յղել դեռ չէ յղեալ, մինչ յղեսցէ յայնժամ տեսցուք զորպէս առնիցիմք: Ողջոյն պարոն Գեորգ

աղային Նանուսեան, մխիթարութիւն վասն մահուան Հօրն Սարգիս
աղային և շնորհակալութիւն գալստեանն նորին յՈւռուսէթու:
Նաև պատուէր վասն թղթոյն պարոն Ստեփանին, Հնացեալ իւրն:

Գրեցան յամսոյս ԻԵ. (25):

342բ

770 **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ
Յովհաննէս պետն, ի պատասխանի Բ.-ց (2) թղթոցն, յորում թէ
իմացաք զխռովութիւնն քաղաքացւոցն Ղարսայ ընդ փաշային և
եղանէն նորա ի քաղաքէն, բայց վասն պարոն Գէորգին գոլով մեր
ի կասկածանս, թէ արդէօ՞ք ի քաղաքն իցէ, թէ ընդ փաշայի գնա-
ցեալ Հարկիւ պատուիրեմք զուր և զորպէս լինիլն նորա մեզ գրես-
ցես:

Գրեցաւ թուղթս յամսոյս ԻԸ. (28):

771 **Ի Բայազիտ** - Թուղթ ի Բայազիտ առ Թումանէնց
Պետրոս աղայն և եղբօրորդի նորին պարոն Գրիգորն վասն միով
սապաթիւ ամանաթին, զոր յղեցաք ընդ Յովհաննէս պետին և
դաճկաշի Մելիքսեթին առ ի պաճել ի տանն իւրեանց յանքոյթ
տեղւոյ:

772 Թուղթ առ Հանգուցեալ Մարգար աղայի որդի պա-
րոն Վարդանն վասն եօթն բեռն եկեղեցական իրացն, զոր յաճէ
նէրքինւոյն առաքէք ձեռամբ վերոյ յիշեցելոյ, ուստի պատուէր
սմա, ի բերել զբեռինսն նոցա ընդ տիրացու Գէորգին, դնել ի
տանն իւր յապաճով տեղւոյ, և զորպէս առնելն մեզ ծանուցանել ի
միամտութիւն:

773 Թուղթ առ ՍաՀակ աղայն, թէ շահ կոչեցելոյ յԱրտա-
ւիլ գալն, որովհետև ստուգուեցաւ, աՀա առ նա արգ գրեալ և
թուղթ մի ևս միրզայ Շէֆին և յայլ ևս ընդ մեր Յովհաննէս պե-
տին իբրև մէնզիլղեցաք: Վասն որոյ և փաշային ևս գրեցաք, որ
թէ կարելի է զմի թուղթ գրեսցէ առ շահ, թէ այն քիլսայն Հին
օճախ է, և ամենայն շահք ինսամէն արարեալ և նստող խալիֆայն
ղուլլուղ առնօղ է: Ուրեմն զմի խաթրճամութեան ֆերման շնոր-
հեցես, որ միամիտ լինին:

Այսպէս գրեցաք փաշային և Հետևեսցիս դու ևս գրեցուցա-
նել տալոյն և շնորհակալ լինելոց եմք:

774 **Ի Թարուէզ** - Թուղթ ի Թարուէզ առ տէր Յովսէփ
քաՀանայն. յիշումն յառաջմէ գրեալ երկոքին թղթոց մերոց, և թէ
որովհետև շահի յԱրտաւիլ գալն ստուգեցաւ, աՀա առ նա արգ
գրեցաք, և թուղթ ևս առ միրզայ Շէֆին և յայլ ընդ մեր Յով-
հաննէս պետին յղեցաք: Ի գալն նորա սիրով ընկալեալ, զոր ինչ
խարճի դրամ պիտոյասցի, տացես և մեզ գրեսցես: Միտք շահի
արգին ևս գրեցաւ:

775 **Ի Խօյ** - Թուղթ առ Իսաճան աղայն. յիշումն թղթոյն առ մեզ Հասանեղյն և թէ իմացաք զպարոն Մարգարի սալամնաթ Հասանիին յայդր: Վասն ցաւակցութեանն շնորհակալութիւն: Իսկ վասն նոր շահ կոչեցելոյն, թէ որովհետեւ եկեալ է յԱրտաւիլ, ահա զմի արզ գրեալ առ նա (յիշեցաւ երկարօրէն արզայի միտքն) Թուղթ մի ևս առ Միրզայ Շէֆին, Թուղթ մի ևս յայս կողմն գալոյ Սարգարին, և Թուղթ մի ևս առ Հիւսէյին և Ճաֆար Ղուլի խաննն գրեցաք և ընդ Յովհաննէս վարդապետին առանց ընծայի յղեցաք, որ թէ խաթրճանութեան ֆերման շնորհիցէ, յայնժամ ևս զընծայ յղելոց եմք:

Թուղթ մի ևս առ Իսաղ փաշայն գրեցաք, որ նա ևս շահին գրեսցէ և մէկ մարդ ևս |343ա| ընդ Յովհաննէս պետին եղեալ յղիցէ:

Ուրեմն Հարկիւ պատուիրեմք քեզ և պարոն Մարգարին, զոր ինչ խորհրդակցութիւն ունիք, խօսեսձիք ընդ Յովհաննէս պետին, և մէկ Օրդուի ելումստին տեղեակ մարդ գնիցէք ընդ նմա, և նորին խարճս ի մէնջ, և Հիւսէյին և Ճաֆար Խոլլի խանիցն ևս գրեսձիք, եթէ խալիֆայն ահա մարդ է յուղարկեալ և արզս գրեալ շահին, ինդրեմք լաւ մոռայեթ լինիլ և Հոգացօղ բանին: Եւ թէ շահն խաթրճանութեան ֆերման գրիցէ, յայնժամ զընծայ ևս է յղելոց խալիֆայն: Եւ Յովհաննէս պետն եթէ ի ճանապարհին սարտարին կամ Հիւսէյին և Ճաֆար Ղուլի խանիցն պատահիցի, պարտի նախ զնոցին Թուղթն տալ և ապա գնալ առ շահն ուր և լինիցի: Դուք զոր ինչ մասլաճաթ մոննասիպ տեսանէք, ասասձիք Յովհաննէս պետին:

Ողջոյն Մարգար աղային:

343ա

1795 թ. մայիս - **Ի Չմիւռին, ի Տրապիզոն, ի Թիֆլիզ և յայլ տեղիս**

776 **Ի Չմիւռին** - Թուղթ ի Չմիւռին առ մագնիսացի տէր Յարութիւն քաճանայն, ի պատասխանի թղթոյն, որ ընդ մագնիսացի տէր Եսայոն գրեալ էր վասն շինել տալոյն Չմիւռնոյ եկեղեցւոյն, եթէ յառաջմէ ևս իմացեալ էաք: Տացէ՛ Տէր բարեաւ ի գլուխ Հանել:

777* **Ի Մանիսայ** - Թուղթ առ տէր Ստեփաննոս քաճանայն, վասն մաճուան Հօրն՝ մաճտեսի Յովակիմին. մխիթարութիւն և վասն 60 փարային շնորհակալութիւն:

778* **Ի Տոտղուզ դասապայն** - Թուղթ առ Սրբոյ Աթոռոյս գործակալք երկոքին եղբարք՝ մաճտեսի Յովհաննէսն և պարոն Պօղոսն, յաղագս տասն ղուռուշ աջաճամբուրին, զոր ձեռամբ ուխտաւոր մաճտեսի Բարսղին յղեալ էին, շնորհակալութիւն: Ող-

ջոյն թոռանցն՝ մահտեսի Յովհաննէսին, Յարութիւնին և Ստեփաննոս Չէլէպեացին:

779* **Ի Տրապիզոն** - Թուղթ առ տեղւոյ Համայն ժողովուրդան, ի պատասխանի մահարին իւրեանց, զոր ընդ նոր առաջնորդին իւրեանց՝ Գրիգոր վարդապետին գրեալ էին՝ խնդրելով ձեռնադրել զնա եպիսկոպոս: Իսկ սրբազան Վեհրն գրէ, թէ այժմ ոչ պատշաճ վարկաբյետ ժամանակի, թէ գայցէ Աստուծով լինիցի և այլ պատճառք: Ի փոքր տե[տեր] յե[րես] 266:

780 **Ի Զարանձաղ** - Կոնդակ ի վերայ Հակոբ վանք կոչեցեալ վանիցն Սուրբ Կարապետի և նորին թեմիցն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն իւրեանց, և ի վկայութիւն եպիսկոպոսութեան առաջնորդին իւրեանց՝ ձերունի Ստեփաննոս վարդապետին: Յերեան 2243 ի մեծ տետերն տէս:

781 **Ի Կեսարիա** - Թուղթ ի վանսն Թօմարզայու առ Բարսեղ վարդապետ ոմն ընդ Հօրն իւրոյ՝ մահտեսի Աստուածատուրին. շորհակալութիւն վասն աստիջանառութեանն և պատուէր մնալ յաստուածաճոյ գործս:

782 **Ի Թիֆլիզ** - Կոնդակ ճորտութեան վասն գեանջեցի Աւետիքի որդի Գրիգորին, որ գրեալ տուեալ ինքեան ի գալն Սուրբ Աթոռս:

Գրեցան Համայն թուղթ յամնոյս Լ. (30):

783* **Ի Թիֆլիզ** - Թուղթ առ մէլիք Աւետիքն, ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էր ընդ մանսարին քահանայից և իշխանաց, որք խնդրեալ էին Ստեփաննոս նորընծայ երեցն Ջկրաշինու եկեղեցւոյն աւագ քահանայ կարգել, ընդդէմ այնմ, որ առաջնորդն զձերունի տէր Սիմէօնն ժամօրհնող էր կարգեալ: Առ այն, թէ այժմ զբաղեալ գոլով վրդովմամբ երկրիս, ոչ ումք զթուղթ գրեցաք, այլ դարձուցեալ զնա ասեմք մնալ մինչև ի Աստուծով խաղաղանալ երկրիս և ապա յայնժամ այնպէս բան ինչ առնեմք, որ ամենեքեանդ շահեալ լինիցիք: Իսկ թէ ոչ անսայք մեզ, առաջնորդն դարձցի ի Սուրբ Աթոռս և այնուհետև ինքեանք որպէս գիտեն, այնպէս արասցեն:

Գրեցաւ յամնոյս ելն:

Նամակ Հակոբան գիւղից մահտեսի Ալլազիւրդուն (Խօյ), որն օժանդակել էր նուիրակ Սողոմօն վարդապետին: Հորհակալութեան նամակներ գանձանակը ուղարկած տիրացու Մատթէոսին (Խօյ) և պարոն Թադէոսին (Թաւրիզ): Օրհնութեան նամակ նուիրատուներ Մկրտչին (Ղարս), մահտեսի Գրիգորին (Ղարահիսար): Ալլան աղային (Կարին) շորհակալութիւն նուիրակ Նիկողայոս վարդապետին օգնելու Համար: Նոր նուիրակին օժանդակելու յանձնարարութիւն է

տրտում Ամիրդի Ս. Սարգիս եկեղեցու գանձապետ խոջայ Կարապետին: Հնորձակալութեան նամակ Յարութին Յովհաննիսեանի այրի Հովհիսիմէ տիկնոջը, որը նուիրակ Եփրեմ վարդապետի միջոցով ուղարկել էր 100 ռուբլի: Նոյն բնոյթի նամակներ են ուղարկուել նաև Աւետեան Փանոսի Թլչն տիկնոջը, Պտոմեան Յակոբի կին Մարիամյան տիկնոջը, վերջինիս մայր Նանաջանին, պարոն Սարգիս Ծատուրեանին, Էջմիածնի վանքին ղալավքար վարագոյր նուիրած պարոն Կարապետ Մուրատիանեանին: Նոյն կապակցութեամբ (վարագոյրի նուիրատուութեան) շնորձակալութիւն պարոն ՅօՀան Մկրտչեանին եւ Պետրոս Յարութիւնեանին (բուլբուր Մագրասից): Հնորձակալութեան նամակներ են յղուել նուիրատուներ՝ պարոն Անդրեասեան Յարութիւնին, Ստեփաննոսի այրի Մարինէին (Սուրամ), աղայ Յարութին Ծատուրեանին, պարոն Պետրոս Ստեփանեանին (Սեյտապատ), պարոն Դավթի կողակից Եղիսաբէթ խաթունին, պարոն Եսայեան Մանուկի այրի Նանաջանին (Սուրամ), Մարիս կոչեցեալ պարոն Յովհաննէս Մեքիտէթեանին (Կալկաթ), գործակալ տեր Յակոբ Ծատուրեանի կին Թագուհուն (Մուչլիբանդար), Մինաս Յարութիւնեանին (Դաքքա), պարոն Ստեփաննոս Դարտաշեանին (Դաքքա), Յովհաննէսի տիկին Վալետային (Սեյտապատ), պարոն ՆաՀապետ Գասպարեանին, Հանգուցեալ գործակալ Փանոսի կին Մարիամին, պարոն Դուկաս Գաբրիէլեանին, պարոն Միսիթար Սիմոնեանին (Մուչլիբանդար) եւ պարոն Յովհաննէս Սէթեանին (Սուրամ): Հնդկաստան եւ Իրաք ուղարկուած նամակների մէջ շնորձակալութիւն է յայտնուում 1794 թ. Հնդկաստանից վերադարձած նուիրակ Եփրեմ վարդապետին՝ օժանդակութիւն ցոյց տալու Համար: Առաջարկում է նպաստել նոր նշանակուած նուիրակ Յակոբ վարդապետին:

Ճորտութեան թուղթ գեանջեցի Աւետիքի որդի պարոն Գրիգորին՝ յաղագս ընծայելոյն զինքն ի ճորտութիւն Սրբոյ Աթոռոյս: Պատասխան նամակ վանքի Իսաջան աղային (Վան): Ուշքիլիսայի վանքի առաջնորդ Մկրտիչ վարդապետին յանձնարարութիւն է տրտում ՍաՀակ եւ Եսայի վարդապետների Համար: Թուղթ ճորտութեան դարաբաղցի ՅօՀանի որդի պարոն Եսայուն (Թիֆլիս), որը կամուտրապէս ճորտագրուել էր Էջմիածնի վանքին:

Նամակները գրուել են 1795 թ. յունուար-մայիս ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 479-513

784 1795 թ. մայիս - Թուղթ յԱմնտրդամ առ պարոն Ալէքսանն, յիշումն նախագրեալ թղթոյն մերոյ և անցիցն իրեանց և կրկին խոստումն թղթոյն, որ վասն Նարեկացն գրիլոց է առ սա¹⁴⁷:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 41բ

¹⁴⁷ Ամստերդամում բնակվող պարոն Ալեքսանին Դուկաս կաթողիկոսը գրում է, որ ստացած «Նարեկ» գրքերը, որոնք ուղարկել էր նամակագրի եղբայր Եսային, բաժանվել են ինչպես միաբաններին, այնպես էլ ուղարկվել են տարբեր եկեղեցիներ ու վանքեր, ինչի համար շնորհակալագիր է հղել Եսայիին (ՄՄ ձեռ. Հ^մ 4538, 41բ): Պարոն Ալեքսանին հասցեագրված նամակներից մեկն էլ ներկա շարքի առաջին գրքում է գետեղված (1785 թ. դեկտեմբեր), որտեղ նա բնութագրված է իբրև «աստուածասէր եւ բարեպաշտօն, մեծահաստ եւ պերճափառ» հարգական բառերով: Բավական ուշագրավ այդ նամակում մանրամասն ներկայաց-

785 **1795 թ., յունիս - Թուղթ առ Դաքա առ յոյն պարոն Պօստոնն, շնորհակալութիւն վասն նուիրացն և բան վասն տալեացն, զոր պարտ էր Վարդիհէրու առաջնորդ Մանուէլ վարդապետին, և նա զսանաւն տուեալ էր նուիրակին մերոյ՝ պահանջել այնու ի սմանէ զգրամն**¹⁴⁸:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 42աբ

786 **1795 թ., 20 յունիսի - Թուղթ ի Կեսարիա ի վանն Թօմարզայու առ Բարսեղ վարդապետ ոմն, ընդ Հօրն իւրոյ՝ մահտեսի Աստուածատուրին**¹⁴⁹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 42բ

787 **1795 թ., յունիս - Թուղթ ի Բալուայ իշխանն, ի պատասխանի թղթոյն նոցա, որք ծանուցեալ էին զմահուանէ նուիրակ Յօհան վարդապետին և զծախուցն, որ ի կենդանութեանն և ի մահուանն**¹⁵⁰:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 43աբ

1795 թ. յունիս - Թուղթք ի Կարս, ի Ղօշաւանք և ի Բալու

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 343ա:

788 **Ի Կարս - Թուղթ առ պարոն Գէորգն աղայն, վասն խառնակութեան կողմանցն ցաւակցութիւն, և Մահմատ բէկի զինքն միամիտ առնելոյն ուրախակցութիւն: Եւ ծանուցումն զխառնակութենէ երկրիս մերոյ ի Համբաւոյ գալստեան շահ կոչեցելոյն և վասն այնորիկ առաքելն մեր զՍրբոյ Աթոռոյս ուղտն, [343բ] գոմէշն, ոչխարն և սևատաւարս ի Ղօշաւանք առ առաջնորդն՝ պահել ի վերին կողմունսն վանից ի խոտաւէտ տեղոջ: Ուստի պատուիրի սմա, եթէ Հարկաւորիցի իր ինչ վասն շարժուն կենդանեաց, ի գրելն Սիմէօն վարդապետին, որ ընդ տաւարացն է, փութով Հոգալ և յղել:**

վում են կովկասյան լեզգիների խառնակությունների հետևանքով Մայր Աթոռի կրած գրկանմները, միաբանության և ունեցվածքի տեղափոխումը Երևանի բերդ ու մոտակա անապատ (թերևս՝ Զորագյուղ), որի արդյունքում Մայր Աթոռում մնացել են տասը վարդապետ, մի քանի միաբան ու մի քանի հարյուր զինվոր՝ պաշտպանության համար (ԴՀՊ, նոր շարք, գիրք Ա., հ. Ա., էջ 541-542, վավ. 1178, սույն նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 647):

¹⁴⁸ Դաֆֆայի պարոն Պոստոսին հղված շնորհակալագրի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 647-648:

¹⁴⁹ Կեսարիայի Թոմարզու վանքի Բարսեղ վարդապետին հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 648:

¹⁵⁰ Նվիրակ Հոհան վարդապետի մահվան առթիվ Բալուի իշխաններին հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 648:

Ծանուցանի աստ առ Ալի և ՄաՀմատ բեկան զթուղթ գրելն վասն տաւարաց, առ ի ոնիլ պաՀպանութեամբ իւրեանց: Եւ թէ թուղթն նոցին յղեցաւ ի ձեռս առաջնորդին: Սմա ևս պատուիրի՝ ողջունել բանիւ և ասել վասն տաւարացն զբանս յանձնարարութեան:

Յիշի՛ և սրբազան ՎեՀի զՅովՀաննէս պետի առ շահն առաքելն արգայիւ:

789* **Ի Ղօշավանք** - Թուղթ առ առաջնորդ ՅովՀաննէս պետն, վասն շարժուն կենդանեացն, զոր յաՀէ գալստեան ներքինւոյ շահ կոչեցելոյն առաքեցէք ընդ Սիմէօն վարդապետին: Պատուէր մնողայէթ լինիլ և ի շաբաթէ շաբաթ զայլ ինչ և զալիւր տալ պաՀպանողաց զշարժունան և գրել ի դավթարի: Եւ թէ աՀա Ալի և ՄաՀմատ բեկացն թուղթ գրեցաք, որ մարդ եղեալ պաՀպանեսցեն զտաւարն իւրեանց գիտելով: Պարոն Գէորգին ևս գրեցաք, որ թէ իր ինչ պիտոյասցի վասն ուղտուց և այլոց Հոգացեալ յղեցէ:

790* Թուղթ տաճկերէն առ Ալի և ՄաՀմատ բեկան. յանձնարարութիւն վասն տաւարացն:

791* **Ի Բալու** - Թուղթ առ Տիգրանակերտու նուիրակ ՅօՀան վարդապետն. ուրախակցութիւն վասն խաղաղութեամբ ի վիվ(=ճ)ակն իւր Հաննելոյն և տրտմակցութիւն վասն ծանր Հիւանդանալոյն: Եւ թէ ի Քեղի և յայլ տեղիս զաւեղի փաճս առնելն իմացաք ի գրոյդ, և ի Գրիգոր վարդապետէն, զի՛նչ ոնիմք առնել, մի՛ Հոգար: Դաւիթ վարդապետն, եթէ յայդր պաՀիցի, զերեան դավթարին առցես, իսկ թէ գայցէ ի Սուրբ Աթոռս, զդավթարն յուղարկելոց եմք, միամիտ լէ՛ր:

792* Կոնդակ ի վերա Բալուայ քաղաքի ժողովրդեանն ընդ առաջնորդին իւրեանց Գրիգոր վարդապետին. ծանուցումն զգալստենէ առաջնորդին իւրեանց ի Սուրբ Աթոռս և պատուէր լսօղ և կատարօղ լինիլ ՀոգեՀաՀ Հրամանաց նորին և յապօրինաւոր ամոսնութենէ զգուշանալ:

Գրեցաւ յամնոյս Դ. (4):

Թուղթք ի Ղօշավանք, ի Թօխաթ և ի Կարին

793 **Ի Ղօշավանք** - Թուղթ առ նորին առաջնորդ ՅովՀաննէս վարդապետն. յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ ընդ Սիմէօն վարդապետին. ծանուցումն ամասիացի չորից ուխտաւորաց Հասանելոյն ի Սուրբ Աթոռս ընդ թալինցւոցն, և վասն տաւարացն մերոց, եթէ որպէս գրեալ եմք, այնպէս ես առնելոց, իՀարկէ, և պատուէր զբերեալ ամանաթն աշտարակցի Սարգսին, յղել ընդ վէքիլ Գրիգոր վարդապետին:

Գրի յամնոյս Ե. (5):

794* **Ի Թօփաթ** - Թուղթ առ նորին նուիրակ Ներսէս վարդապետն, ի պատասխանի Բ. - ց (2) Թղթոցն, վասն կտակաց ոմանց օրհնութեան Թղթոցն և ամասիացի գանձապետ մահտեսի Աստուածատուր աղայի շնորհակալութեան Թղթոյն, զոր իննդրեալ էր գրել և յղել առ այն, թէ այժմ՝ ձեռնհասութի չունելով յաղագս վրդովմանցն երկրիս՝ յետոյ կամի գալը, և կամ յառաջ գրելոց եմք, և ծանուցումն զերկրիս խառնակութենէն, և շահ կոչեցելոյն ի Արտաւիլ գալոյն:

Եւ վասն 3000 ղուռուչն, զոր տուեալ էր անդ փօլիցայ պարոնն Հայրապետի օրթախ պարոն Թումանին առ ի Հասուցանել ի Կարին պարոն Հայրապետին, գրեցաւ թէ պարոն Հայրապետն առ ինքն Հասանին մեզ գրեալ էր և մեր զղաւզ գրեալ առաքեցաք ընդ Թղթոյս առ քեզ աշա ի միամտութիւն: Եւ յայդր՝ նստօղ պղնձեաց վերակացու մահտեսի Գասպար ամիրային զԹուղթ շնորհակալութեան գրեալ յղեցաք վասն բարեխաղութեանցն առ Գալուստ վարդապետն և առ քեզ տացես իւրն: Եւ թէ մեր գործակալն տեղւոյդ պարոն Գասպարն գրեալ էր առ մեզ զքէն, թէ նախ քան իւր ի քաղաքս գալն, զոր ինչ կտակ է եղեալ ի գալն պահանջէ յինէն և այլն: Եւ գրեցաք զպատասխանին, թէ յիրաւի որքան նուիրակն ի քաղաքդ չլինիցի՝ դու ժողովեալ և /344ա/ ի դավթարի նշանակեալ և յանուանէ գրել առ մեզ, որ օրհնութեան Թուղթ յղիցեմք և տացես նոցա և ի գալն նուիրակին քաղաքդ պարտիս նմա յանձնել և այնուհետև նա Հոգասցէ զկտակն և զայլն: Այսպէս գրեցաք նմա և վարիցիս ընդ նմա սիրով, որքան իցես յայդր: Ողջոյն Յովհաննէս վարդապետին:

795* Զաւզ առ սա, վասն ի Թղթէ յիշատակեալ երեք Հագար ղուռուչին:

796* Թուղթ առ մահտեսի Գասպար ամիրայն, որ է տեղւոյն պղնձեաց վերակացու. շնորհակալութիւն յաղագս բարեշնորհութեանցն ցուցելոց առ Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն և առ տեղւոյն նուիրակ Ներսէս վարդապետն և վերստին վասն Ներսէս պետին զյանձնարարութիւն:

797* Թուղթ առ տեղւոյն Սրբոյ Աթոռոյս նոր գործակալ պարոն Գասպարն, ի պատասխանի յունվարի գրեալ Թղթոյն. զպատճառն յամենալոյ պատասխանւոյն ցուցանի վրդովութիւնն երկրիս: Եւ երկուց կտակաց վասն, որ ըստ իննդրոյ մերոյ յանուանէ ծանուցեալ էր գրել զօրհնութեան Թուղթս, բայց այժմ՝ չունելով զժամանակ՝ խոստումն յետոյ ի գտանելն զխաղաղութիւն գրել: Իսկ զնուիրակ Ներսէս վարդապետէն, որ ծանուցեալ էր, թէ զոր ինչ կտակ եղեալ է նախ քան զիւր գալն, քննութիւն առնելով պահանջէ յինէն. առ այն, թէ որքան նուիրակն ի քաղաքդ չէ, դու գործակալ գորով պարտիս ամենից վերահասու լինիլ և ի յատուկ դաւ-

Թարի գրել և զօրհնութեան թուղթ ինդրել, զի և մէք յղեալ տացես ինքեանց: Բայց մինչ նուիրակն յայդր գայցէ, պարտիս նմա յանձնել և այնուհետև նա է առնլոց և զօրհնութեան թուղթ ինդրելոց: Եւ գրեցաք նմա, որ ընդ քեզ սիրով կենցաղավարիցի:

798 **Ի Կարին** - Թուղթ առ վէքիլ Սրբոյ Աթոռոյս պարոն Հայրապետն, ի պատասխանի Բ. (2) թղթոցն, վասն նորաշինելի տակերաց ղազանին, որ զչափ էր ինդրեալ, գրեցաւ, թէ շինօղ վարպետին ասասցես, թէ այսքան Հօխայի պղինձն ծեծեա, որ սինայ նման տափակի և այն տափակեցեալն ընդ միւս իրացն յղեսցես ի Բայազիտ, և գրեսցես տիրացու Գէորգին, որ իմացումս տայ մեզ, և երբ ինդրիցեմք, յայնժամ յղիցէ, ըստ որում երկիրս խառնակ է:

Ծանուցումն և զշահի յԱրտաւիլ գալոյն և մեր խանի զելիկնս յերկրէս քօչեցուցանել տալոյն, և մեր զթուղթ գրելոյն ի Ղօշավանք առ առաջնորդն և Մաղզբերդու բեկերացն և զտաւարեղէննս անդ առաքելոյն: Եւ թէ աշտարակցի Սարգսին քո տուեալ ղուլթին, որ ի կեօմրուկջէն էր քեզ յանձնեալ, զայն Սարգսին ի Ղօշավանք բերեալ և յաճէ կողմանցս թողեալ է անդ: Գրեցաք առաջնորդին, որ վէքիլ Գրիգոր վարդապետին մերոյ յանձնեալ յղեսցէ, տեսցուք որոյ է, և զթուղթ գրեալ առաքեսցուք, որ տացես կեօմրուկջոյն յղել առ առաքօղն ղուլթոյն:

799 **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն, վասն տաւարացն մերոց, զոր առաքեալ էաք և ի Մաստարայ արգելեալ էին վասն խոտաւետութեանն, ծանուցումն, թէ մինչ Համբաւ գալստեան սարտարին սաստկացի, յայնժամ գրելոց եմք բերել յայդր: Ալի բէկն այժմ զորպիսաճարցական թուղթ էր գրեալ և իւր մարդկամբքն յղեալ և վասն ներքինւոյն ևս Հարցումն արարեալ, և մէք զպատասխանի թղթոյն գրեալ, զմի ամանով մուրապայ ևս յղեցաք: Ընդ նորին մարդկանցն և մէք պահարանաւ թուղթ յղեցաք քեզ, Հասուցես ի Ղարս պարոն Գէորգին, և մէկ թուղթ դու գրեսցես, որ ի Կարին վէքիլին Հասուցէ: Ըստ որում մէք անձեռնհաս եմք ի գրել:

800 Թուղթ տաճկերէն առ Ալի բէկն, ի պատասխանի որպիսաճարցական թղթոյն. Հնորհակալութիւն վասն անմոռաց ունելոյն և ծանուցումն զշահ կոչեցելոյն: Յղեցաւ և զմի աւանով մուրապայ ընդ իւր մարդկանցն:

Գրեցան թուղթքս յամսոյս Ը. (8):

344բ

1795 թ., յունիս - Թուղթք ի Ղօշավանք, ի Խօյ, ի Մեծն Պօլիս, ի Կարին և ի Բալու

Յօ1 **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն, թէ ահա զմնացեալ անասնեղէնսն ևս ընդ վէթիլ Գրիգոր պետին յղեցաք, որ ի Մաստարայ եղելովքն ընդ Սիմէօն պետին բերցեն յայդր, որոց պաշտամութիւնն այսուհետև ի կամս քոյ է յանձին:

Եւ վասն ուղտուցն զաթրան էին ինդրեալ, թէպէտ յղեցաք, բայց այլևս զոր ինչ Հարկաւորիցի, ի պարոն Գեորգէն բերեալ տուեալ ի յատուկ դաւթարի գրեսջիք, որպէս և նմա ևս եմք գրեալ յղել և ի յատուկ դաւթարի նշանակել: Եւ վասն առ ինքն եղեալ ղուժի ամանաթին, պատուէր մնալ և ոչ ևս յղել:

Գրեցաւ յամնոյս ԺԱ. (11):

Յօ2 **Ի Խօյ** - Թուղթ առ Իսաղան և Մարգար աղայն ընդ յատուկ փայեկի. յիշումն ընդ շահագնաց Յովհաննէս պետին գրեալ թղթոյն մերոյ, և Հարցումն վասն նորա, եթէ ի գալն որպէ՛ս արարաք զնա և զիա՛րդ ուղևորիցիք: Հարկիւ գրելին գրեսջիք և զո՛չ գրելին ասասջիք փայեկին, որ եկեալ ծանուցէ մեզ, որպէս և մեք ասացեալ եմք զոմանս բանս ծանուցանել ձեզ:

Գրի յամնոյս ԺԳ. (13):

Յօ3 **Դարձեալ ի Խօյ** - Թուղթ առ Իսաղան աղայն, ի պատասխանի թղթոյն, թէ իմացաք զթուղթ գրելն ձեր առ Հիւսէ-յին և Ճաֆար Ղուլի խանան ընդ Յովհաննէս վարդապետին և Հանդերձ պարոն Մարգարիւ և Ազիզիւ ի Նախչուան առ սարտարն առաքելն ձեր: Բայց զայն բանն, որ ի թուղթս նոցա գրեալ էիք, ծանր բան էր: Ուրեմն եթէ թուղթքն զայն չիցեն տուեալ նոցա պարոն Մարգարն և այլքն, գրեսցես շուտով, որ չտան: Բայց զորպէս լինիլն և Յովհաննէս պետին զինչ կերպիւ ճանապարհ դնելն նոցա, և քեզ զի՛նչ գրելն, մեզ շուտով գրեսցեն:

Յամնոյս ԺԳ. -ին (13) ևս առ քեզ ընդ յատուկ փայեկի թուղթ եմք գրեալ և յղեալ: Սարտարն ի Նախչուանու յանցեալ ասուրնն առ մեզ զմիամտութեան թուղթ էր գրեալ ծածկաբար, թէ երբ յայդր գայցեմք, դու առ մեզ եկեսցես և զմաթլապդ կատարելոց եմք:

Ողջոյն եղբորն պարոն Յակոբին և պարոն Ղազարին Եղիա-գարեան:

Գրեցաւ յամնոյս ԺԸ. (18):

Հնորակալութեան նամակներ նուիրատուներ՝ պատրիարքի նախկին վէթիլ կեսարացի Պետրոս վարդապետին (Կ. Պօլիս). «վասն յղեալ ընծային և ծանուցումն երկրիս վրդովիլոյն և քօչիլոյն» (344բ, Ա./4), վարդերես ամիրային. «վասն իսաշահամբօրին յղեցելոյ և ծանուցումն զերկրիս վրդովմանն» (Ա./5), օրհնութեան նամակ «ի մեծ Արմուտաներն», տեղի ողջ ժողովրդին. «վասն ԻԵ. (25)

զուուշ տրոցն, զոր յղեալ էին ձեռամբ ուխտաւոր մահտեսի Պետրոսին» (Ա./6): Կարինի գործակալ պարոն Հայրապետին յայտնում է, որ ամասիացի ուխտաւորներ մահտեսի Յարութիւնը եւ Եալօվայու նոր գիւղերից ՄազարՅոց Աստուածատուրի որդի պարոն Փանոսը պարտք են վերցրել (50 եւ 40 զուուշ), որոնց ստացագրերն ուղարկում եւ յանձնարարում է ստանալ պարտքը (Ա./7): Դօշականքի առաջնորդ Յովհաննէս վարդապետին յանձնարարում է այլեւ ուխտաւորներ չուղարկել Էջմիածին. «գի մի ի ճանապարհի խառնակութենէն վնասեալ յետոյ մեծ իմն իսղճահարութիւն լիցի մեզ» (Ա./8): Նամակները գրուել են յունիսի ԻԱ. -ին (21):

345ա

804* **Ի Բալու** - Թուղթ առ Բալուայ առաջնորդ Գրիգոր վարդապետն, յետ դարձի նորա ի Սրբոյ Աթոռոյս, յաղագս կացութեան մերոյ և վասն նուիրակ Յօհան վարդապետի վախճանմանն ի Բալու, զոր չե Հասեալ սորա անդ, տեղոյ իշխանքն գրեալ էին աստ: Եւ յաղագս Մկրտիչ վարդապետի կարգեցմանն ի տեղի նորա, ոյր սակս և յանձնարարութիւն: Տէ ս փոքրադիր տե[տեր] յե[րես] 270:

805* **Թուղթ առ Բալուայ իշխանն**, ի պատասխանի թղթոյն նոցա, որք ծանուցեալ էին զվախճանմանէ նոր նուիրակ Յօհան պետին և զծախուցն դրամավատնութեան ի կենդանութեանն և ի մահուանն, և այժմ գրէ սրբազան Վեհրն, թէ պատշաճ վարկեալ զնորին եղբօրորդի Մկրտիչ վարդապետն փոքր կոնդակաւ կարգել նուիրակ ի տեղի Հանգուցելոյն, ոյր վասն և յանձնարարութիւն:

806* **Կոնդակ ի վերայ Ամթայ և բոլոր վիճակին**. յաղագս վախճանման նոր նուիրակ Յօհան վարդապետին ի Բալու և եղբօրորդոյ նորա՝ Մկրտիչ վարդապետի կարգեցմանն ի տեղի նորա Հանգուցելոյն: Տէ ս ի մեծ տետեր յերեսն 2055:

807* **Թուղթ առ նուիրակ Մկրտիչ վարդապետն**, ի պատասխանի թղթոյն. մխիթարութիւն վասն մահուան Լօրեղբօրն և պատուէր, զի ինքն արասցէ զնուիրակութիւն, կշռել զինքն, թէ կարօղ իցէ, որոյ աղագաւ և փոքր կոնդակ մի ևս գրեալ յղեցաւ, զի ընդ մեծի կոնդակին շրջեցուցէ ի Հաստատութիւն իւրոյ: Տէ ս ի փոքրադիր տե[տեր] յե[րես] 171:

Գրեցան յամսոյս ԻԷ. (27):

Այսուհետեւ դասեսցուք ի կարգի զթուղթն Հնդկաց երկրի, որք գրեցան ընդ նոր նուիրակ Յակոբ շնորհազարդեալ վարդապետին, յամսոյս ելն:

1795 թ. յունիս - **Թուղթ ի Հնդիկս, ի քաղաքն Կալկաթայ**

808 **Ի Կալկաթայ** - Թուղթ առ աղայ Մովսէսն Խյաչիկեան ընդ նոր նուիրակ Յակոբ վարդապետին. յանձնարարութիւն վասն նորա և յիշումն ի մարտի 5 գրեալ թղթոյն մերոյ վասն Հաս-

ման Եփրեմ պետին ի Սուրբ Աթոռս և այլ բանից, և Յօզանջան աղայի ի կոնսպանումն եղեալ դրամոց սակս Սրբոյ Աթոռոյս: Վերստին պատուէր Հոգատար լինիլ և ըստ ժամանակին յանձնել նուիրակին:

Նոյնպէս և պատուէր Հանգուցեալ Մովսէս պետի իւրեանց ձեռօք ի կոնսպանն ինկիլիզաց եղեալ դրամոցն, որ ամ ըստ ամէ զնորին մուտաթն Հասուցէն ևս նուիրակին:

Նաև զգուշութիւն սակս Ջուղայու քանի անկարգ սևազլխացն, որք անկարգաբար զեղխաբար շրջագային ի կողմնունն, և արտաքսել զնոսս անտի: Ողջոյն շատ: Տէ՛ս մեծ տեսեր յերեսն 2050:

Յղեցան առ սա զմի Յովսեփիոս] շարական և սաղմոս:

Կալկաթայում ապրող ներքոյիշեալ անձանց շնորհակալագիր է յղում նախկին նուիրակի Հետ նուէրներ ուղարկելու Համար եւ միաժամանակ յանձնարարուով է օժանդակել նոր նշանակուած նուիրակին, այսպէս. Սարգիս Տէր-Յովհաննիսեանին. «վան նախկին նուիրակին և ընդ նմա յղեալ յիշատակին և ընծայիցն» (345ա, Ա./6), Աստուածատուր Գրիգորեանին. «վան ընծայիցն յղեցելոց և վան կատարելոյն զկտակ Հանգուցեալ Կարապետին Թօմայեան ընդ պարոն Յակոբին Յօզանեան» (Ա./7), Փանոս Բարաղամեանին եւ նրա որդի Սիմէօսին. «վան յիշատակացն և նուիրակին և յաղագս նոր նուիրակին յանձնարարութիւն» (Ա./8), Աստուածատուր Մուրատիանեանին. «վան նուիրակին և զկտակն Հանգուցեալ եղբօրն Հասուցանելոյն» (Ա./9), Յովհաննէս Տէր-Ալեւտեանին. «վան յիշատակին և ընծային և զեղբօր կտակն Հասուցանելոյն և վան առաջնոյ նուիրակին» (Ա./10), [345բ] աղայ Էլիազ Մինասեանին. «վան նուիրակին և յիշատակացն և յանձնարարութիւն վան նոր նուիրակին» (Ա./1), Հանգուցեալ աղայ Մինասի դուստր եւ աղայ Խոջամալ Սաֆարեանի կենակից Կատարինէ խաթնունին. «վան յիշատակացն և նուիրակին և յանձնարարութիւն նորոգին» (Ա./2), պարոն Ստեփան Միրզայեանին. «վան առաջնոյն նուիրակին... և պատուէր, զի գիտութեամբ իւրով նուիրակն նոր իմն գործակալ կարգեսցէ վան Սրբոյ Աթոռոյս մինչ ինքն Հրաժարեալ է» (Ա./3), վերջինիս կողակից Խաթնուն տիկնոջը. «վան յիշատակին զմի արծաթեայ ոսկեջրեալ աղանոյն» (Ա./4), պարոն տիրացու Յակոբ Յովսեփեանին. «վան Հասուցանելոյն զխոստմունսն Հանգուցեալ Բարսեղ Կարապետեանի, և Հանգուցեալ Պօղոսին Փանոսեան» (Ա./5), Հանգուցեալ Յարութիւն Յովհաննիսեանի Հռիփսիմէ տիկնոջը. «վան յանձնեալք նուիրակին զկտակն աղայ Մինասի կողակից Մարիամջանին» (Ա./6), աղայ Յարութիւն Պետրոսեանին. «վան նուիրակին և վան Հասուցանելոյն զկտակն Խաչիկ Լազարեանին 500 ռուբլոյն» (Ա./7), պարոն Ստեփաննոս Յարութիւնեանին. «վան Հոգւոյ Յակոբ եղբօրն յիշատակին», (Ա./8) Հանգուցեալ Պօղոս Միրզայեանի տիկին Մարիամ խանտովն. «վան Հոգւոյ առն տուեալ յիշատակացն» (Ա./9), Մարիս կոչեցեալ պարոն Յովհաննէս Մելիքսեթեանին. «վան նուիրակին և յիշատակին սակս Հանգուցեալ Մարիամին» (Ա./10), պարոն Հանգուցեալ տէր Յովհաննէսի կողակից Խաթնուն տիկնոջը. «վան ժամուց և քառանից տալոյն ԱՃ. (100) սոքայ ռուբլոյն և յիշատակի Եփեսոս գաւազանին արծաթեայ գլխովն ինձորօք եւ պատուանդանիս» (Ա./11), պարոն Ներ-

սէս Յովհաննիսեանին. «վանն նուիրակին և յանձնարարութիւն յաղագս նորոգ նուիրակին» (Ա./12), ջուղայեցի տեր Յովսէփ Ստեփանեանին. «վանն յղեալ ընծայիցն ի Բաւրայու և վանն ինդրոյն առ ի իմիք տեղի վիճակաւորիլոյն բան» (Ա./13):

1795 թ. յունիս - Թուղթք ի Հնդիկս, ի Մատրաս քաղաքն

809 **Ի Մատրաս - Թուղթ առ աղայ Հաւամիրն Սուլթանուսեանն.** յանձնարարութիւն վանն նոր նուիրակ Յակոբ վարդապետին և շնորհակալութիւն վանն տրոցն զանազան պատճառօք տուեցելոց, և բան վանն ոմանց սևագլխաց ի կողմնունն աստանդեղոց, և ծանուցումն զանցիցն երկրիս: Ողջոյն շատ: Ի մեծ տե[տեր] յե[րեսն] 2052:

[Յղեցան առ սա զմի] Հովսէփիոս] շարական և [սաղմոս]:

810* **Թուղթ առ պարոն աղայ Յարութիւն Յակոբեան Թաղեանց.** յիշումն քան զայս յառաջ գրեալ թղթոյն մերոյ և վանն նոր նուիրակին յանձնարարութիւն և վանն Հասուցեալ կտակացն ոմանց և որդւոյն գործակալութեան և ի Մուշիբեանդար վախճանեալ Պօղոսի կտակին վանն Տաթևու վանիցն և Սրբոյ Աթոռոյս և այլ ևս ըստ սոցա բանք: Տէ ս ի նոյն տե[տեր] յե[րեսն] 2236:

811* **Թուղթ առ սորա որդի պարոն աղայ Յակոբն.** շնորհակալութիւն վանն Հասուցանելոյն զոմանց կտակացն և պատուէր արիաբար վարել զգործն Սրբոյ Աթոռոյս, որ նորապէս գործակալ էր կարգեցեալ ի նուիրակ Եփրեմ պատէն: տէ ս ի նոյն տե[տեր] յե[րեսն] 2040:

346ա

812* **Կոնդակ վանն գործակալութեան վերոյ յիշեալ պարոն աղայ Յակոբին Յարութիւնեան-Թաղեանց,** ընդ նոր նուիրակ Յակոբ վարդապետին: Տէ ս ի նոյն մեծ տետեր յերեսն 2134:

Միաժամանակ շնորհակալական նամակներ են ուղարկուել Մադրաս ներքոնշեալ անձանց, պարոն Սարգիս Ծատուրեանին. «վանն յիշատակացն իւրոց զաւլամբեար վարագուրացն և վանն Հասուցանելոյն զկտակն Հանգուցեալ Խաչիկ Աղամալեանին» (346ա, Ա./2), պարոն Յակոբ Պտուսեանին. «վանն յիշատակացն զաւլամբեար գոգնոցաց» (Ա./3), պարոն Մանուկ Աստուածատուրեանին. «վանն նուիրակին և յիշատակացն» (Ա./3), Աստուածատուր Տէր-Ստեփաննոսեանին. «վանն յիշատակացն, թէ իւրն և թէ Հանգուցեալ Հօրն, և յանձնարարութիւն վանն նոր նուիրակին» (Ա./4), Յարութիւն Կարապետեանին. «վանն յիշատակացն» (Ա./5), Աւետն, Ալթ Տէր-Աւետեանին եւ նրա մորը՝ Աննայ տիկնոջը. «վանն յիշատակաց Հօրն և ինքեանց և միսիթարութիւն վանն նորա յիշեալ տեր Աւետին» (Ա./6), Յովհաննէս Մարգարեանի կնոջը՝ Աննային. «վանն նուիրակին և յիշատակացն և ընծային» (Ա./7), Հանգուցեալ Աւետեան Մարգարի կին Բէկզատայ տիկնոջը. «վանն նուիրակին և յիշատակացն» (Ա./8), տիրացու պարոն Յարութիւն Տէր-Խաչատրեանին. «վանն յիշատակացն և յանձնարարութիւն նոր նուիրակին: Ողջոյն կենակցոյն՝ Ջւշին տիկնոյն» (Ա./9), Փանոս Աւետեանի տիկին Թղէնին. «վանն

նուիրակին և յանուն իւր և Հանգուցեալ դատերն տուեալ յիշատակացն» (Ա./10), պարոն Յարութին Սարգիս Քեալանթարեանին. «վանն նուիրակին և արծաթեայ խաչին» (Ա./11), Յովսէփ Մարութեանի կողակից Խաթունին. «վանն յիշատակացն տուելոց Հոգւոց Հանգուցեալ առն Յովսէփին և որդւոցն՝ Պետրոսին և Յակոբին» (Ա./12), պարոն Յակոբ Պտումեանի Մարիամջան տիկնոջը. «վանն նուիրակին և յիշատակին» (Ա./13), տէր Ստեփաննոսի կին եւ Մարիամջանի մայր Նանաջանին. «յաղագս նուիրակին և յիշատակացն տուելոց վանն իւր և առն» (Ա./14), պարոն Յօհանն Մկրտչի. «վանն վարագուրին» (Ա./15), պարոն Պետրոս Յարութինեանին. «ի յիշատակ ծնողացն տուեալ վարագուրին» (Ա./16), պարոն Կարապետ Մուրատիսանեանին. «վանն տուեալ վարագուրին» (Ա./17), պարոն աղայ Յակոբեան Յարութինի կին Թամարին, Չօրէրեան Անամարիա կնոջը եւ տիկին Հռիփսիմէ Յակոբջանեանին. «վանն վարագուրին» (Ա./18), աղայ Մարութեանի կին Դշխոյին, Գասպարէնի կին Անամարիային և Խյաչիկէնի կին Սառային. «վանն զմեծ զալամքեար վարագուրին» (Ա./19):

813* Թուղթ առ տէր Յարութինին Հմաւօնեանն. ՀնորՀակալութին վանն նուիրակին յիշատակացն և ընծայիցն և վանն նորոգին ևս յանձնարարութին: Եւ թէ Գ. (3) տիկնայք, որ զմի մեծ վարագոյր վանն Սուրբ Յովհաննիսի սեղանոյն և Գ. (3) տիկնայք ևս զնոյնպիսի վարագոյր մի վանն Սուրբ Ստեփաննոսի սեղանոյն տուեալ էին, ահա զօրհնութեան թուղթ /346բ/ գրեալ ընդ գրոյս առ քեզ առաքեցաք, տացես նոցա: Տէ՛ս ի փոքրադիր տե[տերց]յե[րեան] 258:

814* Թուղթ առ պարոն Մկրտումն Սիմէօնեան. ՀնորՀակալութին վանն նուիրակին և վանն Հասուցանելոյն զկտական Հանգուցեալ Գրիգորին Աղայփիրեան, որ էր 100 ռուփի և մի քչոց արծաթեայ և յաղագս նոր նուիրակին ևս յանձնարարութին: Տէ՛ս ի նոյն փոքրադիր տետեր ևս 258 երեան:

815* Թուղթ առ պարոն Յակոբն Սիմէօնեան, վանն նուիրակին և քանի շապիկ յիշատակացն և մի եղջերեայ թաս ընծային. ՀնորՀակալութին և վանն նորոգին յանձնարարութին: Տէ՛ս ի նոյն տե[տեր]յե[րեան] 160:

816 Թուղթ առ աղայ Յովհաննէս Հաւամիր Սուլթանումեան. մսիթարութին վանն կնոջն և ՀնորՀակալութին վանն նուիրակին և տուեալ տրոցն և յիշատակի ապակեղէն մեծ ջաւին և Հասուցանելոյն զկտակա ոմանց Հանգուցելոց, և յանձնարարութին սակս նոր նուիրակին: Տէ՛ս ի նոյն տե[տեր]յե[րեան] 77: Ողջոյն ևս գոն:

[Յղեցան առ սա, զմի] Յով[սէփիոս] և շարական:

817 Թուղթ առ Հռիփսիմէ տիկինն Հանգուցեալ Յակոբջանի՝ որդւոյ աղայ Հաւամիրի. ՀնորՀակալութին վանն Հարսանեաց որդւոյն աղայ Նազարին և որդէծնունդեանն, և ՀնորՀակա-

լուծին վանն յիշատակացն և նուիրակին, և վանն նորոգին ևս յանձնարարութիւն: Ողջոյն յանուանէ գոն: Տէ՛ս ի նոյն տե[տեր] յերեսն 78: [Յղեցան առ սա զմի] շարական և սա[ղմոս]:

818 Թուղթ առ սորա որդի աղայ Նազարն Յակոբջանեան. շնորհաւորութիւն վանն ամուսնանալոյն և որդեճնութեանն, և շնորհակալութիւն վանն մեծ ապակեայ ջաչին, և վանն նոր նուիրակին յանձնարարութիւն:

Ողջոյն կենակցոյն՝ Մերջան տիկնոյն և նորածին որդւոյն՝ Յակոբջան աղազատէին: Տէ՛ս ի նոյն տե[տեր] յե[րես] 79: [Յղեցաւ առ սա զմի] Յով[սեփիոս]:

819 Թուղթ առ Խօջամալեան պարոն ՍաՀրատի կին Մարիամն. շնորհակալութիւն վանն ԺԲ. (12) ուրարին, Հանդերձ օրհնութեամբ: Չորք թուղթքս վերոյ նշանեցեալք ի մէջ թղթոյ տեր Յարութիւն քաւանային Հմաւօնեան դնելի է, որ առանձնօրէն տացի նոցա:

Վերջ Մատրասու թղթոցն:

346բ

1795 թ. յուլիս - Թուղթք ի Հնդիկս ի քաղաքն Սէյտապատ

820 Ի Սէյտապատ - Թուղթ առ աղայ Խյաչիկն Էմնիագեան, վանն երկար ժամանակաւ թուղթ չգրելոյն մեղադրանք և վանն յիշատակացն և նուիրակին շնորհակալութիւն, իսկ վանն նորոգ նուիրակ Յակոբ վարդապետին յանձնարարութիւն: Տէ՛ս ի տետեր ..., յղեցան զմի Յով[սեփիոս] և շա[րականոց]¹⁵¹:

Համանման բովանդակութեան նամակներ են յղուել նաեւ Սէյտապատում ապրող ներքոյիշեալ անձանց՝ աղայ Յովհաննէս Էմնիագեանին. «յաղագս նուիրակին և յիշատակացն իւր և կնոջն՝ Եղիսաբէթ տիկնոյն և քեռն՝ Մարիամ տիկնոջն» (346բ, Ա./8), աղայ Գրիգոր Առաքելեանին. «վանն յիշատակացն և նուիրակին» (Ա./9), պարոն Նազար Հաւնազարեանին եւ նրա կին Եղիսաբէթին. «վանն քնքեանց և Հոգւոց ճողոց տուեալ յիշատակացն» (Ա./10), Ովաննա տիկին Պօղոսեանին. «վանն Հոգեբաժնին 33 Հի սքայ ուսիոյն, զոր տուեալ էր ի կենդանութեանն» (Ա./11), պարոն Մուրատիան Մեքոնեանին եւ նրա կին Թագուհուն. «վանն նուիրակին և յիշատակացն» (Ա./12), պարոն Նիկողայոս Յարութիւնեանին, Կարապետ Տեր-Մատթեոսեանին, Յովհաննէս Տեր-Թագեոսեանին. «վանն Չ. (6) Հատ շապկին և նուիրակին» (Ա./13-15), պարոն Կարապետ Ծատուրեանին. «վանն նուիրակին և ընծային» (347ա, Ա./1), աղայ Յարութիւն Ծատուրեանին.

¹⁵¹ Ծագումով ջողայեցի Խաչիկ աղա Էմնիագյանը Դուկաս կաթողիկոսի օրոք՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իրականացվող մեծածավալ շինարարական ու նորոգչական աշխատանքների մեկենասներից է, որի անունը կարդում ենք տանարի հարավային կողմում գտնվող միաբանական ու տնտեսական շինությունների շարքում, «Ամբարանոցի» կամարակապ սրահի ներսում պահպանված շինարարական վիմագրում: Ըստ արձանագրության՝ նա 1785 թ. միջոցներ է տրամադրել դեռևս Սիմեոն Երևանցու օրոք կառուցված ամբարանոցի բարեկարգման և նոր կցակառուցյունով համարելու նպատակով, որ են՝ կամարակապ դուռը, ներբանահարկերը, խցերը և այլն (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 81-82, արձ. 61):

«վան Բ. (2) շապկացի և նուիրակին» (Ա./2), պարոն տիրացու Մեքիսէթ Սաֆարեանին. «վան կնոջն՝ Գուլամամին և շորհակալութիւն Գ. (3) շապկացի և նուիրակին» (Ա./3), պարոն Պետրոս Ստեփաննոսին. «շորհակալութիւն Բ. (2) շապկացի» (Ա./4), տիկին Վախտայ Յովհաննիսեանին. «վան Հանգուցեալ Մարիամ դստերն և յիշումն վան Հասուցանելոյն նոյնոյ Հանգուցեալ դստերն զՆոգեբաժինն Հանգուցեալ Աղամին Յարութիւնեան՝ ձեռամբ Հանգուցեալ Սէթ աղային, որ էր ԱՃ. (100) օկի և Ա. (1) շապիկ» (Ա./5), տիկին Խյաթուն Յովհաննիսեանին եւ նրա մայր Բեկգատէին. «վան Բ. (2) շապկին և նուիրակին» (Ա./6), Փափկեան Հանգուցեալ Աստուածատուրի որդի պարոն Գրիգորին եւ քրոջը՝ Դշխոյ տիկնոջը. «վան մօրն իւրեանց՝ Մարիամ խանուամին Հանգուցելոյ՝ միսիթարութիւն և յիշատակութիւն սորա տուեալ լինելոյն ի կենդանութեան զմի ճաճանչ խաչ աղանեալ վան Հոգւոյ Հօրն իւրեանց» (Ա./7), տէր Մովսէս Եղիազարեանին. «վան նուիրակին աջամբուրին և ընծայիցն» (Ա./8):

Թուղթք ի Հնդիկս, ի քաղաքն Դաքայ

Յ21* **Ի Դաքայ** – Թուղթ առ Սարգսեան Հանգուցեալ աղայ Միքայէլի Հօրեղբայր պարոն Մարտիրոսն և Հօրեղբօր դուստր Հուշան տիկինն և ձախակողմեան պարոն Յարութիւնն. միսիթարութիւն վան մահուան աղայ Միքայէլին և սոյն Միքայէլս Հանգուցեալ ի կենդանութեանն զմի մեծ խաչ էր ընծայեալ և բերին նորա, սոքա էին Հոգացեալ:

Համանման բովանդակութեան նամակներ են ուղարկուել պարոն Սէթ Աղասուն. «վան նուիրակին և յիշատակացն» (Ա./10), տէր Ստեփաննոս Տէր-Յարութիւնեանին. «վան ձեռնտուութեանն նուիրակին և յիշատակացն» (Ա./11), պարոն Մինաս Յովհաննէսին. «յաղագս յիշատակացն և նուիրակին» (Ա./12), պարոն Մարգարէ Հայրապետեանին. «յաղագս նուիրակին և յիշատակացն» (Ա./13), պարոն Թադէոս Գէորգեանին. «վան նուիրակին և յիշատակացն» (Ա./14), պարոն Գրիգոր Պետրոսեանին. «յիշատակացն, զորս տուեալ էր վան Հոգւոյ /347թ/ ծնողացն և կողակցոյն՝ Ուրուղալուին և ընծային յանուն սրբազան Վեհին» (Ա./15), աղայ Խյաշիկ Յովհաննիսեանին, պարոն Ստեփաննոս Ղարդաշեանին, տիրացու Յովհաննէս Տէր-Դանիէլեանին. «վան նուիրակին և յիշատակացն» (Ա./1-3), պարոն Մինաս Յարութիւնեանին. «շորհակալութիւն արծաթեայ խաչին՝ վան Հոգւոյ մօրն իւրոյ Սափորին» (Ա./4):

Յ22* **Թուղթ առ յոյն պարոն Պօտոսն.** շորհակալութիւն վան նուիրացն և նուիրակին և յանձնարարութիւն նորոգին և բան վան տալեացն, զոր պարտ էր Վարդէհէրու առաջնորդ Մանուէլ վարդապետին և սա այժմ զսանասոն ընդ նուիրակին առաքէ պահանջեալ այնու զգրամն: Ողջոյն եղբօր պարոն Շիրինին և Հօրեղբօր որդւոցն և կողակցոյն: Տէս ի փոքրագիր տե[տեր] յե[րես] Յ3: Վերջ թղթոցն Դաքայու:

Թուղթք Ի Հնդիկս Ի քաղաքն Մուչլիբանդար

Յ23* **Ի Մուչլիբանդար** – Թուղթ առ պարոն աղայ Բարադամն Սարգսեան. ՀնորՀակալութիւն վանն տուեալ յիշատակացն և ընծայիցն և բարեչաւութեան նուիրակին և յանձնարարութիւն նորոգին և մխիթարութիւն վախճանեալ զաւակացն, կենակցւոյն՝ Իշխան տիկնոյն և զքրանչին՝ Շիզատայ տիկնոյն ողջոյն: Տէ՛ս Ի մեծ տե[տեր] յե[րես] 2137:

Յ24* **Թուղթ առ պարոն աղայ Ծատուրն Տէր-Յակոբեան.** յիշատակութիւն յառաջ գրեցեալ թղթոյն մերոյ և յանձնարարութիւն վանն նոր նուիրակին և պատուէր յաղագս գործակալութեան և յաղագս տաթեւացի յանգուցեալ Պօղոսի կտակին յանուն Սրբոյ Աթոռոյս և Տաթեւու վանացն: Տէ՛ս Ի նոյն տե[տեր] յե[րես] 2136:

Յ25* **Կոնդակ վանն գործակալութեան վերոյ յիշեալ պարոն աղայ Ծատուրին Յակոբեան,** ընդ նոր նուիրակ Յակոբ վարդապետին: Տէ՛ս Ի նոյն տե[տեր] յերեսն 2135:

Յ26* **Թուղթ առ Թագուհի տիկինն մերս գործակալ պարոն աղայ Ծատուրին.** ՀնորՀակալութիւն վանն արծաթեայ սկզւոյն տուեցելոյ վանն Հոգւոյ ծնողացն Աղաջանին և Մէրմէռին և նուիրակին, քեռն՝ Նանաջան տիկնոյն և սորա որդի պարոն Աբրահամին և դատերն՝ Աննայ տիկնոյն ողջոյն:

Յ27* **Թուղթ առ Շիզատայ տիկին Հանգուցեալ Մարտիրոսի.** ՀնորՀակալութիւն վանն նուիրակին և գեղեցիկ չիֆթիչի տիկին, որ ընդ Ի Բասրայ բնակեալ քեռն Ի միասին ընծայեալ էին և յանձնարարութիւն վանն նորոգին և մխիթարութիւն վանն յիշեալ առն Հանգուցելոյ: Տէ՛ս Ի նոյն տե[տեր] յե[րես] 648:

Յ28* **Թուղթ առ պարոն Աւետն Յակոբջանեան.** յաղագս նուիրակին և յիշատակացն ՀնորՀակալութիւն և նորոգին յանձնարարութիւն կենակցւոյն Խաթուն տիկնոյն, որդւոցն և դատերացն ողջոյն: Տէ՛ս Ի նոյն տե[տեր] յե[րես] 363:

Չլրացուած նամակների Համառոտագրութիւններ՝ ուղղուած պարոն Մխիթար Սիսեծեսեանին (347բ, Ա./15), պարոն Վարդան Գասպարեանին (348ա, Ա./1), պարոն Աբրահամ Աւետմանեանին (Ա./2), տէր Մարտիրոս Դավթեանին (Ա./3), պարոն աղայ Մատթէոս Յովհաննիսեանին (Ա./5), պարոն Պօղոս Աղամեանին (Ա./6), պարոն Մախսուտ Մանուչարեանին (Ա./7), պարոն Խաչիկ Գէորգեանին (Բումբայ) (Ա./8), կոնդակ միեւնոյն պարոն Խաչիկին (Ա./9), պարոն Գալստան մահտեսի Ծատուրեանին (Ա./10), քալանթար պարոն Աւետ Սարգսեանին և զքրանչ Խաթուն տիկնոջը (Ա./11), աղայ Մովսէս Բարաղամեանին (Ա./12):

829 **Ի Չին Մակաւ** - Թուղթ առ պարոն Ղազարն Յօ-
Հաննիսեան. շնորհակալութիւն վասն Լ. (30) ռուսիի արկաթի
տուեալ նուիրակութեանն Հանդերձ օրհնութեամբ:

1795 թ., յունիս - **Թուղթք Ի Հարիկա Ի քաղաքն Սուրաթ**

830 Թուղթ առ ազնիւ աղայ ՅօՀաննիսեանն Յակոբեան-
Գերաբեանց ընդ նոր նուիրակ Յակոբ վարդապետին. յանձնա-
րարութիւն վասն նորին, և բանք թէ Ի կողմանէ մեծամեծ տրոցն
զինչ արարաք զինչ առնելոց եմք առ ինդիրսն, այլ բանք առ այլ
իրս: **Տէ ս Ի մեծ տե[տեր] յերեսն 2142:**

348բ

831* **Դարձեալ Թուղթ առ նոյն աղայ ՅօՀաննիսեանն ընդ**
նշխարի գագաթնան Սրբոյն Հռիփսիմեայ, զոր եղեալ Ի մէջ խաչի
սրբազանն յլեաց առ նա պարզ և Հոգևոր Ի Սրբոյ Աթոռոյս, ձե-
ռամբ նոր նուիրակ Յակոբ վարդապետին¹⁵²: Տէ ս Ի նոյն տե[տեր]
յե[րեսն] 2145:

832* Թուղթ առ աղայ ՅօՀաննիսեանն Գրիգորեան. մխիթա-
րութիւն վասն Հանգուցեալ Սէթ եղբօրն, շնորհակալութիւն վասն
տրոցն Հոգեբաժին անուամբ և նուիրակին և գաւազանին յանուն
երից որդւոցն տուեցելոց, շնորհաւորութիւն վասն Բ. -ց (2) որդւոց
Հարսանեաց՝ Յակոբոսին և Գրիգորին և յանձնարարութիւն նո-
րոգին: **Յիշեալ Բ. (2) որդւոցն և Թաղէսին և սոցա մայր Խլաթուն**
տիկնոյն ողջոյն: Տէ ս Ի նոյն տե[տեր] յե[րեսն] 2230:

833* Թուղթ առ պարոն Փանոսն Աղաբաբեան. մխիթա-
րութիւն վասն կնոջն և շնորհակալութիւն վասն տուեալ Հոգեբաժ-
նին և յիշատակացն, և նուիրակին, և նորոգին յանձնարարութիւն,
և վասն երկրորդ կնոջ անզգամաբար բաժանիլոյն՝ սփոփանք:
Տէ ս Ի նոյն տե[տեր] յերեսն 2231: Յղեցաւ զմի շարական:

834* Թուղթ առ աղայ Գասպարն ՅօՀաննիսեան. շնոր-
հակալութիւն վասն յիշատակին և նուիրակին, և յանձնարարու-

¹⁵² Հովհաննես եպս. Շահխաթունյանցի հաղորդմամբ՝ էջմիածնի սրբությունների՝ սուրբ Գե-
ղարդի, Հավուց թառի Ամենափրկիչ խաչափայտի, սրբոց աջ-մասունքաբանների ու տապա-
նակների շարքում, ուղագրով է նաև Սիմեոն Երևանցի (1763-1780 թթ.) կաթողիկոսի օրոք
պատրաստված «գագաթ գլխոյ սրբունայն Հռիփսիմեայ կուսի» մասունքակիր խաչը՝
ագուցված արձարե ուրանկյուն անոթի մեջ: Այն ունեցել է նաև կաթողիկոսական կնիք և
փական (կուպո)՝ գմբեթին և գագաթի անոթին, այսինքն՝ խաչաթողին ամրացնելու համար:
Փականի երկու կողմում արձանագրվել է հետևյալը. «Ձեռամբ Սիմեոն կաթողիկոսին, Սուրբ
Հռիփսիմի գագաթն է, ՌՄԺԳ. (1765)» (**Յովհաննէս եպս. Շահխաթունեանց**, Ստորագրու-
թիւն Կաթողիկէ էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ՝ Ա. Տէր-
Ստեփանեանի, Ս. էջմիածին, 2014, էջ 51-52): Կարծում ենք՝ վավերագրում հիշատակված
«գագաթան Սրբոյն Հռիփսիմեայ» նշխարը, որը խաչ-մասունքաբանով հայրապետն Ի
երախտագիտություն հղել է Օհանջան աղային (Սուրաթ), կապ ունի Շահխաթունյանցի
վկայաբերած միևնույն խաչամասունքի հետ:

թինն նորոգին կենակցւոյն՝ Մարիամ տիկնոյն և որդւոցն՝ Գալստէսին և Յակոբոսին ողջոյն: Ի նոյն տե[տեր]յե[րես] 2131:

835* Թուղթ առ աղայ Մարութն Յովսէփեան. շնորհակալութիւն վասն նուիրակին և վասն նուիրելոյն զմի արծաթեայ բուրվառ յանուն Գրիգոր որդւոյն, որոյ վասն և սրբազանն յղեաց զմատնէհար աջոյն Սրբոյ Լուսաւորչի՝ դնելով ի մէջ մահրամայի և տփի, և յանձնարարութիւն նորոգ նուիրակին: Մօրն՝ Խաթուն տիկնոյն, եղբարցն, կողակցւոյն, զոքանչին և քենոյն յանուանէ ողջոյն: Տէ՛ս ի նոյն տե[տեր]յե[րեսն]:

836* Թուղթ առ Չիպիտայ Խաթունն՝ քոյր Գրիգոր աղային. շնորհակալութիւն վասն յղեալ ընծայիցն ընդ նուիրակին և յանձնարարութիւն նորոգին: Ողջոյն Հոգևոր որդւոյն՝ պարոն Երեմիայն և նորա ընտանեացն: Ի նոյն տե[տեր]յե[րեսն]:

837* Թուղթ առ Դշխոյ տիկինն՝ զոքանչ Հանգուցեալ Սարգսի. շնորհակալութիւն վասն նուիրելոյն զՀոգեբաժինսն փեսային և դստերն իւրոյ: Ողջոյն ևս գոն: Տէ՛ս ի փոքրագիր տե[տեր]յե[րեսն] 260:

838* Թուղթ առ պարոն Գէորգն Աւետեան, վասն տալոյն զՀոգեբաժինն կնոջն մխիթարութիւն և շնորհակալութիւն, և յաղագս նոր նուիրակին զյանձնարարութիւն: Տէ՛ս ի տե[տեր]յե[րեսն] տէր Փիլիպպոսի յերեսն:

839* Թուղթ առ Եղիսաբէթ տիկինն Դաւթեան. շնորհակալութիւն վասն մօր իւրոյ կտակեալ Հոգեբաժինն և յիշատակ զկնի վախճանելոյն Հասուցանելոյն, որպէս և մայրն առն իւրոյ Մելքոնինն, ի կենդանութեանն տուեալ էր: Ողջոյն առն իւրոյ պարոն Դաւթին և որդւոյն Բէճանին: Տէ՛ս ի նոյն տե[տեր]յե[րեսն]:

840* Թուղթ առ մայր աղայ Գասպարի Շիզատայ տիկինն. շնորհակալութիւն վասն յիշատակացն և յանձնարարութիւն վասն նոր նուիրակին: Տէ՛ս ի նոյն տետեր յերեսն:

Համանման նամակներ են յղուել Յօհաննան աղայի դուստր Թուրվանդայ տիկնոջը. «վասն յիշատակացն և յանձնարարութիւն վասն նոր նուիրակին» (348բ, Ա./11), պարոն Աւետիք Աւթեանին եւ կողակից Ուղուրու տիկնոջը. «վասն յիշատակացն և նուիրակին» (Ա./12), Նանաջան տիկնոջը եւ Հանգուցեալ կողակից պարոն Մանուկին Եսայեան. «վասն առն և յիշատակութիւն նորին տուեալ յիշատակացն ի կենդանութեանն» (Ա./13), Հանգուցեալ Ստեփաննոսի կողակից Մարինէ տիկնոջը. «վասն տուեալ խաչին» (Ա./14), պարոն Յօհան Ապտմեհեանին. «վասն նուիրակին և ողջոյն կնոջն՝ Աննային և շնորհակալութիւն տուեալ գաւազանին» (Ա./15), եղբայրներ պարոն Թովմաս եւ Կիւրեղ Նիկողոսեաններին. «շնորհակալութիւն յանուն Հանգուցեալքեռն իւրեանց և ինքեանց տուեալ յիշատակացն» (Ա./16), պարոն Յարութիւն Անդրէասեանին. «վասն գաւազանին և յանձնարարութիւն նո-

րոգին» (Ա./17), պարոն Աստուածատուր Ծիծիկեանին. «ՀնորՀակալութիւն ընդ կնոջ տուեալ եպենոս գաւազանին» (Ա./18):

Չլրացուած նամակ աղայ Մկրտիչ Մելիքնազեանին (349ա, Ա./1), Յովսէփ և Մարտիրոս աղաներին (Ա./6):

ՀնորՀակալական նամակներ Աստուածատուր Աղէքսանդրեանին. «վասն առաջնոյ նուիրակին» (Ա./2), Ղազարի տիկին Անամարիային. «վասն նուիրակին և յանձնարարութիւն նորոգին» (Ա./3), պարոն Յովհաննէս Ալթեանին. «յաղագս բանիւ և իրօք գնուիրական շահելոյն, շնորՀատրութիւն վասն ամուսնանալոյն» (Ա./4), պարոն Գեորգ Տէր-Յարութիւնեանին. «վասն նուիրակին և յաղագս նորոգին զանձնարարութիւն, Ջայխաթուն կողակցոյն և որդոյն՝ պարոն Յարութիւնին» (Ա./5):

349ա

841* **Ի Մաշկեաթ** - Թուղթ առ պարոն Սիմէօնն քեալան-թար Սարգսեան. շնորՀակալութիւն վասն առաջնոյն նուիրակին և յանձնարարութիւն վասն նոր նուիրակ Յակոբ վարդապետին:

842* **Ի Բանդար-Բուշեռ** - Թուղթ առ Սրբոյն Աթոռոյս գործակալ պարոն Յարութիւն Մելքոնեան. շնորՀակալութիւն վասն նախկին նուիրակին և յանձնարարութիւն վասն նորոյն և մեղադրանք ինչ վասն անՀոգ լինելոյն առ օրինազանց գործս, որք անդ եղեալ են և բանադրանք շուշանածեր Աբրահամին և դատեր նորա Ազատին և երկրորդ ապօրէն առն նորա, որ զառաջին այրն լկտիութեամբ թողեալ գնացեալ էր նոր առն, խաբելով զանխիղճ առաջնորդն: Տէ՛ս ի մեծ տեսեր յե[րեան] 2045: Յղեցաւ շարական:

843* **Թուղթ առ պարոն Յովհաննէսն Եսայեան.** մխիթարութիւն վասն Հօրն, շնորՀակալութիւն վասն յիշատակացն և ընծայիցն:

1795 Թ., յունիս - **Թուղթք ի քաղաքն Բասրայ**

844 **Թուղթ առ Սրբոյ Աթոռոյս գործակալ պարոն Յովհաննէսն ԲեթղէՀէմեան,** յիշումն քանիցս թուղթ գրելոյն մեր, շնորՀակալութիւն ընդ նուիրակին յղեալ յիշատակին և յանձնարարութիւն վասն նոր նուիրակ Յակոբ պետին, և բան վասն Աստուածատուր վարդապետին: Ողջոյն որդոյն՝ պարոն Մատթէոսին: Տէ՛ս ի մեծ տե[տեր] յե[րեան] 2054:

Յղեցաւ Յովսէփիոս, շարական և սա[ղմոս]:

845* **Թուղթ առ պարոն Վարդանն Սարգսեան քեալան-թարի.** մխիթարութիւն վասն կնոջն և որդւոյն, շնորՀակալութիւն վասն Բ. (2) Հատ արծաթեայ տապանակին և նուիրակին և վասն նորոգին յանձնարարութիւն: Ողջոյն եղբօր որդի Գրիգորին և զըքանչին:

846* Թուղթ առ պարոն Գեորգն Տեր-Դավթեան. Հնորհակալութիւն վասն յիշատակացն և նուիրակին, և յանձնարարութիւն նորոգին: Չղբանչին՝ Կատարինէ տիկնոյն, կենակցոյն, որդի Թադէոսին և դստերացն ողջոյն: Յով[սէփիոս], շարական և սա[ղմոս]:

847* Թուղթ առ պարոն Միքայէն Բարսեղեան, յաղագս նուիրակին և յիշատակացն շնորհակալութիւն և յանձնարարութիւն վասն նուիրակին: Կողակցւոյն օրհնութիւն ի լինիլ զաւակ: Տէ՛ս ...: Յով[սէփիոս], շարական:

848* Թուղթ առ տիգրանակերտցի պարոն Յովսէփն Նիկողոսեան, վասն տուեալ յիշատակի Աստուածաճնայ պատկերին շնորհակալութիւն և վասն նորոգին յանձնարարութիւն: Տէ՛ս ...:

849* Թուղթ առ Մարիամայ տիկինն պարոն Ալէտեան. շնորհակալութիւն ընդ քեռն իւրոյ՝ Հիզատայ /349թ/ տիկնոյն տուեալ չիֆթիչի գեղեցկաշէն տփոյն և վասն նորոգին յանձնարարութիւն: Հարական եւ սա[ղմոս]:

850* Թուղթ առ աղայ Պետրոսի Մելիքեան դստերք՝ Լուիճինա և Ակաթայ տիկնայնս. շնորհակալութիւն վասն Հոգւոյ Հօրաքեռն իւրեանց՝ Ազիզ տիկնոյն ընծայեալ յիշատակացն և յանձնարարութիւն յաղագս նորոգին: Տէ՛ս ...:

851* Թուղթ առ պարոն Մաղաքիայն Սարգսեան, վասն յառաջագոյն ընծայեալ արծաթեայ բուրվառին կրկին օրհնութիւն, շնորհակալութիւն վասն նուիրակին և յանձնարարութիւն նորոգին: Կենակցւոյն՝ Մարիամին և Հոգեորդւոյն՝ պարոն Խյաչիկին Գրիգորեան, ողջոյն: Տէ՛ս ...: Հարական և սա[ղմոս]:

852* Թուղթ առ պարոն Յարութիւն ՍաՀակեան. շնորհակալութիւն վասն բարեշնորհութեանցն նուիրակին և յանձնարարութիւն վասն նորոգին: Կենակցւոյն և որդւոցն, ողջոյն: Տէ՛ս ի փոքրադիր տե[տեր] յե[րեան] 80: Յով[սէփիոս], շարական:

853* Թուղթ առ պարոն Յովհաննէսն Տեր-Գասպարեան. մխիթարութիւն վասն Հօրն. շնորհակալութիւն վասն նուիրակին և վասն տալոյն զՀոգեբաժին Հօրն իւրոյ զկնի վախճանմանն և ի կենդանութեան զիշատակիս և նորոգին յանձնարարութիւն: Չղբանչին՝ Հռիփսիմէ և կենակցւոյն՝ Մարիամ տիկնացն և եղբօրն՝ պարոն Ալէտիքին, ողջոյն: Տէ՛ս ...:

854* Թուղթ առ Հանգուցեալ մահտեսի Խյաչիկի դուստր Յօղիտայ տիկինն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ վասն Հօր կտակին և ինդրոյն: Ողջոյն առն իւրոյ՝ պարոն Սարգսին Կիրակոսեան և դստերն՝ Աննային: Գիրք ևս առաքեցան շատ: Տէ՛ս ի փոքրադիր տե[տեր] յե[րեան] 167:

855* Թուղթ առ Աստուածատուր վարդապետն, ի պատասխանի թղթոյն. շնորհակալութիւն վասն առաջնոյ նուիրակին և յանձնարարութիւն նորոգին և թէ վասն քոյ զյանձնարարութիւն գրեցաք Բեթղէճէմեան պարոն Յովհաննէսն¹⁵³:

856* Ի Ջուղայ - Թուղթ առ Հանգուցեալ մահտեսի Խյաչիկի կին Գէրինազ խաթունն, ի պատասխանի թղթոցն, թէ ահա նոր նուիրակ Յակոբ վարդապետին պատուիրեցաք, որ տեղեկացեալ զիրացն դարձուցանել տացէ զկին եղբօրորդւոյն քո տէր Աւետիսին՝ յաներէն իւրմէ: Եւ թէ զիրանացի պատճառ չունելով ընդդիմասցի, պատժելոց եմք: Ողջոյն տէր Աւետիսին և իւրայնոցն ամենից:

Թուղթք ի քաղաքն Բաղդաստ

857* Ի Բաղդաստ - Թուղթ առ աղայ Ալէքսանն Մուրատխանեան, ընդ նոր նուիրակ Յակոբ վարդապետին. յանձնարարութիւն վասն նորա և թէ նմա պատուիրեալ եմք, որ Եփրեմ վարդապետի առաքեալ տէր Սրապիոն քահանայն ընդ ձեր այրի քահանային չկառավարիցի, այլ իմն Հոգս առնել: Ողջոյն կենակցւոյն՝ Խոլցի խաթունին և որդւոցն՝ Ղուկաս և Մարկոս աղայիցն: Տէս ի փոքրագիր տե[տեր] 163 էրեսն:

858* Թուղթ առ պարոն Միքայէլն Տէր-Մինասեան. յանձնարարութիւն վասն նոր նուիրակին, յիշումն առաջմէ գրեալ թղթոց մերոց և Հարկ վասն կատարելոյ զկտակ Հանգուցեալ Մարգար աղային: Եւ պատուէր վասն ինամատար լինելոյ ընտանեաց նորին: Տէս ի նոյն տետեր յերեսն 265: Յով[սէփիոս], շարական, սա[ղմոս]:

859* Թուղթ առ Հանգուցեալ մահտեսի Թումիկի որդի տիրացու Յակոբին. մխիթարութիւն վասն Զօրն և օրհնութիւն ինքեան: Ողջոյն մօրն եղբարցն և քերցն: Տէս ի նոյն տե[տեր] յե[րեսն] 164: Շարական:

350ա

860* Թուղթ առ աղայ Ղուկասն Ալէքսանեան. յիշումն ի մարտի 5 գրեալ թղթոյն մերոյ և ծանուցումն առաքման մերոյ զնոր նուիրակ, որոյ վասն և յանձնարարութիւն և յաղագս Հանգուցեալ Մարգար աղայի կտակին Հարկ, զի կատարեսցէ և ընտանեաց նորին մուղայէթ լիցի: Տէս ի մեծ տետեր յերեսն 2239: Յով[սէփիոս], շարական, սա[ղմոս]:

861* Թուղթ առ Հանգուցեալ աղայ Մարգարի կենակից Կատարինէ տիկինն. յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ մխիթարութեան. շնորհակալութիւն վասն նուիրակին և յղեալ յիշատակացն և յորդորիչ լինելոյն կտակակատարացն առնն իւրոյ՝ առ

¹⁵³ Մրան հաջորդում է «Թուղթ և կոնդակ ի Ջուղայ» խորագիրը, որը, սակայն, չի լրացվել:

ի վճարել զկտակաւ խոստմունսս նորին վասն Սրբոյ Աթոռոյս: Ողջոյն գաւակացն յանուանէ: Տէս ի նոյն տե[տեր] յե[րեան] 2238: Հարական, սա[ղմոս]:

862 Կոնդակ ի վերայ տեղոյ մերային ժողովրդեանն. շնորհակալութիւն վասն գանձանակական և այլ արդեանցն ժողովելոց, ձեռամբ գործակալ Փանոսին և մաստեսի Թումիկին Հանգուցելոց և Նաշապետին, և ընդ նուիրակ Եփրեմ վարդապետին Հասելոց, և բան վասն յիշեալ Նաշապետին Հաստատելոյ ի գործն գանձապետութեան: Տէս ի մեծ տետեր յերեան 2041:

863* Թուղթ առ գանձապետ պարոն Նաշապետն Գասպարեան. շնորհակալութիւն վասն նուիրակին առաջնոյ և յանձնարարութիւն վասն նորոգին և ծանուցումն Հաստատելոյն զինքն ի կոնդակոջն, ի գործ գանձապետութեան և պատուէր արիութեամբ կատարել: Եւ միամտութիւն առ մեզ Հասուցանելոյն նուիրակին զիւր նմա յանձնեալ դրամն: Ողջոյն բարեկամին իւրոյ վարդապետ պարոն Պետրոսին¹⁵⁴: Տէս ի տե[տեր] տէր Փի[լիպպոսի] 504: Հարական, սա[ղմոս]:

864* Թուղթ առ պարոն Աղէքսանդրն Խյանբաբեան. շնորհակալութիւն յաղագս նուիրակ Եփրեմ պետին և յանձնարարութիւն նորոգին: Աղայ Մարկոս և այլ որդւոց և ընտանեաց ողջոյն: Հարական, սա[ղմոս]:

865* Թուղթ առ պարոն Յակոբն Սէթեան. շնորհակալութիւն վասն ընծայելոյն զմի արծաթեայ բուրվառ յաղագս Հոգւոյ Հանգուցեալ կողակցւոյն և զմի ապակեղէն ջաշ վասն կենդանի Գրիգոր որդւոյն, որոյ ողջոյն և օրհնութիւն ևս: Ընդ նմին Հարսին և Թոռանն և յանձնարարութիւն նոր նուիրակին: Հարական, սա[ղմոս]:

866* Թուղթ առ պարոն Ղուկասն Գաբրիէլեան. շնորհակալութիւն վասն նուիրակին յիշատակացն և աջաւամբուրին տուեցելոց յանուն սրբազան Վեհին և վասն նոր նուիրակին յանձնարարութիւն: Մօրն՝ Թեկղի տիկնոյն ողջոյն օրհնութեամբ: Տէս ի տետեր տէր Փի[լիպպոսի] յե[րեան] 506: Հարական, սա[ղմոս]:

867* Թուղթ առ Մարթայ տիկինն պարոն Յարութիւն Սէթեան, վասն Հոգւոյ Հանգուցեալ դստերն՝ Մարիամին տուեալ

¹⁵⁴ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գանձապետ նահապետ Գասպարյանը վախճանվել է Հայոց ՌՄԾԷ. (1808) թվականին և թաղված է Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում: Օրոհոցանն տապանաւարի հարավային նիստի վեցտողանի չափածո տապանագրում նա բնութագրվում է իբրև Դուկաս կաթողիկոսի հարազատ պաշտոնյա տիրացու նահապետ՝ Ս. Աթոռի գովյալ գանձապետ, որը «պահեալ զկուտօքին ի սէր Քրիստոսի» ստատուչ տողերով (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 209, արձ. 418):

սկզբն շնորհակալութիւն: Որդւոյն՝ պարոն Գրիգորին և դստերցն ողջոյն: Շարական, սա[ղմոս]:

868* Թուղթ առ Սօֆիայ տիկինն դարբին Ղազարի, յաղագս Հոգւոյ Հանգուցեալ Կարապետ որդւոյն տուեալ սպիտակ գառ մանդիլին. շնորհակալութիւն և օրհնութիւն:

869* Թուղթ առ Հանգուցեալ գործակալ Փանոսի կին Մարիամ տիկինն. մխիթարութիւն վասն մահուան առն և որդւոյն Եփրեմին և շնորհակալութիւն վասն Հասուցեալ դրամոցն իւրոց, թէ առն իւրոյ ի կենդանութեան վասն Սրբոյ Աթոռոյս ժողովեալ և թէ զնորին Հոգեբաժինն: Ողջոյն դատերացն իւրոց Սօֆիայ և Սողոմէ տիկնացն և ազգականին իւրոյ՝ պարոն տիրացու Կիւրեղին: Տէս ի տետեր տեր Փիլիպպոսի յերեսն 505:

870 Գրեցան Համայն ի վերոյ նշանեցեալ թուղթքն Հնդկաց երկրի՝ Բասրայու և Բաղդատու, յունիս ամնոյս ... և առաքեցան ընդ ելն նորոգ նուիրակ և իմն բազմաշխատ դաստիարակ և Հոգևոր Հայր Յակոբ շնորհափայլ վարդապետին և արհի եպիսկոպոսին, որում շնորհեցէ Տէր զբարի ճանապարհ գնալ խաղաղութեամբ և դառնալ ուրախութեամբ և լի որայիւք:

350Բ

1795 թ. յուլիս - Թուղթք ի Մուշ ի Խօյ, ի Կարին և ի Ղօշավանք

871 Ի Մուշ - Թուղթ առ Սրբոյն Կարապետի վանից առաջնորդ Յակոբ վարդապետն, ի պատասխանի քանեաց թղթոցն, և մանաւանդ ի վերջնոյն, որ ի յունիսի ժէ. (17) էր գրեցեալ, վասն ամայնալոյն կողմանցս ցաւակցութեանն շնորհակալութիւն: Եւ բան վասն ուխտաւորացն ի Բայազիտոյ յետս դարձելոց և միամտութիւն վասն իւր, եթէ մեր որդի ես, և թէ կամիցիս ժողովարար առաքել ի Հիւսիսակողմն, գրեացես զկոնդակ և զթուղթ առ առաջնորդ Յովսէփ վարդապետն և ընդ Կարապետ վարդապետին յղեսցես առ մեզ, որ Հանդերձ կոնդակաւ և թղթով մերով յղեսցուք:

Ողջոյն Յովհաննէս եպիսկոպոսին և Կարապետ պետին: Պատուէր՝ զԴաւիթ վարդապետն Հաւատարմաւ յղել: Ի փոքրագիր տե[տեր] յե[րեսն] 173:

872 Թուղթ առ Ամթայ նուիրակ Դաւիթ վարդապետն, որ զգործն վճարեալ, դարձեալ էր անդ ի վանն: Պատուէր՝ ելանել և գալ ի Բայազիտ, և անտի մեզ ծանուցանել, և օրհնութիւն յաղագս ցաւակցաբար գրութեանցն վասն խառնակութեան երկրիս:

Ողջոյն վէբիլ ծերունի Յովհաննէս վարդապետին, և յիշումն առ առաջնորդն յատուկ թուղթ գրելոյ սրբազան Վէհին:

873 **Ի Խօյ** - Թուղթ առ Իսաճան աղայն, ի պատասխանի ընդ փայեկին գրեալ թղթոյն, որ ընդ պարոն Մարգարի առ ինքն գրեալ թղթոյն յղեալ էր: Յորում, թէ թէպէտ գրուածք ձեր յայտնի առնեն, որ Յովհաննէս վարդապետն առ ինքեանս պաշէն սարտարն և Չափարդոպին առ շաշն արգ գրեալ ընդ նմա ռաղամբերել տայցեն, սակայն Յովհաննէս վարդապետն ընդ Նախճուանայ նուիրակին գրեալ թղթոյն ծանուցեալ էր, թէ գնամ առ շաշն: Ուրեմն գրեսցես մեզ ընդ Յովհաննէս պետին Մարգարն կամ Ազիզն գնացի՞ն, թէ ոչ, կամ զայլ որպիսութիւն իմացեա՛լ իցես, փութով ծանուցես:

Վասն ձկնակերացն էթէ Հարցումն լինիցի, կարօղ է Յովհաննէս վարդապետն պատասխանել, զի ի ձեռն իշխօղին է:

Ողջոյն եղբօրն՝ պարոն Յակոբին և գրիչ Ղազարին, նաև Մարգար աղային Մայիլեան և պարոն Ազիզին, և խոստումն առ երկոսինսն յետոյ թուղթ գրել:

874 **Ի Կարին** - Թուղթ առ վէքիլ պարոն Հայրապետն, ի պատասխանի թղթոյն, թէ ապայն՝ շալ ղայթմանն, ղալայն և նիշատիրն, զորս յղեալ էիր ի Բայազիտ, իմացաք զՀասանին ի գրելոյ տիրացու Գէորգին, և որ Հարցեալ էիր այնու գնով վերստին զմի բեռն ապայ և շալ առնուլ, այն թմանկ էր, էթէ աժամն լինի, առնուցուս: Դաւիթ վարդապետն մեզ ևս էր գրեալ զգալն ի Սուրբ Կարապետ, գրեցաք ելանել և գալ ի Բայազիտ, և անտի իմացումն տալ մեզ:

Գրեցան թուղթքս յամնոյս Ե. (5):

875 **Ի Ղօշափանք** - Թուղթ առ առաջնորդ Յովհաննէս վարդապետն, ծանուցումն զգալատենէ Յովհաննէս պետին մերոյ ի մօտոյ շաշէն, և ի նմանէ զՖէրմանն խաթրճամովթեան բերելոյն, և այլ որպիսութեանց նորին, և պատուէր՝ զայսոսիկ որպիսութիւն ծանուցանել պարոն Գէորգին ի Կարս: Եւ թէ աշա զվէքիլ Գրիգոր վարդապետն, Հանդերձ խանի թաղային յղեցաք, յանձնեսցես նմա զլծկան տաւարսն բերել վասն գործածութեան, իսկ մնացեալքն Համաժողով պաշէսջի՛ք և մի՛ ցրեսջիք:

Աշա առ Մաշմատ բէկն ևս գրեցաք միաժողով պաշէլ տալ: Մարգսի յՉմիւռնոյ բերեալ ղովթոյն, զորմէ յայնժամ գրեցաք պաշէլ, այժմ՝ ընդ վէքիլին յղեսցես:

Գրեցաւ թուղթս յամնոյս Թ. (9):

876 **Ի Թիֆլիզ** - Թուղթ առ առաջնորդ Մարտիրոս վարդապետն, թէ այժմոյս արքայն տաճկերէն թուղթ էր գրեալ մեզ, իբր յիւրն կողմանէ երաշխաւոր լինիլ առ խանն, զի միամտիցի, և մէք զայն թուղթ յղեցաք առ խանն և ետես, բայց ոչ կարօտի

Նա մերումն երաշխաւորութեան, այլ մանաւանդ ինքնին Հաւատայ արքային և յօժարէ ի ծառայել, միայն թէ յայս նեղութեան ժամանակիս օգնութիւն խնդրէ ընդդէմ թշնամեացն: Որ և այսոքիւղ դիտմամբք էր պատասխանի գրեալ մեզ, զոր ահա յղեցաք առ արքայն, և մեք ևս իրիճայ գրեցաք: Բայց սոքա զՄուստաֆայ բէկն յղեցին ի սպաս արքային, և մեզ ևս գրեցին յատուկ մարդ յուղարկել, իսկ մեք գրեզ ցուցաք յայդր, վասն որոյ գրեմք, որ ի գալ գրոյս առ քեզ, նախ ընդ Մուստաֆայ բէկին խօսեսցիս, և |351ա| ապա ի միասին երթեալ ի սպաս արքային, ի մերս կողմանէ խօսեսցին, թէ Հոգևոր տէրի ինդիրն այս է, որ Երևանու վրա շատ երախտիս ոնիս, և Մահմատ խանն գրեզ Հայր գիտէ իւրն, և յօժարէ ծառայել: Միայն թէ յայսմ ժամանակի, յորում թշնամիք յարուցեալք են և երկիրս ամայացեալ կայ, օգնութիւն առնէ և կրկին ազատէ յերկիրս, յայնժամ առաւել ևս ի քէն տերութիւն և ի նմանէ յօժարամիտ ծառայութիւն:

Եւ թէ ըստ այժմ մտաց Հայերէն գիր ևս գրեցաք նմա, զոր մատուցես և պատասխանին ինդրեալ առցես և յղեսցես, որ իցէ թէ խանն ևս տեսցէ:

877 Թուղթ Համառօտ առ արքայն, թէ ի ներկայս Մահմատ խանն զՄուստաֆայ բէկն յղեաց ի սպաս քո, և մեզ ևս Հարկեցին յատուկ մարդ յղել, իսկ մեք զՄարտիրոս վարդապետ առաջնորդն ցուցաք, և գրեցաք նմա ի մերս կողմանէ խօսիլ առաջի ձեր: Եւ զայս Համառօտ թուղթ մատուցաք առ մեծանձնութիւնդ, զի զոր ինչ խօսիցի Մարտիրոս վարդապետն, քաղցրութեամբ լուիցես, և խոնարհեալ ի բանս աղաչանաց խանին և մեր, այցելութիւն արասցես երկրիս, որպէս և քանիցս արարեալ էս:

Գրեցան Բ. (2) թուղթքն յամսոյս Բ. (2), մոռացմամբ աստ եղաւ:

1795 թ. յուլիս - Թուղթք ի Խօյ, ի Բայազիտ, ի Վան, ի Նախչուան և ի Մեծն Պօլիս

878 Ի Խօյ - Թուղթ առ պարոն Բաբաջանն Խանբաբեան. յանձնարարութիւն վասն Հնդկաց երկրի նորոգ նուիրակ Յակոբ վարդապետին, որ և ընդ նմա յղեցաւ:

879 Թուղթ առ Իսաջան աղայն. ծանուցումն զգալատենէ Յովհաննէս վարդապետին ի շահէն և Ֆերման բերելոյն ի նմանէ, Հանդերձ սարդարի և Ջաֆարղուլի խանի մերս թղթոց պատասխանան, և շորհակալութիւն օգնականութեանցն առ նա, և պատուէր ի Շուշի զինչ անցք անցանիցին ընդ Իբրահիմ խանին, մեզ ծանուցանել, և յանձնարարութիւն վասն Հնդկաց երկրի նուիրակ Յակոբ վարդապետին:

880 **Ի Բայազիտ** - Թուղթ առ արապկերցի ՍաՀակ աղայն. յանձնարարութիւն վասն Հնդկաց երկրի նուիրակ Յակոբ վարդապետին, և պատուէր՝ վասն ի Հնդիկա առնելեաց կողմանէն զվաքիլլամայն գրեալ և կնքեալ և այլոց ևս կնքեցուցեալ յանձնեացէ նուիրակին տանիլ ընդ իւր: Եւ թէ զթամասուկդ ետուք նուիրակին և ի կալկաթայ Մովսէս աղային Խյաչիկեան գրեալ եւք Հոգ ունիլ վասն այն:

Փաշայն, որ զառ ինքն գրեալ Թուղթքս սարտարին և Ջաֆարղուլուն յղեալ էր առ մեզ, այժմ ընդ Յակոբ վարդապետին դարձուցաք, Հասուցես նմա: Իսկ ի գալն Յովհաննէս վարդապետին մերոյ յայդր ի շահէն, մոռացմամբ զՋաֆարղուլու առ մեզ գրեալ Թուղթն տուեալ է քեզ, Հասուցանել փաշային, իսկ սարտարի առ փաշայն գրեալ Թուղթն, ի տեղի նորա մեզ եբեր: ԱՀա յղեցաք զփաշայինն ինքեան տալ և զմերն առ մեզ դարձուցանել:

881 **Թուղթ** առ շուշեցի պարոն Մարգարն. ՀնորՀակալութիւն վասն յղեալ քառասնցին, որ էր վեց պաճախլու ոսկի, և Հաստատութիւն գանձապետութեանն անդ ի Ղազանչեցւոց եկեղեցւոյն, և խոստումն մինչ խաղաղութիւն լիցի ի Հուշի, յայնժամ գրել և զկոնդակն օրհնութեան:

Ողջոյն Առաքելի որդի պարոն Յակոբին և իւր որդւոյն՝ պարոն Յովհաննէսին¹⁵⁵: Ի փոքրագիր տե[տեր] յե[րեան] 87:

Ստորեւ թվարկուած անձանց ՀնորՀակալութիւն է յայտնուում նախորդ նուիրակին արուած լաւութեան Համար եւ յանձնարարուում է օժանդակել նաեւ նոր նուիրակին՝ տէր Յակոբ Սամուէլեանին եւ նրա եղբայրներին՝ Յարութիւնին եւ Ասլանին (Վան) (351ա, Ա./6), Հիւսիսօղլի մահտեսի Գրիգոր աղային (ՂարաՀիսար) (Ա./8):

882 **Ի Նախիջևան** - Կոնդակ ի վերայ տեղւոյ ժողովրդեանն. ՀնորՀակալութիւն յաղագս 47 գանձանակական արդեանցն Հասանելոց, ձեռամբ նուիրակ Յովհաննէս վարդապետին: Եւ վասն նոր գանձապետ Հաստատութիւն, մինչ առաջինն գնալ կամեցեալ է ի սուրբ Երուսաղէմ:

351բ

883 **Ի Մէծն Պօլիս** - Թուղթ առ Թագւոր և Մուրատ ամիայիցն. ՀնորՀակալութիւն վասն զմի ձեռք զգեստուցն ժամարարութեան, զոր ընծայեալ էին Սրբոյ Աթոռոյս, ի յիշատակ ինքեանց և ծնողացն իւրեանց և պապուն իւրեանց՝ մահտեսի Մկրտչին: Տէ՛ս ի մեծ տե[տեր] յերեան 2056:

884* **Թուղթ** առ պատրիարգի եղբօրորդի տէր Պօղոսն, ի պատասխանի թղթոյն, զոր ընդ Թագւոր և Մուրատ ամիրայից նուիրեալ զգեստուցն գրեալ էր: Տէ՛ս ի փոքրագիր տետեր յերեան

¹⁵⁵ Շուշեցի պարոն Մարգարին՝ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու գանձապահուոյթյան հաստատուոյթյան առիթվ հղված նամակի համառոտագրուոյթունը տես ԴՀՊ, գիրք Գ., սյուն 648:

88: Այս երկոքին թուղթքս թեպէտ ի յուլիս ամսոյս ԺԷ. -ին (17) գրեցաւ, սակայն վասն խառնակութեան կողմանցս, մնացին մինչև ի նոյեմբերի ԺԷ. -ըն և յայնժամ յղեցան, որպէս յայտ է ի Կարնոյ վէրիլ պարոն Հայրապետի թղթոյն¹⁵⁶:

885 1795 թ., յուլիս - Թուղթ ի Հնդիկս ի քաղաքն Կալկաթա առ պարոն Աստուածատուրն Մուրատխանեան, վասն Հասուցանելոյն զկտակ եղբօրն և վասն առաջնոյ նուիրակին, և յանձնարարութիւն վասն նոր նուիրակին¹⁵⁷:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 37աբ

886 1795 թ., յուլիս - Դարձեալ ի Կալկաթա առ աղայ Էլիազն Մինասեան. ՀնորՀակալութիւն վասն յիշատակացն, և յանձնարարութիւն վասն նոր նուիրակին¹⁵⁸:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 37բ-ձա

887 1795 թ., 12 յուլիսի - Դարձեալ ի Կալկաթա առ աղայ Մինասի դուստր և աղայ Խօջամալի Սաֆարեան կենակից Կատարինէ խաթունն ազնուուհի, վասն յիշատակացն և նուիրակին ըստ մտաց վերնոյ թղթոյդ¹⁵⁹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 38աբ

888 1795 թ., 12 յուլիսի - Ի Մատրաս առ աղայ Յովաննէսն աղայ Հաւամիրեան վասն տրոցն, և վասն յիշատակի¹⁶⁰:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 39ա

889 1795 թ., 12 յուլիսի - Դարձեալ ի Մատրաս առ Հոփսիմէ տիկինն Հանգուցեալ Յակոբջանի՝ որդւոյ աղայ Հաւամիրի, ՀնորՀաւորութիւն վասն որդէծնութեանն և ՀնորՀակալութիւն ապակեղէն ջաշին¹⁶¹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 40աբ

¹⁵⁶ Կ. Պոլսի պատրիարքի եղբորդի տեղ Գողոսի՝ Թագվոր և Մուրատ ամիրաներից ստացած զգեստների առթիվ գրված նամակի պատասխան գրության համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 648:

¹⁵⁷ Կալկաթայի պարոն Աստվածատուր Մուրադխանյանին՝ իր եղբոր կտակի և նախկին ու նոր նվիրակների առնչությամբ հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 644:

¹⁵⁸ Կալկաթայի էլիազ աղա Մինասյանին հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 644:

¹⁵⁹ Կալկաթայում բնակվող Մինաս աղայի դուստր և խոջամալ աղայի կենակից Կատարինե խաթունին հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 644:

¹⁶⁰ Մադրասի Հովհաննես աղա Շահամիրյանին հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 644:

¹⁶¹ Մադրասում բնակվող Հոփսիմէ տիկնոջը տարբեր աղթքներով հղված վավերագրի ամբողջական հրատարակությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 645-647 (հմմտ. վավ. 890):

Էլիազ Մինասեանը (Կալկաթայ) նուիրել է «զերկուս լուսորին ժամաշապիկս՝ ծաղկեայ եախովք» (ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, 3Ցա): Նոյն օրը՝ աղայ Յովհաննէս Հաճամիրեանին ուղղուած նամակում նշում է, որ Եփրեմից իմացել էր Յովհաննէսի կնոջ մահուան մասին: Յովհաննէսը նուիրել էր Հարիւր ուսւիի՝ կնոջ յիշատակին երեք պատարագ ստանալու ակնկալիքով: Վե՛հը ստացել է նաեւ 50 ուսւի կտակով խոստումը գեանջեցի ՅօՀան Աղամիրեանից, բացի այդ Յարովթին Յարեանի Հետ նաեւ ուրիշ կտակներ էին ուղարկել (39ա):

890 **1795 թ., 12 յուլիսի** - Դարձեալ, ի Մատրաս, առ Հռիփսիմէ տիկինն Հանգուցեալ Յակոբջանի, որդւոյ աղայ Հաճամիրի, շնորհաւորութիւն վասն Հարսանեաց որդւոյն՝ աղայ Նազարին և նորին որդէծնութեանն, և շնորհակալութիւն վասն սուեալ յիշատակացն և այլն:

(Սկիզբն ի Յովսէփ Մարութեանի կնոջ թղթոյն)

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 39բ-40ա

Թուղթ, ըստ որի՝ Եփրեմից տեղեկացել էին, որ Հռիփսիմէի որդին՝ աղայ Նազարն ամուսնացել եւ տղա է ոնեցել՝ կոչելով Հոր՝ Յակոբջանի անուամբ, այս առթիւ եւ ի յիշատակ իւր Հանգուցեալների՝ տիկին Հռիփսիմէն նուիրել էր զմի արծաթեայ սաղաւարտ «վասն Հանգուցեալ ծնողացդ զերկու Հրաշատեսիլ պատկերս Սուրբ Աստուածածնի, նրբանկարս ի վերայ ապակեղինաց, զերկուս սպիտակ լամպաս ժամաշապիկս, զերկուս ուրարս ի կարմիր ծաղկեայ մախմուրէ, և զմի կանաչագոյն և ոսկեթել ասխանագործ սքող սկզոյ, անուամբ մերով յատկացեալ» (ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, 39բ):

891 **1795 թ., 12 յուլիսի** - Դարձեալ ի Մատրաս առ աղայ Նազարն Յակոբջանեան, թոռն աղայ Հաճամիրին, շնորհավորութիւն վասն որդէծնութեանն և շնորհակալութիւն ապակեղէն ջահին¹⁶²:

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 40աբ

892 **1795 թ., 12 յուլիսի** - Թուղթ ի Բասրա առ պարոն Յարովթինն Սահակեան, շնորհակալութիւն վասն եկեալ նուիրակին և յանձնարարութիւն վասն նոր առաքելոյն¹⁶³:

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 40բ-1ա

¹⁶² Մադրասի նազար աղա Հակոբջանյանին՝ որդեծնոյցան առթիվ հղված նամակի համառոտագրոյցունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 647:

¹⁶³ Բասրայի պարոն Հարոյցուն Սահակյանին՝ նորեկ նվիրակի կապակցոյցամբ հղված նամակի համառոտագրոյցունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 647:

Մարտիրոս վարդապետն վասն անցիցն մերոց և վասն մխիթարական թղթոցն, զորս գրեցաք առ Հանգուցեալ մէլիք Աւետիքի որդիսն և եղբայրն, և պատուէր յաղագս աւանդիցն, զորս յառաջագոյն յղեալ էաք անդ՝ առ մէլիք Աւետիքն և առ սա ի պահպանել:

Յորմէ սիրով և օրհնութեամբ և քրիստոսական սուրբ ողջունիւ ծանիր սիրելի և Հոգևոր որդի մեր և Հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս՝ Մարտիրոս աստուածիմաստ վարդապետ: Չի երկար ժամանակ եղև, յորում ի քէն զթուղթ ոչ ընկալաք և մէք ևս չկարացաք գրել ի պատճառս դառնաղէտ անցիցն անցելոց զերկրաւս և զմեօք: Չորս դեռ ոչ Համարձակ գրել կամելով ի պատճառս ճանապարհական վտանգիցն, առագաստիւ և Համառօտ գրեմք ահա:

Քանզի ի տարագրիլ բնակչաց երկրիս և յամայնաւն, մինչ մէք ևս զանդեայն և զոչխարսն մեր յղեցաք ի Ղարս, կամէաք մէք ևս խոյս տալ ընդ մի կողմն, սակայն նկատելով լոր ի սրիկայիցն երկրիս (որք գունդ-գունդ եղեալք ի յաւեր և յաւարս էին պարապեալք) և թէ ի յարտաքուստ զի թէ ի դարցեացս մերոց Հինից և թէ յարտաքուստ եկողացն ասպատակաց անկարծիք աղաւաղելոց էր սուրբ Տոնս, վասն որոյ զամենակերպ նեղութիւնս յանձն առեալ մնացաք:

Եւ ի յանկարծ գալն սարդարին, մինչ խանն զմարդիկ յղեաց ընդ առաջ և զհաշտութեան բանս առաջագրելով, մէք ևս ի մեծագունէն նոցա նախ զնոմոս ընկալեալ գոլով թուղթ գրեցաք առ սարդարն և նասաղճի ինդրեցաք, զոր և յղեաց ի պահպանութիւն Սրբոյ Աթոռոյս և գեղջս: Ապա և մէք գնացաք ի տեսութիւն, որք իբրու մարդասիրութեամբ ընկալան զմեզ: Բայց մինչև յելանելն իւրեանց ի տեղտջէն ի ԼԵ. (35) աւուրս մնացաք արգելեալ ի բանակի անդ: Եւ թէ զորչափ նեղութիւնս և վնասս կրեցաք, ոչ է ի դէպ այժմ գրել:

Իսկ թէպէտ բազում եղև վիշտն մեր և ծանր պարտք ևս դիզեցան ի վերայ մեր, սակայն նախախնամութեամբն Աստուծոյ շինութիւն Սրբոյ Աթոռոյս և գեղջս մերոյ անխանգարելի մնաց և դարձաք մէք ի Սուրբ Աթոռս և սարդարն գնաց ի Գեանջա: Յետ այնորիկ գնացաք Երևան և զխանն ևս տեսաք և ջանացաք անտի զօգնութիւն ինչ գտանել պարտուցն մերոց, որ չէղև և դարձեալ եկաք ի Սուրբ Աթոռս, և կամք վարանեալ առ ի Հարեւ կերպ իմն դարձուցանելոյ զպարտատեարսն առ ի մէնջ: Որոյ վասն Աս-

տուևած հոգասցէ: Եւ զայսքան ալէկոծութիւնս և վնասս կրեալ, տակաւին չունիմք զանդորրութիւն, մինչդեռ մրրիկն պաշարեալ կայ զկողմամբքս: Ուստի հայցեմք ի բարերար Փրկչէն մերմէ՝ իննայելլեկեղեցի իւր |45թ| սուրբ, զօրացուցանելով զգինտորեալն անուամբ իւրով՝ զերկրպագուս ամենահաղթ սուրբ նշանին:

Բայց արդ, թէպէտ ի քէն և կամյայլոց ի քաղաքէդ զգիր ինչ ոչ եմք առեալ այլ ի բազմաց լուսք, որ ազնիւ սիրելին մեր՝ մէլիք Աւետիք աղայն վճարեալ է զկեանս իւր, վասն որոյ յոյժ տրտմեցաք և ցաւեցաք: Եւ ահա զերկուս միսիթարական թուղթս գրեցաք՝ զմին առ որդիսն նորա՝ Դարչին աղայն և այլն, և միւսն առ մի-րիշքեարպաշի պարոն Յովսէփն և եղբօրորդին նորա՝ պարոն Արսէնիոսն: Չորս և յղեցաք ի ձեռս քո, զի հասուցես նոցա ի մերս կողմանէ ողջունելով զինքեանս և ասելով զՀոգւոցն վասն հանգուցելոյն:

Եւ զի լսեմք, թէ ի Գեանջա ժամանելոցն կողմանէ տեղականքդ ևս վրդովեալ են, և զծանրութիւնս Հեռացուցանեն, և վասն մերոց իրացն չգիտեմք, թէ զի՞նչ իցէք արարեալ, վասն որոյ ի թղթոջն Դարչին աղային և եղբարցն գրեցաք, թէ յառաջագոյն որ զաւանդս ինչ էաք յղեալ ի ձեռս Հոգելոյս Հօրն ձերոյ՝ Մէլիք աղային և առաջնորդ Մարտիրոս վարդապետին, և նոքա գրեալ էին մեզ՝ գլխովին պահպանութիւն առնել, այժմյետ վախճանին նորա արդեօք զի՞նչ Հոգացողութիւն արարաք ընդ Մարտիրոս վարդապետին, և նոքա գրեալ էին մեզ՝ գլխովին պահպանութիւն առնել: Այժմ՝ ձեր վախճանին նորա արդեօք զի՞նչ Հոգացողութիւն արարաք ընդ Մարտիրոս վարդապետին գրեալ ծանուցիք մեզ: Ուրեմն և քեզ՝ սիրելոյդ գրեմ, որ հաւատարիմ և սրտացաւ որդի ես Սրբոյ Աթոռոյս, և հաւատարմութիւնն առաւել յայսպիսի ժամանակի և յայդպիսի իրակութիւնս երևի: Քանզի աստանօր դիպեալ վնասն մեր էանց ըստ չափ, մի գուցէ յայդր ևս փորձութիւն ինչ պատահիցի:

Արդ, զգոյշ լիցիս և ընդ մէլիքի որդոցն խորհեսցիս, եթէ տեղականքդ կասկածեսցին և յայլ ուրեք տարցին զծանրութիւնս, դուք ևս տարջիք և մի զանց առնիցէք: Իսկ թէ Աստուծոյ ողորմութիւնն վերացուցէ զկասկածանս վտանգից, յայնժամ ևս որպէս արժանն է, այնպէս պահպանութիւն արասջիք: Ըստ որում և յառաջագոյն ընդ լուսահոգւոյն գրեալ էիք մեզ: Եւ զի՞նչ առնելն ձեր հանդերձ մեզապատշաճ որպիսութեամբք տեղոյդ գրեսցես

մեզ, զի գոնէ յայդմ կողմանէ ևս լուծցի տարակոյսն մտաց մե-
րոց¹⁶⁴:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 45աբ

ՀնորՀակալական նամակ Դաքայ (Հնդկաստան) Աէթ Աղասուն, որը նուի-
րել էր մի եբէնոսեայ գաւազան, որի գլուխ էր եաշմ եւ ակնազարդ, իսկ ինծորքն
եւ ծայրն արծաթեայ եւ ոսկեղօծ: Մէկ այլ նամակ նուիրատու տէր Մովսէս Եդիա-
զարեանին (Սէյտապատ), որին յանձնարարութիւններ ևս տրուամ նոր նուիրակ
Յակոբ վարդապետի առնչութեամբ: Էջմիածնին բերեղեայ ջաշ նուիրած եւ նուի-
րակ Եփրեմ վարդապետին օժանդակած տէր Մարտիրոսին (Բթավիա) շնորՀա-
կալութիւն է յայտնուամ եւ յանձնարարուամ օգնելու նոր ուղարկուող նուիրակին:
Նոյն բնոյթի նամակ՝ պարոն Պօղոս Աղամեանին (Մաքա):

Նամակները գրուել են 1795 թ. յուլիս ամսին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 547-52

Գանձանակական արդիւնքի Համար շնորՀակալութեան կոնդակ Թաւրիզի
Հայրութեանը: ՀնորՀակալութեան նամակ նուիրատու մէլիք Մայէլի որդի պարոն
Մարգարին (Խոյ): Սողոմօն եւ Եփրեմ վարդապետներին օժանդակելու Համար
շնորՀակալութեան նամակ պարոն Բաբային (Խոյ): ՕրՀնութեան նամակ Հոփի-
սիմէ եւ Նարինիկ կանանց (Ախալքալակ), որոնք նուիրել էին եբէնոս փայտից գա-
ւազան: Գանձանակական արդիւնքը տալու կապակցութեամբ կոնդակ Բաղէշի Ս.
Սարգիս եկեղեցու ժողովրդին: Նամակ շնորՀակալութեան Հանգուցեալ Գրիգորի
կողակից նուիրատու Մարիամին (Թամզարայ): ՀնորՀակալութեան նամակներ
նուիրատուներ՝ Բոնիսիթեան մահտեսի Մարգարին (Կարին), Հանգուցեալ Պօղոս
Միրզայեանի կին Մարիամ խաթունին (Կալկաթայ), Հանգուցեալ Ալետ Մարգա-
րեանի կին Բէկզատային (Մադրաս), տիրացու պարոն Յովսէփեան Յակոբին
(Կալկաթայ), տիրացու պարոն Յարութիւն Տէր-Խաչատրեանին (Մադրաս),
պարոն Յարութիւն Սարգիս Քեալանթարեանին (Մադրաս), պարոն Միրզայեան
Ստեփաննոսի կողակից Խաթուն ազնվուհի տիկնոջը (Կալկաթայ), աղայ Յարու-
թիւն Յակոբեանի կին Թամարին, Չորերի կին Անամարին եւ Յակոբջանի կին
Հոփիսիմէին (Մադրաս), որոնք նուիրել էին Ս. Ստեփաննոսի սեղանի վարագոյրը,
պարոն Աստուածատուր Տէր-Ստեփաննոսեանին (Մադրաս), պարոն Նիկողայոս
Յարութիւնեանին, պարոն Կարապետ Տէր-Մաթեոսեանին, պարոն Յովհաննէս
Տէր-Թադեւոսեանին, պարոն Պօղոսի կին Ովսաննային (բոլորը Սէյտապատ),
պարոն Ալետիք Յակոբջանեանին (Մուշիբանդար), պարոն Յարութիւն Չաքա-
րեանին (Բթավիա), պարոն Մուրատիսան Մէլքոնեանին (Սէյտապատ), քեալան-
թար պարոն Վարդան Սարգսեանին (Բասրա), պարոն Գէորգ Տէր-Դավթեանին,
աղայ Պետրոս Մէլիքեանի ֆոանկ (կաթոլիկ) դուստրեր՝ Ռիֆինային եւ Ինճիջա-
յին, Մաղաքիայ Սարգսեանին, պարոն Յովհաննէս Տէր-Գասպարեանին (բոլորը
Բասրայ):

¹⁶⁴ Նամակի լուսանցային ծանոթագրոյցյան համաձայն. «այս թուրք թէպէտ շարադրեցաւ
աստ, բայց ոչ գրեցաւ և յղեցաւ: Քանզի քաղաքն մատնեցեալ ի ձեռս պարսից, խղճալի
առաջնորդն ևս գերի անկաւ, և ազատեցեալ և հասեալ աստ, վախճանեցաւ» (ՄՄ ձեռ. Հ^մ
4538, էջ 45բ): Ուլիղ փակագծերի մէջ վերցված պարբերոյցունը բնագրում ջնջված է (Վ. Գ.):

Պատասխանն նամակ թփֆլիսում Երուսաղեմի նուիրակ ակնեցի Պօղոս վարդապետին: ՀնորՀակալութեան նամակներ նուիրատուներ՝ պարոն Գրիգոր Սիմօնեանին (Բասրայ), պարոն Կարապետ Ճատուրեանին (Սեյտապատ), Էջմիածնի գործակալներ մնատեսի Յովհաննէս եւ պարոն Պօղոս եղբայրներին (ի Տուրուրդուտ Ղասապայն), պարոն Խաչոյին եւ Մարիամկնոջը (Բալու), մնատեսի Գասպար ամիրային (Թօխատ), Մեծ Արմուտանի ժողովրդին, պարոն Սիմէօն քեալնիժար Սարգսեանին (Մաշկեաթ):

Նամակները գրուել են 1795 թ. յունուար-յունիս ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 342-80 (60բ-79բ)

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 351բ

894 **1795 թ. օգոստոս** - Մինչ եղև մեզ Հասանիլ ի վերջին աւուրնն յուլիս ամսոյն, աղայ Մաճմատ խան՝ շահ կոչեցելոյ եղբայր Ալիզուլի խան սարտարն եկն ի վերայ Երևանայ, և իջևանեցաւ Հանդէպ բերդին ի Չարպաղ կոչեցեալ տեղի, վասն որոյ և սրբազան Վեհ տէրս մեր դիմեաց առ նա յաղագս պաճկանութեան Սրբոյ Աթոռոյս, ուստի դասեցից այսուհետև ի բանակէն գրեալ թուղթնն ի սրբազան Վեհէն:

1795 թ. օգոստոս - **Թուղթք ի Խոյ, ի Կարին և ի Բայազիտ**

895 **Ի Խոյ** - Թուղթ առ Իսաջան և Մարգար աղայն, թէ Հարկաւորեցաւ մեզ աստէն զչորս Հարիւր թումանն փող, և թամասուկ տուեալ Չաֆարղուլի խանին, առաք ի նմանէ այժմ՝ նա զթամասուկն մեր իւր մարդովն յղեաց, և մեր զայս թուղթս գրեցաք, պարտիք ուստի և իցէ զդրամն գտեալ, յանձնեսջիք նորին սարքեարին, և զթամասուկն մեր զերծուցանել: Եւ թէ երկու ամսաչափ միջոցն քաշիցէ, զչաճն ևս Հատուցանելոց եմք, միամիտ լերուք, և զայս թուղթս փօլիցագիր, պաճկեսջիք առ քեզ, մինչև վճարեսցուք զդրամն, և յայնժամ առ մեզ դարձուցիք: Երբ զթամասուկն ազատիցէք, առ մեզ յղեսջիք:

896 **Ի Կարին** - Թուղթ առ Սրբոյ Աթոռոյս վէքիլ պարոն Հայրապետն. ծանուցումն զգալոյն մերոյ ի բանակս սարտարին, և թէ աստ պիտոյացաւ մեզ զդրամն, և առաք ի նախկին բարեկամէն մերմէ՝ Մարաղայու Աճմետ խանէն զերկու Հարիւր թումանն, այսու պայմանաւ, որ յայդր Հատուցուք նորա մարդոյն: Վասն որոյ իւր Ղասումանուն մարդովն զայս առ քեզ գրեալ թղթովն մերով յղեաց աճա: Պատուիրեմք քեզ մինչ այս թուղթ Հասցի առ քեզ, զԲՃ. (200) թումանն, թարց այլևայլութեան ուրեալ դրամ յանձնեսցես նորա մարդոյն: Բայց ի մէջ ինդրեցին եալտուղ կամ պաճաղու ոսկի տալ: Գրեմք քեզ, եթէ զինչ գնով, որ յայդր անցանիցի ոսկին և ի ձեռն բերիցես, և նորա մարդն ևս Հաճիցի գնոյն, ոսկի շինեսցես: Ըստ որում նորա լաւութիւնն շատ եղև մեզ, իսկ թէ ոչ, զուրեալ դրամն փութով յանձնեսցես, և զմեր թամասուկն զաճիրայ առնել

տուեալ, առնուցուս ի նմանէ և մեզ ծանուցես: Մէկ Հօխայաչափ ղայֆայ ընծայեսցես նմա, իբրամ առնուցուս և սիրով դիցես ի ճանապարհ:

897 **Ի Բայազիտ** - Թուղթ առ տիրացու Գէորգն Տեր-ՎաՀանեան, պատուէր՝ վասն սոյն թղթատար Մարաղայու ԱՀմէտ խանի մարդ Ղասում աղային մուղայէթ լինիլ և իբրամ առնել, և ընդ Հաւատարիմ կարաւանի յուղարկել ի Կարին գնալ:

Գրեցան ի բանակն և առաքեցան յամսոյս Ե. (5):

1795 թ. օգոստոս - **Թուղթք ևս ի բանակէն ի Կարին, ի Կարս և ի Ղօշաւանք**

898 **Ի Կարին** - Թուղթ առ վէքիլ պարոն Հայրապետն. յիշումն վասն յառաճագոյն գրեալ թղթոյն ընդ Մարաղայու ԱՀմէտ խանի մարդոյն և վերստին Հարկիւ պատուէր, զի որպէս և լինիցի, յանձնեսցէ զնոյն Բ. (2) Հարիւր թումանն նմա և իբրամ արասցէ: Եւ թէ աստի և անտի առ սրբազան թուղթ գայցէ, պաՀեսցէ մինչև ինդրիցեմք:

352ա

899 **Ի Կարս** - Թուղթ առ պարոն Գէորգն Գալստեան, թէ ի գալ սարտարին և իջևանին Հանդէպ բերդին Երևանայ, յառաջմէ զպարխանայ պատրաստեալ, վարդապետիւ առաքեցաք և զնասախճի ինդրեցաք վասն պաՀպանութեան Սրբոյ Աթոռոյս և գեղջև և անդաստանաց մերոց, մէք ևս զկնի միոյ աւուր գնացաք և ի ճանապարհին պատաՀեցաք նասախչուն, զնա առաքեցաք ի Սուրբ Աթոռն և մէք գնացաք ի բանակն, և նորա սիրով ընկալեալ զմեզ, յամենայնում աւուր, յառաւօտուն, ճաշուն և երեկոյին պատուէն կերակրով: Եւ թէպէտ զձեռօք դրամ տալ լինի, սակայն նեղութիւն չունիմք ի նոցունց և լաւ եմք Աստուծով:

Ուրեմն միամիտ լեալ զմէնջ, աղօթս արասջիք, իցէ թէ առանց մեծի վնասու իմիք զերծցուք ի ձեռաց սոցա: Բարեկամին մերոյ՝ ՄաՀմատ բէկին ևս ծանուցես զգրեալքս, որ միամիտ լիցի զմէնջ: Ի Կարին պարոն Հայրապետին ևս գրեցաք այդպէս, որ միամիտ լիցին և աղօթօղ, և յղեցաք քեզ, Հասուցես նմա:

900 **Ի Ղօշաւանք** - Թուղթ ի Ղօշաւանք առ նորին առաջնորդ ՅովՀաննէս վարդապետն, ըստ մտաց վե՛րնոյ թղթոյն:

Գրեցան թուղթքս և յղեցան ընդ Ալի բէկի մարդոյն, որ Հետ Ախլցիսայու փաշայի չուխատարին եկեալ էր ի բանակս առ սարտարն, յամսոյս ԺԳ. (13):

1795 թ. օգոստոս - **Դարձեալ ի բանակէն թուղթ ի Խոջ**

901 **Ի Խօյ** - Թուղթ առ Իսաճան և Մարգար աղայն, վասն յանձն առնելոյն իւրեանց զառաջին արարեալ փօղիցայն մեր զչորս Հարիւր Թումանն՝ շնորհակալութիւն: Եւ թէ զկնի վճարելոյն մեր զընծայն սարտարին, վասն շահին ևս ինդրեցին զընծայ, և առ այն պիտոյացաւ մեզ զդրամն մինչև ԲԲ. (2000) և ԵՃ. (500) Թումանն: Եւ թէպէտ մէք վերստին առ Ջաֆարղուլին անկաք, զի զայն դրամն ևս ըստ առաջնոյն մերով գրութեամբ գիտել ի ձէնջ, բայց նա երկիւղ կրելով գուցէ չկարողանայցէք վճարել զայնքան դրամնն, կամեցաւ նախ ընդունիլ ի ձէնջ զթուղթ յանձնառութեան, և ապա ինքն ևս յանձն առնուլ, որ և ահա գրեաց առ ձեզ զթուղթս առ այն, և մէք ևս գրեմք ձեզ, զի առ Ջաֆարղուլի իսանն զմի Թուղթ գրեսցիք, թէ խալիֆայն, եթէ ԲԲ. (2000) և ԵՃ. (500) Թումանի սանատ տայցէ քեզ, առնուցուս զսանատն և ընդունիցիս, որ մեր պարտքն է:

Եւ եթէ երկոքեանքդ չկարողանայցէք վճարել սիրելեաց մերոց՝ Մէհրապ աղային և պարոն Բաբաջանին, ի մէնջ ողջունելով ասասցիք, որ նոքա ևս օգնութիւն առնիցեն ձեզ: Եւ առ այս՝ մեծապէս շնորհակալ լինելոց եմք զձէնջ:

Գրեցաւ յամնոյս Ի. (20):

1795 թ. օգոստոս - **Եւս ի բանակէն Թուղթ ի Գեանջայ**

902 **Ի Գեանջայ** - Թուղթ առ մէլիք Մէժլումն. ծանուցումն զանցիցն մերոց յառաջքան զգալ սարտարին և յետ գնալոյն: Եւ շնորհակալութիւն զԵաղուպ բէկէն, որ բանիւ Ջաւատ խանին եկն և Հաշտութիւն արար ընդ մէջ սարտարին և խանին Երևանայ, և զմասն ինչ պակասեցոյց ի մեծ պաշանջմանէն ի մէնջ պաշանջելոց: Նաև ուրախակցութիւն վասն յառաջադիմութեանն առաջի շահին, և ինդիր, զի ի դուռն շահին անկեալ բանից մերոց Հոգատար լինիլ:

Գրեցաւ յամնոյս ... և յղեցաւ ընդ Եաղուպ բէկին ԻԷ. (27): Մնացեալ մեր ի բանակն յաւուրս ԼԴ. (34) ի Հաշտութիւն առնելն սարտարին ընդ Երևանայ իշխօղին և յաւուր դառնալոյն իւրոյ յետս, դարձաք և մէք ի Սուրբ Աթոռս, վասն որոյ գրեցից այսուհետև ի Սրբոյ Աթոռոյս գրեալ թղթոց զմիտան:

903 **1795 թ. [օգոստոս]** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովաննէս վարդապետն. զկնի դառնալոյն մերոյ ի յաղտեղի երեսացն պարսից:

Յորմէ սիրով և օրհնութեամբ և զօրացուցիչ շնորհիւ քրիստոսաէջ սրբոյ տեղոյս ծանիր իսկապէս սիրելիդ մեր և Հարազատ որդի Սրբոյ Աթոռոյս՝ Յովաննէս աստուածիմաստ վարդապետ: Ձի յառաջքան զայս փոքր ինչ գրեալ եմք սիրելոյդ զանցիցն մե-

րոց ի բանակէն պարսից, այնուհետև ևս մինչև ցգնալն նոցին թէ գորքա՛ն նեղութիւնս և տառապանս կրեցաք, այժմ՛ի սուղ ժամանակիս յայսմիկ ոչ լինի գրել: Բայց բազմագուլթ ողորմութեամբն Աստուծոյ շինութիւն Սրբոյ Աթոռոյս և գեղջն մերոյ և խղճալի ժողովրդեանն ազատեցաւ յաւերմանէ և մնաց ի կայութեան: Վասն որոյ փառք և գոհութիւն եղիցի ամէնողորմին Աստուծոյ:

Արդ, զայլ երկար որպիսութիւնսն մեր և երկրիս թողովյետոյ գրել, այժմ՛ զայսքան միայն իմասցիս, որ սարտարն Հաշտութիւն արարեալ ընդ իշխողին մերոյ, դարձ և մեք ևս եկաք ի Սուրբ Աթոռս ի սոյն ամսոյս ԻԸ. (28): Վասն որոյ ահա զսիրելի որդին մեր՝ զԳրիգոր վարդապետն առաքեցաք յայդր, որ զտաւարսն մեր բերցէ ի Սուրբ Աթոռս: Ընդ որում զայս թուղթ գրեալ առ սիրելիդ, պատուիրեմք, զի ի Հասանիլն նորին յայդր, զտաւարսն մեր և զոչխարսն ուր և իցեն, ժողովել տացես ի սուրբ վանքդ և լաւապէս ըստ Հաշտի դաւթարին մերոյ վերահասու եղիցիս, և ապա յանձնեսցես վերոյիշեցեալ Գրիգոր վարդապետին բերել:

Իսկ և թէ որչա՛ փ իւղ, պանիր և բուրդ է եղեալ ի տաւարացն և յոչխարացն, այնոցիկ ևս վերահասու լինելով, գրեսցես մեզ գիտել:

Բայց դու ևս զքանի մարդս դիցիս ընդ Գրիգոր վարդապետին, զի անվնաս բերցես, որոյ աղագաւ շնորհակալ լինելոց եմք զստոյգ սիրելոյդ և օրհնաբանելոց զքեզ:

Այլև՝ թփքնիզ գիւղն, որ տեղւոյդ մերձ է, մեր միրզայի օղլուշաղն անդանօր են: Վասն որոյ գրեմք սիրելոյդ, զի թէ ի վանացդ իցէ և թէ ի գետղորէիցն, զմի արապայ յղեսցես անդ բերել զօղլուշաղն միրզային ի վանքդ, և ապա մեր ուղտուցն բարձեալ յուղարկեսցես ընդ Գրիգոր վարդապետին Հասանիլ աստ:

Նաև՝ լուեալ մեր, թէ Ալի բէկն ևս է գնացեալ ի Ղարս, վասն որոյ այժմ՛ զմի թուղթ գրեցաք առ Մահմատ բէկն և առ Ալի բէկն՝ ծանուցանելով |515| զորպիսութիւնսն Սրբոյ Աթոռոյս և մեր, և ինդրելով զտաւարսն:

Ի յայս միտ գրեցաք և զթուղթ մի առ Գէորգ աղայն և զայս երկու թուղթս մի պաշարան արարեալ, յղեցաք առ քեզ, զոր դու ևս Հասուցես առ յիշեալ Գէորգ աղայն: Այսպէս գիտելով, և թարց զանցառութեան զգրուածն մեր կատարելով, ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԽԴ. (1795) թուոջս և ի ...:

ՄՄ ձեռ. Հ^ր 4482, էջ 514-15

904 1795 թ. օգոստոս - թուղթ ի Ղարս առ Գէորգ աղայն, ծանուցումն զորպիսութեանցն մերոց:

Յորմէ սիրով և օրհնութեամբ և պաշպանողական շնորհին միաճառէջ սրբոյ տեղւոյս ծանուցումն լիցի ստոյգ սիրելոյդ մերում

և օգտաճան որդւոյդ Սրբոյ Աթոռոյս՝ Տերամբ զորացեալ բարեպաշտօն և իմաստնախոհ Գէորգ աղայիդ: Քանզի յառաջ քան զայս սակաւ ինչ գրեալ և ծանուցեալ էմք սիրելոյդ զորպիսութեանց մերոց ի բանակէն պարսից: Յետոյ ևս ի սոյն ամսոջս գրեալ թուղթն քոյ է էհաս առ մեզ: Իսկ մինչև զգարձ արարումն սևագունտ և դժոխադէմ զորացն պարսից, թէ զի՞նչ նեղութիւնս և զորչա՞մ փ տառապանս կրեցաք, այժմ՛ի սուղ միջոցիս յայսմիկ մի ըստ միոջէ գրելն ոչ լինի: Այլ շնորհիւ ողորմութեան բազմագթին Աստուծոյ մնաց Սուրբ Աթոռս ի կայութեան և ի Հաստատութեան, և մեր գիւղացի խղճալի ժողովուրդքն ևս իբրու թէ ի գերութենէ ազատեցեալ անվնաս կացին: Վասն որոյ յոյժ գոհութիւնս փառք լիցի պաշտպանողին Աստուծոյ:

Արդ, զայլ երկար որպիսութիւնսն Սրբոյ Աթոռոյս և մեր թողլովյետոյ գրել, այժմ՛ զայսքանս միայն իմասցիս, որ թէպէտ բազում վիշտք և տառապանք Հասին մեզ, բայց զնաղտն տուեալ զվէճն ազատեցաք, և խիլայիւք դարձաք ի Սուրբ Աթոռս ի սոյն ամսոյս ԻԸ. (28)–ին և արեանարբու գազանքն ևս Հաշտութիւն արարեալ |381| ընդ Երևանու նստողին, և զպատանդս առեալ ի նմանէ, դարձան յերկրէ աստի:

Մէք ևս այժմոյս ի Սուրբ Աթոռոյս գոլով, պատրաստութիւն տեսանեմք զնալԵրևան ի տեսութիւն խանին: Եւ արդ, մինչ այսպէս ողորմութեամբն Աստուծոյ խաղաղութիւն եղև ընդ երկիր մեր, յաղագս որոյ ահա զսիրելի և զհոգևոր որդին մեր՝ զԳրիգոր վարդապետն առաքեցաք ի Ղօշավանք և զթուղթ գրեցաք առ առաջնորդ Յովաննէս աստուածիմաստ վարդապետն, որ զտաւարսն մեր ուր և իցեն, ժողովել տացէ ի վանքն և անտի յուղարկեսցէ ընդ Գրիգոր վարդապետին ի Սուրբ Աթոռս:

Եւ զայս թուղթ ևս առ ազնիւ սիրելիդ մեր գրեցաք, զի կարճ ի կարճոյ գիտասցես զորպիսութիւնսն մեր և միամիտ լիցիս:

Նաև՝ զթուղթ մի ևս առ ազիզ բարեկամն մեր՝ Ալի բէկն և ՄաՀմատ բէկն գրեցաք. ծանուցումն զանցիցն մերոց և ինդիր վասն դարձուցանելոյ զտուրսն: Չոր և ահա ընդ թղթոյս ի մի պաՀարան եղեալ յղեցաք ի ձեռս քոյ, որ Հաստուցես ինքեանց, բարև առնելով ի մէնջ:

Այլև՝ յանցելում ամին, որ զճրագուս ինդրեցաք, դու ևս գրեալ էիր, թէ ժամանակն անցեալ է, յետոյ ի ժամանակին առնլոց և յղելոց եմ, այժմ՛ գրեմք սիրելոյդ, որ զՀարիւր լիտր թիլանի լաւ ճրագուս առցես վասն Հարկաւորութեան սրբոյ Տանս և Հաւատարիմ՛եկողի յղեսցես ի Սուրբ Աթոռս, որոյ աղագաւ շնորհակալ էմք զսիրելոյդ: Որ և լեր ողջ ի Տէր և զորացեալ ի նոյն միշտ. ամէն:

Գրեցաւ ի ՌՄԽԴ. (1795) թուոջս և ի յօգոստոսի ..., ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 380-81

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 352ա

1795 թ. - **Թուղթք ի Կարս և ի Ղօշավանք**

905 **Ի Կարս** - Թուղթ առ Գեորգ աղայն. ծանուցումն զվերս դարձմանէն ի բանակէ սարտարին և նորա Հաշտութիւն առնելոյն ընդ Երևանայ խանին և յետ դառնալոյն: Եւ թէ որովհետև իբրև խաղաղութիւն եղև, զվէքիլ Գրիգոր վարդապետն մեր յղեցաք ի Ղօշավանք առ առաջնորդն, որ զտաւարնս |352բ| մեր ժողովեալ ի վանքն իւր, յղեսցէ ընդ Գրիգոր պետին: Առ այս և գրեցաք զթուղթ մի առ Ալի և Մահմատ բեկն և ընդ թղթոյս յղեցաք քեզ, Հասուցես նոցա բարևելով:

Նաև Ճ. (100) թիւանի լիտր ճրագու առեալ, յղեսցես Հարկիւ ընդ Հաւատարմի:

906 **Ի Ղօշավանք** - Թուղթ առ առաջնորդ Յովհաննէս վարդապետն. ծանուցումն զսարտարի Հաշտութիւն առնելն և յետս դառնալն: Եւ թէ՛ զվէքիլ Գրիգոր վարդապետն ահա յղեցաք զվեր տաւարն և զոչխարն ուր և իցէ ժողովեալ ի սուրբ վանքդ: Թուովյանձնեսցես նմա:

1795 թ. սեպտեմբեր - **Ի Ղօշավանք**

352բ

907 **Թուղթ առ նորին առաջնորդ Յովհաննէս վարդապետն**, ի պատասխանի թղթոյն ընդ Սիմէօն և վէքիլ Գրիգոր վարդապետացն գրեցելոց. ծանուցումն սալամաթ և անթերի Հասուցանելոյն նոցա զտաւարն և զոչխարն, շնորհակալութիւն վանս յայնքան միջոցի պահպանելոյն զնոսա, և զնոցին իւրն, պանիրն և զբուրդն առաքելոյն: Եւ թէ պարոն Գեորք թուղթն թէպէտ մեզ էհաս, բայց չունելով այժմ զժամանակ պատասխանին գրելոյ, յետոյ թէ առ նա և թէ առ բեկն զշնորհակալութեան թուղթ եմք գրելոց վանս պահպանութեան տաւարացն:

Գրեցաւ յամնոյս Թ. (9):

908 **Ի Խօյ կամի Բաղդատ** - Թուղթ առ Հնդկաց երկրի նորոգ նուիրակ Յակոբ վարդապետն. ծանուցումն երից թղթոցն առ մեզ Հասանելոյն և առ այն զշնորհակալութիւն: Եւ թէ իմացաք զտկարութենէդ և ցաւեցաք, Աստուած առողջութիւն տացէ և բարի ճանապարհ: Եւս ծանուցումն միջակօրէն անցիցն, որ զմեօք ի բանակս սարտարին: Եւ մինչև ցայժմ, թէ ի Խօյ լինիցիս, յիսաջան աղայէն զերկարօրէնն իմանալոց ես (ընդ որում և յղեցաւ զայս թուղթ), իսկ թէ ոչ, զայսքան ինչ իմացեալ լեր միամիտ, յոյս ի Տէր, որ վնաս ինչ չլինիցի Սրբոյ Գահիս:

909 **Փոխուկայ առ սա**, թէ լուաք, որ Յօհաննջան աղայն և նորին փեսայ աղայ Յովհաննէսն վախճանեալ են: Ուրեմն տես, թէ ստոյգ է, զՅօհաննջան աղայի թուղթն և պարզեն Հոգևոր ծածկա-

բար պաշտօնացեալ, որ ունէր չլայտնիցի: Բայց լուսարարն ի թուղթն իւր վասն այնմ գրեալ է, բացցես զթուղթն, եթէ ի փոստուլայի է գրեալ զայս բան, փոստուլայն հանցես և վերստին զթուղթն շինեսցես: Իսկ թէ ոչ, թուղթն առ մեզ յղեսցես, որ փոխել տայցեմք և առաքիցեմք:

Գրեցան յամսոյս Ժ. (10):

910 **Ի Թիֆլիզ** - Թուղթ առ առաջնորդ Մարտիրոս վարդապետն ընդ Չարքեազ Յակոբին. անորոշ ծանուցումն զանցիցն, որ ի սարտարէ շահին ի բանակն, և խաղաղութեամբ դառնալոյն մեր ի Սուրբ Աթոռս: Եւ Հարցումն ծածկեալ բանիւ, թէ լսեմք, որ նորին մեծն բազում զօրօք գայ ի վերայ երկրիդ, և ասէն ևս զմէլիք Աւետիքէն, թէ վախճանեալ է: Ուրեմն դուք վասն այն իրացն Հոգս իմն արարեա՛լ էք, թէ ոչ, կամ թէ ի նորոյ էք առնելոց: Գրեցես մեզ անվտանգ ճանապարհաւ և կամ ի վերայ Հորակեալու, որ միամիտ լինիցիմք:

Գրեցաւ յամսոյս ԺԴ. (14):

911 **Ի Ղօշափանք** - Թուղթ առ նորին առաջնորդ Յովհաննէս վարդապետն ի դարձ թղթոյն ընդ Ղարային գրեցելոյ: Վասն տաճկերէն Գ. (3) թղթոցն, թէ մինն առ մեզ էր գրեցեալ, մինն առ խանն և մինն առ Ասատ բէկն, որք և յղեցան ձեռամբ Ղարային: Մահմատ բէկն զշահի որպիսութենէն ինդրեալ էր ծանուցանել, և մեր գրեցաք, քեզ ևս ահա գրեմք, ի Հարցանելն այնպէս պատասխանեսցես:

Նաև յանձնարարութիւն վասն Ղարայի Հօրեղբօր որդի Հայրապետին ի լինիլ մուղայէթ:

Ողջոյն Գէորգ աղային և պատուէր՝ Հասուցանել նմա զողջոյն՝ ծանուցանելով զժամանակ չունելոյն մեր յատուկ գրելոյ: Գրեցաւ յամսոյս ԺԷ. (17):

353ա

912 **Թուղթ** ի Խօյ առ Իսաճան աղայն, թէ իհարկէ, դուք բան զմեզ լաւ գիտէք զշահի Թիֆլիզ առնուլն, բայց մեր այժմ առ սարդարն և Ջաֆարղուլին թուղթ գրեալ մեր մարդուին յղեցաք, թէ Իսաճան աղայն ընդ մեզ բերաք և զկէսն պարտուց մերոց Երևանու և ի Բայազտոյ Հոգացեալ վճարեցաք և վասն մնացելոցն ևս մարդ յուղարկեալ Արդրում, որ զայնս ևս Աստուծով նախքան զվատայն Հասուցանելոց էմք: Եւ եթէ քեզ Հարցցեն, այսպէս Համեմատ գրուածոց մերոց պատասխանեսցես, որ այլայլութիւն չլինիցի բանին:

Նաև գրեցաք, թէ մեր յայնժամ մինչ յօրտունն ընդ ձեզ էաք, ասացիք, թէ շահին արդ գրեա և որովհետև գալոց վախսն էր, չկարացաք ձեզ Հարցանել, թէ ինչպէ՞ս գրեմք: Հիմա օճախի բա-

րեկամն դուք էք, Հալբաթ ինչպէ՛ս պիտի գրվի, կամ ո՛ւմ հետ յղենք, մեզ իմացումն տացէք:

Ողջոյն եղբօրն պարոն Յակոբին և օրհնութիւն շնորհակալութեամբ վասն բարեշնորհութեանցն, ցուցելոց առ Հնդկաց երկրի նոր նուիրակ Յակոբ պետին:

[Գրեցաւ յամսոյս] Ի. (20):

1795 թ. Հոկտեմբեր - Ի Խօյ

913 Թուղթ ի Խօյ առ Իսաճան աղայն գրեալ յԵրևանու ընդ Հիւսէին խանին, թէ առ քեզ Հասանելի դրամն պատրաստեալ յղելոց եմք ի քանի օրս ի Բայազիտ, Հալբաթ Մատթեոսն յղեսցես անդ մեր քեզ տուեալ սանատին, որ դրամն նմա յանձնիցի և սանատն տացի մեր մարդոյն: Ընդ նմա և զմի զաւզ գրեսցես, թէ Բ. (2) Հազար վեց Հարիւր թումանն լրապէս ինձ էՀաս, որ այն ևս տացի մեր մարդոյն զինի դրամոյ յանձնելոյն Մատթեոսին: Եւ ծանուցումն զքանիցս գնալոյն մեր յԵրևան, և այժմեանս ևս, ի պատճառս շահի յանուն սրբազանին առաքեալ խիլային, և թէ Աստուծով ի քանի օրս դառնալոց եմք:

[Գրեցաւ յամսոյս] ԺԴ. (14):

Յայսմ միջոցի եկին ի սրբոյն Սաղիմայ լուսարար Բաղտասար վարդապետն, նուիրակ Կարապետ վարդապետն Կեսարիոյ և նուիրակ Գէորգ վարդապետն Ուռոմելոյ, Հանդերձ վկայական թղթով պատրիարգին առ ի ձեռնադրիլ եպիսկոպոս, և ունէին ընդ ինքեանս զթուղթս և զընծայս ի պատրիարգէն և ի միաբանից ոմանց: Այլև ի Կեսարիոյ և ի Կարնոյ, որոց իւրաքանչիւր պատասխանին գրեալ առաքեցան ընդ սոսա յամսոյս ԺԹ. (19):

914 Ի սուրբ Երուսաղէմ - Թուղթ առ նորին պատրիարգ Պետրոս վարդապետն, ի պատասխանի թղթոյն ընդ Բաղտասար, Կարապետ և Գէորգ վարդապետացն, թէ աՀա ըստ ինդրոյդ ձեռնադրեալ զսոսա եպիսկոպոս դարձուցաք: Եւ շնորհակալութիւն վասն յղեալ ԱՃ. (100) մարի ոսկի աջաՀամբուրին, և ծանուցումն զանցիցն կողմանցս և վշտակրութենէ մերմէ¹⁶⁵:

¹⁶⁵ Հիշատակված է Երուսաղեմի Հայոց պատրիարհ Պետրոս Եվզովացին (1793-1800 թթ.), որի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Մաղափա աբ. Օրմանյանը: Իր նախորդ Հովակիմ Քանաֆեոցու (1775-1793 թթ.) մահից հետո տեղի միաբանությունը Սարգիս Կուզիկյան եպիսկոպոսի և արդեն տարեց Մարտիրոս վարդապետի գլխավորությամբ առաջարկում է Սրբոց Հակոբյանց վանքի լուսարարապետ Պետրոս եպիսկոպոսի թեկնածությունը: 1794 թ. փետրվարի 14-ին՝ Տեառնընդառաջի տոնին, կատարվում է Պետրոս Եվզովացու արքունակության պաշտոնական արարողությունը (Մաղափա աբ. Օրմանյան, Ագգապատում, հ. Բ., սյուն 3672-3673):

Երուսաղեմի Պետրոս պատրիարհին հասցեագրված նամակների համառոտագրություններից տե՛ս նաև վավ. 1318, 1436:

915 **Թուղթ առ նորին միաբան թէոդորոս վարդապետն, ի պատասխանի թղթոյն և ի շնորհակալութիւն վասն նոր դարբասջութեան, և ի շնորհակալութիւն վասն աջաւամբուրին՝ Ե. (5) մարի ոսկոյն:**

916 **Թուղթ առ Հադու նուիրակ Պետրոս վարդապետն, ի պատասխանի թղթոյն |353թ| և շնորհակալութիւն վասն Ժ. (10) Պօլսոյ ոսկոյ յղեալ աջաւամբուրին:**

Հնորհակալական նամակներ նուիրատուներ Աբրահամ վարդապետին (վան). «յաղագա Գ. (3) մարի ոսկի աջաւամբուրին» (353թ, Ա./1), Զաքարիա եւ Մատթէոս վարդապետներին. «վասն Բ. (2) ֆսող ոսկոյ աջաւամբուրին» (Ա./2, 3), մանտեսի Յովհաննէսին (Օտամիշ). «վասն յղեալ Ա. (1) շուրջառին, Ա. (1) փորուրարին և Ա. (1) ջուխտ պաղբանին» (Ա./4), Սրբուհի տիկնոջը (Խյասգիւղ). «վասն Բ. (2) մարի ոսկոյ աջաւամբուրին» (Ա./5), Յարովթին ամիրայի դուստր մանտեսի Նազդուին. «վասն Դ. (4) մարի ոսկոյ աջաւամբուրին» (Ա./6), Ճապի մականուամբ մանտեսի Ներսէսին. «սակա Բ. (2) մարի ոսկոյ աջաւամբուրին» (Ա./7), մանտեսի Յակոբին (Սիվրիհար). «վասն Ժ. (10) ղուռուշ խոստացելոյն» (Ա./8), Պաշպեղիրիկեան մանտեսի Յովհաննէս ամիրային (Կեսարիայ). «վասն առաքելոյն զմի կերմեստտ, Դ. (4) սապոն, Բ. (2) համիրիշ, Բ. (2) թեոլիկ» (Ա./9):

353Բ

917* **Ի Կարին - Թուղթ ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն, ի պատասխանի չորից թղթոյն, ծանուցումն զանցիցն երկրիս և զմեր քանիցս գնալ յԵրևան և զառմանէ թփֆլիզու քաղաքին: Եւ թէ զմի բեռն ապայ և ղալայ, որ յուղարկեալ էիր, էհաս մեզ: Ամթայ նուիրակն եկն ի Սուրբ Աթոռս և թօխաթու նուիրակ Բարսեղ պետի թուղթն էհաս և իմացաք զնորա ի յԱրապկեր ԱՌԴՃ. (1400) ղուռուշ փօլիցայ տալն Ճիլեարճի օղլի մանտեսի Յակոբին և Դարբաստարենց մանտեսի Մարտիրոսին, որոյ վասն և ղաւզ էիր ինդրեալ, աւա յղեցաք՝ հանդերձ թղթոյ պատասխանին:**

Այլև՝ Պօլսոյ նուիրակ Գալուստ պետի երկու թուղթքն ևս էհաս և զոր գրեալ էիր, թէ 5000 ղուռուշ տուեալ էնա սրբոյ Երուսաղէմայ վէքիլ տիրացու Սարգսին, որ դու յայդր առեալ էս: 2000 ղուռուշ քոյդ գրովն տուեալ է Մասեհեան պարոն Եսայոն, որ դու հատուցես և 1000 ղուռուշ տուեալ է կարնեցի պարոն Յակոբին, որ դու ի նորա օրթախ Աբրահամիցն առնուա, ինքն Գալուստ վարդապետն ևս էր գրեալ: Բայց ոչ միայն զայդոսիկ, այլև գրեալ էիր, թէ 1149 ղուռուշ, 20 փարայ ետուք թարծիմանեան Պօղոսին վասն հատման վիճոյն ընդ պարոն Հայրապետին գիտութեամբ պատրիարգին /354ա/ և հիւճէթ առաք: Թէ Պօղոսին տուածն և թէ դատաւորաց խարճն այն է եղեալ զոր դու հատուցանելոց էս, որոց չորից ղալամից ջամն է 9149 ղուռուշ, 20 փարայ և բաց յայսցանէ՝ 400 ղուռուշ տուեալ է մեր տիրացու Նահապետի եղբօրն: 100 ղուռուշ տուեալ է շամշոնցի Նաւասարդի ումեմն ըստ գրեցե-

լոյ մերում և Թօխաթու նուիրակ Ներսէս պետին ինչս է գնեալ և յղեալ յայդր, գինն 369 ղուռուշ, 18 փարայ: Եւ ամենիցն աղագաւ ղալզ էր ինդրեալ: Եւ մէք, թէ վերոյ քեզ Հասեալ փօլիցայիցն աղագաւ և թէ ներքոյ այլոց Հասեալ Գ. (3) ղալամիցն, որք ի միասին Բ. -ց ջամն է 10018 ղուռուշ, 38 փարայ: ԱՀա մէկ ղաւզ գրեալ առաքեցաք 1 ընդ թղթոյս Հասուցես նմա ի միամտութիւն: Բայց զպատասխանին թղթոյն յետ աւուրց ինչ Հասուցեալ յղելոց եմք: Երկու ուխտաւորքն, որ զպարտս իւրեանց չէին տուեալ և զսանատն նոցա դարձուցեալ էիր առ մեզ ընկալաք: ԺՉ. (16) Հատ ղազանի տակերն, որ զերկու բեռն շինեալ յղեալ էիր, էՀաս և զհարձն ըստ խոստմանդ գրելոց ես:

Տեղոյդ նուիրակ Գրիգոր պետին՝ ի քաղաքդ գալն իմացաք և նորին աբեղայ Փիլիպպոս վարդապետն եկն ի Սուրբ Աթոռս: Մարաղու ԱՀմէտ խանի մարդոյն 2000 վաթսուներկոց տալը իմացաք, ընդ նմա գրեալ թուղթդ ո՛չ է Հասեալ: Իւսուֆ փաշայի՝ ի քաղաքն գալդ իմացաք, ընդ նմա լինիլն և Փիլիպպոս ամիրայի որդի պարոն Մկրտչին, առ որ և ըստ ինդրոյդ զթուղթ յանձնարարութեան գրեցաք, տացես իւրն ի մէջ ողջունելով:

Գրեցաւ [յամսոյս] ԺԹ. (19):

918* **Ի Խոյ** – Թուղթ ի Խոյ առ Իսաջան աղայն, թէ մինչ թուղթդ էՀաս, գնալ պահեցաւ մեզ յԵրևան, անտի ընդ Հիւսէյին խանին մէկ թուղթ գրեցաք, որ զտիրացու Մատթէոսն՝ Հանդերձ մեր սանատինն յղեսցես ի Բայազիտ առ ի յանձնիլ դրամոյն: Այժմ ընդ վէքիլ Գրիգոր վարդապետին զդրամնն յղեցաք և գրեմք, եթէ տիրացու Մատթէոսն առաքեալ էս, բարուք է, իսկ եթէ ոչ էս յղեալ և մէկ ղաւզ ևս գրեսցես, թէ ի կողմանէ շահի սարդարի և Զաֆարղուլի խանի ընծայիցն Բ. (2) Հազար Չ. (6) Հարիւր թումանն ինձ լրապէս էՀաս ի Հոգևոր տիրէն: Եւ պատուիրեցաք ևս վէքիլին, եթէ տիրացու Մատթէոսն եկեալ չլինիցի, ընդ տիրացու Գէորգին յանձնեսցեն պարոն Նաւասարդի Բոննիադեան և ի նմանէ ղաւզ առեալ բերցեն:

Գրեցաւ [յամսոյս] ԺԹ. (19):

919* Թուղթ ի Բայազիտ առ պարոն Նաւասարդն Բոննիադեան, թէ յառաջմէ գրեցաք Իսաջան աղային, որ յայդր զմարդ առաքեսցէ, որ դրամն մեր յանձնեսցի նմա: Այժմ զդրամն ընդ վէքիլ Գրիգոր վարդապետին յղեցաք, եթէ նորին մարդն եկեալ է նմա յանձնեսցեն: Իսկ թէ ոչ՝ ընդ տիրացու Գէորգին քեզ են Հասուցանելոց, յառնուլդ՝ մէկ ղաւզ գրեսցես վասն քեզ Հասմանն և յետոյ դու նորա մարդոյն յանձնեսցես ի գալն:

920* Թուղթ առ Մատէնու սառաֆ Փիլիպպոս ամիրայի որդի Մկրտիչ Ամիրազատէն, որ ընդ Կարնոյ նոր Իւսուֆ փաշա-

յին եկեալ է, շնորհավորութիւն վասն գալստեանն և ինդիր մուղայէթ լինիլ պարոն Հայրապետ /354բ/ վէքիլին մերոյ և այլ մերայնոյ երթևեկաց:

354բ

921* **Ի Կարին** - Թուղթ առ Շահար վէքիլի մահտեսի Յովհաննէան, շնորհաւորութիւն վասն նոր մահտեսութեանն և շնորհակալութիւն վասն Բ. (2) մարի ոսկւոյ աջահամբուրին:

922* **Ղաւզ** առ **Գալուստ** վարդապետ նուիրակն Պօլսոյ, վասն 10018 ղուռուշ, 38 փարային, զոր ի Թուղթն պարոն Հայրապետին տեսցիս:

923* **Ի Թօխաթ** - Թուղթ առ Թօխաթու նուիրակ Բարսեղ վարդապետն, թէ Թուղթդ մինչ էհաս գնացաք առ սարդարն ի Չարպաղ կոչեցեալ տեղին, և անդ երկարեալ և զկողմանցս և մեր վնասակրութիւն յաւելեալ, երկարեցաւ զժամանակն թղթոյդ պատասխանին գրելոյ, այժմ ահա գրեմք և յԱրապկեր, որ ՌԴՃ. (1400) ղուռուշ փօլիցայ էիր տուեալ Ճիկեարձի օղլի մահտեսի Յակոբին և Դարպատերէնց մահտեսի Մարտիրոսին, պարոն Հայրապետն ևս էր ծանուցեալ, ահա զղաւզ գրեալ յղեցաք: Իսկ, որ գրութեամբ տիրացու Գէորգին ի տունն Սահակ աղային Հինգ Հարիւր Ծ. (50) ղուռուշ էիր տուեալ, յայնմանէ տիրացու Գէորգն դեռ մեզ բան չէ գրեալ, զգոյշ լէ՛ր այդպիսի արարողութիւնս, որ Հաստատուն լիցի:

924* **Ղաւզ** առ սա վասն ի Թուղթն յիշեցեալ ՌԴՃ. (1400) ղուռուշին:

Գրեցաւ [յամնոյս] ԺԹ. (19):

925* **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ Սրբոյ Աթոռոյս վէքիլ պարոն Հայրապետն, ի պատասխանի թղթոյն ընդ փայեկին գրեցե[լ]ոյ, յորում թէ գիտեցաք զՆերսէս պետի յայդր Հասանիլն և գրեցաք նմա, որ ելեալ գայցէ: Եթէ Հին դրամ ունիցի, ընդ իւրն բերցէ, իսկ թէ նոր լիցի, կնքեալ ամանաթ դիցէ քոյդ մօտն:

Եւ առաքելի եղեալ նոր դրամքն ևս ընդ Հին վաթմննոցի և ղուռուշի փոխես, և թէ քանի մի փարայ ևս գլուխ ինդրեն տաս, և Հին փողն ամանաթ շինեալ մեզ Հաստուցես, զի նորն աստ ո՛չ անցանի: Վասն թիֆլիզեցի պարոն Ստեփանիս, որ գրեալ և ղաւզ էիր ինդրեալ իմա: Այժմ չգիտեմք, թէ Հին վաթմննոցն և մանէթն որպէս անցանի ի Հաշտարիսան, և չէ ևս յայտ, թէ զի՛նչ կայ մեզ անդ կամ չկայ, և մանաւանդ Թուղթ առաք ի Յովսէփ պետէն, որ քանի ինչ դրամէ եղեալ Սրբոյ Աթոռոյ պարոն Գէորգին յղեալ է, և մեզ չէ Հասեալ:

Ողջունեսցէ ս պարոն Ստեփանիս, որ մեզ ապաստան չլինիցի և այլ իմն կերպիւ ճար տեսցէ: Եւ մխիթարութիւն վասն Հան-

գուցեալ եղբօրն իւրոյ Ֆառնկուլին: Եւ պատուէր պաշարանաւ թուղթքն տալ Սրբոյ Երուսաղէմի նոր ձեռնադրեալ եպիսկոպոսաց տանիլ ընդ իւրեանց:

[Գրեցաւ յամսոյս] ԻԲ. (22):

926* **Ի Թօխաստ** - Թուղթ առ Թօխասթու դարձեալ նուիրակ Ներսէս վարդապետն, ի պատասխանի թղթոյն ի Կարնոյ գրեցելոյ ընդ փայեկին, վասն գալոյն և չգալոյն իւրոյ, որ Հարցեալ էր, գրեցաւ թէ զորքան Հին դրամ ունիցիս ընդ քեզ առեալ գայցես ի Բայազիտ: Եւ Հասանիլդ այնր վերստին մեզ ծանուցես, իսկ նոր դրամն առ պարոն Հայրապետն կնքեալ ամանաթ դիցես: Ողջոյն պարոն Խաչատուրին և պարոն Սերօբին:

[Գրեցաւ յամսոյս] ԻԲ. (22):

927 **1795 թ., 19 Հոկտեմբերի** - Թուղթ ի սուրբ Երուսաղէմ առ մահտեսի Յարուլթին ամիրայի դուստր մահտեսի Նազրուն, ի պատասխանի թղթոյն և օրհնութիւն վասն յղեալ ժամուցին¹⁶⁶:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 45բ-6ա

928 **1795 թ., 19 Հոկտեմբերի** - Թուղթ ի սուրբ Երուսաղէմ առ Մատթէոս վարդապետն, ի շնորհակալութիւն վասն յղեալ աջաՀամբուրին¹⁶⁷:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 46աբ

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 355ա

1795 թ. Հոկտեմբեր - **Թուղթք ի կողմնա Սիւլցիայու և ի Ղօշաւանք**

929 **Ի Վրդուլին** - Կոնդակ ի վերայ Արդուլինու մերային ժողովրդեանն. շնորհակալութիւն վասն ընդունելոյն զառաջնորդ և նուիրակ Յովհաննէս վարդապետն և տալոյն նմա զգանձանակն ԺԱ. (11), զնուիրակութիւն Ճ. (100) ղուռուշ և Բ. (2) ղուռուշ Հոգեբաժին, և Հաստատութիւն ի գանձապետութեանն պարոն Ղազարին, որ յառաջնորդութենէն ի նորոյ կարգեցեալ էր, և ի աթո-

¹⁶⁶ Երուսաղէմի մահտեսի Հարոյրուն ամիրայի դուստր Նազրուն ուղղված օրհնության նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 648:

¹⁶⁷ Առաջին նամակն անձամբ բերել էր Երուսաղէմի միաբան Բաղդասար վարդապետը, որի հետ նաև չորս ոսկի որպէս «ժամուց»: Երկրորդ նամակը, որը դարձյալ Բաղդասար վարդապետն էր բերել, ունէր ևս երկու ֆնախի ոսկի (ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 46բ): Երուսաղէմի Մատթէոս վարդապետին հղված շնորհակալագրի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 648:

ուակալութեան Գատարողի պարոն Գրիգորին, ի կողմանէ Աթո-
ւոյս:

[Գրեցաւ յամսոյս] ԻԸ. (28):

930 **Ի յՕքրոպակերտ** - Կոնդակ ի յՕքրոպակերտ ի վե-
րայ Հասարակութեանն վասն արդեանց գանձանակին և նուիրա-
կութեանն և այլ տրոց շնորհակալութիւն և Հաստատութիւն ի նո-
րոգ ակթոռակալութեան պարոն Մկրտչին:

[Գրեցաւ յամսոյս] ԻԸ. (28):

931* **Թուղթ օրհնութեան առ տեղւոյն իշխան Ազնաու-
րօղի Յովհաննէս աղայն.** շնորհակալութիւն վասն ընդունելու-
թեանցն նուիրակին և առաջնորդին, և պատուէր մուղաւթ լինիլ
յիշեալ ակթոռակալին ի գործոյն Հանգամանաց:

932* **Ի յՕքրոպակերտ** - Կոնդակ ի յՕքրոպակերտ, ի վե-
րայ Հասարակութեանն, վասն արդեանց գանձանակին և նուիրա-
կութեանն և այլ տրոց շնորհակալութիւն, և Հաստատութիւն ի նո-
րոգ ակթոռակալութեան պարոն Մկրտչին:

933 **Ի Հօքամ** - Կոնդակ ի Հօքամ ի վերայ Հասարակու-
թեանն. շնորհակալութիւն վասն նուիրելոյն զտաւարս ի տեղի
նուիրակութեան:

Օրհնութեան եւ շնորհակալութեան նամակներ նուիրատուներ պարոն Յօ-
հանին (Օքրոպակերտ). «վասն Հօրն կտակեալ Ժ. (10) դուռուշ տալոյն և Ժ. (10)
դուռուշ ևս Հոգեբաժին» (355ա, Ա./4), Հօքամ գիւղի տէր Յարութիւն քահանային.
«վասն ընդ նուիրակին շրջելոյն և ձեռնտուութեանն» (Ա./6), պարոն Միքայելին եւ
նրա եղբայրներին (Հօքամ). «վասն զմի լուծ գումչին» (Ա./7), տէր Մատթէոս քա-
հանային (Դէտաշէն). «վասն ընդունելութեանն նուիրակին և վասն տալոյն զմի լուծ
եղն» (Ա./8), պարոն Մատոյին. «որ ի տեղի քառասնիցին զմի եղն էր տուեալ»
(Ա./9), Թամամ տիկնոջը (Ախցիսայ). «վասն Ժ. (10) դուռուշ քառասնիցին»
(Ա./10), մխիթարութեան նամակ Ախքալակի գործակալ տէր Ստեփաննոսին.
«վասն մահուան կնոջն» (Ա./11), Ղօշափանից առաջնորդ Յովհաննէս վարդապե-
տին. «երկարօրէն զանցիցն կողմանցս և Թիֆլիզու ծանուցումն» (Ա./12): Նամակ-
ները գրուել են Հոկտեմբերի Լ.-ին (30):

934 **1795 թ., Հոկտեմբեր** - Թուղթ ի սուրբ Երուսաղէմ առ
ի Հնդկաց դարձեալ գործավճար նուիրակ Պետրոս վարդապետն,
ի պատասխանի թղթոյն և ի շնորհակալութիւն վասն յղեալ աջա-
Համբուրին:

Յորմէ սիրով և օրհնութեամբ բազմաւ, քրիստոսաձիր սուրբ
ողջունիւ և Հոգեգրուարճ շնորհիւ միաճնատէջ սրբոյ տեղոյս, գի-
տասջիր սիրելի և Հոգեւոր որդի մեր և Հարազատ զաւակ Սրբոյ
Աթոռոյս՝ Պետրոս աստուածիմաստ վարդապետ: Չի յառաջմէ

լսելով մեր զվճարմանն է գործոյդ ի Հնդիկս, և դարձ առնելոյդ և ժամանելոյդ անվտանգ ի սուրբ տեղիսդ, արդարև զերծ եղեալ ի տարակուսանաց և ստացեալ զմիամտութիւն, գոհացաք զՏեառնէ, որ պահպանեաց և առաջնորդեալ Հասոյց ի յանքոյդ սին () վայրդ Հանգստեան: Իսկ այժմ թուղթ քո, զոր գրեալ էիր յապրիլի 27 ձեռամբ Սրբոյ Աթոռոյդ լուսարար Թեոֆիլ Պաղտասար շնորհունակ վարդապետին, և միւս երկուց միաբանից վարդապետացն, էհաս առ մեզ, որով ծանուցեալ մեր զողջ և բարեկեաց գոլդ, առաւել ևս ուրախացաք:

Եւ զոր յիշեալ էիր, թէ քանիցս թուղթ էս գրեալ մեզ և զպատասխանի չես ընկալեալ յիրաւի միանգամ և երկիցս Հասեալ են ի քէն թուղթքդ առ մեզ, և ոչ է յաջողեցեալ մեզ առնել զփոխադարձս, իսկ այն ոչ ի կամայական զանցառութեանէ, այլ ի յոլով զբաղմանց և կենամաշ կրից արգելս ածելոյ: Բայց արդ, որ ի նշան Հաստարմատ սիրոյդ որդիականի և ի յայտարարութիւն փափագանացդ զօրհնութիւն ժառանգելոյ, յղեալ էիր ձեռամբ Պաղտասար բարեբարոյ վարդապետին զԹ. (10) զարմահպուպ ոսկիս Պօլսոյ, ընկալաք սիրով և շնորհակալութեամբ օրհնեցաք զքեզ: Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուցէ, և շէն պահեսցէ, և յարածամ ի իննամս իւր ոռնելով փրկեսցէ յամենայն վտանգից Հոգւոյ և մարմնոյ, զարդարելով առաւել ևս բարի վարուք և փայլեցուցանելով ի շնորհս իւր:

Իսկ զմերս որպիսութեանց թէ գիտել կամիցիս, ի Հերոնն Հետէ մինչև ցայսօր թէ որքա՞ն դառնագոյն անցք անցին ընդ երկիրս և ընդ մեզ, և զորչա՞ փ վնասս կրեցաք, ոչ լինի աստանօր լիապէս գրել, և անհնարին աղէտ աւերմանն թիֆլիզու և գերութեան բնակչաց էած ի վերայ մեր զսուգ սաստկագոյն, և յապառնի վտանգից կասկածանաց ևս ոչ եմք ապահով, և կամք մնացեալ միայն յողորմութիւն Տեառն ապաստան: Բայց յայսպիսի նեղութիւնս և տարակուսանս գոլով ամենեւին անհանգիստ, և ևս զոր մի որոշեալ ի յաջողելոյ շնորհաց Հոգւոյն Աստուծոյ ձեռնադրեցաք յեպիսկոպոս զսիրելի որդիան մեր զյիշեալ մտերիմ միաբանսն սրբոյ Աթոռոյդ, և խաղաղութեամբ արձակեցաք, ոչք բարեաւ վայելեցեն զպատիւ սուրբ աշտիճանի իւրեանց:

Եւ զայլ երկարապէս լսելիս և իմանալիս ի խոհական գրաբերէդ ոռնիս իմանալ: Ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԽԴ. (1795) թուոջս և ի Հոկտեմբերի ..., ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

Սրբոյ գահիս միաբանք եպիսկոպոսք և վարդապետք, զորս ողջունեալ էիր, ընկալան զողջունդ և ինքեանք ևս զքեզ ողջունեն սիրով:

ՄՄ ձեռ. Հ^ր 4483, էջ 381-82

1795 թ. նոյեմբեր - Թուղթ **ի Տիգրանակերտ առ վերոյ յիշեալ Սուրբ Կիրակոս եկեղեցւոյ գանձապետ մահտեսի Մարտիրոս աղայն, ի պատասխանի թղթոյն, շնորհակալութիւն վասն նուիրակ Դաւիթ վարդապետին և գանձանակադրամինցն Հասուցելոց. ծանուցումն զորպիսութեանց կողմանցս, և յանձնարարութիւն վասն նոր նուիրակին:**

Յորմէ ժամանեսցէ...

Եւ ընդ շնորհապարզ և օրհնութեան նամակիս, գիտասաջիր ազնիւ սիրելիդ մեր և բարեխոճ որդի Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Չի յամենան սեպտեմբերի գործաւարտ նուիրակն ձեր և սիրելի որդին մեր՝ Դաւիթ խոհեմափայլ վարդապետն անվտանգ եկեալ ժամանեաց ի Սուրբ Աթոռս, Հանդերձ առատ արդեամբք օրհնեալ ժողովրդեանն վիճակիդ, և զքոյդ Հարազատական թուղթն մատոյց մեզ, զոր ընկալեալ թէ ի թղթոցն և թէ ի բերանոց գրաբերին, գիտացաք զողջոյն ազնիւ անձինդ և ուարախացաք: Եւ յաղագս մեծապատիւ ընդունելութիւն առնելոյդ ինքեան նուիրակին և օժանդակելոյդ ի գործն, մեծապէս շնորհակալ եղաք զսիրելոյդ:

Իսկ զքանի ամաց գանձանակադրամն Սրբոյ Աթոռոյս զժողովեցեալն ի քէն ի Սուրբ Կիրակոս եկեղեցւոյ ձերում թՃՁԸ. (988) ղուռուշ և Ի. (20) փարայ, զոր յանձնեալ էիր նմա, նա ևս ընդ արդեանցն ամբողջ Հասոյց առ մեզ: Եւ մեր ընկալաք սիրով և օրհնեցաք զաստուածասէր ժողովուրդն սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ, և զքեզ՝ զաշխատակիր սիրելիդ մեր, վասն որոյ և զայս թուղթ օրհնածիր գրեալ ի վերայ քոց, զշնորհակալութեան կոնդակ մի ևս առ օրհնեալ ժողովուրդն գրեցաք և ընդ թղթոյս յղեցաք ի ձեռս քոյ, զի ընթեռնուլ տացես ի լուր ամենեցուն՝ առ ի միամտիլ և զուարճանալ Հոգւով:

Ուրեմն Տէր օրհնեսցէ զքեզ անանց օրհնութեամբ և վարձատրեսցէ, ազատելով ի վտանգից և պաշտելով միշտ ի ինամն իւր քոյսնովքդ բնաւիւք և զամենայն իրս քո առ ի բարին յաջողելով: Իսկ վասն Յօհան վարդապետին զեղբօր որդին նորա և Հոգևոր որդեակն մեր՝ զՄկրտիչ շնորհունակ վարդապետն, զի գործն նուիրակութեան կատարեսցէ: Ուստի գրեմք ստոյգ սիրելիլուոյդ, զի զորքան ինչ սէր և ընդունելութիւն առնելոց էիր Հանգուցեալ Յօհան վարդապետին, զնոյնս արասցես Մկրտիչ խոհեմամիտ վարդապետին ի գալն ի քաղաքդ առ ձեզ, և յամենայն կողմանէ մխիթարիչ և օգնական լիցիս, և զի՛նչ երկարեցից, ահա ինքն Հանդերձ գործովս քոյդ բարեպաշտութեան է յանձին և մեր յոյժ շնորհակալ լինելոց էմք զսիրելոյդ օրհնութեամբ:

Այլև՝ զորպիսութեանց մերոց և կողմանցս թէ կամիցիս իմանալ, Համառօտիւ, զայսքանս իմա, զի ներքինի բռնաւորն, շահ կոչեցեալ նմանակից Դանիէլի տեսլեան չորրորդին, որ ուտէր, մանրէր և այլն, յայսմ ամի անթիւ զօրօք եկեալ ի յԱրցախ գաւառ, եղ-

բայր իւր սարտար կարգեալ յղէց ի վերայ Երևանու և ինքն նստաւ յանդիման բերդին Շուշոյ: Յորոց Համբաւոյ, տիրօղն Երևանու ի բնակչաց երկրի զմասն մի ի բերդն Հաւաքեաց և զայլ ամենայն փախոյց և ամայացոյց զերկիրս, և մեզ ևս Հարկեաց ելանեալ: Բայց մէք գիտելով թէ յեյանէն մեր աստի խանգարելոց էր սուրբ տունս, զամենակերպ նեղութիւնսն յանձին առեալ, մնացաք: Եւ յառաջմէ զվարդապետ մի յղեցաք առ շահն և սարտարն, և Ֆէրման և թուղթ ընկալաք ի նոցանէ: Եւ իբրև սարտարն կեալ երկոտասան Հազարաւ նստաւ Հանդէպ բերդին, գնացաք ի տեսութիւն, որք իբրու մարդասիրութեամբ ընկալան զմեզ: Բայց ի ԱԵ. (35) աւուրս մնացեալ ի բանակին, զոչ սակաւ տառապանս կրեցաք և վնասն էանց ըստ չափ: Այլ գոհութիւն Աստուծոյ, զի պաշտօնեցաւ շինութիւնն Սրբոյ Աթոռոյս և խղճալի գեղջս: Ապա յետ պատերազմելոյ նորա ընդ բնակիչսն բերդին, և հուր արկանելոյ քաղաքն, և աւերեցելոյ զմասն երկրիս, պատանդս առեալ ի խանէն, դարձաւ առ շահն, և զմեզ խիլայիւք դարձոյց ի Սուրբ Աթոռս: Եւ ապա շահն ամենայն զօրօքն գնացեալ ի վերայ Թիֆլիզու: Առին զքաղաքն բազում Հարուածովք և զանհարմար մարդիկս ածին ի գերութիւն:

Ո՛հ աղէտիս, թէ որպիսի ժամանակի և զի՛նչ անցից պատաճեցաք:

Եւ այսու ամենիւ շահն ինդրեաց զխանն երկրիսս և նա չկարելով ընդդիմամալ, գնաց և վնաս մեր ի շահէն խիլայք և գերմանց եկին, իսկ ինքն դարձաւ ի վերայ Շուշոյ:

Եւ ահա զայսքան ալեկոծութիւնս և վնասս կրեալ մեր, տակաւին չունիմք զՀանգստութիւն մտաց և զօգնութիւն ինչ յուստեքէ, այլ կամք միայն յողորմութիւնն Աստուծոյ ապաստան: Եւ դու, սիրելիդ մեր, յառաւելութենէ սիրոյդ և Հաւատարմութեամբ, որ առ Սուրբ Աթոռս և առ մեզ աննուազելի մնալով, ողջ լեր ի Տէր. ամէն:

Գրեցաւ ի ՌՄԽԴ. (1795) թուոջս և ի նոյեմբերի ..., ի լուսակերտ Աթոռս Սուրբ Էջմիանծին:

Բազմաւ սիրով ողջոյն և օրհնութիւն տամք ազնիւ եղբօրն քոյ և ստոյգ սիրելոյն մերոյ՝ բարեպաշտօն մահտեսի Գասպար աղային և բարեզարմ որդւոյն քոյ՝ պարոն Յօհաննէսին, որում և Տեառնէ ժամանեսցէ այցելութիւն ի փարատումն վշտալի դիպուածոյն, այլ ամենայն ձերայնոցն, զորս և յանձնեմք ի բարեգթութիւնս Տեառն Աստուծոյ՝ կալ մնալ խաղաղութեամբ և բարօրութեամբ:

Դարձեալ՝ ծանիր և զայս, զի յայդր արախչինձի մահտեսի Մկրտիչն, որոյ տան երրորդ մասն վախուժ է Սրբոյ Աթոռոյս, այժմ կամի փախանակ այն բաժնին զայլ իմն յատուկ առնուլ և վախուժ առնել սմին, որոյ աղագաւ իւրն և խօջայ կարապետին

և գանձապետ մահտեսի Յակոբին գրեցաք, և քեզ սիրելիոյդ ևս գրեմք, որ վերահասու լիցիս, յաստուածակոյս կողմանէ, զի էթէ ի Հայոց մահալայն այնպիսի Հաստատ և լաւ տուն գտանի, առցէ և վախուճ արասցէ Սրբոյ Աթոռոյս: Եւ թէ ի Հայոց մահալայումն և լան չիցէ, մնասցէ առնուն և դարձեալ գրեսցիք մեզ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 525-27

Հնորհակալութեան եւ օրհնութեան նամակներ նուիրատուներ՝ Մարիամ տիկնոջը եւ Նուրիխաթունին (Կ. Պօլիս), Կ. Պօլսի դիպակեստճինն եւ դերձակ վարպետացն, որ է Շէհրեմինի խօլին գանձանակադարամբ յանձնելու Համար, տիրացու Բաղդասարին (Կ. Պօլիս), որը յանձն էր առել Էջմիածնի վանքի վախուտանցն վէքիլութիւնն ու մովթալէրութիւնը: Նամակ Պարիկէց մահտեսի Սահակին, Ալամին, Վարդանին եւ Յակոբին (Վան), որով յանձնարարութիւն է տրուում նոր նշանակուած նուիրակ Մարտիրոս վարդապետի Համար: Հնորհակալութեան նամակ նուիրատուներ՝ Գրիգոր աղային, մահտեսի Յովակիմին, մահտեսի Աննա տիկնոջը, տիրացու Սարգսին (բոլորը Եւդոկիայից), Հանգուցեալ մահտեսի Սահակի որդի մահտեսի Կարապետին (Կարին), գանձապալ մահտեսի Աստուածատուրին, Սահակ աղային, Թագուհի կնոջը (բոլորը Եւդոկիայ), պայպուրտցի քերվանապաշի Միքայէլին, Մահտեսեան Եսայի աղայի եղբորորդի պարոն Հայրապետին, տպագրիչ տիրացու Պօղոսին (Կ. Պօլիս), Երանուհի տիկնոջը, պարոն Յակոբին (Եւդոկիայ): Նամակները գրուել են 1791 թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4483, էջ 12-28

Հնորհակալութեան նամակ պարոն Միքայէլին, նրա եղբորն ու որդիներին (Ախաբալակ), որոնք նուիրակ Յովհաննէս վարդապետի յորդորմամբ Էջմիածնին էին նուիրել երկու գոմէշի ձագ: Հնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ պարոն Մարտիրոսին, պարոն Յօհաննէսին (Օբրոպակերտ), օտամիջցի մահտեսի Յովհաննէս Յակոբեանին (Երուսաղէմ), Ճապի կոչեցեալ մահտեսի Ներսէսին (Երուսաղէմ): Կասնամատէնու Փիլիպպոս ամիրայի որդի պարոն Մկրտչին Հնորհատուրանք է յղուած Կարին գալու առթիվ եւ յանձնարարութիւն է տրուած նուիրակի եւ գործակալ պարոն Հայրապետի վերաբերեալ: Օբրոպակերտի ժողովրդին օրհնութեան կոնդակ է ուղարկուած նուիրակական ու գանձանակական արդիւնքի Համար եւ Հաստատուած է նորոգ աթոռակալ պարոն Մկրտչի: Հնորհակալութեան կոնդակ Հօբամու, Գետաշէնու եւ Սանձէլէքու ժողովրդին նուիրակ եւ առաջնորդ Յովհաննէս վարդապետի միջոցով մատաղացու անասուն նուիրելու Համար: Գանձանակական արդիւնքը յանձնելու նամակ Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցու ժողովրդին:

Նամակները գրուած են 1795 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 515-25

Պատասխան նամակ Դիարբեքիւրի Ս. Սարգիս եկեղեցու գանձապետ մահտեսի Յակոբին, որն ուղարկել էր գանձանակական արդիւնքը: Կոնդակ նուիրակին լավ ընդունած Աֆիոն ՂարաՀիսարի ժողովրդին, միսիթարութեան թուղթ վան նեղութեանց կրելոց: Հնորհակալութեան նամակ նուիրատու բենկանցի մահ-

տեսի Ստեփաննոս ամիրային (Կ. Պօլիս): Գանձանակական արդիւնքը յանձնելու կապակցութեամբ օրհնութեան կոնդակներ՝ Կ. Պօլիսի Ս. Լուսաւորիչ, Ղումիզաբազի Ս. Աստուածածին, Սամաթիոյ Ս. Գէորգ, Պալատի Ս. Հրէշտակապետ, Ուսկիւտարի Ս. Կարապետ, նոյն տեղի Ս. Խաչ եկեղեցիների ժողովրդին: Նուսի կամ այլուր գտնուող գանձանակադրամ ժողովրդ Աւետիք վարդապետը Հրավիրում է Գեանջայ:

Հնորակալութեան նամակներ նուիրատուններ՝ Աստուածատուր Փափակեանի որդի պարոն Գրիգորին եւ նրա քոյր Դշխոյ տիկնոջը, քաւանայ Ստեփաննոս Տէր-Յարութիւնեանին (Սեյդապատ), պարոն մահտեսի Գալուստ Աստուածատրեանին (Բոմբէյ):

Նամակները գրուել են 1795 թ. յուլիս, Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:
ՄՄ ձեռ. Հ^ր 4482, էջ 384-95, 407-10

Հնորակալութեան նամակներ նուիրատուններ՝ պարոն Թամազէնց Ստեփաննոսին (Թփֆլիս), որը նուիրել է երկու լիտր մոմ, մահտեսի Կարապետի որդի մահտեսի Անդրէասին (Ղարս), Ուչքիլիսէի վանքի միաբաններին՝ պատասխան նամակ նրանց առաջնորդ Մկրտիչ վարդապետի մահտեսի կապակցութեամբ: Առաջարկում է միաբաններից մէկին ընտրել առաջնորդ եւ Համախոսական նամակով ուղարկել Էջմիածին: Պատասխան նամակ Ախիջան աղային (Վան), որը յայտնել էր նուիրակ Աբրահամ վարդապետի մահտեսի մասին: Յանձնարարում է նուիրակի Հաւաքած մատաղացու անասունները վաճառել եւ նրանց դիմը միս փողերի Հետ միասին յանձնել Բայազետում Էջմիածնի գործակալ տիրացու Գէորգ Տէր-Վահանեանին՝ Ս. Աթոռ առաքելու Համար: Հնորակալութեան նամակներ նուիրատուններ՝ Հանգուցեալ մահտեսի Գէորգի Հորեղբայր մահտեսի Խաչատուրին ու նրա եղբայրներին՝ պարոնայք Յովսէփին ու Կարապետին (Ղարս), Տուտի տիկնոջը (Ղալաթիայ): Եպիսկոպոսութեան վկայականներ, որոնք տուել են Կեսարիոյ Ս. Կարապետի վանից միաբան Ստեփաննոս վարդապետին եւ նրա Հետ եկած կեսարացի Կարապետ վարդապետին (վկայականները թերի են՝ յղումներով):

Նամակները գրուել են 1797 թ. մարտ-դեկտեմբեր ամիսներին:
ՄՄ ձեռ. Հ^ր 4482, էջ 831-39

355ա

1795 թ. նոյեմբեր - Թուղթի Կարս, Ի Ղօջախնք, Ի Վան, Ի Խոյ և Ի Տիգրանակերտ

936 Թուղթի Կարս առ պարոն Գէորգ աղայն. յիշումն յառաջ քան զայս Ի [355բ] Հոկտեմբերի քանիսն յԵրևանու գրեալ թղթոյն մերոյ խանի զՉորինն տանելոյն և Ի նորայ զՉորիս յինէն ինդրելոյն առնուլ: Եւ ծանուցումն ևս կրկին գնալոյն սրբազան Վեհին Ի բերդն Ի գալ սարդարին, և Ի շահէն զխիլայս բերելոյն, և զխիլայբերն Հազիւ յագեցուցանելոյն մեծ իրօք և զսարդարն ևս:

Նաև զտանելոյն զուղտուցն մեր: Եւ թէ որովհետև անտանելի վնասակարութիւն եղև և Ի գարգոյ և յայլոց դատարկեցաք, պիտոյեցաւ մեզ յերկրէդ իմոտատիա ժողովեալ, վասն որոյ Ի պարանոցն առաջնորդին ձգեցաք, որ ժողովեսցէ: Գրեմք քեզ՝ Հարկես-

ցես առաջնորդին գրով, որ յանձն առնուցու: Եւ պատասխանն գրոյս շուտով յղեսցես:

937* **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն, ի պատասխանի թղթոյն, թէ այժմ ինայելով ի քեզ քոյդ գալն ո՛չ կամիմք, այլ զմնացուն ընդ միոյ վարդապետի յղեսցես, և ի գալն վարդապետին զսրբալոյս մեռոնն և զկոնդակն յղելոց եմք և առ բէկերն ևս զթուղթ գրելոց, թէ զայս քան նեղութիւնս կրեալ և ի զբաղմոնս լեալ կամեցաք զառաջնորդն նուիրակ առնել դուք ևս Հարկեսջիք, որ յանձն առնիցէ, և յղելոց եմք ևս վասն նոցա ընծայ: Այժմ այնմ մտօք փութով առ պարոն Գէորգն թուղթ գրեալ յղեսցաք ընդ գրոյս, շուտ նմա Հասուցես և յետոյ ևս թէ առ նա, և թէ միւս մահտեսի Գէորգն և իշխանան թուղթ եմք գրելոց: Եւ վասն գրւոյն, եթէ Արզմու և Ղարսայ ուղտք և կամ քրտաց, և երկարականց եզինք պահիցին նոր փողով գջիրայն կտրեալ յղեսցես, որ մէք աստ զդրամն տացուք:

Գրեցան յամսոյս Թ. (9):

938* **Ի Վան** - Թուղթ ի Վան առ Ախիջան աղայն, ի պատասխանի վաղապէս գրեալ թղթոցն, զպատճառն յամենալոյն՝ ծանուցանի վրդովութիւնն երկրիս և մեր անհանգստութիւն, և ծանուցումն զաղետալի՝ անցիցն երկրիս և զքաղաքին Թիֆլիզու առմանէ: Եւ թէ յայնժամ մինչ զՆերսէս պետն ինդրեալ էիք, հրաման ետուք, բայց ո՛չ լինելոյն կարաւանի արգելեցաւ և մեր անձեռնՀասութեանն միայն իսաջան աղային գրեցաք, որ ծանուցցէ քեզ և զթուղթ մի առ Աբրահամ վարդապետն գրեցուցաք: Այժմ զամենայն ինչն, թէ նաղտն, և թէ վէջն լցուցեալ յարկելն և կնքեալ յանձնեցաք իւրն ի վերայ Խօյու բերիլ առ անապատն լմայ: Բայց այն դրամովն պարտիս Հետեիլ, որ զանգակատունն կառուցեն: Եւ փաշայի թղթոյ պատասխանն ևս գրեցաք մատուցես նմա:

939* **Ի Աիւ** - Թուղթ առ միաբանն լմայ անապատին, ի պատասխանի թղթոյն իւրեանց, թէ ահա ըստ ինդրոյ ձերոյ զՆերսէս վարդապետն յղեցաք իրօքն Հանդերձ, բայց զանգակատունն շինեսջիք, և մեղադրանք ևս¹⁶⁸: Տէ ս ի մեծ տե[տեր] յերես՝:

¹⁶⁸ Վավերագիրը կարևորում է նախ և առաջ Լիմ անապատի զանգակատան կառուցման մասին փաստական նյութ հաղորդելու տեսանկյունից: Հայտնի է, որ Լիմի անապատային հիմնական համակառուցը բաղկացած է Ս. Գևորգ գմբեթավոր եկեղեցուց, նրան արևմուտքից կից Բառամույթ ժամատնից, վերջինիս հյուսիսից հարող Ս. Սիոն մատուռից, իսկ արևմտյան մուտքին կից եռանարկ, Բառամույթ զանգակատնից, որը թվագրվում է XVIII դարով (Ս. Հայնանգարյան, Լիմ անապատ, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 413): Ներկայացվող վավերագիրը պարզում է, որ զանգակատունը կառուցվել է Դուկաս Կարնեցի կաթողիկոսի օրոք՝ XVIII դարի 90-ականների կեսերին:

356ա

940* **Ի Խօյ** - Թուղթ ի Խօյ առ Իսաճան աղայն, յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ (մէկ տող ջնջած) և թէ՛ ահա զիրնն Ներսէս պետի, ի յարկեղ զցուցեալ և զդաւթարն եդեալ անդ, կնքեալ յղեցաք ընդ իւր առքեղ և /356ա/ դու ի յանապատն առաքեսցես Հաւատարմաւ: Եւ գրեսցես ևս նոցա, որ զանգակատունն շինեսցեն ժողովեալ դրամովն Ներսէս պետին:

941* **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն, յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ և վերստին պատուէր վասն Հին դրամ Հասուցանելոյ: Եւ թէ թօխաթցի Ասատուրի որդի մահտեսի Սարգիս ոմն ուխտաւոր եկն և ի. (20) ղուռուշ փող էառ, ահա զթամասուկն յղեցաք ընդ գրոյս, դրամն առնուցուս և ձեռագիրն իւրն տաս:

Գրեցան թուղթքս յամսոյս ԺԲ. (12):

942 **յԱմիթ** - Կոնդակ ի վերայ Տիգրանակերտու Սուրբ Սարգիս եկեղեցւոյ ժողովրդեանն. շնորհակալութիւն վասն գանձանակի, մկրտութեան, պատարագի, նշանի և պսակի արդեանցն, զոր ձեռամբ մահտեսի Յակոբին Հասուցեալ էին նուիրակ Դաւիթ վարդապետին: Եւ պատուէր գանձապետին արի լինիլ ի գործն և ներումն յանցանաց տէր Մելքոն քաւանային:

943 **յԱմիթ** - Թուղթ առ սորին գանձապետ մահտեսի Յակոբն. շնորհակալութիւն վասն Հասուցանելոյն զարդիւննն:

944* **Ի յԱմիթ** - Թուղթ առ Սուրբ Կիրակոս եկեղեցւոյ ժողովուրդան. շնորհակալութիւն վասն Հասուցանելոյն ձեռամբ գանձապետ մահտեսի Մարտիրոսին զարդիւննն գանձանակին, նշանի, մկրտութեան, պսակաց և պատարագի, նուիրակին: Եւ պատուէր գանձապետին արի և ժիր լինիլ:

945* **Ի յԱմիթ** - Թուղթ առ սորին գանձապետ մահտեսի Մարտիրոսն. շնորհակալութիւն վասն Հասուցանելոյն զարդիւննն գանձանակին և այլոց՝ նուիրակին: Եւ յանձնարարութիւն նոր նուիրակ Մկրտիչ վարդապետին, ծանուցումն զաղէտալի անցիցն կողմանցս: Եւ բան վասն տան կողմանց արախճինչի մահտեսի Մկրտչին, թէ եթէ ի Հայոց մահլայն այլ իմն տուն առնիցի և վախուճ առնիցէ Սրբոյ Աթոռոյս, իսկ թէ ոչ՝ մնասցէ:

946 **Ի յԱմիթ** - Թուղթ առ պարոն Մկրտիչն, ի պատասխանի թղթոյն. շնորհակալութիւն վասն տալոյն նուիրակին զիւրեանց տան երեք բաժնի միոյ վախուճ բաժնի Սրբոյ Աթոռոյս քիրայն: Եւ այժմ մինչ խնդրեալ էր, որ ի տեղի այնմ բաժնի մէկ տուն առեալ վախուճ արասցէ Սրբոյ Աթոռոյս, և ամ ըստ ամէ զմի ոսկի ևս վասն այն բաժնին տայցէ: Գրեցաւ, թէ վերահասութեամբ երկուց գանձապետացն ի Հայոց մահլայն զմի Հաստատ տուն իմն

առցես, և թղթով և Հիւճէթով վախճ առցես Սրբոյ Աթոռոյս, և ի Հին տան իճրայն ևս մէկ ոսկի տայցես և մէք Հաճիմք: Իսկ թէ Հայոց մաշկայն չլինիցի, վերստին մեզ գրեսջիք:

947 **Ի յԱմիթ** - Թուղթ առ մաշտեսի Մարտիրոսն. Հնոր-Հակալուծինն վասն առաջնոյ նուիրակին և ընդ նմա մուրապային և շէհրիին, և յանձնարարութիւնն նոր նուիրակ Մկրտիչ պետին:

948 **Ի յԱմիթ** - Թուղթ առ գանձապետ մաշտեսի Մարտիրոսի եղբօր որդի խոճայ Կարապետին. յանձնարարութիւնն վասն նոր նուիրակ Մկրտիչ վարդապետին, և բան վասն արախչինճի մաշտեսի Մկրտչի տան միոյ վախուճ բաժնի Սրբոյ Աթոռոյս, որպէս և Հօր եղբօրն գրեալք ենք: Եւ թէ քանիցս թուղթ գրեմք և զպատասխաննի ո՛չ գրես և այլն:

356բ

949 **Ի յԱմիթն** - Թուղթ առ Արղնու առաջնորդ ՍաՀակ վարդապետն. ՀնորՀակալուծինն վասն տալոյն զՀոգևոր որդւոյն իւրոյ՝ Կարապետ վարդապետի Հոգեբաժինն և կողոպուտն նուիրակ Դաւիթ վարդապետին:

950 **[Ի] յԱֆիօն ՂարաՀասար** - Կոնդակ ի վերայ Աֆիօն ՂարաՀասարու ժողովրդեանն. մսիթարութիւնն վասն կրեալ նեղութեանցն իւրեանց և Հրկիզութեանն և շարժին քաղաքին իւրեանց¹⁶⁹:

951 **Թուղթ առ մաշտեսի Կարապետ աղայն**, ի պատասխանի թղթոյն. մսիթարութիւնն վասն մաշտեսի եղբօրն, և թէ եղբայրդ ի կենդանութեանն մինչ մերձ նուիրակին կտակեալ է զտունն իւր զկնի կնոջն՝ կէսն Սրբոյ Աթոռոյս և կէսն սուրբ Երուսաղէմայ վախճ լիցի: Եւ մէք աՀա գրեցաք կնոջն և քեզ ևս, զի որքան կինն կենդանի է, ինքն նստցի և զաւերեալ տեղիսն նորոգել տայցէ, զսայլանն և զայլ խարճն տայցէ, և զկնի վաղճանմանն երկուց Սրբոց Աթոռոց լիցի:

ՀնորՀակալութեան նամակ Աֆիօն ՂարաՀասարի իշխան Գալուստօղլի մաշտեսի Կարապետին, որն օժանդակել էր նուիրակ Գէորգ վարդապետին: Իսաճան աղային (Խօյ) տեղեակ են պաշկում լիմանապատի միաբան Ներսէս վարդապետի գույքը ուղարկելու մասին: ՀնորՀակալութեան նամակ մաշտեսի Մարտիրոսին (Տիգրանակերտ)՝ նուիրակ Դաւիթ վարդապետին օգնելու եւ նրա Հետ նուէրներ (պայուսակով շէհրի եւ անթով մուրաբայ) ուղարկելու Համար: Մսիթա-

169 Ղուկաս Կարնեցու նամականու ուշագրավ կողմերից է նաև երկրին պատուհասած երևույթների համանաբակային հիվանդությունների, բնական աղետների՝ երաշտ, կարկուտ, երկրաշարժ և այլ աղետաբեր դեպքերի առնչությամբ հայրապետի ցուցաբերած մտաեցումն ու վշտակցությունն իր հարազատ ժողովրդին: Այսպես, 1795 թ. նոյեմբերին նա Գաղատիո (Անկյուրիա, ներկային՝ Անկարա) նվիրակ Գևորգ վարդապետի միջոցով մսիթարության կոնդակ է հղել Շապին-Գարահիսարի (Աֆիօն Ղարահիսար) ժողովրդին՝ կրած նեղությունների, հրդեհի և երկրաշարժի կապակցությամբ (հմմտ. վավ. 952):

րովթեան նամակ տիրացու Գեորգ Տեր-Վաչանեանին (Բայազիտ): Հնորհակալութեան նամակներ՝ նուիրատուներ՝ մաշտեաի Կարապետ ամիրային (Կ. Պօլիս), տէր Խաչատուր քահանային (Արագի գիւղ), Կ. Պօլսի Ս. Հրէշտակապետ եկեղեցու տէր Վարդան աւագ քահանային: Կ. Պօլսի Խասագիւղի գանձապետ Հովուէնց Ընդուցեալ Յովհաննէս ամիրայի որդի պարոն Եղիային: Միաժամանակ վերջինս Հաստատում է գանձապետ: Կոնդակ Խոր Վիրապի թեմի ժողովրդին՝ Կարապետ վարդապետին առաջնորդ եւ հովիւ կարգելու մասին:

Նամակները գրուել են 1795 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^ր 4482, էջ 528-39

356բ

1795 թ. նոյեմբեր - Թուղթքի Գաղատիա, ի Մեծն Պօլիս, ի Չմիւռին և ի Կարին

952 **Ի Գաղատիա** - Թուղթ առ Գաղատիոյ նուիրակ Գեորգ վարդապետին, ի պատասխանի թղթոցն, թէ իմացաք ի յԱֆիօն Ղարաշիսար լինիլն Հրամայեաց և երկրաշարժութիւն, ահա մխիթարութեան կոնդակ գրեալ յղեցաք, Հասուցես նոցա: Մաշտեաի Կիրակոսն ի կենդանութեանն զտան կենս վախճ է արարեալ Սրբոյ Աթոռոյս, որ զինի վախճանման կնոջն մերն լիցի: Ահա առ նորին կինն և եղբայր Կարապետ աղայն թուղթ գրեցաք, որքան կինն կենդանի է, բնակիցէ և գրակեալ տեղիսն շինեալ զսայլման և ստայցէ, և յետոյ մերն լիցի: Չերկրիս անցմանէն ծանուցումն: Ի Հօրէն ողջոյն:

Պատասխան նամակներ Կ. Պօլսի պատրիարք Չաքարիա վարդապետին (Ա./3), նուիրակ Գալուստ վարդապետին (Ա./4), նամակների չրացուած Համառոտագրութիւններ պատրիարքի վէթիլ Յովհաննէս վարդապետին եւ մաշտեաի Նիկողայոս ամիրային (Ա./5, 6), նուիրակ եւ առաջնորդ Դանիէլ վարդապետին (Չմիւռին) (Ա./7), նաեւ՝ սիահի «վասն ոմանց ինդրեղի իրաց» (Ա./8), թուղթ «ձաղկեալ» պարոն Հայրապետին. «մխիթարութիւն վասն որդւոյն իւրոյ Աւետիսին» (Ա./9), Գորօյեան մաշտեաի Սերօբին եւ եղբորորդի Հաջի Յակոբին. «վասն մաշտեաի Սերօբի եղբօրն՝ մաշտեաի Խաչատուրին» (Կարին) (Ա./10):

953* **Թուղթ** դարձեալ առ պարոն Հայրապետն, յիշումն յառաջմէ գրեալ թղթոցն մերոյ, և թէ Հինգ պահարանաւ թուղթ յղեցաք, որք պարտին Հասանիլ /357ա/ առ Պօլսոյ նուիրակ Գալուստ պետն, Իզմիրու նուիրակ Դանիէլ պետին, Անկիրոյ նուիրակ Գեորգ պետին և Ամթայ Սուրբ Կիրակոս եկեղեցուց գանձապետ մաշտեաի Մարտիրոսն: Եւ մինն ևս ի Պօլիս առ պատրիարքի եղբօր որդի տէր Պօղոսն, վասն այն ղովթիով ամանաթին է, որ յուլիս ամսոյն յղեալ էիր: Ումեմն քեզ ամանաթ տուողին տացես, որ առ նա յղեսցէ և կամ ինքնդ առաքեա՛: Գալուստ վարդապետն գրէ մեզ, թէ սրբոյն Սաղիմայ նուիրակ Կարապետ վարդապետն ի Կարին պարոն Հայրապետին ԳՌԵՃԾ. (3550) ղուռուշ տուեալ և պարոն Հայրապետն ինձ գրեալ էր, թէ՛ առի: Եւ ետու ես տիրացու

Սարգսին և թէ Ներսէս պետի ինդրեալ իրաց քիրայն ի. (20) զու-
ռուշ ետու և գրեցի պարոն Հայրապետին առնուլ ի Ներսէս պե-
տէն, որ ընդ վերնոյ դրամոյն լինի ԳՌԻՃՃ (3770) զուռուշ և վասն
սոցա զղաւզ էր ինդրեալ: Բայց ըստ որում դու բան չէիր գրեալ,
մէք ևս ո՛չ գրեցաք զղաւզն: Ուրեմն գրեսցես մեզ որպէսն, որ
զղաւզն գրիցեմք: Դանիել վարդապետն, որ յանցեալն վասն փե-
սային իւրոյ ԳՃ. (300) զուռուշ փօլիցայ էր արարեալ և Հարցումն
արարաք քեզ զգրամոյ նոր և Հին լինելոյն և դու գրեցեր, թէ նոր
է, և մէք նոր ետուք: Այժմ Դանիել վարդապետն մեզ և քեզ գրեալ
է, թէ ես Հին փող եմ տուեալ, ընդէ՛ր նոր պարտին նոքա տալ:
Հալքաթ ընդ Գօրոյեանց պարոն Մկրտիչէն ինչ փող ես առեալ
ընդ նմա խօսեսցիս և գրեսցես և մէք նմա այնպէս ծանուցուք:

Գալուստ վարդապետն ի Պօլսոյ միով սապատիւ ինչս է
յղեալ, եթէ Հասեալ և ընդ Ներսէս պետին յղեալ ես, բարի է, և թէ
ո՛չ մեզ ծանուցես: Եւ վասն Հին դրամոյ Հոգս ունիցիս յղելոյ, որ-
պէս յառաջս ևս գրեալ եմք:

954* **Ի Բայազիտ** – Թուղթ ի Բայազիտ առ Տէր-ՎաՀա-
նեան տիրացու Գէորգն, մսիթարովթին վասն Հանգուցեալ փե-
սային իւրոյ՝ պարոն Կարապետին: Գրեցան յամնոյս ԺԷ. (17):

1795 թ. նոյեմբեր - **Թուղթք յերկիրն Ռուսաց, ի Թիֆլիզ և
ի Կարին**

357ա

955 **Երկիրն Ռուսաց** - Թուղթ յերկիրն Ռուսաց առ
Յովսէփ վարդապետն, վասն ինդրոյ աղայ Մահմատ խանին, որոյ
եղբայրն Մուրսաղուլի խանն անդ ի ռուսս էր, և ի յղել սորա զԱ-
բաս խան ոմն, արգելեցեալ էր անդ, ոյր սակս գրեալ էր առ սրբա-
զանին՝ Հնարս առնել բերելոյ զնա, և սրբազանն գրեաց զայս:

Տէ՛ս ի մեծ տետեր յերեսն 2253:

956 Փոսուլայ ևս գրեցաւ առ սա Համառօտ ծանուցումն
զերկրիս անցիցն և վասն ի Թուղթն գրեալ բանին: Տէ՛ս ի նոյն
երեսն:

Գրեցան յամնոյս ԻԲ. (22):

957 Թուղթ ի Թիֆլիզ առ Տէր-Շմաւօնեան Ստեփան-
նոս աղայն. մսիթարովթին վասն մեծի դիպուածոցն վնասուց և
գերովթեան իւրեայնոցն, և թէ աղայ Մահմատ խանն առ ռուսս
եղեալ եղբայրն առաքեցեալ գօլով զԱբաս խան ոմն, արգելեցեալ
է անդ: Այժմ ֆարման էր գրեալ մեզ գտանել զնոր բերել տալոյ
Հնար: Գրեցաք Յովսէփ վարդապետին վասն այն և պարոն
Մկրտումին ևս ի Հաշտարխան, որ զնորին Թուղթն նմա Հասուցէ:
Եւ դու զայն Թուղթն փոշթով ի Հաշտարխան առ պարոն

Մկրտումն առաքեսցես: Եւ առ քեզ Հասանիլն թղթոցս, մատնա-
չափիւ ընդ բերողին ծանուցես մեզ:

958 **Ի Թիֆլիզ** - Թուղթ առ ճորտ երեցփոխ պարոն
Յովհաննէսն, ի պատասխանի թղթոյն վասն Դա|357թ|իթ որդւոյն
միամտութիւն, թէ առեալ եմք և առ մեզ է: Իսկ վասն միւս քոյայ-
նոցդ, որքան շրջեցաք, ո՛չ գտաք, այժմ գրելոց եմք յանուանէ ի
Բայազիտ և ի Խոյ՝ ի գտանելն մեզ իմացումն տալ, իցէ թէ ազա-
տիցին:

357Բ

959 **Թուղթ ի Հաշտարիսն** առ աղայ Մկրտումն, վասն
թղթոյ Յովսէփ պետին, որ է վասն աղայ ՄաՀմատ խանի մարդոյն
առաքել փութով ուր և իցէ և զպատասխանին առնուլն, շուտով
մեզ Հասուցանել:

Ի փոքրագիր տե[տեր] 180:

Երկրորդ օրինակն թղթոյ Յովսէփ վարդապետին ի նոյեմ-
բերի 22 գրեցելոյ, յղեցան ընդ վերնոյ թղթոցն, ի վերայ Թիֆլիզու
նուազմամբ ոմանց զգուշանալի բառից:

960 **Ի Ղարս** - Թուղթ ի Ղարս առ պարոն Գէորգին, ի
պատասխանի թղթոյն. ՀնորՀակալութիւն վասն յորդորելոյն զա-
ռաջնորդն Ղօշավանքու առ ի առնուլյանձն զգործն նուիրակու-
թեան և իմտատեայ ժողովելոյ: Եւ թէ այժմ ընդ տէր Մկրտչին
գարբալոյս մեռոնն առանձնաբար յղեցաք, և ըստ քոյդ գրելոյն նա-
յելոց եմք մինչև ի Լ. (30) աւուրս զորպէս լինելոյն քաղաքիդ պե-
տացն: Եւ յայնժամ զկոնդակն և զՖերմանի սուրաթմն այլովք
Հանդերձ յղելոց եմք: Եթէ ի Կարնոյ և Կ. (60) քաղաքիդ փաշայի
ուղտերն գալոյ լինիցի յայս կողմն, զքիրայն խօսեսցիս, որ ի Ղօ-
շավանք եղեալ գարին մեր բերցեն: Եւ վասն ի Հոկտեմբերի գրեալ
թղթոյն մերոյ չՀասանիլն, որ ծանուցեալ էիր, մեք յԵրևանու ընդ
Մուտարիս աֆանդու մարդոյն յղեցաք, և որպէս անդ գրեալ եմք,
նոյնպէս և այժմ գրեմք, առնուլ վասն մեր զվեց կամ եօթն ջորի
միջահասակ, և առաքել որ վեց ջորի և չորս ուղտ է մնացեալ և
այնու ո՛չ կառավարի սուրբ տունս:

961 **Ի Ղօշավանք** - Թուղթ ի Ղօշավանք առ առաջնորդ
Յովհաննէս վարդապետն, ի պատասխանի թղթոյն ընդ տէր
Մկրտչին գրեցելոյ. ՀնորՀակալութիւն վասն ընդ նմա առաքեալ
տաւարացն, իւղին և երկատեսակ պանրին և մօստոռային, և թէ
աՀա զարբալոյս մեռոնն, Հանդերձ քոյդ ինդրեալ գաւազանան
յղեցաք, և ըստ գրեցելոյ ձեր, Համբերելոց եմք մինչև ի յաւուրս Լ.
(30), և ապա զկոնդակն և զսուրաթմն Ֆերմանի այլովքն յղելոց
եմք: Եւ վասն գարւոյն ջանս՝ իցէ թէ առ քե եղեալ գիւղօրէից
սայլիւքն քիրայիւ առաքեալ, և պարոն Գէորգին ևս գրեցաք, եթէ
ուղտ պահիցի, քիրայն խօսիցի և առ քեզ յղիցէ ի բերել զգարինս:

962 **Ի Արապի գիւղն** - Թուղթ ի Արապի գիւղն առ տէր Խաչատուր քաւանայն. շնորհակալութիւն վասն նուիրելոյն Սրբոյ Աթոռոյս զքսան սօմար գարի, որում և յղեցաւ զմի նոր փիլոն պարգև Հոգևոր:

Գրեցան յամնոյս ԻԶ. (26):

963 **Փօլիցագիր մի գրեցաւ և յղեցաւ յԵրևանու առ վէրիլ պարոն Հայրապետն, զի խանն դարձեալ ի շահէն, մինչ ինքն շահն զուղոս էր պահանջեալ ի խանէն, և նա զսրբազանն ևս ի մէջ խառնեաց ի վճարումն պահանջմանն: Վասն որոյ և սրբազանն զայս փօլիցագիրս գրեալ էտ Մահմատ Վէլի |358ա| բէկին, որ գնայր անդ ի Կարին վասն զուղոս գնելոյ, տացէ նմին պարոն Հայրապետն ԺԻԼՃՇԵ. (10875) ղուռուշ տեղւոյն կէշար փոխ յետ ԺԱ. (11) օր վատային և զայս փօլիցագիրս զաւհրայիւ առնուցու ի նմանէ, և առ սրբազանն Հասուցէ: Ընդ որս գրեաց սրբազանն և զբարևագիր մի առ նոյն պարոն Հայրապետն վասն Ներսէս պետին, թէ եկեալ նա ի Բայազիտ, թուանկչիս յղեցաք բերել, և մէք յետ Բ. - ուց (2) աւուրց գնացաք յԵրևան ի տեսութիւն խանին վերադարձելոյն ի շահէն:**

Ապա, թէ Ներսէս պետն եկեալ ի Սուրբ Աթոռս, ի նոյեմբերի ԻԱ. (21) գրեալ թուղթոք, առ մեզ Հասոյց, որոյ զլիապէսն պատասխանի խոստանալով յետոյ գրել գրեաց աստ վերստին մխիթարութիւն Համառօտակի վասն մահուան եղբօրն և տղային: Եւ վասն վերոյ յիշեալ փօլիցագրին ծանուցումն, թէ տուաք Մահմատ Վէլի բէկին, զի ի գալն նորին յայդր, տացես նմա 10875 ղուռուշ տեղւոյդ կէշար փոխ զկնի ԺԱ. (11) օր վատային, և զփօլիցագիրն առնուցուս ի նմանէ զաւհրայիւ, և առ մեզ Հասուցեն:

Գրեցաւ յամնոյս [դէկտեմբեր] ԺԲ. (12):

1795 թ. դէկտեմբեր - Թուղթք ի Գեանճա, ի Խոյ և ի Թէւրէզ

358ա

964 **Թուղթ ի Գեանճայ առ տանուտէր պարոն Աւետիքն, ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ և ծանուցեալ էր, թէ ի Թիֆլիզու յաւարի գնացեալ իրացն Սրբոյ Աթոռոյդ՝ Ղազար կաթողիկոսի թագն և վակասն և այլ ինչ իրք անկեալ են ի ձեռս Ջաւատ խանին մերոյ, և նա կամի, զի առնուցուք: Որոց աղագաւ և սրբազանն զկնի շնորհակալ լինելոյն, գրեաց վասն իրացն, թէ թէպէտ կամեցաք, որ մէկ վարդապետ յղեմք, բայց վասն երկիւղի ճանապարհին մարդ յղելն անկար եղև այժմոյս: Այլ դու ինքնդ ընդ մէլիք Մէժլումն և Սարգիս կաթողիկոսն խօսես՞իք ընդ խանին վասն իրացն, զի եթէ պատշաճաւոր գնովքն տայցէ, մեզ գրես՞իք, որ վարդապետ յղեսցուք, զի առցէ:**

Եւ վասն Աւետիք վարդապետին, թէ լսելով բազմիցս զնմանէ, զի եկեալ իցէ ի Նուխի, ահա թուղթ գրեցաք առ նա և յղեցաք ի ձեռս քո, Հասուցանել ինքեան, և երբ գայցէ ի քաղաքդ, մեզ իմացումն տաս:

Պարոն Աւետիքին Հասցեագրուած նամակի օրինակով նամակներ են յղուել նաեւ մահտեսիներ Ալթունին եւ Ապրեսին (Գեանջայ): Մէկ այլ նամակով Աւետիք վարդապետին կարգադրում է Գանձակ (Գեանջայ) Հասնելուն պէս տեղեակ պաշտել կաթողիկոսին:

965* **Թուղթ ի Գեանջայ առ գանձապետ պարոն Վարդագարն, սակս արեցեալ իրացն Սրբոյ Աթոռոյս, թէ խօսեսցիս ընդ պարոն Աւետիքն առանձնակի և որչափ կարասցիք, ջանասցիք գնահատութիւնն չափաւոր լինիլ:** Եւ վասն Աւետիք վարդապետին, թէ լսեմք, որ եկեալ է ի Նուխի: Վասն որոյ թուղթ գրեցաք առ նա գալ ի քաղաքդ և մեզ ծանուցանել: Դու և ս մուղայթ կացցես, որ թուղթն նորին շուտով Հասցի առ նա և երբ գայցէ յայդր, գրես մեզ զգալն:

/358բ/ Եւ վասն գանձանակագրամիցն, թէ որ տուեալ էք ի փրկանս գերեաց, դարձեալ ըստ պայմանին ձերոյ առ ձեռն բերցիք զայն դրամն և մոմն գնեսցիք և յղեսցիք առ մեզ:

358բ

966 **Ի Գեանջա - Դարձեալ թուղթ ի Գեանջա առ ինքնընծայ Սարգիս կաթողիկոսն, ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էր վասն անտանօր յայտնեցեալ իրացն, և թէ սրբազանն, զոր ունէր առ ինքն զգութ սիրոյ, փոխարկեալ իցէ:** Առ որ գրեաց սրբազանն, թէ մէք զՀայրենի սէրն, զոր առ քեզ ունիմք, զնոյնն պաշտեմք անփոփոխ, բայց դու զՀետ ունայնութեանց աշխարհի գնալով, այնպէս խարդախեցէր զբանդ, որ չմնաց մեզ տեղի ընդ քեզ կամ ընդ այլոց խօսելոյ: Եւ վասն իրացն, թէ խօսեսցիք ընդ խանին և գնահատեսցիք ըստ արժողութեանցն, և մեզ գրեսցիք Հասուցանել պարտութ զգինան¹⁷⁰:

967 **Ի Գեանջա - Թուղթ դարձեալ ի Գեանջայ առ Ջաւատ խանն վասն աւարեցեալ իրացն Սրբոյ Աթոռոյս, որք ի ձեռս նորին էին անկեալք:**

968 **Թուղթ դարձեալ ի Գեանջայ առ մելիք Մէջլումն, վասն յայտնեցեալ իրացն Սրբոյ Աթոռոյս, որ անդ, զի խօսեցեալ ընդ Ջաւատ խանին, չափաւոր առնել տայցէ գնահատութիւնն:** Եւ թէ, զոր յառաջմէ սահալթ էիր խնդրեալ ի մէնջ, ահա ընդ թղթոյս յղեցաք առ քեզ:

[Գրեցաւ] ԺԵ. (15):

¹⁷⁰ Գանձակի (Գյանջա) Սարգիս կաթողիկոսին հղված վավերագրի ամբողջական հրատարակությունը տես ԳԶՊ, գիրք Գ., սյուն 648-650:

969 **Ի Թարեզ** - Թուղթ ի Թարեզ առ տեր Յովսէփ աւագ քահանայն, ի պատասխանի թղթոյն, և շնորհակալութիւն վասն բարեխառութեանցն, որ առ Յակոբ վարդապետն մեր, և թէ՛ եթէ գիտես զորպիսութիւնն զնմանէ յետ ուղևորելոցդ ի վիճակն, գրեսցես ի գիտել:

Նաև ծանուցումն Համառօտակի զորպիսութեանց մերոց, և թէ՛ զԱլետիք վարդապետէն, եթէ գիտես զՀամբաւ ինչ, թէ զինչ եղև, գրեսցես մեզ ի գիտել:

970 Փոռուկայ մի առ սա, վասն Տէր-Շմաւօնեանց Ստեփանի և տեր Գրիգորի գերեացն յանուանէ որոնեսցէ, և զորս գտանիլն նոցա և զորքանս գնոցն ծանուցէ:

971 **Ի Խօյ** - Թուղթ առ Խօյեայ խանի կին Սյւթանթ խանումն, ի պատասխանի թղթոյն, որ գրեալ էր վասն զարկեար Նիկողոսի գերեացն:

972 **Ի Խօյ** - Թուղթ ի Խօյ առ Իսաճան աղայն վանցի, ի պատասխանի Բ. (2) թղթոց նորա ի նոյեմբ[երի] ԻԳ. (23) գրեցելոյ, որ վասն յղեալ մեծաթիւ դրամոցն մերոց առ ինքն Հասանելոյն ծանուցեալ էր և վասն դաւզին առ մեզ յղեցելոյ տարակուսեալ էր և վասն անապատի միաբան Ներսէս վարդապետին, թէ ուղևորեալ իցէ և զայլ ինչ բանս, և Բ. (2) ինդիր, մինն վասն զարկար Նիկողոսի որդի Մովսէսի կնոջն և զորքանջին ազատելոյ, և միւսն վասն Հոգւոց վանից բանադրեալ առաջնորդ Աբրահամ պետին արձակելոյ:

Առ, որ գրեաց սրբազանն, թէ ի նոյեմբ[երի] ԺԲ. (12) զՆերսէս վարդապետն ամենայն իրօքն յղեցաք գալլայդր, և քեզ թուղթ գրեցաք, ծանուցանելով և զղաւզագիրն քո Հասանիլն առ մեզ:

Եւ վասն զարկար Նիկողայոսի որդի Մովսէսի կնոջն և զորքանջին գրեաց, թէ աստ զանկեանցի Հաճի Հիւսէյնի թոռն՝ Աբասալին գնեալ է ԾԱ. (51) թումանի, և յետոյ օսմանցիք եկեալ զՀարսն միայն ինդրեալ են եօթանաստուն 80 | 359ա| թումանի և նա չէ տուեալ կամելով իւրեանց տեարցն վաճառել: Եւ մէք զմէլիք Աբրահամն և զմի ոմն ևս ի մէնջ յուղարկեցաք առ նա, յետ բազում խօսից ասացեալ էր, թէ որովհետև Բէկումն գրեալ է, և խալիֆայն միջնորդութիւն առնէ, երկուսն Ճ. (100) թումանի կըտամ: Բայց այժմ թէ զփոխն Համարիցէք, ոչ տամ, զի Հիւսնդ եմ սպասաւորեն ինձ, բայց յետ միջոցի տեարք Ճ. (100) թումանն բերեն և զգերիսն տանին: Ուրեմն ասացես Նիկողայոսին և Մովսէսին, զի շուտով զդրամն Հոգացեալ մինն բերցէ, և զգերիսն ազատեալ տարցէ:

Եւ վասն Հոգւոց վանից առաջնորդ բանադրեալ Աբրահամ պետին գրեաց, թէ մէք ոչ մեզէն Հետամուտ էաք, այլ ի վանայ Ախիջանն և նուիրակն բողոքեցին մեզ ինչ պտուղ լինիլն նորա, և

մէք վրէժինդիր եղաք, և բանադրանաց թուղթ յղեցաք այնու-
հետև, այլ մի յարմար պատասխանատու չեղև մեզ: Այժմ, որ գրես,
թէ վանքն պարտուց ներքոյ է և նա նուէրս ժողովէ վասն վանիցն:
Նա է՞ որ է պիտոյեցեալ վանացն և ժողովրդեանն, որ այժմ պիտո-
յասցի և այն: Այլ զի գրես, թէ Չատկին գալոց է: Ահա և մէք խոս-
տանամք, որ թէ մինչ ի Չատկին գայցէ, վասն քո խաթերն զնա ո՛չ
պատժեսցուք, այլ արձակեսցուք ի բանադրանացն: Իսկ, զի այս
բանի սկզբանն Ախիջան աղայն ունի տեղեկութիւն, արժան է, զի
ի ինդիր արձակմանն ևս ունիցի կցորդութիւն:

Ողջոյն եղբօր նորա Յակոբին և Ղազարին Եղիազարեան:

973* Փոստուկայ մի ևս գրեցաւ առ սա, վասն Տէր-Շմա-
ւօնեանց Ստեփանի և տէր Գրիգորի գերեացն, յանուանէ որոնես-
ցէ, և զորս գտանիլն նոցա և զորքանս գնոցն ծանուցէ:

Գրեցան յամսոյս ԺԶ. (16):

974 1795 թ., 15 դեկտեմբերի - Թուղթ առ Գեանջայու
Սարգիս ինքնընծայ կաթողիկոսն, ի պատասխանի թղթոյն, զոր
գրեալ էր վասն անդամնօր երևեղեալ իրացն Սրբոյ Աթոռոյս աւա-
րեցելոցն ի Թիֆլիզու:

Յորմէ սիրով ծանիր Հոգևոր որդիդ մեր՝ Սարգիս կաթողի-
կոս բարեճոխ քաղաքիդ Գեանջայու: Ձի թուղթ քո ի Հոկտեմբերի
ԻՔ. (22) գրեցեալ անագան էհաս առ մեզ ի նոյեմբերի ԻԱ. (21), և
իմացաք զգրեալսդ: Եւ զի ի վերջն բանիցդ գրեալ էիր իբր թէ
զհայրենի սէր և զգովմն մեր, որ առ քեզ ունէաք, փոխարկեալ
իցեմք: Առ այն իմա, զի նոյն է սէրն մեր, որով ուղղապէս բարին քո
կամիմք, բայց դու զհետ ունայնութան աշխարհի գնալով, այնպիսի
նորձև բան արարես, որ չմնաց մեզ տեղի կամ քեզ խօսելոյ, կամ
այլոց պատասխանելոյ:

Ուրեմն մտածեա, թէ արդէ՞ օք դու զքո խարդախեցեր, եթէ
մէք վնասակամ ինչ իցեմք քեզ: Այլ զայսմանէ երկարելոց ոչ է ժա-
մանակ, թողոցք զայս և զայնմանէ խօսեսցուք, |47ա| որ գրեալ
էիր, թէ ի Թիֆլիզու յաւարի գնացեալ ամանաթիցն մերոց՝ Հոգե-
լոյս Ղազար կաթողիկոսի թագն և վակասն, և շուրջառն և այլ
ինչ իրք անկեալ են ի ձեռս բարձրապատիւ Ջաւատ խանին, և նա
անքակելի պաշէ վասն բարեկամութեանն առ Սուրբ Աթոռս, զի
դարձուցէ այսր: Չոր և սիրելին մեր տանտուտէր պարոն Աւետիքն
ևս էր գրեալ:

Վասն որոյ շնորհակալ եղաք զմեծաշուք և ազնուաբարոյ խա-
նէն: Որում Տէր տացէ երկար կեանք և ճոխապանծ իշխանու-
թեամբ պաշէսցէ: Եւ արդ, կամէաք ըստ գրեցելոյ ձերոյ զվարդա-
պետ մի յուղարկել, բայց զի ճանապարհքն վտանգաւորեցեալ են
յաւազակաց, որք զերթևեկն կողոպտեն, վասն այն ոչ եղև առա-

քումն վարդապետի: Այլ գրեցաք զթուղթս առ դօւլվաթլու խանն և առ ազնիւ սիրելին մեր՝ պարոն Մէժլումն և առ պարոն Աւետիքն, և զայս թուղթ ևս առ քեզ գրեմք, զի երեքեանդ ի միասին առանձնաբար տեսանիցէք զթագն և զայլ իրոն, եթէ ամբողջ իցեն և ի տեղը վաճառականք և ճանաչօղբ գտանին քարի և մարգարտի, ցուցէք և Հարցէք: Յաստուածակոյ կողմանէ, զոր ինչ գին ասիցեն, մեզ գրեսջիք: Եւ մէք տեսանիցեմք, եթէ ըստ արժողութեանն իցէ գնահատութիւնն, յայնժամ մէկ վարդապետ յղեսցուք, որ վերահասու լիցի:

Իսկ որպէս և լուեալ էք, յայսմ ամի բազմապատիկ վնասք Հասին Սրբոյ Աթոռոյս, և մեր յուսալի իրքն այդ աւանդքն էին, որք աւարեցան: Յիրաւի առ պատրաստ դրամ չունիմք, այլ զի սրբազանից Հայրապետաց յիշատակք են, և մեծարգոյ խանն զպատիւ Սրբոյ Աթոռոյս պահելով կամեցեալ է դարձուցանել մէք ևս յօժարիմք առնուլ: Թէև պարտուք, միայն թէ ըստ արժողութեանն իցէ գինն: Որոյ աղագաւ և Համարելով, թէ խնամաւուստ խանն առանց գնոց ձրիապէս պարգևս ընծայէ այսմ մեծանուն Գահի, մեծապէս շնորհակալ լինելոց եմք դարձեալ գնմանէ և յիշատակութիւն սորա յերկարածիգ ժամանակի աստ ի բերանս աղօթաւորաց օրհնութեամբ արծարծեալ լինի:

Եւ դուք ըստ գրեցելոցս խօսեսջիք առ նա, որչափ կար ձեր զօրէ: Ողջ լէ՛ր:

Գրեցաւ ի ՌՄԽԴ. (1795) թուջս և ի դեկտեմբերի ԺԵ. (15) ի Սուրբ Աթոռս էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 453ձ, էջ 46բ-7ա

975 **1795 թ., դեկտեմբեր** - Թուղթ ի Ղարս առ մահտեսի Գէորգն, շնորհակալութիւն վասն Հաւատարմութեանն առ Սուրբ Աթոռս, ըստ որում և զաւանդս ինչ մեր ընկալեալ ի յառաջնորդէն ի պահեստի ունէր, և յանձնարարութիւն վասն առաջնորդին, զոր կարգեցաք նուիրակ և ժողովօղ:

ՄՄ ձեռ. Հ^մ 453ձ, էջ 47բ

976 **1795 թ., դեկտեմբեր** - Թուղթ ի Մեծս Պօլիս առ վարժապետ մահտեսի Յովաննէան Անանիան, ի պատասխանի թղթոյն, մսիթարութիւն վասն յաքսորս գնալոյն և այլն:

ՄՄ ձեռ. Հ^մ 453ձ, էջ 48աբ

977 **1795 թ., դեկտեմբեր** - Թուղթ ի Մեծս Պօլիս առ Մասէհէան պարոն Եսային, թօհմաթ վասն թուղթ չգրելոյն:

ՄՄ ձեռ. Հ^մ 453ձ, էջ 48բ

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 360ա

1796 թ., յունուար - Չիշատակագրութիւն թղթոցն Հասուցեալ շնորհալի և Հոգեկից եղբօրն իմոյ՝ տիրացու Գալուստին, մինչև ցայս վայր, ինքն ի տիս երիտասարդական և ծաղկեալ Հասակի, ի կենաց աստի փոխեցաւ, վախճանեալ ամաց իբրև քսան և երկուց յամի Տեառն 1795 դեկտեմբերի 11: Մեկնեալ ամենայնիւ յաղցաւոր կենացս կրից, որով կաթոգինս արար զմեզ զինի Հետոց իւրոց՝ թողեալ տրտմալից զսիրելիս իւր: Ուստի ի սկզբան նոր տարւոյս, թուականիս մերոյ ՌՄԽԵ. (1796), Յակոբ չնչին իբր սարկաւագս, կարգեցայ ի տեղի նորին բարձրագոյն Հրամանաւ տեառն մերոյ սրբազան Վեհին և սկսայ գրել զիշատակ բանից թղթոցն գրեցելոց ի սրբազան Վեհէն առ ամենայն տեղիս՝ ապաստան առնելով շնորհաց սրբոյ Հոգւոյն, որ յաջողէ զամենայն յամենայնի, որում փառք յաւիտեանս. ամէն¹⁷¹:

⁹⁷⁸ **Ի Ղօշաւանք** - Ի սկզբան[է] նոր տարւոյս այսմիկ, դէպ եղև տեառն մերոյ սրբազան Վեհին գրել զթուղթ առ Ղօշաւանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն, ի պատասխանի թղթոյն ընդ տէր Մկր[տ]չին գրեցելոյ և ծանուցումն կրկին գնալոյն մեր յերևան ի գալ խանին ի շաՀէն, և տագնապիլ մեր անդ նոր իմն ծանր պաՀա[ն]ջմամբ դրամոց ի վճարումն շաՀի զուղտս խնդրելոյն: Եւ թէ որ յառաջագոյն ստիպմամբ գրեալ էիր զկոնդակն յղել, աՀա և մեք յղեցաք զկոնդակն, Հանդերձ թագաւորական ֆերմանի և բերաթի սուրաթիւքն, ընդ նոսին գրեցաք և զթուղթ մի առ ուօրվաթլու Ալի բէկն և ՄաՀմատ բէկն ի միասին: Նաև առ Նուման փաշայն և Մուտտարիս աֆանդին՝ յատուկ-յատուկ:

Եւ թուղթ մի առ Հասարակութիւն քաՀանայից և իշխանաց քաղաքին և առ Գէորգ աղայն և առ մաՀտեսի Գէորգն: Իսկ յաղագս ընծայիցն գրեցաւ, թէ այս տարի, անտանելի նեղութեան մեջ լինելով մեր, դատարկեցաք իրաց, վասն որոյ լայեղին ընծայ չունելով, կամիմք, զի եթէ Հարկն պաՀանջէ Կ. (60) զուռուշ Ալի բէկին և Կ. (60) զուռուշ ՄաՀմատ բէկին տացես և Կ-Կ. (60-60) զուռուշ

¹⁷¹ Ղուկաս Կարնեցու գրագիր Գալուստ սարկավագը վախճանվել է երիտասարդ հասակում 1795 թ. դեկտեմբերի 11-ին: Նրան փոխարինել է Մայր Աթոռի միաբան Հակոբ սարկավագը, որը 1796 թ. հունվարից վեհափառ հայրապետի հրամանով շարունակել է. «գրել յիշատակ բանից թղթոցն՝ գրեցելոց ի սրբազան վեհապետէն առ ամենայն տեղիս, ապաստան առնելով շնորհաց Սրբոյ Հոգւոյն, որ յաջողէ զամենայն յամենայնի»:

Նուման փաշային և Մուստարիսին, և ի խարճիդ դավթարոջն գրեցես և այլն:

Եւ վանն գարւոյն, թէ զհաշին, զոր գրեալ էիր ի թղթի, թէ այսքան և այսքան յղեալ եմ՝ չորիցս անգամ՝ և ջամ էիր արարեալ ԱՃԺԶ. (116) սօմարից և Դ. (4) կօտ պակաս և մէք մեզ հասեալ համարիմք: Բայց ի Ա. (1) սօմարն և Բ. (2) կօտն բերողքն վճռեալ էին, ուրեմն զայնց վճռեալց թաւթիչն ի բերողացն արասցես, և զայդր մնացեալն ևս ջանա ի յղել:

Նաև՝ առաջին և յետին անգամ յղեցելոցդ զքիրայն տուեալ եմք, այլ միջին Բ. (2) անգամ բերելոց քիրայք մնացեալ էն: Եւ պատուէր ԱՃԾ. (150) սօմար գարի ևս առնել և հետզհետէ յղել: Եւ շնորհատրութիւն նոր տարւոյս:

979 **Ի Ղարս** - Թուղթ ի Ղարս առ մահտեսի Գէորգն. շնորհակալութիւն վանն հաւատարմութեան առ Սուրբ Աթոռս, ըստ որում և զաւանդա ինչ մեր ընկալեալ ի յառաջնորդէն |360թ| ի պահեստի ունէր, և յանձնարարութիւն վանն առաջնորդին, զոր կարգեցաւ նուիրակ և ժողովօղ իմտատիայի:

Ողջոյն եղբարցն՝ պարոն Յովսէփին և պարոն Կարապետին:

360թ

980 **Ի Ղարս** - Թուղթ ի Կարս առ Գէորգ աղայն, թէ յառաջագոյն մինչ գրեցաք քեզ վանն նուիրակութեան և իմտատիային, դու վանն տեղւոյդ իշխողաց կացութեանն ի կարծիս գոլոյն գրեցեր, թէ քանի օր յետոյ լիցի: Եւ մէք հաճեցաք: Ապա մեր խանն ի շահէն եկն, և գնացաք ի տեսութիւն և շահն ի յերկրէս զուղտս ինդրեալ սոքա զմեզ ևս էին խառնեալ ի վճարումն պահանջմանն: Եւ յետ շատ ցաւեցման իւ. (40) ուղտս հարկ եղին ի վերայ մեր և զԺԱ. (11) յառաջ տուեալ գոլով ԻԹ. (29) ուղտուց գինն ևս նոր փօլիցայ արարաք ի Կարին՝ հասանիլ խանի մարդոյն:

Ուրեմն, որ յառաջ գրեալ եմք քեզ քանի ջորիս առնուլ, եթէ առեալ էս, ընդունելի է, և թէ ոչ, մի ևս առնուցու: Իսկ ահա աւելի քան զամիս եղև և ի տեղւոյդ լուր ո՛չ առաք և ժամանակ գործոյն անցանէր, վանն որոյ ահա զնուիրակութեան և զիմտատիայի կոնդակն գրեալ, հանդերձ մեռնաւ յղեցաք առ առաջնորդ Յովհաննէս վարդապետն և առ Նուման փաշայն և Մուստարիս աֆանդին ևս թուղթս գրեցաք, և նշանակեցաք, թէ լայել ընծայ չունելով, գրեալ եմք Յովհաննէս վարդապետին, ձեռամբ պարոն Գէորգին, տեսանել զձեզ: Եւ քեզ գրեմք, որ ի Յովհաննէս վարդապետէն Կ-Կ. (60-60) ղուռուշ առեալ մատուցես նոցա, թողութիւն արասցես: Եւ Յովհաննէս վարդապետին ձեռնտու լիցիս: Եւ առ հասարակութիւն քահանայից և իշխողացդ ևս թուղթ գրեցաք: Եւ շնորհակալութիւն նոր տարւոյս: Եւ թէ ըստ բարի սովորութեանդ դավթարդ յղեցես, որովհետև ի գործակալաց դավթարն պարտի անցանիլ, մի՛ յետասցի:

981 **Ի Ղարս** - Թուղթ տաճկերէն ի Ղարս առ Ալի և ՄաՀմատ բէկքն ի միասին. յանձարարութիւն վասն առաջնորդ ՅովՀաննէս վարդապետին, զոր կարգեցաւ նուիրակ և ժողովող իմտատիայի, որոց ի տեղի ընծայի տրեցաւ Կ-Կ. (60-60) զուռուշ դրամ:

982 Թուղթ ևս տաճկերէն առ Նուման փաշայն և Մուտ-տատիս Էֆէնդին յատուկ-յատուկ, նոյնպէս ի տեղի ընծայի Կ-Կ. (60-60) զուռուշ տրեցաւ:

Գրեցան յամսոյս Բ. (2):

Թուղթք ի Բաղէշ, ի Կարին և ի Ղօշավանք

983 **Ի Բաղէշ** - Կոնդակ ի Բաղէշ առ Սուրբ Գէորգ եկեղեցոյ Հասարակութիւնն. շնորհակալութիւն վասն Հասուցեալ գանձանակադրամիցն, ձեռամբ գանձապետ պարոն ՅովՀաննէսին, զոր ընդ տիրացու Յակոբին յղեալ էին, որ է վացսուն զուռուշ դրամ:

ՀնորՀակալական նամակներ ու կոնդակներ են ուղարկուել նաև գանձանակադրամ ուղարկած ներքոյիշեալ եկեղեցիների Համայնքներին եւ գանձապետներին, այսպէս՝ Բաղէշի Ս. Սարգիս եկեղեցու Համայնքին. «վասն Հասուցանելոյն... զարդիւնն գանձանակին իւրեանց» (360բ, Ա./4), Հինգիտորան եկեղեցու Համայնքին (Բաղէշ). «վասն Հասուցանելոյն գանձանակադրամիցն...», որ էր Լ. և Հինգ (35) զուռուշ» (Ա./5), Ս. Գէորգ եկեղեցու գանձապետ պարոն ՅովՀաննէսին (Բաղէշ). «վասն Հասուցեալ արդեանցն՝ ձեռամբ եղբօրն իւրոյ՝ տիրացու Յակոբին» (361ա, Ա./1), Ս. Սարգիս եկեղեցու գանձապետ պարոն ՅօՀաննին (Բաղէշ). «վասն արդեանցն գանձանակադրամին Հասուցանելոյն» (Ա./2), Հինգիտորան եկեղեցու գանձապետ մահտեսի Ամիրին (Բաղէշ). «վասն Հասուցեալ արդեանցն և միխթաբութիւն սակս Հանգուցեալ եղբօրն իւրոյ՝ մահտեսի Կարապետին» (Ա./3), Կարինի գործակալ մահտեսի Գասպար ամիրային. «վասն ընծայեալ պղնձեղինսցն Սրբոյ Աթոռոյս, ընդ նուիրակ Ներսէս պետին» (Ա./4), նուիրատու Նունի տիկնոջը (Բաղէշ). «վասն Գ. (3) զուռուշ տուեալ Հոգեբաժնին» (Ա./5), պարոն Ղազարին (Բաղէշ). «վասն Հանգուցեալ Հօրն իւրոյ Գ. (3) զուռուշ Հոգեբաժնին» (Ա./6), պարոն Ներսէսին (Բաղէշ). «վասն նուիրելոյն զԳ. (3) զուռուշ Հոգեբաժնին» (Ա./7), տէր Ղազար քահանային (Բաղէշ). «վասն նուիրելոյն զԳ. (3) զուռուշ դրամոյն» (Ա./8):

361ա

984* **Ի Ղօշավանք** – Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ ՅովՀաննէս վարդապետն, ի պատասխանի քօլօրանու գրեալ թղթոյն ընդ թուանկչոցն: Եւ թէ իմացաք զընկալնուլդ զկոնդակն և զայլ թուղթմն, և զԱլի բէկի, և ՄաՀմատ բէկի զթուղթմն յղելդ առ նոսա: Իսկ, որ ի վերայ Իբրահիմ փաշային ինդրեալ, աՀա և մէք ըստ գրեցելոյդ գրեալլոցաք առ քեզ թղթոյ միտքն այս է, թէ աՖանդի ի բնէ սովորութիւն է, որ մեծամեծքն փոքուցն Համարձակութիւն տան, որ մէք ևս Համարձակէք թուղթ գրել առ քեզ:

բայց այժմ, ձեզավայել ընծայ չունելով, գրեցաք Յովհաննէս վարդապետին ի մերս կողմանէ տեսնեալ զյարգութիւն ձեր: Խնդրեմք, որ Հաճութեամբ ընդունիցիս և մէկ բոյրովթու շնորհեսցես, որ ի շրջակայիւն մէկ քեատար չլինիցի: Այլև՝ վասն գարւոյ մնացեալ քիրայից դրամոցն, զոր գրեալ էիր, յառաջքան զգալ թղթոյդ Յակոբ և Գրիգոր պետքն տուեալ են և քեզ գրեալ: Եւ պատուէր, զի զմնացեալ գարւոյն Հոգ տարցէ առ ի յղէ: Ողջոյն Գեորգ աղային և այլ իշխանաց քաղաքին:

Գրեցաւ յամնոյս Ժ. (10):

1796 թ., յունուար - **Թուղթ ի Բայազիտ, ի Կարին և ի Ղօշավանք**

985 **Թուղթ ի Բայազիտ առ պարոն Պետրոսն, ի կողմանէ ամանաթիցն Սրբոյ Աթոռոյս, որք ի պաշտօտի էին ի տան նորա:** Գրէ սրբազանն առ նա, թէ իրք ինչ պիտոյացան մեզ յայնցանէ, վասն որոյ գրեմք սիրելոյդ, զոր 1361թ ընդ ՅօՀան վարդապետին մէկ փոքր չաքմանայ յղեցաք, և զփոքր սապաթն, զոր ընդ շաթիր Մեքիսէթին, այլև յառաջագոյն յուղարկեալ ամանաթից մէջն մէկ սապաթ կայ, որոյ վերայն (է) գիր գոյ նկարեալ զայնոսիկ յանձնեսցես սոյն գրաբեր թֆանկչոցդ մերոց և Մաղաքիային, գիտութեամբ տիրացու Գեորգին, և զայս թուղթս իբրև զաւղ առ քեզ պաշտեսցես ի միամտութիւն:

Ողջոյն եղբօր որդւոցն՝ պարոն Գրիգորին և ՅօՀանին, և իւր որդւոցն՝ Հայրապետին և Նահապետին և այլոց:

986 **Ի Կարին** - **Թուղթ առ Կարնոյ նուիրակ Գրիգոր վարդապետն, ի պատասխանի թղթոյն, և թէ իմացաք զմիայն լինիլ ի գործդ, սակս որոյ ինդրեալ էիր ի մէջ զմի ոմն առաքել առ ի ձեռնտու լինիլ քեզ, յորում թէ զմիաբանն Սրբոյ Աթոռոյս լաւապէս գիտես, որն որ կամիս ընտրել գրեսցես մեզ, որ յղեսցուք:** Եւ փոքր-ինչ սիրախառն յանդիմանութիւն վասն թուղթ չգրելոյն և պատուէր, զի զորպիսութիւն գործոյն և իւր ծանուցէ մեզ երբեմնապէս առ ի լինիլ միամիտ:

987 **Ի յԵրզնկայ** - **Կոնդակ ի յԵզնկայ առ քաւանայսն և Ժողովուրդան, ի պատասխանի բազմակնիք մէնսերին իւրեանց, որ ընդ Կայիփոսի վանացն առաջնորդ Մանուէլ վարդապետին գրեալ էին՝ ինդրելով ձեռնագրել զնա եպիսկոպոս: Առ այն, թէ այժմ ո՛չ պատշաճ վարկաք լինիլ այդպէս զինի ժամանակաց եթէ գայցէ, լինելոց է Աստուծով: Տէս ի տե[տեր] տէր Փիլիպոսին եր[եան] 283:**

988 **Ի Կարին** - **Թուղթ ի Կարին առ Հաճի Բաբայն, ի պատասխանի թղթոյն, զոր ընդ Մանուէլ վարդապետին գրեալ**

էր՝ ինդերելով ձեռնադրել զնա եպիսկոպոս: Տէ՛ս ի փոքրագ[իր] տե[տեր] թ. վ. 189:

989 **Թուղթ ի Կարին առ փաշայի սառաֆ Մկրտիչ ամիրայն Փիլիպպոսեան, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ընդ Մանուէլ պետին, զոր ինդրեալ էր ձեռնադրել եպիսկոպոս: Տէ՛ս ի փոքրագ[իր] տե[տեր] յե[րեան] 282:**

Գրեցան յամսոյս էլն:

361բ

1796 թ., փետրուար - **Թուղթք ի Ղօշավանք, ի Մեծն Պօլիս, ի Թօխաթ և ի Պրուսա**

990 **Ի Ղօշավանք - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովհաննես վարդապետն, ի պատասխանի Բ. - ց (2) թղթոցն, և թէ՛ իմացաք զթղթոց Հասանիլն առ քեզ և զբուրովթու շնորհելն փաշային և ձեռնամուխ լինիլն ի գործդ առ այդ, միամտեցաք: Եւ զոր առաջին թղթովն շնորհակալութեան կոնդակ էիր ինդրեալ ի վերայ Հասարակութեան քաղաքին, թէպէտ յառաջագոյն պատրաստեալ կամեաք յղել, սակայն մարդ չպատահելոյն յետացաւ մինչև ցայժմ: Իսկ ահա ընդ թղթոյս առաքեցաք, զոր ընթեռնուլ տացես ի լուր ամենեցուն: Եւ ժողովեալ դրամն, զոր կամեցեալ էիր յղել, բարուք ես արարեալ, որ չէ՛ս յղեալ, զի յետ քանի մի աւուրց վամն Հարկաւորութեան պատճառի, զտղայս եմք յղելոց յայդր, ի ձեռն նոցին Հասուցանիցէք մեզ գրբամն:**

Այլև Պօղոս վարդապետն Ա. (37) սոմար տեղւոյդ և Ժ. (10) կօտ գարի էր յղեալ, բայց քիրայն |362ա| թմնդ էր՝ սօմարին Բ. (2) ղուռուշ: Վասն որոյ և մեք բոլորից քիրայն ետուք աստ բերողացն ՀԵ. (75) ղուռուշ և Ժ. (10) փարայ: Եւ պատուէր՝ մինչև մէկ ժամանակ այլևս գարի չղեսցէ:

Եւ թէ՛ զոր սակս Գէորգ աղային օղի էիր ինդրեալ, այժմ չէղև Հաւատարիմ եկօղ, զի յղեսցուք: Յետ աւուրց ինչ ընդ թֆանկչոցն մերոց յղելոց եմք:

Ողջոյն Գէորգ աղային և միւս մահտեսի Գէորգին:

Գրեցաւ յամսոյս Դ. (4):

991 **Ի Մեծն Պօլիս - Թուղթ առ Մեծին Պօլսոյ պատրիարգ Զաքարիայ վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ և յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ՝ ծանուցանելով ի նմա Համառօտ անցիցն, որ ընդ կողմունքս, և թէ Հարուստ պատմութիւնն յետոյ գրելով առ նուիրակ վարդապետն, այնու ևս լիապէս իմանալոց ես:**

Ողջոյն Շտորհք Մկրտիչ ամիրային և այլոց ամիրայից: Տէ՛ս ի մեծ տե[տեր] յե[րեան] 2082:

992 Թուղթ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն վասն առ մեզ Հասուցեալ իրացն, և փօլիցային, և խնդրեալ թղթոցն, և այլ բանից:

Ողջոյն քահանայից, իշխանապետաց և իշխանաց, և այլոց: Նաև մահտեսի Նիկողայոսին և մահտեսի Ստեփաննոս ամիրայիցն և որդւոց նոցա, և պարոն Եսայիին մահտեսի Մասեհեան: Տէ ս ի նոյն տետեր յերեան 2260:

993 Ղաւզ առ սա, թէ յանցելում ամին Կարնոյ գործակալ մեր՝ պարոն Հայրապետն անդ ի սրբոյ Երուսաղէմի նուիրակ Կարապետ պետէն առեալ զերեք Հազար եօթն Հարիւր յիսուն ղուռուշ փօլիցայ էր արարեալ ի վերայ քո՝ Հասուցանել սրբոյ Երուսաղէմի վէքիլ տիրացու Սարգսին, զոր և դու Հասուցեալ էիր յարդեանց Սրբոյ Աթոռոյս: Վասն որոյ պարոն Հայրապետն այժմ ի մէջ ինդրեալ էր զղաւզ գրել ի վերայ քո: Եւ դու, որ ըստ ինդրոյ մերում զժամացոյցս և զայլ քսուրս էիր առեալ և յղեալ ի պետս ծախուց Սրբոյ Աթոռոյս, զգինս և զխարճս նոցին նշանակեալ էիր գոլ 1783 ղուռուշ, 28 փարայ: Իսկ ի նոյն թուոյ 400 ղուռուշ գրեալ էիր ընդունիլ ի կողմանէ քումմէ՝ նուէրս Սրբոյ Աթոռոյս վասն Ալէքսան վարդապետին, և 100 ղուռուշ առեալ գոլով ի Բապաեան մահտեսի Կարապետ աղայէն վասն նորին ազատեալ և արձակեալ Ստեփան տղային, գրեալ էիր տալ ի նմա ի գալն աստ, և 10 ղուռուշ ևս ի կողմանէ Մարութի կնոջ Իսկուհոյն Հասուցանել ի Երնջակու Սուրբ Կարապետի վանքն, և վասն մնացելոյն, որ է 1273 ղուռուշ, 28 փարայ, ղաւզ էիր ինդրեալ: Արդ, սոյն յետին թիւս ընդ վերոյ գրեալ փօլիցային գումարեալ լինի Հազար քսան և երեք ղուռուշ և 28 փարայ: Ուստի զայս ղաւզս գրեալ և կնքեալ առաքեցաք ի Կարին, ի ձեռն պարոն Հայրապետին՝ Հասուցանել առ սիրելիդ մեր ի միամտութիւն: Չոր ի յընկալնուլդ պահեսցեն առ քեզ, յաւուր Հաշուատրութեան քում պիտոյացուցանել:

994 Ղաւզ կրկին առ սա, վասն 2500 ղուռուշ փօլիցային, զոր տուեալ էր կարնեցի պարոն Մանուկին ի տեղն, զոր և եղբայր նորին՝ պարոն Մատթէոսն վճարեալ գոլով ի Կարին գործակալին մերոյ՝ պարոն Հայրապետին:

Գրեցաւ ղաւզս առ սա ի միամտութիւն:

Պատասխան շորհակալական նամակներ ներքոյիշեալ անձանց՝ Զօպան ամիրային (Կ. Պօլիս). «վասն արարեալ մեծարանացն առ նուիրակ Գալուստ վարդապետն» (362աբ, Ա./1), Բապայեան մահտեսի Կարապետին. «վասն արարեալ բարեշնորհութեանցն առ նուիրակ Գալուստ վարդապետն» (Ա./2), Պետրոս եւ Սարգիս ամիրաներին (Կ. Պօլիս). «ըստ մտաց վերոյ գրեալ թղթոյն» (Ա./3), Ղարտաշեան Թադէոս աղային (Կ. Պօլիս). «վասն արարեալ բարեշնորհութեանցն առ նուիրակ Գալուստ և Գրիգոր վարդապետացն» (Ա./5):

995* **Թուղթ** **ի Մեծն Պօլիս** առ սրբոյ Երուսաղէմի վէրիլ տիրացու Սարգիսն, **ի պատասխաննի թղթոյն և Համառօտ ծանուցումն կողմանցս և մեր զորպիսութենէ և թէ՛ զոր գրեալ էիր վասն ԵՌ՝ (5000) ղուռուշին, զոր յայդր առեալ էիք ի նուիրակէն մերմէ՝ Գալուստ վարդապետէն, ի պէտս սրբոյ Երուսաղէմի, զի ի Կարին՝ ի մահտեսի Ասլանէն յարդեանցն սրբոյ Երուսաղէմի նուիրակ Կարապետ վարդապետին յանձնեսցի մեր վէրիլ պարոն Հայրապետին, ըստ որ և Հաճեցաք: Եւ ի գրել պարոն Հայրապետին զառնուլն զնոյնքան դրամն, զաւզ գրեցաք առ Գալուստ վարդապետն և այլն: Տէ՛ս ի մեծ տե[տեր]յե[րեան]** 2259:

996 **Ի Պրուսայ** - Կոնդակ օրհնութեան ի վերայ Պրուսայու, **ի շնորհաւորութիւն նորոգման սուրբ եկեղեցւոյ տեղւոյն՝ յանուն Սուրբ Աստուածածնին: Տէ՛ս ի մեծ տետերյե[րեան]** 2256:

997 **Թուղթ** առ Պրուսայու առաջնորդ Պօղոս վարդապետն. **ծանուցումն կողմանցս և մեր, և պատասխանի թղթոյն, և շնորհաւորութիւն վասն նորոգման սրբոյ եկեղեցւոյ տեղւոյն՝ յանուն Սուրբ Աստուածածնին: Եւ շնորհակալութիւն վասն յղեալ ընծայիցն՝ զմէկ բէհեզեայ պատմունճանին, զԱ. (1) ոսկեթել բանածու երես սրբի[չ]ին, և զմի ոսկեթել թաշկինակին՝ յանուն սրբազան Վէհին: Տէ՛ս ի նոյն տե[տեր]յե[րեան]** 2256:

998 **Թուղթ** **ի Պօլիս** առ վարժապետ մահտեսի Յովհաննէն Անանիան, **ի պատասխանի թղթոյն, Համառօտ ծանուցումն կողմանցս զորպիսութենէ, և միսիթարութիւն վասն յաքսորս գնալոյն և այլն: Տէ՛ս ի փոքրա[դիր] տե[տեր]յե[րեան]** 95:

999 **Ի Սեբաստիա** - **Թուղթ** առ Թօխաթու նուիրակ Բարսեղ վարդապետն. **յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ և ծանուցումն որպիսութեանց կողմանցս մեր: Եւ թէ՛ որ ի վերայ մերայնոցն թուղթ էիր գրեալ իմացաք, վասն աւարտելոյդ զԱկնայ զգործդ և ի Սեբաստիա սկսանիլդ, և առ առաջնորդան տեղւոյդ թուղթս էիր ինդրեալ, վասն որոյ առ առաջնորդ Յակոբ վարդապետն և առ Կեսարիոյ առաջնորդ Մատթէոս վարդապետն թուղթս գրեցաք՝ ճանուցանելով ի կարճօյ զանցսն մեր, և պալ363ա|տուիրելով վասն օժանդակելոյ գործոյդ: Եւ փօլիցայիդ որ գրեալ էիր, որ ի յԱկն Փիլիպպոս ամիրային ԱՌԾ. (1050) ղուռուշ էս տուեալ: Եւ ԱՌ. (1000) ղուռուշ ևս մահտեսի Յովհաննէսին, որ նորա փեսայ պարոն Մինասն ի Կարին Հասուցէ պարոն Հայրապետին, որոց ջամն է ԲՌԾ. (2050) ղուռուշ, որք և Հասեալ էին պարոն Հայրապետին: Եւ զոր գրութեամբ Բայագիտու տիրացու Գէորգին ԵՃԾ. (550) ղուռուշ էիր Հասուցեալ Արապկեր ի տունն Սահակ աղային, զոր Գէորգն յանձն առեալ էր Հասուցանելոյ: Ուստի ահա ԲՌԶՃ. (2600) ղուռուշի զաւզ գրեալ յղեցաք ի ձեռս պարոն Հայրապետին՝ Հասուցանել առ քեզ ի միամտութիւն:**

Եւ պատուէր, որ այլևս նոր փող փօլիցայ չառնելն, զի աստ պահաս անցանելով վնաս լինի, այլ Հին վաթսուննոց կամ ոսկի շինեալ քոյդ կնքովք կնքեսցես, եթէ Հաւատարիմ որ ճանաչես, նմա յանձնեսցես և այլն:

Ողջոյն արեղային իւրոյ՝ տէր Ռէթէոսին, այլև՝ տեղւոյ քահանայիցն և իշխանացն, և յատկապէս մահտեսի Յարութիւն աղային և այլոցն:

1000 Ղաւզ մի առ սա, վասն ԲՌՉՃ. (2600) ղուռուշ փօլիցային, որ ի վերայ թղթոջն գրեցաւ:

1001 **Ի Պօլիս** - Թուղթ միսիթարութեան առ Սախայեան Գրիգոր ամիրայն ի Մեծն Պօլիս վասն մահուան եղբօրն իւրոյ՝ մահտեսի Մարտիրոս ամիրային և յիշատակութիւն անցիցն մեռոց: Տէ՛ս ի փոքրա[դիր] տե[տեր]յե[րեան] 280:

1002 **Ի Կեսարիա** - Թուղթ առ Կեսարու առաջնորդ Մատթէոս վարդապետն. ծանուցումն Համառօտ անցիցն՝ կողմանցս և Սրբոյ Աթոռոյս, և յանձնարարութիւն վասն նուիրակ Բարսեղ վարդապետին: Տէ՛ս ի մեծ տե[տեր]յե[րեան] 2257:

1003 **Ի Սեբաստիա** - Թուղթ առ Սեբաստիոյ առաջնորդ Յակոբ վարդապետն, ըստ մտաց վերոյ գրեալ թղթոյն: Ողջոյն Դաւիթ վարդապետին, անմոռսա՛:

1004* **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն, ի պատասխանի Բ.-ց (2) թղթոցն, յորում թէ՛ իմացաք Մահմատ Վէլի ուզբաշուն զդրամ տալը ըստ գրութեան մերում: Եւ առաջին թղթովն գրած եմք զայն փօլիցագիրն դարձուցանել առ մեզ: Եւ զոր ազդեալ էիր, թէ տաճիկն այլևս փող է ինդրելոց վասն ուղտուց գնոցն, յիրաւի աստ ինդրեցին և Ճ. (100) թուման ետուք: Եւ այսուհետև այլ այնպէս մեծ փօլիցայ չեմք առնելոց ի վերայ քո:

Նաև ծանուցեալ էիր, թէ տիրացու Գէորգն կարնեցի աղթար մահտեսի Յարութիւնին փօլիցայ էր արարեալ ԱՌ. (1000) ղուռուշ, պիտի տամ, գրես ի դավթարոջդ, ահա և մէք գրեցաք: Դարձեալ գրեալ էիր, թէ ի Թօփրախղալայ աթոյին մօտն թանխայ ոնիմ, որ տիրացու Գէորգին Հասուցեալ է ԷՃ. (700) ղուռուշ, ահա զայն ևս գրեցաք ի դավթարոջդ: Այլև գրեալ էիր, որ Թօխաթու նուիրակ Բարսեղ վարդապետն ԱՌ. (1000) ղուռուշ փօլից է տուեալ մահտեսի Յովհաննէսին, որ նորա փեսայ պարոն Մինասն յայդր քեզ Հասուցանէ: Եւ ղաւզ էիր ինդրեալ և քան զայս յառաջ ևս գրեալ էիր, որ նոյն Բարսեղ վարդապետն ի Մատէն Փիլիպպոս ամիրային տուեալ էր ԱՌԾ. (1050) ղուռուշ և յայդր քեզ է Հասեալ վասն Բ.-ցն (2), ահա մէկ ղաւզ գրեալ յղեցաք ի ձեռս քո, զի Հասուցես նմա ի միամտութիւն: Ծանուցեալ էիր գնալ ի Խօյ, զի ի քոյդ կողմանէ Հեսապդ /363թ/ տեսցես, որ անդ, առ այդ և

մէք գրեմք սիրելոյդ, զի աճա ցուրտն էանց, ի գալդ կամ ի գնալդ ի ԽՅ, գայցես ի Սուրբ Աթոռս և զՀաշին մեր տեսցուք, վասն զի միջոցն երկարեցաւ: Ծանուցեալ էիր ի կողմանէ մաշտեսի Սերօբի տալացու դրամին, նա ևս էր գրեալ: Եւ մէք պատասխանի գրեցաք և զթամասուկն յուղարկեցաք իւրն, որ մնացեալ տալիքն ԱՌԻԵ. (1025) ղուռուշ և քանի փարայէ և պայմանն Հին դրամով է: Պատրաստեալ կնքեսցէ և յանձնեսջիք եկողաց Հասուցանել առ տիրացու Գեորգն ի Բայազիտ: Իմացաք վասն Հին փող չգտնելոյն և ծնար գլխով առնելոյն: Եւ ինդրեալ էիր գրեալ նուիրակաց այլ փօլիցայ չառնել և մէք ըստ ինդրոյդ գրեցաք Գալուստ և Բարսեղ վարդապետացն և այլոցն ևս գրելոց եմք, որ ամենեկն այլ փօլիցայ չարասցեն, այլ Հին վաթմանոց կամ ոսկի շինեալ յղեսցեն յայդր, որ այտի առ մեզ Հասանիցի: Եւ քեզ գրեմք, որ այլևս փօլիցայ չառնիցես: Գրեալ էիր վասն բամպակին, թէ ղանթարն այսքան գնով վաճառի և այժմ լուաք, որ այլևս վերէ, ուրեմն գրեմք, այլ տեղդ որպէ՛ս է, կրկին գրեսցես մեզ:

Այլև՝ Գալուստ վարդապետն գրեալ էր մեզ վասն Թարջիմանեան Պօղոսի ընդ քեզ ունեցեալ դաւայի կտրելոյն ԱՌ, ԱՃ, ԽԾ. (1149) ղուռուշ է տուեալ այնմ կողմանէ մեզ բան չես գրեալ, արդե՞՞ք ի դաւթարոջդ գրեալ ես, եթէ որպէ՛ս է մեզ ծանուցես, որ անտարակոյս լիցուք: Բ. (2) պաշարանօք թուղթ յղեցաք ի Մեծն Պօլիս, մէկ պաշարանաւ թուղթք ի Սեբաստիա առ Բարսեղ վարդապետն և մէկ պաշարանաւ թուղթք առ Թօխասթու քոյդ վաճառակից պարոն Թումանն, զորս Հասուցես յուրաքանչիւր տեղիս: Բ. (2) Հօխայ քրչանն և Գ. (3) Հակ Իզմիրու եկած իրքն, զոր յղեալ էիր ընդ Գրիգոր վարդապետին, Հակներս Հասեալ են ի Բայազիտ առ տիրացու Գեորգն, բայց քրչանն Գրիգոր վարդապետն Հասոյց մեզ: Եւ վասն Գալուստ վարդապետին ղաւզս էիր ինդրեալ սակս ԲՌԵՃ. (2500) ղուռուշին, զոր պարոն Մանուկի եղբայր պարոն Մաթեոսն Հասուցեալ էր քեզ: Աճա գնորին ղաւզն ևս որիշ գրեցաք և ընդ միւս ղաւզին յղեցաք առ քեզ, զոր Հասուցես Գալուստ վարդապետին միամիտ լինիլ:

1005* **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ Գօրոյեան մաշտեսի Սերօբն, ի պատասխանի թղթոյն և վասն յղելոյ զմնացեալն ի գնոյ բամբակին՝ ԱՌԻԵ. (1025) ղուռուշին, որ լինի վեց Հարիւր ութսուն և երեք ալթմիշլըղ և Ի. (20) փարայ, ուստի գրեցաւ, թէ աճա զթամասուկն ընդ թղթոյս դարձուցաք առ քեզ: Եւ գիտես, որ յայնմ ժամանակի տուր և առութիւնն Հին դրամով է եղեալ: Այժմ ևս պաշանջօղքն ի մէջ Հին դրամ պաշանջեն, զի նոր փողն ո՛չ անցանի տեղս: Ուրեմն՝ վեց Հարիւր ութսուն և երեք Հատ ալթմիշլըղ Հին դրամ և Ի. (20) փարայ ամանաթ շինեալ և կնքեալ գիտութեամբ պարոն Հայրապետին յանձնեսջիք Հաւատարիմ եկողի Հասուցանել ի Բայազիտ առ տիրացու Գեորգն Տեր-Վաշանեան, որ մինչ Հասանիցի առ մեզ, շնորհակալութեան թղթով միամտե-

ցուցանելոց եւք զքեզ: Ողջոյն եղբօր որդւոյն՝ Հաճի Յակոբին և այլոցն: Տէ ս ի փոքրա[դիր] տե[տեր] յե[րեսն] 186:

364ա

1006* **Ի Բայազիտ** - Թուղթ ի Բայազիտ առ ագուլեցի պարոն Պետրոսն. յիշումն թղթոյն առ մեզ Հասանելոյն և թէ՛ ՅօՀան վարդապետի յղեալ չաքմանայն և Մէլքիսեթի յղեալ փոքր սապաթն և յառաջագոյն յղեցեալ ամանաթիցն մէջն (Է) գրով նշանեցեալ մեծ սապաթն, զոր գրեալ էաք յղել դարձուցանել էիք առ մեզ՝ ձեռամբ Մաղաքիային և թուանկչոցն մերոց՝ գիտութեամբ տիրացու Գէորգին, որոց աղագաւ և զայս թուղթս գրեցաք առ ձեզ իբրև ղաւզ ի միամտութիւն վասն սապագայից:

1007 **1796 թ., փետրուար** - Կոնդակ շնորհակալութեան առ Սամաթիոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ ժողովուրդան, վասն Հասուցեալ գանձանակադրամին, որ է 200 ԽԴ. (44) (=244) ղուռուշ՝ ձեռամբ մահտեսի Պարոնին:

1008 Կոնդակ վասն գանձանակի շնորհակալութեան ի վերայ Ղումդափուի Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ ժողովուրդան, որ է 910 ղուռուշ՝ ձեռամբ պարոն Մարտիրոսին, մահտեսի Աստուածատուրին և պարոն Միքայելին:

1009 Կոնդակ օրհնութեան ի Մեծն Պօլիս, ի վերայ Սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյ ժողովուրդան. շնորհակալութիւն վասն արդեանց գանձանակին, որ էր 657 ղուռուշ՝ ձեռամբ երկու եղբարցն՝ մահտեսի Խաչատուրին և մահտեսի Յովհաննէսին:

1010 Կոնդակ օրհնութեան ի վերայ Իսկիւտարու Սուրբ Խաչ եկեղեցւոյ Հասարակութիւնս, վասն Հասուցեալ գանձանակադրամին՝ ձեռամբ պարոն Չաքարիային, որ է 110 ղուռուշ:

1011 Կոնդակ օրհնութեան ի վերայ Իսկիւտարու Սուրբ Կարապետ եկեղեցւոյ ժողովուրդան, վասն Հասուցեալ գանձանակին՝ ձեռամբ պարոն Բարսեղին, որ է Հարիւր վացսոն և Հինգ ղուռուշ:

1012 Թուղթ օրհնութեան ի Մեծն Պօլիս առ Չխուրչէշմէի նոր խանումն եղեալ ռէնջպերնս, վասն գանձանակադրամին շնորհակալութիւն, որ է 37 ղուռուշ:

1013* Թուղթ օրհնութեան առ Իսկիւտարու երիս էնսաֆուն, այսինքն՝ սափրիչան, ղայվաճիսն և մէՀանաճիսն, վասն Հասուցեալ գանձանակադրամին, որ է 34 ղուռուշ:

1014 Թուղթ օրհնութեան առ իփեկճիսն, որք են ի Պալաթ, ի Սամաթիա և ի Ղազլու-Փաշայ. շնորհակալութիւն վասն արդեանց գանձանակին, զոր Հասուցեալ էին ձեռամբ ու[ս]տայ Գրիգորին, որ էր 30 ղուռուշ:

1015 Թուղթ օրհնութեան առ մէտածոց էննաֆնն. շնորհակալութիւն վասն Հասուցեալ 20 ղուռուշ գանձանակադրամիցն, ձեռամբ ուստայ Յակոբին:

1016 Թուղթ օրհնութեան առ Էիպու բրուտնն, վասն Հասուցեալ գանձանակադրամին. շնորհակալութիւն, ձեռամբ մահտեսի Խնկիկին և մահտեսի Սենքերիմին, որ է 22 ղուռուշ:

1017 Կոնդակ օրհնութեան ի վերայ Պալաթու Սուրբ Հրեշտակապետ եկեղեցոյ Հասարակութիւնն. շնորհակալութիւն վասն արդեանց գանձանակին, զոր Հասուցեալ էին ձեռամբ գանձապետ Իսահակ ամիրային, որ է 627 ղուռուշ և 21 փարայ:

1018 Թուղթ առ բէնկանցի մահտեսի Մարտիրոս ամիրայն, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն Ժ. (10) ղուռուշ քառանիցին և խոստմանն տալ ամյամէ գնոյն:

364բ

1019 Կոնդակ օրհնութեան ի յՕրթագեղ առ Սուրբ Աստուածածնի ժողովուրդն. շնորհակալութիւն վասն արդեանց գանձանակին, ձեռամբ մահտեսի Յարութիւն աղային, որ է 175 ղուռուշ:

1020 Թուղթ օրհնութեան առ Շէհրէմէնի խօյիին եղեալ դերձակն. շնորհակալութիւն վասն գանձանակական արդեանցն, զոր Հասուցեալ էին ձեռամբ մահտեսի Յարութիւնին և ուստա Գէորգին, որ էր տանն ղուռուշ:

1021 Թուղթ օրհնութեան առ դարապխանայի գործաւորաց էննաֆն, վասն արդեանց գանձանակին շնորհակալութիւն, զոր ձեռամբ գանձապետ պարոն Յովհաննէսին Հասուցեալ էին, որ էր 80 ղուռուշ:

1022 Թուղթ օրհնութեան առ ալաճաճիսն, վասն արդեանց գանձանակադրամիցն շնորհակալութիւն, զոր ձեռամբ մահտեսի Յարութիւն աղային Հասուցեալ էին, որ էր 111 ղուռուշ և 30 փարայ:

1023 Թուղթ օրհնութեան առ Իսկուտարու Սուրբ Կարապետ եկեղեցոյ գանձապետ պարոն Բարսեղն. շնորհակալութիւն և միամտութիւն վասն 165 ղուռուշ գանձանակադրամիցն առ մեզ Հասելոց:

1024 Թուղթ առ Իսկիւտարու Սուրբ Խաչ եկեղեցոյ գանձապետ պարոն Չաքարիայն. շնորհակալութիւն վասն 110 ղուռուշ արդեանցն առ մեզ Հասելոց և պատուէր՝ արի և Ժիր լինիլ ի գործն:

1025 Թուղթ օրհնութեան ի յՕրթագեղ առ տեղւոյն սուրբ եկեղեցոյ գանձապետ Յարութիւն աղայն. շնորհակալութիւն և

միամտութիւն վասն արդեանցն գանձանակին առ մեզ Հասելոց, և պատուէր՝ արի և ժիր լինիլ ի գործն:

1026 Թուղթ շնորհակալութեան առ Սամաթիու Սուրբ Գէորգ եկեղեցւոյ գանձապետ մահտեսի Պարոնն. օրհնութիւն և միամտութիւն վասն առ Հասեալ գանձանակին, և պատուէր՝ արիաբար կատարել զգործն:

1027 Թուղթ օրհնութեան առ Հասան-Փաշայի կողման եղեալ դերձակնն, վասն Հասուցեալ գանձանակադրամիցն շնորհակալութիւն, որ էր 20 ղուռուշ:

1028 Թուղթ շնորհակալութեան առ շէզգատէպաշի քեօռ Վեզիր խանի եղեալ դերձակնն. օրհնութիւն վասն Հասուցեալ 20 ղուռուշ գանձանակադրամին, ձեռամբ ուստայ Մելքոնին և գանձապետ ուստայ Սարգսին:

1029 Թուղթ առ Հասան-Փաշայի դերձակաց Մելքոն և Ղուկաս գանձապետնն. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն Հասուցեալ տրոցն, և պատուէր՝ արի և ժիր լինիլ ի գործն իւրեանց:

1030 Թուղթ առ տիւրկեար մահտեսի Գէորգն. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն ԺԲ. (12) ղուռուշ քառասնիցին սակա Հոգւոյ իւրոյ և Հանգուցեալ Հօրն իւրոյ՝ տէր Կարապետ քահանային:

1031 Թուղթ օրհնութեան առ Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյ տէր Ասդրէաս քահանայն, վասն տուեալ 30 ղուռուշ Հոգեբաժնին շնորհակալութիւն, որոյ կինն ևս յիւր կողմանէ Ժ. (10) ղուռուշ էր տուեալ ի մանակցութիւն յախճապակեայ շինուածոյն, առ որ օրհնութիւն:

1032 Թուղթ օրհնութեան առ Ղումղափուի Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ |365ա| պարոն Մարտիրոս, մահտեսի Աստուածատուր և պարոն Միքայէլ գանձապետնն Սրբոյ Աթոռոյս, շնորհակալութիւն վասն Հասուցեալ տրոց գանձանակին և Համաբուս ազդարարութիւն ինչ զանցիցն մերոց¹⁷²:

Օրհնութեան նամակներ են ուղարկուել Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցու Խոյսատուր եւ Յովհաննէս աղաներին. «վասն Հասուցեալ տրոց գանձանակին» (365ա, Ա./1), Հանգուցեալ Յովհաննէս ամիրայի որդի պարոն Եղիային (Կ. Պօլիս).

¹⁷² Որոշ նամակների ժամանակագրությունը խախտելու առնչությամբ գրիչը հետևյալ բացատրագիրն է թողել. «Ծանի՛ր, զի այս վերոյ գրեալ թուղթս, որք այսպէս յետ և առաջ եղան, սոցա ոմանց թիւն է ի յանցեալ տարոյ դեկտեմբերի ելն և ոմանց ի նոր տարոյս փետրվարի ժԲ. (12), զի ժամանակն անյաշող պահելով՝ ըստ պահանջման հարկին այսպէս դասեցան: Ուրեմն՝ ի յորոնելն քո գրողքս, պարտի՛ս նայել ի լուսանցսն, զի ի լուսանցսն նշանագրեալ խաչն ցուցանէ թէ յայս նոր տարոյ փետրվարի ժԲ. (12) է և առանց նշանին՝ պարտի՛ս յանցեալ տարոյ դեկտեմբերի ելն իմանալ» (ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 365ա):

«վանն մահուան ջօրն և Հաստատութիւնն ի գործ գանձապետութեան» (Ա./2), Պալաթու Սուրբ Հրեշտակապետ եկեղեցու գանձապետ մահտեսի Սահակ ամիրային. «վանն տրց գանձանակին առ Հասուցելոց» (Ա./3), մաշկերոցի Հանգուցեալ Մարգարի որդի պարոն Գրիգորին. «վանն Ժ (10) ղուռուշ Հոգեբաժնին յաղագս Հոգւոյ ջօրն» (Ա./4), սառաֆ Աւետիքին. «վանն տարեկան տրոցն, որ այսմամի տուեալ էր Գ. (3) ղուռուշ» (Ա./5), մահտեսի Կարապետ ամիրային. «որ գրասն ղուռուշ Հոգեբաժնն էր տուեալ սակս կնոջն իւրոյ և գի. (20) ղուռուշ ևս քառասնից» (Ա./6), տպագրիչ մահտեսի Յովհաննէսին. «վանն Ժ (10) ղուռուշ կտակին» (Ա./7), Բրաբրոն տիկնոջը. «վանն Ժ (10) ղուռուշ քառասնից տալոյն» (Ա./8), թուրքունճի պարոն Աւետիքին. «վանն ԺԵ. (15) ղուռուշ տալոյն» (Ա./9):

365ա

1796 թ., փետրուար - **Թուղթք ի Ղարս, ի Խօյ**

1033 **Ի Ղարս - Թուղթք ի Ղարս առ Գէորգ աղայն.** ծանուցումն թղթոյն առ մեզ Հասանելոյն, և թէ իմացաք զՀիւանդութիւն ընտանւոյն քո և դատեր մերոյ, յորում Աստուած առողջութիւն տացէ: ՉՀաշուոյ դաւթարդ առից և տրից, զոր [365բ] գրեալ և յղեալ էիր, ընկալեալ Հաւանեցաք, Տէր օրհնեսցէ:

Յաղագս անցելոյ ամին արդեանց գանձանակին, որ զթուղթ էիր ինդրեալ, ահա գրեցաք զկոնդակ օրհնութեան և շնորհակալութեան ի վերայ քաղաքիդ, և զթուղթ մի առ գանձապետ մահտեսի Եղիայն, զորս յղեցաք ի ձեռս քո, զկոնդակ ընթեռնու տայցեք յեկեղեցին, և գանձապետի գիրն տացես իւրն ի միամտութիւն:

Իսկ, որ կաղզլանցի Ուռուստում աղին յաղագս Հազար փայտին, որ նոր ևս ԲՃԾ. (250) ղուռուշ էիր տուեալ ի վերայ անցեալ տարւոյ տուելոյդ և գրեալ ի դաւթարոջդ, բարի է: Եւ ծանուցեալ էիր զանգամութիւն Գրիգոր առն միոյ, որ զՄարիամ կնոջ այրի միոյ վախուժ արարեալ տունն Սրբոյ Աթոռոյս՝ յափշտակեալ է ի նմանէ: Վանն որոյ ըստ ինդրոյդ սաստից թուղթ գրեցաք առ նա: Եւ որ վանն փաշային մէկ սպիտակ բուժատար շալ էիր ինդրեալ, թէպէտ Հետեցաք գտանել և յղել բայց լան չգտանեցաւ, որ յղեաք, տեսցուք, յետոյ ձեռն բերեալ յղելոց եմք: Ի կողմանէ նորին միամի տ լեր:

Ողջոյն առաջնորդ Յովհաննէս վարդապետին:

1034 **Թուղթք առ Ղարսայ քահանայն,** վանն արգելոյ յօրինաց զԳրիգորն, որ յափշտակեալ էր զվախուժ տունն Սրբոյ Աթոռոյս ի ձեռաց Մարիամ կնոջն, որ վախուժ էր արարեալ:

1035 **Թուղթք ի Ղարս առ մահտեսի Գրիգորն,** որ զՄինաս տղայի վախճանելոյ զպարտսն Սրբոյ Աթոռոյս յանձն առեալ ամ ըստ ամէ սակաւ Հասուցանէր:

1036 **Կոնդակ օրհնութեան ի վերայ Հասարակութեանն Ղարսայ քաղաքի.** շնորհակալութիւն վանն Հասուցեալ արդեանցն, որ էր Հարիւր և քառասուն և Հինգ ղուռուշ:

1037 **Թուղթ օրհնութեան առ մահտեսի Եղիայն՝ գանձապետ Սրբոյ Աթոռոյս.** Հնորհակալութիւն վասն Հասուցեալ գանձանակադրամին, և պատուէր՝ արի և ժիր լինիլ ի գործն:

Գրեցան յամնոյս ԺԷ. (17):

1038 **Ի Խօյ - Թուղթ ի Խօյ առ Իսաճան աղայի եղբայր պարոն Յակոբն.** յիշումն ընդ Լմայ անապատի միաբան Ներսէս վարդապետիւ գրեալ թղթոյն մերոյ առ Իսաճան աղայն, և թէ ի դեկտեմբերի ԺԵ. (15) թուղթ մի ևս գրեցաք առ նա, և զթուղթ մի առ Թաւրիզու տէր Յովսէփին, և ոչ միոյն զպատասխանին չառաք: Եւ ոմանց լուաք, որ Իսաճան աղայն գնացեալ է ի տունն իւր և չգիտեմք, թէ Ներսէս պետն ընդ նմա՝ է գնացեալ թէ յետոյ: Եւ տէր Յովսէփի թուղթն տե՛ղ է Հասուցեալ, թէ որպէ՛ս եղև:

Այժմ՝ զանազան ձայնք Հսչէն յականջս մեր ի կողմանէ շահին, ուրեմն ի քաղաքդ զի՛նչ Համբաւ լսէք ի բանակէն, գրես՛ջի՛ք մեզ զճշմարիտն, զի միամիտ լիցուք: Ողջոյն եղբօրն իւրոյ Իսաճան աղային:

Գրեցաւ յամնոյս Ի. (20):

1039 **Ի Ղօշավանք - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն.** յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ, և թէ՛ յանցեալ աւուրսն Գէորգ աղայն թուղթ էր գրեալ մեզ և վասն փաշային զմի սպիտակ շալ էր ինդրեալ, յայնժամ լան ոչ գտանելով, այժմոյս մէկ լան առ ձեռն բերեալ, յղեցաք:

Եւ մէկ |366ա| սպիտակ շալ ևս Մուտտարիս աֆանտոյն Հանդերձ միոյն Հնորհաւորութիւն, և միւսոյն աչքալոյս, զորս յղեցաք ի ձեռս Գէորգ աղային, զի ի միասին մատուցիք փաշային զթուղթն և զընծայն, զի վասն քո զյանձնարարութեան բանս եմք գրեալ նմա:

Վասն Բարեկենդանի բաժին զմի կարաս գինի քեզ և վասն իշխանաց քաղաքիդ, զոր վայելես՛ջի՛ք ուրախութեամբ: Եւ վասն դրամոյն, զոր յառաջագոյն գրեցաք, թէ բերելոց եմք, այժմ՝ մէկ նասիպ չտեսաք, որ բերել տայաք: Ժամանակ մի ևս մնացէ, զկնի աւուրց ինչ եթէ լինիցի, բերելոց եմք:

Եւ թէ՛ ի քաղաքիդ մէկ տէր Գաբրիէլ անուամբ քահանայ գոյ, որ սահմեղազութիւն¹⁰⁵ գիտէ, ի մէնջ ողջոյն տուեալ նմա, Հարկիւ յուղարկեսցես աստ՝ վասն Հարկաւորութիւն բանից ինչ¹⁷³:

¹⁷³ Սնաթսագոյքումը, ինչպես վերը նշեցինք, ժամագործութիւնն է, հիմնում թուրքերէնից և պարսկերէնից փոխառչալ «սնաթսագ» բառն է: Այդ արհեստին էր տիրապետում նաև վերոնշյալ վավերագրերից մեկում հիշատակված Փիլումի որդի Խոյեցի Առաքելը (վավ. 175), որը թաղված է Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում (մահ. 1829 թ.):

1040 **Փոստուլայ մի առ սա յաղագս Բ.** (2) *անտուկ ամանա-
թիցն, որ յղեցաւ ընդ վէքիլ Գրիգոր պետին, առ ի պահել անդ ան-
քոյթ և ապահով տեղուծ:*

1041 **Ի Կարս - Թուղթ ի Կարս առ Գէորգ աղայն.** *յիշումն
յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ առ նա, յորում թէ, որ վասն փաշա-
յին շալ էիր ինդրեալ, յայնժամ լաւն չլինելով, այժմ գտեալ զմի լաւ
սպիտակ և հազարաբուծայ ազնիւ շալ քիշմիրու, յղեցաք, որոյ
գինն է ութսուն դանայ հին ավթմիշլըղ, որ կէշար փողով լինի
ՃԽԴ (144) դուռուշ, և մէկ սպիտակ շալ ևս Մուստարիս աֆան-
տուն յղեցաք: Բայց զայս առ մեզ գտանելով, զգինս նորին ո՛չ յի-
շատակեցաք: Ինչ և իցէ, միոյն վասն շորհաւորութեան և միոյն
աչքալուսի: Եւ պատուէր, զի Բ. (2) Հօխայաչափ լաւ արջասպ
առեալ յղեսցէ վասն մելանի:*

*Այլև՝ վասն Բարեկենդանի բաժին զմէկ լիտր օղի յղեցաք իբր
օրհնութիւն ի Սրբոյ Աթոռոյս, զոր ուրախութեամբ վայելեսցիր:*

Գրեցան յամոյս Ի Դ. (24):

1042 **Ի Թարեզ - Թուղթ առ Թարվիզու տէր Յովսէփին,**
*ի պատասխանի թղթոյն գրեցելոյ. տրտմութիւն ընդ ողբալի
բանան և ուրախութիւն ընդ ողջամտութեանն: Եւ թէ ի Յակոբ
վարդապետէն մերմէ, որ ի ճանապարհէն թուղթ էիր ընկալեալ և
առ մեզ յղեալ ի Բաղտատու գրեալ թուղթն ևս առաք: Թէպէտ
թուղթ էաք գրելոց նմա, բայց ոչ ժամանեաց: Աստուծով յետ
աւուրց յղելոց եմք:*

*Այլև զԱլեքտիս վարդապետի որպիսութիւնն ըստ լսելոյդ, որ
ծանուցեալ էիր, իմացաք, ըստ խոստմանդ, զոր ինչ գրով և բանիւ
և տեղեկասցիս, ազդ արասցես մեզ:*

Տեղին է նշել, որ Արևելյան Հայաստանի վարչատնտեսական կենտրոն Երևանում XVIII-XIX դարերում զարգացած է եղել արհեստագործությունը: XIX դարի առաջին տասնամյակներում Երևանի արհեստների և արհեստագործների վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում ռուս պատմաբան Իվան Շոպենը, որի հիշատակած 70 անուն արհեստների շարքում վկայված է նաև ժամագործությունը, որով զբաղվող արհեստավորների թիվը 2-ն է (**И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ея присоединения к Российской империи, Санкт-Петербургъ, 1852, с. 843-844**): Հետագայում, Այսրկովկասի ֆաղաֆներում գործող հայ համաբնություններին անդրադարձած պատմաբան Վալենտինա Աբրահամյանը տարեգրությունների սկզբունքով ներկայացնում է արհեստների և արհեստավորների բազմաթիվ աղյուսակներ, որոնցում տեղ ունի նաև ժամագործությունը: 1886-1887 թթ. Երևանում գործած արհեստավորների օրինակով, հեղինակը հիշատակում է ժամագործ տասը վարպետ, նույնիսկ աշակերտ և տասնմեկ բանվոր (**Վ. Աբրահամյան, Հայ համաբնությունները Անդրկովկասի ֆաղաֆներում (18-20-րդ դարի սկիզբը), Երևան, 1971, էջ 47-48**): 1865 թ. Ալեքսանդրապոլ (Գյումրի) ֆաղաֆում գործած արհեստավորների կազմում հիշատակվում են նաև ժամագործները՝ յոթ վարպետ, տասնհինգ բանվոր հարաբերակցությամբ (նշվ. աշխ., էջ 56): Նրանք խանութներում են գործել (նշվ. աշխ., էջ 58):

Նաև՝ զԱնգալուայ պարոն Ալեքսանի թուղթն, զոր յղեալ էիր, ընթերցաք, և դու, զոր ինչ գրեալ էիր զմաննէ, գիտացաք, բայց գրաբերիս շուտով դառնալոյն աղագաւ չեղև այժմ՝ գրել ինչ առ այն:

Եւ յաղագս գտանելոյդ յայդր զՏէր-Շմաւօնեանց պարոն Ստեփանի Ա. (1) թոռն շնորհակալ եմք: ՉԲարբարէ անուն թոռն ևս ի Սալմաստէն գտեալ, ուստի և պարոն Ստեփանին ազդ առնել ետուք, տեսցուք, եթէ զի՞նչ է լինելոց:

Իսկ և ԱՀմատ խանի յայդր յանդիպիլն և զինչ խօսիլն ընդ քեզ, որ գրեալ էիր, իմացաք: ԱՀա այժմ զիւր Ղասում աղայ անուն մէկ մարդն յղեալ էր առ մեզ և զոմանս իրս ինդրեալ, և մէք |366բ| սիրով ընկալեալ, զինդիրն կատարեցաք, և զթուղթ գրեալ վասն քո ևս զյանձնարարութեան բանս գրեցաք: Բայց ԱՀմատ խանն այս Ղասում աղային ասացեալ էր, և սա մեզ ասաց, թէ անդ մի ոմն մարդ մեռեալ է անզաւակ և զայգին կտակեալ է Սրբոյ Աթոռոյս, այլ ի Խօյայ կողմէն վիճեն ընդ այն: Ուրեմն՝ գրեմք քեզ, զի ստոյգ տեղեկասցիս, թէ մեռեալն ո՞վ է և կտակն որպէ՞ս է: Վերահասու եղեալ բանին, գրեալ ծանուցես մեզ, զի գիտասցուք և այլն] մՀոգասցուք:

Այլև յանցեալ տարւոյ մայիսի ԺԵ. -ին (15), որ գրեցաք քեզ, թէ Լ. (30) լիտր Թաւրիզի յատակ և մանրաՀատ դանտ, Լ. (30) լիտր չամիչ և ԺԵ. (15) լիտր բատամ առեալ յղեսցես: Նոցին կողմանէ բան չէիր գրեալ, թերևս բազում զբաղմամբ շփոթեալ, մոռացեալ իցես: Ուրեմն՝ կրկին գրեմք՝ շուտով Հոգացեալ յղեսցես զայնս:

Իսկ վասն Հաւուն, զոր նշանակեալ էիր յետս թռչիլ, մէք այժմ ընդ այսր դառնալ լսեմք: Ապաքէն ևս, զոր ինչ Հաւաստին լուիցես, անյապաղ զեկուցես մեզ: Ողջոյն եղբարցն և որդւոցն:

Գրեցան յամնոյս ԻՉ. (26):

366բ

1796 թ., մարտ - **Թուղթք ի Թօխատ, ի Գեանջա, ի Խօյ և ի Բաղլադ**

1043 **Ի Թօխատ - Թուղթ ի Թօխատ առ Սրբոյ Աթոռոյս գործակալ պարոն Գասպարն, ի պատասխանի Բ. -ց (2) թղթոցն և շնորհակալութիւն յաղագս բարելաւութեանցն առ գործավճար նուիրակ Ներսէս վարդապետն, և թէ մէկ պաՀարան թուղթք յղեցաք ի ձեռս քո, զոր և դու Հասուցես առ տեսարս իւրեանց ի միամտութիւն:**

ՀնորՀակալական նամակներ նուիրատուներ իրակզատէ ՕՀան աղային (Թօխատ). «վասն 100 դուռուչ քառամնիցն, սակս Հանգուցեալ մօրն իւրոյ» (366բ, Ա./1), մաՀտեսի Պօղոսին. «վասն 50 դուռուչ տալոյն, սակս Հանգուցեալ կնոջն իւրոյ» (Ա./2), մաՀտեսի Յակոբին եւ՛նրա եղբայր պարոն Սիմօնին. «յաղագս 20 դուռուչ նուիրելոյն» (Ա./3), մաՀտեսի ՅովՀաննէսին. «վասն Հանգուցեալ աներին իւրոյ՝ մաՀտեսի Պետրոսին քսան և Հինգ դուռուչ նուիրելոյն» (Ա./4), մաՀտեսի Առա-

քելին. «սակս քսանն և Հինգ զուռուշ նուիրելոյն» (Ա./5), պարոն Մինասին. «վանն Հանգուցեալ մօրն իւրոյ յիսուն զուռուշ կտակի տալոյն» (Ա./6), պարոն Գասպարին. «վանն Հանգուցեալ մօրն իւրոյ տասներկու զուռուշ և կէս նուիրելոյն» (Ա./7), պարոն Յակոբին. «յաղագս Հանգուցեալ կողակցոյն իւրոյ քսանն և Հինգ զուռուշ տալոյն» (Ա./8), տէր Ստեփան քահանային. «վանն նուիրելոյն յիսուն զուռուշ կտակին, որ իւր կենդանութեանն տուեալ էր» (Ա./9), Մայր Աթոռի գանձապետ մահտեսի Պօղոսին. «վանն նուիրելոյն 125 զուռուշին, սակս Հանգուցեալ եղբօրն իւրոյ՝ մահտեսի Սարգսին» (367ա, Ա./1), ժամկոչ Պօղոսին. «վանն տալոյն 20 զուռուշ կտակին ի կենդանութեանն» (Ա./2), մահտեսի Եղիային. «վանն Հանգուցեալ կնոջն 125 զուռուշ նուիրելոյն» (Ա./3), մահտեսի Պապիկ եւ պարոն Յակոբ եղբայրներին. «վանն Հանգուցեալ եղբօրն իւրեանց 100 զուռուշ կտակին» (Ա./4), պարոն Ստեփանին. «յաղագս տալոյն 50 զուռուշ կտակին, վանն Հանգուցեալ աներին իւրոյ՝ բօյաջի Կարապետին» (Ա./5), պարոն Յովհաննէսին. «վանն Հասուցանելոյն 130 զուռուշ խոստմանն, ի կողմանէ Հանգուցեալ մահտեսի Յարութիւնին» (Ա./6), Խանում տիկնոջը. «վանն Ա. (1) մարի ոսկի ողորմութիւն տալոյն» (Ա./7), գանձապետ մահտեսի Աստուածատուրին. «վանն Հասուցեալ գանձանակադրամիցն» (Ա./8), մահտեսի Կարապետին. «սակս Հանգուցեալ աներին իւրոյ 15 զուռուշ կտակ նուիրելոյն» (Ա./9), ղազանչի Գէորգին. «վանն նուիրելոյն զմի զոյգ ժամարարի գօտի» (Ա./10):

1044 Թուղթ առ սրբոյ Երուսաղէմի նուիրակ Պօղոս վարդապետն, որ ի կողմանս Աղուանից, ծանուցումն քանի թղթոյն առ մեզ Հասանելոյն, և թէ՛ յանցեալ տարուջն զպատասխանիս նոցին գրեցաք առ քեզ, և յայնմէտէ ո՛չ ընկալաք ի քէն զթուղթ, զի գիտիցէաք զորպիսութիւն քո, թէ ո՛ր կաս, և թուղթն մեր քե՛զ է Հասեալ, թէ ոչ: Չայնմանէ չիմացաք, թէ որպէ՛ս եղև: Եւ Համառօտ ծանուցումն զորպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և մեր:

Իսկ յաղագս Հինգ Հակ թեղիցն, որ ի յայնց կողմանցն յղեալ էր ի Սուրբ Աթոռս, առ այն միամտութիւն, թէ ի ապահով տեղուջ պահեմք մինչև ցգալո: Եւ սակս դրամոյն քոյ, որ կայ ի Բայազիտ, այժմոյս գրեալ էր մեզ գործակալն մեր տիրացու Գէորգ, որ զչորս Հարիւր զուռուշ ժողովեալ է, իսկ մնացեալքն յիւրաքանչիւր տեղիս են և այն:

Այլև ի վաղուց Հետէ ի վէքիլ տիրացու Սարգսէն թուղթ մի էՀաս առ մեզ Հասանելի առ քեզ, բայց ճանապարհքն խառնակ գողով, չյաջողեցաւ յղել: Իսկ այժմ՝ ընդ թղթոյս յղեցաք ի Գեանջա, որ անտի Հասանիցի առ մեզ:

[Գրեցաւ յամնոյս] Է. (7):

1045 Ի Ղօշավանք - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, յորում թէ տէր Գաբրիէլ քահանայն, որ ինդրեալ էաք գալ ի Սուրբ Աթոռս, ընդ Պօղոս վարդապետին յղեալ էիր ի Ղօշավանք՝ գալ անտի ի Սուրբ Աթոռս, զոր և գիտեցեալ գրեցաք մաստարացւոցն

երթալ և բերել անտի աստ: Եւ թէ այժմոյս անձեռնհաս լինելով, զպատասխանիս թղթոցն լիովին չկարացաք գրել, յետոյ ի դիպող ժամու գրելոց եմք: Եւ որ Բ. (2) օրհնութեան թուղթս էիր ինդրեալ ի մէջ՝ |367թ| մինն ի վերայ մահտեսի Պապուկի, և միւսն ի վերայ Կակոյի կնոջ Շամամին: Մահտեսի Պապուկի Ի. (20) ղուռուշ տուրքն յայտնի գոլով, օրհնութեան թուղթս նորա գրեցուցեալ յղեցաք ընդ թղթոյս տալ ի նա: Բայց որովհետև կնոջ տուրքն պէլլի չէր, այժմ՝ նրա օրհնութեան թուղթս մնաց, ուրեմն նորա տուրքն ևս յայտնի արասցես, որ նորա թուղթս յղեսցուք:

Ողջոյն Գէորգ աղային և թէ ի քաղաքոջ իցես, ի կողմանէ մերմէ ողջունելով, ասասցես նմա փոյթ ունիլ վասն զէյթունին օր մի յառաջ յղել, որպէս յառաջագոյն ևս գրեալ եմք նմա:

[Գրեցաւ յամսոյս] ԺԲ. (12):

1046 **Ի Բաղտագ կամ ի Բասրայ - թուղթ առ Հնդկաց երկրի նուիրակ Յակոբ վարդապետն.** ծանուցումն երից թղթոցն առ մեզ Հասանելոյն ի Չանկիանու, ի Բրմանշաւայ և ի Բաբելձոնէ, յուրում թէ իմացաք զխաղաղագնաց ժամանելդ ի Բաղտագ և զընդունիլդ ի յօրհնեալ ժողովրդէնէն յարգանօք: Իսկ որ ծանուցեալ էիր զհաւաստութիւն վախճանմանն բարեպաշտօն Յօհաննան աղային և փեսայի նորին, ո՛չ սակաւ տրտմութիւն եղև մեզ: Այլ զի՛նչ ունիմք ասել, կամք Տեառն եղիցի օրհնեալ:

Ձթուղթս լուսարար վարդապետին, զոր յուղարկեալ էիր, ետուք իւրն, նա որպէս պէտքն էր այնպէս գրեալ, ահա ուղարկեցաք, զոր Հասուցես ում և արժան իցէ: Իսկ զաւանդն մեր, Հանդերձ իրօք ինչ, անգիտելի յումեքէ ծրարեսցես այնպէս, որ չճանաչիցի զի՛նչ գոլն և ի Բասրա դիցես քոյդ կնքով առ Հաւատարիմ որ զգուշութեամբ պաշէլ մինչև ի դարձդ և ի դաւթարոջդ գրեսցես, որ անմոռանալի մնասցէ բանն:

Եւ թէ, որ ինդրեալ էիր զորպիսութիւնս անցիցն մեր և կողմանցս ծանուցանել, անհնարին գոլով զայն ի թղթի գրելն, ահա տեսրակաւ գրեցաք, զոր ինչ անցքն էին ի մայիսէն մինչև ցդեկտեմբերի վերջն: Եւ պատուէր՝ զգոյշ լինիլ զտեսրակն չարկանել ի ձեռս անհաւատարիմ անձանց: Եւ Համառօտ ծանուցումն զանցիցն կողմանցս մեր:

Եւ թէ ջուղայեցի Յովհաննէս կրօնաւոր վարդապետն, որ ի Բանկալայ է, յանցելումամին ԱՌ. (1000) ղուռուշ է տուեալ յանուն Սրբոյ Աթոռոյս, զոր ի Բասրայ եղեալ օրհնեալ պարոն Գէորգն Տէր-Դաւթեան՝ փօլիցայ առնելով ի Մեծս Պօլիս, իւր օրտնի պարոն Պօղոս Մուրատեան Հասուցեալ է նուիրակ Գալուստ վարդապետին և այլն:

Այլ թէպէտ կամէաք զտեսրակն պատմաբանութեան անցից մերոց ըստ այսմ թղթոյ յղել ի վերայ Խօյու, որպէս և ի վերոյ

գրեցաք, սակայն խորհելով, թէ կասկածելի է այն ընդ ճանապարհս սոցին պատմութեան ուղեւորիլ, թողաք յետ աւուրց ի վերայ Պօլսոյ առաքել: Այլ մերայինքն Համառօտ գրեցին քեզ զանցիցն և զվնասուցն մերոց, զայնքանն իմանալդ բաւական է:

Թէպէտ գրեցաւ զպատմաբանութեան տետրակն յառաջ կամ յետոյ յղել, բայց վասն կասկածանաց ապագայից զկնի ամենայնի գրեցաւ ոչ բնաւ ուղարկել, զի մի անկեալ ի ձեռս անհաւատարիմ անձանց վտանգ ծանսիցի:

1047 **Ի Բաղտադ** - Թուղթ ի Բաղտադ առ պարոն Միքայէլն. յիշումս յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ ընդ նուիրակ Յակոբ վարդապետին, և թէ այժմի Յակոբ վարդապետէն մերմէ զթուղթ ընկալաք և իմացաք անվնաս ժամանիլն ի յօրհնեալ քաղաքդ: Առ Հարկին պահանջելոյ այժմոյս թուղթ գրեցաք նմա և Հանդերձ այլովք ինչ գրովք |368ա| պահարանեալ ընդ թղթոյս քո յղեցաք ի ձեռս քո, զոր Հասուցես ի Բասրա կամ ուր և իցէ, և զերբ յուղարկելդ մեզ ծանուցես:

368ա

1048 **Ի Խօյ** - Թուղթ ի Խօյ առ Իսաճան աղայի եղբայր պարոն Յակոբն. յիշումս թղթոյն առ մեզ Հասանելոյն և ծանուցումս զԲ. - ց (2) թղթոցն մերոց առ ինքն Հասանիլն, և թէ՛ իմացաք Ներսէս պետի ամենայն իրօք գնալն այտի և անվնաս ժամանիլն ի տեղի իւր: Եւ յաղագս պարոն Ստեփանի գերեացն, որ գրեալ էիր գտանելդ ի Սալմաստ առ ոմն զԲարբարէ անուն աղջիկն: Հստ գրեցելոյդ, եթէ առեալ իցես և բերեալ ձեզ մօտ, պահեսցես, զի գրել տուեալ էմք պարոն Ստեփանի կամ մարդ յղել կամ մէկ կերպիւ փողն Հասուցանել ձեզ և տանիլ տալ զաղջիկն:

Եւ թէ յայժմոյս մեր Յակոբ վարդապետէն թուղթ եկն և իմացաք խաղաղութեամբ ժամանիլն ի Բաղտադ: Այժմ Հարկաւորեցաւ թուղթ գրել առ նա և մէկ թուղթ ևս գրեցաք առ Բաղդատու պարոն Միքայէլն Տէր-Մինասեան, և պահարանեալ ընդ թղթոյս, յղեցաք ի ձեռս քո, զոր Հաւատարմաւ յղես՛ի ք առ նա: Եւ զերբ յղելդ ծանուցես մեզ:

Այժմ ստուգեցին, որ շահն դարձեալ է իւր տեղն, բայց մեք պարտիմք ի ձէնջ զլան իմանալ, ուրեմն լաւ վերահասու եղեալ գրես՛իք մեզ, զի գիտասցուք զնորին գիտումն:

Գրեցան յամոյս ԺԵ. (15):

1049 **1797 թ.** - Թուղթ ի Բաղէշ առ Սուրբ Սարգիս եկեղեցւոյ գանձապետն մեր Յօհանն մաշտեաի Սիմօնեան ընդ նոր նուիրակ ... վարդապետին, ի պատասխանի թղթոյն նորա վաղապէս գրեցելոյ յաղագս քանի ամսոց գանձանակադրամիցն վատնելոյ ոմանց:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 50բ

1050 **1797 թ. մարտ - Ի Պօլիս առ քաճանայսն և իշխանան և ժողովուրդն.** ՀնորՀակալուծին վասն եկեալ նուիրակին և յանձնարարութին վասն նոր գնալի նուիրակին, և մխիթարութին վասն անմխիթարութեանն ի կողմանէ եկեղեցւոյ, և առ այն պատուէր՝ միաբանութեամբ Հոգ տանիլ առ ի շինել գնորն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 52ա-53ա

368ա

1796 թ., մարտ - **Թուղթ ի Կարս, ի Կարին, ի Բաղէշ և Զմիւռնիս**

1051 **Ի Կարին - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն, յիշումն Բ.-ց (2) թղթոցն առ մեզ Հասանելոյն, և թէ Մաշմատ Վէլի բէկի բերած փօլիցագիրն, որ էր ԺԻԼՃ. (10800) ղուռուշի, որ գդրամն վճարեալ էիր նմա, և փօլիցագիրն զաշիրայինն առ մեզ դարձուցեալ, ընկալաք, յորոյ կողմանէ միամի տ լիցիս:**

Եւ յառաջագոյն, որ զղաւզ էիր ինդրեալ առ Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն և առ Թօխաթու նուիրակ Բարսեղ վարդապետն, ի փետրվարի 12-ին յղեալ ենք: Ի Հարկէ, մինչև ցայժմ Հասեալ լինին առ քեզ: Այժմ, որ ի Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետէն և յայլոց, և յիզմիրու Դանիէլ վարդապետէն թուղթս ընկալեալ և յղեալ էիր, էՀաս մեզ: Եւ Գալուստ վարդապետն, որ փօլիցայիւ դրամն է Հասուցեալ քեզ նորապէս, այն փօլիցայի ԲԻԹՃՀՀ. (2978) ղուռուշն, որ յԱնկիւրիոյ նուիրակ Գէորգ պետէն էր, նոր ղաւզն գրեալ ետուք աստ Մինաս վարդապետին: Իսկ մնացելոյն աղագաւ, յետ աւուրց գրեանս ունիմք ուղևորելոց առ Գալուստ վարդապետն, յայնժամ գնորին ղաւզն յղեսցուք առ քեզ:

Իսկ այժմ յիզմիր առ Դանիէլ վարդապետն պատրաստեալ թուղթս ունէաք յղելոյ, աՀա յղեցաք ընդ գրոյս, զոր Հաւատարմաւ և շուտով Հասուցես առ նա, և գերբ յղելը ծանուցես մեզ: Եւ թէ նոր փողիցն վնաս մեծ լինի մեզ, գրեցաք Դանիէլ պետին, որ այլևս փօլիցայ չառնէ: Քեզ ևս գրեմք աՀա, որ դու ևս ի նմանէ փօլիցայ չինդրես:

Նաև Դանիէլ վարդապետն յառաջագոյն փօլիցայ արարեալ դրամոցն գրէ մեզ, թէ սաղ փող եմ տուեալ, մէք քեզ, որ ժամանակէ գրեալ և Հարցեալ ենք, դու մէկ պատասխանի ո՛չ գրես: Այլև՝ նա ի ՌՄԽԳ. (1794) թուի Հոկտեմբերի] Զ.-ին (6) և նոյեմբերի] ԺԵ.-ին (15) գրեալ թղթովքն գրէ մեզ, թէ ԱՃՀԴ. (174) ղուռուշ փօլիցայ ետու Մարգար աղային, որ Հասուցանէ ի Կարին պարոն Հայրապետին, իսկ դու յայսքան ժամանակս բնաւ ոչ յիշես: Եթէ քեզ է Հասեալ, ընդէ՛ր ոչ գրես, և թէ ո՛չ է Հասեալ, ծանո՛ մեզ, զի նմա ջուղապ գրեսցուք: Նաև Մարաղայու ԱՀմատ խանի թամասուկն յղես:

Այլև՝ բոլորակ և նաղշու փայտեայ ղուլթիքն, որ երբեմն ևս յուղարկած [368բ] էս, յորս սաՀաթ և այլ այնպիսի զատ կդրուին, Լ. (30) Հատ մեծ տեսակէն, և Լ. (30) մէջերի եղած փոքր տեսակէն առեալ յղեացես:

1052 **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ ՅովՀաննէս վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, յորում թէ՛ որ երկու օրհնութեան թուղթս էիր ինդրեալ՝ մինն ի վերայ մաՀտեսի Պապուկին, և միւսն ի վերայ Շուշան անուամբ կնոջ, աՀա ընդ թղթոյս յղեցաք ի ձեռս քո, զոր տացես ինքեանց: Եւ թէ մէկ պաՀարանաւ թուղթս ևս յղեցաք առ քեզ, որ պարտի Հասանիլ ի Պօլիս: Ուրեմն փութով յղեացես ի Կարին, որ անտի Հասանիցի առ նուիրակ Գալուստ վարդապետն և զերբ յղելդ ծանուցես մեզ:

1053 **Ի Չմիւռնիա** - Թուղթ առ Իզմիրու նուիրակ առաջնորդ Դանիէլ վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ընդ որում և առաքեցաւ կոնդակն նոր նուիրակութեան ի վերայ իւրն, ընդ նմին և զտետրակն պատմաբանութեան անցիցն կողմանցս և մեր: Ողջոյն Ներսէս վարդապետին: Տէ՛ս ի մեծ տեսեր յեր[եան] 2084:

ՀտորՀակալական նամակներ նուիրատուներ՝ Բերղամայու պարոն Ճատուրին (Չմիւռնիա). «ի կողմանէ Հանգուցեալ մաՀտեսի Պաշարաթին Ճ. (100) մարշիլ Հոգեբաժին տալոյն» (368բ, Ա./3), Հանգուցեալ մաՀտեսի Թաղէոսի որդի մաՀտեսի Յակոբին (Ղընրղ). «վասն մաՀուան Հօրն... վասն տուեալ Հոգեբաժին» (Ա./4), Հանգուցեալ ՅովՀաննէսի կին Մարիամին (Չմիւռնիա). «վասն մաՀուան որդոյն Գալուստ սարկաւագին, որ ի վայելուՀ Հասակի երիտասարդութեան վախճանեցաւ ի Սուրբ Աթոռոջ» (Ա./5), գաղացի Հանգուցեալ մաՀտեսի Պետրոսի որդիներ՝ Նուպարին եւ Պօղոսին (Ղընրղ). «վասն վախճանման Հօրն իւրեանց» (Ա./6), պարոն Վահանի որդի Թաղէոսին (Չմիւռնիա). «վասն ակնոցին, զոր տուեալ էր յանուն սրբազանին և յանձնեալ առաջնորդին» (Ա./7), պարոն Երեմիային (Չմիւռնիա). «վասն մաՀուան կնոջ իւրոյ» (Ա./8), մաՀտեսի Պապուկին (Կարս). «վասն տուեալ Ի. (20) ղուռուՀ Հոգեբաժին» (Ա./9), Շուշան տիկնոջը (Կարս). «վասն Հասուցեալ Ի. (20) ղուռուՀ քառասնիցն» (Ա./10), Կամրկապի եկեղեցու ժողովրդին (Բաղէշ). «յաղագս Հասուցեալ Ի. (40) ղուռուՀ գանձանակագրամին» (Ա./11), Կամրկապի եկեղեցու գանձապետ պարոն Ղարիպջանին (Բաղէշ). «վասն արդեանց գանձանակին Հասելոյ» (Ա./12):

368բ

1054* **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն, յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ առ նա, յորում, թէ վասն ղարսեցի Աբրահամի որդի Գէորգին, որ գրեալ էիր, թէ կոնդակ /369ա/ տայցեմք վասն աղքատութեանն, ըստ որում և իշխանք քաղաքիդ ևս էին գրեալ, վասն բանի ձերոյ զկոնդակն շորհեցաք և ուղևորեցաք, որ վաղապէս եկած կու լինի: Իսկ Գալուստ վարդապետն, որ ԳՌԴՃՀԷ. (3477) ղուռուՀ փօլիցայ էր Հասուցեալ քեզ, որոց մեծ մասն ի կողմանէ Անկիւրոյ նուիրակ Գէորգ

վարդապետին և փոքր մասն` յիւր կողմանէ: Վասն այն գրած էիր, թէ ԲՌԹՃ. (2900) ղուռուշի ղավզ տամք Մինաս վարդապետին ի կողմանէ Գէորգին պետին և ԵՃՀԷ. (577) ղուռուշի ղաւզ գրեմք Գալուստ վարդապետին, սակայն Գալուստ վարդապետն մեզ գրեալ էր, որ մեք Մինաս վարդապետին ԲՌԹՃՀԸ. (2978) ղուռուշի ղաւզ տամք, որ մնայ ԴՃՂԹ. (499) ղուռուշ և Ա. (1) ղուռուշի Հեսապ ևս յայլ Հեսապից խառնելով, ԵՃ. (500) ղուռուշի ղաւզ էր ինդրեալ, ըստ իւր գրեցելոցն լաւ վերահասու եղեալ:

Իմացաք, որ ի կողմանէ Գէորգ վարդապետի ԲՌԹՃՀԸ. (2978) ղուռուշի ղաւզ պարտիմք տալ Մինաս վարդապետին, որ և ետուք: Եւ Գալուստ վարդապետին ԴՃՂԹ. (499) ղուռուշի ղաւզ պարտեաք յղէ: Բայց ուրիշ երկու փոքր Հիսապ կայր, զայն ևս խառնեցաք ի մէջն, որ եղև ԵՃԾԵ. (555) ղուռուշի ղաւզ, զոր Հասուսցես նմա ի միամտութիւն: Բայց ի Գալուստ վարդապետէն Բ. (2) թուղթս էիր յղեալ մեզ, որոց առաջինն ի Հոկ[տեմբերի] Ժ. -ին (10) է գրեալ և երկրորդն` ի դեկ[տեմբերի] ԺԹ. -ին (19): Չայս փօլիցայս, զոր գրեալ էս, նա յետին թղթոջն էր գրեալ, այլ առաջին թղթոջն ևս գրեալ է, թէ ԲՌԵՃ. (2500) ղուռուշի փօլիցայ ետու ըստ գրեցման պարոն Հայրապետին: Իսկ դու զայնմանէ ամենայնին չես գրեալ զբան ինչ, վասն որոյ և մեք ղաւզ չգրեցաք: Նաև` թէպէտ գրեալ էմք, ի զարս Բ. (2) ղաթարի չափ ջորիս առնել ի պետս Սրբոյ Աթոռոյս, բայց և քեզ գրեմք, զի և դու յայդր բարեկամաց ձեռօք Հարցանես և տեղեկանաս, թէ վաճառելոյ ջորիք գտանին և գինն ինչպէս է` գրեսցես մեզ, գուցէ այտի ևս առնուցումք զբանիսն: Այլև` Ա. (1) պահարանաւ թուղթք առ Անկիւրոյ նուիրակ Գէորգ պետն կայ ընդ թղթոյս, զոր յղեսցես առ նա: Եւ Ա. (1) պահարանաւ թուղթք առ գանձապետ մահտեսի Յակոբն: Նաև` ի մարտի ԺԵ. -ին (15) գրեալ թուղթդ էՀաս մեզ` Հանդերձ թղթովք նուիրակին և այլոցն: ՉՊօլոյ թղթոցն մերոց առ քեզ Հասանիլն և զքո յղելն, որ ծանուցեալ էիր, միամտեցաք և վասն գալոյդ, որ ցուցեալ էիր ի յաշնանն գալ, բարի է, եթէ ողջ մնայցեմք ի յաշնանն գայցես:

Նաև` Արդնու վանից նոր առաջնորդ Սահակ պետն ԱՃ. (100) ղուռուշ է յղեալ յԱմիթ ի ձեռն խօջայ կարապետին մահտեսի Գասպարեան: Եւ նա փօլիցայ է արարեալ յայդր Հասանիլ քեզ, բայց դու զայն չես գրեալ մեզ: Եթէ քեզ է Հասեալ գրեսցես մեզ, որ յիշեալ առաջնորդի պատասխանն գրիցեմք: ԲՌԳՃ. (2300) Հատ Հին վաթմննոց, որ երկու ծրարօք յուղարկեալ էս ի Բայազիտ առ տիրացու Գէորգն, զքիրայն մինչև ցանդ տալով շնորհակալեցաք զքն և վասն մահտեսի Սերօբի տալեացն, որ գրեալ էիր, թէ յղեաց զմանն ևս շնորհակալ էմք և առ նա օրհնութեան և միամտութեան թուղթ գրեցաք, զոր տացես իւրն: Չբամպակի որպէսն, որ նշանակեալ էիր, իմացաք, բայց մեք Հարկաւորութեան դրամոյ զմերն որպէս և իցէր` ետուք առողաց: Նաև` ՁՌ. (6000), ԵՌ.

(5000) զուռուշ, թէ կարելի լինի, ուղարկած փողիդ Հեսապովն Հին փող շինես, ուղարկես, որ Հարկաւոր պիտոյ է:

Գրեցաւ թուղթս յապրիլի Ը. (8):

1055* Թուղթ առ Ղուլայու վանից առաջնորդ Փիլիպպոս վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ և շնորհակալութիւն վասն արարեալ բարեխաղթեանցն առ նուիրակ Մկրտիչ պետն և սակս յղելոյն գշորս ոսկի Պօլսոյ աջաՀամբուրին, և Համառօտ ծանուցումն կողմանցս:

369բ

1056 Ի Գաղատիա - Թուղթ առ Անկիւրոյ նուիրակ Գէորգ պետն, յիշումն յառաջ գրեալ թղթոյն մերոյ առ նա, յորում թէ՛ որ ի նուիրակական արդեանց Սրբոյ Աթոռոյս, որ զԲԻԹՃ. և ՀԸ. (2978) զուռուշ դրամն էիր Հասուցեալ ի Պօլիս առ Գալուստ պետն, նա ևս փօլիցայ էր արարեալ ի Կարին առ պարոն Հայրապետն, զոր Բ. -քն (2) ևս ծանուցեալ էին մեզ և վասն քո զղաւզ խնդրեալ: Չոր և մեր գրեալ յանձնեցաք Մինաս վարդապետին, որ գրեսցէ առ քեզ ի միամտութիւն: Եւ պատուէր, որ այլ փօլիցայ չառնիցէ, զի նոր փողն աստ պակաս անցանելով՝ վասս լինի մեզ, այլ զամենայն ոսկիս շինեալ բերցէ ընդ իւր:

Եւ Համառօտ ծանուցումն զորպիսութիւն կողմանց և մեր:

1057 Ի յԱմիթ - Թուղթ առ Ամթայ նուիրակ Մկրտիչ վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, յորում թէ՛ իմացաք զաւարտելն քոյ խաղաղութեամբ զգործ նուիրակութեան ի Բալու և ի նորին շրջակայսն, և ի գնալդ ի Մատէն, և ծանուցումն անցիցն կողմանցս և մեր: Եւ թէ ի ժամանակէ նուիրակութեան Աբրահամ պետին սրբալոյս մեռոն ինչ է մնացեալ յԱմիթ առ գանձապետ մահտեսի Յակոբն, զի երբ գնասցես անդր, առցես ի նմանէ զայն մեռոնն, և չափաւորապէս բաժին տացես, և որչափ ինչ մնասցէ, բերցես ընդ քեզ ի Սուրբ Աթոռս: Եւ պատուէր, զի Ի. (20) զուռուշ դրամն, որ կայ առ մահտեսի Յակոբի մօտն, զոր ոմն Մուղալ անոն կին է տուեալ Հոգեբաժին, առցէ ի նմանէ, որպէս նմա ևս գրեցաւ:

1058 Փուսուլայ մի առ սա, որով Հարցեալ էր ի կողմանէ նուիրակական արդեանցն զինչ առնելոյ: Առ, որ գրեցաւ, թէ մինչև ցայժմ որքան փօլիցայ արարեալ էս, բարի է, իսկ եթէ չիցես արարեալ փօլից, այսուհետև զոր ինչ ժողովեսցես՝ Հին դրամ շինեսցես Գ. (3) կամ Դ. (4) փարայ գլուխ տալով, կամ եալտուղ ոսկի, Է. (7) զուռուշ և Ժ. (10) փարայով, կամ քանի փարայ աւելօք առնուցուս: Եւ բաճախլու ոսկին Է. (7) զուռուշով կամ քանի փարայով առնուս և չափաւոր ծրարս արարեալ թէ Հին վաթսուննոց լինի, և թէ ոսկիսն կնքեալ քոյդ կնքովն յուղարկես ի յԱմիթ առ գանձապետ մահտեսի Յակոբն, որ թէ յաջող ժամանակ լինիցի, բերելոց եմք անտի առ մեզ:

1059* **Ի յԱմիթ** - Թուղթ ի յԱմիթ առ գանձապետ Սրբոյ Աթոռոյս մահտեսի Յակոբն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ և յիշումն յառաջքան զայս գրեալ թղթոյն մերոյ առ նա: Եւ թէ յայժմոյս, որ մէկ օրհնութեան թուղթ էիր ինդրեալ ի վերայ Մուղալ անուն կնոջն վասն Ի. (20) ղուռուշ հոգեբաժին տալոյն, ահա ընդ թղթոյս յղեցաք ի ձեռս քո, զոր տացես ինքեան ի միամտութիւն: Եւ վասն սրբալոյս մեռնին, որ Հարցեալ էիր, առ այն գրեմք քեզ, զի երբ գայցէ նուիրակն ի քաղաքդ, ամբողջ կնքովն յանձնեսցես նմա, որ ըստ բաւականին բաշխեսցէ ձեզ և զմնացեալն բերցէ ընդ ինքեան: Նաև՝ որ քանի Հատ տօնացոյց և պարտավճարս էիր ինդրեալ, ո՛չ գոյր Հաւատարիմ եկօղ յայդր, զի յղիցեաք, եթէ այտի Հաւատարիմ եկօղ լինիցի, պատուիրեսցես նմա և գրեսցես մեզ որչափ պիտոյ է քեզ ի ինդրեալ գրեանց, զի յուղարկեսցուք ընդ նմա:

Այլև՝ ի կողմանէ մահտեսի Մկրտչի տանն, որ կամեցեալ էք ի Հայոց մահալայումն մէկ տուն առնուլ և չգտանելով այժմոյս խոստացեալ էք յայլում ժամանակի առնուլ և վախուճ առնել Սրբոյ Աթոռոյս, զոր և մէք Հաճեցաք ընդ այդ և թէ մէկ պահարանաւ թուղթք յղեցաք ի ձեռս քո, որ պարտի Հասանիլ նուիրակին և մահտեսի Մարտիրոսին, զոր Հասուցես յուրաքանչիւրսն և Համառօտ ծանուցումն զանցիցն կողմանցս:

1060* **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ նուիրակ Գրիգոր պետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ և թէ՛ այժմ/370ա/ անձեռնՀաս լինելով չկարացաք լիովին գրել զպատասխանի թղթոյդ: Այլ այժմ միայն այսքան Հարկաւորեցաւ գրել, զի զՂազար պետն, որ ինդրեալ էիր յղել առ ի յօգնութիւն քեզ, ահա սիրով յուղարկեցաք: Եւ որ ինչ արժանն էր ի մէնջ, իւրն խրատ ետուք առ ի մտերմաբար ծառայել և քեզ ևս գրեմք, զի որպէս պատկանն է, ինամօք կալցիս զդա, որ սրտագիւր արասցէ քեզ:

1061* **Թուղթ առ Բարձրահայեաց Սուրբ Աստուածաձնի վանից առաջնորդ Սահակ պետն**, յիշումն յառաջմէ գրեալ թղթոյ Հասանելոյն մեզ և թէ, որ ինդրեալ էիր ի մէնջ զկոնդակ պատուիրական ի վերայ վիճակիդ առ ի Հաստատութիւն ի առաջնորդութեան: Ահա ըստ ինդրոյդ գրեալ յղեցաք առ քեզ: Նաև ինդրեալ էիր ի վերայ Փիլիպպոս ամիրային զյանձնարարութեան թուղթ գրել վասն քո: Այժմ չունէաք դիպաղութիւն թուղթ գրելոյ, յայլում ժամանակի, եթէ Հարկաւորիմք գրել, և վասն քո զբանս յանձնարարականս գրելոց եմք և շնորհակալութիւն վասն ձ. (100) ղուռուշ աջահամբոյր տալոյն:

370ա

1062 **Կոնդակ ի վերայ Արղնու ի Հաստատութիւն առաջնորդութեան Սահակ պետին Ամրեցոյ՝ յաջորդի Կարապետ վարդապետին Լուսիկեանն:**

1063* **Թուղթ** **ի յԱմիդ առ մահտեսի Մարտիրոսն, ի պատասխանի թղթոյն վասն Արղնու վանից առաջնորդի խնդրոյն և վասն Ճ. (100) ղուռուշ փօլիցային և ծանուցումն Համառօտ զորպիսովթեանց կողմանցս և Սրբոյ Աթոռոյս:**

1064* **Թուղթ** **ի Մեծին Պօլոյ պատրիարգ Զաքարիայ վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ: Տէս ի մեծ տետ[եր]յերե[սն] 2089:**

1065* **Թուղթ** **ի Մեծն Պօլիս առ նուիրակ Գալուստ պետէն, յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ առ նա և պատասխանի Բ. - ց (2) թղթոցն, յորում թէ՛ իմացաք 2978 ղուռուշ ընկալնուլդ փօլիցայիս ի Գաղատիոյ նուիրակ Գէորգ պետէն և քոյ ևս յարդեանց քոց ընդ նմա խառնելով 3477 ղուռուշ փօլիցայ առնելդ ի Կարին առ պարոն Հայրապետն, որոյ աղագաւ նա ևս գրեալ էր մեզ: Եւ Գէորգ պետի Հասուցեալ դրամոյ ղավզն Մինաս պետին ետուք, որպէս դու ևս գրեալ էիր մեզ, որ է 2978 ղուռուշ և գրեցաք Գէորգ պետին՝ միամիտ լինիլ: Եւ վասն քոյ ևս Հինգ Հարիւր յիսուն և Հինգ ղուռուշի ղաւզ գրեալ յղեցաք ի Կարին առ պարոն Հայրապետն, որ նա Հասուցէ քեզ ի միամտութիւն: Տէս ի մեծ տետերյեր[եսն] 2262:**

1066* **Թուղթ** **ի Մեծն Պօլիս առ ակնցի Հաճի Դասն, զոր մեծաւ Հանճարով շինեալ էր զգործարան վառօթահանութեան, առ որս օրհնութիւն և շնորհավորութիւն գործարանին և պատուէր, զի զդիտեալն իւր ի գլուխ տարցէ: Տէս ի մեծ տե[տեր]յե[րեսն] 2086:**

1067* **Թուղթ** **առ գործակից սմին կեսարացի Յակոբ ամիրայն, նոյնպէս օրհնութիւն և շնորհաւորութիւն գործարանին: Տէս ի տետերյե[րեսն] 2088:**

1068* **Թուղթ** **ի Մեծն Պօլիս առ Ղարտաշեան Թադէոս աղայն, յիշումն յառաջ քան զայս գրեալ թղթոյն մերոյ և միսիթարութիւն վասն դիպուածոյն Բարդուղիմէոս Չէլչալոյն՝ բարեկամին իւրոյ:**

1069* **Ի Բասրա - Թուղթ** **ի Բասրայ առ պարոն Գէորգն Տէր-Դավթեան, վասն ջուղայեցի նորադարձ Յովհաննէս կրօնաւորի տուեալ դրամոյն, զոր սա Հասուցեալ էր ի Մեծն Պօլիս առ նուիրակ Գալուստ պետն: Տէս ի փոքրադիր տե[տեր]յե[րեսն] ՃՂԲ. (192):**

Միսիթարական նամակ Բարդուղիմէոս Չէլչալին (Կ. Պօլիս). «յաղագս դառնութեան» (370աբ, Ա./10):

Գանձանակագրամը յանձնելու կապակցութեամբ կոնդակներ Բաղէշի Ս. Գէորգ և Ս. Սարգիս եկեղեցիների ժողովրդին: Հնորհակալութեան նամակ նուիրատուներ պարոն Ստեփանին և մահտեսի Յովհաննէսին (Թօխաթ): Հնորհակալութեան կոնդակ Ս. Աթոռին նիւթական օգնութիւն խոստացած Ղարսի քաւանա-

ներին և ժողովրդին: ՀնորՀակալութեան նամակներ նուիրատուներ՝ Էջմիածնի գանձապետ մահտեսի Պօղոսին (Թօխաթ), պարոն Յովսէփին (Համզաքեարակ): Նամակները գրուել են 1796 թ. յունուար-ապրիլ ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 539-47

1070 **1796 թ., 2 օգոստոսի** - Թուղթ ի Կարին առ Մատենու եկեալ Կարապետն և Անտօնն, որք էին գործակալք սարէսկերի սառաֆ Փիլիպպոս ամիրային. ՀնորՀակալութիւն գալստեան նոցա, և պատասխանի ինդրոյն յաղագս Փիլիպպոս ամիրայի ազատեալ երիցկնոջն ի ձեռաց այլազգեաց:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 93աբ

1071 **1796 թ., 22 սեպտեմբեր** - Թուղթ ի Բաղդատ առ պարոն Միքայէն Տէր-Մինասեան, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի ՌՄՄԳ. (1795) թուոյ դեկտեմբերի Ա. (1) վասն նուիրակ Յակոբ վարդապետին, և Հանգուցեալ Մարգար աղայի կտակին:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 1աբ

1072 **1796 թ., 22 սեպտեմբերի** - Թուղթ ի Բաղդատ առ աղայ Պետրոսն Ստեփաննոսեան. ՀնորՀաւորութիւն գալստեանն անդ և գործակալութեանն ինկլիզաց, և ՀնորՀակալութիւն յաղագս ցուցանելոյն զընդունելութիւն առ Յակոբ վարդապետն, և յորդորումն ի սէր և ի Հաւատարմութիւն Սրբոյ Աթոռոյս¹⁷⁴:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 94բ-5ա

1073 **1796 թ., նոյեմբեր** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ պարոն Եսային մահտեսի Մասեհեան, իբր ի փոխադարձ թղթոյն վաղապէս գրեցելոյ, և յիշատակութիւն երկուց թղթոցն, զորս ի Կարին առ պարոն Հայրապետն գրեալ էր՝ ծանուցեալ մեզ զբանսն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 50ա

1074 **1796 թ.** - Յուղի, պանրի և մատաղացուի ժողովման կոնդակ, Հասցեագրված Նաչիայու, Ալաշկերտու, Թօփրախաղալալու, Խումուրու, Բատնայու, Մնածկերտու, Արծկէու և Արճիշու ժողովրդին, որոնց մոտ այդ գործը կատարելու Համար ուղարկվում է Մինաս վարդապետը:

ՄՄ ԿԴ, թղթ. 243, վավ. 80

1075 **1796 թ., նոյեմբեր** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ Ասլան ամիրայն. մխիթարութիւն վասն եղբօրն իւր Ալէքսան աղային ի

¹⁷⁴ Պետրոս աղա Ստեփաննոսյանին (Բաղդադ) հղված շնորհակալագրի ամբողջական հրատարակւոյթունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 651-652:

Բաղդատ վախճանմանն, և յիշատակութիւն զլաւութեանց եղբօր որդւոյն անդ առ տեղւոյն նուիրակ Յակոբ վարդապետն ցուցելոց և այլն:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 1բ-2բ

1076 **1796 թ. նոյեմբեր** - Թուղթ ի Թօխաթ առ մահտեսի Իսկեանտարն, ի շնորհակալութիւն վասն տրոցն ձեռամբ խօջայ Աբրահամին:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 3աբ

1077 **1796 թ. նոյեմբեր** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ պարոն Եսային մահտեսի Մասեհեան, իբր ի փախադարձ թղթոյն վաղապէս գրեցելոյ, և յիշատակութիւն երկուց թղթոցն, զորս ի Կարին առ պարոն Հայրապետն գրեալ էր՝ ծանուցանել մեզ զբանսն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 50ա

1078 **1796 թ. նոյեմբեր** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ Ղարտաշեան Թադէոնն, ի պատասխանի Բ. (2) թղթոց նորա, և յանձնարարութիւն վասն յՈՒՈՒՄԷլի գնացող նուիրակին¹⁷⁵:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 95ա-6բ

1079 **1796 թ. դեկտեմբեր** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ Ղալթիոյ գանձապետն մեր՝ մահտեսի Խաչատուրն և առ եղբայրն իւր՝ մահտեսի Յովաննէնն, ի պատասխանի թղթոյն և շնորհակալութիւն վասն Հասուցեալ գանձանակադրամիցն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 51աբ

1080 **1796 թ. դեկտեմբեր** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ Պալթու գանձապետն մեր՝ Իսահակ ամիրայն. շնորհակալութիւն վասն Հասուցեալ գանձանակադրամիցն առ Գալուստ վարդապետ նուիրակն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 51բ-2ա

1081 **1796 թ. դեկտեմբեր** - Թուղթ առ Ղումդուփուփի գանձապետն մեր՝ պարոն Մարտիրոսն, մահտեսի Ասատուրն և պարոն Միքայէլն. շնորհակալութիւն վասն արդեանց գանձանակին Հասուցանելոյ առ նուիրակ Գալուստ վարդապետն ի ՌՄԽԵ. (1796) թուին, մայիսի Ի. (20):

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 5աբ

¹⁷⁵ Թադէոս Ղարտաշյանին (Կ. Պոլիս)՝ Ոտոմելի գնացող նվիրակի կապակցութեամբ գրված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 652:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 5բ-6ա

ՀնորՀակալութեան նամակներ նուիրատուներ՝ Լանգուցեալ Յովհաննէսի կին Կիլիստանին (Արապկիր), տէր Աւագի որդի պարոն Մինասին (Համզաբեարաբ), տիրացու Յակոբին, տէր Ներսէսի որդիներ՝ տէր Մարտիրոսին եւ պարոն Սարգսին (Ղլչախչախ): Բաղդաստից Մարգար աղայի կողակից Կատարինէ խաթնուր նուիրել էր ամպշուկանու ծածկոց, որին յղուել է շնորՀակալագիր: Մխիթարութեան նամակ Գեղեցիկ աղային (Բայագիտ): Պարոն Բաբաջան Խանբաբեանին (Բաղբատ) շնորՀաւորում է որդու ամուսնութեան կապակցութեամբ եւ շնորՀակալութիւն յայտնում նուիրակ Յակոբ վարդապետին օգնելու Համար: Տէր Գրիգորին (Եաշ) շնորՀակալութիւն՝ նուիրակ Գրիգոր վարդապետին օգնելու եւ 12 ղուտոշ նուէր տալու Համար, յանձնարարում է նպաստել նոր նուիրակին: Նոյն բնոյթի նամակներ՝ պարոն Յարութիւն Կարիչին (Պօթիշան) եւ աղաշայ Յարութիւնին (Աշու): Փիլիպպէի բնակչութիւնը նուիրակ Գրիգոր վարդապետի միջոցով ուղարկել է գանձանակական եւ Հոգեբաժնական արդիւնքները, այդ կապակցութեամբ՝ շնորՀակալութեան կոնդակ: Մխիթարութեան նամակներ մաշտեսի Գալստանին (Կ. Պօլիս) եւ Լանգուցեալ մաշտեսի Թումանի կնոջը (Պօթիշան): Ժանտախտից ազատուելու կապակցութեամբ Ֆիլիպպէի ժողովուրդը, յորդորմամբ նուիրակ Գրիգոր վարդապետի, Հիմնադրել էր ս. Գեղարդի Համար գանձանակ, այդ կապակցութեամբ շնորՀակալութեան նամակ նրա ժողովրդին: Մխիթարութեան նամակ մաշտեսի Մարտիրոսին (Կ. Պօլիս): Օրնութիւն եւ շնորՀակալութիւն մատաղացու կով եւ գեղեցկակերտ սպիտակ քարեր նուիրած քարՀատ վարպետ Խաչատուրին (Բայագիտ): ՀնորՀակալութեան նամակ կտակակատար տիրիկեցի պարոն Յարութիւնին (Սամաթիայ): Նման բնոյթի նամակ դարձեալ Սամաթիայ՝ տիրիկեցի Լանգուցեալ մաշտեսի Սարգսի որդի մաշտեսի Կարապետին եւ նրա փեսայ քիւրբչի պարոն ՅօՀանին: ՀնորՀակալութեան կոնդակ գանձանակական արդիւնքը յանձնած Օրթագեղի ժողովրդին: Խասգեղից (Կ. Պօլիս) Լանգուցեալ Տաբէս ամիրայի Հարսը եւ Յովհաննէս ամիրայի կին Սուլթանի խաթնուր նուիրել էին գորգ, ինչի Համար շնորՀակալութիւն է յայտնում:

ՀնորՀակալութիւն նուիրատու մաշտեսի Կիրակոսին: Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցու գանձապետ պարոն Բարսեղը նուիրակի միջոցով ուղարկել էր գանձանակադրամը, որի Համար շնորՀակալութիւն է յայտնում: Նոյն բնոյթի նամակ Կ. Պօլիս, տիպպէնտճի Էննաֆի գանձապետ մաշտեսի Սէթի որդի պարոն Յակոբին եւ նրա որդի Մատթէոս Չէլէպիին: ՀնորՀակալութեան նամակ նուիրատու մաշտեսի Երեմիային (Սկիւտար):

Նամակները գրուել են 1796 թ. մայիս-դեկտեմբեր ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 168ա-84բ

Գանձանակադրամը տալու կապակցութեամբ կոնդակ՝ Բաղէշի Ս. Հինգ-խորան եկեղեցու ժողովրդին: ՀնորՀակալութեան նամակներ նուիրատուներ՝

մահտեսի Եղիային, մահտեսի Պօղոսին (Թօխաթ): Օրհնութեան նամակ գանձապետ մահտեսի Աստուածատուրին, որն օժանդակել էր Ներսէս վարդապետին (Ս. Յակոբ եկեղեցի, Ամասիայ): Մխիթարութեան նամակ պարոն Երեմիային (Չմիւսնիա): Բաղէշի Ս. Կարմրակ եկեղեցու գանձապետ պարոն Ղարիբջանին տեղեկացուած է գանձանակի արդիւնքը տեղ Հասնելու մասին: Հնորհակալութեան նամակ Ամիդի Քեապիկ գիւղի բնակչուհի, նուիրատու Մուշալ կնոջը, Արդնու Բարձրակայեաց Ս. Աստուածածնի վանքի առաջնորդ Սահակ վարդապետին տեղեկացուած է առաջնորդութիւնը Հաստատելու կոնդակի առաքման մասին: Հնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ պարոն Կարապետին, նրա որդիներ՝ Ղազարին եւ Մարտիրոսին (Մարակ գիւղ):

Հնորհակալութեան նամակ պարոն Գաբրիէլին, պարոն Յակոբին եւ պարոն Մկրտչին, որոնք իրենց Հարազատների՝ Մարիամ եւ Խաթուն քրոջերի կտակով Հայրենի տունը յանձնել են Էջմիածնի վանքին՝ ի ժառանգութիւն: Հնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ Տաթևայ տիկնոջը (Ղարս), Մինասին եւ Սարգսին (Կարին), տէր Մարտիրոս քահանային (Բանկլահմատ գիւղ), տէր Գրիգորին (Ղանի գիւղ), պարոն Չաքարիային, պարոն Սարգսին, պարոն Գինաշօղի Վարդանին (Ղաչախչախ գիւղ): Բաղդատի ժողովրդին յայտնուած է տիրացու Կիւրեղ Արզումանեանին՝ նուիրակ Յակոբ վարդապետի առաջարկութեամբ գանձապետ Հաստատելու մասին: Նոյնի մասին յայտնուած է նաեւ նոր Հաստատուած գանձապետ Կիւրեղին: Հնորհակալութեան նամակներ նուիրատուներ մահտեսի Աստուածատուրին, Տաթևայ տիկնոջը (Թօխաթ), աղայ Պետրոսի կին Մարիամ Խաթունին (Բաղդատ), տէր Ստեփաննոսի որդի սազանդար պարոն Յակոբի կին Հովհիսիմէին (Բարայ):

Եւրոպա առաքուած նամակներ - Նուիրակ Գրիգոր վարդապետին օժանդակած եւ դրամական նուիրատուութիւններ արած մահտեսի Խաչատուրին (Պօթիշան) Հասցեագրուած է Հնորհակալութեան նամակ: Նոյնպիսի նամակներ են ուղարկուել նաեւ պարոն Խէչումին (Եաշ), գանձապետ պարոն Հայրապետին (Ֆիլիպպէ): Գանձանակական արդիւնքը յանձնելու կապակցութեամբ կոնդակ Ուռուջուղու ժողովրդին:

Հնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ աստաֆճի օղի ճուպաճի Կարապետին եւ Աննա կնոջը (Կ. Պօլիս): Գանձանակի արդիւնքը յանձնելու կապակցութեամբ նամակներ Կ. Պօլիսի տիւրպէնտճիներին, Օրթագէղի Ս. Աստուածածին եկեղեցու գանձապետ մահտեսի Յարութիւն աղային, Սիկստարի Ս. Խաչ եկեղեցու գանձապետ պարոն Չաքարիային: Մխիթարութեան նամակ Ս. Կարմրակ եկեղեցու գանձապետ պարոն Ղարիբջանին: Գանձանակ Հիմնադրած եւ երախայրին նուիրակ Գալուստ վարդապետին յանձնած Կ. Պօլիսի Ոննդախանի տիբիճի վարպետներին ուղարկուել է Հնորհակալութեան նամակ: Նոյնպիսի նամակ նուիրատու Բենկանցի մահտեսի Մարտիրոսին (Կ. Պօլիս):

Նամակները գրուել են 1796 թ. մայիս-դեկտեմբեր ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 87բ-111բ

ՄՄ ձեռ. Հ^փ 4481, 495ա

Ողորմութեամբն Աստուծոյ զիշատակագրութիւն թղթոց յանցեալ թուոյն Հասուցեալ աւարտ, սկսայ վերստին ես՝ Յակոբ Հնչին սարկաւազս, այժմ՝ ևս գրել զիշատակ բանից թղթոցն գրեցելոց ի սրբազան Վեհէն առ ամենայն տեղիս, ապաստան առնելով շնորհաց Սրբոյ Հոգւոյն, որ յաջողէ զամէն ամենայնի, որում փառք յաւիտեանս. ամէն¹⁷⁶:

¹⁰⁸³ **Ի Կարին** - Ի մտանէն ի նոր տարիս այս, դէպ եղև սրբազան Վեհին թուղթ գրել ի Կարին առ սարասկեարի սառաֆ Աստոն աղայն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, և ծանուցումն թղթոյն առ մեզ Հասանելոյն ընդ Հայրապետի թղթոյն: Յորում թէ իմացաք զինդրելն քո զկոնդակ, որ վասն Անդրեաս գերեւտեր անտւամբ առն, որում գրեցաւ, թէ գիտես, որ ներկայումս գերեւտեարցն թիւ ոչ գոյ և միայն դա չէ, որ դմա շնորհէաք զկոնդակ, բայց վասն քո բանիդ գրեցաք յայդր Հայրապետին, որ երեսուն զուռուշ ողորմութիւն տացէ:

Գրեցաւ յամնոյս [յունվարի] Է. (7):

¹⁰⁸⁴ **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, առ որ թէ վասն գերեւտեր առն կոնդակ էիր ինդրեալ բանիւ Աստոն աղային, իմացաք, բայց բազմաց այնպիսի փորձութեանց պատաճելով, մինչև ցայժմ դեռ ևս միոյ կոնդակ չեմք տուեալ, իսկ ի գալն դորին յայդր Լ. (30) զուռուշ տացես դմա ողորմութիւն: Յամնոյս Է. (7):

¹⁰⁸⁵ **Ի Թաւրէզ** - Թուղթ ի Թաւրէզ առ տեր Յովսէփ աւագ քահանայն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, յորում թէ՛ ջուղայեցիքն, որ վասն բանից իւրեանց թուղթ էին գրեալ քեզ և դու ևս, որ յղեալ էիր զնոցին թուղթն առ մեզ, իմացաք, բայց մէք ի գնալն Հնդկաց երկրի նուիրակ Յակոբ վարդապետին, ընդ նմա բանս գրեցաք առ նոսա, և մինչև ցայժմ ոչ իմացաք որպիսի լինիլն նմին, որով ըստ կերպիւ իւրիք առնէաք, այլ ոչ իսպառ անտես առնելով զինդիրս նոցին, կրկին կոնդակ գրեցաք առ նոսա, և գրեցաք, զի զորպիսով ինչս իւրեանց ծանուցանելով, գրեսցես մեզ և մէք ըստ նոցին գրուածոցն՝ զինդիրս նոցին կատարեսցուք, որով օրինակաւ և իցէ:

¹⁷⁶ Այնուհետ կարմրով պատկերված է երկաստիճան պատվանդանի վրա կանգնած խաչ, որի տակ՝ «Ի վաեղամն տիրացու Գեորգիս և...»:

Եւ արդ, որովհետեւ յառաջագոյն մտադրեալ էաք, զի ի մօտիւն շահին դէպ յայսկոյս գնացաք առ նա, բայց մէք ինքնին չկարելով գնալ, զԴաւիթ և զՅովաննէս վարդապետսն Հանդերձ ընծայիւք յղեցաք: Այլ ի գնալն դոցին յայդր, զՀեսաախ քո, որ ի կողմանէ այգւոյն մերոյ ընդ վարդապետացն տեսցես և որ ինչ աւելանայցէ յայնմանէ, վարդապետացն տացես վասն խարճելոյ և եթէ չյաւելանայցէ, եթէ զդրամինչ ինդրեն ի քէն, տացես և ի վարդապետացդ ձեռագիր առցես:

Գրեցաւ յամնոյս Թ. (9):

1086 **Ի Խօյ** - Թուղթ ի Խօյ առ Իսաճան աղայն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, յորում թէ յառաջ քան զայս, որ ընդ Ապտի բէկին թուղթ էիր գրեալ, ընդ սարդարի թղթոյն էՀաս և մէք զնոցին պատասխանին գրեալ, ընդ նմա յղեցաք, որ մինչև ցայժմ թուղթքն և աւանդն Հա\495բ\տուցեալ լինի: Իսկ որ յառաջմէ մտադրեալ էաք, որ շահն յայս կողմն մօտելոյ լինիցի, գնայցեմք ի տեսութիւն նորա: Բայց մեր տկարութիւնն ոչ զօրեաց գնալ առ նա, վասն որոյ աՀա զԴաւիթ և զՅովաննէսն յղեցաք զընծայս տանիլ՝ վէճ և նաղտ, իսկ նաղտն պարտի ի տեղդ Հոգացեալ լինիլ ուստի գրեմք քեզ, զի ԱՌԵՃ. (1500) դանայ սուլթան Համիթի ռիալ շահի ոսկի շինեսցես և տացես վարդապետացդ, որ իցէ թէ գլուխն ևս մնայցէ, և օգուտ լինիցի Սրբոյ Աթոռոյս: Եւ տուցելոցդ աղագաւ ձեռագիր առցես ի վարդապետացդ, որ իցէ թէ գլուխն ևս մնայցէ և օգուտ լինիցի Սրբոյ Աթոռոյս և տուցելոցդ աղագաւ ձեռագիր առցես ի վարդապետացդ, որ մեզ ընդունելի է և գրեսցես մեզ, որ մէք ևս Աստուծով Հասուցանեմք քեզ:

Դարձեալ որպէս յառաջս գրեալ եմք քեզ, Ջաֆարղուլի խանին ևս պատշաճ Համարեցաք զընծայս յղել, վասն որոյ աՀա Լ. (30) թումանի ռիալ յանձնեցաք վարդապետացն ի տեղի ընծայի, որ մատուցանեն ձեռամբ քով, և թուղթ ևս գրեցաք, յորում և ինդիր եմք արարեալ, որ յիւր կողմանէ մէկ մարդ դնէ վարդապետաց Հետ, զի որովհետեւ անձանօթ են ճանապարհին, մուղայէթ լինելով Հասուցէ մինչև ի դուռն Հաճի Իբրահիմ խանին:

Այլև մինչ թուղթդ գրեալ և կնքեալ կամէաք յղել, կրկին գրեալ թուղթդ ևս էՀաս, որով իմացաք ողջ լինիլդ, առ որ գրեցաւ, թէ ի մատուցանելն քո զընծայսն Ջաֆարղուլի խանին, ինդիր արասցես, որ մէկ մարդ տայ, որ զվարդապետսն Հասուցէ մինչև ի դուռն Հաճի Իբրահիմ խանին:

Գրեցաւ յամնոյս Թ. (9):

1087 **Ի Խօյ** - Թուղթ ի Խօյ առ Մայիլեան մէլիք Մարգարն. ծանուցումն երկար միջոցի թուղթ չգրելոյն և թէ այժմ դէպ եղև զընծայս յղել առ շահն, վասն որոյ զԴաւիթ և զՅովաննէս

վարդապետան ուղևորեցաք՝ Հանդերձ ընծայիւք: Բայց զի քանի թումանն Հոգավիք կան, զորս յիշեալ վարդապետք վասն երկիւղի ճանապարհին ոչ կարէին բերել, վասն որոյ գրեմք քեզ, զի ԱՌ- (1000) դանայ սուլթանն Համիթի ուխալչաՀի ոսկի շինեսցես և տացես վարդապետացն և ըստ տուեցելոցդ աղագաւ ձեռագիր առցես ի վարդապետացդ և մեզ գրեսցես: Եւ մեք Աստուծով ի սուղ միջոցի ԱՌ- (1000) սուլթանն Համիթի ուխալն Հասուցանելոց եմք քեզ:

Ողջոյն եղբարցն տէր Գալստին և պարոն Ալագին:
[Գրեցաւ յամսոյս] Թ. (9):

1088 1797 թ., 10 յունվարի - Կոնդակ ի վերայ Ջուղայու և շրջակայիցն ընդ ... վարդապետին ի միասին զընծայս տանէին առ շահ կոչեցեալն, մեռն ևս տրեցաւ նմա և պատուիրեցաւ, զի Ֆերմանն առեալ գնասցէ ի Ջուղայ յայցելովիսն տեղեկանացն ի ըսու գհոգևոր պէտս նոցա, ըստ որում յերկար ժամանակ առանց առաջնորդի և նուիրակի կային:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 4աբ

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 495բ

1797 թ., յունուար - Թուղթք ի Տիարպէքիր, ի Մուշ, ի Բաղէշ և ի Կարին

1089 Ի Տիարպէքիր - Թուղթք ի Տիարպէքիր առ նուիրակ Մկրտիչ վարդապետն, յիշումս յառաջ քան զայս գրեալ թղթոյն մերոյ և թէ երբեմն առ մերոյինսն թուղթք ինչ գրեալ ընդ քահանայի միոյ՝ վասն զեղբայրդ յուղարկելոյ, խոստացեալ էիր յայնմիկ իբր յետ առուրց թուղթք գրել առ մեզ, բայց մինչև ցայսօր ոչ երևեցաւ: Իսկ ի դեկ[տեմբերի] Ը. (8) գիր առաք ի Կարնոյ գործակալէն մերմէ՝ պարոն Հայրապետէն, որ ծանուցեալ էր, թէ ի Խարբերդ Խօջիջանի ումեմն ԱՌՀ. (1070) ղուռուշ փօլից ես տուեալ որ պարոն Հայրապետին Հասուցանէ, բայց ի գալ Խօջիջանին ի Կարին, քանիցս անգամ ինդրեալ է պարոն Հայրապետն զդրամն և նա խոստացեալ է տալ և վերջապէս չէ տուեալ: Ապա պարոն Հայրապետն գիր է գրեալ առ քեզ և առ Արդնոյ առաջնորդ Սահակ վարդապետն և քո անդ չգողով Սահակ պետն տեղեկացեալ անցիցն, Հետևելոց է առնել զդրամն յառնէն:

Միւս ևս, որ Բալիբէկեան մահտեսի Յարութիւնին ի դառնալն ի սրբոյ Երուսաղէմայ ԱՌ- (1000) ղուռուշ դրամ է ինդրեալ ի քէն: Եւ քո ունելով զաւանդ դրամն առ Սահակ պետն, գրեալ ես նմա, ԱՌ- (1000) ղուռուշ տալ մահտեսի Յարութիւնին և նա տուեալ է, բայց ի գալ նորին աստ, ազդարարովթեամբ պարոն Հայրապետին ինդրեցաք զդրամն ի նմանէ և նա ասաց, թէ զիմ

Թէմէսուկն բերել տուք ինձ և ես զդրամն ձեր տաց: Եւ պատուէր, զի եթէ ևս դրամ իննդրիցէն, անգգուշաբար ոչ տացէ այլևայլ անձանց:

Նաև յառաջմէ գրեցաք քեզ, թէ այդ տեղի դրամն պակաս անցանի և վնաս լինի մեզ, վասն որոյ գրեցաք, թէ Հին վաթսուննոց և կամ ոսկի շինեսցես և յղեսցես: Բայց այժմ՝ նոր դրամ անցանի, ուստի գրեմք քեզ, զի զոր ինչ |496ա| այսուհետև արդիւնս ընկալցիս, նոյնպէս դրամ Հաւատարիմ մարդկան ձեռօք փօլիցայ արասցես ի Կարին՝ Հասուցանել պարոն Հայրապետին, և զփօլիցայ առնելը մեզ ծանուցես և զղաւզ իննդրեսցես, զի մէք յղեսցուք:

Իսկ զայս զոր գրեմք, թէ՛ նոր դրամն աստ ևս կէշար եղեալ անցանի, մի՛ իմասցիս, թէ Հին դրամոյ արժողութեամբն անցանի, այլ ևս պակասով: Բայց յառաջ յոյժ պակաս էր և այժմ՝ քանի փարայով: Եւ պատուէր, զի զոր ինչ Հին դրամ և ոսկի է շինեալ Հաւատարմաւ փօլիցայ արասցէ, և թէ այժմ որքան նոր դրամ տայցէն, եթէ դիւրեաւ ի Հին փոխարկել չլինիցի, զայնս փօլիցայ արասցես:

Եւ Համառօտ ծանուցումն կողմանցս զորպիսութեանց:

[Գրեցաւ] ԻԶ. (26) [յունվարի]:

1090 **Ի Սուրբ Կարապետ** - Թուղթ առ Սրբոյ Կարապետի վանիցն առաջնորդ Յակոբ վարդապետն. ծանուցումն երկար միջոցի թուղթ չգրելոյն, և թէ ի վերայ Հիւսիսային կողմանցն կոնդակ էիր իննդրեալ, և մէք ըստ իննդրոյդ յղեցաք, բայց մինչև ցայժմ գառ քեզ Հասանիլն չիմացաք, որով միամտեաք:

Դարձեալ նուիրակութիւն երկրիդ մինչև ցարդ Ե. (5) ամբէն, յորում ժամանակն նուիրակ առաքելոյ մերոյ վաղ ուրեմն է անցեալ վասն որոյ այժմ զՅովաննէս վարդապետն առաքեցաք ի նուիրակութիւն երկրացդ: Ընդ որում և առ փաշայն թուղթ գրեցաք և փոքր-ինչ ընծայ ևս յղեցաք: Թուղթ մի ևս առ սրբոյ վանիցդ միաբան Յովաննէս պետն գրեցաք, որ գործակից լիցի նուիրակին և քեզ ևս գրեմք, զի ի գալն դորին յայդր, սիրով ընդունելով, գործոյն ձեռնտու լիցիս և Հանդերձ ընծայիւքն տարեալ տեսանել տաջիք զփաշայն:

Յամնոյս ԻԶ. (26):

1091* **Ի Սուրբ Կարապետ** - Թուղթ առ Սրբոյ Կարապետի վանիցն վէթիլ Յովաննէս վարդապետն, յորժամ, թէ որ ընդ Գրիգոր պետին զգործն նուիրակութեան կատարեցիք, մինչև ցայժմ Ե. (5) տարի լրացեալ գոլով, վաղապէս անցեալ է ժամանակ նուիրակութեանն, վասն որոյ ահա զՅովաննէս վարդապետն նուիրակ կարգեալ կողմանցդ, առաքեցաք և թուղթ գրեցաք առ փաշայն տեղւոյդ, ընդ նմին ընծայ ևս յղեցաք, որոյ ի գալն յայդր, սիրով

ընդունիցիս և ի զին առեալ ի փաշայէն, շրջակայեսցիս ընդ նուիրակին, ձեռնտու լինելով գործոյն:

Գրեցաւ յամնոյս ԻՉ. (26):

^{1092*} **Ի Վմրտօլ** - Թուղթ առ Վմրտօլու վանիցն առաջնորդ Գրիգոր վարդապետն, ի պատասխանի նորին գրեցեալ թղթոյն, յորում, թէ ի նշանակ որդիական սիրոյ, որ ժԲ. (12) ղուռուշ իբր աջահամբոյր էիր յղեալ Հանդերձ Բ. (2) լիտր տերեւօք, էհաս:

Բայց որ զսաստիկ տրտուջս էիր գրեալ ի տեղականացդ զարմացեալ ի վերայ այդմ, թէ զիս՝ ող էր, որ յառաջքան եպիսկոպոսութիւնդ, դոքա սիրով էին առքեզ, իսկ եպիսկոպոսանալոյդ Հետէ խեռութեամբ գնան ընդքեզ: Եւ պատուէր, զի սիրով և խոհեմութեամբ վարիցի և մի Հետամուտ եղեալ խրտուացէ զնոսա:

Եւ յաղագս երկարելոյ ժամանակին նուիրակութեան, որ Ե. (5) ամբ լրացեալ անցին, վասն որոյ ահա զՅովհաննէս վարդապետն առաքեցաք ի նուիրակութիւն երկրացդ, որոյ ի գալն յայդր, սիրով ընդունելով ձեռնտու լիցիս գործոյն:

Գրեցաւ յամնոյս ԻՉ. (26):

^{1093*} **Ի Բաղէշ** - Թուղթ ի Բաղէշ առ գանձապետ Սրբոյ Աթոռոյս պարոն Յովհաննէսն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, յորում, թէ յաղագս կարեալ նեղութեանց մերոց, որ ցաւակցեալ էիր, միսիթարեցաք և թէ իմացաք զբաճանայանէն եղբօր քո, որում շնորհաւոր արասցէ Տէր:

Իսկ և յայտնի է սիրելոյդ, որ ժամանակ նուիրակութեան կողմանցդ անցեալ է, ուստի ահա զՅովհաննէս վարդապետն նուիրակ արարեալ, առաքեցաք յայդր, որոյ ի գալն սիրով ընդունիցիս և գործոյն ձեռնտու լիցիս:

[Գրեցաւ] յամնոյս ԻՉ. (26):

^{1094*} **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն, ի պատասխանի Գ. -ից (3) թղթոցն գրեցելոց, յորում, թէ որ վասն Ամթայ նուիրակ Մկրտիչ վարդապետին գրեալ էիր, թէ ի Խարբերդ Խօջիջանի ումեմն ԱՌՀ. (1070) ղուռուշ փօլիցայ տուեալ, որ ի տեղդ քեզ հասուցանէ: Իսկ նա եկեալ յայդր խոստացեալ է տալ և չէ տուեալ և դարձեալ է յիւր երկիրն և դու գրեալ ես վասն այսր /496բ/ առ Արղնու Սահակ պետին և պատասխանի առեալ:

Դարձեալ վասն Բալիբէկեան մահտեսի Յարութիւնին ծանուցեալ էիր, թէ ի գալն սրբոյ Երուսաղեմայ ԱՌ. (1000) ղուռուշ փօլիցայ բերելով, բանիւ Մկրտիչ պետին ի յարդեանց նորա, որ եղեալ է առ Արղնու առաջնորդն, առեալ է և հաստուցեալ, որ ի

տեղդ քեզ տայցէր և զի յայդր քեզ չէր տուեալ, գրեալ էիր, որ աստ պաշտանքէմք: Բայց մինչ ինդրեցաք, պատասխանեաց, թէ իմ թէմէսունկն բերէք և ես զդրամն ձեր տաց:

Այլ և Կ. (60) թօփ ապայն, զոր առեալ էս ԳՃԽԲ. (342) զուռուշի և ԺԵ. (15) զուռուշի ևս բրթեայ դայթման յղեսցես:

Նաև ԸՃԾ. (850) զուռուշն զաւզն մեր տուեալ սառաֆ Կարապետին, զոր առեալ և յղեալ էիր, ընկալաք:

Իմացաք զՄարտիրոս պետի ամբողջ Հասանիւն յայդր և յես աւուրց ուղևորիւն դէպ ի թօխաթ:

Ծանեաք և զԲարսեղ վարդապետի՝ ի Մարսուան գալն:

Պօլոյ նուիրակ Գալուստ պետի՝ առ մեզ յղեալ պաշարանն, որ յուղարկեալ էիր, էհաս, բայց թղթոյ նորին պատասխանն, յետոյ առաքելոց էմք: Իսկ վասն Բ. (2) կտոր աւանդիցն, զոր յանձնեալ է մահտեսի Նիկողայոս ամիրային յղել ի ձեռս քո, եթէ Հասեալ իցէ և կամ Հասանիցի, պաշեսցես զգուշութեամբ առ քեզ, երբ որ գրիցեմք յուղարկել յայնժամ յղեսցես:

Նաև յառաջմէ գրեցաք քեզ վասն արդեանց տեղւոյդ նուիրակին ծանուցանել մեզ պարզապէս զորքանութիւն, որ զավզ յղեաք և պատուէր, զի ստոյգ գրեալ, ծանուցէ մեզ: Եւ թէ առ Ամթայ նուիրակ Մկրտիչ պետն թուղթ գրեցաք և յղեցաք ի ձեռս քո, զոր Հաւատարմաւ Հասուցես առ Արղնու աքաջնորդն և կամ մահտեսի Յակոբն, զի Հասուցեն առ վերոյ յիշեալ նուիրակին:

Նաև ի տեղդ աստապատցի Գրիգոր մի կայ, ի գալն Ղազար պետին, ի նուիրակութիւն Անկիւրոյ, այդ Գրիգորն և որդիքն իւր ի միասին առեալ են ի նմանէ ՉՃ. (600) զուռուշ և թէմէսունկն են տուեալ, իսկ Ղազար պետն ի դառնալն իւր յԱնկիւրոյ վախճանեալ է ի թօխաթ և թէմէսունկն եկեալ է ի Սուրբ Աթոռս և մինչև ցայժմ դեռ չէ տուեալ, ուրեմն դորա որպիսութիւնն գրեսցես մեզ զթէմէսունկն յղեցեմք քեզ, որ զդրամն առնուցուս:

^{1095*} **Ի Իւչքիլիսա** - Թուղթ ի Իւչքիլիսա առ առաջնորդ Մկրտիչ պետն. յիշումն յառաջքան զայս գրեալ թղթոյն իւրոյ ընդ տէր Մարտիրոսին, որով կամէր ընդ նմին զմատաղացու տաւարս յուղարկել առ Սուրբ Աթոռս:

Բայց վասն իմիք պատճառի արգելեցաւ յղելն: Եւ վասն նոր նուիրակ Յովհաննէս վարդապետին յանձնարարութիւն և թէ ի գալն դորին յայդր, ընդ Հաւատարմաւ ուղևորեսցես մինչև ցբաթնոց:

Այլ և ի նշանակ սիրոյ և օրհնութեան զԵ. (5) լիտր գինի յղեցաք, զոր վայելեսցիք բարեաւ:

Գրեցան յամնոյս ԻՉ. (26):

^{1096*} **Ի Սուրբ Յովհաննէս** - Թուղթ առ Սուրբ Յովհաննէս վանիցն առաջնորդ Աստուածատուր վարդապետն, մեղադրու-

Թինն վասն երկար միջոցի թուղթ չգրելոյն և յանձնարարութիւն վասն նոր նուիրակ Յովհաննէս վարդապետին և թէ կարելի է ընդ նուիրակին մէկ մարդ դիցես առ ի շրջակայիլ ընդ նմա, որով շնորհակալ լինելոց եմք գրէս:

Գրեցաւ յամնոյս ԻՉ. (26):

¹⁰⁹⁷ **1797 թ., 26 յունվարի** - Թուղթ առ Բաղիշու Ամրտօւլայ վանիցն առաջնորդ Գրիգոր վարդապետն, ի պատասխանի թղթոյն, և մեղմով յանդիմանութիւն վասն գանկատս գրելոյն գրադաբացոցն, և պատուէր օրինաւորապէս վարիլ առ իւրաքանչիւրն, և վասն նոր նուիրակին յանձնարարութիւն, և թէ պատուիրել եմք նուիրակին՝ տեղեկանալ զանցիցն տեղւոյդ և ճշմարտութեամբ գրել մեզ, զի և մէք իրաւամբ Հասու լիցուք¹⁷⁷:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 96աբ

¹⁰⁹⁸ **1797 թ., 26 յունվարի** - Թուղթ ի յերկիրն Մշու առ Խորենացի տէր Յովհաննէս, ի պատասխանի թղթոյն ի Կարնոյ գրեցելոյ Բ. (2) ամօք յառաջ, թողութիւն յանցանացն և յանձնարարութիւն վասն նորոգ նուիրակին, և թէ յաւարտման գործոյն գայցես ընդ դմա առ շահիլ¹⁷⁸:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 96բ-7ա

1797 թ., փետրուար - Թուղթք ի Մեծն Պօլիս և ի Գաղատիս

¹⁰⁹⁹ **Ի Մեծն Պօլիս** - Թուղթ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, ընդ որում և յղեցան կոնդակք գանձանակացն և այլ ամենայն թուղթքն, զորս յառաջագոյն խնդրեալ էր, և յիշումն ընդ Մարտիրոս պետի գրեալ թղթոցն, ի պատասխանի նոցին գրեալ թղթոցն, այսինքն պատրիարգին՝ Գալուստ պետին և իշխանացն: Եւ թէ զթղթոցն սիահին ընդ թղթոյդ յղեցաք, որով զամենայնն անպակաս գտանելովքոյ, այլևայլ վրիպումն ինչ մի լինիցի: Տէս ի մեծ տե[տերց] յե[րես] 2287:

¹¹⁰⁰ **Ի Պօլիս** - Թուղթ ի Պօլիս առ վէրիլ Պետրոս վարդապետն՝ վասն յղեալ ընծայիցն շնորհակալութիւն, որ էր Դ. (4) ֆէս, Ե. (5) Հատ չախու, և կողմանցս զորպիսութեանց Համառօտ ծանուցումն:

Յամնոյս ԺԳ. (13):

¹⁷⁷ Բաղեշի Ամրդուլու վանքի առաջնորդ Գրիգոր վարդապետին ուղղված պատասխան և հանդիմանական թղթերի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 652:

¹⁷⁸ Մշո երկրի տեր Հովհաննէս Խորենացու մեղքերի թողության մասին բովանդակող նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 656:

ՄՄ ձեռ. Հ^ր 4481, էջ 497ա

1101 **Թուղթ ի Գաղատիա առ սրբոյ Երուսաղէմի նուիրակ Կարապետ վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, շնորհակալութիւն վանն Ե. (5) մնրի ոսկոյ աջաՀամբուրին, և Համառօտ ծանուցումն զորպիսութեանց կողմանցս:**

1102 **Ի Գաղատիա - Թուղթ առ Գաղատիոյ առաջնորդ Անդրէաս վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, շնորհակալութիւն վանն Ա. (1) թօփ ծիրանի շալին և Ա. (1) թօփ վերարացուին, և ծանուցումն զորպիսութեանց մերոց և կողմանցս:**

Գրեցան յամսոյս ԺԳ. (13):

497ա

1797 թ. փետրուար - **Թուղթ ի Սեբաստիա, ի յԱրապկիր, ի Կարին և ի Կարս**

1103 **Ի Սեբաստիա - Թուղթ ի Սեբաստիա առ Տեր-Բաբեան մահտեսի Պօղոս աղայն. օրհնութիւն և շնորհակալութիւն վանն Ճ. (100) ղուռուշատուկ տրոցն առ նուիրակ Բարսեղ վարդապետն, և ծանուցումն Համառօտ կողմանցս զորպիսութեանց:**

Յամսոյս ԺԸ. (18):

Պատասխան նամակ Արապկիրի առաջնորդ Մարտիրոս վարդապետին, որտեղ շնորհակալութիւն էյայտնում 30 ղուռուշ աջաՀամբոյրի Համար (497ա, Ա./4):

1104* **Ի Կարին - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն. յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ ընդ թղթոյ Ամթայ նուիրակ Մկրտիչ վարդապետին և ի պատասխանի Գ. -ից թղթոց նորին գրեցելոյ, յորում, թէ տեղւոյդ իշխանաց թուղթն, որ ընդ փայեկին յղեալ էիր, էՀաս և իմացաք զգրեալսդ:**

Բայց մինչ զՊօլսոյ գանձանակաց թուղթն և Գալուստ վարդապետի թղթոյ պատասխանին գրեալ ի պատրաստի ոննէաք և գնացօղ կայր, զայն թուղթն յղեցաք ի ձեռս Ղարսայ Գէորգին և ընդ նմա քեզ ևս յատուկ թուղթ գրեցաք, որ նա յղեսցէ առ քեզ և դու Հասուացես ի Մեծն Պօլիս: Յայնմ թղթոջ խոստացաք, թէ զփոխադարձն թղթոց քոց զկնի աւուրց գրելոց եմք և զփայեկն դարձուցանելոց:

Այժմ ծանի՛ր, նախ, որ գրեալ էիր, թէ տիրացու Գէորգն մէկին տալիք ոննէր ՌԼՃ. (1800) ղուռուշ, ԲՃ. (200) ղուռուշ ևս յուրարկեցի, որ լինի ԲՌ. (2000) ղուռուշ, զոր ձեզ Հասուցանէ: Յայդմ կողմանէ Գէորգն մեզ բան չէր գրեալ յառաջ և մինչ գրեցաք նմա, նա պատասխանի էր գրեալ, թէ պարոն Հայրապետն մեզ ևս էր գրեալ զայդ, բայց մէք նմա այլ կերպ ջուղազ գրեցաք, յայս քանի օրս նորա ջուղազն կգայ: Եւ որովհետև Գէորգն այսպէր էր գրեալ, բանն մնաց կախ, որ դեռ դրամն մեր կողմն չանկաւ:

Իսկ Գ. (3) բեռն երկաթ և Ա. (1) բեռն ապայք, և Ա. (1) բեռն ղալայ, և նշատիր, և ղօլանք և այլ մանր իրք և ամանաթք մեր և այլոց, զորս յղեալ էիր Հասին զգինս և զխարճս նոցին, զորս սիաՀի արարեալ ընդ թղթոյդ եղեալ էիր տեսաք, որոց ջամն էր ԱՌԿԸ. (1068) ղուռուշ և ԺԲ. (12) փարայ, զոր գրեցաք ի դաւթարոջդ: Բայց ի Հաշուոյ նշատրին Հօխայ և կէս պակաս էր, զայն ևս պարտիս յղել, որ Հաշին ուղղիցի:

Ի Պօլսոյ եկած գրքին աղագաւ, որ տարակուսեալ էիր, էՀաս:

Ծանուցեալ էիր և զՄարտիրոս պետի ի Թօխաթու դէպ ի Պօլիս ուղևորին, որով իմացեալ միամտեցաք: Նաև՝ ի կողմանէ նուիրակին ձերոյ Գրիգոր պետին, որ գրեալ էիր, թէ ի նուիրակական արդեանց ԳՌ. (3000) ղուռուշ թէսլիմեղև ինձ և մէք գրեցաք ի դաւթարոջդ և որ վասն այնր ղաւզ էիր ինդրեալ, աՀա գրեալ յղեցաք Հանդերձ բարևագրով, զորս Հասուցես ինքեան: Եւ զորպիսութիւնս նորին, ծանուցես մեզ ի միամտութիւն: Իսկ վասն մահասարի և ինդրոյ իշխանաց քաղաքիդ վասն Ախլիսայոյ, որ դու ևս ընդ նոսին իրիճայ էիր գրեալ և մէք աՀա ըստ ինդրոյ զպատասխանի թղթոյն ձերոյ գրեալ յղեցաք:

Այլև՝ նուիրակական ձեր թուղթ մի էր յղեալ առ մեզ, որ էր ի յԱրապկերու առաջնորդ Մարտիրոս պետէն, յորում գրեալ էր Լ. (30) ղուռուշ աջահամբոյր և Գրիգոր պետն ևս էր նշանակեալ թէ առի և յանձնեցի պարոն Հայրապետին, բայց դու չէիր յիշեալ զայնս, իսկ մէք զշնորհակալութեան թուղթ գրեցաք և եղեալ ընդ թղթոյս յղեցաք առ քեզ, որ եթէ զդրամն առեալ էս, զթուղթս տացես և եթէ չէս առեալ, զդրամն առնուցուս և ապա տացես:

[Գրեցաւ] յամնոյս ԺԸ. (18):

1105* **Ի Կարին** - Թուղթ առ Կարնոյ նուիրակ Գրիգոր վարդապետն, ի պատասխանի Բ. - ուց թղթոցն, թէ մինն, որ ի քէն էր գրեցեալ և միւսն այլ գրչաւ, ի միասին Հասին առ մեզ և իմացաք զգրեալսդ առ այն կրկին միսիթարութիւն, վասն եղբօրն Հանգուցելոյ, ըստ որում դեռևս թախձութիւն էր ցուցեալ անձին և զվէրս սրտի:

Եւ թէ գրեալ էիր զինի աւուրց ելանել ի քաղաքէդ յարտաքին տեղեաց գործն և ծանուցեալ էիր ևս զՀասուցանելդ առ պարոն Հայրապետն յարդեանց նուիրակութեանդ ԳՌ. (3000) ղուռուշ, զոր պարոն Հայրապետն ևս էր գրեալ մեզ և վասն քո զղաւզ ինդրեալ, ուստի աՀա զղաւզն ԳՌ. (3000) ղուռուշին, յղեցաք ի ձեռն պարոն Հայրապետին ընդ թղթոյս Հասուցանել առ քեզ ի միամտութիւն:

Իսկ և ծանուցումն զԱրապկերու առաջնորդի գրոյն զառ մեզ Հասանին և զնորին յղեալ Լ. (30) ղուռուշ յանձնեալն առ պարոն Հայրապետն, յորում գրեցաւ, թէ պարոն Հայրապետն զայնմանէ

մեզ բան չէր գրեալ, բայց մէք զպատասխանին այնմ թղթոյ գրեալ յղեցաք, որ զդրամն առցէ և ապա զթուղթն տացէ:

Եւ պատուէր, զի զորպիսութիւն գործոյն և իւրոյ, ծանուցէ մեզ ի միամտութիւն և Համառօտ ծանուցումն կողմանցս զորպիսութեանց:

Գրեցաւ յամնոյս ԺԸ. (18):

Ստացական՝ տրուած ԳԳ (3000) ղուռուշի դիմաց, ուր նշուած է նաեւ նուիրակական միջոցները պարոն Հայրապետին Հաննելու մասին (497Բ, Ա՛2):

1106* **Ի Կարին** - Թուղթ առ Կարնոյ իշխաննն, ի պատասխանի բազմակնիք մահաարի նոցին գրեցելոյ, որով կրկին ինդերեալ էին զթեմնն Ախցիսայու տալ կարմիր վանիցն, բանիւ Ղեւոնդ պետին, բայց նոքա յառաջագոյն գոլով գնա, յետոյ էին գրեալ սրբազան Վեհին, վասն որոյ սրբազանն յանդիմանութիւն գրէ առ սոսա վասն անկարգ բանիցն իւրեանց:

Գրեցաւ յամնոյս ԺԸ. (18):

1107 **Ի Կարս** - Թուղթ ի Ղարս առ Գէորգ աղայն. յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ ընդ Կարապետին և ծանուցումն միւս թղթոյն ժամանելոյն առ մեզ և ի պատասխանի նորա, թէ իմացաք զտրտմութիւնդ, և առ այն յորդորանք՝ առ ի փարատիլ ի տրտմութեանէ: Եւ թէ Հօբամցի տէր Յարութիւնին, որ ԴՃԺԵ. (415) ղուռուշ էս տուեալ ի գին մոմի, և նա առեալ յղեալ է գմոմն, կշռեալ էն, որ ԻԸ. (28) թիւանի լիտր և կէս չորէք է եղեալ: Բայց վասն գնոցն զարմանամք, որ ի Հաշուէն Հօխայն ՂԹ. (99) փարայ գայ և պատուէր, զի լաւապէս վերահասու եղեալ ի իրիցու եղբօրէն, ուղղիղն գրեսցէ մեզ ի գիտել:

Եւ վասն զէթունին և զէթի իւղին, թէ էհաս, բայց զէթունն, որ ԱԹ. (39) լիտր, Ե. (5) Հօխայ էիր գրեալ մէք աստ կշռելով պակաս եկն: Իսկ վասն Երուսաղէմայ նուիրակին, որ գրեալ թէ կամի ԲԲ. (2000) ղուռուշ փօլիցայ առնել տեղս, որ ի Պօլիս առցէ: Առ այն պատասխանի, թէ ի Պօլիս որքան որ դրամ կայր, բերել ետուք ի Սուրբ Աթոռս վասն պակասութեան սորին, ի վաղուց գիր չունիմք ի Պօլսոյ, որ իմանայցեմք զդրամ լինիլն, երբ իմանայցեմք, յայնժամ գրելոց եմք քեզ զինչ առնելդ:

Չղաւթարն քո, զոր յղեալ էիր, ընկալաք, և տեսեալ գնա, Համեմատ գտաք մերոյս:

Եւ վասն Տանն Սրբոյ Աթոռոյս, որ անդ գրեցաւ, թէ ըստ կամաց քոց եղիցի, որպէս գիտես, այնպէս առնիցես: Եւ թէ ահա զկոնդակն Հասարակութեան և զթուղթն մահաւտի Եղիային յղեցաք ի ձեռս քոյ, զոր ընթեռնուլ տացես յեկեղեցին:

Գրեցաւ յամնոյս ԻԱ. (21):

Քերուած են այս նամակում յիշատակուած գանձապետ մնտեսի Եղիային եւ Կարսի բնակչութեանը Հասցեագրուած նամակների Համառոտագրութիւնները. «վասն գանձանակագրամին Հասուցելոյ» (497բ, Ա./4-5):

1108 1797 թ., 14 փետրուարի - Թուղթ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն, ի պատասխանի թղթոյն նորա ի նոյեմբերի 15 գրեցելոյ: Ընդ որում և յղեցան կոնդակք գանձանակացն և այլ ամենայն թուղթքն, զորս յառաջագոյն ինդրեալ էր և մինչև ի դեկտեմբերի վերջն աւարտեցեալք էին:

Յորմէ սիրով և օրհնութեամբ բազմաւ, քրիստոսաձիր սուրբ ողջունիւ և Հոգեգուարճ շնորհիւ սրբոյ Իջման տեղոյս նորին ծանիր Հարազատ սիրելիդ մեր, և բազմաշխատ որդի Սրբոյ Աթոռոյս՝ Գալուստ աստուածաբան վարդապետ:

Զի ի նոյեմբերի ԺԱ. (11) յուղևորել մեր զՄարտիրոս վարդապետն, գրեցաք ընդ նմա զպատասխանիս վաղագոյն գրեալ չորից թղթոցն քոց, և զպատասխանիս թղթոց յարգելի եղբօր մերոյ՝ պատրիարգ վարդապետին և օրհնեալ իշխանապետացն և այլոց: Յուսամք, թէ մինչև ցայժմ Հասեալ իցէ, և Հասու իցէք եղեալ ամենայն գրեցելոցն մերոց: Եւ զի խոստացեալ էաք յայնմիկ թղթոց քում զինդրեալն քո զկոնդակն գանձանակաց և զթուղթն այլոց արդինատուաց գրեցուցանել, գրեցուցաք զամենն, Հանդերձ թղթովք առ գանձապետն:

Եւ մինչ վերջացուցաք զայնս ի դեկտեմբերի վերջին աւուրն և մտաք ի նոր տարիս: Թուղթն քո ի նոյեմբերի 15 գրեցեալ, էհասա առ մեզ ի յունվարի 2, Հանդերձ փոքր սիաՀիւ քանի թղթոցն ինդրեցելոց, և իմացեալ մեր, զոր ինչ ծանուցեալ էիր, զնորապէս ինդրեալ թուղթսդ և սկսաք գրեցուցանել: Եւ զի զբազումն մեր ոչ յայն է, այլ յայլ ևս բազմապատիկ Հոգս և ի ցաւս, որք յաջորդաՀոլով աղխաղխանօք պատեն, պաշարեն զմեօք, մինչև չթողուլ մեզ և զաչս բանալ: Վասն որոյ մինչև ցայժմ Հագիւ ի գլուխ բերեալ եղեն թուղթքն: Այլ վասն զի ի սիաՀիւն ինդրեալ թղթոցդ նշանակեալ էիր իբր թէ զոմանս թուղթս յառաջագոյն ևս ինդրեալ ես և ոչ եմք գրեալ:

Ծանիր, զի վասն Խասգեղու գանձանակին յառաջագոյն բնաւ ինչ չէիր գրեալ, միայն զայս թէ ի գալս իմ աստ յետ քանի աւուրն մեր գանձապետ Յովհաննէս ամիրայն վախճանեցաւ, և ես զորդի նորին՝ Եղիա Չէլեպին գանձապետ կարգեցի: Չայս միայն կարդացեալ մեր ի թուղթն քո, մէք ևս միսիթարութեան գիր գրեցաք նմա, և մինչ դու չէիր գրեալ, թէ զայսբան ինչ գանձանակագրամ Հասոյց ինձ, յայնժամ մէք որպէ՛ս գրել պարտ էաք զկոնդակն:

Իսկ ի յետին սիաՀոլոս գանձանակաց թղթոց նորապէս նշանակեալ էիր զԽասգեղու գանձանակի երից ամաց արդինան,

զորս երկիցս անգամ առեալ էս, և գրես թէ առաջնոցն աղագաւ կոնդակ չէիք գրեալ շիկնեցաք և այլն:

Արդ, դու եթէ ի սիաւտոյն զԽասագեղու կոնդակն ևս ինդրէիր, իհարկէ, մէք գրեաւ էաք, բայց զի դու չէիր նշանակեալ ամենևին, ընդէ՛ր առ մեզ վերաբերես զյանցանսն:

Դարձեալ՝ Պալաթու սափրչաց և Ունդափանի թիքիճի վարպետացն աղագաւ ևս յառաջին սիաւտոյն բնաւ չէիր նշանակեալ, յորս և այժմ նայեցաք չգտաք, այլ գրես թէ՛ ես ինդրեալ է՛մ և դուք չէք գրեալ: Այլ զՇէհրեմինի խօլի դերձակացն և զմաշկերտցի Մարգարի Հոգեբաժնի թուղթմն յիրաւի նշանակեալ էիր ի սիրաւիսն քո, և մէք գրեալ եմք, որոց և օրինակքն գոն ի տետերս շարադրանաց մերոց, և յղեալ եմք, որք աստ չեն մնացեալ: Ուրեմն ի տեղդ էն յաներևս եղեալ: Քանզի եթէ մէք զայդպիսեօք զանցառու էաք, է՛ր վասն ի ժամանակս նուիրակութեան Մինաս և Իսաակ վարդապետացն երբէք անգամ մի ևս այդպիսի ինչ որ պատահեցաւ, այլ այժմ առ քիւ երկիցս եղև պատահիլ: Ուրեմն ի տեղդ պարտ է զգուշութիւն մեծ, որ այլևս թուղթ չանյայտացի: Չի մէք զգրելի թղթովքն, զորս ինդրես, թէ կանուխ թէ անագան ոչ զանց առնեմք, որպէս և աւա զամենայն նշանակեալսդ ի յերէք կտոր սիաւտոյն անպակաս գրեալ յղեցաք, յորս են և թուղթքն օրհնութեան ևս չարաղցի մահտեսի Մինաս ամիրայն, և առ նորոգ սառաֆլարքէհիասի մահտեսի Յակոբ ամիրայն:

Եւ վասն Էիպու բրտաց միոյ ամի գանձանակադրամին, որ գրեալ էիր, թէ չկամին տալ վասն աղքատութեանն, գրեմք քեզ թողու և ոչ ևս պաշանջել: Նաև վասն կտակաց և Հոգեբաժնից ոմանց ձեռամբ քաւանայից քեզ յանձնեցելոց, որ գրեալ էիր թէ ի տեղս սովորութիւն է՝ տասներորդն քաւանայից լինիլ և այլն: Այդ ի բնէ անտի մինչև ցյետին նուիրակութիւն սիրելոյն մերոյ՝ Մինաս վարդապետին ոչ է եղեալ իսպառ: Այլ այժմ ոմանք ագաւամիտ քաւանայք նորապէս հնարեալ են և զՍուրբ Էջմիածին տասանորդել, որոյ սակս և Մինաս վարդապետն վկայէ, թէ սուտ է և չիք իմ լուեալ երբէք, այլ պատրեալ են. որպէս զի և քանի ղուռուշ արդեանց Սրբոյ Աթոռոյս բաժանորդ լիցին: Եւ թէպէտ որպէս ինդրեալ էիր, վասն բանի քոյ առ իւրաքանչիւր տուողն տրոց գրեցաք, թէ լրիւ մեզ հասեալ գիտացաք, սակայն զքաւանայսդ լուեցուցիք յանօրինակ սահմանադրութենէն իւրեանց:

Միայն թէ յորժամ քաւանայ որ քանիցս զայսպիսի արդիւնս բերցէ առ քեզ, դու ազատ կամօք քո իբրև օրհնութիւն զխիլայ մի, կամ ըստ արժանւոյն զքանի ղուռուշ դրամն տացես, ընդ որ Մինաս վարդապետն հաճեցաւ: Այսքան առ այս շատ լիցի խոհեմութեանդ:

Եկեսցուք այսուհետև ի պատասխանիս յետին թղթոյդ վերոյիշեցելոյ: Նախապէս գրեալ էիր վասն Բերիու Հերձեցելոյն իբր թէ

զղջացեալ ինդրեն Համաձայնիլ ուղղափառութեան սրբոյ եկեղեց-
ւոյս մերոյ: Եւ պատրիարգ վարդապետն խորհրդակցութեամբ ձե-
րով Հաճութիւն իցէ գտեալ, զոր և զուարճալի իմն էիր ցուցեալ:
Սակայն, մեք քանիցս լուեալ եմք, որ նորա բազում անգամ ջանա-
ցեալ են զսուրբ եկեղեցին տեղւոյն Հանել ի ձեռաց մերայնոցն և
չեն կարացեալ: Այժմ զայն Հնար Հնարին ելեմնուս առնելոյ յեկե-
ղեցին մեր, որպէս զի այնու կցորդ լիցին եկեղեցւոյն: Ապա յոյժ
կասկածելի է, թէ յետ ժամանակի ինչ դարձեալ ցուցցեն զփուշ
իւրեանց և բռնացեալ Հանցեն զեկեղեցին ի Հայոց:

Եւ նշան է այնմ չկամիլն լսել զերիս տունս ով Հրաշալի շարա-
կանին: Եւ քանզի չէր Հնար եթովպացւոյն թողուլ զմորթ իւր, վասն
որոյ մեծապէս զգուշանալ արժան է:

Երկրորդ՝ գրեալ էիր զանցս մահտեսի Կարապետի քեռորդի
Մկրտչին զգացուցանելով զասելն, իբր թէ մեք իցեմք Հրաման
տուեալ կին ածելոյ: Առ որ գիտեսցես, զի նա մինչ եկն աստ, մեք
յետ բազմօք ջանալոյ զկինն նորա բերել տալ ի յԱգուլեաց: Իբրև
ոչ եկն նա, և ինքն դառնայր յայդր, ընդ նմին թուղթս եմք գրեալ
առ պատրիարգ վարդապետն և առ մահտեսի Կարապետն: Որք
կարծեն զմէնջ Հրամանատու գոլ առ այն, թող զայնսոսիկ թուղթն
մեր տեսցեն և անտի իմասցին զստուգութիւն իրին:

Երրորդ՝ գրեալ էիր վասն իզմիրցւոցն, թէ կան անյեղաշրջելի
ի միտս իւրեանց: Եւ մեք զոր ինչ պատեհն էր, գրեալ եմք ընդ
Մարտիրոս վարդապետին ի Հասանիլն նորա յայդր, իհարկէ, բանն
ի մի կողմն կայասցի:

Չորրորդ՝ գրեալ էիր վասն ելանելոյդ ի Ղատիքեօյ և զառ
մեզ յղելի աւանդն դրամ յանձնելը մահտեսի Նիկողայոս ամիրա-
յին՝ յուղարկել ի Կարին առ պարոն Հայրապետն, որպէս և նմա
ևս ես գրեալ: Բայց ի մերձ աւուրքս թուղթ էհաս մեզ ի պարոն
Հայրապետէն, որ գրեալ էր, թէ դեռ ոչ է Հասեալ ինձ: Այլ երբ
Հասցի, ազգ առնելոց եմք քեզ ի միամտութիւն:

Իսկ զորպիսութեանց կողմանցս և մեր, կամ Հարցեալ էիր,
այսպէս գիտասցես: Որպէս քանիցս գրեալ եմք, կան ամենեքեան
յողորմելութեան յաճ և յերկիւղ փակեցեալ պահանջմունքն և զր-
կանքն յարակայեալ, և սղութիւն ցորենոյ և այլ բարեաց, որ լիտրն
Լ. (30) փարայ է այսօր, և ձմեռն խստագոյն: Բայց որ յառաջա-
գոյն գրեցաք, թէ մեր խանի նագիրն [2289] ի գնալն առ շահն
զձանրագոյն պահանջմունս արար ի մէնջ յընծայ շահին, և մեք
պատասխանի ետուք մեզէն գնալն, առ շահն և այլն: Ուստի և
սաստիկ կասկածի էաք, թէ ո՞ր գիտէ ի դառնալն զի՞նչ ցաւս է բե-
րելոց մեզ: Նա ի գնալդ անդ երես չէր գտեալ և չկարացեալ ինչ
ասել, վասն որոյ վրիպեալ ի յուսոյն, ո՞նայն դարձաւ:

Սակայն, յետ գալոյն նորա, Հաճի Իբրահիմ խանն Շիրագոս,
որ է երկրորդն շահին, թուղթ մի էր գրեալ առ մեզ յուսագրու-

Թեամբ, թէ շահն ի վերայ ձեր շատ իննամն ոճնի, և ես բարեկամ եմ ձեզ և Հոգացօղ բանից ձերոց, զոր ինչ ինդրիցէք, անտարակոյս լեր, և բարուք լինի, որ ձեր մարդն գայ ի սպաս շահին և այլն: Չոյնպիսի ինչ ևս Չաֆարղուլի խանն էր գրեալ, որ մեծաւ շքով առաքեցեալ գոյ սարտար ի Թարվէզ: Ապա Երևանու լիրբքն ԳՃ. (300) Թումանի չափ դրամ պաշանջեցին յողորմելի գիւղացւոց մերոց՝ թող զմաղթայն և թող զայլևայլ պաշանջմունսս, որոյ աղագաւ գնացաք յԵրևան, և ի խօսիլ ընդ խանին, նա բաշխեաց: Իսկ նազիրն զԱՃ. (100) Թումանն միայն էթող, և զայլն պաշանջեց: Եւ որչափ ինչ գլխացաւութիւն կրեցաք, օգուտ չեղև: Վասն որոյ Հարկաւորեալ մեր զչափաւոր ընծայս պատրաստեցաք և ձեռամբ Դաւիթ և Յովհաննէս վարդապետացն յղեցաք առ շահն և արգս գրեցաք կարևոր ինդրուածովք: Ունիմք զյոյս մեծ ի բարի ակնարկութեանէն Աստծոյ, զի քաղցրացուցէ զսիրտ բռնաւորին, որ զինդիրան մեր անտես չարարեալ, սաստեսցէ Երևանցւոց՝ ձեռն քարշէլ ի մէնջ:

[Եւ զՀիւսիսայնոցն այսչափ, որ ի Շամբարայ բանակատեղէն յարուցեալ մեծ մասն էջ առ եզր կրկին Հոսանացն, և փոքր մասն եկեալ ընդ բռամբ ածին զԳանձակ, և գունդ կարգեալ ի դղեակն, անցին ի Տիխիս, գոլով ընդ նոսա և անզէն զինուորն Յ... (որոց բամբջին զվճարն ևս իհարկէ լուեալ էք): Առ այն և շահն ի մեծի պատրաստութեան է, ոյր սակս և այժմ կրկին զՉ. (6) Թնդանօթս և Դ. (4) ղօմբարայս և Ռ. (1000) գնդակս է ինդրեալ տանիլ ի Դավրէժ, որ և ինքն գարնանամտին գալոց է ճակատիլ ընդ յարուցելոցն:

Ինդրեալ է և զխանն մեր Ռ. (1000) Հեծելովքն երկրիս: Առ որս էթէ յորպիսի տառապանս կան բնակիչք երկրիս, խոհեմութեամբ կարես իմանալ]:

Նարդէնիս սուրբ Տունս և մէք կամք միայն իննամոցն Աստուծոյ ապաստան:

Ի վերջոյ Հարկադրեմք զմտերիմ սիրելիդ՝ մի իբրև զառաջինն, այլ որպէս ի մօտ ժամանակս առնես, սոյնպէս յամիսն մի անգամ զորպիսածանոց թուղթդ Համառօտ մի պակասեցուցուցես ի մէնջ, որոյ աղագաւ շնորհակալ լինելոց եմք զքէն, որում Տէր տացէ կարողութիւն և զօրութիւն, և գործոյդ բարեյաջողութիւն:

Այլ զզիճ գիրքն, զոր յղեալ էիր, ընկալաք, սակայն տեսորն խրատուց նորա սուրբ, տաճկերէն գոլով, ոչ այնքան օգտէ Հետևողին տեսցուք որպէ՛ս լինի: ՉԽ. (40) ղուռուշն, զոր տուեալ ես ի գին նորա, ի ղավզի իմիք գրելոց եմք:

Ողջ լեր ի Տէր: Այլ զորքան ինչ թուղթս էիր ինդրեալ, զորս գրեցուցեալ յերկուս պաշարանս բովանդակեցաք, Համեմատեալ ընդ սիահնոցն քոց, մէք ևս սիահն արարաք և եղաք ներ թղթոյս

քո, որով զամենն անպակաս գտանելով քոյ, այլևս վրիպումն ինչ մի լինիցի:

Եղաք ընդ թղթոցդ նաև զերիս թուղթս, որոց մին առ վերիլ Պետրոս վարդապետն, զմիւսն առ Գաղատիոյ առաջնորդ Աստուրէաս վարդապետն, և զայլ միւսն առ անդէն ի Գաղատիա եղեալ նուիրակն սրբոյ Երուսաղէմի՝ Կարապետ վարդապետն: Չորս Հաւատարմօք յղեալ Հասցեն առ նոսա: Գիտասցես ևս, զի այն գիրն, զոր յղեալ էիր, ի տիրացու Ստեփանէն էր, յորում չկայր նոր ինչ, զի բամբջին դեռ ի կեանս գոլով էր գրեցեալ:

Գրեցաւ ի ՌՄԽԶ. (1797) թուոջս և ի փետրվարի ԺԴ. (14) ի Սուրբ Աթոռս էջմիածին:

Բարեպաշտ սիրելոյն մերոյ՝ Քրիստոսիւ զօրացեալ ազնուաբարոյ մահտեսի Նիկողայոս ամիրային և Հարազատ եղբօր նորա, և բարեծնունդ որդւոց իւրեանց ողջոյն և օրհնութիւն տամք, յանձնելով զամենեսեան ի պաշտօնութիւն ինամակալ աջոյ Տեառն Աստուծոյ:

Դարձեալ՝ վաղեմեան սիրելոյն մերոյ, շնորհապերճ և խոհական տիրացու Սարգսին ողջոյն տամք սիրով, զորոյ զբաղցրաբան թուղթն ընկալաք, բայց զՊօղոս վարդապետ նուիրակէն լուր ինչ ոչ ոնելով, և աւանդ թե՛ն նորա այնպէս ամբողջ կայ ի Սուրբ Աթոռս, զոր այժմ երևեցուցանեն լստանգ է վասն անուան տեղւոյն, ուստի ելեալն է: Յաջողեսցէ Պօղոս վարդապետին երևիլ ի կողմունս և Հոգ տանիլ աւանդին իւրոյ:

Կրկին ևս ողջոյն և օրհնութիւն տամք Հոգևոր որդւոյն մերոյ և քոյ՝ Չաքարիա խոհեմամիտ վարդապետին և միւսոց մտերիմ սպասատրաց քոց՝ շնորհատենչ սարկաւագաց և այլոց առ քեզ եղերոց յանձնելով զամենեսեան ի բազմագթութիւնս Տեառն:

[Յարգամեծար եղբօր մերոյ Հոգեկցի և մշտաբաղձալոյ պատրիարգ վեմամիտ վարդապետին և արհիապատկ եպիսկոպոսին յոյժ սիրով և կարօտիւ ողջոյն տամ, որում յատուկ թուղթ գրել անհարկաւոր վարկաք, զի զոր ինչ ըստ նմա գրելիքն էին յառաջ գրեցաք, այժմ չկայր Հարկեցուցիչ պատճառ մի, այլ զոր ինչ գիտելիք իցեն աստ, իհարկէ, նմա ևս յայտնի լինելոց է: Որ և կացցէ ողջ և առողջ ի շնորհս Տեառն Աստուծոյ ի Հրճուանս մեր. ամէն]¹⁷⁹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2287-89

1109 1797 թ. 17 փետրուարի - Թուղթ առ Կարնոյ իշխանն, ի պատասխանի երկրորդ մահաարին նոցա յաղագս Կարմիր վանից իբր շինարար Ղևոնդ վարդապետին, որոյ աղագաւ

¹⁷⁹ Լուսանցային ծանոթագրոյթյան համաձայն. «Այս գծափակեալ բանս արտահանեցեալ աստի, ուրիշ փոխազայի գրեցաւ»: Ուղղանկյուն փակագծերի մէջ եղած հատվածը 2287 էջի լուսանցում է:

ինդրեին զԱխլցիսայ իբրև զԹեմնորա, և նախքան զառ մեզ գրելն ինքեանք իսկ Հրամանագրով սարասկերին յուղարկեալ էին զնա յայնկոյս¹⁸⁰:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 6աբ

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 497բ

1797 թ., մարտ - Թուղթք ի Գաղատիա, ի Կարին և ի Խոյ

498ա

1110 **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն. յիշումն յառաջ քան զայս գրեալ թղթոյն մերոյ և թէ այժմ վասն պիտանաւորութեան Սրբոյ Աթոռոյս գործոյն բաճ Հարկաւորեցաւ: Վասն որոյ յիտուն Հատ բաճ առեալ լղեցես:

Գրեցաւ յամնոյս Ե. (5):

1111 **Ի Գաղատիա** - Թուղթ առ Գաղատիոյ առաջնորդ Անդրեաս վարդապետն. ծանուցումն ընդ գործաւարտ նուիրակ Գէորգ վարդապետին գրեալ թղթոյն, և յիշումն զինի այնր ընծա-յիցն առ մեզ Հասանելոյն, և մեր յառաջ քան զայս զպատասխանի գրելն, և թէ զամենավնաս մրրկացն կողմանցս Համառօտ ծանուցեալ յայնմիկ: Եւ վասն նոր նուիրակ Յովաննէս պետին յանձնարարութիւն, յորում թէ ի գալն դորին յայդր, սիրով ընդունելով ձեռնստու լիցիս գործոյն և յորդորօղ ժողովրդեանն, զի առատաձեռնութեամբ ընծայեցեն զտուրս Սրբոյ Աթոռոյս, առ ի յօգնութիւն անչափ ծախուց սորին:

Գրեցաւ յամնոյս Ժ. (10):

Թղթեր են առաքուել մահտեսի Մարտիրոս աղային (Ղարաման). «վասն արարեալ լաւութեանցն առ նախանցեալ նուիրակ Գէորգ վարդապետն և յանձնարարութիւն վասն նոր նուիրակ Յովաննէս վարդապետն» (498ա, Ա./3), մահտեսիներ, եղբայրներ Յովաննէսին եւ Յակոբին (Ստանոզ), տէր Ղազար քաւահային, մահտեսիներ՝ Յակոբին, Պօղոսին, պարոն Կարապետին, գանձապետ մահտեսի Ֆերէշատին (Սիլվիհար), գանձապետ Բէքմեզօղլի մահտեսի Յարութիւնին (Ղօնիա) չորհակալութիւն է յայտնուում նախորդ նուիրակին՝ Գէորգ վարդապետին արած լաւութիւնների Համար եւ յանձնարարուումնոյն կերպ վարուել նոր

¹⁸⁰ Կարինի իշխաններին ուղղված պատասխան շրջաբերականում (մահսար) հիշվում է 1770-90-ականներին Կարինի Կարվիր վանի Ս. Աստվածածնի և Ախլցխայի թեմի առաջնորդ Ղևոնդ վարդապետը: Հայագիտությանը հայտնի է նրա 1794 թ. մարտի 20-ի գրությունը՝ հղված Կ. Պոլսի պատրիարք Զաքարիա արքեպիսկոպոս Փոփուզյան Կաղզվանեցուն՝ Ախլցխայի կաթողիկ հայ ժողովրդից գանձվող 18 ամսվա պտղի հարկի առնչությամբ, երբ տեղեկացնում է, որ «առի տէր Օհաննէսին իրեանց աւագ Բահանայ, տէր Գրիգորէն եւ խօջայ Յօհաննէսէն եւ պարոն Անտօնէն, եւ միւս իրեցվոյսան Բուրջիպաշի պարոն Օհաննէսէն, եւ մամասախլի պարոն Յէսայէն, նաեւ այս Բահանայից եւ իշխանաց խնրաւմօք վերագրեալ թովն, անցելոյն պայմանատրեցանք պտղի հատուցմանէն յամէ յամ, մարտ ամսոյ մէջ, Կ. (60) դարուջ, Ախլցխայ, Իլիտա, Վալէ, Արալ, Ուտէ եւ Ապաքուման» (Ս. Կարապետյան, Ախլցխայ, ՀձՈՒ գիտական ուսումնասիրություններ, գիրք ԺԱ., Երևան, 2008, էջ 83):

Նուիրակ Յովհաննէս վարդապետի Հետ (Ա./4-6): Նոյնաբովանդակ է՝ նաև Պօլսի իշխաններին եւ ժողովրդին ուղղուած նամակը, որով նաեւ կոչ է արուամիավորուել եւ եկեղեցի կառուցել քանի որ եկեղեցի չունէին. «Ը պատուէր, զի միաբանեալք ի միասին, վասն իւրեանց զեկեղեցի շինեսցեն, ըստ որում չունէին զեկեղեցի յատուկ» (Ա./7): Ղոճամանօղլի պարոն Յովհաննէսին (Սպարթա) եւ յանձնարարուամ է օժանդակել նոր նուիրակին, միտթարութիւն է յայտնուամ որդու մահուան կապակցութեամբ (Ա./8): Նամակները գրուել են մարտի 10-ին:

Պարոն Հայրապետին (Կարին) եւ յանձնարարուամ է օժանդակել Անկիւրիոյ նոր նուիրակին եւ ուղարկել Թօխաթ: Յիշատակուամ է նաեւ Տաթեւի վանքի առաջնորդ Յովակիմ վարդապետի՝ մի քանի միաբաններով երկար ժամանակ Մայր Աթոռում լինելու մասին, ինչի առնչութեամբ. «Աք զիսարճիս տամք Հոգալ զպակասութիւն», ուստի յանձնարարուամ է նրա աւանդը դարձնել ամանաթ եւ ուղարկել Բայազետի վրայով տիրացու Գեորգին՝ Մայր Աթոռ փոխանցելու պայմանով (Ա./9): Գրուել է մարտի ԺԶ.-ին (16):

1112 **Ի ԽՍԵ** - Թուղթ ի ԽՍԵ առ Իսաղան աղայն, յիշումն թղթոյն առ մեզ Հասանելոյն ընդ թղթոյ վարդապետացն, և թէ իմացաք զքո միայնակ Հոգալն ընդ ԲՌԵՃ. (2500) ռիալի զԽՍԵյայ ոսկիս տալք նոցա, և ընդ եղբօր քո պարոն Յակոբին ուղևորիլդ դէպ ի Թարւեզ առ սարտարն՝ Հանդերձ յղեալ ընծայիլք մերովք: Բայց յայնմ օրէ մինչև զայժմ չիմացաք զորպիսութիւնս նոցին, թէ որպէ՛ս եղէն, վասն որոյ կամք ի տարակուսի: Ուրեմն իմացեալ զորպիսութեանց նոցին, շուտով ծանուցես մեզ ի միամտութիւն: Եւ թէ յայդր ի կողմանէ շահին և կամ սարտարին, և կամ յայլ կողմանց Համբաւ լսիցես, ծանուցես մեզ: Եւ վասն յիշեալ ԲՃԾ. (250) թումանի ռիալին, զոր գրեալ էիր, ԱՌԵՃ. (1500) ռիալն պատրաստեալ յղեցաք ի Բայազիտ ամանաթ և զայլ մնացեալն ևս Հոգալոց եմք, և նայիմք միւս ևս թղթոյդ:

498բ

Գեորգ աղայն (Կարս) յղած թղթում նշուամ է նրանից ստացած նախորդ երկու գրութիւնների մասին, ըստ որոնց՝ տեղեակ էր պահել Կարինի տէր Յարութիւնի՝ մոմի պակասի առնչութեամբ արուած ծանուցման մասին, ինչպէս նաեւ Երուսաղէմի նուիրակին ուղղուած գրութիւնը ԾԴ. (54) բաճերի առաքման առթիւ, որոնք Գալուստ վարդապետի Հաղորդման Համաձայն տեղ են Հասել (498բ, Ա./1):

1113* **Ի Ղօշավանք** - Թուղթ ի Ղօշավանք առ առաջնորդ Յովհաննէս վարդապետն. յիշումն թղթոյն առ մեզ Հասանելոյն յամնոյս Ե. (5), յորում թէ ծանեաք զպատմութիւն անցից զրպարտութեան արկելոյ ի վերայ քոյ և զնեղութիւն կրելը և վերջապէս այնքան վնասուք զերծանիլդ: Եւ թէ ի վերայ ոմանց քաշանայից և ժողովրդականաց, որ զօրհնութեան թուղթս էիր ինդրեալ, վասն քառասնիցական տրոց և մատաղաց, աշա գրեալ յղեցաք թոռով ԺԼ. (18), զորս Հասուցես առ իւրաքանչիւրսն ի միամտութիւն նոցա:

Թուղթ մի առ Գեորգ աղայն գրեցաք ի պատասխանսի նորին թղթոյ, զայն ևս առ նա յուղարկեսցես: Այլե երկար ժամանակ է, որ ի Ղարա մէկ նշանաւոր մահտեսի Կարապետ անուամբ այր է վախճանեալ, մինչև ցայժմ զնմանէ բան ոչ գրեցիք, որով իմացեալ զմխիթարութեան թուղթ գրէաք, ուրեմն իմացեալ զորպիսութեանց նոցա, գրեսցես մեզ ի գիտել, որ զմխիթարութեան թուղթ գրիցեմք առ նա:

Դարձեալ թուի մեզ, թէյետ սրբոյ Չատկին ելանիցես ի գիւղօրայսն, բայց Հարկիւ գրեսցես մեզ զերբ ելանելդ, զի մարդ եմք յղելոց յայդր, այնպէս իցէ, որ մեր յուղարկելի մարդն զքեզ ի սուրբ վանսդ գտանիցէ, ուրեմն զպատասխանսի գրոյս Հանդերձ Հանգուցեալ մահտեսի Կարապետի բանին և քո երբ ելանելդ շուտով գրեսցես մեզ: Գրեցաւ յամոյս ԻԶ. (26):

Ստորեւ մկայակոչում է յիշեալ նուիրատոնների ցուցակը.

Պարոն Գրիգորն (Ենկիբեոյ). «վան տուեալ Ժ. (10) ղուռուշ քառասնիցին» (Ա./3):

Տիրացու Մնացականն (Ենկիբեոյ). «վան Ի. (20) ղուռուշ քառասնիցին» (Ա./4):

Երիցփոխ Գրիգորն (Բուփի գիւղ). «վան Ի. (20) ղուռուշ քառասնիցին» (Ա./5):

Յակոբ քեաշիայն եւ նրա եղբայր պարոն Կարապետն (Քիւրաքդարայ). «վան Ի. (20) ղուռուշ քառասնիցին, զոր տուեալ էին վան Հոգւոյ Իսօ քեաշիային» (Ա./6):

Դանիէլ քեաշիայն եւ նրա եղբայր պարոն Գրիգորն եւ Չախայն (Քէշաբօրք գիւղ). «վան նուիրեալ Ի. (20) ղուռուշ քառասնիցին» (Ա./7):

Չատիկ քեաշիայն (Աղջաղալա գիւղ). «վան Ա. (1) մատակի և Ա. (1) ոչխարին տուեալ մատաղացն» (Ա./8):

Երիցփոխ Յովակիմն (Աղջաղալա գիւղ). «վան Ա. (1) աւորիկին» (Ա./9):

Պարոն Սիմէօն (Բերդիք). «վան տուեալ Ա. (1) կով և Ա. (1) արջառ, և Ա. (1) ոչխար մատաղացն շորհակալութիւն» (Ա./10):

Պարոն Մատթէոսն եւ նրա որդի Յարութիւնն (Ինջասու). «վան տուեալ Ա. (1) եզն եւ ոչխար, և ուլ մատաղացուացն» (Ա./11):

Տէր Վարդանն ավագ քահանայն (Քիւրաքդարայ). «վան կով մատաղացուին և Ա. (1) սօմար գարւոյն» (Ա./12):

Պարոն Առաքէլն (Քէշաբօրք). «վան Ժ. (10) ղուռուշ քառասնիցին» (Ա./13):

Պարոն Մարտիրոսն (Ենկիբեայ). «յաղագս Ի. (20) ղուռուշ քառասնիցին» (Ա./14):

Տէր Վարդանն (Շամչավուղ). «վան մի եզին և ոչխարին» (Ա./15):

Պարոն Բարոնականն (Ենկիբեայ). «վան Ե. (5) ղուռուշին և մի արջառին» (Ա./16):

Եաղութ կնոջը եւ նրա դուստր Անախանն (Աղջաղալա գիւղ). «վան մի արջառին և Բ. (2) եօխայ կոճակին» (Ա./17):

1114 1797 թ., մարտ - Կոնդակի վերայ Չորագիւղի ժողովրդեանն վասն վէքիւութեան տէր Խաչատուրին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 53ա

1115 1797 թ., մարտ - Թուղթի Սպարթա առ Ղօջամանօղլու պարոն ՅօՀաննէան և առ որդին իւր՝ մեր գանձապետ տիրացու Ստեփանն, ընդ նոր նուիրակ վարդապետին:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 6բ-7ա

1116 1797 թ., մարտ - Թուղթի Հնդիկսի քաղաքն Կալկաթա առ աղայ Ս[ար]գ[իս] Յո[վհաննիսեան] վասն բանի պարոն Ստեփաննոսին Տէր-Շմաւօնեան, իբր զի Հա[ւատարիմ] [վ]էքիլ լինի նմա՝ փոխանակ փեսայի նորին, որ յայն կոյս մեռեալ էր, և առցէ ի վաճառականա]կան տալացուն և իւր Հասուցէ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2383-84

1117 1797 թ., մարտ - Թուղթ առ Գաղատիոյ քահանայն և իշխանն. շորհակալութիւն վասն գործաւարտ նուիրակ Գէորգ վարդապետին և յանձնարարութիւն վասն նոր նուիրակ Յովաննէս վարդապետին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2384

ՄՄ ձեռ. Հ^մ 4881, էջ 499ա

1797 թ., ապրիլ - Թուղթքի Մեծն Պօլիս, ի Կարին, ի Թարւէզ և ի Խօյ

1118 Ի Մեծն Պօլիս - Թուղթ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն. յիշումն երկար միջոցի զպատասխանի թղթոցն մերոց չգրելոյն, որ ընդ Մարտիրոս վարդապետին յղեցան: Եւ թէ Ուռուջուղու գանձապետին մերոյ՝ մահտեսի Գրիգորի թուղթն, զոր յղեալ էիր, էհաս և զոր ինչ վասն խնդրոյ նորին ի վերայ պահարանին բանս էիր գրեալ, իմացաք, որ վասն Հանգուցեալ Մարթայի ի կենդանութեանն նուիրեալ յիշատակին առ այն ահա զօրհնութեան թուղթ գրեցաք առ նա, ասելով, թէ զհոգևոր մօր Հոգեբաժին յիշատակն մեր գանձապետ մահտեսի Գրիգորն յղեալ է առ Պօլսոյ նուիրակն և նա յղեալ է առ մեզ: Բայց մահտեսի Գրիգորն գրեալ էր, թէ կամիմ այս իրօքս մէկ Գ. (3) թագ շինել տալ: Առ, որ մեք առանձնական փոռսուլայիւ գրեցաք, թէ որովհետև ի տեղդ պահանջողացն պատասխանեալ, թէ ի Սուրբ Աթոռն եմ յղեալ, և մեք քո ասութեանն Համեմատ բանս գրեցաք առ Կարապետն: Այսուհետև այլևս զայդ իրան յայդր երևեցուցանելն լաւ չէ, ուրեմն պարտիս զայդ իրան ծրարել և քոյդ կնքովն առ մեզ յղել:

Եւ վասն ի Թեհրան յղեալ վարդապետացն, թէ զորս ընծա-
յիւք յղեալ էաք առ շահն, ի նոցանէ թուղթս ընկալաք, որք գրեալ
էին, թէ ի փետ[րվարին] եկաք աստ և յետ Բ. (2)-ուց ատուրց տե-
սաք զշահն: Լաւ ընդունելութեամբ ընկալաւ զմեզ, ապա զինդրեալ
Ֆէրմանն մեր ետ և մեզ խիւայս յղեաց և թէ զկնի ատուրց մուրա-
խաս եղեալ, էլանելոց եմք գալ ի Սուրբ Աթոռդ: Եւ ծանուցումն
կացութեանցս և սղութեան կողմանցս:

Գրեցաւ յամնոյս Ժ. (10):

1119 **Ի յՈւրուշուղ** - Թուղթ ի յՈւրուշուղ առ գանձա-
պետն մեր մահտեսի Գրիգորն Անուշեան, ի պատասխանի թղթոյն
գրեցելոյ և ծանուցումն թղթոյ առ մեզ Հասանելոյն, յորում Հնոր-
Հակալութիւն ըղձիցն վասն գալոյն ի Սուրբ Աթոռս յուխտ և յոր-
դորումն ի դէպ ժամանակի գալ: Եւ թէ զՀանգուցեալ բարեպաշ-
տուհի Մարթայի ի կենդանութեանն զՆոգեբաժինն իւր յանոն
սրբոյ Գահիս, որ յանձնեալ էր քեզ զմի կապ մարգարիտ և մի փոքր
ծաղիկ էլմասով լօֆ, և զքո յուղարկելն ի Մեծն Պօլիս առ նուիրակ
Գալուստ վարդապետն, որոյ սակս օրհնութեան թուղթ էիր
ինդրեալ առ Հանգուցելոյ Հոգեզաւակն՝ մահտեսի Կարապետն:
Եւ մեք աւա զՀնորՀակալութեան թուղթս գրեալ և եղեալ ընդ
թղթոյդ, առաքեցաք ի ձեռս քո՝ տալ յինքեանն ի միամտութիւն:
Յիշումն վասն գանձանակադրամին Հասուցելոյ, որ է զՃԶ. (106)
ղուռուշ, և ՀնորՀատրութիւն վասն մահտեսութեանն:

Յամնոյս Ժ. (10)¹⁸¹:

Օրհնութեան եւ ՀնորՀակալութեան նամակ վերը յիշուած մահտեսի Կարա-
պետին՝ Հանգուցեալ Մարթայի զարդեղէնը յանձնելու մասին (499ա, Ա./4): Հնոր-
Հակալութեան նամակ պարոն Մարտիրոսին (գարձեալ Ուռուճուղ) գանձանա-
կական Ի. (20) զուռուշը պարոն Գրիգորին յանձնելու կապակցութեամբ (Ա./5):
Պարոն Հայրապետին (Կարին) ուղարկած նամակում շոշափում են գլխատրապետ
նամակագրութեան Հետ կապուած Հարցեր, մանավորապէս՝ Պօլիս ուղարկելիք
թղթերի՝ Հայրապետին Հասնելը, ոմն Ղեւոնդի Ախցիսայ, Գանսիէլ պետի՝ Ուռու-
մէլի գնալը, մահտեսի Նիկողայոսի կողմից երկու փոքր չինին ստանալը, Արաբկիրի
առաջնորդին Լ. (30) զուռուշ տալը, Իսաղ փաշայի եղբօր՝ Ախցիսայ գնալը եւ այլն
(499աբ, Ա./6): Նամակները գրուել են ապրիլի 10-ին:

1120 **1797 թ., 10 ապրիլի** - Թուղթ ի յՈւրուշուղ առ գան-
ձապետն մեր մահտեսի Գրիգորն Անուշեան, ի պատասխանի
թղթոյն, որ վասն Հոգեբաժնի Հանգուցեալ մահտեսի Մարթայի
կնոջ ուրումն օրհնութեան թուղթ էր ինդրեալ առ Հոգեզաւակն
նորա՝ Կարապետն:

ՄՄ ձեռ. Հ^ն 4538, էջ 98բ-9բ

181 Ուրուշուղում գանձապետ մահտեսի Գրիգոր Անուշեանին՝ հանգուցյալ Մարթա տիկնոջ հո-
գեբաժնի առիթով հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 656:

1121 1797 թ., սարիլ - թուղթի Բաղդատ առ Ղուկասն Ալեքսանեան և առ Միքայէն Տէր-Մինասեան, ի պատասխանի թղթոյն նոցա վասն բանի Հանգուցեալ Մարգար աղայի դատերն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2290

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 499բ

1122 Ի Խօյ - թուղթի Խօյ առ Իսաջան աղայն, ի պատասխանի Բ. (2)-ուց թղթոցն գրեցելոց, առ որ, թէ իմացաք զորպիսութիւնս ընծայատար վարդապետացն և զտեղոյդ: Բայց զի նշանակեալ էիր, թէ վարդապետքն մինչ ի քանի օրն երեւիցին, վասն այն փոյթ չարարաք պատասխանի առնել թղթոյդ, իսկ յետ աւուրց եկին վարդապետքն մեր ունելով Ֆարմանս ի շահէն, ընդ նոսին և Ապտի բէկն ևս եկեալ Հասոյց մեզ զթուղթ Չաֆարդուրուն և ձեր, որով իմացաք զամենայն գրեալն ձեր: ՀնորՀակալութիւն վասն արարեալ ընդունելութեանցն առ վարդապետն մեր:

Նաև զոր գրեալ էիր, թէ ըստ խոստման սարգարին իբր պարոն Յակոբ եղբայրն քո բերիցէ զխիլայն շահին, յաջողեսցէ Աստուած այնպէս լինիլ: Իսկ վասն ԲՌԵՃ. (2500) ալթմիշլուղին, որ գրեալ եմք սիրելոյդ ի մարտի ԺՉ. (16), թէ զմեծ մասն պատրաստեալ յղեցաք ի Բայազիտ, և զայն ևս Հոգալոց եմք. առ այն գրեալ էիր, թէ տիրացու Գէորգն ընդէր ոչ Հասուցանէ մեզ: Գիտաս՛յի՛ր, զի մեք յայնժամ դեռ ևս չէաք գրեալ առ նա, թէ Հեսապն թամամէ յուղարկես, վասն որոյ մնացեալ Հրամանի մերում չէր յղեալ:

Ապա մինչ վարդապետքն մեր եկեալ էին ի Խօյ, և անտի թուղթ էին գրեալ, թէ ի վերայ Բայազիտու եմք գալոց, իսկոյն թուղթ գրեցաք առ վարդապետն և յղեցաք ի Բայազիտ, թէ ի գալն ձեր ի տեղդ զայն աւանդ դրամն ընկալեալ ի Գէորգէն, յանձնես՛յիք պարոն Նաւասարդին և իւր որդւոյն, բայց զի թղթատարքն ի ճանապարհին յետանալով, զվարդապետն մեր ոչ էին տեսեալ, այժմ ի դառնալ աստի Ապտի բէկին, թուղթ ետուք նմա ի վերայ տիրացու Գէորգին որ վարդապետաց թուղթն բացեալ զպարոն Նաւասարդի և Հայրապետի գիրն Հանցէ և տացէ իւրեանց և զդրամն, որ մօտ իւր կայ, Ապիտինի առաջն յանձնեսցէ նոցա, թէ կամին Ապտինի ձեռօքն յղեսցեն առ քեզ: Եւ վասն ԲՃՀԵ. (275) ալթմիշլուղն, զոր պարոն Յակոբն տուեալ էր վարդապետացն ի գնել զընծայս վասն Սիւլէյման խանի տղային և նազիրին, վասն այնր, որ գրեալ էիր զոսկիս յղել Ապտինին գնացեալ Երևան, անդ վասն տուր և 500 առութեան ի վանցի պարոն Յակոբէն ԱՃՀ. (170) ալթմիշլուղ էր առեալ և ի նմանէ թուղթ բերեալ մեզ, որ զայն ԱՃՀ. (170) վաթսուննոցն նմա Հասուցանեմք, և մնացաք քեզ տալոյ ԱՃԵ. (105) ալթմիշլուղ, ապա ի վաճառականաց տեղեկացեալ մեր, թէ ի տեղդ մէկ ուիալն ԱՌԱՃ. (1100)

դիանով գնայ և մէկ պաճախը ոսկին՝ **ԵՌԱՃԾ**. (5150) դիանով: Ըստ այսմ՝ Հէսապ արարաք, որ տալ պարտիմք քեզ **ԻԲ**. (22) պաճախը ոսկի և **Բ**. (2) ուիալ, բայց ընդ ոսկւոյն ուիալ դնելն անվայելուչ Համարելով, **ԻԳ**. (23) պաճախը ոսկիս յանձնեցաք **Ապտիին**՝ Հասուցանել քեզ, որ ընդ պարոն **Յակոբին** Հասանելի **ԱՃՀ**. (170) ուեալին լրանայ **ԲՃՀԵ**. (275) ուիալն, փոքր-ինչ ևս աւելի, որ ի **Ապտիէն** պարտի քեզ Հասանիլ: Եւ այսքանս ընդ նախագրեալ **Բայագիտոյ ԲՌԵՃ**. (2500) ուիալին գումարի **ԲՌԵՃՀԵ**. (2775) ուիալ՝ ձեր Համայն տուեցելոց փոխարէնն: Ուրեմն ի Հասանիլն առ քեզ, շուտով ծանուցես մեզ, զի միամտիցիմք:

Դարձեալ յաղագս Վանայ մովպետի մեռանելոյն և սակս անցից ինչ **Ախիջան** աղային, որ ի տեղդ խօսեցեալ էին կարծիքօրէն, վարդապետքն ասացին մեզ և տարակոյս եմք մտաց մերոց: Ուրեմն զստուգութիւն եղելութեանն գրեցես մեզ, զի գիտասցուք: Գրեցաւ յամոյս **ԻԱ**. (21):

500ա

1123 **Ի Թարեզ** - Թուղթ ի Թարեզ առ տէր **Յովսէփ** աւագ քահանայն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, յորում, թէ իմացաք զգալ վարդապետացն յայդր և ուղևորիլն յայնկոյս, և ի քէն զմիակ ձի առնուլն: **ՇտորՀակալութիւն** վասն ընդունելութեանցն ցուցելոց առ նոսա: Եւ թէ այժմ ի գալ վարդապետացն թուղթ չէիր գրեալ մեզ և իմանալով, թէ պաշարեալ կաս ցաւօք, ոչ եղաք մեղադիր, այլ որ յառաջմէ գիր էիր գրեալ մեզ, թէ **ԱՀմատ** խանն բազում անգամ եղբօրս Հարցանէ, թէ Հոգևոր տէրն է՞ր ոչ գրէ զպատասխանի թղթոյս, և ինդրեալ էիր գիր գրել: Վասն որոյ այժմ ըստ քո բանիդ թուղթ գրեցաք առ նա, թէ քան զայս յառաջ քո թուղթն էՀաս մեզ և ի կողմանէ գերւոյն, որ ինչ ասացեալ էիր տէր **Յովսէփին**, գրեալ էր մեզ: Այժմ ևս բան գրեցաք նմա արզ առնել ձեզ: Եւ քեզ գրեմք, որ տէր **Գրիգորն** որպէս ի զաւակացն, նոյնպէս և ի գոյիցն և ի տանէն մերկացեալ է, և ոչ գոյոյս ի նմանէ բան գոյանալոյ: Վասն որոյ խոստանամք **ԱՌ** (1000) ուիալ տալ և եթէ դժուարին լինիցի, **ԲՃ**. (200) կամ **ԳՃ**. (300) ուիալ ևս դու իբր ի քէն խոստասցիս, թէ զայսքանս կտամ, զի բանն ի գլուխ գայ, և թէ առնուս զտղայն, սանատ տաս, տղայն բերես ի տունդ և մեզ գրես:

Եւ թէ լուաք, որ **ԱՀմատ** խանն շահի մօտն է, թէ եկեալ իցէ, երթալոց ես ի **Մարաղայ**, այլ որպէս խեղդ կտրէ, այնպէս արասցես:

Երկրորդ, վասն այգւոյ արդեանցն և քո առ մեզ Հասուցեալ իրացն և խարճիցն, որ գրեալ էիր, թէ զՀաշիւն գրեալ յղելոց եմք, բայց դեռևս աՀա չես յղեալ, ապա ի գրելդ զպատասխանի սորին զՀաշիւդ գրեալ, ընդ նմա յղեսցես:

Դարձեալ և Հարկիւ գրեմք, զի ի առնուլն զգերին ի խանէն, **ԲԳՃ**. (1300) ուիալն աւելի այլ բան չխոստանայցես տալ: Եւ թէ

ի պետս ծախուց սրբոյ տանս, զիրայ և զիրիշք առեալ յուղարկես, որ Հարկաւոր է յայլագգեաց երթևեկաց:

Ողջոյն եղբարցն՝ պարոն Աւետիքին, և պարոն Բաբաջանին, և որդւոցն՝ Յովաննէսին և Ստեփաննին:

[Գրեցաւ] ԻԱ. (21):

¹¹²⁴ 1797 թ., 25 սպրիլի - Թուղթ ի Բաղդատ առ մեր գործակալ Ղուկաս աղայն Ալէքսանեան, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի ՌՄԽԵ. (1796) թուոյ օգոստոսի Չ. (6), վասն տէր Սրապիոնին կոնդակ տալոյ, և զտէր Աւետիս չէրէցն արձակելոյ ի յարգելմանդ նուիրակին, որոյ երկուց խնդրոց միոյն բացասութիւն, և երկրորդ ստորասութիւն:

Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունիւ, օրհնութեան և շնորհեաց ի վերայ սիրելոյդ մերոյ և Հաւատարիմ գործակալիդ սրբոյ Աթոռոյս, Քրիստոսիւ զօրացեալ բարեպաշտազնեայ և ճոխապատիւ Ղուկաս աղայիդ և ամենեցուն, որք քո էն, ի Տէր խնդալ:

[Հտորհք]

Եւ ընդ օրհնութեանս ծանիր սիրելիդ մեր և Հարազատ զակակ սրբոյ Գաւհիս Էջմիածնի: Չի թուղթ քո յանցելում ամին ի վեցն օգոստոսի գրեցեալ կարի անագան ժամանեաց առ մեզ ի սոյն թուոյս մարտի ԺԱ. (11): Որոյ զպատասխանի թէպէտ և կամեցաք ոչ յամեցուցանել, առ այն զի բաւական յետացեալ էր թուղթն ի ճանապարհին, սակայն անտանելի ցաւք մեր և կասկածալիր վարանմունք, ևս և ակնկալութիւն թղթոյ Յակոբ վարդապետին, զոր մինչև ցարդ ևս չգտաք, արգելս ետուն փութոյն մերոյ: Իսկ այժմ զի մի առաւել ևս յետասցի, ահա ժամորոշեալ գրեմք զդարձուածս բանիցդ:

Եւ նախ զի ծանուցեալ էիր զնոյն թուոյ ի մայիսի էն գրեցելոց թղթոցն մերոց առ քեզ Հասանիլն, և զքոյ յուղարկելն զթուղթմն նուիրակին և պարոն Յովաննէսին ի Բասրայ, և զի ցաւակցելով ընդ դառնաղէտ անցան մեր և կողմանցս, սփոփեալ էիր միսիթարական բանիւք, շնորհակալ եղաք զագնիւ սիրելոյդ, զոր Տէր օրհնեցէ և փառազուարճ կենօք պահեսցէ փրկելով ի վտանգից Հոգւոյ և մարմնոյ:

Երկրորդ, վասն տէր Սրապիոնին, որ գրեալ էիր իբր թէ ընկալեալ կոնդական, որ է ի վերայ քանի քաղաքաց, և Կարին ևս չէր ընդ նոսա, չկարէ գտանել զրեղ ցաւոյն, այլ ի Հնդիկա գնասցէ, ծանիր առ այդ, զի Կարին վասն իւր երկիր գոլոյն չէ գրեցեալ, զի իբր ծանօթ գոլով ամաչէր անդուատ տուրս խնդրել: Այլ գրեցեալ տեղիքն ևս քիչ չէն. դա եթէ իւր բանին Հետևօղ լինէր, յայն տեղիս շրջագայեր և օգտիր: Բայց մինչև ցայդր եկեալ, և յայսբան միջոցի ի յօրհնեալ ժողովրդէնէդ շահեցեալ, այժմ ցանկայ և ի

Հնդիկա էլանել: Ե՛րբ արդեօք պարտի իւրայնոցն յօգնութիւն ժամանել:

Եւ ա՛հա Հազարաւոր գերետեարք պատեալ են զմեօք և շիւարեցուցանեն զմեզ միշտ: Յառաջ մինչ փորձանաւորք սակաւք էին և ի քսանից միոյն կոնդակ տայաք, ազգն մեր բողոք բառնայր, այժմ՝ Հազարաւորք և բիւրաւորք են, զի՛նչ արասցուք և զո՛րն Հոգասցէ, մինչ ինքեանք ևս յամենայն տեղիս նեղեալք են: Հնդկաստան, որ ապաճով նշմարի, անդ ևս յոյժ սակաւաւոր են մերայինք և թէ քանի՛ ապագործ քաճանայք և աբեղայք ժողովեալ անդ, զզուեցուցանեն զժողովուրդն, քաջ գիտես դու, որոյ աղագաւ բազմիցս գանգատեալ են նուիրակացն մերոց, և մեզ ևս գրեալք մեք ևս գրեցաք իւրաքանչիւր քաղաքի իշխանսն՝ պատասխանի տալ նոցա: Որպէս և Հոգեւոյս Հայրդ Հանդերձ Հասարակութեամբն տեղւոյդ վասն յայդր եկողացն գրեալ էին և կոնդակն պատուիրանաց վասն այնոցիկ՝ առ քեզ իսկ յղեալ եմք: Ապա զիա՛րդ չինայես ի մեզ զընդդէմն գրեցելոյ մերոյ առաջադրելով մեզ: Մանաւանդ զդորա բամբասանսն կանխաւ իսկ ընկալեալ եմք, որպէս յայտնի է Աստուծոյ: Ձի ի ինդրեին ի մէջ ոմանս առաջնորդաց երևելի վանորէից զկոնդակս ի վերայ Հնդկաց երկրին, մինչ որ ետուք, գրեն թէ՛ կարնեցի երիցու միոյ չափ ևս չկայաք, որ նմա տուեալ ես:

Արդ, սիրելիդ իմ, թէպէտ մեք ոչ եմք արգելիչ ողորմութեան, բայց այսպիսի ցաւք գոն: Ձի ինդրակքն Հինգ և տասն չեն, վասն որոյ այժմ՝ Հատեալ եմք զկոնդակ տալ ի վերայ կողմանցդ: Եւ դու մինչ ճշմարտապէս սիրելի մեր ես, վասն որոյ այսպիսի դժուարագոյն իրին չլինելոյ մի սրտապակաս լինիցիս ի մէնջ:

Երրորդ, ի կողմանէ Աւետիս երիցուն գրեալ էիր, թէ առաջնորդն ըստ ինդրոյ մեր կարգեաց յեկեղեցուոջն, և յետոյ բանիւ ոմանց արգելեալ է և այլն: Առ այդ զայս |2386| ունիմք ասել, թէ քաճանայն ժողովրդեանն է պիտանի և ոչ թէ առաջնորդին: Բայց քաճանային պարտ է պարկեշտագնաց և բարեբարոյ լինիլ և ժողովրդեանն ևս պիտոյ է Համախոճ միաբանութիւն ի յընդունիլն զոք, կամ ի մերժելն: Այլ զդա, զոր մեք ոչ ճանաչեմք, դուք լաւ գիտէք ի վաղուց Հետէ, և այժմ՝ քանիքդ միապէս այլապէս խօսին, նժդէ՛հ առաջնորդն զի՛նչ արասցէ:

Իսկ արդ, որովհետև սիրելիդ ինդրեալ էիր արձակել և երաշխաւորութիւն ցուցեալ, թէ յայսմէտէ ևս ոչ է գործելոց զապիրատ ինչ գործս: Վասն որոյ ա՛հա ըստ ինդրոյ սիրելւոյդ ներեմք տէր Աւետիքին և ևս կալ ի քաճանայական պաշտամոնսս, ոյր սակս և թուղթ գրեալ առ Հոգևոր որդին մեր և առաջնորդն ձեր՝ Յակոբ զգօնամիտ վարդապետն՝ ընդ գրոյս յղեցաք ի ձեռս քո, զոր Հասուցես նմա, զի նա ևս արձակման գիր առաքեսցէ: Բայց և Հարկաւորաբար պատուիրեմք քաճանայիդ այդմիկ՝ բաւական Համա-

րիլ զայդքան անցան և ի բաց դնել այսուհետև զամենայն անկարգութիւն և զխռովասէր բարս, ազատ առնելով ի գայթակղութենէ զբարեպաշտօն օրհնեալ ժողովուրդան, որով և մեզ Հանգիստ ինչ լիցի:

Դարձեալ՝ ահա մօտ ի լրումն տարւոյն, որ ի Յակոբ վարդապետէն գիր ոչ Հասանի մեզ, ի թղթոց ձեր յայտնի լինի, թէ նա վաղապէս ի Բասրայու ի նաւ մտեալ է և գիտեմք, որ նա ի մտանէն ի Բասրայ և յերանէն, երկիցս թուղթ իցէ գրեալ մեզ: Ապա ո՛ր եղէն արգելեալք, որք ոչ ժամանեն աստ:

Արդ, ինդիր է ի սիրելոյդ, զի առ Հարկի գործակալութեանդ փոյթ կալցիս Հարցանել վասն թղթոց նորա, և այլ թուղթք ևս, որ այսուհետև գայցեն ի նմանէ, անյապաղ յուղարկեսցես առ մեզ, զի տեղոյս և կողմանցս Հոգքն և վիշտքն բաւական գոլով մեզ, նորա տարակուսանքն ևս մի յաւելցի ի վերայ:

Ջերկրէս և զմէնջ մասնաւորապէս այսքան գիտել լիցի սիրելոյդ, զի կացութիւն բնակչաց երկրիս և մեր լի է կասկածանօք փորձութեանց և սղութիւնն ևս անտանելի: Հին իշխօղն տարեալ եղև առ տիրապետեալն և նոր սպարապետ գայ, չգիտեմք որո՞վ կերպարանաւ լինիլն: Այլ այս ինչ սակաւ մի գիր է մտաց մերոց, զի ակնարկութեամբ բարերարին Աստուծոյ զվարդապետս յղեցաք ընծայիք առ շահն, և նա քաղցրութեամբ ընկալեալ էր և շքեղ խիլայիք դարձուցեալ, և ըստ ինդրոց մերոց զոմանս ֆերման տուեալ: Ինչ և իցէ, յողորմութենէ Տեառն մինչև ցայժմ սահմանեցեալ ենք սուրբ տամբս յապայն ևս նմա յանձն եղիցուք, և ի նմանէ Հասցէ այցելութիւն և ինամբ տառապեալ ազգի մերում:

Ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ յամի Տեառն 1797 և ի Հայոց ՌՄԽԶ. ի յապրիլի ԻԵ. (25) ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^Կ 4501, էջ 2385-86

¹¹²⁵ 1797 թ., 25 ապրիլի - Թուղթ առ Հնդկաց երկրին նուիրակ Յակոբ վարդապետն, վասն թղթոց նորա չՀասանելոյն առ մեզ, և վասն Բաղդատու Աւետիս երիցուն, զոր բանադրեալ էր, զի արձակեսցէ, և վասն որպիսութեանց կողմանցս:

Յորմէ Հայրական սիրով և օրհնութեամբ բազմաւ, քրիստոսաձիր ողջունիւ և սրբոյ Իջման տեղոյս նորին զօրացուցիչ շնորհիւ ծանիր, սիրելի որդի մեր և Հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս՝ Յակոբ աստուծիմաստ վարդապետ: Չի յանցեալ ամին թող զի մարտի ԺԵ. (15) և ի մայիսի էլն գրեալ թուղթն մեր, Հանդերձ Հնդկաց մնացեալ թղթովքն Համայնիք, գրեցաք նաև ի սեպտեմբերի ԻԲ. (22), զպատասխանի թղթոյն քոց ի Բաղդատու գրեցելոց, և Հանդերձ ինդրեցելովք կոնդակօք և այլ օրհնութեան թղթովք առ ոմանս առաքեցաք, զորոց և ի Բաղդատ զՀասանիլն

և անտի ի Բասրայ յուղարկիլն գիտեմք: Բայց ի քէն այլևս գիր չէՀաս առ մեզ: Թէպէտ ի Բաղդատու գրովք ոմանց իմացաք, թէ ստուգիւ ի Բասրայու մտեալ և անվտանգ ժամանեալ էս ի Բումբայի, և Հաստատեմք, թէ ի Բասրայու թուղթս իցես գրեալ մեզ, բայց ոչ գիտեմք որո՞յ իցես տուեալ և ո՞ւր արդեօք արգելեալ եղէն, որ չՀասին մեզ: Վասն որոյ տարակուսանք է մեզ ի կողմանէ Ջուղայու կոնդակին և մեռոնին, թէ որպէ՛ս արարեր և քաՀանայացուաց նոցա բանն զիա՛րդ եղև:

Քանզի նոքա այժմ ևս զեպիսկոպոս ինդրեն և չգիտեմք զի՛նչ իցեմք առնելոց: Այլ ամսովք յառաջ ի Բաղդատու Ղուկաս աղայէն Ալէքսանեան թուղթ մի էՀաս առ մեզ, որ ծանուցեալ էր, թէ զԱլեւտիս երէցն ի գոլ առաջնորդին աստ, ընկալաք յեկեղեցին Հաճութեամբ նորա, այլյետոյ բանիւ ոմանց ի Բասրայու արգելեալ է զսա և այլն: Եւ զի յոյժ ինդրեալ էր արձակել, երաշխաւոր լինելով այսուՀետև սորա պակասութիւնքն յինէն իմացիր: Մէք ևս պատասխանի գրեալ նմա, նախ զիւրեանց յանցանան առաջադրեցաք Համառօտիւ, թէ դուք զդա լաւ ճանաչէք, և ի ձէնջ ոմանք միապէս խօսիք, և ոմանք այլապէս: Չի՛նչ արասցէ նուիրակն և ապա ներեցաք երիցուն կալ ի պաշտաման իւրում, ասելով ևս, թէ գրեցաք նուիրակ և առաջնորդին արձակման թուղթ գրել: Եւ Հետևաբար իւրն և նմա զգուշական պատուերք: Վասն որոյ գրեմ սիրելի որդւոյդ, զի ի Հասանիլ թղթոյս առ քեզ, արձակման թուղթ ինչ գրեցես վասն երիցուն յիշեցելոյ, որոյ և արժանութիւն ունիցի, ըստ այնմ ի վերնոյ ակնարկութենէն ստասցի:

Եւ դու, որպէս պատուիրեալք եմք քեզ Հայրաբար ի բանադրանաց, ի բարկութեանց և մանաւանդ ի վաղկոտութենէ, Հեռի արասցես զանձն քո, նկատելով և ի յեղանակ կացութեանց աշխարհիս ի յետին ժամանակիս:

Չորպիսութեանց կողմանցս ծանիցես, եթէ քանի՛ վիշտք և նեղութիւնք ժամանեցին երկրացս և սղութիւնն սաստիկ ևս ի վերայ, զայսցանէ ոչ երկարեմք, այլ զմեծամեծ անցիցն ասեմք, թէ բանակն Հիւսիսայնոց, որ կայր ի Շամասի, ի Հոկտեմբերին իբր խաղացին յառաջյայսկոյս, մեծ մասն իջլանեցաւ ի դարան դաշտին, որ և ձմերեաց անդէն բազում վնասուք, և փոքր մասն եկեալ տիրեցին Գանձակայ, գունդ ինչ մտեալ ի դղեակն և այլն գնացին ի Տիփիսիս ձմերել: Բայց յամռանն Գանձակայ, լուեալ զվախճան կենաց կայսերուՀոյն, կասեցան ի գործոյ և նոր թագաւորն, խափանեալ զմարտն, զգրաւեալ տեղիսն ևս թողլով, դարձոյց զգորսն և Գանձակն այսօր այլև ի ձեռս Ջաւատին է, և Տիփիսի լի ամենայն տարակուսանօք, և պետն նոցա ի սեպՀական տեղին իւր Կախէթ:

Այսուամենայնիւ յաջողեալ բախտի մեծի բռնաւորին զօրանայ օր քան զօր, որ և ի Նախշուանու զխանն տարաւ, և զնորին

յատուկ ազգային զօրան ևս Հանդերձ տամբք, և գքանի Հարիւր տուն եկ ժողովուրդս և յուղարկեալ է անդ զնոր խան յիւրոցն: Նախ զմեր խանն ևս տարաւ Ռ (1000) ձիաւորօքն, և թէ այլ ինչ է Հանդիպելոց երկրականացս, չար կամբարի, դեռ ոչ է յայտնի:

Արցախու տիրօղն ևս զմարդիք է յուղարկեալ առ նա վասն ներելոյ, նոյնպէս և այլքն, որք յայնկոյս: Ապա գոհութիւն և փառք ամենաբարեբարին Աստուծոյ, որ յայսքան Հանդիսադրութիւննս Հիւսիսականացն և յայնքան յոգնապատիկ յուսադրութիւնսս ոնայնաբան ոգւոց, շնորհեաց մեզ զգուշութիւն, չգործել ինչ ընդդէմքաջաբաղտ բռնաւորին:

Եւ ի գալն նոցա տակաւին ի Գանձակ, ի յունւարի ամսեանն, մեր զԴաւիթ և զՅովաննէս վարդապետնս չափաւոր ընծայիւք յղեցաք ի դուռն, ծանուցանելով զոմանս ցաւս |2480| մեր և զՖէրմանս ինդրելով: Եւ նա լաւ ակնարկութեամբ ընկալեալ էր և Հիւր տուեալ իւր այնոյ սպարապետի միոյ, և շքէղ խիլայիւք և ֆէրմանօք դարձուցեալ, որք յապրիլին Հասին աստ, և սակաւ ինչ անդորրութիւն ստացաք մտաց: Բայց եղբայրն՝ Ալիղուլի սարտար յղեալ է ի Թարվէզ, որ և թուղթ էր գրեալ մեզ միամտութեան, թէ գալոց է յերևան: Եւ դարձեալ ի Խոյոլ Հսչեցաւ, թէ այլ ոմն խան պարտի գալ տեսցուք: Աստուած զբարին յառաջացուցէ ըստ բարի կամաց իւրոց, և տառապեալ մնացորդաց ազգի ողորմութիւն արասցէ: Ողջ լեր ի Տեր:

Գրեցաւ ի ՌՄԽԶ. (1797) թուոջս և ի յապրիլի ԻԵ. (28), ի Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2479-80

500ա

1797 թ., ապրիլ - Թուղթք ի Հնդիկս և ի Բաղդաստ

1126 **Ի Հնդիկս** - Թուղթ առ Հնդկաց երկրի նուիրակ Յակօբ վարդապետն. յիշումն յանցեալ ամի գրեալ թղթոցն մերոց առ նա և ծանուցումն երկար միջոցի թուղթ չգրելոյն, յորում թէ ջուղայեցուց կոնդակն և մեռոնն որպէս արարեր և քահանայացուց նոցա բանն զիս՝ ող եղև: Եւ վասն Աւետիս երիցուն, զոր բանագրեալ էր, արձակեցէ:

Եւ վասն զորպիսութեանց կողմանցս ծանուցումն: Տէ ս ի նոր տետեր յէ[րեան] 2480:

Գրեցաւ յամնոյս ԻԵ. (25):

1127 **Թուղթ ի Բաղդաստ** առ մեր գործակալ Ղուկաս աղայն Ալեքսանեան, ի պատասխանի թղթոյն վասն տէր Սրապիոնին կոնդակ տալոյ, և զտէր Աւետիս չէրեցն արձակելոյ ի յարգելմանէ նուիրակին, որոյ Բ. (2)-ուց ինդրոցն միոյն ստորաստութիւն: Տէ ս ի նոր տե[տեր] յէ[րեան] 2385:

[Գրեցաւ] ԻԱ. (26):

1128 **Թուղթի Մուշ** առ պարոն **Մինասն** և տիրացու **Գրիկ** եղբայրն նորա. յիշատակութիւն առ նախանցեալ նուիրակ **Գրիգոր** վարդապետն արարեալ լաւութեանցն, և յանձնարարութիւն վասն նոր նուիրակ **Յովաննէս** վարդապետին:

Գրեցաւ յամնոյս ԻԶ. (26):

500Բ

1129 **Ի Ղարս** - **Թուղթի Ղարս** առ **Հանգուցեալ մահտեսի Կարապետի** որդի մահտեսի **Անդրէասն** մխիթարութիւն վասն մահուն **Հօրն** իւրոյ:

[**Գրեցաւ**] **ԻԷ. (27):**

1130 **Ի Կարին** - **Թուղթի Կարին** առ պարոն **Հայրապետն**, յորում նախապէս **Թէյապրիլի ԺԴ. (14)** գրեցեալ **Թուղթի մեզ** էձա **ձեռամբ տաճիկ փայեկին՝ Հանդերձ մեր** գանձապետ **Մարէան** պարոն **Մկրտչի Թղթովն** և **ի կողմանէ Ամթայ** եկեալ պահարանան, որ **ի Բաղդատու** էր գրեցեալ առ մեզ:

Երկրորդ, Թէ զոր ինչ **զորպիսութիւնն** էիր գրեալ **գնուիրակ Գրիգոր** պետէս, **իմացաք:**

Երրորդ, Թէ վասն քաղաքիդ գանձանակական **արդեանցն**, որ գրած էիր, **Թէ 450 ղուռուշ** է **Հասեալքեզ** **ի գանձապետ** պարոն **Մկրտչէն**, **աճա** և **մէք նշանակեցաք** **ի դաւթարոջդ**, որոյ **աղագաւ** և **գրեցաք** **զկոնդակ շնորհակալութեան** առ **Ժողովուրդան**, և **զթուղթ օրհնութեան** առ **գանձապետն**, և **յղեցաք:**

Չորրորդ, Թէ որ փաշային սառաֆ Անտօն աղայն **զմի նորատիպ Մաշտոց** էր **ի ննդրեալ**, **այնորիկ** **աղագաւ** **այսպէս** **ժանուցես** նմա, որ **Թէպէտ** **զՄաշտոցն** **սկսաք** **տպագրել**, **բայց** **չկարացաք** **աւարտել** **վասն շփոթից** **կողմանցս:**

Հինգերորդ, Թէ զկիւլպան, որ **ի ննդրեալ** էիր **վասն փաշային**, **զկնի մի քանի** **աւուրց** **ընդ ուխտաւորացն** **յուզարկելոց** **եմք քեզ** **Հասուցանել:**

Չվեցերորդ, Թէ Բ. (2) Թուղթքդ **ի մար[տի]** **21** և **յապրի[լի]** **9** **գրեցեալք**, **Հասին** **առ մեզ**, **բայց** **այժմոյս** **զպատասխանին** **ոչ** **գրեցաք** **ընդ փայեկին**, **յետոյ** **ի դառնալ** **ուխտաւորացն** **գրելոց** **եմք:**

Գրեցաւ յամնոյս ԻԹ. (29):

1131 **1797 Թ., 1 մայիսի** - **Կոնդակ շնորհակալութեան** **ի վերայ Ղարսայ քաղաքիս** և **երկրին** **յաղագս** **առատ նուիրակութեանն** և **օգնութեանական տրոցն**, **զոր** **ի ձեռն** **առաջնորդին** **իւրեանց՝ Յովաննէս** **վարդապետին** **Հասուցին** **Սրբոյ Աթոռոյս:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2307

1797 թ., 5 մայիսի - թուղթ առ Կեսարիոյ առաջնորդ Մատթէոս վարդապետն, ի պատասխանի Բ. (2) թղթոց նորա. շնորհակալութիւն վասն առ նուիրակ Բարսեղ վարդապետին լաւութեանցն, և տրոցն, և ծանուցումն զորպիսութեանց կողմանցս, և եկելոց ուխտաւորացն, ընդ որոց և գրեցաւ թուղթս:

Յորմէ քրիստոսաւանդ ողջունիւ և սիրով ճշմարտիւ և Հոգեպարար շնորհիւ միաճնաէջ տեղոյս, գիտութիւն լիցի իսկապէս սիրելոյդ մերոյ, Հաւատարիմ և օգտարար որդւոյդ Սրբոյ Աթոռոյս՝ Մատթէոսի աստուածիմաստ վարդապետի և արհիապսակ եպիսկոպոսի օրհնեցելոյ վիճակիդ Կեսարիոյ: Չառաջինն ընկալեալ մեր զկանխագիր թուղթ քո վշտակցական և սփոփարար առաքմամբ նուիրակ Բարսեղ վարդապետին՝ ընդ իւրն գրոյ, եթէ ի Համառօտակի ազդարարութեանց քոց և եթէ մանաւանդ յերկարապէս գոհացողական ծանուցմանց նորին, գիտացաք զընդունիլդ զնա մեծաւ սիրով ի Հրաշափառ սուրբ վանսդ, և յետ բազմակերպ մեծարանաց յաւուրս բազումն, ի պատեհ ժամանակի յուղարկելդ ի յօրհնեալ քաղաքն, յորդորական գրովդ ընդ սովորական նուիրակացն առատութեան՝ զյատուկ ևս օգնութենական տուրս առաջագրելդ աստուածասէր ժողովրդոցդ ի կարեկցութիւն լուսաճնի մօրս ձերոյ, ի վերայ որոց պէսպէս բարելաւութեանց՝ նաև զընծայելը յինքենէ ի յօգնութիւն գձ. (100) զուռուչ:

Առ որս ամենայն սրտադիւր եղեալ ի մէջ բազմապատիկ ներութեանցն մերոց՝ յոյժ և յոյժ շնորհակալ եղաք զյատկեղ սիրելոյդ և զՀաւատարիմ բարեկամէդ, օրհնելով լիալիր օրհնաբանութեամբ և զՀատուցումն բարի աստուածապատական բարերարութեանն յանձնելով Հատուցանել: Որ և ըստ արդարութեան և ողորմութեան իւրոյ զփոխարէնն բարեշնորհութեանց և զուարթագին տրոցն ձերոց յօգնապատիկ չափելով արևանաւոր Հօտապետիդ և բարեյօժար Հօտիդ բանաւորի՝ պարգևեցէ առաւել ևս զխաղաղութիւն կենաց, զբարեպաշտութիւն կամաց, զարգասաւորութիւն բարեաց, զառատութիւն գոյից և զյաջողուածս ամենայն գործոց և առաքինութեանց, և Հանդերձ Համօրէն ննջեցելովք ի Հանդերձելումն լուսապսակս ճեմեցուցէ ի մշտնջենական փառս արքայութեանն երկնից:

Իսկ արդ, մինչ յամիսս բազումն ակամայ յետաձգեցաւ այս շնորհակալութեան բանք մեր, ի պատճառ անչափ խուժանիւն կուտելոյ ի վերայ մեր և ոչ երբէք Հանգիստ տալոյ, էհաս և միւս սիրաշարուն թուղթ սիրառատ սիրելոյդ ձեռամբ մեծաՀաւատ ուխտաւորացն՝ մահտեսի Աբիսողոմայ, մահտեսի Յակոբայ և մահտեսի Բարսղի, և ի նմին ևս ծրելոց միսիթարական և յուսադրական բանիցդ, թէ Հաղորդիք ի վիշտս մեր իբրև զանդամն Հարազատս կարեկիցս գլխոյ, և մեծաՀոգ փութով կանխէք յաղօթս առ քաղցրալուրն Փրկչին՝ առնել մեզ զբարի այցելութիւն, ոչ սակաւ միսի-

Թարեցաք, յուսալով խոնարհելոյ Տեանն ի լուր ձայնի լրովթեան սրբոյ եկեղեցւոյդ: Ուստի և դարձեալ շնորհակալ եմք:

Բայց մեծաՀամբաւ գործն, որոյ ձայնին յոյս առեալ ձեր իբր թէ ժամանեալ իցէ առ մեզ, Հարցեալ էիք զստուգութենէն, այն ի դերևս էլ, որ թէպէտ պատռեալ զբուռն արանաց շարժեցան յառաջ՝ ընդ ձեռամբ գրաւեալ զքաղաքս և զգաւառս ոմանս մինչև ցԳանձակ Աղուանից, և իջևան կալեալ զԴարան դաշտ, սակայն որ արժան էր ժամանել շարարարին, պատահեցաւ բարեարին, այսինքն՝ կանխուամն օրՀասին մաՀու ի տարադէպ ժամանակի, և ընդ զրաւիլ կենաց նորա, զրաւեցաւ և սկզբնաւորեալ գործն անկատար, ներգործաբար իմն կատարելով բանի սաղմոսողին, թէ ելցէ Հոգի ի նոցանէ և յայնժամ կորիցեն ամենայն խորՀուրդք նոցա: Զի յաջորդ գաՀաւորեալն որդի նորա ոչ զգեցեալ զնախանձ նորին, դարձ առնել ետ գնդիցն, խափանել զՀանդէսն ուրանօր, այն ոմն ի մերոցն, որ պիտակաբար ուղարկեցեալ էր նոցա, յոչինչ պէտս, աՀա փոխանակ կեղակարծ օգտին, գտանեցաւ առիթ կասկածանաց զանազան վտանգից մեզ և մերայնոց:

Փառք և գոՀովթին Աստուծոյ, որով կեամք և շարժիմք, յորոյ կեցուցչական ազդեցութենէն ոչ ապաստանեալ ի շնչմունս Հողմոց և յանվատահէլի յոյն, ի չցուցաք երբէք զընդդէմ գործս ինչ առ քաջաբաղդ բռնաւորին, այլ դեռևս Հիւսիսայնոցն, Հանդիսացեալ գոլով ի կողմունքս մեր ի ձեռն վարդապետաց զընծայս յղեցաք նման և արգս գրեցաք վասն ոմանց ցաւոց մերոց, և նա քաղցրութեամբ ընկալեալ զնոսա, տուեալ էր զՖէրմանն ըստ ինդրոյ մերոյ և իխլայազարդ դարձուցեալ, որով ոճիմք սակաւ մի զանդորութիւն մտաց, թէ թէև նեղիցիմք ընդ Հասարակին, բայց ոչ ընդ պարտաւորն Համարեալ մնայցէ սուրբ տոճնս անաղարտ բարի ակնկալութեամբ Աստուծոյ ամենագթածին:

Իսկ կացութիւն երկրիս յանցեալն և նարդէնիս ի զանազան Հարկապահանջութեանց և ի պէսպէս ծանր գործառնութեանց և ի սաստիկ սղութենէ Հացի և ամենայն պիտոյից, ի յետին դառնութիւն չքաւորութեան ժամանել, յոգիս են ապաստան, և կասկածանօք ապառնի վտանգից թախծիմք առՀասարակ: Եւ արդ, թէպէտ բարւոք էիք գրեալ վասն յիշեցելոց բարեպաշտ օրՀնեալ ուխտաւորացն շահելոյ, զորք և սիրով ընկալաք և գտաք արժանիս մեծի սիրոյ և շահեցողութեան, և պարտականութիւն իսկ գիտեմք Հոգևոր Հայրութեամբք մերոց՝ զառ մեզ դիմեալն յորդուոց մերոց ուրախ առնել, որչափ և կարիցեմք:

Այլ յերրորդ ակոր գալոյ սոցա մինչդեռ երկիցս էաք տեսեալ զմիմեանս, եղբայրն շահին մեծ սպարապետն, որ և ի միւսումամին եկեալ էր, եկն եմոտ յերկիրս մեր, որոյ ընդառաջ ելեալ Համայն մեծամեծքն Երևանու, ազդ արարին մեզ ևս գնալ: Վասն որոյ զօրՀնեալ ուխտաւորն թողեալ ի Սուրբ Աթոռոջս, սրտամաշ տա-

րակուսանօք գնացար յԵրևան, և մինչ զսարտարն բերեալ իջու-
ցար յիւրում տեղոջ, տեսար զայլ ոմն ծառայ շահին եկեալ ֆէր-
մանաւ վասն ընչից խանին մերոյ, որ կալանաւորեցեալ է անդ, և
կայցն յարքունիս գրեցեալ: Այնր աղագաւ դարձար ի Սուրբ
Աթոռս, զի աստանօր եղեալն յանձնիցեմք, և ի վաղիւնեա դար-
ձեալ գնալոց եմք յԵրևան առ սարտարն, որ և թէ ինչ դիտմամբ
իցէ առաքեցեալ, չգիտեմք: Թէպէտ և ի Թարվիզու թուղթ էր
գրեալ մեզ անտարակոյս լինիլ:

Ապաբէն օրհնեալ ուխտաւորքն ականատես գոլով կրից մե-
րոց, Համարիմք թէ անմեղադիրք իցեն մեզ, գուցե և ձերդ սիրե-
լովթին ներողամիտ լիցի: Եւ զայլ երկարապէսն Համառօտ գրե-
ցելոցս ի խոհական գրաբերացդ իմացեալ, ողջ լեր ի Տէր:

Ողջոյն և օրհնութիւն տամք սիրելի և Հոգևոր որդոց քոց և
մերոց՝ Ստեփաննոս և Կարապետ շնորհապերճ վարդապետացն,
և բնաւից միաբանից Հրաշագարդ սրբոյ վանացդ, յանձնելով զա-
մենայսն ի ինամք Աստուծոյ:

Գրեցաւ ի ՌՄԽԶ. (1797) թուոյն և ի մայիսի Ե. (5), ի
Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2480-81

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 500բ

1797 թ., մայիս - Թուղթք ի Կեսարիա և ի Կարին

1133 **Ի Կեսարիա** - Թուղթ առ Կեսարիոյ առաջնորդ
Մատթէոս վարդապետն, ի պատասխանի նորին գրեցեալ թղթոյն
ընդ ուխտաւորացն, յորում թէ իմացար զբարելաւութիւնդ արա-
րեալ առ նուիրակ Բարսեղ վարդապետն և յանուն մեր զՃ. (100)
ղուռուշ ընծայ տալդ, և շնորհակալութիւն վասն ցաւակցական
բանիցն գրելոց, և ծանուցումն կողմանցս զորպիսութեանց: Տէս
ի նոր տես[եր] յե[րես] 2481:

1134 **Թուղթ ի Կեսարիա առ Պաշպագիրկեան մաշտեսի**
Յովաննէս ամիրայն, ի պատասխանի գրեցեալ թղթոյն. շնորհա-
կալութիւն վասն ցաւակցութեանցն գրելոց, և վասն նուիրակին
արարեալ ընդունելութեանցն, և վասն զովն նուիրայ Պօլսոյ ոս-
կիս Ժամուց յղելոյն, և ծանուցումն կողմանցս որպիսութեանց:

1135 **Թուղթ ի Կեսարիա առ մաշտեսի Խոսրն,** ի պատաս-
խանի թղթոյն, և շնորհակալութիւն վասն զերկու ոսկի աջաՀամ-
բոյր յղելոյն, և Համառօտ ծանուցումն զորպիսութեանց կողմանցս:

Գրեցան թուղթքս և յղեցան ընդ ուխտաւորացն ի մայիսի Ե.
(5):

1136 **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրա-
պետն. յիշումն առաջին թղթոյն յապրիլի ԻԹ. (29) գրեցելոյ, և

ծանուցումն վասն գալստեան սարգարին յԵրևան և մեր գնալոյն ընդառաջ, և դառնալոյն վերստին ի Սուրբ Աթոռս յայտնի առնելով և զպատճառն դարձման մերոյ, թէ յատուկ մուպաշիր էր եկեալ ընդ սարտարին վասն ընչից մեր խանին, որ ի շահէն կալանաւորեցեալ էր, և զի առ մեզ ևս գոյր աւանդք խանին, դարձաք զի զայնս յանձնեսցուք մուպաշիրին:

Գրեցաւ յամնոյս Ե. (5):

¹¹³⁷ **յԱգուլիս** - Թուղթ առ Սրբոյ Թօմայի Առաքելոյ վանիցն առաջնորդ Թօմաս վարդապետն. ծանուցումն թղթոյն առ մեզ Հասանելոյն, ցաւակցութիւն վասն վշտակրութեանցն կրելոց, և թէ որ կամեցեալ էիր դիմել ի Սուրբ Աթոռս, բարի էր, բայց այժմոյս ցամենայն կողմանց խռովութիւնն յայտնի է քեզ: Եթէ Աստուծոյ ողորմութեամբն Հանդարտութիւն լինիցի, յաշնանն ելեալ գայցես ի Սուրբ Աթոռս:

500բ

¹⁷⁹⁷ Թ., մայիս - **Թուղթք ի Տիարպէրի, ի Կարին, ի Խոյ և ի Կարս**

¹¹³⁸ **Ի Տիարպէրի** - Թուղթ առ Տիարպէրու նուիրակ Մկրտիչ վարդապետն, ծանուցումն Բ. (2)-ուց թղթոցն առ մեզ Հասանելոյն՝ առ որ է, թէ իմացաք զանցեալ ամի գրեալ թղթոյ մերոյ առ քեզ Հասանին և զաւարտելը զգործդ ի միւս տեղիս, և զանցանելը ի Զրտաստուն, և զօգնութիւն գտանելը առաջնորդաց տեղւոյդ, և զմիւսոյն զվիրաւորութիւն նշանակելը: Եւ թէ գրեալ էիր վասն |500բ| Հին դրամոյն Հազրուագիւտ լինելոյն, վասն որոյ ընդունելի է մեզ նոր դրամ Հասուցանելը: Եւ թէ, որ նշանակեալ էիր երկրորդ թղթովդ ԲՌԽԾ. (2500) ղուռուշ դրամ, ձեռամբ մահտեսի Յակոբին յանձնելը Կարնոյ մեր գարծակալ պարոն Հայրապետին վաճառակից Աղայեկին ի յԱմիթ, իմացաք, և զի պարոն Հայրապետն ևս էր գրեալ առ ինքն Հասանին և վասն քո զղաւզ ինդրեալ: Վասն որոյ ահա ԲՌԽԾ. (2500) ղուռուշի ղաւզն գրեալ յղեցաք ի ձեռս պարոն Հայրապետին՝ Հասուցանել առ քեզ ի միամտութիւն:

Իսկ Բալիբէկեան մահտեսի Յարութիւնին ԱՌ. (1000) ղուռուշի քեզ տուեալ թէմասուկն, զոր յղեալ էիր, զի տացուք նմա և ԱՌ. (1000) ղուռուշն առցուք: Եւ գրեալ էիր, թէ Ծ. (50) ղուռուշ ևս ձեռաց փոխ եմ տուեալ, զայն ևս առջիք, պահանջեցաք ի նմանէ յանձն էառ զպարտոն թէպէտ, բայց տակաւին ոչ Հատոյց, և զի դեռ ոչ ընկալեալ չէր օրէն ղաւզ տալ վասն որոյ այժմ զայն ոչ գրեցաք ի մէջ ղաւզիդ, այլ երբ առնուցումը, գրելոց եմք քեզ ի միամտութիւն:

1139 **Ղաւզ առ սա վանն ԲՌԵՃ**. (2500) զուռուշին, զոր գրեալ յղեցաւ ի ձեռս պարոնն Հայրապետին՝ Հասուցանել ինքեան ի միամտութիւն:

1140* **Ի յԱմիթ – Թուղթ ի յԱմիթ** առ գանձապետ մահտեսի Յակոբն, ծանուցումն թղթոյն առ մեզ Հասանելոյն՝ Հանդերձ նուիրակի թղթովն և թամասուկովն, յորում, թէ Մուղլալ անունն կնոջ օրհնութեան թուղթն, որ առ նա էիր Հասուցեալ և ի նմանէ ի. (20) զուռուշն առեալ ոնիս առ քեզ, իմացաք, բայց ի կողմանէ Լ. (30) զուռուշին, զոր յուժմանէ առեալ մեզ գրեալ էիր, գիտասցես, զի զայդ ոչ է կտակ, այլ պարտք է արարեալ աստ ի մերայնոցն, զոր այժմ Հատուցեալ է զայդ ևս առ քեզ պահեսցես և ընդ յիշեալ ի. (20) զուռուշին տացես նուիրակին Հասուցանել մեզ: Եւ, զոր գրեալ էիր, թէ **ԲՌԵՃ**. (2500) զուռուշ ընկալեալ ի նուիրակէն, փօլիցայ եմ տուեալ կարնոյ վէքիլ պարոնն Հայրապետի վաճառակից պարոնն Աղայեկին Հասուցանել պարոնն Հայրապետին, այժմոյնս նա ևս էր գրեալ մեզ առ ինքն Հասանիլն, որոյ աղագաւ զաւզ էիր ինդրեալ ուստի աճա զայն զաւզն գրեալ յղեցաք ի ձեռս պարոնն Հայրապետին, Հասուցանել առ քեզ, զի և դու տացես նուիրակին ի միամտութիւն:

Գիտացաք և զանցանն ի յօճիճանն անուամբ առնն, որ ընդ նուիրակին իմացաք և զորպիսութիւնս նուիրակին, այսինքն՝ ի ճանապարհի փորձանաց պատահիլն և կողոպտիլն ի յաւազակաց: Եւ պատուէր, զի վերահասու եղեալ գնացեալ ընչիցն՝ գրեսցէ մեզ, և թէ նուիրակի թուղթն ընդ թղթոյդ եղեալ, յղեցաք ի ձեռս քո, զոր տացես իւրն: Ծանուցումն զորպիսութեանց մերոց և կողմանցս և սարդարի գալոյն յայսր: Եւ թէ զարբալոյս մեռնն, որ առ քեզ կայ ի ժամանակէ Վարդան վարդապետին, ի Հարկէ ըստ խոստմանդ տալոց ես նուիրակին:

Գրեցան յամնոյս ԺԵ. (15):

1141* **Ի Թօխաթ – Թուղթ ի Թօխաթ** առ Սրբոյ Աթոռոյս վէքիլ պարոնն Գասպարն, ի պատասխանի նորին գրեցեալ թղթոյ, առ որ թէ, որ զերկու օրհնութեան թուղթս էիր ինդրեալ, զմինն ի վերայ Մանուշակ կնոջ եւ մինն ի վերայ Հանգուցեալ մահտեսի Մարտիրոս անուամբ, **ԺԵ**. (15) զուռուշ Հոգեբաժնին: Իմացաք առ այն, թէ Մանուշակ կնոջ շնորհակալութեան թուղթն գրեալ յղեալ եմք, բայց **ԺԵ**. (15) զուռուշ կտակին, զոր այժմ գրեալ էիր, թէպէտ կտակողի անունն ծանուցեալ էիր Մարտիրոս, այլ թէ տուողն ո՞վ է և առ ո՞ պարտեաք գրել, ոչ էիր նշանակեալ, վանն որոյ գրեմք քեզ, զի զայդ դրամոյդ տուողի անունն գրեալ ծանուցես մեզ, որ օրհնութեան թուղթ գրեսցուք առ նա: Տեղւոյդ նուիրակի կողմն է, որ ծանուցեալ էիր: Իմացաք, բայց կեսարացի քահանայի ուխտաւորք եկեալ ասացին, թէ այս մօտակայ ժամանա-

կիս ի քաղաքդ մտանելոց, և Համառօտ ծանուցումն զորպիսութեանց մերոց և կողմանցս:

[Գրեցաւ] ԺԵ. (15):

^{1142*} **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն. յիշումն գրեալ թղթոյն մերոյ ընդ ուխտաւորացն, յորում, թէ առաջին թղթովդ, որ գրած էիր յաղագս քանիցս փօլիցայ տուեալ դրամոցդ ԲՌ. (2000) ղուռուշ, Հասուցեալ ես ի Բայազիտ առ մեր վէքիլ տիրացու Գէորգն և յետ այնորիկ ևս Հասուցեալ ես ԴՃԿԲ. (462) ղուռուշ՝ ձեռամբ Պոնիաթին և Մինասին Հասուցեալ ես նմա, և ԵՃ. (500) ղուռուշ ևս ի Խօյու պարոն Ղազարէն է Հասեալ նմա, որոց ամենից գով 501բ/մարն լինի 3424 ղուռուշ, որոց աղագաւ տիրացու Գէորգն ծանուցեալ էր մեզ առ ինքն Հասանիւն, զոր և մէք աւա ի դաւթարոջդ գրեցաք: Իմացաք զՊօ[ւ]սոյ պաշարանաւ թուղթմն մեր յուղարկելդ, իսկ ի կողմանէ գալոյդ, զոր Հարցեր էիր և մէք առաջին թղթով մերով պատասխանի արարաք քեզ, որպէս գրեալ էմք, այնպէս արասցես: Երկրորդ՝ թղթովդ ծանուցեալ էիր զԹօխաթու նուիրակ Բարսեղ վարդապետի և զՏիարպէքրու Մկրտիչ վարդապետի ի մէնջ գրեալ թուղթմն մեր առ նոսա Հասուցանելդ: Վպա գրած էիր, թէ ի Տիարպէքրու մեր գանձապետ մաշտեսի Յակոբէն ձեռամբ ձեր պարոն Աղայէկին Հասեալ է քեզ ԲՌԵՃ. (2500) ղուռուշ, որոյ աղագաւ և ղաւզ էիր ինդրեալ, ուստի և մէք զայն ղաւզն գրեալ և եղեալ ընդ թղթոյս յղեցաք առ քեզ, զի և դու Հասուցես գանձապետ մաշտեսի Յակոբին ի միամտութիւն: ՉՄկրտիչ վարդապետի վնասակրութիւնն ի ճանապարհի և զդառնաղէտ անցսն Իզմիրու, որ գրած էիր, իմացաք: Եւ թէ Տիարպէքրու նուիրակ Մկրտիչ վարդապետի և գանձապետ մաշտեսի թղթոց պատասխանիսն գրեալ և ի մի պաշարան եղեալ աւա ընդ թղթոյդ յղեցաք առ քեզ՝ Հանդերձ Թօխաթու գործակալ պարոն Գասպարի թղթովն, զորս Հասուցես առ իւրաքանչիւր տեարնս:

Գրեցաւ յամնոյս ԺԵ. (15):

501բ

¹¹⁴³ **Ի Խօյ** - Թուղթ ի Խօյ առ Իսաճան աղայն. յիշումն յապրիլի Լ. (30) գրեալ թղթոյն ի մայիսի Թ. (9) առ մեզ Հասանելոյն, առ որ թէ առ քեզ Հասանելի դրամոցն ընդ Քեալպալի Վպտինին ամբողջ իմացեալ, միամտեցաք: Եւ սակս Ախիջան աղայի անցիցն, որ գրեալ էիր, իմացաք և լուաք, որ գնացեալ ի Մուշ անտի գնալոց է ի Ստանպօլ: Եթէ զայլ ինչ խապար առնուցուս, գրեսցես մեզ:

Իսկ ի կողմանէ շահին, որ ազդեալ էիր ի Սուլթանիա գալն և Չաֆարղուլի խանին ըշտապով գնալն առ նա իմացաք, ուրեմն եթէ ստոյգ լուր ինչ իմացիս, գրեսցես: Եւ ծանուցումն գնալոյն մերոյ յԵրևան ի տեսութիւն սարգարին, և թէ ի կողմանէ Թարևի-

զու տէր **Յովսէփի վախճանմանն**, որ գրեալ էիր, իմացաք ահա միսիթարութեան թուղթ գրեցաք առ եղբարսն և որդիսն, և յղեցաք ընդ թղթոյդ, զայդմիկ քեզ եղեալ թուղթն մեր ևս ընդ նոր թղթոյս ի միասին յուղարկեսցես, զի առաջին թղթոջն Հարկաւոր բանք կան գրեցեալ որք պարտին եղբարքն և որդիքն Հոգ տանիլ:

Գրեցաւ յամնոյս ԺԵ. (15):

1144 **Թարւեզ** - թուղթ օրհնութեան և միսիթարութեան առ Հանգուցեալ տէր **Յովսէփի եղբարսն և որդիսն**, և այլ ինչ բանք Հարկաւորք գրեալք:

1797 թ., մայիս - **Թուղթք ի Բաղէշ և ի Գեանջեա**

1145 **Կոնդակ օրհնութեան ի Բաղէշ առ Սուրբ Սարգիս Ժողովուրդան**. շնորհակալութիւն վասն Հասուցեալ գանձանակադրամին իւրեանց, որ է Կ. (60) զօլաթայ:

1146 **Կոնդակ օրհնութեան առ Կարմրակ եկեղեցւոյ ժողովուրդան վասն Հ. (70) զօլաթայ գանձանակին շնորհակալութիւն:**

Միաժամանակ օրհնութեան նամակներ են ուղարկուել Բաղէշի Ս. Սարգիս եկեղեցու գանձապետ պարոն **Յօշնիս**. «վասն գանձանակին Հասուցելոյ» (501Բ, Ա./4) և Կարմրակի գանձապետ պարոն **Ղարիբջանիս**. «վասն գանձանակին» (Ա./6):

Նամակները գրուել էլ ուղարկուել են մայիսի 21-ին:

1147 **Ի Գեանջայ** - թուղթ ի **Գեանջայ առ Սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Վարդազարն**. յիշումն յանցեալ տարւոյ գրեալ թղթոյն մերոյ, յորում թէ յայնմ ամի ժողովեցեալ գանձանակադրամն, որ տուեալ էիր փոխ ի գին գերեաց, իմացաք և մեք գրեցաք, թէ յետ Հատուցանելոյն մոմ գնեալ յղեսցես: Եւ պատուէր, զի զիւր ժողովեցեալ գանձանակադրամովն և պարոն **Ջալալի ժողովեցելովն մոմ առեալ յղեսցէ**, և թէ էժան իցէ: Ինքն ևս իւր դրամովն առցէ և զոր ինչ յինքենէ խարճ լինիցի, ում որ գրեսցէ, Հատուցեն:

Յամնոյս ԻԱ. (21):

1148 **Ի Գեանջայ** - թուղթ առ մահտեսի **Ալթոնի որդի պարոն Ջալալն**. միսիթարութիւն վասն մահուան Հօրն և ի Հաստատութիւն գանձապետութեան նորին, և պատուէր, զի ժողովեցեալ գանձանակադրամն տացէ պարոն **Վարդազարին**, զի նօքօք մոմ առեալ յղեսցէ ի **Սուրբ Աթոռոս**:

1149 **Թուղթ ի Գեանջայ առ պարոն Մնացականն**. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն Բ. (2) լիտր մոմին, զոր յառաջմէ խոստացեալ **Սրբոյ Աթոռոյս**, այժմոյս յղեալ էր:

[Գրեցաւ] **ԻԱ. (21):**

1797 թ., մայիս - Թուղթի Մեծն Պօլիս և ի Կարին

502ա

1150 **Ի Մեծն Պօլիս** - Թուղթ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն. յիշումն գրեալ թղթոյն մերոյ յանցեալ ամի ի նոյեմբերի] ԺԱ. (11) ընդ Մարտիրոս պետի և յայսմ ամի փետրվարի] և յապրիլի] գրեալ թղթոցն, յորում թէ երկար միջոց եղև, որ ի քէն որպիսածանոյց թուղթ ոչ ընկալաք մինչև ցայժմ:

Եւ ծանուցումն վարդապետացն մերոց, եկելոց ի շահէն և գնոցին ֆէրման բերելն ի նմանէ, վասն գիւղին մերոյ, որ աւելի քան զմաղթայն բան չառնուցուն, և զայլ Բ. (2) ֆէրմանս վասն այլ և այլ պատճառաց:

Եւ ծանուցումն շահի եղբայր Ալիղուլի խանի գալն և մեր ընդառաջ գնալն ընդ այլ մեծամեծացն երևանցուց ի բերել քաղաքն:

Եւ թէ ընդ Մարտիրոս պետին, որ սիահի յղեցաք քեզ վասն ժամացուցաց և այլ ինչ քսրոց, մինչև ցայժմ ոչ յուղարկեցիք: Եւ պատուէր, զի փութով Հոգացեալ յղեսցէ մանգիլաւ ի Կարին առ պարոն Հայրապետն, որ անտի Հասուցեն մեզ:

Գրեցաւ յամնոյս ԻԲ. (22):

1151 **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն, ի պատասխանի նորին գրեցեալ Բ. - ուց (2) թղթոցն, և թէ ահա երկար միջոց է, որ ի Պօլսոյ թուղթ ոչ ընկալաք: Վասն որոյ այժմոյս Հարկաւոր պատճառի թուղթ գրեցաք առ Գալուստ վարդապետն, որ և յուղարկեցաք ընդ թղթոյս առ քեզ, զոր և դու շուտով մանգիլաւ Հասուցես նմա:

Եւ թէ ի Պօլսոյ և յայլ տեղեաց թուղթք գայցեն քեզ` Հասանելիք մեզ, այսուհետև այլևս ի վերայ Ղարսայ չլղեսցես, այլ ի Բայազիտ` առ տիրացու Գէորգն, որ անտի Հասցին առ մեզ:

Նաև, եթէ ուխտաւորք Հանդիպիցին գալոյ ի Սուրբ Աթոռս, արգելուցու, զի անյարմար է նոցին գալն այժմ:

Եւ թէ երէք Հարիւր թումանի սաղ Հին վաթսուննոց շինեալ, Ե. (5), Չ. (6) փարայ գլխով, որ լինի երէք Հազար Հատ, օր մի յառաջ յուղարկեսցես Հաւատարմաւ ի Բայազիտ առ տիրացու Գէորգն` անտի Հասանիլ առ մեզ: Եւ թէ յառաջմէ գրեալ էմք Գալուստ պետին վասն ժամացուցաց և այլ իրաց առնուլ և յղել, եթէ մինչև ցայժմ է, բարի է, և թէ ոչ, ի Հասանիլն շուտով յուղարկեսցես, որ յոյժ Հարկաւորք են:

Յամնոյս ԻԲ. (22):

1152 **1797 թ., յունիս** - Թուղթ բանադրանաց ի Բաղէշ առ Գոմոց վանից ինքնագլուխ չառաջնորդ, լլտի Յովաննէս սևագլուխն վասն յանդգնաբար նստելոյն անդ բռնութեամբ այլազգւոյ ուրումն, և զբազում վնասս և գայթակղութիւնս Հասուցանելոյն ժողովրդեանն, որք մահասարական թղթով բողոքեալ էին զամբարշ-

տութեանց նորա, ևս և վասն փակելոյ զեկեղեցին ընդդէմ՝ նուիրակին և ժողովրդեանն:

Յորմէ ժամանեսցէ թուղթ անիծից և բանադրանաց, իւրաւացի բարկութեան և Հոգևոր կապանաց, Հանդերձ արժանաՀաս վրէժինդրութեամբն Աստուծոյ և ներՀակավան զօրութեամբ անվանելի սրբոյ Գահիս քրիստոսեան ի վերայ վատշուեր անառակ որդւոյդ կորստեան և զաւակիդ քանանու՝ ամբարտաւան լիրբ և անզգամ զՅովաննէս կարգազեղծ սևակրիդ յորձացելոյդ ի Բաղէշ ի Գոմոց վանս և չարահամբաւեցելոյդ ի չարաչար վարուց քոց:

Որով և ծանիր, ո՛վ անագորոյն անիծեալ: Ձի իւրաքանչիւր առաջնորդ վանից և ժողովրդեան վիճակի իրիք պարտի ըստ նախատեսչութեան Սրբոյ Հոգւոյն ի գլխոյ ազգին կարգիլ և ընտրութեամբ ժողովրդեանն Հրաւիրիլ: Այլ դու՝ խաբէբայդ, որ ի Գոմոց վանսդ ինքնին առաջնորդ ես անուանեալ զքեզ դորին վիճակ|100ա|կի, մէք բնաւ ոչ եմք տեղեակ առաջնորդութեան քոյ, և ժողովուրդն վանիցդ ևս ոչ են Հրաւիրեալ և չունին ամենևին Հաւանութիւն ինչ առ քեզ: Ապա որո՞վ կարգաւ և ի՞նչ իրաւամբ դու զքեզ առաջնորդ կոչես: Եթէ արժանի էիր դու Հոգևոր Հովուութեան, պարտ էիր գիտել և մտածել զՀրամանն տերունի, թէ այնպէս լուսաւորեսցի լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցին զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր, որ յերկինս է, և առաքեալ նորին սուրբն Պետրոս ասէ՝ արածեցէք, որ ի ձեզ Հօտդ է Աստուծոյ, վերակացու լինիլ մի զօշաքաղովթեամբ և մի իբրև տիրելով վիճակացն, այլ լինիլ օրինակ Հօտին:

Բայց դու՝ զամբարիշտդ և անամօթդ փոխանակ զուղղութիւն և զբարեձևութիւն ցուցանելոյ և մխիթարելոյ և Հաստատելոյ զժողովուրդն ի բարիս, չարագործութեան օրինակ լինիս և գայթակղեցուցիչ խղճալի ժողովրդեանն, որք ի դուռն յուսահատութեան Հասեալ, բողոքէն զանօրէնութեանք քոց: Ձի՛նչ աշխատանս ունիս ի վերայ օրհնեալ ժողովրդեանն և քանի՞ միաբանս պաՀես ի վանսն և ո՛վ ծանեաւ զժամերգութիւնս և զտքնութիւնս քո, որ այդքան խրոխտաս ի վերայ դոցա, այլ թէ իբրև զանՀաւատ աւագակ ոմամբք սեխեսուք բունեալ ի վանսն զգարչելի Հոտս զագրութեանք բուրես ի բարկութիւն Աստուծոյ և ի գայթակղութիւն ամենեցուն: Եւ դու այդպէս տղմասեր մոլի գոլով, զայլս ևս խոտորեցուցանես անիրաւ կաշառօք զօրէնս եկեղեցւոյ խախտելով, և ընդդէմ կանոնաց սրբոց Հայրապետացն վարելով, զՀաս ամուսնութիւնս առնել տալով, զազգային ընդ ազգայնոյ, զկոյս ընդ այրւոյ և վանս պասկաց զՀասոյթն բազմապատիկ առնելով իբրև զխիստ Հարկահան: Եւ ի կողմանէ ննջեցելոց ևս զձանր ձանր տուրս պաՀանջելով անաստուածաբար, ի բազում աւուրս անթաղ թողեալ զնոսա, և զայլս անկարգութիւնս, զորս դու գիտես՝ արբանեակդ սատանայի:

Եւ այսօրիւք ոչ բաւականացեալ, կատաղելով ընդդէմ ժողովրդեանն յարուցանես զայլազգիս ի վերայ սուրբ եկեղեցւոյն և կողոպտել տաս: Եթէ քրիստոնեայ ես և յազգէ Հայոց, որպէ՛ս յանդգնիս զայսոսիկ չարիս գործել, իսկ թէ ուրացեալ ես զՀաւատքո և զազգ, այլ ի՛նչ կերպարանաւ կոչիս առաջնորդ՝ գայլոք քանասար և քարկոծելի: Ապա ուրեմն դու ոչ թէ Հովիւ և այցելու ժողովրդեան ես, այլ պաշտօնեայ որովային քո, և վասն զքեզ սնուցանելոյ շրջիս յայդր, ըստ Դաւթեան բանին, թէ սովեսցին որպէս շունք և շրջեսցին զքաղաքս և թէ ոչ յազեսցին, տրանջեսցին:

Ահա այս է շնորհ ապաշնորհիդ, և ժանտովթին դժուրակիդ, որ ամենևին անպիտան ես այդ վանից և ժողովրդեանն, և այնքան խրոխտաս ի վերայ դոցա, որպէս թէ դրամով ես գնեալ և կամ սրով ես փրկեալ: Ի վերայ այսքան չարովթեանց քոց, յանդգնեալ ես ևս այնչափ, մինչ զի ի յընդունիլ և ի մեծարել սիրով օրհնեալ ժողովրդեանն գնուիրակն մեր և ի ինդրելն զարբալոյս մեռոն, դու՛ անձնաժպիրհ ամբարտաւանդ փակես զեկեղեցին ընդդէմ՝ նոցա, և նոքա յանճարակս գնացեալ յայլում եկեղեցւոջ ընկալնուն զմեռոնն սուրբ:

Արդ, ով չնչին ծակամուտ խլուրդ, որ զայդքան լլտիութիւնսդ գուծեցեր անզգամութեամբ այժմ ի գլուխ Հասին չարիքքո, և եկին ժամանեցին իրաւունքն Աստուծոյ ի դատել զպատժապարտդ:

Վասն որոյ ահա դատաստանաւ աստուածային իրաւանց, ըստ վկայութեան բազմութեան տեղեկանացդ, բարձու իշխանութեամբ մերով Հայրապետականաւ բանադրեցաք զարժանիւր անիծից և նզովեալ արտաքսեցաք յեկեղեցւոյ սրբոյ, որպէս զախտացեալ, Հոտեալ և ապականարար գարշելի, և լուծեալ յամենայն աստիճանաց եկեղեցակոնեան, կապեցաք զքեզ Հոգևոր կապանօք ի յերկինս և ի յերկրի: Անիծեալ ես դու յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէջ, և չունիս Համարձակութիւն այսուհետև ի սուրբ եկեղեցի մտանել և զպաշտօն ինչ կատարել, զի մերկացեալ ես դու ի շնորհաց իբրև զսանդիտոուն: Եւ ի քաւանայից և ի ժողովրդոց ևս յիշխեսցեն կցորդիլ պատուհասակոծիդ, զի ով որ Հաղորդեսցի քեզ բանիւ և գործով, նա կցորդ է և բանադրանաց քոց:

Այս բանադրանք և կապանք մնացեն ի վերայքո, մինչև ծանիցես զչափ չնչին անձինդ, և զղջացեալ դիմեսցես առ այսր՝ ինդրել զարձակումն: Իսկ թէ յամառեսցիս ընդ երկար, զմարմնաւոր պատիժն ևս յայնժամ տեսանելոց ես: Ջի որպէս և իցէ, զչափ չքոտի անձինդ ծանուցանելոց եմք թշուառականիդ:

Գրեցաւ ի ՌՄԽԶ. (1797) թուոյս և ի յունիսի, ի բարձրագաւ Աթոռս Սուրբ Էջմիածին¹⁸²:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 99բ-100բ

¹⁸² Բաղեշի Գոմոց վանք, որը հայտնի է նաև Գոմոց Ս. Աստվածածին, Տատրակաբնակ Ս. Աստվածածին և այլ անվանաձևերով, գտնվում է Բաղաբի հարավարևմտյան կողմում:

1797 թ., յունիս - **Թուղթք ի Հնդիկս, ի Բաղդատ և ի Ղօշավանք**

1153 **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովաննէս վարդապետն. յիշումն գալստեան մերոյ ի յԵրևան և թէ Հարկաւորութեան գործոյ սրբոյ Տանս Ժ. (10) լուծ տաւար յղեսցես, որ ի կալի ժամանակին Հասցին առ մեզ: Այլ յառաջմէ գրեալ էիր, որ ի վերայ տէր Կիրակոսին և իւր եղբայր Խամուրին զմի օրհնութեան թուղթ գրել վասն Ի. (20) զուռուշ քառասնիցն: Ահա գրեալ յղեցաք ընդ թղթոյդ, զոր Հասուցես առ տէրն իւր:

1154 Թուղթ օրհնութեան առ տէր Կիրակոսն և իւր եղբայր Խամուրն. Հնորհակալութիւն վասն Ի. (20) զուռուշ քառասնիցն տուեցելոյ:

Յամնոյս Բ. (2):

1155 **Ի Հնդիկս** - Թուղթ առ Հնդկաց երկրի նուիրակ Յակոբ վարդապետն, որ էր երկրորդ այնմ թղթոյ օրինակ, որ յապրիլի ԻԵ. (25) յղեցաւ, բայց այժմոյս Համառօտակի բան գրեցաւ ի նմին, թէ վասն խանին մերոյ, որ գրեցաք, թէ գնաց առ շահն, ի գնալն կալանաւորեցաւ ի նմանէ և ինչքն յարքունիս գրեցաւ, որպէս և Նախշուանու իշխողին: Եւ սարդարն եղբայր շահին, եկն իշխօղ երկրիս, որոյ ընդառաջ ելեալ մեր ընդ Երևանու մեծամեծօքն, մուծաք ի քաղաքն, և մէք ի մայիսի մտէն ցայժմ դեգերիմք աստ՝ ի յագեցուցանել զագահութիւն նորին, և զկնի աւուրց վերադառնալոց եմք ի Սուրբ Աթոռն: Եւ վասն շահին, թէ ծանր զօրօք եկեալ է դէպ յԱտրպատական, բայց զինչ առնելն չէ յայտնի:

Եւ թէ վասն Հարկաւորութեան սրբոյ Տանս Ժ. (10) լիտր բիւպար առեալ յղեսցես շուտով, որ յոյժ Հարկաւոր է:

Գրեցաւ յամնոյս Զ. (6):

1156* **Ի Բաղդատ** - Թուղթ ի Բաղդատ առ գործակալն Սրբոյ Աթոռոյս պարոն Ղուկասն, առ որ թէ երկրորդ օրինակն թղթոյդ, որ յղեալ էիր էհաս առ մեզ, ի մայիսի 30 և իմացաք զկոն-

Տրդատ եպս. Պայանի հաղորդմամբ՝ «վանքը թէև փոքր է, բայց գեղեցիկ դիրք մ'ունի, եզական եւ գեղեցիկ օդով, վնիա ու մաքուր ջրով օժտեալ» (Տրդատ եպս. Պալեան, Հայ վանորայք, հրատարակութեան պատրաստեց՝ Կ. Աւետեանը, Ս. Էջմիածին, 2008, էջ 237): Համաձայն գլխավոր մուտքի բարավորի արձանագրության՝ այն հիմնաւորողվել է 1691 թ., Մեսրոպ վարդապետի վերակացությամբ և համայնի միջոցներով: XVI-XVII դդ. վանքը գոչության կենտրոն է եղել: Այստեղ ընդօրինակված ձեռագրերից մեկի հիշատակարանից Տրդատ եպիսկոպոսը հատվածաբար մեջբերումներ է արել. «...ծաղկեալ եւ կազմեալ ի Բաղէշ. ի վանս Գոմոց, ի դռն ամենօրհնեալ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Գեորգայ, յառաջնորդութեան տեղոյս տէր Սարգիս արհիեպիսկոպոսի» (նշվ. աշխ., էջ 237-238):

Քանադական թղթի ամբողջական հրատարակությունը տես նաև ԳՀՊ, գիրք Գ., սյուն 653-656:

դակաց և զթղթոց մերոց առ քեզ Հասանիլն և գրո յօժարականն ի գործ Հաստատիլդ:

Եւ թէ գրեալ էիր. զմասն ինչ լուսաՀոգի Մարգար աղայի կտակէն յղէլ բայց ի պատճառէ շփոթման տեղւոյդ, արգելեալ էիր: Այլև՝ վասն Յակոբ վարդապետի քեզ յանձնեալ դրամոյն, որ գրեալ էիր, թէ ինն Հարիւր զուռուշ կայ մօտս և Հարցեալ էիր, թէ որով օրինակաւ առ մեզ Հասուցանել առ այն, թէ Յակոբ վարդապետն գրեալ էր մեզ, թէ ի յարդեանցս ԱՌ (1000) զուռուշ եմ յանձնեալ Ղուկաս աղային, թող զարդիւնս գանձանակին, որ ՁԲ. (82) զուռուշէ և պատուէր, զի որքն ինչ Հասեալ է ի նմանէ ձեռամբ Ալան ամիրային, Հասուցէ ի Մեծն Պօլիս առ նուիրակ Գալուստ վարդապետն, որ նա առ մեզ Հասուցէ:

Եւ թէ դու և պարոն Միքայէլն, որք ի միասին մէկ թուղթ էիք գրեալ վասն Մարգար աղայի դատերն, նորին պատասխանին ի յապր[իլի] ԻԲ. (25), գրեալ յղեցաք և զերկրորդ օրինակն ընդ սոյն թղթոյս եղեալ՝ Հանդերձ թղթով Յակոբ վարդապետին յղեցաք, զի եթէ մինն չՀասանիցի, մինն Հասցի: Իսկ և զի աՀա բոլոր մէկ տարի է, որ ի Յակոբ վարդապետէն թուղթ չէ Հասեալ մեզ և գիտեմք, որքանիցս թուղթ է գրեալ մեզ, ուրեմն գրեմք քեզ, զի փոյթ տարեալ տեղեկասցիս, ուր մնալն մինչև ցայժմ՝ և ձեռն բերեալ առ մեզ յղեսցես ի միամտութիւն:

Ողջոյն մօրն իւրոյ Ղութսի խաթունին և որդւոյն՝ Յարութիւնին և պարոն Միքայէլին (նախապէս գրուած է եղել Մինաս – Ա. Յ.) տէր Մինասեան, յամնոյս Չ. (6):

^{1157*} **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, յորում թէ նախքան զայս, որ քանի աւուրբք յառաջ թուղթ ես յղեալ առ մեզ ի վերայ Ղարսայ, գրելով ի նմա փոքր-ինչ աՀեալս և զՊօլսոյ եկած աւանդիցն զորպէսն, թէ այլ ինչ բան չմնաց անդ: Բայց այն թուղթն դեռևս մեզ չէ Հասեալ երբ Հասցի, զպատասխանին գրելոց եմք: Վասն աւանդիցն պատուէր, որ պաՀեսցէ ի մօտն, մինչեւ զոր ինչ գրիցեմք, այնպէս արասցէ: Եւ վասն տաճիկ փայեկին, որ գրեալ էիր, թէ չէ եկած, մեք զպատասխանիս թղթոց նորին գրեալ եւ յանձնեալ եմք նմա յոյս ի Տէր, որ մինչեւ ցայդ Հասեալ լինի:

Այլև յԱմթայ, որ մէկ պաՀարանաւ թուղթս ընկալեալ յղեալ էիր, էՀաս, որ ի Բաղդատու էր գրեցեալ եւ մեք զպատասխանին գրեալ եւ այլ քանի թղթովք մի ի պաՀարան եղեալ ընդ թղթոյդ յուղարկեցաք: Բայց զոր գրեալ էիր, թէ զթուղթսն մեր ի Բայազիտ յղիցեմք, զի փայեկն ի խօշու դարձեալ անդ Հասցի թղթոյն եւ բերցէ առ քեզ, այլ այնպէս պատաՀեցաւ մեզ, որ ի վերայ Ղարսայ յղեցաք Հասանիլ քեզ, ուստի զայդ պաՀարանաւ թուղթսդ յղեսցես ի Բաղդատ եւ զիր յղելդ ծանուցես մեզ: Ի կողմանէ Ամթայ Մկրտիչ պետին եւ Ալէքսան պետին, զոր ինչ որպիսութիւնս էիր

գրեալ, իմացաք, գիտեցաք եւ զտեղւոյդ նուիրակ Գրիգոր պետի գալն ի քաղաքդ, յորմէ գրեալ էիր, թէ խառնակութիւնք գորով ի կողմն ՂարաՀիսարու եւ Տրապիզօնու, արգելեալ է աստ, եւ յինչ տեղ գնալն անյայտ է եւ պատուէր, զի ուր ելեալ երթիցէ, գրեացէ մեզ եւ Համառօտ ծանուցումն կողմանցս եւ մեր:

Դարձեալ յանցելումն աւուր գրեցաք, թէ քանի Հարիւր թումանի Հին վաթմաննոց շինեալ յուղարկեսցես ի Բայազիտ առ տիրացու Գէորգն, բայց այժմ գրեմք, զի յետ վաթմաննոց շինելոյ ոչ յղեսցես, այլ պահեսցես մօտ քեզ եւ մեզ գրեսցես եւ մէք զոր ինչ գրեսցուք, այնպէս արասցես եւ այլ փօլիցայ չառնիցես ի Բայազիտ, մինչեւ գրեսցուք քեզ:

Գրեցաւ յամնոյս Չ. (6):

1158* **Ի Կարս** - Թուղթ ի Կարս առ Գէորգ աղայն. յիշումն յառաջքան զայս գրեալ թղթոյն, առ որ թէ այժմ ի Կարնոյ պարոն Հայրապետէն թուղթ եկն, յորում գրէ, թէ մէկ թուղթ գրեալ յղեցի առ պարոն Գէորգն, որ անտի Հասանիցի ձեզ. ահա երկար միջոց է, որ զայն ոչ էհաս մեզ, ուրեմն գրեմք քեզ, զի եթէ մինչեւ ցայդ չես յղեալ, այժմ յուղարկես մեզ: Եւ թէ միով պահարանսաւ թուղթ յղեցաք ի ձեռս քո, որ պարտի Հասանիլ ի Կարին /503ա/ առ պարոն Հայրապետն: Եւ վասն երիցու յղեալ մոմին պակասին, որ գրեալ էիր նմա, զինչ պատասխանի ընկալար, չիմացաք, պարտիս գրել եւ թէ զառ քեզ եղեալ մոմն յղեսցես առ մեզ, որ սպիտակացուցանելոյ ժամանակն անցանի:

[Գրեցաւ] յամնոյս Չ. (6):

1159* **Ի Ղօշաւանք** - Թուղթ առ Ղօշաւանից առաջնորդ Յովաննէս վարդապետն. յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ եւ թէ այժմոյս այսքան Հարկաւորեցաւ գրել քեզ, զի ահա մի պահարան թուղթ յղեցաք ի ձեռս քո, զոր եւ դու շուտով յուղարկեսցես առ պարոն Գէորգն անտի Հասանիլ ի Կարին: Եւ թէ ի Կարնոյ ուխտաւորք պատահիցին գալ ի Սուրբ Աթոռս, ի տեղդ արգելուցուս չգալ, որ անյարմար է այժմ գալն: Եւ թէ զբանն մեր ի գլուխ Հանեալ, ի վաղիւն կամ ի մի ուսումնաւորն դառնալոց եմք ի Սուրբ Աթոռն:

[Գրեցաւ] յամնոյս Չ. (6):

1797 թ., յունիս - Թուղթք ի Մեծն Պօլիս, ի Կարին, ի Մուշ, ի Սալմաստ եւ ի Ղօշաւանք

503ա

1160 **Ի Մեծն Պօլիս** - Թուղթ առ Մեծին Պօլսոյ պատրիարք Չաքարիա վարդապետն. յիշումն գրեալ թղթոյն մերոյ ընդ Մարտիրոս պետին եւ ծանուցումն վասն կորստեան կատաղի

բռնաւոր ներքինւոյն ի Հուշի: Ողջոյն նուիրակ Գալուստ վարդապետին և իշխանացն:

Գրեցաւ յամնոյս ԺԳ. (13):

Նոյն օրը նամակ է ուղարկուել Կարինի վէրիլ պարոն Հայրապետին. «վանս Ապրոյեան Մարգար աղայի թղթոյն..., վանս Անկիւրոյ նուիրակ Յովանէս վարդապետի՝ ի քաղաքդ գալն..., վանս խարաճի թղթոցն..., վանս Փիլիպպոս ամիրային, թէ զկնի քանի աւուրց գալոց է ի քաղաքս...», իսկ Տաթևի վանքի առաջնորդ Յովակիմ վարդապետի 1900 ղուռուշի առաքման աննշուխտամբ նշում է, որ «յառաջմէ մէք ԴՃ. (400) ղուռուշ տուեալ եմք նմա վանս խարճի եւ վանս մնացեալ դրամոյն ասացաք իւրն, որ զայն եւս անպակաս Հասուցանելոց եմք ինքեան, ուրեմն պարտիս դու (վէրիլ պարոն Հայրապետը - Ա. Յ.) զայդ 1900 ղուռուշ Հասուցանել մեզ»: Նաեւ ինդրում է 15 կամ 20 ոսկերչի բովթայ (Հալոց) ուղարկել Բայազետ, որտեղից էլ Մայր Աթոռ (503ա, Ա/3):

Գրեթէ նոյն բնոյթի է նաեւ Կարնոյ նուիրակ Գրիգոր վարդապետին Հասցեագրուած նամակը, ուր նշում է, թէ վերջինս ցանկանում է նուիրակութեան իր առաքելութիւնը այլ վայրում շարունակել, տեղեկութիւններ է Հաղորդել Ախալցխայի Ղեւոնդ պետի անկարգութեան, Յակոբ պետի յատուկ փայտիկի, Ախիջան աղայի՝ Կարին գալու և այլն (Ա./4):

1161 **Ի Սուրբ Կարապետ** - Թուղթ առ Սուրբ Կարապետի վանից առաջնորդ Յակոբ վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, որ ընդ փայտիկին, և շորհակալութիւն վանս օժանդակ լինելոյն նուիրակին Մշու ի գործ նուիրակութեանն:

503բ

1162 **Թուղթ առ Ախիջան** աղայն Վանցի. մխիթարուին վանս Հանդիպեալ փորձութեանցն, որք անցուցեալ ընդ նա Ենկիչարիքն Վանայ՝ յեղակարծ յառնելով ի վերայ տան նորա, զամենայն կայսն յափշտակելով:

1163 **Ի Սալմաստ** - Թուղթ առ Սալմաստայ, Հաղբակու և Որմու ժողովրդականացն, ի պատասխանի բազմակնիք մահաարի նոցա, որք զՍօղօմօն վարդապետն ինդրեին յուղարկել ի սուրբ վանսն իւրեանց՝ ի յօգնութիւն առաջնորդ Խաչատուր վարդապետին, և ի շինարարութիւն սրբոյ վանիցն Բարթուղիմեայ Առաքելոյն:

Գրեցաւ յամնոյս ԺԳ. (13):

1164 **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանիցն առաջնորդ Յովանէս վարդապետն, առ որ թէ ժամանակ կալոյ Հասեալ է առ ի կասեալ զցորեանն և կալի եզինքն, որ ինդրեալ եմք յառաջագոյն և դու խոստացեալ ես ի յղել, ուստի ահա զթուանկչիսն առաքեցաք ի Մաստարայ, որ անտի ևս զքանի մարդս առեալ, գայցեն ի վանսդ՝ բերել զլծկանսն: Ուրեմն գրեմք քեզ, զի ի Հասանիլ թղթոյս առ քեզ, զայնոսիկ լծկան տաւարսն յանձնեսցես տղայոցդ առ ի

բերել: Եւ թէ մնացու տաւարք գոն պատրաստք, զայն ևս յղեսցես ընդ դոսա: Ընդ որում Բ. (2) լիտր գինի և Ե. (5) լիտր բրինձ յղեցաւ:

[Գրեցաւ] յամնոյս ԻԳ. (23):

¹¹⁶⁵ **Ի Սուրբ Կարապետ** - Թուղթ առ Սուրբ Կարապետի վանիցն առաջնորդ Յակոբ վարդապետն. յիշումն յառաջ քան գրեալ թղթոյն մերոյ, և շնորհակալութիւն վասն ընդունելութեանցն ցուցելոց առ նուիրակ Յովաննէս վարդապետն և պատուէր, զի և ևս ձեռնտու լինիլ գործոյն մինչև ցկատարումն:

[Գրեցաւ] յամնոյս ԻԴ. (24):

¹¹⁶⁶ **Ի Մուշ** - Թուղթ առ Մշու երկրի նուիրակ Յովաննէս վարդապետն, յորում թէ թուղթն քո, զոր գրեալ էիր առ մեր Աստուածատուր վարդապետն, անտի իմացաք զգնալն ձեր առ Մուրատ փաշայն, Հանդերձ առաջնորդ Յակոբ վարդապետին, և փաշայի խիլայ տալն և ընդունելութիւնն, և առաջնորդի շահեցողութիւնն առ քեզ: Առ որ շնորհակալութեան թուղթ էիր ինդրեալ, զոր ահա գրեալ յղեցաք ի ձեռս քո տալ ինքեան: Եւ պատուէր, զի զմնացու և զլծկան տաւարս ժողովելոյ Հոգ տարցեն վասն Հարկատրութեան Սրբոյ Տանս:

Գրեցաւ յամնոյս ԻԴ. (24):

¹¹⁶⁷ **Ի Իւջբիլիսէ** - Թուղթ առ Իւջբիլիսի առաջնորդ Մկրտիչ վարդապետն. ծանուցումն վասն գնալոյն մերոյ յԵրևան՝ ի տեսութիւն սարտարին, և մսիթարութիւն վասն վշտակութեանցն կրելոց, և թէ ըստ նախնի սովորութեան մերոյ, ահա զՄարտիրոս և զՅարութիւն վարդապետսն յղեցաք յայդր ի նուիրակութիւն իւղի և պանրի: Վասն որոյ գրեմք քեզ, զի ըստ առաջին Հաւատարմութեանդ օժանդակ և ձեռնտու լիցիս գործոց դոցա: Այլև իբր բաժակ օրհնութեան զԳ. (3) լիտր գինի յղեցաք, զոր ընկալեալ վայելեսցես:

Գրեցաւ յամնոյս ԻԴ. (24)¹⁸³:

¹⁸³ Ուշբիլիսայի առաջնորդ Մկրտիչ վարդապետին հղած նամակի վերջում վեհափառ հայրապետը ծանոթագրում է, որ, իբրև օրհնության բաժակ, նվիրակներ Մարտիրոս և Հարություն վարդապետների հետ ուղարկել է նաև երեք լիտր գինի՝ ի վայելումն: «Բաժակ» գինին պատարագների ժամանակ գործածվող անապակ, անջրախառն գինին է, որից պետք է հաղորդություն ստանան ուխտավորները: Հետաքրքիր է, որ այդ տերմինը վկայություններ ունի նաև վիմագրերում, որի վաղագույն հիշատակություններից մեկը (1026 թ.), «փաս գինի» ձևով վկայված է Ամբերդի Վահրամաշեն եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորին՝ ներհաստ (Ե. Տեր-Մինասյան, Ամբերդածորի հնությունները և արձանագրությունները, «Էջմիածին», 1961, Ե., էջ 50-51): Վկայություններ կան Անիից, Սանահինից, Գոշավանից, Աշտարակից, ավելի ուշ՝ Վաղարշապատից: Ս. Հոնիսիմե տաճարի որմերի 18-րդ

1168 **Ի Ռուսս** - Թուղթ առ Ռուստաց երկրի նուիրակ Յովսէփ վարդապետն, ի պատասխանի թղթոյն, որ ընդ Ութրութին և Հաքարոյին գրեալ էր, յորում թէ թուղթքդ իւրաքանչիւրքն Հասեալք են ըստ ժամանակին: Իսկ առ կայսրն և առ վէզիրն և Բ. (2) մետրապօլիտն թուղթն էիր խնդրեալ՝ Հանդերձ կոնդակօք առ մերսն, աՀա ըստ խնդրոյդ գրեցուցանելոց և յղելոց եմք:

Սակս Մաշտոց և Հարական խնդրելոյդ գիտեա՛, զի ի Մաշտոցէն քանի տետր միայն տպեալ խափանեցաւ գործն, իսկ զարականս կամեաք յղել, այլ որովհետև անկազմ էիր խնդրեալ, ծալած չկայր ամենեկն, որ յղեաք, այս քանի աուուրքս ծալեցուցեալ ժԵ. (15) Հատ յղելոց եմք:

ՉԲ. (2)-ուս մուշտական և զմի դիպակ կտորն, զորս յղեալ էիր ի Ղօշավանք, առ մեզ Հասեալ գիտասցես: Նաև վասն ի Ջալատ խանէն և այլոց առեալ զգեստուցն եկեղեցականաց, որ ծանուցեալ էիր, իմացաք:

Գրեցաւ յամնոյս Լ. (30):

1169 **Ի Կեսարիա** - Թուղթ առ Կեսարիո առաջնորդ Մատթէոս վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, որ ընդ ուխտաւորացն, և ծանուցումն կողմանցս զորպիսութեանց, և յիշումն վասն փորձանաւոր տղայի միոյ յղեցելոյ ընդ ուխտաւորացն, զոր խնդրեալ էր առ ի պաՀեղ զնա ի Սուրբ Աթոռոճս, որում գրեցաւ, թէ նա ոչ եկն աստ, որ ըստ գրութեան քոյ պաՀեաք:

Յամնոյս ժԵ. (15):

1170 **1797 թ., 30 յունիսի** - Թուղթ առ Գիօրկին Միրզայ արքայորդին Վրաց, ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էր յաղագս սատակման աղայ ՄաՀմատ խանին:

Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի և օրՀնութեան, Հանդերձ մեծազօր շնորՀիւ միաճնաէջ սրբոյ տեղոյս, առ պատուամեծար սիրեցեալդ մեր և իսկապէս բարեկամդ Սրբոյ Աթոռոյս, Զրիստոսիւ զօրացեալ, ազնուախոՀ, փառազարդ և թագա-

դարի նվիրատվական վիմագրերում պատարագներ ստանալու ակնկալիքով եկեղեցուն նվիրաբերվել է նաև Ա. (1) կարաս բաժկի կամ բաժկացու, այսինքն՝ հաղորդության համար գինի (մանրամասն տե՛ս Ա. Հարությունյան, «Բաժակ» գինու նվիրաբերման վկայություններ հայկական վիմագրերում, «Էջմիածին», 2011, Բ., էջ 121-129, նույնի՝ Վաղարշապատ, էջ 263-264, արձ. 523-524): Եկեղեցու ծխակարգում լայնորեն կիրառվող Անապակ գինու խորհրդաբանությանը վերջերս հատուկ անդրադարձել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հ. Զաֆարիա ծ. վրդ. Բաղումյանը (տե՛ս Զաֆարիա վրդ. Բաղումյան, Անապակ բաժակի խնդիրը Հայոց եկեղեցում, Ս. Էջմիածին, 2013):

Առհասարակ, եկեղեցիներին գինի նվիրաբերելու կամ Մայր Աթոռին արված նվիրատվությունների շարքում գինին բազմիցս է վկայված Դուկաս Կարնեցու գրագրություններում (հմմտ. վավ. 3, 47, 427, 486, 509, 510, 644, 747 և այլուր):

ժառանգ Գիօրկին Միրզայ արքայորդիդ, որում և գիտութիւն լիցի:

Ձի ընկալաք զսիրանիչ և զուրախարար թուղթ պատուակա- նութեան ձերոյ, զոր առաքեալ էիք ձեռամբ Ութրութ բեկին և մե- լիք Շաքարօին: Որով նախապէս գիտացեալ զողջունէ և զխաղա- դութենէ ձերմէ, գոհացաք զԱստուծոյ իննամառատ պաշպանու- թենէն: Եւ ապա զոր գրեալ էիր զսատակմանէ մարդոյն անօրէ- նութեան և որդւոյն կորստեան՝ անագորոյն և աշխարհաւեր աղայ Մաւնատ խանին, զբարձումն նորին և մէք ձեզ շնորհաւորելով, գոհանամք և օրհնեմք զամենակարօղ անուն աստուածապետա- կան բարերարութեան և զարդար դատաստան նորա, որ թէպէտ և Հայրաբար խրատեաց զմեզ զանազան վշտիւք և վնասուք |101ա| ի ձեռն դժնեայ բռնաւորին, որպէս և երբեմն զազգն Իսրայէլի ի ձեռն փարաւօնի, բայց ի յիշել մեր զնա ի սաստկանալ նեղու- թեանցն յանյոյս լինիլ ի մարդկային օգնականութենէ՝ այն որ գի- տէ զառաւել զարմանալիսն յայնժամ ներգործել, յորժամ սպառին առ ի մէնջ բարիքն յանակնունելի ժամու Հարամաճ սատակեցոյց զժանսն քան զփարաւօն, և զմահացուցիչ խորհուրդս նորին ար- գել ի ձէնջ և ի մէնջ, և ապաշովութիւն շնորհեաց ամենայն անձանց վշտացելոց:

Ուստի երկրպագութիւն և փառաբանութիւն մատուցի նմա յամենայն բերանոց առ սքանչելի և խորախորհուրդ գործս իւր, և աչք ամենեցուն քրիստոսակիր Հաւատացելոց ի լոյս եղիցի: Եւ նա ինքն Քրիստոս Փրկիչն մեր խաղաղութիւն շնորհեսցէ աշխարհի և մանաւանդ խղճալի երկրացս բազմապատիկ վնասեցելոց: Եւ զբաղձալիսդ մեր ընդ երկայն աւուրս և փառազուարճս պաշէլով յաղթօղ զօրութեամբ սրբոյ խաչին, զտէրութիւնդ ձեր Հաստա- տուն և անդրդուելի արասցէ ի ինդութիւն մեր:

Յաղագս սիրելոյն մերոյ՝ Յովսեփայ արքեպիսկոպոսի յայդր գտանիլովն միսիթարիչ և յուսադիր լինելոյ ժողովրդեանն, և այժմ դարձ առնելոյն ի դուռս օգոստափառ կայսերն յուսով ստանալոյ զօգտութիւնս, զոր գրեալ էիր, ի թղթոյն իւրմէ ևս իմա- ցաք, յաջողեսցէ Տէր զՀաճոյսն իւր և զօգուտն ձեր և մեր յառա- ջանալ ի փառս մեծի անուան իւրում սրբոյ:

Եւ զայլ ամենայն որպիսութիւնս մեր և երկրիս ի խոհական գրաբերիցդ ունիս իմանալ: Ողջ լեր ի Տերամբ ի Հրճուանս մեր Հանդերձ քոյայնովք ամենեքումք. ամէն:

Գրեցաւ յամի Տեառն 1797 և ի յունիսի 30, ի Սուրբ Աթոռս Էջմիածին¹⁸⁴:

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 100բ-1ա

¹⁸⁴ Վրաց Գեորգի Միրզա արքայորդուն հղված պատասխան նամակի ամբողջական հրատա- րակութունը տե՛ս նաև ԳՀՊ, գիրք Գ., սյուն 656-657:

1171 1797 թ., 30 յունիսի - Թուրղթ առ Հերակլ արքայն, ի պատասխանի թղթոյն վասն բարձմանն աշխարհաւեր ներքինի աղա Մահմատ խանին:

Յորմէ սիրով և կարօտիւ սրտի և անձկութեամբ Հոգւոյ ժամանեցէ քրիստոսաձիր բարձրապատիւ սիրելոյդ մերոյ, գերաբաղձալոյ և սեպհական բարեկամի սրբոյ Գահիս տէրունեան, աստուածասէր և բարեպաշտ, իմաստնախոհ և քաջաբախտ մեծիդ արքայիդ Հերակլայ: Որոյ պատուականութեան գիրն սիրոյ և ուրախակցութեան ի ձեռն Հաւատարիմ ծառայիցն ձեր՝ Ութրովթ բէկին և մէլիք Շաքարօյին էհաս առ մեզ: Եւ նախ իմացեալ զհասարակաշահ առողջութիւն աստուածապաշ անձինդ, ընթերցաք և զաւետալիր բանն, որ յաղագս բարձմանն ի միջոյ և ի կորուստն յաւիտենից կորնչելոյ անօրէն և ժանտ աշխարհաւեր բռնաւորին ներքինոյ:

Առ որ սքանչացեալ ի վերայ Հրաշալի խորհրդոցն Աստուծոյ, ասեմք զհոգեբաղիւնն, թէ մեծ է զօրութիւն նորա, իմաստութեան նորա ոչ գոյ բաւ: Քանզի արդարև որպէս բարեխրատ Հայր զարթուցեալ ի վերայ ստահակութեան որդւոցս ի ձեռն զդժնիկ գաւազանն, էհար նովաւ զանօրէնութիւնս մեր, և տանջանօք զանիրաւութիւնս մեր, բայց զողորմութիւն իւր ոչ իսպառ արգելեալ ի մէնջ, խորտակեաց զգաւազանն փշրելի, և որդւոցս խրատեցելոց պարգևեաց զոյս կենաց և մխիթարութեան:

Ուստի և ճգարտապէս կատարեալ ցուցաւ առ այժմ՝ բանն այլոյ մարգարէի՝ քաղցր է Տէր, որոց սպասեն նմա յաւուր նեղութեան, վասն զի մինչ Հատաւ յոյս մեր յամենայն ուստէք և կասկածանօք վերջին վտանգից պատեալ պաշարեալ նմա միայն սպասէաք (մեկ բառ անընթեռնելի է - Վ. Գ.) բազմապատիկ նեղութեանց, քաղցրացաւ բարեգութն առ վշտացեալքս, յեղակարծն եբարց զչարն չարեան և կորոյս զամենայն խորհուրդս նորա, զորս յղեցեալն էր առ ամենայն ոք, և ազատեաց մեզ ի ժանեաց մահաթոյն վիշապին և ի նորայնոց իժից և քարբից, այն, որ գիտէ յանակնկալն ժամու արուեստաւորել զփրկութիւն: Ապա քէն գոհութիւն և օրհնութիւն ամենազօր բարձրեալ անուան նորա և բարեգթութեան սուրբ կամաց նորին: Որ և յայսմէտէ փրկեցէ զամեննայն Հաւատացեալքս յայնպիսի դժոխորովայն գազանաց և ի նեռինն կարապետաց:

Եւ զի գրեալ էիր բարեկամական ցաւակցութեամբ զմխիթարութիւնս առ տաժանուտ կիրան մեր, շնորհակալ էմք զմեծութենէ ձերմէ: Յիրաւի, բազումն վշտացաք և զանչափ վնասս կրեցաք ի յերիս ամս, որք չէիր տանելի մեզ, եթէ ոչ էր Քրիստոսի Տեառն մերոյ շնորհեալ մեզ զհամբերութիւն երկայնամտութեամբ տանիլ յաղագս պահպանութեան սրբոյ Տանս իւրոյ ի յաղարտմանէ: Բայց վնասն, որ ի քաղաքիդ պատահեցաւ Սրբոյ Աթոռոյս առ տարա-

բախտութեան մերոյ, Հանդերձ աղէտիւք երկրիդ և գերութեամբն դերազանց եղև քան զամենայն և անմոռանալի:

Եւ սակայն քրիստոսազօր արքայդ կացցես ողջ և յաջողեալ առ ի բարիս, և բազմավրդով սասանութեանց երկրացս խաղաղութիւն պարգևեսցի յԱստուծոյ, և օրհնեալ ազգքին մերոյ մնացորդացն անդորութիւն լիցի: Թէև ոչ ըստ առաջնոցն աւուրց, այլ ըստ ներկայիս և մէք սակաւուք կենցաղաւարելով գոհասցուք զՀանրախնամ տեսչութենէն Աստուծոյ:

Գոյր ի թղթի մեծութեան ձերոյ նշանակեալ և վասն սիրելւոյդ մերոյ՝ Յովսէփայ արքեպիսկոպոսին, թէ ի գալ կայսերական զօրացն ի քաղաքդ, լինելով նորա ընդ նոսա մինչև ցայժմ սփոփիչ և յուսադիր է եղեալ կասկածակիր ժողովրդեանն, և այժմ դարձ առնելով ի մեծաՀանդես դուռն օգոստոսափառ կայսերութեանն, ոռնի զկարևոր օգտակարութիւնս յառաջացուցանել: Վասն որոյ ասեմք, եթէ Տէր լիցի նմա ուղեկից և յաջողեսցէ կարել զդիտեալն ի կատարումն ածել: Իսկ ի զրաւ բանից ինդրի ի մեծազօր մեծի արքայիդ Հերակլայ, զքնիկ բարեկամութիւնդ առ Սուրբ Աթոռս և քաղցրագոյն ինամնդ առ բարեխնդիր ձեր աղօթաւորս աննուազ առնել: Եւ զայլ ամենայն որպէսն մեր և անտէրունջ երկրիս ի գրաբերացս՝ քոյոց Հաւատարմաց իմանալով, ողջ լեր յերջանկափառ կեանս պարագայց ամօք ի Հրճուանս մեր և ի միսիթարութիւն. ամէն:

Գրեցաւ յամի Տեառն 1797 և ի յունիսի 30, ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2482

¹¹⁷² 1797 թ., յունիս - Թուղթ ի Բաղդատ առ Ղուկան Ալէքսանեան, ի պատասխանի թղթոյն նորա ի մարտի 30 գրեցելոյ: Յորում և յիշումն յառաջ գրեալ թղթոցն մերոց:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 7աբ

¹¹⁷³ 1797 թ., յունիս - Թուղթ ի Բաղէշ առ Հինգիտորան եկեղեցւոյ ժողովուրդն, ի պատասխանի մահաւարին նոցա, որք ինդրեալ էին զկտի Յովաննէս սևագլուխն բանադրել, որ ինքնագլուխ առաջնորդ կոչեցեալ նոցա և ի վանս Գոմոց նստեալ բազում տառապանս Հասուցանէր նոցա բռնութեամբ այլազգւոյ ուրումն:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 8աբ

¹¹⁷⁴ 1797 թ., յուլիս - Թուղթ ի Մոսկով, առ Պլատօն արքեպիսկոպոսն Ռուսաց, վասն սիրոյ, Հանդերձ ազդարարութեամբ աղէտիցն մերոց, և յանձնարարութեամբ Յովսէփ արքեպիսկոպոսին:

Յիսուսի Քրիստոսի ծառայ տեր Ղուկաս կաթողիկոս ամենայն Հայոց՝ քրիստոսական և առաքելաճաստատ եկեղեցւոյս Քրիստոսի և ծայրագոյն պատրիարգ լուսանկար Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի: Յորմէ միարար և սուրբ սիրով ամենասրբոյ Հոգւոյն, և եղբայրական կարօտի և բաղձանօք մատուցցի քրիստոսապարգէն սուրբ ողջոյն սիրեցեալ և գորագոյն եղբօրդ մերոյ և վաղնջական բարեկամիդ Սրբոյ Աթոռոյս՝ տեսունդ Պլատոնի սրբազան արքեպիսկոպոսի, և վայելչապատիւ վերատեսչի կայսերապետ մեծի մայրաքաղաքիդ Մոսկովու և Կալուգու և սրբազնագունեղի սինօթին օրհնեցելոյ ազգիդ Ռուսաց արժանաժառանգ գահակալիդ: Որում և գիտութիւն լիցի:

Քանզի միոյ և միայնոյ տիեզերական վարդապետին աշակերտեալքս անբռնադատ ենթարկեալք ընդ ծով նորին սիրոյ պատկիրանի, ըստ որում պարտական եմք զմիմեանս սիրելոյ ի լրումն ամենայն օրինացն պաշտօնութեան, վասն որոյ մտաւորական նկատմամբ որպէս ի սիրտ մեր տեսանեմք առ կայացեալ զսեր ճշմարիտ առ սրբութիւն ձեր, նոյնպէս և ի սիրտ ձեր տպացեալ իմանամք. և այս երևելի նշանօք իսկ: Վասնզի յաւուրս նախընթաց պատրիարգին մերոյ Տեառն Սիմեօնի՝ տեսանեաք զերթևեկութիւն սիրայայտ թղթոցն ձեր առ իրեարս: Իմանայցաք ևս ի թղթոց Յովսէփայ արքեպիսկոպոսին զստոյգ բարեկամութիւնդ առ սուրբ Գաւս միածնաէջ, և զառատութիւն սիրոյդ և գթոյդ առ մերազնեայ ժողովուրդան բնակեալս ի յԱստուածապաճ երկրի յայդմիկ: Ուստի՝ շնորհակալ եղեալ մեր զբարեճամբոյր եղբայրութենէ ձերմէ, մեք ևս գրեցաք առ վսեմութիւն ձեր զթուղթ սիրոյ և յարգանաց: Եւ ևս չեաք պակասելոց ի թղթագրութենէ, եթէ ոչ էին ընդդիմակայեալ մեզ աղէտք դառնագոյնք: Քանզի արդարև ի քանիցս ամս ժամանեցին մեզ և սրբոյ Տանս և ազգի մերոյ Հոգք և Հեծութիւնք, և վնասք բազմապատիկք, Հանդերձ սրով և գերութեամբ ի յարուցման անագորոյն բռնաւորի միոյ կատաղոյ: Եւ մինչ այնքոքիք ցաւօք Հեծելով սպասեաք յայդրուստ միսթարութեան, ընդ Հակառակն ըսկալաք զգոյժ վճարման գերերջանիկ կայսերուհւոյն, որ գերազանցեալ զանցելովքն կրիւք՝ անբերելի թախծութեամբ ելից զսիրտ մեր: Այլ գոհութիւն բարերարին Աստուծոյ, զի Հետևաբար փութանակի էՀաս Համբան աւետեաց գերարժանաբար յաջորդեցման ամենօգոստափառ ինքնակալ Մեծի կայսերն Պալ Պետրովիչի, որով պատառեցաւ քուրձը տխրութեան ի մէնջ, և զգեցաք զուրախութիւն: Ուստի և առ կարևորն գոլոյ՝ աճա գրեցաք զթուղթ շնորհաւորութեան և աղերսանաց առ նորին կայսերական նորափայլ բարձրագահութիւնն: Պատե՛՛՛՛՛՛՛ վարկաք զայս սիրանիչ թուղթ ևս առ պատուականագունեղ եղբայրդ մեր գրել ի յարժարծումն սիրոյ՝ և ի յայտարարութիւն կրից մերոց: Որով և խնդրեմք, զի զաստուածաճաճոյ մարդասիրու-

Թինդ և զգուծդ, զոր ի բնուստ ունիս առ ազգ մեր, ևս քան զևս աճեցուցես, և զի սիրելի որդին մեր Յովսէփ արքեպիսկոպոսն դիմելոց էր ի դուռն կայսերական, ի Հանդիպիլն մեծարգութեան ձերում, առաջնով ինամհովդ ընկալցիս և զբարերարելդ առ նա կարևորութեանց իւրոց մի ինայիցես, և զառ Հոգեկից եղբայրս քո ունեցեալ զմաքուր սէրդ ևս անխզելի պաշտեսցես ի յարգումն պատուիրանսի մարդասէր Փրկչին մերոյ: Որովք օգտեցեալ և մսիթարեցեալ մեր ի յազնուագութ [2484] եղբայրութենէդ միշտ շնորհակալ լիցուք և գոհաբանք: Որք և լրութեամբ միաբանութեան սրբոյ Գաշիս կամք աղօթաւորք առ Աստուած վասն կենաց և փառաց ամենափառաւոր և մեծագոր ինքնակալ մեծի կայսերն Պապ Պետրովիչի: Չորոյ զերջանիկ և զհասարակաօգուտ կեանս. Տէրն տերանց յերկարածգեսցէ ի Հարստագոյն ամանակս օրհնելով և զօրացուցանելով միշտ Հանդերձ պսակակցան իւրով թագաւորնայ կայսերուհեան և կայսերական ծիրանածին որդուքն իւրովք Ալեքսանդր Պապովիչի և Կոստանդին Պապովիչի, և այլ Համայն ժառանգորդօք կայսերութեանն: Նաև եմք բարեխնդիր վասն ճշմարիտ բարեկամիդ ազգի մերոյ և Աթոռոյս սրբոյ՝ և իմոյ վշտաւոյս սիրառատ եղբօրդ մշտացանկաւոյ: Ողջ լեր ի Քրիստոս յոյն ամենեցուն: Գրեցաւ յամի Տեառն 1797, և ի Յուլիսի... ի Լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին՝ որ ի դաշտս Արարատեան:

ՄՄ ձեռ. Հ^Բ 2922, էջ 2483-84

¹¹⁷⁵ 1797 թ., յուլիս - Թուղթ ի Պետրպօք առ ազնիւ աղայ Յովհաննէսն Եղիազարեան վասն անցիցն կողմնացս և կրից մերոց և վասն Թուղթ գրելոյն մեր առ նոր կայսրն ի շնորհաւորութիւն, և վասն Յովսէփ վարդապետին, որ գնայր անդ ի դուռն, ևս և յաղագս ի Դարբանդու նոր գնացեալ ժողովրդեանն յանձնարարութիւն, զի ընդ Յովսէփ վարդապետին Հոգ տարեալ ևս ի գութ շարժեսցեն առ նոսա զկայսրն և զգործակալն:

Յորմէ ժամանեսցէ Թուղթ սիրոյ...

Եւ ընդ աստուածային օրհնութեան սիրառաք նամակիս, ծանուցումն լիցի բարեպաշտութեան քում: Չի երկարագոյն ժամանակ եղև, յորում կարօտ մնացաք սիրոյ թղթոյդ, որով ստանալաք զմսիթարութիւն ինչ: Մեզ ևս չյաջողեցաւ գրել, որոյ պատճառն յայտնի իսկ է իսոհականութեանդ: Չի քանի ամբ Հետէ անօրէն և կատաղի բռնաւորին ներքինւոյ մնասագործութիւնն ազդեաց ի կողմննքս: Մինչդեռ ոչ էր եկեալ ի սպառնալեաց նորին, և յապատամբութենէ թարմատար և անկատար ի շխողին երկրիս քանիցս վրդովեալ վնասեցաւ երկիրս և պակասեցաւ: Մէք կրկնապատիկ մնասակրութեամբ և վարանմամբ տաժանեցաք: Եւ յորժամ եկն դառնաթոյն շնչովն յայս կոյս, ի 1795 թուոյն մինչև ցսոյն տարւոյս յունիս ամիսն, գրեթէ շաբաթէ ի շաբաթ և յամոյս ի յամիս

չկարացաք երբէք թարց մեծամեծ վնասուց և Հոգեմնաշ կրից մնալ թէ ի նորայնոց և թէ սոզրկահանգոյն երկրականացս:

Իսկ զյանդուզն աշխարհաւերութիւն նորա և զյափշտակութիւնն, զգերեւարութիւնն և սրածութիւնն, որպէս իցէ Հնար մեզ ի սակաւատարած թղթի յայսմիկ պարագրել, այլև իհարկէ փոքր ի շատէ լուեալ էք: Եւ Համառօտիւս զերկարացն կարէք իմանալ ձերով առատ խոհեկանութեամբն: Բայց ամենաողորմն Աստուած, որ ոչ իսպառ առնէ զարարածս իւր, ի վերջին վարանման ամենայն ումէք և ևս ի գութ շարժեալ առ մնացորդն, յանակնկալ ժամու եբարձ զչարն ի միջոյ, և մէք յետ բազմաց վնասուց և վշտաց, զերծաք ի մահաշունչ բերանոյ վիշապին մի և ի ձեռանէ ժանտաժուտ և ջրանալի եղբօր նորին, որ յերիցս անգամ աստանոր գալն ևս դառնացոյց զմեզ:

Տէր տացէ՛նմա Հասանիլ ի վիճակի եղբօրն իւրոյ և պահպանեսցէ ողորմութեամբ իւրով զսուրբ Գահա, որպէս և պահեաց ի պարծանս օրհնեցելոյ ազգիդ մերոյ:

Այլ արդ, մինչ վարանեաք ի տագնապս տարակուսանաց յազէ չարութեանց բռնաւորին, ի դեկտեմբերի վերջին աւուրն, և յուսայայք յայդմ կողմանէ օգնութիւն ինչ ստանալոյ, լուաք զփոխումն ի կենաց աստի երջանկափառ ամենահանդէս մեծի կայսերութուհոյն, և այն առաւել վշտացոյց զմեզ, քան զայլ ամենայն պատահարն մեր: Սակայն, Հետեւաբար, փութով էհաս և աւետաւոր Համբաւբ յաջորդելոյ զգահն կայսերական աստուածընտիր ամենաօգոստոսափառ մեծի կայսերն Պապ Պետրովիչի, որով մսիթարեցեալ և ուրախացեալ, գոհացաք զԱստուծոյ: Ապա յետ կործանման բռնաւորին կողմանցս, մինչ սիրելին մեր՝ Յովսէփ արքեպիսկոպոսն, ի դառնալն ի Թիֆլիզու յայդկոյս, գրեալ էր մեզ, թէ դիմելոց է կայսերականդ դուռն, և մէք պատկան գիտելով ահա գրեցաք զթուղթ շորհաւորութեան և աղերսանաց առ նորին կայսերական գերամբարձ բարձրագահութիւնն և առ վէզիրն նորա՝ քնեազ Ալէքսանդր Անդրէիչ Բեզպօրոտկին |2295| և յղեցաք ի ձեռս Յովսէփ գերզգօն արքեպիսկոպոսին բերել Հասուցանել ի մայրաքաղաքդ:

Վասն որոյ գրեմ ազնուութեան քում, զի ի գալն նրա յայդր, դարձեալ մեծաւ սիրով և յարգանօք ընկալցիս, որպէս և յառաջին նուագան, և ի մատուցանելն զթուղթն մեր, զոր ինչ խօսելին իցէ, օժանդակելով նմա ի միասին խօսեսցիք, և զամենայն կրեալ ցաւն մեր պատմեսցիք, և ինդրեսցիք յողորմածութենէ նորին կայսերական մեծութեան շորհել մեզ զհրովարտակ ողորմութեան, որպէս և Հոգելոյս երանելի մեծ կայսերուհին շորհեալ է տեառն Սիմէօնի սրբազան կաթողիկոսին:

Նաև վասն ի Դարբանդու նոր եկեալ ժողովրդեանն մերոյ ևս, որչափ կար ձեր է, Հոգ տարջիք և ջանասցիք զողորմութիւն

գտանել: Չի իմացաք, որ քրիստոսապսակեալ ինքնակալ մեծի կայսրն Պալ Պետրովիչն յինքենէ իսկ քաղցրացեալ առ նոսա, խոստացեալ է առաւելապէս բարերարել նոցա: Վասն որոյ սրտադիւր եղեալ մեր, Հանապազ աղաչեմք զԱստուած վասն կենաց և յաջողութեան նորին մեծի կայսերն Պալ Պոտրովիչի և երջանկափառ պսակակցի նորին՝ Թագազնեայ կայսերուհոյն և կայսերազուն Թագաժառանգ զաւակացն՝ Ալեքսանդր Պալովիչին և Կոստանդին Պալովիչին, և Համայն այլ ժառանգորդաց կայսերութեանն: Որոց Տէր Աստուած տացէ զերկարութիւն կենաց զգերազանցութիւն փառաց, օրհնելով զտէրութիւն իւրեանց և տարածանելով ընդ ծագս աշխարհի և միշտ բարձր և աւարկու պաշէլով ի վերայ Հակառակամարտից և մանաւանդ խաչին Քրիստոսի, և քաղցրագոյն ինամանոցա աննուազ պաշէսցէ ի վերայ ազգի մերոյ և յատկապէս ի վերայ ազնուագոյն սիրելոյդ:

Արդ, թէպէտ և վաղագոյն երբեմն գրեալ էիր, թէ պատճառաւ տկարութեան, իրիք անձեռնհաս եմ ի թուղթ գրել: Առ որ աւելի իմն է ստիպելս, սակայն այժմուս յետ Հոգ տանելոյդ գրեցելոցս, եթէ զպատասխանի թղթոյս ևս գրեսցես, ծանուցանելով զբարեկեցիկ ողջութենէ քումմէ և զյաջողութենէ բանիցդ՝ ի մսիթարութիւն բազմավարան սրտի մերոյ, առաւել ևս շնորհակալ լինելոց եմք բարեպաշտ սիրելոյդ: Չոր ամենազօր ձեռն Քրիստոսի զօրացուցէ միշտ և ի ինաման իւր պաշէսցէ՝ Հանդերձ ամենայն քոյայնսմբքդ, փրկելով ի փորձութեանց և բնաւից իրաց ձերոց զյաջողուածս բարիս տալով:

Չերկարագոյնս պատմութեան անցից մերոց և ներկայապէս կացութեան Սրբոյ Աթոռոյս և կողմանցս թողումք ի սիրելոյդ մերմէ՝ Յովսէփայ աստուածիմաստ արքեպիսկոպոսէն իմանալ:

Ողջ լեր ի Տէր փառազուարճ կենօք. ամէն:

Գրեցաւ յամի Տեռան Փրկչին 1797 և ի յուլիսի... ի Սուրբ Աթոռս Էջմիածին¹⁸⁵:

¹⁸⁵ Պետերբուրգի կազարյան տոհմի շառավիղներից իշխան Հովհաննես Եղիազարյանին հղված նամակում Դուկաս հայրապետը մանրամասներ է հաղորդում քաղաքական անցքերի, կրած զրկանքների, ապա Հովսէփ արք. Արղոյթյանի տեղաշարժերի և կայսր Պալել I Պետրովիչի հետ հանդիպման, Գարբանդում հաստատված ժողովրդի կացության մասին: Նամակի վերջում վեհափառ հայրապետը ողջուն է հղում նաև Հովհաննես կազարյանի կողակից Կատարինե Իվանովնային: Սանկտ-Պետերբուրգի Ալ. Նևսկու Մայրավանդում են հանգչում հայ և ռուս ականավոր գործիչների, իշխանների ու զորավարների անյունները, որտեղ կանգնեցված են նաև բազմաթիվ հուշայուն-կոթողներ՝ ի տես բազմահազար այցելուների: Այդ շարքում ուշագրավ է Կատարինե Իվանովնայի անվանակիր հուշատախտակը, որի երկլեզու հայերեն և ռուսերեն չափածո արձանագրությունը տեղեկություններ է հաղորդում նաև իշխան Հովհաննես Եղիազարյան-Կազարովի մասին: Այն առաջին անգամ հրատարակել է վիմագրագետ Գրիգոր Գրիգորյանը. մեջբերում ենք հայերեն մասը. «Կատարինե Իվանովնայ կազարովեան, սերեալ յազգէ Միքզախանեան, ամուսին ներգործական եւ քաղաքական խորհրդական Յօհաննէսի Եղիազարեան-Կազարովի եւ Սրբոյն Յօհաննու Երուսաղեմացոյ ասպետի՝ կոմսնտոր կոչեցեալ: Ծնեալ է ի 1 ապրելի 1750 եւ վախճանեալ ի 18 յօգոստոսի 1819 թի ի 70երորդ ամաց կենի իւրոյ» (ԳՆՎ, պրակ VIII, Ռուսաստանի

Ողջոյն և օրհնութիւն տամք Հոգևոր դատեր մերոյ սիրեցելոյ ի Քրիստոս, բարեպաշտուհի կենակցին քոյ՝ Տերամբ օրհնեցեալ երկիւղազարդ և զգաստամիտ ազնուուհի Կատարինէ խաթուն Իւանէովնին, և ամենայն մերձաւորաց, ազգայնոց, բարեկամաց և սիրելեաց, որք Հանդերձ քև լիցին յանձնեցեալք ի իննամն մարդա-սիրին Աստուծոյ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2294-95

¹¹⁷⁶ 1797 թ., յուլիս - Թուղթ ի Պետրպօք առ Մանուշա-րեանց ազնիւ պարոն Մարգարն, ըստ մտաց վերնոյ թղթոյդ. յանձնարարութիւն վանն Յովսէփ վարդապետին¹⁸⁶:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2295-96

¹¹⁷⁷ 1797 թ., 20 յուլիս - Թուղթ առ Պալ Պետրովիչ կայսրն Ռուսաց, ի շնորհաւորութիւն կայսերութեանն և ի խնդիր, զի որպէս մայրն իւր Կատարինէ կայսրուհին հրովարտակ էր շնորհեալ Սիմէօն կաթողիկոսին, նոյնպէս և ինքն շնորհեցէ մեզ այժմ:

Յիսուս Քրիստոսի ծառայ Դուկաս, որոյ և շնորհին Կաթողիկոս Ամենայն Հայոց քրիստոսական և առաքելահաստատ սրբոյ եկեղեցւոյս, փոխանորդ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, Ժառանգորդին վիճակի սրբազան առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի և պատրիարգ լուսանկար մեծի Գաւհիս Սրբոյ Էջմիածնի հրաշակերտեցելոյ ի Վաղարշապատ քաղաքի յԱյրարատեանս դաշտի: Յորմէ ճշմարիտ սիրով և Հոգեւտենչ բաղձանօք մատուցի ողջոյն քրիստոսաձիր և օրհնութիւն աստուածային, Հանդերձ զօրութեամբ կենսառիթ խաչին քրիստոսեան, և նորին կողմանիս սրբոյ Գեղարդեանն և շնորհօք Սրբոյ Իջման տեղւոյս նորա, և սքանչելարար աջոյ Սուրբ Լուսաւորչին մերոյ, և նշանագործ դամբարանաց սրբուհեաց կուսանացն Հռիփսիմեանց և Գայիանեանց: Առ Հանդիսավեհութիւն յաստուածուստ ընտրեցելոյ, օծելոյ և Թագազարդեցելոյ արքայից արքայիդ՝ երկնաւորին յերկրի

Դաշնութիւն, աշխատասիրութեամբ Գր. Գրիգորյանի, Երևան, 1999, էջ 113, արձ. 396): Արձանագրութեամբ հայտնուի է տվյալներ Հովհաննէս Լազարյանի զբաղեցրած պաշտոնի, արժանացած կոչումների, շքանշանների մասին:

¹⁸⁶ Պետերբուրգում բնակվող Մարգար Մանուշարյանը Փիլիպոս, Մկրտիչ, Հովհաննէս Մանուշարյանների եղբայրն է, Աստվածատուր Ջուղայեցու որդին, որն իր եղբայր Փիլիպոսի հետ մշտական նամակագրական կապեր է ունեցել Դուկաս կաթողիկոսի հետ ու պարբերաբար արժեքավոր նվիրատվություններ արել: Ներկա շարքի առաջին զբոսով Մանուշարյան եղբայրների մասին համառոտ ծանոթագրություն ունի նաև Վարդան Գրիգորյանը (ԴՀՊ, նոր շարք, գիրք Ա., հ. Ա., էջ 547, ծմբ. 50): Հարկ ենք համարում վերստին արձանագրել, որ ուսասանայոց առաջնորդ Հովսէփ Արղությանի խնդրանքով 1780 թ. նոյեմբերի 21-ին Դուկաս կաթողիկոսը նրանց ազնվական ծագում ունենալու մասին տեղեկանք է տվել՝ հետևյալ խորագրով. «Առ Մանուշարեան Աստուածատուրի որդի պարոն Մարգարն եւ նորին եղբայր Մկրտիչն, Փիլիպպոսն եւ Յովհաննէսն, վասն ազնուականութեան ազգի նոցին» (ԴՀՊ, գիրք Դ., սյուն 516-518):

անուանակրի և գաճաւորի, օգոստոսիառ ինքնակալ միշտ խա-
չապսակ Պաւ Պետրովիչի մեծի կայսեր Ռուսաց, և ամենապա-
տուական երջանկափառ պսակակցին քոյ, շքեղաշուք դշխոյն
դշխոյից՝ Քրիստոսիւ օրհնեցեալ գերապանծալի թագազնեայ
կայսերուհոյն, և ծիրանածին զաւակաց քոց կայսերագարմից և
թագաժառանգից՝ Ալեքսանդր Պաւլովիչին և Կոստանդին Պաւ-
լովիչին և Համայնից օրհնեալ ժառանգորդացն կայսերութեան:
Որոց լիցի ինդալ ի Քրիստոս:

Եւ ընդ մատուցման սրբոյ ողջունիս և օրհնութեանս ի խո-
նարճ դիմաց մերոց յայտարարութիւն լիցի առ սպասու բարձրա-
գաճ Աթոռոյ ձերումդ գերամբարձ տէրութեան: Քանզի սրբազան
առաքեալն Պօղոս, զոր այլոց բարեգործութեանց առաջին դասե-
լով գրէ, աղաչեմ, նախքան զամենայն առնել աղօթս, ինդրուածս,
պաղատանս, գոճովիւնս վասն ամենայն մարդկան, մանաւանդ
վասն թագաւորաց և իշխանաց, զի խաղաղութեամբ և Հանդար-
տութեամբ վարեսցուք զկեանս մեր ամենայն աստուածապաշտու-
թեամբ և սրբութեամբ: Չայս Հոգեշունչ ականդութիւն և մեք ըն-
կալեալ ի Հոգիս մեր, կարևոր գիտեմք աղօթս առնել վասն տե-
րանց: Բայց քաղցրաճայեաց ակն բարերարին ցասմամբ իմն Հա-
յեցեալ առ Հայաստանեայս, վասն մեղաց մերոց, մատնեաց զազգս
մեր և զաշխարհ ի ձեռս թշնամեաց մերոց անօրինաց խստաց, յո-
րոց խռովութիւնք քան թէ խաղաղութիւն, և չարիք քան թէ բարիք
յառաջանան միշտ: Որով և կատարին առ մեզ ամենայն սպառնա-
լիք մարգարէիցն, զոր խօսեցան յերեսացն Տեառն առ ազգն Իս-
րայէլի, զի աճա զբազումս ի սուր մաշէն, և զայլս ի գերովիւն վա-
րէն, և զմնացորդան ի դառն ծառայութիւնս ունին կապեալք յաղ-
քատութեան որպէս յերկաթ: Եւ զայս առնեն ընդ մեզ, նախ զի ոչ
ճանաչեն ճշմարտութեամբ զԱստուած, և ոչ զմիածին որդի նորա՝
զՏէր մեր Յիսուս Քրիստոս:

Եւ երկրորդ՝ զի խորամանկ անուամբն յատկացեալք, որպէս
թուի՝ ժանտաժուտք են, քան զՀամօրէն ցեղս այլազգեաց. տիրօղբ
խաբեբայք, իշխանք գողակիցք գողոց և Հարկաճանք ճոաքաղա-
րարք |2294| ըստ բանիցն Եսայեայ: Որոց և որ գոյ փոփոխութիւն
ի լաւ անդր, որպէս և չէ Հնար եթովպացւոցն փոխել զմորթն, և
ընծուն՝ զխայտուցն: Եւ զի այսպէս իշխօղբ մեր ոչ են իբրև
զտեարս, այլ թշնամիք անձանց մերոց և ապստամբք յԱստուծոյ
մերմէ, ուստի չէ արժան մեզ վասն սոցա աղօթել, որպէս և չէ պա-
տեճ առ թագաւոր որք բարեխօսութիւն յաղագս քրեական մեղու-
ցելոց, այլ կայ սակս այսպեսեաց ասելն Դաւթի, թէ ըստ գործոց
անօրէնութեանց նոցա Հատո նոցա:

Ապա այսր աղագաւ, յետ բարձման թագաւորութեանն յազ-
գէս մերմէ, սաՀմանեցաւ յեկեղեցիս յաւուրն երիցս և չորիցս ան-
գամի ժամերգութիւնս, վասն թագաւորաց քրիստոնէից և իշխա-

նաց բարեպաշտից, զօրաց և զաւակաց նոցին աղաչել զՏէր: Որ մինչև ցայսօր անխափան կատարի ըստ առաքելական պատուիրանի: Բայց առաւել ևս պարտական գիտեմք զմեզ աղօթել վանն ձերոյ աստուածաճաստատ թագաւորութեան, որ մերձակայ գոլով ի սահմանս վշտակոծ աշխարհիս Հայոց, միշտ ողորմած և ինամածու է եղեալ ազգիս մերոյ: Քանզի որք մի անգամ դիմեալ են ի Հայկազանցս առ ծայրածաւալ Երկրիդ այդ ի Հովանի բարեխնամ թևոց ամենազօրո՞ղ կայսերութեան, մանաւանդ յաւուրց անտի երանելի. յաւիտեանական արժանաւոր մեծին Պետրոսի կայսեր մինչև ի ժամանակս գերերջանիկ և ամենաՀանդէս մօրն ողորմութեան՝ բարեյիշատակ մեծի կայսերուհոյն Եկատարինեայ Երկրորդի, գտեալ են զառատագեղ շնորհս մարդասիրութեան, և զպաշտութիւն կենաց իւրեանց:

Ի նոյն շնորհ ինամոց վատահացեալ նախընթաց պատրիարգին մերոյ՝ տեառն Սիմէօնի սրբազան կաթողիկոսին, գրեաց ի սպաս նորին բարձրագոյն կայսերութեան զթուղթ աղբսանաց յամի Տեառն 1766, և նորին քաղցրագուլթ կայսերական մեծութիւնն շնորհեաց նմա զնամակ ողորմութեան Հրաշատեսիլ մեծ կնքովն, յորում և ամենաողորմածաբար պատուելի կոչէ զազգս Հայոց:

Եւ այն Հրովարտակ տեղի գտեալ ի վերայ գլխոց մերոց կայ մնայ ի Սուրբ Աթոռոջս արձան մշտնջենական յիշատակի բարերարութիւն նախագրեալ մօրն ողորմածագունեղի: Ըստ որոյ անեղծական Հրամանի և նոյն պատրիարգն մեր առաքեաց ի Սրբոյ Աթոռոյս նախ արքեպիսկոպոսն ի յայցելութիւն ժողովրդեանն մերոյ ընդ աստուածապաշտ տէրութեամբ ձերով եղելոց: Եւ յետ այնորիկ զՅովսէփ արքեպիսկոպոսն առաքեաց, զոր և մեք ի յաջորդելն մեր զՍուրբ Աթոռս, վերահաստատեցաք զնա և յառաջնորդութեանն, որ տակաւին կալով ի յօրհնեալ Երկրիդ, ոչ միայն զառ ի մէջ ինքեան Հաւատացեալ Հոգևոր տնտեսութիւն վարէ, այլև ի բարձրահրաման կայսերութենէն Հրամայելոց իրականութեանց ինչ ևս գայր ի պէտս: Եւ ի միասին առաջնորդն ընդ ժողովրդեանն վայելելով ի իննամն այդմիկ տէրութեան, գոհանան զԱստուծոյ, և Հանապազ շնորհակալութեան բանս գրեն առ մեզ:

Ուստի և մեք օրհնաբան և գոհունակ լեալ, ըստ առաջադրութեան Սրբոյն Պօղոսի, առնեմք աղօթս և ինդրուածս վանն քաղցրագունի և ՀասարակաշաՀի այդր տէրութեան, որոյ ի բարեկարգ կառավարութենէ մերազնեայքդ խաղաղութեամբ վարեն զկեանս:

Այլարդ, զի երջանկափառ մայրն՝ գթաշատ մեծ կայսերուհին փոխեցեալ ի գլխոց մերոց, եթող զմեզ իբրև զորբս և զուրկս ի մայրենի իննամարկութենէն, եկն ի վերայ մեր սուգ թախծութեան, և տարակուսութիւն անհնարին պաշարեաց զմեզ: Բայց որ մխիթա-

րէն զսիրտս մխիթարեաց զմեզ աւետաւոր Համբաւով Հարազատիդ նորին ժառանգի ամենավայելչաբար գաճակալութեանն, և ի սրբոյ Հոգւոյն օծութենէ պարարտութեանն: Որով փարատեալ մեր զուգ և զտրտմութիւնն, ի ձայն ցնծութեան փառաւորեցաք զանմահ թագաւորն, որ ի գոն բնութեանս վիճակեալ մահկանացութեան, յորուցանէ միշտ ժառանգս Աթոռոց: Որ և իւրով նախասահման տեսութեամբն յառաջագոյն ընտրեալ և պատրաստեալ զընտրելագունեղ տէրդ կացոյց ի ժառանգութիւն գերափառունակ կայսերական մեծի Աթոռոյդ ըստ առաքելոյն, թէ որք էն, յԱտուծոյ կարգեալ էն:

Արդ, յիրաւի ըղձալի էր Հոգւոյս |2293| այժմ ինձէն իսկ գալ յողջոյն լուսացնցող սուրբ դիմաց վեհանձնութեան ձերոյ, և ի շնորհաւորութիւն աստուածարեալդ կայսերութեան, սակայն տկարութիւն ձերութեանս և վտանգն անտերունջ թողոյ Տանս սրբոյ ի մէջ անօրինաց չարայուզից, արգելս ետուն յօտարութեանս: Ապա զայս թուղթ աղերսանաց մատուցուք ի սպաս Հանդիսավեհութեան ձերոյ բարձրագահ Աթոռոյ, ձեռամբ յիշեցելոյ Յովսէփայ արքեպիսկոպոսին: Որով խոնարհաբար շնորհաւորեմք զբրիստոսապսակեալ թագաւորութիւնդ և զօգոստափառ կայսերութիւնդ: Չոր Աստուած շնորհաւոր արասցէ, յերկրաձգելով զանգին կեանս ձեր՝ յօգտակարութիւն աշխարհի և ի պարծանս Հաւատացելոց, և զմեծագոր տէրութիւն ձեր ընդ ոլորտս տիեզերաց տարածեսցէ՝ միշտ բարձր և յաղթօղ պահելով ի վերայ ամենայն Հակառակամարտից, և մանաւանդ թշնամեաց խաչին Քրիստոսի:

Եւ արդ, զայսինչ Հայցեմք ի գերամբարձ տէրութենէ աստուածակացոյց խաչապսակ Պալ Պետրովիչի մեծի կայսեր Ռուսաց: Նախ զի զքաղցրագոյն ինամոնցդ առատութիւն, զոր աղբերաբար ծաւալէք ի վերայ ազգի մերոյ ընդ Հովուութեամբ գաւազանի ձերոյ եղելոցն, զայդ անփոփոխ ոնելով, առաւել ևս աճեցուցանիցէք: Եւ որպէս ամենաթագաւորն Աստուած զմիօրինակ ինամոնի ի վերայ ամենեցուն, ըստ բանի իմաստնոյն, նոյնպէս և ձերդ թագաւորութիւն, որ պատկեր է նորա ի յերկրի, Համօրինակ ակնարկեսցէ ի Հանազանդեալս ձեր յառաջինսն և յետինս:

Եւ երկրորդ, զի որպէս բարեյիշատակ երանելի կայսերուհին շնորհեալ է զնամակ ողորմութեան նախընթաց պատրիարքին Սրբոյ Աթոռոյս՝ տեառն Սիմէօնի, նոյնպէս և աստուածարեալ օգոստափառ խաչապսակ Պալ Պետրովիչի մեծի կայսեր Ռուսաց ամենաողորմածաբար պարգևիցէք մեզ զհրովարտակ ձերովդ սուրբ և պատուական կնքով, զի որպէս յայլ տէրութիւնս եղելոց ազգին Հայոց Հոգևորական Հոգեբարձութիւնն ընդ մեզ է, նոյնպէս և յաստուածապահ երկրիդ Ռուստաց գտանեցելոց ամենայն մերագնէից ըստ Հոգևորին կառավարութեան իշխանութիւնն ընդ

մեզ լիցի՝ ըստ կանոնաց և աւանդութեանց սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց իննամեջ: Իբր զի որպէս այժմ սիրելի որդին մեր՝ Յովսէփ արքեպիսկոպոսն ի կողմանէ Սրբոյն Աթոռոյս և մեր Հովուէ զդոսա , նոյնպէս և յետոյ աստուատ ի մէջ և ի յաջորդոցն մերոց կարգեսցի կամ առաքեսցի դոցա առաջնորդ ի Հոգևոր այցելութիւն: Ու այլ որոց կարգաւորաց յազգէս մերմէ դէպ լիցի մտանել ի սահմանս օրհնեալ երկրիդ, մերովս վկայականաւ լիցի գալն: Արդ, կրկին աղաչեմք, մի անտես առնել զՀայցուածս մեր, այլ տիրաբար գթաշարժութեամբ շնորհել զնամակդ ողորմութեան: Կալ մնալ յաստուածայնում սրբոյ Գաճիս մշտնջենաւոր յիշատակ ամենաՀոչակ սուրբ անուան ձերոյ ի պարծանս գլխոց մերոց: Որով և ս. քան զևս պարտական դիցուք զմեզ՝ ըստ Առաքելոյն բանի առնել աղօթս պաղատանս գոհութիւնս վասն Հասարակաշահ ամենատենչալի կենաց խաչապսակ Պաւլ Պետրովիչի մեծի կայսեր Ռուսաց, և վասն զօրութեանց և յաղթութեանց ամենափառաւոր տերութեանդ:

Նորագոյն աղէտքն Հասեալք Հայաստան աշխարհիս և որպիսութիւնքն սրբոյ Գաճիս և մերոյ վշտաւորութեան, Համարմք թէ չիցեն անգիտելիք ձերոյ երկնածիր իմաստութեան: Այլ թէ լիցի ինչ Հարցանելիք ի բարեգթութենէ ձերմէ, սիրելի որդին մեր և Հաւատարիմն տերութեան ձերոյ՝ Յովսէփ արքեպիսկոպոսն գիտէ ճառել:

Ողջ լեր օծեալդ Տեառն՝ պարագայց ամօք ի բարձրութիւն սրբոյ եկեղեցւոյ և ի բերկրութիւն ամենայն Հաւատացելոց, և ի մեր պարծանս միսիթարութեան. ամէն:

Գրեցաւ յամի Տեառն 1797 և ի յունիսի 20 ի Սուրբ Աթոռս Հայոց Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան¹⁸⁷:

(Ձեռագիրը սրբազանին ի ստորև գրեալ):

Ինքնին զայսքան ինչ ձեռագրեմ աստանօր ի Հաւաստութիւն ճշմարտութեան ամենից վերոյ գրեալ բանից թղթոյս, Քրիստոսի նուաստ ծառայ և յաղագս մեծագօրի կայսերութեան ձերոյ միշտ բարեխնդիր աղօթաւոր, խոնարհ Ղուկաս կաթուղիկոս Ամենայն Հայոց:

ՄՄ ձեռ. Հ^Կ 4501, էջ 2291-93

1178 1797 թ., 20 յուլիսի - Թուղթ առ Հաշտարիսանու և կողմանցն առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսն, ընդ թղթոց կայսերն ի վէզիրին և այլոց:

Յորմէ ճշմարիտ սիրով և Հոգևոր օրհնութեամբ. քրիստոսածիր ողջունիւ և առատածաւալ շնորհիւ սրբոյ Իջման տեղոյս նորին, ծանիր, սիրելիդ մեր ի Տէր, Հարազատ և օգտաջան որդի Սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ գերաՀանճար արքեպիսկոպոս: Ձի յա-

187 Բնագիրը տե՛ս ՄՄ ԿԳ, քղթ. 243, վավ. 83:

ուսջ քան զայս վերջին թուղթս քո ի թիֆլիզու, ձեռամբ Ութրու-
թին և Շաքարոյն, մինչ էհաս առ մեզ, գրեցաք զպատասխանի
նորին ի յունիսի 30 և ընդ նոսա ուղևորեցաք, յորմէ ունէիր իմանալ
զդժնդակ սարտարի մերժիլն յերկրէս, և զկացութիւնս մեր: Եւ
վասն ինդրելոցդ թղթոց խոստացաք գրել և յուղարկել բայց
զբաղմունքն ևս ոչ երբէք թեթևանան առ ի մէնջ, այլ ինչ և իցէ
Հանդերձ այլ Հոգօքն Հոգացաք գրել զթուղթ մի առ օգոստափառ
կայսրն, զթուղթ մի առ վէզիր քնեազ Ալէքսանդր Ասդրէիչ Բեզ-
պօրօտկին, զերկուս թուղթս առ Պլատոն և Գաբրիէլ արքեպիս-
կոպոսն, զթուղթ մի առ ազնիւ աղայ Յովաննէսն, զթուղթ մի առ
ազնիւ պարոն Մարգարն և Փիլիպպոսն Մանուչարեանց:

Ի թղթոջ կայսերն գրեալ եմք առ պաշտօնաւորն բանին կարգի
զամբաստանութիւն զբարբարոս տիրողացն մերոց և զաղօթման
եկեղեցւոյս մերոյ վասն իւրեանց արժան խոստովանեալ՝ իբրև
յատկապէս ինամածուաց ազգի մերոյ: Չկնի վասն մօրն մահուան
տրտմակցութիւն և վասն իւրն յաջորդութեան ցնծութիւն և շնոր-
հաւորութիւն: Եւ ապա զերկուս ինդիրս առաջագրեցաք. նախ՝
առաւելապէս ունիլ զինաման ի վերայ ազգի մերոյ ընդ գաւազա-
նաւ իւրով եղելոցն, և երկրորդ՝ զի որպէս Հոգեւոյս կայսերուհին
շնորհեաց զնամակ ողորմութեան տեառն Սիմէօնի կաթուղիկո-
սին, նոյնպէս և ինքն մեզ շնորեալեացէ:

Ի թղթոջ վէզիրին ևս ըստ այսմ, բայց յատկապէս և վասն ի
Դարբանդու նոր անցեալ մերայնոցն ինդրեցաք զինամարկու-
թիւն և վասն ինդրոցն մերոց, որ առ կայսրն՝ Հոգատարութիւն և
կատարումն: Իսկ եպիսկոպոսացն՝ միայն զկրից մերոց ծանու-
ցումն, և վասն քոյ յանձնարարութիւն: Եւ առ աղայ Յովաննէսն՝
երկարապէս, օժանդակ լինիլ քեզ առ ինդիրսն մեր թէ վասն հրո-
վարտակին և թէ վասն Դարբանդու ժողովրդեանն:

Վասն որոյ և քեզ սիրելոյդ, գրեմք, զի ամենայն ջանիւ Հոգ
տարեալ առ դրանն կայսեր՝ ընկալցիս հրովարտակն ողորմու-
թեան, Համեմատ առ Քրիստոս փոխեցեալ կայսերուհոյն հրո-
վարտակին, շնորհեցելոյ սրբազան Հայրապետին մերոյ ի Տէր Հան-
գուցելոյ, և վասն ժողովրդոցն մերոց և ի Դարբանդու նոր եկե-
լոցն, զոր ինչ ողորմութիւնս առնիցէ, ծանուցես մեզ լիապէս:

Եւ զի գրեալ էիր, թէ թագուհին ևս ընդ թագաւորին ի միա-
սին են օժեալք, պատշաճ Հարկաք ի յօրհնութիւննսն զնա ևս ընդ
նմա յիշել. բայց վասն անուանն տարակուսեցաք: Չի թէև գրեալ
իցես մեզ յառաջ, սակայն զովանս թուղթս քո ի գալ չարածիչ¹⁸⁸
սարտարին ի վտանգէ կասկածելով պատառեցաք: Եւ յայլուստքէ
չունէաք Հաւաստել, ապա այլով ծաղկատիպ նշանաւ անորոջ գրե-
ցաք, թէ թագազնեայ կայսերուհոյն և տեղի ինչ ևս թողաք: Եթէ
Հարկաւոր գիտասցես, կարես գրեցուցանել զանունն ի ներքոյ, և

¹⁸⁸ Սկզբում գրված է «պիղծ», ապա ջնջած և գրված է «չարանիչ»:

Թէ զգրեցեալն բաւական Համարեցիս, ի յընտրութիւն քո է ապաստան:

Դարձեալ և տարակուսեցաք, թէ զթուղթն զիա՛րդ յղիցեմք, զի թէ ծալեաք, աղճատիր ի ճանապարհին, վասն որոյ վայելուչ Համարեալ զթուղթն կայսեր գալարեալ ի մէջ ղուպուրի եղաք և զայլն բաց կնքեալ, այնպէս յղեցաք, զի տեսցես և թարգմանեցուցեալ, այնպէս մատուցես: Եւ կամ թէ ըստ այլ պատշաճատեսութեանն արասցես, որք Հաճելի երևեսցին:

Ըստ նշանակելոյդ գրելոց էաք և այժմ՝ և զկոնդակ ի վերայ մերայնոց երկրիդ առ Հասարակ՝ ծանուցանելով զկրից մերոց, և զմիամտեցուցանել վասն ազատութեան սրբոյ Գաշիս ի վերջին վտանգից: Եւ ևս զկոնդակ յուսագրութեան ի վերայ տարագրեցեալ ժողովրդեանն ի Դարբանդու, և առ այլև ոմանս յատուկ անձինս ըստ Հարկին: Սակայն, թող ի քանի տեղեաց փայել գալն և պաշարեցուցանելն զմեզ այլևայլ թղթագրութեամբք, ահա ուխտաւորք ևս եկին յօմանցւոց երկրէս և իսպառ զբաղեցուցին զմեզ, որ եթէ կամիցէաք զամենն լրացուցանել ամիս մի ևս յերկարէր: Վասն որոյ աճապարեալ |2390| զայսքանս յղեցաք շուտով, զի չև ևս գնացեալ քո ի դուռն, Հասցի առ քեզ: Չայլն ևս յետոյ գրեցուցեալ յղելոց եմք:

Եւ զի առաջին թղթովն մերով գրեցաք քեզ վասն ի Դարբանդու նոր անցեալ ժողովրդոցն ծանուցանել մեզ, թէ յո՛ր և յո՛ր տեղեաց իցեն, իցէ թէ գրեալ իցես և շուտով Հասանիցի առ մեզ: Եւ ըստ այնմ տեղեկաբար արասցուք զգրութիւն մեր, զի յայն կողմանցն և ի Շուշոյ ևս եկող չգոյ, դեռևս, զի որք փախստեամբ գան, ի ճանապարհին կողոպտեալ լինին: Տեղոյս իշխօղն, որ գնացեալ է ի Թէհրան, արգելաւ Հանդերձ եղբարքքն, տակաւին անդ են, և Խօյու իշխողքն ևս, երկրայքս անտերունջ: Մակուայ սուլթանն, որ առ ներքինի կորստականն կայր ընդ երկար, և խան կոչեցեալ ի նմանէ՝ զերկիրս տարեկան կտրուածքով առեալ էր՝ գալ նստիլ և զՀարկն Հասուցանել: Յետ կործանման ներքինւոյն եկն տիրօղ երևիլ, իսկ երևելիքն երկրիս, որք ժողովեցեալ են ի բերդն, ոչ ընկալան զնա, ոմանք սրտիւ և ոմանք կեղծիւք: Եւ նա գնացեալ ի գաւառն իւր զօրաժողով լինի գալ ի վերայ Երևանու: Յերկուց կողմանց ևս գրեալ են առ պեսն Վրաց և Թուի, թէ նրա կողմն Հզօր է, և արքայն թէ որո՛ց պարտի անսալ չգիտեմք: Վասն որոյ երկիրս այլևս ի վրդովմանց չէ ապահով:

Յաղագս Խօյու ևս ասեն, թէ զքաղաքն դատարկեալ ի Հարստութենէն, բնակիչքն իբրև ի վերայ փշոյ նստեալ կան յերկիւղէ Սատրղ խանին: Եւ Սատրղ խանն ունի զճանապարհն Արաղստանու, որոյ եղբայրն ևս ի Թավրէզ նստեալ կայ: Ինքն Աստուած բարերարն այս բռնաւորացն օգտագիտութիւն տացէ, զի ողորմելի աշխարհս այս սակաւ մի անդորրասցի:

Ըստ ինդրեղյոյ և խոստման մերոյ աՀա Ի. (20) Հատոր անկազմ շարականս յղեցաք ի Թիֆլիզ՝ Հասանիլ առ քեզ: Ոչ միայն ի Թիֆլիզու, այլև ի Պօլսոյ լեւմբ զկատաղիլ տիրասպանիցն ի վերայ Հռօմէական տէրութեանն և ոնիլ զդիտումն ի սահմանս կողմանդ գալոյ, ուստի և յոյժ ցաւիմք: Տէր ցրեսցէ զխորհուրդս նոցա և փրկեսցէ զերկիրդ յապականարար թունից նոցին: Ապաքէն զտեղւոյդ և զնոցին որպէսն գրեսցես մեզ ի գիտել:

Յառաջքան զալէկոծութիւն կողմանցս, որ զլմնայ անապատի ժողովարար Ներսէս վարդապետն իրօք իւրովք յուղարկեալ էիր աստ, էՀաս: Ընկալաք զինքն և Հասու եղաք դաւթարիցն և կայիցն, և պահեցաք ի Սուրբ Աթոռոջս մինչև յամիսս Ը. (8) և այլ աւելի, զոր իմացեալ անապատականացն և Վանայ իշխանացն մահաարօք ինդրեցին զնա և զինչսն: Եւ մեք յիրաց անտի չափաւոր բաժին Հանեալ ետուք իւրն ըստ թախանձանաց իւրոց, և զայն ամենայն զնաղտն և զվէճն կնքեալ անպակաս Հանդերձ ինքեամբ յղեցաք յանապատն և յանապատականաց անտի և ի վանուց թուղթս ընկալաք վանն Հասանելոյն:

Իսկ զի միրիկն Հետեապէս յարեաւ ի վերայ մեր, և ճանապարհքն փակեցան, ցարդ չկարողացաք ինչ գրել զայնմանէ, այժմ գրեմք, զի միամիտ լիցիս:

Նաև Աւետիք վարդապետն, զոր յուղարկեցաք ի գործ իբր զի զիւր կայսն ևս առ ձեռն բերցէ և գործակատար երևելով Սրբոյ Աթոռոյս, արժանապէս Հանդիպեսցի բարւոյ անուան և պատուոյ, նա մինչև զայժմ քառապատիկ յամելով, գիր ևս ոչ գրէ, զորոյ ոչ զփոյթն իմանամք և ոչ զդիտումն:

Յանցելում ամին գրեալ էիր ի Համախոյ, թէ առ իս և վանն անքննաբար տուեալ դրամոցն Հետեւիմք Հանել և այն: Այժմ լեւմբ, թէ նա յայնժամ ի սակաւ աւուրս է կացեալ առ քեզ, և դարձեալ մեկնեցեալ է: Չգիտեմք թէ, ո՞ւր է: Եթէ գիտես ինչ զնմանէ և զինչ առնելոյն, շուտով գրեսցես մեզ, շնորհակալ լինելոց եմք:

Ողջ լեր: Ի յուլիսի 20:

Յետ աւարտման թղթոյս, ի յանկարծ ուղևորիլն, նոր ևս շաղագրով բան գրեցաւ վանն թղթոցս յամելոյն ի քանի աւուրս ևս թէ ի պատճառս ուխտաւորաց դժուարաւ ճանապարհելոյն, և թէ զկնի Պարոնի որդւոյ գալոյն աստ, և մեր Հանդերձեալ գոլոյն ի վաղիւն զնալ յԵրևան ի տեսութիւն Հասան խանին, որ նոր նստեալ էր ի բերդն և այլն:

Ի յուլիսի 31¹⁸⁹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2389-90

¹⁸⁹ Ռուսաց կայսեր կանցլեր, իշխան Ալեքսանդր Բեգբորոդկոն Առկաս Կարնեցուն հրած 1798 թ. դեկտեմբերի 2-ի նամակով տեղեկացնում է, որ կայսրը հրովարտակ է շնորհել կաթողիկոսին, որի հետ նաև բազում նվերներ. այդ գործում մեծ դեր ունի նաև իմեք՝ Բեգբորոդկոն (ԴՀՊ, նոր շարք, գիրք Ա., հ. Ա., էջ 36) (համառ. վավ. 1179):

1179 1797 թ., յուլիս - Թուղթ առ վեզիրն կայսերն Ռուսաց քննեալ Ալէքսանդր Անդրէիչ Բեզպորօտկին. յիշատակութիւն երախտեաց առաջին վեզիրին և յորդորումն ինքեան ի նոյն: Ճանուցումն զդառնաղէտ անցիցն կողմանցս և զտրտմութենէն իւր, որ վասն մահուան Կատարինէ կայսերուհոյն և զհետևաբար ուրախութենէն, որ վասն յաջորդելոյ նոր կայսերն, և յաղագս թուղթ գրելոյն առ նա, որոյ սակս և ինդիր, զի մատուցէ և զնամակ ողորմութեան ընկալցի ի նոր կայսերէն, և առ ազգն մեր և առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսն ինսամս ունիցի և այլն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2386-88

1180 1797 թ., 23 յուլիսի - Թուղթ ի Կարին առ սարէսկէրին սառաֆ մատենցի Փիլիպպոս ամիրայն, ի պատասխանի շնորհաւորութեան գալստեանն և շնորհակալութիւն վասն բարերարելոյն առ նուիրակն տեղոյն և առ գործակալն մեր, և յանձնարարութիւն վասն Ախիջան աղային, և շնորհակալութիւն վասն աջաւամբոյր յղելոյն, և Հրաւիրումն գալ ի Սուրբ Աթոռս յովստ:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 9ա-10ա

1181 1797 թ., 23 յուլիսի - Թուղթ ի յԱդրանա առ մահտեսի Գէորգն, ի պատասխանի թղթոյն և ի շնորհաւորութիւն վասն նուիրացն, և միամտութիւն վասն իւրեանց Ռամիս գիւղի եկեղեցւոյ գանձանակադրամին, զոր ամանաթ ընկալաք, Հասուցանել առ տէր Կարապետն կամ առ իւրեանց Ամուջայի որդիսն, մինչ ճանապարհն Նախշուանու բացցի, զի այժմ վտանգալից էր:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 10ա-1ա

1182 1797 թ., 23 յուլիսի - Թուղթ յԱդրանա առ բենկանցի մահտեսի Ստեփաննոս ամիրայն և իւրսն, ի պատասխանի թղթոյն և ի շնորհակալութիւն վասն յուղարկեալ ժամուցացն¹⁹⁰:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 101ա-2ա

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 504ա

1797 թ., յուլիս - Թուղթք ի յՈւռումէլի, ի յէտրէնէ, ի Մեծն Պօլիս, ի յԱլին և ի Կարին

1183 Ի յՈւռումէլի - Թուղթ առ Ուռումէլու նուիրակ Դանիէլ վարդապետն. ծանուցումն յԱդրանու գրեցեալ թղթոյն առ մեզ Հասանելոյն ընդ ուխտաւորացն, միախթարութիւն վասն սրտնեղական բանիցն գրելոց: Եւ թէ վասն լիալիր որպիսութեանց

¹⁹⁰ Բենկանցի մահտեսի Ստեփանոս ամիրային (Ադրանա) հղված շնորհակալագրի համառոտագրութիւնը տես ԳԶՊ, գիրք Գ., սյուն 657 (հիմա. վավ. 1185):

քոց և փօլիցայի, որ խոստացեալ էիր ի գնալը յՈւրուշուղ՝ անտի գրել, ակն ունիմք, որ ցարդ վաղապէս գնացեալ իցես և գրեալ:

Այլ այժմ՝ զայս ինչ գրեմք քեզ վասն Ուրուշուղու, զի անտա-նօր, որ զմահտեսի Գրիգորն Անուշեան գործակալ եմք կարգեալ, քանիցս գրեալ է մեզ, թէ ժողովուրդքն զՀոգեբաժինս և կտակս իւրեանց ննջեցելոց յետացուցանեն, կոնդակ գրեա՛ և այլն: Իսկ մէք զգանձանակի կոնդակն գրեալ գոլով, որ քեզ է Հասեալ, այժմ՝ չկարողացաք զայլ կոնդակ գրեալ վասն որոյ գրեմք քեզ, զի ի յՈւրուշուղ Հանդիպիլը ծանուցես ժողովրդեանն, և իշխանացն և սյանձն արասցես, թէ սա մեզ Հաւատարիմ գործակալ է, յորժամ նուիրակ ոչ գտանիցի աստ, զայնպիսի տուրնս յանձնեսցիք սմա, սա Հասուցանելոց է նուիրակին և ի Հոգեւոր տիրէն թուղթ բերե-լոց:

Ծանուցումն վասն կորստեան շահին ի Հուշի և երկիրս մերոյ գորպիսութեանց:

Գրեցաւ յամնոյս ԻԳ. (23):

¹¹⁸⁴ **Ի յՈւրուշուղ** - Թուղթ ի յՈւրուշուղ առ գանձապետ մահտեսի Գրիգորն Անուշեան, ի պատասխանի թղթոյն, որ ընդ ուխտաւորացն գրեալ էր, և զուրումն Հանգուցեալ Մարթայ անտն կնոջ զտուեալ Հոգեբաժինն ևս յղեալ էր, և զոմանս ինդիրս արարեալ: Տէ ս ի փոքր տետ[եր] յեր[ես] 406:

^{1185*} **Ի յԱդրանա** - Թուղթ ի յԱդրանա առ Բէնկանցի մահտեսի Ստեփաննոս ամիրայն, ի պատասխանի թղթոյն գրեցե-լոյ. ՀնորՀակալութիւն վասն յուղարկեալ ժամուցացն առ միաբանն եւ վանորայն, որոց բոլորի գումարն է ԳՃԾ. (350) զուռուշ եւ վասն միոյ ղուլթիոյ քաղցրեղէն յղելոյն և մի ղուլթի ևս միսկի օճառին և առ Դանիէլ վարդապետին արարեալ ընդունելու-թեանցն ՀնորՀակալութիւն: Տէ ս ի փոքր տետ[եր] յեր[ես] 497:

Նոյնաբնոյթ նամակներ նուիրատուներ մահտեսի Գէորգին (Ադրանա). «վասն նուիրաց վեց ոսկոյն յղելոց եւ միամտութիւն վասն իւրեանց Ռամիս գիւղի եկեղեցւոյ գանձանակադրամին...» (504ա, Ա./4), Յովհաննէս աղային (Ադրանա). «վասն ԻԵ. (25) զուռուշ քառանիցին յղելոյ» (Ա./5), պարոն Սարգսին (Ուռուշուղ). «վասն մի արծաթեայ կանթեղին» (Ա./6), Ադրանայի առաջնորդ Միքայէլ վարդապետին. «վասն երեք ոսկի աջաՀամբուրին» (Ա./7), մահտեսի Գրիգոր եւ մահտեսի Մկրտիչ ամիրաներին (Ադրանա). «վասն յուղարկեալ Ծ. (50) զուռուշ ժամուցին» (Ա./8):

¹¹⁸⁶ **Ի Մեծն Պօլիս** - Ղաւզ մի առ Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն գրեցաւ, յորում թէ սոյն վառնացի Յարութիւնի որդի տիրացու Յովաննէան, որ եկեալ էր ի Սուրբ Աթոռս յուխտ, ի դառնալն ետ մեզ աստ եօթն Հարիւր և յիստն զուռուշ կէչար փող, որ գայ ի տեղդ առնու: Վասն որոյ գրեմք քեզ, զի ի

գալն դորին յայդր, զայն վերոյ գրեալ դրամնն տացես առ նա, և զայս փօլիցագիրս առ քեզ պահեսցես, որ յաւուր Հաշուատրութեան քում պիտոյասցի:

1187 Ղաւզ մի ևս գրեցաւ առ սա վասն երէք Հարիւր յիսուն ղուռուշի, որ պարտ էր ի Պօլիս Հատուցանել և տալ ուխտաւոր Ֆիլանին:

504բ

1188 Թուղթ ի Մեծն Պօլիս առ լիմօնճիզատէ՝⁹¹ Յովաննէս ամիրայն, ի պատասխանի թղթոյն ընդ ուխտաւորացն, և ծանուցումն զորպիսութեանց մերոց և կողմանցս, և յիշումն վասն սատակման շահին ի Հուշի:

[Գրեցաւ] յամնոյս ԻԳ. (23):

Նոյնաբովանդակ նամակներ են ուղարկուել նաեւ Կատարինէ կնոջը (Պօլիս). «վասն Ա. ոսկի տալոյն» (Ա./2), Ակնայ առաջնորդ Միքայէ վարդապետին. «վասն յիսուն ղուռուշ նուիրացն» (Ա./3), Կարինի սարասկեարի սառաֆ Փիլիպպոս ամիրային. «վասն բարերարութեանցն առ նուիրակն և գործակալն մեր և յանձնարարութիւն վասն Ախիջան աղային և շորհակալութիւն վասն ԵՃ. (500) ղուռուշ աջաՀամբոյր յղելոյն» (Ա./4), վանեցի Ախիջան աղային (Կարին). «վասն բանին քո առ Փիլիպպոս ամիրայն» (Ա./5):

1189* Ի Կարին – Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն. ծանուցումն թղթոյն առ մեզ Հասանելոյն ընդ փայեկան՝ Հանդերձ փոռուկային և յիշումն ևս կրկին ընդ ուխտաւորացն թուղթ գրելոյն յամնոյս ԺԵ. (15), առ որ թէ իմացաք զթղթոց մերոց յուղարկելն ի Տիարպէքիր և ի Պօլիս և Անկիւրոյ նուիրակին ճանապարհորդելն: Ապա ծանուցեալ էիր զՓիլիպպոս ամիրայի ի քաղաքդ գալն և զտալն ԵՃ. (500) ղուռուշ իբր աջաՀամբոյր և Ծ. (50) ղուռուշ ևս ի կողմանէ առաջնորդ Միքայէ վարդապետին առ քեզ, զորս գրեցաք ի դաւթարոջը: Եւ թէ առ Փիլիպպոս ամիրայն շորհակալութեան թուղթ գրեցաք և Հրաւիրեցաք գալ ի Սուրբ Աթոռս, վասն որոյ և քեզ գրեմք, զի դու ևս յորդորօղ եղեալ, Հրաւիրեսցես գալ և ի գալն գրեսցես ի Բայազիտ տիրացու Գէորգին, որ յորժամ դա անդ մտանէ, մեզ իմացումն տայ, որ մարդ յղեմք առ ի Սալա-

191 «Աիմօննիգատէ» կամ «իլիմօննիգատէ» բառս ֆանիցս հիշատակված է մահտեսի Հովհաննէս ամիրայի նամակներում: Տրամաբանորեն այն պիտի «լիմօնի առևտրով զբաղվողի որդի» նշանակի (լիմօն+«նի» (թրփ.) արհեստ ցույց տվող մասնիկ, իսկ «գատէ» (թրփ.) որդի): Վարդան Գրիգորյանը, ներկա շարփի Բ. գրփի վավերագրերից մեկը ծանոթագրելիս, նշում է, որ «Իլիմօննի օղլի մահտեսի Հովհաննէս ամիրան «միսթավէլի» և վերակացու է կարգվում հանգուցյալ Մուրադյան Հակոբ ամիրայի փոխարեն» (ԴՉՊ, նոր շարփ, գիրք Ա., հ. Բ., էջ 781, ծնթ. 270): Ծանոթագրությունից դատելով՝ մահտեսի Հովհաննէս ամիրան ունի Իլիմօննիի որդին է, որից էլ «Իլիմօննէան» ձևով հիշատակումը (վավ. 1560): Կարծում ենք՝ բառս անձնանուն համարելու որևէ հիմք չկա, ուստի տրամաբանական կլինի կարծելը, որ արհեստ ցույց տվող բառը ազգանվան նշանակություն է ձեռք բերել, ինչպես օրինակ՝ բասմանի (թրփ. տպագրիչ) - Բասմաշյան, բոյանի (թրփ. ներկարար) - Բոյաշյան, դագանչի (թրփ. պղնձագործ) - Դագանչյան և այլն:

մաթ բերել: Այլ այն մի բանն վաճառք Սալիանին մոռացաք գրել ամիրայն, այլ որովհետև Հրապարակեալ էմք գալ ի Սուրբ Աթոռս, երբ գայցէ բերանով ասելոց էմք: Նաև ի կողմանէ Հին վաթմանոցին, որ գրեալ էիր, թէ վեց փարայով առնում, ահա մինչ ի ԳՃ. (300) թու մանի առնուս և պատրաստես, որ պիտոյ է մեզ:

Եւ վաճառք գալոյն, թէ յետ անցման շողին և երկրիս Հանդարտելոյն, ելեալ գայցես: Գրեալ էիր թէպէտ, թէ ի Պօլիս մանգիլ եկաւ յունքէ գիր չկայր, բայց փայեկին Հետ ի Պօլիս պատրիարգէն և նուիրակէն և յիզմիրու ևս գրեանք Հասին մեզ, սակայն ձեռնաՀաս չգողով պատասխանիքն յետոյ էմք գրելոց:

Ծանուցումն վաճառք յետանալոյ փայեկին պատճառաւ կարճութեան ժամանակին և թէ ահա ուխտաւորքն ճանապարհորդեալ ընդ նոսա յղեցաք: Բայց մէկն ի յուխտաւորացն ստամպօլցի մահտեսի Եզեկիէի որդի սրմաքէչ պարոն Պօղոսն ի պէտս խարջրդի, ի Սրբոյ Աթոռոյս էառ մէկ Հարիւր յիսուն զուռուշ և ի ստամպօլցի Յովաննէս վարդապետէն ևս էառ մէկ Հարիւր զուռուշ, որոց Բ. (2) ղալամից ջամն է, ԲՃԾ. (250) զուռուշ և սանատ ետ մեզ, որ ի տեղդ քեզ Հասուցանէ, մեք ահա զնորին սանատն ի թղթոջս եղեալ առ քեզ յղեցաք, զոր ցուցանես նմա և ԲՃԾ. (250) զուռուշն առնուս և գրեալ ծանուցես մեզ և ծանուցումն երկրիս մերոյ զորպիսութեանց:

Գրեցաւ յամնոյս ԻԳ. (23):

^{1190*} **Ի Կարս** – Թուղթ ի Կարս առ Գէորգ աղայն. յիշումն յառաջ քան զայս գրեցեալ թղթոյն մերոյ և թէ յաղագս մովին, որ յառաջմէ գրեցաք, թէ յղել մինչև Հիմա դեռ չէրեւեցաւ, այժմ որով կերպիւ և իցէ ի դիպօղ ժամու յղեսցես, որ սպիտակացուցանելոյ ժամանակն չանցանի: Եւ թէ վաճառք Հարկաւորութեան սրբոյ Տանս յիսուն թիլանի լաւ ճրագու առեալ, ի յաշնան եղանակին յղեսցես ի Սուրբ Աթոռս: /505/ Համառօտ ծանուցումն զորպիսութեանց երկրիս մերոց: Եւ թէ յանցեալ ամին, որ վաճառք մեր ձիթաՀանքին ղօշայ գերան և պօղօսիկացուս ինդրեցաք, յայնժամ վաճառք իւր պատճառի արգելեցաւ, Հարկէ և այժմ, զի Հոգ տարեալ յղեսցէ զայն, որ ի ձմերանն խափան չմնասցէ գործն:

Գրեցաւ յամնոյս ԵԼ:

¹¹⁹¹ **1797 թ., յուլիս** – Թուղթ ի Մոսկով, առ Պլատոն արքեպիսկոպոսն Ռուսաց վաճառք սիրոյ, Հանդերձ ազդարարութեամբ աղէտիցն մերոց, և յանձնարարութեամբ Յովսէփ արքեպիսկոպոսին¹⁹²:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2483-84

¹⁹² Մոսկովայի Պլատոն արքեպիսկոպոսին նամակներ են հղվել դեռևս 1782 թ. (ԳՂ, գիրք Գ., էջ 314-317): Նամակը ներկայացված է նաև ամբողջությամբ (տե՛ս վալ. 1174):

1192 1797 թ., յուլիս - Թուղթի Պետրպօլք, առ Գաբրիել արքեպիսկոպոսն, նման վերին թղթոյդ, սակաւու ինչ զանազան վեճ տեառնդ Գաբրիելի:

Յորմէ քրիստոսապատուէր սիրով Հոգեկանաւ...¹⁹³:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2484

505ա

1193* Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովաննէս վարդապետն, եթէ յանցեալ տարին, որ ի յԱխլցիսայու մոմ գնեցաք վասն սրբոյ Տանս, այժմ կայ առ Գէորգ աղայն ի Ղարս: Գրեցաւ սմա, թէ գրեցաք Գէորգ աղային, որ յղեսցէ ի վանս քո, զոր դու շուտով քիրայով յուղարկեսցես ի Սուրբ Աթոռ, որ սպիտակացուցանելոյ ժամանակն չանցանի:

[Գրեցաւ] յամնոյս ելն:

1797 թ., օգոստոս - Թուղթք առ կայսրն Ռուսաց, առ վեզիրն և առ այլ անձինս

1194* Թուղթք գրեալ ի ռուս - Թուղթ առ Պաւել Պետրովիչ կայսրն Ռուսաց, ի շնորհատուութիւն կայսերութեանն և ի ինդիր, զի որպէս նախնիքն շնորհեալ են Հրովարտակ Սրբոյ Աթոռոյս նստող կաթողիկոսացն, նոյնպէս և ինքն շնորհեսցէ մեզ այժմ:

Գրեցաւ յամնոյս ելն: Տէ ս ի մեծ տետ[եր] յեր[ես] 2291:

1195* Թուղթ առ վեզիրն կայսերն Ռուսաց, քնեազ Ալէքսանդր Ասդրէիչ Բեզպօրօտկին. յիշումն երախտեաց առաջին վեզիրին և յորդորումն ի նոյն, զի ինքն ևս ընկալացի ի նոր կայսերէն գհրովարտակ ողորմութեան, ծանուցումն զդառնաղէտ անցիցն կողմանցս և յանձնարարութիւն վասն նուիրակ Յովսէփ պետին: Տէ ս ի նոր տետ[եր] յեր[ես] 2386:

1196 Թուղթ առ Պլատոն արքեպիսկոպոսն Ռուսաց. ծանուցումն աղէտիցն կողմանցս և յանձնարարութիւն վասն Յովսէփ պետին:

Տէ ս ի նոր տետ[ետեր] յեր[ես] 2483:

1197 Թուղթ ի Պետրպօլք առ Գաբրիել արքեպիսկոպոսն, նոյնպէս մտօք վերին թղթոյ: Տէ ս ի նոյն տետ[եր] յեր[ես] 2484:

1198 Թուղթ առ նուիրակ Յովսէփ վարդապետն Հաշտարխանու, եթէ վերջին թուղթն քո գրեալ ի Թիֆլիզու՝ ձեռամբ Ութրութին և Շաքարօյին էՀաս, որոյ զպատասխանն գրեալ ի յու-

¹⁹³ Պետրեպոլի (Պետերբուրգի) Գաբրիել արքեպիսկոպոսին նամակներ են հղվել դեռևս 1782 թ. (ԻՀՊ, գիրք Գ., նույն տեղում):

Նիսի 30 ընդ նոսա ուղարկեցաք, յորմէ ոճնէիր իմանալ զսարտարի մերժիլն յերկրէս և կացութիւնն մեր:

Ծանուցումն խնդրեցեալ թղթոցն էթէ, որ առ նորանիստ կայսրն առ վէզիրն և առ երևելի անձինս տեղւոյդ, ահա Հոգացեալ յղեցաք: Եւ պատուէր, զի նորանց ժողովրդոցն Դարբանդու յերկիրն Ռուսաց, ծանուցանել մեզ, յոր տեղեաց լինիլն նոցին, որ այնու կերպիւ կոնդակ գրիցի առ նոսա, նոյնպէս և գալլիացոց, և Աւետիք պետի զամենայն որպիսութիւնսն պարագայիւք գրեսցէ մեզ ի գիտել:

Տէ ս ի նոր տե[տեր] յեր[ես] 2389:

¹¹⁹⁹ Թուղթ ի Պետրպօլք առ Յովհաննէս աղայն Եղիագարեանն. ծանուցումն վասն անցիցն կողմանցս և կրից մերոց, և վասն թուղթ գրելոյն մերոյ առ կայսրն ի շնորհաւորութիւն ևս և յաղագս Դարբանդու նոր գնացեալ ժողովրդոցն և Յովսէփ վարդապետին յանձնարարութիւն, զի ի միասին Հոգ տարեալ շարժեսցեն զկայսրն ի գութ առ նոսա: Տէ ս ի մեծ տետ[եր] յեր[ես] 2294:

¹²⁰⁰ Թուղթ ի Պետրպօլք առ Մանուչարեանց պարոն Մարգարն, ըստ մտաց վերնոյ թղթոյդ. յանձնարարութիւն վասն Յովսէփ պետին:

Տէ ս ի նոյն տետ[եր] յեր[ես] 2295:

Չայս վերոյ գրեալք թուղթքն ընդ Քեալ Յովաննէսի որդւոյ Պետրոսին յղեցան ի Թիֆլիզ, որ անտի յղեսցեն առ Յովսէփ վարդապետն ի Հաշտարիան:

Գրեցան յամնոյս էլն:

505Բ

¹²⁰¹ Ի Խօյ - Թուղթ ի Խօյ առ Իսաջան աղայն, ի պատասխանի նորին գրեցեալ թղթոյ և ծանուցումն զորպիսութեանց երկրիս մերոյ: Եւ թէ յայդմ կողմանէ այլ և այլ Համբաւս լսեմք և կամք ի տարակուսի, և պատուէր, զի այնմ կողմանց, թէ զթաւրիզու, թէ զԽօյու, և թէ զիւրեանց կացութեանն, զոր ինչ ուղիղն է, գրեալ ծանուցէ:

Ողջոյն եղբօրն պարոն Յակոբին և պարոն Ղազարին:

Գրեցաւ յամնոյս [օգոստոսի] Ա. (1):

¹²⁰² Ի Խօյ - Թուղթ ի Խօյ առ Իսաջան աղայն. յիշումն յառաջքան զայս գրեալ թղթոյն մերոյ, և ծանուցումն թղթոյ Հասանելոյն ընդ իսանումի մարդոյն, յորում թէ տեղւոյդ զորպիսութիւնն և զքո նեղութիւնն ի կողմանէ պաշանջմանց, որ գրեալ էիր, իմացաք: Նաև ի կողմանէ տիրացու Ղազարին, որ խնդրեալ էիր յանձնարարութիւն գրել ի Կարին առ ոմանս, առ այն գրեցաւ, թէ գրելոց եմք: Եւ թէ մեր Յակոբ վարդապետի թուղթն, որ յղեալ էիր,

առ մեզ էհաս, և վասն քո, որ բռնօթի էիր ինդրեալ Աստուծով ի գնալն մեր ի Սուրբ Աթոռն, ընդ Հաւատարմաւ յղելոց եմք:

Չայս վերոյ գրեալք երկու թուղթքս ի յԵրևանու յղեցան: Յամնոյս Դ. (4):

¹²⁰³ **Ի ԹԻՖԼԻՊ** - Թուղթ առ արքայորդին Վրաց՝ Գեօրկի խանն, թէ թուղթդ Հաքարոյին էհաս առ մեզ յԵրևան, ուր եկեալ էաք ի տեսութիւն նորանիստ խանին: Իմացաք զինդիրդ, որ լսելով թէ յերկրեկոյսաւարի գնացեալ աջ Սրբոյն Ստաթէի Առաքելոյն և մասն Սրբոյն Թէոդորոսի անկեալ է ի ձեռս քահանայի ուրումն ի Խօյ, և ի նմանէ առաջնորդ տեղւոյն առեալ իցէ: Գրեալ էիր փոյթ տանիլ վասն որոյ առաջիկայ աւուրքս գրելոց եմք առ Խօյայ և Սալմաստայ առաջնորդան, զի թէ մին ի նոցանէ և կամ այլ ոք առեալ իցէ, գրեսցեն մեզ զորպիսութիւնն, և մէք ծանուցանելոց եմք քեզ:

Բայց և լուաք, թէ Սատրղ խանի եղբայր Ջաֆար խանն զօրօք գայ ի վերայ Խօյու, և խօյեցիք շփոթեցեալք են: Վասն որոյ նայելոց եմք, զի մրրիկն անցցէ և ապա գրեսցուք զգրելին մեր, զի ըստ պատեհութեան ժամանակին Հոգացողութիւն լիցի:

Գրեցաւ յԵրևան և յղեցաւ յամնոյս Թ. (9):

^{1204*} Թուղթ առ Գեօրկի արքայորդին Վրաց, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, որ ընդ Գեօրկի Ղտէլ վրացի քահանայի միոյ գրեալ էր և ինդրեալ էր վասն նորա զժողովարարութեան կոնդակ տալ, իբր ժողովել զտուրս ի փրկանս գերեաց իւրոց: Առ այն գրեցաւ, թէ այժմոյս գերետեարքն բազումք են և դա չէ միայն, որ դորա կոնդակ շնորհեսցուք մինչև ցայժմ՝ Հարիւրաւորք եկեալ են և ամենեցուն բացեմք ասացեալ՝ գիտելով, որ ի գլուխ ելանելոյ բան չէ: Բայց ի պատիւ երեսոց քոց ԺԵՌ. (15000) դիան դրամ ետուք և արձակեցաք:

Գրեցաւ յամնոյս ԺԳ. (13):

¹²⁰⁵ **Ի ԽՅՅ** - Թուղթ ի Խօյ առ Իսաջան աղայն. յիշումն յառաջ քան զայս գրեալ թղթոյն մերոյ և ծանուցումն թղթոյն առ մեզ Հասանելոյն ընդ փայեկան, յորում, թէ իմացաք զառնել զօրաց ի կողմանցն Թարւիզու դէպ յայդր առ ձեզ, և զտեղւոյդ իշխողի զօրաժողով լինիլն: Բայց որ Հաճի Նաւրուզալի բէկն տանէն Բ. (2) փոքր թուղթ էիր յղեալ ընդ թղթոյդ՝ Հասուցանել առ նա, ի խան նատիլ Հասան խանին ընդ այլ փախուցելոցն փախեալ և նա ի Բամբակաձոր, բայց լսեմք որպէս թէ ի վերայ Բայազիտու գալոց են յայդր: Վասն որոյ և զայն թուղթսն եդեալ ընդ թղթոյդ յղեցաք առ քեզ:

Իսկ որ վասն Վրաց կողմանէն Հարցեալ էիր, այս մօտակայ աւուրքս մարդ եկն ի նմանէ, որով թուղթ գրեալ առ մեծամեծսն Երեւանու, խնդրէր զտեղւոյս եղեալ գերիսն: Առ այն ընդդիմական ջուղապ գրեցին նմա, տեսցուք, թէ որպէ՛ս է լինելոց:

Եւ վասն տիրացու Ղազարին, որ գրեալ էիր կրկին գյանձ-նարարութիւն գրել ի Կարին, առ այն, թէ գրելոց եմք: Նաև վասն քո, որ բռնօթի էիր խնդրեալ, ահա յղեցաք ի Բայազիտ առ տիրացու Գէորգն, որ Հաւատարմաւ Հասուցէ առ քեզ:

Գրեցաւ յամնոյս ԺԴ. (14):

1797 թ., օգոստոս - Թուղթք ի Բաղէշ և Բայազիտ

506ա

1206 **Ի Բաղէշ** - Թուղթ ի Բաղէշ առ գանձապետն Սրբոյ Աթոռոյս՝ մահտեսի Ամիրն, ի պատասխանի թղթոյն և յիշումն թղթոյն առ մեզ Հասանելոյն ընդ Հասարակական թղթոյն, յորում թէ իմացաք զառաջնոց թղթոցն մերոց առ ձեզ Հասանիլն և զչարագործ սևագլխին այնորիկ կրկին կատաղիլն, բայց որպէս գրեալ էիք, այնպէս արասցուք:

Եւ թէ այդ տեղացի տէր Սարգիսն, որ զտղայն յանցեալ տարին եբեր ի Սուրբ Աթոռս առ ի կարդալ ի դպրոցին, տղայն կարդալոյ շնորհք չունի, վասն որոյ Հարկիւ ասասցես տէր Սարգսին, որ շուտով մարդ յղէ զտղայն տանի, ապա թէ յետանայ, անկարծիք փախչելոց է և տաճկաց Հանդիպեալ տարեալ ծախելոց են:

Գրեցաւ յամնոյս ԺԵ. (17):

Պատասխան նամակ Բաղէշի գանձապետ պարոն Յովհաննէսին, որը ցանկութիւն էր յայտնել ուխտի գալ Ս. Էջմիածին: Յանձնարարում է նուիրակ Յովհաննէսին եւ նրա միւս գործակից Յովհաննէսին տալ նրանց Հասցեագրուած նամակը (Ա./2): Ներկայացուած է նաեւ վերոնշեալ նուիրակ Յովհաննէսի եւ նրա գործակից Յովհաննէսին ուղղուած գրովթեան Համատուտագրութիւնը՝ կապուած նրանցից լուր չունենալու, գանձապետ Յովհաննէսի միջոցով նրանց եւ թուղթ ուղարկելու Հետ եւ թէ միջոցներ ո՛նեն, ապա վերջինիս Հետ յղէն Մայր Աթոռ (Ա./3):

1207* **Թուղթ առ Բաղիշու Ե. (5)** խորան եկեղեցւոյ ժողովուրդան, ի պատասխանի մահսարին իւրեանց, որք խնդրեալ էին, զի զառաջին մանսարն, զոր գրեցին ամբաստանութեամբ զչիք առաջնորդէն իւրեանցն չյայտնիցեմք նմա զայն մանսարն, զի մի վնաս կրեսցեն ի նմանէ: Յամնոյս ԺԶ. (17):

1208 **Կոնդակ աւագերիցութեան ի վերայ Թիֆլիզու Բէթղէճէմ՝ եկեղեցւոյ տէր Ստեփան քահանային**, որոյ ի մեռանիլ Հօրն ի պարսկական Հինիցն, ի տեղի նորա ընտրեալ էին լինիլ աւագերէց: Տէ ս ի մեծ տետ[երց] յեր[եան] ԺԷ. (17)⁹⁴:

¹⁹⁴ Թիֆլիսի Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցուն անդրադարձել է Պարոյր Մուրադյանը. նա, վկայակոչելով Անթիլիասի հավաքածուի 1437/8 Հ^տ 74 «Գանձարան»-ի հիշատակարան-

1209 **Ի Բայազիտ - Թուղթ ի Բայազիտ առ Տեր-Վաչանեան տիրացու Գէորգն, եթէ գչորս ամաց գանձանակադրամն, որ էր ԲՃ. (200) զօլաթայ, ժողովեալ էիր և մեզ ծանուցեալ կոնդակ շնորհակալութեան գրեալ ի վերայ Հասարակութեանն: Ահա գրեալ յղեցաք ի ձեռս քո՝ առ ի ընթեռնուլ տալ յեկեղեցուցն:**

1210 **Թուղթ ի Բայազիտ առ տեր Վարդան քաւանայն նոյնպէս ըստ մտաց վերնոյ թղթոյն, թէ զձեր եկեղեցւոյ գանձանակադրամն, որ էր իննուսուն զօլաթայ, Տեր-Վաչանեան տիրացու Գէորգն մեզ ծանուցեալ էր և կոնդակ ինդրեալ: Վասն որոյ և մէք զկոնդակն գրեալ յղեցաք, որ ընթեռնուլ տայցէք յեկեղեցուցն:**

Գրեցան յամսոյս ԺԷ. (17):

1211 **Թ. Կոնդակ առ Բայազիտու Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ Հասարակութիւնն. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն գանձանակադրամին իւրեանց, որ է ... զօլաթայ:**

1212* **Կոնդակ առ Սուրբ Կարապետ եկեղեցւոյ ժողովուրդան, նոյնպէս օրհնութիւն և շնորհակալութիւն վասն չորս ամաց գանձանակադրամին իւրեանց, որ է ... զօլաթայ:**

Յամսոյս ԺԷ. (17):

1213 **1797 թ. 17 օգոստոսի - Թուղթ առ Բաղիշու Ե. խորան եկեղեցւոյ ժողովուրդն, ի պատասխանի մանասարին իւրեանց, որք ինդրեալ էին՝ զի զառաջին մանասարն, զոր գրեցին ամբաստանութեամբ զչիք Յովաննէս չառաջնորդէն իւրեանց (զոր և բա-**

նր, նշում է, որ տրամաբանորեն եկեղեցին սրանից առաջ պիտի կառուցված լինէր: Հիշատակարանի՝ եկեղեցուն առնչվող հատվածը հետևյալն է. «գրեցաւ սայ ի թվականութիւնս Հայոց ՊՁԶ. (1437)... ի մայրաքաղաքս Տփղիս, ի յանապատս Բեդղահեմ, ի դրան Սուրբ Աստուածածնիս...»: Եկեղեցին «Բեթղեհեմ» է կոչվել հիմնադրւոյանը Երուսաղեմի Բեթղեհեմից հող բերելու և գործածելու համար: Հայտնի է, որ նրա կառուցումը բավական երկարատև է եղել: Շինարարական, միգրացե նաև՝ նորոգչական աշխատանքներ են ընթացել XVII-XVIII դդ., իսկ 1898 թ. մի արձանագրոյցյան համաձայն՝ Հովհաննէս Ստեփանյան-Հովհաննյանի կտակած 200 և եկեղեցու միջոցներից 1500 ռուբլով կառուցվել է ավագ խորանի ֆարաշեն խաչկալը (Պ. Մուրադյան, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, էջ 71):

Թիֆլիսի Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցու կիսավեր որմերին պահպանված են եղել առավելապես XVII դարի վիմագրեր: Այս նույն ժամանակաշրջանում սրբավայրում նաև ձեռագրեր են ընդօրինակվել, որոնցից 1639, 1641 և 1643 թթ. ավետարանների հիշատակարաններից Պ. Մուրադյանը հատվածական մեջբերումներ է արել (տե՛ս նշվ. աշխ., էջ 71-72): Վերջինիս բնորոշմամբ՝ «հայոց դավանության և մշակույթի երեւելի կենտրոնատեղի» եկեղեցին գործել է նաև XVIII դարավերջին: Ղուկաս Կարնեցու՝ 1797 թ. կոնդակը՝ տեր Ստեփան Բահանային հոր փոխարեն եկեղեցու ավագերեց նշանակելու մասին, սավածի վառ օրինակն է, իսկ եկեղեցու պատմության համար՝ իմֆնատիպ աղբյուր:

Մեկ այլ վավերագրից տեղեկանում ենք, որ տեր Ստեփան Բահանան նշանակվել է հոր՝ տեր Մխիթար Բահանայի փոխարեն, որը սպանվել էր պարսկական զորքերի կողմից (տե՛ս վավ. 1216):

նադրեցաք) չյայտնիցեմք նմա զայս մանասարն, զի մի ի նորին աղայէն վնաս կրեսցեն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 102բ

1214 **1797 թ. օգոստոս - Թուղթ ի Կարին առ մահտեսի Ալանն աղայն և առ մահտեսի Սերօքն և առ մեր գործակալ պարոն Հայրապետն.** յանձնարարութիւն վասն տիրացու Ղազարին Եղիազարեան, որ ի քանիս ամն ի Խոյ առ Իսաջան աղայն գողով պշտմ գնացեալ էր ի Կարին ի տուն իւր, որպէս զի ինամատար և ահնաժու լիցին նմա, զի մի յումեքէ նեղութիւն ինչ Հասցի նմա:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 103աբ

1215 **Թուղթ ի Բաղէշ առ Հինգխորան եկեղեցոյ ժողովուրդն վասն իւրեանց առաջնորդ Յովաննէս վարդապետին, զորմէ քանիցս Հասարակութեամբ գանկատս էին գրեալ, և սրբազան ընդ բռնիւ արարեալ զնա եբեր աստ, և յետ խրատելոյն, արձակեաց ի կապանացն, և խիլայեաց, իսկ ողորմելին զկնի բազում աւուրց ի ծանրութենէ օդոյն տեղոյս Հիւանդացեալ վախճանեցաւ:** Եւ մինչ սպասաւորն դառնայր, այս Թուղթ ընդ նմա գրեցաւ¹⁹⁵:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 103բ-4ա

1216 **1797 թ., օգոստոս - Կոնդակ աւագերիցութեան վասն Թփֆլիզու Սուրբ Բեթղէշէմ եկեղեցոյ տէր Ստեփան քաշանային, որոյ Հայր տէր Միսիթար աւագ քաշանայն մինչ սպանեցեալ էր ի պարսկական զօրացն յարուցելոց ի վերայ քաղաքին, այժմոյս որդին ընտրեցեալ էր կարգիլ ի տեղի Հօրն:**

Յորմէ ժամանեսցէ Թուղթ սիրոյ... Գրեցաւ ի Թուականիս մերում ՌՄԽԶ. (1797) եւ յօգոստոսի:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2484-85

1797 թ., օգոստոս - Թուղթք ի յՈւռումէլի, ի յԱղբանա և ի Թօխաստ

506ա

1217 **Ի յՈւռումէլի - Թուղթ առ Ուռումէլու նուիրակ Դանիէլի վարդապետն.** յիշումն յառաջ քան զայս գրեալ թղթոյն մերոյ ընդ ուխտաւորացն և ի պատասխանի երկրորդ թղթնոյն այժմոյս

¹⁹⁵ Բաղէշի Հինգխորան եկեղեցու ժողովրդին հղված նամակի բովանդակության առանցքով դարձյալ «անարժան» առաջնորդ Հովհաննէս վարդապետն է, որն իրեն հասանելի պատժից հետո հիվանդացել ու վախճանվել էր: Այս մասին գրված նամակի ամբողջական հրատարակությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 658-660: Բաղէշի Հինգխորան եկեղեցու ժողովրդին՝ իրենց հղած մանսարի առթիվ և բանադրված, տիրահոշակ Հովհաննէս առաջնորդի ամբաստանության վերաբերյալ նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 657-658:

գրեցելոյ, յորում թէ իմացաք զՀանդերձելոյդ գնալ ի յՈւրուսջուխ, և զգանձապետին մերոյ՝ զմահտեսի Գրիգորին թուղթն |506բ| Հասուցանելդ առ ինքն: Բայց այժմ, որ կրկին յիշեալ էիր զթուղթ ինդրելդ առ Ադրանայու գանձապետն մեր Ղազար ամիրայն և Բաբայեկն և առ նոցայինն ահա գրեցաք և ի պատրաստի ունիմք ընդ ադրանացի Չաքարիայ ամիրային յղել, որ նա ևս զկնի աւուրց ուղևորելոց է դէպ յայդր:

Ողջոյն գանձապետ մահտեսի Գրիգորին Անուշեան:

1218* **Ի յԱդրանու** – Թուղթ ի յԱդրանու առ մահտեսի Գրիգոր և մահտեսի Մկրտիչ ամիրայն, ի պատասխանի թղթոյ նոցա, որ ընդ Չաքարիայ ամիրայն՝ փեսային իւրեանց գրեալ էին. ծանուցումն վասն կորստեան շահին ի Շուշի և շնորհակալութիւն վասն յղեալ Ծ. (50) ղուռուշ ժամուցին: Եւ թէ վասն Չաքարիայ ամիրային, որ զյանձնարարութիւնս էիք գրեալ սիրով ընդունիլ զնա, ահա ընկալեալ պատուով վերադարձուցաք յետս:

Գրեցաւ յամնոյս Ի. (20):

Օրհնութեան եւ շնորհակալութեան նմանօրինակ նամակներ Ադրանայի գանձապետներ Ղազար ամիրային եւ նրա եղբայր Բաբայեկ աղային. «վասն բարերարութեանցն ցուցելոց առ նուիրակ Դանիէլ վարդապետին» (Ա./2), ուխտաւորներ պարոն Յովհաննէսին եւ պարոն Խոջիկին. «վասն Ա. (1) Ստամպուլու ոսկի տալոյն» (Ա./3), Հաճի Խաթուն տիկնոջը. «յաղագս Ա. (1) ժամարարի շապիկ պողջայովն տալոյն» (Ա./4), պարոն Սեթրակին. «վասն Ա. (1) Ֆստիսի ռուպիէ ոսկի տալոյն» (Ա./5), Իսկուհի խաթունին. «վասն Ա. (1) ոսկի տալոյն» (Ա./6), դիւպէստճի պարոն Մանտիկին. «վասն կէս ոսկի նուիրելոյն» (Ա./7), Ուռուսջուխի պարոն Էսայուն. «յաղագս Կ. (60) փարայ ընծայելոյն» (Ա./8), Նախիջեանցի պարոն Յովհաննէսին. «վասն Ա. (1) պաճախու ոսկի տալոյն» (Ա./9), Նախիջեանցի պարոն Գալուստին. «վասն Բ. (2) ղուռուշ նուիրելոյն» (Ա./10), Նախիջեանցի պարոն Նիկողոսին. «վասն Բ. (2) ղուռուշ տալոյն» (Ա./11), Նախիջեանցի պարոն Գէորգին. «վասն Հ. (70) փարայ նուիրելոյն» (Ա./12):

1219* **Ի Թօխատ** – Թուղթ ի Թօխատ առ նուիրակ Բարսեղ վարդապետն, եթէ զոր ինչ թուղթս գրել ես առ մեր Թադէոս վարդապետն ի նոցա ծանուցանելիսն ծանուցեալ է, որով և իմացաք զգալը ի Թօխատ քաղաքդ: Իսկ այժմոյս գրութիւնս մեր, որ առ քեզ այս է, զի սոյն Ղրըմեցի գրաբեր տէր Պետրոսի որդի մահտեսի Սիմէօնս աստանօր ետ մեզ երեք Հազար եօթն Հարիւր յիսուն ղուռուշ նոր դրամ, որ ի Թօխատ քաղաքոջդ առնուցու: Եւ պատուէր Հարկիւ, զի ի գնալն նոյն մահտեսի Սիմէօնին անդր և ի ցուցանելն զթուղթս մինչ ի ԺԱ. (11) օրն վատայ, զվերոյ գրեալ նոր դրամն Հատուցէ նմա և զփօլիցագիրն մեր առ ինքն պաշեպէ: Եւ թէ զայնքան դրամն ի պատրաստի չունիցիս առ քեզ, պարոն Հայրապետի օրթախ պարոն Թումանն, որ յայդրէ, որքան ինչ

պակասն իցէ, ի նմանէ առեալ լրացուցես և փօլիցայ արասցես ի Կարին պարոն Հայրապետին վերայ, նա վճարեսցէ յարդեանց Սրբոյ Աթոռոյս, զի նմա եւս եմք գրելոց ի կողմանէ այսր:

Գրեցաւ յամնոյս Ի. (20):

1797 թ., օգոստոս - Թուղթք ի Կարին, ի Կարս և ի Ղօշա-
վանք

507ա

1220 Ի Կարին - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն. յիշումն յառաջմէ գրեալ թղթոյն մերոյ ի յուլիսի ԻԴ. (24), յորում թէ յառաջ քան զայս Ղուբեցի տէր Պետրոսի որդի մահտեսի Սիմէօն ոմն եկն ի Սուրբ Աթոռս յուխտ և ետ մեզ աստանօր երեք Հազար եօթն Հարիւր յիսուն ղուռուշ, և փօլիցագիր ինդրեաց ի Թօխատ առնուլ: Մէք թէպէտ կամեցաք, որ քեզ վերայ փօլիցայ առնեմք, բայց նա որովհետև Մշու վերայ պարտէր անցանել, ինդրեաց ի Թօխատ առնուլ: Վասն որոյ և մէք ի վերայ տեղոյն նուիրակ Բարսեղ վարդապետին ետուք զփօլիցագիրն, սակայն երկբայս եմք, թէ նորա մօտն այնքան նոր դրամ չգտանիցի. գրեցաք, որ եթէ չլինիցի, ընդ քո վաճառակից պարոն Թումանին քեարսագի արասցեն և ի նմանէ առեալ, Հատուցէ զպակասն և քեզ վերայ փօլիցայ արասցէ: Ուստի գրեմք քեզ, զի եթէ Բարսեղ վարդապետն յայսմ կողմանէ ի պարոն Թումանէն դրամն առեալ իցէ և ի վերայ քոյ փօլիցայ արասցէ, Հատուցես և մեզ գրեալ ծանուցես:

Այլև այդ քաղաքացի տիրացու Ղազարն, որ ի Խոյ Իսաջան աղայի մօտն էր, այժմ դարձեալ է ի քաղաքդ, որոյ աղագաւ Իսաջան աղայն գրեալ էր մեզ, զի ի տեղդ ոմանց յանձնարարութիւն գրիցեմք: Վասն որոյ և մէք ահա յատուկ թուղթ գրեցաք ի վերայ մահտեսի Ասլան աղային և Գօրօեան մահտեսի Սերօբն և քոյ, և յղեցաք ընդ թղթոյս, զոր ի միասին ընթերցեալ ըստ կարողութեան ձերոյ այն տիրացու Ղազարին մուղայեթ լիջիք:

Փոքրիկ թուղթ մի ևս առ նոյն Ղազարն եմք գրեալ, զայն ևս տացես նմա: Եւ թէ նայն գրաստուց մերոց պակասեալ է, վասն որոյ գրեմք քեզ, զի ԴՃ. (400) իփչին ձիոյ նայն, ԱՃ. (100) իփչին ջորոյ, ԱՃ. (100) իշոյ նայն առեալ յղեսցես: Վասն սրբոյ Տանս յիսուն թիլանի լիտր սիսեռ առցես և ընդ նալին յղեսցես: Եւ թէ Փիլիպպոս ամիրայի ուր լինիլն և զորպիսութիւնն գրեսցես մեզ ի գիտել:

Գրեցաւ յամնոյս ԻԶ. (26):

1221 Թուղթ ի Կարին առ տիրացու Ղազարն, եթէ յառաջ քան զայս մինչ Իսաջան աղայն գրեալ էր մեզ վասն քոյ զյանձնարարութիւն գրելի Կարին, ահա այժմ գրեցաք առ մահտեսի Ասլան աղայն և մահտեսի Սերօբն, և առ մեր գործակալ պարոն Հայրա-

պէսն, զի մուղայէթ և իննամարկու լինիցին քեզ և բանից քոց ձեռնսու:

[Գրեցաւ] յամնոյս ԻԶ. (26):

¹²²² Թուղթ ի Կարին առ մահտեսի Ասլան աղայն և առ մահտեսի Սերօբն և առ մեր գործակալ պարոն Հայրապետն. յանձնարարութիւն վասն տիրացու Ղազարին Եղիազարեան, որ ի բանիս ամս ի Խոյ առ Իսաջան աղայն կայր և այժմ գնացեալ ի Կարին, գրեցաւ սոցա բանիւ Իսաջանին, զի մուղայէթ լիցին նմա¹⁹⁶:

Տէ ս ի փոքր տե[տերց] յե[րես] 501:

¹²²³ Ի Ղարս - Թուղթ ի Ղարս առ Գէորգ աղայն. ծանուցումն յօգոս[տոսի] Թ. (9) գրեցեալ թղթոյն ի նոյն ամսոյ ԺԴ. (14) առ մեզ Հասանելոյ, յորում թէ մոմն, որ յուղարկեալ էիր, զբիրայն և զայլ խարճան ինքնին հոգալով, էհաս առ մեզ, որ էր ԻԵ. (25) լիտր: Իսկ զԳ. (3) լիտր մոմն, որ չարվատարին չկարելով բերել, ի տեղդ է մնացեալ, իհարկէ, զայն ևս յղելոց էս:

Իսկ վասն ձիթահանքի գերանացն, որ փոյթ ունիս բերել տալոյ, մինչև ցաշունն յուղարկել տացես: Բայց վասն ճրագոսին, որ գրած էիր, թէ հոգալոց էմք առ ի ձեռ բերել և յղել, ուստի գրեմք քեզ, զի զբանի լիտր ճրագոս հոգացեալ յղեսցես:

Իսկ վասն վախճանման գանձապետին մերոյ՝ մահտեսի Եղիային, որ գրեալ էիր իմացաք, զոր որդի նորին մխիթարութեան թուղթ էիր ինդրեալ, որ ահա գրեալ յղեցաք ի ձեռս քո տալ ինքեանն ի մխիթարութիւն և ի Հաստատիլ ի գործն գանձապետութեան:

Այլ վասն Աճամօղլի Գրիգորին, որ գրեալ էիր, թէ զՍրբոյ Աթոռոյս վախուժ կէս տունն ծախեցի նմա ՀԵ. (75) ղուռուշի, որոյ աղագաւ զնորին վախուժլամայն ի Հանգուցեալ Մարամէն գրեցուցեալ ինդրեալ էիր: Առ որ գիտասցես, զի վախուժլամայն այն շատ որոնեալ աստ, չկարացաք գտանել, վասն որոյ ի մէջ միայն զթուղթ գրեցաք առ Գրիգորն Հաստատ բանիւք և յղեցաք առ քեզ, զոր տացես ինքեանն:

Եւ թէ ընդ թղթոյս զմի պահարանաւ թուղթ յղեցաք առ քեզ՝ Հասուցանել ի Կարին առ պարոն Հայրապետն, ուրեմն շուտով յղեսցես առ նա:

¹⁹⁶ Մահտեսի Ասլան աղային, Սերօբին, գործակալ Հայրապետին (Կարին), նաև Խոյից Կարին տեղափոխված տիրացու Ղազար Եղիազարյանին հղված հանձնարարական նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 658:

Յղեցաւ սմա մէկ ունաւոր կեօզլուկ: Եւ պատուէր, զի ԲՃ.
(200) թաւանի տախտակ առեալ յղեսցէ:
[Գրեցաւ] յամնոյս ԻՉ. (26):

507Բ

1224 **Ի Ղարս** - Թուղթ ի Կարս առ Գրիգոր ոմն վանն
Աջամօղլի Յովաննիսի դուստր Մարիամի բաժին տանն, զոր այն
Մարիամն տուեալ էր Սրբոյ Աթոռոյս, իսկ այժմ մեր գործակալ
Գէորգն ծախեալ էր սոյն Գրիգորիս ՀԵ. (75) զուռուշի: Վանն որոյ
և զայս թուղթս գրեցաւ նմա, զի միամտեալ զտունն ինքն ժառան-
գեսցէ:

Գրեցաւ յամնոյս ԻՉ. (26):

1225 **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանիցն առաջնորդ
Յովաննէս վարդապետն. ծանուցումն զորպիսութեանց երկրիս
մերոյ և թէ տեղոյս խանն, որ ի Թէհրան ի պատանալի էր, այժմ
գրեալ էր մեզ, թէ զկնի աւուրց գալոց եմք դէպ ի Հատրպէճան
ընդ Պապա խանին:

Գրեցաւ սմա ևս, որ ԷՃ. (700) կամ ՉՃ. (600) տեղոյն սո-
մար գարի առեալ յղեսցէ: Եւ եթէ դրամ ևս Հարկաւորիցի ի պէտս
զնոյնն, ինդրեսցէ ի մէնջ, որ աստի յղիցուք:

Գրեցան թուղթքս յամնոյս ԻՉ. (25):

1797 թ., սեպտեմբեր - **Թուղթք ի յԱրուսիս**

1226 **Ի յԱրուսիս** - Թուղթ առ Սրբոյն Թօմայի Առաքելոյ
վանիցն առաջնորդ Թօմաս վարդապետն. յիշումն յառաջմէ
գրեալ թղթոյն առ մեզ, որով Հարցեալ էր ի Սուրբ Աթոռս գալոյ,
բայց յայնժամ գրեցաւ, թէ յառաջիկայ աշնանն գայցես: Եւ թէ
այժմոյս Աբրահամ վարդապետն, որ առ քեզ է, թուղթ էր գրեալ
մեզ յայտնելով զփափագ իւր գալ ի Սուրբ Աթոռս, բայց որովհետև
դու ևս գալոց էիր ի յաշնանս, գրեցաք նմա, որ ընդ քեզ ելեալ
եկեսցէ:

Գրեցաւ յամնոյս Գ. (3):

1227* Թուղթ ի Սուրբ վանան Թօմայի առաքելոյն առ Աբ-
րահամ վարդապետն. յիշումն գրեալ թղթոյն ի յօգոս[տոս] ԺՉ.
(16), յորում եթէ իմացաք զփափագ սրտի քո առ ի գալ ի Սուրբ
Աթոռս: Բայց Թօմաս վարդապետն, որ տակաւին արգելեալ է
զքեզ ի գալոյ, բարուք է արարեալ զի ի գալն ընդ իւր բերցէ: Եւ
պատուէր, զի ի գալն Թօմաս վարդապետին, ընդ նմին ելեալ
եկեսցէ ի Սուրբ Աթոռս:

[Գրեցաւ] յամնոյս Գ. (3):

1797 թ. 13 օգոստոսի - Թուղթ առ Գիօրկի արքայորդին Վրաց, ի պատասխանի թղթոյն, որ վասն գերետէր վրացի քաւանայի միոյ խնդրեալ էր ժողովարարութեան կոնդակ տալ:

Յորմէ սիրով և օրհնութեամբ և խաղաղաւետ սուրբ ողջունիւ ծանուցումն լիցի յարգամեծար սիրելոյդ իմոյ, քրիստոսասէր և նովիմբ զօրացեալ բարձրապատիւ Գիօրկի խան արքայորդոյդ:

Չի թուղթ ձեր ընդ Գիօրկի Ղդէլքաւանային էւսա առ մեզ, և ընթերցաք զբանսդ, որ գրեալ էիր տալ նմա զկոնդակ ժողովարարութեան՝ իբր ժողովել նորա զտուրս ի փրկանս գերեաց իւրոց:

Արդ, պատուական սիրելիդ իմ, գիտեմք զի բազմիցս աշխատ առնեն զքեզ, և դու բարեմտաբար խոնարհիս յաղաչանս նոցա, սակայն ի վաղանցեալ տարիսն, որ երբեմն վասն վրացի քաւանայի միոյ խնդիր գրեցեր մեզ, մէք կոնդակ ետուք նմա, և նա ի Մեծն Պօլիս յանդգնաբար խօսիւք վարեցեալ առ ժողովուրդն, այնր աղագաւ եթէ զի՛նչ բաստանս և գլխացաւութիւնս Հասուցին գործակալաց մերոց և մեզ իսկ, յառաջագոյն ծանուցեալ էմք յարգութեանդ: Իսկ յայնմ ժամանակի, որ գերետեարքն սակաւք էին, և ազգին մերոյ փոքր մի կարողութիւն գոյր, այլևս տասանց մէկին կոնդակ տալ լինէր, բայց այժմ գերիքն անթուելիք և գերետեարքն բիւրաւորք՝ թէ յայդրուստ և թէ ի իշամնայու և ի Ղափանու և յայլ տեղեաց, զի՛նչ կարեմք օգնել մէք բիւրաւոր գերետեարցն:

Եւ այդ քաղաքիդ գերեաց բազմութիւնն ի մեր ողորմելի ազգէն է, որ առ որ նկատեալ մեր, թէ եթէ միոյ կամ երկուց թուղթս տայցեմք, ոչ ևս կարեմք գլուխ թափել, և յազգէն մերմէ ևս արհամարհանք է յառաջանալոց: Ի նախանցեալ տարւոյն Հետէ խափանեցաք զթուղթ տալն: Քանզի յառաջ քան զամենեսեան Նորաշինու տէր Յակոբ աւագ քաւանայն եկն առ մեզ ամենայնիւ վտանգաւոր և աղէկիզական կերպարանօք, որ մեզ ծանօթ էր յառաջամէ և երևելի անձն, խորհելով | 11 | մեր զապագայն, նմա իսկ ոչ ետուք զթուղթ, այլ ըստ կարելոյն մերոյ զմանաւոր շնորհ ինչ ցուցեալ ուղևորեցաք:

Յանմէտէ ևս Հարիւրաւոր գերետեարք զթուղթս են խնդրեալ և բաց եմք ասացեալ գիտելով որ ի գլուխ երանելոյ բան չէ: Քանզի մէք իսկ, որք զանհուն վնասս կրեալ աստ և յայդր և ի մէջ օձից և կարճաց միշտ նեղեալ գոլով և բազում պակասութիւնս ունելով ոչ վստահանամք զբաւական օգնութիւնս խնդրել, գիտելով զի և նոքա Հայթայթանօք ապրին, զիա՛րդ վասն Հազարաւոր անձանց կարեմք հրամայել, թէ տուրս տուք: Այլ զի ի ձերդ ազգէ սակաւք են գերի գնացեալ և սեպհական գաւառքն ձեր Աստուծով գերծան ի յանօրինաց յայնցանէ, և ի շինութեան են, եթէ փոյթ լիցի նոցա, նոքա կարեն զսակաւաւոր գերիսն թափել և ոչ թէ մեր տառապեալ ցիր և ցան ազգն, որք յամենայն տեղիս ի ցաւս և ի Հեծութիւնս կան: Եւ մէք այսպէս յամենուստ կուսէ տարակուսեալ:

Եւ արդ, զի խոհեմագոնից ասացուած է, թէ բարեկամն ոչ
Հարկէ բարեկամին առ իրս անկարելիս: Վասն որոյ և օրհնեալ ար-
քայորդիդ, որ ի բնէ բարեկամ ես մեր, պարտիս խնայել ի մեզ և
զայսպիսի տարակուսելի իրս ոչ առաջադրել: Չի այժմոյս վասն
բազմութեանն չժամանելով իւրաքանչիւր թուղթ խնդրողաց սա-
կաւ մի ողորմութեան տուրս տալով ի բաց առնեմք ի մէջ՝ Աստու-
ծոյ ամենաբաւ այցելութեանն թողեալ:

Որպէս և այս քաւանայիս ի պատիւ երեսաց յարգելոյդ
ԺԵՌ (15000) դեան դրամն ետուք և արձակեցաք: Ընդ որում և
զայս թուղթ գրեալ առ բարեպաշտութիւն քո խնդրեմք, որ զայս-
պիսի կոնդակախնդիրսն մի առաքիցես առ մեզ, յորմէ յոյժ տա-
րակուսանք և խիջալաթ կրեմք: Ապա ամենակարօղն Աստուած
օգնեսցէ նոցա և մեզ, և գերապատիւ ցանկալիդ պաշնեսցէ ողջ ի
չնորՀս իւր. ամէն:

Գրեցաւ յամի **Տեառն** 1797 և ի յօգոստոսի **ԺԳ**. (13), ի
Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 11աբ

¹²²⁹ **1797 թ., 15 սեպտեմբերի** - Թուղթ առ Իզմիրու քա-
ւանայսն և Իշխանսն, ի պատասխանի մահաարական թղթոյն նո-
ցա, որք ի գնալ Մարտիրոս վարդապետին անդ Հաշտութիւն էին
արարեալ ընդ միմեանս և սահմանադրութեան գիր շինեալ վասն
կառաւորութեան իւրեանց, և գրեալ էին զապաշաւանս վասն ան-
ցեալ անցիցն, և շնորհակալութիւն Մարտիրոս վարդապետին:
Վասն որոյ և սրբազանն գրէ առ նոսա զօրհնութիւն և զչնորՀա-
կալութիւն, յիշատակելով և զՀասարակական կոնդակն, որ գրեաց
այժմ ի Հաստատութիւն սահմանադրութեանցն իւրեանց, և պա-
տուիրէ սիրով և յարգանօք լինիլ առ միմեանս:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2391-92

¹²³⁰ **1797 թ., 15 սեպտեմբերի** - Թուղթ առաջին առ
Չմիւռնիայու նուիրակ և առաջնորդ Մարտիրոս վարդապետն, ի
պատասխանի նախկին թղթոյ նորա անտուստ գրեցելոյ վասն
խաղաղանալոյ ժողովրդեանն ի յերկայն ժամանակեայ խռովու-
թենէն իւրեանց, և վասն ոմանց տակաւին դիմառութեանն: Եւ զի
բազմութիւնն մանսար էին գրեալ խնդրեալ էր սա զկոնդակ գրել
առ Հասարակութիւնն, և սրբազանն գրեաց, ընդ որում յատուկ
թուղթ առ քաւանայսն և առ Մարգար աղայն: Որք թուղթք ի վե-
րոյ յերեան 2297 և 2391 և ի ներքոյ 2485 գտանին:

Յորմէ Հայրական սիրով և օրհնութեամբ, քրիստոսաձիր
սուրբ ողջունիւ և զօրացուցիչ շնորհիւ սրբոյ Իջման տեղոյս նորին

ծանիր սիրելի և Հոգևոր որդի մեր և Հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս՝ Մարտիրոս զգօնամիտ վարդապետ:

Զի թուղթ քո ի յապրիլի ԺԴ. (14) գրեցեալ է՛հաս առ մեզ ի յուլիսի Ժ. (10), և ընթերցեալ իմացաք Հասանիւղ ի Մեծն Պօլիս և զընկալեալ լինիլդ ի պատրիարգ եղբօրէն մերմէ և յօրհնեալ իշխանացն, և զթուղթսն մեր տալդ, Հանդերձ չինի անօթիւքն, և նոցա սիննՀոգոս առնելն ի վերայ գրեցելոցն մերոց և Հաւանիլն. ընդ շուտով գնալ քո, և պատրիարգ վարդապետի խիլայազարդելն գքեզ և ուղևորելն, և գքո ժամանելն ի յաստուածախնամ վիճակդ և օրհնեալ ժողովրդոց մայրաքաղաքիդ սիրով և յարգանօք ընդունիլն գքեզ և խաղաղանալն, և միաբանութեամբ սաՀմանադրութիւն առնելն, և զիննեսին իշխանսն կարգելն ի գործակցութիւն առաջնորդին, որ տասանցդ Հոգատարութեամբն լիցի կառավարութիւն քաղաքիդ և իրաց սրբոյ եկեղեցւոյն և կարգադրութիւն միւս գործակալացն և այլն:

Ընդ որս ամենեսեան միամտեալ մեր, և ընդ խաղաղութիւն օրհնեալ ժողովրդեանն ուրախացեալ, փառս ետուք Աստուծոյ: Որ և օրհնեսցէ անանցանելի օրհնութեամբ զամենեսեան զդոսսա, և առաւել ևս խաղաղասցէ և ի բարւոք միաբանութեան պաՀեսցէ: Եւ գքեզ զօրացուցէ շնորհիւ իւրով միշտ ի սէր յորդորել և քաղցրացուցանել առ միմեանս, որով և բարեպաշտեալ Հովիւն, որ Հօտիդ երևեսցի արդիւն Հովուութեան քոյ, և ժառանգեսցես զանուն բարի, և զվարձս ի Տեառնէ:

Ընկալաք և զթուղթն քահանայից և իշխանաց, որք գրեալ էին զապաշաւանս վասն անցեալ խռովութեանցն, և ցուցեալ էին զուրախութիւն յաղագս ներկայ միաբանութեանն, շնորհակալութիւն |2393| առնելով զմէնջ և գքէն, որպէս և դու զինքեանց էիր շնորհակալութիւն գրեալ:

ԷՀաս և օրինակն պայմանագրի սաՀմանադրութեանն, որ և մեզ Հաճելի եղև: Վասն որոյ աՀա գրեցաք զկոնդակ մի ի վերայ ամենեսցուն առՀասարակ: ՀնորՀակալ լինելով վասն Հաշտութեանն եղելոյ, և Հաստատելով զսաՀմանադրութիւնն և պատուիրելով Հաստատուն կալ ի միաբանական խաղաղութեան և այլն:

Գրեցաք և զթուղթ մի ուրիշ ի վերայ քահանայից և իշխանացն, ի պատասխանի թղթոյն իւրեանց: Եւ ի շնորհակալութիւն կրկին վասն միաբանութեանն ընդ միմեանս և սիրով ընդունելոյն գքեզ, և պատուէր, զի եթէ իցէ յոմանս խէթ ինչ, Հանցեն և ի սրտէ Հաշտեսցին, և զմիմեանս պատուեսցեն և մի արՀամարՀեսցեն և այլն: Բայց զի ի թղթի բազմութեան դոցա ոչ գոյին քանեաց ոմանց ձեռագրութիւնք, կարծիք լինի մեզ, թէ իցէ դեռևս նշմար անմիաբանութիւն ի միջի: Վասն որոյ թէպէտ մէք զթուղթսն ի վերայ ամենեսցուն Հասարակապէս եմք գրեալ, սակայն որք չէին ձեռնարկեալ ի թուղթն բազմութեան, այժմ վասն մեր թղթոցն կարծելով,

Թէ առ նոսա է, և ոչ առ ինքեանս, և ևս շփոթելոց են, այլ մէք զամենեսին Հաշտեալս Համարելով առ բոլորն եմք գրեալ՝ Թէ յանդիմանութիւն է, եթէ օրհնութիւն է, և թէ պատուիրանք զգուշութեան:

Ուրեմն որպէս զի մի գայթակղութիւն տրիցի ոմանց վասն կարծեաց իւրեանց, գրեմք սիրելի որդւոյդ, զի ի Հասանիլ թղթոցն առ քեզ, դեռ չկարդացեալ, նախ տեսցես յերկուս կողմանս և խօսեսցիս Համեղ բանիւք զիջուցանել յիւրաքանչիւրոցն խստութեանց, և ապա ժողովեալ զամենեսեանս ի մի վայր, կրկին Հաշտեցուցես ընդ միմեանս: Եւ յետ այնորիկ զթուղթս իւրեանց տացես նոցա բոլորին ի միասին ընթեռնուլ և զՀասարակ կոնդակն ևս ի սուրբ եկեղեցւոջն ընթեռնուլ տացես:

Մարգար աղայն և Չէլիկեան մահտեսի Կարապետն, որք զյատուկ յատուկ թուղթս էին գրեալ, նոցա ևս պատասխանիս գրեցաք, զորս տացես երկաքանչիւրոցն, և մահտեսի Կարապետն որովհետև ծերունի և բարեխոհ անձն է, գրեալ եմք նմա զոմանս բանս, խօսիլ ընդ որոց ի դէպ է վասն խաղաղութեան և շինութեան, որով ինքեանք բարեկարգ լիցին, և դարձեալ չվիրաւորեսցեն զմեզ և այլն:

Ահա և քեզ գրեմ, զի և դու ասացես ամենայն ումէք դոցա՝ մեծին և փոքուն, բաւական Համարիլ վատթար և վնասակար անցան, յորոց եղելութեանն մինչև զայժմ երկայնամտեալ Համբերեցաք և զդառնութիւն ոչ ցուցաք առ դոսա, այսուհետև զօգուտն և զբարին իւրեանց ընտրեսցեն և սիրով կացցեն, և մի փոխարկեսցեն զքաղցրութիւն մեր ի դառնութիւն, որ ոչ է օգուտ իւրեանց:

Ազդ եղև մեզ, եթէ ի Զատկի աւուրն ի ժամ սուրբ պատարագին զԱւետարանն ոչ էաք Մարգար աղային Համբուրել տուեալ: Ի ժամանակս առաջինս և ի ժամանակի երկոտասանամեայ առաջնորդութեան մերում յայդր՝ յաղագս տաղաւարաց, յորս պատարագելն առաջնորդին է, Աւետարան Համբուրելն նոցա էր, և զկնի պատարագին ևս Հոգւոց ասեաք ի վերայ ննջեցելոց նոցա, որք յեկեղեցւոջն կան թաղեցեալք, և ի մեռելոց աւուրն ևս գնացեալ օրհնեաք զգերեզմանս ննջեցելոց նոցա, որք ի գերեզմանատանն:

Եւ երբէք ի գտանեսցեալ իշխանացն ոչ որ ընդդիմանայր, զիտելով թէ Հին սովորութիւն է: Չի վասն վաղեմի օջախ գոլոյն այդ պատինն իբր նոցա սեպհականեցեալ է, այժմ զի՛նչ է պատճառ արգելման, նորա Աւետարան չՀամբուրելն և ննջեցելոց գերեզման չօրհնելն, եթէ օգուտ ինչ ունի քաղաքիդ կամ կարգադրութեան ձերոյ, զայն ոչ գիտեմ, բայց վասն յայտնի է, որ ատելութեան նշան երևեցուցանելով խրտուցանէք զնա ի ձէնջ և վիրաւորէք: Որով և վնասի խաղաղութիւնն և լաւ չէ:

Վասն որոյ գրեմքեզ, զի ընդ ոմանց քաճանայից և ընդ ոմանց ի յօրհնեալ իշխանացն խօսեսցիս խոհեմ խորհրդակցութեամբ և խելամոտ արասցես թէ յայնպիսի բանից, զոր վնաս Համարէիք ձեզ, Հրաժարեցեալ է, իսկ Աւետարան Համբուրեւն նորա վնաս ինչ չունի ամենեին, որով և նա շահի, յայսմ պատուոյ մի զրկեսցուք զնա և մի տացուք զտեղի խոռովութեան:

Այսպէս խօսեցեալ ընդ նոսա, այսուհետև ըստ վաղնջական սովորութեանն արասցես, զի մի երևիցիք զրկիչք զնա ի պատուոյն իւրմէ, և պատճառք գայթակղութեան: Քանզի Պետրոս աղայն ևս, թէպէտ Հրաժարեցեալ էր ի գործոյ քաղաքիդ, սակայն այլևս ի նոյն աւուրն կամ ինքն Համբուրեր զԱւետարանն, կամ թէ ինքն ի ժամ գալ չկարացեալ, որդին Համբուրեր:

Չանցիցն մերոց և երկրացս, որք յառաջն էին մինչև ցէնք թի Սրբոյ Աթոռոյս, գորովքո աստ, տեղեկացար: Յետ գնալոյն քո, մինչ երևանցիք անզգամաբար զաւելորդ և զձանր Հարկս պաճանջէին ի խղճալի գիւղականացն մերոց, և Հիւսիսայինքն ևս զգանձանակ ածին ընդ ձեռամբ, և գազանն ևս դարձեալ ի Մաշաթու ի Թէհրան մոնչէր, յորում միջոցի և Հաճի Իբրահիմ խանէն թուղթ մի եկն առ մեզ յուսագրութեամբ, եթէ առ շահն մարդ յուղարկես, յոյժ բարուք լինի և այլն:

Վասն որոյ և մէք զչափաւոր ընծայն պատրաստեալ, ձեռամբ Դաւիթ և Յովհաննէս վարդապետացն, առաքեցաք: Գրելով զոմանս ցաւս մեր և ֆերմանս ինդրելով: Եւ նա քաղցրութեամբ ընկալեալ էր և Սուլէյման սարտարին զօնաղ տուեալ և ըստ ամենայն ինդրոցն մերոց ֆերման գրեալ, և զվարդապետն ևս բաշափօյիք և շալօք խիլայեալ, որոց ի դառնալն դիւրութիւն ինչ եղև սրտի մերում: Բայց զի Հիւսիսայինքն դարձ արարին ի պատճառս վախճանի կայսերուհոյն, և շահն և ևս խորխտացեալ էլ յայսկոյս, որ և Նախշուանու Քեալբալի խանի զաչն բրեաց, և զմեր խանն ևս ստիպաւ ինդրեաց, որոյ ի ժամանեւն առ նա յայսկոյս Ղազբինու կալեալ էր զսա և կողոպտեալ և ծանրագոյն տուգանս արկեալ ի վերայ, որ զինչ և ունէր՝ թէ աստ և թէ յայլուր, յափշտակեցին:

Եւ զդժնդակ եղբայրն իւր՝ Ալիղուլի սարտարն յղեալ էր յԵրևան խան, որոյ ի գալն գնացաք ընդառաջ, որ ըստ պարսկական խորամանկութեանն այլևս նախապէս պատիւ եցոյց, և ապա ծանրացոյց զընծայն, մինչև ի կէս յառաջ առեցելոյն: Ուստի ի Ա. (38) աւուրս մնացեալ յԵրևան, թէ որքան զլուսն ցաւեցուցաք և նեղեցաք, չեղև Հնար զիջանելոյ նորա: Վերջապէս մասն մի ետուք, և մնացելոյն սանատ տուեալ դարձաք ի Սուրբ Աթոռս:

Յայնմ միջոցի շահն եկեալ էր մերձ յԱրտաիւր, և լսելով զփախուստ Իբրահիմ խանին Հուշոյ ի կողմն Կովկասու, ինքն զձանրութիւն բանակին թողեալ անդ, ԺԲԻ (12.000) զօրօք Հապճեպով

եկեալ մտեալ էր ի Շուշոյ բերդն, ոմանք մէլիքք և ժողովուրդքն ելանելով ընդ առաջ, և մինչև էր թափեալ զբառնութիւն թունիցն, յետ քանեաց աւուրց սպասաւորք նորա, խորհրդով Սատրղ խանին, սպանեալ էին զտապալիչն աշխարհի և բարձեալ զչարն ի միջոյ:

Եւ մինչ Գ. (3) աւուրքն էին դառնալոյն մեր յԵրևանու, լուր սատակման նորա ժամանեաց աստ, որով և աճապարեաց սարտարն կորնչել յԵրևանու, այլ նկատ մեծամեծքն Երևանու մուծին զնա ի բերդն, և ցրուեալ զօրաց շահին ևս քանի Հարիւր մարդիկ եկին յարեցան ի ժանտն, որովք ոգի առեալ և ևս սկսաւ զժանտութիւնն ի գործ արկանել առ քաղաքացիսն և առ մեզ՝ պահանջմունս առնելով: Մինչև երևանցիք զինուորեալ ընդդէմ դարձան, թէ ել գնա: Եւ նա ընդ բերդապաշտանսն ի միասին ելեալ կորեան: Իբր թէ գնայր զըժնդակն ի թագաւորել:

Եւ յեկանել նոցա ի բերդէն, երևանցիք մտին ի բերդն: Քանի աւուրց անցեալ ի վերայ Մակուայ սուլթանի որդի Հասան խանն, որ առ շահն կայր, և շահ վէքիլի էր կարգեցեալ երկրիս, եկն և խնդրեաց մտանել ի բերդն: Սոքա չկամեցեալ պատասխանի արարին և նա գնաց ի Նախչուան զօրս ժողովել և գալ: Որոյ ի գնալն գրեցին սոքա ի Ղազախ առ վրացու որդի Ալէքսանդրն, թէ մեզ յօգնութիւն առաքեա: Եւ նա ինքնին եկն քանի Հարիւր արամբք ի Ղրխպուլախ:

Բայց յառաջ քան զնա Հասանն խանն եկն Նախչուանու զօրօք և յայրումցուց ևս ոմանք միաբանեալ ընդ նմա, յարեան ի վերայ բերդին: Մուղանցիք և այլք փախեան և քաղաքացիք ելեալ ընդ առաջ ընկալան, և ապա զՎրացու տղայն ևս տրովք Հաճեցուցին, և նա եկեալ ի Սուրբ Աթոռս յուխտ, Գ. (3) օր մնաց և դարձաւ: Իբրև կայ էառ Հասան խանն յամսօրեայ իշխանութիւն իւր, յետ ամենեցուն և մէք գնացաք ի տեսութիւն:

Իսկ ի կործանին շահին ի Շուշի, Սատրղ խանն, կողոպտեալ զգոհարսն և զայլ մեծագին իրս նորա, Հնարիւք զՀատրբէճանու զօրսն առեալ ելանէ ի դղեկէն և գնայ: Եւ մեծ բանակն, որ մերձ յԱրտաւիլ լուեալ զգոյժ կորստեան շահին, շփոթին յոյժ և ի ցիր անկանին: Այլ Սուլէյման սարդարն և Խօյու Ջաֆարղուլի խանն և այլք մեծամեծք մնացորդօքն դառնան ի Թէհրան, և Ալիղուլի սարտարն ևս գնայ: Բայց Միրզայ Մահմատ խանն Թէհրանու ոչ ընդունի զնոսա ի ներքս, սպասելով Բաբախան սարտարի գալստեանն ի Շիրազու: Յայնմ միջոցի և Սատրղ խանն գնացեալ տիրէ զԱնկիանու, և անցեալ պաշարէ զՂազբէն:

Այլ Բաբախանն եկեալ մտանէ ի Թէհրան և կարգի շահ և |2395| տեսեալ զբարձրավզութիւն Ալիղուլի ժանտ նեղչին մերոյ, բրէ զաչս նորա, և ելեալ ընդդէմ Սատրղ խանին իբր վանէ զնա, և ըստ ոմանց ասութեան իբր թէ յետոյ զգոհարսն սատակեալ շահին

առնու և Հաշտի, և դառնայ ի թէհրան: Եւ զԵրևանու ՄաՀմատ խանն և զԽոյու Ջաֆաղուլի խանն արձակեալ է ի գալք և Երևանու բերդին ևս զայլ ոմն յիւրոցն պաՀապան է յղեալքանի Հարիւր արամբք:

Եւ զի խանն երկիցս թուղթս էր գրեալ մեզ և այլոց վասն գալոյ իւրոյ, և բազումք գնացին ընդառաջ: Հասան խանն ել ի բերդէն և գնաց ի Մակու: Եւ յառաջիկայ աւուրքս նախ բերդապաՀն, և յետ այնորիկ խանն գալոց են:

Արդ, այսքան անցք յապրիլ ամսոյս մինչև ի սեպտեմբեր ամիսս, յորս Հանգստութեան կարօտ եմք: Եւ ի գալստեան յիշեալ դժնկացն ևս զի՛նչ ցաւս եմք կրելոց, չգիտեմք, միայն ողորմութեամբն Աստուծոյ ապաստան կամք, զի նա Հոգասցէ վասն Սրբոյ Աթոռոյս և ազգի մերոյ և մեր:

Այսպէս գիտացեալքոյ Հարցանողաց ևս ծանուցես, զի այլոց ոչ երկարելով ի քէն իմանալ ցուցար: Ողջ լեր ի Տէր և զօրացեալ ի շնորՀս նորին յարաժամ. ամէն:

Գրեցաւ ի ՌՄԽԶ. (1797) թուոջս և ի սեպտեմբերի ժԵ. (15), ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

Սիրով մեծաւ և զօրացուցիչ շնորՀիւ սրբոյ Իջման տեղոյս Քրիստոսի ողջոյն և օրՀնութիւն տամք սիրելեաց մերոց և Հարագատ որդւոց Սրբոյ Աթոռոյս՝ սրբանուէր քաՀանայից և բարեպաշտ իշխանաց և օրՀնեալ ժողովրդեանն աստուածախնամքաղաքիդ ուր և իցես, որք և լիցին յանձնեալք ի ինամս և ի բարեգթութիւնս Աստուծոյ ամենակալին, կալ մնալ խաղաղութեամբ և բարօրութեամբ. ամէն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2392-95

¹²³¹ **1797 թ., սեպտեմբեր** - Թուղթ ի յԱմաստրոգամ առ պարոն Ալէքսան ՄասեՀեան վասն Յովաննէս սևագլխին անդեղելոյ, զոր ոչ կամէին մնալ անդ, վասն որոյ և սրբազանն բանագրեաց զնա, զի տացէ զՀաշիւ իրաց եկեղեցւոյն և զբանալին, և ինքն ելցէ անտի, և սմա գրէ, թէ այսպէս արարաք և պատրիարգին ևս գրեալ եմք, խօսիլ ընդ Պօլսոյ դեսպանին Ֆիլամանկի, գրել առ իշխանան Մարդամու և այլն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2395-96

¹²³² **1797 թ. սեպտեմբեր** - Թուղթ առ Չաքարիա պատրիարգն, ի պատասխանի թղթոյ նորա մայիսի Զ. (6) գրեցելոյ վասն Դանիէլ վարդապետի յՈւռումէլի գնալոյն և Մարտիրոս վարդապետի՝ յԻզմիր: Չկնի այսորիկ եկին և առանձնակի գրուածք ինչ, որոց ևս առանձնօրէն գրեցաւ փոխադարձս:

Յորմէ եղբայրականաւ ստոյգ սիրով և կարօտիւ, և քրիստոսաւանդ միարար սուրբ ողջունիւ և սրբոյ Իջման տեղոյս նորին Հոգեպարար շնորհիւ ծանուցումն լիցի գերազնիւ եղբօրդ իմոյ բաղձալոյ, ամենասուրբ Հոգւոյն շնորհօքն կապակցելոյ՝ տեառնդ Չաքարիա վսեմամիտ արքեպիսկոպոսի և ընտրելագոյն պատրիարգի բարեճոխ մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսի:

Չի ընդ երկար ժամանակ կրելով մեր զկարօտութիւն սիրանիշ թղթոյդ ընկալաք ի յուլիսի մէջն, զգրեալսդ ի մայիսի Չ. (6), որով և տեղեկացեալ զբարեկենդանութենէ արգոյ անձինդ և զլաջողուածոյ գործառնութեանցդ և Հաւատարիմ սիրոյդ առ սուրբ Գաշն և առ մեզ, ուրախ եղաք ի Տէր և գոհացաք զնմանէ: Բայց յայնժամ ևս ի նեղութեանց և ի Հոգոց չէաք ազատ, որպէս և այժմ ոչ թարց տարակուսանաց: Քանզի թէպէտ և աշխարհաւեր բռնատրն բարձաւ ի միջոյ, զոր ի յունիսի ամենանն գրեցաք սիրելոյդդ, այլ աւազակք մեծամեծք այլազգեաց երկրիս անկեալ զմիմեամբք, չթողեցուցին ոգի առնուլ Հասարակութեանն: Վասն զի մի ոմն, որ մօտ առ շահն կայր և Ֆէրմանս էր առեալ գալ և վէքիլ նստիլ նմա և զհարկան Հատուցանել յետ կործանման շահին՝ ըստ որում և խանն թէհրան կայր արգելեալ, եկն իբրու զայն իշխանութիւն վարել: Առ որ զառաջինն պատասխանի արարին երկրացիք չընդունելութեան: Իսկ մինչ գնացեալ ի Նախչուան զօր ժողովեաց և եկն, ոմանք ևս միաբանեալ ընդ նմա, էարկ ընդ ձեռամբ զքաղաքն և զբերդն, և բազումք բաց ի սակաւուց կամայ և ակամայ Հնազանդեցան: Մէք ևս գնացաք ի տեսութիւն: Բայց յետ ամաչափ աւուրց, մինչ թուղթք եկին ի թէհրանու ի խանէն մերմէ, թէ շահի եղբօրորդին յաջորդեաց զտեղին և զինքն արձակեալ է ի գալ, յԵրևան |2397| նստեալն խոյս ետ, և երկրացիք ելին ընդ առաջ խանին, բայց և խանն արգելեցեալ ի իջօյու խանէն (որ սարդար է այժմ և ԱՌ (1000) ձիաւոր ինդրէ յերկրէս) դեռ ոչ գայ: Երկիրս անտերունջ, և նորա գալն ևս կասկածամատոյց ամենից, ըստ որում կողոպտեցեալ և քաղցեալ է: Եւ զայլ անցսն գողոց և գարչելեացս ունիս իմանալ, եթէ կամիցիս:

Արդ, այսոքիւկ ալէկոծութեամբք ծիւելով մեր և այլովք կարևոր Հոգօք պաշարեալ Հասաք զայսօր: Այժմ միջոց գտեալ մեր գրեմք զպատասխանիս գրուածոցդ: Եւ նախ՝ զի ծանուցեալ էիր զԴանիէլ վարդապետի յՈւռումէլի գնալն, և զՄարտիրոս վարդապետի յԻգմիր գնալն, Հաճութեամբ ձեր և օրհնեալ իշխանացն՝ Համեմատ առաջագրութեանցն մերոց, զոր և Գալուստ բարեմիտ վարդապետն գրեալ էր, միամտեցաք: Եւ ոչ այնու միայն, այլ և Մարտիրոս վարդապետն գրեալ էր մեզ զիւր ի յԻգմիր Հասանիլն և ի տեղականացն սիրով ընկալեալ լինիլն, և զսահմանդրութեան թուղթ շինելն վասն իննուց իշխանացն կարգեցելոց ի թիկնապաշտ

առաջնորդի, և այլոց իշխանաց կարգիլն յայլևայլ գործս ընդ ձեռամբ նոցա և այլն:

Եւ քաճանայք և իշխանքն ևս Հասարակութեամբ շնորհակալութեան թուղթս էին գրեալ և մէք ըստ ինդրոյ առաջնորդին զկոնդակ գրեցաք ի վերայ Հասարակութեանն, Հաստատելով զսաճմանս իւրեանց, որք ըստ կանոնադրութեանց նախնի Հայրապետաց, և պատուիրելով Հաստատուն պաճել զսէր և զմիաբանութիւն Հոգւոյն յօդիւ խաղաղութեան:

Գրեցաք և առ իշխանն Հասարակապէս և առ ոմանս յատկապէս դարձեալ վասն սիրոյ և խաղաղութեան:

Երկրորդ՝ գրեալ էիր վասն շինուոցն ժամանեցելոց: Որքան ինչ իցեն այնոքիկ, որք ի յիշատակ բերեալ լինիցէին, սակայն և այն մեծի եղբայրասիրութեան քո է նշանակ զուարճասիրութեամբ ընդունիլն, և օրհնեալ ամիրայիցն ևս ըստ իւրաքանչիւր պատշաճից մատակարարելն, և մանաւանդ զի զՄարտիրոս Հեզաբարոյ վարդապետն յոյժ սիրով և քաղցրութեամբ, ընկալեալ էիր և վայելչագոյն Հանդերձիւք խիլայազարդեալ: Առ որ մեծապէս շնորհակալ եմք զպատուականագոյն եղբայրութեանդ, որում շնորհեսցէ Տէր զխաղաղութիւն և զփառազուարճ կեանս ի Հարուստ ժամանակս և զկարողութիւն յամենայն բարեպատեճ գործս քո, և ըստ գործոցն զարժանի պարգևս յերանական կեանս:

Երրորդ՝ գրեալ էիր զաւետաւոր Համբաւ ողորմութիւն առնելոյ մեծազօր թագաւորին ի շինել զառ սուրբ եկեղեցիդ մերձ Հատուզն ջրոյ և զփազնան, Հանդերձ նորոգութեամբ որմոց սրբոյ եկեղեցւոյդ և զձեռնարակելն ձեր և մօտ ի կատար ժամանելն: Ընդ որ և կարի յոյժ ուրախացաք. գոհութիւն և փառք բարերարին Աստուծոյ, որ քաղցրացեալ զսիրտս գերափառ արքային և մեծամեծացն՝ յաջողեաց ձեզ գործել զայդ մեծարարութիւն:

Արդարև՝ աչք ամենեցուն մեր ի լոյս, որք և Հայցեմք ի վերնախնամ տեսչութենէն՝ յաւերով զաւուրս յաւուրս Հզօրագունեղ և ժողովրդաշահ մեծի թագաւորին և յաւետ ևս շարժել զգովթ նորա ի վերայ ազգի մերոյ, և տացէ մեզ լսել և զայլ բազում այսպիսի ախորժալուր ձայնս: Մանաւանդ և զշինմանէ Սուրբ Գէորգ եկեղեցւոյն, որում Հանապազօր ցանկամք: Որպէս զի ի վերայ աղաւաղութեան կողմանցսն գոնէ այդր օրհնեսցելոյ երկրի մերայնոց բարեկեցութեամբն մսիթարիցեմք:

Հաւատարիմ միաբանք սրբոյ Գաճիս՝ Մինաս զգօնամիտ եպիսկոպոսն, լուսարար Գրիգոր, Դաւիթ գործապետ, Ղունկիանոս և Յակոբոս եպիսկոպոսք, ընդ որս և սպասաւորք մեր զսուրբ աջդ Համբուրեն, և մէք առ յարգութեանդ եղելոց շնորհափայլ եպիսկոպոսաց և վարդապետաց ողջոյն և օրհնութիւն տամք:

Ողջ լեր Քրիստոսիւ յարդիւնական կեանս ի զուարճութիւն մեր. ամէն:

Գրեցաւ ի ՌՄԽԶ. (1797) և ի սեպտեմբերի ..., ի Սուրբ Էջմիածին:

Բարեպաշտ սիրելեաց մերոց՝ Հաւատարիմ և օգտակար սրդւոց Սրբոյ Աթոռոյս, քրիստոսասիրաց և նովիմբ զօրացելոց ազնուականաց և պերճապատուից, օրհնեալ իշխանապետաց և իշխանաց աստուածախնամ մայրաքաղաքիդ սիրով մեծաւ ողջոյն և օրհնութիւն ձօնեմք, ուրախ լինիլ ի Տէր Հոգեզուարճ ցնծութեամբ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2396-97

¹²³³ 1797 թ., սեպտեմբեր - Թուղթ առ Մարգար աղայն Աբրօյեան յԻզմիր, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ յապրիլի 21 վան Մարտիրոս վարդապետի անդ ժամանելոյն և վան ոմանց իրաց, ևս և վան Աստուածատուր երեխային իւրոյ մաշուանն:

Յորմէ ժամանեսցէ թուղթ ճշմարիտ սիրոյ... Գրեցաւ յամի Տեառն 1797 եւ ի սեպտեմբերի ԺԵ. (15), ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2485-87

¹²³⁴ 1797 թ., սեպտեմբեր - Թուղթ ի Մեծն Պօլիս առ մաշտեսի Մասեղեան պարոն Եսային, ի պատասխանի Բ. (2) թղթոց նորա, վան մեր Դանիէլ վարդապետին, և վանս յԱմատեր դամ յորջեցեալ Յով[է]աննէս կարգազեղծ սևագլխին. (որ և բանադրեցաւ այժմ, զի ելցէ անտի):

Յորմէ եւ օրհնութեամբ... Գրեցաւ յամի Տեառն 1797, եւ ի սեպտեմբեր, ի Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2488-89

¹²³⁵ 1797 թ., 15 սեպտեմբեր - Կոնդակ ի վերայ Չմիւռնիոյ ժողովրդեանն առ Հասարակ ի շնորհակալութիւն վան Հաշտութեան նոցա ընդ միմեանս ի գնալ Մարտիրոս վարդապետին, և բառնալոյն զխոտովութիւնն ի միջոյ իւրեանց, զոր յաւուրս Դանիէլ վարդապետին երկպառակեալ կրէին յինքեանս, մինչև ելանել անտի Դանիէլ վարդապետին և գնալ ի Մեծն Պօլիս, և երկպառակելոցն ևս բողոքել ի դուռն արքունի, և խնդրել անդ և արքունեաց Հրամանաւ առաջի պատրիարգին և իշխանաց ի դատ մտանել և նոցին ստիպմամբ Հազիւ ուրեմն Հաշտիլ և դառնալ ի Չմիւռնիս, ուր և ժամանել Մարտիրոս վարդապետին, զպայմանագիր էին շինեալ վան կառավարութեանն իւրեանց՝ Համեմատ կանոնացն գրեցելոց յաւուրս տեառն Աղէքսանդրի և ՍաՀակայ Հայրա-

պետացն, և Յակոբայ պատրիարգին: Որոյ աղագաւ և այժմ՝ սրբազանն զՀաստատութիւն գրէ և զպատուէրս՝ ա[ն]խախտ պա-
հել և անվրդով խաղաղութեամբ մնալ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2297-99

1236 1797 թ., սեպտեմբեր - Թուղթ առ պատրիարգն Պօլսոյ, ի պատասխանի թղթոյն յաղագս ի Մսրտամ յորջացեալ խռովասէր Յովաննէս սևագլխին (որոյ և բանադրանաց գիրն ի Հանդէպդ է) խօսիլ անդ ընդ Ֆիլէմէնկի դեսպանին, առ ի գրել անդ յԱմստրդամ կառավարչացն տեղւոյդ՝ առնուլ զեկեղեցին մեր ի ձեռաց նորա և յանձնել անդ եղելոց մերայնոցն:

Յորմէ սիրով և կարօտիւ յղեսցի ողջոյն քրիստոսաձիր սի-
րեցելոյ և պատուականի եղբօրդ մերոյ Հոգեկցի և բարեջան որդ-
ւոյդ սրբոյ Գաշիս՝ տեառնդ Չաքարիայ արհիամեծար եպիսկո-
պոսի և վայելչապատիւ պատրիարգի արքայապերճ մեծի մայրա-
քաղաքիդ Կոստանդնուպօլսի: Որում և գիտութիւն լիցի:

Ձի Թուղթ յարգութեանդ ի մայիսի ԻԵ. (25) գրեցեալ ընդ
մահտեսի Մասեհեան պարոն Եսայեայ թղթոցն էհաս առ մեզ և
իմացաք զգրեալն ձեր ի կողմանէ յԱմստրդամ յորջացելոյ Յո-
վաննէս կոչեցելոյ վարդապետին, յորոյ անկարգութեանցն և խ-
ռովասիրութենէն տաղտկանալով անդէն եղեալ վաճառականքն
մերազինք բողոքեալ եմ յայդր, և ի տեղդ եղեալ վաճառակիցք նո-
ցա և բարեկամք՝ մանաւանդ պարոն Եսային ջանալով զբարձումն
նորա անտի, յայդր ի Ֆիլէմէնկի դեսպանէն ինդրեալ են գրել առ
Ամստրդամն իշխանսն վասն Հանելոյ զայն սևագլուխն: Եւ նա
պատասխանել է նոցա, եթէ ի պատրիարգէն ձերմէ այդ բան խօ-
սիցի առ մեզ, յայնժամ կատարեցից:

Իսկ վեմամիտ եղբայրդ ի Թախանձել նոցա առ քեզ, փոյթ
տանիլ իրին, խորհելով թէ ի մասին վիճակի Սրբոյ Աթոռոյս է այն
եկեղեցի, Հարցեալ էիր մեզ, ծանուցանելով և զայն, թէ որովհետև
անխիղճն այն ընդ երկար ժամանակ լռեալ է ի ժամերգութենէ և
անհաղորդ թողեալ զժողովուրդն: Վասն որոյ զԳրիգոր վարդա-
պետ ոմն յուղարկեալ են անդ առ ի կատարել զաստուածային
պաշտամունս: Ապաքէն և մէք ծանուցանեմք ազնուախոճ սիրելու-
թեանդ, որ Յովաննէս անուանեալն այն վարդապետ յորմէ Հետէ
տարածեալ զփուշա իւր անդ խռովեաց զժողովուրդ տեղւոյդ, քան
զտանն ամն աւելի ժամանակ է, յորում յաղաղակաց լրբութեան
նորա և մէք զգուեցաք: Թէպէտ երբեմն Գալուստ վարդապետն և
երբեմն Հանգուցեալ Իսահակ վարդապետն և զկնի մէք ևս սիրա-
խառն բանիւք զգուշութիւնս գրեցաք առ ԺպիրՀն, ոչինչ ազդեաց
նմա, զի պատասխանի ևս չընկալաք: Եւ թէ յի՛նչ կրօնս է և յի՛նչ
դիտաւորութեան, տեղին Հեռի է, ի գրողաց և ի պատմողաց (ան-
հասկանալի է):

Վասն որոյ չափու երկայնամտութեան մերոյ, ահա գրեցաք ի վերայ լիտոյն զթուղթ բանադրանաց, առաջի առնելով նմա զանգագամութիւնսն իւր, և Հարկելով զի ելցէ անտի, կամ ի Սուրբ Աթոռս և կամ յայդր եկեսցէ և յետ ապաշխարութեանցն շահեսցի ըստ չափու ընդունակութեանն, և կամ թէ ո՞ւր կամիցի, գնայցէ: Իսկ թէ և ևս Համառուսցի անդանօր մնալ, կացցէ՝ ընդ բանադրանօքն անարձակ:

Գրեցաք և զթուղթ մի առ պարոն Ալէքսանն, որ յԱմստրդամ, և զպատասխանսն թղթոցն պարոն Եսայեայ, և այն թուղթ, զոր յԱմստրդամ եղեալ վաճառականքն ի կառուցանելն իւրեանց զՍուրբ Հոգի եկեղեցին, գրեալ են առ տէր Ալէքսանդր կաթողիկոսն, զնորին օրինակն ևս առեալ յղեցաք: Կամեաք և առ դեսպանն թուղթ գրել, բայց Համամիտ եղբայրդ մեր գոլով յայդր, մեր գրելն աւելորդ էր:

Ուրեմն յարգութիւն քո ի դիմաց մեր և քո իբր ի միակամութենէ երկուս խօսոսցիս ընդ պատուէլի դեսպանին, գրել առ իրաւասէր իշխանս Ամստերդամու, զի արդար դատաստանաւ զանպիտան և զխռովարար աբեղայն զայն մերժեսցեն յեկեղեցւոյն մերմէ և ի ժողովրդէն: Եւ զեկեղեցին Հանդերձ պարագայիւքն թողցեն մերայնոց ի վայելս ըստ աւանդութեան բարեյիշատակ կառուցողացն նախնեաց: Որպէս զի խաղաղացեալ նոցա լուսաւորչականդ սուրբ կրօնիւք անխափան կացցեն ի քրիստոնէական պաշտման իւրեանց, և աղաղակն Հասցի ի մէջ: Որոյ աղագաւ դիւրասիրտ և շնորհակալ լինելոց եմք:

Ողջ լեր Տերամբ ի Հրճուանս մեր:

Գրեցաւ ի ՌՄԽԶ. (1797) թուոջս և ի սեպտեմբերի, ի Սուրբ Աթոռս:

ՄՄ ձեռ. Հ^ր 4501, էջ 2300

1237 **1797 թ., սեպտեմբեր** - Թուղթ առ յԱմստերդամյորջացեալ ստաճակ Յովաննէս սևագլուինն նախչուանցի, որ իբրև քուրմ մի ինքնագլխութեամբ ըստ իւր կամացն վարելով անդ, ոչ պիտոյանայր ժողովրդէանն, այլ մանաւանդ խռովէր և վիրաւորէր զնոսս: Ուստի բանադրանք նմա, և պատուէր, զի զեկեղեցւոյ Հաշիւն տացի անդ եղեալ մերայնոցն, և ելցէ անտի: Իսկ եթէ յանդգնիցի մնալ, բանադրեալ եղիցի:

ՄՄ ձեռ. Հ^ր 4501, էջ 2301-3

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 507բ

1797 թ., սեպտեմբեր - **Թուղթք ի Զմիւռնիա, ի Մեծն Պօլիս և ի Կարին**

1238 **Ի Զմիւռնիայ** - Կոնդակ ի վերայ Զմիւռնոյ ժողովրդեանն առ Հասարակ, ի Հնորհակալութիւն վասն Հաշտութեան նոցա ընդ միմեանս և բառնալոյն գխոտվութիւնն ի միջոյ իւրեանց, զոր յաւուրս Դանիէլ վարդապետին երկպառակեալ էին, և Հազիւ ուրեմն Հաշտեալ ուր և ի ժամանել Մարտիրոս պետին անդ, զպայմանագիր էին շինեալ վասն կառավարութեան իւրեանց, որոյ աղագաւ և այժմ սրբազանն զՀաստատութիւն գրէ և զպատուէրս անխախտ պահել, և անվրդով խաղաղութեամբ մնալ¹⁹⁷: **Տէ ս ի մեծ տես[երց], յեր[ես] 2297:**

1239 **Թուղթ առ Իզմիրու քահանայսն և իշխանսն, ի պատասխանի մահարական թղթոյն նոցա, որք ի գնալ Մարտիրոս վարդապետին անդ, Հաշտութիւն էին արարեալ ընդ միմեանս, և սահմանադրութեան գիր շինեալ վասն կառավարութեան իւրեանց:** Վասն որոյ սրբազանն գրէ այժմ Հաստատուն պահել զայնս, և պատուիրէ սիրով և յարգանօք լինիլ ընդ միմեանս: **Տէ ս ի մեծ տես[երց], յեր[ես] 2391:**

1240 **Թուղթ ի յԻզմիր առ Մարգար աղայն Ապրօեան, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, վասն Մարտիրոս վարդապետին անդ ժամանելոյն և ի մխիթարութիւն վասն Աստուածատուր երեխային, և բանք ևս վասն ոմանց իրաց:** **Տէ ս ի մեծ տես[երց] յեր[ես] 2485:**

¹⁹⁷ Զմյուռնիայի առաջնորդ և նվիրակ Մարտիրոս վարդապետի գործունեության մասին մասնագիտական գրականության մեջ ոչ սակավ տեղեկություններ կան: Ուսումնասիրողների տարակարծություններ հիմնականում նրա առաջնորդության տարիների շուրջ են, որոնց վերջերս համառոտ անդրադարձել է Ա. Խառատյանը: Վկայակոչելով իր նախորդների՝ Տ. Պալյանի, Ա. Ալպոյանյանի, Հ. Քոսյանի տեսակետները՝ նա հավանական է համարում, որ Մարտիրոս վարդապետը (հետագայում՝ արհեստիսկոպոս) պաշտոնավարել է 1797-1816 թթ. (Ա. Խառատյան, Զմյուռնիայի տերունի թեմի առաջնորդները, էջ 25), հետևաբար սույն վավերագիրը, որը պատմում է 1797 թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսների փառաբանական տհաճ միջադեպերի հետևանքով Մայր Աթոռի շուրջը կուտակված անհանգստությունների ու խժոժությունների մասին, նրա գործունեության ու կաթողիկոսի հետ ունեցած հարաբերությունների սկզբնական շրջանի լուսաբանման համար արժանահավատ աղբյուր է: Պարզվում է, որ Մարտիրոս վարդապետը հետագայում գործուն մասնակցություն է ունեցել «Դավիթ-Դանիելյան» գավազանակովի պատմության մեջ՝ լինելով Դավիթ էնեգեթցու հուսալի հենարաններից մեկը: Այդ կերպ նա փորձել է իր ազդեցությունը տարածել ոչ միայն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների, այլև Կ. Պոլսի բարձրաստիճան հոգևորականության վրա: Պատահական չէ, որ Ալեքսանդր Ի-ին հղած գրություններից մեկում Դանիել Սուրմառեցին գանգատվել է նրանից (ԳՀՊ, գիրք Ե., կազմեց՝ **Գիտ ալ. ԲՆՆ. Աղանեանց**, Թիֆլիս, 1902, սյուն 290): Հիրավի, տեղին է նշում Ա. Խառատյանը, երբ նկատում է, որ Մարտիրոսի երկարատև պաշտոնավարումը պետք է պայմանավորել «Դավիթ-Դանիելյան» պայքարի վայրիվերումներով (Ա. Խառատյան, նշվ. աշխ., էջ 27):

1241 Թուղթ առ Չմիւռնիայու նուիրակ և առաջնորդ Մարտիրոս վարդապետն. ի պատասխանի նախկին թղթոյն գրեցելոյ վասն խաղաղանալոյ ժողովրդեանն իւրեանց և վասն ոմանց տակաւին դիմառութեանն, որով ինդրեալ էր յորդորական կոնդակ գրել ի վերայ Հասարակութեանն, զոր և գրեաց սրբազանն առ քահանայսն, և իշխանսն, և առ Մարգար աղայն: Տէս ի մեծ տես[երց]յեր[ես] 2392:

1242 Փոստուլայ մի ևս գրեցաւ սմա, ի փոխադարձ Բ. (2)-ուց փոստուլայից նորին, որ ծանուցեալ էր զանցսն տեղւոյն ի յարուցմանէ այլազգեաց: Գրեցաւ ինչ-ինչ սմա ևս ի կողմանէ Մարգար աղային: Եւ թէ վասն առնլի իրաց, որ գրեալ էիր, թէ ոչ գտանի, բայց ի քանի մի կեօզլուկաց, ահա զայնս Գալուստ վարդապետն գրեալ էր, թէ առի և յղեցի, բայց դեռևս չերևեցան այնօրիկ: ՍիաՀի ևս յղեցաւ սմա վասն սահաթից և այլ իրաց առնուլ և յղել: Օրինակ փոստուլայիս՝ իմ դեագկեաճոջս:

Գրեցան և յղեցան ընդ արգրումցի փայեկին յամոյս ժՉ. (16):

1243 Թուղթ առ Չալիկեան մահտեսի Կարապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, և ծանուցումն կողմանցս զորպիսութեանց: Տէս ի փոքր տես[երց]յեր[ես] 411:

508ա

1244 Ի Մեծս Պօլիս - Ղաւզ մի առ Մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն, եթէ որ մէկ Հազար ութ Հարիւր և վաթսուն և ինն պաճախլու ոսկի, մէկն եօթն ղուռուշով, և կէս ոսկի մարի ևս, որ Համայնն Հաշուի տասն և երեք Հազար ութսուն և Հինգ ղուռուշ ըստ կիսոյն յարդեանց քոց և ըստ կիսոյն յայլ և այլ կողմանց քեզ յանձնեցելոց՝ Հասուցեալ էիր ի Կարին առ պարոն Հայրապետն: Նա ևս գրեալ ծանուցեալ էր մեզ զառ ինքն Հասանիլն: Վասն որոյ և մեր առ մեզ Հասեալ Համարելով, զայս ղաւզս գրեցաք ի միամտութիւն:

Նաև Բ. (2) Հազար ինն Հարիւր եօթանասուն և ութ ղուռուշն, զոր յանցելում ամին ի Գաղատիոյ նուիրակ Գէորգ վարդապետէն փօլիցայիւ ընկալեալ և Հասուցեալ էիր առ յիշեալ պարոն Հայրապետն և նա առ մեզ Հասոյց: Չսորին ղաւզ թէպէտ յառաջմէ տուեալ եմք Մինաս վարդապետին, բայց որովհետև քոյդ ձեռամբ է Հասեալ, այնր աղագաւ աստանօր յիշատակեմք, զի միամիտ լիցիս: Իսկ նորին յետոյ առ քեզ Հասուցեալ մէկ Հազար ղուռուշն ի մէջ Հաշուոյ ոսկոցն է, որպէս գրեալ էիր մեզ:

Դարձեալ զ40 ղուռուշն, զոր տուեալ էիր ի գին զիճ գրքոյն, զայն 40 ղուռուշն յաւելաք ի Հաշիւս Հասուցեալ դրամոցդ:

Նամակ Կարինի գործակալ պարոն Հայրապետին, որտեղ գլխաւորապէս խոսուով է նամակագրութեան եւ դրամական փոխանցումների մասին, մասնաւոր-

րապէս՝ «վասն Փիլիպպոս ամիրայի ուղարկած փայեկին, որ գրած էիր, թէ ուշացաւ...: ...տիրացու Գէորգն 3000 ղուռուշ փօլիցայ էր ինդրեալ և ես ետու...: ...Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետէն գիր առինք, որ գրեալ էր, թէ քանի մի սաՀաթ և կեօզլուկ ղութիով շինած ձեռամբ պարոն Մանուկին յղելոց եւ...» եւ այլն (Ա./2):

¹²⁴⁵ **Ի Բայազիտ** - Թուղթ ի Բայազիտ առ Պետրոս աղայն և իւրայինսն, յորում թէ որ ի ՌՄԽԴ. (1795) թուոջն ձեռամբ ՅօՀան վարդապետին մէկ փոքր սապաթով ամանաթ յուղարկեցաք առ քեզ, զայն յետոյ ի ՌՄԽԵ. (1796) թուոջն յետս բերաք վասն ոմանց իրաց պիտոյանալոյ: Իսկ այժմ որովհետև կացութիւն երկրիս խարդախ երևի, վասն որոյ դարձեալ մէկ փոքր ղութիով ծանր և Հարկաւոր իրք շինեալ և կնքեալ յղեցաք ձեռամբ նուիրակին ձերոյ՝ Յովաննէս վարդապետին, զոր առեալ ընդ վաղապէս առ ձեզ եղելոց բեռանցն մերոց պահեստիք ի տան ձերում: Եւ թէ աՀա իբր բաժակ օրՀնութեան, Ե. (5) լիտր գինի յղեցաք, զոր ընկալեալ վայելեսձիր:

Գրեցաւ յամնոյս ԻԱ. (21):

¹²⁴⁶ **Ի Բայազիտ** - Թուղթ ի Բայազիտ առ Վարդան աղայն, եթէ ի ՌՄԽԴ. (1795) թուոջն, որ վասն վրդովմանց երկրիս եօթն բեռն իրս յղեցաք ի տանդ ձերում պահիլ յետոյ ի ՌՄԽԵ. (1796) թուոջն գչորս բեռն յայնցանէ յետս բերաք, յորոց մին էր գրեանց բեռն, և մնացին առ քեզ երեք բեռինք: Իսկ այժմ որովհետև այլևս կացութիւն կողմանցս կասկածաւոր է, աՀա դարձեալ գնոյն գրեանց բեռն, զոր Հէաք իսկ բացեալ և զայլ մի բեռն ևս եկեղեցական իրաց նորապէս շինեալ ընդ նուիրակ Յովաննէս վարդապետին յղեցաք, որք ընդ յառաջմէ մնացեալ երեք բեռանցն լինին Հինգ բեռինք: Եւ պատուէր, զի ի ապաՀով և ի ցամաք տեղուջ պահեստէ, որ վնաս չլինիցի: Եւ թէ աՀա իբր բաժակ օրՀնութեան Ե. (5) լիտր գինի յղեցաք, զոր ընկալեալ վայելեսձիր:

Գրեցաւ յամնոյս ԻԱ. (21):

508բ

¹²⁴⁷ **Ի Երնջակ** - Թուղթ առ Երնջակու Սրբոյ Կարապետի վանացն առաջնորդ Կարապետ վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ և ի բացասութիւն վասն կոնդակին ժողովարարութեան ինդրելոյ:

Գրեցաւ յամնոյս ԻԹ. (29):

1797 թ., [Հոկտեմբեր] - Թուղթք ի Մեծն Պօլիս, ի Տիարապէրի և ի Կարին

¹²⁴⁸ **Ի Մեծն Պօլիս** - Ղաւզ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն, եթէ որ ի տեղդ չորս Հազար երկու Հարիւր

և վացսուն զուռուշ փօլիցայ էիր տուեալ պարոն Մանուկին, զի նորին եղբայր պարոն Մատթէոնն ի Կարին Հատուցանիցէր պարոն Հայրապետին: Ահա յայնմ կողմանէ պարոն Հայրապետն ծանուցեալ էր մեզ, թէ ընկալայ ի պարոն Մատթէոսէն, և զաւզ էր ինդրեալ ի վերայ քոյ: Ուստի և մէք զայս յիշեալ դրամն ի Սուրբ Աթոռս և առ մեզ Հասեալ Համարելով, զայս զաւզագիրս գրեալ յղեցաք ի ձեռս պարոն Հայրապետին՝ Հասուցանել առ քեզ ի միամտութիւն:

Գրեցաւ յամնոյս [Հոկտեմբերի] Ե. (5):

1249 **Ղաւզ մի ևս առ Գալուստ վարդապետն, եթէ զի սոյն գրաբեր Բազարճուղու նոր գեղացի Օհանի որդի մահտեսի Ալէքսանն եկեալ ի Սուրբ Աթոռս յուխտ ի դառնալն աստի ետ մեզ աստ ութ Հարիւր զուռուշ նոր դրամ, և ինդրեաց ի տեղդ առնու: Եւ մէք զփօլիցագիրս զայս գրեալ ի վերայ քոյ, ետուք նմա, որ եկեալ յայդր ի քէն առնուցու: Ուրեմն ի գալ մահտեսի Ալէքսանին յայդր, ինն աւուր վատային ութ Հարիւր զուռուշ նոր դրամ տացես նմա, և զայս թուղթ մեր զաճիրայ առնել տուեալ առցես ի նմանէ, և առ քեզ պաճեսցէ:**

Գրեցաւ յամնոյս Զ. (6):

1250 **Ի Կարին - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն. յիշումն յօգոս[տոսի] ԻԵ. (25) և ԻԹ. (29) գրեալ Բ. (2)-ուց թղթոցն առ մեզ Հասանելոյն ի սեպ[տեմբերի] ԻԹ. (29), յորում թէ ի կողմանէ Փիլիպպոս ամիրայի թղթոյ և քո թղթոյ պաճարանին առ քեզ Հասանելոյն և քո զքոյն առնելոյն և զնորայն առ նա յղելոյն, որ ծանուցեալ էիր, իմացաք, բայց զնորին որպիսութիւնն և զմովպետի ուր լինիլն ազդ արասցես մեզ: Եւ Ախիջան աղայի թուղթն, որ ի Վան առ ինքն էիր յղեալ գրեալ էր նա զպատասխանին:**

Իսկ և գրեալ էիր, որ Պօլսոյ նուիրակ Գալուստ [վարդապետն] անդ փօլիցայէ տուեալ պարոն Մանուկին՝ 4000, 200, 60 զուռուշ և նոյն Մանուկի եղբայր պարոն Մատթէոնն յայդր Հատուցեալ է քեզ, որոյ աղագաւ զաւզ էիր ինդրեալ ի վերայ Գալուստ պետին, ահա գրեալ յղեցաք ընդ թղթոյդ, զոր Հասուցես նմա ի միամտութիւն:

Այլ և Գալուստ պետի ուղարկած մէկ զութիով ժամացոյցքն և կեօզլուկքն, զոր յուղարկեալ էիր ի Բայագիտ, անտի ևս էհաս առ մեզ, անտարակոյս լիցիս և մէք զպատասխանիս թղթոց Գալուստ պետի գրեալ յղելոց եմք:

Իսկ մէկ թայ քարեղէնքն, որ ի ճանապարհին է, եթէ առ քեզ է Հասեալ, եթէ չիցես յղեալ, ընդ քեարվանի յղեսցես կամ ընդ քեզ բերցես:

Դարձեալ, որ յառաջն գրած էիր, թէ տիրացու Գէորգն փօլիցայ էր արարեալ, և տուի () բայագիտցի Տրմօյին երկու Հազար ղուռուշ, և Գօրօենց Մկրտչին՝ մէկ Հազար ղուռուշ, զոր և այժմ յիշեալ էիր, և կրկին գրեալ էիր, թէ Տրմօյին երեք Հազար Հինգ Հարիւր ղուռուշ, որ իւր եղբայրն տայ տիրացու Գէորգին, և թէ բայագիտցի մաստեսի Եղիկին փօլից տուի Հինգ Հարիւր ղուռուշ, որ ամենից ջամն է եօթն Հազար ղուռուշ: Չայդ Գէորգն ևս գրեալ էր մեզ, վասն որոյ և մեր գրեցաք ի դաւթարոջդ: Եւ պատուէր, զի այլևս փօլիցայ չառնիցէ ի Բայագիտ:

Այլև այն պօլսեցի Պօղոսի ԲՃԾ. (250) ղուռուշն մեզ տալացուք, զոր առեալ էիր և գրեալ գրեցաք ի դաւթարոջդ: Եւ վասն գալոյն, թէ զպատրաստութիւնդ տեսեալ օր մի յառաջ շուտով ելեալ գայցես, և յորժամ Հասանիցիս ի Բայագիտ, անտի մեզ ծանուցես զգալդ, և զոր ինչ գրեսցուք քեզ, այնպէս արասցես:

Իսկ վասն ի Պօլսոյ յառաջ առ քեզ Հասեալ փոքր ամանաթին, որ Հարցեալ էիր, զայն Հետդ չբերես, այլ զգուշութեամբ ի տան ձերում պահեսցես, յետոյ երբ պիտոյասցի, յայնժամ իննդրեսցուք յուղարկել: Բայց սպիտակ դրամ որքան և գտանիցի մօտդ ընդ քեզ բերցես:

Եւ զի Հարցեալ էիր, թէ զի՞նչ իցեն պիտոյ սրբոյ Տանս, ահա գրեալ |509ա| եմք քեզ յառաջ ձիոյ և ջորոյ և իշոյ նալ առնուլ, և այլ ինչ իրս: Եթէ աժան իցեն, շատ բերես, և եթէ թանգ լինի, որչափ գրեալ եմք, այնչափն բերես:

Դարձեալ Ֆռանկի շաքար, որ մանր չլինի, այլ միջակ, ԺԵ. (15) թիլանի լիտր առեալ բերցես ընդ քեզ:

Այլև ուխտաւորաց մէկն, որ չորս ելտուզ ոսկի էր տուեալ քեզ վասն կանթեղ շինել տալոյ, որոյ և օրհնութեան թուղթն գրեալ յայնժամ ետուք նմա: Գիտեմք, որ զկանթեղն չես շինել տուեալ և Հարկաւոր չէ, վասն որոյ զնոյն ոսկիան ընդ քեզ բերցես: Նաև ի գալդ որչափ և կարես, մանր լաւ փարայ բերցես ընդ քեզ, որ ի տեղս ոչ գտանի:

[Գրեցաւ] յամսոյս Ե. (5):

¹²⁵¹ **Ի Տիարպէքիր** - Թուղթ ի Տիարպէքիր առ գանձապետ մաստեսի Յակոբն, եթէ յօգոս[տոսի] ԺՉ. (16) գրեցեալ թուղթդ էՀաս առ մեզ, այլ այժմոյս երկարապէս չկարելով զպատասխանիս գրեցելոց քոց գրել, զայսքան ինչ միայն գրեմք ի կողմանէ՝ նուիրակ Մկրտիչ պետին, զոր ինչ որ պիտութիւնս էիր գրեալ գիտացաք: Եւ վասն նորին յուղարկեալ դրամոցն այսպէս ծանիր, զի ղուռուշն այժմոյս Հարկաւորապէս պիտոյ չէ մեզ, իսկ վաթսոննոցն, որ գրած էիր, թէ Չ. (6) փարայով գնայ: Եւ պատուէր, զի ի

Նման է առցե և ամանաթ շինեալ և կնքեալ յղեսցէ ի Կարին առ պարոն Հայրապետն՝ ի նմանէ Հասանիլ մեզ:

Եւ թէ Մկրտիչ վարդապետն, երբ գայցէ ի քաղաքդ, զայս թուղթս ցուցես նմա, զի գիտասցէ վասն դրամոյն, թէ ըստ հրամանի մերոյ ես արարեալ:

Այլ և ինքն՝ նուիրակն, որ յԵրևան բնակեալ Բալիպէկեան մաշտեսի Յարութիւնին ի գալն ի սուրբ Երուսաղէմայ Հազար և յիսուն ղուռուշ էր տուեալ, որ աստ Հատուցէ մեզ, այժմ՝նա զայն դրամնն Հասոյց մեզ: Թէպէտ կամեաք վասն այնր ղաւզագիրս գրել և յղել, այժմանձէ[ուն] Հաս գոլով չկարացաք գրել, երբ գայցէ ի քաղաքդ և իմասցուք, յայնժամ զղաւզագիրն Հանդերձ թղթով գրեալ յղելոց եմք:

[Գրեցաւ] յամոյս Ե. (5):

Օրհնութեան եւ շնորհակալութեան կոնդակ 1796 թ. գանձանակական արդիւնքը յանձնած Կարսի Ժողովրդին: Բայագետի մաքսապետին շնորհակալագիր է յղում արած լաւութիւնների համար եւ, որպէս նուէր, բրինձ եւ գինի է ուղարկում: Նուիրակ Գեորգ վարդապետին օժանդակելու համար շնորհակալութեան նամակ Ղօնիայում Էջմիածնի գանձապետ պարոն Բէքմեզօղլի մաշտեսի Յարութիւնին: Մէկ մատաղացու կով եւ մէկ սօմար գարի նուիրած տէր Վարդան աւագ քաշանային (Քիւրաքարայ գիւղ) ուղարկուել է շնորհակալութեան նամակ:

Շնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ պարոն Առաքելին (Քէշաբորք գիւղ), պարոն Մարտիրոս քաշանային (Ենկիքեոյ), տէր Վարդանին (Համշառուշ գիւղ), պարոն Բարոնակին (Ենկիքեոյ), Եաղովթ կնոջը եւ նրա դուստր Անահապին (Աղջաղալա): Պարոն Մարտիրոսին (Ուռուսձուղ) շնորհակալագիր է յղում Էջմիածնի համար գանձանակ ստեղծելու համար: Մխիթարութեան նամակ Հանգուցեալ մաշտեսի Կարապետի որդի մաշտեսի Անդրեասին (Ղարս): Կարինի բնակիչներին շնորհակալագիր է յղում երեք տարուայ գանձանակական արդիւնքը յանձնելու համար: Այդ կապակցութեամբ նամակ է յղուել նաեւ գանձապետ պարոն Մարգարէին Մկրտչին: Իւղի, պանրի եւ մատաղացուի ժողովման կոնդակի օրինակ յղուած Նաչիայի ու ջրձակայքի ժողովրդին: Նոյն բնոյթի կոնդակ ի վերայ Բայագետոյ եւ Դիագինու: Շնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ Կատարինէ տիկնոջը (Կ. Պօլիս), նուիրել է մէկ ոսկի, պարոն Սարգսին (Ուրուսձուղ)՝ նուիրել է արծաթեայ կանխեղ Մարիամ տիկնոջը (Հաշտարիան)՝ նուիրել է զմի սրմայագործ ղաւուխ, զմի զոյգ սպիտակ մոմ, զվացսուն մնիսալ խոնկ եւ զԵՖԻ (5000) դիան դրամ: Նուէրները բերել է ուխտաւոր Գրիգոր աղան: Շնորհակալութեան կոնդակ Բայագիտի Ս. Կարապետ եկեղեցու ժողովրդին չորս տարուայ գանձակադրամն ուղարկելու համար: Մխիթարութեան նամակներ՝ Մարտոսանի վանից միաբան Գեորգ վարդապետին, Ղարսի գանձապետ, Հանգուցեալ Եղիայի որդի մաշտեսի Սաշակին:

Էջմիածնի համար գանձանակ Հիմնադրած եւ երախայրիքը Հաւաքելու կապակցութեամբ շնորհակալութեան կոնդակ է յղուել Ղաւթիայի (Կ. Պօլիս) արքունական պալատան դրան ջրկրացի: Գանձանակադրամը յանձնելու կապակցու-

Թեամբ ՀնորՀակալուծեան կոնդակ Քաղկեդոնի Հայերին: Նուիրակ Յովհաննէս վարդապետի Համար յանձնարարական նամակներ՝ Մշոյ կողմերի Աղջան եւ Աւրան գիւղերի բնակիչներին:

Նամակները գրուել են 1797 թ. յունուար-հոկտեմբեր ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 587-620

¹²⁵² **1797 թ. [Հոկտեմբե՛ր]** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ Ստեփաննոս ամիրայն, որ երբեմն ի տառապիսանացն էր, ՀնորՀակալուծիւն վաան տրոցն ի ձեռն նուիրակ Գալուստ վարդապետին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2398

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 509ա

1797 թ., Հոկտեմբեր - **Թուղթք ի Մասրղամ, ի Մեծն Պօլիս և ի Կարին**

¹²⁵³ **Ի Մարղամ** - Թուղթ ի յԱմստրղամ առ պարոն Ալէքսանն ՄասեՀեան՝ վաան Յովհաննէս սևագլխին անդ եղելոյ, զոր ոչ կամէին մնալ անդ: Վաան որոյ և սրբազանն բանադրեաց զնմա, զի տացէ զՀաշիւ իրաց եկեղեցւոյն և զբանալին, և ինքն ելցէ անտի, և սմա գրէ, թէ այսպէս արարաք:

Տէ ս ի մեծ տետեր յե[րես] 2395:

[Գրեցաւ] յամնոյս Ժ. (10):

¹²⁵⁴ **Թուղթ բանադրանաց առ յԱմստրղամ յորձացեալ Յովհաննէս սևագլուին Նախչուանցի:**

Տէ ս ի մեծ տետեր յե[րես] 2301:

¹²⁵⁵ **Ի Մեծն Պօլիս** - Թուղթ առ Մեծին Պօլսոյ պատրիարզն, ի պատասխանի թղթոյն յաղագս ի Մարտամ յորձացեալ Յովհաննէս սևագլխին. խօսիլ անդ ընդ ֆէլէմէնկի դէսպանին առ ի գրել անդ կառաւարչացն տեղոյն՝ առնուլ զեկեղեցին մեր ի ձեռաց նորա և յանձնել անդ եղելոց մերայնոցն:

Տէ ս ի մեծ տե[տեր] յեր[ես] 2300:

Պատասխան նամակ Կ. Պօլսի նուիրակ Գալուստ վարդապետին, որով նրան տեղեակ է պաշտում մայիսի 8-ին գրուած թուղթը գանձանակի սիւնով Հանդերձ յուլիսի 10-ին Մայր Աթոռ Հասնելու, այլև՝ պարոն Եսայի մահտեսի ՄասեՀեանի՝ երկիցս նամակ գրելու եւ իր եղբոր՝ պարոն Ալէքսանի Հետ տեղի ունեցած աղէտը ծանուցելու մասին. «որք ի Մարղամ ի Յօհաննէս սևագլխէն, որպէս զի գրեցմամբ ֆէլէմէկի դէսպանին Հանցի անտի սևագլուին և ի մէնջ թուղթ էր ինդրեալ առ պատրիարզն և նա ևս Հարցեալ էր զինչ կամին մեր, վաան որոյ ահա բանադրանաց թուղթ գրեցաք առ սևագլուին այն...»: Հարկ է Համարում տեղեկացնել նաեւ, որ իր յղած ժամացոյցներն ու ակնոցները, ինչպէս նաեւ պարոն Հայրապետի միջոցով ուղարկած ոսկիները տեղ են Հասել եւ դրանց դիմաց պատաս-

խան ստացագիր է ուղարկել: Տեղեկացնում է նաև, որ պարոն Մանուկին տուած ԴԻԲՃԿ. (4260) ղուռուշ փօլիցն իր եղբայր Մատթէոսը (Կարին) յանձնել է պարոն Հայրապետին, որի Համար եա ստացագիր է գրել, իսկ Ադրանայում բնակուող արեւելցի մաշտեսի Գէորգի եղբօրորդի պարոն Զաքարիան, որն ուխտի էր եկել Մայր Աթոռ եւ մնացել մի քանի օր, ինդրել է Ռ. (1000) ղուռուշ՝ պայմանով որ յիշեալ մաշտեսի Գէորգը կհատուցի քեզ (սկաստի ունի նամակի Հասցեատեր, նուիրակ Գալուստ վարդապետին): Գրուել է Հոկտեմբերի Ժ. (10)-ին (509աբ, Ա./5):

509բ

1256* **Ի Մեծն Պօլիս** – Թուղթ ի Պօլիս առ պարոն Եսային մաշտեսի Մասեհեան, եթէ երկոքին թուղթք քո յապրիլի 18 և յուհի[սի] 8 գրեցեալք Հասին առ մեզ ի յուլի[սի] 15. յիշումն վասն սատակման շահին ի Շուշի և ծանուցումն կողմանցս զորպիսութեանց: Եւ թէ ահա ըստ ինդրոյդ ձերոյ՝ բանադրանաց թուղթ գրեցաք առ սևագլուխն այն, թույթ մի ևս առ պարոն Ալէքսանն գրեցաք և յղեցաք ի ձեռս քո, որ Հասուցես յուրաքանչիւրան:

Ողջոյն պարոն Կարապետին, պարոն Մէրոմըղլիին, որդւոյն՝ պարոն Թօմային և նորին որդի պարոն Կարապետին, և եղբօրն, և որդւոյն: Տէս ի մեծ տե[տեր] յե[րես] 2488:

1257* **Ի Կարին** – Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն, եթէ յամնոյս Ե. (5) զպատասխանի թղթոցն քոց գրեցաք և Հանդերձ ինդրեալ ղաւզօքդ յղեցաք ի վերայ Ղարսայ: Իսկ այժմ ունէաք զպաշարանաւ միով թուղթս յուղարկել ի Մեծն Պօլիս՝ առ պարոն Եսային մաշտեսի Մասեհեան, յորում և գոյ Հարկաւոր թուղթ մի առ նուիրակ Գալուստ վարդապետն և ի մեջ նորին գոյ սանատ, վասն որոյ օր մի յառաջ յղեսցես գնացողի ձեռամբ, զի շուտով Հասանիցի: Այլև վասն գալոյն քո որպէս գրեալ եմք առաջին թղթովն, թարց յամելոյ զպատրաստութիւնդ տեսեալ գայցես: Գրեցաւ յամնոյս ԺԳ. (13):

1797 թ., Հոկտեմբեր - Թուղթք ի Մուշ և ի յԻւջքիլիսէ

1258 **Ի Մուշ** – Թուղթ առ Մշու նուիրակ Յովհաննէս վարդապետն, եթէ թուղթս, զոր գրեալ էիր առ մեր Աստուածատուր վարդապետն, մէք ևս տեսեալ իմացաք, զոր ի՛նչ էին ի նմա բանք, յաղագս արքորանացն Կլկլ Յովաննէս պետին, որ ծանուցեալ էիր, տրտմեցաք: Այլ զի գրեալ էիր, թէ ոմանք բազմակնիք թուղթ գրեցին առ Փիլիպպոս ամիրայն, ակն ունիմք, որ բանն ի բարին եզրեսցի: Ծանուցեալ էիր զդառնալդ ի Մուշ և այլով վարդապետաւ միով իջանելդ ի Բուլանուղ և ձեռն արկելդ ի գործ: Եւ զոր ի յարդեանցդ փօլիցայիւ Հասուցեալ էիր ԱՌ. (1000) ղուռուշ առ պարոն Հայրապետն և ԲՌ. (2000) ղուռուշ ի Բայազիտ առ տիրացու Գէորգն, իմացաք: Եւ պատուեր, զի զգուշովթեամբ վարիցի առ Ժողովուրդն տեղոյն, որ վնաս ինչ չպատահիցի:

Եւ թէ որ ի վերայ չորից անձանց թուղթ էիր ինդրեալ, աՀա գրեալ յղեցաք ի ձեռս քո տալ յինքեանց: Սրբալոյս միւռոն էիր ինդրեալ, զայն ևս առաքեցաք միով անօթով, զոր բաւականացուցես առ մնացեալ տեղիան: Բայց Գոմոց վանից Յովաննէս պեան, որ բանադրեալ էաք, աՀա Խ. (40) աւուրք են, որ եկեալ է ի սուրբ Աթոռս, զկնի աւուրց ինչ բերեալ յանդիմանեցաք և ապա զողորմեցին ասացեալ, արձակեցաք:

Գրեցաւ յամնոյս ԺԴ. (14):

Միաժամանակ ուղարկուել են նաեւ օրհնութեան եւ շնորհակալութեան նամակներ ուէ Տօնօյին, ուէ Գրիգորին, ուէ Դավթին «վասն լաւութեանցն ցուցելոց առ նուիրակն տեղւոյն» (509բ, Ա./4-6), տիրացու Յովաննէսին «վասն նուիրակ Յովաննէս վարդապետին» (Ա./7), Հաշտարիանտով բնակուող թիֆլիցցի տէր Ղազարին՝ Մայր Աթոռին նուիրատուութիւն անելու մտադրութեան, որի շրջանակներում չախու է առել եւ յղել իսկ մնացած դրամով ինդրել է զանազան իրեր առնել (Ա./8):

510ա

1259 **Ի յԻւչքիլիսա** - Թուղթ առ Իւչքիլիսու առաջնորդ Մկրտիչ վարդապետն, եթէ յամնոյս ԺԶ. (16) գրեալ թուղթդ ձեռամբ չուխատարին ձերոյ էՀաս, իսկ զվացսուն Հատ տաւարան ևս, զոր յղեալ էիք, բերեալ Հասուցին մեզ ամբողջապէս, զորոց սիւսՀին ևս տեսաք. և զոր գրեալ էիր զտանն Հատ ի տաւարուցն ընկալնուլ իբր ընծայս բարեկենդանութեան, շնորհակալ եղաք զքէս: Իսկ զյիսուն Հատ տաւարան ևս ի կողմանէ տալեացդ Հաշիւ եմք արկանելոց: Եւ թէ զչուխատարն միով պինիշիւ խիւլայազարդեալ դարձուցաք յետս:

[Գրեցաւ] յամնոյս ԻԳ. (23):

510ա

1797 թ., Հոկտեմբեր - **Թուղթք ի Մեծն Պօլիս և այլ տեղիս**

1260 **Ի Մեծն Պօլիս** - Թուղթ առ Մեծին Պօլսոյ պատրիարք Չաքարիա վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի մայիսի Զ. (6), վասն Դանիել վարդապետին յՈւռումէլի գնալոյն, և Մարտիրոս վարդապետին յԻզմիր, և այլ ևս բանք ինչ:

Տէ ս ի մեծ տե[տեր] յեր[ես] 2396:

1261* **Թուղթ առ Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն** ի պատասխանի Բ. (2) թղթոց նորա մայիսի 8 և ի յուլիսի 26 գրեցելոց, վասն զանազան իրաց և իրակութեանց: Եւ ծանուցումն առ պատրիարգն և առ պարոն Եսային մահտեսի ՄասեՀեան թուղթ գրելոյն թմեր՝ վասն Մարտամոլ սևակրին. յիշումն վասն ոսկուցն և Գէորգ վարդապետի 2979 ղուռուին և զիճ գրքոյ 40 ղուռուշին և կարնեցի պարոն Մանուկին 4260 ղուռուշ տալոյն, թէ նոցին ղաւզն յիշեալ եմք, յառաջքան զայս ի ձեռս պարոն Հայրապետին Հասուցանելքեզ ի միամտութիւն: Եւ թէ յաղագս Ուրուշճուղու մեր

գանձապետ մահտեսի Գրիգորի թղթոյն, որ գրեալ էիր, թէ յղեցի և դեռ պատասխանինն ոչ ընկալայ: Առ այն գիտես, որ նա ի ձեռն նոյն քաղաքացի ուխտաւորի միոյ զայն աւանդն կնքով յղեալ էր առ մեզ: Բայց զսիազին գնոց և ծախուց ժամացոյցն և ակնոցիցն և ի սապաթին եղեալ իրացն, զոր գրեալ էիր, դասելով ընդ Հաշիս նոցա և զՄանուկին տուեալ փօլիցայդ և զի վերայ տիրացու Գէորգին ունեցեալ դրամը՝ կարծելով, թէ մեզ իցէ Հասեալ և գումարեալ էիր զամենն ի միասին 7774 ղուռուշ 12 փարայ: Ծանի՛ր առ այդ, զի Մանուկին տուեալ փօլիցայիդ աղագաւ ըստ խնդրոյ պարոն Հայրապետին, զղաւզն յղեալ եմք և ի վերայ Գէորգին ունեցելոյդ 1800 ղուռուշ ի կողմանէ ոչ նա է բան գրեալ մեզ, և ոչ պարոն Հայրապետն: Մնայ ուրեմն իրաց գինն և ծախքն 1714 ղուռուշ 12 փարայ, յորոց ըստ գրութեանդ՝ 300 ղուռուշ ետուք ի տուն Նիկողայոսին և 60 ղուռուշ Գրիգոր վարդապետին, վերամնաց 1354 ղուռուշ 12 փարայ այսորիկ զղաւզն աճա գրեալ յղեցաք ընդ թղթոյս ի միամտութիւն քեզ: Ծանուցումն կողմանցս զորպիսութեանց: Տէ ս ի մեծ տետ[եր] յե[րես] 2399:

1262 Կոնդակ ի վերայ Ղալաթիու Սուրբ Լուսաւորիչ եկեղեցոյ ժողովուրդան. շնորհակալութիւն և օրհնութիւն վասն գանձանակադրամին իւրեանց, որ է 404 ղուռուշ:

1263 Կոնդակ առ Սամաթիու Սուրբ Գէորգ եկեղեցոյ Հասարակութիւնան. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն 188 ղուռուշ գանձանակադրամին:

1264 Կոնդակ ի վերայ Օրթայգիւղի Սուրբ Աստուածաճնի եկեղեցոյ ժողովուրդան՝ վասն 143 ղուռուշ և 30 փարայ գանձանակադրամին. օրհնութիւն և շնորհակալութիւն:

1265* Թուղթ առ Ալէմտաղու եկեղեցապան մահտեսի Պօղոսն. օրհնութիւն և շնորհակալութիւն՝ վասն 18 ղուռուշ քառասնից տալոյն, վասն Հոգւոյ ծնողացն:

1266* Թուղթ ի Ղալաթիա առ Երանուհի կինն. օրհնութիւն և շնորհակալութիւն՝ վասն 12 ղուռուշ նուիրելոյն Սրբոյ Աթոռոյս:

1267* Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան ի Ղալաթիա առ մահտեսի Գայիանէ կինն՝ վասն 10 ղուռուշ / 510բ / նուիրելոյն Սրբոյ Աթոռոյս:

Օրհնութեան եւ շնորհակալութեան նմանօրինակ նամակներ Ստեփաննոս ամիրային (Ղալաթիա) «վասն 110 ղուռուշ տալոյն... Ողջոյն որդւոյն՝ Մկրտիչ Չէլպուլոյն և թոռանցն՝ Գրիգոր, Տարայիչ և Իւանէ Չէլպիիցն» (510բ, Ա./1), Լեւոնի Պետրոս աղային (Ղալաթիա) «վասն 10 ղուռուշ Հոգեբաժին տալոյն... Ողջոյն որդւոյն՝ Աստօն, Պօղոս, Յարութիւն և Միքայէլ աղայիցն» (Ա./2), Տնտեսի Հաջագործ չմկաճակցի մահտեսի սարկաւազ Սիրունին (Ղալաթիա) «յաղագս 15

ղուռուշ քառասնից տալոյն» (Ա./3), չմշկածակցի թուլթունճի Աստուածատուրին (Ղալաթիա) «յաղագս 26 զուռուշ քառասնից տալոյն» (Ա./4), Եղիսաբէթ կնոջը (Ղալաթիա) «վասն 10 զուռուշ քառասնիցն» (Ա./5), չմշկածակցի Թօմասին (Սարաճիգար) «վասն 10 զուռուշ քառասնիցն տալոյն» (Ա./6), Ալեմհաղի Ժողովրդին «վասն Ե. (5) ամնց գանձանակին, որ է 75 զուռուշ» (Ա./7), Քաղկեդոնի Ժողովրդին «յաղագս 130 զուռուշ գանձանակին» (Ա./8), Ղառթայուի Ժողովրդին «վասն 120 զուռուշ գանձանակին» (Ա./9), Պալատումեղած ջրկիրներին «վասն Ե. (5) զուռուշ գանձանակին» (Ա./10), Պէգէստանի վարդապետներին (Սանտալ) «վասն 40 զուռուշ գանձանակին» (Ա./11), օթուրախճիներին «վասն 60 զուռուշ գանձանակադորամ Հասուցանելոյն» (Ա./12), քիւրքճոց էննաֆիներին «յաղագս 120 զուռուշ գանձանակին» (Ա./13), մէստճոց էննաֆին «վասն Հասուցեալ 20 զուռուշ գանձանակին» (Ա./14), Պալատումեղած սափրիչներին «վասն Հասուցեալ գանձանակին իւրեանց... որ է 8 զուռուշ» (Ա./15), Հալաճաճոց էննաֆիներին «վասն 76 զուռուշին» (Ա./16), սրթՀամամի իփակճիներին «յաղագս 60 զուռուշ գանձանակին» (Ա./17), իփակչոց էննաֆին «վասն 15 զուռուշ գանձանակին» (Ա./18), Շէհրիմէսի դերձակներին «վասն գանձանակին... որ է 10 զուռուշ» (Ա./19), Էրիպու բրտանէրին «վասն 22 զուռուշ գանձանակին» (Ա./20), սառաֆ մաշտեսի Ալետիքին «վասն 9 զուռուշ տրոցն» (Ա./21), թամանցի մաշտեսի Յարութիւնին «վասն 22 զուռուշ և 20 փարայ նուիրելոյն» (Ա./22), մաշտեսի Մարտիրոս աղային «վասն 5 զուռուշ տրոցն» (Ա./23):

1268 1797 թ., 6 նոյեմբերի - Թուրք առ Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն, ի պատասխանի Բ. (2), թղթոց նորա՝ յայսմ ամի մայիսի 8 և ի յուլիս 26 գրեցելոց վասն զանազան իրաց և իրակութեանց:

Յորմէ սիրով և օրհնութեամբ մեծաւ և քրիստոսաձիր ողջունիւ և սրբոյ Իջման տեղոյս նորին Հոգետած շնորհիւ գիտասաջիր սիրելիդ մեր և բարեջան որդի Սրբոյ Աթոռոյս՝ Գալուստ աստուածիմաստ վարդապետ: Չի թուղթ քո ի մայիսի 8 գրեալ, էՀաս առ մեզ ի յուլիսի 10, Հանդերձ սիաՀովն ինդրեալ թղթոցդ: Բայց պատասխանւոյն շուտով գրեցման օր ըստ օրէ ընդ առաջ ելին խափանմունք:

Նախ ի շիոթմաննէ բնակչաց երկրիս, որ թեպէտ և վիշապն չար չարեաւ կորեաւ, բայց շուրջ են զմեօք օձք և կարիճք, և խառնակութիւնն անպակաս, զոր յետոյ գրեսցուք:

Երկրորդ՝ ի պատաՀելոյ ոմանց Հարկաւորագոյն գրելեաց, որք չէին յետաձգելիք, որպէս զմիւռնացւոցն և այլոց:

Երրորդ՝ ի Հիւանդութենէ գործունէից և յայլ Հոգոց և Ժամանակն երկարեցաւ, և յառաջ քան զայն յարգելի եղբայրն մեր՝ պատրիարգ աստուածաբան վարդապետն և պարոն Եսային թուղթս էին գրեալ վասն Ամատրդամու յորջացեալ սեակրին, և Հարկ էր շուտով առնել նոցա պատասխանի: Վասն որոյ ի սեպտեմբերի... փութացաք գրել զայնս՝ Հանդերձ բանադրանօք առ սեազլուին այն, և յղեցաք ի ձեռնն պարոն Եսայեայ: Պատե՛հ

վարկաք յայնժամ Համառօտ թուղթ մի ևս առ քեզ գրել վանն այնր: Եւ զի պարոն Հայրապետն յառաջ քան զայն ծանուցեալ էր մեզ զառ ի քէն յղեալ ոսկոց առ ինքն ժամանէն: Նաև զտալդ յայդր կարնեցի պարոն Մանուկին ԴԻԲՃԿ. (4260) ղուռուշ, զի նորա եղբայր պարոն Մատթեոսն ի Կարին տացէ իւրն պարոն Հայրապետին, որ և ղավզս էր ինդրեալ ի վերայ քոյ, և մեք մէկ ղաւզ վանն ոսկոցն, և Գեորգ վարդապետին յառաջագոյն քեզ Հասուցեալ և ի քէն մեզ Հասեալ 2979 ղուռուշ փօլիցային և զի՞՞ գրքոյ գին 40 ղուռուշին էաք գրեալ, և զմիւս ևս ղավզ վանն Մանուկին տուեալ պօլիցայիդ յիշեցելոյ, վանն որոյ ի նոյն Համառօտ թղթոջն մերում, որ առ քեզ յիշեցաք զայնոսիկ: Ընդ որս և զլուղարկեալ ժամացուցացդ և զակնոցացդ առ մեզ Հասանիլն:

Իսկ ի յաւարտ մերձեցուցանելն մեր զինդրեալ թուղթսդ, մինչ կամեաք զքոյդ թղթոյն պատասխանին գրել, միւս թուղթս քո, զոր ի յուլիսի 26 էիր գրեալ, էՀաս առ մեզ ի Հոկտեմբերի 15, Հանդերձ երկրորդ սիահով թղթոցն, և Բ. (2) փոստուլայիւքն: Եւ զի նոսին գրեալդ ևս իմացաք: Ուրեմն ամենայն գրելոցդ Հարկաւորացն բանից ընկալ զպատասխանիս:

Յառաջնում թղթոջդ նախապէս գրեալ էիր զՄարտիրոս վարդապետին Հասանիլն յայդր Հանդերձ թղթովք մերովք, և գերապատուական եղբօր մերոյ՝ պատրիարգ աստուածապան վարդապետին սիրով ընդունիլն զնա և խիլայազարդելն, և զչինի անօթից բաժանման տնօրինելն ըստ իւրաքանչիւրոցն արժանեաց: Եւ վերջապէս, խորհրդակցութեամբ օրհնեալ իշխանապետացն զնա ի Չմիւռնիայ ուղևորելն, և զԴանիէլ վարդապետն ի յՈւռումելին:

Առ որս ամենեսեան շնորհակալ եղաք զձէնջ, և աՀա գրեցաք զփոխադարձ թղթոյ յարգութեան նորին: Եւ զոր գրեալ էիր վանն զմիւռնացոց թուղթս գրելոյն յայդր, իմա, զի աստ ևս էին գրեալ Հասարակութեամբ շնորհակալութիւն վանն Մարտիրոս վարդապետին, և ինքն Մարտիրոս վարդապետն ևս զնոցանէ էր շնորհակալութիւն գրեալ, և զօրինակ թղթոյ սաՀմանադրութեան նոցա յղելով, ինդրեալ էր զկոնդակ ի Հաստատութիւն այնմ:

Մարգար աղայն ևս յատկապէս թուղթ էր գրեալ շնորհակալ գոլով զՄարտիրոս վարդապետէն: Բայց խոժոռութիւն ցուցանելով զընկերացն, թէ ես յամենայնէ Հրաժարեցայ, այլ չտան ինձ Հանգչիլ, և անպատիւ առնեն զիս: Եւ մեք գրեցաք զկոնդակ մի մեծ ի վերայ ժողովրդեանն առ Հասարակ՝ օրհնելով զնորոգութիւն նախնեացն և պատուիրելով առ ի մնալ անխռով խաղաղութեամբ և այլն:

1269 թուղթ մի ևս ի վերայ քաՀանայից և իշխանացն, ի պատասխանի թղթոյն նոցա՝ ըստ այնց մտաց: Եւ յաւելլով, թէ փութասջիք ի պատիւ զմիմեամբք էլեալ, մի ոք միայն զինքեան Հո-

գասցէ, այլև զընկերին, և զայլ |2400| բազում զգուշացուցական բանս:

Առ Մարգար աղայն ըստ իւր վայելմանն շահեցողական բանս գրեցաք, յորդորելով շտարածայնիլ ի բազմութենէն, այլ սիրել զմիաբանութիւն և զխաղաղութիւն:

Մարտիրոս վարդապետին ևս դարձեալ պատուէրս գրեցաք՝ ջանս ո՛նել առ պաշտօնութիւնն սիրոյ և միաբանութեան:

Ծանուցեալ էիր վասն նորոգութեան որմոց Սուրբ Աստուածածին եկեղեցւոյն, որ ի Ղումղափու: Ուրախութիւն մեծ ընծայեցաւ սրտից մերոց, փառք Աստուծոյ և աչք մեր ի լոյս: Նոյն բարերարն Աստուած քաղցրացուցէ զսիրտս մեծազօր արքային և մեծամեծացն, միւս եկեղեցեացն ևս թոյլատրել ի նորոգել և ի շինել:

Յերկրորդ թղթոջդ գրեալ էիր վասն Ուրուշուրու մեր գանձապետ մահտեսի Գրիգորի թղթոյն, թէ յղեցի առ նա և դեռ պատասխանին չընկալայ: Առ այն միամիտ լիցիս, որ նա ի ձեռն նոյն քաղաքացի ուխտաւորի միոյ զայն աւանդն կնքով յղեալ էր առ մեզ, զոր ամբողջապէս ընկալաք, և թղթոյն պատասխանի գրեցաք, զի անհոգ լիցի:

Գրեալ էիր և զգործոյդ, որ ի Ղալաթիա աւարտելոց ես և գնալոց յՕրթագեղ, բարի է, զոր և Տէր յաջողեցէ, բայց և զգուշացիս ի ժամանակին երկարեցմանէ:

Յաղագս Մարտուանու առաջնորդ Հանգուցեալ Յովաննէս վարդապետի սպասաւոր Եփրեմ վարդապետին, որ ի յԱմիդ առաջնորդ է կարգեցեալ, և ինդրեալ է ի մէջ կոնդակ լինիլ պարտ էր թուղթ մի գրել առ մեզ, զի ճանաչէաք զնա, և այժմ |2401| յոյժ զբաղեալ կամ յիրաւի: Իսկ եթէ դիպուկ ժամանակ լիցի, վասն քոյդ բանի գրեսցուք¹⁹⁸:

Ծանուցեալ էիր ևս զմայիսի ԻԲ. (22) գրեալ թղթոյն մերոյ Հասանինն առ քեզ և զպատրիարգ գերզգօն վարդապետի ընթեռնունն, և ցաւինն վասն Սրբոյ Աթոռոյս ի պատճառս մեր թարմատար խանի կայից աւանդ լինելոյն աստ, և շահի յափշտակելոյն: Առ այն ծանիր, զի զանցեալ անցիցն և մէք տեղեակ եմք, վասն որոյ և յառաջագոյն որչափ և ստիպեցին զմեզ, թէ դրան մարդիկն և թէ ինքն խանն իւր գրովն, ոչ Հաճեցաք: Այլ ի դեկտեմբերին մինչ վասն այս գիւղացւոց ողորմելութեանն գնացեալ կայաք յԵրևան, յանկարծ առանց մեզ ասելոյ զուղտս բարձին և ուղևորեցին ի գիշերի, և նազիրն եկեալ յանապատն առ մեզ զմի թուանքճի ինդրեաց, թէ գնացեալ գործակալաց քոց ասասցէ մի տուն տա-

¹⁹⁸ Մարսվանի (Սեբաստիայի նահանգի Մարզվան գավառակի համանուն Մարզվան ֆաղաֆն է) հանգուցյալ առաջնորդ Հովհաննէս վարդապետի սպասավոր Եփրեմ վարդապետը, որն Ամիդի առաջնորդն է եղել, թերևս Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում թաղված միևնույն Եփրեմ արքեպիսկոպոս Մարզվանցին է, որը վախճանվել է 1829 թ. ապրիլի 18-ին (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 216, արձ. 443):

ցեն, որ զբեռնան դիցեն անդ: Յայնժամ զի՛նչ ոնեաք ասել երկրի իշխողին, զայս ասացաք, թէ ուր և դնիցէք, զբուռն կնքեսցիք և զփականսն առ ձեզ պաշէսցիք:

Ասպէս եղև բանն, որ մէք ամենեկին ոչ տեսաք զիրոն և ոչ թէ կամն ցուցեալ էաք պաշէլոյ: Եւ մինչ ծառայն շահին և Հաճի Մամարզայ բէկն և Հաճի Ջաֆարն եկեալ ի գիր Հանէին և տանէին: Այլև մէք, Հեռի մնալով յիրացն, զգործակալն մեր՝ զմիրզայն եդաք ի վերայ, որք առին զերեսն սիրաւոյն, և կնքել ետուք յիշեալ երից անձանցն, զոր կամէաք սարտարին սև կնքեցուցանել, բայց մինչ այնպէս ագաւորութեամբ վարեցաւ առ մեզ, չբերաք ի մէջ: Արդ, եթէ ճշմարտութիւնն յաղթօղ է, չունին ինչ մեղս դնել մեզ, այլ մինչ որդիք սատանայի են, Քրիստոս փրկեսցէ զմեզ:

Եւ վասն սարտարի առ ի մէջ աւելորդ պաշանջմանցն, որ ի կարծիս էք մտեալ, թէ ի Համբաւոց անգէն զինուորին իցեն, այն զրպարտութիւն Հեռի մնաց ի մէջ, զի այլ իմն լուր էր ազդեցեալ յականջս սոցա իբր թէ՛նա ընդդէմ մեր յարուցեալ իցէ: Եւ յորժամ զանշահի ընծայն ևս կանխաւ առաքեցաք, այնպիսի կարծիք իսպառ բարձան ի մէջ: Այլ սարտարի ինդդրէն յանկուշտ ագաւորութենէն էր, որ ոչ միայն ի մէջ, այլև ի բազմաց քան զպատկանն պաշանջէր յայնժամ, և մէք յապագայէն Հոգալով, թէ գո՛ւցէ տարեկան Հարկ կարգեսցի ի վերայ մեր, յանձն չառնուաք: Բազում անգամ ասէր՝ էլ գնա ի տեղին քո, և մէք պատասխանեաք, թէ առանց քոյդ ինամոց ոչ կարեմք գնալ: Վասն այն եղև յետանալն մեր յԵրևան: Բայց վերջապէս զկէսն ետուք, և զկէսն խոստացաք յետոյ տալ, և դարձաք ի Սուրբ Աթոռս, և մինչ կործանեցաւ աշխարհաւերն, զայն մնացեալն ոչ լրապէս ետուք և ելեալ կորեաւ:

Եւ վասն գաղղիացւոց Համբաւոցն, որ գրեալ էիր, ծանեաք: Ամենակալն Տէր խափանեսցէ զչարն յաշխարհէ և պաշտպանեսցէ եկեղեցւոյ իւրում սրբոյ:

Իսկ միս սիաւհիովն, որ ինդրեալ էր զմնացեալ զանձանկաց կոնդակն և զգանձաւետաց և զայլոց թուղթն, նաև առ բազումն վասն աղիւսոցն մասնակցութեան. գիտասցես, որ զառաջին սիաւհոյդ զթուղթն ի չորս ամնաչափ ժամանակս Հազիւ կարացաք ի գլուխ բերել, զի բազում են Հոգք մեր ի ներկայումս: Այսուհետև գուցէ թէ ժամանակ գտեալ զմնացուած թուղթն գանձանակաց ևս գրիցեմք (զի անգամ մի սովորութիւն եղև ի վերայ մեր ամ ըստ ամէ գրելն, և այլ չկարեմք զանց առնել, որ նուիրակէ ի նուիրակ գրելն առաւել Համեղ և վայելչագոյն լինիր):

Այլ այդ յիշատակաց թուղթն, որք Հետզհետէ ինդրին, յիւրաքանչիւր ժամանակի ոչ լինի ձեռնՀաստութիւն վճարելոյ, և թէ Աստուած ապաշուկեսցէ ի յալէկոծութեանց, թերևս գրեսցուք:

Եւ վասն գնեալ և յղեաք վէճ իրացդ իմա, զի Հասեալ է ի Կարին ի ձեռս պարոն Հայրապետին, և մէք գնա ինդրեալ եմք վասն

Հաշուոյ գործոյն, և նա զայն սապատն ևս ընդ իւր բերելոց է: Բայց զսիազին գնոց և ծախուց ժամացուցացն և ակնոցացն և ի սապատին եղեալ իրացն, զոր գրեալ էիր, դասելով ընդ Հաշիւս նոցա և զՄանուկին տուեալ փօլիցայդ, և ի վերայ տիրացու Գեորգին ոնեցեալ դրամդ, կարծելով թէ մեզ իցէ Հասեալ և գումարեալ էիր զամէնն ի միասին 7774 ղուռուշ 12 փարայ, և Հետևաբար գրեալ էիր 300 ղուռուշ տալ քանաքեռցի Նիկողայոսի որդւոցն, և 60 ղուռուշ առ այդ, տալ թիֆլիզեցի Գրիգոր վարդապետին, և մնացելոցն աղագաւն ղավզ գրել: Ծանիր առ այդ, զի Մանուկին տուեալ 4260 ղուռուշ փօլիցայիդ աղագաւ, յառաջքան զգալ թղթոյդ, ըստ ինդրոյ պարոն Հայրապետին գրեալ եմք զղավզդ, որպէս և ի վերոյիշեցաք:

Եւ ի վերայ Գեորգին ոնեցելոյդ 1800 ղուռուշի կողմանէ մինչև ցայժմ ոչ նա է բան գրեալ մեզ և ոչ պարոն Հայրապետն: Մնայ ուրեմն իրաց գին և ծախքն 1714 ղուռուշ 12 փարայ: Յորոց 300 ղուռուշ տուեալ ի տունն Նիկողայոսին, և 60 ղուռուշ տուեալ Գրիգոր վարդապետին, վերամնաց 1354 ղուռուշ 12 փարայ: Այսորիկ զղավզն աճա գրեալ առաքեցաք ընդ թղթոյս ի միամտութիւն սիրելոյդ:

Չանցիցն երկրիս և կողմանցս երկարապէս կամեաք գրել քեզ, բայց զի պարոն Հայրապետի թղթովն զայնքան ինչ իմացեալ էք, և առ պատրիարք վարդապետն գրեալ թուղթն մեր ևս, իհարկե, ցարդ Հասեալ լինի յայդր: Վասն որոյ աւելորդ Համարելով զերկարն, այժմ միայն զայնոսիկ անցս գրեմք, որք անցին աստ և ի կողմանքս յետ գնալոյ սարդարին:

Արդ, իբրև ել դժնդակն ի բերդէն, երևանցիք մտին ի բերդն: Քանի աւուրց անցեալ ի վերայ (տէ ս ի վերդ յերես 2394):

Եւ զի զԵրևանու ՄաՀմատ խանն և զԽօյու Չաֆարղուլի խանն առաքէ գալ յիւրաքանչիւր տեղիս, և զայլ ոմն ևս յիւրոցն յուղարկէ մի քանի Հարիւր արամբք պահապանս բերդին Երևանու: Եւ զի ի ՄաՀմատ խանէն երկիցս թուղթք Հասին մեզ վասն գալոյն իւրոյ, և բազումք գնացին ընդառաջ, Հասան խանն ել ի բերդէն և գնաց դէպ ի Խօյ: Չկնի աւուրց բերդապաճն եկեալ եմնտ ի բերդն, այլ խանն մեր արգելեալ ի Չաֆարղուլի խանէն, որ սարդար է կարգեցեալ, որ և աստուատ ԵՃ. (500) զօրս էր ինդրեալ, և գնացին: Եւ յայլոց գաւառաց ևս ժողովեալ յարձակեցան ի վերայ Սատրղ խանի էլիկացն և յաւարի առին զանդեայս և զոչխարս նոցա, և աճա խանն կրկին Հրամանագրով շահին գայ ստուգիւ առ ի զՀարկն ժողովել և յուղարկել:

Յայս քանի ամիսս վասն անտիրութեան երկրիս, գրեթէ Հզօրքն ուտէին զանզօրսն՝ աւազակութեամբ, յափշտակութեամբ և երբեմն սպանմամբ ևս: Յորոց և մէք անՀանգիստ և ցաւալիցք:

Իսկ ի գալստեան ավագակապետացն ևս թէ զինչ ենք կրելոց, չգիտեմք:

Աստուած Հոգասցէ վասն սրբոյ Տանս և ազգիս մերոյ և մեր: Եւ դու զճշմարիտ սերդ և զօգտաջանութիւնդ Հանդերձ որպիսայսո գրովդ անպակաս առնելով, ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԽԶ. (1797) թուոջս և ի նոյեմբեր Զ. (6), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2399-2401

¹²⁷⁰ 1797 թ., դեկտեմբեր - Կոնդակ ի վերայ Սուրբ Խաչ եկեղեցոյն Իսկիստերու վասն գանձանակին (օրինակն է ի մեծ տետեր 2187 երեսն)¹⁹⁹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 104բ

510բ

¹²⁷¹ 1797 թ., դեկտեմբեր, ի Մեծն Պօլիս - Թուղթ առ Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն. յիշատակութիւն քան զայս յառաջ գրեցեալ Բ. (2) թղթոցն ի Հոկ[տեմբերի] Ժ. (10) և ի նոյե[մբերի] Զ. (6) և ծանուցումն վասն յետին սիաւով ինդրեալ թղթոցն ըստ մեծի մասին գրելոյ և յղելոյ, և զորպիսութեանց կողմանցս, և վասն անցիցն, որ մուղանցիք զՕշականու Գետառ կոչեցեալ անդաստանն ջանալով յափշտակել: Եւ թէ յԱդրանու բնակեալ մաւտեսի Գէորգի եղբօրորդի պարոն Չաքարիայն եկեալ յովստ ի Սուրբ Աթոռս, Հազար ղուռուշ դրամ փոխ էառ ի մէնջ և սանատ ետ, զոր ի Հոկ[տեմբեր] ամեսանն յղեցաք առ քեզ, զի զդրամն ինդրեացես ի մաւտեսի Գէորգին: Իսկ նոյն պարոն Չաքարիայն կացեալ աստ երկարապէս և մինչ Հանդերձեցաւ ուղևորիլ և գնալ ի Սուրբ Կարապետ, չունելով զբաւական խարճի, դարձեալ ինդրեաց ի մէնջ և էառ Հազար ղուռուշ ևս և սանատ ետ: Եւ մեք զայն երկրորդ սանատ ևս այժմ ընդ սոյն թղթոյս յղեցաք առ քեզ:

Գրեցաք և զթուղթ մի առ յիշեալ մաւտեսի Գէորգն վասն ոմանց բանից և վասն սանատիցն յիշեցելոց, զի զդրամն Հատուցեք քեզ: Ուրեմն, զայդ թուղթոյն յղեցես առ նա և թէ զառաջին ԱՌ. (1000) ղուռուշն չիցես առեալ, այժմ ԲՌ. -ն (2000) ևս ի միասին պահանջեցես և ի Հատուցանելն, զսանատն առ նա յղեցես:

Գրեցաւ յամնոյս ԻԴ. (24): Տէ ս ի մեծ տե[տեր] յե[րես] 2402:

¹²⁷² Ի յԱդրանայ - Թուղթ ի յԱդրանա առ մաւտեսի Գէորգն. յիշատակութիւն թղթոյն յառաջ գրեցելոյ և ծա[511ա]նուցումն վասն աւանդիցն, եթէ Հասուցաք առ որ Հասանելիք էին: Եւ վասն իւր եղբօրորդի պարոն Չաքարիային Սրբոյ

¹⁹⁹ նոյն օրը գանձանակի կոնդակ է ուղարկվել նաև Սկյուտարի Ս. Կարապետ եկեղեցուն (ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 104բ):

Ալթոռոյս փոխ առեալ դրամոցն, եթէ յառաջքան զայս մէկ Հազար ղուռուշ դրամ փոխ էառ ի մէնջ և սանատ ետ: Եւ մէք զայն առաջին սանատ յղեցաք ի ձեռս Գալուստ պետին, զի Հասուցէ առ քեզ և դրամն ինդրիցէ: Բայց նոյն պարոն Չաքարիայն երկարապէս կացեալ աստ, և մինչ կամեցաւ գնալ ի Սուրբ Կարապետ, զբաւական խարճի չունելով, վերստին էառ ի մէնջ Հազար ղուռուշ ևս և սանատ ետ, որ լինի երկուքն ի միասին ԲՌ (2000) ղուռուշ, վասն որոյ սոյն երկրորդ սանատն ևս յղեցաք առ Գալուստ վարդապետն՝ Հասուցանել առ քեզ, զի զդրամնն Հատուցես առ նա և զսանատն ընկալցիս ի նմանէ:

Տէս ի փոքրագիր տե[տեր] յե[րես] ՅԺԴ. (314): [Գրեցաւ յամնոյս] ԻԴ. (24):

1273 Կոնդակ ի վերայ Ղումղափուի Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ ժողովուրդան. օրհնութիւն և շնորհակալութիւն յաղագս գանձանակական դրամոցն, որ է 682 ղուռուշ:

1274* Թուղթ առ նորին գանձապետն՝ պարոն Մարտիրոն, մահտեսի Աստուածատուրն և պարոն Միքայէլն. օրհնութիւն և շնորհակալութիւն սակս Հասուցեալ գանձանակադրամին և պատուէր՝ արի և ժիր լինիլ ի գործս:

1275 Կոնդակ առ Պալաթու Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյ ժողովուրդան. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն 362 ղուռուշ և 6 փարայ արդեանց գանձանակին:

1276* Թուղթ առ նորին գանձապետ Իսահակ ամիրայն՝ վասն Հասուցեալ գանձանակադրամին. օրհնութիւն և շնորհակալութիւն և պատուէր՝ արի և ժիր լինիլ ի գործս իւր:

1277 Կոնդակ առ Խազգեղու ժողովուրդան. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն 145 ղուռուշին:

1278* Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան առ նորին գանձապետ Եղիա Չէլպին՝ յաղագս Հասուցեալ գանձանակական արդեանց և պատուէր, զի Հաւատարմաբար կատարեսցէ գգործս իւր:

1279 Կոնդակ ի վերայ Իսկիւտարու Սուրբ Կարապետի եկեղեցւոյ ժողովուրդան, յաղագս 120 ղուռուշ գանձանակին. օրհնութիւն և շնորհակալութիւն:

1280* Թուղթ առ նորին գանձապետ պարոն Բարսեղն՝ շնորհակալութիւն վասն Հասուցեալ գանձանակին:

1281 Կոնդակ Իսկիւտարու Սուրբ Խաչ եկեղեցւոյ ժողովուրդան՝ յաղագս 93 ղուռուշ գանձանակին. օրհնութիւն և շնորհակալութիւն:

1282* **Թուղթ առ նորին գանձապետ պարոն Չաքարիայն՝ վասն Հասուցեալ գանձանակադրամին. օրհնութիւն և շնորհակալութիւն:**

1283 **Կոնդակ ի վերայ տօլլայնտճոց էննաֆին. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն 200 ղուռուշ տրոցն:**

1284 **Կոնդակ ի վերայ քէսաճոց էննաֆնն. շնորհակալութիւն վասն 40 ղուռուշ գանձանակին:**

1285 **Կոնդակ ի վերայ Ղումղուփուփի և Ենիղափուփի սափրիչնն. օրհնութիւն և շնորհակալութիւն յաղագա 77 ղուռուշ և 10 փարայ գանձանակին իւրեանց:**

1286 **Թուղթ առ Ղալաթիո թօփխանայ-Ղափուփի թութոնճիւնն. Շնորհակալութիւն վասն 15 ղուռուշ տրոցն:**

1287 **Թուղթ առ Ազապղափուփի չիւիչիւն Ղալաթիոյ. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն 5 ղուռուշ գանձանակին:**

1288 **Թուղթ առ տպագրիչ տիրացու Պօղոսն. շնորհակալութիւն վասն 3 օզմայ փոքրադիր այտաղմայ թղթոցն, որոց մէկն 11 ղուռուշով, որ լինի 33 ղուռուշ:**

Շնորհակալութեան նմանօրինակ նամակներ նուիրատուներ եկեղեցապան Ստեփան աղային եւ Հանգուցեալ Պետրոս աղայի կին Հեղինէին (Ղալաթիա) «վասն 30 ղուռուշ Հոգեբաժնին» (511ա, Ա./17), միեւնոյն Ստեփան աղային «վասն 10 ղուռուշ տրոցն» (Ա./18), Հանգուցեալ Սիւքիւսի որդիներ աղայ Յովհաննէսին, Ստեփանին, Պետրոսին, Յովակիմին եւ դուստր Մարիամին (Պալաթ) «վասն 50 ղուռուշ կտակի Հօրն իւրեանց» (Ա./19), պէլլիկչի Կարապետ աղայի որդի մահտեսի Մարգար Չելչափին (Խասագիւղ) «յաղագա 100 ղուռուշ նուիրելոյն և 40 ղուռուշ քառանիցն, և վասն Ա. (1) խաչի մահրայամին» (Ա./20), Համասիփու կնոջը «վասն 10 ղուռուշ քառանիցն» (Ա./21), ճուարճի մահտեսի Մարուգէին եւ պարոն Սերօբին՝ Համասպտասիսանաբար «վասն 100 ղուռուշ տալոյն... վասն 25 ղուռուշ տալոյն» (Ա./22-23), Տուտի կնոջը «վասն մի ասխարուր սեղանի սիւռոցին» (Ա./24), Հին եկեղեցապան Յակոբ աղային եւ իր որդի Գաբրիէլին «վասն 50 ղուռուշ տալոյն» (Ա./25), 1511թ տիրացու Յովհաննէսին եւ իր կողակից Ասթառամին «յաղագա մէկ միջակ ոսկեզօծ խաչին՝ Հանդերձ ասխարուր ներքին սիւռոցան» (Ա./26), Ալէքսան եւ Սարգիս աղաներին «վասն 35 ղուռուշ կտակին» (Ա./27), Ղալաթիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու դպիրներին եւ տիրացուներին «վասն 50 ղուռուշ տալոյն» (Ա./28), Թերսիսանայի Պօղոսին, Աստուածատուրին, Պետրոսին եւ «Համայն ուէնջպերան «վասն 40 ղուռուշ նուիրելոյն» (Ա./29):

1289 **1797 թ., 24 դեկտեմբերի - Թուղթ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն զայս յառաջ գրեցեալ Բ. (2) թղթոցն, և ծանուցումն վասն յետին սիահիով ինդրեալ թղթոցն ըստ մեծի մասին գրելոյ և յղելոյ, և զորպիսութեանց կողմանցս, և մանաւանդ վասն անցիցն, որ մուղանցիք զՕջականու Գետառ կո-**

չեցեալ անդաստանն ջանալով յափշտակել, ի գնալ անդ Յակոբ վարդապետին և ոմանց մերայնոց գրով շէխիսլամին, նոքա յայտնի իբր խաղաղութեամբ էին խօսեցեալ, և ի գիշերի աւազակաբար զՅակոբ վարդապետն վիրաւորեալ և կողոպտեալ, որ և յետ աւուրց մեռաւ, և ի գալ խանին դաւի եղև, և մուլքն մեր դարձաւ ի ժառանգութիւն Սրբոյ Աթոռոյս:

Յորմէ քրիստոսաձիր սուրբ ողջունիւ և Հոգևոր օրհնութեամբ և սիրով ծանիր Հարազատամիտ սիրելի մեր և օգտախոհ որդի Սրբոյ Աթոռոյս՝ Գալուստ գերզգօն վարդապետ: Չի ի Հոկտեմբերի Ժ. (10) և ի նոյեմբերի Զ. (6) գրեցաք առ քեզ զպատասխանի թղթոցն քոց ի մայիսի 8 և ի յուլիսի 26 գրեցելոց: Ընդ առաջնոյ թղթոյն մերոյ յղեցաք զթուղթսն, որ վասն յԱմստերդամու սևագլխին, և զայլ ինչ գրուածս, և ընդ յետնոյ թղթոյն մերոյ առաքեցաք զառաջագոյն յղեալ սիահնոյդ զկոնդակսն գանձանակաց և զայլ թուղթսն, Հանդերձ դավլովն գնոց և ծախուց առեալ և յղեալ իրացդ: Յորոց և թէթև իրքն յայնժամ Հասեալ էին առ մեզ, որպէս ծանուցաք: Բայց զՀակն պարոն Հայրապետն էր բերելոց, որ և ահա յամսոյս ԺԵ. (15) բերեալ առ մեզ Հասոյց, որոց սակս չնորճ ունիմք աշխատասիրիդ, զոր Տէր օրհնեսցէ և զօրացուցէ, և ի բարեյաջողութեան պահեսցէ:

Այլ արդ, զի յետին սիահնովդ ինդրեալ էիր զկոնդակս վասն միւս մնացելոց եկեղեցեացն և էսնաֆիցն և այլոց արդիւնատուաց, իսկ յամեցաւ գրովթիւն նոցին յաւուրս բազումս, գիտաստիճիր զպատճառն: Քանզի չարաբարոյ անօրէն մուղանցիքն Ղզլթամիր գեղջ, որք մերձ գոլով Օշականու, ցեցք են գեղջս այնմիկ և ապականիչք անդաստանացն, և այգեացն մերոց, և զզուեցուցիչք խղճալի օշականացւոց, ի վերայ զանազան չարերաց իւրեանց, յանդգնեցան և գրաւել յինքեանս զԳետառ կոչեցեալ անդաստանն: Չի մերձ ի յայն տեղին երևելով աւերակք ինչ տանց, Հաճի Հասան անուն լկտի ոմն, որդի Մուլքի բէկի, բանս եղեալ ընդ նոսա քանի ամօք յառաջ, և գնացեալ առաջի շէխիսլամին, զսուտ վկայս ևս ի մէջ բերելով ասացեալ էր, թէ այն աւերակքն գիւղ էր՝ անուն ՄաՀմատապատ, և ի ժառանգութեան նախնեաց իմոց էր, այժմ՝ զայն գիւղ վաճառեմ՝ Վէլիբէկի որդի ՄաՀմատ բէկին կամ Մաշաթի Սատրղին:

Առ այս և շէխիսլամն ղապալայ էր գրեալ և տուեալ նոցա: Յառաջ քան զվրդովիլ երկրիս երբեմն մինչ ջանացին ձեռնարկել մուղնեցիք ի Գետառ կոչեցեալ անդաստանն, յայնժամ ի դրան խանին ոմանք բան Հասկացօղ մարդիկ գտանելով, ի ձեռն նոցա խափանեցաք զջանս նոցին: Բայց յայսմ ամի ի ժամանակս Հսձոց չալթուկին, մինչ Հասան խանն էլ ի բերդէն և գնաց, և ՄաՀմատ խանն ևս ի Թավրեզ արգելաւ, և երկիրս անիշխան կայր, անօրէն մուղանցիք Համարձակեալ զարթուցին զայն դաւայն և զստու-

Թեամբ առեալ ղապալայն, զօրացուցանելով ասացին, թէ զՄաւ-
մատապատ գիւղ զոր գնեալ եմք, Գետառ նորա անդաստանն է
և ոչ Օշականու: Վասն որոյ զտասանորդն արդեանց տեղտջն մէք
պարտիմք առնուլ:

Չոր ի լսելն մեր՝ երկիցս թուղթ գրեցաք առ անզգամ Մաւ-
մատ Հասանն և նա պատասխանի արար, թէ մէք մուլք եմք գնեալ
ղապալայով և ոչ ձեռն բառնամք: Որ և զումն ի յիւրոց մուքանաճի
յղեաց ի յՕշական՝ Հանել զտասանորդն ի Գետառէն Հնձեցելոց
չալթուկացն:

Յայնժամ ապա յուղարկեցաք յԵրևան |2403| գՅակոբ և
զՅովաննէս վարդապետն և զմիրզայն, և թուղթս գրեցաք առ
չէխիսլամն և առ նազիր Հաճի Ջաֆարն, զի յոչ գոլն խանին աստ,
ինքեանք դատ արասցեն: Շէխիսլամն ասացեալ էր, թէ նոքա ինձ
Մաւմատապատ գիւղ են ասացեալ և ղապալայ գրեցուցեալ զի
կա՛յ նոցա ի յՕշականու: Եւ թուղթ էր գրեալ առ Մաւմատ Հա-
սանն՝ գալ ի դատարանն և պատասխանել վասն այնպիսի արար-
մանց իւրոց: Եւ Հաճի Ջաֆարն մարդ էր կարգեալ՝ տանիլ զայն
թուղթ առ մուղանցիսն:

Մինչ թղթատարն գնացեալ էր առ նոսա, յանձն առեալ էին
գնալ ի շարն, բայց անագանեալ ի քանիս աւուրս, յորմէ ձանձրա-
ցեալ վարդապետացն և միրզային, կրկին գնացեալ էին առ
ախոռնդն և ասացեալ թէ մինչև յէ՛րբ սպասեսցուք նոցա, ահա ոչ
եկին, մեզ պատասխանի իմն տուր: Եւ նա թուղթ էր տուեալ սոցա
ի վերայ Մաւմատ Հասանին, թէ եթէ ունէիր զիրաւունս, պարտ
էիր գալ ի շարս, այլ զի խոյս տաս ի շարէ, ձեռն բարձ յայդ մլքեդ,
որ Իւչքիլիսայինն է և այլն:

Չայս թուղթ մինչ բերին վարդապետքն և միրզայն, այլևս
ինքեանց ասացաք տանիլ յՕշական և ցուցանել անզգամացն, և
խօսիլ վասն մլքին: Ի գնալն սոցա անդ կոչեալ էին զՄաւմատ
Հասանն գալ և պատասխանի առնել: Իսկ նա ինքն ոչ գալով զեղ-
բայրն էր յղեալ քանի քեաթխուտայիւք, որք եկեալ և տեսեալ
զթուղթս ախոռնդին, ասացեալ էին, թէ մեր մարդն այսօր գնաց
առ ախոռնդն, սպասեսցուք մինչ դարձցի: Եթէ մեզ իցէ Հասու-
ցեալ մեր է լինելոց մուլքն, և թէ ձեզ իցէ Հասուցեալ ձեր է լինելոց:

Եւ մերքն պատասխանել էին, թէ ըստ ձերդ ասութեան այսօր
և վաղիւն ևս նայեսցուք: Բաց յայսմանէ, այլ վճճ կամ բանակոու-
թիւն ինչ չէր եղեալ բնաւ, այլ իբրամ էին ցուցեալ առ միմեանս
բանիւք և ուտելօք: Որոյ զկնի միրզայն դարձեալ էր առ այսր և
վարդապետքն մնացեալ էին անդ յՕշական, և մուղանցիքն ևս
դարձեալ ի կործանելի գիւղի իւրեանց:

Ապա խորամանկ և ժանտ անիծեալքն ի նոյն գիշերի յեօթ-
ներորդ ժամոն բազմութեամբ եկեալ էին Հուպ առ պարիսպն
Օշականու, ոմանք ընդ ոմն ի վեր ելանելով մտեալ ի ներքս, և

զդուուն բացեալ սղոցմամբ փականացն, և այլքն ևս ընդ դուուն մտեալ և գնացեալ ի տունն, յորում վարդապետքն ննջեալ էին, յանկարծակի մահակաւ և սուսերօք զեղեալ զնոքօք, զողորմելի Յակոբ վարդապետն վիրաւորեալ էին ըստ քանի տեղեաց, և իբրև զգի ընկեցեալ և զնորին և զՅովաննէս վարդապետի և զառնոսա եղելոց զՀանդերձան կողոպտեալ և տարեալ գաղտագողի:

Եւ պատճառն անօրինակ յանդգնութեան նոցա նախ այս, զի երկեցուցանիցեն զաթոռայինքս, որպէս զի ձեռն քարշիցեաք ի մլքէն մերմէ, որ ՀետզՀետե և զբոլոր Օշական կարիցէին յինքեանս գրաւել և երկրորդ՝ մանաւանդապէս այն, որ երբեմն ի նոյն գեղջէն Ղլլթամիրայ լկտի ոմն եկեալ յայգիան մեր ի գողութիւն կալեալ եղև և քեաթխուտայք նոցա մինչ եկին իրիջայ առնել Յակոբ վարդապետին, սա զնոսա ևս կալեաւ և կապեալ գանեաց: Եւ յետոյ գողն անկեալ ի պարսպէն ոտնաբեկ փախեաւ: Ընդ այն ոիս պահելով դժնդակ օձիցն, իբրև դիպուկ ժամանակ և տեղի գտին, Հեղին զթոյնս իւրեանց ի վերայ նորա:

Ապա մինչ բօթն էՀաս առ մեզ, մարդիկ և թախտրաւանս յղեցաք և բերել ետուք զՅակոբ վարդապետն աստ և բժիշկ կարգեցաք ի վերայ, սակայն արինաքբամ եղեալ գողով, յետ չորից աւուրց վախճանեցաւ: Որոյ զՀոգին Տէր լուսաւորեսցէ և զձեզ ողջ պահեսցէ:

Գործեցաւ այս ի նոյեմբերի սկզբան աւուրան, և Հետևաբար խանն եմնտ յերկիրս, որում ընդ առաջ գնացեալ մեր ընդ երևանցւոց ի նոյն ամսոյ Ը. (8), բերաք յԵրևան ի տուն իւր, և ինքն |2404| զկնի աւուրց ինչ էին առ մեզ ի յանապատն վան տեսութիւն առնելոյ և գնաց: Ապա առաքեցաք զՅովաննէս վարդապետն և զվիրգայն պատմել խանին մուղանցւոց, և դատաստան ինդրել: Որք իբրև գնացեալ ծանուցին, նա զոմն յառաջիկայից իւրոց յղեցաք Հրամանագրով բերել զարինապարտան, որոյ ի գնալն Մահմատ Հասանն ոչ գողով անդ, զնորին եղբայրն և զայլ քանիսն եբեր յԵրևան, որք կացեալ առաջին խանին ուրաստ եղեն, թէ մեք բնաւ տեղեակ չեմք զայնմանէ, իսկ ի պնդելն մեր, թէ նորք են և ոչ այլ ոք, խանն զՄահմատ Հասանի եղբայր ժանտն շղթայեալ էարկ ի բանտ, և յետ քանի աւուրց յղեաց առ մեզ յանապատն, թէ աՀա զարինապարտն յղեցի, որպէս կամիս, այնպէս արա: Հարցաք զբերօղն, թէ Հանի՞ն զվարդապետաց Հանդերձան, պատասխանեցին, թէ ասեն մեք խապար չեմք: Եւ մեք ասացաք, որովՀետև անմեղ է, ընդէ՛ր էք բերեալ: Դատաւորն խանն է և ոչ մեք, նախ Հանդերձան Հանել տացէ, զի ստուգեսցի չարութիւն դոցա, և յետոյ ես ընդ խանին խօսելոց եմ:

ԱյնուՀետև սկսան զանազան Հնարս գործել՝ զայլ և այլևս խօսելով և ի վերայ գեղջս մերոյ ծանր ծանր պահանջմունս գրելով և զոմանս սնտոի դաւայս զարթուցանելով, իբր զի ի Հոգս այնոցիկ

պատողիցիմք և յարենախնդրութենէն ձեռն բառնայցեմք: Ալ ի գալն առ մեզ իսմին խանի որդւոյն, որ այժմոյս իբր երկորդն է խանին, ասացաք նմա, թէ յամենայն իրաց ձեռն քարշեալ նայիմք խանի դատաստանին, որ եթէ չառնիցէ, յայս երկորջս ես մնալոյ չեմ: Դուք գիտասձիք, և նա մեծամեծ յոյս տուեալ մեզ, տարաւ առ խանն, և նա ևս նմին նման խոստացաւ յետ երից աւուրց զհանդերձս վարդապետացն Հանել և ըստ կամաց մերոց առնել:

Եւ ի միւսումն աւուր յղեաց մեզ զխիլայն առ ի զիջուցանել, ապա բերին զհանդերձս վարդապետացն, և իրիջան արարին վասն արեան շնորհելոյ և խոստացան դրամով վճարել: Նկատեալ մեր յորպիսութիւն խանին, թէ ոչ անցանէ ի նոցանէ իբրև յիւր սեպհական Հաւատարմաց, և լսելով զայլոց ամենեցուն զբանն, որք ոմանք յերկիւղէ և ոմանք վասն բարեկամութեան ի կողմնն նոցա են, զարիւնն բաշխեցաք խանին: Եւ նա յոյժ շնորհակալեալ, մեծարեաց զմեզ կրկնակի խիլայիւք, և բաշխեաց զմասն մի Հարկեաց գեղջս մերոյ և զցորեանն և զյարդն, զոր տալոց էին բերդապահացն: Եւ վասն Գետառի մթին՝ զերևելի ոմն ոստիկան կացոյց, որ զստութեամբ վաճառօղն և զկայսն նորա ընդ մերայնոցն տարեալ ի դատարանն, ի սուտ Հանին զնոսա, և շէխիսլամն երկար պատմութեամբ անցիցն զՀաստատոուն Հիւճէթ գրեալ և կնքեալ իւրովքն, և խանն ևս կնքեալ ետ մեզ:

Եւ կրկին միւսպաշիրօք զյայսմ ամի մուլքն Գետառին, զոր տարեալ էր պիղծ ՄաՀմաստ Հասանն, Հանել ետուք յամբարանոցէ նորին և բերել ետուք ի Սուրբ Աթոռն, ապա դարձաք յերևանու, որով Հոգօք պատաղիլն և ցաւիլն մեր ձգեցաւ ի նոյեմբերի Ը. (8)-էն մինչև ցդեկտեմբերի Ժ. (10):

Արդ, յայսչափ աւուրքս այսպէս ալեկոծեալ ոչ գտաք զյաջող ժամանակ զերկիրդ սիահւոյդ զթուղթմն բովանդակապէս գրելոյ, այլ սակայն ըստ մեծի մասին գրեցուցաք, որք Հարկաւորքն էին: Եւ զի ի ներկայումն պարոն Հայրապետն եկեալ է վասն Հաշուին, և ընդ Թօխաթու նուիրակ Բարսեղ վարդապետին ևս եկեալ են Բ. (2) վարդապետք ի Կեսարիոյ Սուրբ Կարապետի վանացն՝ բազում թղթովք, և Բ. (2) վարդապետք ևս ի սրբոյ Երուսաղէմայ գան վասն եպիսկոպոսութեան, որոց բերեալ թղթոց պատասխանագրութեամբն ծանրանամք յոյժ՝ թող զայլ անտանելի Հոգս: Վասն որոյ զառ պատրաստ եղեալ թուղթմն ահա յղեցաք, թողլով զմնացեալն այլում յաջող ժամանակի: Եւ ազդ առնեմք սիրելոյդ, զի նկատելով առ անսպառ խուժանս մեր, յաւելորդ թղթախնդրութեանց թեթևացուցես զմեզ, զի թէ քանի՞ Հարկաւորագոյն գրելիս ոնիմք յայլ՝ 2405՝ և այլ տեղիս, աստ ոչ է դէպ երկարել: Ապաքէն ի Հարկաւորսն պարտ է փոյթ ոնիլ, քան ի վայելչականսն:

Ծանիր և զայս, զի յԱդրանա բնակեալ մահտեսի Գէորգի եղբօրորդի պարոն Չաքարիայն եկեալ յուխտ ի Սուրբ Աթոռս, յօ-

գոստոսի ամսոջն Հազար զուռուշ դրամ փոխ էառ ի մէնջ, և սանատ ետ, զոր ի Հոկտեմբերի ամսեանն յղեցոր առ քեզ, զի զդրամն ինդրեսցես ի մահտեսի Գէորգէն և այլն: Իսկ նոյն պարոն Չաքարիայն կացեալ աստ երկարապէս, և Հիւանդութիւն ևս կրեալ, ապա ի նոյեմբերի աւուրն մինչ Հանդերձեցաւ ուղևորիլ և խորՀէր գնալ ի Սուրբ Կարապետ և յայլ ուխտատեղիս, և չունէր զբաւական խարճի, դարձեալ ինդրեսց ի մէնջ և էառ Հազար զուռուշ ևս, և սանատ ետ: Եւ մէք զայն երկրորդ սանատ ևս այժմ ընդ սոյն թղթոյս յղեցաք առ քեզ:

Գրեցաք և զթուղթ մի առ յիշեալ մահտեսի Գէորգն վանն ոմանց բանից, և վանն սանատիցն յիշեցելոց, զի զդրամն Հասուցեք քեզ: Ուրեմն զայդ թուղթս յղեսցես առ նա, և թէ զառաջին ԱՌ (1000) զուռուշն չիցես առեալ այժմ ԲՌ (2000)-ըն ևս ի միասին պահանջեսցես, և ի Հատուցանելն զսանատն առ նա յղեսցես, և մեզ ծանուցես:

Բնակիչք երկրիս ի նեղութեան կան ի զանազան Հարկապահանջութեանց իշխողին և բերդապահին, և շահ ասացեալն ևս ինդրող միայն է և ոչ պիտանացու ինչ: Մէք Սուրբ Աթոռով կամք ողորմութեանն Աստուծոյ ապաստան:

Ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԽԶ. (1797) թուոջս և ի դեկտեմբերի ԻԴ. (24), ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

Սիրով մեծաւ և կարօտիւ ողջոյն առաքելք սիրելի և ցանկալի եղբօրն իմոյ Հոգեկցի՝ պատրիարգ աստուածաբան վարդապետին և արհիամեծայն եպիսկոպոսին: Առ որ յանցելումս գրեալ զպատասխանի թղթոցն, այժմ չգոյր ինչ Հարկաւոր յատկապէս գրելի, անմեղադիր լիցի և թէ կամիցի գիտել զորպիսութեանց մերոց, ի թղթոյ աստի կարէ իմանալ: Որ և կացցէ ողջ և առողջ ի Հրճուանս վշտամաշ անձին իմոյ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2402-5

1290 1797 թ., 24 դեկտեմբերի - Թուղթ ի յԱդրանա առ մահտեսի Գէորգն. յիշատակութիւն թղթոյն յառաջ գրեցելոյ և ծանուցումն վանն աւանդիցն, եթէ Հասուցաք առ որ Հասանելիք էին, և վանն իւր եղբօրորդի պարոն Չաքարիայի յԱթոռս փոխ առեալ դրամոցն, որոց զսանատն յղեցաք, զի Հատուցէ զդրամն Պօլսոյ նուիրակին, և զսանատն ի նմանէ ընկալցի:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 11բ-2ա

1291 1797 թ., 31 դեկտեմբերի - Թուրքի Մեծն Պօլիս առ շարագցի մահտեսի Մինաս ամիրայն վասն սեր ցուցանելոյն առ նուիրակն, և ուխտելոյն գալի Սուրբ Աթոռս յերկրպագութիւն²⁰⁰:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 97բ-8ա

1292 1797 թ., 31 դեկտեմբերի - Թուրքի Պօլիս առ պալ-ղափանցի մահտեսի Յակոբ ամիրայն. շնորհատրութիւն սառաֆ-լարքէհուլթեանն²⁰¹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 98աբ

Շնորհակալութեան նամակներ՝ Հանգուցեալ մահտեսի Մարթայի Հոգեղա-սակ Կարապետին՝ նուիրատուութեան Համար (Ուռուջուղ), պարոն Մինասին ու տիրացու Գրիկին (Մուշ)՝ նուիրակներին օժանդակելու Համար, Պաշպազիրկեան մահտեսի Յովհաննէս ամիրայն (Կեսարիայ) ցաւակցութեան նամակ, Ժամուց յղե-լու եւ նուիրակին օժանդակելու Համար, մահտեսի Խըտրբին (Կեսարիայ) աջա-Համբոյր ուղարկելու Համար: Պատասխան նամակներ վանեցի Ախիջան աղային (Կարին), լիւծնճիզատէ մահտեսի Յովհաննէս ամիրայն, գանձապետ մահտեսի Գրիգոր Անուշեանին (Ուռուջուղ): Շնորհակալութեան նամակ գանձապետ Հան-գուցեալ մահտեսի Պետրոսի որդիներ՝ Ղազար ու Բաբայեկ ամիրաներին՝ Ուռու-մելու նուիրակ Դանիէլ վարդապետին՝ իրենց տանը պաշէլու Համար: Նամակ ոմն Գրիգորին (Կարս), որը 75 ղուռուշով գնել էր Աջամօղլի Յովհաննէսի դուստր Մա-րիամի տան կեսը, որը վերջինս նուիրել էր Էջմիածնին: Պատասխան նամակ Չե-լիկեան մահտեսի Կարապետին (Իզմիր), որը գրել էր Մարտիրոս վարդապետի ժամանելու մասին: Գանձանակի Համար շնորհակալութեան նամակ Կ. Պօլսի դիւ-պէնտճուցն:

Նամակները գրուել են 1797 թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 53բ-61բ

Շնորհակալութեան նամակ նուիրատու մահտեսի Պօղոս աղային (Սեբաս-տիայ): Գանձանակադրամը յանձնելու կապակցութեամբ օրհնութեան նամակ գանձապետ մահտեսի Եղիային (Ղարս): Գեորգ վարդապետին օժանդակութիւն ցոյց տուած մահտեսի Մարտիրոս աղային (Ղարաման) ուղարկուել է շնորհակա-լութեան նամակ: Նոյն բնոյթի նամակ է յղուել նաեւ մահտեսի Յովհաննէս եւ Յա-կոբ եղբայրներին (Ստանոզ): Շնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ Յա-կոբ Քեանեանին եւ պարոն Կարապետին (Քիւրաքդարայ գիւղ), Դանիէլ քեա-հային եւ նրա եղբայրներ՝ պարոն Գրիգորին ու Չախալին (Քէշաբորք գիւղ), Չա-տիկ քեաշիային (Աղջաղալայ գիւղ), պարոն Սիմեօնին (Բերդիք գիւղ), պարոն Մատթէոսին եւ նրա որդիներին (Ինջասու գիւղ):

²⁰⁰ Չարագցի մահտեսի Մինաս ամիրային (Կ. Պոլիս) հղված նամակի համառոտագրութիւնը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 656:

²⁰¹ Պալղափանցի մահտեսի Հակոբ ամիրային (Կ. Պոլիս) հղված շնորհակալագրի համառո-տագրութիւնը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 656:

Միսթարովթեան նամակ Հանգուցեալ տեր Յովսէփի եղբայրներին ու որդիներին (Թարիդ): ՀնորՀակալովթեան նամակ պարոն Մնացականին (Գանձակ), որն ուղարկել էր խոստացած 8 լիտր մումբ: Գանձանակի արդիւնքը յանձնած Բաղէշի Ս. Կարմրակ եւ Ս. Սարգիս եկեղեցիների ժողովրդին՝ օրհնովթեան եւ շնորՀակալովթեան նամակներ: Օրհնովթեան նամակներ նուիրատուներ՝ տեր Կիրակոսին եւ նրա եղբայր Խոսեանին (Սորխունլու գիւղ), պարոն Հիւմրիւզին (Կ. Պօլիս), Ահնայ առաջնորդ Միքայել վարդապետին, Բայազիտի Ս. Աստուածաճնի եկեղեցու ժողովրդին (գանձանակական արդիւնքի Համար), Ղազար պարոն Սեդրակեանին եւ ԻսկուՀի խաթունին (Կ. Պօլիս): Պատասխան նամակ ս. Երուսաղէմի լուսարար Բաղդասար վարդապետին: ՀնորՀակալովթեան նամակներ նուիրատուներ՝ մաշտեաի Գայիանէ տիկնոջը, Եղիսաբէթ տիկնոջը, չմկիւծագցի թութունճի Աստուածատուրին, պոստանճի սարայտար չմկիւծագցի Թովմասին (բոլորը՝ Ղալաթիայ): Օրհնովթեան նամակ նուիրատուներ՝ Ալէմտաղի մաշտեաի Պօղոսին, Ֆնդիլուի Հացագործ չմկիւծագցի մաշտեաի Սիրոն սարկաւագին:

Պատասխան նամակ Երնջակի Ս. Կարապետի վանքի առաջնորդ Կարապետ վարդապետին, որով մերժում է վանքի Համար ժողովարարական կոնդակ տալը՝ պատճառաբանելով քաղաքական խառնակ վիճակի Հետեանքով ժողովրդի տնտեսական ծանր կացութիւնը: Գանձանակադրամը տալու կապակցովթեամբ կոնդակներ են յղուել Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ, Սամաթիայի Ս. Գէորգ եկեղեցիների Համայնքներին, սրանց գանձապետներին, ինչպէս եւ Օրթադէղի բնակչութեանը: Օրհնովթեան նամակներ նուիրատուներ՝ Մարիամ տիկնոջը (Գանձակ), Հանգուցեալ Ալետիսի որդիներին (Ղարս), չորս տարուայ գանձանակադրամը մուծած քեսեճացուց էմնաֆին:

Նամակները գրուել են 1797 թ. փետրուար-դեկտեմբեր ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, 112ա-30բ

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 512ա

Աստուծոյ արագաՀաս ողորմութեամբն զիշատակագրութիւն ՌՄԽԶ. (1797) թուին յաւարտ Հասուցեալ, վերստին սկսայ գրելյայսմամի ևս ես՝ նուաստ ծառայ և յետին սպասաւոր սրբազան ՎեՀին Յակոբ Հնչին սարկաւագս, զիշատակ բանից թղթոցն գրեցելոց ի սրբազան ՎեՀէն առ ամենայն տեղիս՝ ապաստան առնելով ՀնորՀաց Սրբոյ Հոգւոյն, որ յաջողէ զամենայն ամենայնի, որում պատիւ և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն:

1293 1798 թ. - Թուղթ սիրոյ և բարեկամութեան առ Հաշտարխանու Պլատոն եպիսկոպոսն Ռուստաց, ՀնորՀակալութիւն վասն սիրոյն առ Յովսէփ եպիսկոպոսն մեր և առ ազգս, և յանձնարարութիւն վասն նոցա, և նոր նուիրակին, որ առաքեցաւ²⁰²:

ՄՄ ԿԴ, թղթ. 6, վավ. 150

512ա

Օգնեա՛ Հոգիդ Սուրբ Աստուած և զսկսեալս իմ Հասո՛ յաւարտ:

1798 թ., յունուար - Թուղթք ի Կարին, ի Թարվէզ, ի Խոյ, և ի Իւչքիլիսէ

1294* Ի Իւչքիլիսէ – ի մտանել ի նոր տարիս այս, դէպ եղև սրբազան ՎեՀին թուղթ գրել ի վերայ Իւչքիլիսէի վանիցն միաբանից և բոլոր թեմականական, վասն Թօմաս վարդապետին, զոր իբր թէ բազմակնիք մահասարով առաջնորդ էին խնդրեալ և սրբազանն կատարելով զխնդիրիս նոցա, կարգեաց առաջնորդ:

Գրեցաւ յամնոյս [յունուարի] Ը. (8):

1295* Ի Կարին – Թուղթ օրհնութեան ի Կարին առ տիրացու Կարապետն. ՀնորՀակալութիւն վասն ԺԵ. (15) Հատ եալտուզ և Գ. (3) Հատ մահար ոսկոցն, զոր ձեռամբ տէր Մատթէոսին եՀաս, որ ընդ պարոն Հայրապետին եկեալ էր յուխտ ի Սուրբ Աթոռս:

[Գրեցաւ] յամնոյս Ը. (8):

Նամակ, Հասցեագրուած Անանիա առաքելոյ վանքի Ժողովրդին (Առնշէցւոց և բոլոր բօշայիցր), որով յայտնուամ է Հանգուցեալ առաջնորդ Աթանաս վարդապետի փոխարեն առաջնորդ եւ Հոգեւոր Հովիւ է նշանակուել Մինաս վարդապետը: Պահանջում է Հլու եւ Հնազանդ լինել Հաւաքել ու նրան յանձնել առաջնոր-

²⁰² Ուշ շրջանի պատեն է, նոր նվիրակի անունը բաց է թողնված:

դական ու վանական Հասոյթները եւ տուրքերը: Գրուել է յոնտուարի ԺԶ.-ին (16) (ՄՄ ԿԴ, Թղթ. 243, վավ. 79)²⁰³:

1296* **Ի Թարւէզ - Թուղթ ի Թարվէզ առ տէր Յովսէփի եղբարսն և որդիսն, եթէ երկոսին Թուղթսն ձեր մինն յանցեալ Թուղյ դէկ[տեմբերի] ամսոյ Թ.-ին (9) և մինն յունա[արի] ամսոյս Գ. (3) Հասին առ մեզ, որով իմացաք զիննդիր ձեր, որ վասն Յակոբ տղայի գնոյն, զի շուտով յղեսցուք: Առ այն գիտասցի՛ք, զի Թէպէտ տէր Գրիգորն մասն ինչ յղեալ էր և մնացեալն խոստացեալ էր յետոյ յղել, բայց երթևեկ չպատահելոյն ոչ կարաց յղել, վասն որոյ Հոգացեալ մեր ի լման զմնացեալն՝ ամանաթ շինեալ յղեցաք, որ լինի Թուղթ ԲՃԿ. (260) Հատ պաճախու, որ առնէ ԱՃԿ. (160) Թուման և յղեցաք ի Խոյ՝ առ Իսաջան աղայն և գրեցաք, որ զայս Թուղթս շուտով Հասուցանէ առ ձեզ, զի և դուք զՅակոբ տղայն ի ձէնջ մէկիդ Հետ կամայլ Հաւատարիմ մարդոյ Հետ յղեսցիք առ նա, զի և նա զյղեալ ամանաթս մեր յանձնեսցէ տղայ բերողին Հասուցանել առ ձեզ:**

²⁰³ Դուկաս Կարնեցու նամականու մէջ ոչ սակալ տեղեկություններ կան նաև Երևան ֆաղափի եկեղեցիների, առաջնորդների, ներեկեղեցական հարաբերությունների և բազում այլ հարցերի վերաբերյալ: Այս առումով բացառություն չեն նաև ֆաղափի հինավուրց ու երևելի արավայրերից մեկի՝ Ս. Անանիա առաքյալի վանքի (այժմ՝ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի) ու նրա առաջնորդների մասին վկայությունները: Դուկաս հայրապետի՝ դեռևս 1786 թ. կոնդակներից մեկը հասցեագրված է Ս. Անանիա առաքյալի վանքի առաջնորդ Անանիա վարդապետին, որը բովանդակում է հետևյալը. «Կոնդակ մի փոքր առաջնորդականի, գորտ սրբազան Վեհապետն սրբոյ Անանիա առաքելոյ վանից առաջնորդ Անանիա վարդապետին, զի տեսցեն զսա ի ձեռին իրում, յայն վանից վիճակեալ ժողովուրդին եւ տացեն նմա զհասս եւ զիրատունս առաջնորդական յամէ յամ» (ԿՉՊ, նոր շարք, գիրք Ա., հ. Բ., էջ 121, վավ. 36): Անանիա վարդապետը, իբրև Ս. Անանիա առաքյալի վանքի առաջնորդ, հիշատակված է նաև Դուկաս կաթողիկոսի «Թուղթ կանոնական»-ում, որտեղ առկա է նաև նրա անվանակիր կնիքը (տե՛ս նշվ. աշխ., էջ 787-793): Դուկաս Կարնեցու հերթական՝ 1798 թ. նամակը հասցեագրված է միևնույն Ս. Անանիա առաքյալի վանքի ժողովրդին (առնչեցիներին և բռնակերին), որով տեղեկացվում է, որ հանգուցյալ Աթանաս վարդապետի փոխարեն առաջնորդ և հոգևոր հովիվ է նշանակվել Մինաս վարդապետը, ըստ այդմ պահանջում է հնազանդ լինել նոր առաջնորդին և հավաքել ու ժամանակին հանձնել անհրաժեշտ հասույթներն ու տուրքերը:

Վավերագրից պարզ երևում է, որ Ս. Անանիա առաքյալի վանքը Մայր Աթոռին հարկատու երևանյան հոգևոր կենտրոններից մեկն էր, որը գործում էր, ուներ առաջնորդներ, որոնցից այս վերջիններն իրենց պաշտոնում նշանակվել են Դուկաս հայրապետի կոնդակների հիմամբ: Ինչ վերաբերում է հիշատակված ժողովրդին, այսինքն՝ առնչեցիներին ու բռնակերին, ապա հայտնի է, որ դեռևս Միմեոն Երևանցի կաթողիկոսի (1763-1780 թթ.) ժամանակներից Ս. Անանիա առաքյալի վանքն ուներ իր փոքր թեմը, որին մասնակիորեն պատկանել են Կոստայի Առինջ գյուղը (մի մասը պատկանել է Կարենիսի Ս. Անդրեաս և Ս. Մարտես առաքյալների վանքին) և հարևանությամբ գտնվող Կոնդ քաղամասի մի մասը, որտեղ սկսած XVIII դարասկզբից բնակություն էին հաստատել մեծ թվով հայացած բռնակեր (մաղագործներ): «Ջամբո»-ում նշված է, որ Երևանում գտնվող այս վանք-անապատը պատկանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, իսկ վանքապատկան վիճակներից հատկանշվում է Առինջը, ինչպես նաև բռնակերի ողջ կազմը. «Ունի զվիճակս զԱռինջ, և զամենայն Բոշայից ազգն» (Միմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբո, էջ 293, տե՛ս նաև Ա. Հարությունյան, Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատը կամ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցին, էջ 176, ծնբ. 497):

Եւ պատուեր, զի զտղայն շուտով յղեսցես առ Իսաճան աղայն և գորամն ընկալցին ի նմանէ Հատուցանել պարտատերացն իւրեանց: Իսկ ի կողմանէ Մուդաթին ևս եթէ Հեսապ ինչ մնասցէ, զայն ևս գրեալ ծանուսջիք մեզ և անտարակոյս լիջիք վասն Հոգալոյն: Այլև, որ ըստ ինդրոյ մերոյ զմի բեռն դանդ, չամիչ և բատամ էիք յղեալ, ի Խոյու էՀաս առ մեզ և վասն քաղցրեղինաց գնոյն, զոր ծանուցեալ էիք, այսպէս գիտասջի՛ր, զի որպէս յաջմէ գրեալ եմք և այժմ գրեմք, զի ի յայգւոյն մերմէ, որքան արդիւնս էք ընկալեալ թէ դուք և եթէ տէր Յովսէփն և զոր ինչ խարճս էք արարեալ վասն մեր՝ գնոցին Հեսապն տեսջիք և մեզ ծանուսջիք: Եթէ ընկալեալ արդիւնքն ձեր աւելի գայցէ, քան զխարճն, այն մերէ, իսկ եթէ պակաս մնասցէ, զայն ևս Հատուցանելոյ եմք: Եւ թէ աՀա ըստ ինդրոյ ձերոյ մէկ թուղթ գրեցաք առ ԱՀմատ խանն Մարաղայու և ընդ թղթոյս յղեցաք առ ձեզ, զոր և գրեմք, զի քանի օր զթուղթս պահեսջիք առ ձեզ, նախապէս զՅակոբ տղայն առանց յետացուցանելոյ առաքեսջիք ի Խոյ՝ առ Իսաճան աղայն, և ապա զթուղթս նորին յղեսջիք առ նա: Իսկ որ սաղաւարթ էր ինդրեալ խանն, որոյ աղագաւ /512բ/ դուք ևս էիք գրեալ, այնմ կողմանէ գրեցաք ի թղթով խանին, թէ այս մօտ աւուրքս նուիրակ եմք յղելոյ ի յերկիրդ, ընդ նմա զսաղաւարթս քո յղելոյ եմք:

Գրեցաւ յամնոյս ԻԷ. (27):

512բ

1297* **Ի Խոյ** - Թուղթ ի Խոյ առ Իսաճան աղայն. յիշումն Բ.-ուց (2) թղթոցն առ մեզ Հասանելոյն, մինն՝ յանցեալ տարւոյն դեկտեմբերի ժԵ. (15) և միւսն՝ ի նոր թուոյս յունւարի ժԲ. (12), յորում թէ առաջին թղթովդ ծանուցեալ էիր զՀասանի թղթոյն մերոյ ի նոյնքերի ժԷ. (17), գրեալ ընդ Քեալ ՅովՀաննէսի որդի Պետրոսին և զսիրով ընդունիլն քոյ զՊետրոսն և խաղաղութեամբ ուղևորիլն ի Թարվէզ:

Իմացաք վասն եղբօր քոյ Յակոբին յուղարկելն խանին ի Թարվէզ և քոյ միայն մնալն և փոքր-ինչ քէֆսութիւն կրելդ, առ այն տրտմեցաք: Իսկ և որ ի Թարվիզու տէր Յովսէփի եղբարցն զթուղթս ընկալեալ և յղեալ էիր, էՀաս առ մեզ, որ էր ի կողմանէ Տէր-Հմաւօնեանց տէր Գրիգորի տղային, որոյ վասն ինդիր էին արարեալ տղայի գնոյն, զի շուտով յղեսցուք և մէք աՀա Հոգացեալ ԲՃԿ. (260) Հատ պաճախլու ոսկիս կնքեալ կնքով մերով, յղեցաք առ քեզ և գրեցաք տէր Յովսէփի եղբարցն, զոր զտղայն շուտով յղեսցեն առ քեզ և ապա դու զամանաթս մեր տացես տղայ բերողին Հասուցանել ինքեանց և տղայն առաքեսցես ի Բայագիտ՝ առ տիրացու Գէորգն, որ անտի առաքեսցէ առ մեզ: Իսկ որ ի Թարվիզու մէկ բեռն դանդ, չամիչ և պատամ ընկալեալ յղեալ էիր ձեռամբ մահտեսի Միքայէլին, էՀաս առ մեզ: Նաև, որ ծանուցեալ էիր զտեղոյդ խաղաղութենէն և զշահին իւր անուամբն սքայ յղելոյն և զխանի զօրաժողով լինելոյն գիտեցաք, բայց թէ ինչ մնօք

է, զպատճառն չէիր գրեալ, եթէ կարելի է գրեսցես մեզ ի գիտել: Այլ վասն քիրային, որ գրեալ էիր, թէ տայք, ետուք, բայց վասն ջուալացն գրեալ էին ի Թարվիզու, որ դրամով մերով են առեալ, վասն որոյ և մէք առաք:

[Գրեցաւ] յամնոյս ի է. (27):

1298* Փուսուլայ մի առ սա, եթէ որ գինի էիր ինդրեալ վասն Ջաֆարղուլի խանին, ահա մեր թուանկչի Գրիգորի ձեռամբ յղեցաք, որ է Լ. (30) լիտր, զոր տարեալ մատուցիք առ խանն: Եւ թէ յաջողութիւն լինիցի ի մեծի պաշոյց աւուրան, զընծայս եմք առաքելոց շահին, ընդ նմին սարդարին ևս յղելոց եմք:

1299* **Ի Կարս** - Թուղթ ի Կարս առ Գեորգ աղայն. ծանուցումն երկար միջոցի թուղթ զգրելոյն և թէ այժմոյս Հարկաւորեցաւ գրել քեզ զայս ինչ, զի իւրաքանչիւր տարիս՝ ի վերջին աւուրս տարւոյն, յուղարկէիր զդավթարդ առ մեզ, արկանել զհաշիւն ի դավթարս մեր, բայց այժմ ոչ յղեցեր: Եւ Հարկ, զի յղեսցէ զդավթարն առ ի Համեմատել ընդ դավթարի մերում: Եւ թէ ի պէտս միաբանից Սրբոյ Աթոռոյս Հոգ տարեալ զէյթուն առնիցես և մինչև ի մեծ պաշնն յղեսցես, որ վայելեսցեն շնորհակալութեամբ:

Յիշումն թաւանի տախտակացն առ մեզ Հասանելոյն: Եւ թէ յառաջ քան զայս, որ զերիս օրհնութեան թուղթս էիր ինդրեալ և մէք ըստ գրութեանդ յղեցաք, բայց զհասանիւն և ոչ Հասանիւն չիմացաք, ուրեմն ծանուցես մեզ ի գիտել:

Ողջոյն թոռանն իւրոյ Գալուստ աղազատէին:

[Գրեցաւ] յամնոյս Լ. (30):

Թուղթք ի Կեսարիա և յայլ տեղիս

1300* **Ի Կեսարիա** - Թուղթ առ Կեսարիոյ առաջնորդ Մատթէոս վարդապետն. ծանուցումն թղթոյն առ մեզ Հասանելոյն ի դեկ[տեմբերի] ժէ. (15), ձեռամբ որդւոցն իւրոց Ստեփաննոս և Կարապետ վարդապետացն, որով ինդրեալ էր առ ի ձեռնադրել զնոսս եպիսկոպոս և շնորհակալութիւն վասն առ նուիրակ Բարսեղ վարդապետի լաւութեանցն և զՊօլսոյ յիսուն ոսկւոյ տրոցն:

Գրեցաւ յամնոյս էլն:

Կոնդակ եւ շնորհակալական թուղթ Կեսարիայի Ժողովրդին, որոնք ինդրել էին Ստեփանոս եւ Կարապետ վարդապետներին եպիսկոպոս ձեռնադրել նաեւ շնորհակալութիւն է յայտնում նրանց՝ գանձանակական միջոցներն առաքելու Համար (512բ, Ա./5): Յիշեալ վարդապետների ինդրի առնչութեամբ պատասխան նամակ մատուցի Խըրտին եւ շնորհակալութիւն «վասն եօթն բուպիէ ոսկւոյ յղեալ Ժամուցին» (Ա./7):

1301* **Թուղթ** **ի Կեսարիա առ Պաշպագիրկեան մահտեսի Յովաննէս ամիրայն,** **ի պատասխանի թղթոյն ընդ կեսարացի վարդապետացն գրեցելոյ և շնորհակալութիւն վասն նուիրակ Բարսեղ վարդապետի արարեալ լաւութեանցն և զտասն նավիայ ոսկւոյ ժամուցին և բան վասն Կիրակոս կաթողիկոսին տանն Կիլիկոյ:**

Շնորհակալական նամակ մահտեսի Կեօղային (Կեսարիա) «վասն մէկ կէարմաստտ եկալու շապիկին, զոր ընդ կեսարացի Ստեփաննոս վարդապետին յղեալ էր» (513ա, Ա./1):

513ա

1302* **Ի Մեծն Պօլիս - Թուղթ առ Մեծին Պօլսոյ պատրիարգ Չաքարիա վարդապետն,** **ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, զոր ընդ կեսարիոյ Սրբոյ Կարապետի վանից միաբան Ստեփաննոս և Կարապետ վարդապետացն գրեալ էր առ ի ձեռնադրել զնոսա եպիսկոպոս:**

1797 թ., փետրուար - **Թուղթք ի Ղրապկեր և ի Կարին**

1303* **Ի Ղրապկեր - Թուղթ առ Ղրապկերու առաջնորդ վարդապետն,** **ի պատասխանի թղթոյն գրեցելոյ և ծանուցումն թղթոյն առ մեզ Հասանելոյն ընդ թղթոյ քաւանայից և իշխանաց մանասարին, որում թէ իմացաք չնչին Ղուկաս աբեղայի զուր բանադրելն զմահտեսի Նազարէթն և առ այն զբատ էիք ինդրեալ ի մէջ առ, որ գրեցաք աւա զթուղթ բանադրանաց և յղեցաք ի ձեռս քո, զոր ընթերցցիս ի լուր ամենեցուն և եթէ յայդրէ, տացես յիւրն և թէ ոչ, ուր և իցէ, առ նա յղեսցես:**

Ողջոյն Փիլիպպոս ամիրային:

[Գրեցաւ] յամնոյս թ. (9):

1304* **Ի Ղրապկեր - Թուղթ առ Ղրապկերու քաւանայսն և իշխանսն,** **ի պատասխանի բազմակնիք մանասարին իւրեանց, զոր ինդրեալ էին զչիք Ղուկաս աբեղայ անուն ոմն բանադրել վասն ի զուր բանադրելոյն զմահտեսի Նազարէթն, յորում գրեցաւ սոցա, թէ աւա ըստ ինդրոյ ձերոյ արարաք և զբանադրանաց թուղթն յղեցաք ի ձեռս առաջնորդին, զոր ընթերցցի ի լուր ամենեցուն և զթուղթն տացէ որջացելոյն յայդր:**

[Գրեցաւ յամնոյս] թ. (9):

Շնորհակալական թուղթ Կարինի առաջնորդ Յակոբ վարդապետին «վասն ընծայիցն յղելոյ և բան վասն տարագրեալ միաբանից Սուրբ Կարապետի վանացն»

(513ա, Ա./5): Թուղթ Կարինի քառանաներին եւ իշխաններին «վանն Յովաննէս եւ Մինաս եւ Ալէքսան վարդապետացն» (Ա./6)²⁰⁴:

1305* **Ի Զուղայ** – Թուղթ Ի Զուղայ, Ի պատասխանի բազմակնիք մնասարին իւրեանց, որով շնորհակալ եղեալ էին Ի կողմանէ Հնդկաց երկրի նուիրակ Յակոբ վարդապետին, զոր Ի Սրբոյ Աթոռոյս սրբալոյս մեռոն էր տարեալ, վանն նոցա եւ կրկին ինդրեալ էին անտերունչ չթողուլ զինքեանս, որոց աղաչանացն անտես չառնելով սրբազանին՝ զՅովակիմ վարդապետն նուիրակ յղեաց առ նոսա:

Գրեցաւ յամնոյս ...:

1306* **Ի Թէհրան** – Թուղթ Ի Թէհրան առ սամուրտող Կոստատն եւ Ոսկանն. յանձնարարութիւն վանն ընծայատար Յովաննէս վարդապետին:

1307* **Ի Ղազպին** – Թուղթ Ի Ղազպին առ Գալուստ ոմն. յանձնարարութիւն վանն Յովաննէս վարդապետին, որ զընծայս տանէր առ շահն:

1308* **Ի Թարվեզ** – Թուղթ Ի Թարվեզ առ տէր Յովսէփի եղբարն եւ որդին. յիշումն Ի յունվարի ԻԷ. (27) գրեալ թղթոյն մերոյ առ նոսա եւ ծանուցումն վանն ազատման գերոյ գնոյն յղելոյ Ի ձեռս Իսաճան աղային Ի ԽՅՅ՝ Հասուցանել առ ինքեանս եւ յանձնարարութիւն վանն Յովակիմ եւ Յօհաննէս վարդապետացն, որք զընծաս տանէին առ շահն:

Գրեցան եւ յղեցան յամնոյս ԺԳ. (13):

1309 **1798 Թ., փետրուար** - Կոնդակ Ի վերայ Զուղայու ընդ նուիրակ Յովակիմ եպիսկոպոսին, մինչ յամն բազումն նուիրակ չէր գնացեալ Ի Սրբոյ Աթոռոյս եւ առաջնորդն իւրեանց Յակոբ եպիսկոպոսն եւս փախուցեալ անտի Ի Հնդիկս մեռաւ անդէն, եւ կարօտէին նոքա եպիսկոպոսի եւ մեռոնի՝ Ի լցումն պակասութեան եկեղեցեաց իւրեանց: Եւ զի վանն յարուցման ներքինի բռնաւորին եւ խառնակութեան կողմանցն կասկածելի էր նուիրակ առաքելն անդ, վանն որոյ Հնդկաստանու նուիրակ Յակոբ վարդապետին Ի գնալն մեռոն եւ կոնդակ տուեալ եղև վանն Զուղայու, եւ պատուիրեցաւ, զի զքառանայացուս նոցին Ի Բասրա ձեռնադրեսցէ: Այլ զի տակաւին նոքա թախանձէին վանն եպիսկոպոսի, զի քառանայացուք նոցա ամենքին ոչ կարէին գնալ Ի Բասրա, եւ անտի Ի Բասրայու եւս զկատարեալ լուր իմն ոչ առաք, եթէ զմեռոնն տարա՛ն արդեօք Ի Զուղայ, եթէ ոչ: Ուստի սրբազանն այժմ՝ յղել զընծայս

²⁰⁴ Հովհաննէս, Մինաս եւ Ալեքսան վարդապետների վերաբերյալ Կարնո Բանաններին ու իշխաններին հղված թղթի ամբողջական հրատարակությունը տես ԴՉՊ, գիրք Դ., պլան 664-666:

առ շահ կոչեցեալն, զիշեալ... եպիսկոպոսն ևս առաքեաց նուիրակ
Ջուղայու, այսու կոնդակաւ:

ՄՄ ձեռ. Հ^ր 4501, էջ 2303-4

1310 1798 թ., 13 փետրուարի - Թուղթ ի Նոր Ջուղայ առ
Սրբոյ Ամենափրկիչ վանաց միաբան քանի վարդապետսն և քա-
ղաքի քաճանայսն և իշխանսն, ի պատասխանի թղթոյն իւրեանց
և յանձնարարութիւն վանն Յովակիմ եպիսկոպոսին, որ նուիրակ
առաքեցաւ այժմանդ:

Յորմէ սիրով և օրհնութեամբ բազմաւ, խաղաղական սուրբ
ողջունիւ և միաձնաէջ սրբոյ տեղւոյս մեծազօր շնորհի գիտութիւն
լիցի սիրելեացդ մերոց և Հարազատ որդւոցդ Սրբոյ Աթոռոյս՝ ի
Նոր Ջուղայ եղելոց, Սրբոյ Ամենափրկիչի Հիւահրաշ վանիցդ երևելի
վանականաց Միքայէլ և Յարութիւն և Գեորգ Հանճարունակ
վարդապետաց, և աստուածահնամ քաղաքիդ գլխաւոր քաճա-
նայից՝ տէր Պետրոսի, տէր Մինասայ, տէր Կարապետի և տէր
Ղազարու և միւսոցն, և բարեպաշտօն օրհնեալ իշխանաց՝ պարոն
Յակոբիդ Մեքրոնեան, պարոն Մկրտչիդ Եղիազարեան, պարոն
Յակոբիդ Խաչատուրեան, պարոն Չօրաբիդ Բարսղեան և պա-
րոն Մկրտչիդ Վարդանեան, և այլոց քրիստոսասէր քեթիսուտա-
յից և խոճական անձանց:

Չի որպէս իմաստնացեալն յԱստուծոյ՝ Սողոմօն ասէ, թէ
մարդոյ իրս ինչ դնել ի մտի, և ի Տեառնէ լինի պատասխանի լե-
զուի, արդարև՝ մարդս զբազումս ինչ խորհի ի միտս իւր առնել,
բայց ամենակատարն Աստուած յորժամ և որպէս կամի, բանն
այնպէս կատարի:

Արդ, ըստ այսմ օրինակի, ի մնալն ձեր յերկար ժամանակս
առանց նուիրակի և եպիսկոպոսի, մինչ թախանձանօք զարբալոյս
մեռոն և զեպիսկոպոս ինդրեցիք ի մէնջ, և մեք |2406| խոստացաք
յուզարկել, յիրաւի Հաստատեալ էաք ի մտի և քանիցս անգամ ճա-
նացաք ըստ պարտականութեան մերում կատարել զբարեպատե՛հ
ինդիրն քաղցրայիշատակ ժողովրդեանդ, բայց բերմունք բազ-
մավտանգ ժամանակիս արգելս տուեալ խափանեցին, որ յայտնի
իսկ է, և երկարե՛ն աստանօր աւելորդ վարկանի:

Այլ ի բազմապատիկ վարանմունսն մեր յաղագս զուրկ գոլոյն
ձերոյ ի Հոգևոր մխիթարութենէ, զայն գտաք Հնար, զի Հնդկաց
երկրին նուիրակ Յակոբ վարդապետին ձեռամբ լցցին պետք կա-
րեաց եկեղեցեացն ձերոց, վանն որոյ տուաք զարբալոյս մեռոն և
զկոնդակ ի Բասրայու յղել առ ձեզ, և զքաճանայացու ձեր ևս անդ
ձեռնադրել: Սակայն և զորպիսութիւն կատարման իրացն ի Բաս-
րայու ոչ իմանալով մինչ ի նոր անցեալ տարին, մաշիւր սիրտ մեր
տարակուսանօք: Ապա Հագիւ թէ թուղթ իմն էՀաս մեզ ի Յակոբ
վարդապետէն, որով ծանեաք, թէ զերիս քաճանայս միայն է ձեռ-

նադրեալ վասն ձեր և զսրբալոյս մեռոնն և զկոնդակն յանձնեալ պարոն Յովաննէսին Բէթղէշէմեան, առաքել յայդր: Որով թէպէտ սակաւ մի միամտեցաք, բայց վասն անբավականութեան քաճանայիցն Հոգ սրտի մերոյ ոչ ետ մեզ զանդորրութիւն:

Իսկ նարդենիս դէպ եղեալ մեզ զընծայս յղել առ նորապէրճ շահն, ի կամացն Տեառն յաջողութիւն երևելով դիտմանն մերում, զՅովակիմ Հեզաճամբոյր եպիսկոպոսն, պատրաստեցաք սրբալոյս մեռոնաւ և օրհնութեան կոնդակաւ ընդ ընծայատար վարդապետին առաքել ի Թէհրան, և յատկապէս արզ գրել առ մեծազօր շահն, զի գնտմոս Հրամանի առեալ անկասկած եկեսցէ յօրհնեալ երկիրդ և Համարձակ շրջեսցի ի միջի ձերում: Եւ մինչ Հանդերձեալ էաք ուղևորել զնոսա, բազմակնիք թուղթն ձեր ի նոյեմբերի Դ. (4) գրեցեալ, էճաս առ մեզ ի նոր տարւոյս փետրվարի Ժ. (10), ձեռամբ Յարութիւն առնն խոհականի: Եւ թէ ի թղթոյ անտի, եթէ ի գրաբերին բերանոյ իմացաք զորպէսն ձեր: Յաղագս նեղութեանց ձերոց և Հարկացն ծանրութեան ցաւեցաք յոյժ, մեօք իսկ առեալ զփորձ դաժանութեան կեղեքչացն: Վասն որոյ և Հայցեմք միշտ յԱստուծոյ ողորմութիւն և խաղաղութիւն շնորհել ձեզ և մխիթարել, ըստ բազմագուծ մարդասիրութեանն իւրում:

Իսկ վասն նախագրեալ կոնդակին մերոյ և մաքրագործ սուրբ մեռոնին ժամանելոյ յայդր և ի սուրբ եկեղեցիսն բաժանելոյ, և օրհնեալ ժողովրդոցդ փոքր մի մխիթարութիւն գտանելոյն, սրտադիւր եղաք: Այլ զի քաճանայացուք չէին կարացեալ ամենեքեան գնալ ի Բասրայ և ձեռնադրիլ և յերից ձեռնադրեցերոցն ևս երկուքն միայն են դարձեալ, և եկեղեցիք ձեր զուրկ կան ի քաճանայից, առաւել ևս Հարկաւորեցեալ մեր՝ աճա զսիրելին մեր՝ զտէր Յովակիմ շնորհաւատ վարդապետն և զարհիեպիսկոպոսն առաքեցաք, որ կրկին ևս բաշխեսցէ ի ձեզ զաստուածագործ իւղն օծութեան՝ զմեռօն սուրբ, և զամենայն քաճանայացուս և զվարդապետացուս և զայլ աստիճանաինդիրս ձեռնադրեսցէ ի լցումն Հոգևորական պիտոյից սրբոյ վանացդ և Համայն եկեղեցեացդ: Եւ զպտուղս ձեր Հոգևորս ժողովեաց, բերցէ ի մասնակցութիւն օգնութեան յոգնապատիկ ծախուց Սրբոյ Աթոռոյս:

Արդ, պատուի գրեմք սիրելեացդ, զի զՀարազատ որդիդ Սրբոյ Աթոռոյս, զնուիրակդ ձեր՝ զՅովակիմ աստուածիմաստ վարդապետդ, մեծաւ սիրով և յարգանօք ընկալջիք, որպէս վայել է արհիական կարգին իւրոյ և բարեպաշտութեան ձերոյ, և ի գործն նուիրակութեան ձեռնատու և օժանդակ լիջիք, և զՀոգևորական նուէրան ձեր յօժար սրտիք և զուարթ երեսօք առատօրէն տաջիք, կամելով որդիօրէն ցաւակցութեամբ օգնութիւն իմն առնել անհուն ծախուց |2407| մօրս ձերոյ Հաւատոյ:

Քանզի յայս քանիս ամն եթէ որչափ աղէտք դառնութեան Հասին ի վերայ կողմանցս և երկրիս, և որքան վնասք դիպեցան

սրբոյ Գաճիս, և որպիսի նեղութիւնք և վիշտք պատեցին զմեօք թէ
ի Հեռուստ յարուցելոց, և թէ ի մերձակայից նեղչաց, ոչ է Հսար
պարունակիլ պատմութեանցն ի թղթի յայսմիկ, այլ ի նուիրակեդ
մերմէ և ձերովդ խոհեմութեամբ իսկ կարէք իմանալ: Վասն որոյ
պարտիք իւրաքանչիւր ըստ կարի ձերում լիաձեռնութեամբ օգնել
պակասութեանց մերոց ի դառն ժամանակի յայսմիկ, որոց զփո-
խարէն բազմապատիկ առաւելութեամբ ընկալջիք յԱստուծոյ ի Հո-
գիս և ի մարմինս ձեր:

Եւ մինչ նուիրակդ մեր աւարտիցէ զգործս իւր ի յօրհնեալ
քաղաքոջդ ի յեւանէն ի թեման, զբանաւոր վարդապետ մի ի ձէնջ
դիջիք ընդ նմա շրջագայիլ զի մի վասն անծանօթ գոլոյն վայրացդ
նեղութիւնս ինչ կրիցէ:

Իսկ որ գրեալ էիք, թէ զմեզ և զսուրբ վանքս մի թողուր
առանց վերակացուի, զի պակասեալ էմք ի Հոգևորական կարգաց:

Սիրելիք մեր, երբեմն ի խոյս տալն այսի Յակոբ առաջնորդ-
դին, գրեալ էիք մեզ, թէ Հագիւ զերծաք ի նմանէ և առաջնորդ
անունն առ ժամանակ մի պակասիլն Հանգիստ լինի մեզ: Այժմեթէ
եկեղեցական պակասութեանց աղագաւ է այս ինդիր ձեր, ահա
եպիսկոպոս նուիրակդ ձեր լցուցանելոց է Աստուծով զամենայն
Հոգևորական պակասութիւնս ձեր: Բայց եթէ վասն Հոգաբարձու-
թեան սրբոյ վանիցդ է, զերկու ինչ գոյ ձեզ առնել, որպէս թուի
մեզ, այսինքն Համակամութեամբ բոլոր թեմականացդ կամ զվար-
դապետ մի ի միաբանից սրբոյ վանիցդ վէքիլ կարգել և գրել մեզ,
զի և մեք Հաստատիցեմք, կամ եթէ օգտաւոր Համարիցիք, զպատ-
շաճաւորն ի յերևելի վարդապետացդ Հաւանական մահաարօք
ամենեցունց վիճակայնոցդ՝ ի Հնդիկս և ի Բասրա եղելոց Հայկա-
զանցն և ձեր առաքել առ մեզ ընդ նուիրակիդ, զի եպիսկոպոս ձեռ-
նադրեալ դարձուցանիցեմք ի Հոգաբարձութիւն սրբոյ վանիցդ և
յառաջնորդութիւն օրհնեալ ժողովրդիցդ: Եւ այս ի կամս ձեր է
ապաստան՝ ընտրել զօգուան սրբոյ Տանդ և ձեր:

Որք և լիջիք ողջ ի Տէր և յանձնեցեալք ի ինամս նորին.
ամէն:

Գրեցաւ ի թուոջս Փրկչին ՌէճՂԸ. (1798) և ի փետրվարի
ԺԳ. (13) ի լուսանկար Գաճս Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^ր 4501, էջ 2405-7

ՄՄ ձեռ. Հ^ր 4481, 513ա

Թուղթ ի Բաղէշ և ի Կարին

1311* **Ի Բաղէշ** – Թուղթ առ Ամրտօլլու վանիցն առաջնորդ
Գրիգոր վարդապետն. ծանուցումս թղթոյն առ մեզ Հասանելոյն
ընդ գանձապետ պարոն Յովաննէսին և վասն նուիրակ Յովան-
նէս վարդապետի արարեալ լաւութեանցն և Բ. (2) լիտր գազպէ

յղելոյն՝ շնորհակալութիւն և բանք ևս խրատականք վասն զգուշա-
նալոյ ի գայթակեղեցուցիչ արարմանց:

Գրեցաւ յամնոյս ԺԸ. (18):

^{1312*} **Ի Բաղէշ** – Թուղթ առ Բաղիշու ժողովուրդան, որ
գանկատ էին գրեալ զչորից առաջնորդացն ևս, թէ զհասոյթս իւ-
րեանց աւելորդօք առնուն և ինդրեալ էին կոնդակաւ արգելոյ
զայնպիսի անկարգ պաշանջմունս:

[Գրեցաւ յամնոյս] **ԺԸ. (18):**

^{1313*} **Թուղթ** օրհնութեան առ Ժամնահարեանց Միրզայն.
Շնորհակալութիւն վասն Հարիւր փարայ ժամուց տալոյն, զոր
/513բ/ ձեռամբ գանձապետ Յովաննէսին էհաս:

¹³¹⁴ **1798 թ., 18 փետրվարի** - Թուղթ առ Բաղէշու ժողո-
վուրդն, որք գանգատ էին գրեալ զչորից առաջնորդացն ևս թէ
զհասոյթս իւրեանց աւելորդօք առնուն, իբր քառապատիկ քան
զնախնեաց սահմանեալն, և ինդրեալ էին կոնդակաւ արգելոյ
զայնպիսի անկարգ պաշանջմունս:

Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան ի
վերայ սիրելի և Հոգևոր որդւոցդ մերոց և լուսաճսունդ զաւակացդ
Սրբոյ Աթոռոյս ի Բաղէշ քաղաքդ եղելոց չորեցունց եկեղեցեացդ
ժողովրդոց բարեպաշտօն և խոհական իշխանացդ և երևելի ան-
ձանցդ: Չի բազմակնիք թուղթս ձեր, ձեռամբ Հաւատարիմ գան-
ձապետին Սրբոյ Աթոռոյս և սիրելոյն մերոյ՝ պարոն Յովաննէսին
էհաս առ մեզ և ընթերցեալ իմացաք զբողոքն ձեր զառաջնոր-
դացն ձերոց, իբրու թէ զհասոյթան առաջնորդական և վանքական,
որք ի նախնեացն չափաւորապէս են սահմանեցեալք, այժմ դորա
աւելորդ առնուն եռապատիկ և քառապատիկ, և այն բռնու-
թեամբ և սպառնալեօք օտարասեռից, և զկողոպուտն Հասարա-
կաց յաշխարհական կարգէ ննջեցելոց ևս ինքեանք առնուն և ոչ
թողուն քահանայից:

Եւ յիրաւի, ցաւեցաք ընդ այսպիսի նեղսակրութիւն խղճալի
ժողովրդոցդ, եթէ Հաւաստիք իցեն: Բայց առ ի քննել զիրան և
զթէութիւնս բանիցն, պարտ է դատախազացն ի միասին գտանիլ
առաջի դատարարին, զի երկուց կողմանց ասութիւնսն ևս լսելով
Հասու լիցի ճշմարտութեան իրին և ապա տացէ զվճիռն՝ զինչ և
պաշանջիցէ իրաւունքն:

Ըստ այսմ ուրեմն, ի վերայ այսպիսի գրութեան իշխանացդ
պարտիք թէ դուք և քահանայքդ ձեր, և թէ առաջնորդքն միան-
գամայն ներկայանալ աստանօր, զի յիրաքանչիւր դասուցդ
լուեալ զպատասխանիս, կատարելապէս տեղեկացուք [62բ] զի-
րաց ձերոց և զվիճոյն, զոր առնէք: Եւ ապա ըստ աստուածային
իրաւանցն պաշանջման վճռեսցուք զանխախտելի վճիռն Հաստա-
տուն:

Բայց և արդ, զի բազում անձինքն յերևելեացդ բազմակնիք մահասարաւ գրեալ էիք, թէ այսպէս բռնաւորաբար վարին առ մեզ առաջնորդքն՝ զյոգնապատիկն պաշանջելով կանոնաւորեալ Հասուլթիցն, և յիշեալ պարոն Յովաննէս Հարազատ գանձապետն մեր ևս բերանով պատմեաց զերկարապէսն, վասն որոյ Հաւատարիմ թուեցան մեզ բանքն ձեր և ստիպեցեալ յարդարութենէ խղճմտանաց, իննայելով ևս ի պէս պէս նեղսակրուծիւնս խղճալի ժողովրդեանդ: Այսու կոնդակաւ պատուիրեմք առաջնորդացն, որպէս և մին ի նոցունց Մանուէլ վարդապետն աստէն առ մեզ գտանեցեալ բերանով իսկ պատուիրեցաք: Չի որ ինչ Հաւք և իրաւունք ի նախնեացն սաւմանեցեալ է և ի կանոնն ևս չափաւորեցեալ տեսանին, թէ ի կենդանեաց պսակացն կողմանէ, և թէ ի ննջեցելոցն Հոգեբաժին, և թէ այլ ինչ առաջնորդական և վանքական արդիւնք իցեն, առաջնորդքն ըստ չափունախնեացն սաւմանի առցեն, և ոչ ազաւորէն աւելորդապաշանջութեամբ նեղեացեն զժողովուրդն: Եւ Հասարակ անձանց կողոպուտն քաշանայից է: Այլ քաշանայից և պանդխտաց եկամտից և անյիշատակաց անՀաղորդից և այլոց այնպիսեացն առաջնորդին են կանոնական Հարամանաւ:

Եւ ի կողմանէ կնունքաց, որ քանի ստակ գոյ սաւմանեցեալ յանուն Սրբոյ Աթոռոյս: Եւ այժմ իբրու յաւելացուցեալ են, այնր աւելորդն ևս ոչ է պիտոյ մեզ, և ոչ ինդրեմք, այլ որ ինչ յառաջնոցն աւանդեցեալ է ի սովորութիւն, այնքանն միայն լիցի: Քանզի այսոցիկ տրոց իրաւունք են անուն եղեալ զի ըստ գոյի տուողին և ըստ յօժարութեան կամացն, առանց Հարկի և բռնադատութեան այլոց իրաւամբ ընկալեալ լինիցին և ի պատիւ փառացն Աստուծոյ Համարիցին: Այլ եթէ բռնութեամբ և դառնութեամբ, ակամայ և տրանջանօք առեալ լիցին, զի՞նչ իրաւունք Համարեալ լինիցին, և զիա՞րդ փառաւորի Աստուած բարերարն, այլ մանաւանդ անպատուի և Հայհոյի անվաւեր և անկարգ արարմամբք:

Ուրեմն ըստ պատուիրմանս վերոյ գրեցելոյ, այսուհետև առաջնորդք քաղաքիդ զգուշացին յանկարգօրէն զաւելի ինչ Հասս և զարդիւնս պաշանջելոյ, այլ որ ինչ ի նախնեաց անտի սաւմանեցեալ է չափաւորապէս, զայնս առցեն: Եւ ձեզ, օրհնեալ ժողովրդոցդ գրեմք, զի ի տալն ձեր զՀասս և զիրաւունս վանքական և առաջնորդական, եթէ անդր քան զաւանդութիւնս նախնեացն աւելորդս պաշանջիցեն, գրեսջիք մեզ զայնպիսին յանուանէ, [63բ] զի վրէժինդիր լիցուք: Բայց և զգուշացուցանեմք զձեզ չխտորիլ յապօրինաւոր գործս, և չյանդգնիլ յանիրաւ Հակառակութիւնս ընդդէմ առաջնորդաց ձերոց, զի յիրաքանչիւր ժամանակի և յամենում բանի պարտաւորն դատեցեալ լինի: Ապաքէն, որք յամ-

բարշտովթենէ և յանիրաւովթենէ Հեռի կալով անպարտ մնայցէք և
ի Հաճոյս Տեառն վարիցիք, եղիջիք օրհնեալք ի նմանէ և ի մէնջ:

Գրեցաւ ի ՌՄԽԷ. (1798) Թուոջս և ի փետրվարի ԺԸ. (18)
ի Սուրբ Աթոռս Էջմիածին²⁰⁵:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 62բ-3ա

¹³¹⁵ 1798 թ., փետրուար - Թուղթ ի Թիֆլիզ առ Արղու-
թեանց պարոն Եսային և առ որդիսն, վասն խօյեցի Դմայլի Սա-
ֆարալի Թուրքին, որ ի յարուցման անդ ներքինի բռնաւորին
ըմբռնեցեալ էր նա ի պատերազմին և այժմ Ջաֆարղուլի խանն
խնդրէր ի սրբազանէն բերել տալ զնա և դարձուցանել²⁰⁶:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 36բ-7ա

¹³¹⁶ 1798 թ., փետրուար - Թուղթ ի Մատէն, առ Փիլիպ-
պոս ամիրայն. յանձնարարովթին վասն պարոն Հայրապետ գոր-
ծակալին մերոյ և վասն Արղնու առաջնորդ ՍաՀակ վարդապետին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 106բ-7ա

513բ

^{1317*} Կոնդակ առաջնորդական ի Բաղէշ, ի վերայ Սուրբ
Գեորգեայ վանից վիճակեցեալ ժողովրդեանն, վասն առաջնոր-
դովթեան Մանուէլ վարդապետին:

Գրեցաւ յամնոյս ԺԴ. (14):

ՀտորՀակալական նամակներ և կոնդակներ են յղուել Բաղէշի Ս. Սարգիս
եկեղեցու գանձապետ մահտեսի ՅօՀան Բարաղամեանին «վասն երեք մարի ոսկ-
ւոյն աջաճամբուրին» (Ա./2), Ե. (5) խորան եկեղեցու գանձապետ մահտեսի Ամիրին
«վասն Ժ. (10) դուռուշ ժամուց նուիրելոյն, զոր ընդ գանձապետ պարոն Յովան-
նէսին էՀաս» (Ա./3), մահտեսի Բատիկին (Բաղէշ) «վասն Հարիւր փարայ ժամուց
յղելոյն՝ ձեռամբ գանձապետ պարոն Յովաննէսին» (Ա./4), Բաղէշի աագերեցնե-
րին «վասն Սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Յովաննէսի եղբայր տեր Յակոբին,
որ ի Սուրբ Գեորգ եկեղեցին» (Ա./5), եղբայրներ պարոն Մինասին և Գրիկին
(Մուշ) «վասն նուիրակին արարեալ լաւովթեանցն և վասն երկու Պօլսոյ ոսկի յղեալ
ժամուցին» (Ա./6), Կարինի առաջնորդ Յակոբ վարդապետին և տեղի իշխաննե-
րին «վասն վէքիլ Հայրապետին» (Ա./7), Հաճի Բաբային (Կարին) «ընդ Հայրապե-

²⁰⁵ Բաղէշի առաջնորդներից տեղացիների դժգոհությունն արտահայտող պատասխան նամա-
կի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 666-667:

²⁰⁶ Արղուքյան տոմարից պարոն Եսայի Թիֆլիսեցին ֆանիցս հիշատակված է դեռևս Հաշտար-
խանում նվիրակ և առաջնորդ Հովսեփ վրդ. Արղուքյանի Դուկաս Կարնեցի հայրապետին
ուղղված «Ի Հաշտարխան և ի Գիլան ընդ Կարապետ վարդապետին և Եսայուն» խորագ-
րով նամակում: 1777 թ. վավերագիրը հրատարակել է Գյուտ ավ. ֆին. Աղանյանցը, որտեղ
առավելապես ծանուցման բնույթի տեղեկություններ են հաղորդվում նվիրակական միջոց-
ները Մայր Աթոռ առաքելու, նոր նշանակված նվիրակներին գործուղելու կամ նրանց միջո-
ցով դրամական փոխանցումներ կատարելու և այլ հարցերի շուրջ (ԴՀՊ, հ. Թ., Յովսեփի կա-
թողիկոս Արղուքեան, հրատարակեց՝ Գիսա առ հեյ Աղանեանց, Թիֆլիս, 1911, էջ 361-367):
Բնագրի ամբողջական հրատարակությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 667-668:

տին և յանձնարարութիւն վասն նորա» (Ա./8), շէհր վէքիլ մահտեսի Յովհաննէսին «վասն ի պարոն Հայրապետէն առեալ գրամոցն Հատուցանելոյ» (Ա./9), Գօրօյեան մահտեսի Սերօբին (Կարին) «ընդ պարոն Հայրապետին գրեցելոյ» (Ա./10), մահտեսի Ալաւնին (Կարին) «վասն գործակալ պարոն Հայրապետին և գործակից պարոն Գասպարին» (լուսանցքում)²⁰⁷:

Թուղթք ի սուրբ Երուսաղէմ, ի Կեսարիա և ի Թօխատ

^{1318*} **Ի սուրբ Երուսաղէմ** - Թուղթ առ Պետրոս պատրիարզն սրբոյ Երուսաղէմի, ի պատասխանի թղթոյն, որ ընդ Յակոբ վարդապետին Ադրանացոյ. յաղագս ձեռնադրելոյ զնա եպիսկոպոս: Չոր և սրբազանն ձեռնադրեալ դարձոյց՝ այսու գրով ծանուցանելով զգալ և զգնալ նորա և վասն ընծային շնորհակալութիւն, և այլ ինչ բանք ընդ բանից նորա, որք տեսցին ի ներքոյ:

[Տէ ս] ի մեծ տե[տեր] յեր[ես] 2489:

^{1319*} **Ի Կիլիկիա** - Թուղթ առ Կիրակոս կաթողիկոսն Սայ, ի պատասխանի թղթոյն, զոր ձեռամբ Կեսարիոյ Սուրբ Կարապետի վանացն միաբանից Ստեփաննոս և Կարապետ վարդապետացն գրեալ էր առ սրբազանն, սէր և յարգութիւն ընծայելով Սրբոյ Աթոռոյս և սրբազանին և զաջաՀամբոյրս յղեալ: Ուստի և ընդ թղթոյս առաքեցաւ նմա փիլոն և մատանի և գրեցան բանք սիրայորդորք:

Տէ ս ի մեծ տե[տեր] յեր[ես] 2490:

^{1320*} **Ի Կեսարիա** - Թուղթ առ կեսարացի պարոն Նշանն. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն Հարիւր ղուռուշ Հոգեբաժին նուիրելոյն ի կենդանութեանն, զոր և թողթս տուաւ նմա, որ այլ որ բան չպահանջիցէ:

^{1321*} **Ի Թօխատ** - Թուղթ ի Հերակ առ մահտեսի Գրիգորն Կորեկածակ կոչեցեալ. օրհնութիւն և արձակումն ի բանադրանաց Ներսէս վարդապետին վախճանեցելոյ և շնորհակալութիւն վասն իւ. (40) ղուռուշ Հոգեբաժնին ի կողմանէ կողակցին, զոր ձեռամբ Բարսեղ վարդապետին էՀաս:

Գրեցան յամնոյս ԻԴ. (24):

Իւշքիխէի վանքից Համախոսական գրութիւնը Էջմիածին էին բերել Թօլմաս, Դանիէլ եւ Յարութիւն վարդապետները, Գրիգոր քահանայն եւ այլ անձինք: Ընդառաջելով նրանց ցանկութեանը՝ կաթողիկոսը վանքի առաջնորդ եւ Հոգեւոր

²⁰⁷ Մահտեսի Ալաւնին, գործակալ Հայրապետին և գործակից Գասպարին (Կարին) հղված հանձնարարականի համառոտագրութիւնը տէ ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 660:

այցելու է Հաստատում Թօվմաս վարդապետին: Վանքին առաջորդ Հաստատելու
ինդրանքով Ղուկասին էր դիմել նաև Բայազետի փաշան:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 244ա

Օրհնութեան նամակներ տիրացու Կարապետին եւ Հաճի Բաբային (Կարին): Գանձանակադրամի Հաննելու կապակցութեամբ շնորհակալութեան նամակ Ղարսի ժողովրդին: Նոր նուիրակին օժանդակելու յանձնարարութեամբ նամակ մէլիք Մայէլի որդի մէլիք Մարգարին (Խոյի մօտ Մաշկազան գիւղ): Նուիրակին օգնելու յանձնարարութիւն գանձապետ պարոն Թադէտոսին (Թաւրէզ): Հնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ մաշտէսի Փիլիպպոս եւ Սարգիս աղաներին (Ակն), պարոն Թումանին (Թօխաթ), պարոն Ստեփաննոս Տէր-Յովհաննիսեանին (Բասրայ), որը նուիրել էր զմին Հատ մախմուր խալիչայ, պարոն Միքայէլ Բարսեղեանին, պարոն Յովհաննէս Տէր-Գասպարեանին, պարոն Մաղաքիային ու նրա կին Մարիամյան խաթունին (բոլորը՝ Բասրայ):

Գեատինի ժողովրդին ուղարկուել է շնորհակալութեան կոնդակ Էջմիածնում գանձանակ ստեղծելու Համար: Նուիրակ Յակոբ վարդապետին ցոյց տուած օգնութեան Համար շնորհակալագիր է յղուել պարոն Յարութիւն Սաւակեանին (Բասրայ): Կոնդակ Բաղէշի Ե. խորան եկեղեցոյ ժողովրդին գանձանակի արդինքի Համար: Նոր նուիրակ Աբրահամ վարդապետի մասին յանձնարարական նամակ մաշտէսի Պարիկեան Սաւակին, Ալամին, Վարդանին ու Յակոբին (Վան): Հնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ դերձակ Իգնատիոսին, Եորտամօղի պարոն Գեորգին (Կ. Պօլիս): Ասորի մաշտէսի Ղուկասին (Կապնայ Մատէն), շնորհակալութեան նամակ՝ նուիրած մէկ ոսկու Համար (զմի ոսկի Պօլսոյ Ե. (5) ղուտոչ Հաշուեալ) իբրեւ աջակցութեամբ: Հուլաբերու Կիւնազար քալանթարին մխիթարական նամակ՝ որդու մաշտէսի կապակցութեամբ: Թիֆլիսեցի մէլիսանճի Գրիգորը ս. Գեղարդի Համար նուիրել էր մէկ լիտր մոմ, մէկ արծաթեայ թաս եւ 5000 դրամ, որի Համար շնորհակալութիւն է ասուում:

Ուակիւտարու բամաճոց էմսաֆը գանձանակ էր Հիմնադրել եւ երախայրիքը յանձնել նուիրակին, շնորհակալութեան նամակ է ուղարկուել նաև Կ. Պօլիս Հացագործ Ստեփաննոս աղային, մաշտէսի Մանկասարին, մաշտէսի Գրիգորին եւ մաշտէսի Աստօսին, ունչպէր Պետրոսին, արաբկիրցի շաքարճի Հանգուցեալ Պետրոս աղայի կին Հեղինէին (բոլորը՝ Ղալաթիայ): Փոքր Արմուտանի բնակիչ Նանիկ տիկնոջը օրհնութեան նամակ վան տրոց ինչ: Պատասխան նամակ մէլիք Սարգսին (Հուլաբեր):

Մոսկուայից պարոն Մանուկեան Նազարը ու նրա դուստրը, ի յիշատակ Հանգուցեալ փեսայ մաշտէսի Գրիգորի, իբրեւ նրա կտակ, խոստացել էին Էջմիածնին տալ 450 թուման՝ ձեռամբ Յովսէփ վարդապետին: Պատասխան նամակ Հանգուցեալ Իսաճան աղայի եղբայր մաշտէսի Փիրիջանին (Վան): Հնորհակալութեան նամակ Իզմիր, Սուլթանօղլի մաշտէսի Գեորգին, որը խոստացել էր տալ Հոգաբարձին՝ 150 ղուտոչ: Հնորհակալութիւն նուիրատու պարոն Գեորգին (Կ. Պօլիս): Գրիգորի դուստր Սեւար խանումը (Ղզլար) իր Հանգուցեալ դստեր՝ Թառթուխի յիշատակին Յովսէփ վարդապետին տուել էր զմի խաթայի ժամաշապիկ: Հնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ ուստայ Սարգսին, նրա եղբոր կին Հազատային (Բայազիտ), դարբանտցի Յարութիւնը՝ Վարդանի փեսան (Ղզլար),

նուիրել էր մեկ Հատ ամիլաս շուրջառ: Գատաւոր պարոն Մարտինի որդի տիրացու Գաբրիէլը (Նոր Նախիջեան), որը Էջմիածին գալով խոստացել էր 50 դուռուշ տուել էր այն նուիրակ Մինաս վարդապետին, որի Համար՝ շնորհակալութիւն: Նամակ Նոր Նախիջեան՝ կապիտան եւ դատաւոր պարոն Յովհաննէս աղային սակաւ ինչ մեղադրութիւն վասն թուղթ չգրելոյն եւ յանձնարարութիւն վասն նուիրակ Եփրեմ վարդապետին:

Նամակները գրուել են 1798 թ. յունուար-դեկտեմբեր ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 244բ-68բ

513բ

1798 թ., մարտ - Թուղթ ի յԱզուպիս

1322* **Ի յԱզուպիս** - Թուղթ ի յԱզուպիս, ի պատասխանի բազմակնիք մահաւորի նոցա, որով ծանուցեալ էին զվախճանմանէ Թօմաս վարդապետին՝ առաջնորդի Սրբոյն Թօմայի առաքելոյ վանիցն և ինդրեալ էին ի սրբազանէն կարգել իւրեանց նորոգ առաջնորդ: Առ որ գրեցաւ, թէ բոլոր ժողովուրդդ նորին ժողովեալք ի միասին խորհուրդ արարեալ ի մէջ ձեր, ընտրեալիք զոմն ի ձէնջ և յլէսջիք ի Սուրբ Աթոռա, որ մերով Հրամանաւ և կոնդակաւ կարգիցեմք ձեզ առաջնորդ: Եւ թէ որ գրեալ էիք վասն ձեռնադրեալսն ձերոց առ Յովակիմ վարդապետն, գիտասջիք առ այն, զի զձեռնադրելիսն ձեր տարջիք ի սուրբ վասնն Երնջակու առ ի ձեռնադրիլ յառաջնորդէ նորին և կամ թէ անհազէտ եղեալ սպասեսջիք գալստեան Յովաննէս վարդապետին, որ երբ գայցէ, բերջիք առ ձեզ, զի զձեռնադրելիսն ձեր ձեռնադրեսցէ:

Գրեցաւ յամնոյս Ա. (1):

514ա

1323* **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն, եթէ ահա ըստ ինդրոյ քոյ յանձնարարական թուղթ գրեցաք ի վերայ նոցին, որոց դու նշանակեալ էիր և յլէցաք ի ձեռս քո Հասուցանել առ նոսա: Թուղթ մի ևս ի վերայ եղբօրորդոյ քոյ՝ պարոն Գասպարին գրեցաք, որ պատահեալ բանից մերոց, ընդ քեզ ձեռնտու լիցի:

Նամակներ են ուղարկուել պարոն Հայրապետի եղբորորդի պարոն Գասպարին (Կարին) «վասն այսր պարոն Հայրապետին ևս գրեցաք, որ ի միասին Հոգ տարջիր» (514ա, Ա./2), Փիլիպպոս ամիրային (Մատեն) «վասն պարոն Հայրապետ գործակալին մերոյ և վասն Արղնու առաջնորդ Սահակ վարդապետին» (Ա./3), Իսաճան աղայի եղբայր պարոն Յակոբջանին (Խոյ) «միսիթարութիւն վասն մահուան եղբօրն իւրոյ և բան վասն սարդարի ընծային» (Ա./4): Գրուել են մարտի Զ. (6) - Է. (7)-ին:

Թուղթ ի Կարս և ի Ղօշապանք

1324* **Ի Կարս** - Թուղթ ի Կարս առ Գէորդ աղայն, եթէ յառաջքան զայս ի փետրուար] քանիսին թուղթ գրեցաք, բայց ի նոյն ամնոյ ԺԷ. -ին (17) թուղթդ առ մեզ էհաս՝ Հանդերձ առևտ-

րիցդ դավթարին, որով տեսեալ զՀաշիւ դավթարիդ գտաք Հեմեմատ մերոյս դավթարին: Եւ վասն գանձանակական արդեանցն, որ գրեալ էիր շնորհակալութեան կոնդակ գրել, ա՛հա գրեալ ընդ թղթոյս յղեցաք ի ձեռս քո, զոր ընթեռնուլ տացես ի լուր ամենեցուն:

Գրեցաք և զթուղթ մի առ գանձապետ մահտեսի Սահակն, զոր տացես իւրն: Եւ վասն թաւանի տախտակացն, զոր ինչ գրեալ էիր, իմացաք: Եւ այս անգամ, որ քանի Հատ ևս յղեալ էիր, էհաս: Բայց յայնժամ մէք չկարելով զհասանիլ նոցին գրել, պատուիրեցաք Հիւրընկալ Փիլիպպոս վարդապետին, որ նա գրեսցէ քեզ զհասանիլ տախտակացն առ մեզ: Ծանուցումն Սրբոյ Աթոռոյս վախճանեալ եպիսկոպոսացն և վասն մեր յերևան գնալոյն և գալոյն:

Գրեցաւ թուղթս յերևան, յամնոյս ԺԹ. (19):

1325* Կոնդակ ի Կարս, ի վերայ Հասարակ ժողովրդեանն. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն գանձանակական արդեանց Հասուցելոց, որ է Հարիւր և Խ. (40) զուռուշ:

1326* Թուղթ առ նորին գանձապետ մահտեսի Սահակն. շնորհակալութիւն և օրհնութիւն վասն Հասուցեալ գանձանակագրամին և պատուէր՝ արի և ժիր լինիլ ի գործս իւր:

1327* Ի Ղօշավանք - Թուղթ առ Ղօշավանիցն առաջնորդ Յովաննէս վարդապետն, եթէ թուղթդ առ մեզ ժամանեաց, բայց մէք յայնժամ չկարելով զպատասխանի թղթոյդ գրել, այժմ գրեմք քեզ զի Է. (7) տիկ իւղ և պանիրն, որ յղեալ էիր, վաղապես առ մեզ են Հասեալ, որոյ կողմանէ լէ՛ր միամիտ: Եւ վասն գալոյն ի Սուրբ Աթոռս, թէ ի սուրբ Չատկին գնացես ի քաղաքն և զամենայն Հոգալիսն քո Հոգասցես և զկնի Նոր կիրակէին ելեալ գայցես ի Սուրբ Աթոռս՝ բերելով ընդ քեզ և զդավթար գործոյդ: Ի գալդ ի Թիֆլիզու կողմանէ առ քեզ եկեալ ծրար ամանաթն ընդ քեզ բերցես, որ Հարկաւոր է մեզ: Եւ թէ ընդ թղթոյս մէկ պահարանաւ թուղթք յղեցաք ի ձեռս քո, զոր ի գնալն քո ի քաղաքն տարցես ընդ քեզ և տացես պարոն Գէորգին: Յօշականցի Մինասին, որ Բ. (2) թուման դրամ էիր տուեալ ի փոխ, Հատոյց մեզ աստ և մէք զայն ի Հաշուատարութեան քում արկանելոց եմք ի Հաշիւ: Նաև վայր դիր Հօր վանացն, զոր ինչ գրեալ էիր, իմացաք, բայց չունիմք աստէն ինչ երկարիլ, երբ գայցես, յայնժամ ընդ քեզ խօսելոց եմք վասն այնր:

Գրեցաւ յամնոյս ԺԹ. (19):

1328 1798 թ., 19 մարտի - Թուղթի Կեսարիա առ մաշտեւի Յովնանէն, ի պատասխանի թղթոյն, որ վասն վախճանման Մատթէոս առաջնորդին իւրեանց, և նորին արարեալ կտակին:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 15բ-6ա

514ա

Թուղթի Մատէն, ի Կարին և ի Բայազիտ

1329* **Ի Մատէն** - Թուղթի Մատէն առ Իւսուֆ փաշայի սառաֆ Փիլիպպոս ամիրայն, եթէ պարոն Հայրապետն, որ ի յԱրզրում առնելիք ունի, գրեմք քեզ, զի ի գալն դորա առ սարասկեարն և ի ինդրելն զթուղթի վերայ պարտականացն, դու ևս ձեռնտու լինելով նմա՝ առցես զթուղթն և տացես իւրն և յանձնարարութիւն վասն առաջնորդ ՍաՀակ վարդապետին, որ ի ԲարձրաՀայեաց Սուրբ Աստուածածին:

[Գրեցաւ] յամնոյս ԻԸ. (28)²⁰⁸:

1330* **Ի Բայազիտ** - Թուղթի Բայազիտ առ պարոն Հայրապետն, եթէ թուղթդ առ մեզ էՀաս ի մարտի ԻԴ. (24), որով իմացաք, որ դեռ ևս առնելիքդ մնացեալ, վնաս ես կրեալ քան թէ շահեալ: Եւ թէ վասն առնելեացդ, որ ի յԱրզրում թուղթ էիր ինդրեալ ի վերայ Փիլիպպոս ամիրային, որ քեզ օգնական լինելով Իւսուֆ փաշայէն թուղթ առցէ ի վերայ պարտականացդ, աՀա գրեալ յղեցաք բաց ի ձեռս քո, որ դու ևս ընթերցեալ կպուցես և յղեսցես առ նա, զոր ինչ Համբաւ էիր գրեալ ի Պօլսոյ կողմանէ իմացաք և զոր ինչ ևս լսիցես, գրեսցես մեզ ի գիտել:

Գրեցաւ յամնոյս ԻԸ. (28):

514բ

1331* **Ի Կարին** - Թուղթի Կարին առ մաշտեւի Սերօքն և պարոն Գասպարն, եթէ յառաջ քան զայս, որ ընդ պարոն Հայրապետին թուղթ էիք գրեալ Հասին առ մեզ, զնոցին պատասխանին գրեալ, նորա ձեռօքն յղեցաք: Եւ առ մաշտեւի Սերօքն, թէ վասն մոմճի Թադէոսին տուեալ գօտուոցդ, որ գրեալ էիր զգինս նոցին առնուլ, աՀա ըստ վկայելոյ կարնեցի մաքուքճի Աւետիքին՝ ԾԴ. (54) գօտի է եղեալ մէկն Կ. (60) փարայալ են վաճառեալ և մէք զգինս նոցին ՁԱ. (81) ղուռուշ առաք:

Եւ վասն Մուղամեան Յակոբ վարդապետին, որ փոքր-ինչ ղալայ և նշատիր էիր յղեալ նա վախճանեալ առ մեզ էՀաս՝ ձեռամբ պարոն Հայրապետին և պարոն Հայրապետն ասաց, թէ այդ գօտուոց գինն ևս պարտ էր Հասանիլ Յակոբ վարդապետին, վասն որոյ գրեմք քեզ, զի այն ՁԱ. (81) ղուռուշն առ մեզ կայ, իսկ եթէ

²⁰⁸ Փիլիպպոս ամիրային (Մատէն)՝ գործակալ Հայրապետի և Արղնու առաջնորդ Սահակ վարդապետի առնչությամբ հղած հանձնարարականի համառոտագրությունը տե՛ս ԳԶՊ, գիրք Դ., սյուն 660:

զայլ ինչ հէսապ տալեաց և առնելեաց ունիս ընդ Հանգուցելոյն, գորպիսուլթիւնն գրեսցես մեզ, զի ըստ այնմ տեսցուք և եթէ պահանջիցես զայն ՁԱ. (81) դուռուչն, Հասուցանեմք քեզ և եթէ ի քէն տալիք իցեն Հանգուցելոյն, Հաշուեսցուք:

Եւ ևս գրեմք զայս մահտեսի Սերօբիդ և պարոն Գասպարիդ, զի Ներսէս վարդապետն ի Թօխաթ մէկ Հակն շինեալ և կապեալ, ի գալն իւր անտի յայդր ամանաթ է եղեալ ի յօդայոջն պարոն Հայրապետին և նոյն Հակին մէջ եղեալ իրացն Բ. (2) սիահի է գրեալ, զմինն տուեալ էր պարոն Հայրապետին և զմիւսն ընդ իւրն բերեալ, ապա նա վախճանեալ զխուցն բանալ ետուք, այն Հակի սիահին ևս ել և տեսաք և պարոն Հայրապետն ասաց, թէ մէկ օրինակն ևս առ մեզ է, սակայն ի նորին սպասաւոր Յովաննէս վարդապետէն և յովանց թղթոց իմացաք, որ սիահիէն դուրս ուրիշ իրք ևս կան այն Հակի մէջն, զի կիւմրուկճոց չեն կամեցեալ յայտնել զամենայն իրան, վասն այն զովմանս ոչ գրեալ ի սիահոջն: Եւ թէ երկոքեանդ ի միասին բանայք զՀակն և զոր ինչ կայ ի մէջն, զամէն մի ըստ միոջէնոր ի նորոյ սիահի արասջիք և զսիահին օր մի յառաջ յղեալիք առ մեզ, իսկ զՀակն կրկին շինեալ երկուքդ ևս կնքեսջիք և մնասցէ ի տան Հայրապետին, զինչ և գրիցեմք, այնպէս արասջիք:

Գրեցաւ յամնոյս ի Թ. (29):

^{1332*} **Ի Թէլաւ** - Թուղթ ի Թէլաւ առ տեր Սարգիս քահանայն, եթէ թուղթդ առ մեզ էՀաս ձեռամբ Պապային և զոր ընդ նմա Գ. (3) լիտր մոմ էիր յղեալ Հասուցին: Իսկ զոր ի լուսարարէն միւռոն էիր խնդրեալ, ահա փոքր-ինչ շիշայիւ յղեցաք ձեռամբ Պապային: Եւ թէ վասն Հօրեղբօր քո թուղթ էիր խնդրեալ, այժմ անձեռնահաս գողով յետոյ գրելոց եմք: Եւ պատուէր, զի ի տեղոյ ճորտիցն, եթէ արգիւնք լինիցի, փոխանակ այնր մոմ յղեսցէ:

Գրեցաւ յամնոյս ելն:

^{1333*} **Ի Հուշի** - Թուղթ ի Հուշի առ Իսրայէլ կաթուղիկոսն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի մարտի ժ.Չ. (16), վշտակցութիւն վասն գոյաթափ լինելոյն ի յաւազակաց և վասն կրեալ նեղութեանն: Եւ թէ, որ վասն քոյ զգենլի՝ Հանդերձ էիր խնդրեալ մէք թէպէտ պատրաստեցաք յղել, բայց եկօղքն Հետևակ լինելոյն և ճանապարհքն ևս կասկածաւոր ոչ յուղարկեցաք ընդ նոսա: Եթէ տեղս ծանօթ ունիս, գրեսցես առ նա և նա զթուղթս քոյ ցոյց տուեալ մեզ, առ նա յանձնեսցուք, որ ընդ Հաւատարմի առ քեզ Հասուցէ:

[Գրեցաւ] յամնոյս ելն:

1334 **1798 թ., մարտ - Թուղթ** *ի իջոյ առ պարոն Մէհրապն վասն նուիրակին յանձնարարութիւն, Հարեանցի յիշատակութեամբ անցից և վնասուցն մերոց:*

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 16աբ

1335 **1798 թ., մարտ - Կոնդակ** *ի վերայ Կեսարիոյ Սուրբ Կարապետի վանացն և քաղաքին և գիւղորէիցն, ի պատասխանի մահաներին իրեանց վասն մահուան առաջնորդ Մատթեոս վարդապետին, և վասն նորոգ առաջնորդ լինելոյ Ստեփաննոս վարդապետին, որ նորապէս եպիսկոպոս ձեռնադրեցեալ ընդ Կարապետ վարդապետին դեռ ի ճանապարհի էին գնալ ի սուրբ վաննս իրեանց:*

Յորմէ ժամանեսցէ Թուղթ ճշմարիտ սիրոյ... Գրեցաւ ի ՌՄԽԷ. (1798) Թուոջս եւ ի մարտի, ի յերկնաՀանգէտ գաՀս ամէնայն Հայոց՝ ի Սուրբ Աթոռս Էջմիածին²⁰⁹:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2492-94

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 514բ

1798 թ., ապրիլ - Թուղթք ի Գօրի և ի Թիֆլիզ

1336* **Ի Թիֆլիզ - Թուղթ** *ի Թիֆլիզ առ գործակալ տէր Յովաննէս քաՀանայն, էթէ Թուղթ տէր Ղազարին, որ գրեալ էր առ մեզ, ընդ քոյդ թղթոյն Հասին առ մեր Թադէոս վարդապետն, յորում ընթերցեալ զԹուղթն տէր Ղազարին և զքոյդ գրեալնս ևս իմացաք: Իսկ սակս տէր Ղազարի ըստ մեր խնդրոյն յղեալ բակուաստին և գողէթին, զոր Հարցեալ էիր, էթէ ի Մօզլուք մնալն կամիցիմք, թէ բերել տալք և յուղարկելք առ մեզ, գիտասջի՛ր, որ յայլ ուստեքէ ոչ գտանի և խնդրողացն բաց ասել ոչ լինի, ուրեմն գրեսցէ ս ի Մօզլուք և բերել տացէ ս զբակուաստն և զգաղէթն զայն:*

Եւ թէ կողմունքն ի խառնակութեան իցեն, Հաւատարիմ գնացողք յուղարկեսցես ի Ղարս՝ ի ձեռս Գէորգ աղային, որ անտի բերել տացեմք: Եւ վասն արդեանց Սրբոյ Աթոռոյս ի տէր Ղա-

²⁰⁹ Կեսարիայի Ս. Կարապետ վանքի, տեղի առաջնորդների ու միաբանների մասին Դուկաս Կարնեցու նամակներում բազմաթիվ հիշատակություններ կան: Փաստելի է, որ Դուկասի կաթողիկոսության վերջին տարիներին հիշյալ վանքի առաջնորդը Մատթեոս վարդապետն էր, որին ուղղված նամակների բովանդակությունը տե՛ս վավ. 91, 999, 1132, 1133, 1169, 1300, 1342: Վավերագրերում հիշատակված են նաև վանքի բազմաշխատ հոգևորականներ Ստեփանոս և Կարապետ վարդապետների անունները, որոնցից վերջինս նաև նվիրակ է հիշվում (վավ. 1302, 1319): 1798 թ. մարտին վախճանվում է վանքի երկարամյա առաջնորդ Մատթեոս վարդապետը, որին փոխարինում է Ստեփանոս վարդապետը, որը դեռ նոր էր եպիսկոպոս ձեռնադրվել: Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի չափածո տապանագրերից մեկը հայտնում է Կեսարիայի Ս. Կարապետ վանքի «յարգոյ» միաբան Կարապետ վարդապետի անունը, որը, ըստ էության, վախճանվել է Էջմիածնում և այդտեղ է թաղվել 1815 թ. հոկտեմբերի 24-ին (Ս. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 212, արձ. 429):

զարէն առ քեզ յանձնեցեալ, զոր նշանակեալ էիր գող է. (7) թուման աւելի կամ պակաս և զկնի այնորիկ մինչև ի վտարանդին քաղաքացւոցդ, զոր ինչ ժողովեալ էիր զորքանն ոչ ոնելով ի մտի, խոստացեալ էիր զդաւթարն բերել տալ և ծանուցանել մեզ: Եւ թէ սիահի արարեալ զհրաքանչիւրոցն տուրս և զտէր Ղազարի յանձնեալն քեզ, զսիահին առ մեզ յղեսցես, որ իցէ ի դէպ ժամանակի զպիտանի իրս գնել տայցեմք: Իսկ տէր Ղազարի թղթոցն այժմ պատասխանի գրել ոչ կարացաք, յետոյ գրելոց եմք: Եւ յաղագս քոյդ /515ա/ կոնդակին անհոգ լիցիս, զի ի դէպ ժամանակի գրելոց եմք:

Գրեցաւ յամնոյս Գ. (3):

¹³³⁷ **1798 թ., 3 ապրիլի** - Թուղթ ի Թարվէզ առ տէր Յովսէփի եղբարսն և որդիսն, ի պատասխանի թղթոյն նոցա ի փետրվարի Ի. (20) գրեցելոյ, ընդ որում և յղեալ էին զհաշուագիրն Յակոբ տղայի գնոյն և ծախուցն և Սրբոյ Աթոռոյս այգւոյ արդեանցն, և իւրեանց առ այսր Հասուցեալ իրացն, և մեր առ ինքեանս յղեալ դրամոցն, և իւրեանց տակաւին առնլեացն²¹⁰:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 64բ-6ա

¹³³⁸ **1798 թ., 10 ապրիլի** - Թուղթ առ Ապրոյեան Մարգար աղայն, ի պատասխանի թղթոյն յապրիլի 21 գրեցելոյ վասն ցաւահար եղբօրն իւրոյ՝ Մատթէոս աղային, զոր յուղարկեալ էր ի Սուրբ Աթոռս յուխտ և յերկրպագութիւն:

Յորմէ ճշմարիտ սիրով և օրհնութեամբ և քրիստոսաձիր ողջունիւ և շնորհօք սրբոյ Իջման տեղւոյս նորին, և կողամոնիս սուրբ Գեղարդեանն և սուրբ Լուսաւորչին մերոյ շնորհաբաշխ աջոյն, ծանուցումն լիցի իսկապէս սիրելոյդ մերում և Հարազատ որդւոյդ Սրբոյ Աթոռոյս, Քրիստոսիւ օրհնեցեալ բարեպաշտօն և ազնուական Մարգար աղայիդ:

Զի թուղթս քո յապրիլի 21 գրեցեալ վասն Հարազատ եղբօր քոյ և Հոգևոր որդւոյդ մերոյ՝ Մատթէոս աղային, էհաս առ մեզ ի յունիսի 18 (Թող զայլ թուղթսդ, որոց զփոխադարձս յետոյ եմք գրելոց): Ապա և ինքն Մատթէոս աղայն, Հանդերձ Պետրոսիւ և միւս ծառայիւ, ընդ պօլսեցի ուխտաւորացն ժամանեցին ի Սուրբ Աթոռս ի յուլիսի ամսոյս 1: Եւ մեր մեծաւ սիրով և գրով ընկալեալ զՄատթէոս աղայն, զպատկեր լուսաճոգի Հօրն ձեր և քո ի վայելչադիր Հասակ և ի չքնաղ դէմն սորին նշմարեալ, Համարեցաք զկարօտութիւն ձեր սովաւ լցուցանել առայժմ: Բայց յաղագս դիպուածոյն ընդարմութեան ցաւեցաք և կսկծեցաք ի սիրտ և ի Հոգի:

²¹⁰ Թավրիզի տեր Հովսէփի եղբայրներին և որդիներին՝ Սուրբ Արթուրի այգու միջոցների վերաբերյալ հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԳԶՊ, գիրք Դ., սյուն 668:

Եւ զի մեծաւ հաւատով և յուսով ինդրեալ էիր տանիլ զհոգևորական դարմանս յաստուածակոյս կողմանէ վասն բժշկութեան ցաւոյն, և մէք յամենայն յօժարութեամբ հաճեցեալ, կարգեցաք ի յաւուրն յառաջօտու և յերեկոյի երկու երկու եպիսկոպոսք, որոց մինն ժամարարն իցէ, առաջի սրբոյ Իջման տեղոյն Քրիստոսի ընթեռնուլ ի վերայ գլխոյ նորա զաւետարանս բժշկութեան, և զաղօթն Նարեկացոյն և ասել զՓարատեայն և զՊաշկանեայն և ի վերայ այսր յաւուր միում յատկապէս վասն նորա զպաշտօն և զպատարագ առնել ետուք, ի զպաշտամանց դրամն բաժանեցաք համայն միաբանից ըստ կարգի սովորութեանն տեղոյս: Եւ յաւարտման սուրբ պատարագին մէք ևս հանդերձ դասուք եպիսկոպոսաց, ժողովեալ առաջի սրբոյ բեմին, ընթերցաք զԱւետարան և զաղօթն, և ձեռամբ մերով եղաք ի վերայ գլխոյ նորա զաջ Սրբոյ Լուսաւորչին, և զսուրբ Նշանն ի փայտէն կենաց, և զսուրբ Գեղարդն քրիստոսամոլիս, և զնշխարս սրբոց առաքելոց, և Սրբոյն Հովհաննէս կուսին, և խաչալուայ արարեալ արբուցաք: Եւ հակերոյդ ևս պատրաստեցաք, և ծանուցումն առնել ետուք համայնիցն միաբերան պաղատանս կարդալ առ Աստուած, ազատել զխղճալին ի պատահական ախտէ անտի:

Եւ զվնի կատարման ախտին ի վանորայս սրբոց կուսանացն, կամէաք և ի հեռաւոր ուխտատեղիսն յուղարկել, այլ վասն երկուց պատճառաց կարելի չեղև: Նախ՝ զի երկրիս իշխօղն գնացեալ գորով առ շահս, ամենայն աւազակք կատաղեալք, ոչ տան զանցս անվնաս շրջագայելոյ:

Երկրորդ՝ յերկրոջս ուրեք յայսմ ամի ժանտամահ երևելով, որպէս և ի բազում աշխարհս, ի մեր մօտակայ գեղջս ևս յոմանս թաղս երևի, վասն որոյ զաստուատ յայլ շէնս գնացօղ ոչ վնի, զի թէ գնան, սուսերօք և հրացանաւ վարեն: Այսօրիք պատճառօք չկարացաք յուղարկել, զի մի կողոպտեցման կամ վտանգից պատահիցին: Կամէաք ևս աստ ի սուրբ Աթոռոջս պահել յաւուրս բազումն, բայց կասկածեցաք ի ծանրութենէ օդոյն տեղոյս, մանաւանդ և ի ժանտախտէս, և զի մէք ևս ապահովութիւն չունիմք ի յառաջ շարժելոյ շահին և ի գալստենէ զօրապետացն ի Խոյ, որք և ի մէնջ զընծայս էին պահանջեալ, և ի Վրաց պատանդս խնդրեն, և չգիտեմք թէ զի՞նչ եմք կրելոց:

Իսկ ի վերայ այսոցիկ տարակուսութիւն մի ևս այն էր, որ թէ սոքա և թէ միս ուխտաւորքն ի Սուրբ Կարապետ էին գնալոց, եթէ զսոսա բաժանեալ արգելուաք, յետոյ այնպիսի յարմար ուղեկիցք ոչ գտանէին, ոյր սակս խորհեալ և խօսեցեալ ընդ Պետրոսին, ընդ ուխտաւորացն ի միասին գնալն պատշաճ հա[2320]մարեցաք, վասն որոյ և մէք այնքանից արարողութեանցն սիրով և օրհնութեամբ ուղևորեցաք գնալ ի Սուրբ Կարապետի վանան, և

անտի ի Կարին և ի Թօխաթ, ուստի ևս դիւրաւ ժամանեացեն յայդր:

Եւ արդ, ամենաբարերարն Աստուած, որ միշտ քաղցր է և Հեշտալուր, և ամենայն բաւական, ոչ կարօտի ժամանակի յերկարաձգութեան և պէս-պէս Հանգամանաց, այլ ի կամիլն կարող է արագ առնել զողորմութիւն իւր և զփրկութիւն: Որ և ըստ ձերդ Հաւատոյ և յուսոյ, և ըստ մերս միաբանական Հայցուածոց, միջնորդութեամբ սրբոյ Իջման տեղւոյս իւրոյ և սրբոյ Գեղարդեանն և կենսառիթ խաչին, և բարեխօսութեամբ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և սրբոց առաքելոցն, և սրբուհեացն Հռիփսիմեանց և Համայն իսկ կամարարաց և սիրելեաց իւրոց, Հեղցէ զշնորհս բարեգթութեան իւրոյ ի վերայ խղճալի Մատթէոսի աղային և ձեր ամենեցուն, Հրաշագործեաց զփարատումն Հիւանդութեան մտաց նորա, և կատարելապէս առողջութիւն և զգաստութիւն պարգևեացէ՛նմա ի փառս մեծի անուան իւրոյ և ի մխիթարութիւն ձեզ և մեզ:

Ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ յամի Տեառն 1798 և ի յուլիսի 10, ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

Սիրով ողջոյն և օրհնութիւն տամք ազնուամեծար Հօրեղբորն քում և սիրելոյդ մերում, բարեպաշտ և մեծաՀաւատ Առաքել աղային և տիրապարգև որդւոց նորին, և եղբօր քում պարոն Յակոբին և ծաղկափթիթ որդւոյն քո Աստուածատուր աղա զատէին, և Համայն օրհնեալ ընտանեաց ձերոց, և խոհեմամիտ տիրացու Աբրահամին: Որք և լիցին յանձնեցեալք ի ինամն Տեառն. ամէն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2319-20

¹³³⁹ 1798 թ., 14 ապրիլի - Թուղթ ի Թիֆլիզ առ տէր Դաւիթն և պարոն Եսօք ճորտն Սրբոյ Աթոռոյս վասն ինդրելոյ և ժողովելոյ զգրամն Հանգուցեալ առաջնորդ Մարտիրոս վարդապետին, զորս նա ի կենդանութեանն տուեալ էր բազմաց ի պարտս՝ թամասուկով և առանց թամասուկի, զորս վկայութեամբ սպասաւորաց իւրոց և այլոց սիաՀի արարեալ լղեցաք ի ձեռս սոցա՝ ցուցանել և զպարտսն պահանջել:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 17աբ

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 515ա

^{1340*} Ի Գօրի - Թուղթ ի Գօրի առ տէր Սահակ աւագ քահանայն. ծանուցումն երկար միջոցի Թուղթ չգրելոյն և թէ աՀա Գ. (3) ամք են, որ Թիֆլիզ աւերեալ է և ձեռք մեր անդ ոչ Հասանի, գիտես, որ զմոմն Հայթայթանօք ի Հեռուստ գնեմք, զինչ լինէր մինչև ցայժմ սակաւ ինչ մոմ յղիցէիր յօգնութիւն լուսաւառու-

Թեան սրբոյ տաճարիս: Ջայս ևս ծանխ'ր, զի յետ փոխեցման Մարտիրոս պետին մինչ Ոսկան սարկաւագն ընդ իւրն եկեալ կայր և Մինաս վարդապետն յետ ամսոց ինչ եկն, զառնելիսն լուսաճոգ-
 ւոյն, զոր ոռնի ի վերայ քաղաքացւոցն և այլոցն, ասացին մեզ և սիահի առնել ետուք, ուստի աճա թուղթ գրեցաք առ տէր Դաւիթ աւագ քահանայն և առ սրբոյ Գահիս ճորտ պարոն Ենովքն և զյի-
 շեալ սիահին ևս յղեցաք ի ձեռս նոցա, զի Հոգ տարեալ ժողովեցին զգրեցեալն ի նմին և Հասուցեն ի Սուրբ Աթոռս: Ուրեմն և դու,
 զայն ԱՃ. (100) Թուման տալացուն քո Հոգասցես Հասուցանել իւր Հաշուօքն առ տէր Դաւիթն և պարոն Ենովքն, որ նոքա ծրարեալ
 և կնքեալ առ մեզ Հասուցեն, որովհետեւ զայն գործ յանձն արա-
 րեալ եմք նոցա: Իսկ գօրեցի Դեմետրոն ևս որ Ի. (20) Թուման է առեալ
 գիտութեամբ քով, եթէ որիշ ի քո ԱՃ. (100) Թումանէն և կամ զի արդ
 իցէ զնորին որպիսութիւնն ևս գրեցես մեզ: Նաև յետ Մարտիրոս
 վարդապետին, զորքան ինչ արդիւնս իցես ընկալեալ, ծանուցես
 մեզ ի գիտել:

Գրեցաւ յամսոյս ԺԴ. (14):

^{1341*} **Ի Թիֆլիզ** – Թուղթ ի Թիֆլիզ առ տէր Դաւիթն և պարոն
 Ենովքն՝ վասն խնդրելոյ և ժողովելոյ զդրամն Հանգուցեալ առաջնորդ
 Մարտիրոս վարդապետին, զորս նա ի կենդանութեանն տուեալ էր
 բազմաց ի պարտս թամասուկով և առանց թամասուկի, զորս վկայու-
 թեամբ սպասաւորաց իւրոց սիահի արարեալ, յղեցաք ի ձեռս սոցա
 ցուցանել և զպարտան պահանջել:

Եւ թէ մէկ քրքացու սամուր մորթն, որ առ տէր Առաքելի եղբայր
 Մարտիրոսն կայ, զայն առեալ շուտով յղեսջիք առ մեզ: Իսկ և
 զթուղթ մի գրեալ առ Գօրու գործակալն մեր տէր Սահակն, թէ
 վասն իւր տալեաց և թէ այլ ինչ բանից, աճա ընդ թղթոյս յղեցաք
 առ ձեզ, զոր շուտով Հասուցիք նմա:

[Գրեցաւ] յամսոյս ԺԴ. (14):

^{1342*} Կոնդակ ի վերայ Կեսարիոյ Սուրբ Կարապետի վանացն
 և քաղաքին, և գիւղորէիցն, ի պատասխանի մահսերին իւրեանց՝
 վասն մահուան առաջնորդ Մատթէոս վարդապետին և վասն նորոգ
 առաջնորդ լինելոյ Ստեփաննոս վարդապետին, որ նորապէս
 եպիսկոպոս ձեռնադրեցեալ ընդ Կարապետ վարդապետին դեռ
 ի ճանապարհի էին գնալ ի սուրբ վանսն իւրեանց:

Տէ ս ի մեծ տետե[ր] յերե[ս] 2492:

Մխիթարական նամակներ Պաշպաղիրկեան մահտեսի Յովհաննէս ամիրա-
 յին (Կեսարիա)՝ Մատթէոս վարդապետի մահուան եւ «նորին արարեալ կտակին,
 զի զոսկի շինեալ յղեսցէ ի Սուրբ Աթոռս» (515ա, Ա./4), Ս. Կարապետ վանքի միա-
 բաններ Ստեփաննոս եւ Կարապետ վարդապետներին «վասն կտակի լուսաճոգի
 Մատթէոս վարդապետին, որ գրեալ էիք մեզ, առ այն գրեմք ձեզ, զի ԵՃ. (500)

զուուռն ոսկի շինեալ գիտութեամբ մահտեսի Յովաննէսին, Հաստարմաւ յղէսՅիբ
ի Սուրբ Աթոռա» (Ա./5):

**Թուղթք ի Գաղատիա, ի Սեբաստիա, ի յԱլին, ի յԱրապիկեր և
ի Թօխաթ**

^{1343*} **Ի Գաղատիա** – Թուղթ առ Գաղատիոյ նուիրակ Յո-
վաննէս վարդապետն, եթէ յանցեալ թուոյ յօգո[ստոսի] ԻԱ. (21)
գրեալ թուղթդ էՀաս առ մեզ ի դեկ[տեմբերի] ԺԵ. (15), որով
իմացաք Հասանիլդ յԱնկիւրիա և զձեռնամխիլդ ի գործ նուիրա-
կութեան: Ընկալաք ընդ թղթոյդ և զերկու Հատ յուղարկեալ կա-
ռօթդ և շնորհեկալեցաք: Իսկ որ ի վերայ տեղոյդ առաջնորդին
յանձնարարարկան թուղթ էիր ինդրեալ, այժմոյս անձեռնՀաս
գոլով չկարացաք գրել յետոյ եթէ Հարկաւորիցի, ծանուցես մեզ,
զի գրեսցուք և յղեսցուք:

Գրեցաւ յամոյս ԺԹ. (19):

^{1344*} **Ի Սեբաստիա** – Թուղթ առ Սեբաստիու առաջնորդ
Յակոբ վարդապետն. շնորհակալութիւն վասն ընդունելութեանցն
առ Բարսեղ վարդապետն և մխիթարութիւն վասն մահուան իւր
միաբան Դաւիթ վարդապետին և յանձնարարութիւն վասն նորոգ
նուիրակ Գրիգոր վարդապետին:

^{1345*} **Ի յԱլին** – Թուղթ առ Ալինայ առաջնորդ Միքայէլ
վարդապետն. շնորհակալութիւն վասն նախանցեալ նուիրակ
Բարսեղ վարդապետին արարեալ բարելաւութեանցն և յանձնա-
րարութիւն վասն Գրիգոր վարդապետին:

^{1346*} **Ի յԱրապիկեր** – Թուղթ առ Արապիկերու առաջնորդ
Մարտ[ի]րոս վարդապետն. շնորհակալութիւն վասն արարեալ
բարե/515բ/լաւութեանցն առ նուիրակ Բարսեղ վարդապետն և
յանձնարարութիւն վասն Գրիգոր վարդապետին:

515բ

^{1347*} **Ի Թօխաթ** – Թուղթ ի Թօխաթ առ Սրբոյ Աթոռոյս
գործակալ պարոն Գասպարն, ի պատասխանի Գ. -ից (3) թղթոցն
գրեցելոյ յանցեալ թուոյ, ի յունիսի ԺԳ. (13), Հոկ[տեմբերի] ԻԹ.
(29) և դեկ[տեմբերի] Ա. (1). շնորհակալութիւն վասն արարեալ
շահեցողութեանն առ նուիրակ Բարսեղ վարդապետն, և թէ, որ
ընդ նմա զժողովեալ արդիւննն, այսինքն՝ զկտակս և Հոգեբաժինս
յանձնեալ էիր նմա, նա ևս բերեալ Հասոյց մեզ, որ էր ԲՃԾԹ. (259)
զուուռն: Եւ որ ի Գաղատիոյ նուիրակ Յովաննէս վարդապետն
մէկ գիր և կնքեալ ամանաթ էիր ընկալեալ ձեռամբ Բարսեղ վար-
դապետին ևս էՀաս, որոյ կողմանէ անհոգ լիցիս: Եւ վասն Մանու-
շակ կնոջն, որ զօրհնութեան թուղթ էիր ինդրեալ ի կողմանէ ԺԵ.
(15) զուուռն կտակի առն նորին Հանգուցեալ մահտեսի Մարտի-
րոսին, ահա գրեալ յղեցաք ի ձեռս քո, զոր Հասուցես ինքեան:

Իսկ և վասն սրբոյ Երուսաղէմի նուիրակ Յակոբ վարդապետին, որ ինդիր էիր արարեալ զի եթէ խարճլըղ պիտոյասցի տացես, առ այն գիտեա՛, զի նա յորժամ եկն ի Սուրբ Աթոռս և եպիսկոպոս ձեռնադրեցաւ, խարճլըղ ինդրեաց և մէք ետուք նմա ութ Հարիւր դուռուշ, այնու պայմանաւ, որ զայն ութ Հարիւր դուռուշն ի տեղդ երկու Հարիւր Հատ մնրուհին ոսկի շինէ և ծրարաւ կնքեալ Հասուցանէ առ քեզ ամանաթ, որ դու ևս յղեսցես առ մեզ: Ահա զայն, թէմէսուկն ի մէջ թղթոյս եղեալ յղեցաք ի ձեռս քոյ, զի եթէ ի տեղդ լինի և կամ յայլուր գնացեալ իմացումն տացես նմա վասն թէմէսուկին իւրոյ և զայն երկու Հարիւր մնրի հին ոսկին ինդրեսցես, և երբ Հասուցանէ քեզ, դու ևս զիւր թէմէսուկն Հասուցես նմա և ապա զայն ոսկոյ ամանաթն կնքով ընդ Հաւատարմի յղեսցես առ մեզ:

Այլ և գրեալ էիր, թէ ի տեղս պատուիրեմք Յակոբ վարդապետին, որ որքան նուիրակ է ի տեղդ, յորժամ կտակ և Հոգեբաժին պատահիցի ինքեան, թէ Սրբոյ Աթոռոյս անուամբ, և թէ սուրբ Երուսաղէմին, քեզ իմացումն տացէ: Նմանապէս և քեզ ևս, եթէ պատահի, դու ևս նմա իմացումն արասցես: Բայց մէք ի դառնալն Յակոբ վարդապետին մոռացաք ասել նմա, երբ թուղթ գրելոց իցեմք նմա, յայնժամ այնմ կողմանէ գրելոց եմք պատուէր: Եւ թէ նախանցեալ նուիրակն ձեր՝ Ներսէս վարդապետն, ի յունվարի ամսոջն վախճանեցաւ, յետ վախճանմանն, յորժամ բացաք զխուցն քոյդ և եղբօրն քոյ պարոն Իյաչիկին թէմէսուկն էլ, որ մէկ Հազար դուռուշ տալիք ոնիք նմա, այժմոյս այն դրամն մնասցէ առ ձեզ, յետոյ, զոր ինչ գրեսցուք, այնպէս արասջիք: Այլ և ընդ թղթոյս մէկ թուղթ յղեցաք Հասանիլ առ Գաղատիոյ նուիրակ Յովաննէս պետն, զոր շուտով Հասուցես նմա և մեզ գրեալ ծանուցես:

Գրեցաւ յամնոյս ԺԹ. (19):

^{1348*} **Ի Թօխաթ** - Թուղթ առ Գեատիկօղլի մաՀտեսի ՅովՀաննէսն և իւր մայր Հաճի Նանայն. ծանուցումն կողմանցս զորպիսութեանց և շնորհակալութիւն վասն նախանցեալ նուիրակ Բարսեղ պետին և վասն նոր նուիրակ Գրիգոր պետին յանձնարարութիւն: Եւ թէ Ներսէս վարդապետն, որ երբեմն նուիրակ էր տեղւոյդ, յայսմ ամի ի յունվարի քանիսն Հիւանդացեալ, մեռաւ և յետ մաՀոն բացեալ զխուցն՝ էլին Հաշուաթուղթք նորա և ի սիահին նշանակեալ գոն առ քեզ եղեալ քանի կտոր արծաթեղէնք, որում բանի Բարսեղ վարդապետն ևս վկայեաց: Ուրեմն այդ արծաթեղէնքն՝ առ Սուրբ Աթոռս պարտին Հասանելոց, բայց որովհետեւ կողմոնքս ի խառնակութեան կայ, մնասցէ մինչև ի յաշունն և յայնժամ զինչ գրեսցուք քեզ, այնպէս արասցես:

[Գրեցաւ] յամնոյս ԺԹ. (19):

1349* Թուղթ ի Թօխաթ առ Թօմաջան աղայն. ծանուցումն վասն կողմանցս զորպիսութեանց և շնորհակալութիւն վասն Բարսեղ վարդապետին արարեալ ընդունելութեանցն: Եւ վասն նոր նուիրակին յանձնարարութիւն և մխիթարութիւն վասն մահուն ամուսնոյն իւրոյ և թէ, որ վասն Հոգւոյ նորին զԾ. (30) ղուռուշ Հոգեբաժին էին տուեալ, ընկալաք շնորհակալութեամբ:

Ողջոյն որդւոյն իւրոյ՝ Պետրոս աղային:

1350* Թուղթ առ Անտօն աղայն. շնորհակալութիւն նոյնպէս վասն Բարսեղ վարդապետին և մխիթարութիւն վասն ամուսնոյ: Եւ թէ, որ ձեռամբ Բարսեղ պետին զԾ. (50) ղուռուշ Հոգեբաժին էիր տուեալ ի կողմանէ Հանգուցելոյն, բերեալ Հասոյց մեզ և մէք ընկալաք շնորհակալութեամբ, և վասն Գրիգոր պետին յանձնարարութիւն:

Ողջոյն որդւոյն իւրոյ՝ Յօհանն աղային:

1351* Թուղթ ի Թօխաթ առ իփակզատէ Յօհանն աղայն. շնորհակալութիւն վասն նախանցեալ նուիրակ Բարսեղ վարդապետին և վասն Ա. (1) յղեալ շալին և վասն նոր նուիրակ Գրիգոր վարդապետին յանձնարարութիւն:

516ա

1352* Թուղթ ի յԱկն առ Սարգիս և Պետրոս աղայն. շնորհակալութիւն վասն նախանցելոյն և վասն նոր նուիրակին յանձնարարութիւն:

Օրհնութեան եւ շնորհակալական նամակներ տիրացու Զաքարիային (Թօխաթ) «վասն ՃԽ. (140) ղուռուշ Հոգեբաժնի Հօրեղբօրն իւրոյ մահտեսի Պապիկին» (516ա, Ա./2), պարոն Յովհաննէսին (Ամասիա) «վասն մէկ զոյգ արծաթով և եաշմակերպ քարամբք մեծ աշտանակին յիշատակ տալոյն՝ վասն Հոգւոյ մահտեսի Յարութիւն աղային իւրոյ» (Ա./3), Փիլիպպոս ամիրային (Ակն) «յաղագս ոսկեզօծ արծաթեայ ճաճանչի միջոյ խաչին» (Ա./4), Մանուշակ կնոջը «վասն Հոգւոյ առն իւրոյ մահտեսի Մարտիրոսին ԺԵ. (15) ղուռուշ Հոգեբաժին» (Ա./5), Ս. Անանիա առաքելի վանքի տնտես Պառուկն «շնորհակալութիւն զմի Հատ ոսկեայ և մարգարտաշար գինտ ականջի տալոյն» (Ա./6), պարոն Պետրոսին (Թօխաթ) «վասն Ծ. (50) ղուռուշ Հոգեբաժնի մօրն իւրոյ» (Ա./7), Փիլիպպոս ամիրային (Մատեն) «վասն գործակատար նուիրակացն մերոյ և յանձնարարութիւն վասն նորոգ նուիրակ Գրիգոր վարդապետին և մխիթարութիւն վասն մահուան փեսային՝ մահտեսի Յովհաննէսին Սիփեասեան»²¹¹, միաժամանակ ողջոյն է յղում պարոն Մկրտչին, Ալիխարին, Մանուկին, Զաքարիային եւ պարոն Գասպարին (Ա./8):

1353* Ի Կարին - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն և պարոն Գասպարն, եթէ յառաջ քան զայս ի մարտի ԺԹ. (19)

²¹¹ Փիլիպպոս ամիրային (Մատեն)՝ գործակատար նվիրակների անչոքյամբ հղված շնորհակալագրի համառոտագրությունը տե՛ս ԴՉՊ, գիրք Դ., սյուն 668:

Թուղթ գրեցաք ի վերայ մահտեսի Սերօբին և պարոն Գասպարիդ, յորում էր բան ինչ յատկապէս առ մահտեսի Սերօբն գրեցեալ վասն գօտեաց գնոյն: Իսկ նմա և պարոն Գասպարիդ գրեցաք վասն Ներսէս վարդապետի ամանաթ Հակին, թէ բանայցէք զՀակն և սիաճի առնիցէք երեքդ ի միասին և եթէ պարոն Հայրապետն եկեալ չի՛նիցէր, երկուքդ բանայիք և սիաճի առնէիք:

Արդ, մնամք պատասխանոյն ձերոյ, թէ արդե՞՞ք երեքդ ի միասին և եթէ երկուքդ բացիք և սիաճի արարիք, որպէս և իցէ զսիաճին, եթէ դեռ չիցէք յղեալ, շուտով յղեսջի՛ք առ մեզ: Դարձեալ դեռ պարոն Հայրապետն աստ գողով, որ պարոն Գասպարդ գրեալ էիր, թէ ի յԱմթայ ամանաթ և թուղթ եկին Հասին ինձ, և զթուղթսն յղեսցի: Իմանաս, որ այն թուղթքն մեզ չեն Հասեալ և Հարցաքննութիւն առնես իցէ, թէ գտանիցին և առ մեզ Հասցեն: Իսկ զամանաթ դրամն, որպէս կնքով յղեալ են, այնպէս կնքով յղեսջի՛ք ի Բայազիտ առ տիրացու Գէորգն՝ անտի Հասանիլ առ մեզ: Յանձնարարութիւն վասն Թօխաթու նուիրակ Գրիգոր վարդապետին: Եւ թէ տեղոյդ նուիրակ Գրիգոր վարդապետն, որ կողմունսդ է, գրեսջի՛ք մեզ ի գիտել թէպէտ առ նա թուղթ էաք գրելոց, բայց զտեղին չգիտելով ոչ գրեցաք: Եւ մինչ թուղթս գրեաք՝ պարոն Գասպարիդ թուղթս ի յապ[րիլի] 11 գրեալ էՀասս ի նոյն ամսոյ 17, ընդ նմին յղեալք թուղթս Իզմիրու Ապրոյեան Մարգար աղայէն էր, որոյ պատասխանին գրելոյ ժամանակ չունէաք, յետոյ գրելոց եմք: Իսկ այն բան, որ ծանուցեալ էիր առ մահտեսի Նիկողայոս ամիրայն՝ բարուք ես արարեալ, ապա և զինչ պատասխանի ընկալնուս, ծանուցէ՛ս մեզ: Նաև զՊօլսոյ կողմանցն և նուիրակին, զոր ինչ Համբաւս լսիցէք, գրեսջի՛ք մեզ:

Ողջոյն մահտեսի Սերօբին: Եւ թէ ի յԱժտէրխանաւ Սուրբ Կարապետի ժողովարար Կարապետ վարդապետն թուղթ էր գրեալ մեզ և Յակոբ վարդապետին, բայց թուղթքն բաց էին և մեք զթղթոց որպիսութիւնն իմացեալ, աճա կնքեալ յղեցաք առ ձեզ, զոր Հասուսջի՛ք առ Յակոբ վարդապետն:

Գրեցաւ յամսոյս ԺԹ. (19):

1354* **Ի Ղարս** - Թուղթ ի Կարս առ Գէորգ աղայն. յիշումն ի մարտի ԺԹ. -ին (19) թուղթ գրելոյն մերոյ ընդ գանձանակի կոնդակի և գանձապետի թղթոյն, յորում թէ մինչև ցայժմ ոչ ընկալաք ի քէն զթուղթ, յորս իմանայաք զթղթոց առ քեզ Հասանիլն և ոչ Հասանիլն, վասն որոյ գրեմք քեզ, զի զայն թղթոց Հասանիլն ծանուցես մեզ: Եւ յանձնարարութիւն վասն Թօխաթու նուիրակ Գրիգոր վարդապետին:

1355* **Ի Ղօշափանք** - Թուղթ առ Ղօշափանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն, եթէ ի մար[տի] ԺԹ. -ին (19) թուղթ գրեցաք քեզ, զի մի ի Զատկին եղեալ գայցես, այլ ըստ սովորու-

Թեան քում գնացեալ ի քաղաքն կատարեսցես զգործ առաջնորդութեանդ և յետոյ գայցես: Եւ յանձնարարութիւն Գրիգոր պետին, եթէ ի վանքն իցես, Հաւատարիմ ուղևորօք յուղարկեսցես ի քաղաքն և անդ Գէորգ աղային գրեալ եմք, որ անտի /516բ/ ևս նա ուղևորեսցէ ի Կարին: Իսկ եթէ ի քաղաքն գտանիցես տակաւին ի Հարկէ Պօղոս պետն, Հոգատար լինելոց է: Եւ պատուէր Պօղոս վարդապետին, եթէ ի գալ Գրիգոր վարդապետին ի վանսդ ընդ Հաւատարմի յղեսցես ի քաղաքն:

Գրեցաւ յամնոյս ԺԹ. (19):

1356 1798 թ., 21 ապրիլի - Թուղթ ի Թիֆլիզ առ մելիք Դարչինն, ընդ Ալէքսան վարդապետին, որ զՍուրբ Յակոբայ աջն տանէր ի բժշկութիւն ժանտախտիցն:

Յորմէ ժամանեսցէ... Գիտութիւն լիցի ազնուականութեան քում: |68բ| Չի յամի թուականութեան մերոյ ՌՄԽԳ. (1795), յորում փոխեցեալ էր ի կենաց աստի գերազնիւ սիրելին մեր՝ իմաստնախոհ և բարեհամբաւ մելիք Աւետիք աղայն, որոյ Հոգին Տէր լուսաւորեսցէ, և ընդ նախնեաց բարեպաշտ իշխանացն դասակարգեսցէ, այն ինչ լսելի եղև մեզ՝ դառնացուցիչ բօթ մահուան նորա, ի Հետևեալ աւուրն ժանտաժուտ զօրապետն պարսից դժնդակ զօրօքն եկեալ բանակեցան յանդիման բերդին, և մեզ Հարկ եղև գնալ առ նոսա ի պահպանութիւն շինութեան սրբոյ Գահիս: Եւ յետ բազում աւուրք կալոյ մեր առ դժնիկն անհարին նեղսակրութեամբ, մինչ դարձաք ի Սուրբ Աթոռս, իսկ և իսկ գրել ետուք զթուղթ մի առ սիրելիդ ի մսիթարութիւն յաղագս վախճանի Հօր քոյ բարեպաշտի, և ի շնորհաւորութիւն քոյդ յաջորդաբար մելիքութեան, և զթուղթ մի առ միրիչքեարբաշի պարոն Յովսէփն և պարոն Արսէնիոսն:

Այլ մինչ առաքելոց էաք, գոյժ առման քաղաքիդ Հնչեաց յականջս մեր, և զկնի աւուրց ինչ ողորմելի Մարտիրոս վարդապետն ևս գոյթափեալ և գերեալ մերկ էՀաս այսր, և առ վշտակրութեանցն յեղակարծ մեռաւ իսկ: Որք եղէն անմոռանալի ցաւք սրտից մերոց և առիթ մշտնջենաւոր տխրութեան մեզ և ազգի մերոյ: Չի որք ի բազմութիւնս ամաց ժողովեցեալք էին ի մանկանց, կերակուր եղէն շանց գազանականաց. փա՛ ոք Աստուծոյ:

Եւ զի թշնամութիւն արձանացաւ ընդ մէջ Պարսից և Վրաց, և ճանապարհքն փակեցան, և ամենայն իրք մեր կասկածելի եղէն, վասն որոյ այն թուղթք մնացին մինչև ցայժմ առ մեզ: Իսկ որոց ցայսքան ժամանակ յուղարկիլն ոչ եղև ի դէպ, ապա զվաղագրեալն նոր առաքելն կարի ևս տարադէպ: Այլ այժմ մինչ քրիստոսասէր նորապերճ արքայն օրհնեալ երկրացդ վասն բժշկութեան ցաւոցն ճարակելոց ինդրեալ էր զսուրբ Գեղարդն, և մէք զայն չունելով առ պատրաստ, զՍրբոյն Յակոբայ սքանչելագործ

Հայրապետի զաջն առաքեցաք, ձեռամբ ժամօրհնող Ալեքսիանոս արքեպիսկոպոսին, Հանդերձ օրհնութեան և մխիթարութեան կոնդակաւ: Պատկան վարկաք զայս թուղթ ևս առ սիրելութիւն քո գրել ի սուղ յայսմ ժամն: Որով զայս ունիմ ասել, թէ մինչ ջերմեւանդ սիրով և կատարեալ Հաւատով ընկալջիք զսուրբ աջդ, շնորհաբաշխ և աներկմիտ յուսով պաղատանս մատուցանիցէք, ակն ունիմք, զի բարերար Փրկիչն մեր Քրիստոս, մաղթանօք Սրբոյն Յակոբայ բժշկեսցէ զՀարուածս երկրիդ, և զառողջութիւն պարգևեսցէ:

Զայլ ամենայն որպիսութիւնս Սրբոյ Աթոռոյս և զնեղութիւնս մեր ի Հաւատարիմ գրաբերէդ ունիք իմանալ: Ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԽԷ. (1798) թուոջս և յապրիլի ԻԱ. (21) ի Սուրբ Էջմիածին²¹²:

ՄՄ ձեռ. Հ⁶ 4538, էջ 68աբ

1357 1798 թ., 21 ապրիլի - Թուղթ առ նոր արքայն Վրաց Գիօրկի. մխիթարութիւն վանն մահուան Հօրն իւրոյ Հերակլ արքային և շնորհաւորութիւն իւրոյ տիրապետութեանն, և բան առայն, որ յաղագս Հիւանդութեանց երկրին զսուրբ Գեղարդն ինդրեալ էր, այլ զՍրբոյն Յակոբայ Հայրապետի աջն առաքեցաք՝ ձեռամբ Ալեքսիանոս եպիսկոպոսին:

Յորմէ ժամանեսցէ թուղթ քրիստոսածիր ողջունի և սիրոյ և մխիթարութեան, Հանդերձ Հոգեգրւարճ շնորհիւ սրբոյ Իջման տեղոյս նորին, ի վերայ գերազանցագունի սիրելոյդ իմոյ և Հոգւոյս ցանկալոյ, Տէրամբ Յիսուսիւ զօրացեալ և բարձրացեալ մեծաճոչակ և փառազարդ Գիօրկի նորապերճ արքայիդ օրհնեցելոյ ազգիդ Վրաց երկրացդ, և աստուածապաշ տան ձերում և նոյնապարգև զաւակացդ, Հաւատարիմ խորհրդակցացդ և ազնուական իշխանացդ, քաջազէն զօրապետացդ և զօրաց, և Համայնից ընդ ձեռամբ ձերով եղերոցն ի Տէր ինդալ:

[Շորճք]

Եւ ընդ շնորհազեղուն օրհնութեանս աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի մեծութեան ձերում: Զի ի բազմաղէտ ժամանակիս, յորում տապախառն խարշակօք փորձութեանց տապեալ և տագնապեալ ծարաւիմք զովացուցիչ Համբաւոց, փոխանակ այնմ իբրու

²¹² Թիֆլիսի մելիք Գարշինը ժամանակի ազդեցիկ այրերից էր: 1797 թ. ուսահայոց առաջնորդ Հովսեփ արք. Արղուբյանի նախաձեռնությամբ Թիֆլիսի Մողնու Ս. Աստվածածին եկեղեցում ժողով է գումարվում, որը դատապարտում է 1795 թ. սեպտեմբերի 13-ին պարսից աղա Մահմադ խանի հրոսակախմբերի կողմից Թիֆլիսին, տեղի ժողովրդին ու եկեղեցիներին հասցրած վնասները, միաժամանակ կոչ է արվում նոր կարգավորություն սահմանել և ըստ այդմ եկեղեցին պայծառացնել: Վեիոր վավերացնողներից մեկն էլ բարեհամբավ մելիք Ավետիք աղայի որդի մելիք Գարշինն է (Պ. Մուրադյան, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, էջ 204-207) (հմմտ. վավ. 1360):

բաժակ դառնութեան մատուցաւ դժբախտիցս ի ժամ ծարաւու: Քանզի էՀաս յանցելումն յականճս մեր գոյժ մահուան գերաբաղ-
ձելի սիրելոյն մերոյ և ինամածուին Սրբոյ Աթոռոյս՝ ամենապա-
տիւ ծերունազարդ Հօրքոյ մեծի արքային Հերակլայ, որ անտանելի
տրտմութիւն եղև սրտից մերոց և արար զմեզ ցաւալիս և սգաւորս:
Վասն զի թէպէտ ամենեցուն առ Հասարակ է մահն, սակայն ըստ
կարևորութեան անձինն և թախծութիւնն Հետևի: Եւ քանզի ամե-
նեցուն բարերար և պատուականագոյն էր նա՝ պանծալի պար-
ծանք քրիստոնէութեան ի կողմանքս, որոյ Համեմատն ոչ գտանի
յաշխարհի: Վասն որոյ թէև զամենայն աւուրս կենաց մերոց սգայ-
ցեմ, ոչ Համարիմք շատ:

Սակայն զի Աստուծոյ երկնաւորին է գործ կեցուցանելն և
Հանգուցանելն, զի՞նչ ունիմք առնել, այլ թէ փառս տալով նմա,
ասեմք՝ եղիցին կամք Տեառն օրհնեալ: Որ և լուսաւորեսցէ զՀոգի
Հանգուցեալ մեծանուն բարեպաշտ արքային, և դասեսցէ ընդ
Դաւթի և ընդ այլ երջանիկ թագաւորացն: Եւ զքեզ անդրանիկդ
նորա, Հանդերձ եղբարբքդ և ամենայն քոյայնովքդ, ողջ պահեսցէ
և մխիթարեսցէ: Փարատեսցէ զսուգ և զտրտմութիւնս ձեր, և
պարգևեսցէ զուրախութիւնս մեծագոյնս:

Իսկ որ մխիթարէն զսիրտս Աստուած ընդ տրտմութեանն և
զինդութիւն շնորհեաց մեզ աւետաւոր Համբաւով արժանաւոր
ժառանգիդ յաջորդելոյ զտեղի Հօրն քոյ երանելոյ, վասն որոյ
ուրախացեալ գոհացաք զԱստուծոյ: Բայց թէ ընդէր յամեցաւ
մխիթարական և շնորհաւորական թուղթս մեր, քաջ գիտէ վսեմու-
թիւն ձեր՝ և յառաջագոյն ի Հանդիպիլն աստ Միրզայ Աբրահա-
մին, ասացեալ էմք նմա՝ ազդ առնել յարգութեան ձերում, որ յայնմ
ժամանակի անկարելի էր մարդ յուղարկելն մեր ի սպաս ձեր, որ-
պէս թէ տեսանէք, թէ ահա երեք տարի է, որ զվարդապետ ոչ յղե-
ցաք ի յօրհնեալ երկրիդ՝ յացելութիւն ժողովրդեանն մերում:

Այժմ զայս միայն ասեմ, թէ ի յառաջընթաց ամենանն, որ էր
տարեգլուխն այլազգեաց, ի գնալն մեր յԵրևան, դժնդակ և կա-
տաղի դղեկապահն զի՞նչ անցոյց ընդ գործակալն մեր Դաւիթ
վարդապետն, բարբաջելով թէ խաբէութեամբ վարիք առ պետն
մեր, և խորհուրդն ձեր ընդ Վրաց է և այլն:

Արդ, եթէ յայսքան զգուշանալս մեր տակաւին այսչափ ղօ-
ղանջեն, ապա եթէ |2496| անզգուշաբար Համարձակ գրութիւնք և
մարդկան երթևեկութիւնք լինիցէին ընդ մէջ մեր և ձեր յայսպիսի
վտանգաւոր ժամանակս, զի՞նչ չարիս անհնարինս ածէին ի վերայ
մեր և սրբոյ Տանս: Այլ այժմ մինչ խանն մեր զերևելի մարդ յու-
ղարկէր ի սպաս ձեր, այնու և մեք վստահեցեալ զայս թուղթ գրե-
ցաք և ընդ Հոգևոր որդւոյ մերում ժամօրհնօղ Ալէքսիանոս ար-
քեպիսկոպոսին առաքեցաք, որով նախ մխիթարութիւն մատու-
ցանեմք քեզ ի կողմանէ երանելի Հօր քոյ Հոգելոյս արքային: Եւ
Հետևաբար շնորհաւորեմք զնորապերճ գաւաւորութիւն և տերու-

Թինն ձեր: Չոր Տեարն Տերանց Աստուածն ամենայնի ՀնորՀաւոր արասցէ, տալով մեծութեան քում զկեանս երկարս և խաղաղականս, և բարեճոխ երկրիդ զշինութիւն և զանդորրութիւն, և զսուր ձեր զօրացուցանելով ի թիկունս թշնամեաց, յուրախութիւն քրիստոնէից և ի պարծանս մեզ:

Իսկ զի յառաջագոյն զսուրբ Գեղարդն խնդրեցեր, և մեր ծանուցաք աստ ոչ լինիլն, այժմ՝ իբր ոչ Հաւատալով բանին մերում, առ մեր խանն էիր գրեալ գիտասցես, զի բանն մեր ճշմարիտ էր, եթէ աստ գտանիւր, մեր ոչ կարեմք զանց առնել զյարգութեամբդ և զմերայնովքդ: Այլ ի նկատելն մեր, եթէ զկնի ներքինսոյն բարձման ևս կողմննքս Հանգստութիւն ոչ ոնին և նշան Հանդարտելոյ ոչ երևի, զայնպիսի քանի մի իրս առաքեցաք յարևմտակողմն առ մերայինսն ի պաՀեստ: Նարդենիս, որ գրեալ էիր, Յուսուպ բէկն ընդ խանի մարդոյն եկին աստ և խօսեցաք, զի յիրաւի եթէ այժմոյս խնդրէաք ևս, երևելիքն մերազնէից ոչ դարձուցանէին, թէ դու վասն խռովութեան երկրիդ յուղարկեցեր աստ, այժմ զի՛նչ խաղաղութիւն երևի, որ զայսոսիկ խնդրես, յայնժամ լինիւր մեզ արՀամարՀանք մեծ:

Ապա խորՀրդակեցեցաք ընդ Յուսուպ բէկին, որ զՍրբոյ Յակոբայ սքանչելագործ Հայրապետի աջն յղեմք: Այս Սուրբ Յակոբ ազգակից և Համապատիւ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, պայծառանայր ի ժամանակին Կոստանդիանոսի և Տրդատայ թագաւորացն, և բազում սքանչելիք սորա պատմեն ի գրեանս մեր, և բազում անգամ զայս սուրբ աջն առաքեալ եմք յերևան և յայլ ևայլ տեղիս, և Աստուծով բժշկութիւն է եղեալ ցաւոց, որպէս երևանցիք և մէլիք Հաքարօն և ի տեղդ ևս բազումք գիտեն:

Վասն որոյ զայն սուրբ աջն առաքեցաք այժմ ի ձեռն Ալէքսիանոս արքեպիսկոպոսին: Չոր մինչ սիրով և յարգութեամբ և սերտ Հաւատով ընկալիք, յուսամ ի Քրիստոս Փրկիչն մեր, միջնորդութեամբ նորին փարատել զՀիւանդութիւնս և զցաւս երկրիդ: Եւ խնդրեմ շուտով դարձուցանել առ մեզ՝ Հանդերձ գրովդ:

Եւ զայլ ամենայն որպիսութիւնս մեր ի Հաւատարմէդ մերմէ՝ Ալէքսիանոս արքեպիսկոպոսէդ իմացեալ, ողջ լեր փառազուարճ կենօք ի Հրճուանս մեր:

Գրեցաւ յամի Տեառն 1798, և յապրիլի 21, ի Սուրբ Աթոռս Էջմիածին²¹³:

ՄՄ ձեռ. Հ⁶ 2922, էջ 2495-96

²¹³ Վրաց երկրին պատուհասած Պարսից վայրագություններից, նրանց պատնառած աղետից ազատվելու ու ժամտախտից բժշկվելու համար Գեորգի արքան Դուկաս կաթողիկոսին էր դիմել սուրբ Գեղարդը Վրաստան ուղարկելու և նրա միջոցով ժողովրդին բժշկելու խնդրանքով: Կաթողիկոսը հայտնում է, որ անվտանգությունից ելնելով հնար չի եղել սուրբ Գեղարդն ուղարկելու, որի փոխարեն ժամօրհնող Ալեքսիանոս արքեպիսկոպոսի հետ Թիֆլիս է ուղարկել Ս. Հակոբ հայրապետի աջը՝ օրհնության և մխիթարության կոնդակով: Նշենք, որ Ս. էջ-

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 516ա

Թուղթք գրեալք ի Թիֆլիզ

1358* **Ի Թիֆլիզ** - Թուղթ առ նոց[ա] արքայն վրաց Գեօրկի, մխիթարութիւն վասն Հօրն իւրոյ՝ Հերակլ արքային և շնորհաւորութիւն իւրոյ տիրապետութեանն և բան առ այն, որ յաղագս Հիւանդութեանց երկրին զսուրբ Գեղարդն խնդրեալ էր, այլ զՍրբոյն Յակոբայ Հայրապետի աջն առաքեցաք ձեռամբ Ալէքսիանոս եպիսկոպոսին:

Տէ ս ի մեծ տետ[եր] յերե[ս] 2495:

1359* Կոնդակ օրհնութեան և մխիթարութեան, խրատու և յուսադրութեան ի վերայ Թիֆլիզու և շրջակայիցն՝ յաղագս զանազան փորձութեանցն ի վերայ նոցա Հասելոց, որոց յետինն էր ժանտախտն, ուստի ի խնդրոյ նոր արքային առաքեցաւ ի բժշկութիւն ախտիցն զՍրբոյն Յակոբայ Հայրապետի աջն ձեռամբ Ալէքսանոս վարդապետին:

1360* Թուղթ ի Թիֆլիզ առ մէլիք Դարչինն՝ ընդ Ալէքսան վարդապետին, որ զՍուրբ Յակոբայ Աջն տանէր անդ ի բժշկութիւն ժանտախտիցն:

1361* **Ի Թիֆլիզ** - Թուղթ ի Թիֆլիզ՝ վասն վէրիլութեան տէր Յովաննէսին, որ զինի տէր Ղազարի գնալոյն ի կողմնս Հիւսիսոյ, ի տեղի նորա գործակալ կարգեցաւ Սրբոյ Աթոռոյս:

1362* Թուղթ մի ևս առ սա, թէ ահա ըստ խնդրոյ քոյ վէրիլութեան կոնդակն գրեալ յղեցաք: Եւ պատուէր՝ արի և ժիր լինիլ ի գործն իւր և Հաւատարմութեամբ ծառայել Սրբոյ Աթոռոյս:

Գրեցան Թուղթքս և յղեցան ընդ Ալէքսան վարդապետին, յամնոյս ԻԲ. (22):

Թուղթք ի Թարսէզ ի Խոյ և ի Բայազիտ

1363* **Ի Թարսէզ** - Թուղթ ի Թարսէզ առ տէր Յովսէփի եղբարն և որդիան, ի պատասխանի թղթոյն նոցա ի փետ[րուարի] Ի. (20) գրեցելոյ, ընդ որում և յղեալ էին զՀաշուագիրն Յակոբ տղայի գնոյն և ծախուցն, և Սրբոյ Աթոռոյս այգւոյ արդեանցն, և իւրեանց առ այսր Հասուցեալ իրացն, և մեր առ ինքեան յղեալ դրամոցն, և իւրեանց տակաւին առնելեացն: Եւ թէ ի փետ[րուար]

միածնի միաբանական գերեզմանոցի տապանագրերից մեկում կարդում ենք նաև Մայր Աթոռի «մեծ ժամօրհնող» Ալեխանոս արխեպիսկոպոսի անունը, որը հիշվում է իբրև ննջեցյալ «այր շնորհալի» Գրիգոր վարդապետ Պոլսեցու հոգևոր հայր: Տապանագիրը ստույգ բովական ունի՝ 1815 թ., ապրիլի 15, Ավագ հինգշաբթի (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 211-212, արձ. 427):

Վավերագրի ամբողջական հրատարակությունը տես նաև ԴՀՊ, գիրք Դ., սյուն 669-670 (հմմտ. վավ. 1358):

րի] **ԻԵ**. (25) գրեալ թուղթն ձեր ևս էՀաս ի յապր[իլի] **ԻԷ**. (27) և գոր ինչ բանք էին իմացար:

ՏԷ ս ի փոքր տետե[ր]յեր[ես] **ՆԻ**. (420):

^{1364*} **Ի Խոյ** - թուղթ ի Խոյ առ Յակոբ աղայն. յիշատակութիւն քան զայս յառաջ մխիթարական թղթոյն մերոյ գրեցելոյ ի մարտի] **Է**. (7) յաղագս մահուան եղբօրն իւրոյ Իսաճան աղային: Եւ թէ, որ ընդ Սրբոյն Բարդուղիմէոսի առաքելոյ վանիցն առաջնորդ Խաչատուր վարդապետին թուղթ էիր գրեալ ի մարտի] **ԺՁ**. (16), էՀաս առ մեզ ի նոյն ամսոյ **ԻԱ**. (21), որում գիտացար զկսկիծ սրտիդ և զտխրութիւնդ վասն վախճանման եղբօրն քոյ: Կրկին ևս մխիթարութիւն առ այն: Գրեալ էիր ևս վասն թղթոյն մերոյ գրեցելոյ և վասն գինւոյն, զոր յղեալ էաք մեծին աղագաւ և խոստացեալ էիր, թէ սարդարն ի դուրս է, յորժամ գայ մատուցանելոց եմք և յետոյ ծանուցեալ էիր զգալն նորա ի քաղաքդ: Համարիմք, թէ յետ գալոյն զգինին մատուցեալ իցես և զորպէսն գրեցես մեզ: Եւ վասն Խաչատուր վարդապետին, զոր գրեալ էիր, աՀաս սիրով ընկալեալ՝ ձեռնադրեցար եպիսկոպոս և ուղևորեցար կոնդակաւ և նիշայիւ: Իսկ արդ, զոր յառաջին մխիթարական թղթոյն մերում գրեալ եմք քեզ, թէ սարդարին ընծայ էաք յղելոց ընդ շահի ընծային և արգելեալ եղաք յետոյ յղելոց եմք, յորժամ եկն Խաչատուր վարդապետն պատրաստեցար զնուիրակն՝ Հանդերձ ընծայիւքն, բայց երկիրս վրդովեալ, ոչ նուիրակն յուղարկեալ եղև և ոչ ընծայքն և աստ երկար գրելն ևս ոչ լինի: Այլ զամենայն անցքն պատմելոց էքեզ Խաչատուր վարդապետն:

Ողջոյն եղբօրն որդւոյն պարոն Կարապետին: Եւ թէ թուղթ մի առ Թարվիզու տէր Յովսէփի եղբարն և որդիսն գրեցար և փոքր ծրարաւ դրամ ամանաթ յանձնեցար Խաչատուր վարդապետին Հասուցանել ի ձեռս քո, զորս շուտով յուղարկեսցես առ նոսա ի Թարվէզ, որով վերջացի Հեսայն մեր:

Գրեցաւ յամսոյս **ԻԹ**. (19)²¹⁴:

Համառօտ գրութիւն Թարվիզում բնակուող պարոն Դաւիթին, պարոն Մարտիրոսին եւ տիրացու Աւետիքին (516բ, Ա./8):

517ա

^{1365*} **Ի Բայազիտ** - թուղթ առ Բայազիտու նուիրակ Յովաննէս վարդապետն. մխիթարութիւն վասն մահուան Ներսէս վարդապետին, Հօրն և եղբօրն: Եւ թէ, որ ի վերայ Տիատինու բեկին թուղթ էիր ինդրեալ, աՀաս գրել ետուք զբեկի թուղթն և առ Իւչքիլիսու վանիցն առաջնորդ Թօմաս վարդապետն: Եւ առ տէր Գրիգոր քահանայն ևս յանձնարարական թուղթ գրեցար և ընդ

²¹⁴ Վանեցի Հակոբ աղային (Խոյ)՝ նոր նվիրակի և Ս. Բարդուղիմէոս վանքի առաջնորդ Խաչատուր վարդապետի մասին հղված նամակի համառոտագրութիւնը տես ԳՀՊ, գիրք Դ., սյուն 660:

Թղթոյս յղեցաք ի ձեռս քո, զոր ի յընկալնուլն քո տացես նոցա: Այլև, որ զԳրիգոր դպիրն ի սպասաւորութիւն էիր վասն քոյ խնդրեալ, մէք ևս Հաճեցեալ արձակեցաք, ուրեմն ի Հասանիլն սիրով ընդունիցիս:

1366* **Ի Իւչքիլիսէ** - Թուղթ առ Իւչքիլիսէի վանիցն առաջնորդ Թովմաս վարդապետն. յանձնարարութիւն վասն նուիրակ Յովաննէս վարդապետին, զի ձեռնտու լիցի գործոյն:

1367* **Թուղթ առ տէր Գրիգոր աւագ քահանայն.** նոյնպէս յանձնարարութիւն վասն նուիրակին: Եւ թէ մինչ ի Սուրբ Ծննդեանն ի Սուրբ Աթոռս էիք, դու և այլ ոմանք զյատուկ-յատուկ տուրս խոստացայք Սրբոյ Աթոռոյս, այսինքն՝ զմատաղացու և զայլ նուէրս, զորոց և սիաւին ետուք մեզ: Այժմոյս այն սիաւոյն երեսն գրեալ և ընդ թղթոյս եղեալ յղեցաք առ քեզ, զի ըստ այնմ ժողովեսցես զայդ նուէրսդ և շուտով յղեսցես ի Սուրբ Աթոռս:

[Գրեցաւ] յամնոյս ԻԹ. (19): 1798 թ., մայիս: Թուղթ ի Ղարս:

1368* **Ի Ղարս** - Թուղթ ի Ղարս առ Գեորգ աղայն. յիշումն վասն գալստեան Յովաննէս վարդապետին ի Սուրբ Աթոռս և վասն նուիրակական Հաշուին, թէ ի քոյդ ձեռագիր դաւթարէն իմացաք, որ առաւել քոյդ բանինն է արդինացեալ: Եւ զինքն ահա խիլայիւ պատուեալ սիրով դարձուցաք յետո:

[Գրեցաւ] յամնոյս Ա. (1):

1369* **Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան ի վերայ բոլոր ժողովրդեանն Ղարսայ՝** յաղագս առատապէս զարդինանն նուիրելոյն Սրբոյ Աթոռոյս՝ ձեռամբ առաջնորդ Յովաննէս վարդապետին:

1370* **Ի Մեղրի** - Թուղթ առ մեղրըցիսն, ի պատասխանի թղթոյն նոցա, որով խնդրեալ էին իւրեանց վանիցն առաջնորդ Յովաննէս վարդապետն դարձուցանել ի Սրբոյ Աթոռոյս առ ինքեանս, որ զվանսն իւրեանց կառավարեսցէ:

Գրեցաւ յամնոյս ԺԳ. (13):

1371* **Ի Հուշի** - Թուղթ ի Հուշի առ Իսրայել կաթողիկոսն. յիշումն քան զայս յառաջ գրեալ թղթոյն մերոյ ընդ երկու Հետեակ մարդկանց և թէ յայնժամ, որ վասն քոյ զՀանդերձս էիր խնդրեալ ի մէնջ, բայց թղթաբերքն Հետեակ գոլով, ընդ նոսա ոչ եղև յղէլն: Իսկ այժմոյս տեղոյս իշխօղն մարդ յուղարկէր յայդր, վասն որոյ զայն խնդրեցեալ իրան քո ամանաթ շինեալ և կնքեալ: Առաքեցաք ի ձեռս իւզպաշոյն Հասուցանել առ քեզ, որք են Ա. (1) խառայ փիլոն, Գ. (3) վեղարացու, Ա. (1) շալի Ֆարաճայ, Ա. (1) կեռմէսիտ կապայ, Ա. (1) շամի արխալուդ, Ա. (1) գօտի, Դ. (4) թօսի վանայ շալ, Ա. (1)

Հնդու կտաւ, Ա. (1) ջուխտ մախմուր Հողաթափ, Ա. (1) ջուխտ մաշիք:

Գրեցաւ յամնոյս ԺԳ. (13):

¹³⁷² **Ի Հնդիկս** - Թուղթ ի Հնդիկս առ նուիրական մեր Յակոբ վարդապետն. յիշատակութիւն անցիցն երկրիս և կրիցն մերոց, և Համառօտ պատասխանատրութիւնք բանից թղթոցն նորա ի Բասրայու և ի Բումբայու գրեցելոց:

Յորմէ Հայրական սիրով առատագունիւ և լիալիր օրհնութեամբ, և խաղաղաւէտ ողջունին Քրիստոսեան, և սրբոյ Իջման տեղոյս նորին մեծագօր և պաշպանողական շնորհիւ գիտասօջիւր սիրելի և Հոգևոր որդիդ մեր, Հարազատ և աշխատակիր զաւակ Սրբոյ Աթոռոյս՝ Յակոբոս աստուածիմաստ վարդապետ: Քանզի յամի Տեառն 1796 և ի սեպտեմբերի 22 գրեալ մեր զպատասխանի երից թղթոցն քոց ի Բաղդատու գրեցելոց, և Հանդերձ ինդրեցելովքն քո, կոնդակօք և այլ քանի օրհնութեան թղթովք առաքեալ ի Բաղդատ: Յետ այնորիկ մինչ Ղուկաս աղայն Ալէքսանեան ինդիր էր գրեալ մեզ յաղագս չԱւետիս երիցուն արձակման, առ այն ևս յամի Տեառն 1797 և յապրիլի 25 զՀամառօտ Թուղթ մի գրեցաք առ քեզ, նշանակելով և զորպիսութիւնս ինչ, այսինքն զդարձս Հիւսիսայնոց և զզօրանալ ներքինի բռնաւորին, և ինդրէն զխանն Երևանու և այլն:

Եւ զնոյն թղթոյ երկրորդ օրինակն ևս ի Հետևեալ ամեանն յունիսի 6 առաքեցաք, յաւելլով ի նմա կրկին յառաջ շարժիլն ներքինոյն յայս կոյս, և զդժնդակ եղբօր նորին դարձեալ վերստին գալն յայս երկիր, և զմեր ի յԵրևան առ նա լինիլն և այլն:

Ի նոյն յաւելուած բանից գրեցաք ևս զԺ. (10) լիտր բիբար շուտով յուղարկել ի կարևոր պէտս ծախուց Տանս: Ապա յայնմէտէ ոչ ևս յաջողեցաւ մեզ գրել ինչ առ սիրելի որդիդ, ի պատճառս Հետզէտէ յաջորդելոց նեղութեանց և ցաւոց մինչև ցայժմ (Թէև ընկալաք զթուղթմն քո զգրեալն ի Բասրայու և ի Բումբայու): Վասն զի ի յիշեալ ամեանն մայիսի մինչ կայաք առ սարդարն յԵրևան, ի պատճառս ընծային, զոր մեք չափաւորապէս տալ կամեաք, և նա անդրագոյնս պահանջէր, մնացաք մինչև ի Ա. (38) աւուրս, ապա զմասն մի ետուք, և զայլն խոստացեալ յետ ժամանակի, դարձաք ի Սուրբ Աթոռս ի քանիսն յունիսի:

Յայնմ միջոցի Իբրահիմ խանն, լսելով զգալոյ շահին, փախուցեալ ի Շուշոյ, և շահն լուեալ զայն, ընտիր Հեծելովք Հապճեպ Հասեալ և մտեալ ի Շուշի, այլ չև ևս ժայթաքեալ զթոյնս իւր ի բնակիչն, սպանեցեալ էր ի ծառայից իւրոց, որոյ լուրն յետ քանի աւուրց դարձին մեր յԵրևանու ժամանեաց յերկիրս, և սարտարն, որ դողացներ զամենեսին յաճ և յերկիւղ ըմբռնեցեալ, եմուտ ի բերդն, և անդ ևս զանհամութիւնս առնելով, արհամարհեալ յերկ-

րականացա, ընդ բերդապահացն ի միասին ելեալ կորեան: Եւ որ գնայր գտանել զթագաւորութիւն, զրկեցաւ յաչացն, զի նոր շահն Բաբախան ընդունեցեալ ի թէհրանցւոց, բրեալ էր զաչս ազաւ ամբոջտին:

Բայց յետ այսր ամենայնի ևս ոչ եգիտ երկրիս զՀանդարտութիւն: Քանզի յելանէն աստի սարտարին, մինչ երկրացիք գրաւեալ զբերդն ակն ունեին Մահմատ խանին, Հասան խանն, որդի Մակուայ սուլտանին, Նախչուանու զօրօք և տեղոյս ապստամբելովքն զօրացեալ տիրեաց Երևանու և ի բերդն իսկ մտեալ նստաւ, որ և ընդ մեզ իբր բարւոք վարիւր:

Այլ մինչ Համբաւ հնչեաց արձակման Մահմատ խանին ի նոր շահէն և գալոյ առ այսր, Հասան խանն խոյս ետ ի Մակու: Բայց և Մահմատ խանն արգելաւ ի թարվէզ ի Ջաֆարղուլի խանէն, և երկիրս անիշխան մնացեալ անկան զմիմեամբք (թէպէտ և ի շահէն ոմն քանի Հարիւրովք եկեալ եմուտ ի բերդն պահապան): Ի նմին շիոթովթեան և թամիր գեղջ մուղանցիքն Համարձակութիւն գտեալ յինքեան գրաւեցին զԳետառ կոչեցեալ անդաստանն՝ սուտ իմն դապալայիւ, ոյր սակս մինչ թղթովք շէխիւլամին և այլոց առաքեցաք զՅակոբ և զՅովաննէս վարդապետսն ի յՕշական՝ խօսիլ ընդ նոսա: Նենգաւորքն այնք ի ցերեկին պատուով խօսեցեալ և մեծարեալ զնոսա, բայց ի վաղուց զոխս ունելով ընդ Յակոբ վարդապետին ի գիշերին |2498| գաղտագողի յարուցեալ ի վերայ կողոպտեալ էին և վիրաւորել զնա, որ և զկնի միջոցի իրիք վախճանեցաւ, որում Տէր ողորմեցի:

Ապա ի գալն Մահմատ խանին յԵրևան, և ի գնալն մեր ի տեսութիւն, վէճ եղեալ դատաստան ինդրեցաք, և ի յուրաստ լինին նենգաւորացն ամնօրեայ ժամանակաւ Հագիւ ստուգեցաք ի վերայ բարբարոսացն, և զկողոպտան հանել ետուք: Ջարինն խանն վճարեաց խիլայիւք և միջնորդութեամբ, բայց զժառանգութիւնն սրբոյ Աթոռոյս Հաստատուն հիւճէթիւ առ Սուրբ Աթոռս դարձուցաք: Եւ այնպէս դարձաք ի Սուրբ Աթոռս ի դէկտեմբերի քանին:

Յայնմ միջոցի ևս զանազան հիւանդութիւնք ճարակեալ յերկիրս և ի Սուրբ Աթոռս, բազումք վախճանեցան, ընդ որս և քանի եպիսկոպոսք, զորս յանուանէ յայլոց թղթոց ունիս իմանալ, զորոց զհոգիսն Տէր լուսաւորեցէ և զսիրելի որդիդ ողջ պահեցէ: Ի մերձաւորաց մերոց ևս ոմանք Հասին ի դուռն մահու, այլ ողորմութեամբ Տեառն դարձան ի կեանս²¹⁵:

²¹⁵ Հնդկաստանի նվիրակ Հակոբ վարդապետին հասցեագրված 1798 թ. մայիսի 14-ի նամակում Դուկաս Կարնեցին տեղեկություններ է հաղորդում վերջին շրջանում էջմիածնում տարածված համաճարակի մասին, որին զոհ են դարձել նաև բազմաթիվ հոգևորականներ: Մանուել Կյումուշխանեցու «Յաղագս մահտարածամի, որ է յերկիրն Թիֆլիզոյ և յէջմիածին և ի գիւղս Վաղարշապատ» աշխատության էջերում մանրամասն տեղեկություններ կան ժամանակի շարիք դարձած այդ հիվանդության մասին (ՄՄ արխիվային բաժին, Այ. Երիցյանի

Եւ այլ անցք նեղութեանց և զբաղմունք շատք, զո՞ր մին կարելի է պարունակել ի թղթիս: Արդ, յանցեալ տարւոյ յունիսէս ցոյն մայիս այսպէս ծանր Հոգօք և տագնապօք անցուցեալ զկէանս, չեղաք երբէք ձեռնհաս ի գրել առ քեզ զթուղթ ինչ, թէ և անմոռաց ոռնիմք զորդիդ մեր սիրեցեալ: Իսկ այժմ ի յոգնաՀոյ խուժանաց զժամ գողացեալ փոյթ կալաք զայս թուղթ գրել և ծանուցանել զմէնջ՝ առ ի անտարակոյս լինիլ քեզ:

Եւ արդ, ի Բասրայու յամի Տեառն 1796 և յունիսի 28 երկարպէս գրեալ թուղթն քո էՀաս առ մեզ յամի Տեառն 1797 և ի յուլիսի 10: Եւ ի Բումբայու առաջին թուղթդ, զոր գրեալ էիր ի 1796 և ի յուլիսի ելն, առ մեզ էՀաս ի 1797 և յօգոստոսի 7, յԵրևան քաղաք:

Իսկ երկրորդ թուղթդ ի Բումբայու, Հանդերձ կցորդին, զորս գրեալ էիր ի 1796 ի դեկտեմբերի 15, առ մեզ ժամանեաց ի 1798 և ի փետրվարի 15: Եւ զոր ինչ ծանուցեալ էիր յիւրաքանչիւրումս, իմացաք: Բայց բնաւիցն չունելով ժամ պատասխանելոյ, Հարկաւորագունիցն արասցուք զպատասխանիս:

Արդ, ի Բասրայու գրեալ թղթդ, որ յետ ազդ առնելոյդ զմեր ի մարտի 15 գրեալ թղթոյ Հասանիլն առ քեզ, ծանուցեալ զողջոյնն մեր տալդ պարոն Գէորգին Տէր-Դավթեան, և յետոյ յայլում վայրի նշանակեալ էիր, թէ վասն սևազգեստ կրօնաւորին փօլիցային՝ առ նոյն պարոն Գէորգն միայն թուղթ գրելն բաւական է և այլն: Գիտասցես, որ մէք ևս այնպէս եմք արարեալ և ոչ այլապէս:

Եւ զոր գրեալ էիր զժամանելդ խաղաղութեամբ ի Բասրայ և սիրով ընկալեալ լինիլդ ի յօրհնեալ ժողովրդոցն, և զգործդ վճարելն, ուրախացաք, Տէր օրհնեսցէ զքեզ և զնոսա: Իսկ յաղագս Աստուածատուր վարդապետի թէրութեանցն չունիմք երկարել, զի անտի յուղևորիլն ի Բաղդատ առ ճանապարհան Հիւանդացեալ է և ի ժամանելն ի քաղաքն վախճանեցեալ է, որում Տէր ողորմեսցի: Եւ այլ որպիսութիւնն, ի Հարկէ, ի Բաղդատու յայդր Հռչակեալ լինի:

անձնական արխիվ, քրթ. 156, վավ. 142): Հայտնի է, որ հիվանդությունը Ս. Էջմիածնում տարածվել է հատկապես 1797 թ. գարնանը, որի հետևանքով մահացել են Ներսես, Դունկիանոս, Գրիգոր Եպիսկոպոսները, Գրիգոր վարդապետը և ուրիշներ (ԳՀՊ, նոր շարք, գիրք Ա., հ. Ա., էջ 34, տե՛ս նաև՝ Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800 թթ.), Երևան, 1958, էջ 188): Նշվածներից Դունկիանոս Եպիսկոպոսը Դուկաս կաթողիկոսի շնորհաշատ նոտար, գրիչ Դունկիանոս Աշտարակեցին է, որը թաղված է Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում. այս մասին վերը հիշատակել ենք (տե՛ս վավ. 272-273): Առիթ էնք ունեցել առանձնակի անդրադառնալու այս հոգևոր գործչի մատենագրական ժառանգությանը: Նրա՝ 1767-1788 թթ. գրչագրած ձեռագրերից շուրջ տասը պահվում են Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուում: Գործել է հիմնականում Ս. Էջմիածնում, նաև՝ Երուսաղեմում և Կ. Պոլսում (Ա. Հարությունյան, Գրիչ Դունկիանոս Աշտարակեցու տապանագիրը և մատենագրական վաստակը, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2016, Հիմ 2 (54), էջ 105-119):

Չուղայու քաճանայացուացն աղագաւ ևս, զոր ինչ գրեալ էիր և յաղագս սրբալոյս մեռոնին և կոնդակին, այսպէս իմա, զի յետ գնալոյն քո աստի, ջուղայեցիք գրեալ էին, թէ մեր քաճանայացուք չունինք կարողութիւն ի Բասրայ գնալոյ, և մէք յայնժամ գրեցաք նոցա, է երբ ի Յակոբ վարդապետէն գիր առնուցումք, այնժամ Հոգս իմն արասցուք ձեզ: Ապա մինչ գրեալ էիր, թէ զերիս միայն ձեռնադրեցի և ի նոցանէ ևս երկուքն են գնալոց ի Չուղայ, առ այն փոյթ կալեալ մեր ի սոյն թուոջ փետրվարին, մինչ զընծայս յղեցաք նոր շաճին, ձեռամբ Յովաննէս վարդապետին, զՅովակիմ եպիսկոպոսն Տաթևու, որ դարձեալ էր ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս, պատրաստեցաք կոնդակաւ և սրբալոյս մեռոնաւ յուղարկել:

Յայսմիկ պատրաստութեան գոլով մեր, մաճսերական թուղթ էճաս մեզ ի ջուղայեցուց վարդապետացն և քաճանայից և քեթիսուտայից, որք ծանուցեալ էին զերկուց քաճանայիցն առ ինքեանս Հասանիչն և զսրբալոյս մեռոնն և զկոնդակս ևս, ձեռամբ Յարութիւն վարդապետին ընդունին, և շորհակալեալ էին: Բայց և գրեալ էին, թէ զմեզ և զսուրբ վանքս մի թողուր առանց վերակացուի, այլ Հովուեա զմեզ և այլն:

Չայսոսիկ մինչ Հարցաք թղթաբերին, որ էր զգաստ և |2499| իրագէտ անձն: Թէ եպիսկոպոսի կարօտութիւն ունին: Եւ վասն առաջնորդութեան ոմանք զՅարութիւն վարդապետն կամին և բազումք՝ զԳէորդ վարդապետն: Եւ առ այս գրեալ են ի Բասրայ և ի Հնդիկս: Չայսոսիկ այսպէս իմացեալ մեր յառնէն յայնմանէ ի գրելն մեր զպատասխանի մաճսարին, գրեցաք թէ Յովակիմ եպիսկոպոսդ, զոր առաքեցաք ի նուիրակ, լցուցանելոց է զպակասութիւն եկեղեցեաց ձերոց: Բայց եթէ վասն Հոգաբարձութեան սրբոյ վանիցդ է ինդիր ձեր, երկու ինչ գոյ ձեզ առնել, այսինքն Համակամութեամբ բոլոր թեմականացդ կամ զվարդապետ մի ի միաբանից սրբոյ վանացդ վէքիլ կարգել և գրել մեզ, զի և մէք Հաստատիցեմք, կամ եթէ օգտաւոր Համարիցիք, զպատշաճագոյնն ի յերևելի վարդապետացդ Հաւանական մաճսարօք ամենեցունց վիճակայնոցդ ի Հնդիկս և ի Բասրայ եղելոց Հայկազանցն և ձեր՝ առաքել առ մեզ ընդ նուիրակիդ, զի եպիսկոպոս ձեռնադրեալ դարձուցանիցեմք ի Հոգաբարձութիւն սրբոյ վանիցդ և յառաջնորդութիւն Ժողովրդոցդ: Եւ այս ի կամն ձեր է ապաստան՝ ընտրել զօգուտն սրբոյ Տանդ և ձեր:

Այսպէս արարեալ զպատասխանին մեր ի փետր. 14 առաքեցաք զՅովակիմ եպիսկոպոսն, ընդ Յովաննէս վարդապետին և թղթաբերն ևս խիլայեալ դարձուցաք: Եւ գրեցաք ի դուռն շաճին Ֆերման տալ Յովակիմ եպիսկոպոսին, զի Համարձակ կարիցէ շրջագայիլ ի Չուղայ և ի գաւառնն, և զգործն վճարել:

Ահա որպէս գրեցաք քեզ զառնելն մեր ընդ Ջուղայու և դու այսպէս ծանուցես Հարցանողաց:

Իմացաք և զպարոն Յովաննիսի Բեթղէհէմեան կարկատուն պատասխանելն քեզ առ այնպիսի ողջունագրութիւնն մեր: Եւ թող զայն այլ ուրիշ թղթով ևս գրեալ եմք, թէ այդ որպիսի՝ գործակալութիւն է, եթէ ոչ ես յօժար, մէք չունիմք զքեզ բռնադատել, բայց թէ վերս ունիս ի մերս կողմանէ, ծանուցես: Բայց նա տակաւին ևս թուղթ ոչ գրէ մեզ: Այլ զայլոց թուղթս պաշարանեալ և ի ձեռս մեր յղեալ, Գ. (3) մատնաչափ փուսուկայ է եղեալ ընդ նորա, թէ սրբազան տէր զայս թուղթքս առ այն և առ այն պարտին Հասանիլ, շնորհիւդ Հասուցես: Առ որ տարակուսեալ եմք, թէ զի՞նչ արասցուք:

Չարբոյ Երուսաղէմի նուիրակի անցան ևս գիտացաք: Չթամար խաթունի և զայլոց ոմանց մեռանիլն, որ ծանուցեալ էիր, տրտմեցաք և խղճալի կատարինէ խաթունն ևս ի Հասանիլն ի թաւրեզ, անդ վախճանեալ է: Նորա տրտմութիւնն աւելի քան զայլոցն. Տէր լուսաւորեսցէ զՀոգիս նոցա:

Եւ զոր գրեալ էիր, թէ ոմանց յիշատակք ընծայեցան Սրբոյ Աթոռոյս, որոց և զսիազին յղեալ էիր, և զօրհնութեան թուղթս ինդրեալ: Հաճեցաք գրել, բայց ցարդ ձեռնհաս չլինելով, այժմ եմք ձեռնարկեալ ի նոսա, որք ընդ սոյն թղթոյս ոչ ի գլուխ ելանէն, այլ Աստուծով յետ աւուրց ընդ երկրորդ օրինակի թղթոյս յղեսցուք: Եւ զտիրացու Ստեփաննոսն Տէր-Յովաննիսեանն ևս շահելոց եմք բանիւ: Այլ զԱբրահամ զերիցու զովմեմնէ, զոր գրեալ էիր, թէ երբեմն Հեստեալ էր, և յետոյ յուղղութիւն եկեալ, և ես ըստ ինդրոյ Բասրայու իշխանացն զփիլոնն ետու: Աստ քահանայութիւն առնէ և դիմելոց է ի Սուրբ Աթոռդ: Յորժամ գայցէ, ընկացիս և այլն: Չամանէ չեմք ինչ իմացեալ յովմեքէ բաց գրուածոյն քոյ և ցարդ դեռ ոչ եկն, եթէ գայցէ, ըստ ինդրոյ քոյ և ժողովրդեանն, ընդունելոց եմք, եթէ ուղիղ վնիցի:

Եւ չվետիս երիցուէն ևս, զոր ինչ գրեալ էիր, իմացաք. ինչ և իցէ, յառաջ քան զայս ի Բաղդատու գրեալ եմ՝ աստ Եփրեմ վարդապետին, թէ կորեաւ նա ի քաղաքէս յայլուր: Տացէ Տէր, զի ևս դարձցի անդ:

Անդ, այսքան առ բանսն թղթոյդ, որ ի Բասրայու: Եկեսցուք ի պատասխանիս թղթոցդ, որ ի Բուսբայու: Յառաջումն թղթոջդ, որ ծանուցեալ էիր զանվտանգ ժամանիլն ձեր ի Բուսբայի, ուրախացեալ գոհացաք զԱստուծոյ: Իմացաք ևս, որ նաւավարին չկամելով գնալ ի Բուշեռ, իսկ տեղեկանացն իմանալով զքէն, զՄկրտիչ աբեղայն յղեալ են առ քեզ, և դու զթուղթսն մեր և զընծայ գրեանսն յուղարկեալ ես ի նաւէն առ նոսա Հանդերձ քոյդ թղթով:

Իսկ յերկրորդ և յերկար թղթոջդ գրեալ էիր զմեր յամի 1796 մայիսի ելն գրեցեալ թղթոյն, Հանդերձ ամենայն մնացորդ |2500|

Թղթովքն շնորհակալութեանց և յանձնարարութեանց առ քեզ Հասանիլն: Ընդ որս միամտեցաք: Ապա յետ բանից ինչ ծանուցեալ էիր զԲուժբայու քանի տանց մերայնոց յերկուս կողմանս բաժանեալ գոլն, և զօրինաւոր եկեղեցի չունիլն, և զքո Հաշտեցուցանելն զնոսա, և զպարոն Յակոբայ Պետրոսեան զնոր եկեղեցի սկզբնաւորելն՝ յանուն Պետրոսի սրբազան առաքելոյն և զառ ի քն կատարիլն Հիմնարկութեանն և այլն: Որոյ և զարձանագրութեան օրինակն յղեալ իր առ Թադէոս վարդապետն, և եցոյց մեզ: Առ այն ևս յոյժ ուրախացաք: Շնորհաւոր արասցէ Տէր զմիաբան սիրով շինեալ զսորբ եկեղեցին և վարձատրեսցէ զշինեցուցօղն, և բարեաւ վայելել տացէ օրհնեալ ժողովրդեանն, և քեզ մեծապէս վարձաճատոյց լիցի յաղագս ի սէր միաբանեցուցանելոյդ զնոսա:

Իսկ զոր գրեալ էիր, թէ յորժամ զՍուրբաթու նուիրակութիւնն ևս աւարտիցեմք, յայնժամ ի միասին Հասուցանելոց եմ ի Բասրայ առ գործակալն, յետ քո առ նա Հասուցանելոյն: Նա զիմ րո է առ մեզ Հասուցանելոց, չգիտեմք, որ գիր անգամ գրել ոչ յօժարի: Բայց որպէս պատշաճ տեսցեն, այնպէս արասցես, և մեք սպասեմք Աստուծոյ յաջողելոյն:

Զպարոն Խաչիկի Գեորգեան և զպարոն Գալստանի մահտեսի Ծատուրեանն զվախճանան անձանց և կայից, որպէս գրեալ էիր, յայտնի եղև, եթէ խօսիլ ինչ իցէ վասն Գալստանի անյոյս արարողութեանն, ընդ Մարգար երիցուն խօսեսցիս:

Խղճալի Կատարինս տիկնոջ զմեռանիլն ի Թարվէզ յառաջ լուեալ և ցաւեցեալ, զնորին այր՝ աղայ Խօջամալի վախճանն ևս ի քոյ գրութենէ իմացեալ, ստացաք զտրտմովին ի վերայ տրտմութեան, այլ կամք Տեառն օրհնեալ եղիցի և մխիթարութիւն նոցա ի Հանդերձելումն յԱստուծոյ շնորհեսցի:

Յաղագս մեր առ Փերինազ խաթունն ի Ջուղայ գրեալ թղթոյն սակս նորին եղբօրորդի տէր Ալետիքի կնոջն փախուցելոյ ձեռամբ Յօհաննան Հօրն, որպէս Հոգս ես արարեալ և ի կնոջն զբանս առեալ ի Բասրայ, և առ Հայրն իւր յՕհաննանն ի Բուշեռ սաստ գրեալ դարձուցանել զդուստրն ի Բասրայու ի Ջուղայ, ըստ որում և ծանուցեալ էիր, Հաւանեցաք: Տէր զօրացուցէ զքեզ, կատարած իրին ևս գրեսցես:

Ջուղայու վանից միաբան Յարութիւն վարդապետի ի Բասրայ ընդ Աստուածատուր վարդապետին արարողութեանցն աղագաւ, զոր գրեալ է քեզ պարոն Յովաննէնն իբր թէ գրեալ իցէ մեզ, ամենևին ծիր չեմք տեսեալ, միայն թէ զԱստուածատուր վարդապետի ի Բաղդաստ մեռանիլն լուաք, յորմէ ծրարաւ ինչ թարմատար իբր Հասին ի Սուրբ Աթոռս, և իբր թէ կտակ իցէ արարեալ զգրամն ինչ, զոր չտեսաք դեռևս:

Եւ Յարութիւն վարդապետն ի Ջուղայ է, զայսքան ինչ գիտեմք: Կարնեցի տէր Սրապիոնին աղագաւ աղայ Ղուկասն խնդիր

էր արարեալ ի մէջ կոնդակ տալ ի վերայ կողմանցդ, բացասութիւն գրեցաք մեզմով, և այլ գիր չեմք առեալ ի նմանէ: Նա ևս այնպիսի ոք երևի:

Թիֆլիզեցի Տէր-Շմաւոնէնց պարոն Ստեփաննոսի փեսայ և վէրիլ պարոն Ստեփան Գուլուեանի ի Բուսթայի մեռանիլն, որ գրեալ էիր, յաղագս նորա ի միւսում ամին մեծ պաշարանաւ թուղթք Հասին, և մէք առ իւր աներ՝ յիշեալ պարոն Ստեփանն Հասուցաք: Եւ նա զնոր վէրիլամայ էր գրեալ և զաղայ Սարգիսն Տէր-Յովաննիսեան վէրիլ արարեալ, և մեզ աղերս էր գրեալ, զի զյանձնարարութեան թուղթ գրիցեմք առ աղայ Սարգիսն, զոր և գրեցաք: Ի Հասանիլդ ի Կալիւթայ, տեղեկանալոց ես:

Այլև զոր ծանուցեալ էիր, թէ արաբացիք ի Փայտակարանու գերեցելոցն զքանիս մանկունս առեալ ի պարսից տարեալ են ի Կալիւթայ վաճառել, և անդ մերայինքն Հրամանաւ քաղաքապետին թափեալ են ձեռաց մարդավաճառացն, և կան ի յօրհնեալ տան աղայ Մովսէսին աղայ Խաչիկեան, յոյժ միսիթարութիւն եղև մեզ: Աստուած օրհնեսցէ զազատիչն և փրկեսցէ յամենայն չարեաց: Մինչ դէպ լիցի մեզ թուղթ գրել առ Քրիստոսիւ զօրացեալ աղայ Մովսէսն, ընդ այն ևս շնորհակալութիւն եմք գրելոց:

Բայց յաղագս վնասուց նաւուց ոմանց տրտմութիւն եղև սրտից մերոց: Աստուած դարձ տացէ չարացն բռնացելոց և շնորհեսցէ զխաղաղութիւն ամենայն աշխարհի:

Գիտասցիր ևս Հարկաւորապէս, զի ի վեր անդր, որ զԿատարինէ խաթունէն ի Թարվէզ վախճանեալ գոլ գրեցաք, կարծեօք է այն, զի զնորին |2501| մինչ ի Բաղդատ ժամանելն եմք ստուգեալ, իսկ յայսկոյս գալն Հաւաստապէս չգիտեմք: Այլ զի ի քանի ամիսս բան մի հնչեցաւ քանիցս, թէ ի Հնդստանու երևելի կին ոմն եկեալ Հասեալ է ի Թարվէզ և անդ վախճանեալ յայնմանէ Համբաւոյ կարծիք եղև ծանօթիցն և մեզ, թէ նա իցէ, վասն որոյ և գրեցաք, բայց զի գիր չգոյ ի Բաղդատու վասն նորա, եթէ յայսկոյս դիմեաց կամ ընդ ո՞ր գնաց, անդէպ էր մեր այնպէս գրելն:

Արդ, եթէ յիրաւի ի Թարվէզ վախճանօղն նա իցէ, իՀարկէ, անտի գրեալ իցեն ի Բաղդատ, ուստի և Հոչակն Հասեալ լինի յայդր: Իսկ թէ յայդ կողմունսդ ձայն չկայ զնմանէ մեռանելոյ, ուրեմն մեր կարծիքն սխալ է, դուք ևս ամենևին ումէք չասիցէք զայս բօթ: Աստուած տացէ, որ կենդանի լինիցի բարեպաշտուհի կին այն, և մեր տրտմութիւնն և գրելն ընդ վայր անցանիցէ:

Իսկ ներկայական որպիսութեանց և Համբաւոց կողմանցս և երկրիս զայսքան ինչ իմա. յայամ ամի ծերունի արքայն Վրաց Հէրակ վախճանեցաւ ի փետրվարին կամ փոքր մի յառաջ և յետոյ ափսոս պակասելոյ այնպիսի Հոչակաւոր արքայի, զորպիսի ոք Հազիւ գտանէ Տոնն Վրաց: Բայց կամք Տեառն օրհնեալ, որ և Հանգուցէ, զնա յարքայութեանն երկնից:

Իսկ Հանգուցեալն ի կենդանութեան իւրում կտակաւ ականդեալ է իւրոցն և ամենայն իշխանաւորացն՝ զԳիօրկի աւագ որդին ճանաչել յաջորդ իւր, և այժմ իսկ նա երևի յաջորդեալ, որում և յանցեալն շնորհաւորութեան թուղթ և ընծայ առաքեցաք: Բայց ընդ մէջ մօրն, եղբարցն և իւրն դեռ կատարեալ միաբանութիւն չկայ և բնակիչքն թիֆլիզու յերկիւղէ ժանտախտին ցրուեալք կան ի գաւառնս: Աստուած այցելութիւն արասցէ քաղաքին այնմիկ ի վերստին նորոգութիւն:

Եւ Խօյայ Ջաֆարղուլի խանն, որ սարտար էր կարգեցեալ ի նոր շահէն, ի քանի ամիսս վտարանջեալ է ի նմանէ, իբր միաբանութեամբ Որմոյ խանին: Բայց Երևանու խանն ջանայ հաւատարմութիւն ցուցանել առ շահն, որ և յորդորեալ զԳիօրկի արքայորդին, թուղթ գրեցոյց նմա իբր Հպատակութեան, և ի Ղազախու զօր ինչ բերեալ կամի զինիլ ընդդէմ Ջաֆարղուլոյն: Բայց մասն մի զօրաց սորա առ սահմանօք Նախչուանու պարտեցեալ ի նախչուանցոց, որք են ի կողմն Ջաֆարայ երկեաւ սա, մինչև ընդ բերդապահին խօսեցեալ եմուտ ի բերդն ամրանալ, այլ յետ աւուրց ձայն հնչեաց, թէ շահն գալոց է յայս կոյս, որով յուսաւորեալ էլ ի բերդէն և ոչ դադարելով, զայլ ևս զօրս ինդրէ ի Վրաց՝ իբր քաջութիւն ինչ առնել: Եւ այսպէս ի ցնորական և աւերողական վարս են բնակիչք կողմանցս, Աստուած Հանդարտութիւն և խոհեմութիւն տացէ:

Իսկ Սուրբ Աթոռս յետ անհուն վնասուցն և ևս ողորմութեամբն Աստուծոյ ի պայծառութեան կայ՝ բարեկարգութեամբ միաբանից, և ըստ ժամանակիս կենցաղավարիմք:

Յովաննէս վարդապետն, զոր ընծայիւք յուղարկեցաք առ շահն, գնացեալ և դարձեալ է Խօյ ֆէրմանօք, որ և թուղթ էր գրեալ մեզ ի Խօյու, յոյս ի Տէր, որ յառաջիկայ աւուրքս եկեսցէ: Ի զրաւ բանիցս պատուիրեմք դարձեալ սիրելի որդեկիդ, զի զթուղթդ չպակասեցուցես յիւրաքանչիւր տեղոջէ, թէև համառօտք իցեն, ծանուցանելով զողջութենէ ձերմէ և զբարեկենդանութենէ օրհնեալ ժողորդոց մերոց: Մանաւանդ փոյթ տարցիս շուտով վճարել զգործդ և դարձ առնել խաղաղութեամբ, զոր Աստուած յաջողեացէ, որպէս զի մինչդեռ կենդանիս եմ, միւս անգամ տեսից զՀոգեծին որդեակդ իմ, և ապա որպէս կամիցի Աստուած, օրհնեալ են կամք նորա: Եւ դու ողջ լեր ի Տէր և յանձնեցեալ ի պաշտպանութիւն ամենագօր աջոյ նորին. ամէն:

Գրեցաւ զի յամի Տեառն 1798, և ի մայիսի 14 ի, Սուրբ Աթոռս Էջմիածին:

Ողջոյն և օրհնութիւն տամք Հոգևոր որդւոյն մերոյ և քոյ՝ Վրթաննէս խոհեմամիտ վարդապետին և Յովաննէս դպրին և այլոց, որք առ ձեզ իցեն՝ յանձն առնելով իննամիցդ Աստուծոյ:

(Ի լուսանցս) Սիրելեաց մերոց և Հարազատ որդւոց Սրբոյ Աթոռոյս սրբանուէր քահանայից, ազնուամիտ իշխանաց և Համայն օրհնեալ ժողովրդեան աստուածապաշ քաղաքիդ սիրով մեծաւ ողջոյն և օրհնութիւն առաքեմք, յանձնելով զամենեսեանս ի ինամս և ի բարեգթութիւնս Տեառն ամենակալին, մնալ խաղաղութեամբ ի բարօրութեան:

Թուղթս երկու գրեցաւ. առաջինս այս ի վերայ վանայ յղեցաւ և երկրորդն ի վերայ Կոստանդնուպօլսոյ, Հանդերձ Բասրայոս թղթովքն շնորհակալութեանց:

Յաւելուած նոր բանից ինչ:

Ընդ երկրորդ օրինակիս ոչ միայն զԲասրայոս թուղթն առաքեցաք. այլ նաև գրեցաք զթուղթ մի առ աղայ Հաշամիրն ի Մատրաս, ի պատասխանի թղթոյն նորա առ մեզ Հասելոյ յայսմ ամի, և ի մխիթարութիւն վասն դատերն իւրոյ Թամար խաթունին, Հանդերձ ողջունիւ առ իւրսն, և առ փեսայն պարոն աղայ Յարութիւնն, և որդին նորա՝ գործակալն մեր՝ պարոն աղայ Յակոբն:

Ձթուղթ մի մխիթարական ևս գրեցաք ի Սուրաթ առ լուսաւոր Հոգի աղայ ՅօՀաննանի դատերսն՝ Վալիտայ և Թիրվանտա, վասն վախճանման Հօրն իւրեանց, նաև վասն Հանգուցեալ աղա Յովաննէսին Գրիգորեան, առն Վալիտային: Թուղթ մի ևս առ աղայ Մովսէսն ի Կալկաթայ, այլևս մխիթարութիւն վասն աղայ ՅօՀաննանին, և թօՀնմաթ սակաւ մի վասն քանեաց թղթոցն մերոց պատասխանին յետացուցանելոյն, և շնորհակալութիւն վասն զերծուցանելոյն զբանի մանկունսն ի ձեռաց արաբացոց, որպէս ծանուցեալ է իր, և ողջոյն ամենայն իւրոցն և Հօրեղբորն և փեսային:

Չայտսիկ զամենայն թուղթս յղեցաք ի ձեռս Բասրայոս գործակալ պարոն Յովաննէսին, որ զտեղականացն թուղթն անդ բաժանեսցէ և զմիւս երեք թուղթն յղեսցէ ի կողմանսսդ առ իւրաքանչիւրս, որոց Հասանելիք են: Եւ պարոն Ստեփաննոսին Տէր-Յովաննիսեան, բաց ի յօրհնութեան թղթոյն, որ վասն յիշատակին, զայլ թուղթս ևս գրեցաք՝ շնորհակալ լինելով վասն ընդունելութեանցն առ քեզ և շահելով փոխանակ յառաջ ընդ քեզ գիր չգրելոյն մերոյ: Եւ զայս Բ. (2) օրինակօք, մին յառաջ յղեցաք, և միւսն այժմ:

Ի յունիսի ամսոյս 13:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2497-2502

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 517ա

1373 Թուղթ ի Բասրա առ ջուղայեցի տիրացու Ստեփաննոսն Տէր-Յովաննիսեան. շնորհակալութիւն վասն լաւութեանցն ցուցելոց առ նուիրակ Յակոբ վարդապետն, և վասն յիշատակի

ընծայելոյն Սրբոյ Աթոռոյս և բան՝ խորհրդօրէն խօսելոյ ընդ պարոն Յովաննէսին ԲեթղէՀէմեան²¹⁶:

Տէ՛ս ի մեծ տետեր յեր[ես] 2308:

517բ

¹³⁷⁴ **Ի Բասրա** - Թուղթ ի Բասրա առ գործակալ պարոն Յովաննէսն ԲեթղէՀէմեան. յիշումն յառաջնոց թղթոցն մերոց և յանդիմանութիւն վասն բնաւ պատասխանի չգրելոյն և վասն Յակոբ վարդապետի թղթոյն պատուէր՝ յուղարկել առ նա²¹⁷:

¹³⁷⁵ **Ի Բաղդատ** - Թուղթ ի Բաղդատ առ աղայ Ղուկասն Ալէքսանէան վասն յուղարկելոյն զերկու թուղթսն Հնդկաց երկրին նուիրակ Յակոբ վարդապետին ի վերայ Պօլսոյ առ մեզ, և ի փոխադարձ քանի տողեան չիթին, և յիշումն վասն Յակոբ վարդապետին առ սա յանձնեալ դրամոցն, զի Հասուցէ և վասն Մարգար աղայի կտակին ևս, զի Հոգասցէ և թէ ընդ թղթոյս թուղթ մի ևս առ պարոն Միքայէլն գոյ **Տէր-Մինասեան**, զոր տացես ինքեան:

Տէ՛ս ի փոքր տետեւ յերես **ՅԻԷ**: (327):

¹³⁷⁶ **Ի Բաղդատ** - Թուղթ ի Բաղդատ առ պարոն Միքայէլն **Տէր-Մինասեան**, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ յամի Տեառն 1796 ի դեկտեմբերի 27, ընդ Յակոբ վարդապետի՝ ի Բասրայու գրեալ թղթոյն: Եւ թէ Հանգուցեալ Աստուածատուր վարդապետն, որ ի կենդանութեանն զբեզ վէքիլ է կարգեալ և ի կտակոջն գրեալ է, որ իւր կայից վեց մասանց զմինն Հասուցես Սրբոյ Աթոռոյս, և դու ևս ի քոյդ կողմանէ պարոն Յովաննէսն ես վէքիլ կարգեալ, բայց երկար ժամանակ է, որ ի նմանէ գիր չունիմք, ուրեմն դու տեղեկացեալ, թէ որքան բաժին անկանի Սրբոյ Աթոռոյս, ծանուցէ՛ս մեզ:

Տէ՛ս ի փոքր տետեր յերեսն **ՅԻԸ**: (328):

¹³⁷⁷ **Ի Վան** - Թուղթ ի Վան առ Ախիջան աղայն. յիշումն առաջնոց թղթոցն մերոց գրեցելոց առ ինքն և առ փաշայն, և ինդիր վասն Հանգուցեալ նուիրակ Աբրահամ վարդապետի զարդիննն յուղարկելոյ: Եւ վասն ժամացուցին գրեցաւ, թէ առաքեցաք ի Բայազիտ առ տիրացու Գէորգն՝ Հանդերձ ինչ Համառօտ թղթով Հասուցանել առ քեզ: Բայց երկար միջոց եղև, որ զսոսկ

²¹⁶ Վավերագրի համառօտ տարբերակը տե՛ս նաև ՄՄ ձեռ. ՀմԻ 4481, էջ 517ա, Ա./8:

²¹⁷ Նամակը գրվել է երկու օրինակից, որոնցից մեկն ուղարկվել է հունիս ամսին՝ Կ. Պոլսից: Այս օրինակին կցվել է հետգրություն, որով Հ. Բերդեհեմյանին հանձնարարվել է կից ուղարկված նամակները՝ հասցեագրված աղա Շահամիրին (Մադրաս), աղա Մովսեսին (Կալկաթա), հանգուցյալ Օհանջանի դուստրերին (Մուսաթ) և Բասն այլ անձանց (Բասրա), ուղարկել ըստ հասցեատերերի (Վ. Գ.):

Թուղթ մի ևս չգրեցիք ի կողմանէ նորա Հասանելոյն և պատուէր, զի զթղթոյս պատասխանն ընդ փայեկին շուտով դարձուցէ առ մեզ: Եւ թէ ընդ թղթոյս մէկ պաշարանաւ թուղթք յղեցաք ի ձեռս քո, որ պարտի Հասանիլ ի Բաղդատ առ գործակալ աղայ Ղուկանն Աղէքսանեան, ուրեմն ընդ Հաւատարիմ գնացողաց շուտով յուղարկեսցես, որ Հարկաւոր թուղթքն:

Ողջոյն սրբոյն Սաղիմայ նուիրակ Սիմէօն պետին և տէր Յակոբ քաւանային և իւր եղբօր՝ պարոն Յարութիւնին:

Տես ի մեծ տես[եր] յեր[ես] 2407: Գրեցաւ յամնոյս ԺԴ. (14):

Թուղթք ի Տաթև և ի Իւչքիլիսէ

1378* **Ի Տաթև** - Թուղթ առ Տաթևու միաբանսն, ի պատասխանի բազմակնիք մանսարին իւրեանց, յորում թէ յաղագաւ անտերունչ մնալոյն սրբոյ վանիցդ և բազում տառապանս կրելոյն ձեր ի սղութենէ Հացի, իմացաք: Եւ թէ, որ Հասարակութեամբ ամենայն թեմականօք զՊօղոս վարդապետն ինդրեալ էիք յառաջնորդութիւն սրբոյ վանիցդ և վիճակացն, զնորին պատասխանն ի կոնդակոջն գրեալ եմք, անտի ունիք իմանալ: Եւ զոր Բ. (2) ինդիրս էիք գրեալ, Բ. (2)-ցունց ևս Հաւանեցաք: Նախ, զի զՍիմէօն վարդապետն վէքիլ և կառաւարիչ էիք ինդրեալ, վասն որոյ ահա կոնդակաւ զՍիմէօն վարդապետն վէքիլ կարգեցաք սրբոյ վանացդ: Եւ առ ժողովուրդն պատուէր գրեցաք՝ ունկնդիր լինիլ բանից նորա: Եւ պատուէր Սիմէօն պետին, զի խոհեմութեամբ և արիութեամբ Հոգաբարձու լիցի միաբանիցն և յամենայն կողմանէ ջանս դիցէ ի պաշպանութիւն շինութեան սրբոյ Տանն: Եւ երկրորդ՝ վասն տեղւոյդ միաբան Մինաս պետի տարեալ Աջոյն ի կողմանէ Մարաղայու և ժողովեալ արդեանց ինդրեալ էիք, զի թուղթ տայցեմք ի վերայ նոցա վասն աւանդիցն առ ձեզ Հասուցանելոյ: Ահա ընդ այդ ինդիր ևս Հաճեալ թուղթ գրեցաք ի Թաւրէզ առ պարոն Դաւիթն, մէլիք Մարտիրոսն և տիրացու Աւետիքն և ետուք Սարգիս պետին, որ ի Հասուցանելն առ նոսա զթուղթն մեր և նոքա զսուրբ Աջն և զժողովեալ արդիւնսն, սիւստ յամնաճնեացն Սարգիս պետին Հասուցանել ի ձեռս նորոգ վէքիլին: Եւ թէ, որ խանն ձեր թուղթ էր գրեալ, զնորին պատասխանն ևս գրեցաք, յորում և վասն սրբոյ վանիցդ և միաբանիցդ, յանձնարարութիւն եմք գրեալ առ ի ինսամաձու լինիլ ձեզ:

Գրեցաւ յամնոյս ԺԹ. (19):

1379* **Կոնդակ ի վերայ Տաթևու բոլոր թեմականացն**, ի պատասխանի բազմակնիք մանսարին իւրեանց:

1380 **Ի Թաւրէզ** - Թուղթ ի Թաւրվէզ առ պարոն Դաւիթն, մէլիք Մարտիրոսն և տիրացու Աւետիքն. վասն սրբոյ Աջոյն Տաթ-

և ու և ժողովեալ արդեանցն Մինաս վարդապետին Հանգուցելոյ տալ Սարգիս պետին, որ թղթով սրբազանին գնայր ի ինդրեալ ի սակս կարեաց վանիցն իւրեանց:

[Գրեցաւ] յամնոյս ԺԹ. (19)²¹⁸:

517բ-8ա

Թուղթ ի Իւչքիլիսէ, ի Կարս և ի Ղօշավանք

^{1381*} **Ի Իւչքիլիսէ** - Թուղթ առ Իւչքիլիսու առաջնորդ Թօմաս վարդապետն, եթէ աՀա այժմոյս ըստ նախնաւանդ սովորութեան Սրբոյ Աթոռոյս, որ ամ ըստ ամէ իւղի և պանրի ժողովարարս առաքեմք յայդր, ի ներկայս ևս զՊետրոս և զԱղէքսանդրոս վարդապետսն յուղարկեցաք, առ որս ձեռնտու և օգնական լիցիս դոցա:

Գրեցաւ յամնոյս ԻԱ. (21):

^{1382*} **Ի Ղարս** - Թուղթ ի Ղարս առ Գէորգ աղայն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի մայիսի ԺԲ. -ին (12), յորում թէ իմացաք Թօխաթու նուիրակ Գրիգոր վարդապետի ուղևորելը ընդ ՄաՀմատ բէկին՝ անվտանկ Հասուցանել առ Փիլիպպոս ամիրայն: Եւ թէ Դ. (4) ջուխտ մեծ մառանք արապայի և Ժ. (10) Հատ միջակ կամոնք կալի լաւ քարամբք քարեցեալք և Չ. (6) դաստայ մեծամեծ խեմք շատարարի և խախուլի, առեալ շուտով յղեսցես ի Ղօշավանք, անտի Հասանել առ մեզ:

[Գրեցաւ] յամնոյս ԻԴ. (24):

^{1383*} **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանիցն առաջնորդ Յովաննէս վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ. մսիթարութիւն վասն մաՀուան տէր Մկրտիչ քահանային: Եւ թէ զդրամոյն յղելոյ, որ նշանակեալ էիր, Հոգ չէ, երբ Հաւատարիմ ոք Հանդիպիցին, յայնժամ յղեսցես: Բայց այժմ ի Գէորգ աղայն քանի մի իրս ինդրեցաք, որք են քանի զոյգ մառանս սայլից և զկամոնս և զխեմն և մինչնա առեալ յուղարկեսցէ յայդր, եթէ քիրայով բերօղ լիցի, շուտով յուղարկեսցես Հասանիլ առ մեզ, որ յոյժ Հարկաւոր է և Հսձի ժամանակն մերձեալ:

[Գրեցաւ] յամնոյս ԻԴ. (24):

^{1384*} **Ի Բաղէշ** - Թուղթ ի Բաղէշ առ պարոն Յովաննէսն և մաՀտեսի Ամիրն, եթէ գրեալ թուղթս ձեր ի մայիսի ԺԵ. (15) ի նոյն ամսոյ ԻԵ. (25) էՀաս առ մեզ՝ ձեռամբ փայեկին և ընթերցեալ

²¹⁸ Թավրիզի պարոն Դավթին, մելիֆ Մարտիրոսին, տիրացու Ավետիֆին՝ Տաթևի լուսահոգի Մինաս վարդապետի տարած աջի և ժողոված միջոցների առնչությամբ Դուկաս հայրապետի հրամայական հորդորը՝ հիշյալ իրերը վեֆիլ Միմեոն վարդապետի միջոցով Տաթև փոխադրելու մասին թղթի ամբողջական հրատարակությունը տես ԴՀՊ, գիրք Դ., սյուն 661-662:

գիտեցաք, զոր ի նմա բանք: Նախ դու մահտեսի Ամիրդ ծանի՛ր, զի ի կողմանէ քեռոյն քոյ մահտեսի Աբրահամին, զոր ինչ գանգատանաց բանս էիր գրեալ, գիտեցաք, այլ նա ինքն մահտեսի Աբրահամ մինչև ցայժմ ոչ է եկեալ առ մեզ, յետոյ էլ թէ գայցէ և վասն այդ ձեր դաւային իցէ գալն նորա, պահելոց եմք զնա աստ մինչև ցգալ տէր Յակոբին, զի յայնժամ զերկոսեան ի միասին խօսեցո՞ւս-ցուք և վերահասու լիցուք բանին:

Իսկ, որ գրեալ էիր, թէ ԼԳ. (33) զուռուշ գանձանակի արդինս իցես Հասուցեալ նուիրակին ձերոյ Յովաննէս վարդապետին, նա ի գալն Հասոյց առ մեզ: Բայց մէք անձեռնաճառ գորով, չկարացաք զշնորհակալութեան կոնդակ գրել, յետոյ ի բարեյաջող ժամանակի գրելոց և յղելոց եմք: Եւ դու՝ պարոն Յովաննէսդ, որ գրեալ էիր զանվասա Հասանիլդ ի Մուշ ընդ Մանուէլ վարդապետին և զգնալն քոյ առ փաշայն և զմեր թուղթն մատուցանելդ նմա և նորա զթասակիրայ շնորհէն և զհարկան վեր առնուլն գիտեցաք: Եւ գրեալ էիր, թէ ԻԵ. (25) լիտր մոմ էս առեալ Հօխայն Հարիւր փարայով և նոյն չափով ևս գիտոր՝ լիտր Ը. (8) զուռուշ և Դ. (4) փարայ, թէպէտ բարի էս արարեալ զառնուլդ, բայց կարի թանկագին էս, ինչևիցէ, ըստ խոստմանդ ընդ եղբօր քոյ տէր Յակոբին յղեսցես զմոմն և զգիտորն Հասանիլ առ մեզ: Եւ թէ, զոր գրեալ էիր, թէ տէր Մարտիրոսին գրիցեմք, որ Գրիգոր սևազլխին թողեալ ժողովրդեանն, զոր յանձնեալ եմք տէր Յակոբին ի Հովել, նա մուղայէթ լիցի, մինչև տէր Յակոբն գայցէ ի Սուրբ Աթոռս և դարձցի, ահա ի լուսանցան թղթոյս գրեցաք տէր Մարտիրոսին, որ այն ժողովրդեանն մուղայէթ լիցի և զնուիրել ի տուրան ժողովեսցէ դաւթարաւ և Հասուցէ քեզ: Ուրեմն՝ զայս պատուէրս ծանուցես նմա, որ այսպէս արասցէ: Այլև, որ գրած էիր, թէ ի տեղդ ՃՀ. (170) զուռուշ կայ մնացեալ ի նուիրակ Յովաննէս վարդապետէն առ Սառօյենց Գրիգորն և դու զգրամն ինդրեալ էս ի նմանէ, բայց նա չէ տուեալ այլ զիւր ձեռացագիրն ինդրեալ, վասն որոյ և մէք ահա զձեռացագիրն նորին ընդ թղթոյս յղեցաք առ քեզ, զոր տացես իւրն և զգրամն առցես և ընդ տէր Յակոբին Հասուցես առ մեզ: Վասն ներհակութեան տէր Աւետիսին, որ ինդիր էիր արարեալ զի զսաստի թուղթ գրիցեմք նմա, այժմոյս անդէպ վարկաք զգրելն, երբ տէր Յակոբն գայցէ և տեղեկացուք ի նմանէ զորպէսն և յայնժամ տեսցիւք, թէ զինչ իցեմք առնելոց:

Գրեցաւ յամնոյս ԻԷ. (27):

1798 թ. յունիս:

Թուղթք ի յԱմիթ, ի Կարին, ի Ղարս և ի Ղօշալանք

518բ

1385* **Ի յԱմիթ - Թուղթ ի յԱմիթ առ գանձապետ մահտեսի Յակոբն.** ծանուցումն թղթոցն, փօլիցային և ամանաթին Հասա-

նելոյն ի Կարին առ պարոն Գասպարն: Եւ թէ թէպէտ զթուղթ քո յղեալ էր առ մեզ պարոն Գասպարն, բայց ի ճանապարհին կորուսեալք են, իսկ յետոյ զորպէսն ամանաթին գրեալ էր ըստ գրեցելոյ քոյ, որ ընդ ԵՃ. (500) զուռուշին լինի ՌԻՃԽԳ. (1243) զուռուշ` Հանդերձ սարքովն, որոյ աղագաւ և զաւզ էր ինդրեալ ի մէջ պարոն Գասպարն, զոր և մէք գրեալ յղեցաք առ նա, որ Հասուսցէ ի ձեռս քոյ, զի և դու Հասուսցես նուիրակին ի միամտութիւն: Եւ պատուէր, զի զորպիսութիւն նուիրակին և գործոյն ծանուսցէ մեզ ի գիտել:

[Գրեցաւ] յամնոյս Գ. (3):

1386* **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ գործակալ պարոն Գասպարն. ծանուցումն թղթոյն առ մեզ Հասանելոյն ընդ թղթոց Պօլսոյ և տեղոյ առաջնորդին և իշխանացն, ի մայիսի ԻԵ. (25)՝ ձեռամբ փայեկին: Բայց նոցին թղթոց պատասխանին այժմոյս անձեռնաՀաս գորով յետոյ գրելոց եմք: Իսկ յաղագս Սմթայ գանձապետէն մերմէ մաՀտեսի Յակոբէն առ ձեզ Հասեալ դրամոցն, որ զղաւզ էիր ինդրեալ թէ Հինգ Հարիւր զուռուշին և թէ վասն ոսկւոյ և սպիտակ դրամոց ամանաթին, որք երկուքն ի միասին լինին մէկ Հազար երկու Հարիւր քառասուն և երեք զուռուշ. աՀա և մէք գրեալ յղեցաք ընդ թղթոյս առ քեզ: Գրեցաք և զթուղթ մի առ մաՀտեսի Յակոբէն, զորս և յղեցաք առ քեզ, զի ընդ զաւզին Հասուսցես առ նա: Այլ և վասն յիշեալ դրամոցն գրեմք քեզ, զի զփօլիցայն և զոսկւոյ չխինն երկունս ի միասին ամանաթ շինեսցես և յուղարկեսցես ի Բայագիտ առ տիրացու Գէորգն անտի Հասանիլ առ մեզ, որ Հարկաւոր է:

Գրեցաւ յամնոյս Գ. (3):

1387* **Ի Կարս** - Թուղթ ի Կարս առ Գէորգ աղայն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի մայիսի Լ. (30), որում թէ իմացաք, որ շուտով Հոգ տանելով առեալ ես զԴ. (4) ջուխտ մառան սայլից, որ լինի ԻԴ. (24) կտոր, ԺԱ. (11) Հատ կամն և Չ. (6) տաստայ խեմ, զորս և յղեալ ես ի Ղօշավանք՝ անտի Հասանիլ առ մեզ: Ծանուցումն վասն գալստեան ՅովՀաննէս վարդապետին ի շահէն, զոր ընծայիք առաքեալ էաք և վասն գալոյ շահին ի Մարաղայ և Սուլէյման սարդարին ի Թարւէզ և շահի ինդրեւն զտեղոյս իշխօղն:

[Գրեցաւ] յամնոյս Է. (7):

1388* **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ ՅովՀաննէս վարդապետն, եթէ գրեցեալ թուղթդ էՀաս առ մեզ ի նոյն ամնոյ Չ. -ին (6), որով իմացաք վասն ինդրեալ իրացն մերոց, այսինքն՝ մառանացն, խեմիցն և այլոցն ի Գէորգ աղայն առ քեզ Հասանիլն, որոյ վասն շնորՀակալութեան թուղթ գրեցաք առ

Գեորգ աղայն և յղեցաք ի ձեռս քո, զի Հասուսցես առ նա: Իսկ յաղագս իրացն գրեմք, զի մինչև զսոյն յունիսի ամնոյս վերջն, եթէ ի տեղդ քիրաճի գտցես, թանգ ու էժանն չնայեսցիս, այլ որպէս և իցէ, յղեսցես և եթէ չպատահիցին, մէք փոյթ տարեալ բերելոց եմք: Գրեցաւ յամնոյս Է. (7)²¹⁹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 518բ

Թուղթք ի Հնդիկս, ի Բասրա, ի Մեծն Պօլիս և ի Կարին

1389* **Ի Հնդիկս** - Թուղթ առ Հնդկաց երկրի նուիրակ Յակոբ վարդապետն, որ զսոյն օրինակս ի մայիսի ԺԳ. -ն (14) ևս գրեցաւ, բայց աստ կրկին գրեցմանս բան ինչ ևս գրեցաւ՝ ծանուցանելով ի նա, թէ զԲասրայու թուղթն աճա ըստ ինդրոյդ առաքեցաք, այլ նաև գրեցաք զթուղթ մի առ Հաճամիր աղայն ի Մատրաս, ի պատասխանի թղթոյն նորա առ մեզ Հասելոյ յայսմ ամի և առ փեսայն պարոն աղայ Յարուժիւնին և առ որդին նորա գործակալն մեր պարոն աղայ Յակոբն: Չթուղթ մի մխիթարական ևս գրեցաք ի Սուրաթ առ Հանգուցեալ Յօճանջան աղայի դասերան՝ Վալիտայ և Թիրվանտա, վասն վախճանման Հօրն իւրեանց: Թուղթ մի ևս առ աղայ Մովսէսն ի Կալկաթայ և այլն²²⁰: Տէ՛ս ի մեծ տետեր յերեսն 2497:

1390 **Ի Կալկաթայ** - Թուղթ ի Կալկաթայ առ աղայ Մովսէսն Խյաչիկեան. յիշումն յառաջագոյն գրեալ թղթոցն մերոց և մխիթարութիւն վասն մաճուան առն Հօրաքեռ իւրոյ՝ Յոճանջան աղային և օրհնութիւն վասն կորզելոյն իւրեանց զմանս գերեալ մանկունս ի Տփիսիսայ ի ձեռաց արաբացոց:

Ողջոյն Հօրեղբօր իւրոյ՝ աղայ Գրիգորին և մօրն իւրոյ՝ Բէկու՛մ խաթունին և եղբօրն՝ Յովհաննէս աղային և կէսակցին՝ Հռիփսիմէ տիկնոջն և որդւոյն իւրոյ՝ Խյաչիկ աղազատէին և այլոցն: Տէ՛ս ի մեծ տետեր յերեսն 2503:

Գրեցաւ յամնոյս ԺԳ. (13):

1391* **Ի Մատրաս** - Թուղթ ի Մատրաս առ աղայ Հաճամիրն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ամի Տեառն 1796 / 519ա / դեկտեմբերի 1՝ Հանդերձ ծանուցմամբ որպիսութեան կողմանցս և

²¹⁹ Նույնի համառոտ տարբերակը տե՛ս ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 518բ, Ա./5 (վավ. 1388):

²²⁰ Հնդկաստանի Սուրաթ քաղաքի բնակիչ Օհանջան աղա Հակոբյան-Գերաբյանցի գործունէութեանը որոշակիորեն վերն անդրադարձել ենք (տե՛ս վավ. 42), ուստի այստեղ վերստին պետք է շեշտել նրա ունեցած առանցքային դերն ու նվիրումն առ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Նրա մահվան կապակցությամբ Աուկաս Կարնեցի հայրապետի՝ Վալիտա և Թուրվանդա դուստրերին հղված մխիթարութեան թուղթը մեծամուն բարեբախի նկատմամբ դրսևորած յուրօրինակ խոնարհում է (նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 663):

մխիթարութեամբ վասն մահուան մեծ Հարսինն իւրոյ՝ Թամար խաթունին: Տէ՛ս ի մեծ տետեր յերեսն 2311:

[Գրեցաւ] յամնոյս ԺԳ. (13):

Ողջոյն որդւոյն և թոռանն՝ աղայ Յովհաննէսին և աղայ Նազարին, և փեսային՝ աղայ Յարութիւնին և որդւոյ նորա՝ աղայ Յակոբին և այլոցն:

1392 **Ի Սուրաթ** - Թուղթ մխիթարութեան ի Սուրաթ առ Յօհաննէան աղայի դստերսն՝ Վալիտայ և Թիրվանտայ, վասն մահուան Հօրն իւրեանց յիշեցելոյ:

Ողջոյն Վալիտէ խաթունի որդւոցն՝ աղայ Յակոբոսին, աղայ Գրիգորին, աղայ Թադէոսին²²¹: Տէ՛ս տե[տեր] յեր[ես] փոքրին ՇԺԷ. (517):

1393* **Ի Բասրա** - Թուղթ ի Բասրա առ գործակալ պարոն Յովհաննէան Բեթղէշէմեան. յիշումն յառաջնոց թղթոցն մերոց և յանդիմանութիւն վասն բնաւ թուղթ չգրելոյն և վասն Յակոբ վարդապետի թղթոյն յուղարկել առ նա:

1394* **Թուղթ ի Բասրա առ ջուղայեցի տիրացու Ստեփաննոսն Տէր-Յովհաննիսեան.** շնորհակալութիւն վասն լաւութեանցն առ նուիրակ Յակոբ վարդապետն ցուցելոց և բան խորհրդօրէն խօսելոյ ընդ պարոն Յովհաննիսին Բեթղէշէմեան: Տէ՛ս ի մեծ տետեր յեր[ես] 2308:

1395* **Ի Բաղդատ** - Թուղթ ի Բաղդատ առ աղայ Ղուկաս Ալէքսանեան՝ վասն յուղարկելոյն զԲ. (2) թուղթն Հնդկաց երկրին նուիրակ Յակոբ վարդապետին ի վերայ Պօլսոյ առ մեզ և ի փոխադարձ քանի տողեան չիթին և յիշումն վասն Յակոբ վարդապետին առ սա յանձնեալ դրամոցն, զի Հասուսցէ:

Տէ՛ս ի փոքր տե[տեր] յերեսն ՅԻԷ. (327):

1396* **Թուղթ ի Բաղդատ առ պարոն Միքայէլն Տէր-Մինասեան,** ի պատասխանի թղթոյն գրեցելոյ յամի Տեանն 1796, ի դեկ[տեմբերի] 27, ընդ Յակոբ վարդապետի ի Բասրայու գրեալ թղթոյն: Տէ՛ս ի նոյն տե[տեր յերես] ՅԻԸ. (328):

1397 **Ի Մեծն Պօլիս** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ Ասլան ամիրայն. ծանուցումն վասն իւր ի Բաղդատու ընկալեալ և յղեալ թղթոցն աստ Հասանելոյն, և ինդիր, զի զմեր գրեալ պատասխանագիրսն և զայլ թուղթսն ևս անդ առ Ղուկասն յղեսցէ²²²:

²²¹ ՄՄ Հ^{մր} 4538 ձեռագրի միևնույն համառոտագրութեան մեկ այլ տարբերակով գրիչը հանգուցյալ Օհանջան աղային բնորոշում է իբրև «բարերար եւ երախտաւոր» Մայր Աթոռի (ՄՄ ձեռ. Հ^{մր} 4538, էջ 110ա-1ա):

²²² Տէ՛ս նաև ՄՄ ձեռ. Հ^{մր} 6298, էջ 19ա:

1398* **Թուղթ առ Մեծին Պօլսոյ պատրիարզ Չաքարիայ վարդապետն, ի պատասխանի Բ. (2) թղթոց նորա յանցեալ ամի նոյեմբերի ԻԸ. (28) և յայսմ ամի մարտի ԺԳ. (13) գրեցելոց: Տէս ի մեծ տետեր յերեսն 2314:**

1399 **Ի Մեծն Պօլիս - Թուղթ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն, ի պատասխանի անցեալ տարւոյ ի դեկտեմբերի] Դ. (4) գրեալ թղթոյն, որ ի յայսմ ամի փետր[ուարի] ԺԵ. (15) էհաս առ մեզ, և ի յառաջ քան զայն ի սեպտեմբերի ԻԸ. (28) գրեալ թղթոյն, որ անցեալ ի Թիֆլիզ, և անդուստ կարի անագան էհաս առ մեզ ի սոյն ամսի մայիսի ԺԹ. (19):**

Յորմէ սիրով և օրհնութեամբ բազմաւ, և փրկչաւանդ սուրբ ողջունիւ, և սրբոյ Իջման տեղոյս նորին մեծազօր շնորհիւ գիտասջիր սիրելիդ մեր և Հարազատ որդի Սրբոյ Աթոռոյս՝ Գալուստ աստուածաբան վարդապետ: Ձի յանցեալ տարւոյ Հոկտեմբերի Ժ. (10) և ի նոյեմբերի Զ. (6) և ի դեկտեմբերի ԻԴ. (24) գրեալ եմք առ քեզ զթուղթս և զորպիսութիւնս մեր և զանցս ըստ իւրաքանչիւր միջոցացն ծանուցեալ և զինդրեալ թուղթսդ, որ վասն գանձանակաց յիշատակական տրոց յղեալ եմք ընդ յետին Բ. (2) թղթոյն, բաց ի սակաւուց, յորս չժամանեցաք գրել: Իսկ յիշեալ երկից թղթոցդ մերոց միոյն ևս դեռ ոչ ընկալաք ի քէն զպատասխանի մինչև ցայժմ:

Եւ թէպէտ ի դեկտեմբերի Դ. (4) յՕրթագեղու գրեալ կարճառօտ թուղթդ էհաս առ մեզ ի փետրվարի ԺԵ. (15), բայց ի նմին զհարկաւոր ինչ չէիր նշանակեալ, այլ զյիշեալ թուղթսն մեր տակաւին ոչ ընկալեալ գոլով քոյ, զտարակուսանս էիր ցուցեալ: Եւ զսիւսի մի յղեալ էիր վասն գանձանակաց թղթոց: Իսկ զբանն, որ ի կողմանէ այն Օռօզու վանից միաբանի ուրումն ի Թիֆլիզ վախճանեցելոյ դրամոց փօլիցային յիշատակեալ էիր, ամենևին անծանօթ էր մեզ, որովհետև զառաջին թուղթդ, որ յաղագս այնր, չէաք ընկալեալ: Մէք ևս յայնժամ բազմօք կարևոր Հոգօք զբաղեալ, և ի տրտմութիւնս մի զկնի միոյ վախճանեցելոց վարդապետացն թախծեալ, նաև Հանդերձեալ գոլով գնաւ վասն նաւրուզին յԵրևան, անձեռնհաս եղաք պատասխանի գրել, այլ ի գնալն մեր, պատուիրեցաք մերայնոյ ումեմն՝ ծանուցանել սիրելոյդ զհասանիլն թղթոյն քո այնորիկ, և զայլ ինչ բանս, որ և գրեալ և յղեալ է ի մարտի քանիսն, Հանդերձ թղթով միով, որ Հասանելի էր առ ումեցի մաշտեսի Գեորգն յԱդրանա: Յայնմէտէ ևս ցարդ կարօտ մնացաք գիր առնելոյ ի քէն, և մեզ չյաջողեցաւ գրել ինչ առ քեզ:

Իսկ ի դեկտեմբերի քսան և չորից ի թղթագրութենէն մեր առ քեզ մինչև ցայժմ զանազան պատահմունքն տեղոյս և ձախողակի Հանգամանք կացութեան մերոյ այսպէս գիտելի լիցին սիրելոյդ, զի յառաջ քան զայն վանայ նուիրակ Աբրահամ վարդապետի

մահուան բօլծն էր հասեալ առ մեզ, գրուածեամբ երևելեացն տեղ-
ւոյն, որոյ արդիւնքն ևս գրեթէ անյայտ լինիլ նկատին: Եւ ի
դեկ[տեմբերի] վերջին աւուրսն խղճալի Յովսէփ վարդապետն յե-
ղակարծ իմն վախճանեցաւ. զկնի ծերունի Յակոբ վարդապետն,
որ ի վաղուց Հիւանդ էր: Եւ ի յունվարի քանիսն թիֆլիզեցի Գրի-
գոր վարդապետն: Յետ աւուրց Ներսէս վարդապետն: Եւ ի փետր.
Չ. (6) Ղունկիանոս վարդապետն: (Ի մարտի ամսեանն ևս Մար-
գար վարդապետն): Որոց զհոգիսն Տէր լուսաւորեսցէ և զսիրե-
լիսդ ողջ պահեսցէ: Այլ ի Հիւանդութիւնս նոցա, ի սպասաւորաց
մերոց ևս ոմանք մինչև ի դուռն մահու հասին:

Գրեթէ յերկուս ամիսս ի հոգս վախճանողացն և Հիւանդաց
պաշարեալ կայաք: Եւ Հիւրոց երթևեկութիւնքն յաճախեալ և մէք
ևս երկիցս զՀիւանդութիւնս կրեցաք: Ի վերայ այնց ամի մեր մե-
ծախեք իսանն ևս ստիպէր զմեզ ընծայ յղել շահին, և որչափ մէք
կամէաք յետաձգել, նոքա ջանացին յառաջ ձգել: Եւ զի յայնմ մի-
ջոցի սկսաւ Խօյայ Չաֆարղուլի իսանն ապստամբութիւն երևե-
ցուցանել ընդդէմ՝նոր շահին, և սոքա Հաւատարմութիւն կամէին
ցուցանել վասն այն ստիպէին զմեզ, թէ դու մի նայիր առ նա, այլ
մեօք յղեա զընծայդ:

Վերջապէս Հարկեցեալ ի բռնադատութենէ սոցին, կամաւո-
րեցաք յղել: Եւ զի ի վաղուց նուիրակ առաքել ի Ջուղայ ոչ յաջո-
ղիր և առանց առաջնորդի գողով նոցա, զեպիսկոպոս ինդրէին,
որք և յայն աւուրսն ևս զփայեկ մի էին յղեալ մահասարաւ: Վասն
որոյ և մէք զկոնդակ և զթուղթս գրեալ զՅովակիմ վարդապետն
յղեցաք: Որ Յովակիմ վարդապետն ի թէհրանու՝ շահի ֆերմա-
նան անցեալ գնասցէ ի Ջուղայ, ընու զհոգևոր պետս եկեղեցեաց
նոցա, և Յովաննէս վարդապետն դարձցի:

Յետ վճարելոյ մեր զայս ի փետրվարին, և ի մարտի գնալոյ
յԵրևան և դառնալոյ մինչ զԽօյու նուիրակի պատրաստութիւն ևս
տեսաք առաքել ըստ որում Չ. (6) տարի է, որ չյաջողեցաւ յու-
ղարկելն վասն խառնակութեանց կողմանցս: Այն ևս խափանեցաւ:
Չի ի սուրբ Չատկի շաբաթին իսկ ձայն հնչեցաւ, թէ Չաֆարղուլի
իսանն գայ ի վերայ Երևանու, վասն որոյ խռովեալ և շփոթեալ սո-
ցա անկան զմիմեանմք, և ժողովեցին զբնակիչսն երկրիս այսր և
անդր, և զմեզ Հրաւիրեցին գնալ Երևան, և ոչ յանձն առաք, ապա
զբազմաց գիւղորդեից բնակիչս աստ ժողովիլ Հրամայեաց, և մեզ ևս
գրեցաք պահել և ամրացուցանել: Յետոյ մեղմնացաւ Համբան և
Հանդարտեցան սոքա: Այլ ամիս անցեալ ի վերայ, դարձեալ ալե-
կոծեցան սաստիկ քան զառաջինն, զի զիրս ինչ յղեալ սոցա ի սահ-
մանս Նախչուանու: Մինչ վանեցեալ դարձան, թուեցաւ սոցա, թէ
թշնամին Հետամուտ գայ: Վասն որոյ և իսանն ընդ բերդապահին
խօսեցեալ ի բերդն եմուտ և ժողովեաց անդ զքաղաքն և զկնի
աւուրց դարձեալ ել ի բերդէն:

Եւ զայլ խելայեղական վարս սոցա զի՛ պիտոյ է գրել, միայն զայս կամիմ ասել ընդ ինքեանց և զմեզ տագնապեցուցեալ աշխատ առնեն և ոչ տան Հանգիստ:

Արդ, այսպիսեօք անցուցանելով զաւուրս Հագիւ զօր ըստ օրէ Հանդիպեալ Հոգալիսն Հոգամբք, և զՀարկաւորագոյն գրելիսն գրեմք, որպէս զԹօխաթու նուիրակն, որ վաղապէս պարտ էաք առաքել, Հագիւ թէ յապրիլի ամսեանն յուղի արկաք զԳրիգոր վարդապետն:

Եւ ի ձմեռանէ, Հետէ կուտակեալ գրելիքն մեր ծանրացեալք ի վերայ, տարակուսիմք, զո՛րն գրեցուցանել: Յայսցանէ աստիքանիցս և կամեցաք զԹուղթն գանձանակաց քաղաքիդ և զայլոցն տրոց գրեցուցանել, այլևայլ գրուածք ի մէջ անկեալ խափանեցին: Բայց այժմ Թուղթ ընկալաք ի յարգելի եղբօրէն մերմէ՝ պատրիարք վաւեմախոհ վարդապետէն, որ գրեալ էր ի մարտի ամսոյ ԺԳ. (13): Ընդ որս չգոյր ի քէն Թուղթ, այլ ի գրուածէն նորին իմացաք զլինիլն քո յաւագ եկեղեցւոյդ Սուրբ Աստուածածնի:

Սակայն Թուղթն քո, զոր |2413| ի սեպտեմբերի ԻԸ. (28) գրեալ էիր վասն բանի այն Օռօզու վանից միաբանին, ի Թիֆլիզու էՀաս առ մեզ ի մայիսի ԺԹ. (19), Հանդերձ թղթովն սառաֆլար քէՀիասի մաՀտեսի Յակոբ ամիրային: Եւ թէ ո՛ւր էին յամեցեալ այս Թուղթք և ո՛քք էին յուղարկեալ, այն ևս մեզ անյայտ: Միայն զՔեալ Յովաննէսի յերևանու առ մեզ Հասուցանելն գիտեմք: Եւ յոյժ բարի է, որ այժմ յայնմ կողմանէ մեզ գրամխոստացօղ և զավզ ինդրօղ ոչ եղև, զի Հերակլ պետն Վրաց վախճանեցաւ ի փետրվարին, և Գիօրկի խանն է իբր յաջորդ նորին (ընդ որ և մեր խանն բարեկամութիւն առնէ և զօր ինդրէ, և Թուղթ Հսազանդութեան ընկալեալ ի նմանէ առ շահն յղեաց): Սակայն ընդ մէջ իւրն և եղբարցն և մօրն Հաստատ միաբանութիւն չէ կայացեալ, և ինքն ի Թէլաւ է, և մնացորդ բնակիչքն Թիֆլիզու ևս ցրուեալք կան յայգեստանս և ի Գօրի և յայլ տեղիս յերկիւղէ ժանտախտին: Որոյ աղագաւ և սուրբ Գեղարդն ինդրեալ էր միջնորդութեամբ մեր խանին:

Իսկ մեք զՍուրբ Յակոբայ աջն առաքեցաք, ձեռամբ ժամօրՀնօղ Ալէքսան վարդապետին՝ մխիթարութեան թղթով առ նա, և կոնդակաւ առ Հասարակութիւնն: Որ և Հասեալ է առ նա ի Թէլաւ, և նա յարգմամբ ընկալեալ է: Բայց զի յայնպիսի կացութեան են, դեռ առաջնորդ չեմք յղեալ, սպասելով Աստուծոյ ողորմութեանն:

Եւ արդ, այժմ զՀարկաւորագոյն Թուղթն ոռնէաք գրեալ ի Հադիկա, ի Բասրա և ի Բաղդատ, որք ձեռամբ սիրելոյն մերոյ՝ Ասլան ամիրային պարտին առաքել ի Բաղդատ առ եղբօր որդին իւր՝ աղայ Ղուկաս: Վասն որոյ զԹուղթ մի ևս առ Ասլան ամիրայն գրեցաք, և զամենայն Թուղթն յերկուս պաՀարանս ժողովեցաք

(զի մեկ պաշարանն թանձր լինէր), և ընդ թղթոյս քո յղեցաք առ քեզ, զոր յանձնեսցես բարեպաշտօն Ասլան ամիրային՝ յուղարկել ի Բաղդատ՝ ի ձեռս աղայ Ղուկասին, որպէս և զառ ի նմանէ եկեալ թուղթն առ մեզ էր յղեալ:

Իսկ վասն քոյդ խնդրեալ թղթոցն գանձանակաց և այլոց, որք դեռ չգրեցան, չնեղասրտիցիս, այլ երկայնամիտ լիցիս, զի թէպէտ և այժմ՝ զայլ բազում գրելիս ունիմք, սակայն ի թէթեւանալ մեր յայսցանէ, և զայնս գրելոց եմք: Եւ թէ ժամանակն առման գանձանակադրամից լրացեալ իցէ, առցես և գրեսցես: Յայնժամ զերկուց ամացն ի միասին գրեսցուք, որպէս և ի ժամանակս Մինաս և Իսահակ վարդապետացն քանիցս եղև:

Եւ վասն մանրամասնեայ գանձանակացն, զորս դժուարութեամբ տան սակաւաթիւ անաֆք ոմանք, առ այն մի յոյժ հոգ լիցի սիրելոյդ, այլ այնք, որք ի վաղուց Հաստատեալ են և յօժարութեամբ տան, և արդիւնքն ևս առատ է, այնոցիկ մուղայէթ լիցիս:

Դարձեալ՝ ի սեպտեմբերի ԻԸ. (28) գրեալ թղթոջդ, որ ծանուցեալ էիր զԱմստրդամ ևս բակուստ չգտանիլն, և Հարցեալ էիր վասն սայեայ չուխայ առնլոյ, առ այն գրեմք սիրելոյդ, զի թոյլ տացես, քանզի գրեալ եմք ի Հաշտարխան վասն բակուստի, և յոյս գոյ անտի գալոյ: Տեսցուք թէ որպէս լինի:

Գրեցաք և զպատասխանի թղթոց յարգելի եղբօրն մերոյ՝ պատրիարգ վսեմամիտ վարդապետին, Հանդերձ ՀնորՀակալութեամբ վասն քոյ, զոր մատուցես նմա: Այլև զփոքր թուղթ մի ևս առ ազնիւ սիրելին մեր՝ բարեպաշտ մահտեսի Նիկողայոս ամիրայն գրեցաք, զոր տացես նմա, որ է յաղագս յԻզմիրու առ ինքն Հասեալ փօլիցային, զոր և ոսկի է շինեալ զի յղեսցէ:

Գիտասջիր ևս, զի Կարնոյ գործակալ պարոն Հայրապետն, որ ի դեկտեմբերին եկեալ էր աստ, և զՀաշիւն տեսաք, և ըստ իւր յօժարութեանն դարձեալ գործակալ կարգեցաք, և վասն տկարութեանն՝ զիւր եղբօրորդի պարոն Գասպարն ևս իւրն օգնական գրեցաք ի կոնդակոջն մերում, և ի փետրվարին ուղևորեցաք: Այժմ՝ զոմանս շիլթախս առնելով վէճ է Հանեալ և ի գործոյն Հոժարիլ ասէ, որոյ աղագաւ ոմանք յիշխանացն թուղթ էին գրեալ մեզ, և մէք նոցա պատասխանի գրեցաք, տեսցուք թէ զիարդ իցէ վերջանալոց վէճն: Վասն որոյ և սիրելոյդ գրեմք, զի փօլիցայ չտայցես նմա, մինչև մէք գրիցեմք քեզ: Եւ զի նոր փողն ի տեղս վ՛2414՛նաս ունի, և պաճախլուն ոսկին լաւ անցնի, վասն որոյ դարձեալ խօսեսցիս ընդ օրհնեալ մահտեսի Նիկողայոս բարեսէր ամիրային, զի թէ որպէս յառաջնում նուագին փոխարկեաց, այժմ ևս այնպիսի գնով ոսկի շինելն յանձն առնուցու, զառ քեզ գտանեցեալ դրամն տացես, որ նոյնպէս փոխարկեալ, սակաւ առ սակաւ ի Սուրբ

Աթոռս Հասուսցէ, զի անտի լաւ օգուտ լինի ի ծախս սրբոյ Տանս, և յոյժ շնորհակալ լինելոց եմք զնմանէ:

Դարձեալ՝ ծանիր և զայս, զի Տաթևու առաջնորդ Յովակիմ վարդապետն և այլ միաբանքն յորմէ Հետէ տարագրեցան ի վանից անտի և եկին աղխիքն ի Նախշուան: Յովակիմ վարդապետն եկեալ աստ Հրաժարեցաւ յառաջնորդութենէն, զոր և յղեցաք ի Ջուղայ նուիրակ: Եւ Մինաս վարդապետ ոմն, որ իբր վէքիլ էր և սուրբ վանն Տաթևու, նա ևս վախճանեալ է, վասն որոյ թէմականքն և Իբրազիմ խանն գրեալ և ինդրեալ էին ի մէջ զՊօղոս վարդապետն կարգել առաջնորդ և յուղարկել:

Իսկ Պօղոս վարդապետն յայդ կողմնունսդ է ժողովարար յանուն այնր սրբոյ վանացն: Վասն որոյ գրեմք քեզ, զի ուր և իցէ՛նա, ազդ արասցես նմա շուտով գալ այսր, զի առաջնորդ կարգեալ առաքեսցուք ի Հոգաբարձութիւն սրբոյ Տանն այնմիկ և ժողովրդոցն:

Ի գրաւ բանիցս, գիտես և զներկայական որպիսութիւնս կողմանցս: Չի վասն ապստամբութեան Ջաֆարղուլի խանին Սուլէյման սարտարն եկեալ է ի Թարվէզ յորոց գալստենէն, որք ժողովեալ կային ի վերայ Ջաֆարղուլոյն, ցրուեցան և ինքն առեալ զընտանիսն ի Խօյայ խոյս ետ ի կողմն Վանայ կամ Բալազոյ, և Խօյու բնակիչք, մանաւանդ մեծամեծք փախուստ առին ի Վան և ի Բայազիտ, և Երևանու խանն զօրացեալ գալստեամբ սարտարին, զնաց ի Նախշուան, ուստի թերևս զնայցէ առ սարտարն կամ թէ Նախշուանու նիզամ տուեալ դարձցի:

Վասն շահին ևս ասեն եկեալ գոլ ի Մարաղայ, բայց ոչ է Հաւատալի: Եւ վասն Հիւսէին Ղուլի խանին լսեմք, թէ եկեալ է ի Խօյ և կամի զցրուեալն ժողովել: Աստուած տայ այսպէս լիցի, ապա թէ ոչ, վտանգ մեծ նկատի երկրին: Դարձեալ Աստուած խաղաղութիւն շնորհեցէ:

Իսկ Յովաննէս վարդապետն մեր ի դառնալն ի Թեհրանու, թէպէտ և ի Խօյ Հիւանդացեալ էր, բայց Աստուծով առողջացեալ եկն ի Սուրբ Աթոռս խիլայիւք և Ֆերմանօք, և ողորմութեամբ բերարին յուսամք կերպիւ իւիք բարուք կենցաղավարիլ:

Այսպէս գիտացեալ զորպիսածանոյց գիրդ անպակաս առնելով, ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԽԷ. (1798) թուոյս և ի յունիսի ԺԳ. (13), ի Սուրբ Աթոռս Էջմիածին²²³:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2411-24

Օրհնութեան եւ շնորհակալութեան նամակներ պարոն Գեորգ Տէր-Դաւթեանին (Բարսա) «վասն Ա. (1) փոքր արծաթեայ չորէթեւեան ջահին յիշատակ տալոյն Սրբոյ Իջման տեղոյն»: Ողջոյն է յղում նաեւ կենակից Շուշան խաթունին

²²³ Նույնի համառոտ տարբերակը տե՛ս ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 519ա, Ա./8:

եւ որդուն՝ աղայ Թադէոսին (ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 519ա, Ա./9), պարոն Մաղաքիա մաւնտեսի Սարգսեանին «վանն Սրբոյ Իջման տեղւոյն ի զար շոփայից մին Հատ սիւռոց նուիրելոյն՝ ի յիշատակ ինքեան և կենակցին իւրոյ՝ Մարիամնան խաթու- նին» (Ա./10), պարոն Վարդան Սարգսեանին «վանն Բ. (2) Հատ գրակալի շապկին ի մախմուր կտորից, յորոց վերայ պատկերօք նկարք ասխարուրք՝ ի Պօլիս շինե- ցեալք, ի յիշատակ ինքեան տալոյն» (Ա./11), պարոն Ստեփաննոս Տէր-Յովհանն- նիսեանին «վանն մին Հատ ասինեգործ մախմուր խալիչայ նուիրելոյն» (519բ, Ա./1), պարոն Յարովթին Սաւակեանին «Ա. (1) զար շոփայ վարագոյր տալոյն վանն Սրբոյ Լուսաւորչի սեղանոյն»: Ողջոյն է յղում նաեւ կենակցին՝ Վարդէնի խա- թոնին, որդիներ պարոն Աբրահամին, Յովհաննէսին, Կարապետին եւ Մկրտչին (Ա./2), պարոն Թօմայի կին Եղիսաբէթ խաթոնին «վանն Սրբոյ Աթոռոյս Բ. (2) Հատ արծաթեայ բուրվառ յիշատակ տալոյն» (Ա./3), պարոն Յովհաննէս Տէր- Գասպարեանին «վանն տալոյն Համանման երկերեսեան թաբօրի Բ. (2) խաչիցն»: Ողջոյն է յղում կենակցին՝ Մարիամ խաթոնին, զբանսին՝ Հոփիսիմէ խաթոնին, դուստր Յօհաննայ խաթոնին (Ա./4), մաւնտեսի Յօղիտայ խաթոնն Խաչիկեանին «վանն Ա. (1) Հատ զար շոփայ վարագոյր տալոյն Սուրբ Յակոբայ սեղանոյն՝ յի- շատակ ինքեան և Հանգուցեալ Հօրն՝ մաւնտեսի Խաչիկին»: Ողջոյն է յղում նաեւ դուստր Մարիամնան խաթոնին (Ա./5), աղայ Պետրոսի Մատինէ խաթոնին «վանն Սրբոյ Իջման տեղւոյն Ա. (1) Հատ զար շոփայ վարագոյր նուիրելոյն» (Ա./6), պարոն Միքայէլ Բարսեղեանին «վանն յիշատակ տալոյն Հանգուցեալ մօրն իւրոյ Կատարինէ խաթոնին մին արծաթեայ բուրվառ»: Ողջոյն է յղում նաեւ կե- նակցին՝ Եղիսաբէթ խաթոնին եւ եղբօրը՝ պարոն Խաչիկին (Ա./7), Հանգուցեալ Մարգարի Յօղիտայ խաթոնին «վանն նուիրելոյն Սրբոյ Աթոռոյս Ա. (1) արծա- թեայ սատայ խաչ» (Ա./8), պարոն Գրիգոր Խաչիկեանին «Ա. (1) արծաթեայ սկիհ տալոյն՝ ի յիշատակ Հոգւոյ Հանգուցեալ կենակցին իւրոյ Թէլթէլ խաթոնին» (Ա./9): Նամակները գրուել են յունիսի ԺԳ-ին (13):

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 519բ

1400* **Ի Մեծն Պօլիս** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ մաւնտեսի Նիկողայոս ամիրայն, յորում թէ յանցեալ ամին, որ թուղթ էիր գրեալ ի վերայ գործակալին մերոյ պարոն Հայրապետին, թէ յիզ- միրու յարդեանց Սրբոյ Աթոռոյն 2500 ղուռուշ փօլիցայէ Հասեալ ինձ, գրես Հոգևոր տէրին, թէ որպէս կամիցի: Յայնժամ պարոն Հայրապետն ի Սուրբ Աթոռս գոլով, թուղթս քո առ պարոն Գաս- պարն էր Հասեալ և նա զբանս թղթոյն քոյ ծանուցեալ էր մեզ և մեք գրեցաք նմա, որ բանիւ մերով գրեսցէ քեզ, որ զիչեալ փօլիցայն պաճախլու ոսկի շինեսցես: Ապա գրեալ էիր նմա, թէ զդրամն զայն ոսկի շինեցի, վանն որոյ գրեմք քեզ, զի զիչեալ 2500 ղուռուշի պա- ճախլու ոսկին, զոր պատրաստեալ էս, Հաւատարմի ձեռօք կնքով քոյին յուղարկեսցես ի Կարին, ի ձեռս պարոն Հայրապետին և Գասպարին:

Գրեցաւ յամնոյս ԺԳ. (13):

1401* **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ վէքիլ պարոն Գասպարն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ և ծանուցումն ի մայիսի 7-ին և 13-ին գրեալ թղթոցն առ մեզ Հասանելոյն ընդ մահտեսի Սերօբի թղթոյն՝ Հանդերձ Հանգուցեալ Ներսէս վարդապետի Հակի սիահովն: Եւ թէ ի կողմանէ Ամթայ նուիրակ Մկրտիչ վարդապետի արդեանցն ձեռամբ գանձապետ մահտեսի Յակոբին առ ձեզ Հասեալ 500 զուռուշ փօլիցային և Ա. (1) չխինով ամանաթն, որ գրեալ էիր, յառաջ քան զայս, թէ փօլիցային, և թէ չխինին աղագաւ մէկ զաւգ գրեցաք: Եւ մի թուղթ ևս առ մահտեսի Յակոբն և յուղարկեցաք ի ձեռս քո Հասուցանել առ մահտեսի Յակոբն և զամանաթն յղեալ ի Բայագիտ առ տիրացու Գէորգն:

Իսկ վասն պարոն Հայրապետի տրտունջ առնելոյն, որ գրեալ էիր, իմացաք ինքն ևս մեր Աստուածատուր վարդապետին գրեալ էիր, յայդմ կողմանէ խորհրդական անձինքն ևս էիր գրեալ զնոցին պատասխանին երկարապէս գրեցաք և նոքա, զոր ինչ յաստուածակոյս կողմանէ գրեսցեն մեզ, իրաւանց փախչօղ չեմք: Տեղւոյդ նուիրակ Գրիգոր պետի՝ ի Տրապիզոն լինիլն այժմոյս, որ ծանուցեալ էիր, իմացաք, երբ, որ այլևս զորպիսոթիւնս գրէ ձեզ, ծանուածիք մեզ: Թօխաթու նուիրակ Գրիգոր պետի ուղևորելոյն ի Մատենն, որ գրեալ էիր, իմացաք: Իսկ Թօխաթու գրեամն զերբ յղելդ, գրեսցես մեզ:

Իսկ և գրեալ էիր, թէ մահտեսի Նիկողայոս ամիրայն թուղթ է գրեալ քեզ, վասն ոսկուցն՝ ի պատասխանի լինելոյն, այնր աղագաւ մէք այժմ թուղթ գրեցաք առ մահտեսի Նիկողայոս ամիրայն, որ զայն ոսկիան ուղարկէ, ուրեմն զգո՛յձ լինիցիս, որ ի Հասանիլ յայդր /520ա/ առցես և գրեսցես մեզ, զի զոր ինչ գրիցեմք քեզ, այնպէս արասցես: Եւ զի առաջնորդ Յակոբ պետն ի պատրիարգէն թուղթն էր յղեալ մեզ և Գալուստ վարդապետն ևս թուղթ ունէր գրեալ այժմ զնոցին պատասխանին և զայլ ևս բազում թուղթք ի մէկ մեծ պահարանի ժողովեալ, որ յիշեալ Նիկողոսի թուղթն ևս ընդ նոսա է, ահա ընդ սոյն գրոյս յղեցաք ի ձեռս քո, Հաւատարիմ գնացօղով յուղարկեսցես ի Մեծն Պօլիս առ նուիրակն և զերբ յուղարկելդ ծանուցես մեզ: Այլև՝ Տաթևու Սրբոյ վանիցն ժողովարար Պօղոս վարդապետն, եթէ յայդր իցէ, կամ թէ գայցէ յետոյ, Հարկեսցես շուտով գալ ի Սուրբ Աթոռս: Մահտեսի Սերօբի յատուկ թղթոյ պատասխանին յետոյ գրելոց եմք, ասացես իւրն միամիտ լինիլ:

Գրեցաւ յամնոյս ԺԳ. (13):

520ա

1402* **Ի Թիֆլիզ** - Թուղթ ի Թիֆլիզ առ Ժամօրհնող Ալէքսան վարդապետն, եթէ ի մայիսի Ժ-ին (10) գրեալ թուղթդ առ մեր Աստուածատուր վարդապետն էհաս և իմացաք ի աղաղութեամբ Հասանիլդ ի Թէլաւ և մարդասիրովթեամբ ընկալեալ լինիլդ ի յարքայէն և ապա ի Թէլաւ և ի Քիսեղ շրջագայելդ և անտի

դառնալու ի թիֆլիզ: Եւ թէ պարոն Ենովքին աստանօր գոլով քանի մի Հարկաւոր բանս ինդրեցաք ի նմանէ, որ ի տեղւոյդ առեալ յղեսցէ, տակաւին դեռ չէ յղեալ, ուրեմն ասասցես, զի շուտով Հոգացեալ յուղարկեսցէ Հասանիլ ի Սուրբ Աթոռս: Փոխուլայ մի առ սա գրեցաւ՝ վասն Սրբոյն Թօմայի առաքելոյն վանիցն միաբան Յարութիւն վարդապետին, զի զսուրբ Աջն տարեալ ի կողմոնս թիֆլիզու, ժողովս առնէր յանուն սրբոյ վանիցն և ոչ դառնայր յետս, այլ կամէր երթալ յայլ երկիր, վասն որոյ գրեցաւ սմա, զի որոնեալ ընդ ինքեան բերցէ և եթէ չսօժարիցի գալն, մեզ իմացումն տացէ:

[Գրեցաւ] յամսոյս ԺԸ. (18):

^{1403*} **Ի Պրուսա** - Թուղթ ի Պրուսա առ Աղամջանեան մահտեսի Յովսէփին և Գ. (3) եղբարսն, ի պատասխանի գրեալ թղթոյ նոցին և ի շնորհակալութիւն վասն զմի թան կերմեսիտ ընծային՝ յղեցելոյ ձեռամբ մահլուճցի պարոն Խաչատուրին: Եւ վասն առաջնորդ Պօղոս վարդապետին վերայ զյանձնարարութեան թուղթ էին ինդրեալ, առ այն գրեցաւ, թէ ի ներկայս ձեռնաՀասութիւն չունէաք, երբ դէպ լիցի թուղթ գրել նմա, վասն ձեր ևս զյանձնարարութիւն եմք գրելոց: Տէ՛ս ի փոքր տետեր յեր[ես] ՅԼ. (330):

Գրեցաւ յամսոյս ԺԸ. (18):

^{1404*} **Ի յՈւրուշնուղ** - Թուղթ ի յՈւրուշնուղ առ գանձապետ մահտեսի Գրիգորն Անուշեան. ծանուցումն ի մարտի ԺԳ. (13) գրեալ թղթոյն առ մեզ Հասանելոյն ի յուլիսի ամսոյ սկզբանն ընդ Ֆօքշանցի մահտեսի Աստուածատուրին և ի պատասխանի թղթոյն գրեցելոյ: Տէ՛ս ի փոքր տետեր յեր[ես] ՅԼԱ. (331):

¹⁴⁰⁵ **1798 թ., յունիս** - Կոնդակ Համառօտ ի վերայ Բերկրու նահանգին և Մահմուտանու մասին, և այլ տեղեաց ինչ, որք մնացեալք էին թարց նուիրակելոյ յԱբրահամ վարդապետէն՝ վասն օրհասին մահու կանխելոյ, և այժմ յանձն եղև նորոյ նուիրակին առ ի նախապէս լրացուցանել զթերի նորին, և ապա սկսանիլ ի վանայ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2414-15

1798 թ., յուլիս

^{1406*} **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն և պարոն Գասպարն, եթէ յունիսի 25-ին գրեալ թուղթն ձեր էՀասա առ մեզ ի յուլիսի 1 և իմացաք զգրեալսն ձեր, որք գրէք, թէ մէկ գիր ևս կարնեցի մակօքճի Յարութիւնին Հետ եմք գրեալ, այն գիրն մեզ չէ Հասեալ: Իսկ որ ծանուցեալ էիք զԱմթայ թղթոյ և դաւզի յուղարկէն, միամտեցաք: Եւ վասն 500 ղուռուշին, որ գրեալ

էք, թէ ի Բայազիտ Նաւասարդեանն պարոն Հայրապետին վերայ փօլիցայ արարաք, մինչև ցայժմ՝ նա մեզ բան չէ գրեալ, մէք ևս նմա ոչ գրեցաք դեռևս: Այլ, զոր տրտունջ էք գրեալ զտիրացու Գեորգէն, ասելով, թէ այլ ոչ գիր կու գրեմք և ոչ փօլիցայ կառնեմք, զայդ պարզապէս գրեսցիք մեզ, թէ զի՛ արդ իցէ վարեցեալ ընդ ձեզ:

Եւ վասն Ամթայ ամանաթին, որ գրեալ էք, թէ Թումանէնց պարոն Յօւաննիսն Հետ կուղարկեմք, երբ նա մեզ Հասուցանէ, ազդ առնելոց եմք ձեզ: Այլ, զոր ծանուցեալ էիք, թէ Իղմիրու առաջնորդ Մարտիրոս վարդապետն 5000 ղուռուշ փօլիցայէ արարեալ աստ, զորն առեալ եմք և զորն առնլոց եմք, զայդ ինքն Մարտիրոս վարդապետն ևս էր գրեալ մեզ, վասն որոյ գրեմք ձեզ, զի զորքան ինչ առեալ էք, զայն ևս չթողուք ի վերայ փօլիցայ տուողացն և այլոց վերայ փօլիցայ չանէք, այլ ժողովեալ առ ձեզ պահեսցիք ի պատրաստի, զի յԵրևան Հէքիմ Հայրապետն և Քեալ Յօւաննէն, զորդինս իւրեանց յուղարկելոց են յայդր և ինդիր են արարեալ մեզ, որ աստ մեզ դրամ տացեն և փօլիցագիր առեալ ի մէնջ գայցեն յայդր, առնուցուն զդրամնս իւրեանց: Նաև, զոր գրեալ էք, թէ Մարտիրոս վարդապետն փոքր-ինչ բանէ յղեալ Մօսկով Յովհաննիսի բեռնոց մէջնէ, իմասջիք, զի ոչ միայն Մարտիրոս վարդապետն է, այլ Մարգար աղայն և այլք ոմանք ևս են զիրս յղեալ, վասն որոյ զգուշասցի՛ք, զի ի գալ բեռնոցն, առեալ զայնս ընդ Հաւատարմոց յուղարկեսցի՛ք գալ:

Դարձեալ յանցելում, որ ծանուցեալ էիք, թէ յԻղմի/520թ/րու Բ. (2) բեռն է եկեալ ի Թօխատ և անտի յղեալ են աստ, թէ Սուրբ Էջմիածնայ է և եղեալ կայ ի Կիւմրուկն, յայնմ կողմանէ մեզ բան գրող չկայ, վասն որոյ ի Թօխատն ուլ է յուղարկեալ պարտիք նմա գրել և իմանալ և ազդ առնել մեզ: Եւ թէ Ֆօքչանցի մինն ի յուկտաւորացն մահտեսի Աստուածատուր անուն, էտ մեզ աստ երկու Հարիւր ղուռուշ, որ գայ ի տեղդ առնու, վասն որոյ և մէք թուղթ գրեալ էտուք դմա ի վերայ ձեր, ուրեմն ի ինդրէն նորա զ200 ղուռուշ չէջար դրամն տաջի՛ք և զթուղթն մեր զաւհիրայ առնել տուեալ իւրն և առեալ դարձուսցի՛ք առ մեզ և ի դաւթարին ձերում գրեսցի՛ք: Իսկ և ի յունիսի 13 առ ոմանս իշխանս տեղւոյդ և առ պարոն Գասպարդ թուղթս գրեցաք նոցին պատասխանուոյն նայիմք, զորս անյապաղ յղեսցի՛ք:

Գրեցաւ յամնոյս Թ. (9):

520թ

1407* **Ի Թիֆլիզ** - Թուղթ ի Թիֆլիզ առ տեր Յովհաննէն, ի պատասխանի թղթոյն ի յունիսի ԺԹ. (19) գրեցելոյ. միամտութիւն վասն տեր Ղազարի յղեալ ընծային, թէ էհաս ձեռամբ թղթաբեր Պապային: Եւ թէ դու այժմ ծանուցես նմա զՀասանիւն մինչև յետոյ մէք ևս գրեսցուք: Եւ թէ զգուզէ՛թ և զբաւոսասն ևս յուղարկեսցես որպէս խոստացեալ էիր: Եւ թէ Ալէքսան վարդապետին

գրեալ էմք Աղալոյեան Գեօրկինին և այժմ քեզ գրեմք, զի ուր և իցէ զայս թուղթ մեր ցուցեալ նմա՝ ասասցես շուտով դառնալ սուրբ Աջուխ Հանդերձ:

Գրեցաւ յամնոյս ԺԲ. (12):

^{1408*} **Իյիզմիր** - Թուղթ իյիզմիր առ Ապրոյեան Մարգար աղայն, ի պատասխանի թղթոյն յապրիլի 21 գրելոց վասն ցաւա-
հար եղբօրն իւրոյ՝ Մատթէոս աղային, զոր յուղարկեալ էր ի Սուրբ Աթոռս յուխտ և յերկրպագութիւն: Տէս ի մեծ տետեր յերեսն 2319:

Գրեցաւ յամնոյս ԺԲ. (12):

^{1409*} **Փոսուկայ մի առ սա**, թէ յորժամ Մատթէոս եղբայրն քո էհաս ի Սուրբ Աթոռս, շուտով բերեալ առ մեզ աջ տուած, ապա ձեռամբ Պետրոսին յաւուր պատարագամատուցութեան մերոյ, Բ. (2) Պօլոյ ոսկի ժամուց նուիրեաց և Չ. (6) ղուռուշ ևս մոմագին ետուն և ի Համբոյր սրբութեանցն արկին և յետոյ յաւուր դռնա-
բացէի սրբոյ եկեղեցոյ մինչ զՍուրբ Աստուածածնի սեղանի վա-
րագոյրն քարշեաց յետս, խոստացաւ 50 ոսկի, որ է 250 ղուռուշ և ապա 18 ղուռուշ տուաք, զորս ետուն Աւետարան և Նարեկ կար-
դացօղ եպիսկոպոսացն, 165 ղուռուշ ևս եկեղեցոյ պաշտամանցն և Հացկերութեան խարճն եղև: 25 ղուռուշ ևս խոստացաւ Սրբոյն Հովիսիմեայ վանիցն ի բանալ զդուռն, որոց գումարն է 458 ղու-
ռուշ և ապա 300 ղուռուշ ևս տուաք ի յուղևորիլն աստի առ Սուրբ Կարապետ: Բ. - ուց (2) ղալամից գումարն է 758 ղուռուշ: Եւ դար-
ձեալ դէպ եղև մեզ Հասու լինիլ խարճիցն, զոր պարոն Պետրոսն ի Թօխաթու մինչև ցաստ արարեալ էր և տեսեալ զղաւթարն Հասու եղաք, որ ստուգիւ եղեալ էր 526 ղուռուշ և 23 փարայ:

¹⁴¹⁰ **ԻյԱդրանաս** - Թուղթ իյԱդրանաս առ մահտեսի Գէորգն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի մարտի ԻԳ. (23). ՀնորՀա-
կալութիւն վասն Չաքարիայի պարտոն Հատուցանելոյն և վասն յղեալ Չ. (6) զարմահպուկ ոսկի ժամուցին, և միսիթարութիւն վասն իւրեանց նեղութեանն: Եւ վասն տէր Կարապետի թղթոցն, թէ յղեալ էմք ի մարտի Չ. (6): Եւ այլ ինչ բանք:

Ողջոյն որդւոյն իւրոյ՝ մահտեսի Ալէքսան Չէլէպոյն և փե-
սային՝ պարոն Գալատին և մահտեսի Ստեփաննոս ամիրային և որդւոյն, և Յովաննէս ամիրայի որդւոցն՝ մահտեսի Գրիգոր և մահտեսի Մկրտիչ ամիրայիցն: Տէս ի փոքր տետեր յեր[եա] Նիթ. (429):

[Գրեցաւ յամնոյս] ԺԲ. (12)²⁴:

²²⁴ Տէս նաև ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 69աբ:

Օրհնութեան եւ շնորհակալութեան թուղթ պարոն Առաքելին եւ մայր Իսկուհուն (Կ. Պօլիս) «վասն արծաթեայ ոսկեգօծ սկզոյն, զոր տուեալ էին ի յիշատակ Սրբոյ Աթոռոյս» (520բ, Ա./4):

1411* Կոնդակ ժողովարարութեան ի վերայ քանեաց տեղեաց, այսինքն՝ ի Բայազիտ, ի Կարին, ի Թօխասթ, ի յԱմասիա և ի Մարսվան, որք տուան առ քարաՀատ վանցի Պօղոսն, որ գնայր ի Պօլիս առ բժիշկս՝ վասն առողջութեան անձինն, որ տամլայի ցաւովք ի մի կողմն թուլացեալ էր:

Գրեցաւ յամնոյս ԺԵ. (15):

1412* Ի Կարին - Թուղթ ի Կարին առ Գօրոյեան մահտեսի Սերօբն, ի պատասխանի ի մայիսի Ե. (5) գրեալ թղթոյն և վասն բանի պարոն Հայրապետին: Եւ թէ յաղագս Մուղամեան Հանգուցեալ Յակոբ վարդապետի ճԾ. (150) ղուռուշ առնելեացն ծանուցեալ էիր, թէ այն ձեր եկեան Հանգուցեալ Աւետիքին պարտքն է, զոր յետ նորա մինչ Յակոբ վարդապետն ի ձէնջ խնդրեալ էր, դուք ևս կամեցեալ էիք Հատուցանել, որ և յառաջագոյն փօլիցագրութեամբ նորա, տուեալ էիք Յովհաննէս վարդապետին Խ. (40) ղուռուշ: Եւ ապա Ա. (1) Հօխայ ղալայ և նշատիր էիք յուղարկեալ ըստ խնդրոյ նորին, որոյ գինն է Ե. (5) ղուռուշ: Նաև վասն Հանգուցեալ մոմճի Թաթեոսի՝ ձեզ վճարելի գօտուց գնոյն, զոր գրեալ էիք Հասուցանել նմա, յայնմ կողմանէ ևս էՀաս ՉԱ. (81) ղուռուշ, որոց ջամն է ճԻԶ. (126) ղուռուշ և առ ի լրանալ ճԾ. (150) ղուռուշին, որ գոյ ԻԴ. (24) ղուռուշ, որոյ աղագաւ Հարցեալ էիր իբր, զի որո՞ւմ և կամիցիմք, Հասուս/521ա/ցես, զայդ ևս մեզ Հասեալ գիտասցուք, որոյ աղագաւ շնորհակալ եմք զքէն:

Գրեցաւ յամնոյս ԺԵ. (15)²²⁵:

Թուղթք ի յԻզմիր, ի Մեծս Պօլիս և ի վան

521ա

1413 Ի Զմիւռնիա - Թուղթ ի Զմիւռնիայ առ Կեօրտէզցի պարոն Գէորգն Յարութիւնեանն, ի պատասխանի թղթոյն, որ վասն փարաքարցի տեր Նիկողայոս երիցու ընտանեացն և շնորհակալութիւն վասն Մարտիրոս վարդապետին: Տես ի փոքր տե[տեր] ՇԺԼ. (518)²²⁶:

Շնորհակալագիր մահտեսի Յովհաննէս Ասանեանին (Կ. Պօլիս) «վասն յղեալ զմի ոսկի Պօլսոյ լուսագնին», ինչպէս նաև թղթեր՝ Աբրահամ վարդապետ

²²⁵ Գորոյան մահտեսի Սերօբին՝ հանգուցյալ Հակոբ վարդապետի կապակցութեամբ հղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 670:

²²⁶ Գևորգ Հարությունյանին (Զմյուռնիա) իր և փարաքարցի տեր Նիկողայոսի միջև եղած փոխհարաբերությունների, ինչպես նաև Մարտիրոս վարդապետին հղված շնորհակալագրի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 663, հմմտ. ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 111բ-2ա:

Տաթեացուն, որն իբրեւ նուիրակ ուղևորուել էր Վան (521ա, Ա./2), փոքր կոնդակ Բերկրիի և շրջակա գյուղերի ժողովրդին «ի Հանգուցեալ Աբրահամ վարդապետէն թարց նուիրակելոյ» (Ա./3):

1414* **Ի Վան** - Թուղթ առ սրբոյ Երուսաղէմի նուիրակ Սիմէօն վարդապետն, թէ յառաջագոյն, որ դու և Ախիջանն թուղթս էիք գրեալ վանն մահուան Աբրահամ վարդապետին և զդէմէրն մնացորդ կայիցն յղեալ, մեք ևս շուտով գրեցաք զպատասխանիսն առ նա և առ քեզ, զի շուտով յղէիք զիրսն: Բայց մինչ յերկար ժամանակս պատասխանի ոչ ընկալաք, ի մայիսի ԺԴ. (14) թուղթ գրեցաք առ Ախիջանն և նա գրեալ է մեզ, թէ վանն ճանապարհի վտանգիցն չկարացաք յղել, և նուիրակ էր իննդրեալ: Եւ ահա նուիրակ յղեցաք զմիւս Աբրահամ վարդապետն և զձեր յղեալ դէմէրի օրինակն ևս առեալ յղեցաք և Ախիջանին և տէր Յակոբին գրեցաք: Քեզ ևս գրեմք, զայդ իրսն ըստ սիահւոյն յանձնեսցիք նուիրակին:

Գրեցաւ յամնոյս ԻԲ. (22):

Նուիրակական կոնդակ՝ Հասցեագրուած Վանայ երկրի Հայովթեանը (Նահանգի Բերկրի եւ ի գիւղորայսդ Մահմուտանու եւ յայլ ինչ շէս օրհնեցելոյ երկրիդ Վանայ), որով յայտնուած է նրանց, թէ որպէս նուիրակ 1794 թ. ուղարկուած տէր Աբրահամ եպիսկոպոսի փոխարէն, որը մահացել էր, ուղարկուած է զտէր Աբրահամ Հանճարափայլ վարդապետն սրբալոյս մեռոնաւ եւ օրհնովթեան կոնդակաւ: Վերջինիս յանձնարարուած է Հաւաքել նուիրակական արդիւնքը եւ բաշխել մեռոնը (1798 թ., 22 յուլիսի - ՄՄ ԿԴ թղթ. 243, վավ. 84):

1415 **Ի Վան** - Թուղթ ի Վան առ Ախիջան աղայն ի Վան, ի պատասխանի թղթոյն. ցաւակցովթեան բան վանն Հիւանդութեան, և յանձնարարութիւն վանն նոր նուիրակին, և յաղագս կայից Հանգուցեալ նուիրակ Աբրահամ վարդապետին պատուէր, զի ըստ իւրեանց գրեալ և յղեալ դէմէրին, յանձնեսցեն նմա՝ յղել ի Սուրբ Աթոռս: Տէ ս մեծ տե[տեր] յ[երես] 2415:

1416* Թուղթ ի Վան առ տէր Յակոբն, ի փոխադարձ թղթոյն նորա, որ առ Աստուածատուր վարդապետն գրեալ էր վանն Ախիջանի Հիւանդութեանն և վանն մեր յառաջագոյն յղեալ ժամացուցին և թղթոյն առ փաշայն Հասանելոյն: Սմա ևս գրեցաւ վանն նուիրակին յանձնարարութիւն և թէ զդէմէրն մնացեալ կայից Հանգուցեալ Աբրահամ նուիրակին, զոր դու էիր գրեալ, ահա զօրինակն ետուք նուիրակիդ, որպէս քաջ տեղեակ ես ամենայնին: Հոգ տարջիք Համեմատ դէմէրին զամենայն իրսն յանձնել նուիրակիդ և վանն Բաղդատու թղթոյն:

Գրեցաւ յամնոյն ԻԲ. (22):

1417* **Ի Վան** - Թուղթ ի Վան առ Յակոբջան աղայն մաշտեսի Գասպարեան, ի պատասխանի Բ. (2) Թղթոց նորա, որոց առաջինն ի Խօյու էր գրեալ և զերկրորդն ի Վանայ. շնորհակալութիւն վանն լաւութեանցն առ շահին ընծայատար Յովհաննէս վարդապետն, որում ի Հիւանդութեանն օգնեալ էր: Եւ վանն Աղբակու առաջնորդ Խաչատուր վարդապետին ևս մինչ յանձն առեալ էր մուղայէթ լինիլ նմա: Իսկ վանն ի Խօյու խոյս տալոյն ի Վան և Սուլէյման սարդարի գալոյն ի Խօյ և իւր տարակուսանցն տրտմակցութիւն:

Եւ թէ Խօյայ նուիրակն պատրաստել էաք յուղարկել և արգելաւ վանն փոթորկացն, ապա այժմ զՎանայ նուիրակն առաքեցաք զԱբրահամ վարդապետն: Եւ երկբայս լինելով թէ ի Վան իցես, եթէ ի Խօյ, զայս թուղթ գրեցաք կամ անդ քեզ Հասցի, կամ անդ: Եւս ծանուցումն, թէ Սուլէյման սարդարն մեզ թուղթ էր գրեալ և ինդրեալ և մեք զընծայ յղեցաք՝ ձեռամբ մեր միրզային և Յովհաննէս վարդապետի ուրումն, եթէ ի Խօյ իցես, թերևս Հանդիպեսցին քեզ և ահա այսպէս ի նեղութեան կամք յամենայն պահանջողաց: Եւ թէ վանն քահանայի միոյ, որ զՄաշտոց մի էիր ինդրեալ, ահա յղեցաք ձեռամբ նուիրակիդ: Եւ թէ ձեռամբ Խաչատուր պետին թուղթ և ծրարաւ ամանաթ էաք յղեալ, որ Հասուցանէիր ի Թարվէզ առ Հանգուցեալ տէր Յովսէփի եղբարսն և որդիսն, ի թուղթսն քո դու բան չէիր յիշեալ և Յովհաննէս վարդապետն մեր ևս ամենևին տեղեկութիւն չունէր: Թարվիզու ևս գիր ոչ առնումք վանն ճանապարհաց խառնականութեանց, վանն որոյ տարակուսանք է մեզ, թէ այն ամանաթն քեզ էհաս և դու յուղարկեցե՞ր ի Թարվէզ, եթէ որպէս եղև, գրեսցես մեզ, զի լուծցին տարակուսանքն մեր:

Ողջոյն եղբօրն՝ մաշտեսի Փիրիջանին և եղբօրորդոյն՝ Կարապետին և գրիչ Ղազարին:

[Գրեցաւ] յամնոյս ԻԲ. (22):

Նամակ մաշտեսի Պարիկեան Սահակին եւ եղբորը «վանն նուիրակ Աբրահամ վարդապետին» (521բ, Ա./1):

521բ

1418* **Ի Կարին** - Փոլիցագիր մի ի Կարին ի վերայ պարոն Հայրապետին և պարոն Գասպարին, եթէ ագուլեցի ի Շուշի բնակեալ պարոն Առաքելի որդի պարոն Յակոբն ետ մեզ աստ Հազար երեք Հարիւր դուռուշ կէշար դրամ, որ ի գալն ինքեան կամ իւր օրտնին և ի ցուցանեալն զայս փոլիցագիրս մեր, զայն վերոյ յիշեալ դրամն ԺԱ. (11) օր վատային ի յիզմիրու եկեալ փօլիցայէն տաջիք և զթուղթս զաշիրայ առնել տուեալ առ մեզ դարձուսջիք:

Գրեցաւ յամնոյս ի ԻԵ. (25):

¹⁴¹⁹ **Ի Հուլաւեր - Թուղթի Ի Հուլաւեր առ մէջիք Սարգիսն** ի յարգելումն խորհրդոյն, որ յետ եղբօրն իւրոյ՝ Վանական վարդապետի վախճանման, կամեր զոմն եղբօրորդի իւր ձեռնադրել տալ ի տեղակալ նմին: Իսկ ժողովուրդքն բազմակնիք թղթով ինդրեալ էին ի սրբազանէն, թէ մէք ի վիճակի Սրբոյ Աթոռոյդ բնակեալ գոլով, դուք Հովուեսջի՛ք զմեզ:

Գրեցաւ յամնոյս ի ԻԶ. (26)²²⁷:

¹⁴²⁰ **Թուղթ առ Հուլաւերու ժողովրդեանն կէսն**, որք յառաջ Հովուէին ի Վանական վարդապետէն և այժմ, յետ մեռանելոյն նորա, բազմակնիք թղթով ինդրեալ էին ի Սրբոյ Աթոռոյս Հովուիլ: Վասն որոյ և սրբազանն Հաճեցեալ գրեաց նոցա զայս թուղթ, իսկ զի այժմ վասն զանազան դիպուածոց թիֆլիզու բնակիչքն ցրուեալք կային և ոչ կայր անդ և Սրբոյ Աթոռոյս առաջնորդ: Վասն որոյ սոցա զտէր Խաչատուրն իւրեանց վէքիլ կարգեաց, զի նա մուղայէթ լիցի ըստ Հոգևորական պաշտանութեանն, մինչև յետոյ ի յառաքիլ աստի առաջնորդի, Հաստատնապէս տնօրինեսցի որպիսաբար պաշտպանութիւնն²²⁸:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2320-21

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 521բ

1798 թ., օգոստոս - **Թուղթք գրեալք ի Կարին**

^{1421*} **Ի Կարին - Փօլիցագիր ի վերայ պարոն Հայրապետին և պարոն Գասպարին**, թէ Քեալ Յովհաննէսի որդի տիրացու Յարութիւնն ետ մեզ Հազար ղուռուշ կէշէր դրամ, որ ի գալն յայդր յիզմիրու եկեալ փօլիցայէն տաջի՛ք և զթուղթս զաշիրայ առնել տուեալ նմա, առ մեզ դարձուսջի՛ք:

^{1422*} **Փօլիցագիր մի ևս ի վերայ պարոն Հայրապետին և պարոն Գասպարին**, եթէ ի յերեւան բնակեալ Հէքիմ մահտեսի Հայրապետն ետ մեզ աստ ԲՌԵՃ. (2500) ղուռուշ, որ ի գալն յայդր առցէ ի ձէսջ, վասն որոյ ի բերելն և ի ցուցանելն զթուղթս մեր վերոյ յիշեալ ԲՌԵՃ. (2500) ղուռուշ կէշար դրամն տաջի՛ք յիզմիրու եկեալ փօլիցայէն և զայս թուղթս զաշիրայ առնել տուեալ իւրն, առ մեզ դարձուսջի՛ք:

Գրեցաւ յամնոյս ի մուսն:

²²⁷ Շուկավերի մելիք Սարգսին՝ եղբոր՝ Վանական վարդապետի վախճանից հետո եղբրորդուն տեղակալ նշանակելու արգելքի մասին նամակի ամբողջական հրատարակությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 670-672, հմմտ. ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 70աբ:

²²⁸ Համառոտ տարբերակը տե՛ս ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 521բ, լուսանցում:

Թուղթք Ի յԻզմիր, Ի Կարին և Ի Բայազիտ

¹⁴²³ **Ի Չմիւռնիա** - Թուղթ Ի Չմիւռնիա առ Աբրոյեան Մարգար աղայն, Ի պատասխանի թղթոց նորա Ի յունւ[արի] 4 և Ի յապր[իլի] 6 գրեցելոց՝ յաղագս իրաց խռովութեանն իւրեանց: Եւ յիշումն յետին թղթոյն յապրիլի 21 գրեցելոյ ընդ եղբօրն իւրոյ, և մեր զպատասխանիս ընդ նմին գրելոյն. շնորհակալութիւն վասն վերանորոգման դարոցին և շնորհակալութիւն վասն զմի վերարկուացու իկլիզի չուխային և զմի դեղնչոյ տփոյն և զԲ. (2), թէ նէրքէիւ քարօթին յղելոյ:

Ողջոյն եղբարցն՝ Մատթէոսին և Յակոբին և որդւոյն իւրոյ Աստուածատուրին: Տէս Ի մեծ տետեր յերեան 2321:

Գրեցաւ յամնոյս Ի ԻԳ. (23):

¹⁴²⁴ **1798 թ., 28 օգոստոսի** - Թուղթ Երկրորդ առ Չմիւռնիոյ նուիրակ և առաջնորդ Մարտիրոս վարդապետն, Ի պատասխանի թղթոյ նորա Ի մարտի ԻԲ. (22) գրեցելոյ, յաղագս ժողովրդեանն շնորհակալութեան և վասն գործոյն որպիսութեան և փօլիցայ առնելոյն:

Յորմէ քրիստոսաւանդ ողջունիւ և սիրով Հայրականաւ և առատագեղ օրհնութեամբ և միաճնաէջ սրբոյ տեղւոյս պաշտանողական շնորհիւ ծանիր սիրելի և հոգևոր որդի մեր և Հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս՝ Մարտիրոս շնորհափայլ և բարեմիտ վարդապետ: Չի Ի մարտի 22 գրեալ թուղթքո էՀաս առ մեզ Ի յունիսի 19, և իմացաք զամենայն գրեալսդ: Եւ նախ զի ծանուցեալ էիր զանցելոյ ամի սեպտեմբերի Ի 15 գրեալ կոնդակացն և թղթոցն մերոց Հասանիլն առքեզ Ի թեմնն, միամտեցաք: Եւ զի Ի դառնալդ Ի Չմիւռնիա ընթեռնուլ տուեալ էիր զկոնդակն յեկեղեցոջն, և զմիւս թուղթն ևս յեպիսկոպոսարանիդ, և լսօղջն շնորհակալութեամբ ընկալեալ էին, ուրախացաք թէպէտ, բայց յայնժամ էր կատարելապէս ուրախանալի, յորժամ ըստ պատուիրագրութեանն մերում նախ զերկոսին կողմոնս տարածայնելոցն Հաշտեցուցեալ Համաձայնեցուցանէիր, և յետոյ ընթեռնուլ տայիր զկոնդակն, ապա իցէր թէ՛ նոքա ևս գային յեպիսկոպոսարանն, և գրուածքն մեր արդիւնաւոր լինէր:

Այլ ոչ փոյթ տանելով գրուածոցն մերոց, թուի թէ՛նոյն տարածայնութիւնն նոյնպէս գոյ: Չոր Աստուած փոխարկեսցէ Ի Համաձայնութիւն սիրով և Հաշտութեամբ:

Երկրորդ՝ գրեալ էիր զաւարտելդ զգործդ Ի կողմանսն Այտնու, և զուրեք ուրեք գտանեցեալ խռովութիւնսն խաղաղացուցանելդ, և պատուով ընկալեալ լինիլդ յամենեցունց և այնպէս արդեամբք դառնալդ: Ընդ այն յիրաւի ուրախութիւն եղև մեզ, օրհնեսցէ Տէր Աստուած զժողովուրդն և պաշտանեսցէ յամենայն փորձութեանց, և զքեզ վարձատրեսցէ և զօրացուցէ:

Երրորդ՝ ծանուցեալ էիր Համառօտ զգօրանալոյ գաղղիաց-
ւոցն, և զալէկոծութենէ Եւրոպիոյ, զտիրութիւն վաճառականացն
յաղագս պակասութեան վաճառաց, առ որս և մէք տրտմեցաք:
Յայցեմք յԱստուծոյ, զի նա ինքն իւր անհուն ողորմութեամբն
խաղաղութիւն շնորհեսցէ նոցա և ամենայն աշխարհի, և մերս
վրդովեալ կողմանց: Այլ քեզ Հարկ լիցի լաւապէս իմն տեղեկանալ
զորպիսութեանցն գաղղիացւոց և երկարապէս գրել մեզ, թէ յոր-
պիսի՝ կրօնս են, և ընդ գերմնացւոց կայսերն զի՞նչ արարին, և
զայլն ամենայն:

Չորրորդ՝ գրեալ էիր վասն ոչ գտանելոյ բսկուաստի ի կող-
մոնսդ և ոչ Մնատերդամ: Եւ վասն Գալուստ վարդապետի քեզ
գրելոյն, թէ ի Պօլիսս այլ իմն տեսակ չուխայ կայ, և քո զերկուս
ժամացոյցս յուղարկելոյն առ նա և այլն: Առ որս ծանիր, զի Գա-
լուստ վարդապետն մեզ ևս էր գրեալ վասն այն չուխային, բայց
մէք գրեցաք նմա չառնուլ զի յուսամք ի Հիւսիսոյ կողմանէն ըն-
դունելոյ կտոր մի, զոր տէր Ղազարն է գտեալ և յղեալ: Եւ Գա-
լուստ վարդապետի յուղարկեալ ժամացոյցքն և այլ իրքն Հասին
առ մեզ: Բայց ընդ ամբողջից և պիտանեացն արատաւորք և ան-
պիտանք խառն: Իսկ զքոյդ առ ինքն Հարուցեալ Բ. (2) ժամա-
ցոյցն թուի, թէ դեռ չէ յուղարկեալ մեզ, զի ի սիւստն նորա նշա-
նակութիւն ոչ գոյ բնաւ: Եւ յաղագս գնոցն առաւելութեան չէ այն-
քան Հոգ, եթէ լաւք լինիցին: Բայց զոր ինչ յղեալ էր, գրեթէ մինչև
այժմ վատնեցան վասն յաճախելոյ պաշտանջողացն: Ուստի ահա թէ
ժամացուցաց, թէ ավժասից և չուխայից, և թէ այլ իրաց սիւստի
գրեալ էտուք ընդ թղթոյս, զորս ըստ պարագայիցն ընտրութեամբ
առնուլ Հոգասացես և շուտով յղեսցես:

Հինգերորդ՝ ծանուցեալ էիր զուրթն Հօխայ կառօթայ առ-
նուլդ և յղելդ, և զգնոցն ի Սաւալանեան Յովաննէս աղայի որդի
պարոն Եսայիէն վճարիլն, որ և թուղթ էր գրեալ մեզ, և զտուսի մի
ևս էր նշանակեալ թէ յղեցի: Եւ զի թէ առ նա և թէ առ Չաքարիա
աղայն և Ստեփաննոս աղայն, և առ այլս ինդրեալ էիր թուղթս
գրել, ահա գրեցաք: Առ պարոն Եսային, ի պատասխանի թղթոյն,
և ի մխիթարութիւն վասն մօրն և քեռն, և շնորհակալութիւն վասն
ընծայիցն, և Հօրն և Հօրեղբարցն ողջոյն: Առ Չաքարիա աղայն՝
մխիթարութիւն վասն կենակցին, և ուրախակցութիւն յառաջա-
դիմութեանն, շնորհակալութիւն վասն քոյ, և պատուէր վասն Հաշ-
տութեան: Առ Ստեփաննոս աղայն, ի պատասխանի թղթոյն, և
վասն ընծայիցն և այլն նոյնպէս, և մաշտեսի Հայ|2418|րապետին
և եղբորցն իւրոց ողջոյն:

Կէօրտէզցի Գէորգ աղայն ևս որովհետև թուղթ էր գրեալ
մեզ վասն փարաքարցի տէր Նիկողայոսի ընտանեացն, կարծելով
թէ մերովս Հրամանաւ կարելի է ելանել նոցա յերկրէս և գալ յայդ-
կոյս: Նորին թղթոյ ևս պատասխանի գրելով վասն քո շնորհակա-

լովժինն արարաք, և վասն Հաշտութեան և միաբանութեան յորդորումն: Եւ զի տէր Նիկողայոսի ընտանեացն չէր Հնար այժմոյս ելանելոյ, զի եղբայրն ողորմելի ոմն է: Ըստ այնմ բանս գրեցաք, դու ևս վկայեսցես ճշմարտութեանն:

Թուղթ մի ևս առ Պալաթեան պարոն Յարովժինն գրեցաք օրհնութիւն, և պատուէր վասն Հաշտութեան: Չերկուս թուղթս ևս առ Մարգար աղայն և Առաքել աղայն գրեցաք, ի պատասխանի թղթոցն իւրեանց: Չորս տացես իւրաքանչիւրոցն ի մէջ ողջոյն և օրհնութիւն տալով, և դու փոյթ կանչիցես և ջանս դիցես ի խաղաղութիւն և ի Հաշտութիւն Համոզելոյ զդոսս, զի չէ ինչ շնորհ զմի կողմն յարգել և զմիւս թողուլ, այլ գործ է գերկոսին կողմունան միաբանեցուցանել և անկեղծ ակնարկութեամբ զամենեսեան շահել իբրև զմի Հօտ և զմի ժողովուրդ Տեան: Առ այս աստանօր այսչափ բաւ:

Վեցերորդ՝ գրեալ էիր զՀինգ Հազար մարչիլ փօլիցայ առնելը Հասանիլ ի Կարին պարոն Հայրապետին, զոր և նա գրեալ ծանուցեալ էր մեզ: Վասն որոյ ահա զղավզ մի գրեալ ի վերայ քո, յղեցաք ի ձեռս պարոն Հայրապետին, և իւր գործակից և եղբօրորդի պարոն Գասպարին՝ Հասուցանել առ քեզ ի միամտութիւն: Եւ շնորհակալ եմք զսիրելի որդոյդ, որում Տէր տացէ կարողութիւն և զօրութիւն և շնորհք Սրբոյ Աթոռոյս եղիցի քեզ Հովանի և պահապան:

Իսկ ըստ գրութեան բանիս գիտասցես, զի որովհետև պարոն Հայրապետն ձերացեալ է և յաչացն յոյժ տկար, վասն որոյ զեղբօր որդին իւր զպարոն Գասպարն գործակից եմք կարգեալ նմա, ուրեմն զոր ինչ ըստ Սրբոյ Աթոռոյս բանք Հանդիպեսցին երկոցունցն ի միասին գրեսցես, և զյուզարկելիսդ առ երկոսինն յղեսցես: Բայց որ գրեալ էիր, թէ 340 մարչիլ ևս ի Կարնոյ նուիրակ Գրիգոր վարդապետէն իցէ Հասանելոց, դեռ բան չէն գրեալ մեզ նա, և պարոն Հայրապետն և Գասպարն, երբ գրիցեն, յետոյ ևս յայլում դավզի նշանակեսցուք:

Այլ և ի նշան որդիական սիրոյդ, որ յանուն մեր զմի տօնուրդ ինկլիզի չուխայ ես յղեալ, թէպէտ դեռ ի Կարին է, այլ առ մեզ Հասեալ վարկանելով Հայրական օրհնութեամբ օրհնեցաք և օրհնեմք զսիրելի որդիդ զփոխարէնն առաւելութեամբ Հատուցէ քեզ ըստ Հոգւոյդ և ըստ մարմնոյդ:

Բայց զորպիսութեանց մերոց և զանցից կողմանցս այսպէս գիտեա: Յառաջում թղթոցն մերում ծանուցաք քեզ յետ ներքինւոյ բարձմանն զԲաբախանի շահ կոչիլն և զմեր խանի արձակելն և զայն: Իսկ յայնմ միջոցի, որ դեռ խանն ի Խոյ էր, մուղանցիք զՕշականու Գետառ կոչեցեալ անդաստանն յափշտակեսցին սուտ իմն զապալայիս, և ի յուզարկել մեր անդ զՅակոբ վարդապետն և զայլս ոմանս թղթով շեխալամին, խօսիլ ընդ մուղնեցւոցն, նենգաւորքն այնք, առերերսս կեղծաւորեալք և ի ներքուստ ոճիրս

խորհելով, ի գիշերի գաղտագողի մտեալ էին ի դղեակն Օշակա-
նու, և զՅակոբ վարդապետն վիրաւորեալ զոր բերել ետուք աստ,
և յետ աւուրց ինչ վախճանեցաւ: Ի նոյն աւուրսն և խանն եկն, առ
որ ի գնալն մեր ի տեսութիւն, դատաստան ինդրեցաք, և արիւ-
նապարտքն ուրաստ եղեն: Վերջապէս ստուգեցաք ի վերայ նոցա
և զկողոպուտն առաք և խանն միջնորդեալ զխիլայս և զոմանս իրս
ետ, և զԳետառն նոր Հաստատոն Հիւճճէթիւ դարձուցաք առ
Սուրբ Աթոռս: Այնուհետև քանի եպիսկոպոսք պէսպէս Հիւանդու-
թեամբ վախճանեցան և ածին մեզ զտրտմութիւն ի վերայ
տրտմութեանց, որոց երևելիք՝ Ղունկիանոս և Ներսէս վարդա-
պետքն և զայլն ի թղթոց մերայնոց ոռնիս իմանալ:

Ի յայն տխրութիւնս գողով մեր, Հարկեցեալ եղաք ի խանէն
մերմէ զընծայս յղել առ շահս, զոր և յղեցաք ձեռամբ Յովաննէս
վարդապետին, որ յարգանօք ընդունեցեալ՝ ֆերմանօք և խիլա-
յիւք դարձաւ: Բայց ոչինչ վայելեալ զօգտութիւն շահ գողոյ նորին,
Ջաֆարղուլի խանն ապստամբեցաւ ի նմանէ, Հանդերձ ոմամբ ի
շրջակայիցն, և զի մեր խանն սրտի մտօք ծառայէր շահին՝ ընդդէմ
Ջաֆարղուլոյն, վասն որոյ կասկածելով ի վաղեմի թշնամութենէ
նորին, թէ որքան վրդովեցաւ երկիրս, ոչ երկարեմք աստ: Այլ ի յու-
նիսի ամենանն |2419| Սուլէյման սարտարն և Հիւսէին Ղուլի խանն
եկին ի Խօյ, որոց զկնի և ինքն շահս, յորոց զանգիտեալ Ջաֆա-
րայ, ամենայն աղիսիւքն և քանի Հազար տամբք խոյս ետ ի սաՀ-
մանս Վանայ, իսկ Երևանու խանն գնաց առ սարտարն և շահս, և
ոչ բազում աւուրց անցեալ, ի Թէհրանու ազդ եղև շահին, թէ եղ-
բայրն ապստամբեալ է ի Շիրազ, և սարտարն եկաց զայլ ևս
աւուրս ընդ մէջ Խօյու և Թարվիզու, և թուղթ գրեաց մեզ, և Հարկ
եղև մեզ ընծայ յղել նմա ևս:

Եւ խանն մեր, որ զՀասան խանն դրամով առեալ էր ի շահէն,
ի յաչացն զրկեալ, այնպէս յղեաց յԵրևան: Ապա շահս նեղեալ ի
կողմանէ եղբօրն և ի զօրացն պակասեալ, որպէս ասեն, ինդրեալ
էր զՍուլէյման սարտարն զօգնութիւն իւր, և նա զմեր խանն ար-
ձակեալ էր յայսկոյս, տալով նմա և զբերդն Երևանու, և ինքն ուղ-
ևորեալ առ շահս: Իբրև խանն էհաս յԵրևան, բերդապահքն ելին
ի բերդէն, և նա մտեալ նստաւ: Յետ գնալոյ սարտարին յայնկոյս,
Ջաֆարղուլի խանն ի թուրքաց և քրտաց զօրս ժողովեալ եկեալ է
ի Խօյ ի վերայ եղբօրն իւրոյ՝ Հիւսէին խանին և զբերդն պաշա-
րեալ: Եւ զՀիւսէին խանն զօգնութիւն էր ինդրեալ ի խանէն մեր-
մէ: Վասն որոյ և սա յամենայն բնակչաց երկրիս զօրաժողով արա-
րեալ, գնայ յօգնութիւն նմա ընդդէմ Ջաֆարղուլոյն:

Արդ, յայսցանէ եղելութեանց կարես իմանալ զբազմապատիկ
վնասս թշուառալից երկրացս, և զտառապանաց բնակչացն, զմերս
անմիջոց նեղսակրութիւն, որ կամք մնամք միայն Աստուծոյ այցե-
լութեանն և բարեգործութեանն: Ուրեմն, սիրելի որդիդ մեր, զօրհ-

նեցելոյ քաղաքիդ մերայնոց ծանրալուր խռովութիւնն բառնալ ջանարով, և որդիական սիրով և որպիսայայտ գրով անմխիթարութեանս մերում դիւր մատուցանելով, ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԽԷ. (1798) թուոջս և ի յօգոստոսի ԻԳ. (23) ի Սուրբ Աթոռս Էջմիածին²²⁹:

Սիրով մեծաւ ողջոյն և օրհնութիւնս առաքելք սիրելեաց մերոց և Հարազատ որդւոց սրբոյ Գաշիս՝ բարեպաշտից, մեծաշաւատից և խոհականաց՝ մահտեսի Կարապետ աղային Չելիկեան, Երեմիա աղային Վիրապեան, պարոն Գէորգին Հազվէքիլեան և մահտեսի Յովհաննէսի Եղովկացւոյ և այլ օրհնեալ իշխանաց և ժողովրդեանն աստուածախնամ քաղաքիդ: Որք և լիցին յանձնեցեալք ի ինամս Տեառն և պաշտանեցեալք ողորմութեամբ նորին՝ Հանդերձ ամենայն իրեանցայնովք. ամէն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2417-19

¹⁴²⁵ 1798 թ., 27 օգոստոսի - Թուղթ օրհնութեան ի վերայ պարոն Խաչիկին ի Նոր Նախիջևան, ձեռամբ որդւոյն նորա՝ տիրացու Մանուէլին, ըստ ինդրոյ իւրոյ:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 21ա

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 52ա

^{1426*} Փոստուլայ մի առ սա և միւսն առ Մարգար աղայն, որոց օրինակն կայ առ իս պաշեալ:

¹⁴²⁷ Թուղթ ի Չմիւռնիա առ պարոն Չաքարիայն ղալճի Մարգարեան. մխիթարութիւնս վասն կնոջս վախճանելոյ, և բանս վասն յառաջադիմութեանն և առ Սուրբ Աթոռս Հաւատարմութեանն, և պատուէր վասն Հանելոյ ի սրտէ զնշմարան խռովութեանն, զոր ունէին առ միմեանս:

¹⁴²⁸ Թուղթ ի Չմիւռնիա առ Ստեփաննոս աղայն Խաչատուրեան, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ և ի շնորհակալութիւնս վասն ընծայիցն յղելոյ, որ է մի օթոց կէօրտէզու, Գ. (3) թաշկինակ, մի դաստառակ և մի զոյգ բարձից երես և կրկին պատուէր վասն խաղաղասիրութեան, և յանձնարարութիւնս վասն նուիրակ Մարտիրոս վարդապետին: Տէ՛ս ի մեծ տե[տեր] յէ[րես] 2506:

¹⁴²⁹ Թուղթ ի Չմիւռնիա առ Աբրոյեան Առաքել աղայն, ի պատասխանի թղթոյն, որ վասն վիրաւորութեան իւրեանց ի մի-

²²⁹ Համառոտ տարբերակը տե՛ս ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 521բ, Ա./7:

մեանց, յորդորումն ի սէր և ի խաղաղութիւն²³⁰: Տէ՛ս ի փոքր տէ-
տեր յերեսն ՆԼԲ. (432):

^{1430*} Թուղթ ի Չմիւռնիա առ Ուլանեան պարոն Յովհան-
նէսի որդի պարոն Եսային, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ և ի
չնորհակալութիւն վասն յուղարկեալ զմի տփոյն և զուլծն փօքալ
քարօթ ընծայիցն:

Ողջոյն Հօրն Յովհաննէսին և Հօրեղբարցն՝ մահտեսի թօմա-
յին և պարոն Առաքելին:

¹⁴³¹ Թուղթ ի Չմիւռնիա առ պարոն Յարութիւնն Պալ-
թայեան, սէր և օրհնութիւն, և յորդորումն վասն բարձման խոռ-
վութեանն²³¹: Տէ՛ս ի մեծ տե[տեր] յեր[ես] ՇԻԱ. (521):

^{1432*} Ի Կարին - Թուղթ առ Կարնոյ նուիրակ Գրիգոր
վարդապետն, եթէ գրեցեալ թուղթ քո ի փետր[վարի] ԺԲ. (12)
էհաս առ մեզ ի յունիսի ԺԸ. (18), որով իմացաք զգրեալսդ: Գի-
տեցաք յաղագս կողմանցդ վրդովմանց և խոռվութեանցն և քոյդ
արգելեալ մնալոյն ի գործոյդ և Հետևաբար յաջորդիլն զխաղա-
ղութեան և զգնալն քոյ յաշխարովոյ և յայլ տեղիս: Իսկ վասն ժո-
ղովեցեալ արդեանցդ, որ գրեալ էիր, թէ ձեռամբ Հիւսիսեան մահ-
տեսի Գրիգորին յղեալ իցես ի Կարին առ վէրիլ պարոն Հայրա-
պետն, այնր աղագաս պարոն Հայրապետն և նորին գործակից
պարոն Գասպարն ևս գրեալ էին մեզ, թէ որպէս կնքեալ յուղար-
կեալ էս, այնպէս ամբողջ կնքովդ Հասեալ է առ ինքեանս: Եւ թէ
գրեալ էիր, որ ի Պոնտոս ժամանիլդ, անտի գրեսցես մեզ զՀետա-
կայ որպիսութիւնս քո, ընդ նմին և զորքանութիւն արդեանցդ Հա-
սուցելոց առ պարոն Հայրապետն, այնու և մեք սպասեաք մինչև
ցայդ թուղթ ընկալնուլ ի քէն, բայց չընկալաք: Եւ պատուէր, զի
զորպիսութիւն գործոյն և իւրն գրեսցէ մեզ ի գիտել: Յաղագս յա-
մելոյն գործոյ նուիրակութեանդ, որ գրեալ էիր զնորոգ նուիրակ
Առաքել, բայց ի վերայ նուիրակի նուիրակ յուղարկելն անվայելուչ
է և յորժամաւարտեսցես զգործդ և եկեսցես, յայնժամ և մեք զնո-
րոգ նուիրակն առաքեսցուք:

Ծանուցումն կողմանցս զորպիսութեան և շահին: Եւ թէ զոր
ինչ թուղթս գրիցես առ պարոն Հայրապետն, առ եղբօրորդի նո-
րին պարոն Գասպարին ի միասին գրեսցես, զի նա գործակից եմք
կարգեալ պարոն Հայրապետին:

Գրեցաւ յամնոյս ի ԻԳ. (23):

²³⁰ Աղա Առաքել Աբրոյանին (Զմյուռնիա) հղված սիրո և խաղաղության հորդոր-նամակի հա-
մառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 672:

²³¹ Պարոն Հարություն Պալթայանին (Զմյուռնիա) հղված նամակի համառոտագրությունը տե՛ս
ԴՀՊ, գիրք Դ., սյուն 663:

1433* **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն և պարոն [Գասպարն]. յիշումն քան զայս յառաջ գրեալ թղթոյն մերոյ ի յուլիսի Թ. -ին (9) և ծանուցումն ի յունիսի 3 և ի յուլիսի 9, գրեալ Բ. (2) թղթոցն առ մեզ Հասանելոյն՝ Հանդերձ ի յուլիսի 8 յատուկ գրեալ թղթովն պարոն Հայրապետին, յորում թէ իմացաք զգրեալսն ձեր: Եւ նախ վասն այս յետոյ նշանակեալ թղթոյս ասեմք, թէ նայիմք այն Գ. -ից (3) իշխանաց /522թ/ պատասխանագրութեանն և ձեզ Հարկեմք, զի փութացուցիք զնոսա շուտով գրել, զոր ինչ գրելոց իցեն ուղղութեամբ: Սակս Իզմիրու առաջնորդ Մարտիրոս վարդապետէն եկեալ 5000 ղուռուշ փօլիցային, զոր յիշեալ էիք, մեք որպէս ի յուլիսի Թ. (9) գրեալ էաք ձեզ, թէ ի յառնուլն ձեր ամբողջ պահեստիք ձեզ մօտ, որ տեղս փօլից ինդրօղք կան, յետ այնորիկ ի յուլիսի ԻԵ. (25) ագուլեցի և ի Շուշի բնակեալ Առաքելի որդի պարոն Յակոբին մէկ Հազար ԳՃ. (1300) ղուռուշի փօլիցագիր տուաք ի վերայ ձեր, որ եկեալ առնուցու և յօգոս[տոս] մտին ԲՌԵՃ. (2500) ղուռուշի փօլիցագիր տուաք յերևան բնակեալ բժիշկ մահտեսի Հայրապետի որդի Յօհաննիս: Եւ ԱՌ. (1000) ղուռուշի փօլիցագիր ևս տուաք Քեալ Յովհաննէսի որդի Յարովթիւնին ԲՃ. (200) ղուռուշի փօլիցագիր ևս տուեալ էաք Փօքչանցի ուխտաւոր մահտեսի Աստուածատուրին, որք մինչև ցայժմ եկեալ և առեալ իցեն զբրամնն, որովք և Հասուցումն լինի 5000 ղուռուշին: Եւ թէ այժմ թուղթս գրեցաք առ Մարտիրոս վարդապետն և առ այլս ի Չմիւռնիս, զայն 5000 ղուռուշի ղավզն ևս գրեալ ի ձեռս ձեր յղեցաք, զի Հասուցիք առ նա:

Իսկ այս փօլիցային աղագաւ, որ գրեալ էիք, թէ առիմք, փոքր-ինչ բնա մնաց առնելոց եմք, այդ ևս ըստ առաջնոյ ոճոյն է և չէ Հաճելի մեզ, այլ ուստի որ փօլիցայ կգայ առ ձեզ, նախ առէք և յետոյ մեզ գրեցէք և թէ չեն տալ, փօլիցայ առնօղին իմաց արէք, թէ փօլիցայդ դուրս չէ գալիս և յորժամ տայցես լրապէս, յանժամ ի մէջ ղաւզ ինդրեցէք: Այլև, զոր գրեալ էիք, թէ Մարտիրոս վարդապետն մէկ կապոց իրք է յղեալ ըստ ինդրոյ նուիրակ Գրիգոր վարդապետին և գրեալ է մեզ, որ զգինն ԴՃԽ. (440) ղուռուշ պահանջեմք ի նմանէ և Հասուցանեմք ի Սուրբ Աթոռդ, զայդ ևս մեզ գրեալ էր Մարտիրոս վարդապետն, ուրեմն երբ ընկալիք զայդ դրամն ի Գրիգոր վարդապետէն, գրեսցիք մեզ, որ մեք ևս ի ղաւզի իմիք Մարտիրոս վարդապետին նշանակեսցուք: ԶԳրիգոր վարդապետի ի Թամգարայու առ մեզ գրեալ թուղթս, զոր յղեալ էիք, ընկալաք և, զոր ծանուցեալ էիք թէ Ղարայհիսարու Հիւսիսեան մահտեսի Գրիգորի ձեռամբն Բ. (2) չխինով կնքեալ ամանաթ էր յղեալ մեզ, զայն առ մեզ ևս էր գրեալ և մեք ահա զպատասխանի թղթոյն նորա գրեալ յղեցաք առ ձեզ, զի Հասուցիք նմա և եթէ ի վիճակէն իւրմէ թուղթ իցէ յղեալ առ ձեզ ի վերայ մեր, յուղարկես-

Ղիք, իսկ թէ առ ձեզ իցեէ գրեալ զորպիսութիւնս իւր, դուք ևս մեզ ծանուցիք:

Ի Մատենու Փիլիպպոս ամիրայէն և ի տեղոյն նուիրակ Գրիգոր վարդապետէն և յայլոց եկեալ թուղթման, որ յղեալ էիք, Հասին առ մեզ: Բայց դեռ չժամանեցաք զպատասխանիս նոցա գրել, գրելոց եմք յետոյ: Այլև, զոր ծանուցեալ էիք, թէ Գրիգոր վարդապետն գրեալ է ձեզ, որ ձեռամբ Փիլիպպոս ամիրային ԸՃՀ. (870) ղուռուչ փօլից է արարեալ, որ ի տեղդ ձեզ Հասանիցի, իմացաք և թէպէտ գրեալ էիք, թէ դեռ ամիրային փօլիցագիրն չեկաւ, սակայն յանցեալնս յայս երկրէս ի սուրբ Երուսաղէմ գնացող քանի ուխտաւորք եկին ի Սուրբ Աթոռս և ետուն մեզ աստ ԸՃ. (800) ղուռուչ, վասն որոյ մեք ԸՃ. (800) ղուռուչի փօլիցագիր տուաք Կիրակոս և Յօհան անուամբ մարդկանց, որք եկեալք ի տեղդ առցեն: Եթէ մինչև ցգալն նոցա Փիլիպպոս ամիրայի փօլիցագիրն Հասեալ լինէր առ ձեզ, յայնմանէ տալոց էիք և թէ դեռ ոչ Հասեալ լինիցէր, ի ձէնջ պարտ էիք Հոգալ և յորժամ ի յամիրայէն փօլիցագիրն գայցէ, յայնմանէ ի տեղի ձեր տուեցելոցն վերառնուցուք:

Եւ թէ յիզմիրու եկեալ ամանաթքն, որք Բ. (2) տօնուղ չուխայաք, Ա. (1) սատտա/523ա/ճայ և Ը. (8) Հօխայ բռնօթի, կէնն կտորք են և կէնն ի մէջ շիլայից, և Բ. (2) ևս թէնէքէիւ բռնօթի, և Բ. (2) բռնօթաման, ևս քանի մահրամայք մուճասամբ, այդոքիկ յղեսջիք ի Բայազիտ առ տիրացու Գէորգն անտի Հասանիլ առ մեզ:

Իսկ և ի յԱթայ եկեալ կնքով ամանաթն, որ յանձնեալ էիք պարոն թումանէնց Յօհաննանին և Նաւասարդեան Յակոբին Հասուցանել ի Բայազիտ՝ Նաւասարդեան պարոն Հայրապետին, և զԵՃ. (500) ղուռուչ ևս փօլիցայ էիք արարեալ ի վերայ նորին, նա ինքն պարոն Հայրապետն գրեալ էր աստ զառ ինքն Հասանիլն, որ և զայն Հինգ Հարիւր ղուռուչն ձեռամբ յԵրևան բնակեալ պարոն Չուրապին առ մեզ Հասոյց և ամանաթն դեռ առ իւր մօտն կայ:

Այլ զոր գրեալ էիք, թէ այսուհետև տիրացու Գէորգին ոչ գիր եմք գրելոց և ոչ փօլիցայ առնելոց, մի՞ թէ այնր պատճառաւ մեր գործոյն պիտիր նոր նիզամ դնէք, թէպէտ և պարոն Հայրապետն ևս Հաւատարիմ է, սակայն այժմ ի Բայազիտ տիրացու Գէորգն է մեր գործակալ ի կողմանէ մեր գործոյն և իրացն պարտիք ընդ նմա առնել, զոր ինչ առնելոց էք, զի թէ տիրացու Գէորգն ինքնագլուխ փօլիցայ առնիցէ ի վերայ ձեր, զայն ևս մի՞ տայք, այլ թէ գրիցեմ ձեզ յայնժամ տո՛ւր: Նաև այն թուղթն, զոր Մասեհեան պարոն Եսային յղեալ էր առ ձեզ և դուք յուղարկեալ էիք առ մեզ, զպատասխանն ևս առ Մարգար աղայն գրեալ և եղեալ եմք այդ Իզմիրու թղթոց պաշարանի մէջն, զայդ պաշարանաւ թուղթն Հա-

ատարմօք յղեսջիք առ Իզմիրու նուիրակ Մարտիրոս վարդապետն և զերբ յղեն ձեր ազդ արասջիք մեզ: Ծանուցումն կողմանցս զորպիսութեանց: Գրեցաւ յամնոյս ի ԻԳ. (23):

1434* **Ի Բայազիտ** - Թուղթ ի Բայազիտ առ ագուլեցի պարոն Պետրոսն, պարոն Գրիգորն և պարոն Յօհաննանն, եթէ յանցեալ ամին Սրբոյն Թովմայի առաքելոյ վանիցն առաջնորդ Թովմաս վարդապետն մինչ եկն ի Սուրբ Աթոռս, ի մէջ փոխ դրամ խնդրեաց, սակս կարևոր պիտոյից սրբոյ Տանն իւրոյ և մէք ետուք նմա ԱՌԵՃ. (1500) ղուռուշ և գրեցաք ի Պօլիս բնակեալ ագուլեցի իշխանացն զտալն մեր և ինքն Հանգուցեալ Թովմաս վարդապետն ևս գրեաց նոցա Հատուցանել զայն դրամն մեր:

Իսկ այժմ իշխանաց Թուղթ էՀաս առ մեզ, զոր Բաբայեան մահտեսի Կարապետ աղայն, Թովմայեան Մերում Ղուլին, պարոն Գէորգն և այլք գրեալ էին մեզ, որ ԳՃ. (300) Հատ պաճախուռ ոսկիս են յղեալ ի Կարին, ի ձեռս պարոն Յօհաննանիդ Հասուցանել ի Սուրբ Աթոռս, որ այն մեր տուեալ ՌԵՃ. (1500) ղուռուշ դրամոյն Հատուցումն լիցի և աւելորդ մասն ևս Հասցի ի սուրբ վանն և ի քէն պարոն Յօհաննանէդ գիրէն ընկալեալ յայրիլի Ա. -ին (1) վասն ոսկոց Հասանելոյն: Բայց դուք մինչև ցայժմ ոչ էք գրեալ մեզ զՀասանիլն ոսկոց, ուրեմն ծանուսջիք մեզ, որ մէք ևս ի միամտութիւն գրեսցուք նոցա:

Գրեցաւ յամնոյս ի ԻԳ. (23):

1435* **Ղաւզ** առ Իզմիրու նուիրակ և առաջնորդ Մարտիրոս վարդապետն. յաղագս 5000 ղուռուշ փօլիցային, զորս Հասուցեալ էր ի Կարին, ի ձեռս գործակալացն մերոց՝ պարոն Հայրապետին և պարոն Գասպարին, զոր նոքա ի Սուրբ Աթոռս Հասուցեալ ղաւզ էին խնդրեալ որով գրեալ յղեցաւ ի ձեռս սոցա Հասուցանել առ Մարտիրոս վարդապետն ի միամտութիւն:

Գրեցաւ յամնոյս ի ԻԳ. (23):

1436* **Թուղթ** առ Ղօշավանիցն առաջնորդ Յովաննէս վարդապետն, ի պատասխանի Բ. -ուց (2) թղթոցն գրեցելոց, որոց զմինն ընդ Սիմէօն վէքիլ վարդապետին էՀաս Հանդերձ մատաղացւօքն և առեցեալ կամամբքն և միւսն ընդ Գ. (3) ուխտաւորացն և քոյդ Բ. (2) մարդկամբքն, զորս ընթերցեալ ծանեաք զգրեալսդ յաղագս ժանտախտին պակասելոյ, յոյժ ուրախացաք, բայց ուրէք գտանիլն տրտմեցաք և մանաւանդ տեղոյդ կարկտահարութեանն: Այլև ըստ խնդրոյդ մէկ լիտր բաժկացու յղեցաք պարոն Յովսէփին և պարոն Կարապետին Թուղթ չգրելով, միայն զողջոյն ընծայեցաք, յետոյ ի դէպ ժամանակի գրելոց եմք:

Գրեցաւ յամնոյս ի ԻԷ. (27):

523բ

^{1437*} **ԻյՌուուսմէլի** - Թուղթ առ Ռուուսմէլու նուիրակ Դանիէլ վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ: Եւ թէ վասն Նիկօլ աղաչայի թղթոյն ի ժամանակին չգրեցեր և այժմ ժամանակն անցեալ է, այլ ոչ ոնի պետս գրելոյ: Իսկ և ի Չմիւռնոյ փօլիցային, որ նշանակեալ էիր, թէ 4000 ղուռուշ Հասուցեալ եմ ի Պօլիս առ գործակալն մեր մահտեսի Նիկողայոս ամիրային և նա այնքանի ղավզ առ քեզ է յղեալ, վասն այնր դեռ նա մեզ բան չէ գրեալ, այլ գրեալ է գործակալացն մերոց՝ պարոն Հայրապետին և պարոն Գասպարին, ծանուցանել մեզ, թէ յԻզմիրու կողմէն 2500 ղուռուշ է Հաս ինձ: Առ այն մէք գրեցաք, թէ պաճախու ոսկի շինել և յուղարկել, զոր և նա շինեալ է, բայց դեռ մեզ չէ Հասուցեալ առ ի լրութիւն ԴՌ-ին (4000), ԱՌԵՃ. -ն (1500) ոչ գիտեմք, թէ ուր իցէ, որ ձայն չկայ: Եւ թէ իմացաք վասն Բ. (2) բեռն իրս յղելոյդ ի Կարին, բայց թուղթ չլինելոյն ընդ նոսա, թէ ում Հասանիցի, մաքսապան տիրութիւն առնելով, տարեալ է ի մաքսարանն և յետոյ թուղթ էս գրեալ առ պարոն Հայրապետն, վասն բեռացն, որ տիրութիւն արասցէ մինչև ցգալն քոյ:

Իսկ որ ի տեղդ մէկ Ղազար այր է մեռեալ և վասն նորին կտակին Հարցումն էր արարեալ, առ այն գրեմք քեզ, զի քո խելքդ որպէս կտրէ, այնպէս արասցես:

Գրեցաւ յամնոյս ի ԻԸ. (28):

1798 թ., սեպտեմբեր

523բ

^{1438*} **Ի Ռուսս** - Թուղթ առ Ռուսաց երկրի նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն. յանձնարարութիւն վասն սրբոյ Երուսաղէմի նուիրակ Մկրտիչ վարդապետին, որ եկեալ ի Սուրբ Աթոռս գնայր աստի ի Հաշտարխան՝ վասն նուիրակութեան:

Գրեցաւ յամնոյս ի Ը. (8):

^{1439*} Կոնդակ ի վերայ երկրին Ռուստաց վասն սրբոյ Երուսաղէմի նուիրակի, որ այժմ տրեցաւ ի Պետրոս պատրիարգէն առաքեցեալ Մկրտիչ վարդապետին Բիւրականցոյ: Տէս ի մեծ տե[տեր] յե[րես] 2324:

^{1440*} **Ի Վան** - Թուղթ ի Վան առ Հանգուցեալ Ախիջան աղայի եղբայր խօճայ Յարութիւնն. մխիթարութիւն վասն մահուան եղբօրն և յանձնարարութիւն վասն նոր նուիրակ Աբրահամ վարդապետին և պատուէր վասն միւս Հանգուցեալ Աբրահամ պետի կայիցն յղելոյ:

Թուղթք ի Ղարս և ի Ղօշաւանք

^{1441*} **Ի Ղօշաւանք** - Թուղթ առ Ղօշաւանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցեալ սոյն ամնոյս Թ. -ին (9), յորում թէ վասն տկարութեան մերոյ, որ ցա-

ակցեալ էիր, շնորհակալեցաք, իսկ վասն փաշայի մարդոյն, որ գրեալ էիր, որպէս թէ ի գալն նորին աստ ըստ արժանեացն ոչ եմք պատուեալ, զոր եկեալ յայդր, գանկատս է արարեալ, որոյ սակս մեծամեծքն տեղւոյդ խոժոռեալ են զմէնջ և այլն: Չայդ բանդ պարտ էր պարոն Գէորգն գրել մեզ լիովին, որ իմանայաք ուստի գրեցես նմա, զի որպէս լինին ծանուցե մեզ:

Եւ վասն գարւոյն, որ գրեալ էիր, թէ տեղւոյս սոմարն Է. (7) ղուռուշով տան, առ այդ գիտեա՛, զի տեղս արժան է քան յայդր, վասն որոյ սպասեցես, եթէ արժանասցի ԱՃ. (100) սոմար գարի առնուս և պաճես, որ ի ժամանակին բերել տացուք:

[Գրեցաւ] յամնոյս ԺԵ. (15):

^{1442*} **Ի Ղարս** - Թուղթ ի Ղարս առ Գէորգ աղայն. յիշումն երկար միջոցէ թուղթ չգրելոյն, յորում թէ յանցեալումն Դատաբեկ անուն ոմն տաճիկ, որ ի փաշայէն թուղթս էր բերեալ /524ա/ վասն փաշայի մասուպին նորոգութեան, իբր թէ աստ զշահեցողութիւն ոչ տեսանելով, ի դառնալ գանգատեալ է զմէնջ, որոյ վասն Ալի բէկն յանդիմանեալ է զքեզ և պատուեալ է ի Հոգածութենէ բանից մերոց խափանիլ: Առ այդ գիտեա՛, զի թէպէտ մեկ անգամ բերաք զնա և տեսաք, սակայն մէք յայնժամ ծանր Հիւանդ գոլով, չկարացաք ըստ արժանւոյն շահել, վասն որոյ ահա թուղթ գրեցաք Ալի բէկին, որ տարեալ զթուղթն նորա մատուցես, զի նստուցէ զսրտնեղութիւնն փաշային և գիտութեամբ նորին ԻԵ. (25) ղուռուշ տաս այն թղթաբերին մեկ պինիշագին: Եւ թէ զկնի աւուրց վարդապետ եմք առաքելոց յայդր՝ Հանդերձ ընծայիւք: Եւ թէ զթղթոյս պատասխանն գրեալ ծանուցես մեզ զորպիսութիւնն:

Գրեցաւ յամնոյս ի ԺԶ. (16):

^{1443*} **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովաննէս վարդապետն. յիշումն սոյն ամնոյ ԺԵ. -ին (15) գրեալ թղթոյն մերոյ և ծանուցումն թղթոյն առ մեզ Հասանելոյն ընդ ՍաՀակ փայեկին, յորում թէ իմացաք զսրտնեղութիւնն փաշային և Ալի բէկին, որոյ աղագաւ թուղթ գրեցաք ի վերայ Ալի բէկին, որ զխաթրն փաշային առցէ: Եւ առ Գէորգն թուղթ գրեցաք և յղեցաք ընդ թղթոյս, զի Հասուցես առ նա: Եւ թէ փաշայն քանի թուղթ ունի, զայն ևս ծանուցես մեզ: Եւ վասն վարդի ջրոյն, թէ զոր խնդրեալ էիք, ահա յղեցաք ՍաՀակի ձեռօքն:

[Գրեցաւ] յամնոյս ի ԺԶ. (16):

Թուղթք ի Մեծն Պօլիս և յայլ տեղիս

^{1444*} **Ի Մեծն Պօլիս** - Թուղթ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն. յիշումն ի յունիսի 13 գրեալ թղթոյն մերոյ

առ սա և վանն Բ. (2) պաշարանօք յղեալ թղթոցն մերոց ի ձեռս Ալան ամիրային հասուցանել ի Բաղդատ և պատասխանի ոմանց բանիցն, զորս յապրիլի 11 գրեալ էր առ Աստուածատուր վարդապետն, յաղագս Ադրանայու 2000 զուռուշ փօլիցային, որ ի մաշտեսի Գէորգէն պարտ էր հասանիլ ի կողմանէ եղբօրորդոյն իւրոյ Ջաքարիային յետանալոյն և վանն ի Բասրայու 5950 զուռուշ փօլիցայք հասանելոյն ի պարոն Ստեփաննոսէն, զի Անդրէաս աղայն Մինասեան տացէ, որք էին ի կողմանէ Հնդկաց երկրի նուիրակին:

Եւ ծանուցումն, թէ ահա առ Անդրէաս աղայն թուղթ գրեցաք մխիթարութիւն և շտրհակալութիւն վանն յանձն առնլոյն տալոյ զփօլիցայն և առ պարոն Ստեփաննոսն ևս թուղթ գրեցաք և յղեցաք ի ձեռս քո տալ Անդրէաս աղային հասուցանել առ նա: Եւ պատուէր, զի եթէ զայն վերոյ յիշեալ փօլիցայն առեալ իցէ ի յԱնդրէաս աղայէն, գրեսցէ մեզ, զի մէք ի գրելն զթուղթ առ Հնդկաց երկրի նուիրակն, զայն ևս ծանուցուք նմա ի միամտութիւն: Եւ յաղագս յառաջ և յետոյ ինդրեալ օրհնութեան թղթոցն էնաֆից գանձանակաց և ոմանց յատուկ տրոց, թէ ահա գրեալ յղեցաք, որք են թուով ժԹ. (19): Եւ թէ որպէս յառաջ գրեալ ենք քեզ ի Կարին առ պարոն Հայրապետն փօլիցայ չարասցես, մինչև մէք գրիցեմք քեզ: Եւ ծանուցումն կողմանցս զորպիսութեանց: Տէ ս ի մեծ տե[տեր] յե[րես] 2419:

Գրեցաւ յամնոյս ի ԺԼ. (18):

¹⁴⁴⁵ **Ի Պօլիս** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ Անդրէաս աղայն. մխիթարութիւն վանն մաշտեսի փեսային իւրեանց՝ ջուղայեցի մաշտեսի Գալստանին, և յորդորումն, զի զնորին հաւատարմութիւնն ինքն ցուցցէ, որպէս և այժմ, զի Բասրայու արարեալ 5950 զուռուշ փօլիցայն ի պարոն Ստեփաննոսէն, ի կողմանէ Հնդկաց երկրի նուիրակին յանձն առեալ էր տալ Պօլսոյ նուիրակին: Ողջոյն Հօրն իւրոյ՝ աղայ Մինասին և քեռորդոցն Ոսկան և Յովհաննէս Չէլչպիցն մաշտեսի Գալստանեան: Տէ ս ի մեծ տեր յերեսն 2325:

[Գրեցաւ] յամնոյս ի ԺԼ. (18):

Օրհնութեան և շտրհակալութեան նամակներ մաշտեսիներ վարդերեսին և Երկրորդոս ամիրաներին (ի Մեծն Պօլիս) «վանն 20 զուռուշ տրոցն ի մանակցութիւն յախճապակի աղիւտոցն յանուն Սրբոյ տաճարի» (524բ, Ա./1-2), Սկիւթարի բասմաճոց էնաֆին «վանն նորոգ հաստատեալ գանձանակին, որոյ և զմիոյ ամի արդիւնն հասուցեալ էին նուիրակ Գալուատ պետին, որ է Խ. (40) զուռուշ» (Ա./3), Հացագործ Ստեփանոս աղային (Պօլիս) «վանն Ժ. (10) զուռուշին, զոր տուեալ էր յաղագս յիշատակի չինուցն» (Ա./4), մաշտեսիներ Մանգասարին, Գրիգորին և Աստօսին (Ղալաթիա) «վանն Ժ. (10) զուռուշ տրոցն, զոր տուեալ էին վանն յիշատակի չինուցն» (Ա./5), արաբկիրցի շաքարճի Հանգուցեալ Պետրոս աղայի կողակից Հեղինէին (Ղալաթիա) «վանն ԺԵ. (15) զուռուշ տրոցն» (Ա./6), Պէկօլլի

Ժողովրդին «վան գանձանակադրամիցն, զոր տուեալ էին Պօլսոյ նուիրակին, որ էր յիսուն ղուռուշ» (Ա./7), Հէսարի Ժողովրդին ուղղուած կոնդակ «վան տրոց գանձանակին, որ է Խ. (40) ղուռուշ» (Ա./8), Վարդերես ամիրայի կողակից մաշտեսի Սրբուհուն (Ղալաթիա) «վան Ժ. (10) ղուռուշ տրոցն, վան յիշատակի չինուցն» (Ա./9), Հեղինէ կնոջը (Պօլիս) «վան Ժ. (10) ղուռուշ տրոցն յանուն յիշատակի չինուցն» (Ա./10), Հացագործներ Թօմաս եւ Ստեփաննոս աղաներին «վան ԺԵ. (15) (միւր՝ ԺԳ. (13) – Ա. 3.) ղուռուշ տրոցն» (Ա./11-12), դերձակների Էսնաֆին (Ղալաթիա) «վան Ժ. (10) ղուռուշ տրոցն» (Ա./13), տիրացու Գէորգին եւ ոմն Տիրուհի կնոջը «վան Ծ. (50) ղուռուշ կտակին» (Ա./14), բէսկանցի Մարտիրոս ամիրային «վան Ժ. (10) ղուռուշ տարեկան տրոցն» (Ա./15), ուանչապար Պետրոսին եւ իր եղբորը «վան ԺԵ. (15) ղուռուշին» (Ա./16):

¹⁴⁴⁶ **1798 թ., սեպտեմբեր** - Կոնդակ ի վերայ երկրին Վրաց և Գեանջայու, Համախու, և Նախու և Նախչուանու վան սրբոյ Երուսաղէմի նուիրակութեան, որ տրեցաւ Ստեփաննոս վարդապետին անդուստ եկելոյ յանդէպ ժամանակի:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2326-27

¹⁴⁴⁷ **1798 թ., սեպտեմբեր (՞)** - Կոնդակ նուիրակութեան ի վերայ Ռուսաց երկրի Համայն մերագնէիցն, մինչ Յովսէփ վարդապետն, որ ի բազում ամն նուիրակ և առաջնորդ էր, այժմ չկարելով ժամանել ի Հոգս նուիրակութեանն, զայլ ոմն յատուկ նուիրակ խնդրէր:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2327-31

¹⁴⁴⁸ **1798 թ., 18 սեպտեմբերի** - Թուղթ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն, յիշումն ի յունիսի 13 գրեալ թղթոյն մերոյ առ սա: Եւ պատասխանի ոմանց բանիցն, զորս յապրիլի 11 գրեալ էր առ Աստուածատուր վարդապետն, վան յԱդրանայու ի մաշտեսի Գէորգէն Հասանելի դրամոց յետանալոյն, և վան ի Բասրայու փօլիցայք Հասանելոյն ի պարոն Ստեփաննոսէն, զի Անդրէաս աղայն Մինասեան տացէ, որք էին ի կողմանէ Հնդկաց երկրի նուիրակին: Եւ ծանուցումն, թէ ահա առ Անդրէաս աղայն և առ պարոն Ստեփաննոսն թուղթս գրեցաք: Եւ յաղագս յառաջ և յետոյ խնդրեալ օրհնութեան թղթոցն վան աննէֆից գանձանակաց և ոմանց յատուկ տրոց, թէ ահա գրեալ յղեցաք, Հասուցանել յերաքանչիւր տեղիս: Եւ վերջապէս ազդարարութիւն կողմանցս և մեր որպիսութեանցն:

Յորմէ սիրով և օրհնութեամբ և ողջունիւ քրիստոսականաւ և սրբոյ Իջման տեղոյս նորին առատածաւալ շնորհիւ գիտասջիր բարեմիտ սիրելիդ մեր, Հարազատ և բազմաշխատ որդի Սրբոյ Աթոռոյս՝ Գալուստ աստուածաբան վարդապետ: Չի ի յունիսի 13 թուղթ գրեցաք առ քեզ, յիշելով անդ և գերեսին թուղթն մեր գրեալն յանցելում ամին, և ծանուցանելով փոքր ի շատէ զանցսն

կողմանցս և զորպիսութիւնն մեր մինչև ցայն կետ: Եդաք ընդ նմա և գերկու պաշարանօք թուղթս ի Բաղդատ և յայն կողմն Հասանելիս, և գրեցաք քեզ՝ ձեռամբ Ասլան ամիրային և Մարկոս աղային յուղարկել, որ սակս առ նոսա ևս թուղթ էաք գրեալ: Բայց յայնմէտէ և այսր ևս դեռ ի քէն |2420| ոչ ընկալաք զպատասխանիս վաղագրեալ թղթոցն մերոց: Այլ միայն յապրիլի 11 առ մեր որդի Աստուածատուր վարդապետն գրեալ թուղթդ ընդ ուխտատորացն, էհաս ի յուլիսի 1, և զոմանս բանս, զոր գրեալ էիր անդ, ծանուցանել մեզ, իմացաք, որոց առաջինն էր Ադրանայու մահտեսի Գէորգ աղայի յետացուցանելն զ2000 զուռուշ փօլիցայն եղբորորդւոյն իւրոյ՝ Չաքարիային, և մահտեսի Նիկողայոս բարեսէր ամիրայի յուսադրելն քեզ, թէ Համբերեա առ միջոցի մի, ես վճարել տացից և այլն:

Եւ երկրորդն էր ի Բասրայու ջուղայեցի Տեր-Յովաննիսեան պարոն Ստեփաննոսի գրելն յայդր առ Հանգուցեալ մահտեսի Գալստանի աներձագ Անդրեաս աղայն Մինասեան, տալքեզ 3450 զուռուշ, ըստ գրուածոյ Սուրաթու նորոգ գործակալ աղայ Յակոբոսին Յովաննիսեան, ի կողմանէ Հնդկաց նուիրակին մերոյ՝ Յակոբ վարդապետին: Եւ զկնի քոյդ ևս թուղթս ընդունիլն ի նոյն պարոն Ստեփաննոսէն և ի Յակոբ վարդապետէն, և պարոն Ստեփաննոսի կրկին փօլիցայ առնելն ի վերայ Անդրեաս աղայի յանձն առնուլն ի տալ, և զայլ Հաւատարմական բանքն պարոն Ստեփաննոսին, և ևս այն, թէ եթէ կամիս, զայլևս դրամս առ և դաւզ տուր, ես կարեմ յետոյ առնուլ իսկ դու զաւելի ինչ չես խնդրեալ (և բարուք ես խորհեալ զչինդրելդ):

Չայտոսիկ իմացեալ մեր ի թղթոյն, զոր գրեալ էիր առ Աստուածատուր վարդապետն, և յայնժամ ի Հոգս ուխտատորացն պաղատելով չկարացեալ մեզէն բանս գրել, պատուիրեցաք նմա ազդ առնել քեզ, թէ ծանուցեալ է մեզ, և մեք յետոյ գրելոց եմք քեզ: Բայց ի յուղևորելն մեր զուխտատորան, թուղթք եկեալ մեզ ի Խօյու ի ժանտ սարտարէն և յանմիտ խանէն մերմէ վանն ընծայ առաքելոյ, որով և զբաղեալ մեր յոչ սակաւ աւուրս, ապա ի սաստիկ շողոյն Հիւանդացեալ յաւուրս բազումս մինչև Հարկել բժշկաց և մեծամեծաց գնալ յայլուր վանն օդոյ և ջրոյ փոփոխութեան, որոյ աղագաւ և գնացաք յԱշտարակ գիւղն և յերկոտասան աւուրս կացեալ անդ, դարձաք՝ իբր փոքր մի լաւացեալ, և զայլ բանս թուղթով սկսաք զքոյդ խնդրեալ թուղթն գրեցուցեալ թէ զառաջին սիահւոյդ մնացեալն, որք են ԺԷ. (17), և թէ զյետին սիահւոյդ վանն էնաֆից գանձանակաց և այլոց ոմանց տրոց թուղթն, որք են ԺԹ. (19): Ընդ որս և թուղթ մի առ Խասագեղու տէր Պօղօսն ըստ խնդրոյդ: Չորս և ահա յղեցաք, զի Հասուցես իւրաքանչիւր տեարցն ի միամտութիւն:

Չմէտածուց գանձանակի արդեանց, թէ զորքանն մոռացմամբ չէիր գրեալ ի սիաւնոջդ, և մէք ի թղթոջն նոցա զտեղին բաց թողաք: Նախ գրեսցես և ապա տացես:

Իսկ վասն Ախասիայի կողման դերձակացն, սուզանաճոցն, Վիգիր խանի դրան էսկիճուցն և այլոց, որ տարակուսեալ էիր, գիտեա, զի Մինաս վարդապետն ի նոցունց գանձանակադրամ չէր բերեալ և մէք ևս վասն նոցա թուղթս չեմք տուեալ քեզ, թուի թէ բազում ամօք յառաջ գանձանակս են ունեցեալ, և խափանեցեալ է, որպէս և Հացագործացն, վասն որոյ ի գնալը ի սիաւնոջ գանձանակացն զայսոսիկ ևս գրեցաք, թէ Հարցափորձ լիցիս, և թէ տայցեն, առնուցուս: Բայց առ նոսա թուղթս չեմք գրեալ ընդ քեզ, և զայլ երկարապէսն ի թղթոյ թաղէտս վարդապետին, իմասցիս և միամիտ լիցիս:

Ապա յաղագս վերոյիշեալ պարոն Ստեփաննոսին արարեալ փօլիցային զայս իմա, զի Յակոբ վարդապետ որդեակն մեր յառաջագոյն ի Բասրայու յոյժ շնորհակալութիւն էր գրեալ զնմանէ, և թուղթ ինդրեալ առ նա: Եւ մէք ի մայիսի 14 թուղթ գրեցաք նմա օրհնութեամբ և շնորհակալութեամբ, և ի վերայ Վանայ յղեցաք, և զերկրորդ օրինակն ևս ի յունիսի 13 յայդր առաքեցաք: Ի մէջ վերոյիշեալ պաշարանացն: Եւ զի Բէթղէէմեան պարոն Յովաննէսն ի քանիս ամա զթուղթն Հատեալ է ի մէնջ, վասն որոյ խորհրդօրէն գրեցաք սմա, թէ առանձին խօսեսցիս ընդ նմա, թէ ընդ Է՛ր որ գրէ զպատասխանիս թղթոցն մերոց, և իմացեալ զմիտան ծանուցես մեզ և այլն:

Իսկ այժմ, որ զայդ փօլիցայդ արարեալ է, վասն այդորիկ նոր ևս շնորհակալութեան թուղթ գրեցաք և յիշեցաք ևս, թէ զայն բանն յանժամ առ քեզ գրեն |2420| յԱստուծոյ ազդեցմանէն էր: Ուրեմն ըստ Հաւատարմութեանդ՝ յայդր պատահեալ բանիցն մերոց, որք ըստ քեզ իցեն, Հոգատար լիցիս:

Գրեցաք և զայս, թէ թէպէտ գրեալ էիր Գալուստ նուիրակ վարդապետին մերոյ, թէ եթէ կամիս, զայլ ևս դրամն առ ի Մնդրեաս աղայէն, բայց նա քան զփօլիցայն աւելի ինչ չէր ինդրեալ, մերս Հրամանի դիտելով մէք ևս չկամեցաք աւելի ծանրութիւն լինիլ քեզ, այլ զոր ինչ նախ ստասցիս ի Հնդկաց կողմանէ ի ժամանակին փօլիցայ արասցես ի Պօլիս Հասանիլ առ տեղոյ նուիրակն, այն բաւական բարեղաւութիւն է և այլն:

Արդ, այսպէս է միտք թղթոյն մերոյ առ պարոն Ստեփաննոսն, զոր և աւա յղեցաք քեզ՝ տալ Անդրեաս աղային, Հասուցանել նմա: Եւ ըստ ինդրոյդ՝ առ Անդրեաս աղայն ևս զմիսթարութեան թուղթ գրեցաք վասն վախճանման փեսային իւրեանց՝ մաւտեսի Գալստանին, և շնորհակալութիւն վասն յանձն առնելոյն տալ զպարոն Ստեփաննոսի փօլիցայ արարեալ 5950 զրուռն: Եւ պատուէր, թէ որպէս յառաջ մաւտեսի Գալստանն, նոյնպէս և դու

յայսմէնտէ պարտիս յայդր ըստ քեզ Հանդիպեալ բանսն Սրբոյ Աթոռոյս և Հոգայիսն նուիրակին մտերմօրէն Հոգալ և այն: Եւ Հօրն և քեռորդուոցն ողջոյն:

Բայց արդ, քանզի յաղագս 5950 ղուռուշին, միայն ծանուցեալ էիր, թէ Անդրեաս աղայն յանձն էառ տալ, յերկբայս եմք, թէ արդեօք առէ՞ր, եթէ դեռ չես առեալ: Ուրեմն փութով գրեսցես զառնուդ, որ թէպէտ այժմ ձեռնՀաս չեղաք Յակոբ վարդապետին գիր գրել բայց յետոյ ի գրելն մեր ծանուցուք վասն փօլիցային, թէ քեզ իցէ Հասեալ:

Իսկ նոր անցք կողմանցս այս է, որ ըստ որում և ի վերոյ յիշեալ եղև, ի յունիսի ամեսանն Սուլէյման սարտարն և Խօյու Հիւսէին խանն եկին ի Խօյ, և Երևանու խանն ևս գնաց առ նոսա, ապա և շահ կոչեցեալն ևս եկն անդ, և ի Վրաց և յայլոց պատանդս և Հնազանդութիւնս ինդրէին: Բայց ի սակաւ ատուրս կացեալ շահին ի Խօյ, յետուստ ի ԹէՀրանու Համբաւ էՀաս, թէ եղբայրն ապտամբեալ է ի Շիրազ և յԱսպաՀան, և զօրաժողով արարեալ: Ուստի շահն շուտով դարձաւ յետս, և սարտարն եկաց զայլ ևս ատուրս ընդ մէջ Խօյու և Թարվիզու բազում վնասուք և աւերարագործութեամբք: Եւ խանն մեր, որ զՀասան խանն առեալ էր դրամով ի շահէն, կուրացուցեալ ղեաց յԵրևան: Ապա շահն զՍուլէյման սարտարն ինդրեալ էր յօգնութիւն իւր (տէս ի նախընթաց թուղթդ, որ առ Մարտիրոս վարդապետն և դարձեալ եկ աստ): ...և սա յամենայն բնակչաց երկրիս զօրաժողով արարեալ գնաց դէպ ի Բայազիտ իբր փաշայի Համակամութեամբն գնալ ի Խօյ, և յոչ արդինաւորիլ բանին գնաց ի Շարուր, և ոչինչ վճարեալ դարձաւ ի բերդն, և ոչ ևս դադարի այլ ձեռն արկանէ ի Վիրս՝ զօգնութիւն բերել բայց Ջաֆարղուլին դեռ պաշարեալ ունի զԽօյ, այն երկիր միայն էր մնացեալ ի շինութեան, այն ևս յայսմ ամի խանգարեցաւ, և ի բազում տեղիս ևս ժանտախտն տարակուսացուցանէ զբնակիչն: Աստուած ողորմեսցի ամենայն աշխարհի: Ի շահ կոչեցելոյն լուր ինչ ոչ գոյ այժմ, թուի թէ և յայն կողմննսն խառնակութիւնս է, և մէք ողորմութեանն Աստուծոյ ապաստան կամք:

Այլև՝ որպէս յառաջ գրեալ եմք ի Կարին առ պարոն Հայրապետն փօլիցայ չտացես, մինչև մէք գրիցեմք քեզ: Եւ ահա բազում ամիսք եղէն, յորս թուղթ ոչ ընկալաք ի քէս, և չգիտելով զորպիսութեանց քոց տարակուսիմք, ընդէ՞ր արգելուս զգիրդ, գոնէ Համառօտ գրեա զողջունէ քումմէ, զի անհոգ լիցուք և մի այդքան յետաձգէր զպատասխան գրութիւնսդ, որպէս յառաջ ևս գրեալ եմք Հարկիւ: Եւ ի սիրոյդ և ի Հաւատարմութենէդ աննուագ կալով ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԻՆԷ. (1798) թուոջս և ի սեպտեմբերի ԺԸ. (18) ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 524բ

1449 **Ի Բասրա** - Թուղթ ի Բասրա առ ջուղայեցի պարոն Ստեփաննոսն Տէր-Յովաննիսեան. յիշումն յառաջ գրեալ թղթոցն մերոց, և շնորհակալութիւն վասն ի կողմանէ Հնդկաց երկրին նուիրակին մերոյ՝ Յակոբ վարդապետին փօլիցային Հասուցանելոյն ի Մեծն Պօլիս առ Անդրեաս աղայն, Հասուցանել տեղոյն նուիրակին մերոյ Գալուստ վարդապետին և պատուէր այնպիսի բանից մուղայէթ լինիլ: Տէս ի մեծ տետ[եր] յերեան 2507: Ողջոյն որդւոյն իւրոյ՝ տիրացու Հայրապետին:

1450 **1798 թ., 18 սեպտեմբերի** - Թուղթ օրհնութեան ի Մեծն Պօլիս առ մահտեսի Վարդերես ամիրայն, վասն 20 ղուռուշ տրոցն ի մասնակցութիւն յախճապակի աղիւսոցն յանուն սրբոյ տաճարիս:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 21բ

1451 **1798 թ., 18 սեպտեմբերի** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ մահտեսի Նիկողայոս ամիրայն յաղագս 20 ղուռուշ տրոցն ի մասնակցութիւն յախճապակե աղիւսոցն, զորս նուիրակն շինեցուցանէր:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 22ա

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 525ա

525ա

1452* **Թուղթ ի Խոյ առ Յակոբջան աղայն.** յիշումն քան զայս յառաջ գրեալ թղթոյն մերոյ ընդ Վանայ նորոգ նուիրակ Աբրահամ վարդապետին և ծանուցումն վասն ոսկւոյ ամանաթին, որ ընդ Խաչատուր պետին յղեցաւ, զի Հասուցէ ի Թարվէզ առ տէր Յովսէփի եղբարնս, առ որ գրեցաւ, թէ թէպէտ մեր թղթոց պատասխանոն ընդ ընծայատար Յովհաննէս վարդապետին գրեալ էիր, բայց վասն ամանաթին բան չէիր յիշեալ վասն որոյ գրեմք քեզ, զի եթէ մինչև ցայժմ յղեալ ես, բարի է և եթէ ոչ յղեսցես այժմ և զերբ յղելդ գրեսցես մեզ:

Գրեցաւ յամնոյս ի ԻԴ. (24):

1453 **1798 թ.** - Թուղթ սիրոյ և բարեկամութեան առ Հաշտարիանու Պլատոն եպիսկոպոսն Ռուստաց. շնորհակալութիւն վասն սիրոյն առ Յովսէփ եպիսկոպոսն մեր և առ ազգս, և յանձնարարութիւն վասն նոցա, և նոր նուիրակին, որ առաքեցաւ:

Յորմէ ճշմարիտ սիրով ամենասրբոյ Հոգւոյն... Յամի Տեառն 1798, և ի (այսպէս) լուսանկար Աթոռս ամենայն Հայոց, ի Սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2509-10

1454 **1798 թ.** - Թուղթ առ զօրապետն Ռուստաց ի Եա-
գօրցկի գրաֆ Իվան Վասիլիչ Գուտովիչն. շնորհակալութիւն յա-
ղագս մարդասիրութեանն ցուցանելոյ առ Յովսէփ վարդապետն,
և սիրելոյն զմերայինն, և յանձնարարութիւն վանն նոցա, և նուի-
րակին նոր առաքեցելոյ:

Յորմէ ժամանեցէ... Գրեցաւ յամի Տեառն 1798, եւ ի (այս-
պէս), ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին, որ
ի դաշտս Արարատեան:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2510-11

1455 **1798 թ.** - Կոնդակ ի վերայ Ղլարու և Մօզսօքու
ըստ վերոյգրեալ կոնդակիդ Նոր Նախշուանու, սակաւ մի կարճա-
նօտ (սկիզբն ի վերնոյ կոնդակէդ):

Հայկասէր լուսաւորչակրօն Հաւատացելոցդ ի Քրիստոս...
եւ ամենայն սրբոց նորին և ի մէնջ և շնորհք քրիստոսաէջ:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2514-15

1456 **1798 թ., սեպտեմբեր ()** - Թուղթ առ Հաշտարիա-
նու գումբեռնաթօր գէներալ-մայեօր Եագովիչ Արշէնովսկին.
Շնորհակալութիւն վանն բարեկամութեանն առ Յովսէփ վարդա-
պետն և սիրոյն առ ազգս մեր: Եւ յանձնարարութիւն վանն նոցա,
ևս և վանն նոր նուիրակին առաքեցելոյ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2331-32

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 525ա

1798 թ., Հոկտեմբեր

Թուղթք գրեալք ի Մուշ և ի Կարին

1457* **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն
և պարոն Գասպարն, եթէ ի սեպ[տեմբերի] 15 գրեցեալ թուղթն
ձեր էհաս առ մեզ ի նոյն ամսոյ էլն, մինչ էաք յԵրևան սակս տե-
սութեան իշխօղին տեղւոյս՝ Հանդերձ պարոն Յովհաննէսի որդի
Յարութիւնն ի ԴՃԶ. (480) ղուռուշի թէմեսիկովս և Թօխատու
նուիրակ Գրիգոր պետի և այլոց թղթովքն: Իմացաք վանն Հագիցս
արարեալ փօլիցայիցն մերոց, թէ ընդ ամէնն տուինք և վանն Իդ-
միրու և Դանիէլ վարդապետի գրեանքն ևս, որ Ա. (1) պաշարան
էիք արարեալ և յղեալ ի Պօլիս՝ Եսայի աղային Հասուցանել յիւ-
րեանց տեղինն, զայն ևս իմացաք:

Գրեալ էիք և վանն փօլիցայիցն, թէ ուստի և գայցէ ի վերայ
մեր մինչև ասարտն զառնութիւն, իմացումն չեմք տալ և թէ առանց
ձեր գիտութեան այլոց ինդրողաց ևս փօլիցայ չեմք տալ: Եւ վանն
տեղւոյդ նուիրակ Գրիգոր վարդապետին, որ գրեալ էիք, թէ այժ-
մոյս ի Դերջանէ ի գալն նորին ի քաղաքս տալոց եմք զթուղթն:

Դարձեալ գրեալ էիք, թէ ի տեղդ թօխատցի մահտեսի կարապետ անունն ոմն ասացեալ է ձեզ, թէ յիզմիր բնակեալ Սուլթան օղլի մահտեսի Գէորգ անունն ոմն իւրեան ննջեցելոց Հոգեբաժնի աղագաւ 1500 ղուռուշ է տալոց Սրբոյ Աթոռոյս, որոյ աղագաւ և գօրհնութեան թուղթ էիք խնդրեալ ի վերայ նոյն մահտեսի Գէորգին, առ այն վասն Բ. (2) պատճառաց չկամեցաք գրել, նախ վասն 1500 ղուռուշին ի կարծիս լինելով, թէ չիցէ այնքան և երկրորդ, զի մահտեսի Գէորգի ննջեցելոց անուանքն չէիք գրեալ, թէ ոյք իցեն, ուստի գրեսցիք մեզ յանուանէ, զի նշանակեսցուք ի թուղթսն: Նաև պարոն Յովաննէսի որդի Յարութիւնին, որ թող զմեր արած փօլիցայն ԴՃԶ. (480) ղուռուշ ևս էիք տուեալ և զթէմէսուկն առ մեզ յղեալ, զայն դրամն դեռ ևս չառաք, երբ առնումք, գրելոց եմք ձեզ ի միամտութիւն: Իսկ և զԷ. (7) շիշայ բռնութիւն, սատտաճայն և Բ. (2) կտոր չուխայն, զորս յղեալ էք, այնոքիկ ևս ընդ Յարութիւնին ի ճանապարհին է, երբ Հասցին առ մեզ, գրելոց եմք: Իսկ զփօլիցայից թուղթսն, զոր խոստացեալ էիք յղել ըստ խոստման ձերոյ, յղեսցիք: Եւ թէ ի վերայ Ամթայ նուիրակին, որ վասն 750 ղուռուշի դաւզ էիք խնդրեալ ի գնալն մեր ի Սուրբ Աթոռն գրելոց և յղելոց եմք: Ընդ թղթոյս մէկ թուղթ յղեցաք Գօրօյեան մահտեսի Սերոբին, զոր տաջիք ինքեան:

Գրեցաւ թուղթս յԵրևան, ի Հոկ[տեմբերի] ի Դ. (4):

1458* **Ի Մուշ** - թուղթ առ Մշու Սուրբ Կարապետի վանացն առաջնորդ Յակոբ վարդապետն, եթէ թուղթս քո ձեռամբ Մատթէոս պետին էՀաս առ մեզ յԵրևան, իսկ ի բանից գրուածոցդ, որ ծանուցեալ էիր զջերմեռանդ սերդ և զիղձդ գալոյ երկրպագութիւն Սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի և ի տես մեր /525բ/ սրտադիւր եղաք: Բայց որ զշինուածս ես սկսեալ ի սուրբ վանսդ, իմացաք, Տէր յաջողեսցէ ի կատարումն ածել: Եւ զոր ի նշանակ սիրոյդ որդիականի յանուն մեր իբր աջաՀամբոյր զքսան Պօլսոյ ոսկիս էիր յուղարկեալ, ընկալաք սիրով և շնորհակալութեամբ:

Իսկ այժմ վասն գալոյդ ցուրտն էՀաս և շփոթն ևս անպակաս է երկրիս, ուրեմն յառաջիկայ ամիս յետ սրբոյ Չատկին եկեսցես, եթէ յաջողութիւն լինիցի: Եւ թէ ի բեռնակրաց և ի լծկանաց յոյժ պակասեալ եմք, վասն որոյ գրեմք քեզ, զի փոյթ յանձին ունելով որոնել և գտանել տացես, զվէց լուծ գօմէշս, որք արատ չունիցին, այլ գեանջ և ուժեղ, ումանք կոտեցեալք և ումանք այնպէս և զի այժմ ի ցրտութեանս ոչ լինի յուղարկել ի գարնանն յապրիլին կամ ի մայիսին յղեսցես:

Եւ ի կողմանէ գնոցն, գիտես, որ Հանգուցեալ Աստուածատուր վարդապետ նախընթաց առաջնորդն սրբոյ վանացդ, ի մէնջ ԲՏԻ (2000) ղուռուշ է առեալ փոխ վասն պարտուց սրբոյ Տանդ և թէմէսուկ տուեալ, եթէ կամիցիս զգինս գօմշոցն Հաշուեալ ի վերայ այն թէմէսուկին նշանակեսցուք, զի պարտքն թէթևասցի: Եւ թէ

ընդ այն չիցես Հաճելոց ի գալդ աստ քեզ Հատուցուք: Իսկ և սրբոյ վանացո ժողովարար Կարապետ վարդապետն, որ ի Հիւսիսային երկրէն թուղթ էր գրեալ քեզ և բաց յղեալ ի ձեռս մեր, զի և մէք իմանայաք զանցս նորին, զայն թուղթ ամսովք յառաջ յղեցաք ի ձեռս Կարնոյ գործակալացն մերոց, զի առ քեզ Հասուցէն: Բայց և Յովսէփ վարդապետն յանցեալ ամի ի սեպ[տեմբերի] Ը. (8), թուղթ էր գրեալ մեզ, թէ Սուրբ Կարապետի ժողովարար վարդապետն անկեալ ի գերութիւն և զերծեալ կրկին ի վերայ գործոյն եղի:

Գրեցաւ յամնոյս ի ԺԲ. (12):

¹⁴⁵⁹ **1798 թ., Հոկտեմբեր (՞)** - Կոնդակ յատկապէս ի վերայ Պետրապօլքու և Մոսկովու, Համառօտեալ ի կոնդակէն, որ է ի վերայ բոլոր երկրին, որ գտանի ի վերդ յերեան 2327 և աւարտի յերեան 2331:

ՄՄ ձեռ. Հ^ն 4501, էջ 2333

¹⁴⁶⁰ **1798 թ.** - Թուղթ ի Հաշտարխանն առ Մկրտումն Գալատեան, ընդ նոր նուիրակ ... վարդապետին:

ՄՄ ձեռ. Հ^ն 4501, էջ 2426-27

¹⁴⁶¹ **1798 թ., 18 Հոկտեմբերի** - Թուղթ առ Յովսէփ վարդապետն (յառաջ քան զվերոյ գրեալ թուղթսդ), ի պատասխանի երից թղթոց նորա ի Ղզլարու, ի Հաշտարխանու և ի Պետրապօլքու գրեցելոց, և ազդարարութիւն թէ պատրաստեմք զնուիրակն:

Յորմէ սիրով և օրհնութեամբ և քրիստոսաձիր ողջունիւ, և սրբոյ Իջման տեղոյս նորին շնորհիւ ծանուցումն լիցի սիրելոյդ մերում և Հարազատ որդւոյդ Սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ վայելչապատիւ արքեպիսկոպոսիդ: Չի յետ թղթոյն մերոյ յանցեալ ամի յովիսի վերջս գրեցելոյ, ոչ ևս մեզ ձեռնՀասութիւն զայլ ինչ թուղթ գրել քեզ կամ այլում ումէք յայդկոյս: Չի թէ այլևս զի՞նչ նեղութիւնք և աշխատութիւնք և գլխացաւութիւնք Հասին մեզ ի փոփոխութեանց իշխողաց երկրիս, և ի սովեալ աւազակ երկրացւոցս, մանաւանդ ի նոր անշահի և ի նորին անագորոյն զօրապետի գալոյն մինչև ցիՍոյ, և դարձեալ շփոթութեամբ դառնալոյն և զմիմեամբք անկանելոյն (յորոց վնաս առ ամենեսեանն, իսկ օգուտ և ոչ մի) չկամիմ երկարել: Քանզի յայս քանիս ամս ի զուր աշխատեցաք զայսպիսի զրկանս և զաւերս անզգամաց մրելով ի թուղթս և օգնութիւն չունիմք յերկրածնաց, ապա ամենակալ Աստուած, որ տեսանէ զամենայն և կարէ առնել զոր ինչ և կամի, նա Հոգասցէ յայց ելանել Հանապազաբար վշտանկելոցս: Իսկ ի սիրելոյդ ի Ղզլարու և ի Հաշտարխանու գրեալքդ յառաջագոյն Հասեալ ի

Պետրպօքրու ի մայիսի 20 գրեալ թուղթդ ևս յօգոստոսի վերջս է էհաս:

Եւ զի ծանուցեալ էիր զբարձրագաւ և ողորմածագոյն մեծի կայսեր ընդունիլն զթուղթն մեր և զողորմութեան հրովարտակ շնորհելն, Հանդերձ պարգևօք, մսիթարեցեալ ուրախացաք և գոհացաք զԱստուծոյ, աղօթեմք միշտ վասն Հասարակաշահ կենաց գերախնամ և օգոստոսափառ մեծի կայսերն և մեծամեծացն:

Եւ զքէն և զազնուական պայծառ իշխան աղայ Յովաննէան ևս շնորհակալ եմք յաղագս Հոգատարութեան ձերոյ, զորս Տէր զօրացուցէ: Բայց գրեալ էս, թէ ի մարտին թուղթ եմ գրեալ և ծանուցեալ զայս, և զօրինակս հրովարտակացն կայսերականաց և զանուանս նորայնոցն յղեալ եմ, այնք մեզ չէն Հասեալ: Ապա որ գրես, թէ կրկին ընդ թղթոյս յղեցի, գիտասցես, զի թուղթն քո, որ քոյդ պահարանով և կնքով պարտիր մեզ Հասանիլ թարց պահարանի մերկ եղեալ էին ի թղթոջ մեր Թագէտս վարդապետին և այնպէս |2428| յուղարկեալ, որ չև ևս Հասեալ առ մեզ, զլուր իրացն բազմապատիկ աղճատանօք ի ցոփ մարդկանց լսեաք: Ընդ նմա գոյր մի միայն օրինակն առ դեսպանն Պօսոյ գրեցեալ հրովարտակին (որոյ յոյսն և երկիւղն ևս կշռելի է առ անդանօր եղեալ մերազունն, եթէ բանն ի վեր ելցէ առ ագարածինն): Բայց օրինակք միւսոյ նոմոսին, որ ըստ ինդրոյն մերոյ, կամ վէզիրի առ մեզ գրեալ պատասխանոյն, կամ նշանակիւք անուանցն կայսերազանց ոչ գոյր, յայտ է, թէ ի Վիրս բացեալ են զպահարան թղթոյդ և զայնոսիկ յայլս տարածեալ և կորուսեալ:

Արդ, քանզի գրեալ էս, թէ զիսկան ընդունելոյ ոչ է սպասելի, այլ փութով շնորհակալութեան թուղթնն առաքելի, թէպէտ և մեք յօժար էաք Հոգալոյ և յուղարկելոյ, բայց ոչ զիսկան տեսաք և ոչ զօրինակն: Ո՛չ ապաքէն դու՝ սիրելիդ էս ծանուցեալ զնոցին սրբազանին և Հետախոյզ լինիլն բանից, ապա անտեղէկաբար Հարևանցօրէն զիս՝ ըրդ լինիլ բանս գրել առ նոսա և տալ զտեղի կարծեաց: Իսկ զի նուիրակ էիր ինդրեալ յատկապէս վասն գործոյ նուիրակութեանն և մեք Հաճեցաք, և մինչև ցարդ ձեռնՀասութիւն չունելով յաղագս ազգի նեղութեանց և Հոգոց, այժմ՝ կամիմք պատրաստել: Ընդ որում գրելոց եմք զթուղթնն, զորս ինդրեալ էիր առ Հաշտարխանու գուբեռնաթօրն և առ արքեպիսկոպոսն, և առ Իւան Գուտովիչ զօրապետն. շնորհակալութիւն վասն սիրոյն իւրեանց առ քեզ, և ինամոցն որ առ մերայինսդ, և յանձնարարութիւն կրկին, և վասն նուիրակին ևս յիշումն: Ընդ որս և առ ազնիւ աղայ Յովաննէան և առ եղբարնն նորա և առ այլս ոմանս, և առ պարոն Մկրտումն, և կոնդակք առ նոր նախշուանցիսն և զզարցիսն և առ ի Դարբանդու եկեալ ժողովուրդան, ըստ նշանակեալ ինդրոցդ: Այլև զքանի թուղթնն, զորս ինդրեալ էս ի վե-

րայ ոմանց ի Ղզլար վանն Հոգեբաժնից և յիշատակաց, և Բաքուայ գանձապետն մեր վանն ազատեալ անգլուխ գաւազանին:

Չայտոսիկ և զայլ այսպիսի թուղթս երբ ի գլուխ բերցուք, ընդ նուիրակին առաքելոց եմք, որ թէեւ ի Հաշտարիսան կամ ի մերձակայսն գտանիցէ գրեզ, ի միասին Հասուսջիք զթուղթն յուրաքանչիւր տեղիս, և զթարգմանելիսն թարգմանել տաջիք, և այնպէս մատուցիք: Բայց աստուածապսակեալ մեծի կայսեր և վեզիրի և այլ խորհրդական ի իշխանաց թուղթք Հարեանցօրէն գրել ոչ լինելով, մնան մինչև ի յղեշն քո զօրինակս թղթոցն և պարգևացն:

Եւ յաղագս այսոցիկ այժմոյս գրեցաք զայս թուղթ առ սիրելիդ մեր, զի նախագէտ լիցիս զգալոյն նուիրակին, մանաւանդ գիտելով, թէ յուղարկեալ օրինակքդ կայսերական նամակին և այլոց՝ մեզ չեն Հասեալ, փութասցիս նորապէս յուղարկել զգուշութեամբ ըստ ուղիղ թարգմանութեանցն, այլև զանուանս կայսերուհւոյն և կայսերազանցն, թէ որպէս վայելուչք իցեն գրիլ նաև զօրինակս պնակին և կտորիցն և սնկարեցուցեալ ի թղթի ըստ ամենայն Հանգամանացն, յղեսցես, զի տեսանելով զբանսն նամակացն և զորպիսութիւն իրացն, տեղեկաբար գրեսցուք զարժանի շնորհակալութիւնսն, զի անպախարակելի և ուղիղ լիցին բանքն մեր:

Այլև՝ գրեսցես ի Վիրս առ որս առաքեսցես զթուղթսդ, չբանալ զպաշարանս թղթոցն մերոց, յորմէ յառաջանան վնասք արեան չափք, այլ անբաց և զգուշութեամբ և Հաւատարիմ մարդովք յղեսցեն առ մեզ, զի կասկածանքն ոչ են պակասեալ աստ: Եւ զայն, որ յաղագս յիշեալ իրացն զգուշութեամբ Հասուցանելոյ, ընդ նուիրակին գրելոց եմք:

Զգաղղիացւոցն զօրանալոյն ի Յունաստանէ և ս Հնչի և և ս, թէ Եգիպտոսի և ս տիրեալ իցեն, որով և պաղեստինացիք |2429| կարի իմն վրդովեալք լին, և արքայանիստն ագարացւոց խռովեալ: Այլ զաղանդոյ նոցա կամ զբաղաքական ծիսիցն ոչինչ ստուգիւ լսեմք յումեքէ, եթէ յայդր գո՛յ Հաւաստի ինչ զայնցանէ, խնդրեմք ազդ առնել:

Այլև՝ Աւետիք վարդապետն աշա աւելի քան զեօթն տարի եղև, որ գնաց ի Ժողովումն գանձանակադրամիցն և ի նուիրակութեան Գիլանայ, և վանն վրդովմանցն կողմանցս եկեալ է ի Հաշտարիսան, չգիտեմք յի՞նչ բանի է և յո՞ր դիտման: Արդ, եթէ գանձանակադրամքն ամենայն և թէ Գիլանու նուիրակութիւնն և առաջնորդական Հասոյթքն, և թէ օգնութեանական և այլ ամենայն արդիւնքն յանուն Սրբոյ Աթոռոյս՝ առ ինքն է, որ ոչ դրամ մի է Հասուցեալ, և ոչ գիր ինչ գրեալ մեզ, Հարկիւ գրեմք սիրելոյդ, զի վերահասու լիցիս բանից և դիտման դորին, և Հարկեսցես զորպիսութիւնն իւր գրել մեզ, և խելամոտ արասցես զարդիւնսն առնուլ և դառնալ ի Սուրբ Աթոռս, զի եթէ յայս պակասութեանցս ժամանակի, ոչ Հոգայցէ յօգնութիւն Հասանիլ սրբոյ Տանս, այլ յորո՞ւմ

Ժամանակի է պիտոյանալոյ կամ թէ մինչև յէ՛րբ արտաքոյ աստանդական տատանիլ, ոչ բարւոք առնէ, զոր առնէ: Ուրեմն բաւական Համարեսցի զյամէն, և փութասցի գալ: Այսքան ևս առ այս շատ լիցի:

Չայլ ինչ գրելիս յետոյ թողլով, այժմ ակարտ տամք գրութեանս: Ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ յամի Տեառն 1798 և ի Հոկտեմբերի 18, ի Սուրբ Աթոռս Էջմիածին²³²:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2427-29

^{1462*} **Ի Թիֆլիզ** – Թուղթ ի Թիֆլիզ առ պարոն Սօլօմօնն, եթէ թուղթն Յովսէփայ վարդապետին, զոր յղեալ էիր ի ձեռս մեր թաղէոս վարդապետին, էհաս առ մեզ յորում գրեալ էիր, թէ /526ա/ զկայսերական հրովարտակաց օրինական և զայլ թուղթնսն յղեցի ընդ թղթոյս, բայց այնոքիկ ոչ գոյին, այլ միմիայն օրինակ և թուղթն Յովսէփ պետին՝ առանց պահարանի և կնքոյ: Առ այն գրեցաւ, թէ այս որպէս ի բանէ, եթէ այլք են բացեալ, ընդդէ՛ր պարտին բանալ, և թէ դուք էք բացեալ զմիջի թուղթնսն զի՛նչ էք արարեալ որ չկան:

Եւ թէ ահա զպատասխանի թղթոյն Յովսէփայ վարդապետին գրեալ յղեցաք ընդ թղթոյս ի ձեռս քո, զոր Հաւատարմաւ յողարկեսցես առ նա: Եւ որպէս նմա գրեալ եմք քեզ և առանց հրատարակելոյ այլոց ամբողջապէս Հասանիցին թուղթքն առ մեզ:

Գրեցան թուղթքս յամնոյս ի ԺԸ. (18):

Օրհնութեան եւ շնորհակալութեան նամակներ Բաղէշի Ս. Սարգիս եկեղեցու ժողովրդին «վասն գանձանակագրամին Հասուցելոյ, որ է ... ղուռուշ» (526ա, Ա./1), գանձապետ մահտեսի Օխիկին «վասն գանձանակագրամին Հասուցելոյ և պատուէր արի և Ժիր լինիլն ի գործս իւր» (Ա./2), Ե. (5) խորան եկեղեցու ժողովրդին «վասն Հասուցեալ գանձանակագրամին», որ է ... ղուռուշ» (Ա./3), գանձապետ պարոն Ամիրին «վասն գանձանակագրամին Հասուցելոյ և վասն գործոյն արի և Ժիր լինիլ» (Ա./4):

Թուղթք ի Մեծն Պօլիս

^{1463*} **Ի Մեծն Պօլիս** – Թուղթ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն. յիշումն յանցեալ ամի ի Հոկ[տեմբերի] Ժ. (10), ի նոյ[եմբերի] Չ. (6) և ի դեկ[տեմբերի] ԻԴ. (24) գրեալ թղթոցն մերոց՝ Հանդերձ ինդրեալ բազում թղթովքն և ծանուցումն յապրիլի 11 գրեալ թղթոյն առ մեր Աստուածատուր վարդապետն, յորում թէ զնորին պատասխանին ևս ի սեպ[տեմբերի] 18 գրեցաք՝ Հանդերձ թղթովք առ պարոն Ստեփանն և առ Անդրէաս աղայն, ընդ որս և զքոյդ ի դեկ[տեմբերի] Դ. (4) յղեալ սիահ-

²³² Համառոտ տարբերակը տե՛ս ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 525բ, Ա./1:

ւոյդ բոլոր թուղթման էնաֆից և այլոց տրոց զամենայն գրեալ ի միասին առաքեցաք: Եւ Հարկ վասն երկար միջոցի թուղթ չգրելոյն առ մեզ, թուղթ գրելով ծանուցե՛ զորպիսութիւնն իւր: Յիշումն ևս վասն 5200 ղուռուշ փօլիցային, թէ 11 օր վատային զայն յիշեալ դրամնն Հատուցես նոցա օրտունուն: Ի թղթոջս ողջոյն գրեցաւ պատրիարգին: [Գրեցաւ] յամնոյս ի Ի. (20):

1464* Դաւա առ սա, եթէ ի Կարին բնակեալ մահտեսի Գօրօյեան մահտեսի Սերօբի չրաղ պարոն Նազարէթն ի կողմանէ նորա Հասոյց մեզ աստ, Հինգ Հազար և ԲՃ. (5200) ղուռուշ կէշար դրամ՝ և փօլիցագիր ինդրեաց, որ ի տեղդ առնուցուն, վասն որոյ և մէք զայս 5200 ղուռուշի փօլիցագիրս գրեալ ի վերայ քոյ ետուք Նազարէթին, որով դու յայդր ի Պօլիս Հատուցես նոցա օրտունին և զղաւզագիրս պաշտեցես յաւուր Հաշուատրութեան քում:

[Գրեցաւ] յամնոյս ի. (20):

1465* Թուղթ ի Շուլավէր առ մէլիք Սարգիսն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, վասն ոմանց բանից: Գրեցաւ թուղթս յերևան, ի Հոկ[տեմբերի] Է. (7), բայց սխալմամբ աստ եղաւ:

1798 թ., նոյեմբեր

526բ

1466* Ի Թէլաւ - Թուղթ ի Թէլաւ առ տէր Սարգիսն, եթէ երկոքին թուղթք քո ի յուլիսի ԺԿԹ. (19) և ի սեպ[տեմբերի] ԻԹԹ. (29) Հասին առ մեզ և իմացաք զգրեալսդ, և թէ զՍրբոյ Աթոռոյս քանից ճորտից սիաՀին, որ յղեալ էիր, էՀաս առ մեզ և տեսաք, և վասն գանձասարցի Սարգսին, զոր ինչ գրեալ էիր, զայն ևս իմացաք, ի կողմանէ նորին տեղւոյդ իշխօղն ևս գրեալ էիր և մէք աՀա զթուղթ գրեցաք առ նա և անկարելի գոլ ցուցաք զինդիր նորին:

Վասն Բ. - ուց (2) երիցացն, որ զբանս էիր գրեալ, գիտեցաք, զանկարգ արարմանց նոցին, արդ այժմոյս տեղւոյդ իշխօղն գՔրիստոսամուխ սուրբ Գեղարդն ինդրեալ էր ի մէնջ ի պատճառս Հիւանդութեան կողմանցդ և մէք աՀա զնոյն առաքեցաք ձեռամբ Յովհաննէս վարդապետին և պատուիրեցաք նմա վերահասու լինիլ որպիսութեան բանին: Ուրեմն ի գայն նորա յայդր իսօսեսցիս ընդ նմա և զկոնդակսդ ցուցես, որ նա ի դիմաց մերոց սաստեսցէ նոցա ձեռն քարշիլ յարարմանց իւրեանց:

Հնորհակալութիւն վասն Բ. (2) լիտր մոմին, որ ձեռամբ Հաքարօյին յղեալ էր, և յանձնարարութիւն վասն Յովհաննէս վարդապետին, որ զսուրբ Գեղարդն տանէր ի կողմննս թիֆլիզու:

Գրեցաւ յամնոյս ի Գ. (3):

1467* Ի Թիֆլիզ - Թուղթ ի Թիֆլիզ առ գործակալ տէր Յովհաննէսն. ծանուցումն ի սեպ[տեմբերի] 7-ին գրեալ թղթոյն, առ մեզ Հասանելոյն ի Հոկ[տեմբերի] 28. յորում, թէ իմացաք յա-

ուսմէ գրեալ թղթոյն մերոյ առ քեզ զՀասանիւն: Եւ թէ յաղագս բակուաստին և գուգէթին, որ գրեալ էիր, թէ Հասին և կնիքն քակեցեալ էր, և Հարցեալ էիր վասն չափուցն, թէ որքա՞ն իցէն, և դու յայդր զառ քեզ Հասեալն քաղաքի գազովն չափեալ էիր, որ գուգէթն 19 գազ է, և բակուաստն՝ 11 գազ և կէս է, առ այն ծանի՛ր, զի տէր Ղազարն ի թղթոջ իւրումն շանակեալ է զգուգէթն գոլ իհ: (27) ուռուսի գազ և զբակուաստն գոլ իԱ: (21) ուռուսի գազ: Եւ մէք ի տեղս Համեմատեցաք, որ գուգէթն ամբողջ է, իսկ ի բակուաստն Գ. (3) գազ և Ա. (1) չարէք կտրեալ է բերօղն: Եւ թէ տէր Ղազարին ևս, որ գրեալ և Հարցեալ էս, իցէ թէ նա ևս սոյնպէս ծանուցեալ իցէ քեզ, ուրեմն քաղաքի գազով Գ. (3) գազ և Ա. (1) չարէք բակուաստն պարտիս պահանջել ի բերօղէն և զորպիսութիւնն ծանուցանել մեզ:

Իսկ յաղագս ժանտախտին ի կողմունսդ ևս ճարակելոյ, որ գրեալ էիր, տրտմութիւն եղև մեզ, վասն որոյ ըստ ինդրոյ իշխօղին, ահա առաքեցաք զԶրիստոսամուկս սուրբ Գեղարդն՝ ի փարատումն մահտարածամին՝ ձեռամբ Յովհաննէս վարդապետին, որոյ ի գալն ի սէր և ի մեծարանս ընդունիլ պարտիս և մանաւանդ սրբոյ Գեղարդեանն ամենայն զգուշութեամբ սպասաւորել: Եւ զվերոյ յիշեալ գուգէթն և բակուաստն ի կտրողէն և ծրարեալ, և քոյդ կնքովն կնքեալ, էթէ ծանօթ և Հաւատարիմ մարդ պատահիցի ընդ նմա յղեսցես: Իսկ էթէ եկօղ չպատահիցի ի Հարկէ Յովհաննէս վարդապետին յանձնելոց էս առ ի բերել: Դարձեալ տէր Նիկողայոն, որ վախճանեցաւ, և եղբօրորդիքն նորա, որ վախճանեցան, և ի տանէ նոցին քահանայ չկայ այժմ, արդեօ՞ք զնոցա ծուխ ժողովուրդն ի ներկայումս ո՞վ ոք Հովուութենէ լաւապէս վերահասու եղեալ գրեսցես մեզ զորպիսութիւնն:

Գրեցաւ յամնոյս ի Գ. (3):

¹⁴⁶⁸ **Ի Թիֆլիզ** - Թուղթ առ Վրաց արքայ Գեորգի խանն, ի պատասխանի Բ. (2) թղթոց նորա, որոց մինն էր ընդ Չալ ծառային իւրոյ՝ վասն նորին գերի անկեալ կնոջն, և միւսն ընդ մէլիք Հաքարօյին՝ յաղագս գանձասարցի Սարգսին, իբր ի Հաղբատ զետեղելոյ:

Յորմէ սիրով և օրհնութեամբ և փրկչականդ սուրբ ողջունիւ ծանուցումն լիցի ամենագնիւ և գերապատուական սիրելելոյդ իմոյ և իննամառատ բարեկամի Սրբոյ Աթոռոյս մերոյ՝ բարեպաշտ և վսեմամիտ և պերճափառ քրիստոսազօր Գիօրկի արքայիդ օրհնեցելոյ ազգիդ Վրաց: Բանգի երկու թուղթք ձեր ժամանեցին առ մեզ, ընդ ծառայիցն քոց Փալեանդի որդի Չալին և մէլիք Հաքարօյին, և իմացաք զգրեալսդ: Որոց միովն ծանուցեալ էիր զՉալի գրեցեալ ամոննոյ ազատիւն ի Չուղայ, ձեռամբ Մկրտում աղայի ուրումն մերագնէի, և ինդրեալ էիր գրել անդ վասն այնր:

Եւ զի որպէս ցաւալի է մեզ գերութիւնն քրիստոնէից անձանց, նոյնպէս և ախորժեղի է ազատութիւնն: Հաճեցաք Հոգ տանիլ և գրել բայց յիրաւի ահա մէկ տարի մերձ է լրանալ, որ մէկ վարդապետ առաքեցաք, և դեռ գիր չունեմք ի նմանէ, թէ ո՛ր և զհարդկայ, զի ճանապարհքն խափանեալք և վտանգաւորեալք են, և երթևեկութիւնն Հատեալ իսպառ, մանաւանդ զի Ջաֆարղուլին, որ զԽօյ պաշարեալ է և Թարվիզու քանի տուն Հայքն ևս ցրուեալք կան յերկիւղէ ժանտախտին, ոչ անտի առ մեզ թուղթ գայ, և ոչ մերն առ նոսա Հասուցանօղ գտանի: Վասն որոյ աստանօր մինչ խօսեցաք սակս փայեկի, մէլիք Հաքարօն և Չալն ասացին, թէ մէկ գնացօղ կայ:

Արդ, եթէ այն փայակն եղև, ընդ նմա այժմ՝ յղեսցուք զթուղթն ձեր և մեր: Եւ թէ ոչ գնայցէ այն, յետ միջոցի ի բացման ճանապարհացն յղեսցուք, և զոր ինչ Աստուած յաջողեսցէ |2430| և իմանայցեմք, ծանուցուք մեծարգութիւն ձերում:

Իսկ միւս թղթովդ, որ ընդ մէլիք Հաքարօյին, գրեալ էիր վասն Սարգսի ուրումն յանցաւորի՝ իբրև զարժանի ոք բնակութիւն տալ ի վիճակի մերում: Իսկ թէպէտ նա երես չունելով ուրեք՝ անկեալ է ի դրունս ձեր և պակասամիտ անձինք ոմանք դիւրին իմն են թուեցուցեալ զօտարացեալն զայն առնուլ ի տուն, սակայն ըստ կանոնաց կարգադրութեան մերոյ, իւրաքանչիւր ոք զիւր տեղին պարտի ճանաչել և գտանել, և ոչ թէ զիւրն խանգարել և զայլոցն ևս խանգարելոյ ակն դնել:

Արդ, բարձրապատիւ նազելիդ իմ, բարեկամն ի բարեկամէն զկարելին և զօրինաւորն ինդրէ և որ զանկարելին, այլ այդ ընդ անկարելիսն է, զի երբեմն առ Հոգելոյս Հարբն քով մեծ արքային ևս այդպիսի ինչ սկսաւ, բայց փութով խափանեցաւ: Առ այս թէ խօսիլ լինիցի, յոյժ երկարելոց է, բայց մեք ի ծանր Հիւանդութեան գողով, ոչ կարեմք երկարել: Այսքան բաւեսցի, և նորամիտ լիցիս: Ողջ լեր խաղաղական կենօք և ուղիղ դատողութեամբ ի փառս Քրիստոսի և ի սփոփանս վշտագնութեան մերում. ամէն:

Գրեցաւ յամի Տեառն 1798 և ի նոյեմբերի Դ. (4) ի Սուրբ Էջմիածին²³³:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2422-30

¹⁴⁶⁹ 1798 թ., նոյեմբեր - Թուղթ առ տէր Յակոբն ի Վան Հանգուցեալ Նուիրակ Աբրահամ վարդապետի իրացն և արդեանց դաւթարին, թէ ո՛ր և իցէ և այլն²³⁴:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 114աբ

²³³ Համառոտ տարբերակը տե՛ս ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 526բ, Ա./3:

²³⁴ Տէր Հակոբին (Վան)՝ հանգուցյալ Աբրահամ վարդապետի իրերի և միջոցների մատչանի (դավթարի) վերաբերյալ գրված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 663:

1470* Թուղթ մի ևս, թէ ահա ըստ ինդրոյ քո գժրիստոսամուխ սուրբ Գեղարդն յեղեցաք ընդ Յովհաննէս վարդապետին, իցէ թէ միջնորդութեամբ սրբոյ Գեղարդեանն բարձցէ զմահտառաժամն ի ձենջ և ի կողմանցդ:

Գրեցաւ յամնոյս ի Գ. (3):

1471 Թուղթ առ այրի թագուհին Վրաց Դարեշան. մսի-թարութիւն վանն մահուան առն նորա՝ Հերակլ արքային Վրաց, և ծանուցումն պատճառաց յետանալոյ թղթոյս:

Յորմէ ժամանեսցէ թուղթ...

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ ծանուցումն լիցի բարեպաշտութեան ձերում: Չի յայս քանի տարիս, թէ որքա՞ն աղէտալի փորձութիւնք Հասին ի վերայ մեր և կողմանցս, յայտնի են ձեզ: Իսկ ի վերայ այսոցիկ մինչ աստուածասէր և գերահռչակ մեծի արքայի կենացն վճարման բօթն էհաս առ մեզ, բազմապատիկ եղև ցան մեր և տրտմեցաք յոյժ, որ արդարև մեծի տխրութեան արժանի էր այնպիսոյ գերերևելի և ամենապատուական բարեմիտ անձին պակասին ի միջոյ: Բայց զի գործ Աստուծոյ է և ամենէքան ընդ նոյն ճանապարհ գնալոց եմք, զի՞նչ ունիմք առնել, այլ թէ փառս տալ բարերար կամաց Արարչին: Որ և լուսաւորեսցէ զհոգի Հանգուցեալ մեծի արքային, դասելով ընդ նախնի երջանիկ թագաւորսն, և զքեզ Հանդերձ բարեբողբոջ թագազարմ որդւովքոջ ողջ պաշէսցէ և մսիթարեսցէ, օրհնեսցէ և զօրացուցէ և ի պայծառաշուք յարգութեան պաշէսցէ:

Եւ արդ, ըստ բարեկամութեանն օրինի զայս մսիթարութիւն վաղապէս պարտ էաք գրել առ բարեպաշտութիւն ձեր, բայց երբեմն խռովութիւնն Պարսից ընդ տէրութեան երկրիդ, և կասկածն մեր ի բռնաւորաց երկրիս, մանաւանդ ի բերդապահացն Երևանու, արգելս էտուն: Իսկ յանցելումն, յորժամ Երևանու խանն զմի ոմն յղեաց յայդր, և մեզ Հարկ եղև յայնժամ վարդապետաւ միով զսուրբ Յակոբայ աջն յուղարկել, այնպէս պատաշէցաւ, որ մէկ օր միջոց էտուն, յորում առ աւագապատիւ որդին քոյ և գերարգոյ սիրելին մեր՝ նորապսակ Գիօրկի արքայն միայն թուղթ գրել կարացաք: Եւ յայնմ օրէ մինչև զայժմ ևս պէսպէս նեղութեամբք և Հիւանդութեամբք վշտացեալ ձեռնհաս չեղաք գրելոյ ինչ առ գերարգութիւն ձեր:

Այլ նարդենիս դէպ եղեալ մեզ ըստ ինդրոյ նորապերճ օրհնեալ արքային առաքել զքրիստոսամուխ սուրբ |23ա| Գեղարդն, ձեռամբ սիրելի որդւոյն մերոյ՝ շնորհունակ եպիսկոպոսին, փոյթ կալաք զայս օրհնութեան և մսիթարութեան թուղթ գրել առ բարեպաշտութիւն քո, որով և ինդրեմք, զի մոռասցիս զտրտմութիւնդ և զսուգ, և գոհանալով զՏեառնէ, մսիթարեսցիս, և սփո-

փիչ լիցիս այլոց տրտմեցելոցն: Մանաւանդ և բարի խորհրդակցութեամբ օժանդակեցեն նորապսակ արքային և միւս որդւոցդ թագազարմից, Համակամ և միասիրտ լինիլ և միաբանութեամբ զինելով ընդդէմ անօրէն թշնամեաց, և զերկիրդ ի խաղաղութեան պաշտելով, ինոպ զտեղի Հոգելոյս մեծի արքային և զանուն քաջութեան ունիլ և զբարի Համբաւս տարածանել, որով եթէ քեզ՝ օրհնեցելոյդ և թէ մեզ և ամենայն բարեկամաց ընծայեսցի բաւական ուրախութիւն, ի փառս Քրիստոսի Փրկչին մերոյ:

Եւ զայլ որպիսութիւնս մեր և սրբոյ Գաշիս ի Հաւատարիմ գրաբերէս իմանալով, ողջ և խաղաղ կացցես Տերամբ Յիսուսիւ:

Գրեցաւ յամի Տեառն 1798, և ի նոյեմբերի 3, ի Սուրբ Աթոռս Էջմիածին²³⁵:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 22բ-3ա

¹⁴⁷² **1798 թ., 8 նոյեմբերի - Թուղթ առ Ղարսայ առաջնորդ Յովնաննէս վարդապետն և առ պարոն Գէորգն, ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էին վասն փաշայի և Ալի բէկի խռովութեանն ընդ մեզ և ինդրեալ էին ընծայ յղել:**

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 23ա-4ա

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 527ա

Թուղթք ի Ղարս և ի Ղօշաւանք

^{1473*} **Ի Ղօշաւանք - Թուղթ առ Ղօշաւանից առաջնորդ Յովնաննէս վարդապետն և Գէորգն աղայն, եթէ թուղթս գրեցեալ առաջնորդիդ իբր յերկոցունցդ էհաս առ մեզ և իմացաք զգրեալսդ ձեր, յորում ծանուցեալ էիր զգնալդ ի քաղաքն և խօսիլդ ընդ իշխանան, և ապա միջնորդութեամբ Գէորգ աղային տեսանելդ գրահիաբէկն և զփաշայն և նոցա զինչ թօշմամբ առնենը, և յետոյ որպէս թէ մեղմանալն: Եւ զի ասացեալ է, թէ ֆէրման բերել կտամ, որ Էջմիածնի վարդապետն ի Ղարս չնստի, այսօր մեք ֆէրման և բերամբ ունինք և նօքօք շրջին ի տէրութիւն օսմանցւոց մեր վարդապետքն, և յիւրաքանչիւր տեղիս գանձանակք գոն յանուն Սրբոյ Աթոռոյս, այն մեծամեծ վազիրայ, որն է մեր գանձանակին կամ արդեանցն Հրաման Հանեալ, թէ կտրեցէք, մի՛ տայք, որ դուք առնեն: Եւ թէ, որ գրեալ էիր, թէ Ալի բէկն զթղթոյդ պատասխանն ոչ գրեաց՝ ասելով, թէ դուք գրեցէք, որ ընծայ ուղարկէ, մեք խոստացեալ եմք զընծայս յուղարկել: Բայց դեռևս չեմք խաթրջամ ի նոցանէ, վասն որոյ թուղթ գրեցաք առ Ալի բէկն, որ մեզ խաթրջամութեան թուղթ գրէ և ապա մարդ յղեսցուք: Տէ՛ս ի փոքր տեսեր յերեան:**

Գրեցաւ յամնոյս ի Ը. (8):

²³⁵ Համառոտ տարբերակը տե՛ս ՄՄ ձեռ. Հ^մ 4481, 527ա, Ա./2:

^{1474*} **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն, եթէ թուղթն, զոր դու և Գէորգն էիք գրեալ, զնորին պատասխանն երկարապէս գրեցաք ձեզ, զոր ընթերցեալ իմանայցէք զդիտմունս բանիցն, բայց դու թէև քանիցս գրեցեր մեզ զհաշայի խռովութիւնն և՛ գանձանակաց, և՛ արդեանց, աղագաւ ասելն, թէ խափանեցէ՛ք և Հատէ՛ք: Բայց պարզապէս չիմացաք, թէ զգանձանակն խափանեալ են յիրաւի, թէ ոչ, վասն որոյ լաւապէս իմացեալ ծանուցես մեզ, զի գիտասցուք:

[Գրեցաւ] յամնոյս Ը. (8):

Թուղթք գրեալք ի Վան

^{1475*} **Ի Վան** - Թուղթ առ Վանայ նուիրակ Աբրահամ վարդապետն, եթէ ի Հոկ[տեմբերի] ելն գրեալ թուղթն քո էՀաս առ մեզ, բայց զոր յիշեալ էիր, թէ ի Հոկ[տեմբերի] ԺԳ. (13) ևս իցես թուղթ գրեալ, այն թուղթն ոչ է Հասեալ առ մեզ: Եւ թէ երկրորդ թղթով քով գիտեցաք զանվնաս Հասանիլդ ի Վան և Հանդերձեալ լինիլդ գնալ ի գաւառն Մաւմուտանու:

Իսկ յաղագս Լմայ սրբոյ անապատի վանաւայր Աբրահամ վարդապետին և Հոգւոց վանից առաջնորդ Դանիէլ վարդապետին, որ գրեալ էիր և զՀանգուցեալ նուիրակի քսուրքն, որ նորապէս սիաՀի արարեալ և յղեալ էիր՝ ձեռամբ վերոյ յիշեալ Աբրահամ վարդապետին, ըստ քոյդ սիաՀոյդ ամբողջապէս Հասին առ մեզ: Եւ վասն նաղտիցն, զոր ինչ գրեալ էիր առ մեր Աստուածատուր վարդապետն, զնոցին պատասխանին ի նորա թղթոյն ունիս իմանալ: Եւ թէ տէր Յակոբն, որ յառաջմէ դաւթար էր արարեալ զիրնս Հանգուցելոյն, այնմ դաւթարոջն մատաղացուք կային, այժմ ոչ ի քոյդ սիաՀոյդ կային, նոյնպէս և ոչ ձիանն: Եւ Հարկ, զի ընդ Յակոբին Հարցեալ տեղեկասցին, վասն ձիոցն և մատաղոցն և զնուիրակի դաւթարն որոնեալ գտցեն և առ մեզ յղեսցեն:

Եւ վասն Աբրահամ և Դանիէլ պետացն, որ յանձնարարութիւնս /527թ/ էիր գրեալ և ինդրեալ էիր զնոսս եպիսկոպոս ձեռնադրել, այժմոյս ոչ յաջողեցաւ, այլ սիրով և խիլայիք յետս դարձուցեալ, խոստացաք, որ ի գարնանն եկեալ, եթէ Տէր յաջողեսցէ, եպիսկոպոս ձեռնադրեսցուք: Եւ թէ Հոգւոց վանից առաջնորդ Դանիէլ վարդապետն, որ գնացեալ էր ի մերձակայ գիւղորայքն վասն նուիրակութեան անտի բերեալ է ՃԼԵ. (135) զուռուչ և զկնի վախճանման նուիրակին, զդրամն տարեալ է առ Ախիջան աղայն և նա ասացեալ է տանել տալ Երուսաղեմայ նուիրակին: Վասն որոյ ի Հանդիպիլդ քո առ նա, զայն դրամն առեալ ի նմանէ, գրեսցես մեզ:

¹⁴⁷⁶ **Ի Վիմն** - Կոնդակ ի վերայ Լմայ անապատի միաբանիցն, ի պատասխանի մահաարին նոցա ընդ նորոգ առաջնորդին իւրեանց՝ Աբրահամ վարդապետին, որ քանի ամօք կարգեցեալ էր և այժմ էին, առ որ նախ մեղադրութիւն և ապա Հայրովթեանն նորին Հաստատութիւն: Եւ զի ինդրեալ էին եպիսկոպոս ձեռնադրել զնա: Առ այն գրեցաւ, թէ այժմ Հիւանդ էաք և այլն²³⁶:

Տէ՛ս ի մեծ տետեր յերեսն 2517:

^{1477*} **Թուղթ ի Վան առ տէր Յակոբն**, վասն Հանգուցեալ նուիրակ Աբրահամ վարդապետի իրացն և արդեանց դավթարին, թէ ուր իցէ: Եւ թէ մահտեսի թօմասն, որ աստ աշճի էր, յայսմ ամի վախճանեցաւ, այլ ի տեղս ըստ կարգի աշճի ոչ գտանի, վասն որոյ փոյթ կալցիս զմի աշճի գտանիլ և առաքել առ մեզ: Տէ՛ս ի փոքր տետեր յեր[ես] **ՇԻԳ**. (523):

¹⁴⁷⁸ **Թուղթ ի Վան առ մահտեսի թօմայեան Յարութիւնն**, ի պատասխանի թղթոյն, որ ընդ Հանգուցեալ նուիրակ Աբրահամ վարդապետի իրացն և նորոգ նուիրակ Աբրահամ վարդապետին, և Լմայ և Կտուցայ անապատաց վանահարցն, և Հոգուց վանից առաջնորդին: Սմա ևս գրեցաւ զմի աշճի գտանիլ և յղէ: Տէ՛ս ի փոքր տետեր յերեսն **ՅԽԱ**. (341):

¹⁴⁷⁹ **1798 թ., 11 նոյեմբերի** - **Թուղթ առ Բայազիտոյ իշխանն ընդ ընծայիցն**, որ յղեցաւ առ վախճանեալ Իսաղ փաշայի որդի Մահմետ նոր փաշայն: Ընդ որում և յղեցաւ սոցա գինի:

ՄՄ ձեռ. Հ^ն 6298, էջ 24բ-5ա

^{1480*} **Ի Կտուց** - **Թուղթ առ Կտուցու սրբոյ անապատի վանահայր Կարապետ վարդապետն**, ի պատասխանի թղթոյն նորա, որ ինդիր էի արարեալ վասն վանահայրութեանն կոնդակ գրել առ, որ գրեցաւ զկոնդակն և յղեցաւ և շնորհակալութիւն վասն քուն ոսկւոյն աջահամբուրին²³⁷:

²³⁶ Սկզբնաղբբյուրներում կիմ անապատի առաջնորդ Աբրահամ վարդապետի մասին տեղեկություններ գրեթե չեն պահպանվել: Հայտնի է միայն, որ Դուկաս Կարնեցի կաթողիկոսի հրամանով 1792 թ. կիմ անապատի վանահայր նշանակված Միխայել վարդապետին հաջորդել է Վարդան վարդապետը, որն իր վանահայրության տարիները մասամբ անցկացրել է նաև Ս. էջմիածնում, «իսկ անապատում նրա փոխարեն հաջորդաբար վանահայրեր են եղել Աբրահամ և Դավիթ վարդապետները» (Լ. Թումանյան, Վանա լճի կղզիների վանների գրչության կենտրոնները, Երևան, 2019, էջ 194): Խնդրո առաջկա վավերագրից տեղեկանում ենք, որ միաբանությունը սիրով ու հարգանքով է վերաբերվել իրենց «նորոգ», այսինքն՝ նորանշանակ առաջնորդ Աբրահամ վարդապետին և կաթողիկոսից խնդրել են անգամ նրան եպիսկոպոս ձեռնադրել:

²³⁷ Կտուց անապատի միաբաններին ուղղված Դավիթ Ե. էնեգեբցի (1801-1807 թթ.) կաթողիկոսի 1801 թ. թղթում դարձյալ վկայված է վանահայր Կարապետ վարդապետի անունը: Ընդ որում, Կարապետ վարդապետի օրոք է նորոգվել եկեղեցու արդեն ֆայնայված և անմխիթար վիճակում գտնվող գավիթը (ԴՂՊ, գիրք 2., Դավիթ կաթողիկոս, հրատ. Գիտ ազգ քնն Աղանեանց, Թիֆլիս, 1904, սյուն 131): Հայտնի է, որ անապատի փայտաշեն գավիթը փայտով

1481* Թուղթ ի վան առ Պարիկեան մահտեսի Սահակ աղայն, պարոն Վարդանն, պարոն Ալամն և պարոն Յակոբն, ի պատասխանի թղթոյն նոցա, որ վանն Հոգւոց վանից առաջնորդ Դանիելին:

1482* Թուղթ ի վան առ Հանգուցեալ Իսաջանի եղբայր մահտեսի Փիրիջանն, ի պատասխանի թղթոյն նորա ընդ Հոգւոց վանից առաջնորդ Դանիել պետին գրեցելոյ:

1483* Ի Խօշապ - Կոնդակ ի վերայ Խօշապու քաղաքի և բոլոր Մահմուտանու ժողովրդեանն, ի պատասխանի մահաարին նոցա, որք ինդիր էին արարեալ վանն Հոգւոց վանիցն առաջնորդին արձակել զնա ի կապանացն և եպիսկոպոս ձեռնադրել, առ որս գրեցաւ, թէ չկարաց օրհնել ըստ որում Հիւանդ էաք:

Գրեցան թուղթքս յամնոյս ի ԻԴ. (24):

528ա

1484* Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն. յիշումն ի սոյն ամնոյ Ը. -ին (8) գրեալ թղթոյն մերոյ առ ինքն և առ Գէորդ աղայն և յանձնարարութիւն վանն Լմայ անապատի ժողովարար Դաւիթ վարդապետին, որ գնայր ի ժողովարարութիւն ի կողմոնս Ղարսայ:

[Գրեցաւ] յամնոյս ի ԻԵ. (25):

1485* Ի Ղօշավանք - Թուղթ դարձեալ առ Ղօշավանից առաջնորդն և պարոն Գէորդն. Համուօտութիւն ի նոյն [մբերի] Ը. -ին (8) գրեալ կրկին նոյն թղթոյ: Բայց այժմ գրեցաւ, թէ թէպէտ կամէաք նուիրակ յուղարկել Հանդերձ ընծայիւք: Բայց թէ աստ և թէ յայդր ի խռովութեան գոլով, ոչ յաջողեցաւ այժմ, սորա ամնոյ թիւն եղաւ ի ԺԶ. (16):

1486* Փուսուկայ մի առ սա, թէ որ փոքր-ինչ թղթով խորհրդական բանս էիր ծանուցեալ իմացաք և զոր այժմոյս ոչ էիր պատկան Համարեալ զնուիրակ և զընծայ յղէն Հաւանեցաք և առ նոր թուղթ էիր ինդրեալ, վանն որոյ ահա գրեալ յղեցաք, ուրեմն զայն երկու թուղթմն, որ առ քեզ կայ, յղեսցես Հաւատարմաւ:

Եւ պատուէր, թէ Բ. (2) բեռն աւանդքն, որ կայ առ քեզ ի գնալն քո ի քաղաքն աւագ տօնից աւուրնս, զայն բեռինս տարեալ ընդ քեզ յանձնեսցես Հաւատարիմ մարդոյ և գիր առցես ի նմանէ և յայնմ կողմանէ ծանուցես մեզ ի միամտութիւն:

Գրեցաւ յամնոյս ի ԻԷ. (27):

փոխարինելու գործը Կարապետ վարդապետը նախաձեռնել է նոյն 1801 թ., երբ Ս. էջմիածնի Դավիթ կաթողիկոսի օրհնությամբ ստանալու համար Մայր Աթոռ է ուղարկում Գրիգոր վարդապետին: Ողջունելով Կտուցի միաբանների նախաձեռնությամբ՝ կաթողիկոսը հանդիմանել է Կարապետ վանահորն իրեն շայցելելու համար: Կարապետ վարդապետը վախճանվել է 1829 թ. (Ռ. Թումանյան, Վանա լճի կղզիների վանքերի գոչության կենտրոնները, էջ 205) (վավ. 1480):

1487 1798 թ., նոյեմբեր - Թուրքի առ Գիօրկի արքայն Վրաց ընդ սուրբ Գեղարդեանն, ի պատասխանի երկուց թղթոց նորա, զորս ընդ Միրզայ Աբրահամին և ընդ այլոց գրելով, յոյժ ստիպմամբ և թախանձանօք ինդրեալ էր զսուրբ Գեղարդն, ի փարատումն ժանտախտին ի յերկրէն:

Յորմէ սիրով մեծաւ և օրհնութեամբ բազմաւ ժամանեցէ ողջոյն քրիստոսածիր, բարձրապատիւ և մեծաբաղձիկ սիրելոյդ մերում, և ստուգապէս բարեկամիդ սրբոյ գաւհիս մերոյ՝ աստուածասէր և նովիմբ զօրացեալ, բարեպաշտօն և շքեղափառ Գիօրկի մեծազօր արքայիդ օրհնեցելոյ ազգիդ Վրաց, և ամենեցուն, որք քո են, և ընդ ձեռամբ քով մեծաց և փոքունց ի Տէր ինդալ:

[Շտորհք]

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ գիտութիւն լիցի յարգութեան ձերում: Չի երկու թուրք ձեր, ձեռամբ Հաւատարիմ ծառային ձերոյ և Հոգևոր որդւոյն մերոյ՝ Միրզայ Աբրահամին Հասին առ մեզ, որովք իմացեալ նախ զողջունէ պատուական անձինդ ուրախ եղաք և փառս մատուցաք Աստուծոյ: Եւ ապա ծանեաք զինդիրդ, յաղագս սրբոյ Գեղարդեանն յուղարկելոյ, ոյր սակս և սիրելին մեր՝ պատուամեծար Գօգիա բէկն ևս յԵրևանու գրեալ էր:

Արդարև ցաւեցաք յոյժ վասն յերկարելոյ ժանտախտին յօրհնեցելումդ երկրի, և Հաճեցաք կատարումն տալ բարի ինդրոյն ձերում: Բայց զի յաղագս յառաջագոյն ոչ յուղարկելոյն սրանեղեալ և գրեալ էիր զկծական բանս ինչ, իբր թէ անցաւակից իցեմք վշտաց ձերոց: Գիտասջիր առ այն, զի որպէս և յայնժամ յապրիլի ամսեանն գրեցաք, վասն վրդովմանցն երկրիս յառաջմնէ զսուրբ Գեղարդն և զմանս յայնպիսի իրս յղեալ էաք յայլ երկիր առ մերայինսն ի պաշէստ: Վասն որոյ առ ձեռն պատրաստ չունելով զայն, փոխանակ նորա զՍուրբ Յակոբայ աջն առաքեցաք յայդր, ուր այն ևս Հոչակաւոր Հրաշալի է:

Իսկ յետոյ ի երկիրս մերում և ի մերձակայ գիւղ մեր իսկ երևեցաւ ժանտախտն, զոր զքանի տունս գրեթէ վերջացոյց: Եւ թէպէտ այլովք սրբութեամբք և մասամբք թափօր առնել տուաք, սակայն ի մայիսէ մինչև ցյունիսի մէջն յարաժամ թախանձելով զմեզ անհանգիստ արարին, և ակն եդին առ Հասարակ տարագիր լինիլ: Նմին իրի ճարահատ եղեալ մեր, բերել տուաք զսուրբ Գեղարդն ի պաշէստի տեղոջն, և թափօր առնել ետուք, և ժողովուրդն բազմաճոչակ արտասուօք խիստ արարեալ, ողորմութեամբն Աստուծոյ և շտորհիւ սուրբ Գեղարդեանն, փարատեցաւ ժանտամանս:

Այլ զօրհնեցելոյ երկրէդ երբեմն լւեաք յոմանց յոմանց, թէ ցան նուազեալ է, և ակն ունեաք վերջանալոյն, իսկ այժմ որ կրկին ծանուցեալ էիք զաստկութենէն, դարձեալ տրտմեցաք և տարակուսեցաք: Եւ ահա ըստ բարի ինդրոյն ձերում առաքեցաք զքրիս-

տոսամուխ սուրբ Գեղարդն ձեռամբ սիրելի և հոգևոր որդւոյն մե-
րոյ՝ Յովհաննէս Հանճարունակ եպիսկոպոսին: Ընդ որում՝ և զայս
թուղթ օրհնածիր գրեալ առ բարեպաշտութիւն ձեր, ինդրեմք, զի
ջերմեռանդ սիրով և աներկմիտ յուսով ընկալեալ զհրաշագործ
սուրբ զէնդ աստուածեան, Հաւատով Հայցեսցիք ի Քրիստոսէ զո-
ղորմութիւն և զայցելութիւն: Եւ մէք ևս միաբանութեամբ պաղա-
տիմք առ Տէր, շնորհիւ սրբոյ Գեղարդեանն բառնալ զժան-
տախտն և զայլ ամենայն վտանգաւոր փորձութիւնս ի ձէնջ և
յերկրէդ, և պարգևել զապաւոյնութիւն և բարեզուարճութիւն յա-
մենայնի, որ ձեօք և մեզ լիցի ուրախութիւն:

Դարձեալ և ինդրեմք, զի ընդ սքանչելի սրբութեանդ և
զբե՛2335|րօղն դորա՝ յիշեալ Յովհաննէս շնորհառատ եպիսկո-
պոսն, ի սէր և ի ինամն ձեր ունիջիք, և ի շրջագայիլն ի տեղիս
տեղիս, հրամայեսցես բազմութեան զինուորաց կարգել ընդ նոսա
վասն զգուշանալոյ ի ճանապարհական պատահմանց, զի մի գուցէ
թշնամեաց Հանդիպեալ, մշտնջենաւոր աղէտ լիցի սրտից մերոց:
Այլ զգուշութեամբ պաշտանելով յետ կատարման ուխտի և երկր-
պագութեան ձերոյ, այլևս Հաւատարիմ մնարդովք և զինուորք
դարձուցես առ Սուրբ Աթոռս, որոյ աղագաւ շնորհակալ լինելոց
եմք զմեծութենէ ձերմէ:

Եւ զայլ ամենայն որպիսութիւնս մեր ի յեկողացդ իմանալով
ողջ լեր ի Տէր պարագայց ամօք ի հրճուանս մեր. ամէն:

Գրեցաւ յամի Տեառն 1798 և ի նոյեմբերի ... ի Սուրբ Աթոռս
Էջմիածին²³⁸:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2334-35

¹⁴⁸⁸ **1798 թ., նոյեմբեր** - Կոնդակ ի վերայ Կտուցայ անա-
պատի միաբանիցն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն իւ-
րեանց, նախ միսթարութիւն վասն ինքնագլուխ վանահայր կար-
գելոյն Կարապետ վարդապետն, և ապա ներումն, և ըստ ինդրոյն
իւրեանց բան Հաստատութեան վանահայրութեան նորին, և առ
ինքեանս պատուէր՝ Հնազանդ լինիլ նմա:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2341

²³⁸ Վրաց Գեորգի արքային ուղղված՝ 1798 թ. նոյեմբերի նամակի ողջ բովանդակությունը վե-
րաբերում է Վրաստանում ժամտախտի համաճարակին և այդ աղետից ազատվելու համար
Վրաց արքայի խնդրանքին՝ սուրբ Գեղարդը ժամանակավորապես Վրաստան ուղարկելու
համար: Նախկինում ինչ-ինչ պատճառներով Դուկաս հայրապետը սուրբ Գեղարդի փոխա-
րեն Մայր Աթոռի ժամօրհնող Ալեքսիանոս արքեպիսկոպոսի հետ Թիֆլիս էր ուղարկել Ս.
Հակոբ հայրապետի աջը, սակայն աղետը շարունակվում էր, և այս անգամ՝ լայնածավալ
համաճարակի տեսով: Ընդառաջելով հարևան երկրի առաջնորդի խնդրանքին՝ Դուկաս
հայրապետը Մայր Աթոռի միաբան Հովհաննէս եպիսկոպոսի ձեռամբ սուրբ Գեղարդն ու-
ղարկում է Թիֆլիս՝ Վրաց արքայից խնդրելով զինվորական հատուկ պահպանություն նշա-
նակել սրբությանն ու Ս. էջմիածնից ժամանած Հովհաննէս եպիսկոպոսի շրջագայություն-
ների համար:

1798 թ., դեկտեմբեր:

ՄՄ ձեռ. Հ^մ 4481, էջ 528ա

Թուղթք ի Զմիւռնիա և ի Կարին

1489* **Ի Զմիւռնիա** - Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան ի Զմիւռնիա առ Սուլթանօղլի մահտեսի Գէորգն՝ վասն 150 զուռուշ կտակին շնորհակալութիւն, զոր ձեռամբ մահտեսի Կարապետին էհաս ի Սուրբ Աթոռս:

Գրեցաւ յամսոյս ի Գ. (3):

1490* **Ի Թօխատ** - Թուղթ ի Թօխատ առ Հանգուցեալ Յօհաննի որդի պարոն Թումանն, եթէ յառաջմէ, որ թուղթ գրեցաք քեզ յաղագս 1000 զուռուշին, որ Ներսէս վարդապետն թէմէսիկով տուեալ էր քեզ, մնասցէ առ քեզ, որ յետոյ զինչ գրեսցուք քեզ, այնպէս արասցես, այժմ գրեմք քեզ, զի զայն 1000 զուռուշն, որ հասանիլ պարտի ի Սուրբ Աթոռս հաւատարմաւ հասուցես ի Կարին առ գործակալն մեր, և զքո տուեալ թէմէսուկն ընկալցիս ի նոցանէ և զերբ հասուցանելդ գրեսցես մեզ:

Գրեցաւ յամսոյս ի Գ. (3):

1491* **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ պարոն Հայրապետն և պարոն Գասպարն, ի պատասխանի նոյե[մբերի] ԺԵ. -ին (15) գրեալ թղթոյն նոցա, առ որս, թէ Պօլսոյ նուիրակէն, և ի մահտեսի Նիկողայոսէն, և ի Թօխատու նուիրակ Գրիգոր վարդապետէն, որ թուղթ ոչ ընդունիք, իմացաք: Բայց նորա փօլիցայն, որ տուեալ է ի Մատեն Փիլիպոս ամիրային, որ ձեզ հասուցէ, արդե՞ք գիր առիք ի Փիլիպոս ամիրային, ծանուցի՛ք մեզ:

Իսկ Գալուստ վարդապետն, որ մի փոքր գիր է գրեալ ձեզ, թէ մեր թղթոցն պատասխանիս յետ աւուրց յղելոց է, նայիմք: Իսկ տեղւոյդ նուիրակ Գրիգոր վարդապետն, որ եկեալ ի Մոստուրկայ վանքն տուեալ է քեզ յարդեացն 3000 զուռուշ և դուք զավզ էիք ինդրեալ վասն նորա, ահա յղեցաք: Բայց իւր թղթոյն պատասխանի գրել ձեռնհաս չգորով ի զաւգոջն նշանակեցաք, որ թէ յառաջիկայս տեղւոյդ իշխանացն պատասխանին գրելոց իցեմք, նմա ևս գրեսցուք: Վասն Իզմիրու մահտեսի Գէորգի ձեռամբ Կարապետին առ սոսա հասուցեալ 150 /528թ/ զուռուշ կտակին, թէ ահա օրհնութեան թուղթն գրեալ յղեցաք: Վասն օրթախին ձերոյ թօխատցի Թումանին, որ գրեալ էիք, թէ Հիսապներս կտրիցեմք, նա Սրբոյ Աթոռոյդ տալիք ոռնի, թանխէն յետ դրիմք, ասում է թամասուկս Հանէ, տեսնում և այլն: Եւ զթամասուկն ինդրեալ էիք, զի առնուցուք զդրամն, ահա զնորին թէմէսուկն յղեցաք ի ձեռս ձեր և իւրն ևս թուղթ գրեցաք, թէ զթամասուկն քո յղեալ էմք ի Կարին

առ գործակալն մեր, զպարտսդ Հատուցես նոցա և զթամասուկդ ընկալցիս:

Եւ զբարևաթուղթն ևս բաց յղեցաք առ ձեզ, զոր տեսջի՛ք և ապա զմոռն փակեցեալ յղեսջի՛ք առ ինքն և զտալիքն նորա ըստ Հաշտոյ թամասուկին ընկալեալ առ ձեզ, գրեսջի՛ք մեզ զորպիսութիւնն: Եւ թէ յօգոս[տոս] 12 գրած էիք, թէ այն շուշեցի Յակոբի փօլիցայն կտամք, ղապզն կառնումք կուղարկեմք, յետոյ զայլ միւս ղաւզերն յուղարկեալ էիք և զայլ ոչ: Եթէ տուեալ էք զգրամն, ընդդէ՛ր զղաւզն ոչ յուղարկէք և թէ չէք տուեալ, ո՛ր մնաց ղաւզն: Եւ թէ Ժ. (10) Հալապի սպիտակ և ցած աթլաս եմք ինդրեալ, էր չէք յղեալ և կամ պատասխանի գրեալ: Պարոն Գասպարդ ըստ կարգի գրեսցես զպատասխանիս իւրաքանչիւր բանից թղթոցն մերոց և ոչ զանցառութեամբ: Եւ թէ Իզմիրու նուիրակ Մարտիրոս վարդապետն, որ քանի Հարիւր ղուռուշի ինչս է յղեալ ի ձեռս ձեր Հատուցանել Գրիգոր վարդապետին և զգինան առնուլ վասն Սրբոյ Աթոռոյս, զի՛նչ արարիք և այլն: Եւ թէ Իզմիրու եկեալ իրքն, որ յղեալ էիք, Հասին առ մեզ: Եւ որպիսութիւն երկրիս յոյժ Համառօտ: Գրեցաւ յամնոյս ի Գ. (3):

1492* **Ի Կարին** - Ղաւզ ի Կարին առ տեղոյն նուիրակ Գրիգոր վարդապետն, վասն երեք Հազար ղուռուշին Հասուցելոյ առ գործակալն մեր: Եւ թէ որովհետև Հանդերձեալ ես գալ ի Սուրբ Աթոռս, թղթոյդ պատասխանն չգրեցաք և քանզի տեղոյդ իշխանքն ևս էին թուղթ գրեալ, նոցին թղթոց պատասխանն ևս մնաց, յորժամ նոցա պատասխանի գրելոց իցեմք, ունիմք բանս ինչ գրել նոցա, յայնժամ ի գրելն նոցա, քեզ և գրեսցուք:

Գրեցաւ յամնոյս ի Գ. (3):

1493* **Թուղթ օրհնութեան ի Կարին առ մահտեսի Սեղբոնն.** ՀնորՀակալութիւն և օրհնութիւն վասն զմի փոքր արծաթեայ ոսկեզօծ խաչին և Ա. (1) քեալաղայ աղլուխին:

Գրեցաւ ամնոյս ի Ժ. (10):

1494* **Ի վանքն Աղբերկայ** - Թուղթ առ Սուրբ Աղբերկայ վանիցն առաջնորդ Անտօն վարդապետն, եթէ թուղթ առ մեզ էՀաս ձեռամբ տէր Մարկոս քահանային, որով իմացաք զնեղասկրութիւնդ քո և տրտմեցաք: Եւ զոր գրեալ էիր, թէ ի վերայ քո նեղացեալ իցեմք, յիրաւի նեղացեալ էաք, բայց ներողամիտ լինելով յայս անգամ ևս ներեցաք քեզ: Եւ վասն Ժ. (10) Պօլոյ ոսկւոյ աջահամբուրին ՀնորՀակալութիւն: Եւ թէ, որ գրեալ էիր, որպէս թէ ի նուիրակութեան Յովհաննէս վարդապետին Բ. (2) ձի իցես տուեալ, մինն նուիրակին և մէկ ախտայն վասն մեր ընծայ, առ այն գիտեա՛, զի մինչ Յովհաննէս վարդապետն եկն, թէպէտ ձիանք

եբեր, բայց Հասարակ ձիանք էին, մեզ Հեծնելոյ յարմար ձի ոչ գոյր, եթէ ի դիմաց քոց ձի մատուցանէր մեզ, ի Հարկէ յայնժամ շնորհակալութեան թուղթ եաք գրելոց քեզ:

Այլ գրեալ էիր, թէ ի տեղի ոմանց տեղեաց ԲՃ. (200) զօլաթայ իցես տուեալ Յովհաննէս վարդապետին, որ յետոյ ժողովեսցես: Բայց իբրու, թէ չես կարացեալ ժողովել զդրամն և ի քոյդ կողմանէ տուրք ես Համարեալ, այդ անտեղի զրոյց է, զի ժողովուրդքն ի ներքոյ պարտուոց ոչ մնան, ուրեմն այդ մոռննէթ ի վերայ մեր մի՛ բառնալ:

[Գրեցաւ] յամնոյս ի ԺԴ. (14):

529ա

1495* Թուղթ ի Թարվէզ առ մահտեսի Յովհաննէսն, եթէ թիֆլիզեցի տէր Աստուածատուրի թոռ պարոն Եսային ի յաւերման քաղաքին գնացեալ գոլով ի Հեռաւոր տեղիս, մայրն և կինն Հանդերձ որդուովքն գերի են անկեալ վասն որոյ ի գալ դորա յայդր առ ի գնալ ազատել զգերիսն իւր, յամենայն կողմանց ձեռնտու և օգնական լիցիս դմա, որոյ աղագաւ շնորհակալ լինելոց եմք:

Գրեցաւ յամնոյս ի ԺԶ. (16):

Թուղթք ի Զմիւռնիա, ի Վրասպէր և ի Կարին

1496* Ի յԻգմիր - Թուղթ առ Իգմիրու առաջնորդ Մարտիրոս վարդապետն. յիշումն յօգոս[տոսի] ԻԳ. -ին (23) գրեալ թղթոյն մերոյ առ նա, ըստ թղթոց տեղոյ իշխանացն և ծանուցումն վասն Չալիկեան մահտեսի Կարապետի գրեալ թղթոյն առ մեզ Հասանելոյն ընդ թղթոյն իւրոյ, որ առ Թադէոս վարդապետն և վասն սիահւոյն մերոյ յղելոյ ի յօգոս[տոսի] ԻԳ. (23)՝ վասն ժամացուցաց, աթլասից, չուխայից և այլ իրաց, զի Հոգ տարեալ շուտով յղեսցէ:

Եւ թէ յաղագս Չալիկեան մահտեսի Կարապետի տուեալ աջահամբուր 100 մարչիլին և զթոռան վախճանիլն, որ գրեալ էիր, իմացաք, որոց աղագաւ ինքն ևս էր գրեալ, վասն որոյ մխիթարութեան և շնորհակալութեան թուղթ գրեցաք և յղեցաք ի ձեռս քո Հասուցանել առ ինքն: Այլ յանցելումն ամի բանադրանաց թուղթ գրեցաք առ Մարգամու սևագլուին, բայց մինչև ցարդ չիմացաք բան ինչ, եթէ զլուր ինչ իմացեալ լինիս զմաննէ, գրեսցես մեզ ծանուցումն կողմանցս զորպիսութեանց: Ողջոյն տէր Անտօնին և Ստեփան սարկաւագին:

Գրեցաւ յամնոյս ի ԺԷ. (17):

1497* Թուղթ ի յԻգմիր առ Չալիկեան մահտեսի Կարապետն. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն 100 մարչիլ աջահամբուրին և մխիթարութիւն վասն մահուան թոռանն:

[Գրեցաւ] յամնոյս ի ԺԷ. (17):

1498* **Ի Արապկեր** - Թուղթ առ Արապկերու առաջնորդ Մարտիրոս վարդապետն, էթէ յայսմ ամի ի յունիսի ԺԷ. (15) գրեալ թուղթն քո ընդ թղթոյ Փիլիպոս ամիրային Հասին առ մեզ, որով իմացաք զթղթոց մերոց Հասանիլն առ ձեզ: Բայց վանն բանադրանաց թղթոյն տակաւին առ նա չՀասուցանելոյդ՝ տարակուսութիւն է մտաց մերոց, ուրեմն ուր և լինիցի, զբանադրանաց թուղթն առ նա Հասուցես շուտով և մեզ ծանուցես: Եւ զոր գրեալ ինդրեալ էիր նորոգ գրել զառաջնորդական կոնդակն՝ յաւելելով ի նմա և զպատուէրս Հասից և իրաւանց, որոց աղագաւ Փիլիպոս ամիրայն և նուիրակն գրեալ էին, վանն որոյ ըստ ինդրոյ քո և նուիրակին և ամիրային, ահա գրեալ յղեցաք, զոր ի յընկալնուդ առ քեզ պաշտեցէս և զառաջին կոնդակն յանձնեսցէս նուիրակին դարձուցանել առ մեզ:

Գրեցաւ ի յամսոյս ի ԺԷ. (17):

1499* Կոնդակ առաջնորդական կրկին գրեցաւ սմա, զի առաջինն զոմանս բանս պակասաւոր գոլով, կրկին ինդրեալ էր ի սրբազանէն, վանն որոյ և նորա գրեալ տուեալ, յղեաց առ նա:

1500* **Ի Թօխատ** - Թուղթ առ Թօխատու նուիրակ Գրիգոր վարդապետն, էթէ Բ. (2) թուղթք քո Հասին առ մեզ, յայսմ ամի, ի յունիսի 10, ի Մատենու և յուլիսի 22, ի Արապկերու գրեալք, որով իմացաք զանվնաս Հասանիլդ ի վիճակն քո և զձեռնարկելդ ի գործդ: Գրեալ էիր և վանն Փիլիպոս ամիրայի յարգանօք ընկալնուլն զքեզ և զմեր գործակալին Կարնոյ ինդիր կատարելն, թէպէտ շնորհակալութեան թուղթ էաք գրելոց առ նա: Բայց զի մովպետն գնացեալ է եպարքութիւն, Համարիմք թէ և նա գնացեալ իցէ ընդ նմա, վանն որոյ ոչ գրեցաք զթուղթ առ նա:

Իսկ և վանն Արապկերու առաջնորդ Մարտիրոս պետին, որ ինդրեալ էիր զկոնդակն առաջնորդական /529թ/ փոխիլ, այս գրեալ յղեցաք ըստ ինդրոյդ, ի ձեռս քո՝ Հանդերձ առ ինքն գրեալ պատասխան թղթովն մերով, ուրեմն նախ կոնդակն յետ առցես և ապա զնոր կոնդակն իւրն տացես և զխոստումն, զոր նշանակեալ էիր, ի յընդունիլդ ծանուցես մեզ, զի թուղթ առ նա ի միամտութիւն: Հաճի Պապայի բարեդիպուածութեանցն, որ նշանակեալ էիր, իմացաք: Այլև ի թուղթդ առ մեզ և առ Աստուածատուր վարդապետն ոչ գրեալ էիր թէպէտ, սակայն պարոն Հայրապետն և պարոն Գասպարն գրած էին, թէ դու առ ինքեանս գրեալ իցես, թէ Փիլիպոս ամիրային ԸՃՃ. (870) ղուռուչ ետու, որ ի տեղդ փօլիցայ արարեալ, ձեզ Հասուցանէ և յայնմ ժամանակէ մինչև ցայժմ գրին, թէ ոչ ամիրայէն գիր առաք և ոչ փօլիցայն տուող եղև, սորա որպիսութիւնն ծանուցես մեզ, վանն է՞ր իցես գրեալ նոցա այնպէս յայնժամ:

Իսկ վասն արդեանցդ, զոր Հարցեալ էիր որպէս Հասուցանել և զարժողութիւն իւրաքանչիւր ոսկւոց ծանուցեալ էիր, առ նա գիտեա՛, զի այլ տեսակքն մեզ չեն պիտոյ, բայց միայն պաճախլին և մարին, ուրեմն՝ ջանասցէ՛ս զպաճախլին Է. (7) ղուռուշով կամ Է. (7) ղուռուշ և ռուպով առնուլ, իսկ նոր մարին՝ Գ. (3) ղուռուշ և կիսով, կամ Դ. -ից (4) ռուպ պակասով առնուլ և զԲ. (2) տեսակ ոսկւոցն ժողովեալ և մասն չրին արարեալ, կնքեսցես քոյդ կնքովն, եթէ յաթոռայնոցս եկողք Հանդիպեսցին, ընդ նոսա յղեսցես և եթէ եկողք չՀանդիպիցին և Հաւատարիմ վաճառականք իցէն ի Կարին գալոց, նոցա յանձնեսցես Հասուցանել ի Կարին առ գործակալն մեր և զորպիսութիւնն գրեսցես մեզ, զի ի նոցանէ ինդրեալ բերել տայցեմք: Եւ ծանուցումն կողմանցս զորպիսութեանց:

Գրեցաւ յամնոյս ի ԺԷ. (17):

1501* **Ի Կարին** - Թուղթ առ Կարնոյ նուիրակ Գրիգոր վարդապետն, եթէ երկհատոր գրեցեալ Թուղթ քո է Հաս առ մեզ, ի նոյ[եմբերի] էլն, որով իմացաք յաւարտ Հասուցանելը զգործդ և զգնալդ ի Սուրբ Կարապետի վանան յերկիւղէ ժամտախտին: Վասն միսիթարական բանիցն գրեցելոց շնորհակալութիւն:

Եւ թէ յիշեալ Թուղթքն քո թէպէտ ընդ պարոն Հայրապետի և պարոն Գասպարի Թղթոցն Հասին առ մեզ, բայց մեք չժամանեցաք զպատասխանի Թղթոյ քոյ, ընդ նոցին պատասխանոյն գրել, այլ զի գրեալ էին նոքա զերեք Հազար ղուռուշ յանձնելդ ինքեանց և ղաւզ էին ինդրեալ առ քեզ և մեք յայնժամ գրեցաք առ քեզ զղաւզն և յղեցաք՝ խոստանալով յետոյ գրել զպատասխանի Թղթոյդ: Եւ վասն պարոն Հայրապետի վիճոյն, որ Հարցեալ էիր, յայնմ կողմանէ քեզ աշխատ մի՛ լիցի, այլ զի քանի իշխանքն տեղոյդ ի մէջ մտանելով քանիցս գրեալ են մեզ և մեք խոստացեալ եմք զպատասխանի գրել նոցա, թէպէտ այժմ չկարացաք, բայց յետ աւուրց գրելոց եմք, զի և ինքեանք իրաւամբ քննեսցեն: Եւ թէ ըստ խոստմանդ Համարիմք, որ մինչև ցայժմ դարձ առեալ իցես ի Սուրբ Կարապետի վանացն ի Կարին, վասն որոյ գրեմք քեզ, զի առ պարոն Հայրապետն ծրարովք պաճախլու ոսկի աւանդք ի պաճեստ կան և քոյդ նորապէս տուեալ ԳԳԻ. (3000) ղուռուշն, զոր յանձնեալ ես պարոն Հայրապետին և պարոն Գասպարին, և պարոն Հայրապետն տալիք ունի Հանգուցեալ Ներսէս վարդապետին ԱՌ. (1000) ղուռուշ, որոյ սանատ առ մեզ էր, զոր ահա ընդ Թղթոյս յղեցաք առ քեզ, զի զմէկ Հազար ղուռուշն իւր Հէսապովն առցես և զսանատն իւրն տացես, վասն այսոցիկ գրեցաք գործակալացն մերոց, զի զոսկիան կնքեալ ծրարովքն քեզ յանձնեսցեն և զչորս Հազար ղուռուշն ևս ամանաթ շինեալ և կնքեալ, նոյնպէս քեզ տացեն առ ի բերել:

Գրեցաւ յամնոյս ի ԺԷ. (17):

1502* **Ի Կարին** - Թուղթ ի Կարին առ գործակալն մեր պարոն Հայրապետն և պարոն Գասպարն. ծանուցումն /530ա/ ի դեկ[տեմբերի] Գ. (3), Թուղթ գրելոյն մերոյ՝ Լանդերձ Ղազինն Գրիգոր վարդապետին, ընդ նմին և զթումանի թեմեսուն և 150 ղուռուշ Իզմիրու տրոց օրհնութեան թղթովն: Եւ թէ յայնժամ Խոստացաք թեպէտ յայնմիկ թղթոջ, թէ գրեսցուք զպատասխանի թղթոյն ոմանց իշխանաց քաղաքիդ, բայց այժմ անձեռնչաս լինելով յետոյ գրելոց եմք: Այլ ի յԻզմիր և յայլ տեղիս Լարկաւոր գիր ունելով, զայնս աւա գրեալ և պաւարանեալ յղեցաք ի ձեռս ձեր, զոր շուտով Հասուջի՛ք առ նոսա: Ամթայ նուիրակ Մկրտիչ վարդապետի եօթն Լարիւր յիսուն ղուռուշ փօլիցային ձեռամբ ճիկելեւծի օղլի մաւտեսի Գրիգորին առ ձեզ Հասելոյ, որոյ զղաւզն ինդրեալ էիք, աւա գրեալ յղեցաք: Բայց թղթոյ պատասխանին մնաց, եթէ գիտէք զտեղին նորա, թէ ուր է, զղաւզն յուղարկեսջիք Հասանիլ առ նա: Եւ զի Գրիգոր վարդապետն ըստ գրելոյն իւրոյ, այժմ դարձեալ լինի ի քաղաքդ առ ի գալ ի Սուրբ Աթոռոյս, վասն որոյ զայն ծրարան պաճախլու ոսկոց, զորս ի Պօլսոյ յանցելումն ամի Հասեալ է առ քեզ, զայնս յանձնեսցես դմա: Եւ թէ պարոն Հայրապետդ, որ թեմեսուկով ԱՌ. (1000) ղուռուշ ես տալիք ունիս Լանգուցեալ Ներսէս վարդապետին, զկնի վախճանմանն նոյն թամասուն և առ մեզ էանց, աւա առաքեցաք ի ձեռս Գրիգոր վարդապետին, զգրամն ինդրեալ ի քէն և զթամասուն տալ քեզ, ուրեմն զայն ԱՌ. (1000) ղուռուշն ևս իւր Հեսապովն տացես դմա, որ բերցէ առ մեզ:

Գրեցաւ յամնոյս ի ԺԷ. (17):

1503* **Ի յԱմիթ** - Ղաւզ առ Ամթայ նուիրակ Մկրտիչ վարդապետն, վասն եօթն Լարիւր և յիսուն ղուռուշ փօլիցային, զոր ձեռամբ ճիկելեւծի օղլի մաւտեսի Գրիգորին Հասուցեալ էր ի Կարին առ գործակալն մեր, ուստի ըստ ինդրոյ սոցա, գրեցաւ և յղեցաւ ի ձեռս իւրեանց Հասուցանել նուիրակին ի միամտութիւն:

[Գրեցաւ] յամնոյս ի ԺԷ. (17):

530ա

Թուղթք ի Մուշ, ի յԻւչքիլիսէ, ի Մակու և ի Ղօշալանք

1504* **Ի Մուշ** - Թուղթ ի Մուշ առ պարոն Գրիկն, եթէ այժմոյս Սրբոյ Կարապետի վանացն առաջնորդ Յակոբ վարդապետն եկն ի Սուրբ Աթոռս յուխտ և պատմեաց վասն քոյ և զփափագ գալոյդ ի Սուրբ Աթոռս և ի տեսութիւն մեր: Բայց վասն ոչ գալոյդ տրտմութիւն եղև մեզ յաջողեսցէ Տէր յայլում ժամանակի գալ: Եւ յանձնարարութիւն վասն առաջնորդին, զի անկեալ բանիցն ձեռնտու լիցի ի դուռն փաշային: Ողջոյն եղբօրն տիրացու Մկրտչին:

Գրեցաւ յամնոյս ի Ի. (20):

1505* **Ի Իւչքիլիսէ** - Թուղթ առ Իւչքիլիսու վանաց առաջնորդ Թովմաս վարդապետն. յանձնարարութիւն վասն Սրբոյ Կարապետի վանաց ժողովարարին, զի ձեռնտու լիցի գործոյն ի շրջակայիլն ի թէմն նորա:

[Գրեցաւ] յամնոյս ի. (20):

1506* **Ի Մակու** - Թուղթ առ Սրբոյն Թադէոսի առաքելոյ վանիցն առաջնորդ Գէորգ վարդապետն. յանձնարարութիւն վասն ժողովարարին Սրբոյն Կարապետի վանացն, որ ըստ ինդրոյ նորին առաջնորդին գրեցաւ:

1507* **Ի Ղօշավանք** - Թուղթ առ Ղօշավանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն. յիշումն թղթոյն իւրոյ ընդ Մատնայ ժողովարար Սիմէօն վարդապետին և ծանուցումն վասն Սրբոյ Կարապետի վանացն առաջնորդ Յակոբ վարդապետի գալստեանն ի Սուրբ Աթոռս: Եւ թէ այժմ ի ինդրոյ նորին զայս յանձնարարական թուղթս գրեցաք առ քեզ, զի ի գալն նոյն Սիմէօն վարդապետին ի վիճակն ձեր, ձեռնտու լիցիս նմա, առ ի լինիլ արդիւնաւոր: Եւ թէ որ յառաջմէ առ երկոսեանդ թուղթ գրեցաք, արդեօ՞ք յուղարկեալ ես մինչև ցայժմ, թէ ոչ և ի Սուրբ Ծննդեանն գնալո՞ց ես ի քաղաքն, թէ՞ ոչ, զայսոսիկ ծանուցես մեզ ի գիտել:

1508* **Ի Հաղբատ** - Թուղթ ի Թիֆլիզ առ Հաղբատու պարոն Չալն. շորհակալութիւն և օրհնութիւն վասն նուիրելոյ զմի /530թ/ եզն մատաղացու յանուն սրբոյն Գեղարդեանն:

Գրեցաւ յամնոյս ի ԻԵ. (25):

530Բ

1509* Թուղթ օրհնութեան և շորհակալութեան ի վերայ Փամբակու քանեաց գիւղօրէիցն, սակս նուիրելոյ զքանի մատաղացու յանուն սրբոյ Գեղարդեանն:

Թուղթք ի Մեծն Պօլիս և յայլ տեղիս

1510 **Ի Մեծն Պօլիս** - Թուղթ առ Մեծին Պօլսոյ պատրիարք Չաքարիս վարդապետն. ցաւակցութիւն Հիւանդութեանն և ուրախակցութիւն առողջութեանն, և ծանուցումն զՍուրբ Կարապետի առաջնորդ Յակոբոս վարդապետի գալոյն և դառնալոյն Հանդերձ պատճառօքն: Տէ՛ս ի մեծ տեսեր յերեսն 2343:

1511* **Ի Մեծն Պօլիս** - Թուղթ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ, ի ՌՄԽԷ. (1798) թուոջ, ի Հոկտ[տեմբերի] ԻԴ. (24) զանազան իրաց և իրակութեանց: Եւ ծանուցումն ի Հոկ[տեմբերի] քանիսն Գ. (3) փոլիցագիր գրելոյն մերոյ առ ինքն ի ինդրոյ Գօրօյեան մահտեսի Սերոբի չրաղ Նազարէթին՝ Հանդերձ միով Համառօտ բարևաթղթովն: Իմացաք զՄարդամն սևագլխի արտաքսումն յե-

կեղեցւոյն և զպարոն Ալէքսանի գրեւն յայդր: Եւ թէ գիտեցաք զԱրարանայու մահտեսի Գէորգի Հասուցանելն առ քեզ, զ2000 ղուռուշ պարտս Չաքարիային, որոյ աղագաւ ի դէպ ժամանակի գրեւոց եմք առ նա զչնորհակալութիւնս: Եւ յաղագս քանաքեոցի Նիկողայոսին, որ յառաջմէ գրեալ էիր 300 ղուռուշ տալ և այժմ գրիս, թէ 100 ղուռուշ ևս տայք, ահա ըստ գրութեանդ ետուք, որ այսու 400 ղուռուշ եղև Նիկողայոսին Հասեալն:

Եւ թէ այժմ թուղթ առաք ի Բասրայու պարոն Ստեփաննոսէն գրեցեալ ի 1247 թուոյս մայիսի 25, որ զառ քեզ գրեալն զամենայն և մեզ գրէ ի կարճոյ՝ Հանդերձ այլ բանիւք: Ընդ որս և նշանակէ, թէ ի Կալկաթու 15000 ղուռուշի չափ դրամէ Հասանելոց իւրն, վասն Սրբոյ Աթոռոյս, ուստի և մեք այժմ պատասխանի գրեցաք նմա վասն 5950 ղուռուշին յԱնդրեաս Չէլէպոյն ցքեզ Հասելոյ, թէ առ մեզ Հասեալ գիտասաջի՛ր: Եւ վասն գալ ի փօլիցային ևս, զոր զգացուցեալ էիր, պատուէր գրեցաք, զի յորժամ ընկալցի, շուտով փօլիցայ արասցէ ի Պօլիս Հասանիլ գքեզ:

Եւ թէ նոյն պարոն Ստեփաննոսն ըստ ինդրոյ ուրումն թիֆլիզեցւոյ տուեալ էր ի ձեռս նորա փօլիցագիր մի Հազար ղուռուշի ի վերա մեր և նա յղեալ էր առ մեզ և մեք ըստ ինդրոյ նորա ի տուք Հազար ղուռուշն փօլիցագիր բերողին, և նոյն փօլիցագիրն ահա ընդ թղթոյս յղեցաք առ քեզ ածել ի ցոյց Անդրեաս Չալապոյն, և զդրամն առնուլ և ապա տացես զփօլիցագիրն, զի դարձուցէ առ պարոն Ստեփաննոսն:

Իսկ նորապէս ինդրեալ գանձանակադրամից և այլ զանազան արդեանց թղթոցն գիտեա՛, զի յետ աւուրց ի յաջող 1 ժամու գրեւոց և յղեւոց եմք: Եւ թէ ի տեղդ, որ մահտեսի Կարապետի օտայն կամիք առնուլ վասն Սրբոյ Աթոռոյս, որ և խօսեցեալ ընդ պատրիարգին կամակցութիւնն է ցուցեալ վասն այսր, ահա գրեցաք քեզ և նմա, զի ըստ արժողութեանն գնառութիւն լիցի և մի՛ ծանրագոյն: Եւ ծանուցումն կողմանցս զորպիսութեանց: Տէ՛ս ի մեծ տեսեչ յերեսն 2443:

Գրեցաւ յամնոյս ի յեւն:

^{1512*} **Ի Մեծս Պօլիս** - Թուղթ ի Մեծս Պօլիս առ մահտեսի Նիկողայոս ամիրայն. լաղագս առ ինքն եղեալ դրամոցն յիզմիրու Հասելեաց և նորապէս ի Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետէն յանձնեցելոց 9900 ղուռուշին, և թէ վասն այսր Գալուստ վարդապետն ղաւզ էր ինդրեալ բայց որովհետև դու չէիր գրեալ ո՛չ չղեցաք զղաւզն:

Եւ թէ ըստ ինդրոյ կարնեցի Գօրօյեան մահտեսի Սերօբի չրաղ Նազարէթին 5200 ղուռուշի փօլիցագիր գրեցաք ի վերայ Գալուստ վարդապետին, այժմ չգիտեմք, թէ այն նուիրակի՞ն էՀաս, թէ ոչ: Եւ պատուէր, զի զպատասխանի թղթոյս շուտով գրեսցէ և զորքան ինչ դրամ յոսկի է փոխարկեալ իւր կնքովն և

Հաւատարմոց ձեռք յուղարկեցէ Հասանիլ ի Սուրբ Աթոռս: /531ա/ Եւ թէ թուղթք գրեցաք առ պատրիարզն և նուիրակն, և պաշարանեալ յղեցաք ի ձեռս քո, զի Հասուցես առ տեառն և զնուիրակութեան թուղթն յղեցէ՛ս առ ինքն և զերբ յղելը ծանուցէ՛ս մեզ:

Ողջոյն եղբօրն Ստեփաննոս ամիրային և Երեմիա Չալապոյն և որդւոյն իւրոյ՝ Գրիգոր Չէլէպոյն: Տէ՛ս ի մեծ տեսեր յերեսն 2345:

Գրեցաւ յամնոյս յէլն:

531ա

1513* **Թուղթ առ Մասեհեան պարոն Եսային.** ծանուցումն երկար միջոցի թուղթ չգրելոյն և յիշումն յառաջագոյն գրեալ թղթոյն մերոյ առ ինքն, յորում թէ մինչև ցայժմ զպատասխանիս նորին ոչ ընկալաք: Բայց զի այժմ զպարոն Երեմիայի որդի մահտեսի Պօղոսի ընծայն զմի ակնազարդ ժամացոյցն, զոր տուեալ էիր նուիրակ Գալուստ վարդապետին և նա Հասոյց առ մեզ, վասն որոյ զչնորՀակալութեան թուղթ գրեցաք նմա և յղեցաք ի ձեռս քո Հասուցանել նմա ի միամտութիւն:

Գրեցաւ յամնոյս ի յէլն:

1514* **Ի յիզմիր** - թուղթ առ իզմիրցի պարոն Երեմիայի որդի մահտեսի Պօղոսն. շնորՀակալութիւն յաղագս նուիրելոյն զմի ակնազարդ ժամացոյցս, զոր ձեռամբ Մասեհեան պարոն Եսայոն Հասուցեալ էր առ նուիրակ Գալուստ վարդապետն:

Գրեցաւ յամնոյս ի յէլն:

1515* **Ի Բասրա** - թուղթ ի Բասրա առ տէր Յովհաննիսի որդի պարոն Ստեփաննոսն. ծանուցումն Գ. քին (երեքին) գրեալ թղթոցն մերոց և յիշումն յայսմ ամի գրեալ թղթոյն ի մայիսի 25, առ մեզ Հասանելոյն ի նոյ[եմբերի] 10 և փօլիցագրին, որ յառաջ քան զայն ի ՌՄԻՍՁ. (1797), նոյե[մբերի] Ժ. (10) գրեալ էր և այլ զանազան բանք: Տէ՛ս ի մեծ տեսեր յերեսն 2517:

Գրեցաւ յամնոյս ի յէլն:

1516* **Փոստուկայ մի ևս գրեցաւ սմա,** որ ի սոյն թղթոյս ներքոյ գրեալ կայ:

1517 **1798 թ., դեկտեմբեր** - թուղթ առ ազնիւ աղայ Յովաննէան (որ և Էնարալ է) ի Պետրպօք. յիշումն յանցեալ ամի յուլիսի գրեալ թղթոյն մերոյ, և շնորՀաւորութիւն Էնարալութեանն, և յանձնարարութիւն վասն նոր նուիրակ ... եպիսկոպոսին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2335-36

1518 **1798 թ., դեկտեմբեր** - Թուղթ առ ազնիւ ազայ Մարգարն և Փիլիպպոս Մանուչարեանց. յիշումն առաջնոյ թղթոյն մերոյ և յանձնարարութիւն վասն նոր նուիրակին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2336-37

1519 **1798 թ., դեկտեմբեր** - Թուղթ ի Մոսկով առ ազայ Մինասն և ազայ Յովակիմն Եղիազարեան. յիշումն առ կայսրն գրեալ թղթոյն, զոր սա՝ Յովակիմն պարտէր թարգմանել ընդ պարոն Չաքար Իւանիչին: Եւ յանձնարարութիւն վասն նոր նուիրակին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2338

1520 **1798 թ., դեկտեմբեր** - Թուղթ յերկիրն Ռուսաց առ Իւան Պետրովիչ Գասպարովն, որ է թագանուօգ կամէնդաթ. շնորհաւորութիւն Էնարալութեանն, զոր նոր կայսրն նորապէս շնորհեալ էր նմա: Եւ յանձնարարութիւն վասն նոր նուիրակին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2338-39

1521 **1798 թ., դեկտեմբեր** - Թուղթ առ Հաշտարխանու քահանայն և իշխանն, ընդ նոր նուիրակ (այսպէս) վարդապետին. յանդիմանութիւն վասն ցրտութեան իւրեանց, և սէր, և յանձնարարութիւն յաղագս նուիրակին:

Ի վերայ սիրելեացդ մերոց... Գրեցաւ յամի Փրկչին 1798, և ի դեկտեմբերի վերջն. ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց, ի Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2515-16

1522 **1798 թ., 31 դեկտեմբերի** - Դարձեալ առ նոյն ջուղայեցի պարոն Ստեփաննոսն Տէր-Յովաննիսեան, առանձնագրութիւն:

Եւ զայս առանձին ծանի՛ր սիրելիդ իմ տէրամբ զօրացեալ պարոն Ստեփաննոս... Գրեցաւ 1247 (1798) թուոջս մերում, և ի դեկտեմբերի 31:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2521

1523 **1798 թ., դեկտեմբերի 31** - Կցորդ թղթոյն առ Յովսէփ վարդապետն գրեցելոյ յայսմ ամի ի Հոկտեմբերի 18, որ է ի վերդյերեան 2427: Եւ որովհետեւ մի անգամ յղեալ մեր՝ անկեալ էր ի ձեռս լեզիեաց և կորուսեալ վասն որոյ կրկին գրեալ զնոյն, զայսքան ինչ ևս կցորդեցաք նմա:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2430-31

1524 **1798 թ., դեկտեմբերի 31** - Թուղթ օրհնութեան, մխիթարութեան, յուսադրութեանց և պատուիրանաց առ քանի Հարիւր տուն ժողովուրդան, որք ի Դարբանդու և ի Մուսկիւրու ելեալ ընդ զօրացն ոռւսաց չուեալ էին ի կողմն Ղզլարու, բնակիլ յայնմ երկրի, և կայսրն Հաճելով ընդ նոսա խոստացեալ էր զտեղի յատկացուցանել բնակութեան նոցա և ողորմութիւն առնել: Որոց սակս և յանցելումն ամին գրեալ էր սրբազանն ի դուռն կայսեր զյանձնարարութիւն: Եւ այժմ առ սոսա պատուէր՝ վինիլ ընդ Հովուութեամբ Յովսէփայ արքեպիսկոպոսին և ճանաչել նորառաք նուիրակին, ընդ որում և գրեցաւ թուղթս:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2431-33

1525 **1798 թ., դեկտեմբերի 31** - Թուղթ առ Ներսէս աղայն ի Մոսկով. յանդիմանութիւն վասն թուղթ չգրելոյն և ծանուցումն զանցից մերոց կարճառօտ, և յանձնարարութիւն վասն նորոգ նուիրակ ... վարդապետին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2434-35

1526 **1798 թ., դեկտեմբերի 31** - Թուղթ ի Մոսկով առ պարոն Չաքար Իւանիչ Միրզախանովն վասն Հանգուցեալ կէնակցին և քեն՝ երկուց Մարիամեանց, և բան վասն թարգմանութեանց թղթոցն մերոց առ կայսրն, և յանձնարարութիւն վասն նոր նուիրակ ... վարդապետին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2435-36

1527 **1798 թ.** - Կոնդակ ի վերայ երկրին Ռուսաց, ծանուցումն զվնասուց Սրբոյ Աթոռոյս և զնեղութեանցն ի գալն յայսկոյս ներքինի բռնաւորին և եղբօր նորին յԵրևան, և ինդիր՝ օգնութիւն առնել Սրբոյ Աթոռոյս ի լցումն բազմազան պակասութեանց սորին, յանձնելով զտուրսն նորոգ նուիրակին:

Յորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան, Հանդերձ Հոգեապարար շնորհօք քրիստոսաէջ սրբոյ տեղոյս և Համայն աստուածակիր սրբութեանցն և Հրաշագործ մասանցն սրբոց, որք աստ, ի վերայ սիրելի և Հոգևոր որդւոցդ մերոց և լուսաձնունդ զաւակացդ սրբոյ ԳաՀիս՝ Հայկասեր և լուսաւորչակրօն Հաւատացելոցդ ի Քրիստոս, որք բնակեալ կայք ի տիրաինամ երկրիդ Ռուսաց՝ ի ներքոյ իննամոց աստուածակացոյց ինքնակալ մեծի կայսերն Պաւ Պետրովիչի և ամենափառազարդ կայսերուհւոյն իւրոյ և ծիրանածին թագաժառանգ որդւոցն Քրիստոսիւ զօրացելոց՝ Ալէքսանդր Պաւլովիչին և Կոստանդին Պաւլովիչին և Համայն կայսերազացն ի կայսերանիստ մայրաքաղաքսդ ի Պետրպօլք և ի Մոսկով և ի բարեճոխ քաղաքսդ՝ ի Հաշտարիսան, ի Նոր

Նախիջևան, ի Ղզլար, ի Մօզուօք և Եագօրեցկի, ի Սառաֆան, ի Բօրաղան, ի յԵղսէ, ի յԱնդրէա, ի Քօստակ, ի Չէրքէզ, ի յԱբազա, ի Կեամոկու, ի Կատարինեսլաւ, ի յԵնկիղալա և ի նորաշէն քաղաքդ Գրիգորուպօլ և ի բոլոր երկրիդ Ղրիմու, և յայլ ամենայն Հեռաւոր և ի մերձաւոր տեղիս լայնատարած երկրիդ կայսերականի՝ ի գաւառս, ի գիւղաքաղաքս և ի գիւղորայս՝ ուր և գտանիք յօրհնեցելոյ ազգէս Հայոց:

Նախ, վայելչապատիւ առաջնորդ Յովսէփ աստուածիմաստ արքեպիսկոպոսիդ, և ապա ճշմարտուսոյց վարդապետաց, սրբապաշտօն քահանայից, բարեպաշտ և ճոխապատիւ իշխանաց և մեծատանց, իրաւասէր դատաւորաց, Հաւատարիմ գործակալաց և գանձապետաց, Հանձարամիտ վաճառականաց, վայելչագործ արուեստաւորաց, արդարավաստակ Հողագործաց, երկիւղազարդ տանտիկնաց և այլ Համայն Ժողովրդականացդ դասուց առՀասարակ՝ մեծաց և փոքունց, արանց և կանանց, ի Տէր ինդալ:

[Շորհք]

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի սիրելեացդ մերոց ի Տէր և Հոգևոր զաւակացդ մօրս Հաւատոյ Սրբոյ Էջմիածնի: Ջի իմաստնացեալս յԱստուծոյ Սողոմօն ասէ, թէ իմաստնոյ աչք ի գլխոյ իւրում, որ կարէ և այսպէս իմացեալ լինիլ, թէ նկատումն տեսութեան և զգուշութիւն իմաստնոյ վասն գլխոյ իւրոյ: Քանզի որովհետև սկիզբն և պատճառ կենդանութեան և կառավարիչ այլ ամենայն անդամոց գլուխն է (առանց որոյ ոչ է Հնար ապրիլ կենդանոյն): Վասն որոյ Հարկաւորի մարդս նախապետաբար գլխոյն պահպանութեան ջանս դնել և զնորին առողջութիւնն կամիլ, և ապա այլոց անդամոցն:

Արդ, սիրելի և Հոգևոր որդիք մեր խորհրդական գլուխ է օրհնեցելոյ ազգիս Հայոց Սուրբ Աթոռս Էջմիածին և մայր Հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց, որք ամենեքեան առ ի սմանէ ոնին զՀոգևորական սնունդ և զրրութիւն կարգաց և ՀնորՀաց և կատարելագործութեան: Եւ թէ ամենայն կենդանիք ըստ բուսոյ բարուց բնութեան ջանան պահպանել զգլուխս իւրեանց, ուրեմն և լուսաճնունդ զաւակքդ սորին և անդամքդ Հոգևորք այսմ խորհրդական գլխոյ ըստ իմաստնոյն բանի պարտիք իմաստ|2423|նաբար զաչս ձեր ոնիլ առ սոյն գլուխ ձեր վասն պահպանելոյն օգնելոյ ըստ մարմնաւորին, որպէս և որչափ կարիցէք: Իսկ պահպանելն և օգնելն, մանաւանդ ի Ժամանակի նեղութեանց և փորձութեանց և պակասութեանց Հարկաւորի:

Եւ արդ, զի՞նչ թշուառալից և բազմավտանգ և դառն Ժամանակ մեզ քան զայս, յորում բարդեցան և դիզացան ի վերայ երկրացս պատահարք չարագոյնք և աղէտք անհնարինք, և զեղան ի վերայ սրբոյ Տանս և մեր բազմակոհակ ալիք փորձութեանց և փնասք չափազանցք և նեղութիւնք անտանելիք: Չորս մի ըստ միո-

ջէ գիտէնք, զի երկարի յոյժ, վասն որոյ թողեալ զանդէպ երկարութիւնն, ի կարճոյ գրեցուք: Քանզի ի թուող Փրկչին 1794, յորում ներքինի բռնաւորն զոմն յազգայնոց իւրոց ոստիկան էր յղեալ ի թաւրեզ՝ Հնազանդեցուցանել զիշխօղն կողմանցս, և տիրօղն երկրիս ոչ կամէր Հնազանդիլ ի շարժիլ նորա յայս կոյս, թէ՛ զորքան տագնապս կրեցաք և իշխօղն տեղւոյս, որ ամրացուցանէր զբերդն, թէ՛ զի՛նչ պաՀանջմոճնս արար ի մէնջ և էառ, մնասցէ այն, զի մրրիկն էանց յայնմ ամի, և դադարեցաք:

Այլ ի 1795 թուին ներքինի բռնաւորն ինքնին յարեաւ ի վերայ կողմանցս և եղբայրն իւր դժնդակ ըստ ինքեան՝ յղեաց ի վերայ Երևանու: Եւ իշխօղն տեղւոյս յայնմ տարւոջ ևս էառ ի մէնջ ըստ նախընթաց ամի աւելորդ առեցելոցն և ի բնակչաց երկրիս զմասն մի ժողովեաց ի բերդն և ամրացաւ: Եւ զայլն ամենայն վարեաց ի կալուածս օսմանցւոց և յայլ կողմն, և մեզ ևս Հարկեաց գնալ ի Սրբոյ Աթոռոյս ուր և կամիցիմք, զոր և բազումք իսկ ասացին և գրեցին, և մէք գիտեաք, թէ՛ գնալն մեր յայլուրէք ապաՀովութիւն լինիւր մեզ (տէ՛ս ի վերոյ յերեսն 2149 ի կոճակն Ղարայ) և յորժամ յիշեալ դժնդակ եղբայրն ներքինւոյն եկեալ զօրօք բանակեցան յանդիման բերդին, գնացաք առ նոսա, խորՀելով թէ՛ զորչափ ինչ նեղութիւնս և վիշտք կրիցեմք անձամբք, և որքան ինչ ծախք լինիցի, ձեռօք տայցեմք, միայն թէ շինութիւն սրբոյ Գահիս անաղարտելի մնասցէ: Եւ նորա իբր պատուով ընկալան զմեզ, և քաղցրութիւն ցուցին: Բայց յագաՀովթենէ բռնադատեցեալք ընդ չափաւոր ընծայն մեր ոչ Հաճելով զբազմապատիկ պաՀանջեցին զդրամն և զայլ իրս: Եւ որքան ընդդիմացեալ աշխատեցաք և տաժանեցաք յաւուրս բազումն, չեղև Հնար չափաւորան անցուցանելոյ, ապա որչափ ինչ առ մեզ գտանեցաւ, զպակասն ևս յայլոց փոխ առեալ ետուք, թէ՛ այնու զերծանիցիմք յորոգայթէ որսողացն:

Բայց յետ վճարելոյ մեր զայն, սկսան վասն ներքինի բռնաւորին զընծայս ինդրել այնքան ծանր, մինչ զի եթէ զՀանդերձս մեր ևս վաճառեաք, ոչ լինիւր վճարել: Այլ ի քանիս աւուրնս նորա պաՀանջելով և մէք յանձն չառնելով, մինչև նոցա և տանջանս սպառնալ ոմանց ի վարդապետաց մերոց: Ապա... և ընծայապէս տրոցն զորքան ևս ուտելիս և ըմպելիս և զայլ բազմազան պիտոյս տանէին ի Սրբոյ Աթոռոյս, թէև մերովս գիտութեամբ: Կացեալ մեր ի զագիր և ի գարշահոտ բանակի... Հաշտութիւն անկաւ ի մէջ զօրապետին և Երևանու խանին և զօրապետն զմեզ իբր խիլայիւք շաՀեալ արձակեաց առ Սուրբ Աթոռս, և ինքն առեալ զպատանդս ի խանէն, չու արար առ եղբայրն իւր ներքինի բռնաւորն:

Չկնի ոչ բազում աւուրց, յոյս կայաք ի Հոգս վճարելոյ պարտուցն մերոց, ի վերայ այնմ տարակուսանաց լուաք զդաճնաղէտ բօթս... Յետ ուղևորելոյն նորա, վերոյիշեալ ժանտ եղբայրն ներքինւոյն կրկին եկն յԵրևան, ար|2424|կանել զբերդն ընդ ձեռամբ

իւրեանց և պաշակս կարգել և այլ ոմն խան ևս ընդ նմա ի ներքինւոյն վասն մեր զխիլայս եբեր, որոց աղագաւ մինչ վերստին գնացաք յԵրևան, զգինս խիլայիցն քսանապատիկ տուեալ խիլայաբերին և գազանամիտ եղբօր ներքինւոյն, Հագիւ թափեցաք զօձիս մեր յանկուշտ ագաշութենէ նոցին:

Իսկ յետ այսոցիկ ևս մինչ ներքինին զուղտս էր խնդրեալ ի Երևանու, զքառասունն ևս ի մէնջ պաշանջեալ, զոր ինչ ոճնեաքն, տարան, և զպակասելոցն ևս զգինսն երկապատիկ առին:

Այսչափ նեղութիւնք և վնասք եղէն մեզ ի 1795 թուէն մինչև ի 1796 թուոյ սկիզբն: Յայնժամ ևս, թէ որքան նեղեցաք և վշտացաք, և յակամայ կամս զընծայս առաքեցաք առ մաշակոյն վիշապն ներքինի, յաղագս զերծ առնելոյ զմեզ և զսուրբ Գաշս ի մեծաւնաս զրպարտութեանց, թողումք զայնոսիկ:

Իսկ ի 1797 թուին մինչ ներքինի բռնաւորն կրկին շարժեցաւ յայս կողմն և զոմանս իշխօղս երկրաց և զտեղոյս խանն իսկ կողոպտեաց, և զիշեալ ժանտ եղբայրն իւր յղեաց յԵրևան, անօրէնն այն դարձեալ վերստին զնոյնպիսի ծանր պաշանջմունս արար ի մէնջ, որպէս և յառաջին յերկուս նուագսն արարեալ էր, և զաւուրս քառասուն դեգերեալ մեր յԵրևան քաղաքի, որչափ և վաստակեցաք թէթեւեցանել զծանրութիւն պաշանջմանցս, ոչ եղև Հնար: Վասն որոյ զմեծ մասն տուաք, և վասն մնացելոյն անճարացեալ մուրհակ մատուցաք:

Այլ ոչ ևս յամեցեալ դատաստանացն Աստուծոյ, յաւուրան յայնոսիկ ներքինի բռնաւորն ի յԱրցախու դղեկին խողխողեցաւ և ամբարշտագոյն եղբայրն ևս աստ նկուն եղեալ և անարգանօք դարձաւ յետս, և մինչ փութայրն թագաւորութեան Հասանիլ յերկուց աչացն զրկեցաւ: Եւ արդ, թէպէտ զկնի այնչափ վնասուց և տառապակրութեան ապրեցաք ի ժանեաց դաժանագոյն գազանացն, որոյ աղագաւ գոշութիւն և փառք բարերար Փրկչին մերում, որ ոչ ետ զմեզ, յորս ատամանց նոցա, այլ ոչ իսպառ վերջացեալ անագորոյն ցեղին, այլ ևս եղբօր որդին նոցա բռնակալեաց, և զնոյնակերպ վնասս կրեմք: Որպէս յայսմ ամի ի փետրվարին Հարկեցեալ յիշխողէն տեղոյս զոչ սակաւ տուրս ընծայից առաքեցաք, և ի յունիսի ևս նախ զօրապետն իւր և զկնի ինքն ևս եկեալ մինչև ցիւօյ, թէպէտ և ինքն փութով դարձաւ յետս վասն ապստամբութեան եղբօրն, սակայն ժանտ զօրապետն ի բազում աւուրս մնացեալ անդ, զպաշանջումս արար ի մէնջ, զորս մանաւանդ ի բռնադատութենէ երկրականացս՝ առաքեցաք, և մինչ էՀաս առ նա ընծայն մեր, դարձաւ և նա, ոչինչ օգուտ արարեալ կողմանցս, բաց ի վնասուց:

Եւ այսպէս, իւրաքանչիւր բռնաւորք անիրաւեալք և զանգաւմաբար պաշանջելն և յափշտակելն միայն գիտեն, այլ զինսմէն ամենեկին ոչ: Ուստի յայս չորս տարիս գրեթէ գոյաթափ

արարին զսուրբ Տունս և մաշէցին զկեանս մեր անմիջոց պաշանջմամբ և վշտացուցմամբ: Եւ թէպէտ գոհունակ եմք զՏեառնէ Աստուծոյ, որ ի լինիլ այնքան վրդովմանց և աւերութեանց, ամենազօր ողորմութեամբ նորին Սուրբ Աթոռս մնաց ի շինութեան և ի պայծառութեան իւրում անդրդուելի ի Հինից բարբարոսաց՝ Հանդերձ մերձակայ վանորէիքն ի մխիթարութիւն օրհնեալ ազգիս մերոյ, բայց զի ի վերայ այսքան վնասուց, ելքն առաւելեալ է սրբոյ Տանս և մոռոքն նուազեալ, և բազում իրաց պակասութիւնք |2425| նեղէն զմեզ, տարակուսեալ վարանիմք ի դժուարութիւնս կառավարութեան գերաշնչակ սրբոյ Գաշիս, և յայլ ուստեք է օգնութիւն ինչ ոչ ոնելով նախ յԱստուած ապաւինիմք, և ապա ի բարեպաշտութենէ ձերմէ օգնիլ յուսամք:

Վասն որոյ այժմ ի յուղարկելս մեր ի յօրհնեալ երկրիդ և առ ձեզ նուիրակ զՆոգևոր որդիդ մեր՝ զտէր... աստուածիմաստ վարդապետդ և զարհի եպիսկոպոսդ, գրեցաք ընդ դմա զայս կոնդակ որոշակի, ծանուցանելով աստուածասէր ժողովրդոցդ մերոց զդառնաղէտ դիպուածն կողմանցս, և զանհուն վնասն Սրբոյ Աթոռոյս և զտաժանելի կիրսն մեր: Բայց զիմ՝ րդ կարելի էր զամէն մի ըստ միոջէ պարունակեալ ի թղթի աստ, և զի՛նչ վայելուչ իցէր զբովանդակ արարս խուժականացն անաստուածից Համարձակ արձանացուցանել աստանօր: Այլ զոմանս երևելի անցն գրեցաք, որոց և փոքր ի շատէ սիրելիդ մեր և առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսդ մերձ գոլով յայսկոյս յայնմ միջոցի, գիտակ է: Իսկ առաւելապէս Հաւատարիմ նուիրակդ մեր ի սկզբանէ եղելութեանցն մինչև ցայժմ ականատես և ականջալուր գոլով զամէն ստուգութեամբ կարէ պատմել ձեզ բերան առ բերան, որով և քաջայայտ լինի ձեզ, որ թէ ի դրամոց, թէ յեկեղեցական սպասուց, թէ ի բազմութենէ գրաստուց և թէ յայլ զանազան պիտոյից պակասեալ կամք, և յագաՀամիտ բռնաւորաց դեռևս նեղիմք: Եւ թող զմիաբանիցն կենցաղավարութիւն, երթևեկացն բազմութիւնք ևս անպակաս:

Ուրեմն, ի լսելն և յիմանալն սիրելի և Հոգևոր որդւոցդ մերոց զայսոսիկ աղէտս մեր զպակասութիւնս, Հարազատ որդիաբար ի գուժ շարժեալ ցաւակից լիջիք Սրբոյ Աթոռոյս՝ Մօրս ձերոյ լուսատուի և Հոգևոր Հայրութեանս մերոյ, և յօժար սրտիք իւրաքանչիւր ըստ կարողութենէ ձերում, օգնել կամելով ի նեղութեանս մերում յատկապէս իբրև իմտատիա զլիաձեռն տուրս մատուցիք վասն Սրբոյ Աթոռոյս ի լցումն բազմակերպ պակասութեանց սորին: Որով կարիցեմք և ևս կառավարել զսա իւրավայելուչ պայծառութեամբն ի պարծանս ձեր և ի փառս Աստուծոյ: Եւ զոր յատուկ օգնութեան անուամբ առատաձեռեալ կամիցիք, շուտով յանձնեսցիք սիրելի որդւոյդ մերոյ և ծայրագոյն նուիրակիդ ձերոյ... գերզօն վարդապետիդ և արհի եպիսկոպոսիդ՝ Հասուցա-

նել ի սուրբ Գաճա և առ մեզ: Որով և երևեսցիք իմաստունք ըստ... բազմապատկապէս Հատուցէ ձեզ, օրհնեսցէ զգործս ձեռաց իւրաքանչիւրոցդ, զառս և զտուրս ձեր և զարուեստս, զայգիս և զանդաստանս և զանդեայս ձեր, և զարդիւնս դոցին առատացուցանելով լի արասցէ զամենայն պէտս ձեր: Եւ որպէս դուք յայսմ... և ի ինձամս իւր պաշնեսցէ միշտ: Եւ որքան սաղմոս երգիւք, աղօթք, պաշտամունք և սուրբ պատարագք և շնորհաբաշխութիւնք կատարին յաստուածաբնակ Սուրբ Տաճարիս, յայնցանէ մասն և բաժին առատ եղիցի ձեզ կենդանեացդ և Համօրէն ննջեցելոց ձերոց. ամէն:

Գրեցաւ յամի Տեառն 1798 և ի ..., ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^ր 4501, էջ 2422-25

Օրհնութեան նամակ (1798 թ., դեկտեմբերի 31)՝ Հասցեագրուած Ղզարի եւ Մոզդոկի Հայութեանը, որով յայտնուում է նրանց, թէ մինչ նոր նուիրակ ուղարկելը, նրանց մօտ է առաքւում տէր Եփրեմ վարդապետը միւսոնով եւ Հասարակական կոնդակով: Տեղեակ է պաշտում ուռաց կայսր Պաւել Ա. -ին եւ ուռական պետութեան մեծամեծներին նամակներ գրելու մասին: Յանձնարարւում է չպակասեցնել առաջնորդական Հասոյթը եւ նուիրակական արդիւնքները:

ՄՄ ԿԴ, թղթ. 243, վավ. 86

Նոր նուիրակի Համար յանձնարարական գրովին գանձապետ պարոն Մկրտիչ աղային (Նոր Նախիջեան): Ղզարի գործակալ տէր Մինաս աագ քաւանային պատուիրում է յանձնել ըստ պատկանելոյն չորս նամակներ՝ գրուած Յովսէփ արքեպիսկոպոսի ինդրանքով: Միաժամանակ յանձնարարւում է օժանդակել նոր ուղարկուող նուիրակին՝ Եփրեմ վարդապետին:

Նամակները գրուել են 1798 թ., էջ 230բ-1ա:

Պատասխան նամակ մաւտեսի Պաշպազիրիկեան Յովհաննէս ամիրային, որով շնորհակալութիւն է յայտնում նուիրակ Բարսեղ վարդապետին արած լաւութիւնների Համար: Յայտնում է, որ Կիլիկիոյ Կիրակոս կաթողիկոսը Ստեփաննոս եւ Կարապետ վարդապետների ձեռքով, որոնք Էջմիածնում եպիսկոպոս օծուեցին, նամակ էր գրել եւ զսիրանիշ տուրս յղեալ, որի պատասխանն ուղարկւում է յիշեալ վարդապետների միջոցով: Վերջիններիս օժանն ինդրանքով դիմել էր Պօլսոյ պատրիարք Չաքարիայ վարդապետը, որին յղուած պատասխան նամակով իրազեկուում է օժանն մասին: Եպիսկոպոսութեան վկայական է տրուել ս. Երուսաղէմի միաբան Յակոբոս վարդապետին: Բերուած են վկայականի առանձին մասեր՝ յղումներով: Շնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ Ժամաւարեաց Միրզային, մաւտեսի Բատիկին (Բաղէշ), ջուղայեցի պարոն Կոստանդին եւ Ոսկանին (Թեւրան): Վազերիցութեան կոնդակ Բաղէշի Ս. Աթոռի գանձապետ պարոն Յովհաննէսի եղբայր տէր Յակոբին, որ ի Սուրբ Գեորգ եկեղեցին, եղբայրներ՝ պարոնայք Մինասին ու Գրիկին (Մուշ): Վէբիլ պարոն Հայրապետի վերաբերեալ յանձնարարական նամակ առաջնորդ Յակոբ վարդապետին (Կարին): Ղարսի գանձապետ մաւտեսի Սաւակին շնորհակալութիւն է յայտնում 1797 թ. գանձա-

՝նակադրամը յանձնելու համար: Նոր նուիրակի մեկնելու կապակցութեամբ նամակ մահտեսի Յովհաննէսին (Թաւրիզ): Նմանօրինակ նամակ՝ պարոն Դաւթին, մէլիք Մարտիրոսին եւ տիրացու Ալեւիքին (Թաւրիզ): Վերջիններիս յանձնարարում է Մարտաշայում մահացած Տաթեւի վանքի ժողովարար Մինաս վարդապետի հաւաքած արդիւնքը եւ ս. Աջը յանձնել Յովհաննէս վարդապետին՝ Էջմիածին ուղարկելու համար: Նուիրակին օժանդակած եւ նուէր տուած Իփակօղլի ՅօՀան աղային (Թօխաթ) յայտնում է շնորհակալութիւն: Պատասխան նամակ Դիարպէքիր Պազազէնց Անտօնեան պարոն ՅօՀանին: Հիւսիսային կողմերը մեկնած տէր Ղազարի փոխարէն գործակալ կարգուած տէր Յովհաննէսին (Թփֆլիս) ուղարկուած է Համապատասխան նամակ: Հնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ Հանգուցեալ Մարգարի կողակից Յուդիտայ խաթունին, պարոն Վարդան Սարգսեանին, պարոն Գէորգ Տէր-Դաւթեանին (Բասրայ):

Հնորհակալութեան նամակներ նուիրատու մահտեսի պարոն Աստուածատուրի որդի պարոն Ստեփաննոսին (Ֆօքչան), նուիրակ Գարուստ վարդապետին գանձանակադրամը տուած Պէկօղլի եւ Հէսարու Հասարակութեանը: Նոյն բովանդակութեամբ կոնդակ՝ Հէսարու ժողովրդին: Հնորհակալութեան նամակներ նուիրատուներ՝ մահտեսի Վարդերես ամիրայի կողակից մահտեսի Սրբուհուն (Ղալաթիայ), Հէղինէին (Կ. Պօլիս): Մխիթարութեան նամակ Հանգուցեալ Ախիջան աղայի եղբայր խօջայ Յարութիւնին (Վան): Օրհնութեան նամակ Բաղէշի Ս. Սարգիս եկեղեցու ժողովրդին գանձանակի արդիւնքի համար: Հնորհակալութեան նամակ Էջմիածնի գանձապետ պարոն Մանգասարին (Ռուսաստան) «վանս Հոգեբաժնական տրոց»: Կոնդակ՝ Խոշապու քաղաքի եւ բոլոր Մահմուտանու ժողովրդին որպէս պատասխան նրանց Համախոսական գրութեան, որով նրանք խնդրում էին վերացնել Հոգուց վանից առաջնորդ Դանիէլ վարդապետի բանադրանքը: Վեհափառը Համաձայնում էլ յայտնում է, որ եկող տարի նրան եպիսկոպոս կձեռնադրի: Պատասխան նամակ պարոն Սեղբոսին (Կարին), որով շնորհակալութիւն է յայտնում նուիրած ոսկեգօծ արծաթեայ խաչի եւ միւս իրերի համար: Մխիթարութեան նամակ մահտեսի Չալիկեան Կարապետին (Չմիւռնիայ): Հնորհակալութեան նամակ Հաղպատու վէրիլ Պետրոս վարդապետին եւ պարոն Չալին՝ յանուն ս. Գեղարդի համար տուած մատաղացու անասունների համար: Օրհնութեան նամակ նուիրատու մահտեսի Առաքելին (Կ. Պօլիս): Վեհափառը կոնդակ է յղել Թփֆլիսի Ս. Նշան եկեղեցու ժողովրդին՝ կրկին լուսարար Հաստատելով տէր Յովհաննէսին, որը Թփֆլիսի աւերման ժամանակ կարողացել էր փրկել այդ եկեղեցու սպաքը: Հնորհակալութեան նամակ իզմիրցի պարոն Երեմիայի որդի մահտեսի Պօղոսին, որը նուիրել էր մէկ ժամացոյց: Նամակ Բաքուի գանձապետ պարոն Աբրահամին, որը աւարառուած Էջմիածնի իրերից փրկագնել է մի գաւազան եւ ուղարկել Յովսէփ վարդապետին՝ խոստանալով նախապէս նորոգել այն:

Նամակները գրուել են 1798 թ. յունուար-դեկտեմբեր ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 208ա-29բ

1799

¹⁵²⁸ **1799 թ., յունուար - Թուղթ** *ի յերկիրն Ռուստաց առ գեղամացի պօտպօլլովնիկ պարոն Ստեփաննոսն. յիշումն թղթոց նորա առ մեզ Հասելոց, և մսիթարութիւն վասն կնոջ վախճանմանն: Եւ վասն նորոգ նուիրակ առաքելոյն մեր:*

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2340

¹⁵²⁹ **179[9] թ., յունուար - Կոնդակ Արապկիրու առաջնորդ Մարտիրոս վարդապետին և վլայական եպիսկոպոսութեան, Հանդերձ պատուիրմամբք Հասից:** *Ջի որովհետև յառաջնումն ընդ ինքեան տարեալ կոնդակոջն այս պատուէրք չկային, այժմ՝ միջնորդութեամբ նուիրակին ինդրեալ էր այսպէս գրել: Վասն որոյ յուղարկեցաք զայս, զի զառաջինն դարձուցէ:*

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2342

¹⁵³⁰ **1799 թ., յունուար - Թուղթ առ Կարնոյ իշխաննն, ի պատասխանի թղթոյն նոցա ի յունվարի Ա. (1) գրեցելոյ զմահուանէ նուիրակին Սրբոյ Աթոռոյս՝ օշականցի Գրիգոր վարդապետին, որ յաւարտէն զգործն մինչ Հանդերձեալ էր դարձ առնել ի սուրբ ԳաՀս, ըմբռնեալ ի ժանտախտէ վճարեալ էր զկեանս իւր ի դեկտեմբերի ԻԹ. (29), թողլով զկսկիծ և զտրտմութիւն մեծ նոցա և մեզ³⁹:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2346-47

¹⁵³¹ **1799 թ., 13 յունուարի - Թուղթ առ Մատթէոս աղայն ի Կարին. շնորհակալութիւն յաղագս պարտուցն Թումանին, զոր Հարկեալ էր նմա վճարել Սրբոյ Աթոռոյս, և յաղագս լաւութեանցն առ գործակալն մեր, և յանձնարարութիւն, և ևս մուղայէթ լինիլ նոցա⁴⁰:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 72աբ

²³⁹ Կարծում ենք՝ Ս. Գայանէ վանքի արևմտյան գերեզմանոցում քաղված հանվարի տապանագրում հիշատակված Գրիգոր դպիր Օշականցին հետագայում Կարնո նվիրակ, ժանտախտից վախճանված Գրիգոր վարդապետ Օշականցին է: Խանվարը նրա մայրն է, որը կյանքից հեռացել է ավելի վաղ՝ 1779 թ. դեկտեմբերի 15-ին (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 324, արձ. 631):

²⁴⁰ Մատթեոս աղային (Կարին)՝ Թումանի պարտքի առնչությամբ ուղղված շնորհակալագրի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 673:

1532 1799 թ., փետրուար - Թուղթ առ Ղազախու քանի գիւղից քեաթխուտայնն, ի պատասխանի թղթոցն նոցա, զոր գրեալ էին վասն վիճոյն իւրեանց ընդ Հաղբատացոցն:

Յորմէ ժամանեացէ թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան, Հանդերձ Հոգեգուարճ շնորհիւ միածնաէջ սրբոյ տեղոյս, ի վերայ սիրելի և Հոգևոր որդւոցդ մերոց և լուսաճստնդ զաւակացդ Սրբոյ Աթոռոյս՝ Սիմէօն շնորհունակ վարդապետիդ, և տէր ՅօՀան խոհեմամիտ քաՀանայիդ, և բարեպաշտօն քեաթխուտայիցդ՝ այսինքն Ջողազու Յակոբան քեովխայիդ, Սեվքարի Յօջի քեովխայիդ, Հաշաջերի Պօղոս քեովխայիդ, Յաղտանայ Ստեփան քեովխայիդ, Ուզունթալայի Վարդէվան քեովխայիդ, Թալի Պապ քեովխայիդ և այլ օրհնեալ քեովխայիցդ և քրիստոսասէր ժողովրդեանդ առ Հասարակ ինդալ ի Տէր:

Եւ ընդ աստուածային օրհնութեանս՝ գիտասջիր սիրելիք մեր և Հարազատ որդիք Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Չի մահաւարակերպ թուղթն ձեր, զոր երկու թղթովք Հոգեղոյս Հայրապետին յղեալ էիք, Հասին առ մեզ, և իմացաք զգրեալն ձեր, որ յաղագս թեմի վանիցն ձերոց Հաղարծինայ Սուրբ Աստուածածնին: Ծանուցեալ էիք ևս, թէ օրհնեալ քեօվխայքդ Աւետիք և Սիմէօն վարդապետին գալոց էք: Բայց այժմ ազդ եղև մեզ, թէ Աւետիք ձերունի վարդապետն վախճանեալ է: Եւ զի գրեալ էիք, թէ յՈւզունթալու գեղջն քանի մարդիք են վախճանեալ անյիշատակ, որոց կայքն մնացեալ անտերունջ, յայլոց ձեռք անցանին: Մէք ևս քանի տարիք են, որ ժողովարար վարդապետ չեմք յղեալ ի մէջ ձեր, և լուսաՀոգի Մարտիրոս վարդապետն, որ Թիֆլիզու առաջնորդ և երկրորդ նուիրակ գոլով, եկեալ էր ի մէջ ձեր՝ յուրաքանչիւր գեօղս ի նուիրակական արդեանցն դրամ և տաւար և այլ ինչ իրք են մնացեալ առ ոմանս, |885| որոց թէպէտ և սիաՀին կայ, այլ մանաւանդ Սիմէօն վարդապետն և տէր ՅօՀան քաՀանայն տեղեակք են:

Վասն որոյ աՀա զսիրելի և զՀոգևոր որդին մեր և զՀարազատ զաւակն Սրբոյ Աթոռոյս՝ զտէր Ռէթէոս շնորհունակ վարդապետն օրհնութեան կոնդակաւ առաքեցաք, որ յօրհնեցելոյ երկրէդ զիւղ և զպանիր և զմնացուս ժողովեացէ իբրև իմտատիայ պակասութեանց սրբոյ Տանս: Բանզի յայտնի է ձեզ, թէ ի՛նչ փորձութիւնք Հասին Սրբոյ Աթոռոյս և որպիսի՛ նեղութեանց պատաՀեցաք, և երկրիս բարութիւնքն սղացեալ գոլով, պիտոյք բաւական ոչ գտանին:

Նաև զլուսաՀոգի Մարտիրոս վարդապետի նուիրակութեան կողմանէ մնացեալ արդիւնան, որոց վերոյ և կան զամէնն Հաւաքեացէ: Եւ ևս զՈւզունթալա անյիշատակ վախճանելոց կայիցն տիրեացէ ի կողմանէ Սրբոյ Աթոռոյս, որ այլ ոք չիշխեսցէ ձեռնամուխ լինիլ: Ուստի պատուիրեմք սիրելեացդ, զի մեծաւ սիրով ընդունի-

ցեք զճոգևոր որդիդ մեր՝ Ռեթէոս խոհեմառատ վարդապետդ և ձեռնտու լինիք գործոյն, և Սիմէօն վարդապետդ և տէր Յօհան քահանայդ շրջագայեսջիք ընդ դմա ի տեղիս տեղիս վասն Հանգուցեալ Մարտիրոս վարդապետի թողեալ արդեանցն, որոց դուք տեղեակ էք, զի անպակաս առ ձեռն բերիցէք:

Իսկ ինդրոյդ ձերոյ, որ յաղագս թեմ և վիճակ որոշելոյ, այժմ ոչ լինի վճիռ: Այլ յորժամ Ռեթէոս վարդապետն զգործս աւարտեսցէ, ի մեծ պաշտօնս դէպ ի սուրբ Չատիկն երկու կամ երեք քօխվայք, Հանդերձ Սիմէօն վարդապետին, ընդ նմա ի միասին գայցէք, լինի թէ՛ զՀաղպատայ վանից վէքիլ վարդապետն ևս բերել տացուք, յայնժամ ձեր ինդրոյն զկատարեալ վճիռ իմն տայցեմք և զՍիմէօն վարդապետն ձեզ առաջնորդ կարգիցեմք, փոխանակ Աւետիք վարդապետին Հանգուցելոյ:

Այսպէս գիտացեալ եղիջիք յանձնեցեալք ի ինսամս Տեառն. ամէն:

Գրեցաւ ի ՌՄԽԼ. (1799) թուոյս և ի փետրվարի ..., ի Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^ր 4482, էջ 884-85

¹⁵³³ **1799 թ. փետրուար** - Թուղթ ճորտութեան ի Թիֆլիզ առ Կոնկուլյաննց խառատ Յօհանի որդի Սարգիսն, զոր բազում ամօք յառաջ մինչ սուրբ Գեղարդն ընդ ջուղայեցի Գալուստ վարդապետի գնացեալ է անդ վասն ժանտախտին, ծնօղքն նորա ընծայեալ են սրբոյ Գեղարդեանն և այժմոյս յարքայէն ևս Հուքմ առեալ Հաստատնապէս ճորտ էին արարեալ Սրբոյ Աթոռոյս:

Յորմէ ժամանեսցէ ...

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ ծանուցումս լիցի սիրելի և Հոգևոր որդւոյդ մերոյ և Հարազատ զաւակիդ Սրբոյ Էջմիածնի: Ձի բազում ամօք յառաջ, մինչ սքանչելագործ կողամուխ սուրբ Գեղարդն Քրիստոսի եկեալ է ի քաղաքդ վասն ժանտամազին՝ ձեռամբ սիրելոյն մերոյ ջուղայեցի Գալուստ զգօնամիտ վարդապետին, յայնմ ժամանակի, յորում երեքամեայ տղայ ես եղեալ լուսաւորի ծնօղքն քոյ ընծայեալ են զքեզ սրբոյ Գեղարդեանն՝ առ ի լինիլ ճորտ Սրբոյ Աթոռոյս: Իսկ այժմոյս ևս վկայութեամբ Դաւիթ մուշրիպին և այլ Հաւատարիմ ազատորդեաց ստուգեցեալ է ճորտութիւնդ, վասն որոյ և քրիստոսազօր օրհնեալ արքայն |962| Հրամանագիր է տուեալ քեզ, որ Հաստատնապէս ճորտ լիցիս Սրբոյ Աթոռոյս և սմա ծառայեսցես:

Չոր սիրելի որդին մեր՝ Յովհաննէս շնորհապերճ արհիեպիսկոպոսն և ճորտիցն մերոց վերակացու՝ տէր Դաւիթ Հանճարոնակ աւագ քահանայն գրեալ էին մեզ, և Քրիստոսի օրհնեցեալ պարոն Ենօքն ևս եկեալ աստ ի Սուրբ Աթոռս, պատմեաց մեզ բերանով: Որք և վասն քոյ ինդրեալ էին զթուղթ Հաստատութեան գրեալ:

Ուստի և մեր զայս օրհնութեան և Հաստատութեան նամակս մեր գրեցաք և յղեցաք ի ձեռս յիշեալ տէր աւագ քահանային Հասուցանել առ քեզ ի միամտութիւն: Որպէսզի ունիցիս զսա ի ձեռին քումնչան ... (և զայն տես ի Հոգեւոյս ՍաՀակ վարդապետի տետեր 46 երեսն):

Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽԸ. (1799) և ի փետրվարի ..., ի լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 961-62

¹⁵³⁴ **1799 թ., 12 փետրվարի** - Թուղթ առ Ռուսաց երկրի մերազնէիցն առաջնորդ Յովսէփ վարդապետն ընդ նոր նուիրակ ... վարդապետին. յիշումն յառաջ քան զայս գրեալ թղթոյն մերոյ առ սա և յանձնարարութիւն վասն նորոգ նուիրակին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2437-39

¹⁵³⁵ **1799 թ., 12 փետրվարի** - Դարձեալ առ Յովսէփ վարդապետն ընդ վերնոյ թղթոյն իբրև փուսուկայ վասն կայսերական նամակին և պարգևացն և այլ իրացն յղելոյ և այլ բանից Հարկաւորաց:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2440-41

¹⁵³⁶ **1799 թ., 12 փետրուարի** - Բաշպօրթ ըստ լեզուի ռուսաց և վկայական ըստ մեր բարբառոյ առ Ռուստաց երկրի կամէնդաթնն, այսինքն՝ սահմանակալն, վասն աստի ի Սրբոյ Աթոռոյս առաքելի նուիրակին:

Յիսուսի Քրիստոսի ծառայ Ղուկաս կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարգ Ամենայն Հայոց առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի և լուսանկար Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի, որ դաշտս Արարատեան:

Յորմէ սիրով և օրհնութեամբ և փրկչականդ սուրբ ողջունիւ և սրբոյ Իջման տեղոյս նորին շնորհիւ, ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց զգաստակենցաղ սահմանակալաց ազնուական պարոն կամէնդաթացսդ օրհնեցելոյ ազգիդ Ռուսաց լայնատարած մեծի կայսերութեանն: Չի սոյն գրաբեր Եփրեմ արհիեպիսկոպոսս, որ է Հաւատարիմ միաբան սրբոյ ԳաՀիս Էջմիածնի, և ի մէջ առաքեցեալ ի նուիրակութիւն Հայկազնեայ ժողովրդոց մերոց ի յաստուածախնամ երկրիդ բնակեցելոց, ի Հանդիպին սորա ձեզ և ի տեսանէն ձեր զայս վկայական թուղթս մեր, գիտելով և զկայսերական առատագոնեղ շնորհն առ մեզ, ըստ նորին մեծազօր Հրամանին առանց ընդդիմադարձութեան ի ներքս ընկալեալ զդա՝ ձերով բաշպօրթիւ աղևորեսցիք գնալ ի Հաշտարխան և յայլ տեղիս առ մերային ժողովուրդն՝ ի կատարել զգործն նուիրակութեան սրբոյ ԳաՀիս:

Եւ լերուք ողջ ի Տէր և զօրացեալք ի նոյն միշտ:
Գրեցաւ յամի Տեառն 1799 և ի փետրվարի 12 ի լուսանկար
Աթոռս ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2441

¹⁵³⁷ 1799 թ., մարտ - Թուղթ ի Թիֆլիզ առ Գիօրկին
բէկն, ի պատասխանի թղթոյն, զոր ընդ Աղալօյին գրեալ էիր,
ինդրերով զիր ինչ վասն արքային:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 26ա

¹⁵³⁸ 1799 թ., մարտ - Թուղթ ի Ղարս առ Չէլթիկզատէ
մահտեսի Սահակի որդի Գեորգն. շնորհակալութիւն, որ ըստ գրե-
լոյն մերոյ Հատուցեալ էր զտալիսն վանցի Իսաջանին, առ եղբօր
որդին նորա Կարապետն:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 27աբ

¹⁵³⁹ 1799 թ., մարտ - Թուղթ ի Ղարս առ մահտեսի Խյա-
չատուրն և պարոն Յովսէփն և Կարապետն Դիլանեանց. յանձ-
նարարութիւն վասն նոր նուիրակին, և իբր ի պատասխանի
թղթոյն նոցա յառաջ գրեցելոյ²⁴¹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 72բ-3ա

¹⁵⁴⁰ 1799 թ., մարտ - Թուղթ ի Ջուղայ առ պարոն
Մկրտումն վասն Թիֆլիզեցի գերւոյն, զոր ազատեալ է անդ և ի
կուսանաց վանս տուեալ իբրև աւանդ պաշէլ, որոյ աղագաւ գրէ
սրբազանն ըստ ինդրոյ Գիօրգի արքային իբր թէ կամեսցի զայն
գերին դարձուցանել, ծանուցէ իմանալ:

Յորմէ ժամանեսցէ ...

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ, գիտասջիր սիրելիդ
մեր ի Տէր և բարեմիտ որդի Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Ջի ի 1795
թուոյ Փրկչին, որ այն դառնաղէտ գերութիւնն Թիֆլիզու քաղա-
քին պատահեցաւ, յայնմ ժամանակին Գիօրգի արքայորդւոյ Չալ
անուն ծառայի մերոյ ամուսինն գերի է անկեալ և միջոց ինչ չեն
գիտեցեալ զտեղին, յետոյ իմացեալ են, որ դու՝ օրհնեալը յայդ
կողմունսդ ազատեալ ես զայն կինն և ի կուսանաց վանս յանձնեալ,
վասն որոյ նոյն Գիօրգի արքայորդին, որ այժմոյս յաջորդեալ է
զտեղի Հօրն իւրոյ, յանցեալ թուոյ Հոկտեմբերի ամսեանն գիր էր
գրեալ առ մեզ և վասն յիշեալ գերւոյն յատկապէս ինդիր արա-

²⁴¹ Մահտեսի Խաչատուրին, պարոն Հովսէփին և Կարապետ Դիլանյանին (Կարս) նոր նվիրակ
կարգելու հանձնարարութիւնը բովանդակող նամակի համառոտագրութիւնը տե՛ս ԴՅՊ,
գիրք Դ., սյուն 673:

րեալ գրել սիրելոյդ: Ընդ որում զթուղթ մի ևս առ քեզ էր գրեալ ի վերայ տեղոյս կուսանաց մայրապետին:

Եւ մէք մինչև ցարդ յաղագս պէս-պէս Հոգոց և զբաղանաց ձեռնհասութիւն չունելով, այժմոյս ահա զայն Բ. (2) թուղթն, ընդ թղթոյս յուղարկեցաք առ քեզ:

Արդ, զայդ գերիդ, զոր քրիստոնէական բարեպաշտութեամբ ազատեալ ես ի փառս Աստուծոյ և ի պատճառս վարձուց քեզ, իհարկէ, դարձուցանելոց ես առ տէրն իւր: Իսկ այժմու ժամանակիս ճանապարհաց որպիսութիւնն ևս յայտնի է, որ վտանգաւոր և կասկածելի է: Բայց մինչ արքայն ի մէջ ստիպաւ ինդիր էր արարեալ, վասն այնորիկ և մէք Հարկաւորեալ գրեցաք զայս թուղթ առ քեզ, որով և պատուիրեմք բարեպաշտ սիրելոյդ, զի զայդ կիներ, եթէ կամիս դարձուցանել ի տեղի իւր, ընդ Հաւատարիմ եկողաց յուղարկեացես ի Խօյ առ վանցի Յակոբջան աղայն, որ նա առաքեսցէ առ մեզ, զի և մէք Հասուցուք ի տեղն, որոյ աղագաւ շնորհակալ լինելոց եմք զքէն արժանաւոր օրհնութեամբ:

Իսկ թէ չկամիցիս յուղարկել, զպատասխանին թղթոյ արքային, ընդ մեր թղթոյ պատասխանսոյն գրեսցես և յղեսցես առ մեզ, զի գիտասցուք զդիտաւորութիւն քոյ: Որ և լեր ողջ ի Տէր և յանձնեցեալ ի ինամս նորին, Հանդերձ քոյայնովքդ ամենքումքք. ամէն:

Գրեցաւ յամի մարդեղութեան Փրկչին 1799 և ի մարտ ամսոյ ..., ի լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^ր 4482, էջ 892-93

¹⁵⁴¹ 1799 թ., մարտ - Թուղթ ի Գօրի առ պարոն Դաւիթն և առ որդիս նորին՝ Պետրոսն, Աւթանտիլն և Յովսէփն, յորոց Պետրոսն եկեալ ի Սուրբ Աթոռս յուխտ և յերկրպագութիւն, Ե. (5) լիտր մոմ էր բերեալ, և խոստացաւ, որ ամ ըստ ամէ ևս զԴ. (4) լիտր մոմ ընծայել Սրբոյ Աթոռոյս: Առ որ օրհնութիւն և շնորհակալութիւն:

ՄՄ ձեռ. Հ^ր 4482, էջ 962-63

¹⁵⁴² 1799 թ., մարտ - Կոնդակ ի Ղարս ի վերայ Հասարակութեանն. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն գանձանակական արդեանցն յանցեալ ՌՄԻՍԷ. (1798) թուոջս ժողովեցելոց:

ՄՄ ձեռ. Հ^ր 4482, էջ 963-64

¹⁵⁴³ 1799 թ., 20 մարտի - Թուղթ առ Գիօրիկի արքայն Վրաց, ի պատասխանի թղթոյ նորա տաճկականի ընդ մէլիք Հաքարօյին գրեցելոյ յաղագս գանձասարցի Սարգիս վարդապետին, որ յանդգնութեամբ ի Գեանջա կաթողիկոս կազմեցեալ և յետոյ փախուստ առեալ ի Վրաստոն և անկեալ ի դրոնս իւրապեսեաց, ջանայր ի Հաղբատայ վանսն նստիլ առաջնորդ թեմիցն, ոյր սակս

սրբազան Վեհն ամենևին բացասութիւն գրէ, և զայլ ինչ առաջադրէ:

Յորմէ ճշմարիտ սիրով և սրտակէզ կարօտիւ ժամանեցէ քրիստոսաձիր ողջոյն և Հոգևոր օրհնութիւն, ամենապատուակահար սիրելոյդ իմոյ Հոգւոյս ցանկալոյ և իննամառատ բարեկամիդ Սրբոյ Աթոռոյս մերոյ, աստուածասէր և նովիմբ զօրացեալ, բարեպաշտ և բարձրափառ խաչապսակ արքայիդ և ամենեցուն քոյայնոց և ընդ ձեռամբ ձերով եղելոց ի Տէր ինդալ:

Որում և գիտութիւն լիցի: Չի թուղթս գերյարգութեան ձերոյ՝ ձեռամբ մէլիք Հաքարօյին, էհաս առ մեզ, որով նախ իմացեալ ողջունէ ձերմէ ուրախացաք և ինդրեմք միշտ յԱստուծոյ ողջ և փառազուարճ լինիլ ձեզ, ի միսիթարութիւն մեզ: Եւ ապա ծանեաք զբանսդ, որ ի կողմանէ գանձասարցի Սարգիս վարդապետին: Առ որ յոյժ բազում են խօսք և ընդ երկար ասելիք: Սակայն ոչ կամելով ձանձրոյթս |2446| տալ պատուական գլխոյդ, կարճառօտ ասացուք:

Աղուանից Տան յերկճղի կաթուղիկոսութենէն թէ որքա՞ն փնասք և յանցանք են յառաջացեալ և որչա՞ փ գլխացաւութիւնք են Հանդիպեալ մեծամեծաց, և զի՞նչ գայթակղութիւն ժողովրդոց, և քանի՞ պայմանք են արձանացեալ նզովիք Հանդերձ, բազումք տեղեակ են, գուցէ և յունկս ձեր Հասեալ լինիցի: Ապա մինչ Յովաննէս կաթուղիկոսն վախճանեցաւ, և Իսրայէլ կաթուղիկոսն միայնակ մնաց, ամենայն ժողովուրդք երկրին՝ մեծամեծ և փոքունք մահասար գրեցին և զԻսրայէլն ինդրեցին Հաստատել ի կաթուղիկոս Տանն Աղուանից, լաւ իմն ցուցանելով զբարձումն երկուութեան և զմնալն միոյն:

Եւ մէք ըստ ինդրոյ Հասարակութեանն կոնդակ գրեալ զԻսրայէլ առ պատրաստ կաթուղիկոսն Հաստատեցաք, զորմէ ամենայն ժողովուրդն երկրին կախեալ կան: Յայնմ ժամանակի ողորմելի Սարգիսդ այդ խոյս տուեալ ի Գեանջա, մինչդեռ ի չափու իւրում կայր, ի տեղեկանացն ընկալեալ լինէր, և ի մէնջ ևս բանիւ և արդեամբ իննամարկեցեալ շաչիւր: Բայց ամբարտաւանեալ դմա և չբաւականացեալ եպիսկոպոսական պատուովն, արտաքոյ կամաց ամենայն ժողովրդեանն և միմիայն սնտոի խորհրդակցութեամբ Մէժղումին, զսուտ Համբաւ Հանելով զԻսրայէլ կաթուղիկոսէն, թէ վախճանեալ է, ամենայնիւ անկարգութեամբ որպէս թէ եղև կաթուղիկոս՝ ի ներքոյ բազմապատիկ բանադրանաց և նզովից նախնի Հայրապետացն, որ ոչ թէ կաթուղիկոսութիւն Համարի, այլ սեղանազերծ յանդգնութիւն և անձամբ անձին դատապարտութիւն:

Յետ այսպիսի լրբենի ապօրինաւորութեանց իւրոց, անդ ի Գեանջա ևս չհանդարտելով, եկեալ է ի Վրաստոնդ, ի վիճակիդ Սրբոյ Էջմիածնի կաթուղիկոսութիւն առնել: Եւ թէպէտ օրհնեալ

արքայդ բարեմտօրէն ողորմելի կամիս դմա, սակայն ասէ սուրբ գիրն, եթէ բարերարիցես, գիտեա թէ որոյ առնիցես, զի չարժանեաց բարերարութիւնն ի մեղս Համարեալ լինի:

Արդ, դատապարտեալդ այդ ըստ ամբարտաւանութեան իւրոյ պատժոց է արժանի, քան թէ ողորմութեան, ուրեմն ընդ վայր է, զոր կամիք բարերարել դմա: Իսկ թէ օգուտ ինչ կարծիցէք ի լինելոյ դորա առաջնորդ Հաղբատայ, Հարց ժողովրդեանն, թէ երբեմն որ Իսրայել կաթուղիկոսն եկեալ յայդդ դեգերեցաւ առ ժամանակ մի իբրև առաջնորդ Հաղբատայ վանիցն, անտի որչա՛փ պարտ յաւելան ի վերայ սրբոյ Տանն այնմիկ, և որչափ աղմուկք ծագեցան: Յորոց անկարգ եղելութեան տաղտկացեալ Հոգելոյս մեր արքայ Հօրն քոյ, էհան զնա յերկրէ այտի գնալ ի տեղին իւր: Եւ գրեալ ծանոց մեզ, որոյ աղագաւ և մէք շնորհակալութիւն գրեցաք և այլն: Այժմ ևս նմանապէս այդ թափառականիդ յայդմիկ վիճակի մերում յորջանալն ոչ մեզ է ձեռնտու, և ոչ թէ երկրիդ: Բայց զերկուս ճանապարհս առաջադրեմք վասն դորա և այն յաղագս քաղցրագոյն խաթէր ձերոյ գերարգութեան: Մինչ կամիս ողորմութիւն առնել առ դա, այսպէս արասցուք խնդրեմք, զի ի ներկայութեան Հոգևոր որդւոյն մերոյ Յովաննէս կաթուղիկոսին. նախ Հարկեցես դմա, զգողունի կաթուղիկոսի անունն բառնալ յինքենէ և զկնիքն խորտակել և ձեռագիր տալ որ այսուհետև ոչ ևս կոչեսցի կաթուղիկոս, որպէս և չէ իսկ, այլ արհիեպիսկոպոս, և ապայ թալղայ տացես դմա գնալ ի Գեանջա, և եպիսկոսապոսական պատուով առաջնորդութիւն առնել անդ: Մէք ևս կոնդակ գրեսցուք ժողովրդեանն, զի ընկալցին:

Կամ երկրորդ, եթէ յօժարիցի |2447| ի Սուրբ Աթոռս գալ, նոյնպէս Հրաժարեսցի ի սոսկանուն կաթուղիկոսութենէն, և պայման տացէ ձեզ, և մեծութիւն ձեր երաշխաւոր լինիցիք ի մերս կողմանէ և թուղթ տայցէք իւրն: Երբ թղթով ձերով եկեսցէ ներողութեամբ, ընդունելոց եմք և կարգի եպիսկոպոսաց տեղոյս պահելոց, որ միով սպասաւորաւ ի խցի միում բնակեսցի և յեկեղեցւոյն ի կարգի նոցա կայցէ: Նոյնպէս և ի սեղանն միաբանից նստցի: Քանզի անպատկառաբար ջանքն դորա, որ յետ այնպէս ապօրինաւոր ինքնընծայ կաթուղիկոս լինելոյն, փութայ ի վիճակի մերում ևս տեղի առնուլ, այդ անկարելի իմն է ըստ կանոնաց և սահմանաց ազգիս մերոյ: Իսկ եթէ մեծութեանդ դիւրին և թեթև ինչ թուի, ծանիր յօրինակէս:

Եւ թէ աստի ևս կամիցի գնալ ի Գեանջա, այլևս ըստ վերոյիշեալ պայմանին առաքեսցուք կոնդակաւ մերով: Նարդէսիս բաց յայսցանէ երկուց ճանապարհաց, այլ ուրիշ պատե՛հ ոչ գոյ դմա կենցաղավարութենէ: Եւ թէ յայլ ինչ գործ ձեռնարկեսցէ, ի Հարկէ, իրաւանց զառագաստիւ բանագրեալ գողն դորա յայտնի առնելոց եմք կոնդակաւ մերով առ ամենայն ժողովուրդս վիճակին մերոյ:

Մինչ ասասցեն օրինաւոր փեսայի ումք, թէ ձեռն բարձ ի Հարազատ Հարսնէ քումնէ, զի տացուք այլոյ ումեմն օտարի, արդեօք իրաւունք իցէ այս խնդիր, կամ թէ Հաճոյ լիցի փեսային անսալ այսմ: Գիտեմ զի ասելոց էս, թէ ոչ է իրաւունք և ոչ է Հաճելի: Ապա մեք զիմ՝ որ կարեմք զՀոգևոր Հարսն մեր բնիկ վիճակդ Սրբոյ Էջմիածնի մատնել ի ձեռս անՀարազատ խաբէբայից:

Եւ արդ, խնդրեմք յաստուածասիրութենէ ձերմէ, զի եթէ յիշէս զբազմամեայ բարեկամութիւնդ, որ ի մէջ բարեյիշատակ նախնեաց քոց արքայից և Սրբոյ Աթոռոյս և նախնի Հայրապետացն մերոց եղեալ և մանաւանդ զՀոգևոր Հայրութիւն և որդիութիւնն, որ ընդ մէջ ձեր և մեր գոյ ի բազում ամաց Հաստատեցեալ զնովապարտ կեղծաւոր ի զպատրանսն մի ընդունիր, զոր և ոչ վայելուչ Համարիմք այնպիսի կարգազեղծին շնորհս ցուցանելդ, այլ զմեր իրաւացի խնդիրն ընկալ և զմեզ միսիթարել կամեաց, պաշտելով զպատիւ սրբոյ Գաճիս ըստ նմանութեան բարեպաշտ նախնեացն քոց արքայից: Որով և մեք շնորհակալ լինելով զմեծագոր խաչապսակ Գիօրկի արքայիդ, աղօթեսցուք վասն կենաց և բարեյաջողութեան ձերոյ:

Եւ զայլ երկարապէսն ի Հաւատարիմ ծառայէն ձերմէ՝ ի մէլիք Հաքարօյէն իմացեալ, ողջ լեր ի Տէր. ամէն:

Գրեցաւ յամի Տեառն 1799 և ի մարտի 20, ի Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2445-47

¹⁵⁴⁴ 1799 թ., մարտ - Դարձեալ թուղթ առ Գիօրկի արքայն Վրաց, ի պատասխանի քանեաց թղթոց նորա վասն պէս պէս խնդրոց:

Յորմէ քրիստոսաձիր ողջունիւ և սիրով ծանուցումն լիցի գերազանցագոյն սիրելոյդ մերում և ինամաշատ բարեկամիդ Սրբոյ Աթոռոյս՝ աստուածասէր և պերճափառ Գիօրկի արքայիդ: Զանգի երեք թուղթք քո, որոց մինն ընդ Փալէւանդի որդի Չալի վասն կնոջ նորա ի Զուղայ ազատեցելոյ, և միւսն վասն ի Բաղդատ եղեալ ընչիցն ձերոց, և երրորդն, որ ձեռամբ Աղալօյին, յառաջ և յետոյ Հասին առ մեզ: Եւ մեք զառաջին թղթոյ պատասխանին թէպէտ ընդ մէլիք Հաքարօյին գրեցաք ի նոյեմբերի Գ. (3), բայց ի ճանապարհին կողոպտողաց պատահելով, ոչ է Հասեալ առ մեծութիւն ձեր: Ապա այժմ՝ զերից թղթոցն ևս ի միասին գրել Հարկաւորեցաք այսու թղթով ի միամտութիւն ձերումդ |2448| յարգութեան:

Արդ, յաղագս ի Զուղայ պարոն Մկրտումի փրկեալ կնոջն, որ մէկ թուղթ էիք յղեալ ի վերայ նոյն Մկրտումին, և մեզ գրեալ էիք յուղարկել զթուղթն, և գրել նմա և զի յղեսցէ զկինն:

Եւ դարձեալ վասն ի Հաճամիր աղայէն յանուն Հոգելոյս արքային և յանուն ձեր առաքեալ ընչիցն ի Բաղդատ Հասելոց, որ մէկ

Թուղթ էիք գրեալ առ Սուսանի որդի Ստեփանն, և մեզ առաջադրեալ զի և մէք գրիցեմք անդ առ մերազնեայսն՝ ձեռնտու լինիլ նմա յուղևորելն Հանդերձ ընչիւքն: Գիտասցէ յարգութիւնդ, զի ընկալաք զայն թուղթման առ մեզ, և թէպէտ դժուարին է ըստ ժամանակիս դառնութեանցն, բայց վասն Հարկեցուցիչ բանից ձերոց փոյթ ունիմք Հոգ տանիլ: Եւ սակայն զի ճանապարհքն յոյժ վտանգաւորեալք էին, ոչ վստահեաք յուղարկել զայն թուղթման, քանզի կողմանցս խառնակութիւնքն յայտնի եղէն ձեզ, որ յերկար ժամանակի Խօյ ի պաշարման կայր, և կարաւանք կողոպտեցեալ եղէն, և յետոյ սարտար եկն, յորմէ պատերազմ՝ և աւերք և գերութիւնք, և յայն խառնակութիւնսն քանի պաշարանօք թուղթք ի Հնդկաց և Բաղդատու առ մեզ յղեցեալք ընդ մէջ Թարսիզու և Խօյու անկեալք ի ձեռս զօրաց կորեան և այլն: Վասն որոյ ոչ միայն զձեր յղեալ թուղթման, այլ զմեր ևս քանի Հարկաւոր թուղթս գրեալ առ պատրաստ ունելով, ոչ կարեաք յղել: Բայց այժմ մինչ Խօյու իշխանութիւնն փոփոխեալ, դադարեցաւ պատերազմն, և կարաւան գայ ի Թարսիզու, Հոգամք զայն Ջուղայու թուղթն յղել, Հանդերձ մեր թղթովն առ յիշեալ Մկրտումն վասն ազատելոյ կնոջն:

Եւ վասն Բաղդատու ընչիցն՝ բազում վարանմամբ խորհիմք, որ Պարսից երկրի ճանապարհքն ամենևին կասկածելի են և Օսմանցոց երկիրն ևս ոչ սակաւ վրդովեալ լսեմք ի կողմանէ Տրանսսաց պատերազմին: Իսկ այժմ, որ կրկին ևս ի ձեռն Յովաննէս վարդապետին մերոյ գրեցուցեալ էիր վասն այնր, ահա կրկին ևս Հոգ բերեալ ի մեզ աւուրքս զայն Սուսանի որդի Ստեփանի թուղթն յղելոց եմք և գրելոց առ մերայնոց նշանաւոր անձիւն ի Բաղդատ, զի ձեռնտու և օժանդակ լիցին նոյն Ստեփանին և նկատեալ թէ որո՞վ ճանապարհաւ գալն անվտանգ իցէ, ընդ այն ճանապարհ ուղևորեսցեն զնա ընչիւքն Հանդերձ: Եւ մինչ պատասխանի ընկալցուք ի նոցանէ, գրելոց եմք մեծութեան ձերում, թէ զիա՞րդ Հոգ տարեալ իցեն:

Աստուած յաջողեցէ անփորձ յայս կողմունքս Հասանիլ իրացն և առ ձեզ ի վայելս յարգութեան ձերոյ: Իսկ և զոմանց ախորժելի Համբաւոց վասն անդորրութեան երկրիդ ի կողմանէ մեծաՀրաման ողորմածագունեղ կայսերն, որ Հրամայեալ էիք Յովաննէս եպիսկոպոսին և տէր Դաւիթ աւագ քաւանային ազդ առնել մեզ, զուարճութիւն ոչ սակաւ ընծայեցաւ սրտից մերոց: Ամենախնամ՝ Տէր ի կատարումն Հասուսցէ, խաղաղութիւն շնորհելով բարեճոխ երկրիդ, որով և մէք մխիթարիցուք ի վերայ բազմապատիկ վշտակրութեանց մերոց:

Չամենայն որպիսութիւնս մեր Հաւատարիմ՝ գրամատոյցս ծանուցէ ի սպասու: Ողջ լեր Քրիստոսիւ և պաշտպանեալ սուրբ խաչի նորին. ամէն:

Գրեցաւ ի թուոյ Փրկչին 1799 և ի մարտի ..., ի Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2447-48

¹⁵⁴⁵ 1799 թ., ապրիլ - Թուղթ ի Հնդիկս ի քաղաքն Կալկաթա առ պարոն աղայ Սարգիսն Տէր-Յովաննիսեան, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ յամի Տեառն 1797, ի նոյեմբերի 30: ՀնորՀակալութիւն վասն Հոգ տանելոյն բանի տէր Հմաւօնեանց պարոն Ստեփանին, և մխիթարութիւն վասն մահուան մօրն, և սփոփական բան՝ առ գրելն զգանգատ զըբութեանց Թիֆլիզեցի Ստեփան չերիցուն և այլն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2449-50

¹⁵⁴⁶ 1799 թ., ապրիլ - Թուղթ ի Սուրաթ առ Հանգուցեալ աղայ Յովաննեսի որդի և աղայ Յօհաննանի թոռն պարոն աղայ Յակոբն. յիշումն յանցեալ ամի գրեալ թղթոյն մերոյ առ մայրն սոցա և մօրաքոյրն, և թէ ի նուիրակէն գիր չեմք առեալ վասն ձեր, բայց ազդ եղև մեզ յոմանց, թէ նուիրակն զքեզ գործակալ է կարգեալ և այլն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2451-52

¹⁵⁴⁷ 1799 թ., ապրիլ - Թուղթ ի Հնդիկս, ի Կալկաթա, առ աղայ Մովսէսն Խաչիկեան. յիշումն վասն յառաջագոյն քանիցս գրեալ թղթոցն մերոց և յինքենէ գիր ինչ ո՛չ ընկալնոյն, և ՀնորՀակալութիւն վասն բարեւաւութեանցն ցուցելոց առ Յակոբ վարդապետն, և բան յաղագս անկարգութեանց Ստեփան չերիցուն Թիֆլիզեցոյ:

Յորմէ ժամանեսցէ թուղթ ճշմարիտ սիրոյ... Գրեցաւ ի թուականի Փրկչին 1799, և յապրիլի (այսպէս), ի լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2522-23

¹⁵⁴⁸ 1799 թ, 18 ապրիլի - Թուղթ ի Բասրա, առ պարոն Ստեփաննտոն Տէր-Յովաննիսեան, ի պատասխանի թղթոյն յամի Տեառն 1798, դեկտեմբերի 10 գրեցելոյ վասն ոմանց բանից, և վասն ի փօլիցայից:

Յորմէ քրիստոսաձիր ողջունիւ... Գրեցաւ յամի Տեառն 1799, եւ յապրիլի ամսոյ 18, ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2524-25

1549 1799 թ., 19 ապրիլի - Թուղթ առ Հնդկաց երկրին նուիրակ Յակոբ վարդապետն, ի պատասխանի թղթոյն նորա յամի Տեառն 1797, և ի նոյեմբերի 28, ի Կալկաթու գրեցելոյ: Յիշումն յառաջ գրեալ թղթոցն մերոց, և ծանուցումն վասն իւր ևս յառաջ գրեալ թղթոցն չհասանելոյ, և վասն ի Սուրաթու արարեալ փօլիցային ի Բասրայ, և անտի ի Պօլիս հասանելոյն, նաև մեր յառաջ և այժմ առ քանի գլխաւոր անձինս կողմանցն թուղթս գրելոյն, և այլ բանք:

Յորմէ Հայրական սիրով եւ օրհնութեամբ... Գրեցաւ յամի Տեառն 1799, և յապրիլի 19, ի լուսանկար Սուրբ Աթոռս Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^ր 2922, էջ 2526-29

1550 1799 թ. ապրիլ - Թուղթ մխիթարութեան ի Մատրաս առ Հանգուցեալ աղայ ՀաՀամիրի որդի աղայ Յովաննէսն և թոռն՝ աղայ Նազարն Յակոբեան վասն մահուան աղայ ՀաՀամիրին:

Յորմէ ժամանեցէ թուղթ քրիստոսականդ ողջունի և ճշմարիտ սիրոյ և երկնաձիր մխիթարութեան, Հանդերձ սրբոյ Իջման տեղւոյս նորին տրտմափարատ շնորհին և մերով Հայրական օրհնութեամբ և կարօտիւ ի վերայ Հոգևոր որդւոցն մերոց սիրեցելոց ի Քրիստոս, և լուսածնունդ գաւակացդ Սրբոյ Աթոռոյս՝ բարեպաշտից և ազնուականաց, շքեղազարդից և պերճապատուից, աղայ Յովաննէսիդ ՀաՀամիրեան և աղայ Նազարիդ Յակոբեան, և բարեկարգ տան ձերում և ամենացուն, որք ձեր են՝ ընտանիք, ազգականք և բարեկամք, ի Տէր ինդալ և մխիթարիլ:

[Հտորհք]

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ՝ գիտասջիք ազնուագոյն սիրելիք մեր և Հարազատ որդիք սրբոյ Գահիս Էջմիածնի: Չի յանցելում ամին, որ էր ըստ թուական Փրկչին 1798 և ի յունիսի ամնեանն թուղթ գրեցաք առ ընտրելագոյն Հաւատարիմ բարեկամն մեր՝ աղայ ՀաՀամիր գորովագութ Հայրն միոյդ և պապն միւսոյդ, ի պատասխանի յետին թղթոյն նորա առ մեզ յամի Տեառն 1796 դեկտեմբերի 1 գրեցելոյ և ի մխիթարութիւն յաղագս վախճանման ազնուհի քեռն ձերոյ Թամարայ: Եւ մինչ յուսայաք այլևս ընդունիլ ի նմանէ գթուղթս սիրոյ և մխիթարութեան բազմապատիկ նեղութեանց մերոց, զորս ոճնիմք ի բարբարոսաց, յեղակարծ իմն զգոյժ տրտմական լուաք:

Եւ յոչ ախորժէլն մեր ի լուր այնպիսւոյ դառն Համբաւոյ, զփոքրիկ թուղթ մի ընկալաք ի Հոգևոր որդւոյն մերմէ և ի նուիրակէն ձերմէ՝ Յակոբայ ահրի եպիսկոպոսին ի Կալկաթայու, գրեալ յամի Տեառն 1797 ...: Յորում կարի իմն թախճութեամբ ծանուցեալ էր զվճարումն կենաց վերոյիշեալ բազմագով բարեյի-

շատակ չօրն և պապուն ձերոյ՝ աղայ Շահամիրին: Որ յիրաւի և մեզ եղև տրտմութիւն մեծ, և էարկ զմեզ ի սուգ դառնագոյն: Եւ զհարդ ոչ լացցուք զտարաբախտութիւն մեր, որ զբազումն ոչ ոնելով, ի սակաւուն ևս զրկիմք օր ըստ օրէ, այժմ յայնպիսի սիրելոյ պակասելոյ, որ առաւել էր, քան զբազումն: Չաստուածասէրն ասեմ և զբարեպաշտն, զկատարեալն ծերութեամբ և զարդարեալն խոհեմութեամբ, զհոշակեալն մեծաւ համբաւով: Նա, որ օրինակ բարեաց էր յոգունց, փայլեցեալ համեստութեամբ, և կարգաւորեցեալ խոհեմական վարուք, օգտակար բազմաց և ինամատար իւրազանց: Եւ առ Սուրբ Աթոռս և առ մեզ յաւետ հաւատարիմ, և առաքեցելոցն ի մէջ ասպնջական և հանգուցիչ:

Արդ, վասն զի այսպիսի բարեշուք և երևելի անձն պակասեցաւ ի մէջ, և դուք Հարազատքդ նորին ի սուգ մատնեցաք, կրկին յաւելան մեզ ցաւք: Բայց սակայն, զի նա ըստ բարեգործութեանց իւրոց ոնի արժանաւորիլ վարձուց ըստ երգողին, թէ բարի առնէ Տէր բարեաց, և Հանգիստ այն էր նմա, ըստ բանին Յօբայ ի կատարուն հասակին յաստեացս ցաւակրութեանց փոխիլ ի վայրս մշտնջենական հանգստեանն, որպէս զհասուն ցորեան ժողովելով ի շտեմարանս արքայութեանն, վասն որոյ ոչ է պարտ ընդ երկար սուգ առնուլ ի վերայ առնն բարեպաշտի, այլ փառս տալ |2349| անմահ Արարչին, որ Տէրն է կենդանեաց և մեռելոց և յարուցիչ ննջեցելոց: Յորմէ և Հայցել արժան է զողորմութիւն առ Հանգուցեալն և առ յետամնացսդ:

Ուրեմն, յիշելով զանուն Հանգուցելոյն ի փրկարար սուրբ պատարագս, ասեմք՝ լուսաւորեսցէ Տէր զհոգի նորին, և ընդ սրբոցն դասուց պսակազարդեալ, զմայլեցուցէ յանանցական փառս արքայութեանն երկնից: Եւ զհարազատ ժառանգ նորա, Հանդերձ Համայն ընտանեօք ձերովք մխիթարեսցէ և սփոփեսցէ, և երկարակեացս և փառազուարճս պաշեսցէ:

Եւ արդ, բաւական համարելով զոր մինչև ցարդ կրեալ էք զտխրութիւն, այսուհետև ի բաց փարատեսցիք, և երկնաւորան յուսով պատասպարեալ, մխիթարեսցիք զձեզ և զամենայն ձերայինս: Մանաւանդ նախանձաւորք գտանելով բարեշնորհութեանց, զնմանութիւն լուսաւորի չօրն և պապուն ձերոյ ի ձեզ բերեալ, զնորին բարեպաշտութիւնն և զազնուական վարսն յանձինս երևեցուցիք, և իմաստնաբար կառավարելով զհոշակեալ տունդ ձեր, զհամբաւ բարի տարածեսցիք առ ամենեսեան՝ ի փառս Տեառն և ի ինդութիւն բարեկամաց:

Եւ զնոյն ջերմեռանդ սէր և զօգտակար հաւատարմութիւն, զոր ոնէր նա առ սուրբ Գաւն և առ գաւազակալ սորին, այսուհետև դուք, օրհնեալքդ, ցուցցիք մխիթարելով զվշտակցութիւնս մեր: Ըստ որում փոխանակ չօրն բարեպաշտի այժմ հարազատ ժառանգքդ նորին էք: Չորս Տէր օրհնեսցէ և զօրացուցէ, և ի

ինամն իւր պաշէլով, յամենայն փորձանաց փրկեցէ, և առաջնորդեցէ ձեզ ի բարութիւնս, ըստ Հաճոյից կամանցն իւրոց: Չի միշտ զբարի Համբաւս ձեր լսելով, ուրախանայցեմք ուրախութեամբ ի Տէր:

Գիտասջիր և զայս, սիրեցեալք մեր, զի որ յիշեցաք ի վերոյ, թէ ի նուիրակ Յակոբ վարդապետէն ի Կալկաթու գիր ընկալաք, նա յայնմ թղթի նշանակեալ էր, թէ ի Մատրասու զամենայն որպիսութիւնս իմ և գործոյս գրեալ եմ երկարապէս: Բայց այն թուղթք նորա ոչ Հասին մեզ, զի լուաք ստուգապէս, որ ի Բաղդատու մեծ պաշարանս թուղթք են յանձնեալք երևանցի այլազգւոյ ումեն, զի առ մեզ Հասուցէ, իսկ ամէնի զիրք շահ կոչեցելոյն կամ սարտարին ընդ մէջ Թարվիզու և Խոյու կողոպտեալ են զայն թղթաբեր այրն, և զթուղթն ևս կորուսեալ: Վասն որոյ յերկար ժամանակի չգիտեմք զորպիսութեանց նորա և կողմանցդ:

Արդ, գրեմք ազնուացդ, զի մինչև ցհասանիլ թղթոյս, եթէ Յակոբ շնորհապետը վարդապետն դարձեալ ի Կալկաթու ի յորհնեալ քաղաքդ Մատրաս, դեռ յայդր գտանիցի, և զգործն աւարտեալ իցէ, սիրով և խաղաղութեամբ ուղևորիցէք յայս կողմն: Եւ որպէս Հոգելոյս աղայ Հաշամիրն զթուղթն անպակաս առնէր ի մէջ, նոյնպէս և բարի շառաւիղքդ նորին, զսիրանիշ գիր ձեր մի պակասեցուցիք ի մէջ, ծանուցանելով զողջունէ ձերմէ, և զմեզապատշաճ գիտելիս կողմանցդ: Որով շնորհակալ լինելոց եմք զսիրելեացդ օրհնութեամբ:

Ողջ լերուք ի Տէր:

Գրեցաւ յամի կենարարին 1799 և յապրիլի ..., ի լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին:

Հայրական սիրով և երկնաձիր մխիթարութեամբ ողջոյն և օրհնութիւն տամք բարեպաշտուհի ընտանեաց և աստուածապարզ և զաւակաց ձերոց, զգաստամիտ Հռիփսիմէ խաթունին և նորաբողբոջ Անայի խաթունին, ազնուհի Մէրջան տիկնոջն և ծաղկափթիթ Յակոբջան աղազատէին և այլ ամենայն ձերայնոցն: Որք լիցին մխիթարեցեալք Հոգւովն սրբով և յանձնեցեալք միշտ ի պաշակայանութիւն արարչական ինամոց նորին, և շնորհք Սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ինքեանս յարաժամ. ամէն:

ՄՄ ձեռ. Հ^ր 4501, էջ 2348-49

1551 1799 թ., ապրիլ - Թուղթ ի Մատրաս առ Հանգուցեալ աղայ Հաշամիրի թոռն աղայ Նազարն և առ մայրն նորա՝ Հռիփսիմէ տիկինն, մխիթարութիւն վասն մահուան կնոջ նորա՝ Մէրջան տիկնոջն:

ՄՄ ձեռ. Հ^ր 4482, էջ 895-97

¹⁵⁵² **1799 թ., մայիս - Պօլսոյ չորս եկեղեցեաց և Իւսկիւտարու Բ. (2) եկեղեցեաց գանձանակաց կոնդակքն ևս այժմ ըստ վերոյ գրեալ օրինակից գրեցան, որպէս ի վերոյ յերեսն ՅԽԶ. (346) նշանակեալք գտանին: Իսկ զգանձապետաց թուղթման աստ յարմարեմք, արտահանելով յոմանց օրինակաց**²⁴²:

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 74աբ

Նոյն ձեռով կազմուել ու առաքուել են գանձանակի կոնդակներ ներքոյիշեալ գանձապետներին.

Օրթագեղի գանձապետ, մահտեսի Յարուլթին աղային, Խասագեղի գանձապետ Եղիայ Չելչպիին, Ղումղափուի գանձապետներ՝ պարոն Մարտիրոսին, մահտեսի Աստուածատուրին եւ պարոն Միքայելին, Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցու գանձապետներին, Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցու գանձապետներին, Ուկիւտարու Ս. Կարապետ եկեղեցու գանձապետին, Ուսկիւտարու Ս. Խյաչ եկեղեցու գանձապետին: Կոնդակները գրուել են 1799 թ. մայիսին:

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 74բ-5ա

Յասակցական նամակ Սարգիս աղայի որդի Գէորգ Մխիթարեանին՝ նրա Լօրեղբոր որդի Յակոբջան աղայի մահուան կապակցութեամբ (Թիֆլիզ): Վագիր Իւսուֆ փաշայի սառաֆ Փիլիպպոս ամիրային նամակ է ուղարկուել եւ պատասխան նամակ՝ նրա յղած երեք նամակներին: Մշոյ Ս. Կարապետ վանքի առաջնորդ Յակոբ վարդապետին նամակ է յղուել Պօլսոյ Չաքարիայ պատրիարքի մահուան կապակցութեամբ, միաժամանակ յանձնարարութիւն է տրուել գնել եւ ուղարկել 12 լծկան եւ չորս կիթուղ գոմէշներ: Շնորհակալութեան նամակ նուիրատու մահտեսի Նիկողայոս ամիրային (Կ. Պօլիս): Նոյն բնոյթի նամակ Պեկինց Յովհաննէս ամիրային (Օրթագեղ), որը Էջմիածնի վանքի պատերի նորոգման համար 50 դուռուշով գնել էր շինական աղիւններ: Շնորհավորական նամակ Հաճի Բապային (Կարին) Հալեպից վերադառնալու կապակցութեամբ: Պատասխան նամակ բէնկանցի մահտեսի Ստեփան եւ մահտեսի Խյաչատուր ամիրաներին: Նամակները գրուել են 1799 թ. մայիս-օգոստոս ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 453Ց, էջ 75բ-82ա

¹⁵⁵³ **1799 թ., մայիս - Կարճ կոնդակ ի Պօլիս առ փէշտամալճիսն. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն նորոգ հաստատեալ գանձանակին Իւրեանց, որոյ և զերեխայրին՝ Ե. (5) զուռուշ տուեալ էին նուիրակին:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 964-65

²⁴² Կ. Պոլսի չորս և Սկյուտարի երկու եկեղեցիների գանձանակաց կոնդակների վերաբերյալ բղբերի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 673:

¹⁵⁵⁴ **1799 թ., մայիս** - Կոնդակի Պօլիս առ Հացագործաց էսնաֆն. շնորհակալութիւն վասն արդեանց գանձանակին (օրինակն է ի վարդապետի կարմրակող տետեր 413 երեսն):

ՄՄ ձեռ. Հ^ֆ 4482, էջ 965-66

¹⁵⁵⁵ **1799 թ., մայիս** - Թուղթ ի Թէլաւ առ Սրբոյ Աթոռոյս ճորտ Սարգիսն, որ զառաջին թուղթն իւր ճորտութեան կորուսեալ գողով, այժմոյս ըստ ինդրոյ մեր գործակալ տէր Սարգսին զայս թուղթ գրեցաք առ նա, զի միամտութեամբ մնասցէ ի ճորտութեանն:

Յորմէ ժամանեսցէ թուղթ...

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ գիտասջիր սիրելի և Հոգևոր որդիդ մեր և Հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Չի այժմոյս Հաւատարիմ գործակալն մեր՝ տէր Սարգիս Հանճարոնակ աւագ քաւանայն Թէլաւու, եկեալ ի Սուրբ Աթոռս պատմեաց մեզ զորպիսութիւնս քո, որ դու յառաջ ի Թիֆլիզ բնակեալ գողով, ի նախնեաց քոց Հետէ ճորտ ես եղեալ Սրբոյ Աթոռոյս, և այժմոյս անտի եկեալ ես ի Կախէթ և յամենայն յոժարութեամբ ցանկաս ի տեղդ ևս ճորտութիւն առնել Սրբոյ Աթոռոյս: Եւ զի զթուղթ ճորտութեանդ առ յաւարառութեան քաղաքին Թիֆլիզու կորուսեալ գողով, ինդիր էիր արարեալ ի մէնջ, զի նորոգապէս ևս զթուղթ գրեցցուք առ քեզ ի Հաստատութիւն ճորտութեանդ:

Ուստի և մէք զայս օրհնութեան և Հաստատութեան նամակս մեր գրեցաք առ քեզ և ձեռամբ յիշեալ տէր Սարգիս խոհեմամիտ աւագ |967| քաւանային յղեցաք ի միամտութիւն քեզ: Որպէսզի ունիցին զսա ի ձեռին քումնշան (և զայն տես ի լուսաւոգի Սաւակ վարդապետի տետեր 46 երեսն):

Վասն որոյ զամենայն ճորտական տուրսդ՝ թէ Հարկ և թէ մաքս, բոլորապէս պարտիս ձեռամբ յայդր եղեալ գործակալին մերոյ Հասուցանել ի Թիֆլիզ նստող առ ի մէնջ առաքեցեալ առաջնորդին, զի և նա Հասուցէ ի Սուրբ Աթոռս: Որ և առնելովդ ըստ այսմ, եղիցիս օրհնեալ Աստուածոյ և ի Սրբոյ Լոսատրչէն մերմէ և ի մէնջ և շնորհք քրիստոսատէջ սրբոյ Գաւհի լիցի ընդ քեզ և ընդ քոյայինսն ամենեսին Հանապագ. ամէն:

Գրեցաւ ի ՌՄԽԸ. (1799) թուոջս և ի մայիսի ..., ի լուսանկար Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^ֆ 4482, էջ 966-67

¹⁵⁵⁶ **1799 թ. մայիս** - Կոնդակ ժողովարարութեան ի վերայ քանեաց տեղեաց, որք գրին ի ներքոյ վասն պարտապան կարնեցի ծերունի Մատթէոսին:

ՄՄ ձեռ. Հ^ֆ 4482, էջ 967-68

1557 1799 թ. մայիս - Թուղթի Վան առ Պարիկենց Ալամին, Վարդանն և Յակոբն. մխիթարութիւն վասն մահուան աւագ եղբոր նոցին, մահտեսի Սահակ աղային:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 968-69

1558 1799 թ., մայիս - Թուղթի Պօլիս առ Այեա Սօֆիայի կողման և Վէզիր խանի դերձակն. օրհնութիւն և շնորհակալութիւն վասն նորոգ գանձանակին, զոր Հաստատեալ էին ի մէջ իւրեանց, որոյ և գերախայրին՝ ԺԵ. (15) ղուռուշ, տուեալ էին նուիրակ Գալուստ վարդապետին (յայլ օրինակէ է գրելի):

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 969-70

1559 1799 թ., մայիս - Կոնդակի ի վերայ Խասագեղու վան արդեանց գանձանակին ի ՌՄԽԶ. (1797) թուէն մինչև ցՌՄԽԷ. (1798) և յապրիլի մուտն ժողովեցելոյ ձեռամբ գանձապետ Եղիայ Չէլէպիին, և Հասելոյ Գալուստ վարդապետին²⁴³:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 73աբ

1560 1799 թ., մայիս - Թուղթի Մեծն Պօլիս առ Իլիմոն-ձեան մահտեսի Յովհաննէս ամիրայն վան չուխային յառաջագոյն յղեցելոյ ընդ Յովհաննէս վարդապետին: Եւ վասն Ալի փաշայ խանի մխիթանճուց գանձանակի արդեանցն, ձեռամբ սորա Հասանելոյն շնորհակալութիւն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2353-54

1561 1799 թ., մայիս - Թուղթի Մեծն Պօլիս առ վանցի Հանգուցեալ Յովհաննէսի եղբայր Աստուածատուրն և քեռորդի Աբրահամն, որք ըստ կտակի Հանգուցելոյն ի Վալիտա խանումն եղեալ օտայն նորա տուեալ էին ի ժառանգութիւն Սրբոյ Աթոռոյս և Սուրբ Կարապետի վանանցն, և գֆարաղաթն նոյն օտային դարձուցեալ էին ի վերայ Սրբոյ Աստուածածնի եկեղեցւոյ գանձապետին Սրբոյ Աթոռոյս՝ պարոն Միքայէլին, ձեռամբ տիրպէնտճուց գանձապետին մերոյ՝ պարոն Յակոբին Սելթեան, և ևս նոյն Յակոբին ձեռամբն տուեալ էին գԲՃ. (200) ղուռուշ նուիրակին ի մասնակցութիւն ծախուց յախճապակեայ աղիւսոցն ի զարդարումն սրբոյ տաճարիս:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2452-53

²⁴³ Խասագլուղի գանձապետ Եղիա Ձելեբիի՝ 1797-1798 թթ. ժողոված և Գալուստ վարդապետին փոխանցած միչոցների մասին կոնդակի համառոտագրութեանը տե՛ս ԴՀՊ, գիրք Գ., սյուն 673:

1562 **1799 թ., մայիս - Թուրք առ տիպպիստճուց գանձապետն մեր՝ պարոն Յակոբն Սեթեան.** Հնորհակալութիւն վասն գանձանակադրամիցն և վասն վանեցի Հանգուցեալ Յովաննէսի կտակեալ օտային և արդեանց բանին Հոգատարութեանն ընդ նուիրակին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2453-54

1563 **1799 թ., մայիս - Թուրք առ Մեծին Պօլսոյ աւագ քահանայն և իշխանն ընդ Հասարակական կոնդակին,** որ վասն պատրիարքութեան Դանիէլ վարդապետին, յանձնարարութիւն վասն նորին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2455-56

1564 **1799 թ., մայիս - Թուրք ի Մեծն Պօլիս առ Չարաղէնց մահտեսի Գէորգի որդի Յակոբջան աղայն վասն վախճանեալ և նոր պատրիարգացն և վասն իւր առ նոր պատրիարգ Դանիէլ վարդապետն բարերարելոյն ի գալն յՈւռումէլու նուիրակութենէն՝ զմաքսն արգելլով և խոստանալոյն, որ յայլոց նուիրակաց ևս ի Պօլիս զմաքս չթողուցու առնուլ և յանձնարարութիւն:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2456-57

1565 **1799 թ., 18 մայիսի - Կոնդակ հնորհակալութեան առ էննաֆս,** որք նորապէս գանձանակ Հաստատեալ իցէն և զարդիննն Հասուցեալ: Որ գրեցաւ այժմի Մեծն Պօլիս ի Ղալաթիա առ Ղուրդուշուն մաղազայի ռէնջպերան²⁴⁴:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 114բ-15բ

Միաժամանակ հնորհակալութեան կոնդակներ են յորւել գանձանակական դրամն առաքած նշուած էննաֆներին. Ղալաթիոյ մաքսարանի ռէնջպերան, Թուրքիոյ եւ փարաքանտայ էննաֆն, գինեվաճառաց, միջոյց եւ խաւվէճուց էննաֆն, շուկայի դերձակ էննաֆն, ոսկերճաց էննաֆն:

Նոր գանձանակ Հիմնադրելու կապակցութեամբ կոնդակ է յորւել Ղումուզափուի Ս. Աստուածածին եկեղեցու քահանաներին: Հնորհակալութեան նամակ Կ. Պօլիս՝ վէզիրի սառաֆ մահտեսի Յակոբ ամիրայի եղբայր Փիլիպպոս ամիրայ Ալփիարեանին, որը Գալուստ վարդապետի միջոցով նիւթական օգնութիւն էր ցոյց տուել Էջմիածնի վանքի պատերի զարդարման գործին: Կոնդակները գրուել են 1799 թ. մայիսին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 115բ-17բ

²⁴⁴ Ղալաթիայի էննաֆներին, այսինքն՝ արհեստավորներին նոր գանձանակի հաստատման առթիվ հղված շնորհակալական կոնդակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Բ., սյուն 663:

1566 **1799 թ., մայիս** - Կոնդակը օրհնութեան վանն գանձանակաց եկեղեցեացն Մեծին Պօլոյ: Որոց մի օրինակ է շարադրեցեալ ի ստորև տետրիս յերեսն ՆԼԻ. (437): Իսկ տեղեաց և եկեղեցեաց անուանքն և գանձապետաց և թիւք ամաց և ամսոցն աւուրց աստ տեսանին:

Ի վերայ Ղումղուսիուի Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ ժողովրդեանն...

Ի վերայ Ղալաթիոյ Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն...

Ի վերայ Կոստանդնուպօլիս, ի Պալատ ընդ Հովանեաւ Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցւոյդ...

Ի վերայ Սամաթիոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյն...

Ի վերայ Իսկիւտարու Սուրբ Կարապետ եկեղեցւոյն...

Ի վերայ Իսկիւտարու Սուրբ Իսաչ եկեղեցւոյն...

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 27բ-8բ

1567 **1799 թ., մայիս** - Թուղթ ի Թիֆլիզ առ Հանգուցեալ մաՀտեսի Յակոբջան աղայի կինն և դստերն. մխիթարութիւն վանն մաՀուան նորին, և յորդորումն առ ի զպարտման նորա Հատուցանել զոր պարտ իւր Հանգուցեալ առաջնորդ Մարտիրոս վարդապետին, և Սրբոյ Աթոռոյս էր Հասուցանելոց:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 28բ-9ա

1568 **1799 թ., մայիսի 29** - Թուղթ ի Վան առ Յարութիւն աղայն. մխիթարութիւն վանն մաՀուան եղբորդւոյն իւրոյ՝ պարոն ՍաՀակին, և կրկին յանձնարարութիւն վանն նուիրակին: Եւ վանն Բաղդատ գնալի թղթոցն և վանն աշճի յղելոյ:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 29աբ

1569 **1799 թ., յունիս** - Կոնդակ ի վերայ Թէլաու և շրջակայիցն վանն աւագերիցութեան և գործակալութեան տէր Սարգսին, մինչ յառաջամէ, ի Հոգեւոյս Սիմէոն կաթողիկոսէն ևս էր կարգեցեալ և այժմ եկեալ ի Սուրբ Աթոռս՝ զՀաստատութիւն ընկալաւ:

Յորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ... Գրեցաւ ի ՌՄԽՆԸ. (1799) թուոջս և ի մայիսի (այսպէս), ի լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2529-31

1570 **1799 թ., յունիս** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ մաՀտեսի Ստեփան Չէլէպին մաՀտեսի Եղիազարեան, ի պատասխանի երկուց թղթոցն, որոց զառաջինն ընդ սուրբ Երուսաղէմայ վէքիլ Յակոբ վարդապետին էր գրեալ վանն նորա, յղելով և զնուէրս,

իսկ միան զինի նորա, դարձեալ յաղագս անյապաղ եպիսկոպոս ձեռնադրելոյ և դարձուցանելոյ, նաև վասն Չաքարիայ պատրիարգին մահուանն, և Դանիէլ վարդապետին մերոյ յաջորդելոյն ի պատրիարգ:

Յորմէ ժամանեսցէ թուղթ առատագոյն սիրոյ... Գրեցաւ յամի Տեառն 1799 և ի յունիսի (այսպէս), ի Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2532-33

¹⁵⁷¹ **1799 թ., յունիս - Թուղթ ի Մեծն Պօլիս առ Հանգուցեալ մահտեսի Մարտիրոսի որդի Պետրոս աղայն վասն Տօրտորոցն շնորհակալութիւն և վասն մահուանն մխիթարութիւն, ի պատասխանի իւր թղթոյն, և վասն Դանիէլ վարդապետի պատրիարգութեանն ևս մինչ ինքն շնորհաւորութիւն էր գրեալ զուրախակցութիւն և պատուէր:**

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 30ա

¹⁵⁷² **1799 թ., յունիս - Թուղթ ի Մեծն Պօլիս առ Չօպան ամիրայն. շնորհաւորութիւն նորակերտ եկեղեցւոյն ի Ղուռուչէշմէ և յանձնարարութիւն վասն նորոգ պատրիարգ Դանիէլ վարդապետին:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2457-58

¹⁵⁷³ **1799 թ., յուլիս - Թուղթ առ Կոստանդնուպօլսոյ նորոգ պատրիարգ Դանիէլ վարդապետն, ի պատասխանի յապրիլի մոտն գրեալ թղթոյ (թեև փոքրիկ թուղթ մի ևս ի մայիսի 23 գրեցաւ). շնորհաւորութիւն պատրիարգութեանն և ծանուցումն առաքելոյն մեր զկոնդակ առ Հասարակութիւն Ժողովրդեանն և ծանուցումն առաքելոյն մեր զկոնդակ ի փոխադարձ մահներին նոցա և առ աւագ քահանայն և իշխանն ևս թուղթ մի Հասարակապէս և առ ոմանս ի գլխաւորացն յատուկ յատուկ ևս, և վասն իւր զխիլայս, և պատուէրք Հարկաւորք և այլ ինչ բանք²⁴⁵:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2459-60

²⁴⁵ Կ. Պոլսի «նորոգ» պատրիարք Դանիէլ վարդապետ Սուրմառեցին պատրիարքոյն արքոր զբաղեցրել է 1799-1800 թթ., քանի որ Դուկաս կաթողիկոսի վախճանից հետո ստանձնել է հայրապետական գահը, նախ՝ 1801-1802, ապա՝ 1807-1808 թթ.: Նրա անվան հետ է կապված հայտնի Դավիթ-Դանիէլյան գավազանակոթիվը, որը համառոտ ներկայացրել է Գյուտավ. քնն. Աղանյանցը (ԴՀՊ, հ. Ե., Դանիէլ կաթողիկոս (1800-1808), հրատարակեց՝ Գիւտաւ. քնն. Աղանեանց, Թիֆլիս, 1902, էջ 302): Դանիէլ Ա. կաթողիկոսը վախճանվել է 1808 թ. հոկտեմբերի 30-ին Ս. Էջմիածնում և թաղվել Մայր տաճարի զանգակատան հարևանությամբ: Տապանաւարին հետևյալ արձանագրությամբ է. «Կաթողիկոս Ամենայն Հայոց Դանիէլ Ա. Պալատեցի, վախճանեալ 30 հոկտեմբերի, 1808» (Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 126, արձ. 142):

¹⁵⁷⁴ 1799 թ., 11 յուլիսի - Թուղթ առ Պօլսոյ և շրջակայիցն նուիրակ Գալուստ վարդապետն. Համառօտ պատասխանի չորից թղթոցն նորա՝ ի նոյեմբերի 20 և ի 24, և յապրիլի 5 և ի 25 գրեցելոց վասն զանազան իրաց և Հաշուոց:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2461-62

¹⁵⁷⁵ 1799 թ., 11 յուլիսի - Կոնդակ ի վերայ Կոստանդնուպօլսի, ի պատասխանի բազմակնիք մահասարի տեղեկանացն մերայնոց. մսիթարութիւն վասն մահուան Չաքարիա պատրիարգին, և Հաստատութիւն նորոգ պատրիարգութեան սրբոյ Աթոռոյս միաբան Դանիէլ Էպիսկոպոսին, զոր ի դառնալն իւր յՄուսուլմէլու նուիրակութենէն, ընտրեալ և կացուցեալ էին պատրիարգ՝ արքունական Հրովարտական, և միաբանութեամբ խնդրեալ էին ի սրբազանէն Հաստատել կոնդական իւրով:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2355-58

¹⁵⁷⁶ 1799 թ., 11 յուլիսի - Թուղթ կրկին առ մահուտեսի Նիկողայոս ամիրայն, ի պատասխանի յայսմ ամի մարտի ԺԷ. (17) գրեալ թղթոյն վասն Հաշուոց դրամոց և վասն Չաքարիա պատրիարգին վախճանման, և Դանիէլ վարդապետին կացուցմանն ի պատրիարգ, և վասն ոմանց վարդապետաց ընդունելոյ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2358-60

¹⁵⁷⁷ 1799 թ., 11 յուլիսի - Թուղթ առ Քփրեանց աղաչայ Յովաննէսի որդիան ի Սըչով, Նիկօլ, Գրիգոր և Վարդերես, ի պատասխանի թղթոյն նոցա յամի Տեառն 1794, յուլիսի 24 գրեցելոյ, Հանդերձ պատճառօք յամեցման գրոյս, և յանձնարարութեամբ վասն նոր նուիրակ Գէորգ վարդապետին:

Յորմէ ժամանեսցէ թուղթ ճշմարիտ սիրոյ, քրիստոսածիր ողջունի և Հոգևոր օրհնութեան, Հանդերձ պահպանողական Հնորձօք և զօրութեամբք միաճատեջ սրբոյ տեղոյս և Համայն սքանչելարար սրբութեանց աստանօր եղելոց ի վերայ իսկապէս սիրելեացդ մերոց և լուսաճնունդ որդւոցդ Սրբոյ Աթոռոյս՝ աստուածասիրաց և բարեպաշտից, ազնուականաց և պերճապատուից՝ պայծառաշուք իշխան ազնիւ պարոն Ֆօն Նիկօլայիդ, ազնիւ պարոն Ֆօն Գրիգորիդ, ազնիւ պարոն Ֆօն Վարդերեսիդ և բարեկարգ տան ձերում և ամենացուն, որք ձեր են և ընդ ձեռամբ ձերով ի Քրիստոս խնդալ:

[Շնորհք]

Եւ ընդ աստուածային առատապարգև օրհնութեանս գիտութիւն լիցի բարեպաշտութեան ձերում: Չի սիրանիշ թուղթն գերազնուացդ յամի Փրկչին 1794 ի յուլիսի 24 գրեցեալ ժամա-

նեացդ առ մեզ ի նոյն թուոյ նոյեմբերի 24: Որով ծանուցեալ մեր զառատութիւն սիրոյ Հարազատ որդիութեան ձերոյ առ լուսաձին մայրս Հաւատոյ և առ Հոգևոր Հայրութիւնս մեր, ուրախացաք յոյժ և շնորհակալ եղաք զձէնջ օրհնութեամբ: Բայց մինչ Հանդերձեալ էաք գրել զպատասխանին, ի Հետևեալ ամին բարկութիւն մեծ զարթուցեալ ի վերայ Տանս արևելեան, ներքինի անողորմ բռնա-
ւորն բազմագունդ զօրօք պարսկայնովք յարեաւ ի վերայ երկրացս, և զդժնդակ եղբայրն իւր առաքեաց ի վերայ բերդին Երևանու, ուստի և Հարկ եղև մեզ գնալ առ նա և դեգերիլ ի բանակին զա-
ւուրս բազումս, ծայրագոյն ծախուք յընծայատրութիւն իւրն և եղ-
բօրն: Որով տաժանակրութեամբ մերով և Աստուծոյ ամենառատ ողորմութեամբն թէպէտ և ազատեցաւ սուրբ Գաշս ի մեծաց վտանգից, սակայն աւարառութեամբ, Հալածանօք և |2534| արիւ-
նահեղութեամբ, գերութեամբ և Հրկիզութեամբ աւերեցին զշինու-
թիւն կողմանցս, և մեզ ևս անտանելի նեղութիւնս և անչափ վնասս Հասուցին, զորս չէ տեղոյս գրել: Թէրևս լուեալ իցէք փոքր ի շատէ:

Ապա այնու ալէկոծութեամբ ընդ երկար տագնապեալ և ի սուգ պաշարեալ չկարացաք գրել ինչ առ պատուական սիրելիսդ: Յետ այնորիկ Գրիգոր վարդապետ նուիրակն ձեր դարձեալ ի Սուրբ Աթոռս զամենայն արդիւնան օրհնեալ ժողովրդեանդ Հասոյց մեզ, և զորքան մարդասիրութիւն և զմեծարանս ցուցեալ էիք նմա, գոհանակութեամբ պատմեաց, որոց աղագաւ և մեք շնորհակալ եմք զսիրելիդ, և յիշատակելով զբարեւալութիւնս ձեր, Հանապազ օրհնեմք զարժանիսդ, զորս Տէր օրհնեսցէ և զօրացուցէ, փրկեսցէ ի փորձութեանց և միշտ ի փառս և ի ճոխութիւնս պա-
հեսցէ, և առաքինական գործովք զարդարեսցէ, և զամենայն բանս և զգործս ձեր յօգտակարն յաջողեսցէ: Եւ շնորհք սրբոյ Գաշիս լի-
ցի ձեզ յարապէս օգնական:

Բայց յետ գալոյ Գրիգոր վարդապետն այսր մինչ ժամէր մեզ զնորոգ նուիրակ առաքել և պարտեաք ընդ նմա շնորհակալու-
թիւն գրել առ ազնուական սիրելիսդ, թող զանպակաս Հոգան և զտարակուսանան մեր վրդովմամբք կողմանցս, այնպէս պատա-
հումն ինչ ևս պատահեցաւ, որ ոչ եղև ի տեղս յատկանալ նուիրա-
կին Ուռումէլու: Բանգի Դանիէլ եպիսկոպոսն, որ նուիրակ և առաջնորդ էր Զմիւռնիոյ, յայնմ միջոցի վասն խռովութեան իրիք ժողովրդեանն, եկեալ էր ի Մեծն Պօլիս, և պատրիարգն և իշ-
խանքն ի մեջ մտեալ ջանային Համոզել, և գրեալ էին մեզ կերպիւ
իւիք բառնալ զվէճն:

Եւ մեք զՄարտիրոս եպիսկոպոսն առաքեցաք ի Մեծն Պօ-
լիս, որ խաղաղացեալ իցեն զմիւռնացիք, Դանիէլ եպիսկոպոս
դարձցի առ նոսա և Մարտիրոս եպիսկոպոսն գայցէ նուիրակ
Ուռումէլու, իսկ թէ ոչ, Դանիէլ եպիսկոպոսն գայցէ նուիրակ այդմ

վիճակի, և Մարտիրոս եպիսկոպոսն գնայցէ ի Չմիւռնիա: Եւ զի այսպէս ոչ յատկացաւ աստ նուիրակն կողմանդ, թէ յերկուց որն լինիցի, վասն որոյ ըստ որում յանուն միոյ ուրումն պարտեաք գրել զթուղթն առ սիրելիսդ, և չէր յատկացեալ անդէպ Համարեցաք գրելն:

Այլ աստ Մարտիրոս վարդապետին պատուիրեցաք և առ Դանիէլ վարդապետն ևս գրեցաք, զի որն և գայցէ ի կողմունսդ, փութասցի իմանալ զորպիսութիւն օրհնեցելոյ քաղաքիդ և ձեր և գրեսցէ մեզ, զի ապա միամտութեամբ գրեսցուք: Եւ մինչ Դանիէլ վարդապետին դէպ եղև գալ ի նուիրակութիւն վիճակդ, ուրէք ուրէք ի ժանտախտին սաստկութենէ արգելլով և զայլ ձախորդութիւնս և տխրութիւնս կրելով, բնաւ ինչ ոչ գրեաց զձէնջ առ մեզ, և սիրելիքդ ևս յետ միանգամ զայն թուղթ գրելոյ, այլևս գիր ինչ ոչ գրեցիք, և մէք ի ներքոյ յոգնաջան խուժանից նեղսակրութեան Հիւանդացեալ ևս ընդ երկար մինչև ցայժմ ձեռնՀաս չեղաք գրել ինչ առ բարեպաշտութիւն ձեր: Եւ Դանիէլ արհիեպիսկոպոսն թէպէտ յանցելում ամին է դարձ արարեալ յաստուածախնամ երկրացդ, բայց ի ժամանէն ի Մեծն Պօլիս, ըստ վերնախնամ տեսչութեանն Չաքարիա պատրիարզն վախճանեալ է և ժողովուրդ քաղաքին զնա ինքն զԴանիէլ եպիսկոպոսն կարգեալ են պատրիարգ, որոյ աղագաւ և առ մեզ բազմակնիք թղթով ինդիր էին արարեալ Հաստատել, և մէք կոնդակ գրեալ Հաստատեցաք:

Արդ, թէպէտ ինքն անդ մնաց, բայց որպէս գրեալ է մեզ, զամենայն արդիւնան օրհնեալ ժողովրդոցդ զնուիրեալն յանուն |2535| Սրբոյ Աթոռոյս ի ձեռն սպասաւորին իւրոյ՝ Ներսէս վարդապետին լրապէս Հասուցանելոց է ի Սուրբ Աթոռս և առ մեզ: Ապաքէն յորժամ զՀոգևոր նուէրս աստուածասիրացդ ընկալեալ յայնժամ գրելոց եմք զարժանի շնորհակալութիւնն մեր առ սիրելիսդ և առ Համայն մերային ժողովուրդան քաղաքիդ ի միամտութիւն ձեզ:

Իսկ նարդենիս մինչ զՀոգևոր որդեակն մեր՝ զԳէորգ շնորհապերճ վարդապետն և զարհիեպիսկոպոսն նորապէս նուիրակ կարգեալ սրբալոյս մեռնաւ և օրհնութեան կոնդակաւ առաքեցաք առ աստուածախնամ երկիրդ, փոյթ կալաք զայս թուղթ ընդ նմա գրել առ բարեպաշտութիւն ձեր: Որով նախ գիտասաջիք, թէ անմոռաց ունիմք զբարի յիշատակս ձեր ի միտս մեր, և երկրորդ՝ զի որպէս խոստացեալ էիք երբէք չմոռանալ զլուսածին մայրս ձեր՝ սուրբ Գաւս Էջմիածին և զգաւակալ սորին, ի նոյն ուխտի ձերում Հաստատուն մնասջիք, անսպառ ունելով զորդիական սէր ձեր ի սմանէ:

Եւ երրորդ՝ զի զԳէորգ աստուածիմաստ վարդապետդ ծանուցեալ ձեզ նուիրակ, մեծաւ սիրով ընդունելութիւն արասջիք դմա ի Հեռուստ և ի մօտոյ, և ճմարտութիւն սիրոյ և Հաւատար-

մութեան ձերոյ, որ առ սուրբ Գաշն և առ մեզ, և դա երևեցուցիք, որով և վարձատրիջիք ի Քրիստոսէ, և զշնորհս սրբոյ Իջման տեղւոյս նորին և զօրհնութիւնս մեր ժառանգեսջիք:

Յաղագս նուիրակին ի յօրհնեալ քաղաքդ և առ ձեզ գալոյ, որ առաջագրեալ էիք զթուղթս գրել առ քրիստոսապսակ կայսրն և առ այլևս ոմանս, բարուք էիք գրեալ: Բայց ոչ ապաքէն երբեմն գրեցաք առ կայսրն Յովսէփի և առ ի Պետրաօլք եղեալ դեսպանն նորա, և առ ազնիւ աղայ Յովաննէնս, և առ Յովսէփի արքեպիսկոպոսն մեր, որպէս և ձեզ ծանուցեալ եմք: Եւ զի այնց թղթոցն մերոց միոյն ևս պատասխանի չեղև և բանն ոչ արդինացաւ: Նոր ևս գրել ոչ վստահանամք, մինչ ժամանակ և Հանգստութիւն ևս չունիմք: Այլ այն Հոգացողութիւն մնայ ձերումդ բարեմիտ քաջագանութեան, եթէ կամիլ և կարել լինիցի:

Իսկ ի վերջոյ Հարկաւորապէս ինդրի յազնուութեանց ձերոց՝ զճշմարիտ սէր և զբարեկամութիւն ձեր աննուազ պահել առ Սուրբ Աթոռս և առ մեզ, և երբեմն սիրանիշ թղթով մխիթարել զվշտաւորութիւնս մեր: Ողջ լերուք ի Տէր:

Գրեցաւ յամի Տեառն 1799 և ի յուլիսի 11, ի լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին:

Ողջոյն և օրհնութիւն առաքեմք մեծաւ սիրով սիրելի և Հոգևոր որդւոց մերոց՝ փոքունց եղբարց ձերոց Հարազատից, Տերամբ Յիսուսիւ զօրացելոց և շքեղազարդից՝ ազնիւ աղաչայ Գեորգին, աղաչայ Աստուածատուրին, և աղաչայ Յարութիւնին, և Համայն բարեճոնող զաւակաց և Համեստագնաց ընտանեաց ձերոց:

Դարձեալ ողջոյն և օրհնութիւն տամք սրբանուէր քահանայից և բարեպաշտօն իշխանաւորաց և բնաւ իսկ մերազնեայ օրհնեալ ժողովրդեանն քաղաքիդ առՀասարակ՝ մեծաց և փոքունց: Որք և լիցին յանձնեցեալք ի ինամն և յողորմութիւնս Աստուծոյ ամենակալին՝ կալ մնալ խաղաղութեամբ և բարօրութեամբ Հասապագա ամէն:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2533-35

Նամակ Բամբակաձորի Եաղուփլու գիւղի քեօսվաներ Պետրոսին եւ Ալլազվերդուն, որով Ղուկաս կաթողիկոսը յորդորում է նրանց Էջմիածին տալ Հարիւր լիտր լաւ երկաթ: Արաբկիրցի սնանկացած վաճառական Միրնօղլի Մեքքոսին նիւթական օգնութիւն ցոյց տալու Համար տրուում է ժողովարարութեան կոնդակ՝ ուղղուած Կարինի, Թօխաթի, Սեբաստիայի, Կեսարիայի ու շրջապատի բնակչութեանը: Նամակ Թիֆլիս, Հաղբատավանքի վիճակի եկեղեցիների աւագ քահանաներին, որ նրանք մեկական վարդապետ ուղարկեն Էջմիածին կոնդակով վերել Հաստատուելու եւ Հաղբատի վանքը մուղայէթ լինելու մինչեւ առաջտորդ ընտրուելը: Մխիթարութեան նամակ իւզբաշի Գաբրիէլին եւ նրա եղբայր Յովհաննէսին (Երեւան): Պատասխան նամակ գանձապետ մահտեսի Կիրեղին (Բաղդաստ):

Նամակ՝ աղայ Ղուկաս Ալեքսանեանին եւ պարոն Միքայէլ Տեր-Մինասեանին (Բարդատ), որով նշում է նամակ չգրելու Հանգամանքը: Էնթադրում է, որ նամակները եղել են կորածների մէջ, «գի յանձեւելումն լուաք, որ ի տեղոյդ մեծ պաշարանաւ թուղթք են յանձնեցեալք երևանցի տաճկի ումեմն, որոյ ի գալն ընդ կարանին ի մէջ Թարփոլու եւ Խօյու պատաշեալք են խուժադուժ գորացն շաճ կոչեցելոյն կամ Սուլէյման սարտարին, եւ կողոպտեցեալք, եւ թուղթքն եւ ի կորուստ են մատնեցեալք»: Նամակը գրուել է 1799 թ. ապրիլին, ՄՄ ձեռ. Հմր 4482, էջ 898):

Շտորակալութեան նամակ նուիրատու մէլիք Մայիլի որդի մէլիք Մարգարին (Խօյ): Գանձանակի արդիւնքը յանձնելու կապակցութեամբ կոնդակներ Կ. Պօլսի Պէյօղլու եւ Ղալաթիայու դուրկարներին եւ քերէստեճիներին, Կ. Պօլսի քիւրքճիլոց էմնաֆին: Նամակ արաբկիրցի վաճառականներին (Կարին) ի պատասխան նրանց բազմակիւք նամակի, որով նրանք ինդրել էին Հեռացնել արաբկիրցի Հոգեւորական Ղուկասին: Վեհապետը նշում է, որ դա կլինի միայն այն ժամանակ, երբ Ղուկասը դա էջմիածին: Նամակ Տաթեւի միաբան վարդապետներին եւ մէլիք Պօղոսին, ի պատասխան նրանց ինդրանքի՝ ուղարկելու իրենց ժողովարար Պօղոս վարդապետի եւ Հանգուցեալի ինչքը: Օրհնութեան կոնդակ գանձանակի կապակցութեամբ, տրուած Կ. Պօլսի դիւպլէնտճոցն: Շտորակալութեան նամակ առ շէհր վէրիլի մաշտեաի Յովհաննէսն, որը Գրիգոր վարդապետին ոճնեցած պարտքի դիմաց ձի էր ուղարկել: Միսթարութեան նամակ Յովհաննէսն եւ Պետրոս վարդապետներին (Կ. Պօլիս)՝ Չաքարիայ պատրիարքի մաշտան կապակցութեամբ: Յանձնարարական խոսք է ասում նոր պատրիարքի՝ Դանիէլ վարդապետի Հասցէին: Մինաս եւ Գրիկ եղբայրներին (Մուշ) պատասխան գրութեամբ յայտնում է, որ նրանց ինդրանքով եպիսկոպոս է ձեռնադրուել Ս. Առաքելոց վանքի առաջնորդ Յովհաննէս վարդապետը: Շտորակալութեան նամակ մաշտեաի Գրիգոր եւ մաշտեաի Սկրտիչ ամիրաններին, որոնց նուիրել էին 25 ղուռուշ:

Նամակները գրուել են 1799 թ. փետրուար-յուլիս ամիսներին:

ՄՄ ձեռ. Հմր 4482, էջ 888-910

¹⁵⁷⁸ 1799 թ., 11 յուլիսի - Թուղթ առ պատրիարզն սրբոյ Երուսաղէմի՝ Պետրոս վարդապետն, ի պատասխանի երկուց թղթոց նորին յաղագս այլևայլ բանից:

Քրիստոսի Աստուծոյ մերոյ վասն մեր մարմնացելոյ, ամենաբաղձալի գերասքանչ սուրբ տեղեաց տնօրինականաց, Հրաշալի ծննդեանն աստուածաբաղձ Գողգոթային եւ լուսացնցուղ սուրբ գերեզմանին եւ այլ շտորակալի տեղեացն սրբոցն շերմեռանդ սիրով եւ կարօտիւ մատուցանեմ՝ զերկրպագութիւնս: Սրբազանից առաքելոցն Յակոբեանց սուրբ գլխադրին եւ սուրբ գերեզմանին՝ առ ընծայեմ զՀամբոյրս շրթամբք Հոգւոյ, ըղձութեան շնչոյ, ապաւինեալ յանդառնալի բարեխօսութիւնս առ Տեր:

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Ղուկաս կաթողիկոս եւ ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի եւ լուսակազմ մեծի Գաւհի Սրբոյ էջմիածնի: Որ

աՀա նախապէս ...: Եւ ապա քրիստոսաւանդ սուրբ ողջունիւ և նոյնապատուէր սիրով ծանուցանեմք սիրելի եղբորդ մերոյ և Հարազատ որդւոյդ Սրբոյ Աթոռոյս տեառնդ Պետրոսի աստուածիմաստ վարդապետիդ և արժանավայել պատրիարգիդ սրբոյ քաղաքիդ Երուսաղէմի:

Չի թուղթն ձեր ի յանցեալ 1798 թուոջ Փրկչին և յապրիլի Դ. (4) գրեցեալ ժամանեաց առ մեզ ի սեպտեմբերի Բ. (2), ձեռամբ Հոգևոր որդւոյն քո և մերոյ՝ Հաշտարիսանու նուիրակ կարգեցեալ Մկրտիչ Համեստաբարոյ վարդապետին, զոր ընթերցեալ և իմացեալ մեր զամբողջութենէ ՀիաՀրաշ Աթոռոյդ և այլ սրբոյ վանորէից շուրջ զբովաւ եղելոց, և զբարեկեցիկ ողջունէ ձեր և սրբագունդ միաբանիցդ՝ ուրախացաք և գոհացաք զԱստուածոյ պաՀպանողէն Համայնից:

Ծանէաք և զինդիր ձեր, որ վասն յիշեալ Մկրտիչ վարդապետին զյանձնարարական և զվկայական թուղթս տալոց, ուստի ըստ ինդրոյդ զորդորական կոնդակ մի ի վերայ Հասարակութեան ժողովրդեանն գրեացաք ի Հաշտարիսան, ի Մօսկով և յայլ քաղաքն, որ և գոն յազգէ մերմէ, և զբաշպօրթ մի առ սահմանակալ կամէնդատան գրեցաք, ընդ որս և յանձնարարութեան թուղթ առ Յովսէփ վարդապետն՝ վասն սիրով ընդունելութեան նուիրակին և բարեպէս յառաջացման գործոյն: Չորս և տուեալ ինքեան Մկրտիչ վարդապետին, սիրով ուղևորեցաք գնալ ի վիճակն իւր:

Իսկ և որ լսելով թէ Թիֆլիզու նուիրակն ձեր՝ Պօղոս վարդապետն վախճանեալ իցէ, զՍտեփաննոս խոհեմամիտ վարդապետն նորոգ նուիրակ էիք յուղարկեալ, ինդիր առնելով ի մէնջ զի նմա ևս զկոնդակ տայցեմք, նա զկնի Մկրտիչ վարդապետին եկն ի Սուրբ Աթոռս, և մեք վասն նորա ևս զորդորանաց կոնդակ մի գրեալ ի վերայ Թիֆլիզու, Համախոյ և այլ տեղեաց վիճակի նորին, տուաք նմա և առաքեցաք ի Թիֆլիզ, այլ յայնմ ժամանակի Պօղոս վարդապետի մեռանիլն կամ կենդանի վինիլն ոչ էր յայտնի, և երբ Ստեփաննոս վարդապետն աստի գնաց ի Թիֆլիզ, նա անդ երևեցեալ էր, և զկնի քանի աւուրց վախճանեալ: Չորմէ յետ այլ բանից ունիմք գրել:

Իսկ միւս թուղթդ, որ էր ի վերոյիշեալ թուոյ նոյեմբերի ԺԱ. (11) գրեցեալ, էՀաս առ մեզ ի ներկայ թուոյս յունիսի Բ. (2) ընդ ի Մեծն Պօլիս եղեալ Հաւատարիմ միաբանին ձերոյ և Հոգևոր որդւոյն մերոյ՝ Յակոբ Հանճարոունակ վարդապետին: Որով ի կողմանէ գաղղիացւոցն, զոր ինչ որպիսութիւնս էիր գրեալ, իմացաք: Եւ յաղագս խառնակութեանց քաղաքիդ և նեղսակրութեանց ձերոց ի դժոխային բարուց յանդուգն տեղեկանացդ, զոր ծանուցեալ էիր, ցաւեցաք կարի յոյժ: Անձամբ անձին առեալ զփորձ, մերովքս աստի կրիւք: Ըստ այնմ զի երբեմն յարտաքուստ Հինից թշնամեաց մնասատուութեամբքն տառապիմք, և մինչ յայնցանէ զերծ գտա-

‘նելոյ միջոց ինչ լինի, յառ մեօց եղելոց Հանապազաստու դժնդակ կեղեքչացն տաժանիմք:

Այլ մեր և ազգի մերոյ օգնութիւնն ի Տեառնէ Աստուծոյ եկեացէ ի ժամանակին նեղութեան, վասն որոյ Հայցեմք ի բազմագուծ ողորմութենէ նորին, յայց ելանել և խաղաղութիւն շնորհել ձեզ և մեզ և ամենայն աշխարհի և սրբոց տաճարաց իւրոց Հաստատութիւն պարգևել ի փառս ամենազօր անուան իւրոյ: Իսկ ի վերայ այնր տրտմականին ազդեցութեան, որ Հետևաբար զեկուցեալ էիր, թէ յարքունական բարձր Հրամանէն կատարիքն զիջեալք են ի Համարձակ ամբարշտութեանց իւրեանց և զապաճովութիւն ինչ էք գտեալ առ այն սրտադիւր եղաք: Քրիստոս Փրկիչն յապառնի կասկածեալեաց փորձութեանց ևս ազատեսցէ:

Յաղագս յիշեալ Յակոբ վարդապետին, որ յատուկ վկայական թղթովք ինդրեալ էիր ձեռնադրել եպիսկոպոս, ոյր սակս և ի Պօլիս ոմանք պատուելի ամիրայք և տիրացու Սարգիսն ևս գրեալ էին, ի Հայրական սէր և ի ինամն ընկալաք զնա և ի սոյն ամսոյ ... շնորհիւ ամենազօր սուրբ Հոգւոյն զհոգւոր որդին մեր՝ զտէր Յակոբ զգօնամիտ վարդապետն ձեռնադրեցաք ի պատիւ եպիսկոպոսութեան: Որում շնորհաւոր եղիցի աստիճանն իւր, և բարեալ վայելեսցէ, և բարի յիշատակ լիցի ձեզ և մեզ:

Այլև՝ ի կողմանէ՝ Պօղոս վարդապետին երբեմն այսր Հասեալ մետաքսին, զոր գրեալ էիր իբր զի վաճառեալ տայցեմք, այն գործ մեզ անյարմար էր, սակայն տիրացու Սարգիսն գրեալ էր, թէ ընդ Յակոբ վարդապետին տնօրինեսջիք: Վասն որոյ և մեք խօսեցաք ընդ նմա, և ի ներկայութեան իւրոյ վաճառականաց ձեռօք որոշել և կշռել տուաք և կշռել տուաք և յանձնեցաք նմա, որ ի Կարին վաճառել տայցէ և զգինն Հասուցէ առ ձեզ: Իսկ ինքն՝ Պօղոս վարդապետն, որպէս գրեցաք ի վերոյ, զկնի Ստեփաննոս վարդապետի գնալոյն աստի ի Թիֆլիզ, նա ևս ի Գանձակու կողմանցն եկեալ էր անդ, և յաւուրս ինչ Հիւանդացեալ և վախճանեալ: Յետ վախճանմանն Ստեփաննոս վարդապետն |977| և մեր Յովաննէս վարդապետն (զոր ընդ սրբոյ Գեղարդեանն առաքեալ էմք ի Թիֆլիզ վասն ժանտախտին) երկոքինն ի միասին վերահասու էին եղեալ կայիցն, յորոց զինչ ինչ իրս Ստեփաննոս վարդապետն վերառեալ էր ի պէտս Հարկաւորութեան իւրոյ, և զայլն՝ թէ դրամ և թէ այլ ինչք յետ խարճիցն ամանաթ էին շինեալ կնքով Ստեփաննոս վարդապետին, և Հանդերձ սիահաւովն յուղարկեալ առ մեզ: Եւ մեք այժմոյս ի տեղս ընդ Յակոբ վարդապետին ևս սիահի առնել տուեալ զայն իրան, Հանդերձ որպիսութեամբ և որքանութեամբ մետաքսին, յանձնեցաք նմա, որ Հասուցէ ի Սուրբ Աթոռդ:

Իսկ զսիահին եղեալ ի մէջ թղթոյս, յղեցաք առ քեզ, զոր տեսանելոց էս: Դարձեալ՝ նա ինքն Ստեփաննոս վարդապետն ի նուիրակական արդեանցն իւրոց ամանաթ դրամն էր յուղարկեալ

առ մեզ, յորոց ԲՃ. (200) ղուռուշ, զոր նա մեզ տալիք ունէր, առաք գիտութեամբ Յակոբ վարդապետին: ԵՃՁ. (580) ղուռուշ ևս, զոր ի Կարին Գօգօրեան մաշտէսի Ալետիքին ունէր տալիք, զայն ևս Հատուցաք ըստ իւր գրեցելոյն: Իսկ զմնացորդ դրամն՝ թէ ոսկի և թէ սպիտակ, ընդ իրացն յանձնեցաք Յակոբ վարդապետին՝ Հատուցանել առ ձեզ:

Նաև՝ Հաշտարիսանու նուիրակ Մկրտիչ վարդապետին աղագաւ, զոր գրեալ էիր, թէ էթէ դրամ պիտոյասցի, ի ինդրենն քանի մի Հարիւր ղուռուշ տացես և յԷրզրումայ նուիրակէն գտցես, նմա ևս ունիմք գրեալ: Նա՝ Մկրտիչ վարդապետն ի գնալն իւր աստի ԵՃ. (500) ղուռուշ դրամ ինդրեաց ի մէնջ վասն խարճի առնելոյ ինքեան, և մեք ետուք, և յանցելումն Կարնոյ նուիրակն ձեր՝ Ստեփաննոս վարդապետն մինչ եկեալ էր ի Բայազիտ, գրեցաք անդ մեր վէքիլին՝ պաշանջել զայն դրամն, բայց նա որչափ ինդիր էր արարեալ, Ստեփաննոս վարդապետն չէր տուեալ՝ ասելով, թէ պատրիարգ վարդապետն ինձ զայդպիսի բան չէ գրեալ: Ապա չգիտեմք, թէ որպիսի բան է:

Իսկ այժմոյս մինչ գճոգւոր որդին քո և մեր՝ զՅակոբ նորապերճ եպիսկոպոսն սիրով և օրհնութեամբ և փառաոր խիլայիւ դարձուցանեաք, զայս թուղթ ընդ նմա գրեցաք առ սիրելի եղբայրուծին քո, ի պատասխանի թղթոցդ: Որ և զմաքուր սերդ անպակաս առնելով ի Սուրբ Աթոռոյս և ի մէնջ, և զմեզապատշաճ որպիսութիւն կողմանցդ ծանուցանելով, ողջ լեր ի Տէր. ամէն:

Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽԼ. (1799) և ի յուլիսի ԺԱ. (11), ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

Սիրով և օրհնութեամբ ողջոյն տամք սիրագումար միաբանից Սրբոյ Աթոռոյդ, շնորհապերճ եպիսկոպոսաց, խոհեմամիտ վարդապետաց, Համեստակենցաղ աբեղայից և Համայն աստիճանաւորաց և բարեպաշտօն մաշտէսեաց՝ յանձնելով զամենայն ի ինամն և յողորմութիւնս բարերար բարձրելոյն, կալ մնալ խաղաղութեամբ:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 975-79

¹⁵⁷⁹ 1799 թ., յուլիս - Թուղթ առ սրբոյ Երուսաղէմի վէքիլ տիրացու Սարգիսն ի Մեծն Պօլիս, ի պատասխանի Բ. (2) թղթոցն, վասն իւր գործակից Յակոբ վարդապետին եպիսկոպոսութեան, և վասն սուրբ Երուսաղէմի քանի Հակն ապրշուրմիցն, և վասն վախճանեալ և յաջորդեալ պատրիարգացն:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 30բ-1ա

¹⁵⁸⁰ [1799 թ., յուլիս] - Վկայական եպիսկոպոսութեան սրբոյ Երուսաղէմի միաբան ի Մեծն Պօլիս նաստղ Յակոբ վարդապետին:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 31ա-1բ

1581 1799 թ., 11 յուլիսի - Թուղթ առ Սուրբ Կարապետի վանիցն առաջնորդ Յակոբոս վարդապետն, ի պատասխանի Դ. (4) թղթոցն ընդ Մկրտիչ և Յովաննէս և Մատթէոս վարդապետացն վանն ոմանց պատճառաց, և յաղագս գումշոցն և դրամոց, զորս յղեալ էր ի Հատուցումն մնացեալ պարտուցն:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 31բ-2բ

1582 1799 թ., 19 յուլիսի - Թուղթ ի Մեծն Պօլիս առ Սախայեան Գրիգոր ամիրայն, ի պատասխանի թղթոցն, որ ընդ Գէորգ վարդապետին, որ եկեալ էր իբր միաբան լինիլ Սրբոյ Աթոռոյս, և այլևս դարձաւ: Եւ յանձնարարութիւն վանն նորոգ պատրիարգ Դանիէլ վարդապետին:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 32բ-3բ

1583 1799 թ., 21 յուլիսի - Թուղթ առ Իւչքիլիսայի վանից վարդապետն, ի պատասխանի թղթոցն նոցա, մխիթարութիւն վանն մահուան առաջնորդին իւրեանց՝ խղճալի Թովմաս նորընծայ եպիսկոպոսին, և յուսադրութիւն, թէ ահա առ փաշայն թուղթ գրեցաք՝ իննամատար լինիլ ձեզ: Եւ զի զԲարսեղ վարդապետն առաջնորդ ինդրել ցուցանէին, առ այն գրէ, թէ սա ոչ յօժարի, և այսպիսի արտաքուստ նորեկն ևս ոչ կարէ յայդր կառավարութիւն առնել, այլևս ի միջոյ ձերմէ ընտրեսջիք, զորն և ընտրիցէք, մեզ Հաճելի է:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 33բ-4ա

1584 1799 թ., 18 օգոստոսի - Կոնդակ ի վերայ Հաղբատայ վանաց թեմիցն, վանն առաջնորդութեան Սարգիս եպիսկոպոսին, որ ի Գանձասարու վտարանդեալ ի Գանձակ, և անտի ի Վիրս, այժմ թղթով արքային Գիօրկեայ և մահսէրիւ մերային ժողովրդեանն եկեալ էր կարգիլ առաջնորդ Հաղբատայ, և սրբազանն պայմանագիր էառ, և ապա կարգեաց (սկիզբն տեսանելի է ի վերայ 2329 երեսն ի կոնդակն թէլաու տեր Սարգսին):

Լուսաւորչակրօն Հաւատացելոցդ ի Քրիստոս... Գրեցաւ ի ՌՄԽԸ. (1799) թուոջս, և յօգոստոսի ԺԸ. (18), ի Սուրբ Աթոռս Էջմիածին²⁴⁶:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2536-37

²⁴⁶ Գանձասարից Գանձակ, այստեղից էլ Վիբ Խրեւ վտարանդի մեկնած Հասան-Ջալալյան իշխանական տոհմի շտապիղներից Աղվանից կաթողիկոս Հովհաննէս է. Գանձասարեցու եղբայր Սարգիս եպիսկոպոսի (Ջալալյանց) աննշուքամբ նշել ենք, որ Վրաց Գեորգի արքային ուղղված 1799 թ. նամակի բովանդակության համաձայն՝ Դուկաս կաթողիկոսը, թեպետ ունեցած հակակրանքին, Սարգսին կարգել է Հաղբատավանքի առաջնորդ: Հետագայում

1585 1799 թ., օգոստոս - Կոնդակի վերայ Ամրայ քաղաքին մխիթարութիւն վասն ժանտախտին և յանձնարարութիւն վասն առաջնորդ Եփրեմ վարդապետին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2360-62

1586 1799 թ., օգոստոս - Թուրք առ Գիօրկի արքայն Վրաց, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ընդ Գանձասարու Յովաննէս կաթողիկոսի եղբայր Սարգիս եպիսկոպոսին, զոր յղեալ էր աստ սրբազանն՝ կարգել առաջնորդ Հաղբատայ վանացն, ոյր սակս և նորին թեմից երևելիքն ևս մահներ էին գրեալ և սրբազանն ձեռագիր առեալ վասն զգուշանալոյ յանկարգութեանց, ապա ետ զկոնդակ առաջնորդութեան:

Յորմէ սիրով և կարօտիւ և քրիստոսական ողջունիւ և սրբոյ Իջման տեղոյս նորին շնորհիւ ծանուցումս լինի բարձրապատիւ սիրելոյդ մերոյ և իննամաշատ բարեկամիդ Սրբոյ Աթոռոյս՝ քրիստոսասէր և նովիմք զօրացեալ, առատաՀանձար և գերափառունակ Գիօրկի արքայիդ Վրաց:

Չի թուղթն մեծութեան ձերոյ, ձեռամբ Սարգիս եպիսկոպոսին էՀաս առ մեզ, զոր ընթերցեալ յաղագս ողջութեանդ և բարեկեցութեանդ ուրախ եղաք, և զամենայն բանսն ևս վերածնեցաք: Նշանակեալ էիր, թէ այս սուրբ տաճար աստուածային ոչ միայն ի մէնջ, այլ ի ձէնջ ևս յարգելի է և իննամեցեալ: Յիրափ ամենայն Հաւատացելոց քրիստոնէից ցանկալի և սիրելի է, և նախնեաց ձերոց ևս իննամարկեցեալ, բայց մինչ տաճարն սիրելի և պատուեցեալ լինի, արժան է զի և Հոգաբարձու պաշտօնեայն ևս ոչ անպատիւ լինիցի:

Չսախանցեալ Հայրապետացն Սրբոյ Աթոռոյս զտաժանելի կիրան թողումք, մէք ի մերս տասնևիննամեայ ժամանակի Հոգաբարձութեան քանիցս անգամ տեսաք շրջապատեցեալ ի դաժան թշնամեաց [ծշբ] Հայեցաք և ոչ որ գտաք օգնական կամ ի թիկունս Հասանօղ, այլ միայն Աստուծոյ ողորմութեամբն և տառապեալ ազգիս մերոյ դառն քրտամբքն պաՀպանեցաւ սուրբ Տոնս: Ո՛ր էր, թէ այժմեան տարակուսանացս, որ ի կասկածանաց մերձեցեալ թշնամեաց, մէկ դիւրիչ գտանիւր, կամ թէ ծանրաբեռն պարտուցն ուրեք ուրեք եղելոց մէկ օգնական երևիւր: Իսկ յայսպիսի նեղութիւնս մեր, որ ի մեծութենէ ձերմէ յուսամք գոնէ բանիւ մխիթարիլ, աՀա զայդպիսի բանս գրէք մեզ:

Կարո Ղաֆաղարյանը, հղելով Հովհաննէս Դրիմեցու՝ Հաղբատի և Սանահինի վիմագրերին նվիրված ձեռագիր աշխատությունը, Սարգիս եպս. Ջալալյանցի՝ Հաղբատում առաջնորդության տարիները սահմանում է 1797-1808 թթ. միջակայքում (Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, էջ 276), մինչդեռ հայրապետի՝ Վրաց արքային գրած նամակներից տեղեկանում ենք, որ Սարգիս եպիսկոպոսի առաջնորդության սկիզբը Հաղբատում պիտի համարել 1799-ը:

Եւ սակայն վանն սիրոյն, զոր Քրիստոսիւ Հաստատունն ունիմք առ միմեանս, այն բանք ևս Հաճելիք են մեզ, զի ըստ իմաստնոյն՝ լաւ են վէրք բարեկամի, քան զկամակոր Համբոյրս թշնամոյ: Չայս գիտելով մեք վանն ողջութեան և յաջողութեան ձերոյ աղօթաւորք եմք, և որքան կարեմք պատուել զտէրութիւնդ ձեր, զայն ոչ ինչայեմք: Որպէս այժմ'ի յուղարկելը զՍարգիս եպիսկոսպոսն նամակաւ ձերով, ի պատիւ մեծութեանդ սիրով ընկալաք: Յառաջագոյն բանագրութիւնքն մեր էին վանն ոչ մտանելոյ խարդախութեան ի կարգադրութիւնս ազգի մերոյ: Բայց այժմ, որ գրեալ էիք զանուն կաթողիկոսութեան և զկարմիր կնիքն խափանել, և եպիսկոպոսական պատուով առաջնորդ լինիլ Հաղբատայ սրբոյ վանիցն, որոյ աղագաւ և թեմականքն ևս մահսեր էին գրեալ, և ինքն ևս աստ պայմանագիր ետ մեզ: Վանն որոյ և մեք Հաճեալ զկոնդակ առաջնորդութեան տուաք և ըստ ամենայնի շահեալ ուրախութեամբ դարձուցաք, որպէս և ինքն ունի պատմել ի Հանդիսի մեծանձնութեան ձերոյ:

Իսկ արդ, որպէս մեք կատարեցաք զՀրամանն ձեր, արժան է, զի և մեծութիւն ձեր անսայցեք մերում կարևոր ինդրոյ: Եւ այս ոչ թէ՛նոր իմն ինդիր է, այլ ըստ ձեր գրեցելոյն: Քանզի յարգութիւն ձեր ինդրեցիք զսուրբ Գեղարդն ի փարատումն ժանտախտին, և մեք առաքեցաք, որ Ստուծով փութանակի փարատեցաւ ժանտամահս, և ով ոք փափագ ունէր Համբուրելոյ, Համբուրեաց: Այս ութ ամիս եղև, որ յայդր կայ և Հարիւրաւոր ուխտաւորք Հանդիպին աստ և ոչ գտանեն: Այդ Յովաննէս եպիսկոսպոսն ևս, որ ի բազում իրս պիտանի է մեզ, այդպէս ապագործ անկեալ կայ և բնաւ Հարկաւորութիւն չունի յայդր մնալն: Ինդրեմք ի բարեպաշտութենէ Գիօրկի արքայիդ, զի զսուրբ Գեղարդդ Յովաննէս վարդապետի, ընդ միոյ ձեր Հաւատարիմ ծառայի դարձուցես առ Սուրբ Աթոռս՝ զգուշութեամբ բերել Հասուցանել, որոյ աղագաւ յոյժ շնորհակալ լինելոց եմք զաստուածասիրութենէ քումմէ:

Լուրք որպիսութեան կողմանցս՝ Խօյայ և Երկրիս յայտնի են իմաստութեան ձերում: Իսկ զմեր նեղսալի կացութիւն ևս Հոգևոր որդիդ մեր՝ Սարգիս շնորհունակ եպիսկոպոսդ ծանուցէ:

Ողջ լեր փառազուարճ կենօք ի Հրճուանս մեր:
Գրեցաւ յամի Տեառն 1799 և յօգոստոսի...²⁴⁷:

ՄՄ ձեռ. Հ⁴⁶ 4538, էջ 82աբ

²⁴⁷ Վրաց Գեորգի արքային ուղղված՝ 1799 թ. օգոստոսի պատասխան նամակը, որի հիմնում Վրաց արքայի՝ Գանձասարի Սարգիս եպիսկոպոսին Հաղբատի վանքի առաջնորդ կարգելու մասին առաջարկն է, արժանացել է վեհափառ հայրապետի հավանությանը: Զուգահեռ, Դուկաս հայրապետը չի մոռանում և Վրաց գահակալից խնդրում է ետ վերադարձնել արդեն ուր ամիս Թիֆլիսում գտնվող սուրբ Գեղարդը, որը Մայր Աթոռից Թիֆլիս է տարել Հովհաննես վարդապետը: Նամակում հետաքրքիր են կաթողիկոսի արտահայտած մտքերը, ինչպես օրինակ՝ Մայր տաճարի համար ասում է, որ ամեն հավատավոր քրիստոնյայի (նկատի ունի նախ հայերին ու վրացիներին) այն սիրելի ու ցանկալի է. «բայց մինչ տաճարն սիրելի է և

¹⁵⁸⁷ **1799 թ.** - Թուղթ ի յԱմիդ առ Սուրբ Կիրակոս եկեղեցւոյ գանձապետն Սրբոյ Աթոռոյս՝ մահտեսի Մարտիրոսն. յիշումն յօգոստոսի Գ. (3) թղթոյն մերոյ, և մխիթարութիւն վասն մահուան եղբօրն և եղբօրորդւոյն և յանձնարարութիւն վասն նուիրակին, և ազդումն թէ վասն Մկրտիչ վարդապետին յանձնեալ գանձանակադրամիցդ շնորհակալութեան կոնդակ գրեցաք առ ժողովուրդն սրբոյ եկեղեցւոյդ²⁴⁸:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 83աբ

¹⁵⁸⁸ **1799 թ.** - Թուղթ ի Բենկան առ մահտեսի Ստեփան ամիրայի որդի մահտեսի Երեմիայն, ի պատասխանի թղթոյն, որ վասն արապկերցի բանագրեալ Ղուկաս վարդապետի արձակման²⁴⁹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 84ա

¹⁵⁸⁹ **1799 թ.** - Թուղթ ի Կապնայմատէնն առ մահտեսի Ղուկասն, ի պատասխանի թղթոյն, որով ծանուցեալ էիր, թէ բանիւ Փիլիպպոս ամիրային գնացեալ Արապկեր, Հասու եղաք անցիցն Ղուկաս վարդապետին, որ անպարտ էր և այլն²⁵⁰:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 84բ-5ա

¹⁵⁹⁰ **1799 թ., 25 օգոստոսի** - Թուղթ առ Ամրայ առաջնորդ Եփրեմ վարդապետն, ի պատասխանի Բ. (2) թղթոյն, և ի շնորհակալութիւն վասն յուղարկեալ աջաՀամբիւրին:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 34ա-35բ

¹⁵⁹¹ **1799 թ., 25 օգոստոսի** - Թուղթ ի Մեծն Պօլիս առ վէքիլ Պետրոս վարդապետն վասն մնացեալ թղթոյն գանձանակաց եննաֆիցն, որք այժմ յուղարկեցան:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 35ա

պատուեցեալ լինի, արժան է զի և հոգաբարձու պաշտօնեայն ևս ոչ անպատիւ լինիցի», կամ խոսելով Քրիստոսով արմատավորված մեր հավատի մասին՝ շեշտում է. «Կա եւ վեր բարեկամի, բան զկամակոր համբոյրս թշնամոյ»: Վավերագրի ամբողջական հրատարակությունը տե՛ս նաև ԴՀՊ, գիրք Դ., սյուն 677-679:

²⁴⁸ Ամրայի Ս. Կիրակոս եկեղեցու գանձապետ մահտեսի Մարտիրոսին՝ եղբոր և եղբորորդու մահվան կապակցությամբ մխիթարության նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 679:

²⁴⁹ Մահտեսի Ստեփան ամիրայի որդի մահտեսի Երեմիայի՝ արաբկիրցի Ղուկաս վարդապետի բանարբանից արձակելու խնդրով պատասխան նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 679:

²⁵⁰ Մահտեսի Ղուկասի՝ Արաբկիրում գտնվող Ղուկաս վարդապետի անպարտության մասին ծանուցման պատասխան նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 679:

1592 **1799 թ., 2 սեպտեմբերի** - Թուղթի թիֆլիզ առ Գարսևան Էջիկաղասին. ՀնորՀաւորութիւն դարձմանն ի յերկրէն Ռուսաց և ՀնորՀակալութիւն վասն Հարցանելոյն Յովաննէս վարդապետին զմէնջ և վասն Համբաւոյն զգալստենէ զօրաց անդուստ ի պահպանութիւն երկրին:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 35աբ

1593 **1799 թ., 25 օգոստոսի** - Թուղթ առ Պօլսոյ և շրջակայիցն նուիրակ Գալուստ վարդապետն. յիշումն յառաջքան զայս գրեալ թղթոյն մերոյ Հանդերձ Բ. (2) զաւզօք և պատասխանիւք այնց բանիցն թղթոց նորա, որոց յայնժամ չէաք պատասխանին գրեալ վասն սղութեան ժամոն, և ծանուցումն, թէ զմնացեալ թուղթն գանձանակաց էսնաֆից ևս յղեցաք ի ձեռս Պետրոս վարդապետին՝ բաժանել և այլք բանք, և զորպիսութեանց վրդովեալ երկրիս և կողմանցս:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2463-66

1594 **1799 թ., 17 սեպտեմբերի** - Թուղթ առաջին առ Հիւսիսակողմանն նուիրակ Եփրեմ վարդապետն, ի պատասխանի ի Մօզտօքու գրեալ թղթոյն, և բանք զգուշացուցականք վասն գրութեանց Յովսէփ վարդապետին առաջնորդի տեղոյն:

Յորմէ սիրով և օրհնութեամբ, քրիստոսական սուրբ ողջունիւ և մեծագօր ՀնորՀիւ սրբոյ Իջման տեղոյս նորին գիտաաջիր սիրելի և Հոգևոր որդի մեր, Հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս՝ Եփրեմ աստուածիմաստ վարդապետ: Զի ի յունիսի Ժ. (10) գրեալ թուղթ քո ի Մօզտօքու էհաս առ մեզ ի նոյն ամսոյ ԻԵ. (25) և գիտեցեալ մեր զհասանիլդ խաղաղութեամբ ի Մօզտօք և ընկալեալ լինիլդ սիրով ի պատուելի կամէնդաթէն և յօրհնեալ ժողովրդոցն մերայնոց, ուրախացաք:

Իսկ որ գրեալ էիր զմնալոյդ անդ բանիւ կամէնդաթին, մինչև ծանուցեալ նորա ի դուռն կայսերական, և զքո յուղարկելն զթուղթս Յովսէփ արքեպիսկոպոսին առ նա, ծանիր, զի թէպէտ բաց յայնմանն մի թղթոյն քո զայլ գիր ոչ ընկալաք, զի իմանայաք թէ ո՛ր ժամանեցեր, սակայն սիրելին մեր նորապէր՝ կաւալեր Յովսէփ արքեպիսկոպոսն զառ ի քէն յուղարկեալ թուղթն մեր ընկալնլով |2538| ի յուլիսի 7, գրեալ էր զպատասխանին, յորում նախ ՀնորՀակալութիւն առնէ վասն նուիրակ յուղարկելոյն մեր ըստ բանի իւրում, և ապա խոժոռութիւն ցուցանէ զոչ սակաւ, գրելովն թէ երևի որպէս թէ բաժանեալ իցես յինէն գործն նուիրակութեան, և նմա տուեալ առանձին, որ և ի Մօզտօք պատուիրեալ է յեկեղեցիսն յիշատակել զանուն իւր, և առանց մեզ նայելոյ աճապարեալ է ի Հաշտարխան: Ի միում վիճակի երկու Հրամանատու ոչ լինի,

Նուիրակն ես եմ, եկօղն ի դիմաց իմոց պարտի զգործս առնել, զի մի լիցի փեռեկտումն վիճակիս, և ինձ Հակաթոռ, և ընդդէմ բարեկարգութեան, և այլ շատ երկար բանս:

Եւ վերջապէս, թէ եթէ իմովս բանիւ վարի, իբրև զիմ Հոգի ընդունիմ և պատուեմ: Այլ թէ ինքնագլխութեամբ խրոխտանօք շարժիցի, ոչ նա զիս տեսանէ և ոչ ես զնա, և Հուր ատելութեան բորբոքի: Քեզ ևս գրեալ է զգուշութիւն, որ մինչև յիւր գալն չձեռնարկիցես ի գործս, զի մի անկարգութիւն երևիցի: Վասն զի ըստ միակողման ընտրութեան, բնաւ վարք և շարժմունք և արարողութիւնք, որք լինին ի վիճակիդ և նկատին և լսին, իբր թէ ամէնն բարեկարգութիւն է, բայց մեր նուիրակ առաքելն՝ այն ևս ըստ իւր գրութեանն, որպէս թէ ընդդէմ է բարեկարգութեան: Փառք Աստուծոյ ներողութեանն: Եւ մէք թէպէտ գոն բազում խօսելիք, այլ յայսբան ժամանակ երկայնմտութեամբ և Համբերութեամբ վարեալ (ոյր սակս և ինքն գոհունակ է զմէնս): Այժմ ևս չկամելով զգայթակղութիւն ժողովրդեանն, զի ասէ իմաստունն Հանճարեղքն վերարկեցեն զամօթս, սիրով և մեղմով պատասխանի գրեցաք, թէ մինչ մէք լուեալ էաք յայդմ փութոյ, դու գրեցեր, թէ զՖիլանն յուղարկեա (որ եպիսկոպոս է) և մէք զդա պատեհագոյն տեսեալ յուղարկեցաք: Որ ասես, թէ նուիրակն ես եմ, մինչև ցայժմ միթէ յօժար չէա՞ք ընդ քոյդ նուիրակ գոլն, այլ դու գրես, թէ ձեռնՀաս ոչ լինիմ, և մեզ դէպ եղև զդա յուղարկել: Երուսաղէմացիք զիւրեանց յղեալն նուիրակ գրեն, մէք ի Սրբոյ Աթոռոյս սրբալոյս մեռնաւ առաքեցեալն զի՞նչ պարտեաք անուանել: Եւ վասն եպիսկոպոսութեանն, զոր գրես, ընտրեա Աստուծոյ իրաւամբն, Աղուանից Տան եպիսկոպոսաց ձեռնադրութիւն անե՞լն է արժան ի վիճակիդ մերում, եթէ Սուրբ Էջմիածնի:

Եւ զիարդ զփեռեկտումն և զՀակաթոռ ձայնսն ի մէջ բերես: Ի տան միում աւագ եղբայրն ի մի գործ լինի և կրտսերն յայլ գործ, և որդիքն յայլ և այլ սպասս, փոքրն մեծին Հպատակ, այնու մի՞ թէ բաժանումն իցէ տանն, ոչ բնաւ, այնպէս և զայդ իմա: Դու բազմամեայ կառավար ես, և բնակացեալ յայդր իբրև մշտնջենաւոր, և ամենայն եկեղեցական իրաց Հրամանատու, իսկ զդա առաքեալ եմք ի նուիրակութիւն, որ ի Գ. (3) կամ ի Դ. (4) ամն կատարեսցէ զգործս և դառնայցէ այն ևս քոյդ օժանդակութեամբ, և ձեռնադրելիսն՝ քեզ սպասօղ, եթէ ասիցես կամ գրիցես զոք յուրեք ձեռնադրել, արասցէ: Բայց թէ ոչ, բնաւ մի արասցէ: Եւ յամենայն ըստ քոյդ կամեցողութեան վարիցի:

Ուրեմն ուր և կամիցիս զգնալն, պարտիս ի վերայ այնց տեղեաց դու ևս յանձնարարական թուղթս գրել: Թէպէտ և ի կոնդակին ըստ սովորութեանն գրեցեալ գոյ կապել և արձակել, այլ Եփրեմ վարդապետն ոչ է սովոր յայնպիսիս, և մէք ևս գրեցաք զգուշանալ և այլն:

Արդ, այսպես գրեցաք Յովսէփայ արքեպիսկոպոսին, զոր ի կարծոյ ծանուցաք: Վասն որոյ և քեզ գրեմք, զի մեք Համարեաք, թէ ի գնալդ քո ուրախ լիցի, և այնպիսի կարծիս չածիցէ զմտաւ: Բայց զի այնպէս խոժոռեալ է, ու թուի թէ ի թփֆիղ երկար մնալդ և ի տեղականացն Հոչակիլդ ոմանք աւելորդ բա|2539|նիւք ազդեալ նմա, պղտորեալ են զմիտան, և ի Մօզաօք ևս, թէ ինչ է անցեալ, չգիտեմք, զոր պատճառս առնու, և կարծելով թէ պակասեցուցիչ գտանիս փառաց իւրոց, ասէ՝ որպէս Բ. (2) արեգակունք ոչ են յերկինս, նոյնպէս և Բ. (2) գլուխ և Հրամանատու ոչ լինի ի վիճակիս, և զայլս այսպիսիս:

Ուրեմն ըստ ճշմարիտ կրօնիցն Քրիստոսի և Հետևողաց նորին և ոչ ըստ սին պատճառաբանութեամբ պաճուճեալ սուտ կրօնաւորաց, բուն Հարցես զՀեզութենէ և զխոհեմութենէ, զսիրոյ և զհաղաղութենէ, և իբրև զՀայր պատուեսցես զՅովսէփ արհիպանծ եպիսկոպոսն, ինքնին բանի իրիք Հրամայել չյօժարելով նորին կամեցողութեանն դիտեսցես, և յերկուս կայսերանիստ մայրաքաղաքն, յորս և չգոն այնքան ժողովուրդք ի մերայնոց, գիտեմք ոչ կամի գնալդ, դու ևս մի ինդրեսցես, իսկ յայլ տեղիսն, որպէս և առաջագրեսցէ քեզ, ըստ այնմ շրջագայեսցիս, և ի կողմանէ ձեռնադրութեան թէ կամիցի զոք ուրեք ձեռնադրել իւր գրովն արասցես, և թէ ոչ ինքնին մի լիցիս յօժարակամ, զի մեր վկայականքն ևս այսպէս ցուցանեն, և յայլ ամենայն իրս լաւին և վատին չխօսեսցիս ամենևին, զի ինքն է կարգադրօղն և խօսօղն, ինչպէս գիտէ, այնպէս արասցէ:

Միայն փոյթ տարցիս նուիրակական գործոյդ և սիրախառն յորդորմամբ ժողովեսցես զնուէրս աստուածասէր ժողովրդեանն, այն ևս ձեռնտուութեամբ նորին, և որպէս Հանդարտ և մեղմ բարուցդ բերքն է, վասն տրոց ևս զոք չպարտիս բանադրել, և թէ Հարկ ինչ իցէ սաստելոյ, իւրն ծանուցանել:

Իսկ եկեղեցական օրինաց և կանոնաց աղագաւ կապելն և արձակելն ինքեան առաջնորդին է: Եւ այսպէս Հպատակութեամբ և խաղաղութեամբ զգործդ օր մի յառաջ վճարել և ի Սուրբ Աթոռս դարձ առնել փութասցիս: Եւ որքան ի յարգի կալցիս զսիրելին մեր՝ Յովսէփ գերազանճար արքեպիսկոպոսն, այն ևս առ Սուրբ Աթոռս և առ մեզ վերաբերի, քանզի և նա մեր է ոչ իբրև զայլ ոք, որպէս և ինքն գրէ, թէ ես զիս ճանաչեալ եմ և գիտեմ միաբան Սրբոյ Աթոռոյդ և ժառանգ, եթէ Եփրեմ վարդապետն Հետևօղ լիցի ինձ, ոչ միայն զնուիրակութիւնն, այլ զառաջնորդութիւն ևս կարէ առնել, և յամենայնի կապեալ ի սէր իմ, զգործս առաւելապէս արդիւնացուցանել և այլն: Այսքան առ այս:

Այլ և ինդրեալ էր Յովսէփ արքեպիսկոպոսն զթուղթս շնորհակալութեան առ մեծազօր կայսրն վասն պարգևացն, և առ գերապանծ գործակալն, զորս և մեք Հարկաւոր գիտեմք շուտով

գրեին և յուզարկեին: Բայց ի բացմանն գարնանն մինչև ցայժմ չեղև մեզ Հանգիստ ի մի կողմանն գբաղմունք գրեկեաց և ի միս կողմանն ևս վրդովմունք: Սարտարն և շահզատայն, որք եկեալ էին ի Թարվէզ, յառաջ շարժեցան ի Սալմաստ, յորոց երկուցեալ երկիւղեցեալ Ջաֆարդուլի խանին, զամենայն ժողովուրդան Խօյայ վարեաց ի Բայազիտ, և ամայացոյց զերկիրն Խօյու, միայն ի բերդին զպահակս թողեալ: Ապա Երևանու և իւր և քրտաց զօրօք գնաց վանել զսարտարն, բայց չարաչար պարտեցաւ, և ի դառնալն զմի անգամ վարեցեալն ի Բայազիտ, Հանդերձ բոլոր տամբ իւրով անտի ևս վարեաց յայս երկիր, և իւր տունն ի Հիւրանոցիս մերում կայ և այլք ի գեղջն, ինքն ևս եկն աստ, պայմանս դնել ընդ խանին Երևանու, և կատարածն չէ յայտնի:

Չի սարտարն սուրհանդակ էր յղեալ յԵրևան և դիւր իմն եղանակաւ |2540| Հնազանդութիւն ինդրէ ի խանէն, կարելի է թէ Հնազանդեցի և մրրիկն անցցէ, բայց դեռ չէ Հաստատ, և մեք այսու խուռն խուժանօք զբաղեալ, դեռ չկարացաք գրել զայս թուղթմն:

Իսկ ի գտանել մեր միջոց ինչ գոնէ սակաւու Հանգստութեան գրելոց և յղելոց եմք ի ձեռս իւր: Եւ դու ի Հասանիլ թղթոցս մերոց առ նա և առ քեզ, իզուր լինիլդ և զսկզբնաւորութիւն գործոյդ և զայլ ամենայն որպիսութիւնս գրեսցես մեզ: Բայց և գիտասջիր աստանօր, զի ի յուլիսի 2 ի Մօզտօքու գրեալ թուղթդ ևս Հասեալ է առ մեզ յօգոստոսի 6, Հանդերձ կայսերական Հրովարտակաց օրինակօքն: Թէև յոյժ զբաղեալ գոլով մոռացաք յիշել ի վերոյ:

Եւ զի գրեալ էիր վասն Յովսէփայ արքեպիսկոպոսին, թէ լսելով զՀասանիլդ ի Մօզտօք, գրեալ է քեզ գնալ ի Հաշտարիսան (որպէս և պարոն Մկրտումն Գալստեան): Իսկ մեզ այնպիսի ինչ վրդովանաց բանս գրէ, յայտ է, թէ վրդովումն ոչ է յինքենէ, այլ ի չարայորդոր բանսարկուաց, ուրեմն որպէս պատուիրեցաք ի վերոյ, յամենայնի սիրով և Համեստ գնացիւքդ կարկեսցես զբերանս ամբարիշտ խառնակչաց:

Դարձեալ՝ մինչ վերջացուցանելոց էաք զթուղթս, վերստին ևս թուղթ էՀաս առ մեզ ի Յովսէփայ արքեպիսկոպոսին ի յուլիսի 22 գրեալ, որով ցուցանէ, թէ իմացեալ պետրպօքրցւոց զգնալն քո ի տեղի արքեպիսկոպոսի, շատ շփոթեալ են, ապա ինքն Հաստատեալ է գնոսս, թէ նուիրակ է, և ոչ առաջնորդ: Վերջապէս կազէթ են գրեալ վասն քո, որ ի Հաշտարիսան սպասեսցես գալստեան իւրում: Վասն որոյ և մեք Համարելով, թէ ցարդ գնացեալ իցես ի Հաշտարիսան, որպէս ի վերոյ գրեալ եմք, ըստ ամենայնի սրտադիւր արասցես զՅովսէփ արքեպիսկոպոսն: Որ և գրէ, թէ Հաւատարմացուցանեմ զքեզ, որ յամենայն ձեռնտու լինելոց եմ, և զգործն արդիւնաւոր առնելոց:

Նաև յաղագս Նոր Նախշուանու պարոն Յովաննիսին Աբրահամեան և Գաբրիէլին Մարտինեան (առ որս ընդ քեզ թուղթ եմք գրեալ): Գրէ թէ նոքա աղանդաւորք և Հերձուածք են, թուղթ գրելը նոցա ոչ վայելէր: Ուստի գրեմք քեզ, զի զթուղթման մեր մի տացես նոցա, այլ տեղեկացեալ զորպիսութեանց նոցա, լիապէս գրեսցես մեզ: Եւ մինչ ընդ Յովսէփ արքեպիսկոպոսին տեսեալ լինիջիք, զայս թուղթ մեր տացես իւրն ընթեռնուլ, զի միամտեալ Հաստատեսցի և փակեսցէ զոնկն իւր ընդդէմ ապականչաց, բաւական Համարելով: Ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ յամի Տեառն 1799, և ի սեպտեմբերի 17, ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2537-40

1595 1799 թ., 17 սեպտեմբերի - Թուղթ առ Յովսէփ վարդապետն] Հիւսիսոյ, ի պատասխանի յայսմ յուլիսի 7 գրեալ թղթոյն ... յառաջ քան զայն ի մայիսի 12 գրեալ թղթոյն վասն կաւալեր ... ինչ բանից և յապրիլի 28 գրեալ թղթոցն և կայսեր Հրովարտակ] ... օրինակացն:

Բայց յոյժ շիտթեալ կամք ... [սա]րտարն և շաՀի որդին մինչ [է]կին ի Սալմա[ստ] ... [Ջաֆա]րղուլի խանն զամենայն բնակիչս երկր[ին] ... ի Բայ[ագիտ] ... ևս ամենայն ընտանեօքն փախեալ ... բերդի ... զօր ինչ թողեալ: Յետոյ զօրաժող[ով] ... գն[աց] ի վերայ սարտարին ի վանելլերկրէն: Բայց ինքն վա... [ա]րմատախիլ եղև ի Խօյու և զամենայն ժողովուրդան, որ մի անգամ ՚ի Բայագիտ էր վարեալ, անտի ևս վարեաց յերկիրս Երևանու: Եւ իւր տոնն բազմութեամբ պարագայից ի Հիւրանոցիս մերում և ի գեղջն կան, և ինքն գալոց է աստ և Երևանու խանն ևս անտի, որք աստանօր խօսեսցին զպայմանս ինչ: Չի մեր խանն ևս ի ապստամբ շաՀէն: Իսկ շաՀգատայն և սարտարն ի Խօյայ բերդն մտեալ տիրեալ են, թէպէտ երկիրն ամայի:

Աժմոյս ասի, թէ կամին դառնալի թարվէզ, և ոմանց ասեն, թէ գալոց են յայս երկիր, յորոց Աստուած ազատեսցէ:

Արդ, այսպէս ամբօխեալ և վարանեալ անձեռնՀաս եմք, իսկ Աստուծոյ այցելութեամբն գուցէ զայսոսիկ աղմուկս ի գլխոց Հանցութեաց, յանժամ գրելոց և յղելոց եմք, թէ զկայսեր և զմեծամեծաց թուղթման, և թէ զկոնդակսն Ղրիմու և Դարբանդու և այլ տեղեաց, որպէս նշանակեալ էիր²⁵¹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2466-69

251 Ռուսահայոց առաջնորդ Հովսէփ արքեպիսկոպոսին հասցեագրված այս նամակը վատ է պահպանվել: Նամակի ամենակարևոր մասերը պատահառոտված և հետագայում նորոգված են: Ներկայացվում է միայն երկրի ներքին վիճակին վերաբերող հատվածը:

1596 1799 թ., 15 Հոկտեմբերի - Թուղթ առ նախապատիւ իշխանն թագաւորութեանն Ռուստաց քնեազ Էնարալ պրոքորոր Պետր Վասիլիչ Լօպուխինն. շնորհակալութիւն վասն բարերարութեանց արարելոց առ անդանօր եղեալ մերազնեայնն, քանզի գինդիրն առաջնորդին սա էր մատուցեալ կայսերն, շնորհել նոցա զՀրովարտակ բարիոք և ապահով կացութեան:

Յորմէ ճշմարիտ սիրով և Հոգևոր օրհնութեամբ... Գրեցաւ յամի Տեառն 1799, և ի Հոկտեմբերի 15, ի Սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան²⁵²:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2540-49

1597 1799 թ. 15 Հոկտեմբերի - Թուղթ առ Էնարալ պոռօչիկ և կաւալէր Սերգէյ Լազարիչ Լաշկարովն, վասն կայսերական Հրովարտակին և պարգևացն, որք ձեռամբ սորա էին պատրաստեցեալք:

Յորմէ ժամանեցէ թուղթ Յիսուսաւանդ ողջունիւ... Գրեցաւ յամի Տեառն 1799, և ի Հոկտեմբերի 15, ի Սուրբ Գաւս Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան²⁵³:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2543-44

1598 1799 թ., 15 Հոկտեմբերի - Թուղթ երկրորդ առ Հաշտարխանու և կողմանցն նուիրակ Եփրեմ վարդապետն, վասն յառաջ գրեալ թղթոցն իւր և մեր, և վասն Յովսէփ արքեպիսկոպոսի գրելոցն, և մեր առ նա գրուածոցն և այլ բանք:

Յորմէ Հայրական օրհնութեամբ և սիրով և փրկչաւանդ ողջունիւ և սրբոյ Իջման տեղոյս նորին պահպանողական շնորհին ծանիր սիրելի և Հոգևոր որդի մեր և Հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս՝ Եփրեմ շնորհապերճ վարդապետ: Զի ի յունիսի Ժ. (10) և ի յուլիսի Բ. (2) գրեալ թուղթքն քո ի Մօզմաթու վաղապէս Հասեալք առ մեզ, ապա մինչ սիրելին մեր՝ Յովսէփ արքեպիսկոպոսն ընդ քեզ գրեալ թղթոյն մերոյ առ ինքն ժամանելով և մտանիլն քո յայդ վիճակ, թերևս յոմանց խռովայոյզ ոգւոց զայլ և այլ բանս

²⁵² Իշխան, առաջին կարգի իսկական գաղտնի խորհրդական Պյոտր Վասիլիչ Լոպուխին (1753-1827 թթ.) ռուս հայտնի պետական, ռազմական գործիչ, 1816-ից Ռուսաստանի կայսրոսթյան նախարարների կոմիտեի նախագահ (Русский биографический словарь А. Половцова, т. 10, М., 1914, с. 686-687):

²⁵³ Գեներալ-մայոր, գաղտնի խորհրդական Սերգէյ Լազարիչ Լաշկարով (1739-1814 թթ.), ծագումով հին վրացական տոհմից (Լաշկարաշվիլի), Ռուսաստանի կայսրոսթյան նշանավոր պետական, ռազմական գործիչներից (Русский биографический словарь А. Половцова, т. 10, с. 96-98):

Նամակում թվարկված են կայսրից ստացված նվերները. «որք են ընդ զօրեղաբան և բաղձալի հրովարտակին պնակէ մի հրաշակերտ ընդելուզեալ աղամանդ և զմրուխտ ակամբք, յարմարեալ ի միջին տեղոցն եաշմ քանդակագործ պատկերաւ փրկչականաւ, և Բ. (2) կտորք ոսկեհոտ դիպակաց» (ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2543):

զգալով, ի յուլիսի 7 գրեալ էր մեզ զվրդովս մտաց իւրոց և Հապճէպ պատասխանի ինդրեալ, որում և մէք գրեցաք ի սեպտեմբերի 17 փոխադարձն: Ընդ նմին և քեզ գրեցաք թուղթ երկար բանիւք, թէ որպէս և յառաջ աստ պատուիրեալ եմք, և պատե՛հ իցէ քեզ՝ սիրով և Հեզութեամբ և Հանդարտութեամբ վարիլ ընդ նմա, Համենայնի պատուելով և սրտագիր առնելով, և զգործդ նուիրակութեան ևս նորին խորհրդակցութեամբ յառաջացուցանելով և առանց Հաճութեան նորա չկամելով առնել ինչ և այլն և այլն:

Եւ կրկին թղթով նորա ծանեաք, որ յարքունի դրանն ևս մտեալ ի Հոգ վասն քո կազէթ են Հանեալ՝ ի Հաշտարիան սպասել գալստեանն իւրում: Ապա յանցեալ աւուրսն ի Թիֆլիզու մեր |2545| Յովաննէս վարդապետէն գիր առեալ, ծանեաք այնու զգնալդ խաղաղութեամբ ի Հաշտարիան, և իւրն ևս թուղթ գրելդ, յորում և խոստացեալ ես յետ միջոցի իբր ի կերպաւորիլ բանին, գրել առ մեզ թուղթ, բայց լաւ էր թէ այժմ ևս գրէիր և ծանուցանէիր, զոր ինչ արժանն էր:

Այլ խաղաղութեամբ ժամանելովդ յաստուածապա՛հ քաղաքդ Հաշտարիան, առ մերային օրհնեալ Ժողովուրդդ ոչ սակաւ ուրախացեալ անդորրամիտ եղաք: Բարերարն Աստուած, որպէս յաջողեաց ցայդր, նոյնպէս և ցկատարումն գործոյդ յաջողեացէ:

Եւ արդ, քանզի յիշեալ սիրելին մեր՝ Յովսէփ արքեպիսկոպոսն բազմիցս ինդրեալ է զշնորհակալութեան թուղթս առ ամենաողորմած և պարգևաձիր կայսրն մեծ և առ ոմանս գերապատիւ գործակալս դրանն, որ թէպէտ զիսկ Հրովարտակն և զպարգևսն երևելի և Հաւատարիմ մարդով ու յուղարկելոց, բայց զօրինակս Հրովարտակին և չքնաղակերտ անակէին և այլ թղթոցն վաղապէս յղեալ էր և մեզ Հարկ էր ոչ ևս յետաձգել զշնորհակալութիւնսն, վասն որոյ ա՛հա գրեցաք զթուղթ մի առ Հանդիսավե՛հութիւն ինքնակալ կայսերն մեծի, և զթուղթ մի իբր ի պատասխանի թղթոյ Հանգուցեալ վէզիրին, առ նորին քեռորդի վիզ կանցելար գրաֆ Վիկտօր Պաւլովիչ Կուչուբէյսն, և զթուղթ մի առ նախապատիւ իշխանն թագաւորութեան՝ քնեազ պրոֆօր Պետր Վասիլիչ Լօպուխինն, և առ եներալ պօռօջիկ և կաւալեր Սերգէ Լազրիչ Լաշկարովն, ևս և առ մեր գերագնիւ աղայ Յովաննէսն:

Չորս և առաքեցաք ի ձեռս նորին Յովսէփայ արքեպիսկոպոսին, որ թէպէտ և զայլ Հոգալիս ունի առ դրանն կայսերական, բայց մանաւանդ երկուց այսոցիկ սպասէ, մի զի զպատասխանի ի յուլիսի 7 գրեալ թղթոյն ընկալցի ի մէնջ, և ի միւս ևս զի զայս շնորհակալութեան թուղթքս ընկալեալ մատուցէ: Եւ յիրաւի, ըստ որում զառաջին թուղթսն ինդրանաց մերոց ինքն մատոյց և զհրովարտակն և զպարգևսն, և յայսքան ժամանակ աշխատի անդ, պատե՛հ է զի զշնորհակալութիւնսն ևս ինքն մատուցէ և դարձցի: Սակայն թուղթս մեր, զոր ի սեպտեմբերի 17 գրեալ եմք առ նա,

Հանդերձ քոյդ թղթովն, ի Բամբակուձոր արգելեալ է ի պատճառս մէլիք Շաքարօյի անդ չգտանելոյն, որ ի սոյն ամսոյ 13 աստ Հանդիպեալ, Հարկեցաք շուտով Հասուցանել ի Թիֆլիզ, ուստի առ ձեզ Հասուցեն:

Ինդրեալ էր և զկոնդակս ի վերայ Գրիգորուպօլու և Ղրիմու, և Չերքեզու և դարբանդցոց նոր քաղաքին Սուրբ Խաչ կոչեցելոյ և այլն: Բայց դեռ ձեռնհաս չեղաք ի գրել զայնս, յետոյ ի գրելն, և վասն քո գրեսցուք զյանձնարարութիւնս:

Դարձեալ գիտասցիր և զայս, զի մինչ Յովսէփ արքեպիսկոպոսն ինդրեալ էր վասն ազատութեան տէր Ստեփանի որդի Աստուածատուրին, յետ գնալոյն քո աստի մէք գրեցաք ի Բայազիտ պարոն Հայրապետին Նաւասարդեան, և նա գրեալ առ մահտեսի Յովաննէսն ի Թարվէզ, եբեր զտղայն իբր ԲՃ. (200) պաճախլու ոսկոյ, և մինչ զայն դրամ Հասուցաք մէք պարոն Հայրապետին, և զտղայն յղեցաք ի Թիֆլիզ, յետոյ մահտեսի Յովաննէսն դաւի առնէ ընդ պարոն Հայրապետին և ԳՃ. (300) փաճախլու պաշանջէ, ապա Ի. (20) ոսկի ևս յղեցաք Հայրապետին, զի թերևս այնու Հատցէ վէճն մահտեսի Յովաննէսին, որ դեռ ոչ է պարգեալ: Այլ զի մէք ի յունիսի 28 ի յուղարկելն մեր զտղայն թուղթ գրեցաք Յովսէփայ արքեպիսկոպոսին, թէ ԲՃ. (200) պաճախլու տուեալ եմք (թէև բանն անկատար է): Նա այժմ շնորհակալութիւն է գրեալ մեզ |2546| և ԵՃ. (500) ուխալ յառաջագոյն պարոն Եսայան յղեալ գորով այժմ ևս գրէ, թէ գրեցի վասն մնացեալ զնոյն ԱՃԺ. (110) պաճախլու ոսկի տալ Եփրեմ վարդապետին՝ շուտով Հասուցանել ի Սուրբ Աթոռս: Ժ. (10) ոսկին՝ վասն զանազանութեան դրամոցն:

Արդ, նա դեռ ոչ գիտելով զմահտեսի Յովաննէսի դաւայն, թէ այլևս պաշանջումն առնէ, զայդ միայն Հասուցանել գրէ: Բայց մէք առաջին թղթովն մերով գրեալ եմք իւրն, յետոյ ևս գրելոց եմք: Եւ դու ի յրնկալնուղ զայն գրեալ ԱՃԺ. (110) ոսկինն, ծանուցես իւրն, թէ մահտեսի Յովաննիսի պաշանջումն տակաւին վերջացեալ չէ, երբ վերջացի, յայնժամ ըստ որքանութեանն և վճարումն պարտի լինիլ: Եւ այսքան Հետամուտ լինիլն մահտեսի Յովաննիսին, է պատճառս տէր Ստեփանին, զի լսելով թէ ի Հնդիկս գնացեալ է, կարծէ գանձ ունիլ, վասն որոյ և ցաւեցուցանէ զգլուխս մեր: Այսքան առ այս:

Իսկ որովհետև զվերոյիշեալ թուղթման շնորհակալութեան առաքեաք, զայս թուղթ ևս առ սիրելի որդիդ մեր գրեցաք: Եւ զի ահա երիցս եղև Յովսէփայ արքեպիսկոպոսի գրելն մեզ զՀոգսակրութիւնանն ի կողմանէ նուիրակութեանն, իբր թէ բաժան և ինքնագլուխ ոք չերևիցիս, և խոչընդակ չթուեսցիս, այլ իւրն Հետևօղ և Համաձայն լիցիս և այլն: Վասն որոյ և մէք յիշեցուցանեմք քեզ, զոր ինչ մի անգամ ի սեպտեմբերի 17 գրեալ եմք: Չի կարծեմ թէ յոյժ շփոթեցուցեալ են զնա Հրապուրիչք, պարտիս խոնարհու-

Թեամբ և պարկեշտ կենցաղաւարութեամբ և Հանդարտ գնացիւք և վայելուչ յարգանօք դիւր առնել նմա, որ ինքն միամիտ և Հանգիստ լիցի ի քոյդ կողմանէ և դատարկաբանից ասութիւնքն ոչնչասցին, և դու զգործդ ձեռնտուութեամբ նորին լաւ ևս արդիւնացուցես, և ապաՀով լիցիս: Ըստ որում և ինքն այսպէս խոստանայ: Եւ մէք իւրեան ևս բաւական բանս գրեալ եմք և գրելոց եմք, և գիտեմք թէ՛նա ևս սրբոյ ԳաՀիս և մեր գոլով անսայ և Հպատակի բանից մերոց:

Չկողմանցս և զմեր որպիսութեանցն յառաջին թղթոջն գրեցաք, թէ Ջաֆարղուլին պատերազմեալ ընդ շահգատային և սարտարին, և պարտեցեալ ի նոցունց, փախեաւ էլլիկովն յայս երկիր, և ինքն տամբ իւրով և ազգայնովք յաթոռոջս է, և մէք ի նեղութիւնս: Եւ թէ ի շահգատայէն և սարտարէն ևս մարդ է եկեալ առ խանն Երևանու և այլն: Այժմ զայս գիտասցես, որ Ջաֆարղուլին ընտանեօքն և աւելի քան զեօթն Հարիւր արամբք ի վանքս ի մեծամեծ օտայնս և ի չիմանսն ևս վրանօք նստան, և այլքն ի գեղջն յաւուրս ԺԴ. (14): Պարտէին ընդ խանին տեսանել զիրեարս, չեղև վանն կասկածանաց յիրկրաց, թէպէտ քոյրն խանին և այլ մեծամեծք եկին վանն խորհրդակցութեան, ոչինչ կայացաւ, ապա յետ բազում պիտոյս մեր վասնելոյ, էլ ամենայն իւրայնովքն և գնաց ի մէջ էլլիկին իւրոյ: Իսկ մինչ աստ գոլով նորա, ի շահգատայէն և սարտարէն մարդ էր եկեալ առ խանն, մեզ ևս ֆերմանս էր բերեալ, որոց պատասխանիս գրեցաք, թէ ընծայ եմք յղելոց: Գնաց պատգամաւորն և դարձաւ կրկին ֆերմանօք վանն ընծայիցն, և մինչ պատրաստեաք, ի շահ ձայնեցելոյն Հրաւիրակք եկին առ խանն՝ տանիլ զսա: Եւ սա ոչ գնաց, և ի վերայ այնր լուաք, թէ շահգատայն և սարտարն դարձեալ են ի Խօյու, որով և ընծայիցն մեր արգելումն երևի:

Եւ Ջաֆարղուլին ևս յեզերս Սևաջրին տատանեալ կայ, կամին դառնալ ի Խօյ, եթէ կարիցէն, զի նոքա պաՀակս են կացուցեալ ի բերդին Խօյու: Աստուած խաղաղութիւն արասցէ աշխարհի, և յատկապէս ողորմեսցի տառապեալ ազգի մերոյ, մանաւանդ յարևելեան Տանս մնացորդացն:

Ի Բաղդատու կողմանցն մի թուղթ էՀաս ի ձեռս մեր ի վերայ քո, զոր ընդ գրոյս յղեցաք: Ողջ լեր ի Տէր, զորդիական սերդ և զգիրդ չպակասեցուցանելով:

Գրեցաւ յամի Տեառն 1799, և ի Հոկտեմբերի 15, ի Սուրբ Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2544-46

1599 1799 թ., 15 Հոկտեմբերի - Թուղթ ի Պետրապօլք առ ազնիւ աղայ Յովաննէսն Էներալ ընդ ՀնորՀակալութեան թղթոցն,

որք առ կայսրն յաղագս Հրովարտակին և պարգևացն և առ ոմանս անձինս դրանն:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2366-67

ՀնորՀակալութեան նամակ Ասլան կոչեցեալ մահտեսի Մարտիրոսին, որը օգնութիւն էր ցոյց տուել Հանգուցեալնուիրակին: Կարինի փաշայի Մասրաֆ Յակոբին շնորհաւորանք է Հղում Կարին ժամանելու կապակցութեամբ: ՀնորՀակալութեան նամակ նուիրատու մահտեսի Վարդազարեան Յովհաննէսի որդի Վարդան աղային (Ադրիանուպօլիս): Պատասխան նամակ գանձապետ մահտեսի Գրիգոր Անուշեանին (Ուռուշնուր): Կեսարիոյ առաջնորդ Ստեփաննոս վարդապետին շնորհակալութիւն՝ Հանգուցեալ առաջնորդ Մատթէոս վարդապետի կտակն ուղարկելու Համար: Նամակ Կ. Պօլիս՝ տէր Բաղդասար քահանային, որին նուիրակ Գալուստ վարդապետը ջապի (իննամակալ) էր կարգել Էջմիածնի վախուժ տների վրա: ՀնորՀակալութեան նամակ նուիրատու Նաասարեան Յովհաննէսին (Իզնիմիդ): Պատասխան նամակ Յարութիւն աղայ մահտեսի Թօմայեանին (Վան): Նամակները գրուել են 1799 թ. յուլիս-օգոստոս ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 118ա-23ա

1600 1799 թ., 10 սեպտեմբերի - Թուրք առ պարոն Մկրտումն Գալստեան ի Հաշտարխան, յաղագս անդանօր մեռեալ Ալի ասկեար տաճկին, որոյ վարիսք էին յԵրևան եղեալ Մահմատ Հիւսէին բէկն և այլք, որք զՀաճի Սատիտ օղլի մոլլայ Հաճի Բաբայն վէքիլ էին կարգեալ իւրեանց, և բազմակնիք վաքիլլաման յիւ յուղարկէին անդ՝ տիրել կայից մեռելոյն²⁵⁴:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 123աբ

1601 1799 թ., 17 սեպտեմբերի - Թուրք առ Գիօրկի արքայն Վրաց վանն մեր ճորտ Հանգուցեալ Դաւթի տանն:

Յորմէ սիրով և օրհնութեամբ և սուրբ ողջունիւ ծանուցումն լիցի մեծաբաղձիկ և բարձրապատիւ սիրելոյդ մերոյ և իննամաշատ բարեկամիդ սրբոյ Գահիս, քրիստոսասէր, փառազարդ և մեծազօր Գիօրկի արքայիդ Վրաց: Զի զոր ինչ կարևոր գրելին էր, քան զայս յառաջ գրեցաք ընդ Սարգիս եպիսկոպոսին նորապէս առաջնորդ կարգեցելոյն Հաղբատայ վանաց: Իսկ այժմ զայս ունիմք յայտնի առնել:

Նախ, որ ամսովք յառաջ Գ. (3) Թուրքս էիր յղեալ ի վերայ Հանգուցեալ Հաճամիրի որդւոյն և Թոռին և փեսային ի Մատրաս, զի յուղարկիցեմք: Յաւուրս ինչ սպասեալ մեր, թէ ընդ Պարսից կողմն ճանապարհ լիցի, իբրև օրըստօրէ խառնակեալ վտանգա-

²⁵⁴ Պարոն Մկրտում Գալստյանին (Հաշտարխան) հանգուցյալ Ալի ասկյար տանկի մահվան անշուքյամբ հղված նամակի ամբողջական հրատարակությունը տե՛ս ԳՀՊ, գիրք Գ., սյուն 682-684:

տորեցան կողմանքս, ապա ի յուղարկելն մեր զթուղթս ի Կոստանդ-
նուպօլիս, զայն երեք թուղթնս ևս |124| ընդ այնոսիկ առաքեցաք,
զի Հաւատարմաց ձեռօք ի վերայ Բաղդատու յուղարկեսցեն:

Երկրորդ, Սրբոյ Աթոռոյս ճորտ Դաւիթս, որ վախճանեալ է
անժառանգ, և տունն նորա, որ Սրբոյ Աթոռոյս պարտի ժառան-
գութիւն լինիլ ըստ սահմանի երկրիդ, և անկեալ է ընդ ձեռամբ
այլոյ ուրուք, զոր ի ծանուցանելն սիրելի որդւոյն մերոյ՝ Յովաննէս
Էպիսկոպոսին առ մեծութիւն ձեր, Հրամայեալ էք յապահովիլն
գլխոյ ձերոյ ի խուժանաց դարձուցանել զտունն զայն ի ժառան-
գութիւն Սրբոյ Աթոռոյս: Գրեալ էր մեզ նոյն Յովաննէս Էպիսկո-
պոսն: Վասն որոյ շնորհակալ եմք զառատախնամ մեծութենէ
ձերմէ:

Արդարև, որպէս ասէ երջանիկ արքայից Դաւիթ. պատիւ
թագաւորի զիրաւունս սիրէ: Եւ արդ, մինչ սահման և օրէն է եր-
կիրդ, որ ճորտ որուք եթէ անժառանգ վախճանեսցի, մնացեալ
կայք նորա տեառն իւրում Հասանին: Ապաքէն յիշեալ Դաւիթս ևս
անժառանգ մեռանելով, նորին տունն Սրբոյ Աթոռոյս է, և ոչ է
արժան զի սահման և կանոն երկրիդ առ այլևս Հաստատուն լիցի,
և ի մերս մասին խախտեսցի:

Վասն որոյ ինդրեմք ի մեծութենէ բարեպաշտ Գիօրկի ար-
քայիդ, զի որպէս իրաւասիրաբար խոստացեալ էս Յովաննէս
վարդապետին, զնոյն բարի խոստումնդ ճշմարտապէս կատարե-
ցես թարց զանցառութեան զայն տուն ճորտին Սրբոյ Աթոռոյս
դարձուցանելով յօտարաց առ սորին ժառանգութիւն: Որով նախ
զարդարութիւն և զիւրաւունս գործեալ փայլեսցուցես զթագա-
ւորութիւնդ ի Հաճոյս ամենարդար թագաւորին Աստուծոյ, և երկ-
րորդ զմեզ առաւել ևս շնորհելու կացուցես զմեծութենէդ, ոյր
սակս և Հանապազ աղօթաւոր եմք:

Իսկ զնեղութիւնս մեր և զայլ որպիսութիւնս թողումք ի Յո-
վաննէս Էպիսկոպոսէդ իմանալ եթէ կամիցիս:

Ողջ լեր ի մխիթարութիւն վշտաւորութեանս մերում. ամէն:

Գրեցաւ յամի Տեառն 1799 և ի սեպտեմբերի 17, ի Սուրբ
Էջմիածին:

ՄՄ ձեռ. Հ^ր 4538, էջ 123բ-24ա

ՀնորՀաւորականՆամակ մահտեսի ՅօՀան Բարաղամեանին (Բաղէշ) որդու
ամոնանութեան կապակցութեամբ: Նորոգ նուիրակ Գէորգ վարդապետին օժան-
դակելու յանձնարարութիւն գանձապետ մահտեսի Գրիգոր Անուշեանին (Ուտուշ-
ձուղ): Առաջնորդական կոնդակ եւ միաժամանակ Էպիսկոպոսութեան վկայական
Ուչքիլիսայի առաջնորդ թովմաս վարդապետին: Մշոյ երկրտասան առաքելոց
վանքի թեմին ու վիճակներին ուղղուած կոնդակ արժոնցի Յովաննէս վարդապե-
տին՝ առաջնորդութեան ու Էպիսկոպոսութեան Հաստատմամբ: ՀնորՀակալու-
թեան Նամակ մահտեսի Մանուկի որդի պարոն Մարկոսին, որը նուիրել էր որպէս
քառասնից 2 թովման: Պարտատէր, Նախիջեանի մէլիք Անանիային օգնելու Հա-
մար Նամակ Բայազետի քաւանաներին ու իշխաններին: ՀնորՀակալութեան Նա-

մանկեր նուիրատուներ ՍաՀակին (Տիգրանակերտ), կուսակրոն Մարգարէ ծերունուն (Ամիր), ուսուց Շահին (Ամիր), թամանցի Արամայ մաՀտեսի Յարութիւնին (Կ. Պօլիս), սառաֆ մաՀտեսի Աւետիքին (Կ. Պօլիս), միրիչքեարպաշի պարոն Յովսէփին (Թիֆլիս) շորՀակալութիւն է յայտնուով թամամշոց Գարոյի Հանգուցեալ քրոջ կտակած խանութը Էջմիածնի սեփականութիւնը դարձնելու ուղղութեամբ կատարած աշխատանքի Համար: Նամակում խոսուով է նաեւ Էջմիածնի ճորտ, Հանգուցեալ Դավթի տունը, որը Վրաց արքան տվել էր մի վրացու, կրկին վանքին վերադարձնելու մասին: Մխիթարական նամակ Տէր-Բաբեան Յարութիւնի որդի մաՀտեսի Կարապետին ու նրա եղբայրներին (Սեբաստիայ)՝ Լօր մաՀուան կապակցութեամբ: ՀնորՀակալութեան նամակներ նուիրատու պարոն Պալապանեան Վահանին (Չմիւռնիս), Սեբաստիայի Կովոն գիւղի գանձապետ պարոն Գէորգին (գանձանակադրամը Հաւաքելու կապակցութեամբ), Ամրայ Ս. Սարգիս եկեղեցու ժողովրդին՝ գանձանակի արդինքը գործաւարտ նուիրակ Մկրտիչ վարդապետի միջոցով ուղարկելու Համար:

Նամակները գրուել են 1799 թ. յունիս-նոյեմբեր ամիսներին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4482, էջ 273բ-83բ

1602 **1799 թ., նոյեմբեր - Թուղթ** **ի վերայ Բայագիտոյ և ՍաՀաթմափոսի գիւղորէիցն վիճակաց Սրբոյ Թաղէտոսի առաքելոյ վանացն, ի պատասխանի թղթոյն բայագետցոց, որք գրեալ էին զփորձութեանցն Հասելոց ի վերայ սրբոյ վանացն և միաբանիցն, և թեմիցն, և Մակուայ սուլթանի բազմապատիկ պաՀանջմանցն, ուստի և առաջնորդ Գէորգ վարդապետն միաբանիւք խոյս տուեալ էին ի Բայագիտ: Եւ յանձարութենէ ինդրէին առ ժամանակ մի թողուլ զվանքն յամայութեան, և արտաքոյ կալ: Եւ այժմ ինքն Գէորգ վարդապետն իսկ եկեալ զնոյն ինդիր առնէր: Վասն որոյ և սրբազանն գրէ զՀաճութիւն առ ինդիրն նոցա, և պատուիրէ ժողովրդեանն այլևս զՀասոյթն տալ առաջնորդին, զի միաբանն ժողով պաՀեսցէ մինչև այցելութիւն Տեառն Հասեալ դառնայցն ի սուրբ վանան:**

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2367-68

1603 **1799 թ., նոյեմբեր - Թուղթ** **ի Թիֆլիզ առ Կաթուղիկէ եկեղեցոյ տէր Մեսրօպ և տէր Յովաննէս և տէր Յարութիւն քաՀանայան, ի Հաստատութիւն Հովուելոյ նոցա զճորտան Ալէքսանդր արքայորդոյն, մինչ նոյն Ալէքսանդրն գրով ինդրեալ էր ի սրբազանէն, և քաՀանայքն ևս ինդրէին ունիլ զթուղթ յանձնարարութեան վասն նոցա**²⁵⁵:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2369

²⁵⁵ Նամակն անավարտ է, սևագրոյթյունը զբաղեցնում է կես էջից քիչ ավելի տեղ, հաջորդ քերթը (2 երես) չգրված է, այնուհետև արձանագրված են Դուկաս կաթողիկոսի մահից հետո էջ-միածնի միաբանների նամակները (1800 թ. յունուար, յունիս, օգոստոս):

1604 [1799 թ., նոյեմբեր] - Թուղթ առ Կարնոյ քաղաքի քաճանայսն և իշխանսն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն նոցա ի յունիսի ... գրեցելոյ՝ յաղագս ընդունելոյ իւրեանց դարձեալ զնոր տօնացոյց, ուստի և ինդրեալ էին զերկուսս ատենի ժամագիրս նորոգ տօնացուցան, զորս սրբազանն յառ նա յղեաց, իսկ այժմ շնորհակալութիւն գրէ վասն այն և յանձնարարութիւն վասն նոր նուիրակին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4501, էջ 2370

1605 1799 թ., 7 դեկտեմբերի - Կոնդակ ի վերայ Իւչքիլիսայ կոչեցեալ վանացն Սրբոյն Յօճաննու Մկրտչին թեմիցն, ի պատասխանի նոցին բազմակնիք թղթոյն, զոր ձեռամբ Սաճակ վարդապետին և ոմանց յղեալ՝ զառաջնորդ ինդրէին: Եւ սրբազանն, զնոյն Սաճակ վարդապետն կարգեաց փոխանակ առաջնորդի՝ ի Հոգաբարձութիւն վանացն:

Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ... Գրեցաւ ի ՌՄԽԸ. (1799) թուոջս, և ի դեկտեմբերի Է. (7), ի լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին²⁵⁶:

ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2547-48

Մեռնի կոնդակ՝ Հասցեագրուած Բայազետի, Դիադիսի, Նաւհայի, Ալաշկերտի, Թափրախալայի, Խյամուրի, Բանտայի և այլ աւանների ու գիւղերի քնակչութեանը, որով տեղեկացում է Յովհաննէս վարդապետի միջոցով մեռն ուղարկելու մասին: Յանձնարարում է պատուով ընդունել վարդապետին, լսել նրա քարոզները, Հաւաքել նուիրակական տուրքերը եւ միւս արդիւնքները (ՄՄ ԿԴ, թղթ. 243, վավ. 87):

1606 1799 թ. - Թուղթ ի յԱմիդ առ Մկրտիչ աղայն. սէր և օրհնութիւն, և վասն նոր նուիրակին յանձնարարութիւն²⁵⁷:

ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 36աբ

²⁵⁶ Առաջնորդ նշանակելու խնդրանքով կաթողիկոսին դիմել էր նաև Բայազետի փաշան (ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2547): Նամակի բովանդակությունից երևում է, որ Դուկաս Կարնեցին այդ ժամանակ արդեն հիվանդ էր. «...և մանաւանդ ի մեծի հիւանդութեան գոյով մեռ» (ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2547): Հարկ է նշել, որ տեղի առաջնորդ Մկրտիչ վարդապետի մահից հետո Դուկասը առաջնորդ էր նշանակել Թովմաս վարդապետին և ուշիկիսցիների խնդրանքով նրան ձեռնադրել էր եպիսկոպոս, բայց Էջմիածնից վերադառնալիս՝ նա Բայազետում հիվանդացել ու մահացել էր, ուստի անհրաժեշտ էր նշանակել նոր առաջնորդ (ՄՄ ձեռ. Հ^մ 2922, էջ 2547):

²⁵⁷ Նվիրակ վարդապետի անունը բաց է թողնված: Կարելի է ենթադրել, որ նվիրակ չի ուղարկվել, և պատրաստի նամակը մնացել է Էջմիածնում: Ճիշտ նույն վիճակում է նաև Բաղեշի, Խոսի, Մանազկերտի ու այլ վայրերի հայությանը հասցեագրված նամակը (ՄՄ ԿԴ, թղթ. 243, վավ. 88):

1607 **1799 թ. դեկտեմբեր - Թուղթ** *ի յ Ախլաբեալակ առ քահանիս ոմանս վասն մատաղացն Հասեղոց ձեռամբ տէր Միքայէլին:*
ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 36բ-7ա

Ախլաբալաքից (սչուսմէ գիւղաքաղաք) մատաղատոններ էին յետեւեալ անձինք՝ տէր Սարգիս քահանան (նուիրել էր մի կող եւ մի երկնջ), պարոն Միքայէլը՝ մի լուծ ձագ գոմէշ, պարոն Մալխազը՝ մի եզ եւ մի որձ գոմէշ, ներկարար Գէորգը, Յովսէփն ու Պօղոսը՝ մեկական արջառ: Այս կենդանիները նրանք յանձնել էին տէր Միքայէլ քահանային, որն իր կողմից աւելացրել է մի գոմէշ եւ բողոն անկորուստ Հասցրել Էջմիածին (ՄՄ ձեռ. Հ^մ 6298, էջ 37ա):

1608 **1799 թ., Հոկտեմբեր - Թուղթ** *մխիթարութեան ի Բայազիտ առ ագուլեցի Թումանեանց Հանգուցեալ Պետրոս աղայի եղբօր որդիսն և իւր որդիսն վասն մահուան նորին, և խրատ առ ինքեանս*²⁵⁸:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 124ա-25ա

1609 **1799 թ. - Թուղթ** *առ վազիրին սառաֆ Փիլիպպոս ամիրայն, ի պատասխանի թղթոյն, որ վասն արապկերցի Ղուկաս վարդապետին ի բանադրանաց արձակման: Եւ յանձնարարութիւն յաղագս նոր նուիրակին Ամրայ ... վարդապետին*²⁵⁹:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 125աբ

1610 **1799 թ. - Թուղթ** *առ Փիլիպպոս ամիրայի որդի պարոն Ալիխարն, ի պատասխանի թղթոյն վասն արձակման արապկերցի Ղուկաս վարդապետի*²⁶⁰:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 126աբ

Յայս վայր Հասեալ գրութեանցս ի դիմաց տեսոն Ղուկասու սրբազան կաթողիկոսին, այժմ ի վերոյ նշանակեալ թուոյ դեկտեմբերի ԻԸ. (28), փոխեցաւ յաստեացս նա ինքն մեծավաստակ Հայրապետն, որոյ զՀոգին Տէր լուսաւորեսցէ: Ապա յայսուհետև ի հետևեալ թուղթսդ, որ ինչ և դէպ լիցին գրիլ, ի միաբանից Սրբոյ Աթոռոյս գրեսցին:

ՄՄ ձեռ. Հ^մ 4538, էջ 126բ

²⁵⁸ Ննչեցյալ Պետրոս աղա Թումանյանց (Բայազետ) Ագուլեցու որդիներին և եղբորդիներին ուղղված մխիթարության և խրատական նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 684:

²⁵⁹ Սառաֆ (դրամավոխ) Փիլիպպոս ամիրային՝ արաբկիրցի Ղուկաս վարդապետի բանադրանքից արձակման և Ամիրի նոր նվիրակին ուղղված հանձնարարության վերաբերյալ նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 684:

²⁶⁰ Փիլիպպոս ամիրայի որդի պարոն Ալիխարին՝ դարձյալ արաբկիրցի Ղուկաս վարդապետին բանադրանքից արձակելու մասին նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, գիրք Դ., սյուն 684:

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ*

- Աբայ / Ապայ (թրք./արաբ.) – բրդյա կտորի տեսակ
- Աբասի / ապասի (պրսկ.) – պարսկական արծաթե դրամ (=4 շահի)
- Ադթար (թրք.) – համեմունք վաճառող
- Աթլաս (արաբ.) – կերպասե կամ մետաքսե գործվածք
- Ալաճայ (թրք.) – շերտավոր, գույնզգույն կտոր
- Ալթմշլը (թրք.) – 60 փարայանոց դրամ
- Ախթարմայ (թրք.) – հերձվածող, կաթոլիկ
- Ախունդ (պրսկ.) – հոգևոր աստիճան, մոլլա
- Աղազատայ (թրք./պրսկ.) – աղայի որդի, պարոնորդի
- Աղայ (թրք.) – տեր, պարոն
- Աղաչայ – տե՛ս աղազատայ
- Ամանաթ (արաբ.) – ավանդ, հարստություն
- Այտաղմայ (թրք./պրսկ.) – թղթի տեսակ
- Աչչի / աչի (թրք.) – խոհարար
- Ապրչում (պրսկ.) – մետաքս
- Աջամ (արաբ.) – այսպես էին կոչում պարսիկներին, Պարսկաստան գնացածներին
- Ասնաֆ / էսնաֆ (պրսկ.) – համաքարություն, եղբայրություն
- Արախչինճի (պրսկ.) – գրակ, գրակագործ
- Արապայ (արաբ.) – սայլ
- Արզ (արաբ.) – խնդրագիր, աղերս
- Արխալուղ (թրք.) – վերարկու
- Աֆանդի / էֆենդի (թրք.) – պարոն, տեր
- Բաբուճճի (թրք.) – կոշկակար, մաշիկ կարող
- Բագրաստ / բակուաստ (թրք.) – պղնձե սափոր, կուժ, նակ՝ կտորի տեսակ
- Բագազ / պեղէզ (թրք.) – կերպասի առևտրական
- Բաղայ սանր (թրք./հայ.) – կրիայի պատյանից կամ խեցից սանր
- Բանդար (պրսկ.) – նավահանգիստ
- Բաշպորթ (ուռս.) – անձնագիր
- Բասմաճի (թրք.) – տպագրիչ
- Բատամ (պրսկ.) – նուշ
- Բարաթ / բերաթ (թրք./արաբ.) – արտոնագիր, մուրհակ
- Բէկ (պրսկ./արաբ.) – տէր, պարոն
- Բինիչ (թրք.) – զգեստ, վերարկու, ծածկոց
- Բողչայ (պրսկ.) – լաթի կտոր, ծրար՝ այլ կտորեղեն պահելու համար
- Բոյրութլու (թրք.) – հրամանագիր, կարգադրություն
- Բոյ (թրք.) – հասկ, երկարություն, բարձրություն
- Բոյաղչի / բոյաճի (թրք.) – ներկարար
- Բօրակչի (պրսկ./թրք.) – աղագործ
- Գազ (պրսկ.) – շղարշ, նակ՝ երկարության չափ (=112 սմ)

* Բառարանը կազմելիս օգտվել ենք «Գիվան հայոց պատմության» նոր մատենաշարի նախորդ երկու հատորներից և բացատրական բառարաններից (Հր. Անադյան, Ստ. Մալխասյանց և այլք), իսկ որոշ բառերի բացատրության համար երախտապարտ ենք մեր գործընկերներին՝ արաբագետ Միհրան Մինասյանին, թուրքագետներ Անի Ավետիսյանին և Սերգեյ Մանվելյանին (Ա. Հ.):

Գուգէթ (թրք.) – կտորի տեսակ
Գրաֆ (գերմ./ռուս.) – կոմս,
ազնվական տիտղոս
Գուժբէճնաթօր (լատ.) –
նահանգապետ

Դահպաշի (թրք.) – տասնապետ
Դանայ (պրսկ.) – հատ
Դաստայ (պրսկ.) – կապ, խուրձ
Դարաբխանայ (պրսկ.) –
դրամահատարան
Դանգ / դէնկ – տե՛ս մուլք
Դաւայ (արաբ.) – վեճ
Դաւթար (արաբ.) – մատյան, տետր
Դաւի (արաբ.) – պահանջ, դատ
Դարապխանաճի (պրսկ.) –
դրամահատ
Դարապխանայ (պրսկ.) –
փողերանոց,
դրամահատարան
Դարվիշ (պրսկ.) –
մահմեդականներ
կրոնավոր, թափառական
Դէտ (պրսկ.) – վերահսկիչ, տեսուչ
Դիւլպէնդճի / տիւլպէնտճի (թրք.) –
ասեղնագործող, չիթ
վաճառող
Դիւրպին (պրսկ.) – հեռագրիտակ
Դուքան (արաբ.) – խանութ,
կրպակ
Դուքանդար (արաբ.) –
խանութպան
Դօլվաթլու (թրք.) – երանավետ,
վսեմաշուք

Եագճի (թրք.) – գրագիր
Եալտուզ (թրք.) – ոսկեջրած,
ոսկեզօծ, ոսկու տեսակ
Եափնջի (թրք.) – այծի մազից
պատրաստված անթև
վերարկու
Եբենոս (հուն.) – թանկարժեք
փայտ, որից տարբեր իրեր
են պատրաստում

Եներալ (լատ.) – գլխավոր,
գեներալ, զինվորական
կոչում

Զահիրայ (արաբ.) – պաշար
Զառ (պրսկ.) – ոսկեթել
Զատ (թրք.) – իր, առարկա
Զատէ (թրք.) – որդի
Զարմահպուլ ոսկի (պրսկ./արաբ.) –
բարձր հարգ ունեցող ոսկի
Զէնճիր (թրք.) – շղթա,
շղթայանման հյուսվածք
Զըպլակեահ / զպլակ (թրք.) –
կով (°)
Զիճ (արաբ.) – աստղագիտական
աղյուսակներ պարունակող
Զիրայ (պրսկ./արաբ.) – քիմոն,
չաման
Զիրիշկ (պրսկ.) – ծոր, մածուցիկ
նյութ
Զօֆ (արաբ.) – բուրդ

Էլ / էլլիկ (թրք.) – ցեղ,
ժողովուրդ
Էշիկաղասի (թրք.) – ատենապետ
Էսնաֆ – տե՛ս ասնաֆ

Թալաղայ / թաղայ (արաբ.) –
հրամանագիր, հրովարտակ,
հանձնարարագիր
Թամասուկ / թէմէսուկ (արաբ.) –
մուրհակ, ստացական,
անդորրագիր
Թայ (արաբ.) – բաժին
Թանխայ (պրսկ.) – համարժեք
Թասկիրայ (արաբ.) – նամակ,
պաշտոնական գրություն,
վկայական
Թասու (պրսկ.) – դրամ (=մեկ
քառորդ դանգ)
Թաւան (թրք.) – տախտակ
Թէուլիկ (թրք.) – հողաթափ
Թէսլիմ (արաբ.) – հանձնում,
վճարում

Թէրսխանայ (թրք.) – նավ շինելու տեղ
 Թէֆլիտար (պրսկ./արաբ.) – ստացող, ընդունող, վերակացու
 Թիւանի (թրք.) – քաշի միավոր
 Թիրմայ (պրսկ.) – այծի մազից գործված կտոր
 Թիքիճի (թրք.) – դերձակ, կարանող
 Թուանքչի (թրք.) – հրացանակիր, զինվոր, զինագործ
 Թութունճի (թրք.) – ծխախոտ վաճառող
 Թուման (պրսկ.) – դրամական միավոր (=10000 դինար)
 Թուշի շալ (պրսկ.) – շալի տեսակ
 Թուրայ (թրք.) – արքունի դրոշմ, կնիք, զինանշան
 Թօճմաթ (արաբ.) – ամոթանք, զրպարտանք
 Թօփ (թրք.) – կտորի ամբողջ փաթեթը, նաև՝ արկ, գունդ
 Իգիտբաշի (թրք.) – համքարության ղեկավար, պետ
 Իմտատիայ (արաբ.) – օգնություն, օժանդակություն
 Իրիջայ / Իրիճայ (արաբ.) – դիմում, աղերս, խնդիր
 Իւզբաշի (թրք.) – հարյուրապետ
 Իփէկճի / Իփչի (թրք.) – մետաքսագործ
 Լիմօնճի (պրսկ./թրք.) – լիմոնի առևտրով զբաղվող
 Լիմօնճիգատէ (պրսկ./թրք.) – լիմոնի առևտրով զբաղվողի որդի
 Լիտր (Ֆրանս.) – ծանրության չափի միավոր (=10-12 ֆունտ)
 Լուստրի (Ֆրանս.) – կտորի տեսակ

Խագնայ (արաբ.) – գանձ, գանձատուն
 Խաթր (արաբ.) – հարգանք, շնորհ, միտք
 Խալիչայ (պրսկ.) – փոքր գորգ
 Խալիֆայ (արաբ.) – փոխանորդ, տեղապահ, բարձրաստիճան հոգևորական
 Խահվէճի (արաբ./թրք.) – սուրճ եփող, սուրճ վաճառող, սրճարանատեր
 Խան (պրսկ.) – տեր, իշխան
 Խանուճ (թրք.) – տիկին
 Խապար (արաբ.) – լուր, տեղեկություն
 Խառայ (պրսկ.) – մետաքսյա կտորի տեսակ
 Խաս (արաբ.) – ընտիր
 Խարան (արաբ.) – հարկ, տուրք
 Խարճ (արաբ.) – ծախս
 Խարճել (արաբ.) – ծախսել
 Խաֆաֆ / Ղաֆաֆ (արաբ.) – փայտե կոշիկ սարքող
 Խիլայ (արաբ.) – նվեր
 Խիշալաթ (թրք.) – ամոթանք
 Խօլ (թրք.) – կողմ, թև
 Խօջայ (պրսկ.) – վաճառական, տեր, տանուտեր
 Կամէնդատ (Ֆրանս.) – պարետ
 Կապայ (արաբ./պրսկ.) – երկար զգեստ, պարեգոտ
 Կառօթ / կարատ (հուն./ռուս.) – ծանրության կշիռ (-0,20275 գրամ)
 Կալալեր (Ֆրանս.) – հեծյալ, զինվորական կոչում
 Կերլի (թրք.) – եկամուտ, հասույթ
 Կեօզլուկ (թրք.) – ակնոց
 Կէրմէսուտ (թրք.) – ծաղկավոր գործվածք
 Կլապիտոն (պրսկ.) – արծաթաթել կամ ոսկեթել, ծաղկակար
 Կոմանդոր (լատ.) – հրամանատար

Կոնմբան (Ֆրանս.) – առևտրական կամ արդյունաբերական ընկերություն

Հալբաթ (արաբ.) – անպատճառ, անտարակույս

Հաճի (արաբ.) – մահտեսի, մոլորություն

Համամ (արաբ.) – բաղնիս

Հէսապ (արաբ.) – հաշիվ, հաշվարկ

Հօխայ (թրք.) – ծանրություն չափ (=400 դրամ կամ մոտ 3 ֆունտ)

Ղազան (թրք.) – կաթսա

Ղազանչի (թրք.) – կաթսայագործ, պղնձագործ

Ղաթար (արաբ.) – ձյութ, ուղտի ոտքերի արանքում քսվող հատուկ յուղ

Ղաթրչի (արաբ.) – ջորեպան

Ղալամ (արաբ.) – գրիչ, վրձին

Ղալամքեար (պրսկ.) – դաջված կտոր

Ղալճի (պրսկ.) – անասնապահ

Ղայթան (թրք.) – մետաքսի ներկված հաստ թելից գործված երիզ, որ կարում են զգեստի քղանցքին և ծայրերին:

Ղահվաճի – տե՛ս խանվէճի

Ղանդ (պրսկ.) – շաքար

Ղանթար (արաբ.) – շուկայի մեծ կշեռք

Ղապալայ (արաբ.) – կավածագիր

Ղապղ / ղազ (արաբ.) – ստացական, անդորրագիր

Ղապղիմալ (արաբ./պրսկ.) – ստացական տրված ապրանքի դիմաց

Ղապուլ (արաբ./թրք.) – ընդունելի, համաձայն

Ղասապայ (արաբ.) – ավան, գյուղաքաղաք

Ղատաք (թրք.) – բամբակե ներկած կտոր

Ղատթիլխայ (թրք.) – կավածագիր (°)

Ղաւզ – տե՛ս ղապղ

Ղաւլուխ (թրք.) – փաթեց

Ղափամաճի (թրք.) – պարեգոտ (պատմունճան) վաճառող

Ղուլթի (արաբ.) – տուփ, սնդուկ

Ղուլլուղ անել (թրք.) – ծառայել

Ղուլլումճի (թրք.) – ոսկերիչ

Ղուլուղ (թրք.) – թուրքական մանրադրամ (=40 փարա)

Ղուլուր / ղուլբուր (թաթար.) – պատյան

Ղուլան (թրք.) – բրդից կամ մանվածքից ասեղնագործ գոտի

Ճիկերճի (թրք.) – թոք, լյարդ վաճառող, եփող

Ճոթ, ճոթեղէն (թաթար.) – չիթ, կտոր, եզր

Ճուլաճի (թրք.) – ջուր՝ տղամարդու երկար վերարկու կարող

Մալ (արաբ.) – գույք, հարստություն

Մախմուր (արաբ.) – թավիչ

Մակօքճի / մաքուքճի (թրք.) – կտավագործ

Մահլայ (արաբ.) – թաղ

Մահսար (արաբ.) – հանրագիր, շրջաբերական

Մահրամայ (թրք.) – թաշկինակ, սրբիչ, ցամքոց

Մաղաղայ (արաբ.) – նկուղ, մթերանոց

Մաղզմայ (պրսկ./արաբ.) – սկուտեղ, հաղորդություն նշխարը դնելու սկավառակ

Մաճար ոսկի (հունգ., հայ.) – դրամական միավոր

Մամասախլի (վրաց.) – մելիք

Մանգիլ (հուն.) – թաշկինակ,
վարչամակ
Մանգիլ / մենգիլ (արաբ.) –
սուրհանդակ, իջևան, տուն
Մասլահաթ (արաբ.) – խորհուրդ,
շահ, գործ
Մասրաֆ (արաբ.) – ծախս
Մարխ (պրսկ.) – դյուրավառ խեօ
Մարկան(ոց) (գերմ.) – մարկ
արժեցող
Մարչիլ (իսպ.) – դրամական
միավոր
Մէյխանաճի / մէհանաճի
(պրսկ./թրք.) – գինեպան,
պանդոկապետ, միկիտան
Մէստճի (թրք.) – նուրբ կաշվից
կոշիկ կարող
Միլախօւբաշի (պրսկ./թրք.) –
ախոռապետ
Մինթանճի (պրսկ./թրք.) –
կանացի երկար զգեստ
կարող
Միջօյ (թրք.) – գինեպանի մոտ
ծառայող
Միսկճի (թրք.) – յուղագործ
Միրզայ (արաբ./պրսկ.) –
իշխանագուն, արքայագուն,
տեր, իշխան
Միրիշքեարբաշի (արաբ./պրսկ.) –
որսապետ
Մուլլա (արաբ.) – տեր,
մահմեդական կրոնավոր
Մովրով (վրաց.) – գավառապետ
Մսխալ (արաբ.) – կշռի միավոր
(=4,26 գրամ)
Մութավելութիւն (արաբ.) –
հոգաբարձութիւն,
խնամատարութիւն
Մութեսերիֆ (արաբ.) –
կառավարիչ, գավառապետ
Մուլք (արաբ./թրք.) – կալվածք,
եկամուտ
Մուլքանաճի (արաբ./թրք.) –
կալվածատեր, կալվածքի
վաճառքով զբաղվող անձ

Մուղայէթ (արաբ.) – հոգատար,
ուշագիր
Մունասիպ (թրք.) – հարմար,
պատշաճ, վայելուչ
Մուշամպայ (արաբ.) – մոմապատ,
մոմլաթ
Մուշրիպ / մուպաշիր (արաբ.) –
վերակացու, գործակալ
Մուտաթ / մադաթ (արաբ.) –
օգնութիւն
Մուրախաս (արաբ.) – արձակել
Մօռ (թրք.) – մանուշակագույն

Նագիր (արաբ.) – վարիչ, տեսուչ,
հսկիչ
Նահիա (արաբ.) – գավառ, շրջան
Նադտ (արաբ.) – կանխիկ
Նասախէի (թրք.) – ուղեկցող,
դեսպան, գրագիր
Նարգենիս (թրք.) – այժմ,
ներկայումս
Նիզամ (արաբ.) – կարգ,
կառուցվածք
Նոմոս (հուն.) – օրենք, կարգ,
կանոն, նամակ
Նօտար (հուն./լատ.) – գրագիր,
քարտուղար

Շաթիր (արաբ.) – սուրհանդակ,
առաջընթաց ծառայող
Շահգատէպաշի (թրք./պրսկ.) –
արքայագուններ
խնամակալ
Շամ (արաբ./թրք.) – մոմ
Շար (արաբ.) – մահմեդական
հոգևոր օրենք
Շեխիսլամ (արաբ.) – մահմեդական
կրոնի դեսպետ, որն
իրավունք ունի մեկնել
դուրանը և հսկել ծեսերի
կատարմանը
Շէշխանայ (թրք.) – վեցանկյունի
Շիլթախ առնել (արաբ.) –
անօրինական հարկ, շորթել

Շիմշիր դրգալ (թրք.) –
 պատառաքաղ, փայտե գդալ
 Շիշայ (պրսկ.) – ապակի, սրվակ
 Չալթուկ (թրք.) – կեղևը չհանած
 բրինձ
 Չալիկ (պրսկ.) – ձեռնափայտ,
 փայտե ձող
 Չախու (թրք.) – գրպանի դանակ
 Չարսու (թրք./պրսկ.) – շուկա
 Չարվատար (թրք./պրսկ.) –
 ձիապան, ջորեպան,
 գրաստներ պահող
 Չիթ (թրք.) – բամբակե բարակ
 կտոր
 Չիչակու (թրք.) – ծաղիկ,
 ծաղկավոր
